ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 94(560)
ԳՄԴ 63.3(5Թու)
Բ 260

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Բայբուրդյան Վ. Ա.

Բ 260 Օսմանյան կայսրության պատմություն (վերահրատարակություն) / Վ. Ա. Բայբուրդյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2023.- 728 էջ + 12 էջ ներդիր:

Գրքում լուսաբանվում է Օսմանյան կայսրության պատմությունը՝ սկսած Փոքր Ասիայում թուրքերի հայտնվելու ժամանակներից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, երբ այդ հսկայածավալ կայսրությունը կործանվեց, և նրա փլատակների վրա ծնունդ առավ թուրքական հանրապետությունը:

Աշխատության մեջ ցույց է տրվում, որ կայսրությունն իր բնույթով եղել է ռազմամոլ ու անզուսպ նվաճողական հակումներ ունեցող, ինչպես նաև կրոնաաստվածապետական հիմքերի վրա կառուցված պետություն, որն իր վեցհարյուրամյա գոյության ընթացքում մշտապես արգելակել ու խոչընդոտել է այնտեղ ապրող բազմաթիվ ժողովուրդների բնականոն զարգացումը և կասեցրել նրանց տնտեսական, քաղաքական ու հոգևոր-մշակութային առաջընթացը:

Աշխատությունը հասցեագրված է պատմաբաններին, միջազգայնագետներին, քաղաքագետներին, բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներին ու ուսանողներին, ինչպես նաև ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 94(560)
ԳՄԴ 63.3(5Թու)

ISBN 978-5-8084-2631-3

© ԵՊՀ հրատ., 2023
© Բայբուրդյան Վ. Ա., 2023

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Օսմանյան կայսրության պատմություն

Օսմանյան Թուրքիայի ամբողջական պատմությանը հայ արդի պատմագիտությունը չի անդրադարձել: Խորհրդային ժամանակները, սակավ բացառություններով, թելադրում էին պատմագիտական ուսումնասիրությունների հատվածական կամ հիմնահարցային ընդգրկումներ, հատկապես եթե խոսքը վերաբերում էր օտար երկրների կամ ազգերի ամբողջական պատմությանը: Այսուհանդերձ, մեզանում Օսմանյան Թուրքիայի դարավոր պատմության նկատմամբ հետաքրքրությունը դրսևորվել է պատմական տարբեր ժամանակաշրջաններում՝ սկսած Երեմիա Քյոմյուրճյանի պատմագիտական շարադրանքներից և վերջացրած Գ. Այվազովսկու հայտնի երկհատոր աշխատությամբ: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Վ. Բայբուրդյանի սույն աշխատությունը, ըստ էության, կոչված է լրացնելու այդ բացը՝ ելնելով ժամանակակից գիտության առջև ծառացած խնդիրներից և Օսմանյան Թուրքիայի պատմությունը նորովի գնահատելու հասկանալի պահանջմունքից: Իսկապես, հեղինակը հանրագումարի է բերել վերջին տասնամյակների՝ Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող հետազոտությունների (հայրենական ու արտերկրի) շատ արդյունքներ՝ սկսած թյուրքալեզու ցեղերի՝ Փոքր Ասիա ներթափանցումից և Ռումի (Իկոնիայի) սելջուկյան սուլթանությունից ու թուրք օսմանների պետության կազմավորումից մինչև կայսրության վերածվելը, այնուհետև՝ դրա անկումն ու կործանումը Առաջին աշխարհամարտի ավարտին: Աշխատությունը շահում է իր հրատապության ոչ պակաս կարևոր հանգամանքով. Օսմանյան կայսրության իրավահաջորդ հանրապետական Թուրքիան այսօր մնում է տարածաշրջանի ազդեցիկ պետություններից մեկը, և նրա պատմության ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն, այն պետության,

որ ճակատագրորեն դարեր շարունակ տիրում է մեր հայրենիքի տարածքների մեծ մասին, ցեղասպանության է ենթարկել մեր ժողովրդին ու այսօր ժխտում է և՛ մեկը, և՛ մյուսը՝ կանգ չառնելով պատմությունը նենգափոխելու իր անդրդվելի ընթացքի մեջ:

Օսմանյան Թուրքիայի պատմությունը, առավել ևս ամբողջական պատմությունը, հայ ընթերցողի համար ունի ճանաչողական լուրջ նշանակություն և լրացնում է այս աշխատության արժանիքները: Հեղինակը հմտորեն շրջանառության մեջ է դնում իր տրամադրության տակ եղած վիթխարի նյութը (որն առավել ընդգծվում է համապատասխան ժամանակագրական ընդգրկումներով)՝ ցույց տալով, որ Օսմանյան կայսրության լինելությունը, զարգացումն ու վերելքը ընդհուպ մինչև դրա կործանումը եղել են ավերածությունների, այլ ժողովուրդների ստրկացման ու թշվառացման պատմություն, միաժամանակ արևելյան երկրների և Եվրոպայի քաղաքական ու տնտեսական զարգացումների վրա ներազդող գործոն, առանց որի հնարավոր չէ պատկերացնել այսօրվա Թուրքիայի տեղն ու նշանակությունը համաշխարհային պատմության մեջ: Այստեղ կարելի է առանձնացնել հեղինակի ուշադրության կենտրոնում գտնվող երկու կարևոր հիմնահարցեր. նախ այն, որ Օսմանյան կայսրության և՛ ձևավորման, և՛ վերելքի պատմությունը նրա ռազմական հաջողությունների ուղեկիցն ու արդյունքն էր: Այնքան ժամանակ, երբ արդի քաղաքակրթությունը դեռևս չէր հասել իր զարգացման անհրաժեշտ որակներին, և իր բաղադրիչների մեջ (սեփականատիրական հարաբերություններ, պետական կառավարման ձևեր, ռազմական գործ, գիտություն, մշակույթ և այլն) վճռորոշը դեռևս ռազմականն էր, օսմանյան պետությունը վերաճեց կայսրության հենց այդ հաղթական պատերազմների շնորհիվ: Արևելյան Եվրոպայում և արևելքում իրենց հաջողությունների համար թուրքերը պարտական էին այդ իրողությանը: Այս վերջինը մի հայտնի չափով խթանում էր օսմանյան պետության մեջ կառավարման, հարկային

համակարգի, իրավունքի և այլ բնագավառների մեջ տեղի ունեցող փոփոխություններն ու բարենորոգումները: Կարելի է կարծել՝ թիմարի քայքայմանը, որ վկայակոչում են հայրենական ու օտար թուրքագետները որպես կայսրության հզորության անկման կարևոր նշանաձող (XVI դ. վերջ-XVII դ. սկիզբ), Օսմանյան կայսրությունը փոխհատուցում էր այդ երևույթին հակադիր՝ պետության կենսագործունեության համար անհրաժեշտ բարեփոխումներով: Կարելի է նաև կարծել, որ այս բարեփոխումներն էին ապահովում կայսրության կենսունակությունը, որին ուշադրություն է դարձնում Վ. Բայբուրդյանը որպես մյուս կարևոր հիմնահարցի. Սուլեյման Կանունին, նշում է նա, «չէր ձգտում ստեղծելու նոր իրավական համակարգ, այլ աշխատում էր արդիականացնել հինը, եղածը նոր ժամանակների պայմաններին համապատասխան: Նա միաժամանակ ճշտում, կոդիֆիկացնում և ավելի պարզեցնում էր սովորական իրավունքի և պրակտիկայի խճողված համակարգը: Սուլեյմանը հրատարակեց նոր օրենքների ժողովածու («Կանուննամե»), որում ներառված օրենքները վերաբերում էին երկրի պետական կյանքի համարյա բոլոր բնագավառներին՝ սկսած հարկային համակարգից ու հողային հարաբերություններից, վերջացրած կառավարման համակարգով» (էջ 236-237): Նշված բարեփոխումները սերտ առնչություններ ունեին կայսրության կենսունակության մեկ այլ ուշագրավ գործոնի՝ թուրքերի կողմից նվաճված ոչ մահմեդական ժողովուրդների (այդ թվում՝ և հայերի) հսկայական իմացական ու հոգևոր ուժերի նպատակասլաց օգտագործումն ի շահ կայսրության վարչակառավարչական, տնտեսական ու ռազմական գործի և արվեստների զարգացման:

Հեղինակը ճիշտ է նկատում, որ սուլթանն էր երկրի բարձրագույն քաղաքական իշխանությունն իրականացնողը, բայց, փաստորեն, այս ճշմարտությունը դառնում է հարաբերական, երբ նկատի ենք առնում ուժեղ անհատականությամբ ներկայացող

մեծ վեզիրներին, պետական կառավարման գործերի ղեկն իրենց ամուր ձեռքերում պահող քաղաքական վերնախավի և բազմաթիվ այլ բնագավառների շատ մարդկանց՝ ջախջախիչ մեծամասնությամբ բռնի կրոնափոխված ոչ մահմեդականների: Ի դեպ, կարծում ենք, որ վիճահարույց է հեղինակի այն պնդումը, թե կառավարական կառույցին զուգահեռ մահմեդական ինստիտուտը կազմված էր միայն իբրև մահմեդական ծնված անձանցից (դատավորներ, իրավագետներ, հոգևորականներ, ուլեմներ և այլն) (էջ 237): Անշուշտ, այստեղ համեմատաբար շատ էին ծնյալ մահմեդականները, բայց և քիչ չէին ոչ մահմեդականները, որոնք բռնի կրոնափոխվել էին հատկապես տխրահռչակ դեվշիրմեի միջոցով: Օսմանյան պետության գոյատևման գրավականներից մեկը, ընդսմին, նվաճված ժողովուրդների բռնի իսլամացման միջոցով նրանց հետ կենսաբանական խաչասերումների շարունակական գործընթացն էր, իրենց իսկ՝ թուրքերի գենոֆոնդի բարելավումը, որին հիմնավորված տեղ է հատկացնում հեղինակը (էջ 79): Այս գործոնները, իրենց հերթին, նպաստում էին օսմանյան բանակի և պետական ու իրավական կառույցների կատարելագործմանը և, ի վերջո, պետության կենսունակության պահպանմանը: Միաժամանակ հեղինակն իրատեսորեն է գնահատում Օսմանյան Թուրքիայի վերելքի շրջանում այդ պետության և Եվրոպայի կեցության միջև հակասականությունը: Կողմերի առճակատման պայմաններում այն, ինչը բարեբաստիկ էր օսմանյան նվաճումների համար, աղետ էր Եվրոպայի համար XV-XVII դարերում: Վ. Բայբուրդյանն այս ճշմարտությունը ցույց է տալիս բազմաթիվ իրողություններով՝ սկսած Կ. Պոլսի առման հետևանքներից, որոնք նա իրավացիորեն համարում է համաեվրոպական մշակույթին ու տնտեսությանը հասցված ուժեղ հարված (վերջին դեպքում՝ Եվրոպայից Ասիա և Սև ու Միջերկրական ծովային ուղիների փակումը, որն արգելափակում էր հատկապես Վենետիկի ու Ճենովայի լևանտական առևտուրը):

Աշխատության մեջ, ըստ ամենայնի, վեր է հանվում Օսմանյան կայսրության աստվածապետական բնույթի և դրանից բխող՝ նվաճված ազգերի ու Եվրոպայի հետ կայսրության փոխհարաբերությունների հակամարտությունը: Այս առումով հեղինակը կարևոր վերլուծությունների է դիմում օսմանյան պետության կայացման ու հզորացման շրջանում եվրոպական տերությունների հետ նրա թույլ կապերի վերաբերյալ: Կրոնական պատնեշը հեռացնում էր Օսմանյան Թուրքիային Եվրոպայի հետ քաղաքական ու մշակութային բարենպաստ առնչություններից, մյուս կողմից՝ մղում նրանց նկատմամբ երբևէ ունեցած ռազմական հաջողությունները համարելու կրոնական գերազանցության հետևանք, ավելին, ինչպես ցույց է տալիս հեղինակը, այս շրջանում «եվրոպական պետությունների հետ իր մշակութային և քաղաքական շփումների պահպանումը նա համարում էր իր համար նվաստացուցիչ» (էջ 239): Անտարակույս, իրերի դրության նկատմամբ օսմանների այսպիսի անձնապաստան վերաբերմունքը տեղի էր տալու, ի վերջո, պատմական անհրաժեշտությանը, թեկուզ և պարադոքսալ հանգուցալուծումներով: Այդպիսիք էին, ասենք, առևտրական շփումների նկատմամբ կայսրության և եվրոպացիների ունեցած տարբեր հայեցակետերը. եթե Սուլեյման Առաջինի ժամանակ Ֆրանսիային տրված կապիտուլյացիաները թուրքերը համարում էին ողորմածություն, ապա ֆրանսիացիները՝ իրենց համար երաշխավորված բացառիկ բարենպաստ առևտրական պայմաններ: Կապիտուլյացիաները, ինչպես նկատում է հեղինակը, վերածվեցին Օսմանյան կայսրության պայմանագրային պարտավորությունների, որոնք պարտադիր էին նաև թուրքերի համար: Աշխատության մեջ առանձնացվում են Վիեննայի մոտ 1683 թ. սեպտեմբերի 12-ին թուրքերի կրած պարտությունը, ինչպես և «Սրբազան լիգայի» դաշինքի դեմ դրան հետևած կայսրության դժվարին պատերազմները՝ որպես այդ երկրի անշրջելի անկման նախանշաններ: Համալիր մոտեց-

մամբ հեղինակը ցույց է տալիս, որ խոսքը միայն ռազմական պարտություններին չէր վերաբերում կամ Եվրոպայում թուրքերի առաջխաղացումը կասեցնելուն, այլ առհասարակ մի երևույթի, որը քայքայում էր Օսմանյան կայսրությունը նաև ներսից՝ ի դեմս անջատողական ձգտումների ու ժողովրդական հուզումների, որոնք խորացնում էին օսմանների պետությունը ցնցող քաղաքական ու ֆինանսատնտեսական ճգնաժամը: Հիրավի, այս շրջանում՝ 16 տարվա ընթացքում (1687-1703 թթ.), օսմանների գահը հիվանդագին ջղաձգումներ ապրեց՝ իրար հետևից փոխելով չորս տիրակալների, ինչն աննախընթաց երևույթ էր սուլթանների գահակալական տարեգրության մեջ:

Արժեքավոր եզրահանգումներ են արվում նաև Թուրքիայի ու նշված դաշինքի հետ Ռուսաստանի վարած քաղաքականության վերաբերյալ, որոնք բնութագրում են վերջինիս նվաճողական ձգտումները, ինչպես և այն, որ այդ նպատակով նա օգտագործում էր իր ախոյանի հպատակ ժողովուրդների հակասուլթանական ազատագրական պայքարը: Կարևոր է նաև արված այն լրացումը, որ արևելյան քրիստոնյաների, այդ թվում և հայերի կողմից Ռուսաստանի այդ քաղաքականությունն ընկալվում էր որպես ազատագրական առաքելություն, իսկ ռուսները՝ որպես ազատարարներ: Այլ կերպ լինել, ի դեպ, չէր կարող, որովհետև արդեն պատմականորեն ձևավորված ազգային գիտակցություն ունեցող այդ ժողովուրդները ապրում էին կրոնադավանական վայրագ խտրականության պայմաններում, ուստի իրենց ազատագրական ակնկալիքներն առնչում էին հավատակից Ռուսաստանին:

Նշված հարցադրումներն իրենց հայեցակարգային շարունակությունն ու քննությունն են գտել օսմանյան ֆեոդալիզմի ճգնաժամին և կայսրության սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող հատվածներում: Ըստ էության, կայսրության հզորության անկումը պետք է մտածողության և գործելակերպի նոր որակներ ստեղծեր Թուրքիայի տնտեսության ու քաղաքականության մեջ:

Այդ երկիրը պետք է ոտք դներ արևմտականացման գայթակղիչ ճանապարհին, թեկուզ և տարօրինակ նեղ ու անորակ կոշիկներով՝ ի դժբախտություն հատկապես դրանց տակ տառապող հպատակ ժողովուրդների: Թուրքիայի համար ճակատագրական այս երևույթի վերլուծությունը Վ. Բայբուրդյանի աշխատության մեջ զբաղեցվում է, ըստ ամենայնի, հիմնավորված, միմյանց հաջորդող երեք գլուխներում (IX-XI), որոնք նախապատրաստվում են նախորդ գլխի վերջում: Հեղինակը բացահայտում է Թուրքիայի արևմտականացման հարկադրական և դրսից թելադրված պայմանները՝ Արևելյան հարցի առաջացումը (XVIII դ. 2-րդ կես)՝ որպես հակամետ տերությունների՝ կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազատագրական ձգտումների և դրանք սեփական շահերին ենթարկելու քաղաքականության արդյունք:

Ինչպես համառոտ ձևակերպում է հեղինակը, Արևմուտքն այդ հարցը դարձնում է միջազգային քաղաքականության առարկա՝ հենվելով գիտատեխնիկական առաջընթացի և տնտեսական ու ռազմական զարգացման իր առավելությունների վրա: Նույն՝ XVIII դարում սկսվում են Օսմանյան կայսրության՝ եվրոպական երկրների հետ շփումների միակողմանիության (զուտ ռազմական ու տնտեսական իմաստով) հաղթահարումները: Անշուշտ, եվրոպական երկրների հանդեպ ունեցած զոռոզամտությունը թողնելը ևս վկայում էր կայսրության՝ իր նիրհած ներուժն արծարծելու և մի հայտնի չափով՝ նոր ժամանակներին ընդառաջ գնալու մասին:

Օսմանյան վերնախավում տակավ առ տակավ ամրանում և որակ էր կազմում բարեփոխումների անհրաժեշտության գիտակցումը, ինչը կոնկրետ օրինակներով ցույց է տրվում աշխատության մեջ: Շոշափելիորեն այդ դրսևորվեց Սելիմ III-ի օրոք (1789-1807), որի գործունեությունը աշխատության մեջ ներկայացվում է իր բնութագրական կողմերով և ռազմական պարտությունների ու բարեփոխումների ձգտման միջև տարուբերվող երկիրը ճգնա-

ժամից դուրս բերելու փորձերի դժվարին պայմաններում: Հեղինակն իրավացիորեն առանձնացնում է Ստամբուլի հունական ու հայկական վերնախավի նշանակությունը արևմտյան քաղաքակրթության արժեքներին կայսրության աղերսների ընդարձակման գործում: Իր հայտնության համար Նիզամի ջեդիդը (Նոր կարգ)՝ կայսրության ռազմաքաղաքական ու վարչատնտեսական բարեփոխումների այդ համալիր ծրագիրը, անտարակույս, պարտական էր ոչ միայն Սելիմի նախաձեռնությանը, այլև ոչ մահմեդական ազգերի վերնախավի հետ նրա գործակցությանը: Ի դեպ, վերջինիս ներուժը գնահատում էին նաև մոտալուտ հեռանկարի տեսանկյունից. օսմանյան աշխարհիկ հաստատություններում (նաև եվրոպական մայրաքաղաքներում) հանրակրթական ու մասնագիտական կրթություն ստացան ոչ միայն հարյուրավոր թուրք պատանիներ, այլև նրանց բազմաթիվ հասակակիցներ՝ այլահավատներից: Սելիմին ու Մուստաֆային հաջորդած բարեփոխումների շարքը, հատկապես ենիչերիների զորաբանակի ոչնչացումը, բանակի եվրոպականացումը, թիմարի և զեամեթի վերացումը աշխատության մեջ ներկայացվում են այդ բարեփոխումների տրամաբանության բազմակողմանի վերհանումներով: Վերոհիշյալ հիմնահարցի ամբողջական վերլուծության տեսանկյունից աշխատության մեջ ուշագրավ է նաև Մահմուդ II-ի դարաշրջանի բնութագիրը: Թուրք-եգիպտական առճակատումների, ռուս-թուրքական ռազմական բախումների ու դիվանագիտական հարաբերությունների հենքի վրա հեղինակը բնութագրական շեշտադրումներ է անում Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական կացության վերաբերյալ՝ ընդգրկելով նրա նկատմամբ միջազգային քաղաքականության որոշակի ուղղությունները:

Նշված ժամանակաշրջանի զարգացումների ընթացքը, որը ներկայացվում է բազմակողմանիորեն, պետք է հասցվեր մինչև XIX դարի 70-ական թթ. ավարտը՝ սուլթանների բարենորոգչա-

կան փորձերին, որոնց մեջ հեղինակը հիմնավորապես բացահայտում է թանզիմաթի բարեփոխումների նշանակությունը Թուրքիայի քաղաքականության և սոցիալ-տնտեսական կյանքի մեջ: Թանզիմաթը, ըստ էության, կոչված էր համադրելու օսմանյան հանրային իրավունքի և եվրոպական իրավունքի (հատկապես անձի իրավունքների տեսանկյունից) նորմերը, իրականացնելու բարեփոխումներ՝ այդպիսով կենսունակության նոր լիցքերով համակելով ամբողջ կայսրությանը: Բարեփոխումների առաջին փուլը Թուրքիային պատմական հնարավորություն էր տալիս վերածնվելու, եվրոպական քաղաքակրթության ուղիով ընթանալու կամ գոնե դրա հիմքերը ստեղծելու, ինչը պետք է ավարտվեր ձախողմամբ: Հակառակ թուրք պատմաբանների (Ահմեդ Ջևդեթ, Զ. Փոլատ) առաջ քաշած մի շարք ուշագրավ, բայց ոչ էական դիտարկումների (վարչակառավարչական կառույցների անկարողություն, խավարամոլ հոգևորականություն և այլն)՝ հեղինակը համոզում է, որ թանզիմաթի որոշ հաջողությունները դեռևս բավարար չէին կայսրության մեջ «համակարգային բնույթի էական փոփոխություններ» մտցնելու համար: Նա հատկապես նշում է ոչ մահմեդականների նկատմամբ խտրականության ու կամայականությունների հարատևումը, որ ոչ միայն տեսական, այլև հույժ կասկածելի ընթացք էր տալիս օսմանյան «նոր դարագլուխներին»՝ խոր անջրպետ առաջացնելով բարենորոգիչների և ոչ թուրք ազգերի հոծ զանգվածի միջև, զրկում առաջիններին այդ կարևորագույն գործոնի աջակցությունից: Այստեղ, կարծում ենք, հատկապես կարևոր է հեղինակի այն եզրահանգումը, որ թանզիմաթի թերատ բարեփոխումներին հպատակ ազգերը հակադրեցին ապստամբական կռիվները:

Բարեփոխումների դարաշրջանը, այսպիսով, բնութագրվում էր կայսրության համար ճակատագրական երկու ուղղությունների հակամարտությամբ՝ բարեփոխումների անկատարության, մյուս կողմից՝ հպատակ ազգերի ինքնորոշման իրավունքի հա-

կամարտությամբ: Երևույթն առավել ընդգծվում էր Թուրքիայում տերությունների վարած քաղաքականությամբ, որի զարգացումները թանզիմաթի առաջին փուլի ձախողումից հետո հասցրին Ղրիմի պատերազմին (1853-1856): Նույնը տեսնում ենք թանզիմաթի երկրորդ փուլում՝ 1850-1870-ական թթ., երբ Եվրոպայի օրհնությամբ հրապարակ նետված հաթթը հյումայունին (միլեթների կառավարումը աշխարհականացնելու ակնհայտ ուղղվածությամբ) ոչ մահմեդական հանրությունները հակադրեցին իրենց սեփական այլընտրանքը, հատկապես սլավոնների ու հայերի (1862 թ. Զեյթունի ապստամբությունը) մեջ, օսմանյան լծի դեմ ազատագրական պոռթկումներով: Հեղինակն այստեղ վեր է հանում այն ճշմարտությունը, որ վերջին հաթթի նպատակների մեջ էր մտնում ոչ թուրք ազգերի ազատագրական շարժումների մարումը:

Աշխատության մեջ էական կողմերով են ներկայացվում «նոր օսմանների» գաղափարախոսությունը, սահմանադրական շարժումը և դրա ջախջախումը՝ աբդուլհամիդյան «զուլումի» դարաշրջանի հայտնությունը՝ որպես «օսմանյան ֆեոդալական բացարձակապետության մեջ սկիզբ առնող հոգեվարքի դրսևորում» (էջ 554): Հայկական հարցի օրախնդիր արծարծումները, 1894-1896 թթ. կոտորածները այդ հոգեվարքի առարկայական դրսևորումներն էին, որոնք համոզիչ ուրվագծերով ու չափի պատշաճ սահմաններում վեր է հանում հեղինակը:

Հետագա շարադրանքում ընդգրկված են կայսրության վերջին տասնամյակի պատմությունը բոլորող հիմնահարցերը՝ երիտթուրքական հեղաշրջումն ու իթթիհադի կառավարումը, Առաջին աշխարհամարտին Օսմանյան կայսրության մասնակցությունն ու դրա կործանումը՝ մատչելի շարադրանքով և հայ թուրքագիտության գիտական սկզբունքների պահպանությամբ:

Հարկ է նկատել, որ ձեռնամուխ լինելով այսպիսի վիթխարի ու աշխատատար թեմայի (երկուստեք՝ ժամանակագրական ու

հիմնահարցային ընդգրկումներով)՝ հեղինակը կարողացել է դրանք համադրել օսմանյան պետության ամբողջական ու ներդաշնակ շարադրանքում:

Աշխատության մեջ ամբողջի և բաղադրիչի հավասարակշիռ զուգադրումը պահպանելով հանդերձ՝ Վ. Բայբուդյանը կատարել է ոչ միայն օսմանագիտական, այլև հայագիտության համար իսկապես գնահատելի աշխատանք՝ վեր հանելով համապատասխան նյութն ու իր սեփական խոսքն ասելով նաև հայագիտական հիմնահարցերի արժեքավորման մեջ:

Հեղինակը Օսմանյան կայսրության պատմության հենքի վրա հաճախակի ու պատճառաբանված հղումներ է անում հայոց պատմությանը, որ այս աշխատության անհերքելի արժանիքներից մեկն է, բնականաբար, ոչ թե ինքնանպատակ մղումներով, այլ որպես կայսրության բնութագրի առարկայացման: Եվ այս դեպքում ցանկալի կլիներ, որ հեղինակը փոքր-ինչ ավելի ուշադրություն դարձներ հաթթը հյումայունից բխած՝ միլեթների կանոնադրություններին (մեզ համար՝ 1860 և 1863 թթ. ազգային սահմանադրությունը):

Հիմնահարցի իմաստով այդ նշանակում էր միլեթների աշխարհականացմանն ուղղված՝ օսմանիզմի ու պանօսմանիզմի գաղափարախոսության գործնական կայացման անհեռանկար փորձ, հետևաբար այդ միլեթների կրոնական ու աշխարհիկ սկզբունքների հարատևում (անշուշտ, վերջինների գործունակության զգալի ընդլայնմամբ): Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև կայսրությունն անզոր էր փոխվել եվրոպական ճնշման ու սեփական թանձր անշարժության մուրճի ու զնդանի միջև՝ բացի տափակելուց, այսինքն՝ այս հակասության մեջ իր կենսունակության գրեթե բոլոր գործոնները կորցնելուց: Կան ոչ ճիշտ կամ ոչ հստակ ձևակերպումներ, ինչպես, օրինակ, հեղինակը գրում է, թե «1461 թ. Մեհմեդի ֆերմանով (հրամանագիր) Կ. Պոլսում XIV դարից գոյություն ունեցող հոգևոր առաջնորդությունը վերածվեց

հայոց պատրիարքության» (էջ 152)։ Բայց մեզ չեն հասել ո՛չ այդ ֆերմանը և ո՛չ էլ որևէ վավերագիր, որպիսիք կհաստատեին ավանդական հայ պատմագիտության (Մ. Չամչյան) այդ պնդումը։ Բուն հայկական ձեռագրերում «պատրիարք» տիտղոսը առաջին անգամ արձանագրված է 1540 թ. (Աստվածատուր պատրիարք), այսինքն՝ ենթադրյալ ֆերմանից միայն 79 տարի անց։ Ուրիշ հարց է արդեն, որ Կոստանդնուպոլսի հայոց առաջնորդի համար Մեհմեդը սահմանած լիներ պատրիարքի կարգավիճակ, ինչպիսին տրվեց հույներին (և որով պետք է ճանաչվեր հայ միլեթը)։

Այս անչափ կարևոր և հայ ընթերցողի համար վաղուց ի վեր սպասված աշխատությունը իր գիտական լուրջ արժանիքների շնորհիվ, ըստ ամենայնի, կբավարարի Օսմանյան Թուրքիայի պատմության նկատմամբ ներկայիս հասունացած բազմակողմանի հետաքրքրասիրությունը։

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Միջին դարերում Թուրքեստանի և Եվրասիայի անծայրածիր տափաստաններից ծայր էր առել թյուրքալեզու վաչկատուն ցեղերի հուժկու գաղթարշավ դեպի Արևմուտք: Հանգրվանելով հնագույն քաղաքակրթությունների օրրան Փոքր Ասիայում՝ նրանց հաջողվեց ստեղծել պետական կազմավորումներ, որոնք, աստիճանաբար հզորանալով ու ծավալվելով, կարողացան խորտակել երբեմնի հզոր Բյուզանդական կայսրությունը և նրա փլատակների վրա ստեղծել մի նոր աշխարհակալություն, որը պատմության մեջ է մտել Օսմանյան կայսրություն անունով: Այդ պետությունը ստեղծվել է հայերից և հույներից զավթված հողերի վրա:

Իր հզորությամբ ու տարածական չափերով Օսմանյան պետությունը վերջին ամենախոշոր կայսրությունն էր Մերձավոր ու Միջին Արևելքում Սասանյան Իրանից ու Արաբական խալիֆայությունից հետո: Նրա թևերը տարածվում էին երեք մայրցամաքների՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի վրա: Այդ բռնատիրական աշխարհակալ պետության տիրապետության տակ էին հայտնվել նշված մայր ցամաքների բազում երկրներ ու ժողովուրդներ: Օսմանյան կայսրությունը իր բնույթով եղել է ռազմամոլ ու ռազմաշունչ, անզուսպ նվաճողական հակումներ ունեցող պետություն:

Բոլոր դարաշրջաններում նրա հենարանն են եղել բանակն ու զինվորականությունը: Ի սկզբանե օսմանյան պետությունը հիմնվել է որպես մի զինվորական իշխանություն: Իսկ զինվորական իշխանությունը կարող էր լինել միայն բռնապետական: Բնավ պատահական չէ, որ այդ կայսրության սանձարձակ իշխանությունը ևս հետևանք էր պետության ռազմազինվորական բնույթի: Նրա գոյության ու կենսունակության առաջին պայմանը եղել են անվերապահ հնազանդությունն ու երկաթյա ռազմական կարգապահությունը:

Դարեր շարունակ Օսմանյան կայսրությունը հանդիսացել է նաև կրոնաաստվածապետական հիմքերի վրա կառուցված պետություն։

Օսմանյան սուլթանները իրենց վերագրել են համայն աշխարհի մահմեդականների հոգևոր առաջնորդի՝ խալիֆի կարգավիճակը։ Հիրավի, հուժկու թափով մտնելով պատմության ասպարեզ՝ թուրքերը վերածնեցին և նոր շունչ հաղորդեցին իսլամական աշխարհին։ Հարյուրամյակներ շարունակ հանդես գալով որպես մահմեդական երկրների առաջատար ուժ՝ տևական ժամանակամիջոցում Օսմանյան կայսրությունը կարևոր դեր էր խաղում նաև քրիստոնեական Եվրոպայի հետ մահմեդական աշխարհի հակամարտության բնագավառում։ Իսլամի հաղթական դրոշի տարածման պատրվակի ներքո օսմանցիները անընդմեջ կազմակերպում էին կողոպտչական արշավանքներ։

Անժխտելի է այդ պետության կարևոր դերակատարությունը ժամանակի միջազգային հարաբերություններում։ Պատահական չէ, որ Օսմանյան կայսրությունը դիտարկվել է մերձավորարևելյան հավասարակշռության կարևոր գործոն։ Այն բազմազգ ու բազմակրոն պետություն էր, որտեղ, սակայն, տիրապետողը թուրքերն էին, իսկ մնացած ժողովուրդները՝ հպատակներ։ Կայսրության մեջ անխախտ սկզբունք էր մահմեդականների, առաջին հերթին՝ թուրք մահմեդականների թելադրող ու տիրապետող դիրքը։ Իր գոյության 600 տարիների ընթացքում այդ պետությունը մշտապես արգելակել ու խոչընդոտել է տարբեր ժողովուրդների բնականոն զարգացումը, կասեցրել նրանց տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային առաջընթացը։

Դարեր շարունակ հայ ժողովրդի խոշորագույն հատվածի՝ արևմտահայության վրա ևս ծանրացած է եղել օսմանյան լուծը։ Այդ անագորույն լծի ներքո արևմտահայության մի քանի դարերի պատմական տարեգրությունը ողողված է արցունքով։ Հայերը զրկված են եղել իրենց դարավոր հայրենիքի տարածքում ինքնու-

ռույն քաղաքական կյանք ունենալու և անկաշկանդ զարգացման իրավունքից օգտվելու հնարավորությունից։ Մեծ հաշվով, օսմանյան տիրապետությունը հանդիսացել է այն գլխավոր խանգարիչ ուժը, որը հնարավորություն չի տվել հայ ժողովրդին բռնելու քաղաքական համախմբման ուղին և, այսպես կոչված, Թուրքահայաստանի, Պարսկահայաստանի և Ռուսահայաստանի մասնատված ու քաղաքական սահմաններով տարանջատված տարածքներում կերտելու միասնական հայկական պետություն կամ հայ ժողովրդի տեսլական հանդիսացող միացյալ և անկախ Հայաստան։

Որքան էլ որ Օսմանյան կայսրության հետ հայ ժողովրդի պատմական առնչությունները մթագնված են տխուր և դառն էջերով, մենք չենք կարող հաշվի չառնել այն իրողությունը, որ դարերի ընթացքում հայ ժողովրդի պատմական զարգացումը ընթացել է թուրք ժողովրդի պատմության հետ սերտ առնչությամբ։

«Հայ կյանքի պատմագիրն,– իրավացիորեն գրում է Լեոն,– ստիպված է ավելի ևս ընդարձակ տեղ տալ հայոց պատմության մեջ այն ազգություններին ու ազդեցություններին, որոնք քաղաքականապես և կուլտուրապես տիրապետող են հանդիսացել մեր երկրում։ Եվ որովհետև Թուրքիան ու Պարսկաստանն էին այն տիրապետողները, որոնց պատկանում էր Հայաստանը, ուստի կարևոր է ուսումնասիրել այդ երկու պետությունների քաղաքական և վարչական կազմը, հասարակական իրավակարգը և այն պայմանները, որոնք ստեղծված էին հատկապես հպատակ ազգերի համար»։

Կես հարյուրամյակ շարունակ զբաղվելով արևելագիտական հարցերի պրպտումներով և իմ հիմնական հետաքրքրությունները կենտրոնացնելով Իրանի պատմության այլևայլ խնդիրների վրա՝ ինձ մշտապես հետաքրքրել են նաև Թուրքիայի պատմությանն առնչվող հարցերը։ Նկատի ունենալով, որ մեր հայրենական պատմագիտական գրականության մեջ գոյություն չուներ

որևէ աշխատություն, որը, հարազատ մնալով պատմական փաստերին ու իրողություններին, մեր ընթերցողին մատուցեր Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ մի ընդհանրական աշխատություն, 2011 թվականին մեր կողմից հրատարակման ներկայացվեց «Օսմանյան կայսրության պատմություն» ծավալուն աշխատությունը, որի տպագրությունն իրականացվեց Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից։ Այդ գիրքը մեծագույն հետաքրքրությամբ ընդունվեց գիտական շրջանների, ուսանող երիտասարդության և հասարակայնության կողմից։ Գիրքը արագորեն սպառվեց՝ ըստ էության, մատչելի ու հասու չդառնալով ոչ միայն մասնագետ արևելագետների, այլև ընթերցող լայն շրջանակների համար։ Ուստի Երևանի պետական համալսարանի ղեկավարությունը և հրատարակչությունը նպատակահարմար համարեցին ձեռնամուխ լինել գրքի լրամշակված վերահրատարակությանը՝ ընդառաջ գնալով ընթերցողների ցանկությանը։

Գրիչ վերցնելով և շարադրելով Օսմանյան կայսրության պատմությունը՝ մենք ունեցել ենք այն համոզումը, որ Թուրքիայի պատմության հետ հայության խորը ծանոթությունը ունի ոչ միայն զուտ գիտական-ճանաչողական, այլև ավելի խորքային, ընդհուպ մինչև ռազմավարական բնույթի նշանակություն։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՑԵՂԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ: ՌՈՒՄԻ (ԻԿՈՆԻԱՑԻ) ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. *ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԳԱՂԹԱՐՇԱՎԸ ԴԵՊԻ ՓՈՔՐ ԱՍԻԱ*

Դեռևս մեր թվարկության առաջին դարերին, այսպես կոչված ժողովուրդների մեծ գաղթի ժամանակներում, եվրասիական անծայրածիր տափաստաններից վրանաբնակ վաչկատուն թյուրքական ցեղերը մերթ զանգվածորեն, մերթ ավելի փոքր խմբերով, սակայն անընդմեջ ու անդադար, ալիք առ ալիք, շարժվում էին դեպի Արևմուտք: Ժողովուրդների այդ մեծ գաղթը տեղի էր ունենում տրորված ճանապարհներով՝ Կովկասի ու Իրանի, Մերձսևծովյան շրջանների ու Բալկանների վրայով: Վաղ ժամանակներում այդ ցեղերը նույնացվում էին հոների հետ: Հայտնի է, օրինակ, որ IV դարում հոները զանգվածաբար գաղթել են Հյուսիսային Կովկաս, ապա՝ Դոնի ավազան և հյուսիսային մերձսևծովյան շրջաններ: V դարից նրանց անունով Դերբենտի անցքը կոչվել է «Հոնաց պահակ»:

Ռազմական դեմոկրատիայի պայմաններում ապրող հոների ցեղամիավորումը իր հզորության գագաթնակետին է հասել Աթիլլայի օրոք (434-453 թթ.): Նրա կազմակերպած մեծ արշավանքների ժամանակ թյուրքալեզու ցեղերի վիթխարի զանգվածներ հորդում էին Փոքր Ասիայի տարածքը: Անասունների համար արոտավայրերի մշտական փնտրտուքները, իրենց հետևից եկող անթիվ ու անհամար քոչվորների ճնշումից ու թշնամական առճակատումից ձերբազատվելու ձգտումը և այլ պատճառներ, ստիպում էին այդ ռազմիկ հովվական ցեղերին անընդհատ շարժվել՝ ժամանակավոր ու մշտական բնակության համար որոնելով համեմատաբար հարմար և անվտանգ ջրառատ ու խոտառատ վայրեր:

VI-VII դարերում խոշոր զանգվածներով Փոքր Ասիա էին ներթափանցում նաև բուլղարներ, խազարներ և սուվարներ, իսկ քիչ ավելի ուշ նաև ավարներ:

Թյուրքերի բուն նախահայրենիքը Թուրքեստանն էր, որի աշխարհագրական սահմանները խիստ դժվար է գծել: Սակայն հավաստի հայտնի է, որ թյուրքալեզու ցեղերը տարածված էին Չինաստանի հյուսիսային սահմաններից սկսած եվրասիական վիթխարի տարածքների վրա: Այդ ցեղերին չինացիներն անվանում էին Թու-քյուե, կամ Թյու-քյու (հավանաբար թյուրղյութ թուրքական ձևից): Որոշ չինական աղբյուրներ նրանց կոչում են Հիոն նու, որ բառացի նշանակում է «ըմբոստ ստրուկներ»: Այդ նույն չինական աղբյուրները նրանց նկարագրում են որպես ռազմաշունչ ավյունով լեցուն, արագ տեղաշարժվելու ունակությամբ օժտված, եռանդուն ու պատերազմիկ, գոյության համար պայքարի բովում թրծված, չուրջ տարին բնության ուժերի հետ գոտեմարտի մեջ գտնվող մի ցեղ:

Արաբները թյուրքեր էին անվանում Միջին ու Կենտրոնական Ասիայի բոլոր քոչվորներին, անկախ իրենց լեզվից:

Գիտությունը դեռևս հստակ պատասխան չունի թյուրքերի ծագման (էթնոգենեզի) վերաբերյալ, թեև այդ առթիվ գիտնականների կողմից առաջ են քաշվել տարբեր վարկածներ: Թյուրքական ցեղերի պաշտամունքը աչքի է ընկել բազմազանությամբ: Նրանց մեծ մասը եղել է կռապաշտներ (տարածված է եղել հողի, օդի, ջրի ու կրակի պաշտամունքը և այլն), մի զգալի մասն էլ դավանել է շամանականությունը: Միայն IX դարում Փոքր Ասիայում հաստատված թյուրքերը հրաժարվել են իրենց հեթանոսական հավատալիքներից և ընդունել են իսլամը:

Թյուրքերի տոտեմը գայլն էր: Ըստ թյուրքական առասպելներից մեկի՝ թյուրքերը իրենց ծագումը վերագրում էին գայլին, ուստի նրանց դրոշների վրա պատկերված էր գորշ գայլի գլուխ:

Վաղ միջնադարում թյուրքալեզու ժողովուրդներն ունեցել են նաև իրենց պետականությունը՝ այսպես կոչված թյուրքական խաքանությունը (խաղանաթը), որը VI դարում հասել է մեծ հզորության, տարածվելով Չինաստանի հարակից երկրամասերից մինչև Բյուզանդական կայսրության սահմանները: Բյուզանդական ճկուն դիվանագիտությունը, հատկապես Հուստինիանոսի ժամանակներում, թյուրքալեզու ժողովուրդների ասպատակություններից պաշտպանվելու համար դիմում էր այդ ցեղերին միմյանց դեմ հրահրելու փորձված քաղաքականությանը: Իրանը և Բյուզանդիան նաև հարուստ նվերների միջոցով թյուրքական խաքանության հետ ձեռք էին բերում խաղաղություն, իսկ առանձին դեպքերում նույնիսկ դաշինք: Թյուրքական այդ պետության և Բյուզանդական կայսրության միջև

չփումները ամենայն հավանականությամբ կրել են այն աստիճանի ծավալուն բնույթ, որ կողմերը միմյանց հետ կապված են եղել դինաստիական ամուսնություններով: 745 թ. ներքին հակասությունների և արտաքին հարձակումների հետևանքով թյուրքական այդ խաքանությունը կործանվել է:

Կենտրոնական Ասիայում կամ Թուրքեստանում վաչկատուն-քոչվորական կյանքով ապրող բազմաթիվ ցեղերի մեջ կային նաև այնպիսիները, որոնք սկսում են հանդես գալ սեփական անուններով (ղրղզներ, ղփչաղներ, օղուզներ, ույղուրներ, թուրքմեններ, խաքասներ և այլն): Շնորհիվ ցեղային կազմակերպության, թյուրք-քոչվորների մոտ չափազանց ուժեղ է եղել ցեղային ու լեզվական ընդհանրության զգացումը, մի հանգամանք, որն անկասկած նպաստել է տարբեր ժամանակներում նրանց կողմից պետականության կերտմանը: Բացի Կենտրոնական Ասիայից, ցեղերի շարժումը դեպի Փոքր Ասիա սնուցող կարևոր կենտրոն է հանդիսացել նաև Իրանի հյուսիս-արևելյան Խորասան նահանգը, որտեղ առկա էին թյուրքերի խոշոր կուտակումներ: Սասանյան պետությունը փորձում էր իրեն հատուկ հեռատես ու ճկուն դիվանագիտությամբ կասեցնել այդ ցեղերի շարժումը դեպի իրանական պետության սահմանները: Դիվանագիտության անզորության դեպքում գործողության մեջ էր մտնում զենքի ուժը: Պատմությամբ վկայված է, որ Սասանյան Խոսրով Անուշիրվան թագավորը 562 թ. իր առաջին հաղթանակն է տարել դեպի Արևմուտք շարժվող քոչվորների նկատմամբ: Այսպիսով, ծայր էր առնում Իրանի և Թուրանի անվերջանալի գոտեմարտը, որն ուղեկցվում էր կործանարար և արյունոտ պատերազմներով: 589 թ. Սասանյան զորավար, Հայաստանի մարզպան Բահրամ Զուբինը Հերաթի մոտ ջախջախեց 300 հազարանոց թյուրքական բանակը, Իրանը փրկելով վերահաս կործանումից: Դրանից հետո երկու տասնյակ տարի շարունակ թյուրքերը չէին համարձակվում խախտել Իրանի սահմանները:

Բյուզանդական կայսրերը խոչընդոտներ չէին հարուցում թյուրքախոս ցեղերի շարժման առջև դեպի իրենց փոքրասիական տիրույթները, նպատակ ունենալով օգտագործել նրանց ռազմական ուժը թե՛ ներքին օգտագործման, այսինքն կայսրության ներսում ապստամբությունների ու խռովությունների ճնշման և թե՛ արտաքին նվաճումների համար: Ավելին, Կոստանդնուպոլսի համաձայնությամբ, բյուզանդական իշխանությունները այդ ցեղերին տեղավորում էին իրենց անատոլիական տիրույթներում, հաճախ նրանց շնորհելով լայն իրավունքներ ու արտոնություններ:

IV–VII դարերում թյուրքերի այդ նախասկզբնական թափանցումը Փոքր Ասիա այնուամենայնիվ, հետքեր չի թողել այդ երկրամասի էթնիկական պատմության մեջ: Նախ ներթափանցումը քանակապես եղել է շատ աննշան գերակշիռ դեր խաղալու համար: Ներթափանցած թյուրքական տարրերը արագ կլանվում էին տեղական էթնոսի կողմից, համաձուլվում նրա մեջ, ի վիճակի չլինելով հիմնավոր փոփոխության ենթարկելու Փոքր Ասիայի էթնիկական պատկերը: Թյուրքական զանգվածը դեռևս ի զորու չէր նաև համախմբվելու և իր թելադրիչ պայմանները դնելու Բյուզանդական պետության առջև, ինչպես դա կատարվեց ավելի ուշ շրջանում:

VII դարում խորը անհայտության միջից հախուռն թափով պատմության ասպարեզ մտած արաբները ևս շատ արագ գնահատեցին թյուրքական ցեղերի մարտական հատկանիշները: Քոչվորական դժվարին կյանքը այդ ցեղերին դարձրել էր պատրաստի զինվորներ: Թյուրք ռազմիկներն աչքի էին ընկնում իրենց տոկունությամբ, ներքին կարգապահությամբ, մարտական ոգով, ցեղային համերաշխության զգացումներով, դժվարություններին դիմանալու և սակավապետ լինելու քոչվորներին հատուկ հատկանիշներով: Նրանք բացառիկ ճարպիկ հեծյալներ էին և հիանալի նշանառու նետաձիգներ: Հատկապես Աբբասյան խալիֆները լայնորեն օգտագործում էին թյուրքական ցեղերին դեպի Փոքր Ասիայի հարուստ ու բարեբեր շրջանները ասպատակ սփռելու, հարուստ ավար ձեռք բերելու և իրենց տիրապետությունների սահմանները օտար ներխուժումներից պաշտպանելու համար: Արաբները Անատոլիայում մահմեդականացած թյուրքերից կազմեցին «ղազիների» («հավատի մարտիկներ») ջոկատներ, որոնց միջոցով չոչափելի հարվածներ էին հասցնում Բյուզանդիայի կենսական կենտրոններին: Թյուրք ռազմիկներից մահմեդականություն ընդունածները հնարավորություն ունեին այսպես կոչված «ավագ ստրուկների» կարգավիճակից բարձրանալ վերև և խալիֆայության ռազմական ու քաղաքական համակարգում զբաղեցնել բարձր պաշտոններ: Արդեն IX դարի վերջին խալիֆայությունում զինվորական պաշտոնների մեծ մասը և բազմաթիվ քաղաքական պաշտոններ զբաղեցնում էին թյուրք-մահմեդականները:

Աբբասյան խալիֆաները թյուրքալեզու ցեղերին բնակեցնում էին խալիֆայության արևմտյան մարզերում՝ նրանց օգտագործելով որպես ռազմական ուժ իրենց տիրապետությունների սահմանները պաշտպանելու համար: Այդ քաղաքականության հետևանքով Փոքր Ասիայի արևելքում՝ Բյուզանդիայի սահմանների մոտ, սկսեցին երևան գալ թյուրքական ցեղերի բնակավայրեր:

Այսպիսով, և՛ Բյուզանդական կայսրությունը և՛ Աբբասյան խալիֆայությունը իրենց քաղաքականությամբ նպաստում էին Փոքր Ասիայի ապագա թյուրքացմանը: Սակայն գոյություն ուներ նաև այդ գործընթացին նպաստող մեկ այլ, ոչ պակաս կարևոր գործոն: Բանը նրանումն է, որ Կենտրոնական Ասիայից տասնյակ հազարավոր թափառաշրջիկներ, հանցագործներ, խռովարարներ, սովալլուկ ու անգործ մարդիկ, որոնք փնտրում էին ապրուստի միջոցներ, հոծ խմբերով շարժվում էին դեպի արևմուտք, մահմեդական աշխարհից դուրս գտնվող երկրներ, այդ թվում նաև Փոքր Ասիա: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում նաև «հավատի զինվորները»՝ ղազիները, որոնք իրենց կյանքի նպատակն էին հռչակել պայքարը «անհավատների» դեմ, սակայն իրականում նրանց բոլորի իրական նպատակը կողոպուտն ու թալանն էր: Այդ կազմակերպված ու մեծաթիվ ավազակախմբերը անընդհատ համալրվում էին թյուրքական այն տարրերով, որոնք փնտրում էին արոտավայրեր ու քոչավայրեր: Այդ զինված ավազակախմբերը հաճախ անցնում էին Բյուզանդիայի սահմանը և զարհուրելի ասպատակ սփռում, մանավանդ այն ժամանակ, երբ կայսրությունը դրսևորում էր թուլության ակնառու նշաններ, և ի վիճակի չէր լինում կազմակերպել իր սահմանների արդյունավետ պաշտպանություն:

Փոքր Ասիան ասպատակող թյուրքական ավարառու հորդաների մի մասը արշավանքից հետո չէր վերադառնում հետ, գերադասելով հաստատվել այդ երկրամասի հարուստ ու բարեկեցիկ վայրերում, ռազմական ուժի օգնությամբ այնտեղ ձեռք բերելով տիրապետող դիրքեր: Այդ նորելուկների առանձին առաջնորդներ սկսեցին իրենց դրսևորել որպես ինքնագլուխ ու անկախ տիրակալներ, ամբողջ շրջաններ ենթարկելով իրենց հսկողությանը:

X դարը նշանավորվեց Միջին Ասիայից և Խորասանից թյուրքական ցեղերի նոր հուժկու հոսքով դեպի Փոքր Ասիա: Գաղթի այդ նոր ալիքը պայմանավորված էր նրանով, որ արոտավայրերի ու տիրապետության համար Մերձարալյան շրջանում թյուրքալեզու ցեղերի միջև բորբոքված արյունախանձ պատերազմների հետևանքով, պարտված ցեղերը հարկադրված էին լքել իրենց բնակավայրերը և փնտրել նոր «կենսական տարածքներ» իրենց գոյությունը շարունակելու համար: Գոյության կռվում պարտություն կրած այդ ցեղերը հուժկու ալիքով արդեն սովորական դարձած ճանապարհներով սկսեցին շարժվել դեպի Արևմուտք՝ ցրվելով գլխավորապես Արևմտյան Հայաստանի և Անատոլիայի դանադան մասերում: X–XII դարերում

Թյուրքական ցեղերը՝ պեչենեգները, ուզերը, կումանները (ղփչաղները, պոլովեցները) չդադարող հոսքով Փոքր Ասիա էին ներթափանցում նաև Բալկանների կողմից: Ինչպես Արևելքից եկած իրենց ցեղակիցները, այնպես էլ դրանք, որպես կանոն, ռազմական ծառայության էին անցնում բյուզանդական կայսրերի մոտ:

XI դարում Կենտրոնական Ասիայից Փոքր Ասիայի սահմաններին մոտեցավ Թյուրքալեզու ցեղերի մի նոր հուժկու գաղթի ալիք, որոնք ընդհանրական անվան տակ հայտնի էին իբրև օղուզներ: Արաբները և պարսիկները նրանց անվանում էին գուզզ: Օղուզական էթնոսի ձևավորումը սկզբնավորվել է այսպես կոչված Արևմտյան Յոթ գետերի շրջանում: VII դ. սկզբին Թյուրքական խաքանության կազմում առաջացել էր «Թոքուզ օղուզի» (բառացի ինն օղուզ) ցեղային միությունը, որում, հավանաբար, գերիշխող դիրք են ունեցել ույղուրները: 745 թ. Թյուրքական խաղանաթի անկումից հետո այդ ցեղերը սկսում են շարժվել դեպի Սիր Դարյա գետի ստորին հոսանքները, որտեղ IX դ. կեսերին առաջանում է սիրդարյական այսպես կոչված յաբգուների պետական կազմավորումը, որն իրենից ներկայացնում էր քոչվորական ցեղերի մի համադաշնություն:

IX դ. վերջին և X դ. սկզբին օղուզների ցեղամիություն է առաջացել նաև Մերձարալյան և Հյուսիսային Մերձկասպյան տափաստաններում:

Սիրդարյական յաբգուների տերության մեջ մտած ցեղերը ժամանակի ընթացքում ստացան «օղուզներ» ընդհանրական անվանումը: Ընդ որում, արդեն IX դարից սկսած ընդհուպ մինչև XI դ. սկիզբը առանձնանում են էթնիկական երկու ընդհանրություն՝ արևմտյան և արևելյան օղուզները: XI դարում Սիրդարյայի հարթավայրերում առաջացել է օղուզների պետությունը, որը XI դարի կեսերին կործանել են արևելքից եկած ղփչաղները: Օղուզների մի մասը քաշվել է արևմուտք և բնակություն հաստատել հարավռուսական տափաստաններում, մնացածը՝ սելջուկյան Թուրքերին միանալով շարժվել է դեպի Առաջավոր Ասիայի երկրները: Օղուզների արևելյան ճյուղը հաճախ անվանում են նաև «Թուրքմեններ»:

X դարում օղուզա-Թուրքմենական քընըք ցեղից բարձրանում է Սելջուկի ցեղը: Իր անվանումը նա ստացել է կիսաառասպելական Սելջուկի անունով, որը և հանդիսացավ Սելջուկյան դինաստիայի հիմնադիր: Այդ դինաստիայի (1038–1194) իշխանությունը ճանաչած օղուզներին ևս սկսեցին անվանել սելջուկներ:

Օղուզների խորհրդանիշը առասպելական գորշ գայլն էր, իսկ

կրոնը՝ հեթանոսությունը: X-XI դարերում իսլամն ընդունած Սելջուկյանները պայքար ծավալեցին օղուզական հեթանոս ցեղախմբերի ու նրանց առաջնորդների դեմ, նրանց պարտադրելով իրենց իշխանությունը և կրոնը:

Սելջուկյանները իրենց առաջին հարվածը հասցրին Ղազնևիների ուժեղ թյուրքական պետությանը, որի կորիզը Իրանի Խորասան նահանգն էր: 1040 թ. մայիսին Մերվից արևելք ընկած Դանդանաքան կոչված վայրի մոտ Սելջուկյանները խորտակեցին Ղազնևիների հզոր պետությունը: Այդ իրադարձությունն իրենով նշանավորում էր Արևմտյան Ասիայում նոր տերության ծնունդը, որը հայտնի է Սելջուկյան պետություն անունով: Լեոյի արտահայտությամբ, այսպիսով հրապարակ էր գալիս «անհաչտ ու մոլեռանդ իսլամի մի նոր տեսակ՝ թուրքական իսլամ»:

Սելջուկների մասին Թովմա Արծրունի պատմիչը գրել է. «Նրանք ունեն արյունարբու գազանների բնություն: Ահավոր կերպարանք ունեցող ցեղեր են, քանի որ նրանց դեմքերի տեսքը զարհուրում է ու ահաբեկում դիտողներին: Նրանք վայրի գազանների նման բնակվում են լեռներում, դաշտերում և անապատներում և գիշակեր են գազանների պես: Ձեն պատվում մեծամեծներին, չեն խնայում ծերունիների սպիտակ մազերը և պատկառելիությունը, չեն խղճում երիտասարդներին ու մանուկներին, ոչ էլ խնայում են մանկությունը: Ջար և ժանտ ժողովուրդ են...»:

Սելջուկյան պետության կազմավորումն էլ ավելի խթանեց օղուզա-թուրքմենական ցեղերի գաղթային շարժումը դեպի Փոքր Ասիա: Ավելի շուտ դա թյուրքախոս ցեղերի մի հեղեղ էր դեպի այդ երկրամասը: Գաղթի այդ հուժկու ալիքը ոգեշնչվում էր իսլամի կողմից, որպես հավատի մարտիկների՝ դազիների սրբազան պատերազմ («ջիհադ», «ղազավաթ») «անհավատների» դեմ: Պատերազմը հանդիսանում էր իսլամը տարածելու ու հաստատելու գլխավոր միջոց: Օղուզա-թուրքմենական գաղթային շարժումները այսուհետև դառնում էին Արևմտյան Ասիայի XI-XII դդ. պատմության մշտական գործոն: Սելջուկյան սուլթաններն իրենց հերթին աշխատում էին ռազմատենչ քոչվորական հորդաներին ուղղել դեպի արևմուտք՝ Իրանի և Բյուզանդիայի տարածքներում նվաճումներ կատարելու համար:

Դեռևս 1017 թվականից սկսած տեղի էին ունենում օղուզների զանգվածային գաղթեր դեպի Իրան: Այդ ժամանակ Իրանի արևելքում գոյություն չուներ քաղաքական և ռազմական այնպիսի մի ուժ,

որն ի վիճակի լիներ հակազդելու սելջուկյան ջոկատների հաղթական առաջխաղացմանը:

Արդեն XI դ. 30-40-ական թվականներին սելջուկները մի քանի ռազմական հարձակումներ կատարեցին դեպի Անդրկովկաս և Փոքր Ասիա, որոնց առաջնորդներն են եղել սելջուկյան առաջին սուլթան Թողրուլ բեկի (1038-1063) հորեղբոր որդիներ Իբրահիմ Յընալը և Քութալմըշը: «Այդ օրերին,- գրում է դեպքերին ականատես պատմիչ Մատթեոս Ուռհայեցին,- արյունարբու և գազազած ժողովուրդը... սփռվեց աշխարհի երեսով մեկ, ոչ մի գավառ հանգիստ չթողնելով: Քրիստոնյաների բոլոր երկրները մատնվեցին սրի և գերության, երկրից չքացան երկրագործական մթերքները, սպառվեց հացը, մչակն ու աշխատավորը սրի քաշվեցին, ամենուրեք տարածվեց սովը: Բազում գավառներ մարդաթափ եղան, քանդվեց աշխարհն Արևելից, ավերակ դարձավ հոռոմոց երկիրը...»: «Այդ օրերին,- շարունակում է Ուռհայեցին,- անհավատների խուժադուժ ազգը, որ Թուրք է կոչվում, արշավելով մտավ Հայաստանի Վասպուրական գավառը, սկսեց անգթաբար սրի քաշել քրիստոնյաներին... Սա արյունարբու գազանների առաջին հանդես գալն էր... Մինչ այն ժամանակ ոչ ոք չէր տեսել թուրքական հեծելազոր, հանդիպելով տեսան նրանց տարօրինակ արտաքինը. նրանք աղեղնավորներ էին, կանանց նման հերարձակ»:

Հայաստանի տարածքում սելջուկները 1048-1049 թթ. հանդիպել են բյուզանդական Կոնստանդինոս IX Մոնոմախ կայսեր արևելյան բանակի և նրա դաշնակիցների՝ հայկական և վրացական զորամասերի հետ: Սելջուկները առաջին լուրջ պարտությունը հասցրին քրիստոնյաների միացյալ ուժերին: Արդեն XI դարի 40-ական թվականների վերջին սելջուկյան զորքերը հասան Բյուզանդական կայսրության տիրույթների սահմաններին: Արիստակես Լաստիվերտցի պատմիչը գրում է. «... Յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս արձակեալ ի կերակրոյ, և եկեալ մինչև ի գաւառն Բասեան... քանդեալ ապականեցին գաւառս քսան և չորս սրով և հրով և գերութեամբ»:

«Մեծ սելջուկյանների» նշանավոր սուլթան Ալփ Արսլանը (1063-1072, «խիզախ առյուծ») 1067-1068 թթ. գահաժառանգ Մելիք շահի հետ անձամբ էր գլխավորում արշավանքները դեպի Փոքր Ասիա՝ թյուրքական ցեղերի ռազմական եռանդն ուղղելով նախ դեպի քրիստոնյա Հայաստանը, իսկ ապա դեպի Բյուզանդիա: Հայկական աղբյուրներում «մահաշունչ ու արյունարբու գազան», «մարդախողխող սուլթան» կոչեցյալ Ալփ-Արսլանը 1064 թ. գրավեց ու ավերածու-

թյան մատնեց հայոց Բագրատունյաց պետության մայրաքաղաք Անին, սրի քաշելով նրա բնակչության մի մասին: «Այս տարիներին երկնքի բարկության դուռը բացվեց մեր աշխարհի վրա: Թուրքեստանից եկան բազմաթիվ զորքեր, որոնց երիվարները սրընթաց էին արծիվների պես. նրանց սմբակներն ամուր էին ինչպես ապառաժ: Նրանք սաստիկ սպառազինված էին. աղեղները լարված, նետերը միշտ սուր»,- ասում է Ուռհայեցին:

Արդեն XI դ. 70-90-ական թվականներին սելջուկյան աշխարհակալության հյուսիսային սահմանն անցնում էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով ու Սև ծովով, հարավում՝ Պարսից ծոցով ու Սիրիական անապատով, արևելքում նրանց տիրույթները սկսվում էին Կաշկարից ու Արալի ծովից, իսկ Արևմուտքում հասնում մինչև Միջերկրական ու Մարմարա ծովերը:

Գնալով ավելի ու ավելի համառ էր դառնում սելջուկների ճնշումը բյուզանդական կայսրության վրա: Նրանք Բյուզանդիային սեղմում էին իրենց սահմանամերձ տարածքներում գոյություն ունեցող պահակային կետերով, այսպես կոչված «ուչերով կամ ուջերով», որոնք կազմում էին խոշոր ռազմա-վարչական միավորներ՝ ուչբեյություններ: Նրանցում լիովին իշխում էին կառավարման աշիրեթային (տոհմա-ցեղային) ձևերը: Բյուզանդիան փորձում էր իր սահմանապահ զորամասերի՝ «աքրիթների» միջոցով երկիրը պաշտպանել քոչվորների ավերիչ ասպատակություններից, սակայն ապարդյուն: Թուրք-սելջուկների ճնշման տակ Բյուզանդիան նահանջում էր դեպի Արևմուտք:

Բյուզանդական կառավարող շրջանների համար կարճ ժամանակ պահանջվեց համոզվելու համար, որ սելջուկները սովորական ավարառու քոչվորներ չեն, որ տարբեր ժամանակներում հողմի պես գալիս ու անցնում էին ընդարձակ կայսրության սահմաններից: Նրանք համոզվել էին, որ այդ «բարբարոսները» եկել են որ մնան:

Սելջուկների հաջողության կարևոր գրավական էր հանդիսանում այն, որ թեև XI դարում Բյուզանդիան հանդիսանում էր զարգացած ավատական պետություն, սակայն այն թեակոխել էր իր վայրէջքի ու մայրամուտի շրջանը և դարի երկրորդ կեսին ծվատվում էր ներքին հակասությունների, երկպառակությունների, գահակալական արյունոտ ընդհարումների, ծայրամասային շրջանների կառավարիչների ինքնագլխության և անջատողական շարժումների պատճառով: Բավական է ասել, որ միայն 1057-1081 թվականների ընթացքում Բյուզանդական գահի վրա փոխվել է հինգ կայսր:

Փոքր Ասիայում Թուրք-սելջուկների հաջողություններին մեծապես նպաստում էին հենց իրենք՝ բյուզանդական կայսրերն ու առհասարակ իշխող վերնախավը: Բյուզանդիան փորձում էր ռազմաշունչ թյուրքական ցեղերի (պեչենեգների, կալաչների, կարլուքների, ղփչաղների, ղուզերի (օղուզների) և այլն) միջոցով կանգնեցնել Թուրք-սելջուկների առաջխաղացումը: Դա վերին աստիճանի վտանգավոր ձեռնարկ էր և ենթարկվեց կատարյալ ձախողման: Այդ ցեղերը ոչ միայն արդյունավետ պայքար չձեռնարկեցին սելջուկների դեմ, այլև առաջնորդվելով քոչվորական-ցեղային զգացումներով՝ հաճախ անցնում էին հակառակորդի կողմը կամ պարզապես չէին դիմադրում նրան:

Կասկածից վեր է, որ Հայաստանը կարող էր խաղալ կուռ պատնեշի դեր արևելքից դեպի Բյուզանդիայի սահմանները հորդացող վաչկատուն ցեղերի, այդ թվում նաև Թուրք-սելջուկների առջև: Սակայն նվաճելով Հայաստանը, բյուզանդացիները հայ իշխաններից շատերին, ինչպես նաև բնակչության խոշոր զանգվածների, տեղափոխեցին Կենտրոնական Անատոլիա, Կիլիկիա, Թրակիա, Հյուսիսային Սիրիա և այլն, դրանով իսկ մերկացնելով իրենց պետության արևելյան սահմանները և դրանք դարձնելով խոցելի ու անպաշտպան: Իսկ ամենաարտառոցը թերևս այն էր, որ դրսևորելով քաղաքական կուրություն և հանցավոր անհեռատեսություն, Բյուզանդական կայսրությունը աջակցություն ցույց չտվեց հայ ժողովրդի դիմադրության շարժմանը Թուրք-սելջուկների և Թյուրքալեզու այլ ցեղերի դեմ: Հիրավի, Նիկողայոս Ադոնցի արտահայտությամբ, Բյուզանդիան «մատնեց Հայաստանը սելջուկյան հորդաների ձեռքը» և ճանապարհ հարթեց իր իսկ կործանման համար:

1068 թ. գահ բարձրացած նշանավոր զինվորական Ռոմանոս IV Դիոգենեսը (1068-1071) այնուամենայնիվ գիտակցել էր, թե իրենց հոռի քաղաքականության հետևանքով ինչպիսի ահռելի սպառնալիք է կախված առանց այն էլ ռազմական ու քաղաքական հոգեվարքի մեջ գտնվող կայսրության վրա: Նա մեծագույն եռանդով ձեռնամուխ եղավ սելջուկների հետագա առաջխաղացմանը դեպի Արևմուտք կասեցնելու գործին: Այդ ծրագրի նպատակն էր նաև վերականգնել իր պետության հսկողությունը Հայաստանի նկատմամբ, որը փաստորեն արդեն կորած էր կայսրության համար:

Սակայն Ռոմանոս IV-ի այդ ձեռնարկը ուշացած էր, և դեպքերի զարգացումների մեջ բեկում մտցնելու հավանականությունը ուղղակի չնչին:

Կատարելով զորահավաք՝ կայսրը կարողացավ իր դրոշի ներքո

համախմբել ութսուն հազարանոց մի բանակ ու անձամբ գլխավորելով այն, զորաշարժ կատարեց դեպի արևելք: Մինչև 1071 թվականը, այսինքն՝ սելջուկյան գլխավոր ուժերի հետ վճռական բախումը, իր ռազմարշավի ընթացքում կայսրը ձեռք բերեց որոշ հաջողություններ: Կողմերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1071 թ. օգոստոսի 19-ին, Փոքր Ասիայի արևելքում, Մանազկերտ քաղաքի մոտ: Այդ ճակատամարտը իր հետևանքներով հանդիսացավ համաշխարհային պատմության բախտորոշ անցքերից մեկը: Դա թշնամական ահռելի ուժերի սովորական բախում չէր, այլ կենաց ու մահու գոտեմարտ երկու վիթխարի կայսրությունների և համաշխարհային երկու կրոնների միջև: Այդ ժամանակ դեռևս ոչ ոք չէր գիտակցում, որ այդ ճակատամարտը ունենալու է ճակատագրական նշանակություն ոչ միայն Բյուզանդական կայսրության, այլև առհասարակ ողջ Առաջավոր Ասիայի համար:

Շտապ հավաքված ու մեծ մասամբ վարձկան զինվորներից կազմված բյուզանդական բանակում բացակայում էր կարգապահությունը, հավատարմությունը, մարտական ոգին և հաղթանակի հասնելու ձգտումը: Զորավարների մեջ կային Ռոմանոս IV Դիոգենեսին անձամբ ոխերիմ թշնամիներ, որոնց գործողություններին ուղղություն էր տրվում կայսեր նկատմամբ թշնամաբար տրամադրված Կոստանդնուպոլսի ազնվականության բարձր շրջանների կողմից: Ճակատամարտի հենց առաջին օրը տեղի ունեցան դավադրության ու մատնության դեպքեր, իսկ երկրորդ օրը, կռվի վճռական պահին, մարտի դաշտը դավաճանաբար լքեց զորավար Անդրոնիկոս Դուկասը, որը կայսեր ամենաոխերիմ թշնամիներից մեկի որդին էր: Նրա օրինակին հետևեցին նաև այլ զորապետներ: Ավելին, ճակատամարտի ընթացքում բանակի մեջ խուճապ առաջացնելու նպատակով, Դուկասը կեղծ լուրեր տարածեց, թե իբր զորքերի առաջապահ զորամիավորումները կրել են ջախջախիչ պարտություն և ռազմի դաշտից դիմել են խուճապահար փախուստի: Բյուզանդացիների պարտությանը նպաստեց նաև այն, որ նրանց բանակի կազմում կային վարձկան պեչենեգներ, դուզեր, ղփչաղներ և թյուրքական մի քանի այլ ժողովուրդներ, որոնք վճռական պահին հակառակորդի զորքերի մեջ տեսնելով իրենց ցեղակիցներին, դավաճանեցին բյուզանդական կայսրին և անցան թշնամու կողմը:

Մանազկերտի ճակատամարտն ավարտվեց բյուզանդական զորքերի սոսկալի պարտությամբ: Ռոմանոս Դիոգենես կայսրը, որը ճակատամարտի ժամանակ դրսևորեց անվեհեր խիզախություն ու անձնա-

զոհություն, գերի ընկավ Ալփ-Արսլանի ձեռքը: Այդ աղետից հետո սելջուկների առջև այլևս բաց էր ճանապարհը դեպի Փոքր Ասիա: «1071 թ. Մանազկերտի պարտության ճակատագրական սարսափելի օրը,- գրում է գերմանացի բյուզանդագետ պրոֆեսոր Հ. Գելցերը,- Բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր: Թեև նրա հետևանքներն իրենց բոլոր ահավորությամբ անմիջապես զգալի չեղան, սակայն Փոքր Ասիայի արևելյան մասերը, Հայաստանը և Կապադովկիան, որոնք այնքան կայսրեր և զորապետներ էին տվել և կազմում էին պետության իսկական ուժը՝ ընդմիշտ կորած էին կայսրության համար և թափառական թուրքը հաստատեց հին հռոմեական փառահեղության ավերակների վրա իր վրանը»: Իսկապես, սելջուկ-թուրքերը այլևս իրենց դեմ չունենալով սահմանային արգելքներ, հորդեցին դեպի նոր հողերը:

Ճակատամարտից հետո կողմերի միջև կնքվեց խաղաղության դաշնագիր: Ռոմանոս Դիոգենեսը որպես փրկագին իր գերությունից ազատվելու համար պարտավորվում էր վերադարձնել թուրք գերիներին և վճարել տարեկան հազար դինար տուրք: Նա իր փոքրասիական տիրույթների մի զգալի մասը, այդ թվում Մանազկերտը, Եդեսիան, Մանբիջը և Անտիոքը հանձնում էր սելջուկներին որպես երաշխիք այն բանի, որ ինքը հավատարիմ կմնա իր կնքած պայմանագրին:

Գերությունից ազատվելուց և մայրաքաղաք վերադառնալուց հետո Բյուզանդիայի պալատական շրջանները չընդունեցին Ալփ-Արսլանի հետ կնքված դաշնագիրը, այն համարելով նվաստացուցիչ ու դավաճանական, կուրացրին Ռոմանոս Դիոգենեսին և գահընկեց արեցին նրան:

Մանազկերտի հաղթական ճակատամարտից հետո, 1073 թ. սկսած, սելջուկները Ալփ-Արսլանի որդի Սուլեյման իբն Քութալմըշի (Ղութալմըշ) գլխավորությամբ սկսեցին Փոքր Ասիայի նվաճումը: Նրանց հաղթական առաջխաղացմանը մեծապես նպաստում էին Բյուզանդիայի ներքին գահակալական կռիվները, զորավարների անընդմեջ երկպառակությունները և այլն: Փոքր Ասիայի տեղական բնակչությունը ևս թույլ դիմադրություն էր ցույց տալիս զավթիչներին: Դա գլխավորապես պայմանավորված էր նրանով, որ բյուզանդական իշխանությունների կողմից ճորտատիրական անլուր շահագործման ենթարկվող գյուղացիությունը խորը ատելությամբ էր լցված բյուզանդական ազնվականության նկատմամբ: Շատերը նույնիսկ թուրքերին գերադասում էին բյուզանդացիներից: Սուլեյմանը վարպետորեն օգտվեց այդ տրամադրություններից:

Բյուզանդական Ալեքսիոս I Կոմնենոս կայսրը հարկադրված էր Սուլեյմանի հետ, որին արաբ պատմիչներն անվանել են «Անատոլիայի նվաճող», կնքել պայմանագիր, որով մինչև Դրակոն (Կըզըլ իրմաք) գետն ընկած հողերը զիջում էր սելջուկներին:

Մանազկերտի աղետը ցնցել էր նաև քրիստոնյա աշխարհը: Ճակատամարտից երեք տարի անց, 1074 թ. Հռոմի Գրիգորիոս VII պապը կոչով դիմեց այն քրիստոնյաներին, որոնք պատրաստ են «պաշտպանել քրիստոնեության սուրբ լույսը»: Կոչում ասվում էր. «Հեթանոս ժողովուրդը, քրիստոնյաների կայսրության դեմ անսպասելիորեն հզորանալով, խղճալի դաժանությամբ հասել է մինչև Կոստանդնուպոլսի պարիսպներ, ճանապարհին բոլոր քաղաքները ոչնչացրել և դաժան բռնապետություն է հաստատել այնպես, որ բազմահազար քրիստոնեական հոտը ոչխարի նման մորթվել է»:

Այդ կոչում առաջին անգամ չոչափվում էր «ծովից այն կողմ ապրող» քրիստոնյաներին ռազմական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, նշելով, որ հանուն Քրիստոսի՝ Աստծո որդիները մահացու վտանգի պահին պետք է համախմբվեն և ինչպես Փրկիչն է «մեզ համար իր կյանքը տվել, այնպես էլ մենք մեր եղբայրների փրկության համար մեր կյանքը պետք է տանք»:

Պապը խոստանում էր, որ հեթանոսների դեմ արշավանքը անձամբ գլխավորելու է ինքը՝ որպես Սուրբ Պետրոսի փոխանորդ և քրիստոնեական աշխարհի մեծագույն առաջնորդ:

Սակայն քաղաքական հանգամանքների բերումով Գրիգորիոս VII-ի արևելքում խաչակրաց արշավանք կազմակերպելու կոչը եվրոպական տերությունների մոտ արձագանք չգտավ: Մինչդեռ Բյուզանդիան հայտնվել էր կրակե օղակի մեջ:

Սելջուկներից բացի նրան նեղում էին նաև նորմանները, որոնք հաստատվել էին Հարավային Իտալիայում և XI դ. 80-ական թվականների սկզբից շարունակ ամայացնում էին Էպիրոսը և Դալմացիայի ծովափը: Իսկ 1088 թ. կայսր Ալեքսիոս I Կոմնենոսին (1081-1118) Դորոստոլի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին պեչենեգները, որոնք Բյուզանդիայի վրա էին արշավում հյուսիսից:

Տևական ժամանակ Փոքր Ասիայում տեր ու տնօրինություն էին անում փաստորեն որևէ պետության իշխանություն չճանաչող թյուրքական առանձին ցեղեր կամ առանձին նվաճողների ելուզակային ջոկատներ, որոնք նույնպես մշտական սպառնալիք էին հանդիսանում բյուզանդական սահմանների համար:

Սելջուկյաններն իրենց հաստատումը Փոքր Ասիայում սկսեցին մի միջոցառումից, որը ռուս թուրքագետ Վ. Ա. Գորդլևսկին անվանել է Սուլեյման իբն Քութալմըշի «սոցիալական բարեփոխում»: Դրա էությունը կայանում էր նրանում, որ «Փոքր Ասիայի լատիֆունդիաներում աշխատող ճորտերին ու ստրուկներին նա ազատ հայտարարեց և նրանք զանգվածաբար սկսեցին ընդունել իսլամ»: Դարձյալ նույն Սուլեյման Քութալմըշի վիթխարի եռանդի ու կազմակերպչական տաղանդի շնորհիվ 1077 թ. Կոնիայի ու Կայսերիի միջև գտնվող ընդարձակ դաշտավայրում ծնունդ է առնում Փոքր Ասիայի սելջուկյան մի նոր պետության առաջին կորիզը, որի սուլթան է հռչակվում հենց ինքը՝ Սուլեյման Քութալմըշը: Նորաստեղծ այդ պետությունը իր գոյության առաջին իսկ օրերից դրսևորեց անգուսպ ծավալապաշտական նկրտումներ և ռազմական փառք ձեռք բերելու անհագ ծարավ: Շարժվելով դեպի արևմուտք՝ այդ երիտասարդ և ավյունով լի ռազմա-քոչվորական պետական կազմավորումը 1081 թ. գրավեց Փոքր Ասիայի նշանավոր տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոն Նիկեա քաղաքը (Թուրքերեն Իզնիք) և այն դարձրեց իր մայրաքաղաքը:

Սակայն Սուլեյման իբն Քութալմըշի հաղթական երթը կանգնեցվեց Մելիք շահ I-ի (1072-1092) եղբոր՝ Սիրիայի ամիրա Թութուշի կողմից: 1086 թ. նա ջախջախեց Քութալմըշի զորքերին և մարտի դաշտում սպանեց նրան: Վերջինիս փոքրասիական տիրույթները մնացին նրա ժառանգորդների ձեռքերում:

2. ՌՈՒՄԻ (ԻԿՈՆԻԱՅԻ) ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

Մելիք շահ I-ի մահվանից հետո (1092) «Մեծ Սելջուկյանների» կայսրությունը փաստորեն կորցրեց իր միասնականությունը և նրա առանձին մարզերի տիրակալներն իրենց հայտարարեցին ինքնուրույն սուլթաններ: Այդ նորաստեղծ սուլթանություններից էր նաև Ռումի սելջուկյան պետությունը: «Ռում» անվան տակ այդ ժամանակներում արևելքում հասկացվում էր «հոռոմների» կամ «հույների երկիր»: Առհասարակ Արևելքի մահմեդականները «Ռում» (Հռոմ) էին անվանում Արևելահռոմեական, այսինքն՝ Բյուզանդական կայսրությունը, իսկ հաճախ նաև Բյուզանդիային պատկանող Փոքր Ասիան: Հետագայում այդ անվանումը պահպանվեց նաև նախկին բյուզանդական տարածքներում հաստատված թուրքերի տիրույթների համար:

Ռումի սուլթանությունը արտաքուստ ընդունում էր «Մեծ Սելջուկյանների» իշխանությունը, բայց փաստորեն անկախ էր:

Շարունակելով չարժվել դեպի արևմուտք՝ 1085 թ. Ռումի սելջուկյան պետությունը գրավեց Փոքր Ասիայի ծայր արևմուտքում գտնվող Իզմիր (Զմյուռնիա) քաղաքը: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցի ընթացքում այդ սուլթանությունը վերածվեց խոշոր, ուժեղ և ծաղկող պետության: Մինչև XII դարի կեսերը այն հանդիսանում էր Մեծ Սելջուկների աշխարհակալ տերության մասերից մեկը, մի պետության, որի թևերը տարածվում էին Կենտրոնական Ասիայի Սիր-դարյա գետից մինչև Նեղոս, Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Ռումի սուլթանությունը ձևական կախման մեջ էր գտնվում և ճանաչում էր Մեծ Սելջուկների գերագույն իշխանությունը, քանի որ իրեն «ընտանիքից» դուրս հայտարարելու դեպքում կարող էր լուրջ խնդիրներ ունենալ նրա հետ: Այդ կախման դրսևորումներից մեկն էլ այն էր, որ Ռումի սուլթանությունը զուրկ էր սեփական դրամ հատելու իրավունքից, մի հանգամանք, որն այդ ժամանակներում դիտվում էր որպես ինքնուրույնության կարևորագույն հատկանիշ:

Ռումի սուլթանությունից բացի դեռևս XI դ. 60-70-ական թվականներին Փոքր Ասիայում ստեղծվեցին թյուրքական ցեղերի մի քանի այլ պետական կազմավորումներ ևս, որոնց թվին էին պատկանում թուրքմենական ցեղերի կողմից ստեղծված Դանիշմենդների (Դանիշմենդիների) կամ Դանեշմանդյանների ամիրայությունը, Փոքր Ասիայի հարավարևելյան մասում՝ Սըվաս (Սեբաստիա) մայրաքաղաքով, Արթուկիների ամիրայությունը Մարդինի շրջանում և այլն: Դանիշմենդների ամիրայության երևան գալը վերագրվում է 1067 թվականին: Ենթադրություն կա, որ հենց նրանք են հաստատել առաջին թյուրքական պետական կազմավորումը Փոքր Ասիայում: Այդ ամիրայության կազմի մեջ էին մտնում նաև Թոքաթ, Ամասիա, Մալաթիա քաղաքները: Դանիշմենդները իրենց համարում էին ռազմաշունչ իսլամի «հավատի մարտիկներ» («ղազի») և իրենց ծագումը վերագրում էին առասպելական ռազմիկ Սեյիդ Բաթթալին: Տեղական քրիստոնյա բնակչության նկատմամբ նրանք աչքի չէին ընկնում կրոնական հանդուրժողականությամբ: Դանեշմանդյանները Սելջուկյանների համար ներկայացնում էին քաղաքական սպառնալիք: XII դ. առաջին կեսին նրանք փորձում էին սելջուկյանների հետ վիճարկել իշխանությունը: Լինում էին նույնիսկ պահեր, երբ պատմության կշեռքը թեքվում էր դեպի Դանեշմանդյանների կողմը: Սելջուկների և Դանեշմանդյանների դարավոր պայքարն ավարտվեց սելջուկյանների

հաղթանակով և 1184 թ. Դանեշմանդյանների պետությունը դադարեց գոյություն ունենալուց:

Տևական ժամանակ Փոքր Ասիայում առկա էին նաև փաստորեն որևէ պետության իշխանություն չճանաչող թյուրքական առանձին ցեղեր կամ առանձին նվաճողների ջոկատներ: Անընդհատ տեղի էին ունենում ցեղերի տեղափոխություններ, վերախմբավորումներ ու միախառնումներ, կազմավորվում էին նոր տիպի էթնիկական ընդհանրություններ:

Անատոլիայում քոչվոր թյուրքերի խոշոր զանգվածների նստակեցության անցնելը հանդիսացավ այն առաջին քայլը, որ նրանք ամուր բնակություն հաստատեն իրենց զավթած տարածքներում, խառնվեն տեղական բնակչության հետ և հետագայում նրանց ձուլեն իրենց մեջ: Նստակյաց դարձած փոքրասիական թյուրք բնակչության շրջանում սկսեց օգտագործվել նրանց ընդհանուր «թուրք» (türk) ցեղանունը, որը, սակայն, տևական ժամանակ չէր կարողանում լայն տարածում ձեռք բերել, քանի որ նստակյաց դարձած բնակչության մեջ անգամ առաջին պլանում հանդես էր գալիս ոչ թե էթնիկական, այլ կրոնական ինքնագիտակցությունը:

XI դարում սելջուկները լուրջ սպառնալիք էին ստեղծել ոչ միայն Բյուզանդական կայսրության ու նրա մայրաքաղաքի, այլև ողջ Հարավ-Արևելյան Եվրոպայի համար: Արշավանքները դեպի քրիստոնյաների հողերը նրանք ներկայացնում էին որպես աստվածահաճո գործ: Միանգամայն անսպասելի կերպով կայսրության համար բացվեց վտանգի ևս մեկ ճակատ: Թրակիա ներխուժեցին պեչենեգները, որոնք գործում էին Բուլղարիայում և հարավսլավոնական մի քանի երկրներում այսպես կոչված Բոգոմիլյան հերետիկոսության ձև ընդունած հակաֆեոդալական ժողովրդական շարժման մասնակիցների և սելջուկների համաձայնությամբ ու հավանությամբ:

Անշուշտ Կոստանդնուպոլսում գիտակցում էին կայսրության վրա կախված սպառնալիքի ահագնությունը: Ներսի և դրսի ահեղ սպառնալիքների առջև կանգնած կայսր Ալեքսիոս I Կոմնենոսը, հաղթահարելով իր անվստահությունն ու զզվանքը կաթոլիկ արևմուտքի նկատմամբ, 1090–1094 թվականների ընթացքում օգնության խնդրանքով բազմիցս դիմումներ էր կատարում Հռոմի Ուրբանոս II պապին և արևմտյան քրիստոնյա միապետներին՝ նրանցից աղերսելով օգնություն ընդդեմ սելջուկների: «Քրիստոնյաների սրբազան կայսրությունը,- Ռոբերտ Ֆլանդրացուն ուղղված նամակում գրում էր կայսրը,- ուժգին կերպով սեղմվում է պեչենեգների և թուրքերի կողմից:

Մենք գերադասում ենք գտնվել ձեր լատինների իշխանության ներքո, քան հեթանոս-կռապաշտների լծի տակ»:

Անսալով կայսեր այդ թախանձագին աղերսներին՝ Արևմուտքը կազմակերպեց իր առաջին խաչակրաց արշավանքը (1096-1099 թթ.): Սակայն երբ խաչակիր ասպետները սկսել էին ժամանել կայսրության տարածքը, Բյուզանդիան արդեն սեփական ուժերով կարողացել էր հաղթահարել պեչենեգներին, ուստի և խաչակիրների ուժերն ուղղեց Փոքր Ասիայի Թյուրքերի դեմ: 1097 թ. խաչակիրները ջախջախեցին Ռումի սելջուկյաններին, գրավելով նրանց մայրաքաղաքը՝ Նիկեան (Իզնիք), իսկ ապա ևս մեկ խոշոր հաղթանակ տանելով Դորիլեայի (Էսկիշեհիր) մոտ, նրանց չպրտեցին դեպի արևելք՝ Անատոլիայի խորքերը: Այսպիսով խաչակիրները արգելք հանդիսացան Թուրքերի ներխուժմանը Հարավ-Արևելյան Եվրոպա:

Այդ շշմեցուցիչ հարվածները, սակայն, ի վիճակի չեղան կործանման հասցնելու Ռումի սուլթանությանը, առավել ևս, որ խաչակիրների պայքարը նրանց դեմ կրում էր դիպվածային բնույթ և նրանք մտադրություն չէին դրսևորում «արևելյան բարբարոսների» հետ բռնվելու տևական պայքարի: Իսկապես, խաչակիրները երկար չմնացին Փոքր Ասիայում և արագ հեռացան Սիրիա:

Պահանջվեց ընդամենը մի քանի տարի, որպեսզի Ռումի սելջուկյան պետությունը ուշքի գա իրեն հասցված հարվածներից, հավաքի ու վերադասավորի իր ուժերը և վերականգնի իշխանությունը համարյա ողջ Անատոլիայի նկատմամբ:

Արևմուտքից սպասվող նոր խաչակրաց արշավանքի սպառնալիքից պաշտպանվելու համար 1116 թ. սելջուկյաններն իրենց մայրաքաղաքը Նիկեայից, որն արդեն կորցրել էին, տեղափոխեցին դեպի արևելք, Կենտրոնական Անատոլիայի Կոնիա կամ Իկոնիա քաղաքը, որի անունով և Ռումի սուլթանությունն անվանվեց Կոնիայի կամ Իկոնիայի սուլթանություն: Հաճախ նախկինի պես այն անվանում էին նաև Ռումի սուլթանություն:

Մինչև XIII դարը գրեթե ամբողջ Անատոլիայի միավորման գործընթացը միասնական Թուրքական պետության շրջանակներում ընթանում էր Իկոնիայի սուլթանության մականի ներքո: Այդ գործընթացը ակնառու կերպով սկսում էր տալ դրական արդյունքներ: Անատոլիայում աշխուժանում էր առևտուրը, Սիրիայից, որը խաչակրաց արշավանքների հետևանքով դարձել էր կատաղի պատերազմների թատերաբեմ, Անատոլիա էին փոխադրվում միջազգային քարավանային կարևորագույն ճանապարհները: Քաղաքներում, հատկապես

Կոնիայում, Կայսերիում, Սրվասում, Էրզրումում և այլն, զարգացում ապրեցին արհեստները: Իկոնիայի սուլթանությունում նկատվում էր նաև թյուրք-իսլամական մշակույթի որոշակի զարգացում: Այդ պետության մայրաքաղաքում Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից հավաքվում էին գիտնականներ, ժամանակի անվանի բանաստեղծներ, փիլիսոփաներ և այլն:

Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը տիպիկ ավատական միապետություն էր կամ ավելի ճիշտ ռազմա-քոչվորական պետություն: Նրանում կայուն կերպով արմատավորված էին քոչվոր-նոմադական կենսաձևի բոլոր սկզբունքները: Օրինակ, հայտնի է, որ թյուրք քոչվորների ասպատականությունների ժամանակ այն քաղաքներն ու բնակավայրերը, որոնց բնակչությունը դիմադրություն էր ցույց տալիս իրենց, որպես կանոն զավթիչները քանդում և ավերում էին, իսկ բնակիչներին կոտորում կամ քշում ստրկության կողոպուտի ենթարկելով նրանց ունեցվածքը: Ռումի սուլթանությունը ճչտիվ հետևում էր քոչվորների այդ ավանդույթին: Այդ պետությունը խիստ խայտաբղետ էր էթնիկական տեսակետից. այնտեղ ապրում էին ծագումով տարբեր թյուրքական ցեղեր, էթնիկապես միմյանցից և թյուրքերից հեռու բնիկ ժողովուրդներ (հայեր, հույներ, արաբներ, վրացիներ և այլն): Սուլթանությունում կային մեծ թվով ստրուկներ, որոնք ձեռք էին բերվում գլխավորապես պատերազմներում գերի ընկած մարդկանցից: Երկրում ծաղկում էր ստրկավաճառությունը: Բազմաթիվ քաղաքներում ու բնակավայրերում գործում էին «եսիր բազարներ»՝ ստրկավաճառանոցներ: Ստրուկներին օգտագործում էին տնտեսության, հողագործության, անասնապահության մեջ և այլն:

Պետության գլուխ էր կանգնած սուլթանը, որը սակայն գտնվում էր «մեծ» կամ «հին» խոշոր բեյերից կախման մեջ, որոնք նրան ընտրում էին ցեղերի ժողովում՝ «ղուռուլթայում»: Սուլթաններն աշխատում էին ազատվել այդ կախվածությունից, հենվելով «միջին» բեյերի վրա:

Սուլթանությունում առկա էր խոշոր բանակ, որը երբեմն ըստ որոշ աղբյուրների, հասնում էր 250 հազարի: Սուլթանը հիմնականում հենվում էր իր հետևակ ու հեծյալ թիկնազորի վրա, որը բաղկացած էր ստրուկներից ու վարձկաններից: Գոյություն ունեին նաև ավատական ու ցեղային աշխարհազորեր: Ցեղերի առաջնորդների տրամադրության տակ էլ կային որոշակի թվով զինված ջոկատներ, որոնք հաճախ մեծ սպառնալիք էին հանդիսանում կենտրոնական իշխանության համար:

Նոր կրոնը՝ իսլամը, որ թյուրքերն ընդունել էին արաբներից, կատարելապես համապատասխանում էր քոչվոր ավագանու շահերին, Ալլահի համար հաճո գործ հռչակելով պատերազմը «անհավատների» դեմ, սպանությունները, կողոպուտները, ուրիշների հողերի գրավումը, այդ պատերազմում ընկած ամեն մի մարտիկի հռչակելով «չահիդ»՝ կրոնի նահատակ և դրախտի արժանի հերոս:

Ինչպես բոլոր մուսուլմանական երկրներում, այնպես էլ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունում, որպես հիմնական օրենսգիրք ծառայում էր շարիաթը: Սակայն նրա հետ միաժամանակ լայնորեն կիրառվում էր նաև օղուզական քոչվորական ցեղերի սովորութական իրավունքը՝ «թյուրեն», որի սկզբունքները շարադրված էին «օղուզնամե»-ում: Սուլթանության պետական ապարատում մեծ դեր էին խաղում իրանցիները: Պարսկերեն լեզուն հանդիսանում էր գրագրության հիմնական լեզու: Սելջուկյան սուլթանները հաճախ իրենց վեզիրներ էին ընտրում պարսիկներից: Ռուս թուրքագետ Վ. Ա. Գորդլևսկին գրում է, որ այդ պետության մեջ գրագետ մարդիկ բոլորը իրանցիներ էին, իսկ գրական լեզուն պարսկերենն էր: Այդ ժամանակների պատմիչների՝ Իբն-Բիբիի, Աքսարայի ժամանակագրությունները, Աֆլյաքիի հուշագրությունները գրված են պարսկերեն: Ֆարսերենը կրթված մարդկանց շրջանում օգտագործվում էր նաև իբրև խոսակցական լեզու:

Թյուրքական Ալփ-Արսլան, Կըլըչ Արսլան, Քութուլմըշ և արաբամուսուլմանական Սուլեյման, Ղիյաս-էդ-դին, Ալա-էդ-դին և այլ անուններից բացի սուլթաններին տալիս էին նաև պարսկական անուններ՝ Քեյ-Խյուսրև, Քեյ-Քուբաթ, Քեյ-Քավուս և այլն:

Գիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ XI-XIII դարերի ժամանակաշրջանն ըստ էության Թուրքիայի նախապատմությունն է և Ռումի սուլթանությունը դեռ չի կարող անվանվել թուրքական պետություն: Դա հիմնավորվում է նրանով, որ նշված շրջանում Փոքր Ասիան դեռ չէր ենթարկվել «թուրքականացման», կամ թյուրքալեզու բնակչությունը այդ երկրամասում դեռ չէր ձեռք բերել գերակա (դոմինանտ) բնույթ, թեև թյուրքականացման գործընթացը այլևս դառնում էր անշրջելի: Փոքր Ասիայի բնակչության մեծամասնությունը դեռևս բաղկացած էր քրիստոնյաների տարբեր խմբերից (հույներ, հայեր և այլն): Այդ մասին հավաստի տեղեկություն է հաղորդում արաբ ճանապարհորդ Իբն-Բաթութան, որը XIV դ. 30-ական թվականների սկզբին անցել է Անատոլիայով: Նա վկայում է, որ այդ տարածքներում ապրում էին մեծ թվով քրիստոնյաներ:

Անկասկած կրոնների (իսլամի և քրիստոնեության) տարբերությունը էականորեն կասեցնում էր Փոքր Ասիայի տարբեր ժողովուրդների փոխադարձ էթնիկական մերձեցման գործընթացը: Այդ տարբերությունը խանգարում էր սելջուկ թուրքերին՝ արագ ձուլվելու մեծամասնություն կազմող տեղական բնակչության հետ (նրանց միաձուլումը տեղի էր ունենում այդ բնակչության իսլամացման պայմանով միայն):

Ուշագրավ է նշել, որ ականավոր միստիկ փիլիսոփա, մևլևի դերվիշական միաբնության հիմնադիր, բանաստեղծ Ջելալ-էդ-դին Ռումին (1207-1273) փորձում էր վերափոխել իսլամը՝ այն մոտեցնելով քրիստոնեությանը: Նա ձգտում էր ստեղծել սինկրետիկ (չտարբերակված) մի կրոն, որը միավորեր քրիստոնյաներին ու մուսուլմաններին՝ որպես մոնոթեիստական (միաստվածություն դավանող) կրոնի հետևորդների և միասնական Աստծո հավատացյալների: Դրա նպատակն էր մեղմել այդ երկու կրոնների հետևորդների անտագոնիզմը և նրանց մերձեցնել միմյանց հետ:

Սելջուկյան արշավանքները և առհասարակ Փոքր Ասիայի տարածքում եկվոր վաչկատուն թյուրքալեզու ցեղերի հաստատումը առավել ծանր անդրադարձներ ունեցան Արևմտյան Հայաստանի համար: Երբեմնի այդ ծաղկուն երկրամասը, որը մեծապես տուժել էր Բյուզանդական կայսրության անհեռատես ու հոռի քաղաքականության հետևանքով, քոչվոր-վրանաբնակների տիրապետության շրջանում հիմնովին կողոպտվեց ու ավերվեց: Առևտրա-արհեստավորական զարգացած կենտրոնները քայքայվեցին ու անչքացան: Հողերն անցան սելջուկյան ազնվականության ձեռքը: Հայ հողատեր-ազնվականական դասը ունեզրկվեց ու դուրս մղվեց: Զարգացած երկրագործական շրջանները ենթարկվեցին նոմադականացման (քոչվորականացման): Զավթիչներին անհրաժեշտ էին միայն արոտավայրեր, ուստի հաճախ նրանք կտրում ու ոչնչացնում էին այգիները, դրանք վերածում արոտավայրերի: Սելջուկները և առհասարակ Փոքր Ասիայի թյուրքալեզու ցեղերը մինչև կիսաքոչվորական կամ նստակյաց կյանքին անցնելը ամենուրեք արմատավորում էին իրենց թափառաշրջիկ-քոչվորական կենսաձևը: Սակայն այն հանգամանքը, որ նվաճվածները (հայերը, հույները և այլն) իրենց քաղաքակրթության մակարդակով շատ ավելի բարձր էին քան նվաճողները, անխուսափելիորեն ունեցավ այն հետևանքը, որ սելջուկյան հասարակությունը տեղական բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային ավանդույթների ուժեղ ազդեցության ներքո բավականին արագացված տեմպերով

թևակոխեց ավատական հարաբերությունների զարգացման փուլը:

Սելջուկները խիստ վերաձևեցին նաև Հայաստանի քաղաքական քարտեզը: Երկիրը բաժան-բաժան եղավ նրանց ենթակա տեղական մի քանի մանր իշխանությունների և ամիրայությունների միջև: Սակայն Արևմտյան Հայաստանի քաղաքներում ու գյուղական վայրերում զավթիչներն այնուամենայնիվ կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Որպես դրա ապացույց կարող է ծառայել, օրինակ, այն փաստը, որ նույնիսկ XIII դարում որպես Ռումի կամ Իկոնիայի սուլթանության եկամտի կարևորագույն աղբյուր չարունակում էր մնալ ոչ մահմեդականներից գանձվող գլխահարկը՝ ջիզիեն:

Մոտ մեկ հարյուրամյակ Իկոնիայի սուլթանությունը ուժեղ և կենսունակ պետություն էր: Այն իր հզորության գագաթնակետին հասավ XIII դարի 20-30-ական թվականներին, որը համընկավ սուլթաններ Ալա-էդ-դին Քեյ-Քուբաթ I-ի (1219-1236) և Ղիյաս-էդ-դին Քեյ-Խյուսրև II-ի (1236-1245) կառավարման շրջանի հետ: Այդ ժամանակաշրջանում սելջուկները իրենց տիրապետությունը հաստատեցին Հայկական բարձրավանդակի մեծ մասի և համարյա ողջ Փոքր Ասիայի նկատմամբ: Ընդհուպ մինչև XII դարի 70-80-ական թվականները Իկոնիայի սուլթանությունը տևական պատերազմներ էր մղում Դանիշմենդյանների պետության դեմ: Այդ արյունոտ ու անզիջում ռազմական դիմակայությունն, ինչպես նշվել է վերևում, ի վերջո ավարտվեց սելջուկների հաղթանակով և 1174 թ. Դանիշմենդյանների պետությունը դադարեց գոյություն ունենալուց: Բնականաբար դա արձակելու էր Իկոնիայի սուլթանության ձեռքերը, որը հնարավորություն ստացավ Արևմուտքում ծավալելու եռանդուն հարձակողական քաղաքականություն դեպի բյուզանդական տիրույթները: Հատկապես XIII դ. սկզբին սուլթանությունը ձեռք բերեց խոշոր հաջողություններ, գրավելով Անթալիան Միջերկրական ծովում, Սինոպը Սև ծովում, դուրս գալով Փոքր Ասիայի ափերը ողողող առափնյա շրջանները: Այդ ժամանակ Իկոնիայի սուլթանությունը իրենից ներկայացնում էր խոշոր և ուժեղ պետություն, որը վերահսկում էր համարյա ողջ Փոքր Ասիան:

Իկոնիայի սուլթանության արագ հաղթանակների պատճառները բացատրվում են նրանով, որ նախ՝ նրա հիմնական հակառակորդը՝ Բյուզանդիան, այդ ժամանակ խիստ թուլացել էր Արևմուտքում իր թշնամիների դեմ մղած պայքարից և, գլխավորը, ներքին հակասություններից ու երկպառակություններից: Երկրորդ՝ սելջուկյանների հիմնական հարվածային ուժը օղուզական և թուրքմենական քոչվոր ցե-

ղերն էին, որոնք միմյանց հետ կապված էին տոհմացեղային ավանդական կապերով և աչքի էին ընկնում իրենց կարգապահությամբ: Նրանք ունեին զորական գերազանց հատկանիշներ. յուրաքանչյուր քոչվոր իրենից ներկայացնում էր հիանալի վարժված և լավ զինված հեծյալ զինվոր:

Երրորդ՝ Անատոլիայի բնակչությունը, որը հեծում էր բյուզանդական բռնակալության լծի տակ, հաճախ հանձինս սելջուկների տեսնում էր իր ազատարարներին: Այլ բան է, որ հետագայում իրենք համոզվեցին, որ չարաչար ու դաժանորեն սխալվել են:

Սելջուկյանների քաղաքականության բաղկացուցիչ մասն էր թյուրքալեզու քոչվոր ցեղերին դեպի պետության սահմաններն ուղարկելը՝ բյուզանդացիների, հայերի, վրացիների դեմ պատերազմելու համար: Դրանով նրանք հետապնդում էին երկու նպատակ. նախ՝ տերության ներքին շրջանները ազատվում էին անհանգիստ ռազմաշունչ քոչվորների խժդժություններից, առավել ևս, որ նրանք մշտապես պատրաստ էին խռովություն բարձրացնելու նաև կենտրոնական իշխանության դեմ, և երկրորդ՝ ամրացվում էին սահմանները, ապահովվում նոր հողերի նվաճումները և թալանված ավարի իրացումը: Ցեղերը սահմանամերձ շրջաններն էին քոչում ընտանիքներով, վրաններով ու անասունների հոտերով: Ցեղապետը ուշում (ուջ, «սահման») ստանում էր ուշ-բեյի, այսինքն՝ «սահմանը պահպանողի» կարգավիճակ: Բոլորը, անգամ կանայք և երեխաները, զինված էին:

Իկոնիայի պետությունը ևս իրեն համարում էր հավատի համար մարտնչողների («ղազի») տերություն: Սակայն ի տարբերություն Դանիշմենդյանների, որոնք տեղական ոչ մահմեդական բնակչության նկատմամբ չէին դրսևորում կրոնական հանդուրժողականություն, իսլամի հանիֆիական մազհաբի հետևորդ Թուրք-սելջուկները կրոնական քաղաքականության հարցերում ավելի տոլերանտ ու հանդուրժող էին: Սա անչուշտ չէր նշանակում, որ այդ պետության մեջ ներքին ընդդիմությունը բացակայում էր: Այն գոյություն ուներ ոչ միայն քրիստոնյա բնակչության, այլև դավանակից, սուլթանական ճնշումից դժգոհ օղուզաթուրքմենական ցեղերի շրջանում, ուր հատկապես ժողովրդականություն էին վայելում շիական գաղափարներ քարոզող այսպես կոչված «բաբաները»: Իկոնիայի սուլթանությունում մեծ հեղինակություն էր վայելում նաև մևլևիների կրոնական-դերվիշական (սուֆիական) միաբանությունը, որը մեծ ազդեցություն ուներ իսլամ հավատացյալ զանգվածների վրա:

Անտարակույս չի կարելի չափազանցնել Իկոնիայի սուլթանու-

թյան կրոնական հանդուրժողականությունը: Ի վերջո, դա հավատի համար մարտնչողների՝ ղազիների պետություն էր: Նրանում գործում էին նաև ոչ մահմեդականների համար սահմանված զուտ իսլամական սահմանափակումներ, որոնք բխում էին Ղուրանից, շարիաթից և հադիսներից: Հետևաբար, Ռումի սելջուկյան պետության գոյության ողջ ժամանակաշրջանում Փոքր Ասիայի տեղական ոչ թյուրք բնակչությունը աստիճանաբար իսլամականացվում ու թյուրքականացվում էր: Դա տեղի էր ունենում ինչպես իսլամը բռնի պարտադրելու, այնպես էլ այն կամավոր ընդունելու ճանապարհով: Այդ վերջին դեպքում իսլամն ընդունած նորաթուխ մահմեդականները ոչ միայն դավանափոխության ճանապարհով ձգտում էին ազատվել բյուզանդական տիրապետությամբ հաստատված իրենց ճորտական վիճակից, այլև դառնալով իսլամական համայնքի (ումմայի) լիարժեք անդամ, ձեռք էին բերում մահմեդականների հետ հավասար իրավունքներ:

Արևմուտքում սելջուկ-բյուզանդական ռազմական մրցակցությունը ընդունել էր տևական ու շարունակական բնույթ: Հարձակվող կողմը շարունակում էին մնալ սելջուկները, իսկ բյուզանդացիները պաշտպանվում էին: Թեև պետք է նշել, որ ժամանակ առ ժամանակ հաջողությունը ուղեկցում էր նաև բյուզանդացիներին: XII դ. 60-ական թվականների սկզբին սելջուկյան սուլթան Ղլիչ-Արսլան II-ը նույնիսկ ստիպված էր առժամանակ հրաժարվել իր ծավալապաշտական նկրտումներից կայսեր տիրույթների նկատմամբ: Սակայն դա ժամանակավոր և ըստ էության խաբուսիկ երևույթ էր, պատահականություն և ոչ օրինաչափություն: Խելոք և շրջահայաց բյուզանդական Մանուել կայսրը քաջ գիտակցում էր այդ հանգամանքը և աշխատում էր անհարկի չսրել իր հարաբերությունները ահարկու և վտանգավոր հակառակորդի հետ: Ավելին, նա աշխատում էր սիրաշահել և ջերմ ուշադրության նշաններ ցուցաբերել Ղլիչ-Արսլանի նկատմամբ, երբ նա և սուլթանին ուղեկցող բազմամարդ շքախումբը, ինչպես նաև հազարից ավել սելջուկյան հեծյալ ռազմիկները, մեկ ամսից ավել հյուրընկալվում էին Կոստանդնուպոլսում: Սուլթանին հաճոյանալու և նրա բարյացակամ վերաբերմունքին արժանանալու համար բյուզանդական կայսրը կազմակերպում էր շքեղ տոնահանդեսներ, մարտական մրցախաղեր և այլն: Սակայն առավել մեծ կարևորություն էր տրվում անասելի հարուստ ու թանկարժեք նվերներով սելջուկյան ահեղ սուլթանի համակրանքը շահելու մարտավարությանը, որը ոչ այլ ինչ էր, քան կաշառք խաղաղություն գնելու դիմաց: Սակայն մեծ հաշվով կայսեր գործադրած ջանքերը ապարդյուն

էին, քանի որ դրանք չէին տեղավորվում անհագ փառասիրությամբ տարված սուլթանի փայփայած ծրագրերի շրջանակներում: Ավելին, խորամանկ ու նենգ Ղլիչ-Արսլանը իր ներկայությունը Կոստանդնուպոլսում օգտագործեց իր հակառակորդի ռազմական կարողությունների և քաղաքական կայունության խորքային հետախուզման համար: Թեև 1162 թ. կայսեր և սուլթանի միջև կնքված պայմանագրով վերջինս պարտավորվում էր կայսերը զիջել նախկինում գրավված մի շարք բյուզանդական տիրույթներ, սակայն դրժելով իր պայմանագրային պարտավորությունը, սուլթանը կտրականապես հրաժարվեց գրավյալ հողերը վերադարձնել Մանուել կայսերը:

Հարաբերությունները Բյուզանդիայի և Իկոնիայի սուլթանության միջև գնալով հարաճուն կերպով սրվում ու վատթարանում էին: Բյուզանդական արքունիքում դա մեկնաբանվեց որպես տերության արևելյան սահմանների անվտանգության վրա կախված լուրջ սպառնալիք: Դա ստիպեց կայսերը կատարել զորահավաք և 1176 թ. զորքերը շարժել Ղլիչ-Արսլանի դեմ:

Բյուզանդական հսկայական ու ծանրաշարժ բանակը, որի մեջ ընդգրկված էին նաև որոշակի թվով արևմտյան ասպետներ, դուրս եկավ ռազմերթի, Փոքր Ասիայի լեռնային դժվարանցանելի ճանապարհներով շարժվելով դեպի նպատակակետը՝ Կոնիա: 1176 թ. սեպտեմբերին, երբ կայսերական բանակը անցում էր կատարում Միրիոկեֆալոնեից (Բույուկ-Մենդերես գետի վերին հոսանքի մոտ) ոչ հեռու գտնվող Ցիվրիցա կոչվող լեռնային նեղ կիրճով, անակնկալ կերպով հայտնված սելջուկները գրոհում են բյուզանդացիների վրա: Սելջուկյան նետերի տարափը ուղղակի հնձում էր հույն զինվորներին, որոնք խուճապի մատնված տրորում էին մեկը մյուսին: Մարդկանց և կենդանիների դիակների կույտերը, ջախջախված սայլերը և այլն ուղղակի անհնարին էին դարձնում բյուզանդական զինվորների շարժումը: Աղբյուրների վկայությամբ, կիրճի մեջ արյունը հոսում էր գետի նման: Բյուզանդացի պատմիչ Նիկիտա Ակոմինատի արտահայտությամբ, «հույներին փակեցին նեղ անցքի մեջ և ոչխարի հոտի նման կոտորեցին»: Սակայն խիզախությունը չէր լքում կայսերական զինվորներին: Ճակատամարտում փրկվածները հավաքվեցին Մանուել կայսեր շուրջը, որպեսզի առավոտյան դեմ շարունակեն մարտը: Մինչդեռ համարելով, որ գործն արդեն արված է և իր տարած հաղթանակը կատարյալ, Ղլիչ-Արսլանը որոշեց դադարեցնել կոտորածը և բանակցություններ սկսել կայսեր հետ: Կնքվեց հաշտության պայմանագիր, որի կետերից մեկն էլ այն էր, որ բյուզանդական կայսրը

պարտավորվում էր քանդել ու հողին հավասարեցնել սելջուկների տիրույթներին սահմանակից մի շարք քաղաքների ամրությունները, որոնք ոչ շատ վաղուց կառուցվել էին իր իսկ հրամանով:

Սելջուկների հաղթանակը իսկապես ցնցող էր: Մանուել կայսրը իր ջախջախիչ պարտությունը համեմատում էր Մանազկերտի ճակատամարտի ողբերգական ելքի հետ: Ընդ որում, նա նկատի չուներ միայն հարցի ռազմական կողմը, այլ աչքի առաջ ուներ նաև այդ իրադարձության հեռու գնացող քաղաքական հետևանքները: Հիրավի, եթե Մանազկերտի ճակատամարտը սելջուկների առջև բաց արեց ճանապարհը դեպի Փոքր Ասիա, ապա Միրիոկեֆալոնեի մոտ տեղի ունեցածը տևական ժամանակների համար ապահովեց սելջուկների անբաժան տիրապետությունը փոքրասիական հողերի նկամամբ: Ավելին, վերջնականապես խորտակվեց սելջուկներին Փոքր Ասիայից դուրս մղելու հույսը: Պատահական չէ, որ այդ իրադարձությունը Եվրոպայում ընկալվեց որպես համաքրիստոնեական տարողություն ունեցող աղետ, որը ուժգին հարված էր հասցնում նաև «անհավատների» դեմ խաչակիրների փայփայած ծրագրերին, նսեմացնելով խաչակրության ողջ գաղափարախոսությունը:

Կարծես ճակատագրի ծաղր էր, որ Միրիոկեֆալոնեի մոտ տեղի ունեցածից քառորդ դար անց խաչակիրները մի այնպիսի ծառայություն մատուցեցին սելջուկյան սուլթաններին, որը բախտորոշ նշանակություն ունեցավ ոչ միայն բյուզանդական կայսրության, այլև ողջ տարածաշրջանի համար: XIII դ. սկզբին չորրորդ խաչակրաց արշավանքի մասնակից լատինական ասպետները շարժվեցին ոչ թե դեպի Պաղեստին՝ «Տիրոջ գերեզմանը և Սրբազան հողերը անհավատներից ազատագրելու» համար, ինչպես նախապես ծրագրված էր, այլ հանդես եկան հավատի գծով իրենց եղբայրների՝ Կոստանդնուպոլսի քրիստոնյաների դեմ: 1204 թ. նրանք գրոհով գրավեցին Արևելքի քրիստոնեության պատվար համարվող այդ քաղաքը և այն մատնեցին կողոպուտի ու ավերածության: Իսկ Բյուզանդիայի հսկողության տակ դեռևս մնացած եվրոպական տարածքներում խաչակիրները ստեղծեցին լատինական կայսրություն, որը սակայն չկարողացավ դրսևորել կենսունակություն, գոյություն ունենալով կես դարից քիչ ավել:

Խաչակիրների կողմից Բյուզանդական կայսրությանը հասցված այդ հարվածը իսկապես մահացու էր: Եվ թեև Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մասում, բյուզանդական տիրույթների փլատակների վրա ստեղծված Նիկեյան կայսրության թագակիր տիրակալը կարողացավ

1261 թ. բյուզանդացիներին վերադարձնել իրենց հին ու փառաբանված մայրաքաղաքը, սակայն դառն ու անուղղելի իրողությունն այն էր, որ այլևս անհնար էր վերադարձնել երբեմնի հզոր բյուզանդական կայսրության մեծությունը, փառքն ու հզորությունը: Կարևոր էր նաև այն, որ Բյուզանդիան հիասթափվեց խաչակիրներից: Թույլ տալով, որ նրանք մուտք գործեն իր տարածքը, բյուզանդական պետությունը ձգտում էր խաչակիրների օգնությամբ սելջուկներից հետ վերցնել Փոքր Ասիայում կորցրած իր տարածքները: Սակայն պարզվեց, որ խաչակիր-ասպետներին դեպի Արևելք է մղում կողոպուտի ու հարստանալու անզուսպ ձգտումը և ոչ թե «Տիրոջ գերեզմանը ազատագրելու» և Արևելքի քրիստոնյաներին անհավատների լծից ազատագրելու ձգտումը: Ի դեմս խաչակիրների, Բյուզանդիայի քրիստոնյա բնակչությունը սկսեց տեսնել Արևմուտքից եկող սովորական զավթիչների և նրանց նկատմամբ լցվեց խորը ատելությամբ: Այսպիսով, Բյուզանդիայի և խաչակիրների ճանապարհները բաժանվեցին միմյանցից: Թեև դրանից հետո Բյուզանդիային հաջողվեց ևս երկու հարյուրամյակ պահպանել իր գոյությունը, սակայն համաշխարհային տերության ու քաղաքակրթության կենտրոնի նրա դերը վերջնականապես խամրել էր: Բյուզանդիան իրար հետևից կորցրեց Բուլղարիան, Սերբիան, Մակեդոնիան: Այն, ինչ որ մնացել էր նրան Արևմուտքում, անցավ վենետիկցիներին ու Ջենովացիներին: Միաժամանակ լատինական երկրների ու պապականության հետ կրոնական թշնամանքը հասավ ծայրահեղ չափերի: Խաթարվել էր նաև կայսերական տան ներքին միասնությունը, որի հետևանքով պետությունը ծվատվում էր երկպառակությունների ու փոխադարձ թշնամանքի հորձանուտում: Կայսրության երբեմնի շքեղ ու հարուստ մայրաքաղաքը, որը համարվում էր Արևելքի ու Արևմուտքի միջև կապող ոսկե կամուրջ, գնալով անշքանում, խամրում ու զրկվում էր իր բնակչությունից: Պառակտված ժողովրդի մոտ վերջնականապես չքացել էր ինքնավստահությունը և ապագայի նկատմամբ հավատը: Բյուզանդական բանակը կորցրել էր իր մարտունակությունը և ռազմաշունչ ոգին: Կայսրերը ստիպված էին բանակը համալրելու համար հավաքագրել թյուրք վարձկանների, որը հեռանկարային առումով խիստ վտանգավոր էր, քանի որ ուժ հավաքելով ու հզորանալով, այդ ռազմաշունչ թյուրքերը վաղ թե ուշ պետք է թելադրեին իրենց պայմանները, ինչպես դա տեղի ունեցավ երեք դար առաջ, Աբբասյան խալիֆայության ժամանակներում:

Մի խոսքով, կայսրությունը անկասելի ընթացքով շարժվում էր դեպի իր կործանումը:

Միանգամայն պարզ է, որ այդ բոլորը սելջուկյան սուլթաններին ընձեռում էին լայն հնարավորություններ: Նրանք ստիպեցին Նիկեայի և Տրապիզոնի կայսրություններին, որոնք ստեղծվել էին խաչակիր-ների կողմից Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո, ինչպես նաև Կիլիկիայի Հայկական թագավորությանը, դառնալ իրենց հարկատուն: Բյուզանդիայի ներքին թուլությունից ոգեշնչված սուլթան Ալա-էդ-Դին Քեյքուբաթ I-ի (1219-1237) ծավալապաշտական ձգտումները սկսեցին սավառնել շատ հեռուները: Նրա նվիրական իղձերից մեկն էլ դարձավ սևծովյան առևտրի նկատմամբ հսկողության սահմանումը: Այդ նպատակով նա 1222 թ. արշավանք կազմակերպեց դեպի Ղրիմ և գրավեց Սուդդեյի (Սուդակ) հունական գաղութը, որի ձեռքերում էր կենտրոնացված տարածաշրջանի առևտրի մեծագույն մասը: Նրա ժառանգորդ սուլթան Ղիյասեդդին Քեյխոսրև II-ը (1237-1245) իրեն կոչում էր «անհավատների ու անաստվածների կործանիչ», «Ռումի, Հայաստանի, Դիարբեքիրի և Սիրիայի սուլթան, ծովափի տիրակալ» (նկատի ունի Փոքր Ասիայի ափերը ողողող ծովերը):

Իկոնիայի սուլթանությանը, սակայն, վիճակված չէր ունենալու տևական քաղաքական կյանք: Արդեն XIII դարի սկզբից նրանում սկսում են ակնհայտորեն երևան գալ անկման նշաններ: Առհասարակ ինչպես Սելջուկյանների դինաստիայի, այնպես էլ նրա մի ճյուղը կազմող Ռումի սուլթանության պատմությունը լեփ-լեցուն էր պալատական հեղաշրջումներով, բռնի սպանություններով, արյունոտ հաշվեհարդարներով, դավադրություններով և այլն: Գահակալության հաստատուն կարգի բացակայությունը սուլթանի ամեն մի փոփոխության ժամանակ ծնում էր պալատական շրջանների և ցեղապետերի զանազան խմբավորումների սուր բախումներ, որը ներսից կրծում ու թուլացնում էր պետությունը:

Իկոնիայի սուլթանությունը հյուծվում ու մաշվում էր նաև ներքին ապստամբությունների ու խռովությունների (օրինակ, 1239 թ. Բաբա Իսհաքի ապստամբության), ինչպես նաև հարևան թյուրքական պետական ու ոչ պետական կազմավորումների հետ անվերջ բախումների հետևանքով: Այդ պետության ներքին թուլացման պատճառներից մեկն էլ XIII դարի 30-ական թվականներին թուրքմենական քոչվոր տարրի ուժեղացումն էր պետական կազմավորման ներսում:

Սակայն այնուամենայնիվ, Իկոնիայի սուլթանության կործանման պատճառ դարձավ ոչ այնքան նրա ներքին անկայունությունը, որքան արտաքին ուժերի մահացու հարվածը:

3. ***ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՎ ԻԿՈՆԻԱՅԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ: ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ***

XIII դարի հենց արշալույսին Արևելյան Ասիայում հայտնվեց մի նոր պայթյունավտանգ ուժ՝ մոնղոլները, որոնք իրենց առաջնորդ Չինգիզ խանի (1155-1227) գլխավորությամբ սկսել էին իրենց աշխարհավեր արշավանքները: Նրանց վիթխարի չափերի հասնող զինված հորդաները Կենտրոնական Ասիան և Իրանը նվաճելուց հետո անդուսպ ու անկասելի թափով շարժվում էին դեպի Արևմուտք, իրենց նվաճողական նպատակակետերից մեկը համարելով Փոքր Ասիան:

Թյուրք քոչվորները մոնղոլական հորդաների սարսափից խուճապահար փախուստի էին դիմում, փորձելով ապաստան ու պաշտպանություն գտնել Իկոնիայի սուլթանությունում: Հսկայական զանգվածների կուտակումը այդ պետության մեջ առաջ էր բերում ներքին լարվածություն: Մոնղոլների և Իկոնիայի սուլթանության բախումը այլևս անխուսափելի էր: Այն տեղի ունեցավ 1243 թ. գարնանը Սրվասի (Սեբաստիա) և Էրզինջանի (Երզնկա) միջև ընկած մի դաշտավայրում: Այդ ճակատամարտը պատմության մեջ է մտել Քյոսե դաղի ճակատամարտ անունով: Սելջուկյան սուլթան Ղիյաս-էդ-դին Քեյխոսրև II-ը հավաքել էր 180 հազարանոց մի հսկայական բանակ, որի մաս էին կազմում նաև հույներից, հայերից, վրացիներից, արաբներից, քրդերից ու լատինացիներից բաղկացած մի քանի հազար վարձկաններ: Սելջուկների բանակը ուժեղացնելու համար բյուզանդական կայսրը ուղարկել էր նաև օժանդակ ուժեր:

Մոնղոլական բանակը, որի հրամանատարն էր փառաբանված զորահրամանատար Բաչու-Նոյոնը, ընդամենը իր շարքերում ուներ 30 հազար մարտիկներ: Սակայն կազմակերպվածությամբ, կարգապահությամբ և մարտական ոգով այն մեծապես գերազանցում էր հակառակորդին: Բացի այդ, մոնղոլները ավելի խնամքով էին նախապատրաստվել ճակատամարտին և հակառակորդի մասին ունեին ավելի ստույգ, բազմազան ու արժեքավոր տեղեկություններ: Մոնղոլական բանակում ևս ընդգրկված էին հայկական և վրացական մի շարք իշխանների ջոկատներ, որոնք մասնակցելու էին ճակատամարտին որպես մոնղոլների նկատմամբ ստանձնած վասալական պարտավորություն:

Քյոսե դաղի ճակատամարտում մոնղոլները գլխովին ջախջախեցին սելջուկներին՝ դրանով իսկ որոշելով Իկոնիայի (Ռումի) սելջուկ-

յան սուլթանության ճակատագիրը: Իր կյանքը փրկելու համար սուլթան Քեյխոսրև II-ը դիմեց մազապուրծ փախուստի: Այսուհետև Իկոնիայի սուլթանները պետք է դառնային մոնղոլական խաների վասալը և նրանց վճարեին հարկեր և տուրքեր:

Հիրավի, Փոքր Ասիայի պատմության ընթացքը բառացիորեն մեկ օրվա ընթացքում արմատական փոփոխության էր ենթարկվում: Մոնղոլները աննկարագրելի բարբարոսական ասպատակ սփռեցին ընկճված թշնամու հողերում՝ ամայացնելով ու ավերելով իրենց ճանապարհին հանդիպած ամեն ինչ:

Ամբողջ շրջաններ վերածվեցին անապատի: Աննշան դիմադրություն ցույց տված քաղաքները ջնջվում էին երկրի երեսից: Ոչնչացվեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Շատերը գերության քշվեցին Կենտրոնական Ասիա և Մոնղոլիա: Կիլիկիայի հայկական պետությունը, 1243 թ. մոնղոլների հետ կնքելով դաշնակցային պայմանագիր, կանխարգելեց նրանց շարժումը Կիլիկիա, սակայն դառնալով մոնղոլների հարկատուն և ընդունելով նրանց տիրապետությունը:

Մոնղոլական գերիշխանությունը Փոքր Ասիայում չարունակվեց մոտ 60 տարի: Անկասկած, դա այդ երկրամասի համար սարսափելի ավերածությունների, կողոպուտի, անլուր կեղեքումների, վայրենի սանձարձակությունների, գերության ու ստրկության մի մռայլ ու խավար ժամանակաշրջան էր այդ տարածքում ապրող բոլոր ժողովուրդների համար: Ստացած հարվածից հետո Իկոնիայի սուլթանությունը այլևս երբեք ուշքի չեկավ: Նրա մեծ մասը՝ Զոնգուլդակ-Բոլու-Էսկիշեհիր-Քյութահյա-Աֆյոն Կարահիսար-Բեյշեհիր-Կարաման-Մերսին գծից արևելք անցավ մոնղոլների անմիջական կառավարման ներքո:

Իկոնիայի սուլթանության վերջին տիրակալ Ղիյաս-էդ-դին Մեսուդ III-ը մոնղոլների կողմից խեղդամահ արվեց և 1307 թ. Իկոնիայի (Կոնիայի) կամ Ռումի սելջուկյան սուլթանությունը 230 տարի քաղաքական կյանք ունենալուց հետո դադարեց գոյություն ունենալուց: Երբեմնի այդ հզոր սուլթանությունից մնացած տարածքի իշխողները կորցրեցին իրենց ինքնուրույնությունը և դարձան մոնղոլական խանի հարկատուները:

Անկասկած Իկոնիայի սուլթանությունը դեռ չէր կարող անվանվել թուրքական պետություն: Մոնղոլները հոգ չէին տանում Փոքր Ասիայում ստեղծելու համար պետական կառույցներ երկրամասում կայունություն հաստատելու համար: Ընդհակառակը, ընկճված բնակչության դիմադրությունը կոտրելու համար նրանք սելջուկյան պե-

տությունը տրոհեցին առանձին մասերի, տեղական իշխողների միջև սկսեցին սերմանել երկպառակություններ և այլն: Նրանց տիրապետության շրջանում Փոքր Ասիայի տարածքները վերածվեցին քաոսի: Անսանձ տարրերը, որոնք չէին ենթարկվում ոչ մի իշխանության, կրկին գլուխ բարձրացրին: Փոքր Ասիայի մեծ մասը վերստին վերադարձավ այսպես կոչված հին սահմանային քաղաքակրթության ապրելակերպին, որի բնորոշ գիծը անիշխանությունն էր, քաոսը, բիրտ ուժի թելադրող կամքը: Յուրաքանչյուր բոնավորի իրավունքը գտնվում էր իր սրի ծայրին: Երկրի ծայրամասային շրջաններում տեղակայված զորամասերի զինվորները, պետության բացակայության պատճառով թողնված լինելով իրենց ճակատագրին և զուրկ ապրուստի ամեն մի միջոցից, հանուն իրենց գոյատևման, դիմեցին իրենց հին արհեստը օգտագործելուն: Կազմելով զինված խմբեր՝ նրանք սկսեցին զարհուրելի ասպատակ սփռել, ավարի մատնելով, թալանելով ու կողոպտելով ամեն ինչ: Նրանց նույնիսկ հաջողվեց գրավել մի շարք մեծ ու փոքր քաղաքներ: Այդ ավազակախմբերը գնալով դառնում էին անկառավարելի ու անսանձ ահռելի բանակներ, քանի որ անընդհատ համալրվում էին չդադարող հոսքով Փոքր Ասիա թափանցող թուրքմենական ցեղերով, նախկին սելջուկյան պետության փախստականներով, դաղիության գաղափարներով ներշնչված մոլեռանդ ռազմիկներով, զանազան «սուրբ մարդկանցով», չեյխերով, դերվիշներով և այլն, որոնք Կենտրոնական Ասիայից ու Իրանից անընդհատ հորդում էին Անատոլիա: Այդ ժամանակներում ցեղերի տեղաշարժը տեղի էր ունենում նաև հյուսիսից՝ Դեշթ-ի Ղփչաղից, որտեղից մեծ թվով թյուրքալեզու ղփչաղական ցեղեր թափանցում էին Փոքր Ասիա: Մարդկային վիթխարի զանգվածներից բաղկացած այդ զինված ամբոխը, համարյա առանց դիմադրության հանդիպելու որևէ ուժի կողմից, հեղեղի պես շարժվում էր առաջ՝ դեպի Արևմտյան Փոքր Ասիա, որի նահանգների մեծ մասը ինչպես արևելքում, արդեն գործնականում դուրս էին եկել Բյուզանդիայի հսկողությունից: Այսպիսով, մոնղոլական արշավանքը քաղաքական և էթնիկական մեծ փոփոխություններ առաջացրեց Անատոլիայում:

Բյուզանդական կայսրության փոքրասիական տիրույթներում ըստ էության ստեղծվել էր մի ահռելի դատարկություն (վակուում), որն անհրաժեշտ էր արագ լցնել: Ուստի ցեղերի կամ առանձին զինված խմբավորումների միջև ծայր առավ անդիջում ու թեժ պայքար՝ «անտեր» մնացած նահանգներին տեր դառնալու համար: Մասամբ

այդ պայքարի, իսկ ավելի շատ սելջուկյան սուլթանության տրոհման հետևանքով, Փոքր Ասիայում ծնունդ առան տասից ավելի (այլ տվյալներով մինչև տասնվեց) ինքնուրույն թյուրքական իշխանություններ կամ բեյություններ (բեյլիքներ), որոնցից առավել աչքի էին ընկնում Գերմիյանի, Կարամանի (Կարասի), Այդընի, Մենթեշեի, Սարուխանի, Ռամազանօղլուի, Կարա-Իսանի, Թեքեի, Համիդի, Կաստամոնուի, Հյուղավենդիգյարի բեյլիքները կամ իշխանապետությունները: Բոլոր այս պետական կազմավորումները ստեղծվել էին ցեղային հիմքի վրա՝ որպես քոչվոր ու կիսաքոչվոր թյուրքական ցեղերի միավորումներ:

Այդ բեյությունների ուժի և հզորության մասին գաղափար կազմելու համար բավական է ասել, որ ըստ որոշ տվյալների, Գերմիյանն ուներ 200 հազարանոց բանակ, Կարամանը՝ 50 հազարի հասնող զորքեր և քոչվորների մեծաթիվ ջոկատներ, Կաստամոնուն՝ 200 հազար, Մենթեշեն՝ 100 հազար, Կարասին՝ 40 հազար, Սարուխանը՝ 20 հազար ռազմիկներ:

Պայքարելով օտարերկրյա զավթիչների՝ մոնղոլների դեմ և տեսնելով սելջուկյանների թուլությունն ու անգամ նրանց դավաճանությունը Անատոլիայի ընդհանուր թյուրքական շահերին՝ վերը հիշատակված որոշ բեյլիքներ փորձեցին իրենց վրա վերցնել Փոքր Ասիայի թյուրքական բոլոր ցեղերի իրավունքների պաշտպանությունը և կազմակերպել հակահարված մոնղոլներին: Այդ գործում առանձնապես մեծ հաջողության հասան Կարամանի բեյերը: Նրանց այդ վարքագիծը, որն անվանել են «հայրենասիրություն», դրսևորվեց նաև այն բանում, որ նրանք պայքար սկսեցին նաև Փոքր Ասիայում իրանական ազդեցության դեմ: Այդ պետության առաջնորդներից Մեհմեդ-բեյը (1261-1277) սելջուկյանների կողմից որպես գրագրության լեզու օգտագործած պարսկերենի փոխարեն՝ իր բեյությունում որպես պետական լեզու արմատավորեց թուրքերենը: Այդ ժամանակ հենց այդ լեզվով էլ սկսեցին ստեղծվել առաջին գեղարվեստական ստեղծագործությունները:

Կարամանների բեյությունը կազմավորվել էր Արևմտյան Կիլիկիայի լեռնային շրջաններում: Թուրքագետ Վ. Ա. Գորդլևսկին գտնում է, որ Կարամանյանների իշխանության հիմնադիրը եղել է իսլամ ընդունած հայ: Աստիճանաբար Կարամանի բեյերի իշխանությունը դարձավ խոշորագույններից մեկը Փոքր Ասիայում և ամենահզորը՝ Օսմանյան իշխանության բարձրացմանը նախորդած ժամանակաշրջանում: Նրանք նույնիսկ տիրեցին Սելջուկյանների պետության մայրաքաղաքին՝ Կոնիային (XIV դ.) և այն դարձրին իրենց մայրաքաղաքը:

Սակայն Անատոլիան միավորելու ուղղությամբ կարամանների

ծավալած շարժումը, ինչպես և թյուրքերենը իրենց պետության լիիրավ լեզու դարձնելու ձգտումը, հաջողությամբ չպսակվեց:

Մոնղոլական տիրապետության դեմ համառ և անզիջում պայքար էր մղում նաև Կարամանների բեյության ախոյան Գերմիյան բեյլիքը, որի մայրաքաղաքը Քյութահյան էր: 1299 թ. մոնղոլները նույնիսկ հարկադրված եղան ճանաչել առանձնակի հզորության հասած այդ իշխանապետության անկախությունը: XIII դ. վերջերին Գերմիյանը կարողացավ իր իշխանությունը տարածել ընդհուպ մինչև Անկարա: Այս բեյությունը ևս մշտապես «ղազավաթ» («սրբազան պատերազմ») էր մղում իր հարևան «անհավատներով» բնակեցված տարածքների նկատմամբ: Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ էին Կենտրոնական Ասիայից իրենց հետ բերված դյուցազունների՝ ալփերի մասին եղած էպիկական ավանդապատումները, որոնք միահյուսվում էին «հավատի մարտիկների»՝ ղազիների մասին իսլամական պատկերացումների հետ:

Կարասի, Սարուխան և հատկապես Այդին ծովափնյա բեյությունները, ունենալով իրենց սեփական նավատորմը, առանձնակի ակտիվ էին Բյուզանդիայի դեմ մղված պայքարում, թեև լայնորեն զբաղվում էին նաև ծովահենությամբ ու ստրկավաճառությամբ՝ ավելի շատ մտահոգված լինելով իրենց սեփական գոյությունը պաշտպանելու և հարստանալու հարցերով: Ծովափնյա բեյությունները, Մենթեշեն, Սարուխանը և հատկապես Այդինը առևտրական լայն կապերի մեջ էին եվրոպական տերությունների հետ: Հայտնի է, օրինակ, որ 1348–1351 թթ. Վենետիկը, իսկ ապա նաև Ջենովան, Հռոմի պապի միջնորդությամբ, առևտրական պայմանագիր էին կնքել Այդինի բեյերից մեկի՝ Կադիրի հետ: Նշված բեյությունները սերտ առևտրական կապերի մեջ էին գտնվում նաև Իզմիր քաղաքի քրիստոնյա իշխանությունների հետ: 1343–1344 թթ. ֆրանսիական Ֆիլիպ VI թագավորի, Բյուզանդիայի, Վենետիկի, Էգեյան և Միջերկրական ծովերի կղզիների ավատական առանձին իշխանների, Նեապոլի թագավորի և Հռոմի պապի մասնակցությամբ կազմակերպված խաչակրաց արշավանքի հետևանքով առևտրական խոշոր կենտրոն Իզմիր քաղաքը, որը պատկանում էր Այդին բեյությանը, անցել էր խաչակիրներին:

Այսպիսով, Փոքր Ասիայում ծնունդ առած թյուրքական իշխանապետությունները չկարողացան միավորել իրենց ուժերը մոնղոլական նվաճողականությանը հակահարված տալու, թյուրքական ցեղերին համախմբելու և մեկ միասնական թյուրքական պետություն ստեղծելով՝ Փոքր Ասիայի նկատմամբ հաստատելու իրենց անբաժան տիրապետությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐՔ-ՕՍՄԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. ԹՈՒՐՔԵՐԸ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

XIII դարի վերջին տասնամյակներում Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում ծնունդ առավ ևս մի ինքնուրույն բեյլիք (իշխանություն), որը պատմության մեջ մտավ օսմանյան բեյություն անունով: Սկզբնապես այդ փոքր ու աննշան պետական կազմավորմանը հետագայում վիճակված էր խաղալու անատոլիական բոլոր հողերը իր իշխանության տակ միավորողի, ինչպես նաև Անատոլիայում թուրքական միասնական էթնիկական ընդհանրության կազմավորման դեր: Ժամանակի ընթացքում այդ պետությունը դարձավ միջնադարի ուժեղագույն տերություններից մեկը, ավելի ճիշտ համաշխարհային կայսրություն, որը գալիս էր լցնելու այն դատարկությունը, որն առաջացել էր Բյուզանդական կայսրության քայքայման ու անկման հետևանքով:

Օսմանների բեյության պատմության սկզբնական փուլերի մասին տեղեկությունները կրում են առասպելական բնույթ: Հնարավոր է, որ XIV-XV դարերի օսմանյան ժամանակագիրների հաղորդմամբ մեզ հասած առանձին տեղեկություններ ավելի ուշ շրջանի գիտակցված հորինվածքներ են, որոնք նպատակ են հետապնդում ցույց տալ Օսմանյան դինաստիայի հիմնադիր Օսմանի ցեղի պատմության առանձնահատուկ հերոսականությունը և ապացուցել այդ դինաստիայի իշխանության լեգիտիմությունը:

Համաձայն թուրքական պատմական ավանդույթի՝ Օսմանյան բեյլիքի ստեղծման պատմությունը հետևյալն է. 1219-1221 թվականներին դեպի Միջին Ասիա Չինգիզ-խանի գլխավորությամբ կազմակերպված արշավանքից հետո օղուզ-թուրքմենական կայա (կայը) վաչկատուն քոչվորական ցեղը իր առաջնորդ Էրթողրուլի գլխավորությամբ թուրքմենական տափաստաններից գաղթում է դեպի Արև-

մուտք և XIII դարի 30-ական թվականներին հայտնվում Փոքր Ասիայում: Այդ ցեղը սկզբնապես իր քոչավայր է ընտրում ներկայիս Անկարայից արևմուտք ընկած Գարաջադաղի հողերը: Այնուհետև արոտավայրերի մշտական փնտրտուքների ընթացքում ցեղի տարբեր ճյուղերը թափանցում են Արևմտյան Հայաստան (Ախլաթ, Էրզրում, Երզնկա և այլն), կամ շարժվում դեպի Սիրիայի կողմերը: Կայա ցեղի մեկ այլ հատված հաստատվում է Զուկուրովի շրջանում, որտեղից, ավանդության համաձայն, 400-500 վրաններից բաղկացած ցեղի մի ոչ մեծ ճյուղ Էրթողրուլի գլխավորությամբ, փրկություն որոնելով մոնղոլների հալածանքներից, տեղափոխվում է սելջուկյան սուլթան Ալա-էդ-դին Քեյքուբաթ I-ի (1219-1236) տիրույթները՝ նրանից խնդրելով հովանավորություն: Անգլիացի թուրքագետ Ստ. Շաուի արտահայտությամբ «Առանց արմատների քոչվորական այդ ցեղը իր ծառայությունը վաճառում էր այն կառավարչին, ով ավելի շատ էր վճարում»:

Էրթողրուլի կյանքի և նրա գործերի մասին մեզ հասած տեղեկությունները վերին աստիճանի սուղ են և ամենայն հավանականությամբ ոչ հավաստի: XIV-XV դարերի թուրք տարեգիրները որպես կանոն նրա մասին հաղորդում են առասպելախառն տեղեկություններ: Դրանցից մեկում պատմվում է, որ երբ Էրթողրուլը իր մոտ 400 հեծյալների հետ ճակատամարտի դաշտում հայտնվում է իր համար անհայտ երկու հակառակորդների միջև, խորհրդակցելով իր մարդկանց հետ, ասպետական կեցվածքով անցնում է թույլերի կողմը՝ ապահովելով նրանց հաղթանակը: Հետագայում պարզվում է, որ ինքը օգնել է սելջուկյան սուլթան Ալա-էդ-դին Քեյքուբաթ I-ին, որը կռվում էր մոնղոլների դեմ: Ի նշան երախտագիտության, սուլթանը Էրթողրուլին հագցնում է պատվո խալաթ, պատերազմական ավարը բաժանում նրա զինվորներին և Մելանգիի (Թուրքերեն Գարաջահիսար) և Սյոդութի (Էսկիշեհիրից հյուսիս-արևմուտք) շրջաններում Էրթողրուլին պարգևում է բյուզանդացիների հողերից խլված մի ուչ (ուջ)[1]՝ այնտեղ բնակվելու իրավունքով: Այդ ուչը (ուչբեյությունը) քրիստոնյաներով բնակեցված տարածք էր, հետևաբար կողոպուտի և հարստահարության հիանալի օբյեկտ: Էրթողրուլի ողջ ցեղը, ներառյալ նաև կանայք ու երեխաները, զբաղված էին քրիստոնյա նստակյաց-հողագործ բնակչության կողոպուտով: Որպես վասալական պարտա-

[1] Ուչը XI-XII դարերում Փոքր Ասիայում ռազմա-ավատական ինստիտուտ էր: Ըստ էության այն իրենից ներկայացնում էր ավատակալվածք, որին տիրապետողը կոչվում էր ուչ-բեյ:

վորություն՝ Էրթողրուլը պարտավոր էր պաշտպանել ինչպես իրեն հանձնված ուչբեյության տարածքը, այնպես էլ սելջուկյանների տերության հյուսիս-արևմտյան սահմանները:

Էրթողրուլին հատկացված ուչը մեծ չէր և գտնվում էր Բյուզանդական կայսրության ծայրամասային անհանգիստ շրջաններում: Սակայն եռանդուն ու փառասեր ուչբեյը անմիջապես ներշնչվում է այն մեծացնելու, ընդարձակելու և կատարելապես ինքնուրույն դարձնելու մղումներով: Բոլորովին ուժասպառ եղած Բյուզանդիայի հարևանությունը նպաստում էր նրա այդ ձգտումներին: Իր փոքրաթիվ, բայց և մարտունակ ջոկատի գլուխ անցած, Էրթողրուլը սկսում է արշավներ կազմակերպել և ասպատակ սփռել հարևան բյուզանդական հողերում՝ ավարի ու կողոպուտի մատնելով քաղաքներն ու բնակավայրերը: Իր ավազակային ասպատակությունների ժամանակ դիմադրության հանդիպելու դեպքում, Էրթողրուլը անխնա ոչնչացնում էր դիմադրողներին: Նրան հաջողվում է Բյուզանդիայի սահմանային շրջանների հաշվին որոշ չափով ընդլայնել իր ուչի սահմանները: Մասնավորապես նա հույներից գրավում է Գարաջահիսարի բերդն ու Կուտինիայի մերձակայքում գտնվող այլ վայրեր:

Քանի որ սելջուկյան պետության օրենքներով ուչերի նկատմամբ իրավունքը ժառանգական էր, Էրթողրուլի մահվանից հետո (1281 թ.) սուլթան Ալա-էդ-դին Քեյ-Քուբաթ III-ի հրամանով նրան չնորհված ավատակալվածքը անցավ իր ավագ որդուն՝ Օսմանին (1258-1324), որը 24 տարեկան հասակում հաջորդում է իր հորը (1281 թ.): Հենց Օսմանի անունով էլ և՛ բեյությունը և՛ դինաստիան հետագայում կոչվեցին Օսմանյան (Օսմանլը): Այսպիսով, թեև Էրթողրուլն է հանդիսանում օսմանյան պետության հիմնադիրը, սակայն դինաստիան իր անվանակոչումը ստացել է Օսմանի անունով: Վերջինիս կողմից հիմնադրված հարստությունը առանց ընդմիջվելու Թուրքիայում կառավարեց մինչև 1922 թվականը, այսինքն մինչև քեմալականների կողմից սուլթանության (սուլթանաթի) վերացումը (ընդամենը կառավարել են 37 սուլթաններ):

Աղբյուրների վկայությամբ, եղել են մարդիկ, որոնք կողմնակից են եղել իշխանությունը փոխանցելու Էրթողրուլի եղբորը՝ Դյունդարին: Սակայն վերջինս համարձակություն չի ունենում հանդես գալու իր եղբորորդու դեմ, քանի որ ակնառու կերպով տեսնում էր, որ նա օգտվում է մեծամասնության աջակցությունից և ուժը նրա կողմն է: Դյունդարին համարելով հավանական մրցակից, մի քանի տարի հետո սպանում են:

Օսմանյան ժամանակագիրներից մեկը՝ Աշըք փաշա-զադեն (1400–1495) բերում է մի շարք առասպելական բնույթի ավանդություններ Օսմանի մասին: Դրանցից մեկում պատմվում է, որ մի անգամ Օսմանը գիշերում է մի բարեպաշտ մահմեդականի տանը: Մինչև անկողին մտնելը տանտերը նրա սենյակն է բերում մի գիրք: Օսմանի այն հարցին, թե դա ինչ գիրք է, տանտերը պատասխանում է. «Դա Ղուրան է, Աստծո խոսքը, որն աշխարհին է ներկայացվել նրա մարգարեի՝ Մուհամմեդի կողմից»: Օսմանը սկսում է կլանված կարդալ գիրքը՝ ոտքի վրա ընթերցանությունը շարունակելով ողջ գիշերը: Քուն է մտնում լուսադեմին, ճիշտ այն ժամին, որն ըստ մահմեդական հավատալիքների, առավել բարենպաստ ժամանակ է մարգարեական մտորումների համար: Օսմանին քնի մեջ հայտնվում է մի հրեշտակ, որն արտաբերում է հետևյալ խոսքերը. «Քանի որ դու այդպիսի մեծագույն հարգանքով ու ակնածանքով կարդացիր իմ հավերժական խոսքը, քո զավակներին և քո զավակների զավակներին պետք է սերնդից սերունդ հարգանք մատուցեն»:

Վկայակոչելով այս առասպելը՝ կարծիք է հայտնվել, որ Օսմանը և նրա ժողովուրդը Էսկիշեհիրի շրջանում բնակություն հաստատելու ժամանակ ըստ երևույթին դեռևս մահմեդականություն չէին ընդունել: Որպես փաստարկ բերվում է հետևյալ հիմնավորումը. XI դարի սկզբից Փոքր Ասիա մուտք գործած թուրք վերաբնակիչները մեծ մասամբ արդեն բաղկացած էին իսլամն ընդունած ցեղերից, նրանց վաղ շփումների հետևանքով արաբա-մուսուլմանական աշխարհի հետ: Սակայն դրանց հաջորդ ալիքը, որը XIII դարում հուժկու թափով շարժվեց դեպի փոքրասիական տարածքները, առավելապես բաղկացած էր հեթանոս ցեղերից: Ուստի ենթադրվում է, որ Էրթողրուլի կամ օսմանների ցեղը հենց մաս էր կազմում այդ ալիքին: Մոնղոլական հեթանոս հորդաների հուժկու ճնշման հետևանքով այդ ցեղերը, որպես հալածական փախստականներ, շարժվելով դեպի արևմուտք, հանգրվան էին գտել Փոքր Ասիայում:

Օսմանը ծնվել էր մոտավորապես 1258 թ. Սյոդութում, որը նոսր բնակեցված լեռնային մի շրջան էր, հարուստ ամառային արոտավայրերով և ձմեռային քոչավայրերով: Սակայն այդ ուչի ամենակարևոր առավելությունը քոչվորների համար այն էր, որ այն ընկած էր բյուզանդական հողերի հետ հարևանությամբ, ուստի և հնարավորություն էր ընձեռում հարստանալու ասպատակությունների հաշվին: Այդ հնարավորությունը վերին աստիճանի հրապուրիչ էր նաև այլ բեյլիքներում և ուչբեյություններում ապրող թյուրքական այլևայլ ցե-

ղերի համար, որոնք սկսեցին անդամագրվել Օսմանի ավարառու ջոկատներին: Այսպիսով, Օսմանի ուշբեյությունը վեր էր ածվում մինչև ատամները զինված ելուզակախմբերի հավաքատեղու[1]: Նրանց համար ոչ մահմեդականներին պատկանող հողերի գրավումը կամ նրանց բնակչության կողոպուտը իսլամի օրենքների համաձայն դիտվում էր որպես աստվածահաճո գործ («ղազվ», ղազավաթ»): «Սրբազան պատերազմը» («ջիհադ») անհավատների դեմ մի միջոց էր նաև զենքի ուժով քրիստոնյաների շրջանում իսլամը տարածելու համար: Իրենց «ղազիներ» կամ «հավատի մարտիկներ» հռչակած Օսմանի մոլեռանդ կողմնակիցները իրենց համարում էին «անհավատների» դեմ զինված պայքարի առաջամարտիկներ: Նվաճողների այդ տարացեղ զանգվածի շրջանում զգալի ազդեցություն ունեին կրոնամիստիկական-դերվիշական զանազան «թարիքաթների» (եղբայրությունների), «ախիների», «մարտնչող կանանց» և այլ բազմապիսի ռազմաշունչ-կրոնական սկզբունքներով առաջնորդվող կազմակերպությունները: Բանակի կառուցվածքի վրա մեծ ազդեցություն ունեին կրոնական եղբայրությունները և Անատոլիայի ցեղերը: Աշրգ Փաշազադեն հիշատակում է Անատոլիայում գոյություն ունեցող չորս կրոնական խմբերի մասին: Դրանք էին՝ առաջինը «Ղազիյան-ի Ռում», այսինքն Անատոլիայի ղազիներ: Անատոլիայում «ղազի» արաբական տիտղոսի հետ միաժամանակ օգտագործվում էր նաև թուրքական «ալփ» տիտղոսը: Համաձայն այդ նույն Աշրգ Փաշազադեի, որպեսզի մեկը դառնար ալփ, պետք է ունենար հետևյալ ինը հատկանիշները. խիզախ սիրտ, ուժեղ ձեռքեր, բուռն ձգտում, լավ ձի, հատուկ զգեստ, նետ ու աղեղ, լավ սուր, նիզակ և լավ զինակիր»:

Երկրորդ կրոնական խումբը կոչվում էր «Աբդալան-ի Ռում». սրանք տարբեր մահմեդական երկրներից եկած դերվիշներ էին, որոնք իսլամի ռազմաշունչ քարոզիչներն էին: Նրանց հիմնական սկզբունքը սրբազան պատերազմն էր անհավատների դեմ և իսլամի քարոզչությունը քրիստոնյա բնակչության շրջանում: Օտարեկրյա այդ

---

[1] Տեղաբնակ քրիստոնյա խաղաղ բնակչության կողոպուտը ավելի արդյունավետ կերպով կազմակերպելու համար, Օսմանի ժամանակ ստեղծվում են այսպես կոչված աքընջիների ոչ կանոնավոր հեծելազորային ջոկատներ, որոնք ըստ էության լավ զինված հրոսակախմբեր էին: Օսմանի ուշբեյությանը բնորոշ էր կառավարման տոհմացեղային կամ աշիրեթական ձևը: Ողջ հողատարածքը բաժանվում էր ցեղի անդամների միջև սելջուկյան սուլթանությունից ժառանգած իքթաների, այսինքն պայմանական տիրույթների ձևով:

դերվիշները հարում էին զանազան կրոնական եղբայրությունների, ինչպես օրինակ, Մևլևի, Ահմեդի, Հալվեթի, Իսխաքի, Կալենդերի, Յասևի, Հայդարի և այլն:

Երրորդ խումբը «Բաջիյան-ի Ռում» կանացի կազմակերպությունն էր: Այն գտնվում էր Հաջի Բեքթաշի միաբանության ազդեցության ներքո: Դա զինված կին-քոչվորների կազմակերպություն էր: Բերտրանդոն դե լյա Բրոկյերի վկայությամբ, XV դ. սկզբին Զուլքադար բեյլիքի զորքերի մեջ հաշվվում էր մոտ 30 հազար կին:

Չորրորդ խումբը կոչվում էր «Ախիյան-ի Ռում»: Այն բաղկացած էր Անատոլիայի ախիներից: Ախիները հանդիսանում էին արհեստավորների կազմակերպություններ և միաժամանակ կազմում էին որոշակի կրոնական աղանդ: Արհեստավորների այդ միավորումը իրենից ներկայացնում էր խոշոր քաղաքական ուժ: Այն տոգորված էր կրոնական մոլեռանդությամբ և միստիկական ուսմունքներով: Ախիների անդամներ էին ոչ միայն արհեստավորները, այլև տիրապետող դասակարգի ներկայացուցիչները:

Մահմեդական մոլեռանդ կղերի բարձրագույն ներկայացուցիչները՝ ուլեմները (ուլեմաները) ուղղորդում էին կողոպուտի մոլուցքով տարված այդ հսկայական զանգվածների ավերիչ գործողությունները: Ի դեպ, հենց նրանք էլ ղեկավարում էին ձևավորվող պետական կառույցների մեծ մասը:

Կարևոր է նշել, որ երբ XIII դարի երկրորդ կեսին անատոլիական բեյլիքների տիրակալները նոր տիրույթներ ձեռք բերելու համար արյունախանձ կռիվների մեջ վատնում էին իրենց ուժերը, Օսմանի ռազմիկները զավթում էին «անհավատ» բյուզանդացիների հողերը և ընդարձակում օսմանյան տիրույթների սահմանները:

1291 թ. Օսմանին հաջողվում է Բյուզանդիայից զավթել Մելանգիյա (Գարաջահիսար) փոքրիկ քաղաքը և այն դարձնել իր նստավայրը: Քանի որ այդ քաղաքի բնակիչները դեռևս թուրքերի գալուց առաջ փախուստի էին դիմել, Օսմանը Գերմիյանների բեյությունից և Անատոլիայի այլ վայրերից բերված մարդկանցով բնակեցրեց այն: Նրա հրամանով տեղական քրիստոնեական տաճարը վերածվեց մզկիթի, որտեղ ուրբաթօրյա գոհաբանական աղոթքի ժամանակ («հութբա») հիշատակվեց Օսմանի անունը որպես տիրակալի: Հենց այդ ժամանակ, օգտվելով նրանից, որ «Մեծ Սելջուկների» սուլթանի իշխանությունը Անատոլիայում դարձել էր կատարելապես երևութական, Օսմանին հաջողվում է առանց մեծ ջանքեր գործադրելու նրանից ստանալ բեյի տիտղոս և այն խորհրդանշող այնպիսի առանձնանշան-

ներ, ինչպիսիք էին դրոշը, թուրը, թմբուկը և բունչուկը (ձիու պոչի մազից մի ծոպ, որը վկայում էր հատուկ ազնվազարմության և համապատասխան տիտղոսի մասին): Ի հավելումն այդ բոլորի՝ նա սուլթանից ստացավ նաև իր անվամբ դրամ հատելու արտոնություն:

Հավաստի հայտնի է, որ արդեն 1299 թ. Օսմանների բեյությունը լրիվ ազատվել էր սելջուկյան սուլթանի գերիշխանությունից, թեպետ շարունակում էր ճանաչել Իլխանների քաղաքական գերիշխանությունը՝ պարտավորված լինելով նաև ոչ մեծ տարեկան հարկ վճարելու նրանց: Այսպիսով, Օսմանյան բեյլիքի պատմության մեջ կարևորագույն փուլ հանդիսացավ 1299 թվականը, երբ օգտվելով նրանից, որ մոնղոլական դրածո սելջուկյան սուլթան Ալա-էդ-դին Քեյքուբաթ II-ի սահմանած անագորույն լծի դեմ բռնկել էր ապստամբություն, որի հետևանքով սուլթանը փախուստի էր դիմել իր մայրաքաղաք Կոնիայից, Օսմանը սկսեց կառավարել միանգամայն անկախ և ինքնագլուխ կերպով: Նա իր ուչը հռչակեց ինքնուրույն պետություն, իսկ իրեն՝ անկախ տիրակալ: Ընդունեց սուլթան և փադիշահ տիտղոսները՝ իր աթոռանիստը դարձնելով Ենիշեհիր քաղաքը: Օսմանի ցեղակիցները հետագայում սկսեցին կոչվել օսմանլը, այսինքն օսմանցիներ:

1299 թվականը ընդունված է համարել անկախ օսմանյան պետության գոյության սկիզբը: Դառնալով կատարելապես անկախ ու ինքնիշխան՝ Օսմանը ձեռնամուխ եղավ իր պետության կայունացմանը: Երբ 1307 թ. սելջուկյան սուլթանությունը դադարեց գոյություն ունենալուց, Օսմանը ճանաչեց մոնղոլական Հուլաղուիդների (Հուլավյանների) դինաստիայի գերագույն իշխանությունը՝ նրան վճարելով տարեկան հարկ: Այդ կիսակախյալ վիճակից Օսմանյան բեյլիքն ազատվեց ավելի ուշ, Օսմանի որդու՝ Օրխանի օրոք:

Ոգեշնչված իր հաջողություններով՝ Օսմանը ձեռնամուխ եղավ բյուզանդական պետության հաշվին իր նորաստեղծ պետության սահմանների էլ ավելի ընդարձակմանը: Ընդ որում, նա որոշեց ծավալվել փոքրասիական տարածքներում: Այդ առումով նրա քաղաքականությունը էականորեն տարբերվում էր մյուս սահմանամերձ բեյությունների գործելակերպից, որոնք նավատորմ ունեին և իրենց նվաճողական քաղաքականությունը զարգացնում էին Բալկանյան թերակղզու ուղղությամբ:

Բյուզանդացիների դեմ պայքարը նշանակալիորեն հեշտանում էր նրանով, որ Օսմանյան բեյլիքը դեռևս սուր հակասություններ չուներ իր անմիջական հարևանների հետ, որոնք նրա նկատմամբ չէին դրսևո-

ում թշնամական տրամադրություններ: Գերմիյան ուժեղ բեյլիքը, օրինակ, անընդհատ պատերազմների մեջ էր մերթ մոնղոլների, մերթ բյուզանդացիների հետ: Քարեսի (Գարասի) բեյլիքը հաշվի մեջ չէր, որովհետև թույլ էր և անկարող: Թեև Անատոլիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Ջանդար-օղլու (Ջանդարիթներ) բեյլիքը բավականաչափ ուժեղ էր, սակայն բնավ չէր անհանգստացնում Օսմանի բեյլիքին, քանի որ մշտապես զբաղված էր մոնղոլների դեմ պատերազմներով: Հետևաբար Օսմանյան բեյլիքի ձեռքերը կատարելապես ազատ էին և նա կարող էր իր ողջ ուժերն օգտագործել նվաճումներ իրականացնելու համար:

Վիֆինիայի գրավումից հետո Օսմանը հավակնություններ ուներ իր ուշին միացնելու Բրուսայի (Թուրքերեն Բուրսա), Բելոկոմայի (Բիլեջիք) և Նիկոմեդիայի (Իզմիթ) շրջանները ևս: 1301 թ. նրան հաջողվեց գրավել Ենիշեհիրը, դրանով իսկ նախապատրաստելով Բրուսայի գավթումը: Օսմանը չէր շտապում ուղղակի կոնֆլիկտի մեջ մտնել Բյուզանդիայի կայսերական զորքերի հետ: Նա համբերատար կերպով սպասում էր իր ժամին: Միայն իշխանության գլուխ գալուց հետո տասներկու տարի անց՝ որոշեց իր ուժերը չափել երբեմնի փառաբանված բյուզանդական բանակի հետ:

1302 թ. Բաֆեոնի (Թուրքերեն՝ Կոյունհիսար) մոտ տեղի ունեցած ճակատամարտում Օսմանը ջախջախեց Բրուսայի բյուզանդական տեղապահի զորքերը: Դա բյուզանդացիների նկատմամբ Թուրք-օսմանների տարած առաջին խոշոր հաղթանակն էր: Ըստ էության միայն այդ ճակատամարտից հետո Կոստանդնուպոլսում սկսեցին գիտակցել, որ գործ ունեն ոչ թե սովորական ավարառուի, այլ վերին աստիճանի վտանգավոր հակառակորդի հետ: Ուստի սկսեցին լրջագույն ձևով հաշվի նստել Օսմանի և նրա ռազմաշունչ ոգով տոգորված պետության հետ, գիտակցելով, որ առաջիկայում իրենց սպասում են ահեղ գոտեմարտեր:

Բաֆեոնի մոտ ձեռք բերված հաղթանակը մեծ փառք բերեց Օսմանին: Անատոլիայի բոլոր անկյուններից հախուռն թափով նրա դրոշի տակ սկսեցին հավաքվել «հավատի ռազմիկներ»՝ ղազիներ: Եվ նույնիսկ սահմանային գոտիների հույն մարտիկներից՝ աքրիդներից շատերը հակված էին անցնելու Օսմանի կողմը, քանի որ իրենք միանգամայն լքված էին զգում Կոստանդնուպոլսի կողմից, որն ուղղակի նրանց թողել էր ճակատագրի քմահաճույքին և այլևս ոչ ոք իրենց չէր վարձատրում սահմանապահ ռազմական ծառայության դիմաց:

Բաֆեոնի մոտ ձեռք բերված հաջողությունը աննախընթաց կեր-

պով ամրապնդեց Օսմանի իշխանության հիմքերը, իսկ ամենակարևորը նրան ներշնչեց ինքնավստահություն:

1305 թ. Լևկեյի մոտ տեղի ունեցած արյունալի ճակատամարտում բյուզանդացիներին հաջողվեց ուևանչ վերցնել և պարտության մատնել Օսմանին: Այդ հաղթանակի մեջ մեծ ներդրում ունեցան բյուզանդական Անդրոնիկոս II կայսեր մոտ ծառայության մեջ գտնվող վարձկան քրիստոնյաների կաթալոնական ջոկատները Ռոժե դե Ֆլորայի հրամանատարությամբ, որի զինվորները ներշնչված քրիստոնյաներ էին: Սակայն Կոստանդնուպոլսին չհաջողվեց զարգացնել այդ հաջողությունը, որովհետև կայսրության մեջ կրկին սկսվեցին երկպառակություններ: Օսմանցիները կարողացան փայլուն կերպով օգտագործել այդ հանգամանքը: Նրանց հաջողվեց նույնիսկ առանց մեծ ջանքեր գործադրելու գրավել սևծովյան ափամերձ շրջանների բյուզանդական մի շարք քաղաքներ: Միաժամանակ Թուրք-օսմանները առաջին անգամ սկսեցին ասպատակ սփռել Բյուզանդիայի տարածքի եվրոպական մասերում ևս, հատկապես Դարդանելի շրջանում:

Այնուհետև գրավելով դեպի Բրուսա տանող ճանապարհին ընկած մի շարք ամրոցներ և պաշտպանական ամրություններով օժտված բնակավայրեր, օսմանները սկսեցին տենդորեն նախապատրաստվել այդ քաղաքը գրավելու համար: Արդեն 1315 թ. գործնականում Բրուսան շրջապատված էր Թուրքերի հսկողության ներքո գտնվող ամրոցների շղթայով: Սակայն Օսմանին վիճակված չէր իրականացնելու իր այդ նվիրական իդեալը՝ Բրուսայի գրավումը: Դրան խանգարեց նրա մահը: Ավելի ուշ հոր այդ ծրագիրն իրականացրեց որդին՝ Օրխանը:

Օսմանի նվաճողական նկրտումները գնում էին շատ հեռուները: Իրար հետևից գավթելով բյուզանդական հողերը և դրանք միացնելով իր բեյլիքին, նա գերագույն նպատակ էր համարում Կոստանդնուպոլսի գրավումը: Օսմանի մասին հյուսված լեգենդներից մեկում պատմվում է, որ մի անգամ երազում նա տեսնում է մի ծառ, որը հուժկու թափով աճելով, իր ճյուղերով ծածկում է ողջ աշխարհը: Այդ ծառի տակ Օսմանը նկատում է չորս լեռնաշղթաներ՝ Կովկասյան, Ատլասյան, Տավրոսի և Բալկանյան: Նրանց ստորոտներից սկիզբ էին առնում չորս գետեր՝ Տիգրիսը, Եփրատը, Նեղոսը և Դանուբը: Դաշտերում աճում էր հարուստ բերք, իսկ լեռները պատած էին խիտ անտառներով: Հովիտներում երևում էին քաղաքներ, որոնք զարդարված էին գմբեթներով, բուրգերով, սլացիկ սյուներով ու աշտարակներով, որոնց բոլորի վրա դրոշմված էր կիսալուսինը: Միանգամայն անակնկալ կերպով ծառի ճյուղերի տերևները սկսում են ձգվել ու եր-

կարել՝ վերածվելով սրերի սայրերի: Բարձրանում է փոթորիկ, որն այդ սրերը տանում է դեպի Կոստանդնուպոլսի կողմը:

Այս լեգենդի թաքնված իմաստը նախ այն է, որ Օսմանի ծավալապաշտական երազանքների հանգրվանը Կոստանդնուպոլիսն էր: Սակայն ամբողջությամբ վերցրած աշխարհակալ կայսրություն ստեղծելու վերաբերյալ դա մի ամբողջ քաղաքական ծրագիր էր, որ Օսմանը ավանդ էր թողնում իր ժառանգորդներին: Օսմանցիների կողմից այդ ծրագիրն իրականացվեց հետագա դարերի ընթացքում, երբ Օսմանյան վիթխարի կայսրության թևերը տարածվեցին Կովկասյան լեռնաշղթայի ստորոտներից մինչև Հյուսիսային Աֆրիկա և Ատլասյան լեռնաշղթա, Տավրոսի լեռներից ու Կարմիր ծովից մինչև Բալկաններ:

Օսմանի մոտ հավաքված ղազիները չարունակ ուզում էին պատերազմել, քանի որ «հավատի համար» պատերազմը ըստ էության ճանապարհ էր հարստանալու և հողեր ձեռք բերելու համար: Նրանց առաջնորդը, որը նույնպես կրում էր ղազի տիտղոսը («ղազի Օսման»), հաճույքով ընդառաջում էր իր զորականների այդ պահանջներին:

Իր կյանքի մայրամուտին Օսմանը իր զորքերը չարժեց Աքհիսար քաղաք-ամրոցը գրավելու համար, որը տիրապետող դիրքեր ուներ Սաքարյա (հունարեն՝ Սանգարիուս) գետի ավազանում: Գրավելով այդ ամրոցը, դրանով իսկ օսմանները իրենց համար ճանապարհ բաց արեցին դեպի ծովը: Շուտով նրանք հայտնվեցին Բոսֆորի ափերին և այնուհետև աստիճանաբար գրավելով նեղուցի արևելյան ափերին գտնվող նավահանգիստներն ու ամրոցները, իրենց համար ստեղծեցին հուսալի ու կայուն հենակետեր: Զարգացնելով իրենց հաջողությունները, օսմանները գրավեցին Կալոլիմինի կղզին: Դա նշանակում էր, որ Կոստանդնուպոլիսը չրջափակելու ուղղությամբ կատարվել է առաջին լուրջ քայլը:

Հարկ է նշել, որ թուրքերը մշակել էին քաղաքներ գրավելու մի մարտավարություն, որը նրանք կիրառում էին նաև հետագա դարերի ընթացքում: Սկզբում գրավում էին նվաճման ենթակա քաղաքի չրջակայքը, նրա բնակչությանը մասամբ վոնդելով, մասամբ էլ ստրկացնելով: Այնուհետև այդ տարածքները բնակեցվում էին այլ վայրերից բերված թուրք բնակչությամբ: Այդպիսով քաղաքը հայտնվում էր թշնամական օղակի մեջ և նրա բնակիչների վրա կախվում էր սովահար լինելու ու ոչնչանալու սպառնալիքը: Դրանից հետո քաղաքի գրավումը դառնում էր աննչան զոհեր պահանջող գործ:

Ի նշանավորումն Օսմանի մեծ երազանքի՝ Կոստանդնուպոլիսը գրավելու վերաբերյալ, մահանալուց հետո (1326 թ.) նրան թաղեցին

Օլիմպոս լեռների ստորոտին, որտեղ կառուցեցին մի դամբարան, որը ծովահայաց կողմով նայում էր դեպի Բյուզանդիայի մայրաքաղաքը՝ կարծես ցանկանալով Օսմանի հետնորդներին ամեն վայրկյան հիշեցնել «գերագույն նպատակի»՝ Կոստանդնուպոլիսը գրավելու հույժ անհրաժեշտության մասին: (Հետագայում Օսմանի չիրիմը դարձավ հռչակավոր ուխտատեղի Գյումուշգումփեթ անունով):

Թուրքական պատմական ավանդույթի մատուցմամբ, գտնվելով մահվան մահճում, Օսմանը իր որդուն՝ Օրխանին, պատվիրել է. «Ուրախացրու իմ թռչող ոգին հաղթանակների փայլուն շարքով, քո ձեռքերով տարածիր կրոնը»:

Իր կյանքի ընթացքում Օսմանը դրսևորել էր ոչ միայն ռազմիկի, այլև վարչարարի ու կազմակերպչի ակնառու ընդունակություններ: Նրա հաջողությունների մեջ իր որոշակի լուման է ունեցել վեզիրի պաշտոնը զբաղեցրած իր աները՝ Էդեբ Ալին:

Անկասկած Օսմանի ցեղի մարդկանց կողմից իսլամի ընդունումը նոր ռազմաշուչ ոգի էր հաղորդել առանց այն էլ մարտական հատկանիշներով օժտված քոչվորներին: Օսմանը և նրա զինակիցները դրսևորեցին նաև բացառիկ կարողություն իրենց ռազմական նվաճումների արդյունքները արդյունավետ քաղաքական մեխանիզմի մեջ առարկայացնելու ուղղությամբ: Դեռևս Օսմանի ժամանակներից սկսած թուրքերը ճկունություն ունեցան լայնորեն օգտագործելու տեղական, հատկապես քրիստոնյա բնակչության մտավոր, արտադրական, վարչական, առևտրական ունակությունները, նրանց գիտելիքները և փորձը: Մասնավորապես նրանք խնամքով ու ջանասիրաբար ուսումնասիրում և օգտագործում էին Բյուզանդական կայսրության կառավարման մեթոդները: Օսմանի տիրույթների հարևանության մեջ գտնվող գյուղերի և ամրոցների տերերը որպես կանոն հույներ էին: Օսմանն աշխատում էր նրանց իսլամը պարտադրելու գնով հակել իր կողմը: Իսկապես, նրանցից շատերը ընդունեցին մահմեդականությունը և դարձան Օսմանին նվիրված կողմնակիցներ (օրինակ, Միխալօղլի, Մարկոզօղլի և այլ հայտնի ընտանիքները): Օսմանի ժամանակ դեռևս տեղի չէր ունենում տեղական բնակչության համատարած իսլամականացում: Սակայն բռնի պարտադրանքից բացի քիչ չէին նաև մահմեդականությունը սեփական ընտրությամբ ընդունելու դեպքերը:

Օսմանների հաջողությանը նպաստող կարևոր գործոններից մեկը նաև այն էր, որ Կոստանդնուպոլսում կենտրոնական իշխանության քայքայմանն ու անդամալուծմանը զուգընթաց, մարդիկ իրենց զգում էին իշխողների կողմից կատարելապես լքված, բախտի քմահաճույ-

քին թողնված, իրենց անվտանգությունը վտանգված ու խաթարված: Հոգևոր պլանում կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ Բյուզանդական կայսրության մեջ ուղղափառ եկեղեցու հեղինակության անկման պայմաններում կայսրության ասիական մասում ապրող հույները չափազանց արագ արձագանքեցին նոր կրոնի՝ իսլամի հրավերներին: Դրան զալիս էին ավելացնելու թուրքերի ու հույների միջև խառը ամուսնությունները, որոնք դարձել էին սովորական երևույթ:

Իհարկե, կասկածից վեր է, որ իրենց հետագա կայսերական ճակատագրով օսմանները պարտական էին, անգլիացի լորդ Քինրոսի բնորոշմամբ, «աշխարհագրական պատահականությանը»: Այսինքն օսմանների պետությունը Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան անկյունում, Բյուզանդական կայսրության ասիական տիրույթների անմիջական հարևանությամբ, զբաղեցնում էր կարևորագույն ռազմավարական դիրք, մի գործոն, որ Օսմանյան կայսրությունը վերին աստիճանի ճկուն ու արդյունավետ կերպով օգտագործել է իր գոյության ողջ ընթացքում: Վերջապես այդ պետության համար առավելություն էր, կամ ավելի ճիշտ բարեպատեհ առիթ, որ նա ծնունդ առավ Բյուզանդական կայսրության մայրամուտի և անկման շրջանում:

Հարկ է նշել, որ օսմանյան առաջին կառավարողները, ըստ էության, միայն ցեղապետեր էին, որոնք հենվում էին քոչվոր աշխարհազորի ուժի վրա, որին միանում էին ուրիշ բեյություններից եկածներն իրենց ցեղապետերի ու դերվիշ-սուֆիների առաջնորդությամբ, ինչպես նաև քրիստոնյա առանձին ուրացյալներ: Օսմանյան բեյը միայն առաջինն էր հավասարների մեջ, որին, որպես զորահրամանատարի, հասնում էր ավարի հինգերորդ մասը (փենջիքը): Որպես տիպիկ ռազմական պետության ղեկավար, Օսմանը գիտակցել է մարտունակ բանակ ստեղծելու անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ կատարել է որոշակի քայլեր: Նա, օրինակ, Էրթողրուլի ժամանակներում իրենց ունեցած չորս հարյուր ռազմիկներից բաղկացած ջոկատը անընդհատ մեծացրել և հասցրել է, ըստ որոշ աղբյուրների, չորս հազար մարդուց բաղկացած մարտունակ զորամիավորման: Օսմանի օրոք նրա բեյլիքում դեռևս տիրապետում էին սոցիալական այնպիսի հարաբերությունները, որոնք բնորոշ էին տոհմա-ցեղային կենցաղին և աշիրեթային կառուցվածքին: Լինելով արդեն կայացած պետության ղեկավար՝ Օսմանը և նրա ցեղը չարունակում էին վարել կիսաքոչվորական կյանք: Նա իր որդիներին որպես հարստություն ոչինչ չէր թողել, բացի «հիանալի ձիերի մի քանի երամակից ու ոչխարի հոտերից»: Երբ նա զավթումների չնորհիվ ընդարձակեց իր պետության

սահմանները, լայնորեն սկսեց օգտագործել ռազմական ու քաղաքացիական ծառայության դիմաց հողեր բաշխելու համակարգը, որն իր ընդհանուր գծերով ժառանգված էր սելջուկներից: Իր մերձավորներին «կերակրման» համար բաժանված այդ չնորհումները, որոնք կրում էին թիմարներ անվանումը, հատկացվում էին զորահրամանատարներին ու հասարակ զինվորներին որպես պայմանական տիրույթ: Դրանց տրամադրման գերագույն իրավունքը պատկանում էր Օսմանին: Թուրք տարեգիր Ահմեդ Աչրք Փաշազադեի վկայությամբ՝ Օսմանը անձամբ էր բաժանում թիմարները: Թուրքական տարեգրություններում հետևյալ կերպ է ներկայացվում Օսմանի հրամանագիրը հողային հատկացումների պայմանների մասին. «Այն թիմարը, որը ես տալիս եմ որևէ մեկին, թող առանց պատճառի չխլեն նրա ձեռքից: Իսկ եթե նա, ում ես տվել եմ թիմարը, մահանա, թող այն հատկացնեն նրա որդուն: Եթե որդին փոքր տարիքի է, ապա միևնույնն է, թող նրան փոխանցեն, որպեսզի պատերազմի ժամանակ նրա ծառաները մեկնեն արշավանքի մինչև այն ժամանակ, երբ ինքը անձամբ պիտանի կլինի այդ գործի համար»: Թիմարատերերը (թիմարիոթները) իրավունք ունեին իրենց տիրույթները փոխանցել սերնդից սերունդ, եթե իրենց ժառանգները ևս շարունակեին կատարել ռազմական ծառայություններ: Թուրք ժամանակագիրները հաղորդում են, որ Օսմանը «յուրաքանչյուրին բարերարություն էր անում իր արժանիքների համեմատ»: Առանձին զազիների նա նույնիսկ հատկացնում էր ամբողջ գյուղեր: Իր որդի Օրխանին նա չնորհել էր Գարաջահիսար սանջակը:

Թիմարային համակարգը, որը ռազմա-ավատական համակարգի տարատեսակներից էր, ժամանակի ընթացքում դարձավ օսմանյան պետության սոցիալական կառույցի հիմքը: Ավելի ուշ, XV դարի կեսերից սկսած թիմարներ սկսեցին հատկացվել նաև որոշ բարձրագույն աստիճանավորների: Հանձինս թիմարատերերի, Օսմանը ձգտում էր իր իշխանության համար ստեղծել կայուն ու հավատարիմ ռազմական ու սոցիալ-քաղաքական հենարան:

Ինչպես նշվել է վերևում, Օսմանյան պետական ինստիտուտների ձևավորման գործում մեծ դեր է խաղացել մահմեդական հոգևորականությունը: Աստվածաբան-ուլեմները իրագործում էին բազմաթիվ վարչական գործառույթներ: Նրանց ձեռքում էր կենտրոնացած արդարադատությունը, լուսավորությունը և այլն: Օսմանը սերտ կապեր էր հաստատել մեվլևի և բեքթաշի դերվիշական միաբանությունների, ինչպես նաև կրոնա-համքարային «ախի» կոչված եղբայրության հետ, որն օգտվում էր մեծ ազդեցությունից Փոքր Ասիայի քաղաքնե-

րի արհեստավորական խավերի շրջանում: Հենվելով ուլեմների, դերվիշական ու սուֆիական միաբանությունների ու ախիների վերնախավի վրա՝ Օսմանը և նրա ժառանգորդները ոչ միայն ամրապնդում էին իրենց իշխանությունը, այլև «հավատի համար պայքարի»՝ ջիհադի կարգախոսի ներքո հիմնավորում էին իրենց զավթողական արշավանքները:

Անտարակույս արտաքուստ կամ ձևով մնալով ռազմատենչ իսլամի և ագրեսիվ նոմադականության (քոչվորության) նույն գաղափարների կրողներ, ինչպես, օրինակ, Դանիշմենդյանները XI դարում, օսմանները, սակայն, գտնվում էին սոցիալական զարգացման արդեն նոր, ավելի բարձր աստիճանի վրա: Ընդ որում, արդեն Օսմանի օրոք նրա պետության մեջ, բնակչության ճնշող մասի մոտ, նկատվում էր քոչվորությունից հրաժարվելու և նստակեցության անցնելու միտումներ ու գործընթաց:

Անկասկած, Օսմանի պատմական դերը կայանում էր նաև նրանում, որ հանդես գալով որպես ցեղային առաջնորդ, նա կարողացավ իր շուրջը համախմբել իր ժողովրդին և օգտագործել նրա եռանդը հանուն ուժեղ պետության ստեղծման: Արտահայտելով այդ գաղափարը, XIX դարի օսմանյան բանաստեղծներից մեկը գրել է. «Մենք կարողացանք ցեղից աճեցնել աշխարհակալ մի տերություն»: Հարկ է նշել, որ Օսմանից հետո եկած սերունդները իրենց համարում էին ոչ թե պարզապես թուրքեր, այլ Օսմանի հետնորդներ՝ օսմանցիներ («օսմանլը»):

Պատմությանը հայտնի են Օսմանի վեց որդիների անուններ (Օրխան, Զորան, Մելեք, Համիդ, Պազարլու և Ալա-էդ-դին): Հոր կողմից ժառանգորդ էր ճանաչվել Օրխանը, որը և Օսմանի մահվանից հետո ստանձնեց բեյությունը (1324-1360): Հոր ընտրության հարցում կարևոր դեր էր խաղացել այն, որ Օրխանը դեռ վաղ պատանեկության շրջանից դրսևորել էր զինվորական ձիրք: Մինչդեռ Օսմանի ավագ որդին, Ալա-էդ-դինը, այլ հակումների տեր մարդ էր: Նա տարված էր օրենքի և կրոնի ուսումնասիրությամբ և առհասարակ նրան հրապուրում էր գիտությունը: Ըստ ժամանակակիցների կողմից հյուսված լեգենդի՝ Ալա-էդ-դինը հրաժարվել է իր կրտսեր եղբոր առաջարկից, իրար մեջ բաժանելու հորից մնացած ժառանգությունը: Ուստի դիմելով նրան՝ Օրխանը ասել է. «Եղբայր իմ, քանի որ դու չես վերցնում անասունների հոտերը, ես առաջարկում եմ քեզ դառնալու իմ ժողովրդի հովիվը: Դարձիր իմ վեզիրը»: Աղբյուրների մատուցմամբ՝ այդ պաշտոնը ստանձնելուց հետո յոթ տարի շարունակ, ընդհուպ մինչև իր մահը, Ալա-էդ-դինը զբաղվում էր պետության կառա-

վարման, բանակի կազմակերպման և նոր օրենսդրության մշակման հարցերով: Իսկ Օրխանը, ստանձնելով իր պետության ղեկը, ժառանգեց նաև իր հոր ղազի տիտղոսը, իրեն հռչակելով «Սուլթան», «ղազի սուլթանի որդի, ղազի ղազիի որդի, համայն տիեզերքի հավատի կենտրոն»:

Օրխանը իր առաջնահերթ խնդիրն էր համարում իր հոր կիսատ թողած գործը ավարտին հասցնելը և այն շարունակելը ավելի հուժկու թափով ու նպատակասլացությամբ: Նա իր առջև խնդիր էր դրել ամրապնդել հոր կողմից նվաճված հողերը և ընդլայնել դրանք:

Օրխանը խուսափում էր հարևան թուրքական բեյությունների հետ անհարկի ռազմական կոնֆլիկտներից և պատերազմների մեջ ներքաշվելուց, որպեսզի չտուժի իր գլխավոր նպատակը: Ուժը համարելով իր նպատակին հասնելու գլխավոր միջոցը՝ միաժամանակ նա կարևոր նշանակություն էր տալիս դիվանագիտական ճանապարհով իր պետության սահմանները ընդլայնելու հնարավորությանը:

Նախ անհրաժեշտ էր գրավել Բրուսան, մի բան, որն իր հորը չէր հաջողվել անել: Նկատի ունենալով, որ իր բանակը հիմնականում բաղկացած էր հեծելազորից և իր տրամադրության տակ չուներ պաշարողական հարմարանքներ, Օրխանը որոշեց չդիմել քաղաքը գրոհով վերցնելու քայլին, մանավանդ որ Բրուսան շրջապատված էր հզոր պաշտպանողական ամրությունների շղթայով: Ուստի Օրխանը դիմեց քաղաքներ գրավելու ավանդական թուրքական մարտավարությանը: Նա խորքային ձևով պաշարեց քաղաքը, կտրելով նրա ամեն տեսակի կապերը արտաքին աշխարհի հետ և քաղաքի պաշտպաններին զրկելով մատակարարման աղբյուրներից: Բնակչության վրա կախվեց սովամահ լինելու սպառնալիքը: Այնուհետև Օրխանը գրավեց քաղաքի շրջակա տարածքները, այնտեղից քշելով տեղական հույն բնակչությանը, կամ նրանց վերածելով ստրուկների: Այդ տարածքները նա բնակեցրեց այլ վայրերից բերված թյուրքալեզու բնակչությամբ, որի հետևանքով Բրուսան հայտնվեց թշնամական օղակի մեջ: Գնալով այդ օղակը սեղմվում էր այն աստիճան, որ քաղաքի թաղամասերն անգամ անցան թուրքերի ձեռքը: Բրուսայի պաշարումը տևեց տասը տարի: Ի վերջո քաղաքի հունական կայազորը, որը Կոստանդնուպոլսից ոչ մի օգնություն չէր ստանում, հասավ այն աստիճանի բարոյալքման, որ կայազորի հրամանատար Էվրենոսը քաղաքի մի շարք ազդեցիկ հույների հետ մասին, հանձնեց քաղաքը (1326 թ.) և ընդունեց իսլամական կրոնը: Թուրքերը, իրենց համար այդ ավետաբեր լուրը Օսմանին հասցրին, երբ նա գտնվում էր մահվան մահճում:

Հաղթողները Բրուսան վերանվանեցին Բուրսայի և հենց այստեղ՝

Օլիմպոս լեռան փեշերին, նրանք այդ քաղաքը դարձրին իրենց մայրաքաղաքը՝ Օսմանյան պետության առաջին մայրաքաղաքը: Կարճ ժամանակամիջոցի ընթացքում Բուրսան սկսեց ծաղկել, կառուցվեցին իրենց ճարտարապետական լուծումներով աչքի ընկնող շինություններ, այն դարձավ առևտրական խոշոր կենտրոն, միաժամանակ իսլամական աշխարհում արվեստի և գիտության նշանավոր քաղաք: Բուրսան Օսմանյան կայսրության պատմության մեջ է մտել որպես «սրբազան քաղաք»:

1327 թ. իր մայրաքաղաքում Օրխանը հրամայեց հատել առաջին օսմանյան արծաթե դրամը՝ աքչեն, որը փոխարինելու էր չրջանառության մեջ գտնվող սելջուկյան դրամին: Աքչեի վրա դրոշմված էին հետևյալ բառերը. «Թող Աստված տևական դարձնի Օսմանի որդու, Օրխանի կայսրության օրերը»: Սեփական դրամ ունենալու այդ իրողությունը ևս կոչված էր հաստատելու, որ Էրթողրուլի երբեմնի փոքր և աննշան բեյլիքը արդեն կայացել է որպես պետություն, քանի որ միջնադարում սեփական դրամ հատելը նշանակում էր ինքնուրույնություն և անկախություն որևէ այլ պետությունից:

Օրխանը որոշեց իր նվաճումները չարունակել այս անգամ հյուսիսում: Նախ նա որոշեց գրավել Նիկեան, որը մեկ դար առաջ, Կոստանդնուպոլսի լատինական գրավման չրջանում, հանդիսանում էր կայսրության մայրաքաղաքը: 1329 թ., երբ Օրխանը զորաչարժ կատարեց այդ քաղաքը գրավելու համար, բյուզանդական կայսր Անդրոնիկոս III-ը օգնության հասավ Նիկեային: 1330 թ. Պելեկանոնեի (ներկայումս Մանյաս) մոտ տեղի ունեցած ճակատամարտում վիրավորված կայսրը լքեց մարտի դաշտը և իր զինվորներին ու վերադարձավ Կոստանդնուպոլիս: Խուճապի մատնված նրա զորքը հետևեց կայսրի օրինակին: Նիկեայի ամրոցի կայազորը ստիպված էր անձնատուր լինել: Օրխանը իր որդուն՝ Սուլեյմանին, նշանակեց այդ քաղաքի կառավարիչ: Օսմանները Անատոլիայից Նիկեա տեղափոխեցին Թուրք բնակչության խոշոր խմբեր և քաղաքը վերանվանվեց Թուրքական անվամբ՝ Իզնիք: Նիկեայի գրավումով Թուրքերի առջև բացվեց ճանապարհը դեպի Բյուզանդիայի մայրաքաղաքի ասիական մասը: Իսկ 1337 թ. իննամյա պաշարումից հետո Օրխանը գրավեց Մարմարա ծովի ափին գտնվող Նիկոմեդիան (Իզմիր): Այդ երկու քաղաքամրոցների գրավումից հետո Թուրքերը տիրեցին Իզմիրի ծոցից հյուսիս՝ մինչև Բոսֆոր ընկած բոլոր հողերը: Ընդ որում, Իզմիրը դարձավ օսմանների նոր ծնունդ առնող նավատորմի նավաշինարանը և նավահանգիստը: Թուրքերի դուրս գալը Մարմարա ծովի և Բոսֆորի ա-

փերը նրանց հնարավորություն տվեց արշավանքներ կազմակերպել դեպի Թրակիա: 1338 թվականից սկսած օսմանները սկսեցին պարբերաբար ասպատակ սփռել Թրակիայում: Այսպիսով, սկիզբ առավ օսմանցիների կողմից եվրոպական տարածքների ռազմակալումը: Անատոլիայից Թուրքերի զանգվածը ալիք առ ալիք սկսեց տեղափոխվել նոր գրավված հողերը և բնակություն հաստատել փախուստի դիմած քրիստոնյաների հողերի վրա: Վերաբնակեցված Թուրքերը իրենց գաղութները հիմնում էին ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում: Կրոնական և դերվիշական միաբանությունները սուլթանից որպես վաքըֆ ստացած հողերից ստեղծում էին իրենց հանգրվանները (Թեքքե), որոնք հետագայում պետք է դառնային նոր Թուրքական գյուղերի կորիզը: Բյուզանդական կայսրության եվրոպական մասի գաղութացումը առաջ էր գնում ինտենսիվ ու չափազանց արագ տեմպերով:

Տեղական քրիստոնյա բնակչության համար գոյություն ուներ երկու ճանապարհ. կամ լքել իրենց բնակավայրերն ու հեռանալ այնտեղից և կամ կամովին հնազանդվել Թուրքերին: Ընդ որում, օսմանների իշխանությունը միակը չէր, որ ավազակային ասպատակություններ էր կազմակերպում Բյուզանդիայի եվրոպական տիրույթներում: Դրան մասնակցում էին Փոքր Ասիայի տարբեր բեյլիքները, ինչպես նաև Ղրիմի Թաթարները: Փոքր Ասիայի Թյուրքական Այդին իշխանության ծովահեններն, օրինակ, անխնա կողոպուտի էին մատնում Էգեյան ծովի կղզիների քրիստոնյա բնակչությանը:

Ամենայն հավանականությամբ, Կոստանդնուպոլսի պաշտպանունակության մակարդակը չուսումնասիրելու նպատակով 1338 թ. Օրխանը երեք տասնյակ նավերով հայտնվեց Բյուզանդիայի մայրաքաղաքի պատերի մոտ: Տեղի ունեցած ճակատամարտում, սակայն, նրա ջոկատը ջախջախվեց բյուզանդացիների կողմից:

Բյուզանդիայում Անդրոնիկոս III կայսրի մահվանից հետո (1341 թ.) գահի համար ծավալվել էր սուր պայքար երկու հավակնորդների՝ օրինական ժառանգորդ Հովհաննես V Պալեոլոգոսի և «մեծ դոմեստիկոս» Հովհաննես VI Կանտակուզինոսի միջև, որը ապօրինի կերպով զավթել էր գահը՝ իրեն հռչակելով կայսր: Այդ հողի վրա պետության մեջ մոլեգնում էր քաղաքացիական պատերազմը: Միաժամանակ գյուղացիների և արհեստավորների հուժկու ապստամբություն էր բռնկել ավագանու կամայականությունների դեմ: Գահի երկու հավակնորդներն էլ օգնության խնդրանքով դիմեցին Թուրքերին՝ Պալեոլոգոսը Այդին բեյությանը, իսկ Հովհաննես VI Կանտակուզինոսը՝

Օրխանին: Ընդ որում, վերջինիս համաձայնությունը ստանալու համար բռնատիրողը իր աղջկա՝ Թեոդորայի ձեռքը առաջարկեց օսմանների առաջնորդին: Առաջարկն անհապաղ ընդունվեց Օրխանի կողմից: 1345 թ. մոտ վեց հազար օսմանյան զորքեր մեկնեցին Եվրոպա, օգնելու իշխանությունը հափշտակած կայսրին, միաժամանակ այնտեղ ամրապնդելու համար իրենց դիրքերը: Բյուզանդացիների անխոհեմ ու անհեռատես քաղաքականությունը Թուրք-օսմանների համար ճանապարհ էր բաց անում դեպի եվրոպական հողերը: 1350 թ. Կանտակուզինոսը կրկին դիմեց Թուրքերի օգնությանը, որպեսզի Սալոնիկը պաշտպանի Սերբիայի տիրակալ Ստեֆան Դուշանի հարձակումներից: Օրխանը անմիջապես ուղարկեց քսան հազարանոց հեծելազոր: Երկու տարի անց նա օգնում էր ջենովացիներին, իրենց ավանդական առևտրական մրցակից վենետիկցիների դեմ մղվող պատերազմում: Այդ նույն 1352 թ., երբ վենետիկցիները բուլղարների հետ միասին հանդես եկան Հովհաննես Պալեոլոգոսի կողմից, Կանտակուզինոսը կրկին դիմեց Օրխանի օգնությանը իր մրցակցի եռանդը չափավորելու համար: Ընդ որում, նա կողոպտեց Կոստանդնուպոլսի եկեղեցիները, որպեսզի վճարի իրեն օգնության հասած օսմանյան հեծելազորի ծախսերը: Ըստ երևույթին, Թուրքերը դա համարել էին չափազանց քիչ և Կանտակուզինոսը Օրխանին խոստացավ նաև մի ամրոց Թրակիայի Խերսոնեսում:

1345 թ. Օրխանին հաջողվեց օգտվել Կարասի բեյլիքում բռնկած ներքին երկպառակություններից և իր տիրույթներին միացնել այդ բեյլիքի հողերի մեծ մասը, որոնք զբաղեցնում էին Մարմարա և Էգեյան ծովերի ափամերձ տարածքները, և այդպիսով դուրս գալ Դարդանել նեղուցի արևելյան ափերը: Դա հիանալի հենակետ կարող էր ծառայել Բալկանյան թերակղզու վրա ապագա հարձակումների համար: 1345-1348 թթ. Օրխանի որդի Սուլեյմանը խոշոր մասշտաբի ռազմական գործողություններ էր վարում Գալլիպոլի թերակղզում և Թրակիայում: 1349 թ. օգտվելով նրանից, որ Կանտակուզինոսը խնդրել էր Թուրքերին ճնշել Թեսաղոնիկեում բռնկած ապստամբությունը, որի պատճառը բյուզանդական ավագանու կամայականություններն էին, Սուլեյմանը իր բանակի տեղակայման վայրերից սկսեց հարձակումներ գործել դեպի Սերբիայի և Բուլղարիայի տարածքները: Ի դեպ, այդ օգնության դիմաց Գալլիպոլիի (Թուրքերեն՝ Գելիբոլու) թերակղզում Թուրքերը ստացան Ցիմպե ամրոցը (1352 թ.): 1354 թ. օգտվելով նրանից, որ նույն թվականի գարնանը տեղի ունեցած երկրաշարժը խորտակել էր Գալլիպոլի քաղաքի պատերը, օսմանները

գրավեցին այն և դարձրին ամրացված քաղաք-հենակետ դեպի հյուսիս արշավելու և բուլղարական հողերը գավթելու համար: Մեծ թվով թուրք բնակչություն փոխադրվեց Գալլիպոլի: 1347-1349 թթ. օսմանցիները իրենց են ենթարկում նաև Գերմիյանի և Զանդարլլի էմիրությունները:

1352 թվականից սկսվեց թուրք-օսմանների կողմից Բալկանյան թերակղզու հետևողական նվաճումը: Այդ նոր փուլում դեպի Բալկաններ կազմակերպվում էին ոչ թե դիպվածային ասպատակություններ, այլ տարածքի վերջնական նվաճում: Հենց այդ շրջանում Բոսֆորից այն կողմ ընկած եվրոպական տարածքներում սկսեցին ծնունդ առնել օսմանցիների առաջին գաղութ-բնակավայրերը: Փոքր Ասիայից մեծ թվով գաղութաբնակներ տեղափոխվում էին այդ վայրերը, զբաղեցնելով փախուստի դիմած հողատեր-քրիստոնյաների ընդարձակ հողերը: Իրար հետևից ծնունդ էին առնում թուրքական գաղութներ:

Սուլեյմանը միակ թուրք նվաճողը չէր, որ այդ ժամանակ գործում էր Բալկանյան թերակղզում: Սարուխան, Կարասի, Այդին բեյություններից նույնպես հարձակումներ էին գործում բյուզանդական տիրապետության ներքո գտնվող այդ տարածքների վրա: Անատոլիական այդ բեյությունները, որոնք գործում էին ինքնուրույն, առանց օսմանյան բեյության հետ կապեր ունենալու, 1359 թվականին առաջին անգամ փորձ կատարեցին գրոհելու Կոստանդնուպոլսի պարիսպները:

Թուրքերի հետ համագործակցելու, ավելին, փաստորեն նրանց հետ դաշնակցելու պատճառով, Կանտակուզինոսը լրիվ վարկաբեկվեց: Քրիստոնեական Սերբիան և Բուլղարիան կտրականապես հրաժարվեցին նրան աջակցություն ցուցաբերելուց: Կանտակուզինոսի դեմ ապստամբեց նաև Կոստանդնուպոլսի բնակչությունը, որը կայսրին մեղադրեց քաղաքը օսմանցիներին հանձնելու մտադրության մեջ: Ապստամբները Հովհաննես Պալեոլոգոսին ճանաչեցին որպես օրինական կայսր: Կանտակուզինոսին այլևս ոչինչ չէր մնում, եթե ոչ հրաժարվել գահից և մեկնել Սպարտայի մոտ գտնվող Միստրե վանքը: Այստեղ Իոասաֆոս անվան տակ նա անց կացրեց իր կյանքի վերջին երեսուն տարիները, շարադրելով իր ժամանակի պատմության վերաբերյալ տաղանդավոր գրչով գրված հայտնի տարեգրությունը:

1356 թ. օսմանցիների բանակը Սուլեյմանի հրամանատարությամբ կտրեց անցավ Դարդանելը, նպատակ ունենալով գրավելու Ադրիանոպոլիս (թուրքերեն՝ Էդիրնե) քաղաքը: Այդ ռազմերթի ընթացքում գրավվեցին մի շարք քաղաքներ՝ Դիմոթիքան, Զորիլլոսը

(Թուրքերեն Զորլու): Նվաճված հողերը արագորեն բնակեցվում էին Թուրքերով: Սակայն Սուլեյմանին այնուամենայնիվ չհաջողվեց իրականացնել Ադրիանոպոլսի գրավումը: 1357 թ. բազեներով որսի ժամանակ նա ընկավ ձիուց և մահացավ:

Այսպիսով, օսմանյան նվաճողականությունը արևմտյան ուղղությամբ քայլ առ քայլ, սակայն համառ ու անչեղ հետևողականությամբ առաջ էր ընթանում: Արշավող բանակի թիկունքում, դեպի Դանուբ տանող ճանապարհների կարևորագույն հանգույցներում, ստեղծվում էին անատոլիական Թուրքերի նորանոր բնակավայրեր: Բալկաններում զավթիչները իրենց նվաճումներն իրականացնում էին տեղական բնակչության համեմատաբար թույլ դիմադրության պայմաններում: Մի շարք հետազոտողներ դա բացատրում են նրանով, որ օսմանցիները նվաճված հողերի քրիստոնյա բնակչության վրա դնում էին համեմատաբար թեթև հարկեր, քան նրանք պարտավոր էին վճարել իրենց նախկին քրիստոնյա ֆեոդալներին կամ բյուզանդական պետությանը: Այդ հետազոտողները հակված են նույնիսկ դա անվանել սոցիալական հեղափոխություն, նշելով, որ Թուրքերը Բալկաններից դուրս մղեցին հողատերերի հիերարխիական դասակարգը, որը մինչ այդ ճնշում ու չահագործում էր իր գյուղացիությանը: Դրա փոխարեն օսմանները սահմանեցին հսկողության ավելի ազատ և ոչ ուղղակի ձև, գյուղացիներից գանձելով սահմանափակ չափերի հասնող հարկեր: Այլ կերպ ասած, տվյալ ժամանակաշրջանում բյուզանդական կայսրության սոցիալական և քաղաքական ճգնաժամի պայմաններում նրանք կատարեցին ուժեղ կենտրոնացված պետական հսկողության համակարգի ապակենտրոնացում: Այդ բոլորի հետևանքով, տեղական քրիստոնյա հողատերերը սկսեցին ճանաչել սուլթանի իշխանությունը և որպես նրա վասալներ վճարել ոչ մեծ տարեկան հարկ ի նշան իրենց հնազանդության իսլամական պետությանը:

Վերոհիշյալ հետազոտողների կողմից նշվում է նաև, որ իբր հենց սկզբից օսմանյան պետությունը քրիստոնյա բնակչության նկատմամբ վարում էր լոյալ քաղաքականություն, դրանով իսկ երաշխիք ստեղծելով, որ գյուղացիությունը չի միանա իր ավատատերերին օսմանցիների կողմից իրենց երկրի ռազմակալմանը դիմադրելու համար, որ ընդհակառակը, Թուրքերը խրախուսում էին իրենց քրիստոնյա հպատակ գյուղացիներին, որպեսզի նրանք ապստամբեն իրենց իսկ ավատատերերի դեմ: Իսլամական ուղղադավան աստվածաբանները՝ ուլեմները, որոնք նշանակալի կշիռ ունեին պետության մեջ և արքունիքում, իբր պահանջում էին ոչ թե տեղական բնակչության

զանգվածային բռնի իսլամացում, այլ լոկ հնազանդեցում և հարկատվություն: Դա պայմանավորված էր նրանով, որ քրիստոնյան իսլամն ընդունելու դեպքում ազատվում էր հարկերից: Իհարկե, դա չէր նշանակում, որ հոգևորականության շրջանում բացակայում էին ռազմատենչ իսլամի հետևորդները, որոնք ձգտում էին քրիստոնեական բնակչությանը անպայման դարձնել մուսուլմաններ, իսկ եկեղեցիները վերածել մզկիթների:

Անգլիացի հետազոտող լորդ Քինրոսը գտնում է, որ օսմանների վերոհիշյալ քաղաքականության հետևանքով բալկանյան գյուղացին շատ շուտով եկավ այն համոզման, որ մահմեդական զավթիչների կողմից իրենց հողերի նվաճումը իրեն բերում է ազատագրում քրիստոնյա ավատատերերի կողմից իրենց վրա դրված ծանր լծից, նրանց անսանձ կամայականություններից, չարաշահումներից, բռնություններից և այլն: Մանավանդ որ այդ անտանելի լուծը գնալով ավելի ու ավելի էր ծանրանում վանքապատկան հողերի ընդլայնման հետևանքով:

Իրականում Թուրք-օսմանների «սոցիալական հեղափոխությունը» Բալկաններում նպատակ ուներ գեթ ժամանակավորապես կանխել տեղական բնակչության դիմադրությունը զավթիչներին, մինչև որ նվաճված հողերում նրանք կարողանային ամրապնդել իրենց դիրքերը: Հանրահայտ իրողություն է, որ երբ Թուրքերը վերջնականապես ամրապնդվեցին Բալկաններում, նրանք տեղական քրիստոնյա բնակչության վրա անմիջապես դրեցին ծանր հարկային լուծ, միաժամանակ վարելով քրիստոնյա բնակչության տոտալ համաձուլման ու իսլամականացման քաղաքականություն: Բալկանյան երկրների մերօրյա հետազոտողները բազմաթիվ համոզիչ փաստերով ապացուցել են, որ Բալկանները նվաճելու շրջանում օսմանները սելջուկների նման քանդում և ավերում էին իրենց դիմադրություն ցույց տված քաղաքներն ու գյուղերը, ոչնչացնում բնակչությանը, կրակի մատնում ցանքսերը, կտրատում պտղատու այգիները, ստրկացնում գերի ընկածներին: Նրանք պղծում էին եկեղեցիները, կամ դրանք վերածում մզկիթների: Եվ եթե նրանք խնայում էին տեղական բնակչությանը, միայն նրա համար, որ նրանք իրենց անհրաժեշտ էին որպես աշխատուժ և հարկեր վճարող զանգված:

Բազմաթիվ փաստեր կան նաև այն մասին, որ այս կամ այն վայրում Թուրքերի հայտնվելու դեպքում հաճախ բնակչությունը լքում էր իր բնակավայրը: Գրավելով այս կամ այն տարածքը, սուլթանները հրաման էին արձակում, որպեսզի բնակչությունը մնա իր տեղում: Այդ իրողությունը իրավունք է տալիս եզրակացնելու, որ Թուրքերի երևալուց հետո, եթե իսկապես գյուղացիների վիճակը բարելավվեր,

ապա սուլթանները կարիք չէին ունենա հրապարակելու կարգադրություններ, բնակչությանը ուժով տեղում պահելու համար:

Այսպիսով, եթե նույնիսկ բյուզանդական ֆեոդալների կողմից ծայր աստիճանի քայքայված գյուղացիները երբեմն աջակցում էին թուրքերին, սակայն դա տեղի էր ունենում ընդհուպ մինչև այն պահը, երբ գյուղացիները իրենց մաշկի վրա զգում էին թուրքական նոր ավատատերերի անլուր չահագործման լուծը:

Թուրքերի հետ համագործակցող Կանտակուզինոս կայսեր հեռացումը իշխանության ղեկի մոտից ոչինչ չփոխեց բյուզանդական արքունիքի քաղաքականության մեջ ռազմական օկուպանտի կողմից իրականացվող ծավալապաչտական քաղաքականության նկատմամբ: Հովհաննես Պալեոլոգոսը ևս ընդունակ չգտնվեց կանխարգելելու նրանց ոտնձգությունները իր տիրույթների նկատմամբ: Ավելին, նա կախման մեջ ընկավ թուրքերից և այդ կախվածությունը հասել էր այնպիսի չափերի, որ ժամանակ առ ժամանակ Օրխանը նրան թելադրում էր իր կամքը: Պալեոլոգոսը նաև ի վիճակի չեղավ գեթ ինչ որ չափով կասեցնելու թուրքերի կողմից իր եվրոպական տիրույթների յուրացումը և Բալկաններում թուրքական բնակավայրերի հիմնումը:

Թեև Օրխանը խուսափում էր երկու ճակատով պատերազմներ մղելուց, սակայն առիթը ներկայանալու դեպքում նա իր ծավալապաչտական քաղաքականությունը իրագործում էր նաև արևելյան ուղղությամբ: Օրինակ, XIV դ. 40-ական թվականներին, օգտվելով Քարեսի բեյլիքի ներսում ծայր առած արյունոտ երկպառակություններից, Օրխանին հաջողվեց իր պետությանը միացնել այդ բեյլիքը, որի տիրույթները հասնում էին մինչև Դարդանել նեղուցի արևելյան ափերը: Ժամանակ առ ժամանակ Օրխանը իր ուժերը չափում էր նաև մոնղոլների հետ: 1354 թ., օրինակ, նա կարողացավ նրանցից խլել Անկարան:

Ժամանակակիցները Օրխանի և նրա եղբայր, վեզիր Ալա-էդ-դինի հետ կապում են պետության մեջ իրականացված մի շարք կարևոր նորամուծություններ: Օրինակ, նրանք ձեռնամուխ եղան բանակի ընդլայնման ու ամրապնդման գործին: Ռազմական նվաճողականության ուղին բռնած պետությանը անհրաժեշտ էր ուժեղ և մարտունակ բանակ: Ուստի պետությունը առանձնակի հոգատարություն էր դրսևորում զինված ուժերի նկատմամբ:

Օրխանի հոր՝ Օսմանի բանակը կազմված էր գլխավորապես անկանոն թյուրքական ջոկատներից, որոնք կոչվում էին «աքընջի» (աքընջ՝ հարձակում): Դրանք կամավորների հեծյալ ջոկատներ էին, որոնց հրապուրում էր ռազմաավար զավթելու և թիմարներ ստանա-

լու հեռանկարը: Աքընջիները իրենց հետ ման էին ածում երկու ձի (մեկը իրենց համար, մյուսը՝ ավարը բառնալու համար): Նրանք զինված էին սրով, Թուրքական կեռ դաշույնով, իսկ երբեմն պարզապես մահակով: Աքընջիների զորամասը գոյություն ունեցավ մինչև XVII դարի սկիզբը, երբ նրա ֆունկցիաները վերջնականապես անցան Ղրիմի Թաթարներին: Անհրաժեշտության դեպքում մունետիկների «յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է կռվել» կոչով աքընջիները իրենց զենքերով որոշակի վայրում հավաքվում էին մարտի դաշտ մեկնելու համար: Մինչդեռ Օրխանը և իր եղբայրը կազմակերպեցին կանոնավոր բանակ, մի բան, որ հետագա երկու դարերի ընթացքում Եվրոպայում ի վիճակի չեղան իրագործել: Նախ կազմակերպվեցին հեծելազորային զորամասեր (սուվարի), որոնց անձնակազմը ռազմական գործողություններին մասնակցելու ժամանակ գանձարանից ստանում էր ռոճիկ, իսկ խաղաղ ժամանակ նրանց ապրուստն ապահովելու համար հատկացվում էին հողակտորներ, որոնք հարկման ենթակա չէին: Այդ հեծելազորայինների նվիրվածությունը սուլթանին հատուցվում էր լավագույն հողակտորների բաշխմամբ: Կազմակերպվեցին նաև հատուկ հեծելազորային զորամասեր, որոնք կոչվում էին մյուսելլեմ: Դրանք վերին աստիճանի շարժունակ, կարգապահ և մարտունակ, արդյունավետ կերպով գործող ուժեր էին և նախատեսված էին թշնամու թևերից ու թիկունքից չեչտակի հարվածներ հասցնելու համար: Ամրոցներ և ամրացված քաղաքներ գրավելու համար միայն հեծելազորը բավարար չէր, ուստի Օրխանը որոշեց ստեղծել նաև հետևակային կանոնավոր զորամասեր (1329 թ.), որոնք կոչվում էին յայա: Հետևակայինները ևս արշավանքների ժամանակ ստանում էին ռոճիկ, իսկ խաղաղ ժամանակ զբաղված էին իրենց պատկանող հողերի մշակմամբ: Ընդ որում, նրանք ազատվում էին հարկեր վճարելու պարտավորությունից: Կազմակերպվեց նաև անկանոն հետևակ՝ ազաբներ: Սրանք հավաքագրվում էին միայն պատերազմների ժամանակ և ռազմական գործողությունների ընթացքում նույնպես ստանում էին աշխատավարձ: Ազաբները զորքերի տեսակ էր, որոնց կարելի էր չխնայել: Նրանք կոչված էին գործել հարձակման առաջին գծում և պետք է իրենց վրա ընդունեին հակառակորդի առաջին հարվածը: Յուրաքանչյուր 15–30 գյուղական տնտեսություն պարտավոր էր հատկացնել մեկ ազաբ: Գյուղացիները պարտավոր էին իրենց հաշվին զինել ազաբներին և հոգ տանել նրանց ապրուստի համար: Նրանք փադիշահի առջև պատասխանատու էին ազաբների բարեհուսության համար: Ազաբները ծառայում էին ոչ միայն հետևակում, այլև նավատորմում:

Այդ նոր կանոնավոր օսմանյան զորքերի ուժը կայանում էր նրանում, որ նրանք լավ մարզված, համախումբ և մարտնչելու համար միշտ պատրաստ զորամասեր էին: Ի տարբերություն այդ ժամանակներում գոյություն ունեցող վարձկանների, օսմանների բանակը ներշնչված էր սուլթանին անվերապահ նվիրվածության ոգով, նրա կատարած գործը համարելով իրենց սեփական գործը:

Մինչև Օրխանը զորքը հատուկ հագուստ չուներ և տարբերակիչ որևէ սկզբունք գոյություն չուներ սիփահիի (հեծյալի)՝ այսինքն տիրոջ և ռայաթի՝ հասարակ ժողովրդի միջև: Սուլթան Օրխանը կարգադրեց, որ իր զորքը կրի սպիտակ թասակներ: Առաջին հայացքից այդ աննշան թվացող կարգադրությունը իրենով նշանավորեց օսմանյան հասարակության դասային բաժանման ձևավորման սկիզբը:

Պատմական գրականության մեջ տեսակետ կա այն մասին, որ «ենիչերի» (հայկական աղբյուրներում «յանիչարի» – նոր զորքեր) կոչված զորամասերի առաջին ստեղծողները ևս եղել են հենց Օրխանը և նրա եղբայր Ալա-էդ-դինը: Այդ զորամասերի ձևավորումը որպես բանակի կարևորագույն հարվածող ուժի տեղի ունեցավ, սակայն, սուլթան Մուրադ I-ի ժամանակներում: Նշված պրոֆեսիոնալ մշտական զորամասերը ընդհուպ մինչև XIX դարի 20-ական թվականները հանդիսանում էին օսմանյան բանակի կորիզը:

Նույնիսկ եվրոպական աղբյուրների վկայությամբ, Օրխանի բանակը միշտ կազմ ու պատրաստ էր հրնթացս մարտի մեջ մտնելու համար: Նրան հնարավոր չէր հանկարծակիի բերել: Այդ բանակը աչքի էր ընկնում իր կարգապահությամբ և արագ շարժվելու ունակությամբ: Ձիավորները, որոնք անցել էին քոչվորական կյանքի բոլոր դժվարությունների բովով, արյունախանձ կռիվների մեջ, աչքի էին ընկնում իրենց տոկունությամբ, համառությամբ, դժվարություններին դիմանալու և հաղթանակի հասնելու կամքով: Նրանք աչքի էին ընկնում նաև սակավապետությամբ: «Հավատի մարտիկները»՝ դազիները, իրենց համարում էին «դար-ալ-իսլամի» («իսլամի աշխարհ») անբաժանելի մասնիկը և միշտ պատրաստ էին պատերազմելու «դար-ալ-հարբի», այսինքն «պատերազմի աշխարհի», ասել է թե թշնամական աշխարհի ու «անհավատների» դեմ: Շահիդության կամ նահատակության գաղափարը և հավատը հանդերձյալ կյանքի գոյության ու դրախտի մասին դազիներին ազատում էր մահվան սարսափից:

Մեզ են հասել նաև տվյալներ այն մասին, որ Օրխանի բանակը հագեցված էր հետախուզության առաջնակարգ ծառայությամբ, ուներ ուղեցուցորդների (չավուշների) հիանալի ծառայություն, որի

զինվորները կարողանում էին բանակը տանել ամենահարմար ու կարճ ճանապարհներով: Բանակի հետևից գնում էին վաճառականները, որոնք տեղնուտեղը ռազմիկներից գնում էին կողոպտված գույքը և գերված ու ստրկացված մարդկանց:

Օրխանի կառավարման վերջին շրջանում նրա պետության բնակչության թիվը հասավ համարյա կես միլիոն մարդու: Հիրավի, դա կարելի է համարել ապշեցուցիչ մի բան, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Էրթողրուլը պետության հիմնադրումը սկսել էր չորս հարյուրակ հեծյալներով:

Օրխանի ժամանակ նրա բեյլիքը տիպիկ մահմեդական պետություն էր, որտեղ իսլամական ումմայի սկզբունքով ազգությունը որոշվում էր ըստ կրոնական հատկանիշի: Թեև թուրքական աղբյուրների հավաստմամբ, Օրխանը այլադավանների նկատմամբ վարում էր տոլերանտության ու կրոնական հանդուրժողականության քաղաքականություն, բայց եթե նույնիսկ հավատանք դրան, նրա պետության մեջ բնականաբար տարբերությունները մահմեդականների ու քրիստոնյաների միջև ունենում էին շեշտված դրսևորումներ: Գործում էին նաև այլադավանների համար սահմանված իսլամական սահմանափակումները: Այդ տարբերությունները ցցուն ձևով դրսևորվում էին նաև հողային հարցի և հողը թիմարային սկզբունքով բաշխելու խնդրում: Քանի որ միայն մահմեդականներն իրավունք ունեին կատարելու զինվորական ծառայություն, հետևաբար նաև միայն նրանք էին իրավասու տիրելու հողերի՝ զինվորական ծառայության դիմաց: Նման համակարգի առկայության պայմաններում, բնականաբար, քրիստոնյաները զրկված էին հողի նկատմամբ իրավունքներ ունենալու հնարավորությունից: Նրանք պարտավոր էին նաև չունչ գլուխ վճարել հատուկ հարկ բանակը պահելու համար: Գյուղական վայրերում նման կարգի գոյությունը հանգեցնում էր նրան, որ քրիստոնյաները հայտնվում էին հողատեր մահմեդականների հպատակների՝ ռայայի նվաստացուցիչ կարգավիճակում: Հենց այդ պատճառով քրիստոնյաները գերադասում էին ապրել քաղաքներում կամ քաղաքատիպ բնակավայրերում, որտեղ նրանց ստորադաս քաղաքացիական իրավունքները ինչ որ չափով հավասարակշռվում էին իրենց ունեցած տնտեսական առավելություններով (առևտրի, արհեստագործության և այլ բնագավառներում):

Կամավոր կերպով իսլամն ընդունած քրիստոնյան ինքնաբերաբար դառնում էր «օսմանլը», այստեղից բխող բոլոր առավելություններով: Նա դառնում էր իսլամական համայնքի՝ ումմայի լիարժեք ան-

դամ, ազատվում էր քրիստոնյաների համար սահմանված հարկեր, այդ թվում նաև նվաստացուցիչ ջիզիե (գլխահարկ) մուծելու պարտականությունից, ձեռք էր բերում հողեր ունենալու իրավունք, առաջխաղացման և կառավարող մահմեդական վերնախավի եկամուտներից բաժին ստանալու հնարավորություն և այլ արտոնություններ ու իրավունքներ: Հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ օսմանյան պատմության նշված էտապում իսլամ ընդունած քրիստոնյա բնակչության թիվը հարաճուն կերպով մեծանում էր:

Օրխանի օրոք սկսեց ձևավորվել օսմանյան պետության կառավարման համակարգը կամ պետականության կորիզը: Պետության գերագույն կառավարիչ էր հանդիսանում սուլթանը, որի իշխանությունը անսահմանափակ էր: Առհասարակ օսմանյան պետության կազմավորման հենց սկզբնական շրջանից սահմանվել էր մենիշխանություն: Պետության գործերը ղեկավարելու համար սուլթանն ուներ օգնական-վեզիրներ, որոնք ընտրվում էին ուլեմների կամ սուլթանի մերձավորագույն ազգականների շրջանից: Հետագայում սուլթան Մուրադ I-ի օրոք ստեղծվեց մեծ վեզիրի պաշտոնը, որն իր ձեռքում էր կենտրոնացնում ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական կառավարումը: Վեզիրը ստանում էր համապատասխան պաշտոնական խորհրդանշան՝ բունչուկ (ձիու պոչի մազից մի ծոպ): Օրինակ, սանջակբեյը և այդ աստիճանին համապատասխանող պաշտոններ զբաղեցնող անձինք ստանում էին մեկ բունչուկ, բեյլերբեյը՝ երկու, վեզիրը՝ երեք, սուլթանին հասնում էր չորս բունչուկ: Հանդիսանալով բոնատեր, սուլթանը սակայն հանդուրժում էր խորհրդակցական մարմնի գոյությունը, որը կոչվում էր «Դիվան»: Առաջին դիվանը գումարվել էր Օրխանի օրոք:

Սուլթանին կից խորհրդակցական մարմինը՝ դիվանը, կազմված էր վեզիրներից ու բարձր պաշտոնեությունից: Երկիրը բաժանվեց նահանգների և գավառների, որոնք կառավարում էին սուլթանի կողմից նշանակված նահանգապետերը: Վերջիններս իրականացնում էին ռազմական և վարչական գործառույթներ:

Օրխանի ժամանակ սկզբնապես դատակրոնական ֆունկցիաները իրականացնում էր Բուրսայի կադին: Քիչ ավելի ուշ, 1360-1362 թթ. հիմնվեց կադիասկերի հատուկ պաշտոն: Դատական գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում էին շարիաթով: Սակայն կենցաղում, հատկապես քոչվորների մոտ, շարունակում էր կիրառվել թյուրքական սովորական իրավունքը՝ թյուրեն: Ֆինանսական գերատեսչություն դեռ գոյություն չուներ: Սուլթանի անձնական և պետա-

կան զանձարանը միասնական էր կամ նույնն էր, այն անջատվեց Մուրադ I օրոք: Օրխանի ժամանակ պատահում էին դեպքեր, երբ հերթական զավթողական արշավանք կազմակերպելու համար բեյլի-քի տիրակալը ֆինանսական միջոցների սուր կարիք էր զգում: Թուրքական միջնադարյան տարեգիր Հյուսեինը բերում է մի ուշագրավ պատմություն այն մասին, որ Օրխանը գերեվարված բյուզանդական մի աստիճանավորի վաճառում է Նիկոմեդիայի արխոնտին, որպեսզի այդ փողով զորքեր հավաքի և դրանց ուղարկի հենց այդ քաղաքի դեմ:

Որպես պետության հիմնական վարչական միավոր ընդունվել էին սանջակները, որը թարգմանաբար նշանակում է «դրոշակ»: Սանջակը դա վարչական բաժանման և զինվորական կազմակերպության մի միասնություն էր:

Քրիստոնեական նախկին պետությունները, որոնք ենթարկվել էին օսմաններին, իրենց ներքին գործերում պահպանում էին որոշ անկախություն, բայց վճարում էին ամենամյա հարկ և որոշակի զորակազմեր մատակարարում օսմանյան սուլթաններին:

Ըստ էության, օսմանյան սուլթանների հարկատուն էր նաև բյուզանդական կայսրը: Վերջինս որպես վասալական պարտականություն ժամանակ առ ժամանակ պարտավորված է եղել ռազմական օգնություն ցույց տալու սուլթանին, նրա թշնամիների դեմ մղված պատերազմներում: Օրինակ, Թուրքերի կողմից Անատոլիայի հունական վերջին Փիլադելփիա (Ալաշեհիր) քաղաքի պաշարման ժամանակ բյուզանդական գահաժառանգ Մանուիլը հույն զորքերի ջոկատով մասնակցել է ճակատամարտին Թուրքերի կողմում՝ ընդդեմ բյուզանդական կայազորի:

2. *ՕՍՄԱՆՅԻՆԵՐԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ XIV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ*

1360 թ. Օրխանը մահացավ (նրա մահվան ճշգրիտ թվականը հայտնի չէ, սովորաբար նշվում է 1359, 1360 և 1362 թվականները): Նրա կրտսեր որդին՝ Մուրադը ժառանգեց հոր իշխանությունը Մուրադ I գահակալական անունով (1360–1389): Աղբյուրները հիշատակում են, որ նրան տրվել էր Հուդավենդիգյար (տիրակալ) տիտղոսը: Քառասնամյա այս նոր սուլթանը իր գործունեությունը սկսեց նրանով, որ հաշվեհարդար տեսավ սուլթանական իշխանության նկատմամբ հավակնություններ ներկայացնող իր արյունակից եղբայրների նկատմամբ: Իբրահիմին նրա հրամանով սպանեցին, իսկ Խալիլը, որը

1356 թ. գերի էր վերցվել ծովահենների կողմից և հետագայում փրկագնով ազատվել, մահացավ Հանելուկային պայմաններում:

Եվրոպացի պատմաբանների մոտ մենք գտնում ենք Մուրադի, որպես գործչի ու անհատականության հետևյալ բնութագրումը. խառնվածքով դաժան, իր ամբողջ էությամբ ռազմիկ, իմաստուն ու հմուտ ռազմավար: Գիտեր պատերազմներ մղել, բայց և միաժամանակ գնահատում էր խաղաղությունը: Մարտի ժամանակ վստահում էր իր զորահրամանատարներին և թույլատրում նրանց դրսևորել նախաձեռնություն: Որպես քաղաքական գործչի՝ Մուրադի մեծությունը կայանում էր նրանում, որ նա շատ արագ հասկացել էր, որ կառավարման ոչ մի օսմանյան ավանդույթ նույնությամբ չի կարելի օգտագործել եվրոպական հողերը կառավարելու համար, որ առհասարակ անհրաժեշտ է ստեղծել վարչական կառավարման նոր համակարգ, որը համապատասխաներ և՛ ժամանակի և՛ օսմանյան ավանդույթների պայմաններին: Նա ընդլայնեց օսմանների տարածքները մինչև Բալկանյան թերակղզու հեռավոր սահմանները՝ ամրապնդելով այն նվաճումները, որոնք օսմանների ձեռքերում պետք է մնային հետագա հինգ դարերի ընթացքում: Իր տրամադրության տակ ունենալով ուժեղ և մարտունակ բանակ՝ նա այն օգտագործում էր ոչ միայն նոր նվաճումներ կատարելու, այլև որպես ազդու կռվան դիվանագիտական ճակատում ևս հաջողություններ արձանագրելու համար:

Մուրադ I-ի հայացքը ևս ուղղված էր դեպի Եվրոպա: Սակայն նախ անհրաժեշտ էր ամրապնդել ու անվտանգ դարձնել թիկունքը: Նրան հաջողվեց բավականին արագ վերացնել հարևան թյուրքական բեյլիքների բեյերի կողմից իր պետության համար ստեղծված վտանգը:

Մուրադ I-ի օրոք օսմանյան նվաճողականությունը Արևելյան Եվրոպայում համընկավ Արևմուտքի երկրներում ռազմական ու քաղաքական անկման և հետընթացի հետ: Քրիստոնեական աշխարհն ապրում էր ներքին խորը ճգնաժամ: Երկպառակությունները, միջավատական պատերազմները, գյուղացիական հուժկու ապստամբությունները ծվատում ու անդամալուծում էին եվրոպական երկրները: XIII դ. կեսերին Երուսաղեմի վերջնական կորստից հետո խաչակրաց արշավանքներ կազմակերպելու գաղափարները «արևելքի քրիստոնյաներին» և «սրբազան վայրերը» ազատագրելու վերաբերյալ կատարելապես վարկաբեկված էին: Իսկ մոնղոլների Փոքր Ասիա ներխուժումից հետո այլևս ոչ ոք չէր հավատում, որ քրիստոնյա աշխարհի սահմանները կարելի է ծավալել դեպի արևելք: Եվրոպայում ծայր առած ֆինանսական և տնտեսական անկումը հանգեցրել էր հա-

մընդհանուր ու տևական սոցիալական ճգնաժամի: Իտալիայի բանկային տները, որոնք ֆինանսավորում էին խաչակիրներին, իրար հետևից սնանկանում ու քայքայվում էին, Փոքր Ասիայի վրայով կատարվող առևտուրը անկում էր ապրում: Ճկունությամբ ու կենսունակությամբ աչքի չընկնող եվրոպական հասարակությունը գնում էր դեպի արագընթաց վայրէջք:

Տարերային աղետները էլ ավելի էին բարդացնում իրավիճակը: Այսպես, Արևելքից եկած ժանտախտը ամայացրել ու մարդաթափ էր արել Միջերկրածովյան ավազանի երկրները: Այն իր մահաբեր չունչը տարածել էր նաև Արևմտյան Եվրոպայում՝ խուճապի ու հուսահատության մատնելով միլիոնավոր մարդկանց:

Բնականաբար, քրիստոնյա աշխարհին համակած ճգնաժամը Թուրքերի համար բաց էր անելու նոր հնարավորություններ, առավել ևս, որ ի հակադրություն Եվրոպայի, օսմանյան պետությունը թևակոխել էր իր վերելքի շրջանը:

1360 թ. շրջանցելով Կոստանդնուպոլիսը՝ Մուրադ I-ը զորաշարժ կատարեց դեպի արևմուտք: Ընդամենը տասնհինգ ամիսների ընթացքում նա կարողացավ արդյունավետ հսկողություն սահմանել ողջ Թրակիայի նկատմամբ՝ ընդհուպ մինչև Բալկանյան լեռնաշղթան: Այդ տարածքի բոլոր հիմնական ամրոցներն ու ռազմավարական կարևոր կետերն անցան Թուրքերի ձեռքը: Զորլույում տեղական Թուրքական կայազորի ոչնչացումը և նրա հրամանատարի գլխատումը Թուրքերի կողմից օգտագործվեց Բալկանների բնակչության ահաբեկման համար: Թրակիայի նվաճումը օսմանների բանակի համար ճանապարհ էր բաց անում դեպի Բուլղարիա և Մակեդոնիա: 1362 թ. նրանք գրավեցին բուլղարական խոշոր ու հարուստ քաղաք Ֆիլիպպոպոլը (Պլովդիվ): Մուրադ I-ը օգտվեց նրանից, որ բուլղարական թագավորի մահվանից հետո երկիրը բաժանված էր իրար հետ մրցակցող երեք եղբայր-ժառանգորդների միջև, որոնցից ավագը՝ իշխան Շիշմանը, իրեն հռչակել էր թագավոր: Ստեղծվել էր մի վիճակ, երբ մի ամբողջ սերնդի կյանքի ընթացքում փաստացի կերպով գոյություն ուներ «երեք Բուլղարիա»: Այդ երեք թագավորությունները անընդհատ պայքար էին մղում միմյանց դեմ: Բուլղարական բազմաթիվ ավատատերեր իրենց տիրույթները փրկելու համար ընդունում էին իսլամը և անցնում թշնամու կողմը: Հետևելով Հովհաննես Պալեոլոգոսի օրինակին, Շիշմանը դարձել էր օսմանների սուլթանի հարկատուն, ընդ որում, նրա քույրը համալրեց Մուրադ I-ի բազմամարդ հարեմը:

Սուլթանի զորքերի օգնությամբ Շիշմանը կարողացավ Բուլղա-

րիայից քշել հունգարացիներին, սակայն ի վիճակի չեղավ իր կրտսեր եղբայրներից խլել նրանց հսկողության տակ գտնվող հողերը:

1361–1363 թթ. միջև ընկած շրջանում օսմանները գրավեցին Ադրիանոպոլիսը (Էդիրնե), որը Բուրսայի փոխարեն շուտով (1365 թ.) դարձավ իրենց մայրաքաղաքը: Այսպիսով թուրքերը հայտնվեցին Բյուզանդիայի մայրաքաղաքի խորը թիկունքում: Հենց այդ ժամանակ հիմնվեց նոր նվաճված բյուզանդական տարածքի օսմանական միացյալ զինվորական կառավարչությունը՝ Ռումելիական բեյլերբեյությունը՝ Էդիրնե կենտրոնով: Սա նշանակում էր, որ օսմանյան պետության կենտրոնը XIV դ. երկրորդ կեսին փոխադրվում է Եվրոպա:

Այլևս իր ինքնուրույնությունը կատարելապես կորցրած և ըստ էության նախկին կայսերական իշխանության ստվեր դարձած Հովհաննես Պալեոլոգոս կայսրը ստիպված էր թուրքերի հետ կնքել ստորացուցիչ պայմանագիր, որը պարտավորեցնում էր նրան փորձեր չկատարել Թրակիայում օսմանցիների կողմից նվաճված տարածքները հետ գրավելու ուղղությամբ, աջակցություն ցույց չտալ սերբերի ու բուլղարացիների դիմադրությանը թուրքերի առաջխաղացման դեմ և վերջիններիս ցուցաբերել ամեն տեսակի օգնություն Փոքր Ասիայում նրանց մղած պայքարում իրենց մրցակիցների դեմ: Սա դեռ չարյաց փոքրագույնն էր: Իսկ ընդամենը տաս տարուց հետո Պալեոլոգոսը պարզապես վերածվեց սուլթան Մուրադի վասալի, նրան ճանաչելով որպես իր գերագույն սյուզերեն-ավատիշխան և ծառայության անցնելով թուրքական բանակում:

Դժվար չէ նկատել, որ օսմանների ռազմական հաջողությունները ամրակայվում էին դիվանագիտական խոշոր ձեռքբերումներով:

Երբ ոտնատակ տալով Բուլղարիան, Մակեդոնիան և Սերբիան թուրքերը սկսեցին ասպատակ սփռել նաև Հունգարիայում, հռոմեական կաթոլիկ եկեղեցու այդ պատվարում և առհասարակ անգուսպ ձգտում դրսևորել խորանալու Եվրոպայում, խուճապի մատնված քրիստոնեական պետությունները Ուրբանոս V պապի գլխավորությամբ որոշեցին դիմել վճռական քայլերի քրիստոնյա աշխարհը «անհավատների» սպառնալիքից ազատելու համար: Սակայն խաչակրության կոչին արձագանքեցին միայն սերբերն ու հունգարացիները, որոնք և զորահավաք անելով 1363 թ. անցան Մարիցա գետը և սկսեցին շարժվել Ադրիանապոլսի ուղղությամբ: Այդ հախուռն ու անկազմակերպ արշավանքն ունեցավ ողբերգական վախճան: Երբ քրիստոնյա ասպետները գետը առանց պատահարների անցնելուց հետո որոշեցին նշել այդ հաջողությունը և ամբողջ գիշերը տարված էին գի-

նարբուքով, վաղ առավոտյան միանգամայն անսպասելիորեն Թուրքերը հարձակվեցին նրանց վրա և սկսեցին սրի քաշել դիմադրության համար համարյա անընդունակ դարձած քրիստոնյա ասպետներին: Թուրք պատմիչ Սաադեդդինը պատկերավոր կերպով դա անվանել է «վայրի գազանի որս իր որջում»: Քրիստոնյաների բանակը գլխովին ոչնչացվեց:

Հետագայում թեև կատարվեցին ևս մի շարք նոր փորձեր «խաչակրաց արշավանք» կազմակերպելու ուղղությամբ, սակայն դրանք բոլորն ավարտվում էին ձախողմամբ, նաև այն պատճառով, որ հռոմեա-կաթոլիկական և հունական եկեղեցիների միջև գոյություն ուներ խորը պառակտում, որը բացառում էր համատեղ ճակատով հանդես գալու ամեն մի հնարավորություն:

Այդ իրողությունը և առհասարակ կաթոլիկական երկրներում տիրող մտայնությունը հիանալի արտահայտված է Պետրարկայի նամակում ուղղված Ուրբանոս պապին. «Օսմանները պարզապես մեր թշնամիներն են, բայց հույն-հերձվածող հերետիկոսները ավելի վատն են, քան թշնամիները»:

Հովհաննես Պալեոլոգոսի համար միանգամայն պարզ էր, որ ինքը կարող է Եվրոպայում գտնել դաշնակիցներ միայն այն դեպքում, եթե կամովին խոստանար հունական եկեղեցին ենթարկել Հռոմի պապին և կաթոլիկ եկեղեցուն: Իր կայսերական հպարտությունը վաղուց կորցրած և անելանելի վիճակի առջև հայտնված հուսահատ և վհատված Պալեոլոգոսը ճարահատյալ որոշեց գնալ նույնիսկ դրան, համաձայնվելով դարձի գալ և հրաժարվել ուղղափառ եկեղեցու «մոլորությունից» և ընդունել «ճշմարիտ հավատը», դրա փոխարեն աշխատելով խոստում ձեռք բերել, որ կաթոլիկ քրիստոնյա աշխարհը օգնության ձեռք կմեկնի իրեն Թուրքերի դեմ մղված պայքարում: Այդ նպատակով կայսրը գաղտնի այց կատարեց Հունգարիա: Սակայն ինչ-որ ճանապարհով նրա այդ քայլը հայտնի էր դարձել ուղղափառ բուլղարներին և հետդարձի ճանապարհին նա ձերբակալվեց ու բանտարկության ենթարկվեց ամրոցներից մեկում:

Բուլղարացիների այդ հանդուգն քայլը որոշեց օգտագործել Բյուզանդիայի կայսրի հորեղբայր Ամադեո Սավոյացին, որը 1366 թ. նախաձեռնեց կաթոլիկների մի նոր խաչակրաց արշավանք: Նա Թուրքերից հետ խլեց Գալլիպոլին (Գելիբոլու), սակայն փոխանակ զարգացնելու իր հաջողությունը, Սավոյացին իր բանակը անսպասելիորեն շարժեց դեպի Սև ծովի կողմը, որպեսզի պատերազմի բռնվի ուղղափառ բուլղարների դեմ: Այդ արշավանքի հետևանքով ֆրանցիսկյանների կաթոլիկական միաբանության միսիոներների կողմից մոտ

երկու հարյուր հազար բուլղարներ «դարձի բերվեցին» և վերածվեցին կաթոլիկների՝ երկրում դուռ բացելով նոր պառակտումների համար:

Փրկագնի վճարումով կայսրին ազատելով բանտարկությունից, մոլեռանդ կաթոլիկ Ամադեո Սավոյացին պահանջեց, որ Պալեոլոգոսը անհապաղ ենթարկվի հռոմեա-կաթոլիկական եկեղեցուն: Ճարահատյալ կայսրը ենթարկվեց այդ կարգադրությանը և մեկնելով Հռոմ հրաժարվեց ուղղափառ եկեղեցու «մոլորությունից»: Դրա փոխարեն նա ստացավ կաթոլիկ քրիստոնյա աշխարհի խոստումը օգնել իրեն թուրքերի դեմ պայքարում:

Սակայն անցնում էր ժամանակը, իսկ Հռոմի տված խոստումները չէին իրականացվում: Վերադառնալով Կոստանդնուպոլիս՝ Պալեոլոգոսը համոզվեց, որ իր ենթակայությունը Հռոմին և կաթոլիկ եկեղեցուն բացարձակապես անընդունելի է իր ժողովրդի համար: Այդ բոլորին ավելանում էր այն, որ կայսրին մեծ դառնություն էր պատճառել իր տիրույթներում Սավոյացու ասպետների կողմից իրագործված վայրագությունները, իր պետության մեջ միսիոներների կատարած «հոգիների որսը» և այլն: Այդ բոլորի հետևանքով կատարելապես հիասթափված ու ընկճված կայսրը այլ ելք չգտավ, բացի իր հնազանդությունը Մուրադին հայտնելուց և նրա վասալը դառնալուց:

Կասկածից վեր է, որ օսմանյան դիվանագիտությունը ուշի ուշով հետևում էր Բալկաններում զարգացող իրադարձություններին: Էդիրնեում ակնառու կերպով տեսնում էին, որ բալկանյան քրիստոնյաները ոչ միայն խորը ատելությամբ են լցված դեպի հռոմեա-կաթոլիկական եկեղեցին, այլև քաղաքական անբարյացակամություն են դրսևորում իրենց իսկ հարևան դավանակիցների նկատմամբ: Նրանց աչքից չէր կարող վրիպել նաև Բալկաններում տիրող այն մտայնությունը, որ ուղղափառ քրիստոնյա բնակչությունը այն աստիճանի մեծ ոխով ու թշնամանքով է լցված կաթոլիկ եկեղեցու դեմ, որ ավելի շուտ կգերադասեր օսմանցիների տիրապետությունը, քան դիցուք թե կաթոլիկ հունգարների: Այս նախատրամադրվածությունը զուգորդվելով Բալկաններում Սև մահվան՝ ժանտախտի գործած ավերածությունների հետ, կատարյալ բարոյալքման էր հասցրել Բուլղարիայի, Մակեդոնիայի և Սերբիայի սլավոն բնակչությանը՝ միաժամանակ հիանալի հեռանկարներ բաց անելով Մուրադ I-ի և նրա ռազմական ու դիվանագիտական գործիչների համար:

1371 թ. թուրքերի համար միանգամայն անսպասելի կերպով, իրենց նկատմամբ վասալական պարտավորություններ ստանձնած բուլղարական թագավոր Շիշմանը սերբերի օգնությամբ զենքն ուղ-

ղեց օսմանների դեմ: Սակայն Սամակովոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նա կրեց վճռական պարտություն և իր կյանքը փրկելու համար փախուստի դիմեց լեռները, դրանով իսկ բոլորովին մերկացնելով ու անպաշտպան թողնելով դեպի Սոֆիա տանող լեռնային ճանապարհները: Սակայն թուրքերը չէին պատրաստվում մոտենալ և գրոհով վերցնել քաղաքը, այլ հավատարիմ իրենց մարտավարությանը, նրանք աշխատում էին օղակի մեջ վերցնել այն, որից հետո նրա գրավումը կարելի կլիներ իրագործել համեմատաբար փոքր մարդկային և նյութական կորուստների գնով: Նախ 1371 թ. ոմն Հաջի Իլբեյ Մարիցա գետի ափին տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց սերբ իշխաններին: Այնուհետև XIV դարի 70-ական թվականների սկզբին օսմանները ձեռնամուխ եղան Մակեդոնիայի նվաճմանը: Այստեղ ևս, առավել քան Սերբիայում և Բուլղարիայում, ներքին երկպառակությունները ծվատում էին երկիրը: Ըստ էության այն մատնված էր անիշխանության ու քաղաքացիական պատերազմի: 1372 թ. թուրքերի բանակն անցավ Վարդար գետը և արագ երթով գրավեց մակեդոնական հողերը: Բնակչությունը մասամբ թուրքացվեց, մասամբ էլ երկիրը բնակեցվեց տարբեր վայրերից բերված թուրք վերաբնակիչներով: Եկեղեցիները վերածվեցին մզկիթների: Մուրադ I-ը վերջ տվեց Ստեֆան Դուշանի մակեդոնական պետությանը:

Օսմանների հետ միաժամանակ Եվրոպայում զավթումներ էին կատարում նաև թուրքական այլ բեյլիքներ: Ընդ որում, նրանց գործողություններն արդեն պարզ թալանչիական ասպատակություններ չէին: Ճիշտ է, առանձին զորապետներ ռազմաավար զավթելով վերադառնում էին Անատոլիա, սակայն նրանց նշանակալից մասը մնում և հիմնավորվում էր Բալկաններում, ստեղծելով ցաք ու ցրիվ մանր բեյություններ: Մուրադ I-ը աշխատում էր կամ այդ բեյերին գրավել իր կողմը և կամ ծայրահեղ դեպքում նրանց նկատմամբ ձեռք բերել ազդեցություն: Այդ բեյերի մեջ կային նաև նախկինում օսմանների մոտ ծառայության մեջ եղած զորապետեր, ինչպես, օրինակ, հույն ուրացյալ Էվրենոս բեյը, որն օսմանցիների կողմն էր անցել դեռ Բիտինիայի (Բյութանիայի) նվաճման ժամանակ:

Միաժամանակ ներքին բարդությունների հետևանքով Մուրադ I-ի ուշադրությունը չեղվեց եվրոպական գործերից: Նրա որդին, գահաժառանգ Սավջին, 1373 թ. Թրակիայում խռովություն բարձրացրեց հոր դեմ: Նա կապեր հաստատեց բյուզանդական գահաժառանգ Անդրոնիկոսի հետ, որը նույնպես հանդես էր եկել իր հոր՝ կայսր Հովհաննես V-ի դեմ, նպատակ ունենալով զավթել իշխանությունը: Իր

որդու բարձրացրած խռովությունը սուլթանը համարեց խիստ վտանգավոր, որովհետև նա տեղեկություններ ուներ, որ մի չարք ազդեցիկ բեյեր գաղտնի համագործակցում են նրա հետ: Այդ պատճառով սուլթանը ինքը անձամբ գլխավորեց բանակը ապստամբ որդու դեմ: Երբ սուլթանական այդ բազմահազարանոց բանակը մոտեցավ Թրակիայի Դիմոթիքե քաղաքին, որտեղ կենտրոնացել էին Սավջին և իր կողմնակիցները, կատարելով ուժերի հաշվարկ և վախենալով սուլթանի դատաստանից, խռովարար իշխանազունի կողմնակիցները լքեցին նրան: Սավջին բռնվեց և ենթարկվեց տանջալից մահվան. սկզբում հանեցին նրա աչքերը, իսկ ապա՝ գլխատեցին: Մուրադ I հրամայեց ապստամբությանը մասնակից թուրք երիտասարդների հայրերին հետևել իր օրինակին և նախ կուրացնել, իսկ ապա գլխատել իրենց սեփական զավակներին: Բոլորը կատարեցին այդ հրամանը, բացի երկուսից, որոնք գլխատվեցին իրենց զավակների փոխարեն: Իսկ Սավջիի բյուզանդացի համախոհներին Մուրադ I-ի հրամանով բերդի բարձր պարիսպներից նետեցին անդունդը: Սուլթանը բյուզանդական կայսրից պահանջեց, որ ինքը ևս կուրացնի իր խռովարար որդուն: Հայրը ստիպված էր անսալ այդ հրամանին: Իշխանազունին կուրացրին եռացրած քացախով (հետագայում, սակայն, նրա տեսողությունը վերականգնվեց և պատիժը չկրկնվեց):

Անդրոնիկոսին այնուամենայնիվ հաջողվեց 1376 թ. ջենովացիների օգնությամբ գահ բարձրանալ: Նորաթուխ գահակալը Մուրադ I-ի զայրույթը ինչ որ չափով մեղմելու համար Գալլիպոլի թերակղզին վերադարձրեց օսմաններին, իր աղջիկներին կնության տվեց Մուրադ I-ին և նրա երկու որդիներին:

Արդեն XIV դարի 70-80-ական թթ. թուրքական զորքերը գրավել էին Բալկաններում բյուզանդական բոլոր տիրույթները:

Մուրադ I-ը մշտապես խուսափում էր միաժամանակ երկու ճակատով՝ Եվրոպայում և Ասիայում ռազմական գործողություններ վարելուց: Որքան էլ որ մեծ էին նրա հաջողությունները եվրոպական ճակատում, նրա համար Կենտրոնական Անատոլիան հանդիսանում էր կարևորագույն ճակատ, որպես Թրքության համախմբման ու կենտրոնացման վայր: Անատոլիայում իր տիրույթների ընդարձակման նպատակով Մուրադ I-ի համար բոլոր միջոցները պիտանի էին: Այսպես, Գերմիյանի բեյլիքի ու ռազմավարական առումով նրա կարևորագույն քաղաք Քյութահայայի նկատմամբ իր իշխանությունը տարածելու նպատակով սուլթանն իր անդրանիկ որդի Բայազիդին ամուսնացրեց բեյի աղջկա հետ: Հարսանյաց հանդեսը կատարվեց

մեծ չուքով: Հարսը, Դևլեթշահ անունով, որպես օժիտ իր հետ բերեց Կուտինա, Էյրիկյոզ, Թավշանլը և Գյումուշ քաղաքների բանալիները, որով այդ քաղաքներն ու նրանց հարակից տարածքներն անցան օսմանցիների ձեռքը: Գերմիյանի և Կարաման պետության միջև ընկած ընդարձակ տարածքը, որը պատկանում էր Համիդ բեյությանը, Մուրադ I-ը գնեց տեղի էմիրից, որը մտավախություն ուներ, որ եթե ինքը չհամաձայնվի սուլթանի կողմից առաջարկված այդ գործարքին, ապա պարզապես օսմանները իր երկիրը կգրավեն զենքի ուժով: Այդ վայրից հարավ ընկած Թեքե կոչված տարածքին տիրանալու համար Մուրադը ստիպված էր պատերազմել: Օսմանների համար աչքի փուշ էր համարվում Կարամանների հզոր բեյլիքը, որի Ալա-էդ-դին բեյը բազմիցս ապացուցել էր, որ ինքը երբեք կամովին չի հրաժարվելու իր ինքնուրույնությունից և վասալական կախման մեջ ընկնելու օսմանյան սուլթաններից: Օգտվելով նրանից, որ Ալա-էդ-դին բեյը հերթական անգամ ցուցադրելով իր ինքնագլխության հաստատակամությունը խռովություն էր բարձրացրել Մուրադ I-ի դեմ, վերջինս որոշեց օգտվել այդ առիթից և մեկ անգամ ընդմիշտ լուծել Կարաման բեյլիքի ճակատագիրը: Սակայն այստեղ կար մի դժվարություն և դա այն էր, որ «անհավատների դեմ սրբազան պատերազմի» կարգախոսը չէր կարող աշխատել, քանի որ Կարամանների բեյությունը մուսուլմանական էր: Ուստի պատերազմը գաղափարական առումով հիմնավորելու համար, Մուրադ I-ը օգտագործեց այդ պետության հարաբերությունները «անհավատների», այսինքն՝ Վենետիկի, Սերբիայի և Հռոմի պապի հետ, որոնք փորձում էին դաշնակցային հարաբերություններ հաստատել Կարամանների բեյության հետ և նրան ապստամբության դրդել օսմանների դեմ: Կոնիայի դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտում Մուրադ I-ը գլխովին ջախջախեց իր հակառակորդին: Ի դեպ, այդ պատերազմի ժամանակ օսմաններն առաջին անգամ օգտագործեցին հրազեն՝ թնդանոթներ և մուշկետներ: Ալա-էդ-դինը ստիպված էր խնդրել հաշտություն (1387 թ.), որն ընդունվեց Մուրադի կողմից: Վերջինս նույնիսկ հաշտվեց Կարամանի բեյի հետ և ի նշան ոխակալության բացակայության, համբուրեց բեյի ձեռքը: Այդ պատերազմի ընթացքում Անկարան անցավ օսմաններին, որն ի դեպ արդեն մեկ անգամ եղել էր նրանց: Դա կարևոր ձեռքբերում էր, քանի որ Կենտրոնական Անատոլիայի այդ քաղաքը օժտված էր առաջնակարգ ռազմավարական դիրքով: Այն հայտնի էր նաև իր տնտեսական նշանակությամբ, մասնավորապես անգորական այծերի բրդով և տեղական արհեստավորների կողմից արտադրված

բրդյա իրերով: Կարամանյան բեյլիքի հետ պատերազմում թեև Մուրադն ունեցավ որոշ ձեռքբերումներ, սակայն այն չէր կարելի անվանել հաղթանակ: Դա հասկանում էր նաև ինքը՝ Մուրադը, ուստի և համաձայնվեց կնքել հաշտություն, որտեղ խոսք անգամ չկար այն մասին, որ Կարամանի էմիրը խոստանում է լինել սուլթանի հարկատուն, կամ պարտավորվում է նրա մղած պատերազմների ժամանակ ցուցաբերել ռազմական օգնություն: Ստացվում էր, որ Բալկանների քրիստոնյաների հետ պատերազմներում միշտ հաղթական Մուրադ I-ը Անատոլիայում հանդիպել էր իրեն հավասար մի հակառակորդի հետ՝ ի դեմս հզոր մահմեդական մի տիրակալի և ի վիճակի չէր Ասիայում իր տիրույթներն ընդարձակել դեպի արևելք:

Կարամանյան բեյլիքի հետ պատերազմից հետո Մուրադ I-ը Անատոլիայում կատարեց վարչական վերակառուցում. նա այդ երկրամասում գտնվող իր տիրույթները բաժանեց հինգ սանջակների, նրանց կառավարիչ (սանջակբեյ) նշանակելով իրեն հավատարիմ ու նվիրված մարդկանց:

Դրանից հետո նա իր զորքերով վերադարձավ Բալկաններ, նրա նվաճումը ավարտին հասցնելու համար:

1388 թ. թուրքերը վերսկսեցին իրենց նվաճումները Բուլղարիայում, այդ երկրի ռազմակալումը իր ավարտին հասցնելու համար: Նրանց հաջողվեց գրավել ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք քաղաքներ ու ամրություններ: Այնուհետև նրանք պաշարեցին Նիկոպոլը, այնտեղ գտնվող թագավոր Շիշմանին գերելու համար: Համառ դիմադրությունից հետո վերջինս ստիպված էր հանձնվել և հայցելով սուլթանի ողորմածությունը նրան դավաճանելու համար, իրեն կրկին ճանաչել որպես նրա վասալ: Բալկաններում իր դիրքերն ամրապնդելու համար Մուրադ I-ին անհրաժեշտ էր գրավել ևս երեք հանգուցային քաղաքներ՝ Սոֆիան, Նիշը և Մոնաստիրը: Նրա զորավարները լուծեցին այդ խնդիրը ևս: Այդ նվաճումներից հետո փաստորեն Բոսֆորից մինչև Ադրիատիկ ծովն ընկած ռազմավարական ճանապարհն ամբողջությամբ անցնում էր օսմաններին պատկանող տարածքներով: Թուրքերը իրենց տիրապետությունը հաստատեցին ողջ Հյուսիսային ու Կենտրոնական Բուլղարիայի նկատմամբ՝ ընդհուպ մինչև Դանուբ գետը:

Զավթումների հաջորդ թիրախը Բոսնիան էր: Գիտակցելով, որ նրա նվաճումից հետո հերթական զոհը լինելու է Սերբիան, սերբական իշխան Լազարը կատարեց մեծ զորահավաք: Նրան հաջողվեց ստեղծել նաև համասերբական դաշինք: Այդ դաշինքի անդամ երկր-

ների և օսմանների միջև Պլոչնիկի մոտ տեղի ունեցած ճակատամարտում վերջիններս պարտություն կրեցին, տալով նաև մեծաթիվ զոհեր: Փաստորեն, առաջին անգամ Եվրոպայում Մուրադի տարած հաղթանակների շղթայում տեղի ունեցավ խզում: Դա բալկանյան սլավոնների մոտ առաջ բերեց մարտական ոգու մեծ վերելք: Ավելին, սերբերը, բոսնիացիները, բուլղարները, վալախները և հունգարները հավատացին իրենց ուժերին և սկսեցին համախմբվել Լազարի շուրջը, ներշնչվելով թուրքերին Եվրոպայից վռնդելու վճռականությամբ:

Սակայն Մուրադը չէր շտապում շուտափույթ կերպով վրեժ լուծել իր պարտության համար: Նրան ժամանակ էր հարկավոր ոչ միայն իր կորուստները վերականգնելու, այլև հետևելու, թե որքան երկար կարող է տևել իր թշնամիների միասնությունն ու դաշինքը: Անցյալ տարիների և իր կյանքի փորձով նա գիտեր, որ բալկանյան ժողովուրդների համերաշխությունը չէր կարող տևական լինել, որ վաղ թե ուշ ձեռք բերված հաղթանակի հետևանքով զգացմունքային բռնկումը մարելու է:

Ի վերջո, 1389 թ. հունիսին մի հսկայական բանակի գլուխ անցած 70-ամյա Մուրադը անձամբ օսմանյան բանակը ռազմերթի դուրս բերեց սերբերի դեմ: Կոսովոյի դաշտավայրում (թուրքերն այն անվանում էին Կարա Թափու օվա), որը գտնվում էր Բոսնիայի, Սերբիայի և Ալբանիայի սահմանագծում, և այն ժամանակ ավելի հայտնի էր Դրոզդովյան հովիտ անունով, օսմանյան բանակը ճամբար դրեց: Ճակատամարտը որոշելու էր անկախ Սերբիայի ճակատագիրը: Թուրքերի հակառակորդի գլխավոր ուժերը բաղկացած էին սերբերի և բոսնիացիների զորամասերից, որոնց աջակցում էին նաև ալբանացիների, հերցոգովինցիների, լեհերի ու հունգարացիների ջոկատները:

Կոսովոյի ճակատամարտը սկսվեց 1389 թ. հունիսի 15-ին: Թուրք տարեգիրների վկայությամբ, ճակատամարտից առաջ ողջ գիշերը Մուրադը աղոթում էր, որ Ալլահը պաշտպանի օսմանցիներին և իրեն պատվի արժանացնի մեռնելու նահատակի մահով հանուն «ճշմարիտ» կրոնի հաղթանակի: Նրա աղոթքը լսելի դարձավ Բարձրյալին և Մուրադը ընկավ ռազմի դաշտում: Մեկ այլ վարկածով, ճակատամարտը սկսվելու օրը, վաղ առավոտյան, երբ Մուրադը հագնում էր իր մարտական զգեստները, նրա վրանը բերեցին հակառակորդի ճամբարից փախած Միլոչ Օբիլիչ անունով մի զինվորի, որը խոստացել էր արժեքավոր տեղեկություններ հաղորդել յուրայինների մասին: Երբ Միլոչին բերեցին սուլթանի վրանը, Մուրադը, խախտելով անվտանգության կանոնները, թույլ տվեց, որ իր պահակազորի զինվորները բաց թողնեն զինվորի ձեռքերը, և երբ մոտեցավ սերբ զինվորին,

վերջինս դաշույնը խրեց սուլթանի սիրտը: Պահակազորի ենիչերիները տեղնուտեղը սրատեցին անձնազոհ ու հայրենասեր սերբ զինվորին:

Մուրադի մահվան վերաբերյալ գոյություն ունի նաև մեկ այլ վարկած: Ըստ դրա՝ Լազարը իր փեսային՝ Միլոշ Օբիլիչին, հանիրավի մեղադրել էր դավաճանության մեջ: Վերջինս լինելով անմեղ և ազնիվ ու պատվասեր մարդ՝ մատնվում է ծանր ապրումների: Ի վերջո որոշում է խելահեղ խիզախությամբ ապացուցել իր անմեղությունը: Ճակատամարտի նախօրյակին, երեկոյան, ձևացնելով թե ինքը անցնում է թուրքերի կողմը, նա գալիս է օսմանցիների ճամբարը և պահանջում, որ նկատի ունենալով իր բարձր աստիճանը, սուլթանն անհապաղ ընդունի իրեն: Երբ ունկնդրությունը թույլատրվեց, Միլոշը չինծու հեզությամբ ծնկի եկավ սուլթանի առջև և երբ վերջինս մոտեցավ նրան դաշույնը խրեց նրա կուրծքը:

Սակայն անվեհեր զինվորի խիզախ արաքը չազդեց ճակատամարտի ելքի վրա: Այդ արյունահեղ ու համառ ճակատամարտն ավարտվեց օսմանցիների կատարյալ հաղթանակով: Սերբերի առաջնորդ՝ իշխան Լազարը գերվեց և մահացու վերքից ստացած տանջալի գալարումների մեջ գտնվող Մուրադ I-ի աչքի առջև գլխատվեց:

Կոսովոյի ճակատամարտից հետո մինչև XV դարի կեսերը Սերբիան ընկավ սուլթանից վասալական կախման մեջ և դարձավ նրա հարկատուն, իսկ ավելի ուշ այն մտցվեց Օսմանյան պետության կազմի մեջ որպես նրա նահանգներից մեկը: Այդ ճակատամարտի հետևանքով օսմանները դարձան Բալկանների լիիրավ տերը:

Այսպիսով, իր ավարտին հասավ Մուրադ I-ի (1359-1389) կառավարման շրջանը, որին համարում են Օսմանյան կայսրության մեծ սուլթանը: Իր իշխանության տարիներին նա կարողացավ իր նախնիների հիմնադրած պետությունը բարձրացնել ու հասցնել կայսրության մակարդակի, որին վիճակված էր դառնալ հզոր համաշխարհային տերություն: Նրա օրոք օսմանների ահռելի ուժից սարսափահար բյուզանդացիները քայլ առ քայլ ընկրկում ու նահանջում էին նրանց առջև, նույնիսկ դառնալով սուլթանի հարկատուները: Ավելին, կայսրը հարկադրված էր իր աղջիկներին կնության տալ Մուրադին և նրա երկու որդիներին: Արդեն XIV դ. 70-80-ական թվականներին Բալկաններում համարյա բոլոր բյուզանդական տիրույթներն անցել էին թուրքական հսկողության տակ, իսկ Կոստանդնուպոլսի վրա կախվել էր թուրքական ներխուժման մշտական սպառնալիքը:

Երբ Ռագուզայի (Դուբրովնիկ) հանրապետությունը Մուրադ I-ին 1388 թ. առաջարկեց կնքել առևտրական պայմանագիր, նրանում սուլ-

թանի ստատուսը ներկայացվում էր որպես Բյուզանդական կայսրության ժառանգորդ: Այդ պայմանագիրը հաստատված է Մուրադի բութ մատի մատնահետքով, քանի որ նա գրել կարդալ չգիտեր: Դրանով սկիզբ էր առնում այսպես կոչված «թուղրա» հասկացությունը, որը ճանաչվում էր որպես օսմանյան դինաստիայի պաշտոնական կնիք:

Եվրոպացիները Մուրադին կոչել են «չարիքի զավակ», «Սուրբ Խաչի ոխերիմ թշնամի» և այլն:

Եվրոպայում ռազմակալման ենթարկելով ընդարձակ տարածքներ, Մուրադ I-ի առջև հառնում էր մի բարդ խնդիր. նվաճված տարածքների բնակչությունը իր թվաքանակով նվաճողների համեմատ խիստ մեծաթիվ էր: Հարց էր առաջանում, ինչպես կարող էին փոքրամասնություն կազմող թուրքերը կառավարել այլացեղ ու այլադավան բնակչություն ունեցող և ջախջախիչ մեծամասնություն կազմող այդ ժողովուրդներին և իրենց համար ապահովել կայուն ու անվտանգ վիճակ այդ երկրներում: Սուլթանի համար մի բան պարզ էր, որ այդ խնդրի լուծման լավագույն ճանապարհը հիշյալ ժողովուրդների համաձուլումն էր: Սակայն նա քաջ գիտակցում էր, որ կրոնական հողի վրա համաձուլումը իսլամի բռնի պարտադրման ճանապարհով ռեալ չէ, քանի որ քրիստոնյաները կազմում էին մեծ զանգված: Իսլամի կամավոր ընդունումը նորաթուխ մահմեդականներին զանազան իրավունքներ ու արտոնություններ հատկացնելու միջոցով նույնպես հարցի լուծում չէր, որովհետև դա չէր կարող փոխել երկրամասի ժողովրդագրական պատկերը: Անհնարին էր նաև այդ խնդրի լուծումն իրականացնել քրիստոնյա բնակչության տոտալ ոչնչացման ճանապարհով, առավել ևս, որ բացառվում էր ոչնչացվածներին փոխարինելը այլ վայրերից բերված մահմեդական վերաբնակիչներով, քանի որ պետության մեջ բացակայում էին մարդկային այդպիսի ռեսուրսները:

Նշված խնդիրը գնալով ձեռք էր բերում ավելի ու ավելի լուրջ բնույթ, որովհետև չարունակելով պատերազմները Եվրոպայում, թուրքերին անհրաժեշտ էին ավելորդ պահեստային զինված ուժեր նվաճված ժողովուրդների նկատմամբ ոստիկանական հսկողություն իրականացնելու և նրանց հնազանդության մեջ պահելու համար: Իրեն մտահոգող այդ մեծ ու կարևոր խնդրի լուծման համար Մուրադ I-ը օգտագործում էր բազմապիսի ձևեր ու մեթոդներ: Նախ Բալկանները «թուրքականացնելու» նպատակով օսմանները Անատոլիայից այդ երկրաման էին վերաբնակեցնում նստակեցության անցած թյուրքերի, ինչպես նաև զինվորական բնակչության զանազան խմբե-

րի (աքընջիներ, մյուսելլեմներ, սիփահիներ և այլն): Այնուհետև Մուրադ I-ը սկսեց իր բանակի մեջ ներգրավել և պատերազմների ժամանակ լայնորեն օգտագործել քրիստոնեական ծագում ունեցող հազարավոր ու տասնյակ հազարավոր ռազմիկների, ընդ որում, իրենց սեփական իշխանների ու տիրակալների գլխավորությամբ: Որպես ռազմական այդ ծառայության դիմաց փոխհատուցում, նրանք ազատվում էին հարկերից ու տուրքերից, ինչպես նաև հողերի պետական ֆոնդից նրանց հատկացվում էին հողակտորներ «կերակրման» համար: Ամբողջ թափով իրականացվում էր նաև բնակչության բռնի իսլամականացման քաղաքականություն:

Օսմանները իրենց զինանոցում ունեին նաև բալկանների քրիստոնյա բնակչությանը համաձուլելու մի արդյունավետ միջոց ևս. դա նրանց ստրկացման քաղաքականությունն էր: Օրենքը օսմանցի զինվորին բացարձակ իրավունք էր տալիս ռազմագերիներին և նվաճված տարածքների բնակիչներին ենթարկել ստրկացման, եթե մանավանդ նրանք հրաժարվեին իսլամն ընդունելուց: Ստրկացված անձինք օգտագործվում էին ամենաբազմապիսի բնագավառներում՝ տնային աշխատանքներում, գյուղատնտեսության մեջ և այլն, կամ պարզապես կարող էին վաճառքի հանվել ստրկավաճառանոցներում (եսիր բազարներում): Բալկանյան ժողովուրդների համար թեև ստրկությունը անտանելի նվաստացում էր, սակայն քրիստոնյաներից շատերը այնուամենայնիվ դավանափոխությունը գերադասում էին իրենց ազատության կորստից: Այսպիսով, ստրկացման ճանապարհով զգալի քրիստոնյա զանգվածներ վեր էին ածվում մահմեդականների և ի վերջո համաձուլվում ու ասիմիլացման ենթարկվում:

Օսմանների կողմից լայնորեն կիրառվող այդ համակարգը դրսևորում էր մեծ ճկունություն: Այսպես, քրիստոնյան իրավունք ուներ առանց դավանափոխ լինելու գնել իր ազատությունը ստրկությունից խոսափելու համար: Կամ նվաճված հողերում օսմանյան նոր հողատերերը կարիք ունեին մեծ թվով տղամարդ աշխատողների, որպեսզի մշակեն իրենց հողերը: Նման աշխատողների նկատմամբ հողատերերը առանձնակի շահագրգռվածություն չէին դրսևորում նրանց դավանափոխ անելու համար, եթե իհարկե նրանք հնազանդորեն կատարում էին իրենց պարտականությունները, մնալով այլադավաններ, կամ ոչ ստրուկ ազատ աշխատողներ:

Ինչ վերաբերում է հույների, սերբերի և բուլղարների կանանց, ապա նրանք հիմնականում ստրկացվում էին և վերածվում նվաճողների կանանց կամ հարճերի, առավել ևս, որ պատերազմների ընթաց-

քում օսմանցի զինվորները սեփական կանանց իրենց հետ չէին տանում ռազմաճակատ: Դրա հետևանքը լինում էր այն, որ օսմանյան ռասան և գենոֆոնդը մշտապես հարստանում, թարմանում ու զարգանում էր տարաբնույթ արյունների խառնման հետևանքով: Եթե մինչ այդ թուրքերի երակներով արդեն հոսում էր արևելյան տարբեր ժողովուրդների՝ թաթարների, մոնղոլների, ուրյուքների, չերքեզների, պարսիկների, արաբների, ինչպես նաև հույների, հայերի, վրացիների և այլ ժողովուրդների արյունը, ապա այժմ նրանց արյանը խառնվեց նաև բալկանյան և առհասարակ եվրոպական ժողովուրդների արյունը:

Այդ բոլորով հանդերձ՝ թուրքերը Բալկանյան թերակղզու նվաճված շրջանների մեծ մասում քանակական առումով մնում էին աննշան՝ քրիստոնյա ժողովուրդների հոծ զանգվածների շրջանում: Սակայն չնորհիվ ռազմական ուժի և ճկուն վարչական քաղաքականության, օսմանյան իշխանությունները կարողանում էին ռազմավարական ու տնտեսական տեսակետից իրենց համար կարևոր շրջաններում տեղական բնակչությանը պահել իրենց երկաթյա իշխանության տակ:

Մուրադ I-ը սուլթանության շրջանում մտցվեց այսպես կոչված փենչիքի համակարգը: Այն բխում էր Ղուրանի սկզբունքներից, որի համաձայն պատերազմի ժամանակ գերի ընկածների և ավարի մեկ հինգերորդը պատկանում էր սուլթանին: Նշված սկզբունքի հիման վրա Մուրադ I-ի ժամանակ սահմանվեց յուրահատուկ հարկատեսակ, որի համաձայն քրիստոնյա գերիների մեկ հինգերորդին երկու-երեք տարով ուղարկում էին Փոքր Ասիա, թյուրքական ցեղերի մոտ, որտեղ նրանց դավանափոխ էին անում, սովորեցնում թուրքերեն և օգտագործում էին ծանր ֆիզիկական աշխատանքների համար: Հաճախ նրանց ուղարկում էին աշխատելու կայսրության հեռավոր ու խուլ տարածքները, ուր բնականաբար, կամովին ոչ ոք չէր համաձայնվի գնալ: Նրանց մի մասն էլ ստրկավաճառանոցներում հանվում էր վաճառքի:

Փոքր Ասիա ուղարկվածները այնուհետև վերադարձվում էին սուլթանի արքունիք, համալրելով նրա անձնական ծառաների և նոր ստեղծված ենիչերիական զորքի կազմը:

Սկզբնական շրջանում բանակի համար հավաքվող գերիների տարիքին ուշադրություն չէին դարձնում, կամ առնվազն քիչ էին դարձնում, քանի որ դա էական նշանակություն չուներ: Սակայն հետագայում այդ հարցը կանոնակարգելու նպատակով ընդունվեց հատուկ օրենք, ըստ որի պիտանի էին համարվում 10-ից մինչև 20 տարեկան գերի պատանիները:

Անընդհատ ընդլայնվող զավթումների քաղաքականության հետևան-

քով եղավ մի պահ, որ փենչիքը այլևս չէր բավարարում օսմանցիների մարդկային ռեսուրսների գնալով աճող պահանջը: Ուստի օսմանյան իշխանությունները որոշեցին հարցին լուծում տալ քրիստոնյա բնակչության երեխաներին բռնությամբ հավաքելու ճանապարհով: Ժամանակի ընթացքում դա օրինականացվեց որպես պարտադիր հարկ:

Այսպիսով, մոտավորապես XIV դարի կեսերից գործողության մեջ մտավ մի ինստիտուտ, որը կոչվեց «դևշիրմե»: Հայկական միջնադարյան աղբյուրներում այն անվանվում է մանկահավաք կամ տղայահավաք: Յուրաքանչյուր երեք, հինգ կամ յոթ տարին մեկ, ուժի օգնությամբ ծնողներից խլում, ստրկացնում ու թուրքացնում էին օսմանյան իշխանության տակ գտնվող քրիստոնյաների արու զավակներին: Ընդ որում, հավաքագրման ենթակա էին 8-ից մինչև 20 տարեկան առողջ և պիտանի պատանիները: Ընտրությունը կատարվում էր որոշակիորեն մշակված չափանիշների հիման վրա: Նրանք, ովքեր պիտանի չէին զինվորական ծառայության համար, վերածվում էին ստրուկների:

Հավաքագրվածները պետք է ունենային համապատասխան և՛ ֆիզիկական և՛ մտավոր հատկանիշներ: Կարևոր է նշել, որ զինվորական ծառայությունից ազատվելու արտոնությունը չէր տարածվում քրիստոնյա տղաների վրա:

Դևշիրմեի միջոցով հավաքված բոլոր պատանիներին անխտիր դավանափոխ էին անում, թլպատում ու սովորեցնում թուրքերեն լեզուն, անվանակոչում թուրքական (մահմեդական) անուններով: Այնուհետև այդ խլամացած ու թուրքացած «աջեմիօղլաններին» (օտար տղաներ) ուղարկում էին հատուկ զինվորական դպրոցներ, որտեղ նրանց ուսուցանում էին ռազմական գործ, դաստիարակում էին ամեն տեսակի դժվարություններին դիմանալու, հնազանդության ու հրամանատարներին ենթարկվելու, ինչպես նաև երկաթյա կարգապահության ոգով: Այդ խմորից ի վերջո կերտում էին մոլեռանդ զազիներ և կույր նվիրվածությամբ սուլթանին նվիրված զինվորներ: Նրանք բոլորը համարվում էին սուլթանի ստրուկները, նրա սեփականությունը: Ենիչերիներին սկզբում արգելում էին ամուսնանալ և ընտանիք կազմել, բայց հետագայում այդ արգելքը այլևս չէր պահպանվում: Նրանք ենիչերիական զորամասերում ծառայում էին այնքան ժամանակ, քանի դեռ ի վիճակի էին զենք գործածել: Անկասկած դևշիրմեն որպես ռազմավարի յուրահատուկ տեսակ, խթանում էր օսմանյան պետության ձգտումը կազմակերպելու նորանոր արշավանքներ: Հիշենք, որ միջնադարում մարդկային ռեսուրսը հանդիսանում էր ամենաթանկարժեք ու հեշտ վաճառվող ապրանքը:

Հարկ է նշել, որ թեև դևշիրմեն հակասում էր շարիաթի սկզբունքներին, սակայն օսմանյան իշխող շրջանները չէին խորշում այն կիրառելուց, քանի որ նրա միջոցով ոչ միայն հզորացնում էին բանակը, այլ նաև պահպանում սուլթանի իշխանությունը քրիստոնյա բնակչության նկատմամբ:

Ենիչերիների գումարտակը սերտորեն կապված էր մահմեդական-դերվիշական և կրոնամիստիկական զանազան կազմակերպությունների, մասնավորապես Բեքթաշի միաբանության հետ, որի միջոցով և իրականացվում էր ենիչերի զինվորների կրոնական-գաղափարական դաստիարակությունը, նպատակ ունենալով նրանց վերածել մոլեռանդ մահմեդականների և այլադավանների նկատմամբ ատելությամբ լցված ու խղճահարության զգացումներից զուրկ կամակատարների: Այդ նորաթուխ մահմեդականները քրիստոնյա բնակչության նկատմամբ վերաբերվում էին ինչպես ատելի «գյավուրների»:

Ենիչերիները ապրում էին զորանոցներում և զրկված էին սեփականություն ունենալու կամ որևէ գործով զբաղվելու իրավունքից և ստանում էին ռոճիկ: Ընդ որում, միապետը նրանց վճարում էր ավելի բարձր աշխատավարձ, քան ռազմական մյուս կառույցների զինվորներին: Այսպիսով, ենիչերիներին վճարվող բարձր աշխատավարձը, սուլթանի կողմից նրանց բաժանվող առատ նվերները, բարձր զինվորական ու կառավարական պաշտոններ զբաղեցնելու հեշտ հնարավորությունը ենիչերիներին դարձնում էին նվիրյալ ռազմիկներ և սուլթանական գահի հուսալի հենարաններ:

Ենիչերիական զորքերի կազմակերպման սկզբունքով ստեղծվեցին նաև հեծելազորային գումարտակներ, որոնք կոչվում էին «սիփահիներ» (այն չի կարելի չփոթել ավատատեր սիփահիների հետ):

Ենիչերիների մեծ մասը և սիփահի բոլոր զորքերը տեղակայված էին մայրաքաղաքում, մնացած ենիչերիները գտնվում էին խոշոր քաղաքներում ու ամրոցներում: Նշված զորամիավորումները պետք էին սուլթանին ոչ միայն արտաքին թշնամիների դեմ պայքարելու և նվաճողականություն իրագործելու համար, այլև անհնազանդ ֆեոդալներին ընկճելու, ժողովրդական հուզումները ճնշելու, կայսրության ճնշված ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու համար: Ենիչերիական լավ վարժված զորքը հուսալի էր սուլթանի համար նաև այն պատճառով, որ նա ազգակցական կապեր չուներ օսմանյան հասարակության հետ:

Պաշտոնապես դևշիրմե համակարգը գոյություն է ունեցել մինչև 1750 թ, սակայն մանկահավաքի կիրառման վերջին դեպքը արձա-

նագրվել է 1637 թ.: Կարևոր է նաև նշել, որ ի սկզբանե ենիչերիները հանդիսանում էին թուրքական բանակի արտոնյալ զորամասեր: Ենիչերիական գումարտակի հրամանատարը, որը կոչվում էր «աղա», մտնում էր պետության բարձրագույն աստիճանավորների կազմի մեջ:

Ինչ վերաբերում է օսմանյան ռազմական նավատորմին, ապա նրա անձնակազմը գլխավորապես համալրվում էր հույներից ու լազերից, որոնք հիանալի ծովագնացներ էին:

Օսմանների կողմից պարբերաբար կազմակերպվող դևշիրմեները, առհասարակ այդ արգահատելի երևույթի անմարդկային էությունը, երբ դեռահաս երեխաներին հավետ կտրում հեռացնում էին իրենց ծնողներից ու հարազատներից և նրանց պարտադրում օտար կրոնը, զայրույթ ու ատելություն էր առաջ բերում քրիստոնյա ժողովուրդների մոտ՝ հանդեպ թուրքերը: Աղբյուրների միահամուռ վկայությամբ, ռազմական ստրկության այդ համակարգը զզվանքով էր ընկալվում քրիստոնյա աշխարհի կողմից, առավել ևս, որ որպես կանոն թուրքերը նվաճված քրիստոնյա ժողովուրդներին դիտում էին որպես «մարդկային անասնահոտ», իսկ իրենց որպես այդ անասնահոտի հովիվներ: Այլ կերպ ասած, թուրքերը ոչխարների հովիվից վեր էին ածվում մարդկանց հովիվի: «Թուրքերը,- գրում է լորդ Քինրոսը,- մշակեցին մարդկանց ընտրության և ուսուցման մի այնպիսի եղանակ, որ նրանք վերածվեն պահակային շների, որպեսզի նրանց միջոցով փաղիշահի մարդկային անասնահոտի շրջանում պահպանեն կարգ ու կանոն և հարևաններին պահեն վախի մթնոլորտում»:

Մանկահավաքի ինստիտուտը իր մեջ պարունակում էր նաև մեկ այլ վտանգ քրիստոնյա բնակչության համար: Քանի որ իսլամն ընդունածների զավակները ազատվում էին մանկահավաքի ենթարկվելու վտանգից, ուստի մեծ թվով քրիստոնյա գյուղացիներ գերադասում էին կամովին ընդունել իսլամը, քան թե կորցնել իրենց զավակներին: Անշուշտ, հարցը միայն զգացական չէր, գյուղացիները կարիք ունեին առողջ ու պինդ զավակների՝ իրենց հողի վրա աշխատելու համար: Անկասկած, սա ևս քրիստոնյա բնակչության համաձուլման ու իսլամականացման եղանակներից մեկն էր:

Պետք է նկատի ունենալ նաև, որ ենիչերիական զորամասերում ծառայող զինվորների առջև բաց էր բարձրանալու և ամենաբարձր զինվորական ու վարչական պաշտոններ զբաղեցնելու ճանապարհը: Նախկին շատ ռազմագերիներ, ստրուկներ, իսլամ ընդունած օսմանահպատակ քրիստոնյաների երեխաներ, որոնք արժանացել էին սուլթանի վստահությանը, բանակում և պետության մեջ նշանակ-

վում էին ամենաբարձր պաշտոններում: Դա կուլերի (ղուլեր) կամ ղուլամների համակարգն էր: Կանոնավոր բանակի զինվորներն ու սպաները (ենիչերիներ, հեծելազորային-սիփահիներ, հրետանավորներ) ի տարբերություն ավատական աշխարհազորի, կոչվում էին «կառավարության ստրուկներ» («կափը կուլու»): Առհասարակ սուլթանի ստրուկներ էին համարվում բոլոր պետական ծառայողները: Ղուլեր էին համարվում ընդհանրապես սուլթանի բոլոր հպատակները: Նշված համակարգը, ռազմաավատական սիստեմի հետ միասին, սուլթանին հնարավորություն էր տալիս դիմադրելու մեծատոհմիկ խոշոր ֆեոդալներին և նպաստում էր կենտրոնական իշխանության ամրապնդմանը նվաճված հողերում: Օսմանյան ֆեոդալիզմը, չնչին բացառություններով, տոհմական ժառանգական ֆեոդալական ազնվականություն չի ունեցել, ինչպես այդ եղել է միջնադարյան Եվրոպայում: Սուլթանի ամեն մի հպատակ կարող էր գրավել ամենաբարձր պաշտոններ: Շատ վեզիրներ սերում էին ստրուկներից: Հաճախ նախկին ստրուկները, ենիչերիները կամ թշնամական բանակից գերի ընկած և իսլամ ընդունած մարդիկ, դառնում էին ականավոր պետական գործիչներ, աչքի ընկնող զորահրամանատարներ և այլն:

Սուլթան Մուրադ I-ը (1359-1389) այն միապետներից էր, որ օսմանյան կառավարման ինստիտուտի զարգացման համար բաց արեց նոր ուղիներ: Այդ ինստիտուտը ևս կառուցված էր մի կողմից ստրկության, մյուս կողմից սուլթանի նկատմամբ անվերապահ հավատարմության սկզբունքի վրա: Այդ կառույցը, որն իր էությամբ ռազմական էր, չուտով տարածվեց նաև քաղաքացիական ոլորտի վրա, ընդգրկելով պետական-վարչական համակարգի բոլոր ճյուղերը: Դրա արդյունքը հանդիսացավ այն, որ այդ պահից սկսած քրիստոնյա ծագում ունեցող հպատակները պետք է կառավարվեին այնպիսի մարդկանց կողմից, որոնք իրենց ծագմամբ նույնպես համարյա ամբողջապես հանդիսանում էին քրիստոնյաներ:

Առաջին սուլթանների օրոք գոյություն ունեցող ռազմա-ավատական համակարգը նրանց հնարավորություն տվեց կարճ ժամանակամիջոցի ընթացքում ձեռք բերել վիթխարի ռազմական հաղթանակներ և նվաճել հսկայական տարածքներ: Կ. Մարքսը նշում է, որ օսմանների պետությունը ուժեղ էր իր կարգապահությամբ, որ այն «միջնադարի միակ իսկական ռազմական պետությունն էր»: Թուրք-օսմաններն իրենց ամբողջ եռանդը ներդրել էին ուժեղ և կարգապահ բանակ ստեղծելուն: Իրենք էլ ասում էին, որ իրենց պետությունը «սրով է ձեռք բերված և միայն սրով էլ կարող է պահպանվել»: Հիրավի,

ինչպես նշում է անգլիացի հեղինակ Ա. Լիբայերը, այդ պետությունը «ծնվել էր պատերազմում և պատերազմի համար»: Օսմանյան պետության գերռազմականացումը շարունակվեց իր գոյության ողջ ընթացքում:

Օսմանյան կայսրության ստեղծման օրվանից իշխող շրջանների մտահոգության առարկան է եղել նաև բազմազգ պետության մեջ թուրք տարրի, որպես էթնիկական խմբի, գերակշիռ դիրքերի պահպանումը: Սակայն քանի որ թուրքերը մյուս ժողովուրդների համեմատ միշտ կազմել են փոքրամասնություն, ուստի սուլթանները ձգտել են գեթ ապահովել թուրքերի բնականոն աճը: Թուրքերի աճը ապահովող կարևոր գործոն էր նրանց էթնիկական միախառնումը տարբեր ժողովուրդների հետ: Նվաճված երկրների շատ կանայք ընկնում էին սուլթանի, ֆեոդալների, բարձրաստիճան պաշտոնյաների հարեմները: Տարեգիր Աշըք Փաշազադեն, որը մասնակցել էր 1438 թ. Հունգարիայի դեմ կազմակերպված արշավանքին, հաղորդում է, որ այդ արշավանքի ժամանակ վերցված գերիները այնքան շատ էին, որ մի զույգ կոշիկի դիմաց կարելի էր առնել գերի ընկած ստրուկի: Ավելի ուշ՝ 1657 թ. մեկ այլ թուրք պատմիչ՝ Էվլիյա Չելեբին վկայում էր. «Բանակավայրում (այսինքն՝ Հունգարների գումակում) բռնագրավված 80 հազար սայլակներում կային արևի նման փայլող գերի ստրուկներ, որոնցից ամեն մեկը արժեր ամբողջ Ռումելիայից գանձվող խարաջին, բայց վաճառվեցին մի ծխամորճի կամ մի օքքա հացի դիմաց»: Սուլթանները խրախուսում էին ամուսնությունները մուսուլմանների և գերի վերցված քրիստոնյա կանանց միջև: Աշըք Փաշազադեն և Քոջա Հյուսեինը պատմում են, որ մի անգամ սուլթան Օրխանը շրջում և դիտում էր նոր գրավված Նիկեա քաղաքը: Ողբ ու կոծով նրան է դիմում կանանց մի բազմություն: «Մեզնից շատերը,- բացականչում էին նրանք,- զոհվեցին քո զինվորների սրերից, քանի-քանիսին էլ տարավ սովն ու ժանտախտը: Զրկանքներից ու դժբախտություններից մեր կյանքը դարձել է անտանելի»: Այդ ժամանակ սուլթանը իր կադիներին ու սիփահիներին դիմեց հետևյալ հրամանով. «Ովքեր կարիք ունեն, թող այս կանանցից իրենց կնության վերցնեն»: Եվ ովքեր նրանցից կին վերցրեցին, սուլթանը նրանց տվեց տուն և նշանակեց ռոճիկ:

Այսպիսով, օսմանցիների մոտ ևս նկատվում էր «քսենոգամիայի» (օտարամուսնության) նույն միտումը, ինչ որ սելջուկների մոտ: Դա բնորոշ էր օսմանյան հասարակության ինչպես վերին, այնպես էլ ստորին խավերի համար: Նման բազմազան ճանապարհներով թուրք

ժողովրդի մեջ ձուլվում էին էթնիկական տարբեր խմբերի ներկայացուցիչներ:

Մուրադ I-ի կառավարման շրջանում օսմանյան պետության կայացման գործընթացը արագ տեմպերով վերելք էր ապրում: Նվաճված ժողովուրդներից գանձվող հարկերը և ռազմական ավարը մշտապես հոսում էր սուլթանական գանձարան: Նվաճված տարածքների բնակչության տարիների աշխատանքի պտուղները սկսեցին հարստացնել օսմանների պետության վերնախավին՝ աստիճանավորներին, զորահրամանատարներին, հոգևորականությանը, բեյերին և այլն: Պատմականորեն համեմատաբար կարճ ժամանակամիջոցի ընթացքում օսմանյան տիրակալները և տիրապետող վերնախավը դարձան խոշոր նյութական արժեքների տեր: Դա հնարավորություն տվեց ավելացնել բանակի թվաքանակը: Մուրադ I-ը ավելի կատարելագործեց դեռևս Օրխանի ժամանակ ստեղծված բանակը, այն վերածելով կուռ համակարգի:

Սուլթան Մուրադ I-ը համարվում է նաև օսմանյան պետության առաջին օրենսդիրը: Նրա օրոք հայտնվեցին առաջին աշխարհիկ օրենքները: 1368 թ. հրապարակված օրենքով («կանուն») հայտարարվում էր, որ նվաճված հողերը հանդիսանում են պետական սեփականություն: 1375 թ. օրենքով կանոնակարգվում էր մանր և խոշոր ավատների՝ թիմարների և զեամեթների բաշխման գործը: Նրա կառավարման շրջանում զարգացում ապրեց նաև պետական ապարատը: Ծնունդ առավ պետության վարչական բաժանման համակարգը: Օսմանյան պետությունը բաժանվեց սանջակների, որոնք կառավարելու էին սանջակբեյերը: Նրանց ձեռքերում կենտրոնացվում էր տվյալ նահանգի քաղաքացիական և զինվորական իշխանությունը:

Սուլթանը վեզիրների թվից սկսեց ընտրել մարդկանց, որոնց հանձնարարում էր վարել բոլոր քաղաքացիական և ռազմական գործերը: Հենց այդ ձևով ծնունդ առավ նաև մեծ վեզիրի ինստիտուտը, որը դարեր շարունակ հանդիսանում էր օսմանյան վարչության կենտրոնական դեմքը: Եթե Օրխանը իր տիրույթները կառավարում էր իր մերձավոր ազգականների միջոցով, ապա Մուրադ I-ը այդ նույնը անում էր վեզիրների միջոցով: Նախնական ձևով ձևավորվեց նաև օսմանյան ֆինանսական վարչությունը: Ստեղծվեց սուլթանի անձնական գանձարան, որը գոյություն ուներ պետական գանձարանին զուգահեռ: Այդ ձևը պահպանվեց մի քանի դար շարունակ:

Մուրադ I-ի սպանությունից անմիջապես հետո Կոսովոյի մոտ հենց ռազմի դաշտում նրա ավագ որդին հռչակվեց սուլթան, Բայա-

զիդ I անունով (1389–1402)։ Նա պատմության մեջ է մտել «Իլդիրիմ» («Յըլդըրըմ» – կայծակնային) մակդիրով։ Նրա առաջին հրամանը եղավ խեղդամահ անել իր արյունակից կրտսեր եղբորը՝ Յաղուբին, որը որպես զորահրամանատարներից մեկը մասնակցում էր Կոսովոյի ճակատամարտին, աչքի ընկնելով իր խիզախությամբ ու ռազմական հմտությամբ։ Նա բանակի սիրելին էր և զինվորների շրջանում վայելում էր մեծ հեղինակություն։

Այսպիսով, Բայազիդը կայսերական մակարդակով արմատավորեց եղբայրասպանության պրակտիկան, որը հետագայում հիմնավոր կերպով մտավ օսմանյան դինաստիայի պատմության մեջ՝ ձեռք բերելով օրենքի ուժ։ Այդ նողկալի սովորույթը արդարացվում էր այն հիմնավորմամբ, որ ավելի գերադասելի է մեկ մարդու մահը, քան հազարավորների՝ խռովություն ծագելու դեպքում։ Ընդ որում, այդ տեսակետը հիմնավորելու համար վկայակոչվում էր մահմեդականների սուրբ գիրքը՝ Ղուրանը, որի սուրահներից մեկում ասվում է, որ նրանք, ովքեր հակված են սադրանքներ գործելու, պետք է տեղնուտեղը ջնջվեն երկրի երեսից։ Որ «եթե նույնիսկ նման մարդիկ ձեզ առաջարկեն խաղաղություն ու հավաստիացնեն, որ չեն պայքարելու քո դեմ, միևնույն է, որտեղ որ պատահես նման մարդկանց հետ՝ անխնա ոչնչացրու նրանց»։ Նման անմարդկային մեթոդներով դարերի ընթացքում օսմանների դինաստիան աշխատում էր հարատև ու անընդմեջ դարձնել իր տիրապետող դիրքը։

Կոսովոյի ճակատամարտից հետո իր հոր վրեժը լուծելու համար Բայազիդը կազմակերպեց գերված սերբերի զանգվածային կոտորած, անխնա սրի քաշելով ճակատամարտին մասնակից սերբական ազնվականության ընտրանուն։ Միաժամանակ դրսևորելով ճկունություն, նորաթուխ սուլթանը Մուրադ I-ի հրամանով գլխատված սերբական իշխան Լազարի որդու՝ Ստեֆան Վուկովիչի հետ, որը նույնպես ժառանգել էր հոր իշխանությունը, կնքեց բարեկամության դաշինք, ըստ որի Սերբիան չէր միացվում Օսմանյան պետությանը, այլ պահպանում էր իր ինքնավար վասալական պետության ստատուսը։ Ստեֆանը պարտավորվում էր իր երկրի արծաթի հանքավայրերից ստացվող եկամուտներից տարեկան հարկ վճարել սուլթանին։ Փոխարենը նա ստանում էր ժամանակին իր հորը տրված բոլոր արտոնությունները։

Դաշինքը դինաստիական կապերով ամրապնդելու նպատակով Ստեֆանը իր քրոջը՝ Դեսպինային, կնության տվեց Բայազիդին։ Միաժամանակ նա այսուհետև պետք է իր վրա վերցներ թուրքական

բանակի ստորաբաժանումներից մեկի հրամանատարությունը, ինչպես նաև իր վրա պարտավորություն էր վերցնում սուլթանի առաջին իսկ պահանջի դեպքում նրան տրամադրել սերբական զորքեր, համատեղ կերպով օսմանների թշնամիների դեմ կռվելու համար: Պայմանագիրը նախատեսում էր որոշակի բաժին Ստեֆան Վուկովիչի համար պատերազմում ձեռք բերվելիք ռազմաավարից: Թուրքերը իրավունք էին ստանում նաև Սերբիայի տարածքում ստեղծել մահմեդական գաղութներ:

Այսպիսով, հիշյալ պայմանագրով փաստորեն Կոսովոն ներվում էր Թուրքերին, սակայն համաձայն սերբական լեգենդի՝ այն չէր մոռացվում:

Կոսովոյի ճակատամարտում օսմանցիների տարած հաղթանակը Սերբիայի համար ունեցավ հեռուն գնացող հետևանքներ: Թուրքերը հախուռն թափով Սերբիայից գրավված հողերում հիմնեցին մահմեդական բնակչության խոշոր գաղութներ, դրանով իսկ փոփոխության ենթարկելով սլավոնական այդ երկրի ժողովրդագրական պատկերը:

Բայազիդը իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև Փոքր Ասիայի վրա, նպատակ ունենալով այնտեղ գոյություն ունեցող բեյություններրի հաշվին ընդարձակել օսմանյան տիրույթները: Արշավանքը հենց սկզբից վերին աստիճանի հուսադրող էր. 1389–1390 թթ. ընթացքում նա իր իշխանությանը ենթարկեց Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի բեյլիքներ Այդինը, Սարուխանը, Գերմիյանը, Մենթեշեն ու Համիդը: Դրանով իսկ սուլթանը ապահովեց օսմանների ներկայությունը Էգեյան ծովում, որտեղ հասցրել էին հիմնավորվել թյուրքական այլ ցեղեր: Այսպիսով, առաջին անգամ օսմանցիները դուրս եկան Միջերկրական ծովի ափերը: Միանգամայն ակնհայտ էր, որ օսմանյան պետությունը սկսում էր հավակնել ծովային տերության կոչման:

Այնուհետև 1390 թ. Բայազիդ I-ը ներխուժեց Կարաման բեյության սահմանները: Ռազմական այդ գործողությանը իրենց մասնակցությունը բերեցին նաև սուլթանի քրիստոնյա վասալները, այդ թվում նաև Բյուզանդիայի ապագա կայսր Մանուիլ Պալեոլոգոսը, որն անձամբ ներկայացավ սուլթանի ռազմական ճամբարը, որպեսզի իր ծառայությունն առաջարկի նրան:

Հանդիպելով Կարամանի բեյ Ալա-էդ-դինի ուժգին դիմադրությանը՝ Բայազիդը համարյա կայծակնային արագությամբ օգնական զորքեր տեղափոխեց Փոքր Ասիա (նրա բանակի արագ տեղաշարժերը նկատի ունենալով էր, որ նրան տվել էին «իլդիրիմ» (կայծակնային) մականունը: Վաղեմի հակառակորդների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ակչայի մոտ, 1392 թ.: Այն ավարտվեց Կարա-

մանների բեյության զորքերի ջախջախումով: Կարամանի բեյը գերի ընկավ և սուլթանի հրամանով խեղդամահ արվեց: Կարամանյան բեյությունը ռազմակալման ենթարկվեց օսմանցիների հաղթական բանակի կողմից: Այնուհետև իրար հետևից Բայազիդի հսկայական բանակը գրավեց Կայսերին ու Սրվասը (Սեբաստիան)՝ 1396 թ., ինչպես նաև Կաստամոնու էմիրությունը, որը ճանապարհ էր բաց անում դեպի Սև ծովի Սինոպ նավահանգիստը: Մինչև 1398 թ. արևելքում գրավելով ընդարձակ տարածքներ, օսմանցիները ընդհուպ մոտեցան Մեծ Հայքի արևմտյան սահմաններին: Ռազմական այդ կամպանիայի ընթացքում միակ անհաջողությունը, որ ունեցավ Բայազիդը, Զմյուռնիայի (Իզմիր) գրավման ձախողումն էր: Այստեղ նա հանդիպեց Գոսպիտալյերների միաբանության խաչակիր ասպետների կատաղի դիմադրությանը և որոշեց այդ հարցի լուծումը թողնել ապագային: Իր այդ անհաջողությունից զայրացած սուլթանը ավերածության մատնեց Քիոս կղզին, կազմակերպեց ավերիչ ասպատակություններ դեպի Աթթիկայի ափերը, միաժամանակ փորձելով առևտրական շրջափակման ենթարկել Էգեյան ծովի կղզիները:

Փոքր Ասիայում կատարած իր նվաճումների հետևանքով, ըստ էության, Բայազիդ I-ը դարձավ Անատոլիայի մեծ մասի տերը:

Փոքր Ասիայում նվաճված հողերի կառավարումը հանձնելով իր կողմից նշանակված սանջակբեյերին, Բայազիդը վերադարձավ Եվրոպա, իր փայփայած լայնահուն զավթողական ծրագրերը ժամ առաջ կյանքի կոչելու համար: Նրա առաջնահերթ խնդիրն էր լուծել Հունգարիայի հետ կապված հարցը, որի Սիգիզմունդ I թագավորը դարձել էր իր ոխերիմ թշնամին: Վերջինիս դեմ մեծ պատերազմ հրահրելու մտադրությամբ, Բայազիդը ձեռնամուխ եղավ սադրիչ քայլերի: Մասնավորապես նա հրամայեց իր զորքերին ասպատակություններ կատարել դեպի Հունգարիայի տարածքը և առհասարակ բոլոր մեթոդներով չիկացնել հարաբերությունները այդ երկրի հետ: Սակայն գիտակցելով օսմանների ահռելի ուժի վտանգը, Սիգիզմունդը փորձում էր հարաբերությունները կարգավորել դիվանագիտական ճանապարհով: Մասնավորապես նա ուղերձ հղեց Բայազիդին, որում առանց վիրավորական արտահայտությունների բողոքում էր, որ օսմանները միջամտում են Բուլղարիայի գործերին, մի երկրի, որը գտնվում է հունգարական հովանու ներքո: Երբ այդ ուղերձը թագավորական դեսպանը ներկայացրեց Բայազիդին, խնդրելով պատասխան, վերջինս խուսափեց պատասխանից, դրա փոխարեն դեսպանին ցույց տալով իր վրանում կախված գենքը, անչուշտ դրանով նրբին ակնարկ

անելով, որ հարցի լուծումը լինելու է զենքով: Հասկանալով այդ ակնարկի իմաստը, Սիգիզմունդը որոշեց կանխել Թուրքերին և ներխուժեց Բուլղարիա: Բայազիդի պատասխան քայլը իսկապես կայծակնային էր: Նա իր հսկայական բանակը անմիջապես շարժեց Բուլղարիայի կողմը: Նախ սուլթանը որոշեց հաշվեհարդար տեսնել Բուլղարիայի փաստական կառավարիչ Շիշմանի հետ, որը թեև Մուրադ I-ի կողմից ստացել էր իր երկիրը կառավարելու իրավունք, իսկ Բուլղարիային հատկացվել էր որոշակի ինքնավարություն վասալական պետության կարգավիճակով, սակայն, քանի որ մեկ անգամ Շիշմանը ապստամբել ու զենքն ուղղել էր Թուրքերի դեմ, Բայազիդ I-ը ոչ միայն իսպառ կորցրել էր նրա նկատմամբ վստահությունը որպես դաշնակցի, այլև համոզված էր, որ Շիշմանը հունգարների հետ համատեղ հանդես է գալու իր դեմ: Ուստի գերելով Շիշմանին՝ Բայազիդը հրամայեց մահապատժի ենթարկել նրան: 1393 թ. օսմանյան զորքերը գրավեցին Բուլղարիայի մայրաքաղաք Տիրնովոն:

Քաղաքի բնակչությանը Թուրքերը սրի քաշեցին, իսկ կենդանի մնացածներին բոնագաղթի ենթարկեցին Փոքր Ասիա: Այնուհետև 1395 թ. ընկավ բուլղարական վերջին չնվաճված քաղաք Վիդինը:

Բուլղարիայի և առհասարակ Բալկանների նվաճումը Թուրքերն իրականացնում էին անողոք դաժանությամբ: Քաղաքների և գյուղերի գրավումը ուղեկցվում էր խաղաղ բնակչության զանգվածային կոտորածներով, անսանձ թալանով ու կողոպուտով, բնակչության գերեվարությամբ ու ստրկացմամբ: Թուրքական բանակին թիկունքից ուղեկցում էին մեծ թվով վաճառականներ, որոնք տեղնուտեղը գնում էին ռազմական ավարը: Որպես կանոն այդ ավերիչ արշավանքներին հետևում էր համատարած սովը, որն իր հերթին խլում էր հազարավոր մարդկանց կյանք: Բալկանները «Թուրքականացնելու» նպատակով օսմանցիները քրիստոնյա բնակչության հսկայական զանգվածների տեղահանում ու քշում էին օսմանյան այլ տիրույթներ, իսկ Փոքր Ասիայից բերված Թուրքերին վերաբնակեցնում հարավսլավոնական հողերում: Թուրքական նվաճումներից մի 10–15 տարի անց բալկանյան քաղաքները ստանում էին Թուրքական կերպարանք: Ցավալին այն էր, որ Բալկաններում Թուրքերի նվաճողականությանը մեծապես նպաստում էին հենց իրենք՝ բալկանյան տիրակալները: Փոխանակ միավորվելու և վտանգավոր թշնամուն հակահարված տալու՝ նրանք, առաջնորդվելով իրենց նեղ շահերով, թշնամաբար էին վերաբերվում մեկը մյուսի նկատմամբ:

Ողջ Բուլղարիան միացվեց օսմանյան պետությանը՝ վերածվելով

Թուրքական նահանգի: Սկսվեց սլավոնական այդ երկրի հուժկու թուրքականացումն ու իսլամականացումը: Բայազիդը ծրագրել էր հանձինս Բուլղարիայի և Վալախիայի Դանուբի ավազանում ստեղծել ուժեղ պատնեշ Հունգարիայի դեմ: Նրա նպատակների մեջ էր մտնում նաև տեղական դինաստիաների վերացումը:

Բուլղարական հողերը դարձնելով հենակետ՝ Բայազիդ I-ի զորքերը սկսեցին ասպատակ սփռել Հունգարիայում: Հունգարական թագավոր Սիգիզմունդը փորձեց 1392 թ. կանխարգելիչ հարված հասցնել թուրքերին, սակայն այն հաջողություն չունեցավ:

1394 թ. Բայազիդ I-ը իր զորքերը շարժեց դեպի Հունաստան: Պելոպոնես ներխուժած օսմանյան բանակը իր հետևից թողնում էր ավերակներ: Հույն իշխանական տները հարկադրված էին ճանաչել իրենց վասալական կախումը սուլթանից: Այնուհետև մի քանի անգամ թուրքական բանակը փորձեց գավթել Ալբանիան, սակայն հանդիպեց լեռնական առնաուտների համառ դիմադրությանը և բավարարվեց հարթավայրային որոշ շրջանների ռազմակալմամբ:

Ինչպես իր նախորդ օսմանյան սուլթանների, այնպես էլ Բայազիդ I-ի մտասևեռումը Կոստանդնուպոլիսն էր, առանց որի հնարավոր չէր ամբողջական կայսրության ստեղծումը: Ուստի նա որոշեց փորձել իրականացնել Օսմանի խորհրդանշական «երազը»: Այդ նպատակի կենսագործման համար կարծես թե ստեղծվել էր նպաստավոր իրադրություն: 1391 թ. Հովհաննես V Պալեոլոգոս կայսրը մահացել էր: Նրա ժառանգորդ Մանուիլը վերածվել էր սուլթանի հնազանդ վասալի: 1390 թ., երբ Բայազիդը ձեռնամուխ էր եղել իր փոքրասիական արշավանքին, բյուզանդական գահաժառանգը որպես վասալական պարտավորություն, իր ջոկատով մասնակցում էր օսմանցիների ռազմարշավին: Կարծես թե ճակատագրի քմահաճույքով, հենց բյուզանդական գահաժառանգը առաջինը ոտք դրեց օսմանցիների կողմից պաշարված Փիլադելֆիայի ամրոցի պատերի վրա: Դա Փոքր Ասիայի արևմուտքում (Զմյուռնիայից կամ Իզմիրից արևելք) գտնվող հույների վերջին տիրույթն էր: Զգիմանալով սուլթանական պալատում կրած իր նվաստացումներին՝ Մանուիլը փախուստի է դիմում սուլթանական արքունիքից և մեկնում Կոստանդնուպոլիս, որտեղ գրավելով հոր գահը, շարունակում է նրա գործը քաղաքի պաշտպանողական ամրությունները կառուցելու ուղղությամբ: Տեղեկանալով այդ մասին՝ Բայազիդը հրամայեց քանդել քաղաքի նորակառույց պատերն ու աշտարակները՝ հակառակ դեպքում սպառնալով կուրացնել Մանուիլին: Ավելին, սուլթանը պահանջեց ավելացնել հար-

կերը և Կոստանդնուպոլսում սահմանել կադիի (դատավոր) պաշտոն մահմեդական բնակչության կարիքների համար: Շուտով այդ պահանջներին հետևեց թուրքական բանակի զորաշարժը դեպի Կոստանդնուպոլիս: Քաղաքը պաշարվեց: Միայն յոթ ամսից հետո, երբ Մանուիլը ընդունեց սուլթանի առաջադրած բոլոր պայմանները, Բայազիդը համաձայնվեց հանել պաշարումը:

Իսկ այդ պայմանները ավելի քան ծանր ու ստորացուցիչ էին: Մանուիլը պարտավորվում էր քաղաքում թույլատրել խալամական դատարանի գործունեությունը, քաղաքի թաղամասերից մեկը տրամադրել մահմեդական վերաբնակիչներին, Ոսկեղջյուրի հակառակ ափին՝ Գալաթայում իրավունք տալ վեց հազարանոց թուրքական զորամասի տեղակայման համար, քաղաքի պատերից դուրս գտնվող խաղողի այգիների և բանջարանոցների համար վճարել լրացուցիչ հարկեր և այլն: Այդ ժամանակվանից սկսած Կոստանդնուպոլսում սկսեցին գործել երկու մզկիթներ, որոնց աշտարակներից մուեզիններ հնչեցրած աղոթքի կոչերը տարածվում էին ողջ քաղաքով մեկ: Թուրքերն արդեն կամովին փոխել էին նաև Կոստանդնուպոլսի անունը, այն դարձնելով Ստամբուլ (Իսթանբուլ), որը հունարեն is tin poli («դեպի քաղաք») բառի աղավաղված ձևն էր:

Երկու տարի անց Բայազիդը վերստին հարձակվեց Կոստանդնուպոլսի վրա, այս անգամ իրեն դաշնակից ունենալով Մանուիլի եղբորորդի երիտասարդ Հովհաննես Պալեոլոգոսին, որը հավակնություն ուներ գահի նկատմամբ: Սակայն թուրքերի գրոհը հետ մղվեց: 1395 թ. որպես «Կեսարի ժառանգորդ» Բայազիդը հրամայեց գումարել դատարան, որը սուլթանի կարգադրությամբ որոշում կայացրեց սպանել Պալեոլոգոսների ողջ ընտանիքին: Սակայն այդ դաժան դատավճիռը մեծ վեզիր Ալի-փաշայի միջնորդությամբ չեղյալ հայտարարվեց, որը սուլթանին առաջարկեց կոմպրոմիսային տարբերակ, այն է՝ կտրել մի քանի բյուզանդական մեծատոհմիկ ազնվականների ձեռքերը և հանել աչքերը: Միաժամանակ սուլթանը համաձայնվեց, որ Մանուիլ II-ը մնա գահի վրա:

Շուտով լուրեր հասան, որ հունգարների թագավոր Սիգիզմունդը որոշել է խաչակրաց արշավանք կազմակերպել օսմանցիների դեմ, վերջ տալու համար իր տիրույթների նկատմամբ նրանց ասպատակություններին և պատժելու Բայազիդ I-ին, որը դեռևս իր գահակալության առաջին օրերին իտալական դեսպաններին հայտարարել էր, թե Հունգարիան նվաճելուց հետո ինքը արշավանք է կազմակերպելու դեպի Հռոմ և Սուրբ Պետրոսի տաճարի խորանում իր նժույգին կե-

բակրելու է գարիով: Այդ հայտարարությամբ սուլթանը ողջ Եվրոպայով մեկ վաստակել էր քրիստոնյա աշխարհի ամենաոխերիմ թշնամու համբավ:

Ուստի Սիգիզմունդը հանդես եկավ օսմանների դեմ խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու կոչով՝ թուրքերին «Եվրոպայից քշելու» կարգախոսի ներքո: Իրականում նա այդ արշավանքի միջոցով ձգտում էր կանխարգելել Դանուբի վրա գտնվող օսմանների ամրություններից Հունգարիայի վրա կատարվող անընդմեջ հարձակումները: Այդ շրջանում արևմուտքում թուրքական վտանգը սկսել էին գիտակցել չատերը. Կենտրոնական Եվրոպայի պետությունների միապետները, Հռոմի պապը, Վենետիկի և Ջենովայի իտալական հանրապետությունները և այլն: Սկսել էին ձայներ հնչել, որ «թուրքերն այդքան ուժեղ են ոչ թե հենց իրենցով, այլ քրիստոնյաների անհամաձայնության պատճառով»:

Հունգարների թագավորի նոր խաչակրության կոչը լայն արձագանք գտավ ֆեոդալական Եվրոպայում: Այն հնչել էր մի այնպիսի բարենպաստ ժամանակ, երբ հարյուրամյա պատերազմը նոր էր ավարտվել և Սրբազան Հռոմեական կայսրության մեջ հաստատվել էր խաղաղություն: Սիգիզմունդին հաջողվեց իր խաչակիր դրոշի ներքո հավաքել ոչ միայն մեծաթիվ հունգար ռազմիկների, այլև եվրոպական տարբեր երկրների՝ Անգլիայի, Շոտլանդիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ֆլանդրիայի, Լոմբարդիայի, Չեխիայի, Լեհաստանի, Իսպանիայի և այլ երկրների հազարավոր ասպետ-ռազմիկների, արկածախնդիրների, հարստանալու տենչով տարված մարդկանց և այլն: Սակայն ամբողջությամբ վերցրած, դա մի բանակ էր, որի մեջ հավաքվել էր եվրոպական ասպետականության սերուցքը, ներշնչված ոչ միայն կրոնական-քրիստոնեական գաղափարներով, այլև օսմանների կայծակնային երթը դեպի Եվրոպա կանգնեցնելու և թուրքերին Բալկաններից վերջնականապես վռնդելու վճռականությամբ:

Խաչակիր ասպետների բանակի թվաքանակը հասնում էր 60-ից մինչև 100 հազար մարդու: Դա քրիստոնյաների ամենախոշոր բանակն էր, որը երբևիցե դուրս էր եկել դիմակայելու «անհավատներին»: Սակայն նրան վիճակված էր մարտի մեջ մտնել իրեն կրկնակի անգամ գերազանցող սուլթանական բանակի հետ:

1396 թ. ամռան սկզբին Եվրոպայի տարբեր անկյուններից զորաջոկատները հավաքվեցին Բուդայում, որպեսզի զորաշարժ կատարեն թշնամու կողմը: Ասպետները անհամբեր էին ժամ առաջ հանդիպելու թուրքերի բանակի հետ և կատարելու ռազմական սխրանքներ: Սա-

կայն սկզբից ևեթ ակնհայտ էր, որ խաչակիրների բանակը ունի լուրջ թերություններ: Այն նաև անշարժունակ էր ու անկարգապահ: Կաթոլիկ ասպետները թշնամաբար էին վերաբերվում բալկանների տեղական ուղղափառ բնակչության նկատմամբ:

Հակառակորդների հանդիպումը տեղի ունեցավ Դանուբի աջ ափին գտնվող բուլղարական Նիկոպոլ քաղաք-ամրոցի մոտ, որն արդեն գրավված էր թուրքերի կողմից: Սիգիզմունդի խաչակիրները պաշարեցին այն, սակայն չունենալով անհրաժեշտ պաշարողական տեխնիկա, նրանք նստած էին պատերի տակ, հույս ունենալով, որ պաշարվածները սովի կմատնվեն և կհանձնեն քաղաքը: Իսկ Բայազիդի բանակը այդպես էլ չէր երևում:

Ձանձրանալով անգործությունից՝ արևմտյան ասպետները իրենց տվեցին հարբեցողության, գինարբուքի ու կանանց շրջապատում զվարճալիքների, զանազան մոլեխաղերի և այլն: Ասպետներին հատուկ մեծամտությամբ նրանք ծաղրում էին թշնամուն՝ հակառակորդի զինվորներին անվանելով «վախկոտ նապաստակներ»: Այն ռազմիկները, որոնք համարձակվում էին այլ կերպ մտածել, նրանց մեղադրում էին պարտվողական տրամադրությունների մեջ և կտրում էին ականջները: Տարբեր ազգությունների զինվորների միջև հաճախ ծագում էին վեճեր, որոնք ավարտվում էին ծեծ ու ջարդով, իսկ հաճախ նաև զոհերով:

Միանգամայն անսպասելի կերպով, ինչպես բնորոշ էր Բայազիդի բանակին, թուրքերը հայտնվեցին քաղաքի պատերի մոտ: Դա հիանալի մարզված, կարգապահ ու շարժունակ մի բանակ էր, որի թվաքանակը հասնում էր մոտ երկու հարյուր հազար մարդու: Ի տարբերություն ասպետների, որոնք երբեք գործ չէին ունեցել թուրքերի հետ և նրանց մասին լսել էին միայն առասպելախառն պատմություններ, Սիգիզմունդը հիանալի ճանաչում էր թուրքական բանակը, ուստի գտնում էր, որ նրան հաղթելու համար անհրաժեշտ է ունենալ խնամքով մշակված և համաձայնեցված գործողությունների ծրագիր: Սակայն ասպետների տարբեր խմբեր մեկը մյուսի հետ կատաղի վեճերի էր բռնվում, թե ում է պատկանելու հաղթանակի ու փառքի դափնիները: Հետևաբար միասնական ու համաձայնեցված գործողությունների մասին խոսք անգամ լինել չէր կարող: Ասպետները նույնիսկ մեղադրեցին Սիգիզմունդին, որ նա ձգտում է անձամբ տիրանալ փառքին: Ֆրանսիացի կոմս դ'Էյյուն առհասարակ հրաժարվեց ենթարկվել Սիգիզմունդին և ինքնագլուխ կերպով, առանց գլխավոր հրամանատարի թույլտվության, իր յոթ հարյուր հոգիանոց ջոկատով հարձակվեց թուրքերի վրա:

Գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ 1396 թ. սեպտեմբերի 25-ին: Դա մի արյունահեղ ու բացառիկ համառ ճակատամարտ էր: Եվրոպական ասպետները որոշել էին կամ մեռնել, կամ փառքով պսակել իրենց անունը: Հակառակորդները ոչ մի կերպ չէին ցանկանում զիջել իրենց դիրքերը: Ճակատամարտի սկիզբը հուսադրող էր խաչակիրների համար: Ֆրանսիական ասպետները կործանիչ հարված հասցրեցին թշնամու առաջապահ ուժերին: Սակայն թուրքերին հաջողվեց ժամանակին օգնություն հասցնել այդ դժվարին տեղամասում գտնվող ենիչերիներին: Թուրքական հեծելազորը սրընթաց գրոհով փոխեց ճակատամարտի պատկերը: Հաղթանակ ձեռք բերելու գործում ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև սուլթանի վասալ սերբական իշխան Ստեֆան Լազարևիչի 15-հազարանոց զորամասը, որի անկասելի գրոհը, այն էլ ճակատամարտի վճռական պահին, խուճապ առաջ բերեց հակառակորդի ճամբարում:

Սիգիզմունդի բանակը ջախջախիչ պարտություն կրեց: Եվրոպական ասպետականության սերուցքը Նիկոպոլիսի պատերի տակ սրի քաշվեց, իսկ մի մասն էլ գերի ընկավ թուրքերի ձեռքը: Կենդանի մնացածները դիմեցին խուճապահար ու անկանոն փախուստի: Սիգիզմունդը իր մերձավորների մի փոքրիկ խմբի հետ, որոնց թվում էր նաև ասպետ-գոսպիտալյերների միաբանության Մեծ Մագիստրոսը, կարողացավ դուրս պրծնել թուրքերի օղակումից և չարժվել դեպի Դանուբ գետը, որտեղ նրան սպասում էր Դանուբի վրա գործող վենետիկա-մալթայական ռազմական նավատորմի նավերից մեկը:

Թուրքերի մոտ գերի ընկած խաչակիրների թիվը հասնում էր մոտ 10 հազար մարդու: Սուլթանի հրամանով նրանց մի մասը գլխատվեց, իսկ մի մասն էլ տանջալից մահով սպանվեց լախտերի ու մահակների հարվածներով: Այդ արյունոտ սպանդի տեսարանը, որը առավոտից տևեց մինչև ուշ գիշեր, այն աստիճանի ցնցող էր, որ նույնիսկ սուլթանի մերձավորների ու զորահրամանատարների նյարդերը չդիմացան դրան և նրանք սկսեցին թախանձել, որ Բայազիդը հրամայի վերջ տալ դրան: Նրանց թախանձանքների հետևանքով սուլթանը ներումն չնորհեց լոկ պատանիների մի փոքր խմբի՝ որոնց ստրկացնելով բաժանեց իր զորահրամանատարների միջև: Իսկ մի շարք ամենաարևելի ու ազնվատոհմ ասպետների, այդ թվում նաև կոմս Նեվերսկուն, Բայազիդը մեծ փրկագնի դիմաց հանձնեց Ֆրանսիական թագավոր Կարլոս VI-ին: Ֆրանսիական տարեգիրները հաղորդում են, որ այդ փրկագնի 200 հազար ոսկե դուկատները սուլթանին հանձնվեցին ջենովական դրամատերերի կողմից: Փրկագնի մեջ էին

մտնում նաև մեծ քանակությամբ տարբեր արժեքներ, այդ թվում նաև ընտիր կտորեղեն՝ Ալեքսանդր Մակեդոնացու կյանքից դաջված պատկերներով, նորվեգական սպիտակ բազեներ և այլն:

Ֆրանսիական թագավորի հանձնակատարներից ստանալով փրկագինը, Բայազիդը նրանց մեկնելու նախօրյակին կազմակերպեց իր չքեղությամբ ու թափով մի աննախընթաց որս, որին մասնակցում էին հազարավոր բազեակիրներ, որսի շներ և այլն: Որսի այդ տեսարանը նպատակ ուներ ֆրանսիական կայսրին ցուցադրել ոչ միայն սուլթանական իշխանության վեհությունն ու հզորությունը, այլև նրա հարստությունն ու ճոխությունը: Թագավորի համար ուղարկվող նվերների մեջ էր նաև թուրքական ռազմիկի մի լրիվ սպառազինություն, այդ թվում նաև վեց նետեր մարդկային կաշվից պատրաստված աղեղալարով: Դրանով սուլթանը նրբին ակնարկ էր անում այն մասին, որ Նիկոպոլիսի մոտ ինքը տարել է փայլուն հաղթանակ: Ի դեպ, արհամարհանքով լի հրաժեշտի իր ճառում սուլթանը ասպետներին հրավիրում էր վերստին վերադառնալ և մեկ անգամ ևս չափվել իր անպարտելի զորքերի հետ:

Այսպիսով, խաչակրաց արշավանքներից վերջինը ավարտվեց մահմեդականների տարած ջախջախիչ հաղթանակով, այն էլ քրիստոնեական Եվրոպայի ուղիղ սրտում: Այդ պարտությունը ունեցավ հեռուն տանող հետևանքներ: Արևելյան Եվրոպայում աննախընթաց ուժեղացան օսմանների դիրքերը: Նրանք իրենց ենթարկեցին Վալախիան, որի գոսպոդարները հարկադրված էին ճանաչել սուլթանի գերիշխանությունը, բուլղարական հողերը վերջնականապես անցան թուրքերի իշխանության տակ և այլն: Իսկ ամենակարևորը խաչակրաց արշավանքի բուն գաղափարին հասցված էր մահացու հարված: Օսմանցիների այդ հաջողությունները առաջին հերթին պայմանավորված էին նրանով, որ Բալկանների ավատական պետություններ մեջև գոյություն չուներ միասնություն, որը և թույլ չէր տալիս միասնական ճակատով հանդես գալու ահարկու թշնամու դեմ: Օգտվելով դրանից, օսմանյան սուլթանները համեմատական հեշտությամբ առանձին-առանձին ջախջախեցին նրանց և ենթարկեցին իրենց իշխանությանը: Կարևոր դեր խաղաց նաև այն, որ ամեն մի ավատատեր փորձում էր իր տիրույթները պաշտպանել սեփական ուժերով, չցանկանալով իր դիմադրության ջանքերը միավորել այլ ֆեոդալների հետ: Ավելին, մի շարք մանր ու խոշոր ավատատերեր, իրենց տիրույթները և իշխանությունը կործանումից փրկելու նպատակով սուլթանի մոտ անցնում էին ծառայության և նրա զորքերի հետ համատեղ մասնակից դառնում հարավսլավոնական տարածքների նվաճ-

մանը: Սլավոնական տարբեր իշխանների միջև տեղի էին ունենում երկպառակտչական արյունախանձ կռիվներ ու պատերազմներ, որոնց ընթացքում եղբայրը հանդես էր գալիս եղբոր դեմ, որդին հոր դեմ և այլն: Իսկ օսմանները ոչ միայն օգտվում էին դրանից, այլև վարպետացել էին այդպիսի երկպառակություններ հրահրելու գործում: Մեկը մյուսի նկատմամբ ատելությամբ ու ոխով վառված ֆեոդալները, հնարավորություն չունենալով սեփական ուժերով ծնկի բերելու կամ ոչնչացնելու իրենց հակառակորդին, հաճախ դիմում էին Թուրքերի օգնությանը՝ հարևանների հետ հաշվեհարդար տեսնելու համար: Այսպես, երբ 1403 թ. սերբական իշխաններից մեկը՝ Ստեֆանը, զինված պայքար սկսեց Թուրքերի դեմ, վերջիններիս կողմից անմիջապես հանդես եկավ նրա հարազատ հորեղբորորդի Յուրի Բրանկովիչը: Նման դեպքերը եզակի չէին, կարելի է ասել, որ նույնիսկ դարձել էին օրինաչափություն:

Գոհանալով Բալկաններում տարած իր մեծ հաղթանակով՝ սուլթան Բայազիդը չցանկացավ այն զարգացնել, առավել ևս որ իր նախանչած ծրագրերում կային անհետաձգելի գործեր: 1397 թ. նրա զորքերը ներխուժեցին Հունաստանի տարածքը՝ Ատթիկա և Պելլոպոննես: Թեսալիայում ունենալով մի շարք կարևոր ձեռքբերումներ՝ այնուհետև սուլթանը հրամայեց իր զորավարներին Մորեայում ևս չարունակելու իր նվաճումները, որպեսզի այնտեղ տեղ բացվի Անատոլիայից բերվելիք Թուրքերով գաղութներ ստեղծելու համար: Հունաստանում Բայազիդը կնության վերցրեց ևս մի քրիստոնյա հարսնացուի՝ Կանտակուզինոսի դուստր Ելենային: Այդ օրերին նա այնպես էր տարված Բյուզանդիայի մայրաքաղաքը գրավելու իր վաղեմի ծրագրով, որ նույնիսկ հետաձգեց Ատենքի գրավումը:

Բայազիդը 1400 թ. ցամաքի կողմից շրջափակեց Կոստանդնուպոլիսը, ասպատակ սփռեց ու ավերեց նրա շրջակայքը և պաշարման ենթարկեց այն: Սակայն քաղաքի գրավման այս փորձը ևս ավարտվեց անհաջողությամբ, որովհետև բյուզանդական մայրաքաղաքը ուժեղ ամրացված քաղաք էր և առանց պաշարողական տեխնիկայի և ուժեղ նավատորմի, որն անհրաժեշտ էր ծովային շրջափակում իրականացնելու համար, անհնար էր այն գրավելը:

Պաշարված Կոստանդնուպոլսին օգնության հասավ ֆրանսիական մարշալ Բուսիկոյի նավատորմը, որը Դարդանելի մոտ ջախջախիչ պարտության մատնելով սուլթանի ռազմանավերին, դրանց հալածեց մինչև Բոսֆորի ասիական ափերը: Ի դեպ, այդ մարշալը Նիկոպոլիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կենդանի մնացած միակ մարդն էր, որն ընդունել էր սուլթանի մարտահրավերը կրկին հանդիպելու ռազմի դաշտում:

Այսպիսով, Բյուզանդիայի մայրաքաղաքը այս անգամ էլ փրկվեց թուրքերի գրավումից: Իր նպատակի իրագործումը թողնելով ապագային՝ այնուամենայնիվ Բայազիդը իր զորքերը թողեց Կոստանդնուպոլսի մատույցներում՝ այն ենթարկելով լայն օղակով շրջապատման:

Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման ձախողումից հետո Մանուիլ կայսրը մարշալ Բուսիկոյի հետ մեկնեց Եվրոպա, քրիստոնյա պետություններից օգնություն հայցելու նպատակով: Նա փառավոր ընդունելություն գտավ Իտալիայում, Ֆրանսիայում և Անգլիայում, սակայն տուն վերադարձավ դատարկ ձեռքերով: Այդ ուղևորության ժամանակ կայսրը համոզվեց, որ այլևս խաչակրաց արշավանք չի լինելու: Մինչդեռ Բյուզանդիայի մայրաքաղաքը արդեն վեց տարի գտնվում էր լայն օղակով շրջափակման վիճակում և մոտ էր սովամահ լինելու: Նրա բնակիչները պարաններով իջնում էին պատերից և գերի էին հանձնվում թուրքերին: Կայսերական գանձարանը լրիվ դատարկ էր: Քաղաքի բնակչությանը համակել էր հուսահատությունը, ամենուրեք թևածում էին դիմադրությունը դադարեցնելու և հանձնվելու տրամադրությունները:

Մինչդեռ Բայազիդը անընդհատ չոչափում էր մայրաքաղաքի պաշտպանունակության հնարավորությունները: Ռազմական գործողությունների դադարների ժամանակ սուլթանը իրեն տալիս էր զգայական հաճույքներին, զբաղվում էր հարբեցողությամբ ու սեռական սանձարձակությամբ հարեմի կանանց ու տղաների հետ:

3. ԼԵՆԿ ԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ՕՍՄԱՆՑԻՆԵՐԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԿՈՐԾԱՆԻՔ ՀԱՐՎԱԾԸ

Շուտով իրադարձությունները դասավորվեցին մի այնպիսի ձևով, երբ միաժամանակ Կոստանդնուպոլսի գրավումը դուրս էր գալիս Բայազիդ I-ի քաղաքականության առաջնահերթությունների ցանկից: XV դ. հենց արշալույսին օսմանյան պետության վրա կախվեց մի ահավոր սպառնալիք: 1402 թ. գարնանը հեղեղի պես Կենտրոնական Ասիայից Փոքր Ասիա ներխուժեցին մի նոր արևելյան բռնավորի՝ Լենկ Թեմուրի (Լանկ Թեմուր, եվրոպացիները նրան անվանում էին Թամերլան) հորդաները: Նրա անվան Լանկ նախդիրը նշանակում էր կաղ, իսկ Թամուր անունը երկաթ՝ թուրքերեն դամուր բառից: Լենկ Թեմուրը (1336-1405) սերում էր թուրքացած մոնղոլական բարլաս ցեղից, որը մտել էր Չինգիզ-խանի երկրորդ որդու՝ Չաղաթայի ուլուսի քայքայման հետևանքով կազմավորված Չաղաթայական պետության կազմի մեջ:

XIV դարի վերջին Թեմուրին հաջողվեց ստեղծել մի վիթխարի

կայսրություն: Նա իր առջև խնդիր էր դրել նաև Թուրք-օսմանների պետության ոչնչացումը: Թեմուրը ձգտում էր դառնալ աշխարհակալ, դա հիմնավորելով նրանով, որ «եթե երկնքում կա միայն մեկ Աստված, ապա երկրի վրա ևս պետք է լինի մեկ կառավարիչ»: Թեմուրը անօրինակ խիզախության, վիթխարի եռանդի, ղեկավարի ու զորահրամանատարի բացառիկ տաղանդով օժտված անձնավորություն էր: Նրա ստեղծած հզոր բանակը համարյա պարտություն չգիտեր: Իսկ նրա իշխանությունը բացարձակ էր, ոչ մի օրենքով չսահմանափակված: Թեմուրը վերին աստիճանի քչախոս ու լռակյաց էր, նվիրյալ մահմեդական: Արդարության մասին ուներ իր սեփական պատկերացումները: Իսկ ամենակարևորը ծրագրող ուղեղի տեր էր: Նա հաշվարկի ու պլանավորման մեծ վարպետ էր: Սիրում էր իր ժամանակն անց կացնել հսկայական չափերի հասնող ճատրակի սեղանի առջև: Նա իր մայրաքաղաքը դարձրեց Սամարղանդը, որտեղից կառավարում էր իր ընդարձակ կայսրությունը, որը տարածվում էր արևելքում մինչև Չինական մեծ պարիսպը, հյուսիսում՝ Ռուսաստանի տափաստանները, հարավում մինչև Գանգես գետն ու Պարսից ծոցը, արևմուտքում այն իր մեջ ներառում էր Իրանը, Հայաստանը, հասնելով մինչև Եփրատի ու Տիգրիսի վերին ակունքները, այսինքն մինչև Փոքր Ասիայի սահմանները: Դրանից արևմուտք տարածվում էր օսմանների ընդարձակ պետությունը: Բնական է, որ անզուսպ նվաճողական հակումներով տարված այդ երկու մրցակից պետությունների տիրակալները՝ Թեմուրը և Բայազիդը չէին կարող խաղաղ հարևաններ լինել: Անդրկովկասը նվաճելուց հետո Թեմուրը այնտեղից հարձակումներ էր գործում և ասպատակ սփռում Բայազիդի արևելյան տիրույթների նկատմամբ: Գնալով կողմերի միջև հարաբերությունները չիկանում էին: Խառնվածքով հպարտ ու տասը տարի շարունակ թշնամիների նկատմամբ միայն հաղթանակ տարած Բայազիդը տարված էր իր անպարտելիության պատրանքով, ուստի թերագնահատում էր իր թշնամուն: Թեմուրը և Բայազիդը փոխանակեցին մի քանի նամակներ, որոնցում չէին խորշում նաև միմյանց հասցնելու անձնական վիրավորանք: Թեմուրին ավելի խորը վիրավորանք ու կսկիծ պատճառելու նպատակով Բայազիդը նամակներում իր անունը գրում էր խոշոր ոսկյա տառերով, իսկ Թեմուրի անունը մանր սև տառերով: Այլևս պատերազմն անխուսափելի էր: 1386 թ. իր հերթական ասպատակություններից մեկի ժամանակ Երզնկայի (Էրզինջանի) մոտ Թեմուրը ջախջախեց անատոլիական բեյերի միացյալ զորքերին և 1387 թ. գրավեց Էրզրումը: Երզնկացի Գևորգ գրիչն այդ առթիվ գրում է.

«Յայսմն ժամանակի, յորում էր Թուական Հայոց ՊԼԶ (1387), ելաւ ազգն խուժադուժ յարևելից, ի կողմանոց հիւսիսոյ, որ կոչէր Լանկ Թամուր, և եկն մինչև յԱրզրում, և բազում ոճիրս գործեաց»:

1395 թ. Թեմուրը հասավ մինչև Սրվաս (Սեբաստիա)՝ իր ճանապարհին կործանելով ու ոչնչացնելով ամեն ինչ: Սեբաստիայում նա հրամայեց կենդանի թաղել չորս հազար գերված հայերի, որոնք մեծագույն խիզախությամբ քաղաքը պաշտպանում էին թշնամուց: Մնացած բնակիչներին Թեմուրի զինվորները անխնա սրի քաշեցին, չխնայելով ոչ կանանց, ոչ երեխաներին և ոչ էլ ծերերին: Սպանվածների թվում էր նաև Բայազիդի որդին՝ Էրթողրուլը, որը քաղաքը պաշտպանելու համար Թեսալիայում գտնվող իր հորից խնդրել էր օգնական զորքեր, սակայն այդպես էլ ոչ մի պատասխան չէր ստացել: Սրվասից Թեմուրը իր բանակը շարժեց դեպի արաբական հողերը և գրավեց Հալեպը, Դամասկոսը և Բաղդադը: Այս վերջին քաղաքը նա մինչև հիմք քանդեց ու ավերեց՝ քաղաքի պաշտպանների կտրված գլուխներից կառուցելով բուրգեր:

Առաջին անգամ հանդիպելով իր հետ հավասար հակառակորդի՝ Բայազիդը ցնցված ու չփոթված էր Սրվասի մոտ կրած պարտությունից: Այդ ծանր հարվածը անդամալուծել էր նրա կամքը: Սուլթանը ի վիճակի չեղավ իրեն հատուկ արագությամբ Թեմուրին հասցնել հատուցման պատասխան հարված, նա մատնվել էր անգործության:

Երբ Բայազիդ I-ի զորքերը գտնվում էին Կոստանդնուպոլսի պատերի տակ, նրա ռազմական ճամբարը ժամանեցին Թեմուրի դեսպանները՝ կտրուկ տոնով պահանջելով բյուզանդացիներին վերադարձնել թուրք-օսմանների կողմից նրանցից նվաճված բոլոր հողերը: Սուլթանը դրան պատասխանեց վիրավորական արտահայտություններով:

1402 թ. ամռանը Թեմուրը վերջնական որոշում կայացրեց իր բանակը շարժել օսմանցիների վրա և կործանիչ հարված հասցնել Բայազիդին: Տեղեկանալով նրա այդ որոշման մասին՝ Ջենովան և եվրոպական մի շարք այլ երկրներ սկսեցին դաշինք փնտրել Թեմուրի հետ: Անատոլիական բեյերը ևս, որոնք տարբեր պատճառներով հալածանքների էին ենթարկվել Բայազիդի կողմից կամ ունեզրկվել էին, անմիջապես վազեցին Թեմուրի մոտ, խնդրելով, որ նա վերականգնի իրենց նախկին իրավունքները:

1402 թ. ամռանը մի հսկայական բանակի գլուխ անցած Թեմուրը կրկին մուտք գործեց Փոքր Ասիա՝ այս անգամ նպատակ ունենալով վերջ տալ թուրք- օսմանների իշխանությանը: Տեղեկանալով այդ մասին՝ սուլթան Բայազիդը որոշեց իր բանակի հիմնական մասը նետել

Ասիա: Ամառային ահավոր չոգերի պայմաններում բանակը արևելք էր շարժվում անջուր Անատոլիական բարձրավանդակի վրայով, նպատակ ունենալով հասնել երկրի ճիշտ կենտրոնում գտնվող Անգորա ամրոցը: Բայազիդը Թշնամու դեմ հանեց 120-ից մինչև 160 հազարանոց մի բանակ: Դա մարտերում թրծված, բարձր կարգապահությամբ և մարտական վարպետությամբ աչքի ընկնող մի բանակ էր: Թեմուրի զորքերի թվաքանակի մասին հավաստի տեղեկություններ գոյություն չունեն: Սակայն անկասկած դա հսկայական մի բանակ էր: Թեմուրը ավելի լավ էր նախապատրաստվել այդ ճակատամարտին: Թշնամու ճամբարում գտնվող նրա լրտեսները ստույգ տեղեկություններ էին հաղորդում օսմացիների զորքերի տեղաբաշխման, նրանց շարժումների և բանակում տիրող ընդհանուր տրամադրությունների մասին:

Ուժասպառող չոգի պայմաններում բանակի երկարատև անցումների հետևանքով զինվորները ծայրահեղ հոգնած էին, սակայն Բայազիդը թույլ չէր տալիս հանգստանալ և վերականգնել իրենց ուժերը: Բանակի մարտական ոգու անկում էր նկատվում նաև այն պատճառով, որ սուլթանը չէր հրամայում բաց անել գանձարանը և վճարել աշխատավարձ: Կարգապահությունը ևս այլևս պատշաճ մակարդակի վրա չէր:

Բայազիդի զորահրամանատարները համաձայն չէին նրա առաջարկած անհապաղ ճակատ առ ճակատ Թշնամու հետ ճակատամարտի մեջ մտնելու պլանին: Նրանք համոզում էին սուլթանին, որ հակառակորդի խոշոր թվական գերակշռության պայմաններում անհրաժեշտ է նախ բանակը մի որոշ ժամանակ թաքցնել լեռներում, հանգիստ տալ զինվորներին և ստիպել Թեմուրին, որ բարձրավանդակում հյուծիչ տապի ու ջրի սակավության պայմաններում ուժեր վատնի օսմանների բանակը գտնելու համար: Սակայն Բայազիդը կտրականապես մերժեց այդ առաջարկը, վստահ լինելով իր բանակի անպարտելիության վրա:

Շրջակա տեղանքը գործնականում անջուր էր և Բայազիդի զինվորները հազարներով մեռնում էին ծարավից ու հոգնածությունից: Թեմուրը նախապես հրամայել էր քանդել կամ թունավորել թուրքական բանակի շարժման ճանապարհին գտնվող աղբյուրները և ջրհորները:

Մի քանի օր անց Բայազիդի հետախույզները տագնապալից լուր բերեցին, որ սրընթաց անցում կատարելով, Թեմուրն անցել է օսմանյան բանակի թիկունքը և պատրաստվում է հարված հասցնել այնտեղից:

Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Անգորայի (ներկա-

յումս Անկարա) մոտ 1402 թ. հուլիսի 25-ին: Մարտը սկսվեց վաղ լուսաբացին: Թեմուրի բանակի առաջին շարքերում կային երեսուն մարտական փղեր, որոնք օսմանյան զորքերի վրա թողեցին ցնցող տպավորություն: Ճակատամարտին որպես զորահրամանատարներ մասնակցում էին նաև Բայազիդի երեք որդիները՝ Սուլեյմանը, Մեհմեդը և Մուսան, ինչպես նաև սուլթանի աներորդի Ստեֆան Լազարևիչը իր սերբական զորամասերի հետ: Օսմանյան բանակի կենտրոնը զբաղեցրել էր ինքը՝ Բայազիդը, գլխավորելով ենիչերիական զորամասերը: Նա ծանր մարտական կացինը ձեռքին, վկայում է թուրք տարեգիրը, կռվում էր անվեհեր խիզախությամբ: Ճակատամարտը վերին աստիճանի համառ էր ու տևական: Թեև օսմանցիները կռվում էին աննկուն համառությամբ, սակայն ի վերջո մեծ կորուստներ տալով ընկրկեցին: Երբ օսմանյան բանակը համարյա լրիվ ջախջախված էր, սուլթանը փորձեց փախուստի միջոցով փրկել իր կյանքը: Սակայն հակառակորդի զինվորները հասան նրա հետևից, ձիուց ցած գցեցին և կապկպելով տարան Թեմուրի վրանը, որտեղ նա հանգիստ նստած ճատրակ էր խաղում իր որդու հետ: Բայազիդի հետ գերի ընկան նաև նրա որդիները:

Թեմուրը սկզբում սուլթանին արժանացրեց պատիվների որպես ինքնակալի, սակայն հետագայում սկսեց նվաստացնել նրան որպես գերու: Անատոլիան անցնելու ժամանակ նրան տանում էին մետաղյա վանդակի մեջ: Առկա են բազմաթիվ առասպելներ, թե ինչպես էր Թեմուրը նվաստացնում Բայազիդին. իբր գիշերները նրան պահում էին չղթայակապ վիճակում, որ իբր նա Թեմուրի համար ծառայում էր որպես հենակ ձի նստելու համար, որ գրավելով Բայազիդի հարեմը, Թեմուրը նվաստացնում էր նրա կնոջը՝ սերբուհի Դեսպինային, նրան ստիպելով, որ ամուսնու ներկայությամբ մերկ վիճակում իրեն մատուցի կերակուրներ: Այդ նվաստացումներն ու տառապանքները կոտրեցին Բայազիդին: Ութ ամիս հետո նա մահացավ կաթվածից (1403 թ.): Մեկ այլ վարկածի համաձայն՝ տեղեկանալով, որ Թեմուրը մտադիր է իրեն տանել Սամարղանդ՝ թույն ընդունելով ինքնասպան եղավ Ակչեհիր քաղաքում: Մեռնելու ժամանակ սուլթանը 44 տարեկան էր: Նրա մարմինը հանձնվեց իր Մուսա որդուն, որպեսզի նա տանի Բուրսա թաղելու համար:

Բայազիդ I-ի մահով փակվում էր օսմանյան պետության պատմության ձևավորման ու զարգացման մի կարևոր փուլը: Բայազիդը առաջին սուլթանն էր, որը սկսեց վարել օսմանյան պետությունը կենտրոնացնելու քաղաքականություն: Նրա օրոք զգալի փոփոխություններ տեղի ունեցան պետության պետական ու սոցիալական կա-

ռուցվածքում: Որպես պետական գործիչ Բայազիդ I-ը անկանխատեսելի էր իր արարքներում: Բնությունը նրան չէր օժտել համբերատարությամբ, նա վերին աստիճանի իմպուլսիվ էր ու բռնկուն: Սակայն օժտված էր վիթխարի եռանդով և ուներ ընդունակ զորահրամանատարի բոլոր հատկանիշները: Միաժամանակ նա գերի էր զգացական հաճույքների, հաճախ իրեն տալով հարբեցողության և սանձարձակ անառակության հարեմի կանանց ու պատանիների հետ: Ժամանակակիցները նրան ներկայացնում են նաև որպես կրոնասեր անձնավորություն:

Թեմուրի բանակը սկսեց ասպատակ սփռել ողջ Փոքր Ասիայում: Նախ ավերեցին ու կողոպտեցին Կոնիան, այնուհետև գրավեցին Բուրսան, քաղաքի մզկիթները վերածեցին ախոռների, կողոպտեցին ու կրակի մատնեցին համարյա ողջ քաղաքը, իրենց հետ տանելով բոլոր երիտասարդ կանանց ու աղջիկներին: Դենիզլի քաղաքը ևս մատնելով նույն ճակատագրին, այնուհետև Թեմուրը իր բանակը շարժեց դեպի Իզմիր, որը գտնվում էր Հոոդոսի քրիստոնյա-ասպետների տիրապետության տակ: Գրավելով քաղաքը՝ նա ասպետներին դատապարտեց տաժանակրության՝ նավերի վրա թիավարելու, ովքեր պիտանի չէին դրա համար, հրամայեց գլխատել և կտրված գլուխներից կառուցել բուրգ: Իսկ քաղաքի ողջ բնակչությունը սրի քաշվեց: Թեմուրի բանակը հրով ու սրով անցավ Փոքր Ասիայով, ամայացնելով ամբողջ շրջաններ, ավերելով չատ քաղաքներ՝ գերի վերցնելով կամ ոչնչացնելով հազարավոր բնակիչների: Վկայելով այդ մասին, բյուզանդացի պատմիչ Դուկան գրում էր. «Տեղաշարժվելով քաղաքից քաղաք, նա (Թեմուրը – Վ. Բ.) այն աստիճանի ավերածության էր մատնում երկիրը, որ այժմ արդեն չէր լսվում ոչ չան կաղկանձ, ոչ աքլորի կանչ, և ոչ էլ մանկան լաց: Ինչպես որ ձկնորսը ջրի խորքերից ցամաք է դուրս քաշում իր ուռկանը, որսալով այն ամենը, ինչ ընկնում է նրա մեջ, այնպես էլ նա ամայացրեց ողջ Ասիան»: Արևմտյան Հայաստանում Լենկ Թեմուրի հրոսակները անլուր տառապանքներ պատճառեցին հայ ժողովրդին: 1388 թ. գրված ձեռագրի մի հիշատակարանում Որդի Ալեքսանի գրիչը գրում է. «... Զոմանս գերեաց, և զոմանս գահավիժեաց, և զայլս ի սուր սուսերի մաչեաց և զերկիրն հրով ճարակեաց»: Հայկական աղբյուրներում Թեմուրին համեմատում են Նեռի հետ. «Զտղայսն առաթուր ձիոց առնէին, զկանայսն խայտառակէին, զմանկունս նոցին, գերի վարէին, իբրև զկալ կամնասայլից զտղայսն ձիովք կասէին, և փոխան ցորենոյ արիւնս գետոց բղխէին, և փոխանակ յարդի զոսկերս իբրև զփոշի յերկիր հոսէին»,– ասվում է ձեռագիր հիշատակարաններից մեկում:

Երբ Թեմուրի բանակը մոտեցավ Փոքր Ասիայի աննչան քաղաքներից մեկին, քաղաքի մանուկները Ղուրանը ձեռքներին կարդալով բռնավորի դիմացն ելան: Երբ նա տեղեկացավ, որ մանուկները գալիս են իր գութը շարժելու համար, հրամայեց իր հեծելազորին ոտնակոխ անել այդ անմեղ մանուկներին:

Թեմուրը առաջ չշարժվեց դեպի Եվրոպայում քրիստոնեական պետությունների տիրույթները: Նրա արշավանքը չդիպավ նաև օսմանյան սուլթանների բալկանյան տիրույթներին:

Բռնավորը մտադրություն չուներ հիմնավորվելու Փոքր Ասիայում: Նա այնտեղ մնաց ընդամենը չորս տարի: 1403 թ. մեկնեց Սամարղանդ, որպեսզի այլևս երբեք հետ չվերադառնա: Սակայն մինչև իր հեռանալը, նա օսմանյան պետությունը տրոհեց ու մասնատեց առանձին մասերի, որպեսզի այն կորցնի զորավոր ուժային կենտրոնի իր նշանակությունը: Աշխարհակալության մոլուցքով տարված Թեմուրը պատրաստվում էր ընկճել Չինաստանը, սակայն չինական արշավանքի ճանապարհին՝ 1405 թ. նա մահացավ, իրենից հետո թողնելով կատարյալ քաոս: Նա Փոքր Ասիայից բռնագաղթի ենթարկեց և իր մայրաքաղաք Սամարղանդ տարավ հազարավոր գերիներ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում արհեստավորները: Թեմուրի արշավանքի կապակցությամբ տեղի ունեցան նաև գաղթային շարժումներ: Այսպես, օրինակ, քոչվոր կարաթաթարները Փոքր Ասիայից Թեմուրի հետ գնացին Միջին Ասիա, իսկ թյուրքական մի շարք ցեղեր Անատոլիայից փոխադրվեցին Ռումելիա:

4. ***ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱԿԱԾ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԼԵՆԿ ԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ՀԵՏՈ ԵՎ ՆՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ***

Օսմանցիների ջախջախիչ պարտությունից հետո կենտրոնացված օսմանյան պետությունը 11 տարի ժամանակավորապես դադարեց գոյություն ունենալուց: Փոքր Ասիայից հեռանալուց առաջ Թեմուրը վերականգնեց անատոլիական Այդին, Գերմիյան, Կարաման, Համիդ, Սարուխան, Մենթեշե և Թեքե բեյությունների ինքնուրույնությունը: Անատոլիայի արևելքում ստեղծվեցին թյուրքական քոչվոր ցեղերի նոր պետական կազմավորումներ, որոնք անընդմեջ ասպատակություններ էին կազմակերպում դեպի Իրանի և Անդրկովկասի տարածքը: Իսկ այն երկրամասերը, որոնք Թեմուրը հնարավոր համարեց թողնել Օսմանի դինաստիային, բաժանեց Բայազիդի չորս որդիների միջև (Բայազիդն ուներ վեց որդիներ), դրանով իսկ դուռ բացելով նրանց միջև մեկ տասնամյակից ավելի տևած արյունահեղ երկպա-

ռակությունների և եղբայրասպան պատերազմների համար: Երեք որդիները տիրույթներ ստացան Փոքր Ասիայում, իսկ չորրորդ որդուն՝ Սուլեյմանին, որը Բայազիդի ավագ որդին էր, բաժին հասավ օսմանցիների եվրոպական տիրույթները: Նա հիմնավորվեց իր հոր մայրաքաղաքում՝ Էդիրնեյում՝ հավակնելով սուլթանի կարգավիճակին: Գահի նկատմամբ իր հակառակորդների դիմադրությունը կոտրելու նպատակով նա փորձում էր ապավինել բյուզանդական կայսր Մանուիլ II-ի աջակցությանը: Սուլեյմանը կայսրին վերադարձրեց Թեսաղոնիկեն և Թրակիայի մի շարք այլ քաղաքներ և նույնիսկ խոստացավ ապագայում վերադարձնել նաև բյուզանդական մյուս ասիական տիրույթները, որոնք այդ պահին գտնվում էին իր ախոյան եղբայրների հսկողության ներքո: Կայսրը հաճույքով ընդառաջ գնաց Սուլեյմանի խոստումներին և որպեսզի ամրապնդի նրա հակումը դեպի Բյուզանդիայի հետ համագործակցությունը, նրան կնության տվեց իր եղբոր աղջկան: Իր հերթին Սուլեյմանը որպես պատանդ Կոստանդնուպոլիս ուղարկեց իր կրտսեր եղբայր Ղասեմին: Բացի այդ, Սուլեյմանը համաձայնություն էր կնքել նաև սերբերի, Ջենովայի, Վենետիկի և Հոոդոսի ասպետների հետ, որոշ զիջումներով գնելով նրանց չեզոքությունը, իսկ Հոոդոսի ասպետներին խոստանալով վերադարձնել Սալոնիկի նավահանգիստը:

Իսկ Բայազիդի մյուս որդի Մուսան, որը թեև հանդես էր գալիս որպես դաղիների գործի շարունակող և «անհավատների դեմ պայքարի մարտիկ», նույնպես իր համար դաշնակիցներ էր փնտրում քրիստոնեական պետությունների շրջանում: Օրինակ, նա աջակցություն էր ստանում վալախական գոսպոդար Միրչա Ծերուկից (1386–1418): Դրա փոխարեն Մուսան ազատել էր վալախներին հարկ վճարելու պարտավորությունից և թույլ էր տվել, որ Միրչան իր տիրույթներն ընդարձակի անդրդանուբյան մի շարք ամրոցների հաշվին: Բացի այդ, Բալկաններում Մուսան հենվում էր նաև աքընջիների ու նրանց բեյերի վրա:

Հատկանշական է, որ պայքարը այս կամ այն հավակնորդի տիրապետությունը հաստատելու համար մղվում էր ամենից առաջ օսմանյան պետության եվրոպական շրջաններում: Հետևաբար, հենց այդ շրջաններն էին դարձել օսմանյան իշխանության գլխավոր հենարանը: Անչուշտ, ներդինաստիական պայքարը պարզապես առանձին անհատների պայքար չէր: Դա ակնհայտ վկայություն էր այն իրողության, որ պետության մեջ սրվել են սոցիալական և այլ բնույթի հակասությունները: Բայազիդի որդիները ստիպված էին հենվել այս կամ այն խմբավորման վրա, որոնք աջակցելով գահի տվյալ հավակնորդին, անկասկած հետապնդում էին սեփական շահեր: Սուլեյմա-

նին, օրինակ, սկզբում, աջակցում էին օսմանների եվրոպական տիրույթների խոշոր բեյերը: Ավելի ուշ նա հենվում էր ենիչերիների և մի շարք վասալական քրիստոնյա իշխանների վրա, որոնք փորձում էին այդ ճանապարհով հետ վերադարձնել նախկինում իրենց պատկանած հողերի գեթ մի մասը: Այսպիսով, մասնատված կայսրության տարածքը փաստորեն բաժանվել էր երկու մասի՝ Եվրոպայի և Անատոլիայի միջև:

Եղբայրների միջև բորբոքված պայքարը վերին աստիճանի դաժան էր և անողոք: Գթասրտությունը կամ ներողամտությունը այդ պայքարում տեղ չուներ: Յուրաքանչյուրը պայքարում էր իր տիրույթների ընդարձակման համար մյուսի հաշվին: Մարտի դաշտում Սուլեյմանը երեք անգամ ջախջախեց իր եղբայրներից ևս մեկին՝ Իսային, որին աջակցում էին Սարուխանի և Մենթեշեի բեյերը: Ի վերջո 1405 թ. նա գերի ընկավ եղբոր ձեռքը և Սուլեյմանը սառնասրտորեն սպանեց նրան: 1408 թ. Սուլեյմանին հաջողվեց ջախջախել նաև իր մյուս եղբորը՝ Մուսային: Այդ արյունահեղ ճակատամարտը տեղի էր ունեցել Կոստանդնուպոլսի մերձակայքում 1405 թ.:

Սակայն այդ հաջողությունները ի վիճակի չեղան կայուն կերպով ամրապնդելու Սուլեյմանի դիրքերը և նրան բերելու վերջնական հաղթանակ: Աստիճանաբար նա զրկվեց տեղական թուրք բեյերի աջակցությունից, և ամենից առաջ ժամանակի առավել հզոր բեյական ընտանիքներից մեկի՝ Զանդարլը ընտանիքի աջակցությունից: Միաժամանակ իրեն տալով հարբեցողության՝ Սուլեյմանը հաճախ լքում էր պետական գործերը: Ի վերջո նա կորցրեց իր հեղինակությունը ոչ միայն բանակում, այլև իր մերձավորների շրջանում: Նրա եղբայրը՝ Մուսան, հիանալի օգտագործեց այդ հանգամանքը: Նա վարպետ քարոզչությամբ վարկաբեկեց Սուլեյմանին նրա բյուզանդամետ քաղաքականության և «սրբազան հավատի հիմքերից հեռանալու» մեղադրանքով: Այդ բոլորի հետևանքը եղավ այն, որ Սուլեյմանի զորքերը սկսեցին աստիճանաբար լքել իրեն և անցնել Մուսայի կողմը: Զգալով իր վիճակի վտանգավորությունը՝ 1409 թ. Սուլեյմանը փորձեց փախուստի միջոցով փրկել իր կյանքը և ապաստան գտնել բյուզանդական մայրաքաղաքում: Սակայն բռնվեց և 1410 թ. սպանվեց արյունակից եղբոր կողմից: Սուլթանական գահը անցավ Մուսային (1409), որն իր նստավայր ընտրեց Էդիրնեն:

Մուսան իշխանության գլուխ անցավ որպես դաղիների գործի չարունակող: Քաջ գիտակցելով իր վիճակի հեղհեղուկությունը՝ Մուսան փորձում էր իր համար ստեղծել կայուն սոցիալական հենարան, մեղմացնել պետության կենտրոնական վարչության և սահմանակից շրջան-

ների բեյերի միջև եղած հակասությունները, մրցակցող կողմերին չնորհելով զանազան արտոնություններ և իրավունքներ: Էդիրնեում Մուսան բեյլերբեյ նշանակեց մահմեդականացած հույն Միխալ օղլի հայտնի ընտանիքի ներկայացուցիչներից մեկին:

Մուսային առանձնապես անհանգստացնում էր պետության զինվորական խավի մեջ տեղ գտած սուր հակասությունները, որոնք գնալով ընդունում էին սպառնալից բնույթ: Հատկապես պայթյունավտանգ իրադրություն էր ստեղծվել նախկին զինվորական ստորաբաժանումների՝ այսպես կոչված յայաների և մյուսելլեմների մի կողմից, և ենիչերիների և թիմարիոթական հեծելազորի՝ սիփահիների միջև սուր առճակատման հետևանքով: Նրանց միջև պայքարը գնում էր թիմարների և նրանցից ստացվող եկամուտների չուրջը, հետևաբար նաև պետության մեջ դիրքեր ձեռք բերելու չուրջը: Այդ սուր խնդիրը լուծելու համար Միխալ օղլին և Մուսայի կողմից նշանակված կադիասկեր չեյխ Բեդր-էդ-դինը սկսեցին թիմարներ չնորհել աքընջիների՝ իրենց ավելի մոտ կանգնած ներկայացուցիչներին, ընդ որում այդ թիմարները տրվում էին ոչ թե սահմանամերձ մարզերում, այլ Ռումելիայի ներքին, ավելի անվտանգ շրջաններում: Մուսայի չուրջը համախմբեցին նախկին յայաները, մյուսելլեմները, աքընջիները, այսինքն՝ ցեղային զինվորականության բոլոր այն խավերը, որոնց շահերը չոչափվում էին ենիչերիական զորաբանակի ու թիմարային հեծելազորի ստեղծմամբ:

Մյուս կողմից Մուսայի օրոք տեղի ունեցավ ռազմատենչ խալամիզմի տրամադրությունների պոռթկում: Ռումելիայի քրիստոնյա բնակչության նկատմամբ ծայր առան դաժան հալածանքներ:

Մուսան կարողացավ իր գահը պահպանել ընդամենը չորս տարի: Հետևելով իր նախորդների ավանդույթին, այդ ընթացքում նա ավերիչ արշավանք կազմակերպեց դեպի Սերբիայի հողերը, բյուզանդացիներից խլեց ու ավարի մատնեց Թեսաղոնիկեն: Այդ քաղաքի պաշտպանների մեջ էր նաև Սուլեյմանի որդի Օրխանը, որը գերի ընկավ հաղթողների ձեռքը: Մուսան հրամայեց նրան կուրացնել: Առժամանակ անց, հավաքելով մի խոշոր բանակ, Մուսան որոշեց գրավել Կոստանդնուպոլիսը: Երբ 1411 թ. նրա զորքերը մոտեցան քաղաքին, Մանուիլ II կայսրը որոշեց օգնության խնդրանքով դիմել Մուսայի կրտսեր եղբորը՝ Մեհմեդին, որը հասցրել էր ամրապնդել իր դիրքերը Անատոլիայում:

Կարգավորելով իր գործերը Անատոլիայում՝ Մեհմեդը զինված պայքար սկսեց Մուսայի դեմ: Նրան հաջողվեց զանազան խոստումների միջոցով իր կողմը գրավել եղբոր զորահրամանատարներից ու

մերձավորներից մի քանիսին, որոնք սկսեցին գաղտնապես համագործակցել իր հետ: Իսկ Թեսալիայի Թուրքական տեղապահը բացահայտ կերպով անցավ Մեհմեդի կողմը:

Այդ բոլորից հետո Մեհմեդը որոշեց իր հարվածն ուղղել ուղղակի Մուսայի մայրաքաղաքի՝ Էդիրնեի վրա:

Երբ նրա զորքերը մոտեցան քաղաքին, այն պաշտպանող զորամասը հրաժարվեց քաղաքը հանձնել: Քանի որ նրա պաշարումը կտևեր երկար ժամանակ, Մեհմեդը փոխեց իր ռազմական գործողությունների պլանը: Ի վերջո, 1413 թ. երկու եղբայրները հանդիպեցին Մարիցա գետի հովտում: Ճակատամարտը կատաղի էր: Մուսայի զորքերը գլխովին ջախջախվեցին: Պատերազմի դաշտում Մուսան կորցրեց իր ձեռքը և փախուստի դիմեց դեպի Վալախիա, որտեղ չուտով մահացավ: Մեկ այլ վարկածի համաձայն, նա գերի ընկավ եղբոր մոտ և վերջինիս հրամանով նրան սպանեցին:

Այսպիսով, 1413 թ. օսմանյան գահի վրա հաստատվեց Մեհմեդ I (1413–1421) Չելեբին: Վերջինս իր կառավարման ընդամենը ութ տարիների ընթացքում կարողացավ օսմանյան պետությունը դնել կայուն հիմքերի վրա, նրան վերադարձնելով նախկին միասնությունն ու հզորությունը այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ նրա վերացումը թվում էր անխուսափելի: Նոր սուլթանը իր կառավարման առաջին տարիներին զբաղված էր ներքին խռովությունների ու ապստամբությունների ճնշման, մասնավորապես Դյուզմե Մուստաֆայի և չեյխ Բեդր-էդ-դինի կողմից ղեկավարվող շարժումները ջախջախելու գործով: Այդ դժվարին խնդիրը գլուխ բերելու համար նա ստիպված էր հենվել բեյական խոշոր տոհմերի (Զանդարլը, Էվրենոս-օղուլլարը և այլն) վրա և ավելի մեծ ինքնուրույնություն տալ նրանց: Սուլթանական զորքերի հետ ճակատամարտերից մեկի ժամանակ Բեդր-էդ-դինը պարտություն կրեց: Ճակատամարտի դաշտում նրան գերի վերցրին և հոգևոր դատարանի կողմից 1416 թ. դեկտեմբերին նա դատապարտվեց մահվան կախաղանի միջոցով: Երկրի ներսում ապահովելով հարաբերական հանգստություն, Մեհմեդ I-ին հաջողվեց վերականգնել օսմանցիների տիրապետությունը Ռումելիայում, այսինքն Թրակիայում և Մակեդոնիայի մի մասում, ինչպես նաև Անատոլիայում: 1415 թ. անատոլիական համարյա բոլոր բեյլիքներում արդեն վերականգնված էր օսմանների իշխանությունը: Միայն ամենախոշոր բեյությունը՝ Կարամանը, կարողացավ պաշտպանել իր անկախությունը և 1415 թ. Մեհմեդը ստիպված էր նրա բեյ Ջունեյդի հետ կնքել հաշտություն, ճանաչելով նրա իրավունքները:

Նոր սուլթանը աշխատում էր խաղաղ հարաբերություններ պահպանել Բյուզանդիայի հետ: Նա նույնիսկ համաձայնվեց կայսրին վերադարձնել Թեսաղոնիկեն և մի շարք այլ քաղաքներ, որոնք ժամանակին խլվել էին Մուսայի կողմից: Նա մեծագույն եռանդով սկսեց ամրացնել իր պետության սահմանները, սահմանամերձ ռազմավարական նշանակություն ունեցող շրջաններում կառուցել ամրոցներ և այլն:

Մեհմեդ I-ը հանդգնություն ունեցավ նաև ծովային պատերազմի մեջ մտնել վենետիկցիների հետ, որոնք անզուսպ ձգտում էին դրսևորում կատարելու հողային զավթումներ: 1416 թ. սկսված թուրք-վենետիկյան պատերազմը հիմնականում ընթանում էր ծովերի վրա: Այդ պատերազմը վերստին ցուցադրեց թուրքական նավատորմի թուլությունը: Դարդանելի մոտ տեղի ունեցած ճակատամարտում վենետիկցիները ջախջախիչ հարված հասցրեցին թուրքերին, գրավելով նրանց 25 ռազմանավեր: Վենետիկյան նավատորմի հրամանատար Լորեդանոն հրամայեց նավերի առագաստափայտերից կախել գերի ընկած թուրքական նավերի անձնակազմի անդամներին: Վենետիկցիների հետ պատերազմում օսմաններին չհաջողվեց ձեռք բերել որևէ հաջողություն և ի վերջո սուլթանը հարկադրված էր նրանց հետ կնքել հաշտություն:

1421 թ. դեկտեմբերին իր նստավայր Էդիրնեում Մեհմեդ I Չելեբին կաթվածահար եղավ և 33 տարեկան հասակում մահացավ: Նրա մերձավորները՝ վեզիր Իբրահիմ փաշան և Բայազիդ փաշան քառասուն օր չարունակ գաղտնի էին պահում նրա մահը, սպասելով, որ Ամասիայից մայրաքաղաք կժամանի նրա ժառանգորդը՝ Մուրադ անունով որդին: Վերջինս ստանձնեց օսմանյան գահը՝ ընդունելով Մուրադ II գահակալական անունը (1421-1444 և 1446-1451):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ XV ԴԱՐՈՒՄ ԵՎ XVI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. *ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ ՄՈՒՐԱԴ II-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ*

Տասնութ տարեկան հասակում ստանձնելով գահը, Մուրադ II-ը ստիպված էր պայքարել բազում հակառակորդների դեմ, որոնց թվում էին ինչպես իր եղբայրները, այնպես էլ ապստամբ ու անհնազանդ տարրերը: Դրանցից ամենավտանգավորը ոմն Դյուզմե Մուստաֆան էր: Վարկած կա այն մասին, որ նա սուլթան Բայազիդի որդին էր, որը չէր զոհվել Անկարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Մեկ այլ վարկածով նա ինքնակոչ մեկն էր, որն իրեն ներկայացնում էր որպես սուլթան Բայազիդի որդի Մուսթաֆա: Այսպես թե այնպես Մուստաֆան կարողացավ ձեռք բերել մի չարք ազդեցիկ դաշնակիցներ, որոնց թվում էին առանձին տեղական բեյեր, Բյուզանդիայի կայսրը, Վալախիայի գասպոդարը և Իզմիրի նախկին բեյ Ջունեյդը, որը հետագայում դարձել էր Նիկոպոլիսի (Թուրքերեն Նիկերոլու) սանջակբեյը: Մուստաֆան սկսեց բացահայտ հավակնություն ներկայացնել օսմանյան գահի նկատմամբ: Կողմերի միջև առճակատումը հասավ այնպիսի սրության, որ կարիք ուներ սրի ներկայության: Բախումը տեղի ունեցավ Բուրսայից ոչ հեռու գտնվող Ուլաբադ գետի ափին, 1422 թ. գարնանը: Ճակատամարտի նախօրյակին Մուստաֆան տեղեկանում է, որ իր կողմնակից բեյերից մի քանիսը մտադիր են իրեն դավաճանել, ուստի փախուստի է դիմում: Ճակատամարտը տեղի է ունենում առանց նրա մասնակցության և ավարտվում է Մուստաֆայի զորքերի գլխովին ջախջախումով: Մուստաֆային ձերբակալելու և պատժի ենթարկելու համար Մուրադ II-ը նրա հետևից ուղարկում է մի հատուկ ջոկատ, որին հաջողվում է ձերբակալել խռովարարին և ներկայացնել սուլթանի դատաստանին:

1422 թ. սուլթանը հրամայում է նրան կախաղան բարձրացնել Էդիրնեի հրապարակներից մեկում, միաժամանակ կարգադրելով, որ խռովարարը երկար ժամանակ մնա կախված ի սարսափ իր բոլոր թշնամիների:

Մուստաֆայի ապստամբությունը ոգեշնչել էր Արևմտյան Անատոլիայի այն բոլոր բեյերին, որոնք կորցրել էին ինքնուրույնությունը: Կրկին գլուխ էին բարձրացրել նաև անսանձ տարրերը: Ողջ 1424–1426 թթ. ընթացքում Մուրադ II-ը զբաղված էր նրանց հնազանդեցման գործով: Դա իրականացվում էր անողոք դաժանությամբ: Խոշոր խռովարարները, ինչպես օրինակ Ջունեյդը, սուլթանի կողմից դատապարտվում էին տանջալից մահվան: Այդին, Մենթեշե, Գերմիյան, Սարուխան և Համիդ բեյություններում վերստին վերականգնվեց օսմանյան դինաստիայի իշխանությունը, սակայն Կարաման բեյլիքը համառորեն դիմադրում էր:

Անատոլիայում վերահաստատելով հարաբերական խաղաղություն՝ սուլթան Մուրադ II-ը որոշեց փորձել իր ավարտին հասցնելու Բյուզանդական կայսրության խորտակման գործը, որն այդ ժամանակ ապրում էր հոգեվարքի ջղաձգումների մեջ: Ստեղծվել էր մի վիճակ, երբ կայսեր իշխանությունը տարածվում էր լոկ Կոստանդնուպոլսի և նրա շրջակա ոչ մեծ տարածքների վրա: Թվում էր, թե երբեմնի հզոր այդ կայսրությունը այլևս հայտնվել է անդունդի եզրին և դատապարտված է կործանման: Բյուզանդական մայրաքաղաքի գրավումով սուլթանը ձգտում էր ոչ միայն բարձրացնել օսմանյան պետության հեղինակությունը ողջ իսլամական աշխարհում, կործանել արևելյան քրիստոնեության այդ միջնաբերդը, այլև ստիպել Եվրոպային մեկ անգամ ընդմիշտ հրաժարվելու խաչակրաց նոր արշավանքների գաղափարից: Սուլթանը գիտակցում էր նաև, որ Կոստանդնուպոլիսը իր աշխարհագրական դիրքով, ռազմավարական նշանակությամբ և Արևելքի ու Արևմուտքի միջև միջազգային առևտրի իր կարևորագույն դերով առաջնակարգ նշանակություն ունի օսմանյան պետության ապագայի առումով:

1422 թ. հունիսին սուլթանը մեծ զորաշարժ կատարեց դեպի Կոստանդնուպոլիս և պաշարեց քաղաքը: Մայրաքաղաքի պատերը և պաշտպանողական ամրությունները խորտակելու համար թուրքերը առաջին անգամ օգտագործեցին հրետանի և շարժական աշտարակներ: Նրանք չէին կարող ծովի կողմից ևս շրջափակել քաղաքը, քանի որ իրենց տրամադրության տակ չունեին բավարար թվով ռազմանավեր: Օգոստոսի 22-ին Մուրադ II-ը իր զորքերը նետեց գրոհի: Բոր-

բոքվեց դաժան ու արյունահեղ ճակատամարտ, ընդ որում մի այնպիսի ժամանակ, երբ Մանուիլ II կայսրը գտնվում էր մահամերձ վիճակում:

Հույները հերոսաբար պաշտպանվում էին, դրսևորելով անօրինակ խիզախություն, անձնվիրություն և ամենակարևորը կազմակերպվածություն: Պաշտպանությանը մասնակցում էին նույնիսկ կանայք, երեխաները և դեռահաս պատանիները: Նրանց բոլորի առջև դրված էր կյանքի և մահու խնդիր:

Համոզվելով, որ իրեն չի հաջողվելու գրավել բյուզանդացիների մայրաքաղաքը, Մուրադ II-ը հանեց քաղաքի պաշարումը, առավել ևս, որ Անատոլիայից գալիս էին վատ լուրեր: Այնտեղ կրկին գլուխ էին բարձրացրել Կարամանի և Գերմիյանի անհնազանդ բեյերը: Միաժամանակ սուլթանի կրտսեր եղբայրը՝ Քյուչյուք Մուստաֆա Զելեբին, Գերմիյանի և Կարամանի բեյերի հրահրումով ապստամբել էր եղբոր գահը հափշտակելու հույսով: Նրա մեծաթիվ զորքերը մրրիկի նման անցնելով մի վայրից մյուսը, պետության ասիական շրջանները տակն ու վրա էին անում:

Կչռադատելով ստեղծված իրավիճակը՝ սուլթանը որոշեց դադարեցնել Կոստանդնուպոլսի գրավման ուղղությամբ կատարվող քայլերը և հաշտության ձեռք մեկնել բյուզանդացիներին: Այդ գործը հեշտանում էր նրանով, որ Մանուիլ II-ը կնքել էր իր մահկանացուն և գահ էր բարձրացել նրա ժառանգորդ Հովհաննես VII Պալեոլոգոսը: Հենց նրա հետ էլ Մուրադը կնքեց հաշտություն, պարտավորություն տալով, որ ինքը հավակնություններ չի ներկայացնելու Կոստանդնուպոլսի նկատմամբ: Ազատելով իր ձեռքերը՝ Մուրադը իր ողջ ուժերը նետեց դեպի Անատոլիա անհնազանդ տարրերին ընկճելու համար: Անշուշտ հիմնական նպատակը Կարամանների բեյությունն էր: Պարտության մատնելով այդ բեյլիքին, Մուրադը, սակայն, նրա հետ կնքեց պայմանագիր, որով պահպանվում էր բեյության վասալական ստատուսը՝ առանց այն միացնելու օսմանյան պետությանը: Սուլթանը հարկադրված էր գնալ նման զիջման, համոզվելով, որ պարտություն կրած Կարաման բեյլիքը ի վիճակի է օսմանցիների դեմ մղելու անվերջանալի լեռնային պարտիզանական պատերազմ:

Իր իշխանությունը անատոլիական բեյլիքներում վերականգնելուց հետո Մուրադ II-ը լայնամասշտաբ ավազակային արշավանք կազմակերպեց դեպի Հյուսիսային Հունաստանի և Պելլոպոննեսի տարածքները, նպատակ ունենալով հարուստ ռազմական ավարի միջոցով գոհացում տալ դժգոհության նշաններ ցուցաբերող իր զինվորներին: Այնուհետև նա սրընթաց արշավով իր զորքերը տեղափոխեց

Ռումելիա: Այսպիսով, ծայր առավ Հարավ-Արևելյան Եվրոպայում Թուրքական նվաճումների մի նոր շրջան: 1424 թ. բյուզանդական կայսրը ստիպված էր իրեն ճանաչել որպես սուլթանի հարկատու: 1430 թ. Մուրադ II-ի զորքերը կրկին գրավեցին Էգեյան ծովում բյուզանդացիների խոշոր նավահանգստային քաղաք Թեսաղոնիկեն (Սալոնիկ), որը կայսրը վաճառել էր Վենետիկի հանրապետությանը: 1431 թ. գավթեցին Յանինան Էպիրում և այն բնակեցրին Թուրքերով: Օսմանյան ահավոր վտանգը ամբողջ հասակով մեկ կրկին ցցվում էր Եվրոպայի առջև: Սակայն եվրոպական պետությունների միջև եղած խորը հակասությունները և պառակտումները թույլ չէին տալիս նրանց միավորելու իրենց ուժերը ընդդեմ օսմանցիների վերելք ապրող նվաճողականության: Իսկ երբեմն նույնիսկ իր հակառակորդին ծնկի բերելու համար, այս կամ այն պետությունը դաշինքի մեջ էր մտնում Թուրքերի հետ:

Այնուամենայնիվ օսմանցիների ներխուժման վտանգը Եվրոպա ստիպեց Եվգենի IV պապին հանդես գալ որպես նոր խաչակրաց արշավանքի նախաձեռնող: 1439 թ. կնքվեց այսպես կոչված ֆլորենտինյան ունիան Հռոմի պապի գլխավորությամբ հունական (ուղղափառ) և լատինական (կաթոլիկ) եկեղեցիների միավորման մասին, որին բյուզանդական կայսր Հովհաննես VII Պալեոլոգոսը և ուղղափառ եկեղեցու բարձրագույն հոգևորականությունը դիմեցին՝ հույս ունենալով եկեղեցական-դավանական տեսակետից պապին ենթարկվելու գնով օգնություն ստանալ Թուրքերի դեմ: Ստորագրելով ունիան և ընդունելով կաթոլիկների հավատո հանգանակը՝ կայսրը քաջ գիտակցում էր, որ իր այդ քայլը հանդիպելու է մայրաքաղաքի բնակչության ուժգին դիմադրությանը, սակայն այնուամենայնիվ նա գնաց այդ քայլին, քանի որ այն համոզմանն էր, որ կայսրության փրկությունը միայն Արևմուտքի օգնության մեջ է: Սակայն Կոստանդնուպոլսի բնակչությունը այլ կարծիքի էր: Մայրաքաղաքի բնակչության մեծ մասը և հունական հոգևորականությունը զզվանքով մերժեցին ֆլորենտիայի ունիան: Այն չվավերացվեց հունական կղերի կողմից: Իր հավատին և ավանդույթներին ջերմեռանդորեն նվիրված ժողովուրդը հակված էր մտածելու, որ դաշինքը «հերետիկոս» Արևմուտքի հետ չի կարող փրկություն բերել իրեն կամ փոխել իր ճակատագիրը:

Իսկապես, պարզվեց, որ խաչակրաց արշավանք տեղի չի ունենալու: Մինչդեռ Թուրքերի ճնշումը Հարավ-Արևելյան Եվրոպայի վրա գնալով ուժեղանում էր: 1440 թ. Մուրադ II-ը զորաշարժ կատարեց

դեպի Սերբիա: Նրա զորքերը նախ գրավեցին Դանուբի ափին կառուցված Սեմենդրիա ուժեղ ամրոցը և ավերելով այն մուտք գործեցին սերբական տարածք: Սերբիայում օրըստօրե ուժեղացող Գեորգի Բրանկովիչի իշխանությունը մեծ անհանգստություն էր պատճառում սուլթանին, մանավանդ որ նա ձգտում էր դաշինքի մեջ մտնել հունգարների հետ Թուրքերի դեմ ընդհանուր ճակատ հարդարելու նպատակով: Մուրադ II-ը վոնդեց Բրանկովիչին՝ նրա փոխարեն նշանակելով իր դրածոյին: Այնուհետև նա շրջապատեց Բելգրադը: Սակայն վեցամսյա պաշարումը ոչ մի արդյունք չտվեց՝ քաղաքի պաշտպանական ամրությունների անառիկության և բնակչության աննկուն դիմադրության պատճառով:

Խուսափելով Բելգրադի պատերի տակ ուժեր վատնելուց՝ սուլթանը իր բանակը շարժեց դեպի Վալախիա և ըստ էության չհանդիպելով լուրջ դիմադրության՝ կարողացավ վերականգնել օսմանցիների հսկողությունը այդ երկրի նկատմամբ: Վալախիայի տարածքը վերածելով հենակետի, հնարավորություն էր ստեղծվում Դանուբի վրայով ասպատակություններ կազմակերպելու դեպի Հունգարիա: Այստեղ սուլթանի ոխերիմ թշնամին Տրանսիլվանիայի վոյեվոդ Յանոչ Հունյադին էր (1440–1467), որը Թուրքերի համար դարձել էր իսկական պատուհաս:

1437 թ. հունգարական Սիգիզմունդ թագավորի մահվանից հետո, քանի որ նա չուներ արական գծով ժառանգորդ, դինաստիան դադարեց գոյություն ունենալուց:

Դրա հետևանքը հանդիսացավ Հունգարիայում ծավալված ներքին պայքարը հանուն իշխանության: Մուրադ II-ը որոշել էր օգտվել Հունգարիայի այդ ներքին ապակայունացումից և նվաճել այդ երկիրը: Սակայն հունգարացիները նրան չտվեցին այդ չանսը: Նրանք որոշեցին անցնել լեհական թագի իշխանության տակ, որի հետևանքով Վլադիսլավ III թագավորը դարձավ երկու երկրների միապետ:

Անցնելով հունգարական ժողովրդական աշխարհազորի գլուխ, որին աջակցում էին նաև չեխերի ջոկատները, 1441–1442 թթ. սուլթանական ուժերի հետ բախումների ժամանակ Հունյադին մի քանի անգամ ձեռք բերեց հաղթանակ: Առանձնակի նշանակություն ունեցավ Վոդագայի մոտ 1442 թ. տարած հաղթանակը, երբ թուրքական առաջապահ զորախումբը գլխովին ջախջախվեց և 5 հազար մարդ գերի ընկավ հունգարների ձեռքը: Ճիշտ է, այդ արշավանքը գլխավորում էր Լեհաստանի և Հունգարիայի թագավոր Վլադիսլավ III-ը, սակայն հաղթանակի դափնին պատկանում էր Յանոչ Հունյադիին:

Սուլթանը ստիպված էր 1444 թ. հուլիսին Սեգեդեում հաշտություն կնքել Վլադիսլավի հետ, որով նա ճանաչում էր Հունգարիայի հետ սահմանակից սերբական հողերի անկախությունը, իսկ հունգարները խոստանում էին չանցնել Դանուբը և հավակնություններ չներկայացնել Բուլղարիայի նկատմամբ: Պայմանագիրը կնքվեց 10 տարի ժամկետով: Վլադիսլավը Աստվածաշնչի, իսկ Մուրադը՝ Ղուրանի վրա երդվեցին հավատարիմ մնալ պայմանագրին և չխախտել այն: Սակայն պապական լեգատ, կարդինալ Ջուլիանո Ցեզարինին խստիվ դատապարտեց այդ պայմանագիրը, հայտարարելով, որ «անհավատներին» տրված որևէ խոստում չի կարելի համարել օրինական: Հռոմի Եվգենի IV պապի պահանջով պայմանագիրը չեղյալ հայտարարվեց: Կողմերը սկսեցին պատրաստվել նոր պատերազմի: Ընդ որում, Հռոմը աշխատում էր նրան հաղորդել խաչակրաց արշավանքի բնույթ: Խաչի խորհրդանշանի ներքո Եվրոպայի տարբեր անկյուններից հավաքված բանակը շարժվեց դեպի Թուրքական տարածքները: Ծրագրված էր Ջենովայի և Վենետիկի նավատորմի օգնությամբ շրջափակել Բոսֆորն ու Դարդանելը և կտրել օսմանցիների կապը Ռումելիայի հետ: Սակայն այդ ծրագրին վիճակված չէր իրագործվել:

Ասպարեզում Մուրադ II-ի դեմ դարձյալ Հունյադին էր: 1444 թ. արյունահեղ մարտերով նրա զորքերը մոտենում էին բուլղարական Վառնա քաղաքին: Այդ պահին օսմանյան պետության մեջ տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք գործում էին հօգուտ Հունյադիի: Ստանալով իր սիրեցյալ որդու՝ Ալա-էդ-դինի մահվան լուրը՝ սուլթան Մուրադ II-ը ապրել էր խորը ցնցում: 23 տարի շարունակ անընդմեջ պատերազմներից հոգնած և ամեն ինչից ձանձրացած սուլթանը որոշում է կայացնում հրաժարվել թագավորությունից, հեռանալ պետական գործերից և վարել մասնավոր կյանք, որը եղել էր նրա վաղեմի երազանքը: Նա մեկնում է Բուրսա՝ հայտարարելով, որ գահը փոխանցում է իր տասնչորսամյա որդուն՝ Մեհմեդին՝ միաժամանակ անչափահաս որդու խնամակալ նշանակելով իր մերձավորներից մեկին՝ Խալիլ Զանդարլը փաշային:

Սակայն չուտով լուրը հասավ օսմանյան մայրաքաղաք, որ Յանոշ Հունյադիի զորքերը լեհերի և վալախների նիզակակցությամբ հասնելով Վառնա, պաշարել են այդ քաղաքը: Տեղեկանալով այդ մասին, սուլթանական արքունիքի ամենահեղինակավոր անձինք, այդ թվում նաև նորանշանակ պատանի սուլթանը, անմիջապես մեկնեցին Բուրսա և համոզեցին Մուրադին, որ բանակի հրամանատարությունը վերցնի իր ձեռքը և պաշտպանի որդու գահը: Իր համաձայնությունը

տալուց հետո Մուրադը մեկնեց Բուրսայից և կաչառելով Ջենովացի-ներին, իր 40 հազարանոց բանակը նրանց նավերով տեղափոխեց Ռումելիա: 1444 թ. նոյեմբերի 10-ին Վառնայի մոտ հակառակորդնե-րը հանդիպեցին և տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ, որ-տեղ թշնամուն իր թվաքանակով կրկնակի անգամ գերազանցող օս-մանցիների բանակը գլխովին ջախջախեց Հունյադիի միացյալ զորքե-րին: Մարտի դաշտում ընկավ նաև Վլադիսլավ III թագավորը: Նրա կտրված գլուխը բարձրացրին նիզակի վրա, իսկ նրա կողքին մեկ այլ նիզակի վրա հագցրին պատառոտված պայմանագիրը՝ օսմանյան բանակին որպես դաս ցուցադրելու համար քրիստոնյաների ուխ-տադրժությունը: Կարդինալ Ջուլիանոն, որն այդ պատերազմի ակ-տիվ հրահրողներից էր, փախուստի դիմեց և դրանից հետո այլևս եր-բեք ասպարեզում չհայտնվեց: Հունյադին ևս վալախների առաջնորդ Վլադ Դրակուլայի հետ փախուստի միջոցով փրկեց իր կյանքը:

Բնորոշ է, որ թեև այդ ժամանակ Բալկաններով անցավ հակա-թուրքական ելույթների ալիք (ապստամբություններ բռնկեցին Հու-նաստանում, Ալբանիայում, Սերբիայում, Բուլղարիայում), Հունյադի-ին չհաջողվեց խաչակիրների բանակի հետ համատեղ ակտիվ ելույթ-ների դրդել բալկանյան ժողովուրդներին, ինչպես այդ եղել էր նրա նախորդ արշավանքների ժամանակ: Դրա պատճառներից մեկը խա-չակիրների վարքագիծն էր, որոնք լինելով կաթոլիկներ, ավերում է-ին քրիստոնեական ուղղափառ եկեղեցիները, կողոպտում բնակչու-թյանը: Մյուս պատճառը կայանում էր նրանում, որ թուրքական զավթիչները հենվում էին բուլղարական, սերբական և բոսնիական այն ֆեոդալների վրա, որոնք իրենց տիրույթները փրկելու համար կատարելապես հնազանդվել էին սուլթանին: Նրանցից շատերը ըն-դունել էին իսլամը, իսկ ոմանք՝ թուրքացել:

Վառնայի մոտ Մուրադի տարած հաղթանակը հնարավորություն տվեց օսմաններին վերականգնելու իրենց հսկողությունը մինչև Դա-նուբ ընկած բոլոր տարածքների վրա: Վառնայի աղետը միաժամա-նակ երկար դարերի ընթացքում ոչ միայն բալկանյան ժողովուրդնե-րին դրեց թուրքական տիրապետության տակ, այլև վերջնականա-պես որոշեց Բյուզանդիայի և նրա մայրաքաղաքի ճակատագիրը: Օս-մանների հետագա զավթողական արշավանքները Բալկաններում կտրուկ կերպով ուժեղացրին թուրքերի ներխուժման վտանգը Կենտ-րոնական Եվրոպայի երկրներ:

Վառնայի աղետը մեծ արձագանք գտավ նաև Եվրոպայում: Սկսե-ցին հոռետեսական տրամադրություններ տարածվել, թե անհնար է թուրքերին դուրս քշել Եվրոպայից:

Իր առաքելությունը ավարտված համարելով՝ Մուրադը կրկին որոշեց հեռանալ գործերից և վարել հանգիստ ու խաղաղ կյանք: 1444 թ. վերջին նա պաշտոնապես հրաժարվեց գահից հօգուտ Մեհմեդի: Մուրադը որպես անձնական դոմեն Մագնեսիայի շրջակայքում, գեղեցիկ բնություն ունեցող մի վայրում, վերցրեց մի տարածք, կառուցեց մի նոր պալատ, որը շրջապատված էր հիանալի այգիներով և ճակատային մասով նայում էր դեպի ընդարձակ հովիտը: Այստեղ, նա բանաստեղծների, աստվածաբանների, դերվիշների ու գիտնականների շրջապատում իրեն որոշել էր տալ կրոնական հայեցողությունների և խորամուխ լինելու կյանքի ու մահվան առեղծվածի բացահայտմանը: Թուրք տարեգիրների վկայությամբ, նա ձգտում էր սկզբնավորել թուրքերեն լեզվի զարգացմանը որպես մշակույթի դրսևորման միջոցի, որպեսզի թուքական մշակույթը ձերբազատվի պարսկերեն և արաբերեն լեզուների գերակշռող ազդեցությունից: Նա խրախուսում էր թուրքերի պատմության, օսմանների ծագումնաբանության, օղուզների ցեղային ակունքների վերաբերյալ ուսումնասիրությունների ստեղծումը: Ուշագրավ է նշել, որ ժամանակ առ ժամանակ օտարերկրյա դիվանագետները այցելում էին Մուրադին:

1446 թ. գարնանը Մուրադ II մեծ վեզիր Խալիլ Զանդարլը փաշայի խնդրանքով ևս մեկ անգամ եղավ Ադրիանոպոլսում: Այցելության պատճառը քաղաքական էր: Բանը նրանումն էր, որ պատանի սուլթան Մեհմեդը ծրագրել էր հարձակում գործել Կոստանդնուպոլսի վրա, այն գրավելու նպատակով: Մինչդեռ մեծ վեզիրը գտնում էր, որ դա ոչ բանական ու խելացի և անհեռանկար ու անգործնական ծրագիր է, քանի որ այդ ժամանակ օսմանների բանակը ռազմական գործողություններ էր վարում միաժամանակ Հունաստանի և Ալբանիայի սահմանների մոտ: Այդ հարցի չուրջը Մեհմեդի և Խալիլի առանց այդ էլ լարված հարաբերությունները հասել էին ծայրահեղ սրության: Այսպիսով, Մուրադը կրկին ներքաշվում էր քաղաքականության մեջ: Առանց այն էլ նա մտահոգված էր նրանով, որ բյուզանդացիները վերականգնել են իրենց իշխանությունը Մորեայում, դրանով իսկ ձեռք բերելով ռազմավարական բնույթի առավելություններ:

Ծանոթանալով պետության արտաքին քաղաքական մարտահրավերների հետ՝ 1446 թ. Մուրադը կրկին որոշեց ժամանակավորապես գործերի ղեկը վերցնել իր ձեռքը: Նա զորաշարժ կատարեց դեպի Հունաստան: Այստեղ նա գրոհով վերցրեց Հեկսամիլիոնի մոտ կառուցված հսկայական և հիանալի ամրացված պատը, որը կառուցված էր Կորինֆյան պարանոցը պաշտպանելու համար, որպեսզի հե-

տագայում ասպատակ սփռի ու ամայացնի այդ պատի հետևում ընկած երկիրը՝ Պելլոպոննեսը:

Մեկ այլ կոնֆլիկտ ծնունդ էր առել Ալբանիայում, որտեղ հայտնվել էր մի նոր առաջնորդ՝ Գեորգի Կաստրիոտին (Սկանդերբեգ), որը գլխավորում էր ալբանական ժողովրդի ապստամբությունը օսմանյան տիրապետության դեմ (1443–1468):

1448 թ. Յանոշ Հունյադին կատարեց ևս մեկ փորձ Թուրքերի առաջխաղացումը դեպի Եվրոպա կասեցնելու ուղղությամբ: Այդ անխոնջ մարտիկին հաջողվեց հավաքել մի ոչ մեծ աշխարհազոր, որը բաղկացած էր հունգարացիներից, չեխերից, լեհերից ու գերմանացիներից: Հունյադին հույս ուներ, որ Սերբիան և արևմտաեվրոպական երկրները ևս կօգնեն իրեն, սակայն նրա այդ հույսերը չարդարացան:

1448 թ. հոկտեմբերի 17–19-ին Կոսովոյի դաշտավայրում, որտեղ վաթսուն տարի առաջ Մուրադ I սուլթանը գտել էր իր մահը, տեղի ունեցավ ճակատամարտ, որտեղ Մուրադ II-ի հիսուն հազարանոց բանակը գլխովին ջախջախեց Հունյադիի փոքրաթիվ զորքերին: Վերջինս փախուստի դիմեց Հունգարիա: Այդ ճակատամարտում, որպես անատոլիական զորքերի հրամանատար, իր առաջին մարտական մկրտությունը ստացավ Մեհմեդը, ավելի ուշ 1450 թ. նա հոր հետ միասին մասնակցում էր Ալբանիայում Կրուի ամրոցի պաշարմանը:

Կոսովոյի ճակատամարտից հետո ուժերի հարաբերակցությունը Հարավ-Արևելյան Եվրոպայում ակնհայտորեն փոխվեց հօգուտ Թուրքերի: Այդ պարտությունը նշանակում էր Սերբիայի անկախության վերջը: Բոսնիան դարձավ օսմանների վասալական պետություն: Սակայն Ալբանիան Սկանդերբեգի գլխավորությամբ արդյունավետ պարտիզանական պատերազմի միջոցով շարունակում էր դիմադրությունը, ձախողելով Թուրքերի բոլոր փորձերը երկիրը նվաճելու ուղղությամբ: Մուրադի երկու արշավանքները Ալբանիայի լեռնական-առնաուտների դեմ (1449–1450) ավարտվեցին առանց չոչափելի արդյունքների, հանդիպելով կորովի դիմադրության:

1451 թ. Մուրադ II-ը իր Մեհմեդ որդու հարսանյաց հանդեսը կատարելուց հետո, 49 տարեկան հասակում, կաթվածից մահացավ՝ թագավորելով 30 տարի: Այդ ժամանակ նրա որդին՝ Մեհմեդը, գտնվում էր Մագնեսիայում, հոր մոտ: Ինչպես վկայում է տարեգրությունը, երբ հայրը փչեց իր վերջին շունչը, Մեհմեդը անմիջապես թռավ իր արաբական նժույգի վրա և սլացավ հյուսիս՝ բացականչելով. «Յուրաքանչյուրը, ով սիրում է ինձ, թող գա իմ հետևից»:

Հասնելով մայրաքաղաք՝ Ադրիանոպոլիս, նա հանդիսավոր կեր-

պով գահ բարձրացավ՝ ընդունելով Մեհմեդ II (1444-1446, 1451-1481) գահակալական անունը: Հանրագումարի բերելով Մուրադ II-ի կառավարման շրջանը, անհրաժեշտ է նշել, որ իր սուլթանության տարիներին նա իրականացրեց մի շարք կարևոր բարեփոխումներ, որոնք նպաստեցին օսմանյան պետության կենտրոնացմանը, նրա ռազմական հզորության ու ներքին կայունության ամրապնդմանը: Նրա օրոք ենիչերիական զորաբանակը էլ ավելի մեծացավ, ընդ որում, նրա կազմավորման սկզբունքը՝ դևշիրմեն, դարձել էր կանոնավոր հարկ օսմանյան պետության ոչ մուսուլման բնակչության համար: Կափրկուլուների բանակային ստորաբաժանումների կազմը տարբերակվում էր. հետևակը՝ ենի չերի օջախը (ենիչերիական զորաբանակ), հեծելազորը՝ աթլը բուլյուկ հալքը, հրետանին՝ թոփչու օջախը: Կափրկուլուների շրջանից դուրս եկած առանձին անձանց Մուրադ II-ը սկսել էր նշանակել պետության բարձրագույն պաշտոնների: Նա դրանց օգտագործում էր ի հակակշիռ հին բեյերի, որոնք իրենց անկախ էին պահում սուլթանի նկատմամբ: Վերջինս աշխատում էր կատարելագործել նաև հողատիրության թիմարային համակարգը, չարունակելով իր մերձավորներին ու առավել աչքի ընկած ռազմիկներին բաժանել հողային տիրույթներ, դրանով իսկ աշխատելով սուլթանական իշխանության համար ստեղծել սոցիալական կայուն հենարան:

Գիտակցելով, որ առանց ուժեղ ռազմական նավատորմի առկայության անհնար է հասնել պետության երկու մասերի՝ Անատոլիայի և Ռումելիայի ամուր միավորմանն ու շաղկապմանը, Մուրադ II-ը կարևոր ուշադրություն էր դարձնում նաև օսմանյան նավատորմի ստեղծմանը, որի հիմքերը դրվել էին դեռևս Մեհմեդ I-ի ժամանակ:

Մուրադ II-ի իրականացրած այդ բոլոր միջոցառումները օսմանյան պետությանը հնարավորություն տվեցին հաջորդ սուլթանի՝ Մեհմեդ II-ի օրոք նոր թռիչք կատարել ռազմական ու քաղաքական զարգացման գործում:

2. Մեհմեդ II «ֆաթիհը» եվ թուրք-օսմանցիների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը

Օսմանյան դինաստիայի այս նոր սուլթանը, որը հետագայում մեծարվելու էր «Ֆաթիհ» (նվաճող, հաղթող) պատվանունով, անցել էր կյանքի հետաքրքիր ճանապարհ: Նա ծնվել էր չարաբաստիկ ժամանակներում, երբ երկրում մոլեգնում էր ժանտախտի համաճարակը, ո-

ը տարել էր իր հոր երկու եղբայրներին: Ունեցել էր ոչ երջանիկ մանկություն: Նա եղել էր իր հոր երրորդ զավակը: Հայրը նախապատվություն էր տվել առաջին երկուսին՝ Ալիին և Ահմեդին որպես ավագ որդիների, ուստի Մեհմեդի դաստիարակության գործը նշանակալիորեն տուժել էր: Սկզբնապես հայրը նրան չի համարել գահի հնարավոր ժառանգորդ նաև այն պատճառով, որ իր ավագ որդիների մայրերը ունեցել են ազնվազարմ ծագում, մինչդեռ Մեհմեդի մայրը եղել է հավանաբար քրիստոնեական ծագում ունեցող ստրկուհի:

Արդեն վեց տարեկան հասակում Մեհմեդը հանդիսանում էր Ամասիայի նահանգապետը: Այն բանից հետո, երբ իր եղբայրներից մեկը՝ Ալա-էդ-դինը, իր հոր սիրելի որդին, չպարզաբանված հանգամանքներում խեղդամահ էր արվել իր սեփական անկողնում, հայրը իր մոտ Ադրիանոպոլիս կանչեց տասնմեկ տարեկան Մեհմեդին, նրան հայտարարելով գահաժառանգ: Հոր համար չափազանց տհաճ հայտնություն էր, որ որդին բավարար չափով կրթված ու դաստիարակված չէ: Նրա համար նշանակված ուսուցիչները գանգատվում էին, որ Մեհմեդը դժվար աշակերտ է, չի ցանկանում սովորել և հատկապես խուսափում է կրոնական առարկաներ ուսումնասիրելուց: Առկա է գրավոր մի հիշատակում, որ սուլթանը իր որդու ուսուցչին տվել է մի մահակ և թույլատրել նրան իր հայեցողությամբ այն օգտագործել իր որդու վրա, հանուն նրա դաստիարակության: Այդ ուսուցիչը կամ մոլլան սկսում է զբաղվել իր աշակերտի կրթությամբ, մշտապես մահակը պահելով իր ձեռքում: Այսպես թե այնպես, ժամանակակիցների վկայությամբ, գահի ժառանգորդը ձեռք է բերում բավականին լավ կրթություն: Սակայն նրան ավելի շատ հետաքրքրում էին պետական գործերը: Այդ բնագավառում նրա ուսուցիչներն են հանդիսացել իր հայրը և մեծ վեզիր Խալիլ Զանդարլը-փաշան:

Վաղ մանկության տարիներից դրսևորվում են Մեհմեդի բնավորության բնորոշ գծերը. ինքնավստահություն, մեծամտություն ու գոռոզություն, ինքնամփոփություն, աներևակայելի ծածկամտություն, իշխանատենչություն, չեչտված արժանապատվության զգացում: Միաժամանակ նա եղել է սառը դատողության և աչխույժ խելքի տեր՝ օժտված վիթխարի եռանդով ու նպատակին հասնելու անհողդողդ կամքով: Իր դաժանության ու սանձարձակ բռնակալության հետ միաժամանակ, Մեհմեդ II-ը, ըստ թուրք տարեգիրների (որը վիճելի է և չի հաստատվում այլ աղբյուրներով) տիրապետել է մի քանի լեզուների, հրապուրվել է աստղագիտությամբ, մաթեմատիկայով, փիլիսոփայությամբ, կրոնական զանազան ուսմունքներով և այլն: Նրա թա-

փանցող ու սուր հայացքից ոչինչ չէր վրիպում: Բնավորության բնորոշ գծերից է եղել մարդկանց մշտական լարվածության մեջ պահելը:

Քանի դեռ հայրը կենդանի էր, Մեհմեդը նույնիսկ սուլթանական գահը զբաղեցնելու տարիներին իրեն պահում էր համեմատաբար զուսպ և հավաքված: Հոր մահվանից հետո ևս, առաջին ամիսներին, նա ընդունել էր խաղաղասերի կեցվածք: «Նրա շրթների վրա խաղաղություն էր,- գրում է Գիբբոնը,- սակայն սրտում պատերազմ էր»: Ընդունելով օտարերկրյա դեսպաններին, նա համոզիչ տոնով հավաստիացնում էր նրանց, որ ինքը հավատարիմ է մնալու իր հոր հետ կնքված բոլոր պայմանագրերին ու համաձայնագրերին: Երբ Կոստանդնուպոլսից Կոնստանդին XI Պալեոլոգոս Դրագասի (1449-1453) դեսպանները ժամանեցին իր մայրաքաղաք Էդիրնե, նրանք հաճելիորեն զարմացել էին Մեհմեդ II-ի կողմից նրանց նկատմամբ ցուցաբերած սիրալիր, մեղմ ու բարյացակամ վերաբերմունքից: Սուլթանը ոչ միայն Ղուրանի վրա երդվեց հարգել Բյուզանդիայի տարածքային ամբողջականությունը, այլև խոստացավ կայսրին վճարել տարեկան հարկ՝ երեք հազար ասպերի չափով:

Կոստանդնուպոլսում Մեհմեդի այդ խաղաղասեր ու մեղմ վարքագիծը մեկնաբանվեց որպես թուլության նշան և հակում դեպի կոմպրոմիսների քաղաքականությունը: Դա պարզապես մոլորություն էր: Նրա խաղաղասիրական վարքագիծը չինծու և կեղծ էր: Նրան ձեռնտու էր առայժմ խնամքով թաքցնել իր նվաճողական մեծ ծրագրերը: Իրականում սուլթանը այրվում էր ժամ առաջ Կոստանտնուպոլիսը գրավելու և «ռոմերի» կայսրությունը կործանելու մարմաջով: Նա ցանկանում էր միավորել թուրքերի եվրոպական և ասիական տիրույթները, որոնց արանքում սեպի պես խրված էր Բյուզանդիայի մայրաքաղաքը, վերացնել կայսրության վերջին մնացուկները և այդ հիանալի քաղաքը դարձնել իր մայրաքաղաքը: Հոր մահից հետո աստիճանաբար ցայտուն կերպով դրսևորվեց Մեհմեդի նենգ ու դավադիր և ծայրահեղ դաժան խառնվածքը: «Սուլթան Մեհմեդ Ֆաթիհը,- գրում է ֆրանսիացի պատմաբան Գուստավ Շլումբերժեն,- փորձում էր իր վայրագությունը քողարկել մեղմ ու քաղաքավարի ձևերով. մահավճիռը կտար ժպտալով և մորուքը շոյելով»: Մշտական վախ ունենալով իր իշխանության համար, նա անխնա ոչնչացնում էր գահի բոլոր հավանական թեկնածուներին: Նրա միայն անունը սարսափ էր ազդում իր հպատակների վրա: Աղբյուրները վկայում են, որ երբ իտալացի հայտնի նկարիչ Ջենտիլե Բելլինին նկարում էր նրա դիմանկարը, մի առիթով նա սուլթանին ցույց է տա-

լիս իր նկարներից մեկը, որը պատկերում էր Հովհաննես Մկրտչի գլխատման տեսարանը: Մեհմեդ II-ը անմիջապես հրամայում է կտրել ստրուկներից մեկի գլուխը, կենդանի օրինակով նկարչին ցույց տալու համար գլխատումից հետո վզի մկանների կծկման ձևը՝ ուղղելու համար նկարչի սխալը:

Պատմվում է նաև, որ երբ Անատոլիայից Մեհմեդի էդիրնե ժամանելու կապակցությամբ 1451 թ. փետրվարի 18-ին պալատում կազմակերպվում է հանդիսավոր ընդունելություն, Մուրադի այրին, օսմանյան ազնվազարմ ընտանիքներից սերած մի կին, մոտենում է Մեհմեդին, որպեսզի ցավակցություն հայտնի հոր մահվան կապակցությամբ և շնորհավորի գահ բարձրանալու առթիվ: Մինչդեռ հենց այդ նույն պահին, Մեհմեդի հրամանով, հարեմի լողարանում խեղդամահ էին անում այդ կնոջ իննամսյա որդուն՝ Ահմեդին, որն իր խորթ եղբայրն էր: Իսկ դժբախտ մանուկի մայրը տեղնուտեղը կնության տրվեց Մուրադ II-ի վեզիրներից մեկին՝ Իսխաք-փաշային, որը նշանակվել էր Անատոլիայի բեյլերբեյ: Երկաթյա ձեռքով նորընծա սուլթանը պալատում հաստատեց կարգ ու կանոն, հանգուցային պաշտոններում նշանակեց իր նկատմամբ անվերապահ հավատարմությամբ աչքի ընկած մարդկանց, իսկ անվստահելիներին մասամբ հեռացրեց պաշտոններից, մասամբ վերացրեց:

Նա անողոք դաժանությամբ ճնշեց Բուրսայում բռնկած ենիչերիների խռովությունը: Սակայն այդ ռազմական կառույցը ամբողջապես իրեն ենթարկելու համար՝ Մեհմեդը բարձրացրեց նրանց աշխատավարձը, որը թեև իր կողմից կատարված հեռատես քայլ էր, սակայն հետագա սուլթանների համար ստեղծեց բավականին դժվարին նախադեպ: Միաժամանակ նա պալատական որսորդներից ու բազեակիրներից ստեղծեց մի քանի նոր, ուժեղ զինվորական ստորաբաժանումներ, որոնք խաղալու էին իր համար թիկնազորի դեր և որոնց շարքերից ինքը կարող էր ընտրել մարդկանց ենիչերիական աղայի (պետի) պաշտոնի համար: Նման կարգի վերակառուցումներից հետո ենիչերիները վերածվեցին օսմանյան բանակի էլ ավելի հզոր կորիզի, քան նրանք երբևիցե եղել էին:

Մեհմեդ II-ի գահակալության հենց սկզբից Կոնստանդին կայսրը փորձում էր հնարավորինս նվազեցնել իր կախումը օսմանցիների տիրակալից: Այդ նպատակով նա դեսպաններ ուղարկեց նորաթուխ սուլթանի մոտ, պահանջելով անհապաղ վճարել իշխանազուն Օրխանի կեցության ծախսերը Կոստանդնուպոլսում: Բանը նրանումն էր, որ Օրխանը դեռևս Մուրադ II-ի ժամանակ գահի նկատմամբ ներկա-

յացրել էր հավակնություններ և հաջողության չհասնելով ապաստանել էր Բյուզանդիայի մայրաքաղաքում որպես «հյուր», իսկ իրականում քաղաքական վտարանդու կարգավիճակով: Դեսպանները նրբին կերպով հասկացրել էին Մեհմեդին, որ անհրաժեշտության դեպքում մայրաքաղաքում գտնվող գահի հավակնորդ Օրխանը կարող է հանդես գալ «հանուն իր իրավունքների պաշտպանության»: Դա թափանցիկ սպառնալիք էր Մեհմեդին և նա դա այդպես էլ ընկալեց: Սակայն սուլթանը սիրալիր ու անուշ խոսքերով հանգստացրեց դեսպաններին և նրանց հետ ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ ոխը պահելով իր սրտում:

Մեծ վեզիր Խալիլ Զանդարլը փաշան հիանալի ծանոթ լինելով պատանի ինքնակալի բնավորությանը, հարկ էր համարել նախազգուշացնել դեսպաններին, որ նրանք «խաղում են կրակի հետ», որ Մեհմեդին «չի կարող կանգնեցնել ոչ մի օրենք և ոչ մի արգելք չի կարող կասեցնել նրա մտադրությունները»: Հակառակ դեպքում, ասել էր նա դեսպաններին, «դուք միայն կարագացնեք ձեր կործանումը»:

Իսկապես, Օրխանի հետ կապված պատմությունը, հատկապես բյուզանդական ճնշումը, արագացրեց իրադարձությունների ընթացքը:

Պետության կառավարման ղեկը վերցնելով իր ձեռքը՝ Մեհմեդը ծրագրել էր իրականացնել այն, ինչ չէր հաջողվել իր նախորդներին՝ Կոստանդնուպոլսի գրավումը: Իր այդ վաղեմի երազանքի իրականացմանը երիտասարդ սուլթանը գնում էր քայլ առ քայլ, խորքային եղանակով նախապատրաստելով այդ մեծ գործը: Դա մուսուլմանական աշխարհում դեռ արաբական նվաճումների ժամանակներից համարվում էր «անհավատների դեմ սրբազան պատերազմի»՝ ջիհադի գլխավոր նպատակը: Սուլթանը գիտակցում էր, որ Կոստանդնուպոլսի գրավումը ռազմավարական բնույթի անհրաժեշտություն էր իր պետության համար, քանի որ որքան էլ ընդարձակվեր ու մեծանար այն ասիական մասում, միշտ կմնար սպառնալիքի տակ՝ քանի դեռ Բյուզանդական կայսրությունը երկու ծովերի բանալին պահելու լիներ իր ձեռքում: Օսմանցիների պետությունը չէր կարող ապագա ունենալ, եթե կայուն կերպով չհիմնավորվեր եվրոպական ափում: Նույնիսկ Եվրոպայի տարածքների մեծ մասը գրավելու դեպքում անհնարին կլիներ այնտեղ երկար ժամանակ դիմանալ, եթե Կոստանդնուպոլիսը չլիներ իրենց ձեռքում և մնար թիկունքում: Բյուզանդիայի մայրաքաղաքը օսմանյան պետության համար մեծ վտանգ էր ներկայացնում նաև այն առումով, որ նա մշտապես քաջալերում ու խրախուսում էր օսմանյան պետության ներքին ընդդիմությանը՝ ապաս-

տան տալով գահի պոտենցիալ հավակնորդներին և հյուրընկալելով սուլթանական իշխանության ամեն տեսակի հակառակորդներին:

Պալատում իր հավանական ու երևակայական թշնամիներից ազատվելուց հետո Մեհմեդ II-ը իրականացրեց մի շարք քայլեր՝ Կոստանդնուպոլսի գրավումը նախապատրաստելու համար: Նախ նա մի շարք պայմանագրեր կնքեց վենետիկցիների, հունգարացիների, սերբերի, վալախների, Լեսբոս և Խիոս կղզիների հույների հետ: Ընդ որում, նա կարողանում էր վարպետորեն ապակողմնորոշել այդ երկրների դեսպաններին և թաքցնել իր իսկական նպատակները: Այնուհետև նա կարևոր ուշադրություն դարձրեց օսմանյան պետության փոքրասիական տիրույթներում իր իշխանությունը ամրապնդելու գործին: Այդ ուղղությամբ նրա կարևորագույն խնդիրն էր Կարաման բեյլիքի տիրակալի հետ լարված հարաբերությունների կարգավորումը: Մեհմեդ II-ին հաջողվեց պայմանագիր կնքել նրա հետ: Այնուհետև սուլթանն անցավ պետության մեջ իր համար կայուն հենարան ստեղծելու գործին: Մեհմեդի նենգ ու դավադիր, ծայրահեղ դաժան խառնվածքը բացառում էր քաղաքական ընդդիմության նույնիսկ չնչին գոյությունը: Նրա միայն անունը սարսափ էր ազդում իր հպատակների վրա:

Դեռևս 1396 թ. Բոսֆորի ասիական ափին սուլթան Բայազիդ I-ը կառուցել էր Անադոլուհիսար ամրոցը: Մեհմեդ II-ը 1452 թ. մարտին հրամայեց Բոսֆորի հակառակ եվրոպական ափին, նեղուցի ամենանեղ տեղում, Անդոլուհիսարի դեմ դիմաց կառուցել Ռումելիհիսար ամրոցը: Այդ երկու ամրոցների գոյությունը հնարավորություն էր տալու թուրքերին ցանկացած պահին Կոստանդնուպոլիսը կտրել Սև ծովից և դրանով իսկ դադարեցնել մերձսևծովյան շրջաններից հացի մատակարարումը բյուզանդական մայրաքաղաքին, հսկողություն սահմանել նեղուցների նկատմամբ և ուժեղ հենակետ ստեղծել Կոստանդնուպոլսի շրջապատման համար:

Ռումելիհիսարի շինարարության վրա չորս ամիս շարունակ գիշեր ու ցերեկ աշխատում էր վեց հազար մարդ: Այդ նպատակով օսմանցիների տիրույթներից հավաքել ու բերել էին հմուտ քարտաշների, պատշարների և այլ արհեստավորների, որոնց թվում նաև մոտ հազար հոգի հայ որմնադիրների: Ամրոցն ունենալու էր բարձր ու անմատչելի պատեր, դիտակետեր և հինգ աշտարակներ: Ամենուրեք տեղի էր ունենում շինանյութերի բռնագրավում: Շինանյութ ձեռք բերելու համար նույնիսկ քանդվում էին եկեղեցիներն ու մատուռները: Ամրոցի հատակագիծը գծել էր ինքը՝ սուլթանը: Շինարարության նկատմամբ հսկողությունը ևս սուլթանն անձամբ վերցրել էր իր վրա՝

այն շուտափույթ ավարտին հասցնելու համար: Ընդամենը չորս ու կես ամսվա ընթացքում ամրոցը կառուցվեց (1452 թ.): Թուրքերն այն կոչեցին «բողազ քյասան» (կոկորդ կտրող), իսկ հույները Ռումելի հիսար, որ բառացի նշանակում էր ռումերի հողի վրա կառուցված ամրոց: Այդ նոր ամրոցում սուլթանը տեղակայեց մի ուժեղ և լավ մարզված կայազոր, տեղադրեց խոշոր տրամաչափի թնդանոթներ և հրամայեց մաքսային ստուգման ենթարկել Բոսֆորի նեղուցով անցնող բոլոր նավերը: Ցանկացած նավ ամրոցի դիմաց պետք է իջեցներ իր առագաստներն ու կանգ առներ՝ նեղուցից անցնելու վարձը վճարելու և հետագա նավարկության թույլտվություն ստանալու համար: Այդ հրամանին չենթարկվելու դեպքում կարգադրված էր հրետանային կրակով խորտակել նավը: Օրինակ, երբ վենետիկյան մի խոշոր նավ չցանկացավ ենթարկվել սուլթանի հրամանին, այն ջրասույզ արվեց, իսկ անձնակազմի անդամները մահապատժի ենթարկվեցին:

Կոստանդնուպոլսում Ռումելիհիսար ամրոցի շինարարության լուրը ընդունվեց մեծ անհանգստությամբ: Այնտեղ հստակ գնահատական տվեցին նաև դրա հնարավոր հետևանքների վերաբերյալ: Ուստի Կոնստանդին XI կայսրը սուլթանի մոտ ուղարկեց մի դեսպանություն, որին հրամայված էր բողոք ներկայացնել այն կապակցությամբ, որ թուրքերը ամրոց են կառուցում բյուզանդական պետությանը պատկանող հողերի վրա: Մեհմեդ II-ը մեղադրվում էր գոյություն ունեցող պայմանագրի խախտման մեջ: Ընդ որում, դեսպաններին հանձնարարված էր հիշեցնել սուլթանին, որ երբ Բայազիդը Բոսֆորի ասիական ափին ժամանակին կառուցեց Անադոլուհիսար ամրոցը, նա թույլտվություն էր խնդրել Կոստանդնուպոլսից:

Սակայն սուլթանը նույնիսկ հարկ չհամարեց ընդունելու դեսպանությանը, դրանով իսկ շեշտելով իր արհամարանքը կայսեր և նրա իշխանության նկատմամբ:

Երբ ամրոցի շինարարությունը արդեն հասել էր իր ավարտին, կայսրը կրկին մի դեսպանություն ուղարկեց Մեհմեդ II-ի մոտ, նրանց հետ դնելով հարուստ ընծաներ, խմիչքներ և այլն, որպեսզի գեթ երաշխիքներ ստանա, որ նոր ամրոցը իրենից սպառնալիք չի ներկայացնի բյուզանդական մայրաքաղաքի համար: Սակայն Մեհմեդը հրամայեց զնդան նետել դեսպաններին, իսկ այնուհետև փոխելով իր որոշումը, հրամայեց նրանց բոլորին գլխատել: Դա փաստորեն նշանակում էր պատերազմի հայտարարում: Կոնստանդին կայսրը այնուամենայնիվ կատարեց ևս մեկ քայլ սուլթանի հետ բախումից խուսափելու համար: Նա պահանջեց երաշխիքներ տալ, որ ամրոցի կառու-

ցումը չի հանդիսանա Կոստանդնուպոլսի վրա հարձակման նախանշան: Նրա դեսպանները սուլթանին հայտարարեցին, որ Կոնստանդին Թագավորը պատրաստ է ընդունելու նրա ցանկացած պայմանը: Որպես պատասխան Մեհմեդը պահանջեց հանձնել մայրաքաղաքը, որպես դրա հատուցում կայսերն առաջարկելով Մորեան, որը Բյուզանդիայի հին մայրաքաղաքն էր: Սակայն կայսրը կտրականապես մերժեց այդ առաջարկը, հայտարարելով, որ նման խայտառակությանը գերադասում է պատվավոր մահը ճակատամարտի դաշտում:

Այդ պահից սկսած Կոստանդնուպոլսում ամենուրեք իշխում էր համատարած սարսափը. «Դա քաղաքի վերջն է, մեր ժողովրդի վերջը: Դա Նեռի գալուստն է»,- ողբում էր մայրաքաղաքի բնակչությունը:

Ռումելիհիսար ամրոցի շինարարության ավարտից հետո Մեհմեդ II-ը իր բանակը շարժեց ընդուպ մինչև Կոստանդնուպոլսի պատերը և երեք օր շարունակ ուշադիր զննում էր քաղաքի ամրությունները և կատարում տեղանքի զննում: Միաժամանակ նա ձեռնամուխ էր եղել ստեղծելու հզոր հրետանային զորամասեր: Այդ գործում նրան մեծ ծառայություններ էր մատուցում հունգարացի ինժեներ Ուրբանոսը, որը թնդանոթներ ձուլելու խոշոր մասնագետ էր: Նրա շնորհիվ սուլթանական բանակն ապահովվեց մեծ ու փոքր տրամաչափի բազմաթիվ թնդանոթներով:

1452 թ. ձմռանը սուլթանը գիշեր-ցերեկ զբաղված էր Կոստանդնուպոլսի պաշարման նախապատրաստական աշխատանքներով: Նա անքուն գիշերներ էր անց կացնում, ուսումնասիրելով քաղաքի պաշտպանության գծագրերը, պլանավորում էր իր զորքերի տեղակայման վայրերը, որոշում պաշարողական հարմարանքների և թնդանոթների տեղադրման կետերը և այլն: Իր ժողովրդի և բանակի տրամադրությունները չոչափելու համար, սուլթանը սովորություն ուներ հասարակ զինվորի զգեստներով, երկու-երեք թիկնապահների ուղեկցությամբ, շրջել Ադրիանոպոլսի փողոցներում և հարցափորձ անել մարդկանց: Եթե որևէ մեկը ճանաչեր ծպտված սուլթանին, վերջինս, որ բացարձակապես անտարբեր էր մարդկային կյանքի նկատմամբ, տեղնուտեղը դաշույնով սպանում էր իրեն ճանաչողին:

Կոստանդնուպոլիսը գրավելու համար սուլթանին հաջողվեց կայսրության տարբեր նահանգներից հավաքել մի քանի հարյուր հազար մարդ, և ստեղծել մի հսկայական բանակ, որի կորիզը կազմում էին քսան հազար ենիչերիները: Սուլթանը անձամբ հսկում էր բանակի սպառազինման գործը: Երբ Կոստանդնուպոլսում կատարվեց բնակչության մարդահամար, պարզվեց, որ մայրաքաղաքի բնակչու-

թյունը կրճատվել է, և այնտեղ մնացել է ընդամենը հիսուն հազարից էլ պակաս մարդ, իսկ քաղաքը պաշտպանելու համար զենք կրելու ընդունակ մարդկանց թիվը չի գերազանցում հինգ հազարը: Օտարերկրյա վարձկանների, գլխավորապես ջենովական և վենետիկյան վարձկանների ջոկատների հետ Կոստանդնուպոլսի պաշտպանության ուժերը կազմում էին ընդամենը 7 հազար ռազմիկներ: Այդ ուժերով բյուզանդացիները պետք է պաշտպանեին տասնչորս մղոն քաղաքային պարիսպներ՝ իրենց տրամադրության տակ ունենալով միայն թեթև հրանոթներ:

Քաղաքի արդյունավետ պաշտպանության համար ունենալով ոչ միայն մարդկանց, այլև դրամական միջոցների սուր պակաս, կայսրը հիմնեց պաշտպանության ֆոնդ, որին իրենց կամավոր նվիրատվություններն էին անում մասնավոր անձինք, եկեղեցիներն ու վանքերը: Սկսեցին նույնիսկ ձուլել եկեղեցիների արծաթե սպասքեղենը, որը գնում էր դրամ հատելու վրա: Բյուզանդական մեծ թվով գործիչների համար միանգամայն պարզ էր, որ առանց Արևմուտքի օգնության մայրաքաղաքը և առհասարակ կայսրությունը ի վիճակի չէ շարունակելու իր գոյությունը: Անչուշտ կային նաև գործիչներ, որոնք թերահավատ էին, որ Արևմուտքը երբևիցէ ի վիճակի կլինի փրկելու Բյուզանդիան:

Թեև հզոր հակառակորդի դիմաց բյուզանդական մայրաքաղաքի ռազմական թուլությունը ակնհայտ էր, սակայն այդպես էլ ոչ ոք օգնության ձեռք չմեկնեց Կոստանդնուպոլսին: Եվրոպական պետություններից յուրաքանչյուրը իր սեփական տանը ուներ բազում խնդիրներ: Ուստի նրանցից ոչ մեկը ցանկություն չուներ զորքեր և ֆինանսական միջոցներ տրամադրելու Արևելքում ինչ որ նոր արկածախնդրության համար: Թեև Եվրոպայում գտնվող հույն քաղաքական վտարանդիները համոզում էին կաթոլիկ երկրների միապետներին, որ անհրաժեշտ է առանց վայրկրան խակ ուշացնելու հավաքել բանակ և այն շարժել դեպի Արևելք, սակայն այդ հորդորները մնացին անպատասխան: Իսկ 1447 թ. գահակալած Նիկողայոս V պապը թեև անտարբեր չէր հունական գործերի նկատմամբ, սակայն չգիտեր, թե Եվրոպայի աշխարհիկ տիրակալներից ում կարող էր դիմել օգնության կոչով: Բացի այդ, պապը առանձնապես հակված չէր օգնելու մի քաղաքի, որը շարունակում էր հրաժարվել կատարելու ֆլորենտիայում իր հպատակների անունից կայսեր կողմից ստորագրված ունիայի պայմանները: Նիկողայոս V պապը սահմանափակվեց լոկ 1453 թ. մարտին սննդամթերքի և զենքի մի խմբաքանակի առաքմամբ, որը

մայրաքաղաք բերեցին երեք ջենովական նավեր: Միակ ոգևորիչ հանգամանքը այն էր, որ հունվարին բյուզանդական մայրաքաղաք ժամանեց պաշտպանողական ամրությունների գծով հայտնի մասնագետ ջենովացի Ջովաննի Ջուստինիանին՝ 700 հոգուց բաղկացած և հիանալի զինված ջենովական ռազմիկների ուղեկցությամբ: Կայսրը նրան հանձնարարեց քաղաքի պաշտպանության գործը: Ջենովացին անմիջապես ձեռնամուխ եղավ գործի: Քաղաքի բնակչության եռանդուն աջակցությամբ նա սկսեց բարելավել մայրաքաղաքի պաշտպանողական ամրությունների ողջ համակարգը:

Ինչ վերաբերում է վենետիկցիներին, ապա նրանց ռազմական օգնությունը զուտ խորհրդանշական էր: Միայն վենետիկյան երկու ռազմանավեր չարժվեցին դեպի Կոստանդնուպոլիս, այն էլ միայն պաշարումը սկսվելուց երկու շաբաթ հետո: Այդ օրերին բյուզանդական դիվանագիտությունը լծվել էր եռանդուն գործունեության, կյանքի կոչելու համար կաթոլիկ Արևմուտքի ծավալուն պաշտպանողական մի դաշինք: Ընդ որում, եվրոպական պետություններին ներշնչվում էր այն միտքը, որ Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման դեպքում մահացու վտանգ է ստեղծվելու նաև ողջ քրիստոնյա աշխարհի համար:

1452 թ. Կոնստանդին XI կայսրը օգնության թախանձանքով վերջին անգամ դիմեց Արևմուտքին, սակայն դարձյալ ապարդյուն:

Այսպիսով Կոստանդնուպոլսին մնում էր միայն հույսը դնել սեփական ուժերի վրա: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ այն արդեն կտրվել էր մնացած քրիստոնեական աշխարհից: Միանգամայն ակնհայտ էր, որ դեռևս մինչև Թուրքերի կողմից ռազմական գործողությունների սկսումը, Բյուզանդիայի մայրաքաղաքը արդեն դատապարտված էր: Օսմանյան նվաճումները հասել էին մինչև Դանուբի ափերը և սպառնում էին Կենտրոնական Եվրոպային: Բյուզանդական կայսրությունը, որն ըստ էության բաղկացած էր միայն մեկ, այն էլ դեգրադացվող քաղաքից, չէր կարող դիմակայել մի այնպիսի պետությանը, որը զբաղեցնում էր Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի տարածքի մեծ մասը, մի պետության, որն իր տրամադրության տակ ուներ ժամանակի ամենահզոր բանակը:

Մինչդեռ Կոստանդնուպոլսում դրությունը չափազանց ծանր էր: Մայրաքաղաքը գտնվում էր դինաստիական ճգնաժամի, քաղաքական անկման և ներքին խորը երկպառակությունների մեջ: Վեճերն ու անհամաձայնությունը համակել էին ոչ միայն տիրապետող շրջաններին ու վերնախավին, այլև քաղաքի բնակչությանը: Շարունակվում էր եկեղեցական պառակտումը ուղղափառ հույների և կաթոլիկ լատին-

ների միջև: Այդ դավանական վեճերի պատճառով ջլատված և հոգեկան կորովը կորցրած ժողովուրդը մատնվել էր տագնապի: Մայրաքաղաքում ընթանում էր համարյա չդադարող պայքար ազնվականության լատինամետ մասի և ունիայի հակառակորդների միջև: Այսպիսով մայրաքաղաքն իր ծոցում սնուցում էր դժգոհների մի ամբողջ դաս:

Առհասարակ Կոստանդնուպոլիսն այդ ժամանակ դեգրադացվող ու անկում ապրող մի քաղաք էր: Նրա բնակչությունը, որը XII դարում իր չրջակա վայրերի հետ միասին կազմում էր մոտ մեկ միլիոն մարդ, այժմ հաչվվում էր ոչ ավել, քան հարյուր հազար, ընդ որում, բնակչության կողմից քաղաքը դանգվածորեն լքելու պատճառով մարդկանց թիվը գնալով նվազում էր: Երբ Թուրքերի հարձակման նախօրյակին քաղաքում կատարվեց բնակչության մարդահամար, պարզվեց, որ մայրաքաղաքում մնացել է ընդամենը հիսուն հազարից էլ պակաս մարդ, իսկ քաղաքը պաչտպանելու համար զենք կրելու ընդունակ մարդկանց թիվը չի գերազանցում հինգ հազարը:

Կոստանդնուպոլսի անկման նախօրյակին մայրաքաղաքում սուր պայքարի մեջ էին երեք քաղաքական հոսանքներ՝ ազգային-ուղղափառական կուսակցությունը, արևմտական-լատինասիրական կուսակցությունը և Թուրքասիրական կուսակցությունը:

1452 Թ. նոյեմբերին Կոստանդնուպոլիս ժամանեց պապական լեգատ կարդինալ Իսիդորը: Երբ Քրիստոսի ծննդյան նախօրեին Ս. Սոֆիայի տաճարում նա կայսրի, պալատականների և բարձրաստիճան հոգևորականների ներկայությամբ կաթոլիկական ծեսով պատարագ մատուցեց և հրապարակեց Ֆլորենտինյան ունիայի դրույթները ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների միջև կայացած դաչինքի մասին, քաղաքում սկսվեցին հուզումներ, որոնք ընթանում էին հետևյալ կարգախոսի ներքո. «Մեզ պետք չէ ոչ լատինների օգնությունը և ոչ էլ միավորումը նրանց հետ»: Գրգռված ժողովուրդը և հոգևորականների հոծ խմբերը լցվեցին փողոցները աղաղակելով ու անեծք կարդալով լատինների դեմ: Թափորը չարժվեց դեպի Պանտոկրատորի վանքը, ուր գտնվում էր Գենադիոս անունով գիտնական վանականը և նրանից պահանջեցին ճչտել իրենց հետևելիք ուղին: Գենատիոսը տվեց իր գրավոր պատասխանը, որտեղ նա ասում էր, որ լատինները վիրավորում են իրենց պապենական հավատքը և խոսում էր այն աստվածային պատժի մասին, որ անպայման կգա սրբապղծության պատճառով:

Այդ լարված ու ճգնաժամային պահին բյուզանդական նավատորմի հրամանատար Լուկա Նոտարասը նետեց հետևյալ արտահայտությունը. «Ավելի լավ է քաղաքում որպես թագավոր տեսնել թուրքական չալման, քան պապական խույրը»:

Կարդինալ Իսիդորի Կոստանդնուպոլսում կատարած դերի մասին Կ. Մարքսը գրում էր. «Միրանի քղամիդի ներկայությունը քաղաքում հենց այն ժամանակ, երբ ամեն օր թուրքերը գրոհում էին քաղաքի վրա, պառակտում առաջացրեց այնտեղ»: Աբրահամ Անկյուրացին «Ողբ ի վերայ առման Կոստանդնուպոլսոյ ի տաճկաց» գրվածքում «անգութ լատինների» միջամտության հետևանք էր համարում բյուզանդական մայրաքաղաքի ողբերգությունը:

Թեև հուզումները աստիճանաբար մարեցին, սակայն քաղաքացիներն ամեն պահ բացահայտ ցուցադրում էին, որ իրենք չեն ընդունում ֆլորենտինյան ժողովի ընդունած որոշումը: Կոստանդնուպոլսի բնակիչների մեծ մասը աղոթելու էր գնում միայն այն եկեղեցիները, որոնց հոգևորականները բացահայտ կերպով չէին ընդունում ունիան:

Այսպիսով, ահեղ վտանգի պահին ոչ միայն պաշարվածների միջև միասնություն գոյություն չուներ, այլև մայրաքաղաքի բնակչությունը հոգեպես ընկճված էր և հույս չուներ, որ կարող է հաղթել ահարկու թշնամուն: Քաղաքում պտտվում էին ամեն տեսակի սև կանխագուշակություններ կայսրության մոտալուտ վախճանի վերաբերյալ:

Քաղաքը պաշարողները, ընդհակառակը, լցված էին վայրագ ոգևորությամբ: Ավարի տենչը մի կողմից՝ կրոնական մոլեռանդությունը մյուս կողմից, գրգռում էին թուրք զինվորների ռազմաչունչ եռանդը: Նրանց շարքերում ևս շրջում էին կանխագուշակություններ իրենց մոտալուտ հաղթանակի մասին:

Այսպիսին էր Բյուզանդիայի մայրաքաղաքի ներքին դրությունը, երբ սուլթան Մեհմեդ II-ը պատգամ ուղարկեց իր հսկողության ներքո գտնվող բոլոր շրջանները, որ ովքեր ընդունակ են սուր բռնելու, գան և միանան իրեն: Արձագանքելով այդ կոչին՝ Կոստանդնուպոլսի պատերի տակ կենտրոնանում էին նորանոր զորամիավորումներ: 1452 թ. աշնանը թուրքերը գրավեցին բյուզանդական կայսրերին պատկանող վերջին քաղաքները՝ Մեսիմորիան, Անխիալը, Վիզան, Սիլիվրիան: Ըստ էության մայրաքաղաքը հայտնվել էր կրակե օղակով շրջապատված կղզու վիճակում: Երբ 1452-1453 թթ. ձմռանը թուրքական հեծյալ զորամասերը Պերայի շրջանում քաղաքային դարպասների մոտ ճամբար դրեցին, Գալաթա թաղամասում հիմնավորված ջենովացիները անմիջապես չտապեցին թուրքական ռազմական ճամբարը՝ իրենց բարեկամական զգացումները թուրքերին ցուցադրելու համար: Բնականաբար այդ լուրը ճնշող տպավորություն էր թողնելու քաղաքի պաշտպանների վրա:

Ամբողջ ձմեռը էդիրնեում ընթանում էին վերջին նախապատրաս-

տությունները Կոստանդնուպոլսի վրա վճռական գրոհ կազմակերպելու համար: Մեհմեդը մանրազնին կերպով ուսումնասիրում էր քաղաքի հատակագիծը, նրա ամրությունների դասավորությունը: Ընդ որում, նա դա անում էր խորը գաղտնիության պայմաններում: Պաշարման սկզբի և քաղաքի գրավման ժամկետների, ինչպես նաև գործողության բուն պլանի մասին նա որևիցե մեկի հետ չէր խորհրդակցում կամ կիսվում: Առհասարակ նա ոչ մեկին չէր վստահում: Սուլթանը իր ողջ ուշադրությունը կենտրոնացրել էր թուրքական զորքերի մարտունակության բարձրացման և նրան պաշարողական տեխնիկայով ապահովելու գործին: Էդիրնեի շրջակայքում ստեղծվել էր մի արհեստանոց, որտեղ հռչակավոր հունգարացի վարպետ Ուրբանոսի հսկողության ներքո ձուլվում էին տարբեր տրամաչափի հզոր թնդանոթներ: Այդ թնդանոթներից մեկը ուներ իսկապես վիթխարի չափեր: Նրա փողի շառավիղը 12 ափաչափ էր: Այդ թնդանոթը կրակում էր 30 փութ ծանրությամբ քարե գնդեր: Աղբյուրները վկայում են, որ հիշյալ թնդանոթը Էդիրնեից Կոստանդնուպոլսի պատերի մոտ են բերել 60 լծկան եզներ՝ երկու ամսվա ընթացքում:

Անկասկած սուլթանը հիանալի հասկանում էր, որ Կոստանդնուպոլսի նախկին պաշարումները ավարտվել են անհաջողությամբ գլխավորապես այն պատճառով, որ քաղաքը գրոհի էր ենթարկվում միայն ցամաքի կողմից: Օգտվելով ծովի վրա իրենց ունեցած առավելությունից՝ բյուզանդացիները փաստորեն պաշարումը դարձնում էին անարդյունավետ, որովհետև ծովով իրենք կարող էին ստանալ այն ամենը, ինչ իրենց անհրաժեշտ էր: Ուստի Մեհմեդը հստակորեն գիտակցում էր, որ քաղաքի շրջապատումը կատարյալ դարձնելու և ի վերջո այն գրավելու համար կենսականորեն անհրաժեշտ է, որ իր տրամադրության տակ ունենա նաև ռազմանավեր ու բեռնատար նավեր: Ուստի նա մեծագույն եռանդով սկսեց ստեղծել ռազմական ու տրանսպորտային նավատորմ՝ օգտագործելով ինչպես հին նավերը, այնպես էլ Էգեյան ծովի նավաշինարաններում կառուցելով նորերը: Ի վերջո նա կարողացավ թուրքական դրոշի ներքո հավաքել տարբեր ջրատարողություն և կրակային հզորություն ունեցող մոտ 125 ռազմանավեր, չհաշված մեծ թիվ կազմող օժանդակ նավերը:

Երբ 1453 թ. գարնանը այդ հսկայական նավատորմը դուրս եկավ Գալլիպոլիից, որպեսզի մտնի Մարմարա ծով, հույները զարմանքով ու սարսափով նկատեցին, որ թուրքերը ստեղծել են մի նավատորմ, որը հինգ անգամ գերազանցում է իրենց ունեցածին:

1453 թ. հունվարի վերջին Մեհմեդ II-ը հավաքեց արքունիքի

պաշտոնական անձանց ու իր մերձավորներին, որպեսզի հրապարակի իր պատերազմական ծրագրերը և հավանություն ձեռք բերի դրանք կենսագործելու համար: Այդ հավաքի ժամանակ նա հայտարարեց, որ ինքը իր պետության անվտանգությունը ապահովված կհամարի միայն այն ժամանակ, երբ բյուզանդական մայրաքաղաքը գտնվի Թուրքերի ձեռքերում: Ընդ որում, սուլթանը փաստարկներ բերեց այն մասին, որ Կոստանդնուպոլսի գրավման պլանը կառուցված է իրատեսական հիմքերի վրա և որ ինքը ռազմական առումով Կոստանդնուպոլիսը չի համարում անառիկ: Առաջին անգամ նա հրապարակեց նաև պետական գաղտնիքը՝ օսմաններն արդեն տիրապետում են ծովի վրա: Մեհմեդը իր մերձավորների ուշադրությունը հրավիրեց նաև այն բանի վրա, որ քաղաքում տիրող կրոնական կոնֆլիկտները թուլացնում են քաղաքի պաշտպանունակությունը: Շարունակելով իր խոսքը՝ սուլթանը նշեց, որ թեև բյուզանդացիները ռազմական առումով թույլ են, բայց դրանով հանդերձ հանրահայտ իրողություն է, թե ինչպիսի վարպետությամբ նրանք կարողանում են նրբին սադրանքներ հյուսել Թուրքերի թշնամիների շրջանում: Նա չեշտեց, որ Կոստանդնուպոլիսը այնքան էլ անառիկ չէ, ինչպես պատկերացնում են: Նախկին պաշարումները հաջողությամբ չեն պսակվել արտաքին պատճառների հետևանքով: Այժմ ստեղծվել է միանգամայն հարմար պահ: Կրոնական երկպառակությունները ծվատում են քաղաքը: Իտալացիները անհուսալի են իբրև դաշնակիցներ և նրանցից շատերը պատրաստ են դավաճանության դիմելու:

Նիստը նա եզրափակեց հետևյալ խոսքերով. անձամբ իր համար պարզ է մի բան. եթե ինքը չկարողանա կառավարել կայսրությունը առանց Կոստանդնուպոլսի, ապա կգերադասեր այն առհասարակ չկառավարել:

Հավաքի մասնակիցները ապշած էին, թե բացարձակ գաղտնիության պայմաններում ինչպիսի լայնահուն ծրագրեր է մշակել սուլթանը: Նույնիսկ կառավարության այն անդամները, որոնք ներքուստ հավանություն չէին տալիս Մեհմեդ II-ի նկատառումներին, չհամարձակվեցին բարձրացնել իրենց առարկությունները: Վեզիրները միահամուռ կերպով պաշտպանեցին սուլթանի որոշումը և քվեարկեցին հօգուտ պատերազմի:

Այսպիսով, Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավման հարցը մտնում էր օրակարգ և սպասում էր իր լուծմանը:

Մահմեդական հոգևորականությունը ևս հանդես եկավ սուլթանի ծրագրի պաշտպանությամբ: Աստվածաբան-ուլեմները և հասարակ մոլլաները սկսեցին գաղափարական մշակման ենթարկել բանակը:

Զինվորներին ներշնչում էին, որ նա, ով առաջինը կներխուժի քաղաք, Մուհամմեդ մարգարեի կողմից կարժանանա դրախտի հավետ երանության: Փետրվարի 26-ի գիշերը յոթ նավեր Պետրո Դավանցոյի ընդհանուր հրամանատարությամբ (վեցը Կրետե կղզուց, մեկը՝ Վենետիկից), որոնց վրա կային 700 իտալացիներ, դուրս գալով Ոսկեղջյուրից, ճողոպրեցին: Նրանց փախուստը լրջորեն թուլացրեց Կոստանդնուպոլսի պաշտպանությունը: Սակայն դրանից հետո այլևս ոչ մի մարդ՝ լիներ հույն կամ իտալացի, այլևս չդրսևորեց նման փոքրոգություն և չհետևեց նրանց օրինակին:

1453 թ. ապրիլի 2-ին կայսրը հրամայեց քանդել խանդակների վրա եղած կամուրջները և փակել քաղաքի դարպասները: Նույն օրը նա կարգադրեց Ոսկեղջյուրի մուտքի մոտ մեկ ափից մյուս ափը քաշել երկաթյա շղթա, նավերի մուտքը արգելակելու համար:

1453 թ. մարտին օսմանյան պետության բոլոր մասերից զորաշարժ կատարվեց դեպի Կոստանդնուպոլիս: Ապրիլի 5-ին վերջին զորամիավորումների հետ ժամանեց նաև բանակը գլխավորող սուլթանը: Ապրիլի 6-ին մայրաքաղաքը վերցվեց պաշարման օղակի մեջ: Հակառակորդների ուժերը աներևակայելի չափով անհավասար էին: Քաղաքի մեկ զինված պաշտպանին ընկնում էր ավելի քան քսան թուրք ռազմիկ: Թուրքական նավատորմը Բալթաօղլուի հրամանատարությամբ հրաման էր ստացել շրջափակել ծովափը, որպեսզի քաղաքը ծովի կողմից չստանա որևէ օգնություն: Մարմարա ծովի ափերի երկայնքով մշտապես երթևեկում էին թուրքական ռազմանավերը՝ թույլ չտալով, որ որևէ նավ մոտենա նավահանգիստներին: Սակայն Բալթաօղլուի գլխավոր խնդիրը ծովի կողմից քաղաքի ներխուժումն էր: Որպես իր հրամանատարական կենտրոն՝ սուլթանը ընտրեց տեղանքի ամենաբարձր կետը՝ մայրաքաղաքի Ադրիանոպոլսյան դարպասների դեմ-դիմաց՝ որի շուրջը տեղակայվեցին ենիչերիական զորամասերը: Հենց այնտեղ էլ հիմնեցին հրետանու կրակակետ՝ տեղադրելով Ուրբանոսի սարսափազդու թնդանոթը և այլ տարբեր տրամաչափերի թնդանոթներ:

Իր հերթին կայսրը որպես ռազմական ընտրեց Սուրբ Ռոմանոսի դարպասների մոտ գտնվող վայրը՝ սուլթանի շտաբի ուղիղ դիմացը:

Սուլթանի բանակը բաղկացած էր մոտ 150 հազար զինվորներից, իսկ նավատորմը 80 ռազմանավերից և ավելի քան 300 բեռնանավերից: Պաշարողների աջ թևը, որը ձգվում էր մինչև Ոսկյա դարպասները, բաղկացած էր փոքր Ասիայում հավաքված զորքերից, որոնց հրամանատարը փորձառու Իսխակ-փաշան էր:

Սուլթանի եվրոպական տիրույթներում հավաքված գնդերը (մոտ 50 հազար ռազմիկներ, որոնք Բաղկացած էին Բուլղարիայի, Սերբիայի և Հունաստանի եվրոպական վասալների տրամադրած զինվորներից) կազմեցին պաշարողների ձախ թևը, որը ձգվում էր մինչև Ոսկեղջյուրի ափերը: Դրանց հրամանատարն էր ոչ պակաս փորձառու Կարաջա-բեյը: Իր զորքերի թիկունքում սուլթանը տեղաբաշխեց հեծելազորը: Պերայի բլուրների վրա տեղավորվեցին Սաղան-փաշայի զորամասերը, որոնց խնդիրն էր իրականացնել հսկողությունը Ոսկեղջյուրի մուտքի նկատմամբ: Հենց այդ նույն նպատակով թուրքական նավատորմի մի մասը տեղակայվեց Բոսֆորի ջրերի այն մասում, որը միաձուլվում էր Ոսկեղջուրի հետ:

Կոստանդնուպոլսի զորահրամանատարները գլուխ էին ջարդում հետևյալ դժվարին խնդրի լուծումը գտնելու համար. ինչպես տեղաբաշխել ուժերը ամրությունների ողջ գծով, որոնց երկարությունը կազմում էր մոտ 52 կիլոմետր: Հույս ունենալով, որ թուրքերը չեն գրոհի քաղաքի վրա Մարմարա ծովի կողմից, բյուզանդացիները նվազագույն թվով զինվորներ առանձնացրին քաղաքի ծովային պատերը պաշտպանելու համար: Ոսկեղջյուրի ափերի պաշտպանությունը հանձնարարվեց վենետիկյան և ջենովական նավաստիներին: Պաշտպանության կենտրոնում, Սրբ. Ռոմանոսի դարպասների մոտ տեղակայված էին իտալական, գերազանցապես ջենովական, վարձկանների ջոկատները: Քաղաքային պատերի մնացած տեղամասերը պաշտպանում էին բյուզանդացիների և լատին-վարձկանների խառը ջոկատները: Քաղաքի պաշտպանները զինված էին նիզակներով և նետ ու աղեղներով, երկարափող հրացաններով և քար նետող հարմարանքներով: Նրանք գործնականում հրետանի չունեին: Այն մի քանի թնդանոթները, որ գտնվեցին քաղաքում, պարզվեցին, որ օգտագործման համար պիտանի չեն: Քաղաքի զորամասը, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, օժտված էր բարձր մարտական հատկանիշներով: Նրա զինվորները հաճախ անակընկալ հարձակումներ էին գործում թուրքերի վրա, ձգտելով խանգարել նրանց, որպեսզի չկարողանան քաղաքի պատերին մոտեցնել պաշարողական տեխնիկա: Որպեսզի ցույց տա, որ Վենետիկից քրիստոնյաները եկել են իրեն օգնության, կայսրը հրամայեց, որ պատերի վրա մշտապես երևան Վենետիկից ժամանած նավաստիները:

Կոստանդնուպոլսի եկեղեցիներում մեկ շաբաթ շարունակ ժողովուրդն աղոթում էր՝ Աստծուց հայցելով փրկություն:

1453 թ. ապրիլի 6-ին սուլթանի պատգամաբերները սպիտակ

դրոշները ձեռքներին մուտք գործեցին քաղաք, կայսերը հանձնելու համար Մեհմեդ II-ի վերջին ուղերձը: Նրանում ասվում էր, որ մահմեդականների օրենքի համաձայն, սուլթանը կերաշխավորի քաղաքի բնակիչների կյանքի և գույքի ապահովություն, եթե քաղաքը առանց դիմադրության, կամովին հանձնվի իրեն: Հակառակ պարագայում սուլթանը ներումն չէր խոստանում քաղաքի պաշտպաններից և ոչ մեկին: Առաջարկը մերժվեց, քանի որ նախ քաղաքի բնակիչները չէին հավատում սուլթանի խոստումներին և ապա չէին ցանկանում դավաճանել իրենց կայսրին: Պատասխան ուղերձում կայսրը գրում էր. «Քանի որ միանգամայն ակներև է, որ դու ավելի շատ ես ցանկանում պատերազմ, քան խաղաղություն... ես քեզ ազատում եմ ինձ քո տված բոլոր երդումներից և ինձ հետ կնքած բոլոր պայմանագրերից և փակելով իմ մայրաքաղաքի դռները՝ ես կպաշտպանեմ իմ ժողովրդին մինչև իմ արյան վերջին կաթիլը»:

Այնժամ թուրքական թնդանոթները որոտացին: Թեև մի քանի օր շարունակ հրետանին անընդհատ ռմբակոծում էր քաղաքը, սակայն նրան հաջողվեց միայն մասնակիորեն ավերել առանձին ամրություններ: Դրա պատճառը ոչ միայն Կոստանդնուպոլսի պատերի ամրությունն էր, այլև թուրք հրետանավորների անփորձությունը: Հրետակոծության ժամանակ սարսափազդու ահռելի մեծության Ուրբանոսի թնդանոթը պայթեց, վիրավորելով նրա ստեղծողին:

Ապրիլի 18-ին սուլթանը հրամայեց սկսել քաղաքի գրոհը: Բորբոքվեց աներևակայելի դաժան և արյունահեղ ճակատամարտ: Լուսաբացին թուրք զինվորները նետվեցին դեպի թնդանոթի գնդերից պատերի մեջ բացված անցքերը: Խորը փոսերն ու խանդակները լցնելով ավազ պարկեր և սպանվածների դիակներ, թուրքերը նրանց վրայով գրոհում էին առաջ: Բյուզանդացիները թուրքերի վրա նետում էին քարեր, լցնում էին եռացող խեժ, խոցում էին նետերով ու նիզակներով:

Կոստանդնուպոլսի պաշարման ականատեսներից մեկը՝ Նեստոր Իսքանդերը, որը հեղինակ է «Պատմվածք Ցարգրադի, նրա հիմնադրման ու թուրքերի կողմից գրավման» երկի, հետևյալ կերպ է նկարագրում այդ բոլորը. «Կրակող թնդանոթների և հրացանների որոտումից, զանգերի ու մարտնչող մարդկանց ձայնից, զենքերի բախումից լսվող չաչյունից, մարդկանց լացից ու հեծեծանքից թվում էր թե երկինքն ու երկիրը խառնվել ու շարժվում են: Հնարավոր չէր մեկը մյուսին լսել. մարդկանց հեկեկանքները, լացն ու ողբը գումարվել էին ճակատամարտի աղմուկի և զանգերի զողանջի հետ՝

դառնալով մի միասնական աղմուկ, որը նման էր ուժգին որոտի: Բազմաթիվ կրակներից, թնդանոթներից ու հրացաններից դուրս եկած ծուխը պատել էր ողջ քաղաքը և զորքերին. մարդիկ չէին կարող տեսնել մեկ-մեկու, չատերը խեղդվեցին վառոդի ծխից»:

Գրոհի առաջին իսկ ժամը ցույց տվեց, որ թեև Կոստանդնուպոլսի պաշտպանների թիվը մեծ չէր, սակայն նրանցից յուրաքանչյուրը պատրաստ էր մարտնչելու մինչև վերջ:

Սուլթանին սպասում էր նաև մեկ այլ տհաճ անակնկալ: Ապրիլի 20-ին, Մեհմեդի համար միանգամայն անսպասելի կերպով, թուրքերը տանուլ տվեցին ծովային ճակատամարտը: Ջենովական երեք թիանավեր, որոնք Հռոմի պապի կողմից Կ. Պոլիս էին տանում զենք, ռազմամթերք և պարեն, ինչպես նաև բյուզանդացիներին պատկանող մի մեծ բեռնատար նավ ցորենի բեռով, որը զինված էր «Հունական կրակի» զենքով, կարողացան անցնել Դարդանելը և հայտնվել քաղաքի մոտ: Տեղեկանալով այդ մասին, սուլթանը ձիով սուրաց ծովակալի մոտ, հրամայելով կամ գրավել, կամ խորտակել հակառակորդի նավերը: Նա նախազգուշացրեց ծովակալին, որ եթե վերջինս չկարողանա կատարել իր հրամանը, թող կենդանի չվերադառնա: Բորբոքվեց կատաղի ծովամարտ: Քրիստոնյաների նավերը, որոնք ավելի լավ էին զինված և ավելի շարժունակ ու լավ կառավարելի էին, այդ անհավասար մարտում կարողացան ձեռք բերել հաղթանակ: Թուրքերը կորցրին բազմաթիվ նավեր, որոնք այրվեցին «Հունական կրակի» միջոցով: Ջենովացիների և բյուզանդացիների նավերը կարողացան հաղթահարել թուրքերի ծովային պատնեշը և մուտք գործելով Ոսկեղջյուր՝ միացան այնտեղ կանգնած կայսերական նավատորմին: Սուլթանը, որը Պերայի շրջանում Բոսֆորի ափերի բարձրունքներից դիտում էր այդ ծովային ճակատամարտը, կատաղության մեջ էր: Քիչ էր մնացել, որ թուրքական նավատորմի հրամանատար Բալթաօղլուին մահապատժի ենթարկեն: Սակայն ի վերջո նրան պատժեցին մահակի հարվածներով, զրկելով բոլոր աստիճաններից ու կոչումներից, ինչպես նաև ունեցվածքից, որը բաժանվեց ենիչերիների միջև:

Այդ անհաջողությունից հետո Մեհմեդը դիմեց մի քայլի, որը հավանաբար նրան հուշել էր իր մոտ ծառայության մեջ գտնվող մի իտալացի: Նա հրամայեց ցամաքով իր նավերի մի մասը հասցնել Ոսկեղջյուր: Այդ նպատակով կառուցվեց մի հսկա փայտյա հարթակ, որը տեղադրեցին Գալաթայի պատերի մոտ: Մեկ գիշերվա ընթացքում այդ հարթակի վրայով, որի վրա քսված էր յուղի հաստ

չերտ, Թուրքերը եղներին կապված պարաններով 70 ծանր նավեր քաշեցին մինչև Ոսկեղջյուրի հյուսիսային ափը և դրանք իջեցրին ծով: Ապրիլի 22-ի առավոտյան քաղաքի պաշտպանների աչքի առջև, հույների պաշտպանության հենց կենտրոնում, հառնեց Թուրքական նավատորմը իր բարձրացված առագաստներով ու ծածանվող դրոշներով: Տպավորությունն այնպիսին էր, որ կարծես այդ նավերը ծնունդ են առել հենց ծովից, քանի որ այնտեղ մտնելու ճանապարհ չկար: Ոսկեղջյուրի հենց մուտքի մոտ, մարտական հարձակողական դիրքով շարք էին կազմել յոթանասուն Թուրքական նավեր: Ոչ ոք չէր սպասում հարձակում այդ կողմից, որը հանդիսանում էր քաղաքի պաշտպանության ամենաթույլ ու խոցելի տեղամասը: Միանգամից սպառնալիքի տակ հայտնվեցին նաև ծովախորշի մուտքը պաշտպանող բյուզանդացիների նավերը: Բյուզանդական և լատինական ծովային հրամանատարները որոշեցին փորձել կրակի մատնելու Թուրքական նավատորմը: Բյուզանդական մի նավ վենետիկցի Կոկկոյի հրամանատարությամբ, անչչուկ ու գաղտագողի մոտեցավ Թուրքական նավատորմի կանգառման վայրը: Սակայն Մեհմեդը հակառակորդի մտադրության մասին նախազգուշացված էր Գալաթայի ջենովացիների կողմից: Կոկկոյի նավը հրետակոծվեց ու խորտակվեց: Անձնակազմի նավաստիների կենդանի մնացած մասը փորձեց լողալով փրկություն գտնել, սակայն Թուրքերը որսացին բոլորին և քաղաքի պաշտպանների աչքի առջև նրանց բոլորին մահապատժի ենթարկեցին: Որպես պատասխան, կայսրը հրամայեց գլխատել 260 գերի Թուրք զինվորների և նրանց գլուխները ցուցադրել քաղաքային պարիսպների վրա: Այսպես թե այնպես, Ոսկեղջյուրի նկատմամբ հույները այլևս անդարձ կորցրել էին իրենց հսկողությունը: Իսկ Թուրքերը հնարավորություն էին ստացել գործելու նրանց Թիկունքում:

Մինչդեռ քաղաքի պաշտպանների վիճակը գնալով դառնում էր աղետալի: Կտրուկ վատթարացել էր սննդամթերքով և այլ ապրանքներով մատակարարման գործը: Ծովային ճանապարհով Վենետիկից սննդամթերքներ ձեռք բերելու փորձը ավարտվեց անհաջողությամբ: Պաշտպանվողների հոգեկան վիճակը ևս գնալով ավելի ու ավելի էր ծանրանում: Մարդիկ, որոնք տրված էին մայրաքաղաքում չրջանառվող վատ կանխագուշակումներին, իրենց ճակատագիրը արդեն համարում էին վճռված և այդ վճիռը, ըստ իրենց, երկնքից էր գալիս: Մինչդեռ Թուրքերը, ընդհակառակը, լցված էին վայրագ մոլեռանդությամբ, վստահ իրենց հաղթանակին: Ավարի

տենչը մի կողմից՝ և կրոնական մոլեռանդությունը մյուս կողմից՝ ուժ էին տալիս հարձակման թափին: Մայրաքաղաքում ժամանակ առ ժամանակ արյունահեղ կռիվներ էին ծագում վաղեմի ավանդական թշնամիների՝ վենետիկցիների ու ջենովացիների միջև: Շատերը կասկածամտությամբ էին վերաբերվում օտարերկրյա վարձկանների նկատմամբ: Այդ բոլորին ավելանում էր նաև բյուզանդական հոգևորականության դժգոհությունը կայսեր նկատմամբ, որը պաշտպանության համար միջոցներ որոնելու փնտրտուքներում ոտնձգություն էր կատարում եկեղեցական գույքի նկատմամբ: Իսկ ամենավտանգավորը այն էր, որ կայսերը շրջապատող պալատականների շրջանում սկսել էին վերելք ապրել պարտվողական տրամադրությունները: Մի խումբ մերձավորներ խորհուրդ էին տալիս Կոնստանդինին հանձնվել, մեկ այլ խումբ փորձում էր համոզել նրան, որ լքի քաղաքը և դիմադրություն կազմակերպի նրա պատերից դուրս: Սակայն կայսրը մնում էր անդրդվելի: Ավելին, նա աշխատում էր անձնական օրինակով բարձրացնել պաշարվածների մարտական ոգին և համախմբել նրանց: Նա շրջում էր ամրությունները, անձամբ ստուգում զորքերի մարտունակությունը, նրանց ներշնչում ինքնավստահություն և հավատ հաղթանակի նկատմամբ:

1453 թ. մայիսի սկզբին քաղաքի հրետակոծությունը ուժեղացավ: Վերանորոգումից հետո կրկին շարք էր մտել Ուրբանոսի հսկա թնդանոթը, որի կրակոցները փլուզում էին Կ. Պոլսի անառիկ համարվող պատերը: Պաշտպանության տեղամասերից մեկում փլված պատերի ուղղությամբ թուրքական զորքերը մի քանի ժամ շարունակ գրոհում էին, սակայն առանց հասնելու հաջողության: Մայիսի կեսերին թուրք սակրավորները սկսեցին հորատման աշխատանքներ իրականացնել պատերի տակ: Բյուզանդացիներին հաջողվեց տեղեկանալ այդ մասին և հորատում կատարել հանդիպակած կողմից: Նրանց հաջողվեց թափանցել թուրքերի փորած թունելի մեջ և այրել տանիքը պահող փայտյա հենակները, առաջ բերելով փլուզում: Մեծ թվով թուրքեր կենդանի թաղվեցին հողի տակ: Մայիսի 23-ին բյուզանդացիներին հաջողվեց գերել մի քանի հորատողների և կտտանքների միջոցով ստիպել նրանց ցույց տալու այն բոլոր տեղերը, որտեղ թուրքերը կատարում էին հորատումներ: Այդ բոլոր կետերը վնասազերծվեցին: Դա պաշարվածների խոշոր հաջողությունն էր:

Գնալով լարվածությունը երկուստեք մեծանում էր: Անընդհատ

գրոհները ծայր աստիճան հոգնեցրել էին թուրքական զորքերին: Այն զգացումը, որ հսկայական բանակը ոչ մի կերպ չի կարողանում ընկճել բյուզանդական մայրաքաղաքի մի բուռ պաշտպաններին, չէր կարող նրանց չբարոյալքել: Թերևս հենց այդ պատճառով մեծ վեզիր Խալիլի խորհրդով սուլթանը բանակցությունների մեջ մտավ կայսրի հետ: Նա իր աներոջը՝ Իսֆենդիար-օղլուին ուղարկեց կայսեր մոտ: Նրան առաջարկվեց կամ համաձայնվել թուրքերին վճարելու տարեկան 100 հազար ոսկյա վիզանտինի չափով հարկ և կամ ողջ բնակչության հետ հեռանալ քաղաքից: Վերջին դեպքում Մեհմեդը խոստանում էր վնաս չպատճառել հեռացողներին և թույլ տալ, որ իրենց ունեցվածքը վերցնեն իրենց հետ: Անձամբ կայսրին առաջարկվում էր մի վասալական թագավորություն Պելոպոնեսում:

Կոնստանդինը գումարեց արքունական խորհրդի նիստ սուլթանի առաջարկը քննարկելու համար: Որոշվեց երկու առաջարկներն էլ մերժել: Այդպիսի աներևակայելի մեծ տուրք բյուզանդացիները երբեք չէին կարողանա հավաքել, իսկ իրենց քաղաքը թշնամուն զիջելուն ոչ կայսրը և ոչ էլ նրա մերձավորները համաձայն չէին: Կայսրը պատասխանեց, որ ինքը մինչև իր վերջին շունչը պաշտպանելու է այն պետությունը, որ Աստված տվել է իրեն:

Կայսեր բացասական պատասխանը հունից հանեց սուլթանին, որը բացականչեց, որ այսուհետև հույները այլ ընտրություն չունեն բացի սրի քաշվելուց, գերի հանձնվելուց կամ իսլամն ընդուներուց: Նա անմիջապես գումարեց խորհուրդ, որոշելու համար հետագա անելիքը: Մեծ վեզիր Խալիլ-փաշան համարձակություն ունեցավ առաջարկելու, որ սուլթանը դադարեցնի անհաջող ընթացք ունեցող շրջապատումը և բյուզանդացիների հետ կնքի հաշտություն: Սակայն զորահրամանատարները և սուլթանի մերձավորների մեծագույն մասը առարկեցին այդ առաջարկին, պնդելով, որ ընդհակառակը, անհրաժեշտ է դիմել վճռական գրոհի: Բյուզանդացի պատմիչ Գեորգի Ֆրանձին վկայում է, որ խորհրդակցության ժամանակ սուլթանի զորահրամանատարներից մեկը՝ Սաղան-փաշան պնդում էր, որ Կ. Պոլիսը դատապարտված է, քանի որ ոչ մի տեղից չի կարող սպասել ռեալ օգնություն: Ավելին, իտալական և այլ արևմտյան տիրակալների միջև բացակայում է համախոհությունն ու միասնությունը: Եթե նույնիսկ նրանցից ոմանք մեծ դժվարությամբ և բազում վերապահումներով հանգեն միասնական տեսակետի, միևնույնն է, նրանց դաշինքը կարճ ժամանակ անց կփլուզվի, քանի որ նրանք դավում և խարդավանքներ են նյութում մեկը մյուսի դեմ և

ամբողջապես տարված են նրանով, թե ինչպես հափշտակեն ուրիշին պատկանածը:

Ուշադիր լսելով թեր ու դեմ բոլոր փաստարկումները՝ սուլթանը կայացրեց իր որոշումը. բանակը պետք է նախապատրաստվի վճռական գրոհի: Դեպի քաղաք թռան նետեր, որոնց ամրացված թղթերի վրա հայտնվում էր սուլթանի որոշման մասին:

Քաղաքի պաշտպաններին ոգեշնչելու նպատակով Կոնստանդին կայսրը իր հպատակներին դիմեց բոցաշունչ կոչով. քրիստոնյա տղամարդը միշտ պետք է պատրաստ լինի մեռնելու հանուն իր հավատի, իր երկրի, իր ընտանիքի և իր միապետի: Այժմ եկել է պահը, որ յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի մեռնելու միանգամից այդ բոլոր արժեքների համար: Այնուհետև կայսրը հիշեցրեց մեծ մայրաքաղաքի փառքի ու փառավոր ավանդույթների մասին, նշելով, որ ուխտադրուժ սուլթանը ցանկանում է կործանել ճշմարիտ քրիստոնեական հավատը, այն փոխարինելու համար «անհավատ» մահմեդականությամբ: Նա հորդորում էր, որ քաղաքի պաշտպանները արժանի լինեն իրենց նախնիներին՝ Հունաստանի և Հռոմի հին հերոսներին: Վերջում կայսրը բացականչում է, որ Աստծո օգնությամբ իրենք հաղթելու են: Պատմաբան Գիբբոնի արտահայտությամբ, ահա այսպիսին էր «Հռոմեական կայսրության վերաբերյալ մահախոսականը»:

Մայիսի 28-ին սուլթանը կատարեց զորքերի ստուգայց: Նա թույլ տվեց, որ այդ օրը բանակը հանգստանա: Այնուհետև նա իր վրանը հրավիրեց վեզիրներին ու զորահրամանատարներին և դիմելով նրանց ասաց. դարերի ընթացքում քրիստոնյաների մայրաքաղաքի գրավումը համարվել է ուղղադավան մահմեդականի սուրբ պարտականությունը: Վաղը ինքը իր զինվորներին ալիք առ ալիք ուղարկելու է քաղաքը գրոհելու այնքան ժամանակ, մինչև որ նրա պաշտպանները հանձնվեն: Վերջում սուլթանը կոչ է անում իր հրամանատարներին դրսևորել արիություն և պահպանել խստագույն կարգապահություն:

Սուլթանի հրամանով մունետիկները հայտարարում են, որ իսլամական սովորույթի համաձայն թույլատրվելու է, որ երեք օր քաղաքը մատնվի կողոպուտի և ավարառության: Այն զինվորները, որոնք առաջինը կմտնեն քաղաք, կպարգևատրվեն կալվածքներով կամ բարձր պաշտոններով: Պատմիչ Դուկան հաղորդում է, որ սուլթանը ասել էր իր զինվորներին, որ Կ. Պոլսում ինքը անձամբ չի փնտրում այլ ավար, «բացի քաղաքի շենքերից ու պատերից: Իսկ մնացած բոլոր գանձերն ու գերիները թող լինեն ձեր ավարը»:

Մի պահ Կ. Պոլսի պատերից այն կողմ տիրում էր անսովոր լռություն: Մայրաքաղաքի բնակչության համար պարզ էր դարձել, որ մոտենում է ծանր փորձությունների ժամը: Լռությունը խախտվեց ցերեկը, երբ քաղաքի միջով սրբապատկերները ձեռքերին անցավ մի խոշոր թափոր, որին մասնակցում էր նաև կայսրը: Ուշագրավն այն էր, որ այդ թափորի մեջ կային և՛ ուղղափառներ և՛ կաթոլիկներ: Տաճնապահար զողանջում էին եկեղեցիների զանգերը: Արևամուտին հսկայական թափորը շարժվեց դեպի Սբ. Սոֆիայի տաճարը, որտեղ ուղղափառ հույները արդեն հինգ ամիս է ինչ ոտք չէին դրել, համարելով, որ լատինները իրենց ներկայությամբ սրբապղծել են այն: Այդ օրը տաճարում կողք կողքի ջերմեռանդորեն աղոթեցին ունիայի կողմնակիցներն ու հակառակորդները:

Սուլթանը հայտարարեց, որ մայիսի 29-ին, լուսադեմին, սկսվում է վճռական գրոհը: Գիշերը թուրքական բանակի ճամբարում ամենուրեք վառվում էին խարույկները և որոտում թմբուկները: Մոլլաներն ու դերվիշները բորբոքում էին զինվորների մոլեռանդությունը, Ղուրանից վկայակոչումներ էին անում շահիդների՝ պատերազմի նահատակների կողմից դրախտի վայելքները ըմբոշխնելու մասին:

1453 թ. մայիսի 29-ի վաղ արշալույսին թուրքական չեփորների աղմուկը, սրերի շաչյունը, թմբուկների խլացնող ձայները աղդանշան հանդիսացան գրոհը սկսվելու վերաբերյալ: Թուրքական հրետանու հուժկու համազարկերից հետո սկսվեց կատաղի ճակատամարտ: Քաղաքի պաշտպանները մարտնչում էին դատապարտվածի կատաղությամբ: Ցամաքի կողմից թուրքերի առաջին գրոհները հետ մղվեցին: Տեղամասերից մեկում պաշտպանությունը ղեկավարում էր թուրք իշխանազուն Օրխանը՝ մերձավորների մի խմբի հետ: Նրանք հետ էին մղում իրենց ազգակիցների գրոհները կողք կողքի կռվելով բյուզանդական վանականների հետ: Այդ տեղամասում պաշտպանությունը ճեղքելու փորձերն ավարտվեցին անհաջողությամբ:

Օսմանցիների գրոհը տեղի էր ունենում երեք միմյանց հաջորդող ալիքներով: Առաջինը գրոհի նետվեց բազմալեզու անկանոն զորքը՝ բաշիբուզուկները, որոնց առաջ էր մղում ռազմական ոստիկանությունը մտրակների և երկաթյա ձողերի հարվածներով: Նրանք կռվեցին ավելի քան երկու ժամ և Մեհմեդի հրամանով հետ քաշվեցին, կատարելով թշնամուն հնարավորին չափ ուժասպառ անելու իրենց առջև դրված խնդիրը: Այնուհետև Սուրբ Ռոմանոսի դարպասների տեղամասում մարտի մեջ մտցվեցին լավ զինված ու

մարզված և բարձր կարգապահությամբ աչքի ընկնող անատոլիական կանոնավոր զորքերի գնդերը Իսխակ-փաշայի հրամանատարությամբ: Նրանք կռվում էին բացառիկ համառությամբ: Երբ Ուրբանոսի հսկա թնդանոթի քարե գնդերից մեկը լայն անցք բաց արեց ամրոցի պատի մեջ, անատոլիական զորամասերի մի քանի հարյուր զինվորներ անմիջապես ներխուժեցին այդ անցքը: Սակայն քաղաքի պաշտպաններին հաջողվեց հետ մղել գրոհը, որի մասնակիցների մեծ մասը կոտորվեց, իսկ մնացածը դուրս մղվեց:

Այնժամ սուլթանը մարտի մեջ մտցրեց ընտիր զորամասեր, միաժամանակ հրամայելով ուժեղացնել հրետանային կրակը: Ուրբանոսի հսկա թնդանոթը դարձյալ Սուրբ Ռոմանոսի դարպասների շրջանում ավերեց պատի մի խոշոր հատված: Այդ տեղամասը պաշտպանող ջենովացիների շարքերը երերացին: Նրանց հրամանատար Ջուստինիանը ծանր վիրավորվեց: Տառապելով ուժեղ ցավից՝ նա աղերսում էր իրեն դուրս բերել մարտի դաշտից: Մինչդեռ կայսրը թախանձում էր, որ նա չլքի իրեն, ասելով, որ «միայն քեզանից է կախված այս քաղաքի փրկությունը»: Սակայն Ջուստինիանի մարդիկ նրան տարան Ոսկեղջյուր, որտեղ պառկեցրին ջենովական նավի մեջ: Տեսնելով, որ Ջուստինիանը վիրավորված է և այլևս չի մասնակցում ճակատամարտին, շատ ջենովացիներ չտապեցին լքել ճակատամարտի դաշտը և հեռանալ, ենթադրելով, որ այն տանուլ է տրված:

Ջուստինիանի դասալքությունը քաղաքի պաշտպանների ճամբարում առաջ բերեց չփոթմունք: Եվ դա տեղի ունեցավ հենց այն պահին, երբ Մեհմեդը մարտի մեջ նետեց իր լավագույն ռազմիկներին՝ ենիչերիական զորամասերին: Շուտով թուրքերի մի խմբի հաջողվեց բարձրանալ պատի վրա և գրավել Սուրբ Ռոմանոսի դարպասների մոտ գտնվող աշտարակներից մեկը: Դա հնարավորություն տվեց մյուս գրոհող ջոկատներին բարձրանալու պատերի վրա և թափանցելու Սուրբ Ռոմանոսի դարպասների տեղամասը: Այդ դարպասները բացվեցին և մոլեգնած ենիչերիները հորդեցին քաղաք: Կ. Պոլսի պատերի վրա փողփողաց թուրքական առաջին դրոշը: Կայսրը փորձեց հավաքել քաղաքի պաշտպանների մնացուկներին և փակել թուրքերի առաջխաղացման ճանապարհը: Սակայն դա նրան չհաջողվեց: Վերջին անգամ փորձելով ոգևորել քաղաքի պաշտպաններին՝ կայսրը սակայն համոզվեց, որ ճակատամարտը տանուլ է տրված: Բացականչելով «քաղաքը վերցված է, իսկ ես դեռ ողջ եմ»՝ նա իր վրայից պոկեց արքայական տարբերանշանները և նետվեց իր վերջին մարտին ենիչերիների հետ: Կ. Պոլսի

պաշտպանների մեծ մասը մինչև վերջ դիմադրեց և զոհվեց: Նրանց թվում էր նաև բյուզանդական վերջին կայսր Կոնստանդին XI Պալեոլոգոսը: Նրա կտրված գլուխը բերեցին և դրեցին սուլթանի ոտքերի տակ: Վերջինս հրամայեց այն ցուցադրել, որպեսզի բյուզանդացիները հավաստիանան, որ իրենց կայսրը սպանվել է: Այնուհետև Կոնստանդինի գլուխը դրեցին հատուկ ապակյա ամանի մեջ, տարբեր վայրերի մահմեդական տիրակալներին ցուցադրելու համար իսլամի «փառավոր հաղթանակը» քրիստոնյա Բյուզանդիայի նկատմամբ: Այսպիսով, 1453 թ. մայիսի 29-ին հիսուներեքօրյա պաշարումից հետո Արևելյան Հռոմեական կայսրության հին մայրաքաղաքն ընկավ: Այն անցավ օսմանցիների սուլթան՝ 23-ամյա Մեհմեդ II-ի ձեռքը, որին այդ հաղթանակի առթիվ կոչեցին «Ֆաթիհ» (հաղթական):

Թուրքական զորքերը մի քանի դարպասներից ներխուժելով քաղաք, սկսեցին անխնա կոտորել բնակիչներին:

Դեպքերին ականատես պատմիչ Նեստոր Իսքանդերը գունեղ կերպով նկարագրում է փողոցային մարտերի ժամանակ քաղաքի պաշտպանների հերոսական դիմադրությունը: Նույնիսկ կանայք և երեխաները թուրքական զինվորների վրա նետում էին աղյուսներ ու կղմինդրներ, այրում էին իրենց տները և թշնամու վրա նետում վառվող փայտերը:

Տեղեկանալով, որ թուրքերը ներխուժել են քաղաք, Ոսկեղջյուրի մուտքի մոտ խարիսխ նետած իտալացիների ու բյուզանդացիների նավերը քաշեցին իրենց խարիսխները, պատրաստվելով փախուստի միջոցով փրկվել: Քաղաքի բնակչությունը հոծ զանգվածներով լցվեց նավահանգիստը, հույս ունենալով բարձրանալ փախչող նավերի տախտակամածը: Սակայն դա հաջողվեց ոչ մեծ թվով մարդկանց: Մոտ քսան նավեր, օգտվելով նրանից, որ թուրքական նավատորմի ծովայինները չտապում էին դեպի քաղաք, որպեսզի չուշանան ավար ձեռք բերելուց, կարողացան հաղթահարել ծոցի մուտքը փակած թուրքական նավատորմի արգելքը և դուրս գալ բաց ծով:

Սուլթանի թույլտվությամբ սկսվեց թալանն ու կողոպուտը: Երեք օր ու գիշեր Կ. Պոլիսը թողնված էր զինվորների տիրապետությանը: Կողոպտում էին եկեղեցիներն ու պալատները, կանանց մենաստաններն ու տները, իրենց հետ տանելով ոչ միայն նրանցում եղած գույքը, այլև բնակիչներին: Դեպքերին ականատես բյուզանդացի տարեգիր Ֆրանձիսը վկայում է. «Նրանց, ովքեր պաղատում էին խնայել իրենց, թուրքերը նախ կողոպտում էին և ապա գերու-

թյան վերցնում, իսկ նրանց, ովքեր դիմադրում էին, սպանում էին: Որոշ վայրերում դիակները այնքան շատ էին, որ բնավ գետինը չէր երևում: Եվ կարելի էր տեսնել անսովոր մի տեսարան. հառաչ ու լաց, և ստրկացում անհամար աղնվազարմ ու աղնվատոհմ կանանց, աղջիկների և աստծուն նվիրված միանձնուհիների: Զնայած նրանց աղիողորմ լացին՝ Թուրքերը նրանց հյուսերից բռնած դուրս էին քաշում եկեղեցիներից: Երեխաների ճիչն ու լացը և սուրբ տաճարների կողոպտված հոգևորականների հառաչանքները բռնել էին աշխարհը...

Ամենուրեք Թուրքերը բռնանում են, ոչ մի տեղ չմնաց, որ նրանք չթափանցեն ու չկողոպտեն»:

Գերյալների շարանը ձգվում էր դեպի պետության տարբեր մասերում գտնվող ստրկավաճառանոցները:

Հազարավոր մարդիկ փորձում էին ապաստան գտնել Սուրբ Սոֆիայի տաճարում: Այդ տաճարի ահավոր կողոպուտի նկարագրությունը իր «Բյուզանդական պատմության» մեջ տալիս է Դուկա պատմիչը: «Վազվզելով բոլոր կողմերը, սպանելով ու գերեվարելով մարդկանց, իրենց ճանապարհին ոչնչացնելով ամեն ինչ, Թուրքերը վերջապես մոտեցան տաճարին, որտեղ պատսպարվածները հույսեր էին փայփայում, որ կհայտնվի հրեշտակը և կփրկի իրենց: Տեսնելով, որ դարպասները փակ են, զինվորները անմիջապես դրանք կացիններով ջարդեցին: Երբ նրանք սրերով զինված, ներխուժեցին ներս և տեսան անհամար մի ամբոխի, յուրաքանչյուրը սկսեց կապկպել իր գերուն...

Ո՞վ կարող է պատմել մանուկների լացի ու ճիչերի մասին, մայրերի հառաչանքի ու արցունքների մասին, հայրերի հեկեկոցների մասին:

Ստրկուհուն կապեցին իր տիրուհու հետ, տիրոջը իր ստրուկի հետ, վարդապետին դռնապանի հետ, նուրբ պատանիներին կույսերի հետ... Բռնանում էին կողոպտիչները, Աստծո այդ պատուհասները, և բոլորին կարելի էր տեսնել կապկպված վիճակում. տղամարդկանց պարաններով, իսկ կանանց իրենց իսկ վրայից պոկված զգեստներով ու գլխաշորերով... Թուրքերը ակնթարթորեն կտրատեցին սրբապատկերները, հափշտակեցին եկեղեցական իրերը, սուրբ սեղանի զգեստները՝ տաճարը թողնելով դատարկ ու կողոպտված, ոչ մի բան չթողնելով այնտեղ: Զինվորները կատաղի կերպով վիճում էին իրար հետ աղջիկներին ու երիտասարդ կանանց տիրանալու համար»:

Սոֆիայի տաճարի կողոպուտի նկարագրությունը մենք գտնում ենք նաև տարեգիր Ֆրանձիսի մոտ. «Ներխուժելով Սոֆիա եկեղեցին,- գրում է նա,- Թուրքերն այնտեղ ուտում խմում էին և իրականացնում

իրենց անառակ ցանկություններն ու տոփանքը կանանց, աղջիկների ու անչափահաս տղաների նկատմամբ... Ամենուրեք լսվում էին տղամարդկանց հառաչանքը, կանանց հեծկլտոցը: Մարդկանց բոնի բաժանում էին իրարից և քշում դեպի գերություն... Հրապարակներում, փողոցներում և բոլոր վայրերում կատարվում էին անօրինակ վայրագություններ»:

Զավթիչները բարբարոսաբար կործանեցին բազմաթիվ ճարտարապետական և արվեստի հուշարձաններ, կրակի ճարակ դարձրին թանկարժեք ձեռագրեր:

Կ. Պոլիսը գրավելուց երեք օր հետո զորքերին հրամայելով դադարեցնել կողոպուտը, Մեհմեդ II-ը, սպիտակ ձիու վրա հեծած, դիակներով լցված և արյան լճակներով լի փողոցներով մուտք գործեց մայրաքաղաք: Հանդիսավոր թափորը սուլթանի գլխավորությամբ շարժվեց դեպի Սուրբ Սոֆիայի տաճարը, որի դռների մոտ Մեհմեդը կռացավ և գետնից վերցնելով մի բուռ հող, լցրեց իր գլխին ի նշան հնազանդության իր աստծուն: Այնուհետև դիտելով տաճարը, սուլթանը հրամայեց ի նշանավորումն մահմեդականների հաղթանակի «անհավատների» նկատմամբ, քրիստոնեական այդ սրբավայրը վեր ածել մզկիթի, այն անվանակոչելով «Այա Սոֆիա»: Տաճարի գմբեթի խաչը փոխարինվեց կիսալուսնով՝ թուրքերի խորհրդանշանով: Ի դեպ, իսլամի խորհրդանշան դարձած կիսալուսինը ևս օսմանցիները վերցրին բյուզանդացիներից: Այդ խորհրդանշանը եղել է Կ. Պոլսի զինանշանը՝ մինչև նրա գրավումը թուրքերի կողմից:

Աղբյուրները հաղորդում են, որ տաճարում սուլթանը նկատեց մի զինվորի, որը փորձում էր հանել հատակի մի կտոր մարմարը: Շրջվելով դեպի նրա կողմը սուլթանը հարցնում է, թե ինչու է նա քանդում հատակը: «Հանուն հավատի»,- պատասխանում է զինվորը: Սուլթանը նրան սրախողխող է անում ասելով. «Քեզ համար բավական է հարստություններն ու գերիները: Քաղաքի շենքերը իմն են»:

Սոֆիայի տաճարից սուլթանը շարժվում է դեպի խիստ ավերված կայսերական պալատը, որտեղ ընկնելով կյանքի ունայնության վերաբերյալ փիլիսոփայական խոհերի գիրկը, հիշում է պարսիկ բանաստեղծի տողերը. «Սարդը հյուսում է իր սարդոստայնը կեսարների պալատում: Բուն կոնչում է Աֆրասյաբի աշտարակների վրա»: Անկասկած որոշակի քաղաքական խորհուրդ կար նաև այն բանի մեջ, որ սուլթան Մեհմեդը Բյուզանդիայի երբեմնի փառապանծ մայրաքաղաքը դարձրեց իր վերելք ապրող պետության կենտրոնը, որին պատմությունը նախանշել էր դառնալու մի նոր, հսկայածավալ կայսրու-

թյան մայրաքաղաքը: Թուրքերը Կոստանդնուպոլիսը կոչեցին Ստամբուլ (թուրքերեն Իսթամբուլ):

1453 թ. հունիսի 9-ին, շաբաթ օրը, Կրետե կղզու Կանդիա քաղաքի նավահանգիստը մուտք գործեցին երեք նավեր: Նրանցից երկուսի վրա գտնվում էին կրետացի նավաստիներ, որոնք մասնակցել էին բյուզանդական մայրաքաղաքի պաշտպանությանը: Այդ ճանապարհով Եվրոպա հասավ անհավատալի թվացող լուրը թուրքերի կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավման մասին: Այդ լուրից Եվրոպան ապրեց իսկական ցնցում: «Արևմտյան քրիստոնեության համար խեղդող իրականություն էր դառնում, որ զինված իսլամը սպառնում է իր դրոշը տնկել Եվրոպայի սրտում» (Լեո):

Թեև թուրք-օսմանների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը իրենից նշանավորում էր Բյուզանդական կայսրության կործանումը, սակայն իրականում դրա պատմական հետևանքները գնում էին շատ ավելի հեռուները: Նախ Եվրոպայից Ասիա և Միջերկրական ծովից դեպի Սև ծով տանող այդպիսի խոշոր հանգուցային կետի անցումը թուրքերի ձեռքը ունեցավ համաեվրոպական նշանակության բազմաթիվ հետևանքներ. թուրքերը ստացան ռազմահենադաշտ դեպի Արևմուտք հետագա հարձակման համար և այդ կապակցությամբ կտրուկ մեծացավ դեռևս իրենց անկախությունը պահպանող մերձդանուբյան երկրների և նույնիսկ Արևմտյան Եվրոպայի ստրկացման վտանգը: Առհասարակ, այդ աղետը սպառնալիք էր ստեղծում ողջ արևմտյան քաղաքակրթության համար: Այն նաև համաեվրոպական մշակույթին հասցված ուժգին հարված էր: Այնուհետև, Մերձավոր Արևելքի քրիստոնեությունը ստանում էր ծանրագույն հարված: Տարածաշրջանում ապահովվում էր իսլամի հաղթական երթը: Մի պահ խզվում էին Արևելքի և Արևմուտքի միջև առևտրատնտեսական կապերը, լուրջ ճգնաժամ առաջ բերելով Եվրոպայի և Ասիայի միջև իրականացվող միջազգային առևտրում: Բյուզանդական մայրաքաղաքի գրավումը ոչ միայն թուրքերի առջև բաց արեց նոր, բացառիկ բարենպաստ հնարավորություններ Եվրոպայում հետագա նվաճումների համար, այլև առանց չափազանցության կարելի է ասել, որ Կոստանդնուպոլսի նվաճումը վճռական դեր խաղաց թուրք-օսմանների պետության վերածման գործում Օսմանյան կայսրության: 1453 թվականից հետո, պատմական ավանդույթով, օսմանյան պետության նկատմամբ կիրառվում է Օսմանյան կայսրություն անվանումը:

Կասկածից վեր է, որ Կոստանդնուպոլսի գրավումից հետո քրիստոնեությունը դարձավ մի տեսակ «գլխատված մարմին», քանի որ

այդ քաղաքը քրիստոնյա աշխարհի կողմից ընկալվում էր որպես «քրիստոնյաների փառք» և քրիստոնեության կուռ միջնաբերդ: Համաքրիստոնեական մտածողության համաձայն՝ բյուզանդական կայսրը «կայսր էր Աստծո կամոք՝ «Vicarius Christ»», ուստի կայսրն էր համայն քրիստոնեության: Հետևաբար Կոստանդնուպոլսի գրավումը սկզբնավորելու էր նոր փուլ համաքրիստոնեական քաղաքական մտածողության մեջ: Սուրբ երկրի՝ Պաղեստինի և Երուսաղեմի ազատագրման գաղափարն աստիճանաբար սկսեց իր տեղը զիջել Թուրքական վտանգին համատեղ դիմակայելու, Թուրքերին Եվրոպայից դուրս մղելու և Կոստանդնուպոլիսն ազատագրելու գաղափարին: Հիրավի, այսուհետև Կոստանդնուպոլսի ազատագրումը դառնում էր քրիստոնյա աշխարհի արտաքին քաղաքականության գերակա խնդիրներից մեկը: Պատահական չէ, որ Կոստանդնուպոլսի անկումից չորս ամիս անց Նիկողայոս V (1447–1455) պապը հատուկ կոնդակով նոր խաչակրաց արշավանք հայտարարեց Թուրքական սուլթանի, այդ «երկրորդ Սենեքերիմի» դեմ: Պապը իր դեսպաններին ուղարկեց Եվրոպայի քրիստոնյա պետությունների տիրակալների մոտ՝ նրանց կոչ անելու համար միավորվել քրիստոնյա աշխարհի վրա կախված ահեղ վտանգը վանելու համար: Եկեղեցու հրավերը արձագանք գտավ զանազան երկրներում: Եվ թեև հարցն այնքան ձգձգվեց, որ պապը մեռավ, սակայն Թուրքերի դեմ խաչակրաց արշավանքներ կազմակերպելու գաղափարը դարձավ մի սրբազան պարտավորություն, որ կարդինալների ժողովը դնում էր յուրաքանչյուր նոր ընտրվող պապի առջև: Այսպես, օրինակ, Նիկողայոս V պապական գահի վրա փոխարինած Կալիքստրոս պապը (1455–1458) Արևելք ուղարկեց մինորիթ կրոնավոր Լուդովիկոս Բոլոնացուն: 1459–1460 թթ. ընթացքում վերջինս կապվեց Տրապիզոնի Դավիթ կայսեր, Աբխազիայի ու Վրաստանի թագավորների, Սամցխեի, Գուրիայի և Սամեգրելոյի տերերի և մահմեդական մի շարք իշխանների հետ, որոնք խոստացել էին իրենց մասնակցությունը բերել հակաթուրքական արշավանքին: Կնքված պայմանի համաձայն՝ արշավանքի ընդհանուր ղեկավարությունը հանձնվելու էր Բուրգունդիայի իշխան Ֆիլիպին: Գլխավոր խնդիրը Կոստանդնուպոլսի նվաճումն էր: Դրանով պիտի վերջ դրվեր Թուրքերի տիրապետությանը և Թուրքական հետագա նվաճողականությանը:

Ասիայի և Եվրոպայի ճանապարհների խաչմերուկում գտնվող և ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող վայրում կայսրության համար նոր մայրաքաղաքի հիմնումը Թուրքերի համար

ապահովում էր մշտական ներկայություն եվրոպական մայրցամաքում: Դա աննախընթաց կերպով մեծացնում էր նրանց ուժն ու հզորությունը: Իսկապես, Կոստանդնուպոլսի նվաճումից հետո օսմանյան պետության ազդեցությունը միջազգային իրադրության վրա կտրուկ մեծացավ:

Կ. Պոլսի անկման հետևանքով Եվրոպայից Ասիա և Միջերկրական ծովից դեպի Սև ծով տանող միջազգային առևտրական ճանապարհը փակվեց: Դրանից առաջին հերթին տուժեցին Վենետիկի և Ջենովայի վաճառականները, որոնց ձեռքերում էր գտնվում ողջ լևանտյան առևտուրը: Թուրքական հսկողության սահմանումը նեղուցների՝ Բոսֆորի և Դարդանելի նկատմամբ սպառնալիքի տակ դրեցին ջենովական գաղութների գոյությունը Սև ծովի հյուսիսային ափերին: Հատկապես կործանման վտանգի առջև կանգնեց Կաֆա քաղաքը Ղրիմում, որի վրայով Ջենովան առևտրական կապերի մեջ էր թաթարների և Կենտրոնական Ասիայի երկրների հետ: Պատահական չէ, որ ընդամենը կես հարյուրամյակի ընթացքում Սև ծովում գոյություն ունեցող ջենովական մի ամբողջ «կայսրություն» թուրքերի և նրանց դաշնակից թաթարների հարվածների տակ անհետ կործանվեց: Իսկ վենետիկցիները ստիպված էին կամ հսկայական մաքսատուրքեր վճարել և կամ ընդմիշտ հեռանալ Մերձավոր Արևելքի ու Էգեյան ծովի իրենց առևտրական հենակետերից:

Հետագա տարիների ընթացքում սուլթանի տիրապետության տակ անցավ Ադրիատիկ ծովի ու Հունգարիայի սահմաններից մինչև Պարսից ծոց հասնող առևտրական ուղին: Իսկ Տրապիզոնի կայսրության (1467) և Ղրիմի նվաճումից հետո (1475 թ.) Սև ծովը ուղղակի վերածվեց թուրքական «ներքին լճի»: Այս բոլորը արևմտյան աշխարհը զրկում էր Արևելքի հետ չփումներ ունենալու հնարավորությունից:

Գիտության մեջ հայտնվել է այն տեսակետը, որ Կ. Պոլսի անկումից հետո ընկնում էր Միջերկրական ծովի և Թուրքիայի ցամաքային ճանապարհների բացառիկ նշանակությունը: Սկիզբ էր առնում ու աճում օվկիանոսային հաղորդակցությունն ու առևտուրը: Արևելքի հետ կապվելու համար նշանակություն էին ձեռք բերում Բալթիկ և Սպիտակ ծովերը: Առհասարակ պետք է նշել, որ Կ. Պոլսի՝ Արևելքի ու Մերձսևծովյան շրջանի հետ տարանցիկ առևտրի այդ գլխավոր կենտրոնի գրավումը թուրքերի կողմից հանդիսացավ լուրջ խթանիչ գործոն, որը ստիպեց եվրոպական վաճառականներին ու ծովագնացներին սկսել դեպի Հնդկաստան տանող նոր ծովային ճանապարհի եռանդուն որոնումներ:

Բյուզանդական կայսրության, ուղղափառ քրիստոնեության այդ պատվարի անկումից հետո «Մոսկվան սկսեց բարձրանալ մինչև Երրորդ Հռոմի աստիճանի»: Ռուսները դարձան ուղղափառության գլխավոր ջատագովներն ու պաշտպանները: Սակայն մյուս կողմից թուրքական պետության տիրույթների ընդլայնումն ու ծավալումը Ռուսիայի համար ուժեղացրին մշտական սպառնալիքը Ղրիմի խանի և Մերձսևծովյան տափաստաններում թուրքերի օգնությամբ հաստատված թաթարների կողմից: Նրանք դարձան Ռուսական պետության համար ոխերիմ թշնամիներ, որոնց մեջքին միշտ կանգնած էր հզոր օսմանյան տերությունը:

Վերջապես Կ. Պոլսի անկումը նշանակում էր բյուզանդական բարձր քաղաքակրթության ավարտը: Տասնմեկ հարյուրամյակ շարունակ այդ քաղաքը հանդիսանում էր գիտության, մշակույթի ու լուսավորության կարևորագույն կենտրոն: Կ. Պոլիսը նաև մի քաղաք էր, որտեղ «ծաղկում էր գաղափարների ազատ փոխանակությունը և նրա բնակիչները իրենց համարում էին ոչ թե ինչ-որ ժողովուրդ, այլ Հունաստանի և Հռոմի ժառանգորդներ, լուսավորված քրիստոնեական հավատով»: Կ. Պոլսի և առհասարակ Բյուզանդիայի նվաճումը թուրքերի կողմից ամբողջ դարաշրջաններ արգելակեց այն երկրների տնտեսական ու մշակութային զարգացումը, որոնք հարկադրաբար մտցվեցին օսմանյան պետության կազմի մեջ՝ իրենց վրա կրելով թուրքական անագորույն լուծը:

Կ. Պոլսի անկման լուրը խորը ցնցում առաջ բերեց նաև Հայաստանում: Մինչ այդ, հայերը հույների և իտալացիների հետ միասին անձնվիրաբար մասնակցել էին Կ. Պոլսի հերոսական պաշտպանությանը: Այդ դեպքերի նկարագրությանն են նվիրված XV դարի երկու նշանավոր հիշատակարաններ՝ Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու ոտանավոր Ողբերը: Պաշտպանելով հունական ուղղափառների տեսակետը՝ Անկյուրացին դատապարտում է եվրոպացիներին, որոնք իրենցից խնդրված օգնությունը պայմանավորում էին հույների համար դավանական զիջումներով:

Կ. Պոլսի անկման լուրը ծանր տպավորություն և խորը հուսահատություն էր առաջ բերել Հայաստանում նաև այն պատճառով, որ իր ազատագրական ոգորումներում հայ ժողովուրդը իր փրկությունը տեսնում էր ֆրանկներից: Դեռևս XIII դարում ինչ-որ Ագաղրոն փիլիսոփայի վերագրված մարգարեության մեջ արտացոլված էր քաղաքական այն ակնկալիքը, որ հայերն ունեին Բյուզանդիայից:

Տարված լինելով նմանատիպ քաղաքական սպասումներով՝ Առաքել Բաղիշեցին գրում էր.

«Գայցեն ծովով և ցամաքով
Որպես զաստեղս որ ոչ թըւին
Յորդորելով զամենեսին
Աստուածառաք պատերազմին։
Նախ զԸստըմպոլ քաղաքն առնուն
Ամենազօր կամօք փրկչին,
Ապա յառաջ համարձակին,
Եւ ի բոլոր աշխարհ սրփոին»։

Միանգամայն ակնհայտ է, որ Կ. Պոլսի անկման հետ միասին հայերը կորցնում էին իրենց ազատագրման հույսերի հզոր կովանը, ուստի նրանց պարուրում էր խաչակրաց արշավանքների երազապատիր հույսերը, որոնք այդքան անպաճույճ բառերով ներկայացնում է Բաղիշեցին, փորձելով համոզել, որ Արևմուտքից ի վերջո գալու է օգնությունը։

Անտարակույս Կ. Պոլսի անկման մեջ չափազանց մեծ էր կաթոլիկ եկեղեցու մեղքը։ Կաթոլիկ Եվրոպան և հատկապես Հռոմի պապը, որոնք ոգի ի բռին ձգտում էին բյուզանդական ուղղափառ եկեղեցին և առհասարակ Բյուզանդիան ենթարկել հռոմեական գահին, գործուն աջակցություն չցուցաբերեցին բյուզանդացիներին։ Իսկ իտալական երկու հզոր հանրապետությունները՝ Վենետիկը և Ջենովան, հանձինս Բյուզանդիայի տեսնում էին իրենց մրցակցի, իսկ երբեմն նաև հակառակորդի։ Միայն Կ. Պոլսի անկումից հետո, երբ սուլթանը սկսեց վենետիկցիներին ու ջենովացիներին դուրս մղել Սև և Միջերկրական ծովերի ավազաններից, այդ պետությունների ղեկավար շրջանները եռանդուն կերպով կրկին մեջտեղ բերեցին Թուրքերի դեմ խաչակրաց արշավանքի գաղափարը։ Սակայն դա արդեն ուշացած ու ժամանակավրեպ քայլ էր։

Առհասարակ Արևմուտքում մեծ ուշացումով գիտակցեցին Կ. Պոլսի անկման ճակատագրական նշանակությունը արևմտյան ողջ քաղաքակրթության համար։ Թեև իրականում ճշմարտությունը պահանջում է նշել, որ Արևուտքի քրիստոնյա աշխարհը Կ. Պոլիսը կորցրել էր դեռևս մեկ հարյուրամյակ առաջ և այդ վերջին պահին դժվար թե հնարավոր լիներ նրա անկման կանխումը կամ գեթ հետաձգումը։ Զբաղված լինելով իր տեղական հոգսերով, Արևմուտքը կույր ու խուլ գտնվեց Մերձավոր Արևելքում ծավալվող իրողությունների նկատմամբ, չկարողանալով կանխատեսել այդ ողբերգական աղետի հնարավորությունը։

Այսպես թե այնպես, նախկին քրիստոնեական հզոր պետության հպատակները դառնում էին իրավազուրկ ռայա, բառացիորեն «անասունների հոտ», իսկ քրիստոնյա եկեղեցին այսուհետև ենթարկվելու էր իսլամական պետությանը և պարտավոր էր վճարել հարկեր:

Ուշագրավ է նշել, որ նկատի ունենալով այդ բոլորը, XV դարի հայ հեղինակներ Աբրահամ Անկյուրացին, Առաքել Բաղիշեցին, պատմիչ Երեմիա Քյոմուրճյանը և ուրիշներ, իրենց ողբերում մեծագույն չարիք են համարել թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավումը:

Բյուզանդիայի մայրաքաղաքի անկումից հետո ողջ մնացած հույն քաղաքաբնակների մեծ մասն ուղարկվեց Էդիրնե, Բուրսա, Գելիբոլու, Պլովդիվ և այլ վայրեր: Նրանց տեղը Մեհմեդ II-ը բնակեցրեց Փոքր Ասիայից և Բալկաններից տեղափոխված թուրքերի և այլ մահմեդականների: Միաժամանակ թուրքերը Կաֆֆայից, Տրապիզոնից, Պելոպոնեսից, Էգեյան ծովի կղզիներից, փոքրասիական քաղաքներից և այլն հույներին, Բուրսայից ու Արևմտյան Հայաստանից հայերին, Բալկաններից և այլ վայրերից հրեաներին, զանգվածորեն տեղափոխում էին Կ. Պոլիս և այնտեղ բնակեցնում: Նոր թուրքական մայրաքաղաքի բնակչությունը արագ աճում էր: Արդեն XV դ. վերջին այն ուներ 200 հազար բնակչություն: Սուլթանը շահագրգռված էր, որ իր նոր մայրաքաղաքը կյանք վերադառնա և վերածվի Արևելքի ու Արևմուտքի միջև միջազգային առևտրի կենտրոնի:

Մեհմեդ II-ը կրոնական փոքրամասնություններին կազմակերպեց միլլեթների կամ ջամիաթների համակարգով: Ըստ այդ համակարգի՝ հույների, հայերի և հրեաների հոգևոր և մի չարք քաղաքացիական գործերով (ամուսնության և ամուսնալուծության, գույքային և ժառանգության հարցերի և այլն) պետք է զբաղվեին նրանց կրոնական համայնքները՝ միլլեթները: Այլ կերպ ասած, միլլեթները դրանք ինքնակառավարվող կրոնական համայնքներ էին, որոնք ունենալու էին իրենց սեփական օրենքները և կառավարվելու էին տվյալ կրոնական փոքրամասնության առաջնորդի կողմից, որը պատասխանատու էր կենտրոնական իշխանության առջև իր ղեկավարած հոտի համար: Ըստ էության միլլեթների համակարգը կրոնական փոքրամասնությունների ստատուսի երաշխիքների մի համակարգ էր: Միլլեթներն ունեին սոսկ եկեղեցական-կրթական ինքնավարություն՝ առանց քաղաքական իրավունքների: Միլլեթների գլխավորների միջոցով սուլթանական իշխանությունները ոչ մահմեդականներից գանձում էին զանազան հարկեր և տուրքեր: Այսպիսով, հույն-ուղղափառ և հայ-առաքելական համայնքների պատրի-

արքները, ինչպես նաև հրեական համայնքի գլխավոր ռաբբին, հանդես էին գալիս միջնորդի դերում սուլթանի և ոչ մահմեդական բնակչության միջև: Սուլթանները հովանավորում էին համայնքների ղեկավարներին, նրանց ցուցաբերում աջակցություն և ամեն տեսակի չնորհներ, որի դիմաց համայնքապետերը պարտավոր էին իրենց հոտը պահել սուլթանական իշխանությունից հնազանդության վիճակում:

Մեհմեդը հիանալի հասկանում էր, որ պարտվածները կարող են օգտավետ դառնալ իր պետության համար, քանի որ նրանց մոտ զարգացած էր արդյունագործությունը, առևտուրը, արհեստները և այլն: Նա հարգանքով էր վերբերվում նաև նրանց մոտ կուտակված գիտելիքների ու փորձի նկատմամբ: Ուստի նա կրոնական փոքրամասնությունների հանդեպ իր քաղաքականությունը կառուցում էր նրանց ապրելու և պետության համար արդյունավետ գործունեություն ծավալելու սկզբունքի վրա: Գերմանացի գիտնական Ֆրանց Բաբինգերը վկայակոչում է մեկ այլ գերմանացի հեղինակի՝ Հայնրիխ Ֆոն Թրեյչքեի կարծիքն այն մասին, որ Մեհմեդ II-ի հանդուրժողականությունը ռայաների նկատմամբ արդյունք էր «ստրկացնելու նրբին արվեստի»: «Մեհմեդ II-ի այդքան փառաբանված հանդուրժողականությունը,- գրում է Ֆոն Թրեյչքեն,- պարզապես ցույց է տալիս, թե որքան զարգացած էր ստրկացնելու սիստեմը. սուլթանը չէր ցանկանում իսլամացնել ճնշված ժողովուրդներին, որովհետև ռայա ազգերը «անհավատ չներ» մնալով միայն իսլամը կարող էր չոքել նրանց պարանոցին»:

1454 թ. հունվարին սուլթանի կողմից հույն վանական Գեննադին կամ Գեորգի Սխոլարիան նշանակվեց հունական եկեղեցու պատրիարք: Մեհմեդն անձամբ Գեննադիին հանձնեց նրա աստիճանը խորհրդանշող պիտույքները: Այսպիսով Գեննադին ստացավ Ռումի միլլեթի կամ Արևելա-Հռոմեական (Բյուզանդական) քրիստոնյա համայնքի նկատմամբ լիիրավ իշխանություն, միաժամանակ նրան չնորհվեց փաշայի արարողակարգային աստիճան երեք բունչուկներով: Նա իր տրամադրության տակ ունենալու էր սեփական քաղաքացիական դատարան և բանտ Կ. Պոլսի Ֆանար հունական թաղամասում:

Հանձնելով պատրիարքական իշխանության խորհրդանիշները՝ սուլթան Մեհմեդը դիմեց Գեննադիին հետևյալ բառերով. «Դարձիր պատրիարք երջանիկ ճակատագրով և վստահ եղիր մեր բարեկամության վրա, պահպանելով այն բոլոր արտոնությունները, որոնք

մինչև քեզ ունեցել են բոլոր պատրիարքները»: Որպես նստավայր սուլթանը հունական պատրիարքությանը չնորհեց Սուրբ Առաքյալների եկեղեցին:

Ինչ վերաբերում է Նախկին պաշտոնատար անձանց և առհասարակ կայսեր գլխավոր աստիճանավորները հանդիսացած ազնվազարմ հույներին, ապա Մեհմեդը որոշեց ֆիզիկապես նրանց վերացնել: Սուլթանի հրամանով նրանց բոլորին մահապատժի ենթարկեցին:

1461 թ. Մեհմեդ II-ի ֆերմանով (հրամանագիր) Կ. Պոլսում XIV դարից գոյություն ունեցող հոգևոր առաջնորդությունը վերածվեց Հայոց պատրիարքության: Դա մեծապես նպաստեց հայերի ներհոսքին Կ. Պոլիս, որը պատմական կարճ ժամանակաընթացքում դարձավ հայ մշակութային և կրթական երևելի կենտրոն, իսկ պատրիարքը՝ հայոց հոգևոր և աշխարհիկ կյանքի առաջնորդը: Այսինքն և՛ հունական, և՛ հայկական պատրիարքները ստացան Բ. Դռան առջև իրենց ազգի անունից հանդես գալու իրավունք, որն անկասկած նշանակում էր, որ պատրիարքությունները դառնում էին իսկական քաղաքական կազմակերպություններ:

Հայոց առաջին պատրիարքը դարձավ Հովակիմ եպիսկոպոսը, որը մինչ այդ գտնվում էր Բուրսայում: Սկզբնական շրջանում հայերը պատրիարքությունն անվանում էին «հայրապետություն»: Կասկածից վեր է, որ Մեհմեդ Ֆաթիհի կողմից հայոց պատրիարքության ստեղծումը իր մեջ պարունակում էր քաղաքական ենթատեքստ: Բանը նրանումն էր, որ 1441 թ. հայոց կաթողիկոսությունը Սսից նորից տեղափոխվել էր Էջմիածին: Կոստանդնուպոլսի պատրիարքության ստեղծումով թուրքահայ հոգևոր վիճակները (թեմերը) այլևս չէին ենթարկվելու օսմանցիների հսկողությունից դուրս գտնվող Էջմիածնին, որը հանդիսանում էր հայության հոգևոր կենտրոնը:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությանը չնորհվեց որոշ կրոնակրթական ինքնավարություն հայ համայնքների շրջանակներում: Այն իրավասու էր հայ բնակչությունից գանձել զանազան հարկեր (ծեսերի, մկրտության, ամուսնության, հոգու փրկության և այլնի համար): Իր հերթին հայ եկեղեցին Կոստանդնուպոլսի պատրիարքության միջոցով հարկ էր տալիս օսմանյան պետությանը:

«Կ. Պոլիսը հռչակելով Օսմանյան կայսրության մայրաքաղաք,- գրում է Մաղաքիա արքեպ. Օրմանյանը,- սուլթանը ուզեց անոր մեջ հայկական հոծ գաղթականություն մը հաստատել, իբր հակակշռող հունական բնակչութեան, քրիստոնեաներու դիմաց քրիստոնեաներ դնելով»: Իհարկե հարցը միայն դա չէր: Սուլթանը ցան-

կանում էր իր մայրաքաղաքում հավաքել հոծ բնակչություն, այդ թվում նաև հմուտ արհեստավորներ, վաճառականներ և այլն, ապահովելու համար նրա արագ ու վերընթաց զարգացումը: Արդեն XIV դ. կեսերին ձևավորվում է Կ. Պոլսի հայկական գաղութը:

Մեհմեդ II-ը թույլ տվեց նաև, որ Կ. Պոլսում գործի հրեաների գերագույն ռաբբին:

Սուլթանի առջև կանգնած կարևորագույն խնդիրներից մեկն էր Ստամբուլը իր բնականոն կյանքին վերադարձնելը: Նրա բնակիչների թիվը կտրուկ կրճատվել և մնացել էր 30-35 հազար մարդ: Քաղաքի շատ շրջաններ մարդաթափ էին եղել, իսկ շենքերը ավերվել: Սուլթանը հրամայեց կարգի բերել քաղաքը, մաքրել փողոցները, վերականգնել պատերը: Բոլոր նրանց, ովքեր լքել էին քաղաքը, առաջարկվեց վերադառնալ, խոստանալով պաշտպանել նրանց սեփականությունը, ապահովել պետության կողմից աջակցությունը՝ տները, խանութներն ու արհեստանոցները վերականգնելու համար, միաժամանակ երաշխավորելով իրենց կրոնը դավանելու ազատ իրավունք: Սուլթանը գերեվարված հույներին ազատեց գերությունից և նրանց բնակեցնելով Ստամբուլի Ֆանար թաղամասում, որոշակի ժամկետով ազատեց հարկերից: Ռումելիայի և Անատոլիայի բեյլերբեյերին պարտավորեցրին, որ նրանք Ստամբուլ ուղարկեն քրիստոնյա և մահմեդական չորս հազար ընտանիք, որպեսզի նրանք զբաղեցնեն դատարկ տները: Մոտ 30 հազար գյուղացիների, որոնք գերեվարվել էին ռազմական գործողությունների ժամանակ, տեղաբաշխեցին Ստամբուլի շուրջը լքված գյուղերի հողերի վրա, որպեսզի նրանք քաղաքը մատակարարեն սննդամթերքներով: Սուլթանի հրամանով կայսրության տարբեր քաղաքներից Ստամբուլ տեղափոխեցին մեծ թվով ունևոր մարդկանց՝ վաճառականների, արհեստավորների, չինարարների, որպեսզի նրանք նպաստեն առևտրի ու արհեստագործության զարգացմանը: Սալոնիկից և Եվրոպայից Ստամբուլ տեղափոխվեցին նաև մեծ թվով հրեաներ: Կարճ ժամանակամիջոցի ընթացքում հրեաները իրենց թվաքանակով վերածվեցին նոր մայրաքաղաքի բնակչության թվով երրորդ խոշոր խումբը մահմեդականներից ու քրիստոնյաներից հետո:

Շուտով Ստամբուլը դարձավ ծաղկող քաղաք և իր չափերով երեք-չորս անգամ ավելի մեծացավ: Այն իր բազմազգ ու խառը բնակչությամբ դարձավ գործարար ակտիվության աչքի ընկնող կենտրոն: Ընդամենը մեկ հարյուրամյակի ընթացքում քաղաքի բնակչությունը հասավ կես միլիոնի, որի միայն հիսուն տոկոսն էին

կազմում Թուրքերը: Ստամբուլը գերազանցեց Բուրսային և Էդիրնեին որպես կայսրության խոշոր առևտրական կենտրոն՝ զբաղեցնելով տիրապետող դիրք Սև և Միջերկրական ծովերով ու ասիական մայրցամաքով անցնող առևտրական-քարավանային ու ծովային ճանապարհների վրա:

Մեհմեդը Ստամբուլում հրամայեց կառուցել իր սեփական մզկիթը, որը ժողովրդի շրջանում ստացավ «Ֆաթիհ» (նվաճող) անվանումը: Այն իր չափերով գերազանցում էր Այա Սոֆիային: Նա դրեց նաև Էյուբ կոչված մզկիթի հիմքի առաջին քարը, իր համար կառուցեց մի չքեղ պալատ և այլն:

Բնականաբար Կ. Պոլսի անկումը շատ բան էր փոխելու եվրոպացիների պատկերացումների մեջ Թուրք-օսմանների և նրանց պետության վերաբերյալ: Համենայն դեպս բոլորի համար ակնհայտ դարձավ, որ անհրաժեշտ է Եվրոպայի նկատմամբ Թուրքերի փայփայած մտադրություններին հակադարձել ինչ-որ բան:

Մինչդեռ Կ. Պոլսի նվաճումից հետո օսմանյան պետության միջազգային հեղինակությունը աննախընթաց կերպով մեծացավ: Այդ իրողությունը ընդունում էին ինչպես մուսուլմանական աշխարհում, այնպես էլ Եվրոպայում: Օսմանյան սուլթանները, սկսած Մեհմեդ Ֆաթիհից, սկսեցին իրենց համարել բյուզանդական կայսրերի ժառանգորդներ, որով հիմնավորում էին իրենց հավակնությունները՝ իշխելու քրիստոնեական աշխարհի վրա: Նույնիսկ օսմանյան սուլթանների տիտղոսների մեջ երևան եկավ «կայսեր-ի Ռում» տիտղոսը, որը նշանակում էր արևելա-հռոմեական կայսր:

Կ. Պոլսի անկումը և դրան հաջորդած Թուրքերի նվաճողական հաջողություններն աստիճանաբար եվրոպացիներին ևս ստիպեցին փոխել իրենց վերաբերմունքը օսմանյան սուլթանների նկատմամբ, ընդունելով նրանց կայսերական արժանապատվությունը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

1. *ՄԵՀՄԵԴ II-Ի ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱ-ՅՈՒՄ ԵՎ ԱՍԻԱՅՈՒՄ*

Ստամբուլը գրավելուց հետո թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում Մեհմեդ II-ը ծրագրերը շատ հեռուներն էին գնում: Առաջնահերթ խնդիրն անչուշտ երկրի ներքին վիճակի կայունացումն էր և սահմանների ընդլայնման ուղղությամբ կիսատ մնացած գործերը ավարտին հասցնելը: Ինչպես որ արշավանքների ժամանակ նա չէր վստահում իր բանակը ոչ ոքի և անձամբ էր գլխավորում այն, այնպես էլ այդ վերին աստիճանի ծածկամիտ մարդը իր ռազմական ու քաղաքական ծրագրերի վերաբերյալ չէր կիսվում նույնիսկ իր ամենամերձավորագույն մարդկանց հետ: Հենց այդ պատճառով, որպես կանոն, սուլթանը չէր գումարում նաև ռազմական խորհրդի նիստեր: Մեկ անգամ, երբ նրա զորահրամանատարներից մեկը հարցնում է սուլթանին, թե որ ուղղությամբ է տեղի ունենալու նրա հաջորդ արշավանքը և ինչ նպատակ է հետապնդելու այն, Մեհմեդ Ֆաթիհը պատասխանում է, որ եթե իր մորուքի թելուզ մեկ մազ տեղյակ լինի իր մտադրությունների մասին, ինքը արմատից կպոկի այն ու կնետի կրակի մեջ:

Որպես ժառանգություն՝ Մեհմեդին էին անցել իր հոր ոխերիմ թշնամիները՝ Յանոչ Հունյադին Հունգարիայում, Գեորգի Բրանկովիչը՝ Սերբիայում, Սկանդերբեկը՝ Ալբանիայում, վենետիկցիները՝ Հունաստանում և Էգեյան ծովի ավազանում: Սուլթանը որոշել էր մեկ առ մեկ ջախջախել նրանց: Նա իր բանակի առաջին հարվածն ուղղեց Սերբիայի դեմ: 1456 թ. 150-հազարնոց բանակի գլուխ անցած Մեհմեդ Ֆաթիհը շարժվեց Բելգրադի վրա: Միաժամանակ Դանուբով դե-

պի այդ քաղաքն էր չարժվում Թուրքական գետային նավատորմը: Բելգրադը պաշտպանում էին Յանոչ Հունյադիի աշխարհազորայինները: Կողմերի միջև բորբոքվեց կատաղի ճակատամարտ: Աղբյուրների վկայությամբ, Դանուբի ջրերը կարմրել էին առատ արյունից: Գետի վրա տեղի ունեցած այդ արյունահեղ ճակատամարտում Թուրքերին հասցվեց կործանիչ հարված: Օսմանցիների նավերի մնացուկները փորձեցին փախուստի ճանապարհով փրկություն գտնել, սակայն մտավախություն ունենալով, որ նավերը կարող են ընկնել թշնամու ձեռքը, Մեհմեդ II-ը հրամայեց դրանք կրակի մատնել:

Չնայած այդ անհաջողությանը՝ սուլթանը այնուամենայնիվ իր բանակը տարավ գրոհի Բելգրադի վրա: 1456 թ. հուլիսի 27-ին քաղաքի պատերի մոտ տեղի ունեցած ճակատամարտում աննկուն մարտիկ Յանոչ Հունյադիի հրամանատարությամբ գործող ժողովրդական աշխարհազորը, որի մեջ մտնում էին հունգարացիների, չեխերի ու գերմանացիների ջոկատները, սուլթանի զորքերին ծանր պարտության մատնեցին, թեև Թուրքական զորքերը կրկնակի անգամ գերազանցում էին հակառակորդին և իրենց տրամադրության տակ ունեին 300 թնդանոթներ: Բելգրադի ճակատամարտին մասնակցում էր նաև բոցաչունչ խաչակիր-վանական Կապիստրանոն իր ասպետների հետ:

Թուրքերի կողմից ռազմական գործողություններին անձամբ մասնակցում էր Մեհմեդ II-ը: Ընդ որում, նետահարվելով սուլթանը վիրավորվեց, իսկ ենիչերիների զորամիավորումների աղա (հրամանատար) Հասան աղան սպանվեց: Բելգրադի պատերի մոտ պարտություն կրած Թուրքական զորքերը դիմեցին անկանոն նահանջի, որը վերածվեց խուճապահար փախուստի: Օսմանցիները որպես ռազմական ավար թշնամուն թողեցին մեծ քանակությամբ թնդանոթներ, զենք, զինամթերք, սննդամթերք և այլն:

Քրիստոնյաների այդ հաղթանակը Եվրոպայում առաջ բերեց համընդհանուր ցնծություն: Անպարտելի համարվող օսմանյան բանակի վարկը առաջին անգամ լրջորեն սասանվեց: Մի քանի տասնամյակ զավթիչները չհայտնվեցին հունգարական հողերի մերձակայքում: Սակայն Թուրքերի այդ անհաջողությունը անչուշտ չէր կարող ազդել Բալկաններում իրադարձությունների ընդհանուր ընթացքի վրա:

Փառավոր հաղթությունից հետո Հունյադին դիմեց Արևմուտքի միապետներին, նրանց հորդորելով, որ միանան Թուրքերի դեմ մղվող պայքարին: Այդ խիզախ ու անվեհեր մարդը ներշնչում էր բոլորին, որ հնարավոր է հաղթել թշնամուն և Եվրոպան մաքրել Թուրքերից: Թեև ամեն տեղ հիացմունք պատճառեց Բելգրադի հաղթությունը, բայց այդպես էլ ոչ ոք օգնության ձեռք չմեկնեց Հունյադիին: Եվրոպայում

յուրաքանչյուր իշխող իր գործերով էր զբաղված: Խաչակրաց արշավանքների ժամանակը անդառնալիորեն անցել էր:

Սուլթանն անչուշտ տեղյակ էր, որ քրիստոնյա աշխարհը փորձում է միավորվել իր դեմ: Սակայն նա հիանալի ըմբռնել էր, որ քրիստոնյա ժողովուրդների միջև առկա հակասությունները թույլ չեն տա այդ միության իրականացումը: Ոչ մի պետություն չէր համաձայնվի, որ Կոստանդնուպոլիսը պատկանի ոչ թե իրեն, այլ ինչ-որ մեկին: Այդ քաղաքի հարցում, հիրավի, բացառվում էր համաձայնության կայացումը պետությունների միջև:

Բելգրադյան իրադարձություններից քիչ ժամանակ անց, 1456 թ. Հունյադին և Կապիստրանոն մահացան ժանտախտից, որը մոլեգնում էր Սերբիայում, մարդաթափ անելով Բելգրադն ու իր շրջակայքը: Նույն 1456 թ. խորը ծերության հասակում իր մահկանացուն կնքեց նաև Գեորգի Բրանկովիչը: Սերբիայի բնակչությունը պառակտվեց թուրքամետ ու հունգարամետ տրամադրություններ ունեցող մասերի և մխրճվեց դինաստիական ու կրոնական երկպառակությունների հորձանուտը: Դա հեշտացրեց թուրքերի գործը: Կազմակերպելով երկու հաջող արշավանքներ՝ 1459 թ. նրանք նվաճեցին ողջ Սերբիան և այն միացրին Օսմանյան կայսրությանը: Սերբիան վերածվեց թուրքական պետության նահանգներից մեկի և այսուհետև մի քանի դարերի ընթացքում մնալու էր օսմանյան անագորույն լծի ներքո: Օսմանցիները ավելի քան 200 հազար սերբերի քշեցին ստրկության: Սուլթանի կողմից նվաճված սերբական հողերը անմիջապես բնակեցվեցին Անատոլիայից և կայսրության այլ վայրերից բերված թուրք բնակչությամբ:

Կոստանդնուպոլսի անկումից հետո նախկին ընդարձակ Բյուզանդական կայսրությունից մնացել էին երկու ոչ մեծ հունական իշխանություններ Մորեայում և հունական Տրապիզոնյան կայսրությունը Փոքր Ասիայում: 1458 թ. Մեհմեդ II-ը ձեռնամուխ եղավ Մորեայի նվաճմանը: Այնտեղ կառավարում էին Բյուզանդիայի վերջին կայսր Կոնստանդինի երկու եղբայրները՝ Դմիտրին և Ֆոման, որոնք մշտական վեճերի ու երկպառակությունների մեջ էին մեկը մյուսի հետ: Նրանց տիրույթներում ապաստան էին գտել Բյուզանդիայի կառավարող շրջանների բազմաթիվ ներկայացուցիչներ: Սկզբում Մեհմեդը գրավեց ու կողոպուտի մատնեց Արևմտյան Մորեայի մեծ մասը, իսկ ապա, քիչ ժամանակ անց, գրոհով վերցրեց երկրամասի գլխավոր ամրոցը՝ Կորինֆոսը: Այդ նույն 1458 թ. թուրքերին հաջողվեց Ֆլորենցիայի դքսից գրավել նաև Աթենքը: Մեհմեդ Ֆաթիհը անձամբ այ-

ցելեց այդ «իմաստության քաղաքը»: Նրա վրա մեծ տպավորություն էին թողել այդ հնագույն ու փառահեղ քաղաքի անտիկ դասական արվեստի կոթողները, հատկապես Ակրոպոլիսը:

Հունաստանից սուլթանի մեկնումից հետո երկու եղբայրների՝ Դմիտրիի և Ֆոմայի միջև եղբայրասպան պատերազմը բորբոքվեց նոր թափով, ընդ որում, Դմիտրին հանդես էր գալիս որպես Թուրքերի կողմնակից և ճանաչում էր նրանց հետ կնքված պայմանագիրը, մինչդեռ Ֆոման խախտելով այն, օգնության խնդրանքով դիմեց Հռոմի պապին:

1460 թ. Մեհմեդը ևս մեկ արշավանք կազմակերպեց դեպի Հունաստան: Հակառակ Դմիտրիի թուրքամետ տրամադրությունների՝ սուլթանը նախ իր զորքերը չարժեց նրա դեմ: Լքելով իր տիրույթները՝ Դմիտրին փախուստի դիմեց: Շնորհիվ պապական զորքերի, նրան մնաց լոկ Մոնեմվազիա քաղաքը: Այնուհետև սուլթանը իր զորքերը տարավ նաև Ֆոմայի դեմ, որը նույնպես դիմեց մազապուրծ փախուստի, իր երկիրը և ժողովրդին թողնելով թշնամու քմահաճույքին:

Այսպիսով, 1460 թ. օսմանները իրենց տիրապետությունը հաստատեցին ողջ հունական թերակղզու նկատմամբ, բացառությամբ մի քանի ծովափնյա հենակետերի, որոնք մնացին վենետիկցիների ձեռքերում:

Հունաստանում հաստատվեց «Պակս Օսմանիկում»: Ուշագրավ է նշել, որ Մեհմեդ Ֆաթիհը Հունաստանի նկատմամբ որդեգրեց համեմատաբար մեղմ քաղաքականություն: Ի տարբերություն մյուս երկրների, հույների վրա դրված հարկային լուծը բավականաչափ մեղմ էր: Նա հույներին ազատեց նաև հարկատվության երեխաներ հատկացնելու ձևից, թույլ տվեց, որ ընտրեն իրենց սեփական տեղական իշխանությունը, ազատ առևտուր անեն և այլն: Այդ բոլորն, անշուշտ, պարունակում էր քաղաքական ենթատեքստ: Սուլթանը գիտակցում էր, որ Արևմուտքի քրիստոնեական աշխարհի համար միանգամայն ցանկալի էր, որ քրիստոնյա այդ հին ժողովուրդը՝ հույները, երևային որպես այլադավան մահմեդականների կողմից ճնշված ժողովուրդ, որը երազում է ազատագրվել լատինացիների ձեռքերով: Սուլթանի քաղաքական այդ կանխատեսումը միանգամայն ճիշտ դուրս եկավ: Իրերի բերումով հետագա ժամանակների ընթացքում Հունաստանը, մասնավորապես Աթենքը, կարծես թե եկավ փոխարինելու Կ. Պոլսին և նույնիսկ Սրբազան Հողին, որպես եվրոպական բոլոր խանդավառ տարրերի խաչակրաց արշավանքի նպատակ:

1463 թ. Մեհմեդ Ֆաթիհը իր զորքերը չարժեց դեպի Բոսնիա, որը

թեև գտնվում էր հարկատուի վիճակում, սակայն նրա ներքին իրադրությունը խոցելի էր դինաստիական վեճերի և կրոնական երկպառակության պատճառով: Երբեմնի ուղղափառ դավանանքի հետևորդ այդ երկիրը «դարձի էր բերվել» Հռոմի կողմից և ընդունել «ճշմարիտ հավատը»՝ կաթոլիկությունը: Բացի այդ, Բոսնիայում ապաստան էր գտել Հռոմի կողմից հերետիկոսական հռչակված «Բոգոմիլների» աղանդը, որին հակակշռելու, իսկ հնարավորության դեպքում ոչնչացնելու նպատակով, Հռոմի պապը այդ երկիրն էր ուղարկել Ֆրանցիսկյանների միաբանության միսիոներներին: Այսպիսով, Բոսնիան ալեկոծվում էր կրոնական պայքարի բովում, որն ըստ էության վեր էր ածվել ներքին քաղաքացիական պատերազմի:

Մարտնչող թույլ կողմը՝ աղանդավորները այլ ելք չունեին, ուստի թուրքերից խնդրեցին պաշտպանություն, որոնք և չզլացան այն տրամադրել, որովհետև իրենց միջամտությամբ նրանք կարող էին մեկ անգամ ընդմիշտ լուծել բոսնիական թնջուկը:

Բոսնիայի վերջին թագավոր Ստեֆան Տոմաշևիչին մեղադրելով հակաթուրքական կեցվածքի մեջ՝ սուլթանը հրամայեց գլխատել նրան: Վարկած կա այն մասին, որ գլխատումը տեղի ունեցավ սուլթանի ներկայությամբ, գուցե և անձամբ նրա կողմից: Բոսնիան ենթարկվեց թուրքերին:

Դրանից հետո Բոսնիայի բնակչությունը արագորեն սկսեց իսլամականալ: Հարևան Հերցեգովինայի լեռնային տարածքը միառժամանակ պահպանեց իր հարաբերական անկախությունը: Հետագայում, սակայն, Մեհմեդ Ֆաթիհի որդի սուլթան Բայազիդ II-ը այն ևս կցեց կայսրությանը:

Օսմանցիները իրենց ենթարկեցին նաև դանուբյան իշխանությունները. Մոլդավիան ստիպված էր ճանաչել սուլթանի գերիշխանությունը և դառնալ հարկատու դեռևս 1456 թ.: Սակայն Դանուբից հյուսիս գտնվող Վալախիան դեռ պահպանում էր իր անկախությունը: Այնտեղ կառավարում էր Վլադ Դրակուլը կամ Դրակուլան, համաշխարհային պատմության հրեշներից մեկը, որի անագորույն դաժանությունները մարդկանց մոտ առաջ էին բերում սարսափի ճիչ: Նրան վերագրվել է սատանայական ծագում:

Չնայած այն հանգամանքին, որ նրա անմարդկային արարքների լուրերը հասնում էին սուլթանի ականջին, սակայն քանի դեռ Դրակուլը կանոնավոր կերպով մուծում էր հարկերը և չէր անհանգստացնում թուրքերին, Մեհմեդը նրան հանգիստ էր թողնում: Սակայն պարզվեց, որ 1461 թ. Դրակուլը դաշինք է կնքել Հունգարիայի թա-

գավոր Մատիաշ Կորվինի հետ, որը Հունյադիից հետո հանդիսանում էր Հունգարիայի կառավարիչը: Տեղեկանալով այդ մասին՝ Մեհմեդը դեսպան ուղարկեց Դրակուլի մոտ, պահանջելով, որ նա ժամանի Ստամբուլ, իր հետ բերելով դեռևս չմուծված հարկերի գումարները և վալախական մի զորամաս օսմանյան բանակի համար՝ որպես վասալական պարտավորություն: Միաժամանակ Դանուբի շրջանի իր զորքերի հրամանատարին սուլթանն ուղարկեց գաղտնի հրահանգ, որ նա Դրակուլի Ստամբուլ մեկնելու ճանապարհին դարան սարքի, գերեվարի նրան ու չղթայակապ բերի իր մոտ: Սակայն այդ ծրագիրը կատարյալ ձախողման մատնվեց, քանի որ Դրակուլը ջախջախեց ու փախուստի մատնեց դարանակալ թուրքերին, իսկ դեսպանին ու զորքերի հրամանատարին ցից բարձրացրեց: Այնուհետև անցնելով Դանուբը՝ նա իր բանակով ներխուժեց Բուլղարիա և ահավոր ավերածության մատնեց թուրքերին պատկանող տարածքը: Նրա ավերիչ ասպատակությունը ուղեկցվում էր այդ տարածքի բնակչության զանգվածային ջարդերով: Վրիժառությամբ լցված Մեհմեդ II-ը մի մեծ պատժիչ բանակ չարժեց դեպի Վալախիա: Այդ արշավանքի ժամանակ Բուլղարիայում թուրքերը ականատես եղան ցնցող տեսարանի. նրանց դեմ հառնեց քսան հազար բուլղարների և թուրքերի նեխող դիակների մի «անտառ»: Նրանց բոլորին ցից էր բարձրացրել կամ խաչել Դրակուլը՝ ի տես թուրքերի:

Տևական անցումների հետևանքով հոգնած և ուժասպառ եղած օսմանյան բանակի համար բավականին անսովոր ու դժվար էր պայքարել Դրակուլի ուժերի դեմ, մանավանդ որ վերջինս հաջողությամբ օգտագործում էր պարտիզանական կռվի մեթոդները, վերին աստիճանի արագաշարժ էր ու չարժուն: Սակայն օգտագործելով իրենց թվական գերակշռությունը՝ թուրքերին այնուամենայնիվ հաջողվեց պարտության մատնել Դրակուլին, որը փախուստի դիմեց Մոլդավիա: Մնում էր իրականացնել վրիժառության գործողությունը և օսմանյան բանակի հրամանատարը սուլթանի ոտքերի առջև դրեց երկու հազար վալախների կտրված գլուխներ: Մեհմեդի հրամանով, որպես Վալախիայի կառավարիչ Վլադ Դրակուլին փոխարինեց նրա եղբայր Ռադուն, որը մինչ այդ պատանդի վիճակում գտնվում էր Ստամբուլում:

Այսպիսով, 1476 թ. Վալախիան ևս վերածվեց թուրքական նահանգի՝ պահպանելով որոշ ինքնավարություն: Ընդ որում, սուլթանը դանուբյան իշխանությունների՝ Մոլդավիայի և Վալախիայի բոյարներին չզրկեց իրենց իշխաններին ընտրելու իրավունքից: 1458–1463 թթ. ընթացքում Բալկաններում Օսմանյան կայսրությունը զավթեց նախ-

կին բյուզանդական տիրույթների վերջին մնացուկները, ներառյալ նաև նրանք, որոնք գտնվում էին վենետիկցիների ձեռքերում:

Մեհմեդ Ֆաթիհի առաջնահերթ խնդիրներից մեկն էր նաև Ալբանիայի նվաճումը, մի երկրի, որն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն: Իր անկախության համար այդ փոքր երկիրը չատ բանով պարտական էր ինչպես իր անառիկ լեռնաշղթաներին, այնպես էլ ալբանական ժողովրդի՝ առնավուտների մարտական ոգուն: Այդ երկիրը նվաճելու բազում փորձերի ժամանակ թուրքերը կարողանում էին գրավել միայն դաշտավայրերն ու հովիտները, իսկ լեռնային շրջաններում միշտ կրում էին անհաջողություն: Ալբանացիների անկախության պայքարը տևական ժամանակ ղեկավարում էր տաղանդավոր զորավար Գեորգի Կաստրիոտին (Սկանդերբեկ կամ Իսքանդեր բեկ), որին Հռոմի պապն անվանում էր «քրիստոնեության պաշտպան»: Թուրքերի դեմ պայքարում նրան աջակցում էին հունգարները, Վենետիկի հանրապետությունը և իտալական մյուս պետությունները:

Սկանդերբեկը, որը քրիստոնյայի զավակ էր, պատանեկության տարիներին գերվել էր թուրքերի կողմից և բռնի դավանափոխ եղել: 1443 թ. նրան հաջողվել էր փախչել գերությունից և գալով հայրենիք պայքար էր սկսել թուրք զավթիչների դեմ: Քսանչորս տարի չարունակ ալբանացիները Սկանդերբեկի գլխավորությամբ հետ էին մղում թուրքական զորքերի հարձակումները և իրենց հերթին նրանց հասցնում ծանր հարվածներ:

Սկանդերբեկի ամենահանդուգն գործողություններից մեկը Կրույա կոչված ամրոցի գրավումն էր: Մի անցաթղթի միջոցով, որը ստորագրված էր օսմանյան պետության բարձր պաշտոնյաներից մեկի կողմից, Սկանդերբեկին հաջողվում է թափանցել այդ ամրոցը: Այնուհետև գիշերվա քողի տակ նա քաղաք-ամրոց է մտցնում 600 հոգուց բաղկացած ալբանական մի ջոկատ, որը ոչնչացնում է թուրքական զորամասը:

Համարյա քառորդ դար լեռներում ամրացած խիզախ առնավուտները Սկանդերբեկի գլխավորությամբ արիաբար մարտնչում էին թուրքերի դեմ՝ նրանց հասցնելով մեծ ու փոքր պարտություններ: Ալբանական կնճիռը մեկ անգամ ընդմիշտ լուծելու նպատակով, սուլթան Մեհմեդ Ֆաթիհը 1466 թ. անձամբ Ալբանիայի վրա չարժեց մի մեծ բանակ: Սակայն հաջողությունը դարձյալ չուղեկցեց օսմանցիներին, որոնք ոչինչ չկարողացան հակադրել լեռներում մղվող պարտիզանական պատերազմին: Սուլթանը նույնիսկ չկարողացավ գրավել Կրույա ամրոցը: Սակայն 1467 թ. Սկանդերբեկի մահվանից հետո

Թուրքերին հաջողվեց ալբանական հարցում բեկում մտցնել: Տեղեկանալով այդ անվեհեր զինվորի մահվան մասին, սուլթան Մեհմեդը բացականչել էր. «Վերջապես Եվրոպան և Ասիան պատկանում են ինձ: Թչվառ քրիստոնյաներ: Նրանք կորցրին և՛ իրենց սուրը, և՛ վահանը»: Օսմանցիներին հաջողվեց Ալբանիայում հրահրել ֆեոդալների երկպառակություններ: Մի չարք ֆեոդալներ դավաճանեցին իրենց հայրենիքին և անցան Թուրքերի կողմը:

1476 թ. օսմանցիները կրկին պաշարեցին Կրույան: Մեկ տարվա պաշարումից հետո սովը ստիպեց քաղաք-ամրոցի պաշտպաններին հանձնվել, նախապես ստանալով Թուրքերի խոստումը նրանց անձեռնմխելիությունը երաշխավորելու վերաբերյալ: Սակայն ուխտադրժորեն սուլթանը ենիչերիներին հրամայեց մինչև վերջին մարդը գլխատել քաղաքի կայազորի զինվորներին: Ի վերջո խոշոր զոհերի գնով օսմանցիներին հաջողվեց 1478–1479 թթ. ընթացքում ընկճել Ալբանիան, իրենց իշխանությունը հաստատելով նրա տարածքի մեծ մասի վրա:

Եվրոպայում Թուրքական նվաճումները հանդիպեցին Վենետիկի հանրապետության ուժգին դիմադրությանը: Վենետիկն ու Օսմանյան կայսրությունը, այդ վաղեմի հակառակորդ-մրցակիցները վաղուց ի վեր միմյանց հետ վիճարկում էին ծովային կարևորագույն հենակետերի նկատմամբ իրենց տիրապետությունը հաստատելու իրավունքը: Մեհմեդ Ֆաթիհը Վենետիկը համարում էր Հռոմի դուստրը և դեռևս 1451 թ. ասել էր, որ տիրելով դստրին, կտիրանա նաև նրա մորը: Միջերկրական ծովի արևելյան մասում Վենետիկը զբաղեցնում էր տիրապետող դիրքեր: Նրա ձեռքում էր գտնվում Արևելքի հետ եվրոպական երկրների առևտրի մեծ մասը: Թուրքական նվաճումները նրա հետաքրքրությունների գոտում նրան սպառնում էին մեծ կորուստներ ունենալու: Ուստի Վենետիկը և Օսմանյան կայսրությունը միմյանց համար հանդիսանում էին ոխերիմ թշնամիներ: Կողմերի միջև օրըստօրե սրվող հարաբերությունները ի վերջո 1463 թ. հանգեցրին Թուրք-վենետիկյան պատերազմի, որը տևեց տասնվեց տարի (1463–1479): Պատերազմն ընթանում էր ինչպես Միջերկրական և Էգեյան ծովերի, այնպես էլ ցամաքի վրա: Պատերազմի առաջին շրջանն ընթանում էր փոփոխակի հաջողությամբ, սակայն աստիճանաբար առավելությունն անցավ օսմանցիներին: Մեհմեդ Ֆաթիհին հաջողվեց ռազմական գործողությունները տեղափոխել Ապենինյան թերակղզի, որտեղ 1477 թ. Թուրքական հեծելազորը զարհուրելի ասպատակություն սփռեց: Վենետիկից հյուսիս տեղի ունեցած ճակատամարտում

Թուրքերը տարան հաղթանակ: Նրանք այնքան էին մոտեցել քաղաքին, որ պարզ երևում էին այրվող գյուղերի և օսմանցիների ռազմական ճամբարի կրակները: Սուրբ Մարկոսի տաճարի զանգերը բնակչությանը ահազանգում էին քաղաքի վրա կախված մոտալուտ վտանգի մասին: Աչնանը, սակայն, Թուրքերը հեռացան, իրենց հետ տանելով հարուստ ռազմական ավար, հետևում թողնելով այրված գյուղերի, չքեղ առանձնատների, ամրոցների ու պալատների ավերակներ ու համատարած մոխիր:

Հաջորդ տարի ասպատակությունը կրկնվեց ավելի մեծ թափով, որին մասնակցում էին տասնյակ հազարավոր թուրքական անկանոն զորքեր՝ բաշիբուզուկներ, աքընջիներ և այլն, որոնք իրենց անագորույն դաժանությամբ ու վայրագ արարքներով ամերուրեք սփռում էին ահ ու սարսափ: «Ալլահու աքբար» (Ալլահը մեծ է) և «Մեհմեդ, Մեհմեդ, Ռոմա, Ռոմա» գոչելով, նրանք ասպատակում ու ավերում էին իտալական ծաղկուն բնակավայրերը:

Սարսափը պատել էր ամբողջ Եվրոպային: Քրիստոնեական աշխարհի վրա սուրացող սպառնալիքը ահով էր համակել բոլոր պետություններին:

Թուրք-վենետիկյան պատերազմն ավարտվեց վենետիկցիների պարտությամբ, որոնք ստիպված էին 1479 թ. հունվարի 26-ին Ստամբուլում կնքել հաշտության պայմանագիր: Վենետիկի հանրապետությունը Թուրքերին էր զիջում Էգեյան ծովի Լեմնոս, Էվբեա և մի շարք այլ կղզիներ՝ ի բացառյալ Կրետեի և Կորֆուի: Վենետիկցիների վրա դրվում էին ծանր հարկեր ու տուրքեր: Վենետիկը պարտավորվում էր սուլթանին վճարել միաժամանակյա հարկ 100 հազար դուկատի չափով, ինչպես նաև տարեկան հարկ՝ 10 հազար դուկատ: Սակայն քանի որ Թուրքերը չահագրգռված էին Օսմանյան պետության հետ վենետիկյան վաճառականների առևտրի մեջ, որը նրանց գանձարանին բերում էր խոշոր շահույթներ, սուլթանը պահպանեց այն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որոնք մինչ պատերազմը դեռևս 1451 թ. վենետիկցիները ստացել էին Մեհմեդ II-ի կողմից: Դրանք էին. Օսմանյան կայսրության տարածքում անմաքս առևտրի իրավունք, արտաերկրայնության իրավունք (Վենետիկի հպատակները ենթակա չէին դատվելու Թուրքական օրենքներով, եթե հանցանք կամ զանցանք էին գործել սուլթանական տիրույթներում), թույլատրվում էր Ստամբուլում հիմնել վենետիկյան հյուպատոսություն իրենց վաճառականների և առհասարակ վենետիկցիների քաղաքացիական և առևտրական իրավունքները պաշտպանելու համար, ընդ

որում, վենետիկյան հյուպատոսներին իրավունք էր վերապահվում հանրապետության հպատակներին դատելու վենետիկյան օրենքներով:

Օսմանների համար հաղթական պատերազմի ավարտից հետո Վենետիկ ուղարկվեց թուրքական մի դեսպանություն: Դա առաջին դեպքն էր, որ օսմանյան կառավարությունն իր դեսպանությունն էր ուղարկում Եվրոպա: Բանակցությունները տեղի էին ունենում Միջերկրական ծովի չրջանում երկու պետությունների հնարավոր ռազմական փոխգործողության մասին: Որպես արդյունք այդ բանակցությունների և, ի հավելումն, 1479 թ. թուրք-վենետիկյան պայմանագրի, նույն թվականին կողմերի միջև կնքվեց նաև ռազմական դաշինք, ըստ որի վենետիկցիները իրենց վրա պարտավորություն վերցրին հանրապետության նավատորմն ուղարկել թուրքերին օգնելու համար, եթե Միջերկրածովյան ավազանում որևէ պետություն հարձակում գործեր օսմանյան տիրույթների վրա:

Իսկ սուլթան Մեհմեդ II-ը պարտավորում էր անհրաժեշտության դեպքում Վենետիկին ցուցաբերել ռազմական աջակցություն իր 100-հազարանոց հեծելազորի միջոցով:

Թուրք-վենետիկյան խաղաղության պայմանագրի կնքումից հետո՝ մի քանի ամիս անց, սուլթանը Հոնիական ծովում գրավեց մի քանի կղզիներ, որոնք վերածվեցին ծովային հենակետերի՝ անհրաժեշտության դեպքում Իտալիայի ափերի վրա հարձակումներ գործելու համար:

Որքան էլ որ անսպասելի էր, այդ տարիներին սուլթանի զորքերը համառ դիմադրության հանդիպեցին Զեռնոգորիայում: 1477 թ. Սկուդարի (Շկոդեր) ամրոցի հերոսական պաշտպանությունը մտել է պատմության մեջ որպես խիզախության ու անվեհերության մի փայլուն օրինակ: Ամեն անգամ ենիչերիների գրոհները հանդիպելով ուժգին հակահարվածի, փչրվում և ի չիք էին դառնում: Մի քանի ամիս տևած պաշարումից հետո, երբ պաշարվածները մատնվել էին սովի և կրակել իրենց վերջին փամփուշները, չեռնոգորցիներից, ալբանացիներից և վենետիկցիներից բաղկացած ամրոցի կայազորը համաձայնվեց հեռանալ, եթե թուրքերը երաշխավորեն իրենց կյանքի անձեռնմխելիությունը: Ամրոցի պաշտպաններին թույլ տրվեց իրենց լրիվ սպառազինությամբ անցնել թուրքական զորքերի չղթայի միջով և հեռանալ: Դա այն բացառիկ դեպքերից էր, երբ օսմանցիները չդրժեցին իրենց տված խոստումը:

Թուրքական նվաճողականության հաջորդ զոհը Եվրոպայում Հերցեգովինան էր, որը 1483 թ. դարձավ կայսրության տիրույթը:

Եվրոպայում սուլթան Մեհմեդ Ֆաթիհի հաղթական արշավանքների հետևանքով Բալկանյան թերակղզին համարյա ամբողջությամբ անցավ օսմանցիների հսկողության տակ: Սակայն քրիստոնեական խաչի նահանջը իսլամական մահիկի առջև չէր դադարում: Թուրքական զորքերը համառ հետևողականությամբ սողոսկում էին դեպի Եվրոպայի սիրտը՝ Կենտրոնական Եվրոպա: Քրիստոնյա աշխարհը չունչը պահած սարսափով հետևում էր իր սահմանների մերձակայքում ծավալվող ահեղ իրադարձություններին:

Օգտվելով վենետիկցիների հետ պատերազմի կարճատև դադարից, իր սովորության համաձայն խորհրդակցելով աստղագուշակների հետ, 1472 թ. աշնանը Մեհմեդը կրկին զորաշարժ կատարեց դեպի Ասիա, որտեղ հանձին Ադ-Ղոյունլու թյուրք-օղուզական քոչվորների պետության ստեղծվել էր մի պատկառազդու ուժային կենտրոն, որը սպառնալիք կարող էր հանդիսանալ օսմանյան պետության համար: Ադ-Ղոյունլուների պետությունը (բառացի «սպիտակ խոյավորներ», այդպիսին էր պետության անվանումը, քանի որ նրանք իրենց դրոշի վրա պատկերել էին սպիտակ խոյ) ստեղծվել էր XV դարի սկզբին: Իր ամենաբարձր ծաղկման շրջանում, Ուզուն-Հասան սուլթանի օրոք (1453-1478) այդ պետությունը նվաճել էր Ատրպատականը, Հայաստանը, Արաբական Իրաքը, Իրանի տարածքի զգալի մասը (Արևմտյան Իրանը, իսկ արևելքում մինչև Խորասան): Հարավում նրա տիրույթները հասնում էին մինչև Պարսից ծոցի շրջանը: Սակայն չբավարարվելով դրանով, Ուզուն-Հասանը անդուսպ ձգտում էր դրսևորում շարժվելու դեպի արևմուտք՝ օսմանյան տիրույթները: Նա գիտակցում էր, որ վաղ թե ուշ օսմանցիների հետ բախումը անխուսափելի է, ուստի հետևողականորեն փնտրում էր դաշնակիցներ: Նրան հաջողվեց, օրինակ, քաղաքական դաշինք կնքել Ստամբուլի ոխերիմ թշնամու՝ Կարամանների թյուրքական պետության հետ: Ուզուն-Հասանի շուրջը հավաքվել էին Մեհմեդ II-ից դժգոհ անատոլիական շատ բեյեր, որոնք հույս ունեին Ադ-Ղոյունլուների սուլթանի օգնությամբ տիրանալ իրենց նախկին դիրքերին: Ուզուն-Հասանը դիվանագիտական ակտիվ հարաբերություններ էր հաստատել նաև Հոռոսի և Կիպրոսի հետ: Այսպիսով Ուզուն-Հասանին հաջողվեց Արևելյան Անատոլիայում ստեղծել օսմանների նկատմամբ հզոր ընդդիմադիր մի ճակատ, որը միավորում էր տեղական մի շարք թյուրք կառավարիչներին, ինչպես նաև, ըստ որոշ աղբյուրների, Վրաստանի քրիստոնյա իշխաններին: Մեհմեդ II-ին առանձնապես մտահոգում էր իր ստա-

ցած տեղեկություններն այն մասին, որ Վենետիկը և պապականության հետ կապված մյուս իտալական, ինչպես նաև Եվրոպայի այլ քրիստոնեական պետությունները, դիվանագիտական չփումների մեջ են գտնվում Աղ-Ղոյունլուների հետ հակաօսմանյան ռազմա-քաղաքական դաշինք հարդարելու նպատակով: Ի դեպ, վենետիկյան դեսպաններ Կատերինո Զենոն, Իոսաֆաթ Բարբարոն, Ավրոսի Կոնտարինին, Ջովաննի Անջոյելլոն հետաքրքիր հուշեր են թողել այդ հարաբերությունների մասին: Վենետիկցիների հետ հակաթուրքական ճակատ կազմելու բանակցություններում միջնորդի դերում հանդես էին գալիս Կարամանիայի և Կիպրոսի (Լուսինյանների պետության) ներկայացուցիչները: Քանի որ թուրքերի տիրապետությունն ու նրանց սահմանած մաքսային ռեժիմը խոչընդոտ էր ստեղծել Եվրոպայի և Ասիայի միջև տեղի ունեցող քարավանային առևտրի առաջ՝ Ուզուն-Հասանի բանակցություններին մասնակցում էին նաև միջազգային առևտրով զբաղվող իրանահայ վաճառականները: 1469 թ., օրինակ, Ուզուն-Հասանի կողմից որպես դեսպան Վենետիկ և Հռոմ մեկնեց հայազգի վաճառական խոջա Միրաքը:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ էր, որ Արևմուտքը հրահրում է Արևելքին Արևելքի դեմ՝ փորձելով գեթ այդ ճանապարհով կանխել թուրքերի առաջխաղացումը դեպի Եվրոպա: Ուզուն-Հասանը ոչ միայն պատրաստ էր արձագանքելու Արևմուտքի կողմից հակաօսմանյան դաշինք կնքելու առաջարկներին, այլև ինքն էր դրսևորում նախաձեռնություն՝ դեսպանություններ ուղարկելով Վենետիկի դոժի և եվրոպական այլ տիրակալների մոտ: Որպես նրա դեսպաններ՝ հաճախ հանդես էին գալիս նաև միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառական-խոջաները:

Ուզուն-Հասանը, սակայն, չէր սահմանափակվում լոկ եվրոպացիների հետ հակաթուրքական դաշինք կռելու ջանքերով: Էրզինջանում հավաքելով մի հսկայական բանակ, նա սկսեց շարժվել դեպի արևմուտք, Օսմանյան տիրույթները, գրավեց Կայսերին, ասպատակ սփռեց Անգորայի շրջանում և թափանցեց մինչև Աքշեհիր:

Այնժամ սուլթան Մեհմեդը որոշեց, որ այլևս եկել է հատուցման ժամը: Մինչև բախումը, կողմերը միմյանց հետ փոխանակեցին սպառնալից նամակներ: Իր հանդուգն ոճով գրված նամակում Ուզուն-Հասանը պարծենում էր Իրանում տարած իր հաղթանակներով և հայտարարում, որ ինքը այնքան հզոր է, որ չի վախենում ոչ մի թշնամուց: Պատասխան նամակում Մեհմեդը Ուզուն-Հասանին անվանում էր շարքային պարսկական խան, նպատակ ունենալով նվաս-

տացնել նրան, և սպառնում էր, որ չուտով նրա իշխանությունը կկործանվի և կուլ կգնա անտակ խարխորատը:

Սուլթանը նախ իր զորքերը շարժեց Ուզուն-Հասանի դաշնակից Կարամանի բեյի վրա, որի դեմ տասներկու տարի համարյա անընդմեջ պատերազմ էր մղում: 1472 թ. հերթական անգամ պարտության մատնելով նրան, սուլթանը մեծ զորաշարժ կատարեց դեպի Աղ-Ղույունլուների պետության կողմը: Հակառակորդների հանդիպումը տեղի ունեցավ 1473 թ. օգոստոսի 11-ին, Բայբուրդի (Բաբերդի) և Էրզրումի միջև ընկած Դերջան կոչված վայրում:

Ճակատամարտը տևեց շատ կարճ՝ ընդամենը ութ ժամ, սակայն այն, ինչպես որ սպասելի էր, դաժան էր և արյունալի: «Սպիտակ խոյավորների» առաջնորդի զորքերը չդիմացան Թուրքական հրետանու հուժկու հարվածներին ու ենիչերիների անկասելի գրոհին: Նրանք խուճապահար փախուստի դիմեցին, տալով տասն անգամ ավելի շատ զոհեր, քան հակառակորդը: Ուզուն-Հասանի ողջ ռազմական ճամբարը ընկավ օսմանցիների ձեռքը: Ճակատամարտից հետո երեք օր շարունակ սուլթանն անց կացրեց ռազմի դաշտում, դիտելով գերիների մահապատիժը: Նրա հրամանով գերված արհեստավորներին և «գիտուն մարդկանց» ուղարկեցին Ստամբուլ, իսկ մնացածներին անխնա սրի քաշեցին: Երբ Մեհմեդի բանակը ուղղություն վերցրեց դեպի արևմուտք, նա իր հետ տանում էր երեք հազար գերյալների, որոնց, ժամանակ չկորցնելու համար, հընթացս մահապատժի էին ենթարկում՝ օրը չորս հարյուր մարդ հաշվով:

Դերջանի մոտ տարած հաղթանակի հետևանքով Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան մասը (Էրզրումը, Կամախը, Դերջանը, Բաբերդը և այլն) միացվեցին օսմանյան պետությանը:

Աղ-Ղույունլուների դեմ մղված պատերազմում ակնհայտորեն երևաց օսմանցիների ռազմական գերազանցությունը, հատկապես բանակի տեխնիկական հագեցվածության տեսակետից: Քոչվորական հեծելազորը չդիմացավ օսմանյան հրետանու կրակին:

Թեև Ուզուն-Հասանը դեռևս վերջնականապես ջախջախված չէր, սակայն նրանից առայժմ սուլթանը նոր վտանգ չէր սպասում: Իսկ մի քանի տարի անց, 1478 թ. «Սպիտակ խոյավորների» առաջնորդը կնքեց իր մահկանացուն և առհասարակ Աղ-Ղույունլուներից սպասվող վտանգը վերացավ: Այսուհետև իր սահմաններից Արևելք օսմանյան պետությունը այլևս չուներ լուրջ հակառակորդներ:

Մեհմեդ II-ը որոշեց հարված հասցնել նաև իր թշնամիներից մեկին՝ Ջենովային: Ջենովայի իտալական հանրապետությունը Վենե-

տիկի հետ միասին իր ձեռքն էր վերցրել Միջերկրական ու Սև ծովի ավազանի երկրների և Արևմուտքի միջև իրականացվող միջազգային առևտրի կարևոր լծակները: Ջենովացիները Ղրիմի թերակղզու հարավային շրջաններում ևս հիմնել էին բազմաթիվ առևտրական գաղութներ, որոնց վրայով իրագործում էին մեծ չափերի հասնող առևտրափոխանակություն Արևելքի և Արևմուտքի միջև: Սակայն Կոստանդնուպոլիսը օսմանցիների կողմից նվաճելուց հետո ջենովական վաճառականների կապը Ղրիմի իրենց գաղութների հետ չափազանց դժվարացել էր: Ուստի հաճախ, հաշվի չնստելով թուրքերի հետ, ջենովական նավերը ուժ գործադրելու օգնությամբ անցնում էին նեղուցները, իսկ երբեմն նույնիսկ ջենովական ռազմանավերը բաց ծովում հարձակումներ էին գործում թուրքական նավերի վրա և այրում ու ջրասույզ անում նրանց:

Մեհմեդ II-ը որոշեց վերջ տալ այդ բոլորին և միաժամանակ դառնալ Սև ծովի վրայով կատարվող միջազգային առևտրի լիիրավ տերը: 1475 թ. 270 նավերով սուլթանը Ղրիմի ափերն ուղարկեց մի մեծաթիվ բանակ: Թուրքերը նվաճեցին Կաֆան, Կերչը, Սուդակը և Սև ու Ազովի ծովերի ափերին մի շարք այլ քաղաքներ: Ազովի ծովի Թանու քաղաքում օսմանցիները կառուցեցին Ազաք (Ազով) ամրոցը: Ղրիմի ծովափնյա գոտին մտցվեց սուլթանի տիրույթների մեջ, իսկ թերակղզու տափաստանային մասը և Դնեստրի ստորին հոսանքի շրջանում գտնվող հողերը հանձնվեցին Ղրիմի խանին:

Այսպիսով, Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրին հասցվում էր նոր ծանր հարված: Թուրքերը ամբողջապես իրենց հսկողության տակ էին վերցնում այդ առևտուրը, որը օսմանյան գանձարանին բերում էր հսկայական եկամուտներ:

Միջերկրական ծովի արևելյան մասում և Սև ծովում միջազգային առևտրի առջև հարուցված դժվարությունները կարևորագույն պատճառներից էին, որ ստիպեցին եվրոպական տերություններին որոնել Արևելքի հետ առևտրի նոր՝ ծովային ճանապարհներ: Ինչպես հայտնի է, այդ որոնումները XV դ. վերջին ավարտվեցին հաջողությամբ, երբ տեղի ունեցավ աշխարհագրական մեծ հայտնագործություն՝ բացվեց Աֆրիկայի շուրջ ծովային նոր ճանապարհը:

Ղրիմն անցավ թուրքերի ձեռքը և Ղրիմի խանը իրեն ճանաչեց որպես սուլթանի հարկատու-վասալը: Այդ ժամանակվանից սկսած Օսմանյան կայսրությունը դարձավ Սև ծովի լիիրավ տերը: Ղրիմի խանության ենթարկումը թուրքերին ռեալ վտանգ էր ստեղծում, որ Արևելյան Եվրոպայի բոլոր թաթարական յուրդերը, որոնք Ոսկե Հոր-

դայի քայքայումից հետո դեռևս պահպանում էին իրենց գոյությունը, կհայտնվեն Օսմանյան կայսրության հովանու ներքո: Այդ վտանգը հատկապես ուժեղացավ այն բանից հետո, երբ Կազանում իշխանության գլուխ անցան ղրիմյան Գիրեյները:

Կոստանդնուպոլսի անկումից հետո նախկին ընդարձակ Բյուզանդական կայսրությունից դեռևս պահպանվում էր իր տարածքով ոչ մեծ, սակայն առևտրական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող Տրապիզոնի պետությունը Փոքր Ասիայի հյուսիսում, որը կոչում էին «Տրապիզոնի կայսրություն»: Այդ փոքր «կայսրությունը» չնորհիվ իր մայրաքաղաքի՝ նավահանգստային քաղաք Տրապիզոնի, խաղում էր չափազանց կարևոր դեր եվրոպական երկրների առևտրում Իրանի, Հնդկաստանի, Չինաստանի, Կենտրոնական Ասիայի և այլ հեռավոր ու մոտ երկրների հետ: Այդ առևտրից «կայսրությունը» ստանում էր հսկայական եկամուտներ, որոնք կուտակվում էին երկրում: Բնականաբար դա գայթակղեցուցիչ խայծ էր սուլթանի համար և նա որոշել էր տեր դառնալ այդ հարստություններին, ինչպես նաև այն եկամուտներին, որ առատորեն բերում էր Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտուրը: Սակայն դա միայն հարցի մի կողմն էր, թեև չափազանց կարևոր կողմը: Խնդիրը պարունակում էր նաև քաղաքական ենթատեքստ: Նախ սուլթանի համար վերին աստիճանի տհաճ ու մտահոգիչ էր այն, որ Տրապիզոնի կայսրը անընդհատ չփումների մեջ էր և դաշնակցային հարաբերություններ էր հաստատել Օսմանյան կայսրության ոխերիմ թշնամիների՝ Աղ-Ղոյունլու պետության և Կարամանի էմիրի հետ: Եվ ահա եկել էր այն պահը, որ Մեհմեդ Ֆաթիհը որոշել էր նրանց բոլորին հերթով ջախջախել ու ոչնչացնել: Հերթական զոհը լինելու էր Տրապիզոնի կայսրությունը: Ընդ որում, «կայսր» հորջորջվածը իր անխոհեմ քայլով հենց ինքը արագացրեց իր կործանումը: Զուրկ լինելով ռեալականության զգացումից՝ նա Ուզուն-Հասանի դեսպանների միջոցով Կոստանդնուպոլսում սուլթանին ներկայացրել էր մի շարք հավակնոտ պահանջներ, այդ թվում նաև վերացնելու ժամանակին իր հոր վրա դրված պարտականությունը հարկ վճարելու վերաբերյալ: Դա հունից հանել էր սուլթանին, որը և վճռել էր, որ եկել է Տրապիզոնյան կայսրության ճակատագիրը վերջնականապես որոշելու ժամը:

Թուրքական պատմական աղբյուրները վկայում են, որ Մեհմեդ II -ը առհասարակ որոշել էր կենդանի չթողնել «բյուզանդական հույներից որևէ մեկին, որին կարելի էր անվանել թագավոր»: Նա արդեն վերացրել էր Պալեոլոգոսներին, այժմ հերթը Կոմնիններինն էր, որոնք

գլխավորում էին Տրապիզոնի կայսրությունը: Մեծ Կոմնին հորջորջված Հովհան (Հովհաննես) IV կայսեր մահվանից հետո Տրապիզոնում կառավարում էր նրա կրտսեր եղբայր Դավիթը: Վերջինս դաշնակցելով Վենետիկի, Ջենովայի և պապականության, իսկ Ասիայում Ուզուն-Հասանի հետ, որը Կոմնինների հետ կապված էր ամուսնական դաշինքով, փորձում էր ճակատ կազմել սուլթանի դեմ:

1461 թ. Մեհմեդը ծովային ու ցամաքային արշավանք կազմակերպեց դեպի Ասիա: Գլխավոր թիրախը Տրապիզոնյան կայսրությունն էր: Նախ նա գրավեց Ամաստրիս նավահանգիստը, որը հանդիսանում էր Սև ծովում Ջենովացիների վերջին առևտրական հենակետը: Այնուհետև զորքերը և նավատորմը շարժեց դեպի Սինոպ, որը թուրքերը գրավեցին առանց մարտի Տրապիզոնի (թուրքերեն՝ Տրապզոն) տեղապահի դավաճանության շնորհիվ: Այնտեղից սուլթանը զորաշարժ կատարեց Աղ-ղոյունլուների դեմ, որոնք Կարամանի էմիրի իրենց դաշնակցից չստանալով օգնություն, սկսեցին նահանջել դեպի արևելք, խուսափելով հակառակորդի հետ բախումից:

Ուզուն-Հասանի մայրը, ասորական ծագում ունեցող քրիստոնյա իշխանուհի Սարան, նվերներով ներկայացավ Մեհմեդին և իր որդու անունից առաջարկեց կնքել խաղաղության պայմանագիր, ըստ որի Ուզուն-Հասանը համաձայն էր պարտավորություն տալու, որ ինքը չի օգնի Տրապիզոնի Կոմնիններին: Երբ իշխանուհին փորձում էր համոզել սուլթանին, որ նա հրաժարվի Տրապիզոնը գրավելու մտքից, դրանով իսկ անձամբ իրեն ենթարկելով վտանգի, Մեհմեդ Ֆաթիհը պատասխանեց. «Մայրիկ, իմ ձեռքերում իսլամի սուրն է»:

Տասնութօրյա դժվարին անցում կատարելով Պոնտական լեռներով, օսմանյան բանակը մեծ վեզիր Մահմուդ փաշայի հրամանատարությամբ մոտեցավ Տրապիզոնին, իսկ ծովի կողմից քաղաքը շրջափակվեց թուրքական նավատորմի կողմից: Քաղաքի պաշտպանները համարյա մեկ ամիս չարունակ կորովի դիմադրություն էին ցույց տալիս: Սակայն քաղաքի ճակատագիրը որոշեց տրապիզոնյան ազնվականության ստոր դավաճանությունը: Թեև Տրապիզոնի պարիսպները և քաղաքում եղած սննդամթերքի պաշարները հնարավորություն էին տալիս տևական ժամանակ դիմադրություն ցույց տալու թշնամուն, սակայն դրսևորելով վախկոտություն, փոքրոգություն ու սեփական կաշին փրկելու ձգտում, Տրապիզոնի վերնախավը սկսեց դրսևորել պարտվողական տրամադրություններ, որը քաղաքում առաջ բերեց խուճապ և թշնամուն հանձնվելու պատրաստակամություն:

Ջստանալով իր դաշնակիցների օգնությունը՝ իսկ ամենակարևո-

ը չունենալով ռազմիկի հատկանիշներ, մեկամսյա դիմադրությունից հետո Դավիթ կայսրը ընդունեց թուրքական զորքերի հրամանատար Մահմուդ փաշայի առաջարկը հանձնելու քաղաքը: Փաշան խոստացել էր իր այդ պայմանը ընդունելու դեպքում կայսերը և նրա մերձավորներին տրամադրել կյանքի անձեռնմխելիություն և ծովով հեռանալու իրավունք: Քաղաքի բնակչությանը թողնելով բախտի քմահաճույքին՝ կայսրը տմարդի կերպով հեռացավ Տրապիզոնից: Հաղթական օսմանյան բանակը մուտք գործեց քաղաք, այն մատնելով կողոպուտի ու ավերածության: Տղամարդկանց ու կանանց վերածեցին ստրուկների և բաժանեցին սուլթանի ու նրա զորահրամանատարների միջև, չատերին տարագրեցին Ստամբուլ, ավելի քան հազար հինգ հարյուր պատանիների ուղարկեցին ենիչերիական զորամասերը, մեծ թվով ընտանիքների զրկեցին սեփականությունից:

Սուլթանի հրամանով Տրապիզոնի վերջին կայսրը՝ Դավիթը, իր ընտանիքով տեղափոխվեց Կոստանդնուպոլիս՝ իր հետ տանելով տարիների ընթացքում կուտակած հսկայական հարստությունը: Մայրաքաղաքում գահազուրկ կայսրին իր ընտանիքով հանդերձ բանտարկեցին նորակառույց «Յոթ աշտարականի» ամրոցում, որտեղ որոշ ժամանակ անց նրան, իր յոթ զավակներին, եղբորը և Կոմնինների գերդաստանի մյուս անդամներին խեղդամահ արեցին: Սուլթանը հրամայեց նրանց մարմինը չհանձնել հողին, այլ նետել թափառող շների ու գիշատիչ թռչունների առջև հոշոտելու:

Տրապիզոնյան արշավանքի ընթացքում Մեհմեդը իր կայսրությանը միացրեց Փոքր Ասիայի հյուսիսային հատվածի ծովափնյա շրջանի մեծ մասը Սև ծովի կարևոր նավահանգիստներով հանդերձ: 1464 թ. Կարամանի մեծ էմիր Իբրահիմ-բեյի մահվանից հետո՝ Մեհմեդ Ֆաթիհի ռազմավարական ծրագրերում հաջորդ զոհը լինելու էր Կարամանի բեյությունը, որը վերջին հարյուր հիսուն տարիների ընթացքում հանդիսանում էր թուրքերի ախոյանը: 1473 թ. պարտության մատնելով այդ բեյությանը, սուլթանը այն ենթարկեց իրեն: Սակայն դրանից հետո ևս, այնուամենայնիվ, պահպանելով որոշակի ինքնավարություն, XV դարի վերջին այն վերջնականապես մտցվեց Օսմանյան կայսրության կազմի մեջ: Դրանով ճանապարհ հարթվեց Կիլիկիայի և Միջերկրական ծովի ասիական ափի նկատմամբ օսմանցիների բացարձակ հսկողություն հաստատելու համար:

1475 թ. Մեհմեդ II-ը նոր կործանիչ հարված հասցրեց Ուզուն-Հասանին և Փոքր Ասիայում նրա ունեցած տիրույթները միացրեց իր պետությանը: Աղ-ղոյունլու պետությունը վերջնականապես վերա-

ցավ պատմության ասպարեզից, երբ Իրանում ստեղծված Սեֆյան պետությունը 1508 թ. նրան հասցրեց կործանիչ հարված:

Այսպիսով, XV դարի երկրորդ կեսին ավարտվեց Փոքր Ասիայի, թուրքական պետության այդ հիմնական հենակետի միավորումը Օսմանյան կայսրության շրջանակներում:

Արևելքում ապահովելով իր թիկունքը, Մեհմեդ Ֆաթիհը կրկին իր հայացքն ուղղեց դեպի Արևմուտք՝ նպատակ ունենալով կայսրությունն ընդարձակել դեպի Արևմտյան Եվրոպայի կողմը: Նրա լայնահուն ծրագրի առաջնահերթություններից էր Հունգարիայի, Իտալիայի և Գերմանիայի նվաճումը: 1480 թ. օսմանյան 100 հազարանոց բանակը ծովակալ Գեդիկ Ահմեդ փաշայի հրամանատարությամբ մոտ 300 նավերով Ադրիատիկ ծովով տեղափոխվեց Հարավային Իտալիա և պաշարեց Օտրանդո քաղաքը: Երկշաբաթյա դիմադրությունից հետո այն ընկավ: Քաղաքի բնակչության հետ թուրքական զորքերի հաշվեհարդարը անողոք էր: Բնակիչների կեսին նրանք սրի քաշեցին, ութ հարյուր հոգու մահապատժի ենթարկեցին իսլամը ընդունելուց հրաժարվելու համար, իսկ ութ հազար մարդու քշեցին ստրկության: Բաշիբուզուկները և ենիչերիները Օտրանդոն և նրա շրջակայքը մատնեցին ահավոր կողոպուտի և ավերածության: Եվրոպայի սրտում գտնվող այդ քաղաքի գրավումը ողջ եվրոպական մայր ցամաքում առաջ բերեց նոր, աննախընթաց խուճապ, մանավանդ որ լուրեր էին տարածվում, որ շուտով Մեհմեդը պատրաստվում է մի հսկայական բանակի գլուխ անցած անձամբ գալու Իտալիա: Թուրքերի այդ հավանական ներխուժման վտանգը Ապենինյան թերակղզի այն աստիճանի մեծ էր, որ Հռոմի պապը մտածում էր փախուստի դիմել և ապաստանել Ավինյոնում:

Օտրանդոյի բնակիչների հետ արյունոտ հաշվեհարդարը ողջ Իտալիայի բնակչությանը ակնառու կերպով ցույց տվեց, թե ինչ ճակատագիր է սպասում նրան թուրքական սուլթանի կողմից իրենց երկիրը նվաճելու դեպքում: Ուստի իտալացիները համախմբեցին իրենց ուժերը: Հռոմի պապի հորդորներով, նրանց օգնության ձեռք մեկնեցին նաև Ջենովան, Իսպանիան և Պորտուգալիան: Այդ միացյալ ուժերը մի քանի չոչափելի հարվածներ հասցրեցին թուրքերին, որը վճռորոշ նշանակություն ունեցավ Իտալիան օսմանյան նվաճումից զերծ պահելու գործում: Մեհմեդ II-ի իտալական արշավանքը անհաջողությամբ ավարտվեց նաև այն պատճառով, որ թուրքական զորքերը զգում էին սննդամթերքի սուր պակաս:

Սուլթանը որոշեց փոխել իր հարձակողական գործողությունների

ուղղությունը դեպի արևելք: Հեռանալով իտալական հողերից, նա իր զորքերը չարժեց դեպի Հոոդոս կղզին, որտեղ գոյություն ունեցող հզոր ամրոցը կարևոր դեր կարող էր ունենալ Անատոլիայի պաշտպանության համար: Այդ ամրոցում ամրացել էին սուրբ Հովհաննեսի միաբանության ասպետները: Հոոդոս կղզու ռազմավարական առաջնակարգ դերը կայանում էր նաև նրանում, որ այն արգելակում էր Թուրքերի ծովային տիրապետության հաստատումը Միջերկրական ծովի արևելյան մասի նկատմամբ:

Մեսիհ-փաշայի հրամանատարությամբ, որը սերում էր բյուզանդական արքայական Պալեոլոգոսների տոհմից, Թուրքերը յոթանասուն հազարանոց մի բանակ չարժեցին դեպի Հոոդոս: Այդ վիթխարի ուժին ծովով ուղեկցում էր հիսուն ռազմանավերից բաղկացած նավատորմը: Ասպետները այդ ուժին հակադրեցին իրենց խիզախությունն ու անձնազոհությունը և արհեստավարժ ռազմիկի իրենց բոլոր հատկանիշները:

Հակառակորդների միջև տեղի ունեցած ճակատամարտը կատաղի ու անզիջում էր: Ի վերջո Թուրքերը, ականատեսի վկայությամբ, «ինչպես խոզեր» խուճապահար փախուստի դիմեցին, անխնա հետապնդվելով ասպետների կողմից: Թեև Հոոդոս քաղաքը ավերակների մեջ էր, սակայն երկնքում նրա վրա ծածանվում էր ասպետների դրոշը՝ սուրբ Հովհաննեսի սպիտակ խաչը դրոշի կարմիր ֆոնի վրա: Ի դեպ, նրան վիճակված էր ծածանվելու ևս կես հարյուրամյակ:

Թուրքերի նվաճումները Բալկաններում, Փոքր Ասիայում և Սև ծովի հուսիսային ափերում Օսմանյան կայրությունը վերածեցին մեծ, ուժեղ կայսրության, որը սարսափ էր ազդում եվրոպական և ասիական պետությունների վրա:

Կարծես ճակատագրի քմահաճույքով, ֆաթիհ (հաղթական) հորջորջված Մեհմեդ II-ը իր անցած փառքի ճանապարհը ավարտում էր պարտությամբ: Նա մահացավ դեռևս մինչև Իտալիայից կատարված նահանջը՝ 1481 թ. մայիսի 4-ին, քառասունին տարեկան հասակում: Ընդ որում, նա մահացավ ոչ բնական մահով. թունավորվել էր սեփական բժշկի կողմից, որին այդ հանցագործությանը մղել էր գահաժառանգ-իշխանազուն Բայազիդը, որը համբերություն չուներ, որ բնականոն ճանապարհով ժառանգեր իր հոր գահը: Կարծես թե հայրասպանությունը եղբայրասպանության հետ մեկտեղ դառնում էր օսմանների դինաստիայի անկապտելի նորմը:

Առհասարակ պետք է նշել, որ օսմանցիների մոտ գահաժառանգության հարցը դրված էր արյունոտ հիմքերի վրա: Հենց ինքը՝ Մեհ-

մեդ II-ը անմիջականորեն մասնակից էր անողոք ու դաժան համակարգի ստեղծմանը: 1478 թ. նա հրապարակել էր մի օրենք, որն օրինականցնում էր եղբայրասպանության պրակտիկան, թեև առանց այն էլ այն կիրառվում էր օսմանյան դինաստիայի կողմից: Նրանում ասվում էր. «Իմ զավակներից նա, որին Աստված չնորհում է սուլթանությունը, կարող է օրինական հիմքի վրա իր եղբայրներին դատապարտել մահվան, հանուն պետության բարեկեցության և որպեսզի երկրի վրա տիրի կարգ ու կանոն: Այդ իրավունքը հավանության է արժանացել իրավագետների մեծ մասի կողմից»: Թեև նշված օրենքի մեջ հայրասպանության վերաբերյալ խոսք չկար, սակայն Մեհմեդ Ֆաթիհի հայրասպան որդին՝ Բայազիդը, իր քստմնելի արարքով ավելի զարգացրեց այդ նոզկալի օրենքը:

Այսպիսով, փակվում էր Մեհմեդ Ֆաթիհի դարաշրջանը: Նրա մահը Եվրոպայում ընկալվեց որպես ավետիս, աստվածային չնորհ ու պարգև: Եվրոպայի բոլոր ծայրերում քրիստոնեական եկեղեցիները հնչեցրին զանգեր, տաճարներում մատուցվեցին գոհաբանական աղոթքներ: Վենետիկի հանրապետություն ուղարկված հանձնակատարը այդ լուրը հաղորդեց հետևյալ արտահայտությամբ. «Մեծ արծիվը մեռած է»: Վերջապես Արևմուտքը կարող էր թեթևացած չունչ քաշել:

Մեհմեդի մասին պատմությունը հյուսել է հակասական կարծիքներ: Իր ժամանակակիցները, մանավանդ բյուզանդացիները, ինչպես նաև միջնադարյան պատմիչները և հետագա ժամանակների պատմաբանների մի մասը մռայլ գույներով է ներկայացնում նրա դիմագիծը. որ նա ուներ ապականված բարբարոսի բոլոր մոլությունները, վավաշոտ, անգութ, վայրագ, լրբենի վարքի տեր: Որ սուտ է այն տեղեկությունը, որ նա տիրապետում էր վեց լեզուների՝ թուրքերենի, հունարենի, արաբերենի, լատիներենի, պարսկերենի և հրեերենի: Որ իրականում նա թուրքերենից բացի ուրիշ ոչ մի լեզվի չէր տիրապետում:

Սակայն այդ սուլթանի վերաբերյալ կան նաև հակառակ տեսակետներ, որ իբր ուներ հիմնավոր գիտելիքներ իսլամական և հունական գրականության բնագավառում, իրեն հետաքրքրում էր նաև փիլիսոփայությունը և տարբեր գիտություններ, որ նա անկեղծ հարգանք էր դրսևորում ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան մշակույթի նկատմամբ, որ Կոստանդնուպոլսի նվաճումից հետո նա իր արքունիքն էր հրավիրում բազմաթիվ իտալացիների, ներառյալ նաև լատինական հումանիստական դպրոցի ներկայացուցիչներին և գիտելիքների այլ բնագավառների մասնագետների, որ հետաքրքրվում

էր տարբեր ժողովուրդների պատմության ու աշխարհագրության, կրոնների, նրանց ներքին հակամարտությունների, զինված ուժերի հարցերով, հորինում էր բանաստեղծություններ և հովանավորում բանաստեղծներին, որ իրը սիրում էր իր պալատում կազմակերպել զրույցներ ժամանակի հայտնի գիտնականների ու աստվածաբաններ-ի հետ և այլն:

Ֆրանսիացի գիտնական Լուի Անոն Մեհմեդի մասին հայտնել է այն կարծիքը, որ նա մեծ եղավ որքան չարիքի, նույնքան և բարու-թյան համար: «Իր ընդարձակ միտքը,- գրում է նա,- ընդգրկում էր ա-մեն ինչ: Սիրում էր դպրությունները, հովանավորում էր գիտնական-ներին, ոսկի էր նետում բանաստեղծներին: Ինքը ևս հորինում էր բա-նաստեղծություններ: Ինչպես բոլոր իսկապես վայրագ մարդիկ՝ իր վայրագությունը սքողում էր մեղմ ու քաղաքավարի ձևերի տակ: Իր բարքերի ապականությունը գերազանցեց հռոմեական անկման շր-ջանի բոլոր գայթակղությունները: Իր կյանքը ուրիշ բան չեղավ, բայց եթե ոչ մի անարգանք ընդդեմ բնության»:

Վենետիկցիները մշտապես փորձեր էին կատարում սպանելու Մեհմեդին: Նրա կառավարման 20 տարիների ընթացքում իրենց գոր-ծակալների միջոցով առնվազն տասնչորս անգամ փորձել են թունա-վորել սուլթանին: Այդ նպատակով նրանք հատկապես աշխատում էին օգտագործել ավելի քան երեսուն տարի սուլթանի պալատում որպես բժիշկ ծառայած իտալացի անվանի բժիշկ Յակոբո դե Գաետեյին, ո-րը Յաղուբ-փաշա անվամբ հասավ մինչև վեզիրի աստիճանի և սուլ-թանական պալատում օգտվում էր մեծ ազդեցությունից ինչպես որ-պես բժիշկ, այնպես էլ ֆինանսիստ: Սակայն Յաղուբ-փաշան այդպես էլ չդավաճանեց սուլթանին և չթունավորեց նրան: Դա կատարեց սուլթանին սպասարկող մեկ այլ բժիշկ՝ իր հարազատ որդու դրդմամբ: Մեհմեդի առողջությունը դեռևս երիտասարդ տարիքում սկսել էր խաթարվել: Երեսուն տարեկան հասակում նա սկսեց չափից ավելի գիրանալ: Ժառանգաբար նրան էր անցել հոդաբորբ հիվանդությու-նը, որը ժամանակ առ ժամանակ շատ ցավագին էր դարձնում ձիու թամբի վրա նստելը: Սուլթանը չափից ավելի տարված էր մարմնա-կան հաճույքներով՝ սիրում էր շատ ուտել, հատուկ հակում ուներ դե-պի գինին, թեև դա արգելված էր իսլամական օրենքներով, ուներ նաև սեռական ոչ չափավոր հակումներ:

2. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ՎԱՐՉԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՀՄԵԴ II-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մեհմեդ նվաճողի կառավարման շրջանում վերջնականապես ձևավորվեց Օսմանյան կայսրության սոցիալական և քաղաքական կառուցվածքը, որը հետագայում միայն կատարելագործվում էր, բայց իր էությամբ մնաց անփոփոխ ընդհուպ մինչև XVII դարը: Որպես պետական գործիչ նա կայսրության ներսում կերտեց իսլամական պետության նոր և ամուր կառույցը: Օսմանյան կայսրությունը իսլամական կայսրություն էր: Մահմեդականը և թուրքը համարժեք հասկացողություն էր: Թուրքական կայսրության ողջ քաղաքականությունը ուղղված էր նրան, որպեսզի հնարավորին չափ շատ այլադավան ու այլազգի տարրեր խառնվեն թուրքերի հետ և որպեսզի շրջապատում բոլորը դառնան թուրքեր: Մեհմեդ Ֆաթիհը անկասկած միջնադարի անվանի միապետներից էր և ականավոր ռազմա-քաղաքական գործիչներից մեկը: Նրա պետությունը ռազմական աստվածապետություն էր, որը մարմնավորում էր «Աստծո կառավարման» սկզբունքը: Սուլթանը որպես Աստծո ընտրալ (օծյալ)՝ միայն ինքը կարող էր կառավարել: Որպեսզի երաշխավորված լինի աստվածային այդ նախասահմանման մշտական նորացումն ու վերարտադրությունը, նա օրինականացրեց եղբայրասպանության պրակտիկան: Նրա քաղաքական ձգտումների բարձրակետը համաշխարհային նոր իսլամական կայսրության ստեղծումն էր: Եվ թեև Մեհմեդը չկարողացավ կյանքի կոչել իր այդ մտահղացումը, սակայն կասկածից վեր է, որ ամրապնդեց նրա հիմքերը:

Ուշագրավ է նշել, որ նրա պետության մտավոր և կառավարչական բնագավառում ծառայում էին մեծ թվով պարսիկներ՝ իրավագետներ, բանաստեղծներ և այլն: Անձամբ ինքը՝ սուլթանը, մեծ հակում է ունեցել դեպի Իրանը, հատկապես դեպի շիականությունը (շիիզմը): Սակայն նա գիտակցել է, որ այդ հարցում չի կարելի շատ խորանալ, քանի որ ինչպես ասվում էր թուրքական ասացվածքում, «նա, ով կարդում է պարսկերեն ստեղծագործություններ, կորցնում է իր հավատի կեսը»: Սուլթանը անչուշտ հասկանում էր, որ շիիզմը անհարիր է ուղղադավան-սուննիթական իսլամին, իսկ ինքը հենց ուղղադավան իսլամական պետության միապետ է:

Մեհմեդ Ֆաթիհի ժամանակ սուլթանը բացարձակ միապետ էր:

Օսմանյան պետության մեջ նրան հաճախ կոչում էին նաև «փադի-շահ», որի հետ սովորաբար գործ էր ածվում նաև «ալեմ-փանահ» («աշխարհի ապավեն») տիտղոս-պատվանունը: Հին նոմադական աշխարհայացքը արտահայտվում էր սուլթանի կրած «խան», «խա-քան» տիտղոսի մեջ: Իր հպատակների նկատմամբ սուլթանը օժտ-ված էր բացարձակ իշխանությամբ: Նա կարող էր իր մի խոսքով մարդուն զրկել կյանքից, առանց դատ ու դատաստանի: Իզուր չէ, որ հայկական աղբյուրներում սուլթանն անվանվում է «խոնդքար», որը պարսկերեն բառ է «խունքյար», և նշանակում է արյունախում, ա-րյուն հեղող: Սուլթանը համարվում էր իր մահմեդական-սուննի հպատակների հոգևոր առաջնորդը և որպես այդպիսին կոչվում էր «ուղղադավանների էմիր» («էմիր ալ-մյումինին»): Միապետական սկզբունքի աստվածացումը չեշտելու համար հաճախ նա անվանվում էր «զիլ-ուլլահ»: Ըստ իսլամական օրենքի՝ սուլթանի իշխանությու-նը սուրբ էր և բոլոր հանգամանքներում նա գործում է աստվածային մղումով: Այդ բացատրությունը տեղ չէր թողնում, որ որևիցե դժգո-հություն լինի հավատացյալ հպատակների շրջանում: «Ընդհակառա-կը,- գրում է Լեոն,- հավատացյալներին թելադրվում էր, որ սուլթա-նի ձեռքով կամ նրա հրամանով սպանվելը լավագույն վիճակն է հո-գու փրկության տեսակետից: Շատ մահմեդականներ, անցկացնելով իրենց կյանքը սուլթանի ծառայության մեջ, տենչում էին այդպիսի մահվան պատվին՝ հավիտենական երջանկության հասնելու համար»:

Բոլոր հպատակները համարվում էին սուլթանի ստրուկները, ո-րոնց ինքը կարծես ժառանգություն էր ստացել իր նախնիներից: «Համարվում էր, որ բոլորը, մեծ թե փոքր, ապրում են սուլթանի ո-ղորմությամբ, նրանից են ստանում ապրուստի միջոցները, նրա հա-ցով են կերակրվում»,- նկատում է Լեոն:

Սուլթանը նաև իր զորքերի կամ «իսլամական բանակի» գլխավոր հրամանատարն էր, որը փաստացի նշանակում էր զենք կրելու ըն-դունակ բոլոր մահմեդական տղամարդկանց գերագույն առաջնորդ, քանի որ կրոնը նրանց բոլորին պարտավորեցնում էր «սրբազան պատերազմ» մղել «անհավատների» դեմ («ջիհադ»), ընկճել նրանց և նվաճել նրանց հողերը: Սուլթանը ինքն էր նշանակում բարձրա-գույն պետական պաշտոնյաներին, զորահրամանատարներին, սան-ջակների կառավարիչներին, ինքն էր բաժանում թիմարները և կա-տարում այլ հողային հատկացումներ: Ի տարբերություն անատոլիա-կան այլ իշխանությունների, որտեղ տիրակալների ժառանգորդների միջև ընթանում էր անընդմեջ պայքար հանուն իշխանության, օսմա-

նյան պետության մեջ նրա կազմակերպման հենց սկզբից հաստատվել էր մենիշխանություն:

Ջիհադի ռազմաշունչ գաղափարախոսությանը համահունչ մշակված էր մի արարողություն, որը կիրառվում էր սուլթանի գահակալման ժամանակ: Նոր սուլթանը մեկնում էր Ոսկեղջյուրի ափին գտնվող Էյուբի մզկիթը, որտեղ տեղի էր ունենում սուլթանին «սրբազան սրով» գոտևորելու արարողություն: Դեպի պալատ հետդարձի ճանապարհին սուլթանն անցնում էր ենիչերիների զորանոցների մոտով, որտեղ ենիչերիական վաշտերից մեկի հրամանատարը սուլթանին մատուցում էր մի գավաթ շերբեթ: Ըմպելով շերբեթը և գավաթը լցնելով ոսկե դրամներով՝ սուլթանն ասում էր. «Կրզրլ էլմադա գյորուչյուրուզ» («Մենք կրկին կհանդիպենք Ոսկե խնձորի երկրում»): Դա նշանակում էր, որ նա խոստանում էր շուտով կազմակերպել արշավանք դեպի արևմուտք՝ քրիստոնեական նոր հողեր նվաճելու համար, որը Թուրքերի մոտ այլաբանորեն կոչվում էր «Ոսկե խնձոր»:

Անատոլիայի մի շարք էյալեթներ նախատեսված էին որպես սուլթանի զավակների՝ իշխանազունների համար մի տեսակ փոխարքայություններ: Այդպիսիք էին Մանիսան, Քյութահյան, Տրապիզոնը և այլն: Գահաժառանգորդի համար նախատեսված էր Մանիսան, որը մոտ էր գտնվում մայրաքաղաքին: Դրա իմաստը այն էր, որ սուլթանի մահվան դեպքում գահի թեկնածուն անմիջապես հասնի Ստամբուլ, որպեսզի գահի հավակնորդ իր եղբայրները չհասցնեն նրան խանգարել: Նման կարգը գոյություն ունեցավ մինչև XVI դարի վերջը:

Եթե առաջին սուլթանները պարզ նահապետական նոմադներ էին, ապա սուլթան Մեհմեդ II-ը այլևս այդպիսին չէր: Նա հրաժարվել էր ապրելու քոչվորական կանոններով: Միանգամայն իրավացի է Թուրք պատմաբան Քաֆեսօղլուն, որը գրում է, որ աստիճանաբար «Սուլթանները կտրվեցին օղուզական զանգվածներից, որոնց ուժերով նվաճվել էր կայսրությունը. նրանք արդեն ոչ թե ցեղերի նախկին առաջնորդներ էին, այլ իսլամի սուլթաններ, որոնք հաճախ անարդարացի էին վարվում Թուրքմենների հետ»: Այդ երևույթը սկսվել էր դեռևս սելջուկյանների տիրապետության շրջանում, երբ, ինչպես գրում է ռուս հետազոտող Դ. Երեմեևը,- «Թյուրք» բառը դարձավ նախատական՝ որպես «ռամիկի», «պլեբեյի» հոմանիշ:

Օսմանյան կայսրության պետական կառուցվածքի ձևավորումը սկսվեց Օրխանի ժամանակ, որը հիմնականում իր ավարտին հասավ XV դ. երկրորդ կեսին, հատկապես Մեհմեդ II-ի ժամանակ: Այդ ժամանակներում ստեղծված պետական կառույցների հիմնական ձևերը

պահպանվեցին ընդհուպ մինչև XIX դ. 30-40-ական թվականները:

Օսմանյան պետական կառույցը իրենից ներկայացնում էր տիպիկ ռազմական մի կազմակերպություն, որում գոյություն ուներ վերևից մինչև ներքև զինվորական առաջնորդների աստիճանակարգ: Կայսրության կենտրոնական կառավարման մարմինները բաժանվում էին երեք անկախ, միմյանց չենթարկվող համակարգերի. ա) զինվորական-վարչական (թիմարատիրոջից, սանջակբեյից մինչև մեծ վեզիրը, բ) վարչակրոնական համակարգ, որն ընդգրկում էր տեղերի կադի դատավորներին և կադիասկերների միջոցով ենթարկված էր շեյխ-ուլ-իսլամին և վերջապես գ) ֆինանսական վարչությունը, որը ենթարկվում էր դեֆթերդարին: Գործառույթները կառավարման այդ համակարգերի միջև հստակորեն բաժանված էին: Օրինակ, կադին վճիռներ էր կայացնում, որոնք իրավասու էր ի կատար ածելու միայն բեյլերբեյը:

Սուլթանից հետո պետության մեջ երկրորդ դեմքը կառավարության ղեկավարն էր՝ մեծ վեզիրը, որի մոտ էր պահվում պետական կնիքը: Մեծ վեզիրը, որպես սուլթանի տեղակալ, ուներ լայն աշխարհիկ լիազորություններ: Նա էր քաղաքացիական վարչության յուրաքանչյուր ճյուղի պատասխանատուն: Մեծ վեզիրի տարբերանշանը մյուս վեզիրներից հինգ բունչուկանոց դրոշն էր, մինչդեռ սովորական վեզիրներինը՝ եռաբունչուկ էր: Բոլոր պետական գործերը մեծ վեզիրը քննարկում էր մյուս վեզիրների և բաչդեֆթերդարի (ֆինանսական գերատեսչության գլխավոր պաշտոնյայի) հետ: Մեծ վեզիրը իրավունք ուներ առանց սուլթանի իմացության հատկացնել որոշ թիմարներ: XIV դ. երկրորդ կեսից սկսած մեծ վեզիրի վրա էր դրված բանակի հրամանատարությունը իրագործելու պարտականությունը:

Սուլթան Մեհմեդ II-ի մեծ վեզիրը միապետի հրամանների հլու հնազանդ կատարողն էր: Թեև նա լիազորություններ չուներ պետական կարևորագույն գործերի վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու համար, սակայն նա օգտվում էր ավելի լայն իրավունքներից, քան իր նախորդները:

Կառավարման առանձին բնագավառները ղեկավարում էին վեզիրները: Նրանք թեև պետական իշխանության իրենց վստահված կառույցներում օժտված էին ինքնավար իրավունքներով, սակայն անմիջականորեն հաշվետու էին սուլթանին: Քաղաքացիական վարչության դոկտրինը հիմնված էր կայսրության «չորս սյուների» վրա: Այդ հասկացության ծագման աղբյուրը հետևյալն էր: Ինչպես որ վրանը հենվում էր չորս սյուների վրա, այնպես էլ օսմանյան վարչա-

կան կառույցը՝ չորս հենարանների վրա: Առաջին սյունը ինքը՝ մեծ վեզիրն էր: Նա կրում էր փաշայի պատվավոր տիտղոս: Նրան հաճախ անվանում էին «սուլթանի ոտքը»: Երկրորդ սյունը միավորում էր բոլոր նրանց, ովքեր պատասխանատու էին արդարադատության համար. դրանք երկու կադիասկերներն էին, բանակային դատավորները, որոնց պարտականությունն էր այլ դատավորների նշանակումը, մեկը Անատոլիայի, մյուսը՝ Ռումելիայի համար: Երրորդ սյունը կազմում էին դեֆթերդարները՝ հաշվապահները, պետական գանձարանի չորս գանձապահները, որոնք պատասխանատու էին ֆինանսական վարչության համար: Չորրորդ սյունը նիշանչիներն էին կամ պետական քարտուղարները, որոնք պատրաստում էին սուլթանի հրամանագրերը և նրանց վրա դնում էին նրա ստորագրության դրոշմվածքը՝ թուղրուն կամ նիշանը, որպես կնիք: Վերջապես կային նաև աղաներ, դրանք հրամանատարներ էին կամ սպաներ, որոնք բաժանված էին երկու դասի՝ արտաքին, որոնք ինչպես ենիչերիների աղան կատարում էին արտաքին գործառույթ և ներքին, որոնք ամբողջապես զբաղվում էին սուլթանական արքունիքի գործերով:

Վեզիրներից և ազնվականության ներկայացուցիչներից կազմված էր խորհրդակցական մի մարմին, որը կոչվում էր «Դիվան» կամ «Դիվան-ի հումայուն», որը գլխավորում էր մեծ վեզիրը: Առաջին Դիվանը կամ պետական խորհուրդը ստեղծվել էր Օրխանի ժամանակներում: Դիվանը սկզբնապես գումարվում էր սուլթանի նախագահությամբ: Սակայն հետագայում Մեհմեդ II-ը իր այդ իրավունքը հանձնեց մեծ վեզիրին, հաճախ դադարելով հաճախել Դիվանի նիստերին: Սակայն մնալով անտեսանելի, նա նիստերի դահլիճում հատուկ սարքավորված գաղտնի անցքից, որը կոչվում էր «Սուլթանի աչքը», հետևում էր Դիվանի անդամների գործունեությանը: Դիվանի բոլոր որոշումները պարտադիր կերպով պետք է հաստատվեին սուլթանի կողմից: Որպես կանոն Դիվանի անդամներ էին հանդիսանում մեծ վեզիրը, բոլոր մյուս վեզիրները, կադիասկերը, դեֆթերդարը և նիշանչին: Նրանցից բացի Դիվանի նիստերին մասնակցում էին սուլթանական գրասենյակի ավագ քարտուղարը և զորքերի հրամանատարը: Դիվանի նիստերին բացի բարձրագույն պետական գործիչներից, կարող էին մասնակցել նաև խոշոր ֆեոդալները:

Մեհմեդ II-ի կառավարման վերջին շրջանում նրա ցուցումով կազմվեց մի «Կանուն-նամե», այսինքն օրենքների ժողովածու, որտեղ մանրամասն շարադրված էր պետական աստիճանավորների աստիճանակարգը, նրանց պարտականությունները, սովորույթների,

արարողությունների, պետական ինստիտուտների, պետության եկամուտների ու տուգանքների նկարագրությունը, որոնք պետությունը լիազորված էր մտցնել գործողության մեջ:

Կանոն-նամեն արտացոլում էր ոչ թե պետականության իսլամական, այլ թուրքական ավանդույթները: Համաձայն օսմանյան ավանդույթի, որպես փաղիշահ, սուլթանը բացարձակ իրավունք ուներ առանց իսլամական իրավական ինստիտուտի բարձրագույն անձանց միջամտության ընդունելու օրենքներ կամ հրապարակելու կանոն-նամեներ:

Սակայն այդ օրենքները, որոնք հայտնի են ուրֆ անվան տակ, պետք է անպայման բխեին Ղուրանի, շարիաթի կամ սուննայի սկզբունքներից և չհակասեին նրանց հիմնարար դրույթներին: Սուլթանի կայսերական հրովարտակները կամ հաթթը-շերիֆները ևս պետք է ենթակա լինեին շարիաթի օրենքներին: Սուլթանի կողմից իրականացվող ցանկացած քաղաքական ակտ պետք է նախնական հավանության արժանանար գլխավոր մուֆթիի կողմից, որը իսլամական իրավունքի բնագավառում հանդես էր գալիս որպես գլխավոր հեղինակություն:

Օսմանյան կայսրությունը, մյուս մահմեդական պետությունների նման, կառավարվում էր Ղուրանի և շարիաթական իրավունքի նորմերով: Սակայն պետության տարածքային ընդարձակման հետ զուգընթաց, երբ կառավարման գործընթացը ավելի էր բարդանում, անհրաժեշտություն առաջացավ շարիաթական իրավունքները հավելել պետական իրավունքի նորմերով, որոնք կոչված էին հարմարեցման ենթարկել դրանք փոփոխվող հասարակական պայմաններին:

Կանուն-նամեներում նկարագրվում էր նաև արքունիքի արարողակարգը: Ինչպես և Բյուզանդիայում, այնպիսի հարցեր, ինչպես պալատական արարողակարգը, զգեստները, վարվեցողության կանոնները և այլն շարադրվում էին ամենայն մանրամասնությամբ: Իր հերթին Մեհմեդը հատուկ հրամանագրով որոշեց, որ յուրաքանչյուր պալատական աստիճանավորի աստիճանն ու պարտականությունները պետական աստիճանակարգում պետք է ճանաչվի իրենց հագուստի գույնով: Օրինակ, վեզիրները կրելու էին կանաչ, գանձապահները՝ վառ կարմիր, հոգևորական-մուֆթիները՝ սպիտակ, ուլեմները՝ մանուշակագույն, մոլլաները՝ կապույտ գույնի զգեստներ: Կոշիկի գույնը նույնպես ուներ իր նշանակությունը: Պետական ծառայողները կրելու էին կանաչ գույնի կոշիկներ, պալատի ծառայողները՝ բաց կարմիր գույնի: Գույնից բացի նշանակություն ուներ ոճը, թևքերի

ձևը, զգեստը զարդարող մորթին, սակայն ավելի կարևոր էր չալմայի ձևը և այն կրողի մորուքի կտրվածքը:

Մեհմեդ II-ը անձամբ ավանդապաշտ էր և հետևում էր իր նախնիների ավանդույթներին: Սակայն կային դեպքեր, երբ նա շեղվում էր այդ ավանդույթներից: Օրինակ, նախկինում սուլթանները որպես կանոն չփվում էին իրենց հպատակների հետ, նրանք կարող էին իրենց հպատակների հետ սեղան նստել և այլն: Մեհմեդը սնվում էր միայնակ: Նա հրապարակեց հրամանագիր, ըստ որի բոլոր վեզիրները և ցանկացած աստիճանի պալատականներ իրավունք չունեին սուլթանի հետ նստել սեղան:

1465 թ. նախկին բյուզանդական Ակրոպոլիսի կենտրոնում սուլթանը սկսեց կառուցել իր նոր պալատը՝ Սերալը, որն իր չափերով մի հսկայական շինություն էր և շրջապատված էր շքեղ այգիներով: Այնտեղ, ձմեռային ամիսներին, երբ ռազմական գործողությունները դադարեցվում էին, սուլթանը թաքնվում էր ամբոխի հայացքից, քաղաքի փողոցներում հայտնվելով միայն պետական գործերի անհրաժեշտության դեպքում, ուժեղ պահակազորի ուղեկցությամբ:

Պալատում առկա էին այսպես կոչված սպիտակ և սև ներքինիներ: Սպիտակ ներքինիների աղան սուլթանի գաղտնի գործակալն էր: Վաղ օսմանյան սուլթանների շրջանում ներքինիներ պահելու սովորույթ չի եղել: Դա նրանք փոխ են առել Բյուզանդիայից: Քանի որ իսլամն արգելում էր ամորձատումը (ներքինացումը), ուստի օսմանցիները ներքինիներ էին ներմուծում այլ երկրներից: Գլխավոր սպիտակ ներքինին կամ ներքինիների աղան, վերահսկում էր սուլթանի արքունիքի ողջ անձնակազմը: Հենց նա էլ իրականացնում էր սուլթանական Սերալի կապը արտաքին աշխարհի հետ:

Սև ներքինիների աղան սպասարկում էր հարեմը և կանանց համար հատկացված շինությունները:

Օսմանյան պետության համար բոլոր բարիքների աղբյուրը համարվում էր պատերազմը: Պատերազմը դա Թուրքերի ոգին էր: Այդ պետության հիմնական ֆունկցիան պատերազմ մղելն էր, իսկ տնտեսական ու վարչական ֆունկցիաները երկրորդական էին: Հանուն Ալլահի սրով նվաճված հողը իրավական առումով գտնվում էր գլխավոր ռազմական առաջնորդի՝ սուլթանի իրավասության ներքո, որն իր անձի մեջ մարմնավորում էր գլխավոր հրամանատարի, կառավարչի և բարձրագույն կրոնական հեղինակության (խալիֆի) պարտականությունները:

Ռազմա-վարչական նկատառումներով Օսմանյան կայսրությունը

բաժանված էր երկու մասի՝ մի մասը կազմում էր Անատոլիան, մյուսը՝ Ռումելիան: Այդ մասերից յուրաքանչյուրը գտնվում էր բեյլերբեյի հսկողության տակ, որը հանդիսանում էր «երկբունչուկանոց փաշա»: Դրանք իրենց հերթին բաժանվում էին սանջակների, որոնք վերահսկվում էին սանջակ-բեյերի, կամ զինվորական նահանգապետերի կողմից, որոնցից յուրաքանչյուրը ստանում էր դրոշ որպես սուլթանի իշխանության խորհրդանիշ: Սանջակբեյը մեկ բունչուկանոց փաշա էր, որի պարտականությունն էր իր տիրույթի սահմաններում ապահովել զինվորական ծառայության իրագործումը և սուլթանի զորքերի ոստիկանության ղեկավարումը ի շահ հասարակական անվտանգության ապահովման և հարկերի կանոնավոր մուծումներն ապահովելու: Մեհմեդ Ֆաթիհի ժամանակ Ասիայում հաշվվում էին 20 սանջակներ, իսկ Եվրոպայում՝ 28:

Այդ նահանգներից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում էր մեծ ու փոքր ֆեոդալական ավատների՝ զեամեթների ու թիմարների: Դրանք տրամադրվում էին թուրքական ծագում ունեցող հեծելազորայիններին՝ սիփահիներին, այդ հողերի վրա ապրող գյուղացիների հետ միասին: Այդ հեծելազորայինները կազմում էին կայսրության զինված ուժերի կորիզը: Նրանք պարտավոր էին սանջակ-բեյի առաջին իսկ պահանջով, ցանկացած պահին, պատրաստ լինել իրենց զինված մարդկանցով ներկայանալու նրան: Այն դեպքում, եթե սիփահին չկարողանար հավաքել ռազմիկների, նա զրկվում էր իր տիրույթից: Այլ կերպ ասած, նրա ստացած ավատը ոչ մի դեպքում չէր կարող լինել ժառանգական, ինչպես Արևմուտքի երկրներում էր: Սիփահիի մահվան դեպքում միայն ավատի մի փոքր մասը կարող էր անցնել իր որդուն, որը կարող էր ավելի խոշոր տիրույթներ ստանալու իրավունք ձեռք բերել միայն պատերազմներին մասնակցելու և ռազմական սխրանքներ կատարելու ճանապարհով:

Կայսրության տարածքում գյուղատնտեսության համար պիտանի հողերի հիմնական մասը պատկանում էր պետությանը և կառավարությունը կենտրոնացված ձևով վերահսկում էր դրանք: Մեհմեդ II-ը հողատեր քրիստոնյաների խոշոր կալվածքները և վանքերի ու եկեղեցիների հողերը վերածեց թիմարների: Այդ հողերի մի զգալի մասը որպես արքունական կամ գահապատկան հողեր բաժանվեցին վեզիրների և պետության աստիճանավորների միջև, սակայն հիմնական մասը բաշխվեց որպես ռազմա-ավատական տիրույթներ հեծելազորի թվաքանակն ավելացնելու համար:

Ինչ վերաբերում է գյուղացի ռայային, ապա նա մշակում էր հողը

և օգտվում նրա տված բարիքներից, դրա դիմաց վճարելով հարկեր: Նրա մահվանից հետո հողն անցնում էր իր որդիներին:

Բանակի գլխավոր ուժը կազմում էին ենիչերիների հետևակային զորամասերը, որոնք, ինչպես նշվել է, բաղկացած էին քրիստոնեական ծագում ունեցող ստրուկներից, որոնց թիվը Մեհմեդի ժամանակներում կազմում էր 10 հազար մարդ: Նրանք ստանում էին աշխատավարձ և զինված էին հրազենով ու սրերով: Ենիչերիական զորամասը կազմում էր հետևակի կորիզը: Ինչպես նախորդ սուլթանների, այնպես էլ Մեհմեդ Ֆաթիհի ժամանակ բանակը պետության կենտրոնական տարրն էր: Օսմանյան բանակի պատմության միջոցով կարելի է շարադրել Օսմանյան կայսրության ողջ պատմությունը:

Թուրքերի մոտ տիրապետող ռազմաշունչ ոգին ու նվաճողի հոգեբանությունը այդ ժողովրդի մոտ ձևավորեց այն մտայնությունը, որ Թուրքը միշտ պետք է տիրապետող լինի և իր կամքը թելադրի մյուս ժողովուրդներին: Մեհմեդ Ֆաթիհի պետության ողջ գաղափարախոսությունը ուղղված էր նրան, որ Թուրքի մոտ ձևավորվի նվաճողի ինքնագիտակցություն, սեփական գերազանցության զգացում օտար տարրերի նկատմամբ, որ Թուրքը իրեն համարի արտոնյալ: Եվ եթե Թուրքերը քրիստոնյաների նկատմամբ վերաբերվում էին արհամարհանքով, ապա դրա պատճառը ոչ միայն կրոնների տարբերությունն էր, այլև այն, որ նրանք քրիստոնյաներին համարում էին իրենց ենթակա ռայաներ:

Օսմանյան հասարակությունը կառուցված էր այնպիսի սկզբունքի վրա, երբ ծառան և ստրուկը կարող էին որոշակի պայմաններում բարձրանալ և զբաղեցնել բարձր զինվորական ու քաղաքացիական պաշտոններ, իսկ բարձր աստիճանավորները ընդհակառակը, կարող էին գահավեժ անկում ապրել և վերածվել ոչնչության կամ ուղղակի ֆիզիկապես ոչնչացվել: Օսմանյան կայսրության մեջ ծագումը հաշվի առնող արտոնություններ ըստ էության գոյություն չունեին, ինչպես դա առկա էր Արևմուտքի երկրներում: Սուլթանից ցածր աստիճանի վրա գտնվող բոլոր մարդիկ օրենքի առջև հավասար էին: Այդ պետությունը մերիտոկրատիա էր, որտեղ անհրաժեշտ էր արտոնությունները վաստակել:

Օսմանյան կայսրության վերնախավի (էլիտայի) մեծագույն մասը բաղկացած էր Թրքացած այլազգիներից: Իր ծագմամբ կոսմոպոլիտական բնույթ ունեցող կայսրության տիրապետող դասակարգը ևս բաղկացած էր տարբեր ժողովուրդներից:

Պետության եկամուտները առաջին հերթին գոյանում էին չնչա-

հարկից, որը վճարում էին միայն նվաճված երկրների ոչ մահմեդական ռայաները: Նրանք կազմում էին գյուղացիական բնակչության մեծամասնությունը և քաղաքային բնակչության նշանակալից մասը, հատկապես կայսրության եվրոպական մասերում: Իրենք, թուրք-մահմեդականները և խլամն ընդունած դավանափոխները չէին վճարում այդ հարկը, սակայն իրենց բնակության վայրերում ռազմական գործողություններ ծավալվելու դեպքում նրանք պարտավոր էին իրենց ունեցվածքից, ներառյալ անասնահոտերը, հացահատիկի, բրնձի բերքը, մեղվի փեթակները և այլն վճարել տասանորդ: Եթե տվյալ վայրը ճակատամարտի ժամանակ ձեռք էր բերում ռազմավարական նշանակություն, ապա այդ շրջանի բնակիչները, լինեին նրանք ռայա թե ոչ, ազատվում էին հարկեր վճարելուց, բայց դրա փոխարեն պետք է անվճար տարբեր տեսակի օգնություն ցուցաբերեին զորքերին:

Կայսրության եկամուտների հիմնական մասը գոյանում էր գանազան պետական հիմնարկություններից ու ձեռնարկություններից՝ մաքսատներից, նավահանգիստներից, ջրաղացներից, լաստային փոխադրումներից և այլն գանձվող գումարներից, ինչպես նաև մի չարք ապրանքների՝ աղի, օճառի, մեղրամոմի և այլն վաճառքի մենաշնորհից:

Ինչպես միջնադարի բոլոր երկրներում, Օսմանյան կայսրությունում ևս հողը հանդիսանում էր հարստության և կենսաապահովման կարևորագույն աղբյուրը: Միջին դարերում օսմանյան պետության մեջ գոյություն ունեցող հողային հարաբերությունները ձևավորվել էին դեռևս սելջուկների ժամանակ, սակայն իրենց իրավական ձևավորումը ստացան միայն XIV դարի 60-70-ական թվականներին: 1368 թ. օրենքի ուժ ստացավ այն կարգը, որ բոլոր նվաճված տարածքները համարվում էին սուլթանի, հետևաբար պետության սեփականությունը: Սուլթանը իրավասու էր իր հպատակներին շնորհել հողային տիրույթներ, բայց ոչ որպես սեփականություն (մյուլք), այլ լոկ տնտեսական շահագործման համար. դրանք արգելվում էր վաճառել, գրավ դնել և այլն:

Թուրքական ավատները, ի տարբերություն եվրոպականի, միմյանցից տարբերվում էին ոչ թե ըստ իրենց զբաղեցրած տարածքի կամ ճորտերի թվի, այլ նրանցից ստացվող եկամուտների չափով: Այդ չափերը որոշվում էին ըստ գործող օրենքի և գրանցվում էին հատուկ մատյաններում: Հողային շնորհումների բոլոր տեսակներն XIV-XV դարերի աղբյուրներում կրում են «թիմար» անունը: Այստեղից էլ ավատական շնորհումների ողջ համակարգը ընդունված է անվանել «թիմարային համակարգ»: Սակայն այս բառի նեղ ըմբռնմամբ թի-

մարը հողային համեմատաբար ոչ մեծ չնորհում էր: Զինվորական ծառայության համար տրվում էին նաև ավելի խոշոր հողային չնորհումներ, որոնք կոչվում էին զեամեթներ: Թիմարից ստացվող եկամուտը գնահատվում էր 3-ից մինչև 20 հազար աքչե, զեամեթինը՝ 20 հազարից մինչև 100 հազար աքչե, խասինը՝ սկսած 100 հազար աքչեից: Ընդ որում, որպես կանոն, փաստացի եկամուտները տարբերվում էին գրանցվածներից:

Ռազմիկը թիմար կամ զեամեթ էր ստանում որպես պայմանական տիրույթ, այսինքն հողը ստանում էր ռազմական ծառայության դիմաց և պարտավորություն էր վերցնում իր վրա մեկնել արշավանքի իր մերձակա զորահրամանատարի՝ սանջակ-բեյի դրոշի ներքո:

Ամենախոշոր տիրույթները խասերն էին, որոնք բաժանվում էին 3 տեսակի, սուլթանին, դինաստիայի անդամներին պատկանող խասերի, վեզիրներին և նրանցից մեկ աստիճան ցածր պաշտոնյաների խասերի: Խասերը համարվում էին պայմանական տիրույթներ: Իր զբաղեցրած պաշտոնից ազատվելու դեպքում տվյալ պաշտոնյան զրկվում էր նաև իրեն հատկացված խասից: Ինչ վերաբերում է սուլթանի և նրա ընտանիքի խասերին, ապա փաստորեն դրանք հանդիսանում էին նրանց սեփականությունը:

Գյուղացիների պարտականությունն էր հողի մշակումը: Ավատատիրոջ կողմից իրեն հատկացված հողից ստացած բերքի մի որոշ մասը հարկի ձևով, ըստ սահմանված կարգի, գյուղացին պարտավոր էր տրամադրել ավատատիրոջը: Ավատատերերից կախյալ գյուղացիները կոչվում էին «ռայա», որ բառացի նշանակում է «անասնահոտ», իսկ բառի լայն առումով հարկատու: Արաբերեն այդ տերմինով էին կոչվում ոչ միայն կախյալ գյուղացիները, այլև քաղաքային հարկատու բնակչությունը՝ արհեստավորներն ու վաճառականները:

Գյուղացիները իրենց ավատատերերին, ինչպես նաև պետությանը, վճարում էին բազմաթիվ տարբեր բնամթերային ու դրամական հարկեր: Մահմեդականներից գանձվող աշար կոչված հարկատեսակը տարբեր գյուղատնտեսական մթերքներից գանձվող տասանորդ էր: Իսկ ոչ մահմեդականներից գանձվող բնամթերային հարկը կազմում էր ոչ թե բերքի մեկ տասներորդ, այլ մեկ երրորդ մասից մինչև կեսը: Ոչ մահմեդականները պարտավոր էին վճարել նաև հատուկ դրամական հարկեր, որոնք իրենց գոյությամբ չեչտում էին նրանց անհավասար վիճակը: Դրանցից գլխավորը «ջիզյեն» էր կամ գլխահարկը, որը վճարում էին բոլոր աշխատունակ ոչ մահմեդականները (քրիստոնյաները, հրեաները և այլն): Նրանից ազատվում էին միայն

երեխաները, կանայք և ստրուկները: Ջիզյեից ստացվող հասույթները մտնում էին պետական գանձարան:

XV դ. երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում թուրքական վաչկատուն-քոչվորական ցեղերը կազմում էին բնակչության նչանակալից մասը: Տիրապետող ավատական դասակարգը բաղկացած էր երեք հիմնական խավերից. զինվորական («սրի մարդիկ») խավ, պաշտոնեություն և հոգևորականություն: Զինվորական խավը (ասկերներ) անմիջական մասնակցություն չէր ունենում տնտեսական արտադրությանը: Բարձր հոգևորականները, ուլեմները, արդարադատության ներկայացուցիչները, ֆինանսական գերատեսչության պաշտոնյաները և այլն դասվում էին «գրչի մարդկանց» թվին:

Սուլթանը համարվում էր ռազմա-ավատական ազնվականության գլուխը: Նա միաժամանակ իր պետության ուղղադավան (սունի) մահմեդականների ղեկավարն էր, «իսլամական բանակի» գլխավոր հրամանատարը, որը կոչված էր «սրբազան պատերազմ» մղել «անհավատների» դեմ, ընկճել նրանց և նվաճել նրանց հողերը:

XV դարի կեսերից գնալով ուժեղանում էր սուլթանի և վեզիրների ձգտումը իշխանությունը կենտրոնացնելու ուղղությամբ: Ըստ այնմ նկատվում էր կառավարական ապարատի մեծացում, ֆեոդալների եկամուտների նկատմամբ ֆինանսական հսկողության ուժեղացում, ռոճիկ ստացող զորքերի թվաքանակի ավելացում, սուլթանի անձի աննախընթաց մեծարում և այլն:

Պատերազմները, բանակի և սուլթանական արքունիքի ծախսերը պահանջում էին հսկայական միջոցներ: Դրանց գլխավոր աղբյուրը նվաճված ժողովուրդների կողոպուտն էր և կայսրության բնակչությունից գանձվող հարկերն ու տուրքերը: Բանակը և նավատորմը սուլթանի, նրա վեզիրների և ողջ ավատական դասակարգի հոգածության գլխավոր առարկաներն էին: Նրանք ապահովում էին նոր նվաճումներ և ռազմական ավար, իսկ երկրի ներսում ծառայում էին որպես վարչակարգի հենարան:

2. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԱԶԻԴ II-Ի (1481-1512) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Մեհմեդ Ֆաթիհի մահվանից հետո թեև մեծ վեզիրը փորձում էր միաժամանակ սուլթանի մահվան լուրը գաղտնի պահել, մինչև որ իր ժառանգորդը ստանձներ գահը, սակայն չուտով այդ լուրը տարածվեց բանակում: Օգտվելով ժամանակավոր անիշխանությունից՝

ենիչերիները մայրաքաղաքում խռովություն բարձրացրին և սկսեցին մեծատունների տների կողոպուտը: Երբ կյանքին հրաժեշտ տված սուլթանի երկու որդիները՝ Բայազիդն ու նրա կրտսեր եղբայր Ջեմը, տեղեկացան իրենց հոր մահվան մասին, նրանց միջև բորբոքվեց գահաժառանգության համար արյունոտ պայքար: Բայազիդը գտնում էր, որ գահի օրինական ժառանգորդը հենց ինքն է: «Կայսրությունը հարսնացուի նման է,- ասել է նա,- որը չի կարելի բաժանել մրցակիցների միջև»: Լսելով հոր մահվան գույժը՝ Բայազիդը, որն Ամասիայի կուսակալն էր, անմիջապես 4000 հեծյալների գլուխ անցած մեկնեց Ստամբուլ: Այնտեղ նա սկսեց առատորեն նվերներ ու դրամ բաժանել ենիչերիներին, խոստացավ բավարարել նրանց բոլոր պահանջները, ուստի նրանք երկու եղբայրներից նախապատվությունը տվեցին Բայազիդին՝ նրան համարելով զազիների ավանդույթները չարունակելու գծով առավել նվիրյալ գործիչ: Ենիչերիները պալատում խեղդամահ արեցին մեծ վեզիր Կարամանլը Մեհմեդ փաշային, որը պաշտպանում էր Ջեմին: Նրա կտրված գլուխը նիզակի վրա ցցած ենիչերիները պտտեցնում էին քաղաքում, դրանով նաև արտահայտելով իրենց աջակցությունն ու հնազանդությունը իրենց ընտրյալին՝ Բայազիդին: Ենիչերիները նաև ցից բարձրացրին Ջեմի մյուս կողմնակիցներին, որից հետո Բայազիդին հռչակեցին սուլթան, որն ընդունեց Բայազիդ II (1481-1512) գահակալական անունը:

Սակայն նորաթուխ սուլթանից տասներկու տարի փոքր Ջեմը իր խառնվածքով մարտիկ էր և որոշել էր պայքարը շարունակել մինչև վերջ: Իր շուրջը հավաքելով մեծ թվով կողմնակիցների, նա ապստամբեց եղբոր դեմ: Նրան օգնում էին Կարաման բեյության զորքերը և Տավրոսի թյուրքական ցեղերը: Ջեմը կարողացավ գրավել Բուրսան, որտեղ իրեն հռչակեց սուլթան: Հենց այնտեղ նա հատեց սեփական դրամ, ստիպեց, որ մզկիթներում իր պատվին հութբա կարդան և այլն: Նա իր եղբորն առաջարկեց իրար մեջ բաժանել կայսրությունը այնպես, որ Բայազիդը կառավարեր Եվրոպայում, իսկ ինքը՝ Ասիայում: Սակայն սուլթանը կտրուկ մերժեց այդ առաջարկը և իր զորքերը Գեդիկ Ահմեդ-փաշայի հրամանատարությամբ, որն իր հոր լավագույն զորավարն էր և ենիչերիների հերոսը, ուղարկեց Ջեմի դեմ: Տեղի ունեցած երկու ճակատամարտերի ընթացքում Բայազիդը հաղթանակ տարավ Ջեմի նկատմամբ, որը փախավ Կահիրե՝ մամլյուքների մոտ, որոնց սուլթանը սիրալիր ընդունելություն ցուցաբերեց նրա նկատմամբ: Այնուհետև նա ուխտագնացության մեկնեց մահմեդական սրբավայրեր՝ Մեքքա և Մեդինա: Այնտեղից վերադառնալով Անատոլիա՝ Կարամանում նա կրկին կարողացավ իր շուրջը համախմ-

բել մեծ թվով համակիրների, սակայն Անգորայի մոտ իր բանակը լքեց իրեն և նա փախուստի դիմեց Կիլիկիա:

Ոչ մի կերպ չկարողանալով շարքից հանել իր վտանգավոր մրցակից եղբորը՝ Բայազիդը որոշեց որդեգրել խաղաղասիրական տոն և եղբորը առաջարկեց Կարաման իշխանության նշանակալի չափերի հասնող եկամուտները, որտեղ Ջեմը համարվում էր նահանգապետ: Դրա դիմաց պայմանը մեկն էր՝ Ջեմը դադարեցնելու է պայքարը և կամովին հեռանալու է Երուսաղեմ: Այդ պայմանը չընդունելով հանդերձ, Ջեմը մեկնեց «սրբազան քաղաք», հովանավորություն և աջակցություն խնդրելու հույսով Երուսաղեմի սուրբ Հովհաննեսի ասպետական միաբանության և Հոռոդոսի ասպետներից: Երուսաղեմում Ջեմին ընդունեց ասպետական միաբանության մեծ մագիստրոս դ'Օբյուսոնը, նրան արժանացնելով կայսերական պատիվների: Տեղեկանալով այդ մասին, Բայազիդը կարողացավ պայմանավորվել ասպետների հետ, որ նրանք Ջեմին պահեն իրենց ձեռքի տակ և ազատ չթողնեն: Դրա դիմաց նա խոստացել էր իբրև վարձատրություն նրանց վճարել տարեկան 45 հազար ոսկի: Պայմանն ընդունվեց և ասպետները Ջեմին ուղարկեցին Ֆրանսիա, որտեղ յոթ տարի բերդում նրան պահեցին բանտարկության մեջ, իսկ ապա նրան տեղափոխեցին Իտալիա:

Ջեմի նկատմամբ ասպետների այդ վարքագիծը կապված չէր զուտ նյութական շահի հետ, այլ ուներ սքողված քաղաքական ենթատեքստ: Նրանք ծրագրեր էին փայփայում, որ հարմար պահին իրենց թուրք գերյալին կարձակեն շղթայից իրենց ոխերիմ թշնամու՝ օսմանյան սուլթանի դեմ: Սակայն ասպետները չհասցրին «իրացնել» այդ քաղաքական ծրագրերը, քանի որ Ջեմի ողիսականը չուտով ունեցավ տխուր վախճան. Նեապոլում նա մահացավ անսպասելի և խորհրդավոր մահով: Հավանաբար իր մրցակից եղբոր անտեսանելի ձեռքը հասել էր մինչև հեռավոր Ադրիատիկի ափերը. Ջեմին թունավորել էին: Մեկ այլ վարկածի համաձայն՝ իր բանտարկության օրերին Ջեմը խաղալիք էր դարձել պապական դիվանագիտության ձեռքին: Ի վերջո, 1494 թ. նա սպանվեց Հռոմի պապ Բորջիայի հրամանով, որի համար վերջինս Բայազիդից ստացավ խոշոր գումար: Երկու դեպքում էլ սպանության պատվիրատուն Ջեմի հարազատ եղբայրն էր, սուլթան Բայազիդ II:

Թուրքերի նոր միապետը իր հոր օրինակով ձեռնամուխ եղավ բանակի և նավատորմի ամրապնդմանը: Նա իր առջև նպատակ էր դրել հաստատել օսմանցիների կատարյալ տիրապետությունը Միջերկրական ծովի ավազանի նկատմամբ: Այդ սուլթանի օրոք թուրքական նավատորմը սկսեց իրականացնել ակտիվ ռեյդեր ոչ միայն Միջերկ-

բականի արևելյան, այլև արևմտյան ափերում, որոնք դուրս էին օսմանցիների հսկողությունից: Այդ վայրերում Իսպանիայի և Հյուսիսային Աֆրիկայի մահմեդականները թուրք նավաստիներին ողջունում էին որպես «ծովային դաղիներ»:

Ռազմական փառքի ու նվաճումների հետ միաժամանակ Բայազիդ II-ը մեծ ձգտում էր դրսևորում զարկ տալու իր կայսրության առևտրական ու տնտեսական կապերին Արևելքի ու Արևմուտքի պետությունների հետ: Այդ նպատակով նա խրախուսում էր հրեաների մուտքը իր տիրույթները, որոնց XV դարի վերջին արտաքսել էին Իսպանիայից: Ստամբուլը, Բուրսան, Էդիրնեն, Գելիբոլուն և այլ քաղաքներ վերածվեցին միջազգային առևտրի կարևորագույն կենտրոնների: Կայսրության մեջ ապրող ոչ մահմեդական վաճառականները՝ հույները, հայերը և հրեաները միջազգային առևտրի մեջ զբաղեցրին կարևորագույն դիրքեր, հանդես գալով որպես իտալական վաճառականների լուրջ մրցակիցներ:

Բայազիդ II-ը փորձեց կապեր հաստատել նաև վերելք ապրող ռուսական պետության հետ: 1492 թ. նա Մոսկվա ուղարկեց մի դեսպանություն, որը, սակայն, նպատակին չհասավ, քանի որ նրան չթողեցին անցնել լիտվական տիրույթներով: Երկու երկրների ներկայացուցիչների միջև առաջին շփումը տեղի ունեցավ 1497 թ., երբ Ստամբուլ ժամանեց Մոսկովյան մի դեսպանություն Միխայիլ Պլեշչևի գլխավորությամբ: Այդ երկու պետությունները հատկապես շահագրգռված էին զարգացնելու իրենց առևտրական հարաբերությունները: Սուլթանը, հույս ուներ բարիդրացիական հարաբերություններ հաստատելով ռուսական ցար Իվան III-ի հետ, կանխել նրա մասնակցությունը արևմտաեվրոպական երկրների կողմից պլանավորվող հակաթուրքական կոալիցիաներին հնարավոր մասնակցությունից: Իր հերթին Իվան III-ը ձգտում էր դաշնակցային հարաբերություններ հաստատել սուլթանի ու նրա վասալ՝ Ղրիմի խան Մենգլի Գիրեյի հետ, հույս ունենալով սեփական նպատակների համար օգտագործել Ղրիմի խանի թշնամությունը Ոսկե Հորդայի, Լեհաստանի և Լիտվայի հետ:

Բայազիդ II-ը կառավարման շրջանը նշանավորվեց նաև տարբեր երկրների հետ օսմանյան պետության դիվանագիտական շփումների ակտիվացմամբ: Սկսեցին Ստամբուլ այցելել շատ երկրների դեսպաններ: Եվրոպական տերությունները սկսել էին լրջորեն հաշվի նստել թուրքական գործոնի հետ: Հերցեգովինան վերջնականապես ընկավ թուրքական տիրապետության տակ:

Բայազիդ II-ի կառավարման շրջանը համընկավ Իրանում մի նոր հզոր պետության՝ Սեֆյան պետության կազմավորման հետ: Արևելքում հանձին իր հզորության գագաթնակետին մագլցող այդ պետության՝ Օսմանյան կայսրության համար բացվում էր նոր կոնֆլիկտների դուռ, որն իր էությամբ թեև լինելու էր քաղաքական, սակայն արտաքուստ հանդես էր գալու կրոնական դրոշների ներքո: Նորաստեղծ այդ պետությունը Օսմանյան կայսրության առջև բարձրացնում էր մի կուռ պատնեշ Արևելքում նրա ծավալապաշտության ճանապարհին:

Հենց Բայազիդի կառավարման տարիներին կայսրության արևելյան շրջաններում բնակվող Թյուրքալեզու քոչվորական ցեղերի շրջանում լայնորեն սկսեց տարածվել իսլամի շիիթական ուղղությունը, կամ «12 իմամների» վերաբերյալ ուսմունքը, որը պատրաստվում էր մոլեգին գոտեմարտի մեջ մտնել ուղղադավան իսլամի՝ սուննիթականության դեմ: Իրանում ղզլբաշների շարժման գաղափարական ներշնչողն էր նորաստեղծ Սեֆյան պետության շահ Իսմայիլ I (1502-1514), որը մարտակոչ էր նետել ողջ սուննիթական իսլամին: Հենվելով Փոքր Ասիայի Թյուրքական քոչվորական ցեղերի վրա, որոնք զանգվածորեն հարել էին շիիզմին, նա բարձրացրեց շիական ծայրահեղականության դրոշը և անցնելով իր հպատակ ղզլբաշների գլուխը, ձեռնամուխ եղավ լայն նվաճողական քաղաքականության իրականացման: Երիտասարդ շահի «հավատի զինվորները» փոթորկի նման անցնելով օսմանյան տիրույթներով, ավերիչ ասպատակ էին սփռում Անատոլիայում, թափանցելով շատ հեռուները, ընդհուպ մինչև հին մայրաքաղաքը՝ Բուրսա: Նրա մատույցների մոտ տեղի ունեցած ճակատամարտերից մեկում զոհվեց օսմանցիների մեծ վեզիր Ալի փաշան:

Ողջ Արևելյան և Հարավային Անատոլիան արգաձանքում էր շահ Իսմայիլի հակաօսմանյան կոչերին:

Ղզլբաշների շարժումը ողջ մահմեդական Արևելքը ներքաշեց արյունոտ կրոնական պատերազմների ու ապստամբությունների ջրապտույտի մեջ: 1502 թ. Եգիպտոսը գտնվում էր Սեֆյանների հետ պատերազմի շեմին: 1510 թ. Մերվի մոտ Շեյբանի խանի ուզբեկական զորքերի ջախջախումը Սեֆյանների կողմից Կահիրեում առաջ բերեց խուճապ: Սպասվում էր ղզլբաշական զորքերի ներխուժում Եգիպտոս: Պորտուգալական դեսպանի հետ զրույցի ժամանակ շահ Իսմայիլը չէր թաքցրել, որ նպատակ ունի գրավել Մեքքան և առհասարակ մամլյուքների տիրապետության տակ գտնվող արաբական հողերը:

Շահ Իսմայիլը փորձում էր դաշինքի մեջ մտնել Վենետիկի հանրապետության հետ Արևմուտքից և Արևելքից օսմանցիներին կրակե օղակի մեջ առնելու համար: XVI դարի հենց սկզբից Անատոլիայում օսմանյան սուլթանի դեմ բռնկած համարյա բոլոր ապստամբությունները ուղղակի կամ անուղղակի կապ ունեին շահ Իսմայիլի շիիթական քարոզիչների գործունեության հետ: 1508 թ. Թոքաթի շրջանում բռնկեց ապստամբություն ղզլբաշ Նուր-էդ-դինի (Նուր Ալի խալիֆա) գլխավորությամբ, որը շարունակվեց մի քանի տարի: Ապստամբներին հաջողվեց մի քանի անգամ պարտության մատնել իրենց դեմ ուղարկված սուլթանական զորքերին: Նուր Ալի Խալիֆային նույնիսկ հաջողվեց գրավել Թոքաթ քաղաքը: Ապստամբությունը շարունակվեց մի քանի տարի, սակայն ի վերջո մեծագույն դաժանությամբ ճնշվեց Սելիմ I-ի կողմից, որը դրանից հետո իր «Յավուզ» («ահեղ», «արյունարբու») մականվանը ավելացրեց նաև «շիաների հալածիչ» անվանումը:

1511 թ. Անթալիայի շրջանում սկսվեց մի խոշոր ապստամբություն Թեքքելլյու ցեղից ղզլբաշ Կարաբիյիք-օղլուի գլխավորությամբ, որը կրում էր Շահ-կուլու Բաբա Թեքքելլյու («շահի ստրուկ») մականունը: Թուրքական աղբյուրները նրան տվել են Շայթան-կուլու («սատանայի ստրուկ») անունը: Ապստամբները ընդվզել էին աստիճանավորների բռնությունների և կամայականությունների դեմ, կոչ էին անում չհնազանդվել իշխանություններին: Շահկուլուին հաջողվեց երկու անգամ ջախջախել Անատոլիայի բեյլերբեյ Կարագյոզ Ահմեդ-փաշայի զորքերին: Սուլթանական զորքերին մեծ դժվարությամբ հաջողվեց ջախջախել այդ շարժումը (1511 թ.): Այդ ապստամբությունները վկայում էին, որ Սեֆյան Իրանը ծրագրել էր իր կողմնակիցների միջոցով Օսմանյան կայսրությունը նվաճել ներսից:

Երկրի Արևելքում սկսված տագնապը լրջորեն անհանգստացրել էր Բայազիդ II-ին: Սակայն նրա խաթարված առողջությունը և ֆիզիկական ուժերի սպառումը թույլ չէր տալիս ձեռնարկելու վճռական գործողություններ: Ավելի շուտ նա հակված էր գահը հանձնել իր ժառանգորդին և քաշվել գործերից:

3. ՍՈՒԼԹԱՆ ՍԵԼԻՄ I ՅԱՎՈՒԶԸ (1512-1520) ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ: ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ԻՐԱՆԻ ԴԵՄ

Բայազիդ II-ի հինգ զավակներից երկրորդը՝ Ահմեդը, հոր սիրելին էր, ուստի հիվանդ սուլթանը ցանկանում էր գահը հանձնել նրան, առավել ևս, որ նա որպես Ամասիայի նահանգապետ դրսևորել էր վար-

չական մեծ ընդունակություններ: Սակայն մայրաքաղաքում ենիչերի-ները բարձրացրին խռովություն և թույլ չտվեցին, որ սուլթան հռչակվի Ահմեդը: Բայազիդի զավակներից ամենափոքրը՝ Սելիմը, որն աչքի էր ընկնում եռանդուն ու ռազմաչունչ խառնվածքով, ինքն էր ձգտում տի-րանալու գահին և մշտապես ծրագրեր էր փայփայում հորից գահը հափշտակելու ուղղությամբ: Այդ նպատակով նա ամեն կերպ աշխա-տում էր շահել ենիչերիական զորքերի համակրանքը: 1511 թ. նույնիսկ գործը հասավ հոր հետ ռազմական ընդհարման, սակայն Սելիմը անհա-ջողություն կրեց:

Տեղեկանալով, որ իր հոր առողջությունը լավ վիճակում չէ, Սելիմը, որը թաքնվում էր Ղրիմում, ոչ մեծ թվով զորքերի գլուխ անցած ան-միջապես մեկնեց Ստամբուլ, որտեղ գտավ ենիչերիների աջակցությու-նը: Վերջիններս խիստ դժգոհ էին Բայազիդից իր ռազմական անգոր-ծունեության համար, որի հետևանքով նվաճումներ քիչ էին տեղի ու-նենում և իրենց համար չորացել էր ռազմական ավարի աղբյուրը: Սա-կայն Բայազիդին հաջողվեց խափանել կրտսեր որդու ծրագրերը: Վեր-ջինս, իր կողմնակիցների օգնությամբ կարողացավ գրավել Ադրիանա-պոլիսը (Էդիրնեն): Այդ նույն ժամանակ Ահմեդը, որը հարել էր չիա-զղլբաշներին, հավաքեց զորքեր Բուրսան գրավելու համար: Դառնա-լով չիա, Բայազիդի նախկին սիրեցյալ որդին իրեն զրկեց հոր աջակ-ցությունից: Սուլթանը համաձայնվեց հօգուտ Սելիմի հրաժարվել գա-հից: Անչուշտ նրա այդ վճռի կայացմանը մեծապես նպաստել էին ենի-չերիները, որոնք սպառնում էին բարձրացնել խռովություն: Էդիրնեից անմիջապես Սելիմը ենիչերիների մի ջոկատի ուղեկցությամբ ժամանեց Ստամբուլ գահը ստանձնելու համար: Պալատի առջև ենիչերիների սպառնալից աղաղակների ներքո սուլթանը ստիպված էր հայտարա-րել, որ ինքը «հոժար կամքով իր թագավորությունը հանձնում է իր որդի Սելիմին»: Այլևս գահազուրկ Բայազիդը խնդրեց որդուց, որ թույլ տա իրեն մեկնելու իր ծննդավայրը՝ Դիմոթիկա: Սակայն ճանապար-հին նա մահացավ (66 տարեկան հասակում (1512 թ.)): Հավանաբար թունավորվել էր որդու հրամանով:

Այսպիսով, օսմանյան գահը ստանձնեց Սելիմ I-ը (1512-1520), որը պատմության մեջ մտավ Սելիմ «Յավուզ» (ահեղ, արյունարբու, անո-ղորմ) մականունով: Նրա առաջին գործը եղավ իր երկու եղբայրներին և մերձավորագույն ազգականներին խեղդամահ անելը: Ընդ որում, որ-պես կանոն դա կատարվում էր սուլթանի ներկայությամբ, որը ան-վրդով դեմքով լսում էր իր հարազատների մահվան ճիչերը: Նման զարհուրելի եղանակով ապահովելով իր քաղաքական ապագան՝ Սե-լիմը ձեռնամուխ եղավ պետության կառավարմանը: Լինելով մոլե-

ռանդ մահմեդական՝ Սելիմ Յավուզը հրամայել էր կամ իսլամացնել իր պետության մեջ ապրող բոլոր քրիստոնյաներին, կամ բնաջինջ կոտորել: Այդ բարբարոսական միտքը ի կատար չածվեց Թուրք հոգևորականության չնորհիվ, որը համոզեց ինքնակալին չդիմել այդ քայլին:

Պետք է նշել, սակայն, որ Սելիմ I-ը արյունարբու և կրոնական մոլեռանդ լինելու հետ միաժամանակ, նաև եռանդուն ու չրջահայաց քաղաքագետ էր և նաև խիզախ ռազմիկ: Նրան լուրջ անհանգստություն էր պատճառում Սեֆյան Իրանի արագ հզորացումը, դեպի արևմուտք նրա ուժեղացող նվաճողականությունը և տարածաշրջանում քաղաքական կչռի մեծացումը: Սեֆյան Իրանը արգելակում էր նաև օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականության ծավալումը դեպի Արևելք, Կասպից ծովի և Պարսից ծոցի ավազանները, Կենտրոնական Ասիա և Միջագետք: Թեև երկու պետությունների միջև հակասությունն առավելապես ունեին տնտեսական և քաղաքական ենթահող, սակայն նրանք երկուսն էլ մահացու գոտեմարտի էին պատրաստվում կրոնական դրոշների ներքո: Սուլթան Սելիմը ծրագրել էր օսմանյան վիթխարի ռազմական մեքենան չարժել արևելք՝ Սեֆյան Իրանին կործանիչ հարված հասցնելու համար: Սակայն նախ անհրաժեշտ էր իր պետության արևելյան չրջաններում վերացնել լայն տարածում գտած չիիթական «հերձվածը», որի հետևորդները հանդես էին գալիս որպես շահ Իսմայիլ I-ի հինգերորդ զորասյուն: Ղզլբաշական վտանգի վերացումը սուլթանի համար կենսական անհրաժեշտություն էր նաև Սեֆյան Իրանի հետ առաջիկա ռազմական բախման ընթացքում թիկունքն ապահովելու առումով:

Սուլթանի գաղտնի գործակալների կողմից նախապես պատրաստված ցուցակներով ոչնչացվեցին 7-ից մինչև 70 տարեկան փոքրասիական ավելի քան 40-45 հազար ակտիվ չիաներ, որոնք պատրաստ էին շահի առաջին իսկ կոչով կենաց ու մահու պայքարի դուրս գալ օսմանյան բանակների դեմ: «Հերձվածող» չիաների ոչնչացումը մեծ մուֆթիի կողմից հայտարարվել էր աստվածահաճո գործ: Նա իր ֆեթվայով ազդարարում էր, որ Ալլահի համար մեկ չիայի սպանությունն ավելի հաճելի էր, քան 70 քրիստոնյայի:

Չիաների նկատմամբ իրականացված դաժան գործողությունը նպատակ ուներ նաև թշնամական տարրերից մաքրել Իրանի հետ սահմանակից նահանգները, որոնց վրայով սուլթանը մտադիր էր իր զորքերը չարժել շահի դեմ:

Թշնամական առճակատումը կողմերի միջև գնալով սրվում էր: Սելիմ Յավուզը «հերձվածող» չիաների պարագլուխ շահ Իսմայիլին գրեց մի չարք վիրավորական և սադրիչ նամակներ: Շահը նրան պատաս-

խանում էր նույն ոգով: Դիվանագիտական այդ մենամարտը ուղեկցվում էր նաև ռազմական դիմակայությամբ: Օգտվելով այն հանգամանքից, որ Թուրքերը զբաղված էին Վենետիկի դեմ մղվող պատերազմով (1499-1502), Կարամանի բեյը 1499 թ. ապստամբել էր օսմանյան տիրապետության դեմ: 1501 թ. գարնանը մեծ վեզիր Մեսիհ-փաշայի պատժիչ բանակը մտավ Կարաման և անողոք դաժանությամբ ձեռնամուխ եղավ հաշվեհարդարի: Կարամանցի վարսակ և թողրութ ցեղերի առաջնորդները օգնության խնդրանքով դիմեցին շահ Իսմայիլին: Վերջինս այդ պատրվակն օգտագործեց օսմանցիների նկատմամբ պատերազմ սկսելու համար: Մինչև 1507 թ. ընկած ժամանակաշրջանը շահը գրավեց Արևմտյան Հայաստանի մեծ մասը: Այնուհետև 1508 թ. նա իր զորքերը շարժեց Միջագետք և գրավեց Բաղդադը: 1508-1509 թթ. կողմերի միջև թեժ մարտեր էին գնում Բայբուրդի (Բաբերդ) և Երզնկայի շրջաններում:

Դիմելով պատասխան գործողությունների՝ 1514 թ. մայիսին Սելիմի բանակը դուրս եկավ ռազմերթի՝ ուղղություն վերցնելով դեպի Իրան: Իր ռազմարշավը սուլթանը հայտարարեց դաղիների պայքար հերետիկոսների դեմ:

Պատերազմի սկզբում, հետևելով «այրված հողի» մարտավարությանը, շահ Իսմայիլի բանակը անընդհատ նահանջում էր, իր հետևում թողնելով մոխիր ու ավերակներ: Սակայն ի վերջո ստիպված էր ճակատամարտ տալ:

1514 թ. օգոստոսի 23-ին Խոյից ոչ հեռու գտնվող Ջալդրան կոչված դաշտավայրում տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Սելիմ I տրամադրության տակ կար 120 հազարանոց բանակ, մոտավորապես նույնքան էլ կազմում էին իրանական զորքերը: Սակայն Թուրքերը մեծ առավելություն ունեին հրազենի գծով: Ենիչերիները զինված էին հրացաններով և կային մեծ թվով հրետանային զորամասեր: Եվրոպական աղբյուրների վկայությամբ, այդ ժամանակ Թուրքերն ունեին աշխարհում լավագույն թնդանոթները: Մինչդեռ իրանական բանակում դրանք համարյա իսպառ բացակայում էին, իսկ հրացանակիրների զորամասեր ընդհանրապես գոյություն չունեին: Աղբյուրների հավաստմամբ, ղզլբաշները մարտում հրազենի կիրառումը համարում էին վախկոտության և փոքրոգության դրսևորում: Սակայն դա ավելի չուտ իրենց հետամնացությունն ու անզորությունը արդարացնելուն միտված մի պատճառաբանություն էր:

Թեև ղզլբաշները կռվեցին անվեհեր խիզախությամբ և շահ Իսմայիլ I-ը անձամբ սուրը ձեռքին նետվեց թշնամու վրա, նրա թնդանոթների կործանիչ կրակի դեմ, սակայն ճակատամարտի ելքը որոշեց

Թուրքական հրետանին: Թնդանոթներն ու հրացանները հնձում էին շահական հեծելազորը:

Զալդրանի ճակատամարտում ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև օսմանյան բանակի ավելի կուռ ռազմական կազմակերպությունը, զորքերի կարգապահությունը, պատերազմական մեծ փորձը և այլն: Թուրքերն ունեին նաև հիանալի հետախուզական ծառայություն, թիկունքային կառույցներ և այլն:

Զալդրանի ճակատամարտն ավարտվեց շահ Իսմայիլի բանակի կատարյալ ջախջախմամբ: Ինքը՝ շահը, վիրավորվեց, սակայն հասցրեց փախուստի դիմել: Մարտի դաշտում ոչնչացան սեֆյանների հիսուն հազար ռազմիկներ: Ղզլբաշները այն աստիճանի խուճապահար նահանջի դիմեցին, որ նույնիսկ շահական հարեմը և առհասարակ ողջ ճամբարն ընկավ թուրքերի ձեռքը: Ենիչերիները հենց տեղում ոչնչացրին մեծ թվով գերիների:

Զալդրանի ճակատամարտից երկու շաբաթ անց՝ 1514 թ. սեպտեմբերի 5-ին օսմանյան զորքերը մուտք գործեցին շահի մայրաքաղաքը՝ Թավրիզ: Սակայն ենիչերիների խլրտումների պատճառով, որոնց մեջ քիչ չէին ծպտված չիաները, սուլթան Սելիմը որոշեց չզարգացնել հաջողությունը: Իր հետ վերցնելով շահի գանձարանն ու հարեմը՝ ինչպես նաև մոտ հազար հմուտ արհեստավորների, որոնց զգալի մասը հայեր էին, նա բռնեց տունդարձի ճանապարհը: Համաձայն Յուսուֆի «Սելիմնամեի»՝ նահանջող թուրքական բանակը վերադառնում էր Անատոլիա՝ Երևանի, Ուչքիլիսեի (Էջմիածին), Մաստարայի (Թալին), Կարսի վրայով:

1515 թ. շահ Իսմայիլ I-ի և Սելիմ Ահեղի միջև կնքվեց զինադադար, ըստ որի Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցավ Արևմտյան Հայաստանը և Միջագետքի հյուսիսը՝ Մոսուլով հանդերձ: Արևելյան Հայաստանն ու Արևելյան Անդրկովկասը մնացին սեֆյանների գերիշխանության տակ:

Զալդրանի ճակատամարտը, սակայն, չլուծեց թուրք-իրանական հակամարտության հանգուցային խնդիրները: Ուստի կողմերի միջև պատերազմները շարունակվեցին ևս ավելի քան մեկ հարյուրամյակ: Զալդրանի ճակատամարտի կարևորագույն նպատակներից մեկը Հայկական բարձրավանդակին տիրապետելն էր: Օսմանցիները լուծեցին այդ խնդիրը, նվաճելով Արևմտյան Հայաստանը և դրանով իսկ կայսրությունը ապահովելով բնական ստրատեգիական ամրոցով արևելքից ամեն տեսակի ներխուժումների դեմ, միաժամանակ արմատապես փոխելով ուժերի հարաբերակցությունը Ասիայում: Այսուհետև որպես բուֆերային դիրք ունեցող երկիր, Հայաստանը դառնում էր ոտքի կոխան երկու մարտնչող պետությունների միջև, աղետներ և ավերածություններ բերելով հայ ժո-

ղովրդի զույգ հատվածներին: Թուրքերի ձեռքն անցան այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպիսիք էին Էրզրումը, Վանը, Բիթլիսը և Դիարբեքիրը:

Սելիմը քրդերին բերեց և տեղավորեց Արևմտյան Հայաստանում: Ատրպատականը և Արաբական Իրաքը մնացին Սեֆյան պետության կազմում: Ղզլբաշների տիրապետությունը պահպանվեց նաև Հարավային Կովկասի երկրներում: Սակայն Զալդրանի ճակատամարտից հետո խորտակվեց չահ Իսմայիլի այն հույսը, որ ինքը կկարողանա Սեֆյանների պետության սահմաններն ընդարձակել Փոքր Ասիայի ուղղությամբ:

Թուրք-իրանական ախոյանությունը չէր սահմանափակվում լոկ քաղաքական, ռազմական և ստրատեգիական խնդիրների շրջանակում, այլ ընդգրկում էր նաև առևտրատնտեսական հարցերի ընագավառը: Պայքարն ընթանում էր Մերձավոր ու Միջին Արևելքի առևտրական-քարավանային ճանապարհների նկատմամբ հսկողություն ձեռք բերելու շուրջը: Մասնավորապես Փոքր Ասիայի քարավանային ճանապարհների վրայով իրականացվում էր իրանական հում մետաքսի արտահանումը Լևանտի երկրներ ու Եվրոպա՝ չահական գանձարանին բերելով հսկայական եկամուտներ: Որպես Իրանի դեմ տնտեսական զենք՝ Սելիմը արգելեց կայսրության տարածքներով մետաքսի առևտուրը: Նա Բուրսայում, որը Մերձավոր Արևելքում իրանական մետաքսի առևտրի խոշորագույն կենտրոնն էր, արգելեց այդ ապրանքի առևտուրը, իսկ այնտեղ գործող իրանական վաճառականներին, որոնց մեջ քիչ չէին նաև միջազգային առևտրով զբաղվող հայ խոջաները, արտաքսեց Բալկաններ: Ի դեպ, հենց այդ նույն կերպ, որպես տնտեսական պատերազմի ձև, հետագայում Սելիմը փորձեց արգելք հանդիսանալ եգիպտական մամլյուքների ստրուկներով առևտրին, որոնք Կովկասից և այլ վայրերից բերված ստրուկների վաճառքից ձեռք էին բերում խոշոր եկամուտներ:

Սեֆյան Իրանի դեմ տարած հաղթանակից հետո Սելիմ I-ը նախապատրաստեց մեծ արշավանք մամլյուքների* դեմ Եգիպտոսը նվաճելու նպատակով: 1515 թ. գարնանը սկսեցին Կահիրե հասնել տեղեկություններ, որ սուլթանը ռազմական խոշոր նախապատրաստություններ է տես-

---

* Մամլյուքները (արաբերեն «ստրուկներ») ստրուկ զինվորներ էին, որոնք ունեին կովկասյան (չերքեզներ, աբխազներ, վրացիներ, հայեր), հարավռուսաստանյան (զիչաղներ), քրդական և այլն ծագում: Նրանցից էր բաղկացած Եգիպտոսում Այուբիների դինաստիայի (1169-1252) սուլթանների անձնական թիկնազորը: XIII դարի կեսերին մամլյուքները Եգիպտոսում զավթեցին իշխանությունը՝ այն իրենց ձեռքերում պահելով բավականին տևական ժամանակ:

նում բանակը և նավատորմը Եգիպտոսի ուղղությամբ շարժելու համար: Այդ արշավանքի միջոցով սուլթանը ցանկանում էր նվաճել հարուստ ու բարեբեր Եգիպտոսը, այն դարձնել հենակետ Հյուսիսային Աֆրիկայում իր հետագա նվաճողականությունը ծավալելու համար, ինչպես նաև տիրապետող դիրքեր ձեռք բերել Կարմիր ծովի ավազանում: Սակայն առկա էր նաև հարցի գաղափարական-կրոնական կողմը: Բանը նրանում էր, որ մինչև Կ. Պոլսի գրավումը Թուրքական սուլթանները անվերապահորեն ճանաչում էին մամլյուքյան սուլթանների կրոնական հեղինակությունը որպես ուղղադավան-սուննի իսլամական աշխարհի գերագույն ղեկավարներ: Սակայն Կ. Պոլսի գրավումից հետո Մեհմեդ Ֆաթիհը և մյուս սուլթանները այլևս չէին կարող հանդուրժել այդ բանը, քանի որ նրանց կարծիքով օսմանյան պետությունը հանդիսանում էր իսլամական աշխարհի առաջատար քաղաքական ուժը, հետևաբար հենց նա էլ իրավասու էր լինելու մահմեդական աշխարհի գերագույն հոգևոր ղեկավարը: Այդ բարձր պատվի և իշխանության համար պայքարը կողմերի միջև գնալով թեժանում էր, պահանջելով հանգուցալուծում: Կահիրեի և Ստամբուլի միջև թշնամական առճակատման առաջին բացահայտ նշաններից մեկը հանդիսացավ այն, որ օսմանյան դեսպանը հրաժարվեց ծնկի իջնել և խորը գլուխ տալ մամլյուքյան սուլթանի առջև: Դա տեղի էր ունեցել 1463 թ.: Դրանից հետո թշնամանքը կողմերի միջև գնալով աճում էր վերընթաց գծով:

Սելիմ I ծավալեց վարպետ դիվանագիտական խաղ եգիպտացիների հետ, մամլյուքյան սուլթանի մոտ պատրանք ստեղծելու համար, որ իբր բանակցությունների ճանապարհով հնարավոր է լուծել կողմերի միջև առկա կնճռոտ հարցերը և խուսափել պատերազմից: Մինչդեռ իրականում այդ ճանապարհով սուլթանը մտադիր էր ժամանակ շահել իր ռազմական նախապատրաստությունները ավարտին հասցնելու համար: Նշված նպատակով 1516 թ. հուլիսին Կահիրե ժամանեց օսմանյան մի դեսպանություն, որը սկսեց մամլյուքյան սուլթանի հետ երկար-բարակ քննարկել առևտրական հարցեր, մասնավորապես եգիպտական շաքարի գնումների վերաբերյալ: Թուրք փորձառու դիվանագետները այն աստիճանի վարպետորեն տարան խաղը, որ մամլյուքների մոտ կասկած իսկ չմնաց, որ Սելիմը տրամադրված է խաղաղասիրորեն: Մինչդեռ մեկ ամիս էլ չանցած օսմանյան սուլթանը կատարեց մեծ զորաշարժ և արդեն 1516 թ. օգոստոսի 5-ին Թուրքական զորքերն անցան մամլյուքյան տիրույթների սահմանները: Ընդ որում, սուլթան Սելիմ Յավուզին իր գործակալների միջոցով հաջողվել էր պարզել, որ մամլյուքյան սուլթանի հպատակների շրջանում չափազանց ու-

ժեղ են հակակառավարական տրամադրությունները: Մասնավորապես գյուղացիական զանգվածները ատելությամբ էին լցված սուլթան Ղանսուղ ալ-Գաուրիի նկատմամբ, որը ծանր հարկերով ու տուրքերով ուղղակի «քամում» էր հպատակներին, միաժամանակ անպատիժ թողնելով իր ղոլամ-ծառաների սանձարձակությունները աշխատավոր հասարակ մարդկանց նկատմամբ: Սելիմը իր դերվիշ գործակալների միջոցով նաև տեղեկացել էր, որ մամլյուքյան բանակում ևս առկա են տրտունջներ, իսկ առանձին դեպքերում նույնիսկ անհնազանդության նշաններ: Մասնավորապես զինվորները հայտարարում էին, որ իրենք պատրաստ են կռվելու եվրոպացի «անհավատների» դեմ, սակայն ոչ երբեք Թուրք-մահմեդականների:

Օսմանյան և մամլյուքյան զորքերի հանդիպումը տեղի ունեցավ Հալեպից մեկօրյա ճանապարհի վրա գտնվող Դաբիքյան դաշտավայրում (Մարջ-Դաբիք): 1516 թ. օգոստոսի 24-ին վաթսուն հազարանոց մամլյուքյան բանակը սուլթան Ղանսուղ ալ-Գաուրիի գլխավորությամբ փորձեց փակել օսմանյան զորքերի ճանապարհը դեպի Եգիպտոս: Կողմերը բռնվեցին ահեղ գոտեմարտի: Երկուստեք դրսևորում էին խիզախության ու անձնազոհության ապշեցուցիչ օրինակներ: Հենց ընդհարման սկզբում ակնհայտ դարձավ, որ մամլյուքյան հեծելազորը իր մարտական հատկանիշներով գերազանցում է Թուրքական սիփահի հեծելազորին:

Սակայն ինչպես և Զալդրանում, այստեղ ևս ճակատամարտի ելքը որոշեց Թուրքական հրետանին, որն ուղղակի հնձեց մամլյուքյան հեծելազորի շարքերը: Օսմանյան բանակը զինված էր տարբեր տրամաչափերի թնդանոթներով: Թեթև հրանոթները տեղադրված էին ձիերով քարշվող սայլերի վրա և իրենց շարժունակության պատճառով գործում էին մեծ արդյունավետությամբ: Ընդ որում, Թուրքերը խնամքով քողարկել էին իրենց հրետանին և թշնամին նետվեց գրոհի, համոզված լինելով, որ գործ է ունենալու միայն օսմանյան հեծելազորի ու հետևակի հետ:

Ճակատամարտի թեժ պահին, երբ մամլյուքյան զորքերի շարքերը սկսել էին երերալ, զինվորների շրջանում լուր տարածվեց, որ Ղանսուղ ալ-Գաուրին (Կանսոհ ալ-Գուրի) իբր ինչ-ինչ պատճառներով սուլթանական թիկնազորը պահում է պահեստում և չի ցանկանում մտցնել մարտի մեջ՝ դրանով իսկ հարվածի տակ դնելով զորքերին: Դա ղեկավարի նկատմամբ թշնամանք սերմանելու նախապես մտածված մի քայլ էր, որին հետևեց երկու ազդեցիկ զորահրամանատարների՝ Հալեպի նահանգապետ Խայիր բեյի և Համայի կառավարիչ Ջան Բիրդի ալ-Ղազալիի դավաճանությունը: Ղեկավարության նկատ-

մամբ անվստահություն տածող զինվորների մի մասը լքելով իր մարտական դիրքերը հեռացավ:

Օգտվելով այդ բոլորից՝ Թուրքերն անցան գրոհի, որն ավարտվեց մամլյուքների անկանոն փախուստով: Երբ պարտությունն այլևս դարձավ անխուսափելի, Ղանսուղ ալ-Գաուրին թույն ընդունեց:

Տեղեկանալով իրենց համար ատելի մամլյուքների պարտության մասին՝ Հալեպի, Այնթապի և սիրիական մի շարք այլ քաղաքների բնակիչները ապստամբելով վռնդեցին իրենց քաղաքներում տեղակայված մամլյուքյան զորամասերին և քաղաքների դռները բաց արեցին օսմանցիների առջև:

1516 թ. օգոստոսի 28-ին սուլթան Սելիմ Յավուզը հանդիսավոր կերպով մուտք գործեց Հալեպ: Հաջորդ օրը քաղաքի մզկիթներում ուրբաթօրյա աղոթքի ժամանակ մատուցվեց հութբա՝ գոհաբանական աղոթք, որի ժամանակ Սելիմ I-ը մեծարվեց որպես երկու սրբազան քաղաքների՝ Մեքքայի և Մեդինայի «սպասարկու» պատվանունով («Խադիմ ալ-խուրամեյն»): Դա մի պատվանուն-տիտղոս էր, որը Սալահ-էդ-դինի ժամանակներից կրում էին Եգիպտոսի կառավարիչները: Այն կրող սուլթանը ճանաչվում էր որպես մուսուլմանական աշխարհի հոգևոր և աշխարհիկ առաջնորդ: Այսուհետև սուլթանը իրավասու էր անվանվելու «փադիշահ-ի իսլամ» («իսլամի սուլթան»): Իսկ այդ նշանակում էր, որ հետայսու օսմանյան սուլթանին է անցնում համայն աշխարհի մահմեդականների հոգևոր ու աշխարհիկ ղեկավարի դերը: Բացի այդ, իսլամի սրբազան քաղաքներ Մեքքան և Մեդինան, որոնք մինչ այդ գտնվում էին մամլյուքների տիրապետության տակ, այսուհետև անցնելու էին օսմանյան սուլթանի «բարձր հովանավորության ներքո»: Իսլամական աշխարհում յուրացնելով մամլյուքյան սուլթանների առանձնաշնորհումը, այդ ժամանակվանից սկսած օսմանյան սուլթանները սկսեցին իրենց անվանել խալիֆներ, այսինքն՝ իսլամական աշխարհի հոգևոր առաջնորդներ: Անկասկած, այդ բոլորը նշանակում էր մամլյուքյան վարչակարգի վերջը:

Սելիմ I-ի իր զորքի հետ Հալեպում մնաց մինչև հոկտեմբեր ամիսը:

1516 թ. սեպտեմբերի ընթացքում Սելիմ Յավուզի բանակը համարյա առանց դիմադրության հանդիպելու նվաճեց ողջ Սիրիայի տարածքը, այդ թվում նաև Լիբանանը և Պաղեստինը, որոնք այդ ժամանակ հանդիսանում էին Սիրիայի կազմի մեջ մտնող տարածքներ: Այսուհետև Սիրիան օսմանցիների համար ծառայելու էր որպես ռազմահենաղաշտ արաբական մյուս երկրները նվաճելու համար: Այդ նույն 1516 թ. Թուրքական զորքերը գրավեցին Հեջազը (Արաբական թերակղզում): Դրանով իսկ իսլամական գլխավոր երկու սրբազան քա-

դաքները՝ Մեքքան և Մեդինան անցնում էին օսմանյան սուլթանների տիրապետության տակ:

1516 թ. հոկտեմբերի 9-ին Սելիմ Յավուզը մուտք գործեց Դամասկոս, որտեղ ի պատիվ նրա Օմայանների հսկայական մզկիթում իսլամական անվանի հեղինակությունները հավատացյալների խուռներամ զանգվածների ներկայությամբ կազմակերպեցին գոհաբանական աղոթք:

Մամլյուքների անագորույն լծից տառապած և նրանց վարչակարգի նկատմամբ զզվանքով լցված արաբ բնակչությունը առանց դիմադրության իր վրա վերցնում էր նոր լուծ: Սիրիացիները թուրքական զորքերի առջև իրենք էին բաց անում քաղաքային դարպասները: Բոլոր նվաճված քաղաքներում թուրքերը ստեղծում էին իրենց վարչությունը և կարգում նահանգապետեր:

1516 թ. նոյեմբերի վերջին օսմանյան բանակն ավարտեց Սիրիայի և Պաղեստինի ռազմակալումը և այնտեղից զորաշարժ կատարեց դեպի Եգիպտոս: Նախքան ռազմական գործողություններ սկսելը, Սելիմ I-ը 1516 թ. դեկտեմբերին դեսպաններ ուղարկեց Թուման բայի մոտ, վերջինիս իր նամակ-ուղերձը հանձնելու համար: Նամակում կոպիտ արտահայտություններով առաջադրվում էր երկու հիմնական պահանջներ, որոնք ընդունելու դեպքում սուլթանը խոստանում էր Թուման բային թողնել որպես Եգիպտոսում օսմանյան սուլթանի տեղապահ: Այդ պահանջներն էին. ուրբաթօրյա աղոթքի՝ հութբայի ժամանակ առաջինը հիշատակել սուլթանի անունը և երկրորդը՝ Եգիպտոսում հատվող դրամի վրա դնել Սելիմ I-ը պատկերը:

Թուման բայը ոչ միայն չընդունեց սուլթանի պահանջները, այլև հրամայեց նրա դեսպաններին մահապատժի ենթարկել, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պատերազմի հայտարարում:

Զորաշարժ կատարելով դեպի Եգիպտոսի կողմը՝ Սելիմ I-ը ուխտագնացություն կատարեց Երուսաղեմ՝ Ալլահից հայցելով օգնություն: Թուման բայը փորձեց հակահարված տալ թուրքական առաջխաղացմանը, սակայն Բեյսանի մոտ (Պաղեստինում) 1516 թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած ճակատամարտում օսմանյան զորքերը Սինան Յուսուֆ-փաշայի հրամանատարությամբ ջախջախիչ պարտության մատնեցին մամլյուքներին: Մեկ ամիս անց Կահիրեի մատույցներում, որտեղ Թուման բայը ստեղծել էր պաշտպանական ամրություններ և տեղադրել մոտ հարյուր թնդանոթներ, տեղի ունեցան թեժ մարտեր, որոնց հետևանքով 1517 թ. հունվարի 23-ին մամլյուքները կրկին ջախջախվեցին: 1517 թ. հունվարի 24-ին թուրքական զորքերը հաղթական երթով մուտք գործեցին Եգիպտոսի մայրաքաղաքը: Սակայն մի քանի օր անց, անվեհեր մարդկանց մի ոչ մեծ ջոկատով, գիշերով,

Թումանբայը ներխուժեց քաղաք, որտեղ սկսվեցին կատաղի փողոցային մարտեր: Զոհվեցին մոտ հիսուն հազար Կահիրեի բնակիչներ: 1517 թ. հունվարի 31-ին օսմանցիներին հաջողվեց ճզմել մամլյուքների այդ դիմադրությունը ևս: Սելիմ Յավուզը հրամայեց ի տես ժողովրդի՝ գլխատել ութ հարյուր մամլյուքյան բեյերի: Համառ և անկոտրում Թումանբայը, սակայն, զենքը ցած չէր դնում: Նա երկու ամիս ևս շարունակում էր պայքարը Թուրքերի դեմ: Սակայն ի վերջո նրա զինակիցները դավաճանեցին նրան և հանձնեցին Սելիմ I-ին (մեկ այլ վարկածով նրան Թուրքերին հանձնեցին արաբ բեդվինները): Հավանաբար այդ գործում Թուրքական ոսկին խաղացել էր իր դերը: 1517 թ. ապրիլի 13-ին Եգիպտոսի վերջին մամլյուքյան սուլթանը կախաղան հանվեց Կահիրեի դարպասների կամարից: Եգիպտոսը ևս նվաճված էր օսմանյան սուլթանի կողմից:

Սելիմը Կահիրեում մնաց մոտ վեց ամիս, որի ընթացքում նա մտմտում էր այդ նորանվաճ երկրի հետագա ստատուսի մասին: Կասկածից վեր էր, որ այն դառնալու էր Օսմանյան կայսրությունից վասալական կախման մեջ գտնվող հարկատու պետություն:

1517 թ. օգոստոսին Սելիմ I-ը մեկնեց Կահիրեից: Այդ իրադարձություններին ժամանակակից արաբ պատմիչ Իբն Իյասը պատմում է. «Ասում են, որ հեռանալով Եգիպտոսից, Օսմանի ժառանգորդը իր հետ տարավ ոսկով ու արծաթով բեռնավորված հազար ուղտեր, չհաշված այն ավարը, որ բաղկացած էր զենքից, հախճապակուց, բրոնզից, ձիերից, ջորիներից, ուղտերից և այլն, չհաշված նաև հիանալի մարմարը: Այդ բոլորից նա վերցրեց ամենալավագույնը, այն, ինչից երբեք հաճույք չէին ունեցել օգտվելու նրա հայրերն ու պապերը»: Իր սովորության համաձայն, Սելիմը Կահիրեից Ստամբուլ տարավ նաև հազար հմուտ արհեստավորների:

Սիրիայից և Եգիպտոսից հեռանալուց առաջ այդ տարածքների կառավարման գործը Սելիմը հանձնեց իր կողմը անցած մամլյուքյան զորականներին, ներքին գործերում նրանց չնորհելով որոշ ինքնավարություն: Միաժամանակ խոշոր քաղաքներում նա տեղակայեց ենիչերիական զորամասեր: Քիչ ավելի ուշ, 1521-1522 թթ. նախապես չնորհված ինքնավարությունը վերացվեց և Սիրիան ու Եգիպտոսը վերածվեցին Օսմանյան կայսրության նահանգների, որոնք կառավարվելու էին անմիջականորեն Ստամբուլին ենթակա տեղապահների կողմից: Օսմանյան տիրապետությունը հաստատվեց նաև Լիբանանի, Հորդանանի և Պաղեստինի նկատմամբ:

Դեռևս Սելիմ I-ի Կահիրեում գտնվելու ժամանակ նրան այցելեց Հիջազի կառավարչի՝ չերիֆի ներկայացուցիչը, արտահայտելու հա-

մար նրա համակրալից վերաբերմունքը «մեծ օսմանցու» նկատմամբ: Հարկ է նշել, որ Հիջազի կառավարիչները համարվում էին Մուհամմադ մարգարեի սերունդներից, ուստի մեծ հեղինակություն էին վայելում ողջ արաբական աշխարհում, առավել ևս, որ իսլամական աշխարհի երկու կարևորագույն սրբակենտրոնները՝ Մեքքան և Մեդինան, ենթարկվում էին նրանց: Շերիֆ Բարաքաթի դեսպանությունը գլխավորող նրա տասներկուամյա որդին՝ Ջամալ ադ-դին Աբու Նումեյ Մուհամմադը պաշտոնապես հավաստեց Հիջազի հպատակությունը օսմանյան սուլթանին՝ միաժամանակ Ղուրանի վրա նրան տալով հավատարմության երդում: Դեսպանը շերիֆի անունից նաև հավաստիացրեց սուլթանին, որ նրան ճանաչում են որպես համայն մահմեդականների հոգևոր առաջնորդ՝ խալիֆ: Հիջազի շերիֆի այդ քայլը մեծապես նպաստեց իսլամական աշխարհում սուլթան-խալիֆի դիրքերի ու հեղինակության ամրապնդմանը: Ի նշան երախտագիտության՝ Սելիմ I-ը Հիջազի շերիֆին իրավունք վերապահեց ներքին գործերում ունենալու կատարյալ ինքնուրույնություն՝ միաժամանակ սուլթանական հրամանագրով շերիֆի պաշտոնում հաստատելով Բարաքաթին: Իսկ իրեն սուլթանը հայտարարեց Մեքքայի և Մեդինայի հովանավոր:

Օսմանյան կայսրության տարածքները ծավալվում ու ընդարձակվում էին նաև Միջերկրական ծովի ափերի շրջանում՝ շնորհիվ թուրք ծովահենների զավթումների: 1516 թ., օրինակ, նրանք ներխուժեցին իսպանական հսկողության ներքո գտնվող Ալժիր և գրավեցին նույնանուն նավահանգիստն ու նրա հարակից հողերը: Ծովահենների առաջնորդ Խայրադդինը, որին եվրոպացիները կնքել էին Բարբարոսա (Շիկամորուս) մականունը և նրա եղբայրը 1518 թ. ճանաչեցին օսմանյան սուլթանի գերագույն իշխանությունը և Սելիմ I-ից ստացան Ալժիրի բեյլերբեյի պաշտոնը: Այսպիսով, Հյուսիսային Աֆրիկայում Ալժիրը առաջին արաբական երկիրն էր, որն անցավ օսմանյան տիրապետության տակ:

Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում՝ Մաղրիբում, օսմանյան հետագա նվաճումներն ընդլայնելու նպատակով Բ. Դուռը Խայրադդինի տրամադրության տակ դրեց ենիչերիների մի ուժեղ զորախումբ: Օգտվելով Ստամբուլի անվերապահ աջակցությունից և դրսևորելով նախաձեռնություն՝ Խայրադդինը կարճ ժամանակամիջոցի ընթացքում ստեղծեց վերին աստիճանի պատկառազդու ռազմական նավատորմ, որն ի վիճակի էր Միջերկրական ծովում չափվել ցանկացած եվրոպական երկրի նավատորմի հետ:

Սելիմ I-ի նվաճումները Բալկաններում, Հարավ-Արևելյան Անատոլիայում, Արաբիայում և Հյուսիսային Աֆրիկայում համարյա երկու

անգամ մեծացրին օսմանյան սուլթանների տիրույթները: Սուլթան Սելիմ Յավուզի մահվան պահին Օսմանյան կայսրության սահմանները տարածվում էին Դանուբի ափերից մինչև Նեղոսի ափերը, Ադրիատիկ ծովից մինչև Հնդկական օվկիանոս:

Մերձավոր Արևելքում կայսրության ուժեղագույն մրցակիցներից մեկը՝ Եգիպտոսը, դադարեց գոյություն ունենալուց որպես ինքնուրույն պետություն, իսկ մյուսը՝ Իրանը, նշանակալիորեն թուլացավ և կասեցվեց նրա առաջխաղացումը դեպի Փոքր Ասիա: Այդ բոլորի շնորհիվ, օսմանյան վերահսկողության տակ անցան միջազգային կարևորագույն առևտրական ճանապարհները՝ Հունգարիայի սահմաններից և Ադրիատիկ ծովի ջրերից մինչև Պարսից ծոց: Կայսրության տիրապետության տակ անցան նաև հսկայական բարեբեր հողեր: Ուժեղացավ Օսմանյան կայսրության ռազմական հզորությունը և մեծացավ նրա միջազգային նշանակությունը: Բոլոր դեպքերում Սելիմ I-ը Օսմանյան կայսրության պատմության մեջ մտել է որպես մեծ նվաճող:

Իր հերթական արշավանքներից մեկի ժամանակ Սելիմ I-ը քառասուներեք տարեկան հասակում հանկարծամահ եղավ (1520 թ.): Մեկ այլ վարկածով նա մահացավ քաղցկեղից: Այդ խոշորամարմին տղամարդը դեմքի վայրագ արտահայտությամբ, կրակոտ աչքերով և բռնկվող խառնվածքով ոչ մի հարգանք չէր տածում մարդկային կյանքի նկատմամբ: Նա ամենաչնչին դանցանքի համար իսկ մահապատժի էր ենթարկում իր ծառաներին ու հպատակներին, հաճախ անձամբ իրագործելով պատիժը: Սելիմը հրամայում էր իր համր ծառաներին սպանել ցանկացած մարդու, ով կհամարձակվեր առարկել իրեն, կամ պարզապես ով տվյալ պահին դուր չէր եկել իրեն: Այդ սուլթանի մեծ վեզիրների կյանքն ու գործունեությունը շատ կարճ էին տևում: Նրանցից յոթը «Յավուզի» հրամանով գլխատվեցին: Թուրքերեն լեզվում տարածում գտավ հետևյալ դարձվածքը. «որ դու դառնաս Սելիմի վեզիր»: Դա հնչում էր որպես անեծք: Հենց այդ պատճառով վեզիրների շրջանում տարածված էր մի սովորույթ. երբ նրանց կանչում էին սուլթանի մոտ, նրանք իրենց հետ վերցնում էին նախապես գրված կտակը: Պատմվում է, որ վեզիրներից մեկը համարձակություն է ունենում սուլթանին հարցնել, թե երբ է իրեն ներկայացվելու մեղադրական վճիռ, որպեսզի նախօրոք իմանալով ինքը ժամանակ ունենա կարգավորելու իր գործերը: Բարձր ծիծաղելով սուլթանը պատասխանում է. «Ես մի ժամանակ մտածում էի, որ սպանեմ քեզ, սակայն ոչ մի հարմար մարդ չգտա, որպեսզի զբաղեցնի քո տեղը, հակառակ դեպքում ես անմիջապես դա կանեի»:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ՎԵՐԵԼՔԻ ՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆ I «ԿԱՆՈՒՆԻՒ» ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՈՒ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

1520 թ. օսմանյան գահի վրա Սելիմ Յավուզին փոխարինեց նրա քսանամյա որդին Սուլեյման I-ը (1520-1566): Նա պատմության մեջ է մտել «Կանունի» («Օրենսդիր») անվամբ, իսկ եվրոպացիները նրան մեծարել են նաև «Հիասքանչ», «Փառահեղ», «Հոյակապ» մակդիրներով: Նա եղել է օսմանյան գահի վրա նստած թվով տասներորդ սուլթանը: Անկասկած Սուլեյման I-ի այսպես կոչված «դարաշրջանը» առանձնանում է Օսմանյան կայսրության պատմության մեջ որպես վերելքի ու բարձրագույն հզորության դարաշրջան:

Դատելով թուրք պատմիչների հաղորդած տեղեկություններից՝ օսմանյան պետության այս միապետը իր նախորդների համեմատ ունեցել է ավելի բարձր կրթական մակարդակ: Նա իր կրթությունը ստացել էր Ստամբուլի արքունական դպրոցում և իր պատանեկության տարիներին ընթերցանության միջոցով հետամուտ է եղել գիտելիքներ ձեռք բերելուն: Սուլեյմանը լավ պատրաստություն է ունեցել նաև վարչական գործերում՝ մինչև իր գահակալումը պետության երեք նահանգներում վարելով նահանգապետի պաշտոն: Այսպիսով, որպես պետական գործիչ նա իր մեջ համատեղել է գիտելիքներն ու փորձը: Լինելով կրոնական համոզմունքների տեր մարդ և հետևելով իր նախնիների դաղիության ավանդույթներին՝ իր կառավարման առաջին իսկ օրերից նա իր առաքելությունն է համարել «անհավատների» նկատմամբ հաղթանակներ տանելը, նրանց ընկճելը և օսմանցիների տիրապետությանը ենթարկելը: Վկայություններ կան նաև այն մասին, որ Սուլեյման I-ը ոգեշնչված է եղել Ալեքսանդր Մակեդո-

նացու աշխարհակալ գաղափարներով: Խառնվածքով եղել է վերին աստիճանի փակ, լռակյաց ու քչախոս: Ոչ ոք չէր կարող կռահել, թե ինչ է մտածում, կամ ինչ է ցանկանում անել այդ սուլթանը:

Սուլեյմանի գահակալության շրջանը համընկավ եվրոպական քաղաքակրթության պատմության մեջ շրջադարձային մի պահի հետ, երբ ուշ միջնադարի խավարը իր մեռնող ֆեոդալական ինստիտուտներով իր տեղը զիջեց վերածնության շողշողուն լույսին:

Սուլեյմանի արտաքին քաղաքականության հիմնական վեկտորը եվրոպական ուղղությունն էր: Նա ձգտել է նվաճումների միջոցով Արևմուտքում ունենալ այնպիսի ձեռքբերումներ, ինչպիսիք ունեցավ իր հայրը Արևելքում: Հետևաբար նրա կառավարման շրջանում օսմանյան սպառնալիքը քրիստոնյա աշխարհի վրա մշտապես կախված էր որպես մերկացված սուր:

Ստանձնելով գահը՝ երիտասարդ սուլթանը ուշի ուշիով հետևում էր Եվրոպայում ծավալվող իրադարձություններին: Նրա հետաքրքրություններին հագուրդ տվող տեղեկատվական հոսքը չափազանց հարուստ էր ու բազմազան, քանի որ այդ ժամանակներում արդեն թուրքերը կարողացել էին ստեղծել լավ կազմակերպված հետախուզական ծառայություն, որը մշտապես Ստամբուլին հաղորդում էր հավաստի տեղեկություններ Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների և քաղաքական միտումների վերաբերյալ: Որպես թուրքերի գլխավոր իրազեկիչներ հանդես էին գալիս վենետիկցիները, որոնք լավ տեղեկացված էին եվրոպական գործերի վերաբերյալ: Այդ գործի կազմակերպումը հեշտանում էր նրանով, որ Եվրոպայի և Լևանտի տարբեր կենտրոններում Վենետիկի հանրապետությունը ուներ հյուպատոսություններ ու գործակալական ծավալուն ցանց, իսկ Ստամբուլում, սուլթանի արքունիքում մշտական դիվանագիտական ներկայացուցչություն: Նմանատիպ ճանապարհով վենետիկցիների այդ ամբողջ ցանցը արժեքավոր տեղեկություններ էր մատակարարում նաև եվրոպական պետություններին՝ Օսմանյան կայսրության վերաբերյալ:

Սուլթան Սուլեյմանի համար առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում Եվրոպայում տիրող երկպառակությունները տարբեր պետությունների միջև, որոնք բնականաբար թուրքերի համար կարող էին ստեղծել նոր հնարավորություններ:

Ինչպես հայտնի է, այդ շրջանում համաեվրոպական մասշտաբով մեծ ազդեցություն էր ձեռք բերել Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Կարլոս V-ը, որը վայելում էր քրիստոնեության պաշտ-

պանի համբավ: Նրա կայսրության սահմանները տարածվում էին Բալթիկ ծովից մինչև Միջերկրական ծով, Նիդերլանդներից մինչև Իսպանիա, ներառյալ նաև Գերմանիան ու Ավստրիան: Այդ վիթխարի պետության կազմի մեջ էին մտնում նաև Նեապոլի ու Սիցիլիայի թագավորությունները, ինչպես նաև Մեքսիկայում ու Պերուում գտնվող ռազմական հենակետերը: Այդ բոլորով հանդերձ, ավստրիական Ալպերից այն կողմ Կարլոս V-ի համար կար մի ռեալ սպառնալիք հանձինս Թուրք-օսմանների: Ընդ որում, այդ սպառնալիքը օրըստօրե մեծանում էր, Իսկ Եվրոպայում Կարլոսի ամենահզոր ու ամենաակտիվ թշնամին Ֆրանսիայի Ֆրանցիսկ I թագավորն էր, որը Սրբազան Հռոմեական կայսրության կայսրի թիկնոցի հավակնորդի ընտրություններում եղել էր իր մրցակիցը և պարտություն էր կրել: Սակայն դա թշնամանքի պատճառներից լոկ մեկն էր: Այդ երկու կայսրերի թշնամության առավել լուրջ պատճառը կայնում էր նրանում, որ Կարլոս V-ի փառասիրական երազանքն էր Հաբսբուրգների մականի ներքո Սրբազան Հռոմեական կայսրության մեջ միավորել ողջ արևմտյան քրիստոնեական աշխարհը: Անտարակույս դա ամբողջ Եվրոպան նվաճելու մի հանդուգն ծրագիր էր: Այդ վիթխարի ծրագրի իրականացման ճանապարհին, սակայն, կար մի լուրջ արգելք, և դա Ֆրանսիան էր:

Ֆրանցիսկ I-ը, որը սկզբնապես հանդես էր գալիս որպես Հռոմի պապի դրոշի ներքո Թուրքերի դեմ խաչակրաց արշավանքի ջատագով, շուտով սկսեց փնտրել Թուրքերի աջակցությունը, քանի որ ի դեմս Հաբսբուրգների կայսրության, նրանք իրենց դեմ ունեին ընդհանուր թշնամի: Թուրքերի հետ իր շփումները Ֆրանցիսկը իրականացնում էր գաղտնապես, սակայն նպատակասլաց ու համառ կերպով, քայլ առ քայլ քաղաքական շահերի հիմքի վրա կռելով դաշինք շուշանի և մահիկի միջև: Իր հերթին սուլթանը գաղտնի խողովակներով Ֆրանցիսկին հատկացնում էր դրամական միջոցներ, իսկ 1533 թ. նույնիսկ նրան ֆինանսավորեց մի խոշոր գումարով՝ հարյուր հազար ոսկով, որպեսզի Ֆրանսիայի թագավորը նպաստի Անգլիայի և Գերմանիայի մասնակցությամբ Կարլոս V-ի դեմ կոալիցիայի ստեղծմանը: Երկու տարի անց, Ֆրանցիսկը սուլթանից պահանջեց ևս դրամական մի խոշոր հատկացում մեկ միլիոն դուկատ գումարով: Վենետիկյան դեսպանին Ֆրանսիայի թագավորը մի առիթով ասել էր, որ ի դեմս Օսմանյան կայսրության ինքը տեսնում է եղակի մի ուժ, որն ի վիճակի է ի հակակշիռ Հաբսբուրգների կայսրի՝ երաշխիք հանդիսանալ եվրոպական պետությունների գոյության համար: Դժվար չէ նկատել, որ արդեն XVI դարի Եվրոպայում Օսմանյան կայսրությանը

հատկացվում էր հավասարակշռողի դեր, մի հանգամանք, որն անկասկած ռազմական ու դիվանագիտական առումով ուժեղացնում էր Օսմանյան կայսրության հեղինակությունն ու դիրքերը:

Այդ բոլոր նկատառումներն ու իրողությունները սուլթան Սուլեյմանը ճկուն կերպով սկսեց օգտագործել իր արտաքին քաղաքականության մեջ, եվրոպական ուղղությունը դարձնելով առաջնահերթ ու գերակա ուղղություն: Նա իր առաջին խնդիրը դարձրեց Հունգարիայի նվաճումը, որը Հաբսբուրգների համար հանդիսանում էր պատնեշ օսմանյան նվաճողականության դեմ: Այդ երկիրը XV դ. վերջերից մշտապես ենթարկվում էր թուրքական ավերիչ ասպատակությունների: Հունգարիայի նվաճումը ոչ միայն հնարավորություն կտար օսմանցիներին ճանապարհ բացելու Կենտրոնական Եվրոպայում հետագա նվաճումների համար, այլև հսկողություն սահմանելու Եվրոպայում կարևորագույն առևտրական զարկերակի՝ Դանուբի նկատմամբ:

1521 թ. թուրքերը պաշարեցին Բելգրադը, որն այդ ժամանակ մտնում էր Հունգարական թագավորության կազմի մեջ: Նրա կայազորը պաշտպանվում էր մեծ համառությամբ: Թուրքերը անընդմեջ հրետանային կրակ էին տեղում քաղաքի վրա, մինչդեռ պաշարվածների ուժերը գնալով նվազում էին: Երբ քաղաքի պաշտպաններից կենդանի մնացին միայն չորս հարյուր մարտիկներ, կայազորը ստիպված էր զենքը ցած դնել և հանձնվել: Գերիների մեծ մասը թուրքերի կողմից սրի քաշվեց: Այսպիսով, Հարավ-Արևելյան Եվրոպայի խոշորագույն քաղաք ամրոցներից մեկը անցավ թուրքերի ձեռքը:

Բելգրադի գրավումից հետո սուլթան Սուլեյմանը մի որոշ ժամանակ դադարեցրեց ռազմական գործողությունները Հունգարիայում: Նա իր ուշադրությունը Կենտրոնական Եվրոպայից բևեռեց արևելյան միջերկրածովյան ավազանի վրա: Այստեղ Ստամբուլի և Եգիպտոսի ու Սիրիայի նորանվաճ տարածքների միջև, ծովային ճանապարհների վրա ընկած էր քրիստոնյաների լավ ամրացված ավանպոստ՝ Հոռոդոսի կղզին: Այն գտնվում էր Երուսաղեմի սուրբ Հովհաննեսի միաբանության այսպես կոչված ասպետ-Գոսպիտալիերների պաշտպանության ներքո, որոնք հայտնի էին որպես արհեստավարժ ծովագնացներ ու խիզախ ռազմիկներ: Նրանք մշտական սպառնալիք էին ստեղծել թուրքերի առևտրին Ալեքսանդրիայի հետ, գրավում էին բեռներով Եգիպտոս գնացող նրանց նավերը, կողոպտում Սուեզից Մեքքա մեկնող մահմեդական ուխտավորներ տեղափոխող նավերը, կաչկանդում ու արգելակում էին Միջերկրական ծովի ավազանում գործող թուրք ծովահենների գործողությունները, աջակցում Սիրիայում թուր-

քական իշխանությունների դեմ պարբերաբար բռնկվող ապստամբություններին և այլն: Բացի այդ, Հոոդոսի ասպետների ղեկավար, մեծ մագիստրոս Վիլյեր դե Լ'Իլ-Ադամը, որը վճռական ու արի զինվորական էր և քրիստոնեական հավատին ու խաչակրության գաղափարներին անմնացորդ նվիրված մի մարդ, մշտական վտանգ էր ներկայացնում օսմանցիների համար, քանի որ հանդես էր գալիս նրանց դեմ որպես նոր խաչակրաց արշավանքի կազմակերպման ջատագով:

Այդ բոլորի պատճառով Սուլեյմանը որոշել էր ինչ գնով էլ որ լինի գրավել Հոոդոսը: 1522 թ. հուլիսին թուրքական զորքերը ափ դուրս եկան Հոոդոսում և պաշարեցին համանուն ամրոցը: Գրոհից առաջ սուլթանը մեծ մագիստրոսին ներկայացրեց վերջնագիր, որով պահանջվում էր առանց դիմադրության հանձնել քաղաք-ամրոցը: Պատասխանը կտրուկ մերժումն էր: Պաշարվածներին օգնության եկան քրիստոնյա մի շարք երկրների ասպետներ:

Թուրքական հրետանին մեկ ամիս շարունակ սարսափելի հրետակոծության ենթարկեց Հոոդոսի ամրությունները: Միաժամանակ թուրքերը ականապատում ու պայթեցնում էին ամրոցի ամենախոցելի տեղերը, հորատում պատերի տակ և այլն: Սակայն այդ բոլորը արդյունք չէր տալիս, քանի որ ասպետները մարտնչում էին անօրինակ խիզախությամբ: Տեսնելով, որ պաշարումը ձգձգվում է, սուլթանը Հոոդոս ուղարկեց հարյուր հազարանոց մի բանակ: Ամրոցի պաշտպանների վիճակը ուղղակի դարձավ անհուսալի: Սպառազինության ու սննդամթերքի պաշարները գնալով նվազում էին: Քաղաքի պաշտպանների մեջ գտնվեցին մարդիկ, որոնք գտնում էին, որ հետագա դիմադրությունը անիմաստ է և անհրաժեշտ է հանձնվել: Թեև դե Լ'Իլ-Ադամը պատրաստ էր դիմադրել մինչև մահ, սակայն համոզվել էր, որ իրադարձությունների ընթացքի մեջ բեկում մտցնելը ուղղակի դարձել է անհնար, մանավանդ որ Հոոդոսը պաշտպանող զորամասը գերադասում էր դադարեցնել դիմադրությունը՝ հակառակ դեպքում սպառնալով ապստամբությամբ:

Այսպիսով, հարյուր քառասուն հինգ օրյա պաշարումից հետո 1522 թ. դեկտեմբերի 25-ին Հոոդոսը հանձնվեց: Սուլթանը կատարեց իր խոստումը թույլ տալու, որպեսզի ասպետները և կղզու բնակիչները իրենց գույքով ու ունեցվածքով, որքան որ հնարավոր էր իրենց հետ վերցնել, հեռանան կղզուց: Նրանց, ովքեր որ գերադասում էին մնալ, երաշխավորվում էր կյանքի և գույքի անձեռնմխելիություն, կատարյալ կրոնական ազատություն և հինգ տարվա ընթացքում հարկեր վճարելու պարտականությունից ազատում: Սուլթանը խոս-

տանում էր նաև հատկացնել նավեր հեռանալու ցանկություն ունեցողների համար:

Մեծ մագիստրոսը կենդանի մնացած ասպետների հետ ընդմիշտ հեռացավ քաղաքից: Հինգ տարի չարունակ ասպետների այդ ջոկատը մշտական հանգրվանի տեղ չուներ: Ի վերջո, նրանց տեղ հատկացրին Մալթայում, որտեղ ամրանալով նրանք չարունակեցին պայքարը Թուրքերի դեմ: Ասպետների հեռացումը Հոոդոսից ուժգին հարված էր քրիստոնյա աշխարհի համար: Այսուհետև Էգեյան ծովում և Միջերկրական ծովի արևելյան մասում թուրքական ռազմածովային ուժերի համար այլևս ոչ մի ուժ չէր ներկայացնում լուրջ սպառնալիք:

Հոոդոսի գրավումը անչուշտ մեծ հաջողություն էր օսմանցիների համար, սակայն այն չատ թանկ նստեց նրանց վրա. նրանք տվեցին հիսուն հազար սպանվածներ: Վրիժառությամբ վառված ենիչերիները հիմնահատակ ավերեցին քաղաքը: Տեղեկանալով, որ Հոոդոսում թաքնվում է սուլթան Բայազիդ II-ի եղբոր՝ Ջեմի որդին, Սուլեյմանը հրամայեց գտնել օսմանյան այդ իշխանազունին և նրա մանկահասակ որդու հետ միասին մահապատժի ենթարկել:

Հոոդոսը նվաճելուց հետո սուլթանը երեք տարի չարունակ դադար տվեց իր արշավանքներին: Այդ ընթացքում նա զբաղված էր իր պետության ներքին կազմակերպչական հարցերով: Այնուհետև զորքեր ուղարկեց Եգիպտոս թուրքական նահանգապետ Ահմեդ-փաշայի խռովությունը ճնշելու համար:

Մինչդեռ Հյուսիսային Աֆրիկայում սուլթանի համար նվաճումները չարունակում էր Խայրեդդին Բարբարոսան: Նա Ստամբուլ ուղարկեց մի նավ Սուլեյմանի համար հարուստ նվերներով, վերստին հայտնելով իր հպատակությունը միապետին: Վերջինս նրան նշանակեց Աֆրիկայի բեյլերբեյ, նրան ուղարկելով այդ պաշտոնի ավանդական խորհրդանիշները՝ նժույգ, յաթաղան և դրոշ: Սուլթանը Բարբարոսային չնորհեց հարկեր հավաքելու իրավունք և առհասարակ ենիչերիներին հատկացվող բոլոր արտոնությունները: Բացի այդ, բարձրագույն հրամանով Բարբարոսան նշանակվեց կաբութան-փաշա՝ գլխավոր ծովակալ, միաժամանակ նրան հանձնարարելով զբաղվել ռազմական նավաշինությամբ: Շնորհիվ Բարբարոսայի եռանդի ու ակտիվության, չուտով սուլթանի ծովային հզորությունը տարածվեց ողջ Միջերկրական ծովում և հյուսիսաֆրիկյան ծովափի մեծ մասի վրա: Թուրքական նավատորմը այժմ քրիստոնեական աշխարհի համար ներկայացնում էր մեծ վտանգ:

Գահ բարձրանալուց հետո առաջին անգամ սուլթան Սուլեյմանը

մեկնեց Էդիրնե, որտեղ իր ժամանակը գլխավորապես անց էր կացնում անձնական հաճույքների վրա, հատկապես զբաղվելով որսորդությամբ:

Էդիրնեից սուլթանը նոր էր վերադարձել Ստամբուլ, երբ 1525 թ. գարնանը մայրաքաղաքում բռնեց ենիչերիների մի հուժկու ապստամբություն: Վերջիններս խիստ դժգոհ էին, որ երեք տարի շարունակ պատերազմներ տեղի չեն ունենում, իրենք մատնված են պարապության և զրկված կողոպուտի ու ավարի միջոցով եկամուտ ձեռք բերելու հնարավորությունից: Այդ ժամանակ ենիչերիներն արդեն կազմում էին սուլթանի մշտական բանակի քառորդ մասը և գնալով ավելի ու ավելի էին գիտակցում իրենց ուժն ու հզորությունը և դրան համընթաց ավելի ու ավելի էին վերածվում անկշտում մի զանգվածի և սուլթանի ու պետության համար սպառնալից ուժի:

Խռովարարները կողոպուտի մատնեցին մաքսատները, մայրաքաղաքի հրեական թաղամասը, բարձրաստիճան անձանց, հարուստների, սովորական մարդկանց տները, խանութները և այլն: Ենիչերիների մի խումբ ուժով ճանապարհ բաց արեց դեպի սուլթանի ընդունարանը, որտեղ, ինչպես պատմվում է, սուլթան Սուլեյմանը սեփական ձեռքերով սպանեց երեք խռովարարների: Երբ մյուսները իրենց նետերն ուղղելով սուլթանի կողմը սպառնացին, որ կսպանեն նրան, Սուլեյմանը ստիպված էր հեռանալ:

Սակայն, միապետը չընկրկեց խռովարարների առջև: Նա անողոք դաժանությամբ ճնշեց խռովությունը: Նրա հրամանով ենիչերիների աղան և մի քանի սպաներ մահապատժի ենթարկվեցին, իսկ շատերը հեռացվեցին իրենց պաշտոններից: Սուլթանը կարողացավ հանգստացնել ենիչերիներին, նրանց բաժանելով լրացուցիչ դրամական պարգևներ և խոստանալով, որ հաջորդ տարի կձեռնարկվեն ռազմական արշավանքներ:

Հավանական է, որ ենիչերիների խռովությունը արագացրեց դեպի Հունգարիա նոր արշավանք կազմակերպելու սուլթանի մտադրությունը: Չի բացառվում, որ այդ որոշման կայացման համար ազդեցություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ 1525 թ. Ֆրանցիսկ I-ը Պավիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրել էր պարտություն և գերի ընկել Հաբսբուրգների կայսրի ձեռքը: Ֆրանսիայի թագավորը Մադրիդում իր բանտից Ստամբուլ էր ուղարկել մի նամակ, որը թաքցված էր նամակաբերի կոշիկի ներբանի տակ, սուլթանից խնդրելով արշավանք կազմակերպել Կարլոս V-ի դեմ իրեն գերությունից ազատելու նպատակով: Նամակում նա համոզում էր սուլթանին, որ եթե նա դա չանի, ապա Հաբսբուրգները կդառնան «ծո-

վերի տերը», այսինքն՝ կտիրապետեն Միջերկրական ծովում: Անկասկած Ֆրանցիսկ I-ի խնդրանքը կատարելապես համընկնում էր Սուլեյմանի փայփայած անձնական ծրագրերի հետ:

Այդ ժամանակ (1526 թ.) Հունգարիայի ներքին վիճակը խիստ անկայուն էր: Երկրում տեղի էին ունենում միջավատական երկպառակություններ և գյուղացիական հուզումներ: Օգտվելով դրանից՝ 1526 թ. գարնանը սուլթան Սուլեյմանը կատարեց զորաշարժ, անձամբ դեպի Հունգարիա տանելով հարյուր հազարանոց մի բանակ: Նրան ուղեկցում էր մեծ վեզիր Իբրահիմ փաշան:

Ցամաքային բանակի հետ միասին, Դանուբ գետով շարժվում էին մի քանի հարյուր ոչ մեծ թիանավեր, որոնք տեղափոխում էին ենիչերիներին: Այդ վիթխարի ուժին կարելի էր հակակշռել միայն ժողովրդական պատերազմի միջոցով, սակայն հունգարական ֆեոդալները այն աստիճանի վախեցած էին իրենց գյուղացիներից, որ չհամարձակվեցին նրանց զինել: Հուլիսին թուրքերը պաշարեցին Պետերվարադին ամրոցը: Նրանց հաջողվեց պատի տակ փորել ու ականապատել: Հզոր պայթյունի հետևանքով առաջացած բացվածքի միջով թուրքերը ներխուժեցին ամրոց: Պետերվարադինը ընկավ, նրա կենդանի մնացած հինգ հարյուր պաշտպանները գլխատվեցին, իսկ երեք հարյուր մարդ քշվեց ստրկության:

Հունգարական հողերի համար գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ 1526 թ. օգոստոսի 29-ին, Դանուբի աջ ափին, հարթավայրային ճահճոտ մի վայրում գտնվող Մոհաչ քաղաքի մոտ: Հունգարաչեխական բանակը թե՛ իր թվաքանակով և թե՛ զինվածությամբ մեծապես զիջում էր թուրքականին: Լայոշ II թագավորն ուներ ընդամենը քսանհինգ հազար զինվոր և ութսուն թնդանոթ, թուրքերի երեք հարյուր թնդանոթների դիմաց: Նա հնարավորություն ուներ ուժեղացնելու իր բանակը Տրանսիլվանիայից եկող զորքերի միջոցով, որը հունգարական մագնատ Յանոշ Զապոյաիի գլխավորությամբ գալիս էր միանալու թագավորի բանակին: Սակայն Լայոշ II-ը որոշեց չսպասել նրանց գալստյանը և երբ թուրքերը հայտնվեցին Մոհաչի մոտ, գրոհեց նրանց վրա:

Սուլեյմանը թույլ տվեց, որ հունգարական հեծելազորը պատռի թուրքական առաջապահ զորքերի շարքերը: Երբ դրանից հետո հունգարները հայտնվեցին համաչափ շարված թնդանոթների առջև, թուրքերը ճակատային փոթորկալից կրակով սկսեցին գնդակոծել թշնամուն: Համարյա ողջ հունգարական բանակը ոչնչացավ: Ճակատամարտի դաշտում ոչնչացավ նաև մադյարական ազնվականու-

թյան մեծ մասը: Հունգարիայի թագավորը ծանր վիրավորվեց գլխից և փորձում էր փախչել ճակատամարտի դաշտից: Սակայն դա նրան չհաջողվեց և նա իր ձիու հետ ընկնելով ճահիճը կնքեց իր մահկանացուն: Իր հետ մահացավ նաև իր թագավորությունը, քանի որ նա ժառանգորդ չուներ: Սուլթանը հրամայել էր գերիներ չվերցնել: Նրա վառ կարմիր գույնի վրանի առջև հունգարական ազնվականների հազարավոր գլուխներից կառուցվեց բուրգ: Ժամանակակիցները Մոհաչն անվանեցին «հունգարական ազգի գերեզմանը»: Սուլթանի հրամանով այդ քաղաքի բոլոր տղամարդկանց սրի քաշեցին: Մոհաչը ավարի մատնվեց և հրո ճարակ դարձավ: Այդ ճակատամարտից հետո Հունգարիայի կողմից կազմակերպված դիմադրություն այլևս գոյություն չուներ:

Ճանապարհը դեպի հունգարական մայրաքաղաքը՝ Բուդա, այլևս բաց էր: Սեպտեմբերի 10-ին քաղաքը հանձնվեց առանց մարտի և սուլթանը հանդիսավոր կերպով սպիտակ ձիու վրա նստած մուտք գործեց Բուդա: Թուրքերի դրածո, տրանսիլվանական մագնատ Յանոշ Զապոյյային իրեն ճանաչեց սուլթանի վասալ, ուստի Սուլեյմանը նրան կարգեց թագավոր: Թուրքերը այրեցին ու ոչնչացրին Բուդան:

Համարելով, որ արշավանքը ավարտված է և իր առջև դրված խնդիրը կատարված, սուլթանը հրամայեց բանակին վերադառնալ Ստամբուլ: Ռազմական ավարը վերին աստիճանի հարուստ էր. տասնյակ հազարավոր գերիներ, հունգարական թագավորի պալատի ողջ հարստությունները, այդ թվում նաև հարուստ գրադարանը: Հետդարձի ճանապարհին օսմանյան բանակը իր հետևից թողնում էր հարյուրավոր ավերված ու կողոպտված քաղաքներ ու գյուղեր: Հունգարիան բառացիորեն ավերվեց ու ամայացավ: Այն գտնվում էր մոխիրների մեջ: Հսկայական էին նաև մարդկային կորուստները՝ մոտ երկու հարյուր հազար մարդ, որը կազմում էր ողջ բնակչության համարյա տասներորդ մասը: Սուլթանը առայժմ որոշեց Հունգարիան չմիացնել իր կայսրությանը որպես նրա նահանգ: Այդ առթիվ պատմիչ Քեմալ փաշազադեն գրում էր. «Ժամանակը, երբ այդ նահանգը պետք է միացվեր իսլամի տիրույթներին, դեռ չէր եկել: Գործը հետաձգվեց ավելի հարմար ժամանակի»:

Հունգարիայից սուլթանի հեռանալուց հետո այնտեղ ստեղծվեց քաղաքական ու դինաստիական վակուում: Յանոշ Զապոյյաիի և ավստրիամետ հունգարական ֆեոդալների մի խմբի միջև սկսվեց անդիջում ու թեժ պայքար թագավորական գահի համար: Այդ պայքարից հաղթող դուրս եկավ Կարլոս V-ի եղբայր, Ավստրիայի էրցհեր-

ցոգ Ֆերդինանդ Հաբսբուրգը, որը թագադրվեց որպես Հունգարիայի թագավոր՝ վերցնելով Ֆերդինանդ I-ի գահակալական անունը: Նա գրավեց Բուդան՝ այն դարձնելով իր մայրաքաղաքը և սկսեց ծրագրեր մշակել Ավստրիայի, Բոհեմիայի և Հունգարիայի միավորման ճանապարհով Հաբսբուրգների կենտրոնական-եվրոպական պետություն ստեղծելու ուղղությամբ:

Այդ ծրագրերը դուռ էին բաց անում թուրք-ավստրիական առճակատման համար: Իսկապես, այդ օրերից սկսած Թուրքիայի և Ավստրիայի միջև սկսվեց պայքար և զինված դիմակայություն Հունգարիայի համար, որը տևեց ավելի քան հարյուր յոթանասուն տարի:

Ֆերդինանդը վռնդեց Յանոշ Զապոլյաիին: Պարտված Զապոլյաին փախուստի դիմելով ապաստան էր գտել Լեհաստանում: Այնտեղից նա իր մարդուն ուղարկեց Ստամբուլ, հայցելու սուլթան Սուլեյմանի օգնությունը: Վերջինս պատասխանեց, որ ինքը Յանոշին ճանաչում է իբրև Հունգարիայի թագավոր և խոստանում է նրան պաշտպանել Ֆերդինանդից և առհասարակ բոլոր թշնամիներից: Ստորագրվեց պայմանագիր, ըստ որի Զապոլյաին իր վրա պարտավորություն էր վերցնում սուլթանին վճարելու տարեկան հարկ, յուրաքանչյուր տաս տարին մեկ նրա տրամադրության տակ դնել Հունգարիայի երկսեռ բնակչության տասներորդ մասը և «հավիտյանս հավիտենից» նրան տրամադրել թուրքական զինված ուժերի համար ազատ անցման իրավունք իր տարածքների վրայով: Ընդունելով այդ պայմանները, փաստորեն, Յանոշ Զապոլյաիի Հունգարիայի իրեն պատկանող հատվածը դառնում էր Օսմանյան պետության հովանու ներքո գտնվող արբանյակ-թագավորություն:

Իր հերթին Ֆերդինանդը ևս Ստամբուլ ուղարկեց դեսպանների, հույս ունենալով սուլթանի հետ կնքել զինադադար: Սակայն Սուլեյմանը ոչ միայն մերժեց այդ առաջարկը, այլև հրամայեց դեսպաններին բանտ նետել:

Սուլեյման I-ը որոշեց նոր արշավանք կազմակերպել Հունգարիա, սակայն այն միաժամանակ հետաձգվեց 1525-1526 թթ. Կիլիկիայում և Մալաթիայում բռնկած գուղացիական ապստամբությունների և մի շարք այլ վայրերում ներքին խմորումների պատճառով:

Փոքր Ասիայում պատժիչ գործողությունների ավարտից հետո Սուլեյման I-ի ձեռքերն ազատվեցին և նա սկսեց նոր արշավանքի նախապատրաստություններ տեսնել Ավստրիային հարված հասցնելու համար:

1529 թ. մայիսի 10-ին մեծ վեզիր Իբրահիմ-փաշան մի հսկայական

բանակի գլուխ անցած զորաշարժ կատարեց դեպի Ավստրիա: Մոհաչի դաշտում Զապոլյային վեց հազարանոց մի զորաբանակի ուղեկցությամբ եկավ ողջունելու սուլթանին, որը նրան ընդունեց պատշաճ հարգանքով և իր դրածոյի գլխին դրեց թագավորական թագ: Այնուհետև սուլթանի և Զապոլյաիի միացյալ զորքերը վերցրին Բուդան և 1529 թ. սեպտեմբերի 27-ին մոտեցան Վիեննայի պատերին: Քաղաքի շուրջը հայտնվեցին տասնյակ հազարավոր սպիտակ վրաններ: Սուլթանը պաշարեց քաղաքը և նամակ հղեց Վիեննայի պաշտպաններին, որ դիմադրության դեպքում երեք օր հետո, սուրբ Միքայելի տոնի օրը, ինքը կնախաճաշի Վիեննայում և այնպես կավերի քաղաքը, որ այն այլևս երբեք գոյություն չի ունենա և այնտեղ կենդանի չի թողնի ոչ մի մարդու: Պաշարվածները ազատ արձակեցին օսմանցի մի գերու, որի միջոցով սուլթանին ուղարկեցին երկտող հետևյալ բովանդակությամբ. «իր նախաճաշը արդեն սառել է, ուստի ինքը կարող է բավարարվել միայն այն ուտելիքներով, որը իրեն կարող են մատուցել քաղաքային պատերի վրա դրված թնդանոթները»:

Վիեննայի համառ դիմադրության հետևանքով օսմանյան բանակի բարոյական ոգին այն աստիճանի անկում էր ապրել, որ հրամանատարները ստիպված էին զինվորներին մարտի տանել մահակի և մտրակի հարվածներով:

Սեպտեմբերի վերջից մինչև հոկտեմբերի կեսերը թուրքերը անընդհատ գրոհում էին քաղաքի վրա, առանց շոշափելի հաջողության: Վիեննայի պաշտպանները (նրանք ընդամենը 20 հազար հոգի էին, հարյուր քսան հազարանոց օսմանյան բանակի դեմ) դրսևորում էին անօրինակ խիզախություն ու անվեհերություն: Իբրահիմ-փաշան խոստանում էր թշնամու յուրաքանչյուր գլխի կամ կարևոր գերու համար առատորեն վարձատրել ոսկով: Սակայն դա ևս չէր օգնում:

Հոկտեմբերի 12-ի երեկոյան սուլթանի ռազմակայանում գումարվեց Դիվանի՝ կառավարության և ռազմական խորհրդի նիստ՝ որոշում կայացնելու համար՝ շարունակել Վիեննայի պաշարումը, թե՞ դադարեցնել: Բուռն քննարկումից հետո որոշվեց ձեռնարկել չորրորդ և վերջին գլխավոր գրոհը, զորքերին խոստանալով հաջողության դեպքում պարգևատրել բացառիկ դրամական պարգևներով: Վճռական գրոհը սկսվեց հոկտեմբերի 14-ին: Սակայն այն ևս հաջողությամբ չպսակվեց: Մինչդեռ թուրքական բանակը սկսել էր զգալ սննդամթերքի պակաս: Արդեն ձմեռնամուտ էր և անձրևներն ու ցուրտը խիստ նեղում էին զինվորներին: Ենիչերիական զորամասերում սկսվեցին դժգոհություններ, մանավանդ որ օսմանցիների կորուստները կազմում էին մոտ քառասուն հազար մարդ:

Դարձյալ ծանր ու թեթև անելով ստեղծված վիճակը՝ վերջապես 1529 թ. հոկտեմբերի 16-ին Սուլեյմանը հրամայեց հանել պաշարումը և հեռանալ Վիեննայից: Անկասկած դա թուրքական զենքի խոշոր պարտությունն էր: Ամբողջ աշխարհի առջև սասանվեց անպարտելի համարված սուլթան Սուլեյմանի ռազմական ու քաղաքական հեղինակությունը: Այդ անհաջողությունը ցուցադրեց նաև օսմանյան բանակի մեկ էական թերությունը. նա ընդունակ էր հաջող ռազմական գործողություններ վարել միայն ամռան ամիսներին:

Պաշարումը հանելուց հետո թուրքական զորքերը այրեցին իրենց ռազմական ճամբարը, սպանելով կամ կենդանի այրելով գերիներին, իսկ երիտասարդ երկսեռ գերվածներին, մոտ տասը հազար մարդու, քշեցին ստրկության: Հետդարձի ճանապարհին թուրքական բանակն ավերեց բազմաթիվ քաղաքներ ու ամրոցներ և գերության քշեց մեծ թվով մարդկանց:

Չնայած այդ բոլորին՝ Վիեննան ցնծության մեջ էր: Ի նշան հաղթանակի որոտում էին հրետանային համազարկերը: Վերջապես սկսեցին զողանջել նաև եկեղեցիների զանգերը: Սուրբ Ստեփանոսի մայր տաճարում մատուցվեց հանդիսավոր պատարագ, որի ժամանակ հնչեց "Te Deum" («Փառաբանում ենք Քեզ, տեր Աստված») օրհներգը:

Վիեննայի պաշտպանների խիզախությունն ու անվեհերությունը Ավստրիան և եվրոպական մյուս երկրները փրկեցին թուրքական նվաճման սարսափներից: Քրիստոնեական Եվրոպայի սիրտը՝ Վիեննան չընկավ թուրքերի ձեռքը: Սուլթան Սուլեյմանը կրել էր իր առաջին պարտությունը մի ուժի կողմից, որի թվական հարաբերակցությունը օսմանյան բանակի հետ հսկայական էր:

Այդ ամոթալի իրողությունը նվաստացուցիչ էր սուլթանի համար: Նրա հեղինակությունը փրկելու համար սուլթանական քարոզչությունը սկսեց տարածել մի վարկած, որ իբր Սուլեյմանը բնավ մտադրություն չի ունեցել գրավելու Վիեննան, այլ միայն ցանկացել է ճակատամարտ տալ էրցհերցոգ Ֆերդինանդին, որն այդպես էլ չհամարձակվեց իր դեմ դուրս գալ: Իր այդ վարկածը սեփական հպատակներին հալած յուղի տեղ հրամցնելու համար, սուլթանը իր «հաղթական» վերադարձը նշանավորեց ճոխ տոնակատարություններով, որոնց ընթացքում կազմակերպվեց նաև իր հինգ զավակների թլպատման արարողությունը: Ամբողջ աշխարհի աչքում սուլթանի հեղինակությունը փրկվեց Ֆերդինանդի դեսպանների Ստամբուլ ժամանելու հետևանքով:

1530 թ. օսմանյան պետության և Ավստրիայի միջև ընթանում էին

խաղաղության բանակցություններ, որոնց նախաձեռնող կողմը Ավստրիան էր: Ֆերդինանդի դեսպանները սուլթանին առաջարկեցին զինադադար կամ հաշտության պայմանագիր հետևյալ պայմաններով. էրցհերցոգը պարտավորվում է անձամբ սուլթանին և մեծ վեզիրին վճարել տարեկան որոշակի դրամական «պարգև», եթե նրանք իրեն ճանաչեն որպես Հունգարիայի թագավոր, իրեն զիջեն Բուդան և հրաժարվեն Զապոլյաիին աջակցելուց:

Որպես պատասխան մեծ վեզիր Իբրահիմ-փաշան բաց է անում իր պալատի պատուհանը և հպարտությամբ դեսպաններին ցույց տալիս Յոթ աշտարականոց ամրոցը, որտեղ պահվում էին սուլթան Սուլեյմանի անհամար հարստությունները: Դրանով նա հասկացնում էր դեսպաններին, որ սուլթանը «պարգևի» կարիք չունի: Իսկ ինչ վերաբերում է իրեն՝ մեծ վեզիրին, ապա ոչ մի կաշառք նրան չի ստիպի դավաճանելու իր տիրակալին: Վերջապես Իբրահիմ-փաշան հասկացրեց դեսպաններին, որ խաղաղություն կարող է հաստատվել միայն այն պայմաններով, որ կառաջադրի ինքը՝ սուլթանը:

Այսպիսով, սուլթան Սուլեյմանը էրցհերցոգ Ֆերդինանդին հրաժարվեց ճանաչել որպես հունգարական թագավոր:

Սուլթանը ուղղակի այրվում էր Իսպանիայի թագավոր և Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Կարլոս V-ի հետ իր զենքը խաչաձևելու մարմաջով: Ուստի նա 1532 թ. ապրիլի 26-ին կրկին կատարեց զորաշարժ: Օսմանյան հսկայական բանակը գետային նավատորմի ուղեկցությամբ Դանուբ գետով շարժվեց Բելգրադի ուղղությամբ: Ճանապարհին Սուլեյմանին դիմավորեցին Ֆերդինանդի նոր դեսպանները, սուլթանին առաջարկելով խաղաղության ավելի ձեռնտու պայմաններ: Սակայն Սուլեյմանը պատասխանեց, որ իր թշնամին ոչ թե Ֆերդինանդն է, այլ Կարլոս V-ը:

Գիտակցելով թուրքական սպառնալիքի ահագնությունը և Եվրոպան այդ սպառնալիքից պաշտպանելու պատասխանատվությունը՝ Սրբազան Հռոմեական կայսրությունը և Իսպանիայի կայսրը հավաքեցին մի այնպիսի բանակ, որն ամենախոշորն էր և ամենաուժեղը կայսերական այն բոլոր բանակներից, որոնք երբևիցե մարտնչել էին թուրքերի դեմ: Առաջիկա պատերազմը ներկայացվում էր որպես քրիստոնեության ու իսլամի միջև մի ահեղ գոտեմարտ: Հանուն մեծ նպատակի Կարլոսը ստիպված էր մի կողմ թողնել կրոնական տարաձայնությունները և համաձայնության գալ լութերականների հետ: 1532 թ. Նյուրնբերգում կաթոլիկների և բողոքականների միջև կնքվեց մի համաձայնագիր, ըստ որի կաթոլիկ կայսրը անորոշ ժամանակով հետաձգում էր կրոնական վեճի վերջնական լուծումը:

Օսմանյան զորքերի հարձակումը Հունգարիայում հանդիպեց հերոսական դիմադրության: Ի վերջո թուրքական հարձակումը կանգնեցվեց Կարլոս V-ի զորքերի կողմից: Ըստ էության ամբողջ արշավանքը ձախողվեց և սուլթանը հրաժարվեց Վիեննայի վրա կրկին գրոհելու մտքից: Հետդարձի ճանապարհին օսմանյան բանակը անհաջողության իր ողջ մաղձը թափեց Ավստրիայի անպաշտպան գյուղերի և ավանների վրա՝ հիմնահատակ այրելով ու կործանելով դրանք և ամբողջ շրջաններ վերածելով լերկ անապատի:

Որպեսզի փարատվի իր նոր անհաջողության վերաբերյալ անբարենպաստ հասարակական կարծիքը, սուլթանական արքունիքը այս անգամ ևս առաջ քաշեց մի պաշտոնական վարկած, որ իբր սուլթանը արշավանք էր կազմակերպել իր ոխերիմ թշնամի քրիստոնյաների կայսեր դեմ, սակայն վերջինս այդպես էլ չհամարձակվեց նրա աչքին երևալու և ճողոպրելով գերադասեց ինչ-որ տեղ թաքնվել:

Այնուամենայնիվ Հաբսբուրգների և օսմանցիների միջև սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին 1533 թ. հուլիսի 23-ին Ստամբուլում կնքված ավստրո-թուրքական խաղաղության պայմանագրի ստորագրմամբ, ըստ որի Արևմտյան և Հյուսիս-Արևմտյան Հունգարիան անցավ Ավստրիային (տվյալ դեպքում Ֆերդինանդին), որը պարտավորվում էր սուլթանին վճարել տարեկան տուրք և չհարձակվել արևելյան Հունգարիայի վրա, որտեղ իշխանությունը պատկանում էր սուլթանի վասալ Յանոշ Զապոլյաիին: Այդ պայմանագիրը փաստորեն նշանակում էր Հունգարիայի բաժանում Ֆերդինանդի և Զապոլյաիի միջև:

Պայմանագրի տեքստում օսմանցիների հպարտությանը և հեղինակությանը բավարարություն տալու և անձամբ սուլթանի ինքնասիրությունը չոչնչացնելու նպատակով, Ֆերդինանդը օսմանցիների միապետին դիմում էր ինչպես որդին հորը: Իր հերթին Սուլեյմանը խոստանում էր այսուհետև Ֆերդինանդի հետ վարվել ինչպես որդու հետ և նրան խաղաղություն պարգևել «ոչ թե յոթ տարով, ոչ թե քսանհինգ տարով, ոչ թե հարյուր տարով, այլ երկու հարյուրամյակով, երեք դարով, իրականում ընդմիշտ, եթե Ֆերդինանդը ինքը չխախտի այն»: Այլ կերպ ասած, պայմանագիրը անժամկետ էր:

Չնայած խաղաղության հաստատմանը՝ Եվրոպան մշտապես շունչը պահած ամեն րոպե սպասում էր Թուրքերի վերադարձին: Եվրոպական մայր ցամաքի համար թուրքական վտանգը այլևս դարձել էր մշտական գործոն: Ենիչերիների կատարած վայրագությունների հիշողությունը միշտ թարմ էր մնում հասարակ մարդկանց գիտակ-

ցության մեջ՝ նրանց պահելով մշտական լարվածության վիճակում:

«Մեծ Թուրքը», ինչպես Եվրոպայում անվանում էին Սուլեյման I, Արևմտյան Եվրոպայի տիրակալներին ներշնչում էր վախ ու անվստահություն: Եվրոպայում նրան համարում էին քրիստոնեական աշխարհի «ուժեղ և ահեղ» թշնամի: Նրա օրոք օսմանյան բանակը դարձել էր էլ ավելի կուռ և հզոր ռազմական ուժ: Այդ բանակի մասին մի իտալացի տվել է հետևյալ գնահատականը. օսմանյան բանակի զինվորներն օժտված են բարձր մարտական հատկանիշներով, աչքի են ընկնում իրենց կարգապահությամբ, նպատակի միահամուռ զգացմամբ, ինքնատիրապետմամբ և խանդավառությամբ (էնտուզիազմով): Նրանց զինվորական կարգապահությունը,- շարունակում է իտալացին,- ավելի խիստ է, քան հին հույների ու հռոմեացիների բանակում: «Թուրքերը գերազանցում են մեր զինվորներին երեք առումներով. նրանք արագորեն ենթարկվում են իրենց հրամանատարների հրամաններին. ճակատամարտի ժամանակ երբեք չեն դրսևորում վախի նշույլ իսկ իրենց կյանքի համար, նրանք երկար ժամանակ կարող են գոյատևել առանց հացի ու գինու, բավարարվելով լոկ գարիով ու ջրով»:

Բնական է, որ ունենալով այդպիսի համախմբված ու վիթխարի ռազմական ուժ, Օսմանյան կայսրությունը XVI դարում ավելի քան երբևէ դառնում էր Արևելքի ու Արևմուտքի գործերում ազդեցիկ գործոն: Սուլեյման I-ը կարողանում էր իր տրամադրության տակ եղած հսկայական ռազմական մեքենայի օգնությամբ փոփոխության ենթարկել Եվրոպայում առկա քաղաքական իրողությունները: Օրինակ, այն ժամանակներից սկսած, երբ Վենետիկը պարտություն կրեց Թուրքերի դեմ պատերազմներում և կորցրեց իր տիրապետող դիրքերը Միջերկրական ծովի ավազանում, լավ յուրացրեց Թուրքական այն սկզբունքը, որ «այն ձեռքը, որը չհաջողվեց կտրել, պետք է համբուրել ու դնել ճակատին»:

Հիրավի, սուլթան Սուլեյման I-ի դերը օսմանյան պատմության մեջ հենց կայանում է նրանում, որ նա կարողացավ իր պետության ռազմական ուժը վերածել քաղաքական գործոնի:

XVI դ. 30-ական թվականների երկրորդ կեսին շարունակվում էին «ռազմական օկուպանտի» նվաճողական գործողությունները Հարավ-Արևելյան Եվրոպայում: 1538 թ. օսմանյան բանակը հրով ու սրով անցավ Մոլդավիայի տարածքով: Սուլեյման I-ը այդ երկրի կառավարիչ նշանակեց իրեն հնազանդություն հայտնած տեղական բոյարներից մեկին, որը որպես վասալ պարտավորվում էր կանոնավոր կերպով սուլթանին վճարել հարկեր և տուրքեր: Այնուհետև Թուրքա-

կան զորքերը ռազմական գործողություններ ծավալեցին Պրուտ և Դնեստր գետերի միջև ընկած տարածքներում: Բեսարաբիայում նրանք ստեղծեցին ուժեղ ռազմական հենակետ դեպի Ուկրաինայի հողերը ասպատակ սփռելու և ավերիչ արշավանքներ կազմակերպելու համար, որոնք այն ժամանակ գտնվում էին Լեհաստանի տիրապետության տակ:

Այդ նույն տարիներին թուրքերը առավել խոշոր ռազմական գործողություններ էին ծավալել ծովերի վրա, թեժ մարտեր մղելով Կարլոս V-ի, Հռոմի պապի և Վենետիկի հանրապետության դեմ: Սուլթան Սուլեյմանը իր նվաճողական քաղաքականության հիմնական օբյեկտ էր դարձրել Արևմտյան միջերկրածովյան ավազանը: Ժամանակը միանգամայն նպաստավոր էր այդ վայրերում հաջողություն ձեռք բերելու համար: Ֆաթիմյանների երբեմնի հզոր խալիֆայության անկումը ուղեկցվում էր նրանից կախյալ տեղական մահմեդական դինաստիաների քայքայմամբ: Դրա հետևանքով Հյուսիսային Աֆրիկայի Բերբերյան ծովափն ընկել էր մանր ցեղային առաջնորդների ձեռքը, որոնց զբաղմունքը ծովահենությունն էր: Նրանք ակտիվ աջակցություն էին գտնում մավրերի կողմից, որոնք իսպանական քրիստոնյաների հալածանքների հետևանքով, հատկապես 1492 թ. Գրենադայի մուսուլմանական թագավորության անկումից հետո, փախուստի դիմելով Հյուսիսային Աֆրիկա, վրիժառության մոլուցքով լցված բերբերական առաջնորդների հետ համատեղ ծովահենային ռեյդեր էին իրականացնում դեպի Իսպանիայի հարավային ափերը: Իսպանացիները դրան պատասխանում էին պատժիչ գործողություններով, պատերազմը տեղափոխելով Հյուսիսային Աֆրիկա և հսկողություն սահմանելով նրա մի շարք նավահանգիստների նկատմամբ:

Արևմտյան Միջերկրածովյան ավազանում ակտիվ ծովահենությամբ էին զբաղվում նաև թուրքահպատակ Օրուջ և Խայրեդդին Բարբարոսա («Շիկամորուս») եղբայրները: Վերջիններիս և մավրերի շահերը հակախսպանական պայքարում և ծովահենային գործերի մեջ միանգամայն համընկնում էին:

Դեռևս 1518 թ. Օրուջին հաջողվել էր իսպանացիներին դուրս մղել Ալժիրից և գրավել այն: Սակայն բախումներից մեկի ժամանակ նա զոհվեց: Նրա գործը ավելի լայն թափով ծավալեց իր եղբայրը՝ Խայրեդդինը, որը ծառայության էր անցել թուրքական միջերկրածովյան նավատորմում՝ ձեռք բերելով բարձր դիրք: Ծովահենային ավարից մի ամբողջ նավ հարուստ նվերներ ուղարկելով սուլթան Սելիմ I-ին՝ նա ստացավ Աֆրիկայի բեյլերբեյի պաշտոնը՝ դրա հետ միասին ձեռք բե-

ելով նաև այդ պաշտոնի համար նախատեսված խորհրդանիշները՝ նժույգ, թուրքական յաթաղան և երկբունչուկանի դրոշ: Սուլթանը նրա տրամադրության տակ էր դրել նաև լավ զինված ու մարզված ենիչերիների մի խոշոր ջոկատ:

Ընդհուպ մինչև 1533 թ. սուլթան Սելիմի ժառանգորդ Սուլեյմանը, որը գերազանցապես զբաղված էր Եվրոպայում իր արշավանքներով, Բարբարոսայի հետ չփումների մեջ չէր մտնում, թեև հիանալի տեղյակ էր նրա ծովահենային «սխրանքների» մասին: Սակայն, երբ 1532 թ. քրիստոնյաների նավատորմը հայտնի Ջենովացի ծովակալ Անդրեա Դորիայի հրամանատարությամբ, որը հավատարմության երդում էր տվել Հաբսբուրգների կայսրին, Միջերկրական ծովի արևմտյան մասից թափանցեց արևելյան միջերկրածովյան ավազան, մուտք գործելով ներքին թուրքական ջրերը, սուլթան Սուլեյման I-ը որոշեց անհապաղ դիմել Բարբարոսայի ծառայություններին: Դա նրա համար հույժ կարևոր էր նաև մեկ այլ պատճառով: Սուլթանը համոզվել էր, որ զբաղված լինելով ցամաքային պատերազմներով, ինքը պատշաճ ուշադրություն չէր դարձրել ծովային ուժերի հզորացման գործին, որի հետևանքով Միջերկրական ծովում թուրքական ռազմական նավատորմը իր նավերի քանակով և նրանց կրակային հզորությամբ դադարել էր հավասար լինելուց Արևմուտքի ծովային ուժերի հետ համեմատած: Ուստի անհրաժեշտ էր ձեռնարկել վճռական ու անհետաձգելի միջոցառումներ այդ վտանգավոր բացթողումը վերացնելու համար:

Սուլեյմանը Ալժիր ուղարկեց իր ներկայացուցչին, հրամայելով, որ Բարբարոսան ժամանի Ստամբուլ: Կարճ ժամանակ անց, վերջինս 40 նավերի ուղեկցությամբ, անցնելով Դարդանելը, մուտք գործեց Ոսկեղջյուր նավահանգիստը, իր հետ բերելով սուլթանի համար հարուստ նվերներ: Փառավոր ընդունելությունից հետո Սուլեյման I-ը Խայրեդդինին նշանակեց կաբութան-փաշայի (գլխավոր ծովակալ) պաշտոնում, միաժամանակ նրան հանձնարարելով կառուցել մեծ թվով ռազմանավեր՝ Օսմանյան կայսրության ռազմա-ծովային հզորությունը չեշտակի բարձրացնելու համար:

Սուլթանը որոշել էր Կարլոս V-ի դեմ այսուհետև պայքարը շարունակել ավելի շատ ծովերի վրա, քան ցամաքում: Նա միաժամանակ գտնում էր, որ անհրաժեշտ է Միջերկրական ծովում համագործակցել Հաբսբուրգների ախոյան Ֆրանսիայի հետ՝ ընդհանուր թշնամու դեմ պայքարի լայն ճակատ ստեղծելու համար: Հենց այդ նպատակով 1536 թ. կնքվեց թուրք-ֆրանսիական պաշտպանողական-հարձակողական դաշինք, որը պարունակում էր նաև գաղտնի հոդ-

վածներ փոխադարձ ռազմական պաշտպանության վերաբերյալ:

1534 թ. ամռանը, ճիշտ այն ժամանակ, երբ սուլթան Սուլեյմանը իր զորքերը շարժեց դեպի Իրան, Բարբարոսայի նավատորմը Դարդանելի նեղուցով դուրս եկավ Միջերկրական ծով՝ ուղղություն վերցնելով դեպի արևմուտք: Օգտվելով Թունիսում ծագած ներքին խառնակություններից, հենց նույն՝ 1534 թ. Խայրեդդինը ներխուժեց Թունիս և գրավեց այն:

Օսմանյան նորացված նավատորմը Միջերկրական ծովում գործում էր անօրինակ ակտիվությամբ: Բավական է ասել, որ ընդամենը երկու տարվա ընթացքում՝ 1537–1539 թթ., Բարբարոսան ավերածության մատնեց և հարկատու դարձրեց Ադրիատիկ ծովի քսան կղզիներ, որոնք պատկանում էին վենետիկցիներին: Թուրքերը մեծ ասպատակ սփռեցին և ավերեցին բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր նաև Դալմացիայում: Եվրոպական դաշնակիցների դեմ մղած մեծ պատերազմի ժամանակ (1535–1540 թթ.) օսմանցիները գլխովին ջախջախեցին վենետիկյան նավատորմը և կայսրությանը միացրին դալմաթական մի շարք քաղաքներ: Պարտություն կրած Վենետիկը ստիպված էր սուլթանին վճարել խոշոր չափերի հասնող ռազմատուգանք:

2. ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆ I-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ԻՐԱՆԻ ԴԵՄ, ՊԱՐՍԻՑ ԾՈՅՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

XVI դ. 30–40-ական թվականներին Սուլեյման I-ը պատերազմներ էր մղում փաստորեն երեք ճակատներով՝ Արևելքում Իրանի դեմ, Եվրոպայում Ավստրիայի, իսկ Միջերկրական ծովի ավազանում Սրբազան Հռոմեական կայսրության դեմ: Այդ էտապում ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը Ասիան էր, որտեղ Սեֆեյան Իրանը շարունակում էր իր ակտիվ նվաճողականությունը Միջագետքի և Արևմտյան Հայաստանի ուղղությամբ:

1533 թ. սեպտեմբերին սուլթանը իր 140-հազարանոց բանակը շարժեց դեպի Արևելք, Իրանի դեմ պատերազմի ճակատ բացելու համար: Դա Սուլեյմանի առաջին պատերազմն էր իր արևելյան հարևանի դեմ: Սուլթանը որոշել էր կործանիչ հարված հասցնել Սեֆյաններին և նվաճել Միջագետքը: Իրանի ներքին անկայունությունն ու խառնակ վիճակը հույս էր ներշնչում սուլթանին, որ արշավանքը հաջող ավարտ կունենա:

Թեև ռազմական գործողությունների իրականացումը հանձնարարված էր հռչակավոր մեծ վեզիր Իբրահիմ փաշային, սակայն բանակը գլխավորում էր անձամբ սուլթանը: Օգտագործելով «այրված հողի» իրենց հայտնի մարտավարությունը զզլբաշները անընդհատ նահանջում էին, իրենց հետևից այրելով ու ոչնչացնելով ամեն ինչ, որպեսզի գրավյալ տարածքում թշնամին չգտնի ուտելիք ու կացարան բանակի, և կեր կենդանիների համար: Իրանին հնուց ի վեր ծանոթ այդ մարտավարության բաղկացուցիչ մասն էր հանդիսանում նաև տեղական բնակչության տեղահանությունը դեպի երկրի խորքերը:

Սուլթան Սուլեյմանը շահ Թահմազ (Թահմասպ) I-ին (1524-1576) գրեց մի նամակ, որտեղ նրան մեղադրում էր վախկոտության մեջ և պահանջում ընդունել ճակատամարտը: Իր պատասխան նամակում Թահմազը գրում էր, որ ինքը խելագար չէ և չի կարող ճակատամարտի դուրս գալ մի թշնամու դեմ, այն էլ այնպիսի պայմաններում, երբ մեկ զզլբաշի դեմ կանգնած են տասը թուրքեր:

1534 թ. հուլիսի 13-ին համարյա առանց դիմադրության հանդիպելու օսմանյան զորքերը գրավեցին Թավրիզը: Այստեղ գործող բանակին այցելության եկավ անձամբ ինքը՝ Սուլեյման «Հիասքանչը»: Այնուհետև թուրքերը շարժվեցին հարավ, դեպի Համադան: Այդպես էլ չհանդիպելով հակառակորդի ուժերին, նրանք որոշեցին շարժվել Միջագետք ձմեռելու: Բաղդադում իրանական կայազորի պարետ Մոհամմադ Թեքքելլու բեկը՝ անիմաստ համարելով բուն Իրանից կտրված պայմաններում դիմադրությունը թշնամուն, որոշեց զորքերը հանել քաղաքից ու հեռանալ: 1534 թ. նոյեմբերին թուրքական բանակը մուտք գործեց Բաղդադ: Այդ քաղաքում սուլթանը մնաց մոտ վեց ամիս: Նա վերականգնեց մուսուլմանական սուննիթական չորս մազհաբներից մեկի հիմնադիր Աբու-Հանիֆի գերեզմանը, որը պղծվել էր շիաների կողմից և նրա վրա կառուցեց մի չքեղ դամբարան, դրանով իսկ ցանկանալով շեշտել, որ մահմեդականների սրբազան քաղաքը ազատագրվել է «շիա-հերետիկոսների» տիրապետությունից: Բաղդադում սուլթանը զբաղվեց նաև քաղաքի վերականգնմամբ և կարգ ու կանոնի հաստատմամբ:

Սուլթանը Իրաքում չկազմակերպեց տեղական շիաների հալածանքներ: Ընդհակառակը, նրա հրամանով վերականգնողական աշխատանքներ կատարվեցին շիաների սրբավայրեր Քարբալայում, Էն-Նաջաֆում, Քազեմեյնում և Սամարրայում, նրանց հատկացվեցին վաքֆային կալվածքներ և այլն: Ավելին, համարելով, որ Իրաքը արդեն նվաճված է և պատկանում է իրեն, սուլթանը ձգտում էր հաշտություն կայացնել շիաների և սուննիների միջև:

Օսմանյան զորքերին հաջողվեց ընդամենը չորս տարվա ընթացքում՝ 1534–1538 թթ. իր ավարտին հասցնել Իրաքի նվաճումը: Եղան քաղաքներ, օրինակ Բասրան, որոնց կառավարիչները նախապես իրենց քաղաքների բանալիները ուղարկում էին սուլթանին, միաժամանակ գրավոր հայտնելով իրենց հնազանդությունը և Ստամբուլի գերիշխանության ճանաչումը: Իրաքի տարածքը բաժանվեց Օսմանյան կայսրությունում ընդունված վարչական միավորների՝ էյալեթների, գործողության մեջ մտցվեց հողօգտագործման և հարկահավաքման օսմանյան համակարգը:

1535 թ. գարնանը Սուլեյմանը հեռացավ Բաղդադից, այնտեղ թողնելով ենիչերիների մի կայազոր, իսկ ընդհանուր առմամբ Իրաքում տեղակայելով երեսուներկու հազարանոց մի բանակ:

Բաղդադից սուլթանը կրկին մեկնեց Թավրիզ, որտեղ ռազմական ավարի միջոցներից առատաձեռնորեն պարգևներ չնորհեց իր զորքերին: Մի քանի ամիս Թավրիզում մնալուց հետո նա մեկնեց Ստամբուլ և 1536 թ. հունվարին հանդիսավոր կերպով մուտք գործեց իր մայրաքաղաքը: Ի դեպ, Թավրիզից մեկնելուց առաջ նա ավարի մատնեց այդ հարուստ քաղաքը:

Այսպիսով, 1531–1535 թ. պատերազմների ընթացքում Թուրքերին չհաջողվեց Սեֆյան պետությանը հասցնել չոչափելի հարված: Բացառությամբ Բարձր Հայքի (Դերջան, Էրզրում, Կարս և այլն), ամբողջ Արևմտյան Հայաստանը, փաստորեն, շարունակում էր մնալ իրանական պետության ձեռքերում:

Սուլեյման I-ի առաջին իրանական արշավանքը նշանավորվեց Իբրահիմի անկմամբ, որը որպես մեծ վեզիր ավելի քան տասներեք տարի ծառայել էր սուլթանին: Այդ տարիների ընթացքում, բնականաբար, նա չէր կարող ձեռք չբերել թշնամիներ, որոնք նախանձով էին լցված նրա արագ բարձրացման, արքունիքում ձեռք բերած մեծ ազդեցության և կուտակած հսկայական հարստությունների համար: Նրա շրջապատում կային նաև մարդիկ, ովքեր ատում էին նրան իր քրիստոնեական արմատների համար (ծագումով նա հույն էր) և մեղադրում, որ քրիստոնեության նկատմամբ ունի համակրալից հակումներ և ընդհակառակը՝ անհարգալից վերաբերմունք իսլամի նկատմամբ:

Սակայն նրա անկման գլխավոր պատճառը հավանաբար այլ էր: Ամենայն հավանականությամբ Իրանում գտնվելու ժամանակ նա գերազանցել էր իր լիազորությունները՝ սերասկերի (զորքերի գլխավոր հրամանատար) իրեն չնորհված տիտղոսին ավելացնելով «սուլթանի» տիտղոսը: Դա առաջ էր բերել Սուլեյման I-ի դայրույթը: Երբ մեծ

վեզիրին ներկայացվեց մեղադրանք, վերջինս նշեց, որ այդ վայրերում սովորական երևույթ էր սուլթան տիտղոսի օգտագործումը: Նման ձևով էին դիմում նույնիսկ ամենաաննշան քրդական ցեղերի առաջնորդներին: Սակայն որքան էլ որ Իբրահիմի բացատրությունները տրամաբանական լինեին, սուլթան Սուլեյմանը ընդունելու էր կասկածամտությամբ ու դժգոհությամբ, մանավանդ որ Իրանից ուղարկված իր նամակներով մեծ վեզիրի դեմ նրբին սադրանքներ էր հյուսում և սուլթանին բորբոքում Իբրահիմի հին անձնական թշնամի, դեֆթերդար (գլխավոր գանձապահ) Իսկանդեր Չելեբին, որն արշավանքի ժամանակ ուղեկցում էր օսմանյան զորքերին:

Սակայն մեծ վեզիրը ևս քնած չէր: Նրան հաջողվում է վարկաբեկել Չելեբիին, իսկ ապա մեղադրանք ներկայացնել, որ նա սադրանքներ է նյութում սուլթան Սուլեյմանի դեմ և յուրացրել է խոշոր չափերի հասնող պետական միջոցներ: Ռազմա-դաշտային դատարանը նրան դատարապարտում է մահվան կախաղանի միջոցով:

Մահապատժից առաջ որպես դատապարտյալի վերջին ցանկություն Իսկանդերը խնդրում է իրեն տալ թուղթ ու գրիչ և գրում է, որ մեծ վեզիրը դավադրություն է նախապատրաստում իր միապետի դեմ: Քանի որ դա նրա մահվանից առաջ ասված խոսք էր, ապա համաձայն մահմեդականների սուրբ գրքի սկզբունքի, սուլթանը հավատաց Իբրահիմի մեղավոր լինելուն: Համաձայն թուրքական տարեգրությունների, նրա այդ համոզվածությունը ամրակայվեց նրանով, որ իբր սուլթանը երազում տեսել էր, որ իրեն է ներկայացել գլխին լուսապսակ ունեցող մի մեռած մարդ և փորձել է խեղդել իրեն:

Իբրահիմի դեմ սուլթանին տրամադրում էր նաև իր հարճերից մեկը՝ ռուս-ուկրաինական ծագում ունեցող Ռոքսոլանան, որը խանդով էր վերաբերվում սուլթանի և Իբրահիմի սերտ հարաբերություններին, ինչպես նաև մեծ վեզիրի ունեցած ազդեցությանը, քանի որ դա խոչընդոտ էր հանդիսանում իր սեփական փառասիրական հավակնություններին:

Բոլոր դեպքերում Սուլեյմանը որոշեց արագ գործել: Նա Իբրահիմին հետ կանչեց Թավրիզից և 1536 թ. գարնանային մի օր հրավիրեց մեծ սերալ իր հետ ընթրելու: Ընթրիքից հետո մեծ վեզիրը իր սովորության համաձայն, մնաց սուլթանի մոտ գիշերելու: Հաջորդ օրը նրա դիակը գտան սերալի դարպասների մոտ, խեղդամահ արված: Նրա հսկայական հարստությունը, ինչպես ընդունված էր մեծ վեզիրի մահվան դեպքում, բռնագրավվեց հարքունիս:

Կարծես թե իրագործվեց Իբրահիմի նախազգացումը, որն իր քաղաքական վերելքի առաջին օրերին դիմել էր սուլթանին, թախանձե-

լով, որ նա չափից ավելի իրեն վեր չբարձրացնի, ենթադրելով, որ դրան անխուսափելիորեն կհետևի գահավեժ անկումը:

Իրան կատարած առաջին արշավանքից հետո տաս տարի անց սուլթան Սուլեյմանը որոշեց կազմակերպել իր երկրորդ արշավանքը Սեֆևիների դեմ: Այդ տևական ընդմիջման պատճառը Հունգարիայում տեղի ունեցող իրադարձություններն էին, որոնք կրկին սուլթանի ուշադրությունը չեղեցին դեպի արևմուտք: 1540 թ. Զապոլյաիի մահվանից հետո, որը Ֆերդինանդի հետ միաժամանակ կիսում էր Հունգարիայում գահը, այդ երկրում ծայր էր առել գահաժառանգության համար թեժ պայքար և սուլթան Սուլեյմանը որոշել էր միջամտել այդ պայքարին: 1541 թ. թուրքական զորքերը գրավեցին Բուդան, որն իր շրջակայքով հանդերձ հայտարարվեց թուրքական նահանգ (Բուդայի փաշայություն) Ստամբուլից նշանակված փաշայի գլխավորությամբ, եկեղեցիները վերածվեցին մզկիթների և այլն: 1543 թ. թուրքերին հաջողվեց գրավել նաև Էսթերգոմ ամրոցը: Յոթ տարի շարունակ, 1540–1547 թթ., օսմանյան զորքերը համարյա անընդմեջ մարտեր էին մղում Հունգարիայում: Դա թուրք-ավստրիական ռազմական դիմակայության հետ կապված ռազմական գործողություններ էին: Հունգարական հողերի համար պայքարի այդ էտապն ավարտվեց 1547 թ. Էդիրնեում (Ադրիանապոլիս) կնքված պայմանագրով, ըստ որի հունգարական թագավորությունը բաժանվեց երեք մասի՝ Արևմտյան և Հյուսիսային Հունգարիան մնաց Հաբսբուրգների իշխանության ներքո, Կենտրոնական Հունգարիան կառավարվելու էր օսմանյան տեղապահի կողմից, իսկ արևելյան հողերը, այդ թվում նաև Տրանսիլվանիան, վասալական կախման մեջ ընկան սուլթանից:

1551–1562 թթ. և 1566–1568 թթ. ավստրո-թուրքական պատերազմները շարունակվեցին նոր թափով: Այդ պատերազմների հիմնական բովանդակությունը պայքարն էր Տրանսիլվանիայի համար: Նշված պատերազմների ժամանակ թուրքերը գրավեցին ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք խոշոր ամրոցներ՝ Թեմեշվարը, Էգերը, Սիգեթվարը և այլն: Հարկ է սակայն նշել, որ այդ տարիների պատերազմները էապես չփոխեցին Հունգարիայում Սուլեյման I և Հաբսբուրգների տիրույթների սահմանները:

Արևելքում Սեֆյան Իրանի դեմ սուլթան Սուլեյմանի ռազմական գործողությունները հեշտացան նրանով, որ այդ ժամանակ Թահմասպ I շահի դեմ պայքար էր սկսել իր եղբայրը՝ Ալխազ-միրզան, որը Շիրվանի կուսակալն էր:

1547 թ. նա ապստամբեց իր եղբոր դեմ և Շիրվանն ու Վրաստա-

նը ասպատակելուց հետո, երբ չահական զորքերի կողմից կրեց ջախ-ջախիչ պարտություն, Սև ծովի վրայով մեկնեց Ստամբուլ, խնդրելով Սուլեյման I-ի աջակցությունը: Ալխաս միրզան հորդորեց սուլթանին արշավանք կազմակերպել չահ Թահմասպի դեմ: Դա համընկնում էր սուլթանի փայփայած ծրագրերին և նա 1548 թ. գարնանը կազմակերպեց իր երկրորդ արշավանքը Իրան: Մայիսին օսմանյան զորքերը կրկին գրավեցին Թավրիզը: Սակայն Իրանի գահը գրավելու ուղղությամբ Ալխաս միրզայի հույսերը ի դերև ելան, որովհետև սուլթանը ընդառաջ չգնաց նրա այդ պահանջին: Այն բանից հետո, երբ զայրացած իշխանազունը հանդուգն վեճի մեջ մտավ սուլթանի հետ, վերջինս հրամայեց ձերբակալել նրան և հանձնել չահին: Հետևեց Թահմասպ I-ի հրամանը՝ նրան բանտարկել Կահկահե ամրոցում, իսկ որոշ ժամանակ անց (1549 թ.), նա հրամայեց սպանել հարազատ եղբորը:

1549 թ. ամռանը մեծ բանակի գլուխ անցած սուլթան Սուլեյմանը դարձյալ արշավանք կազմակերպեց դեպի Արևելք: Այս անգամ սուլթանական բանակի գլխավոր խնդիրն էր Վրաստանի նվաճումը, որը դարձավ Օսմանյան կայսրության նահանգներից մեկը՝ «վիլայեթ-ի Գյուրջիսթան» անունով:

Որպես այդ բոլորի պատասխան՝ 1552 թ. Թահմազ I-ը ասպատակ սփռեց Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում: Հրով ու սրով անցնելով Մեծ Հայքի տարածքով, զգլբաշները հասան մինչև Էրզրում և գրավեցին այն: Իր ճանապարհին չահը ամեն տեղ այրեց, քանդեց և ավերակ դարձրեց: Էրզրումը, Բասենը, Դերջանը, Բաբերդը, Երզնկան իրենց շրջակայքով հանդերձ մի ամբողջ տարի պարսիկ բռնավորի ասպատակության զոհ դարձան: Շահը մեծ թվով մարդկանց, որոնք մեծ մասամբ հայեր էին, գերեվարեց Պարսկաստան: Սեբաստացի ականատես պատմիչ Թադևոս վարդապետը վկայում է, որ չահ Թահմասպը Լենկ Թեմուրից ավելի չարիք գործեց Վանի և Երզնկայի կողմերը: Շահը արշավանքից վերադարձավ հարուստ ռազմական ավարով: Պատասխան հարվածը թշնամուն սուլթան Սուլեյմանը հասցրեց միայն 1554 թ. գարնանը: Սա սուլթանի երրորդ և վերջին պատերազմն էր Իրանի դեմ: Էրզրումը վերագրավելուց հետո թուրքական բանակը սրընթաց շարժվեց դեպի Կարս, այնուհետև մուտք գործեց Ատրպատական՝ ճանապարհին գրավելով Նախիջևանը, Երևանը և Սյունիքը: Այդ արշավանքի ժամանակ թուրքերը տիրացան նաև Վանա լճի ավազանի ողջ տարածքին: Խորանալով Իրանի տարածքում՝ սուլթանական զորքերը հասան մինչև Քաշան և Ղում, իսկ հարավում գրավեցին Սպահանը: Վրիժառությամբ լցված

ենիչերիական զորագնդերը հիմնահատակ կործանեցին ու ավերեցին նաև Արևելյան Հայաստանը: Այսպիսով, օսմանցիները թուրք պատմիչ Փեչևիի արտահայտությամբ, «արյան փոխարեն արյուն խմեցին»: «Հաղթական բանակի սարսափից,- վկայում է Փեչևին,- քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այն աստիճան էին ամայացել, որ տեսնողին սարսափ էին պատճառում»:

Սակայն չնայած ձեռք բերված հաջողություններին, թուրքերի համար չափազանց դժվար էր տևական ժամանակով ամրանալ այդ հեռավոր վայրերում, մանավանդ որ թշնամին «անորսալի» էր և իրենց ոչ մի կերպ չէր հաջողվում նրան պարտադրել ճակատամարտ: Չափազանց վտանգավոր ու անհեռանկար համարելով թուրքերի հետ ճակատ առ ճակատ բախումը, սեֆյանները կիրառելով «այրված հողի» մարտավարությունը, նահանջում էին երկրի խորն ընկած շրջանները:

Ստամբուլում և Թավրիզում սուլթանի և շահի մերձակա շրջապատում գնալով տիրապետող էր դառնում այն մտայնությունը, որ ռազմական ուժի օգնությամբ թշնամուն ծնկի բերելու փորձերը անպտուղ ու անարդյունք են: Ուստի կողմերը ավելի ու ավելի էին հակվում այն մտքին, որ անհրաժեշտ է սկսել հաշտության բանակցություններ: Պատահական չէ, որ երբ 1554 թ. Էրզրում ժամանեց պարսիկ դեսպանը զինադադարի և խաղաղության պայմանագրի առաջարկությամբ, սուլթանը անմիջապես տվեց իր համաձայնությունը:

1555 թ. մայիսի 29-ին Փոքր Ասիայի Ամասիա քաղաքում կնքվեց թուրք-իրանական հաշտություն, որն իր ավարտին հասցրեց թուրք-իրանական պատերազմների առաջին էտապը: Սեֆյանները հրաժարվում էին իրենց իրավունքներից Բաղդադի և Արաբական Իրաքի նկատմամբ, այն ճանաչելով որպես Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մաս: Օսմանցիները ստացան նաև Արևմտյան Հայաստանի Վասպուրականի շրջանը և Ալաշկերտի հովիտը, ինչպես նաև Արևմտյան Վրաստանը (Իմերեթը, Մենգրելիան, Գուրիան): Իրանն իր կազմում պահպանեց Ատրպատականը, Արևելյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը (Մեսխեթը, Քարթլին, Կախեթը): Կարսի նահանգը ճանաչվեց որպես չեզոք տարածք: Որոշվեց այդ նահանգը խպառ ավերել ու մարդաթափ անել, թշնամական երկու կողմերի միջև ամայի ու դատարկ տարածություն ստեղծելու համար:

Այսպիսով, տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի բաժանում Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև: Հայ և վրացի ժողովուրդները դատապարտված էին մի քանի դար շարունակ ստրկական կախման մեջ ընկնել երկու բռնատիրական պետություններից:

Ե՛վ Սուլեյմանը և՛ Թահմազ I-ը իրենց կառավարման հետագա տարիներին չխախտեցին Ամասիայի պայմանագիրը: Հիշյալ փաստաթղթի ստորագրումով սուլթան Սուլեյմանը փաստորեն ընդունում էր, որ Իրանի խորն ընկած շրջանների նվաճման ծրագիրը իրատեսական չէ: Ի դեպ, նմանատիպ իրադրություն ստեղծվել էր նաև Կենտրոնական Եվրոպայում, որտեղ սուլթանին այդպես էլ չհաջողվեց գրավել այդ երկրամասի սիրտը՝ Վիեննան և թափանցել Արևմտյան Եվրոպա:

Այսպես թե այնպես, սուլթան Սուլեյման I-ը կարողացավ իր կայսրության սահմանները չարժել դեպի Արևելք, ներառյալ նաև երաշխավորված հիմքի վրա նրան անցավ Բաղդադը, ստորին Միջագետքը, Տիգրիսի և Եփրատի գետաբերանը:

1538 թ. ամռանը, երբ Բարբարոսան իր նավատորմով Միջերկրական ծովում մարտնչում էր Կարլոս V-ի դեմ, Կարմիր ծովում օսմանյան մեկ այլ նավատորմ Եգիպտոսի փաշա Սուլեյման-ալ-Խադիմի («ներքինի») հրամանատարությամբ սուլթանից հրաման ուներ գործելու Հնդկական օվկիանոսի ջրերում, որտեղ պորտուգալացիները ձեռք էին բերել սպառնալից չափերի հասնող ռազմա-քաղաքական առավելություն: Նրանք ծրագրել էին նաև Արևելքի հետ առևտրի ուղիները Կարմիր ծովից և Պարսից ծոցից տեղափոխել Բարեհուսո հրվանդանի շուրջը անցնող ճանապարհի վրա, այդ առևտրի նկատմամբ լիակատար հսկողություն սահմանելու նպատակով: Դա մեծապես անհագստացնում էր սուլթան Սուլեյմանին, որը գտնում էր, որ առհասարակ Հնդկական օվկիանոսի ավազանից պորտուգալացի քրիստոնյաների վտարումը իր առաջնահերթ խնդիրն է, քանի որ այդ հեռաստաններում օսմանյան առևտուրը գնալով հյուծվում ու նվազում է, մեծ վնասներ պատճառելով գանձարանին:

Պորտուգալացիներն արդեն հասցրել էին գրավել Պարսից ծոցի մուտքի վրա իշխող Հորմուզ կղզին և մտադիր էին գավթել նաև Ադենը, որը տիրապետող դիրքեր էր գրավում Կարմիր ծովում: Այս բոլորի հետևանքով Սուլեյմանի գլխում հասունացավ դեպի ասիական ջրերը արշավանք կազմակերպելու գաղափարը:

Սուլեյման-փաշա ներքինին սուլթանից հրաման ստացավ իր տրամադրության տակ գտնվող նավատորմը, որը բաղկացած էր լավ զինված ու հանդերձավորված յոթանասուն ռազմանավերից, որոնց վրա գտնվում էին նշանակալից չափով ցամաքային զորքեր, անցնել գործի: Կարմիր ծովով շարժվելով ներքև, օսմանյան նավատորմը հասավ Ադեն, որտեղ Կաբութան-փաշա Սուլեյմանը հրամայեց իր նավի

նավակայմից կախել Ադենի տեղական չեյխին, քաղաքը մատնել կողոպուտի և նրա տարածքը վերածել թուրքական սանջակի: Այսպիսով, Ադենի գրավումով Կարմիր ծովի մուտքը անցավ թուրքերի ձեռքը (1538 թ.): Այնտեղից թուրքական նավատորմը ռազմա-ծովային արշավանք կազմակերպեց դեպի Հնդկաստանի ափերը: Սուլեյման-փաշան զորքեր հանեց Դիու կղզում, որտեղ պաշարման ենթարկեց պորտուգալական ամրոցը: Սակայն տեղեկանալով, որ պորտուգալացիները Գոայում հավաքում են մեծ նավատորմ Դիուին օգնություն ուղարկելու համար, թուրքական ծովակալը նավերին հրամայեց խարիսխները բարձրացնել ու հետ վերադառնալ: Պորտուգալական ռազմանավերի հետապնդումներից խուսափելու համար, օսմանյան նավատորմը թաքնվեց Կարմիր ծովում: Կաբութան-փաշան հրամայեց սպանել Եմենի կառավարչին և այդ երկրի տարածքը հայտարարեց օսմանյան տարածք՝ այն դնելով թուրքական վալիի տիրապետության տակ (1546 թ.):

Եմենը կցվեց թուրքական տիրույթներին, իսկ Հադրամաութի կառավարիչը դարձավ Սուլեյման I-ի վասալը: Սակայն Եմենի լեռնային շրջանների բնակչությունը չհնազանդվեց օսմանցիների իշխանությանը: 1547-1548 թթ. Եմենի և Հադրամաութի տարբեր մասերում տեղի ունեցան ապստամբություններ, որոնք սակայն ճնշվեցին թուրքական զորքերի կողմից:

Քանի որ սուլթան Սուլեյմանը պորտուգալացիներին նետել էր մարտահրավեր, դա պարտադրում էր նրան Հնդկական օվկիանոսի ավազանում դրսևորել ակտիվություն: Թուրքական նավատորմը բազմիցս ծովամարտի մեջ էր մտնում պորտուգալական նավերի հետ, կործանում և ոչնչացնում էր նրանց առևտրական կայանները՝ ֆակտորիաները:

1551 թ. սուլթանը Պարսից ծոց ուղարկեց 30 ռազմանավերից բաղկացած մի ուժեղ նավատորմ Հորմուզից պորտուգալացիներին դուրս մղելու համար: Այդ նավատորմի Կաբութան փաշա, հայտնի ծոգագնաց Փիրի Ռեյիսը Օմանի ծովում 1552 թ. գրավեց պարտուգալացիների խոշոր ամրոց Մասկաթը և ասպատակ սփռեց ու ավերեց Հորմուզի շուրջը գտնվող հողերը: Սակայն նրան այնուամենայնիվ չհաջողվեց գրավել Հորմուզի ամրոցը: 1554 թ. օգոստոսին Մասկաթից ոչ հեռու պորտուգալական նավատորմը ջախջախեց թուրքերին: Այդ շրջանում ծովերի վրա տիրապետությունը մնաց պորտուգալացիների ձեռքերում: «Զգրելի անհավատների» հետապնդումներից խուսափելու և նրանց ձեռքը չընկնելու համար անարգ կերպով լքելով իր նավատորմը և այն թողնելով թշնամուն, Փիրի Ռեյիսը երեք

նավերով, որոնք բեռնավորված էին հարուստ ավարով, ճողոպրեց և դուրս պրծավ նեղուցից: Վերադառնալով Եգիպտոս՝ նա անմիջապես ձերբակալվեց թուրքական իշխանությունների կողմից և սուլթանի հրամանով կահիրեում գլխատվեց: Նրա հարստությունները ուղարկվեցին Ստամբուլ՝ սուլթանին:

1540–1557 թթ. ընթացքում թուրքերը ռազմական գործողություններ էին իրականացնում Եթովպիայի (Հաբեշստանի) և Նուբիայի դեմ, ձգտելով նվաճել այդ երկրները: Սակայն դա նրանց չհաջողվեց:

Մինչդեռ այդ ընթացքում թուրքական ծովահենները իրենց հսկողությունն էին սահմանել ողջ հյուսիսաֆրիկյան ծովափի վրա, ի բացառյալ Օրանի, որը դեռևս մնում էր իսպանացիների ձեռքերում: Նրանք նույնիսկ համարձակություն ունեցան Ջիբրալթարի նեղուցով դուրս գալ Ատլանտյան օվկիանոս, որպեսզի հասնեն Կանարյան կղզիներ և հարձակումներ գործեն դեպի Նոր Աշխարհ մեկնող հարուստ բեռներով բեռնավորված իսպանական առևտրական նավերի վրա:

Կարլոս V-ը որոշել էր թուրքերին հարված հասցնել Հյուսիսային Աֆրիկայում: Հինգ հարյուր նավերից բաղկացած իսպանական նավատորմը քսանչորս հազար դեսանտային զորքերով 1541 թ. հոկտեմբերի 19-ին խարիսխ նետեց Ալժիր քաղաքի մոտ: Թուրքական տեղապահ Հասան-աղայի տրամադրության տակ կային տասը հազարից ոչ ավելի զինյալ պաշտպաններ: Հոկտեմբերի 25-ին Կարլոս V-ի զորքերը մոտեցան քաղաքի պարիսպներին պաշարումը սկսելու մտադրությամբ: Սակայն երեկոյան սկսվեց սարսափելի փոթորիկ: Իսպանական նավերի մեծ մասը պոկվելով խարիսխներից, բախվեցին ժայռերին և ջարդ ու փչուր եղան: Փոթորիկի ժամանակ իսպանացիները կորցրին իրենց ողջ հրետանին, տեղատարափ անձրևից և փոթորկից մարդիկ ուժասպառ էին եղել: Վառոդը թրջվել էր, որի հետևանքով հրազենը գործնականում չարքից դուրս էր եկել: Չնայած այդ բոլորին՝ Կարլոս V-ը և զորահրամանատար հերցոգ Ալբան որոշեցին գրոհել Ալժիրի վրա: Բոլոր գրոհները հետ մղվեցին գրոհողների համար մեծ կորուստներով: Կորցնելով հարյուր հիսուն նավեր և տասներկու հազար զինվորներ՝ Կարլոս V-ը ստիպված էր հրաման տալ ռազմական գործողությունները դադարեցնելու և տունդարձի վերաբերյալ: Այդ անհաջողությունից հետո Իսպանիան գործնականում հաշտվեց այն մտքի հետ, որ ընդմիշտ կորցրել է Ալժիրը:

1543 թ. սուլթան Սուլեյման I Բարբարոսային հրամայեց գրոհել իտալական ափերի վրա: Կաբութան-փաշան ավերածության մատնեց Նեապոլի և Սիցիլիայի ափերը, սարսափ ազդելով իտալական

քաղաքների վրա: Հոմը մատնված էր խուճապի: Գիշերները փողոց-ներում սահմանվել էր պարեկություն և շրջելով վառվող ջահերով, զինվորներն աշխատում էին թույլ չտալ, որ քաղաքի բնակչությունը լքի այն: Թուրքական նավատորմը հասել էր ֆրանսիական Ռիվիե-րայի ափերը: Մարսելում Բարբարոսան լավ ընդունելություն գտավ Բուրբոնների հերցոգի կողմից: Ֆրանսիացիները թույլատրեցին, որ Բարբարոսան իր ռազմակայանը տեղակայի Տուլոնում, որտեղից ֆրանսիացիները դուրս բերեցին տեղական բնակչության մի մասին: Քաղաքից հաճախ թուրքերը ասպատակ էին սփռում ֆրանսիական գյուղերի վրա, որպեսզի հափշտակեն գյուղացիների՝ թիանավերի վրա աշխատեցնելու համար: Միաժամանակ նրանք քաղաքի շուկա-յում վաճառում էին քրիստոնյա գերիների: Տուլոնում մուեղինները ա-զատորեն «Ալլահու աքբար»-ով հավատացյալ մահմեդականներին հրավիրում էին աղոթքի՝ ինչպես մահմեդական քաղաքում:

Թեև այդ բոլորը տհաճ էր Ֆրանսիայի Ֆրանցիսկ I թագավորի համար, սակայն առաջնորդվելով իր քաղաքական շահերով, նա այդ բոլորի նկատմամբ աչք էր փակում և առհասարակ հրաժարվում էր հանդես գալ համաքրիստոնեական դիրքերից՝ ընդդեմ թուրքերի: Ա-վելին, օսմանցիների հետ համատեղ նա հարձակում գործեց Իտալի-այի դարպասները հանդիսացող Նիցցայի վրա, որը պաշտպանում էր Կարլոս V դաշնակից հերցոգ Սավոյացին: Քաղաքը վերցվեց գրոհով, կողոպտվեց ու հիմնահատակ կործանվեց, հակառակ նրան, որ քա-ղաքի հանձնման վերաբերյալ նախապես կնքվել էր համաձայնություն, ըստ որի թուրքերը համաձայնություն էին տալիս չվնասել քաղաքին:

1554 թ. գարնանը Ֆրանցիսկ I-ը կաշառքի միջոցով ազատվեց ի-րեն ներվայնացնող «դաշնակցից», քանի որ որոշել էր հաշտվել Կար-լոս V-ի հետ և համագործակցել նրա հետ: Ստանալով խոշոր կա-շառք, Բարբարոսան և նրա նավատորմը հեռացան Տուլոնից, ուղղու-թյուն վերցնելով դեպի Ստամբուլ: Դա Խայրեդդին Բարբարոսայի վերջին ռազմարշավն էր: Երկու տարի անց, արդեն ծերության հա-սած կաբության-փաչան դողէրոցքից մահացավ Ստամբուլի իր պա-լատում:

1555 թ. Սուլեյման I-ի զորքերը ներխուժեցին Սուդան: 1556-1557 թթ. աֆրիկյան այդ երկիրն անցավ սուլթանի տիրապետության տակ: Այնուհետև օսմանյան զորքերը ռազմակալման ենթարկեցին Աֆրիկայի ողջ Կարմիրծովյան ափը: 1558-1559 թթ. Սուլեյման I-ը մի քանի արշավանք կազմակերպեց դեպի Եթովպիա և իր հսկողությու-նը սահմանեց Հյուսիսային Էրիթրեայի նկատմամբ:

1572–1589 թթ. թուրք-եթովպական պատերազմն ընթանում էր փոփոխակի հաջողությամբ: Հաբեշ ժողովրդի կորովի դիմադրության հետևանքով թուրքերին չհաջողվեց Եթովպիայից ձեռք բերել տարածքներ:

XVI դ. 30–70-ական թվականներին Օսմանյան կայսրությունը պայքար էր մղում Թունիսում ևս իր տիրապետությունը կատարելապես հաստատելու համար: 1534 թ. ութսուն ռազմանավերից բաղկացած թուրքական նավատորմը Խայրեդդին Բարբարոսայի հրամանատարությամբ մոտեցավ Թունիս քաղաքին և կարճ ճակատամարտից հետո Խաֆսիդների մայրաքաղաքն ընկավ: Թունիսի մնացած քաղաքները առանց մարտի հանձնվեցին թուրքերին, որոնք տարբեր քաղաքներում տեղակայեցին զորամասեր: 1535 թ. թուրքերի դեմ հանդես եկան Թունիսի բեդվինական ցեղերը, սակայն Քայրուանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանյան հրետանին խուճապային փախուստի մատնեց վաչկատուն բեդվիններին, որոնք նույնպես ճանաչեցին Սուլեյման I-ի իշխանությունը:

Այդ պահին Թունիսյան գործերին միջամտեց Կարլոս V-ը: Նա Թունիսի ափերն ուղարկեց չորս հարյուր նավերից բաղկացած մի մեծ նավատորմ և երեսուն հազարանոց բանակ: 1535 թ. հուլիսին Կարլոսի զորքերը թուրքերի նկատմամբ տարան հաղթանակ: Հուլիսի 21-ին նրանք գրավեցին Թունիս քաղաքը, անխնա կողոպուտի մատնեցին այն, ավերեցին մզկիթները և կազմակերպեցին ահավոր կոտորած, չխնայելով ոչ կանանց, ոչ երեխաներին և ոչ էլ ծերերին: Կարլոս V տասնյակ հազարավոր մարդկանց քշեց գերության: Մայրաքաղաքի գրավումից հետո իսպանացիները ձեռնամուխ եղան Թունիսի ողջ հյուսիս-արևելքը, այդ թվում նաև Բիզերտա քաղաքը նվաճելուն: 1535 թ. օգոստոսին Կարլոս V-ի նավատորմը հեռացավ Թունիսից, ծովափնյա մի շարք քաղաքներում թողնելով իսպանական զորամասեր:

Այդ իրադարձություններից հետո մոտ երեք տասնամյակների ընթացքում Թունիսի համար թուրք-իսպանական մրցակցությունը առանձին դադարներով շարունակվում էր: Միայն 1551 թ. օգոստոսին Տրիպոլիտանիան և նրա կենտրոն Տրիպոլի քաղաքը գրավելուց հետո թուրքերը կարողացան վերականգնել իրենց տիրապետությունը Թունիսում:

Միջերկրական ծովի նկատմամբ կատարյալ հսկողության իրականացմանը սուլթան Սուլեյմանին խանգարում էր Մալթա կղզի-ամրոցի անկախ գոյությունը, որը հանդիսանում էր քրիստոնյա-ասպետների նշանավոր հենակետը: Այդ ասպետները կրկին ուժեր հա-

վաքելով, սպառնալիք էին ստեղծել Թուրքերի համար: 1565 թ. մայիսին օսմանյան զորքերը պաշարեցին Սենթ-Էլմա ամրոցը: Ենիչերիները ալիք առ ալիք գրոհում էին հակառակորդի վրա, սակայն ասպետները, որոնց թիվը չէր անցնում մի քանի հարյուրից, մարտնչում էին անօրինակ խիզախությամբ: Ի վերջո Սենթ-Էլմա ամրոցն ընկավ: Այնտեղ ներխուժած ենիչերիները գտան միայն Սուրբ Հովհաննեսի միաբանության ինը կենդանի մնացած ասպետների: Սակայն Մալթայի համար պայքարը դեռ իր ավարտին չէր հասել: Երկու կողմերն էլ կռվում էին անզուսպ կրոնական մոլեռանդությամբ համակված և ապշեցուցիչ արիությամբ: Ասպետների համառ դիմադրության հետևանքով թուրքական բանակի բարոյական ոգին սկսեց անկում ապրել և նրանց մեջ եղած եռանդը սկսեց մարել: Բացի այդ, մոտենում էր սեպտեմբերը իր անձրևներով ու ցուրտ եղանակով: Օսմանցի զինվորներն այլևս բարոյալքված էին և չէին ցանկանում պատերազմել: Մալթայի չորսամսյա պաշարումը թանկ նստեց թուրքերի վրա. նրանք կորցրին քսան հազար զինվոր, այդպես էլ չհասնելով հաղթանակի:

Ասպետներին օգնելու համար կղզու ափերին մոտեցավ իսպանական մի խոշոր ռազմական նավատորմ Դոն Գարսիա դե Տոլեդոյի հրամանատարությամբ: Ենթարկվելով լավ մարզված ու զինված իսպանական հետևակի անկասելի գրոհին, թուրքերը երերացին ու փախուստի դիմեցին: Շուտով թուրքական ռազմական նավատորմը հարկադրված էր հեռանալ Մալթայից, ուղղություն վերցնելով դեպի Բոսֆոր: Ճանապարհին ևս թուրքերը կրեցին մեծ կորուստներ նրանց հետապնդող Մալթայի ասպետների և իսպանացիների կողմից:

Այսպիսով, սուլթանի ջանքերը ողջ Միջերկրական ծովի ավազանի նկատմամբ հսկողություն սահմանելու ուղղությամբ ավարտվեցին ձախողմամբ:

Մալթա կղզու գրավման ձախողումը և օսմանցիների կրած անփառունակ պարտությունը քրիստոնյաներից, ծանր ապրումներ պատճառեց սուլթանին: Տեղեկանալով այդ աղետի մասին՝ Սուլեյմանը դառնորեն բացականչել էր. «միայն ինձ հետ իմ բանակները կարողանում են հասնել փայլուն հաղթանակների»:

3. ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆ ԿԱՆՈՒՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մալթայի գրավման ձախողումը տեղի ունեցավ մի այնպիսի ժամանակ, երբ Սուլեյման I-ը մոտենում էր իր կյանքի ճանապարհի ա-

վարտին: Մալթան կոտրեց սուլթանին: Առանց այն էլ Ռոքսոլանայի մահվանից հետո իր անձնական կյանքում բոլորովին մենակ, սուլթանը մեկուսացավ ու քաշվեց իր մեջ, դարձավ էլ ավելի ինքնամփոփ ու լռակյաց, դեմքի ու աչքերի ավելի թախծոտ ու մելամաղձոտ արտահայտությամբ: Նա իրեն պահում էր մարդկանցից հեռու: Այլևս ոչ մի բան չէր հուզում և ուրախացնում նրան: Նա դարձել էր անտարբեր փառքի ու երկրային հաճույքների նկատմամբ: Ժամանակակիցները վկայում են, որ երբ կաբութան-փաշա Փիալեն Ջերբեում և Տրիպոլիում իր տարած փայլուն հաղթանակներից հետո իր նավատորմով վերադարձավ Ստամբուլ, «նրանք, ովքեր այդ մեծ հաղթանակի ժամին տեսան Սուլեյմանի դեմքը, նրանում չնկատեցին ուրախության չնչին իսկ հետքեր»:

Հիվանդ ու հոգնած Սուլեյմանը որքան ծերանում էր, այնքան դառնում էր կասկածամիտ: Նա այլևս ոչ մեկին չէր վստահում: Անկախ իր տարիքից ու առողջական վատ վիճակից, նա որոշեց կազմակերպել մի նոր հաղթական արշավանք իր խոցված հպարտությանը գեթ ինչ-որ չափով հագուրդ տալու համար: Սկզբում նա երդվեց հաջորդ տարի գարնանը անձամբ գրավել Մալթան: Սակայն իր մտադրությունը փոխելով, որոշեց ևս մեկ անգամ արշավանք կազմակերպել Հունգարիայի և Ավստրիայի դեմ, որտեղ Հաբսբուրգների թագավոր Ֆերդինանդի ժառանգորդ Մաքսիմիլիան II-ը ոչ միայն հրաժարվում էր մուծել իրենից պահանջվող հարկը, այլև հաճախակի արշավանքներ էր կազմակերպում Հունգարիայում օսմանյան տիրույթների վրա:

1566 թ. մայիսի 1-ին Սուլեյմանը վերջին անգամ մի հսկայական բանակի գլուխ անցած Ստամբուլից ուղղություն վերցրեց դեպի Հունգարիա: Դա նրա հրամանատարության ներքո կազմակերպված տասներեքերորդ արշավանքն էր: Սակայն սուլթանը այլևս չէր կարողանում ձի նստել և նրա ծառաները նրան տանում էին փակ գահավորակով: Սեպտեմբերի 5-ին օսմանյան բանակը գրոհով վերցրեց Սիգեթվարի անառիկ ամրոցը: Սակայն Սուլեյմանին վիճակված չէր տեսնելու իր այդ վերջին հաղթանակը: Նույն գիշերը իր վրանում նա մահացավ: Մեծ վեզիր Սոքոլլուն բանակից թաքցրեց սուլթանի մահը, մտավախություն ունենալով, որ կսկսվի խուճապ: Նույնիսկ պատմվում է, որ այդ գաղտնիքը երևան չգալու համար մեծ վեզիրը խեղդեց սուլթանի բժշկին: Սոքոլլուն գաղտնիքը չբացահայտեց ևս մի քանի շաբաթ, սպասելով Սուլեյմանի որդու՝ գահաժառանգ Սելիմի գալստյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Քյութահիայում: Սուլեյ-

ման I-ի կառավարման շրջանում նրա որդիներ Բայազիդը և Մուս-տաֆան սպանվել էին դեռ հոր կենդանության ժամանակ, որի մեջ ոչ պակաս չափով մեղավոր էր սուլթանի սիրեցյալ կինը՝ Ռոքսոլանան («Հարեմ-սուլթանը»), որը իշխանության ուղի էր հարթում իր որդի Սելիմի համար: Կառավարությունը գործում էր այնպես, կարծես սուլթանը կենդանի լիներ: Սոքոլլուի վրանից դուրս էին գալիս հրամաններ, իբր սուլթանի ստորագրությամբ, կատարվում էին պաշտոնյաների նշանակումներ, պարգևատրումներ և այլն, դարձյալ սուլթանի անունից:

Միայն այն ժամանակ, երբ Սոքոլլուն լուր ստացավ, որ իշխանազուն Սելիմը Քյութահիայից արդեն հասել է Ստամբուլ, որպեսզի ստանձնի գահը, մեծ վեզիրը բանակին վերջապես տեղեկացրեց, որ սուլթանը մահացել է:

Այսպիսով, 74 տարեկան հասակում իր ավարտին հասավ տասներորդ օսմանյան սուլթանի կյանքի ճանապարհը: Նրան համարում են սուլթաններից մեծագույնը, որի օրոք Օսմանյան կայսրությունը ըստ էության ձեռք բերեց համաշխարհային տերության կարգավիճակ և հասավ իր հզորության ու փառքի գագաթնակետին:

Սակայն Սուլեյմանի կառավարման շրջանը հանդիսացավ նաև մի տեսակ ջրբաժան գիծ օսմանյան կայսրության պատմության մեջ այն առումով, որ նրանով ավարտվեց այդ կայսրության վերելքի ու ծաղկման շրջանը, որից հետո նշմարվեցին նահանջի ու վայրէջքի առաջին նշանները:

Հիրավի, թե՛ պետության ներքին կյանքում և թե՛ արտաքին հարաբերությունների մեջ արդեն նկատվում էր այլասերման ու քայքայման որոմի առկայությունը: Հենց այդ ժամանակվանից սկսվեց մի էտապ, երբ կայսրությունը իր հասած բարձրունքներից սկսեց նահանջել, իսկ այնուհետև աստիճանաբար, սակայն համառ հետևողականությամբ, գահավիժել ցած:

Հանրագումարի բերելով սուլթան Սուլեյման I-ի կյանքի և գործունեության շրջանը՝ պետք է նշել հետևյալը. Արևմուտքի կողմից «Հիասքանչ» հորջորջված այդ սուլթանը իր սեփական օսմանցի-հպատակների համար ոչ միայն զորահրամանատար էր, այլև օրենսդիր: Նա չէր ձգտում ստեղծելու նոր իրավական համակարգ, այլ աշխատում էր արդիականացնել հինը, եղածը՝ նոր ժամանակների պայմաններին համապատասխան: Նա միաժամանակ ճշտում, կոդիֆիկացնում և ավելի պարզեցնում էր սովորական իրավունքի և պրակտիկայի խճողված համակարգը: Սուլեյմանը հրապարակեց նոր օ-

րենքների ժողովածու («Կանուննամե»), որի մեջ ներառված օրենքները վերաբերում էին երկրի պետական կյանքի համարյա բոլոր բնագավառներին, սկսած հարկային համակարգից ու հողային հարաբերություններից, վերջացրած կառավարման համակարգով: Նա իրականացրեց նաև նահանգապետերի ու աստիճանավորների ընդհանուր զտում: Նրանք, ովքեր մեղավոր էին ճանաչվել դաժանությունների, չարաշահումների, շորթումների, կաշառակերության և անարդարության մեջ, կամ դրսևորել էին անիրազեկություն ու անգործունեություն, ազատվեցին զբաղեցրած պաշտոններից կամ պատժվեցին:

Սուլթան Սուլեյմանի կառավարման համակարգը բաղկացած էր հատուկ պատրաստություն անցած մեծ թվով երիտասարդ մարդկանցից, որոնք համարյա բացառապես ունեին քրիստոնեական ծագում: Վենետիկյան բայլո (դեսպան) Բարբարոն գրում էր. «Դա իսկապես հատուկ ուսումնասիրության արժանի փաստ է, որ հարուստ խավերը, զինված ուժերը, կառավարությունը, կարճ ասած Օսմանյան կայսրության ողջ պետությունը հիմնված է և հանձնված այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք բոլորը մինչև վերջին մարդը ծնվել է Քրիստոսի հավատով»:

Սակայն անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից, նրանք բոլորը համարվում էին սուլթանի ծառաները: Սուլթանն իրականացնում էր պետության բարձրագույն քաղաքական իշխանությունը:

Կառավարչական այդ կառույցին զուգահեռ գոյություն ուներ նաև զուտ մահմեդական ինստիտուտ, որը բաղկացած էր միայն այնպիսի անձանցից, որոնք ծնվել էին իբրև մահմեդական: Այդ խմբի մեջ էին մտնում դատավորներն ու իրավագետները, աստվածաբանները, հոգևորականները, գիտնական-ուլեմները, կրոնական ուսուցիչները և այլն: Նրանք բոլորը հանդիսանում էին իսլամի «սրբազան օրենքի» ավանդույթների պահապաններ, նրանց ձեռքերում էր կենտրոնացած ողջ կայսրության տարածքում լուսավորության, կրոնի և արդարադատության կառույցները: Սուլթանը իրավասու չէր փոփոխության ենթարկելու «սրբազան օրենքի»՝ շարիաթի սկզբունքները և չեղվելով նրա նորմերից ընդունել օրենքներ: Սակայն նա իրավասու էր արագ փոփոխվող իրադրության պայմաններում իր ուղղումներն ու ճշտումները մտցնել օրենքի կիրառման կարգի մեջ:

Օսմանյան ընդհանուր իրավունքը ոչ մահմեդականներին ճանաչում էր որպես «հանդուրժվող անհավատներ», որոնք մահմեդականների համեմատ գտնվում էին ստորադաս վիճակում: Շարիաթը թույլ չէր տալիս հավասարություն մահմեդականների և ոչ մահմեդական-

ների միջև: Մահմեդականները դիտվում էին որպես «տիրողներ»: Բնականաբար դա հասարակական կառույցի մեջ մտցնում էր կոնֆլիկտային իրավիճակ, որը տարածվում էր նաև քաղաքական իշխանության ոլորտները:

Սուլթան Սուլեյմանի ժամանակ Օսմանյան կայսրությունը շարունակում էր իրենից ներկայացնել որպես տիպիկ աստվածապետական պետություն: Իր այդ բնույթը նա չփոխեց ընդհուպ մինչև իր գոյության վերջը: Սուլթան Սուլեյմանի կառավարման տարիներին ոչ միայն ընդարձակվեցին կայսրության սահմանները, այլև տեղի ունեցավ բնակչության աճ՝ հասնելով մոտ 25 միլիոն մարդու:

Սուլեյմանը ոչ միայն աշխարհիկ առաջնորդ էր, այլև խալիֆ, հոգևոր առաջնորդ. նա հանդիսանում էր իսլամական աշխարհի հովանավոր, հավատի պահապան, նրա սրբազան օրենքի մեկնաբան ու իրագործող: Ողջ մահմեդական աշխարհը նայում էր սուլթան Սուլեյմանին՝ որպես «սրբազան պատերազմի» առաջնորդի:

Սուլթան Սուլեյմանը որոշակի իմաստով բարեփոխիչ էր: Նրա բարեփոխումները որոշ դրական արդյունքներով հանդերձ կրում էին սահմանափակ բնույթ: Դրանցից շատերը իրական կյանքից կտրված, այդ կյանքի պահանջները արտացոլելուց շատ հեռու գտնվող բարեփոխումներ էին:

Սուլթան Սուլեյմանը ձգտում էր մայրաքաղաքը՝ Ստամբուլը վերածել իր ժամանակի լավագույն քաղաքներից մեկի: Նրա օրոք մայրաքաղաքում կառուցվեցին վիթխարակերտ մզկիթներ՝ սլացիկ աշտարակներով և սքանչելի պալատներ վերնախավի համար: Մշակվեց նոր արևելյան ճարտարապետական ոճ, որը հանդիսանում էր երկու քաղաքակրթությունների՝ քրիստոնեության ու իսլամի մի խառնուրդ: Սուլեյմանի ժամանակներում հայտնի ճարտարապետ էր հայազգի «միմար» (ճարտարապետ) Սինանը, որը պատերազմների ժամանակ կատարում էր զինվորական ինժեների գործ՝ հանդիսանալով անփոխարինելի մասնագետ պաշտպանողական ամրություններ, զինագործարաններ, կամուրջներ և ջրատարներ կառուցելու բնագավառում: Հիսուն տարեկան հասակում նա ծառայության հրավիրվեց Սուլեյմանի մոտ որպես գլխավոր ճարտարապետ: Նա XVI դարի ճարտարապետական ժառանգությունը հարստացրել է կառուցելով հարյուրավոր մզկիթներ, դամբարաններ և այլ շինություններ: Նրա այդ կերտվածքներից ամենահայտնին ու հռչակավորը սուլթան Սուլեյմանի անձնական կայսերական մզկիթն էր՝ «Սուլեյմանիե» մզկիթը և նույնանուն դամբարանը: Սինանը կարողացավ Կ. Պոլսում կյանքի կոչել ճարտարապետական մի ոճ, որը հանդիսանում էր արևելյան և արևմտյան մշակույթների մի սինթեզ:

Սուլեյմանի ժամանակներում Իրանի մշակութային ազդեցությունը օսմանյան մշակույթի նկատմամբ, որը սկիզբ էր առել դեռևս Մեհմեդ Ֆաթիհի ժամանակներից, գերակշռում էր գրականության բնագավառում: Սուլեյմանի ակտիվ հովանավորության ներքո դասական օսմանյան պոեզիան, շաղախված պարսկական ավանդույթներով, հասավ զարգացման մի այնպիսի բարձր մակարդակի, որ երբեք չէր եղել նախորդ ժամանակներում: Ինքը՝ սուլթանը, ևս օժտված էր բանաստեղծական տաղանդով և գրում էր բանաստեղծություններ «Մուհիպպի» գրական կեղծանվան տակ:

Հարկ է նշել, որ իր կայացման ու հզորության շրջանում Օսմանյան պետությունը եվրոպական աշխարհի հետ չուներ սերտ առնչություններ, ավելին, եվրոպական պետությունների հետ իր մշակութային և քաղաքական շփումների պահպանումը նա համարում էր իր համար նվաստացուցիչ: Ուստի այդ շփումները հասցված էին նվազագույնի: Անդրադառնալով այդ հարցին, ծագումով հայ ֆրանսիացի հայտնի թուրքագետ Մուրաջյան դ'Օսսոնը նկատել է, որ մահմեդականների հպարտությունը ծնունդ է առել ամեն մի օտարերկրյա բանի նկատմամբ անգիտությունից ու արհամարհանքից և ուժեղացել է կրոնական նախապաշարմունքներով: Կրոնը պատ էր բարձրացնում Մուհամմեդ մարգարեի հետևորդների և այլ ժողովուրդների միջև, երկրագունդը բաժանելով երկու մասի՝ որի մի մասը կազմում են մահմեդական երկրները («դար-ալ-իսլամ»), իսկ մյուս մասը՝ թշնամական կամ պատերազմի երկրները («դար-ալ-հարբ»): Հենց այդ իսլամական սկզբունքի համաձայն, եվրոպական աշխարհը ընկալվում էր որպես պատերազմի ու թշնամական աշխարհ, որի դեմ անհրաժեշտ էր անընդհատ պայքար մղել:

Օսմանյան կայսրության դիվանագիտական հարաբերությունները եվրոպական տերությունների հետ սկզբնավորվել են 1454 թվականից: Այդ ժամանակաշրջանից սկսած ոչ կանոնավոր կերպով, այլ դիպվածաբար, որևէ կարևոր խնդիր լուծելու առաքելությամբ, Ստամբուլ էին ժամանում եվրոպական տարբեր երկրների դիվանագետներ: Նրանց խնդիրն էր նաև իրենց կառավարություններին տեղեկություններ հաղորդել Օսմանյան պետության գործերի վիճակի մասին, կնքել պայմանագրեր և այլն: Ստամբուլում քրիստոնյա տերությունների դեսպանները սուլթանական արքունիքի հետ ունենում էին հազվագյուտ շփումներ: Ընդունված արարողակարգի համաձայն, նրանք կարող էին սուլթանին ու մեծ վեզիրին տեսնել միայն երկիրը ժամանելու ու մեկնելու ժամանակ: Նրանք իրավունք ունեին իրենց

հավատարմագրերը հանձնել միայն ռեյիս-էֆենդիին, որը դրանք ուղարկում էր ըստ պատկանելության: Օտարերկրյա դիվանագետները ստիպված էին իրենց գործերը վարել թարգմանիչների միջոցով, որոնք այդ կարգի պատճառով դիվանագիտական աշխարհում ձեռք բերեցին մեծ կշիռ: Սովորաբար թարգմանիչները հույն ֆանարիոթներն էին ու հայերը: Ոչ մահմեդական կամ այլադավան դիվանագետները երբեք չէին հասնում դիվանագիտական բարձր պաշտոնների, եթե նույնիսկ ծառայության ընթացքում ապացուցել էին իրենց ընդունակությունները, նվիրվածությունը և հավատարմությունը:

Օսմանյան արարողակարգը նախատեսում էր մի շարք կանոններ, որոնք նվաստացուցիչ էին դեսպանների համար: Սովորական երևույթ էր ոչ միայն նրանց ծեծելը ինչ-ինչ սխալների կամ թերացումների համար, այլև բանտարկությունը: Դեսպաններին համարելով աղքատ երկրների ներկայացուցչիներ՝ սուլթանը գանձարանից նրանց հատկացնում էր բավականին նշանակալի ապրուստի միջոցներ դրամով ու սննդամթերքներով, ինչպես նաև կեցության վայր: Այդ սովորույթը կամ կարգը վերացվեց միայն այն բանից հետո, երբ եվրոպական երկրներում հիմնվեցին թուրքական մշտական դիվանագիտական առաքելություններ: Պատերազմների ժամանակ օսմանյան կառավարությունը պատերազմող կողմի դեսպաններին բանտարկում էր Ստամբուլի Յոթաշտարականի ամրոցում:

Սուլթան Սուլեյման I-ի օրոք օսմանյան պետության դիվանագիտական հարաբերությունները եվրոպական պետությունների հետ ընդունեցին ավելի աշխույժ բնույթ: Այդ միապետի ժամանակաշրջանը նշանավորվեց նաև նրանով, որ առաջին անգամ օտարերկրյա պետության հետ կնքվեց քաղաքական պայմանագիր: Ավստրիայի և այնտեղ կառավարող Հաբսբուրգների դինաստիայի դեմ պայքարի ընդհանուր շահերը դրդեցին Սուլեյմանին դաշնակցային հարաբերությունների մեջ մտնել Ֆրանսիայի հետ: Սուլեյման I-ը քրիստոնյաների հետ դաշինքին վերաբերվում էր առանց կրոնական նախապաշարմունքի՝ հետապնդելով իր քաղաքական շահերը և իր համար օգտակար համարելով մեկ քրիստոնյա պետության թուլացումը մյուսի օգնությամբ: Կային նաև նման դաշինքը հիմնավորող հոգեբանական պահեր: Սուլեյմանը իրեն համարում էր «սուլթանների սուլթան» և Հաբսբուրգների դեմ պայքարում Ֆրանսիային ցուցաբերվող օգնությունը համարում էր պարգև այն բանի դիմաց, որ «դիմել են մեծագույնին»:

XVI դարում թուրքերը Անգլիան անվանում էին «մեծ վիլայեթ»: Այդ շրջանում Անգլիան դիմում էր սուլթանին ինչպես «մեծ թուրքին»

(The Great Türk), այն դեպքում, երբ սուլթանը դիմում էր անգլիական թագուհուն իբրև «անգլիական վիլայեթի թագուհու»: 1535 թ. մեծ վեզիր Իբրահիմ-փաշան Ֆրանսիայի Ֆրանցիսկ I թագավորի հետ ստորագրեց «խաղաղության, բարեկամության և առևտրի մասին» պայմանագիր, որը ֆրանսիացիներին հատկացնում էր մի շարք կարևոր արտոնություններ ու իրավունքներ: Պայմանագիրը նախատեսում էր սուլթանի և ֆրանսիական թագավորի միջև համագործակցություն Հաբսբուրգների միապետի դեմ: Ֆրանսիական վաճառականները իրավունք էին ստանում ազատ տեղաշարժվել Օսմանյան կայսրության ողջ տարածքում և ազատ առևտուր անել, սուլթանին վճարելով նույնքան մաքսատուրքեր, որքան վճարում էին իրենք՝ թուրք վաճառականները: Փոխադարձության հիմքի վրա նման արտոնություններ ստանում էին նաև թուրքերը Ֆրանսիայում: Պայմանագիրը ճանաչում էր ֆրանսիական հյուպատոսական դատարանների իրավազորությունը կայսրության տարածքում: Ֆրանսիացիները ստանում էին արտաերկրայնության (էքստերիտորիալության) իրավունք, այսինքն՝ նրանք իրավասու էին իրենց մեջ եղած վեճերը քննարկել իրենց իսկ միջավայրում, հյուպատոսների կամ դեսպանների մասնակցությամբ և իրենց երկրների օրենքներով: Ֆրանսիացիները ստանում էին նաև Օսմանյան կայսրությունում կատարյալ կրոնական ազատություն, նրանք իրավասու էին իրենց հովանավորությունը տարածել այդ պետության ողջ կաթոլիկ բնակչության նկատմամբ: Երկու պետությունների հպատակները ազատ իրավունք էին ստանում նավարկել, ճանապարհորդել, բնակություն հաստատել, ձեռք բերել սեփականություն դաշնակիցներին պատկանող երկրներում: «Եվրոպացին գիտեր,- նշում է Լեոն,- թե ինչ են օրենքները Թուրքիայում, ուստի ձեռք բերեցին արտաերկրայնության իրավունք, այսինքն՝ ֆրանսիացին թուրքական հողի վրա կարող էր դատվել միմիայն իր հյուպատոսի ձեռքով, եթե գործ ունենար մի ուրիշ ֆրանսիացու հետ: Թուրք պաշտոնյաներին հրամայված էր ի կատար ածելու հյուպատոսների վճիռները»:

Ֆրանցիսկ I-ի հետ կնքված վերոհիշյալ պայմանագիրը բաժանված էր առանձին գլուխների՝ «կապիտուլների»: Այդ բառից էլ օտարերկրացիների կողմից ստացած արտոնություններն ու իրավունքները կոչվեցին «կապիտուլյացիաներ», իսկ պայմանագրերը՝ «կապիտուլյացիոն պայմանագրեր»:

Սուլեյման I-ի կնքած պայմանագիրը չի կարելի համարել անիրավահավասար: Այն համարվում էր սուլթանի կողմից ֆրանսիացինե-

ին տրված չնորհ: Քանի որ Ղուրանը թշնամի է հայտարարում ամեն մի օտարերկրացու, ապա պարզ է, ոչ ոք չի հանդգնի առանց նախազգուշական միջոցների հայտնվելու մուսուլմանական երկրում: Եվրոպական առաջին վաճառականները, որոնք իրենց վրա էին վերցրել այդպիսի ժողովրդի հետ առևտուր անելու ռիսկը, փորձում էին նախ իրենց համար ապահովել բացառիկ պայմաններ և արտոնություններ, որոնք սակայն, հետագայում տարածվում էին նրանց ամբողջ ազգի վրա: Այդպիսին է կապիտալյուցիաների ծագումը: Դրանք արտոնություններ են, որ միակողմանի կերպով կառավարությունը չնորհել է, որը հետևաբար, կարող էր իր հայեցողությամբ վերացնել դրանք: Բայց հետագայում դրությունը փոխվեց. կապիտուլյացիաները դարձան Օսմանյան կայսրության պայմանագրային պարտավորություններ, որ նրա կառավարությունը իրավունք չուներ վերացնել միակողմանի կարգով:

Այսպիսով, Սուլեյման I-ի ժամանակ սկիզբ դրվեց կապիտուլյացիոն ռեժիմի հաստատմանը: Դա ևս վերստին գալիս էր հավաստելու, որ հիշյալ սուլթանի օրոք հարաբերությունները Եվրոպայի հետ կատարում էին առաջին քայլերը, ընդ որում պայմանագրային պարտավորությունների հիմքի վրա:

* * *

Անկասկած սուլթան Սուլեյման I Կանունիի կառավարման շրջանը օսմանների պետության վերելքի ժամանակաշրջանն էր: Նրա օրոք հսկայածավալ նվաճումների չնորհիվ ավարտվեց օսմանյան պետության վերածումը կայսրության, որը սկզբնավորվել էր սուլթան Մեհմեդ Ֆաթիհի ժամանակներից: XV-XVI դարերը համարվում են Օսմանյան պետության հզորության գագաթնակետը: Նշված հարյուրամյակներում այդ կայսրությունը դարձավ ոչ միայն աշխարհի ամենաուժեղ մահմեդական պետությունը, այլև պետությունների շարքում հզորագույններից մեկը: Նոր նվաճումների հետևանքով Օսմանյան կայսրության տիրույթները ընդարձակվելով տարածվեցին երեք մայրցամաքների՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի վրա: Այդ վիթխարի պետության կազմի մեջ էին մտնում Ասիայում ողջ Անատոլիան, Արևմտյան Հայաստանը, Քրդստանը, Արևմտյան Վրաստանը, Արաբիան (Արաբական թերակղզին), Եմենը, Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Միջագետքը, Հորդանանը, Եվրոպայում՝ Ալբանիան, Բոսնիան, Հերցեգովինան, Բուլղարիան, Դալմացիան, Թրակիան, Հունգարիան, Հունաստանը, Մակեդոնիան, Մոլդավիան, Վալախիան, Պոդոլիան,

Տրանսիլվանիան, Սերբիան, Սև ծովի հյուսիսային ափը մինչև Կուբան և նրա արևելյան ափի մի մասը, Ազովը, Ղրիմը, Կիպրոս և Կրետե կղզիները, Աֆրիկայում՝ Եգիպտոսը, Ալժիրը, Թունիսը, Տրիպոլիտանիան և Կիրենաիկան (ներկայումս Լիբիա): Այդ վիթխարի կայսրության տարածքը կազմում էր վեց միլիոն քառակուսի կիլոմետր: XVI դարում նրա բնակչությունը անցնում էր 25 միլիոն մարդուց: (Համեմատության կարգով նշենք, որ այդ նույն ժամանակ Ֆրանսիայի բնակչությունը 16 միլիոն էր, Իտալիայինը՝ 12.5–13 միլիոն, Իսպանիայինը՝ 8 միլիոն): Այդ նվաճումների հետևանքով Թուրքական պետությունը ռազմական ավարի և գավթված ընդարձակ հողերի հաշվին աներևակայելի չափերով հարստացավ: Հզոր կայսրությունը ձեռք բերեց խոշոր միջազգային կշիռ: Եվրոպական պետությունները սկսել էին նրա հետ փնտրել դաշինք կամ առնվազն փորձում էին ձեռք բերել նրա չեզոքությունը:

Թուրքական գաղութացումը, սակայն, բացառությամբ Բալկանների մի քանի շրջանների, Թուրքերի զանգվածային վերաբնակեցման բնույթ չէր կրում, այլ սահմանափակվում էր Թուրքական կայազորների կամ սուլթանի տեղական վասալների զորքերի տեղավորմամբ:

XVI դարում Օսմանյան կայսրությունը տիպիկ ռազմաավատական պետություն էր: Հարյուրամյակներ տևած պատերազմների ժամանակ Թուրք-օսմանների մոտ ձևավորվել էր նպատակների միասնություն:

Նրանք իրենց ամբողջ եռանդը տրամադրել էին բանակ ստեղծելուն: Հիրավի, Օսմանյան պետությունը ծնվել էր պատերազմում և ապրում էր պատերազմի համար: Նույնիսկ կրոնը Թուրք-օսմանների կողմից օգտագործվում էր ռազմա-քաղաքական նպատակներով: Թուրք պատմաբան Խալիլ Ինալջիքը իրավացիորեն նշում է, որ «XVI դարում օսմանյան կառավարիչները խալիֆաթին տվեցին նոր իմաստ՝ այն կապելով «անհավատների» դեմ սրբազան պատերազմ մղելու գաղափարին»: Իսկապես, կայսրության ողջ տարածքում Թուրք-իսլամական բնակչության շրջանում ամենուրեք թևածում էր պատերազմական ոգին: Երկրի ողջ տարածքը հագեցված էր զինված ուժերով, նույնիսկ խաղաղ ժամանակաշրջանում: Բանակի հզորությունն անհրաժեշտ էր ոչ միայն նոր հողեր նվաճելու, այլև գրավված հողերը պահպանելու և ընդվզող ժողովուրդների շարժումները ճնշելու համար:

Թեև XVI դարում Օսմանյան կայսրությունը վերելքի մեջ էր, սակայն ներքին կյանքում ապրում էր ցնցումներ: Արդեն դարի առաջին կեսին կայսրությունում տեղի ունեցան խոշոր ապստամբություններ, որոնց հիմնական պատճառը հարկային լծի ուժեղացումն էր: Գյուղա-

ցիությունը քայքայվում և աղքատանում էր նաև անընդմեջ պատերազմների հետևանքով, որոնք տևական ժամանակ նրանց կտրում էին իրենց տնտեսությունից: Բազմապիսի հարկերի ու տուրքերի տակ կքած գյուղացիական զանգվածները լքում էին իրենց գյուղերն ու հողերը, փախչում էին լեռները, քաղաքները և այլն: Մասնակիորեն հարկերի աճը կապված էր արծաթի արժեզրկման հետ, որի հետևանքով այն ժամանակվա Թուրքական հիմնական դրամական միավորը՝ աքչեն, ևս կտրուկ արժեքազրկվեց:

Որպեսզի դադարեցվի գյուղացիության փախուստը իրենց բնակավայրերից, XVI դ. 20-ական թվականներին ընդունվեց օրենք, որը ֆեոդալներին իրավունք էր տալիս ստիպողական ձևով հետ վերադարձնել փախստական գյուղացիներին, եթե նրանք իրենց բնակության նոր վայրում ապրել էին 15 տարուց պակաս, իսկ քաղաքներում՝ 20 տարուց պակաս: Օրենքի այդ դրույթը չէր տարածվում այն գյուղացիների վրա, որոնք փախել էին Ստամբուլ: Այդ օրենքը, բնականաբար, նշանակալիորեն սահմանափակում էր գյուղացիության անձնական ազատությունը, սակայն ոչ այնպիսի չափերով, ինչպես Արևելյան Եվրոպայի ճորտ գյուղացիներինը:

Գյուղացիության դժգոհությունը դրսևորվում էր տարբեր ձևերով. դրանցից մեկն էլ այն էր, որ Անատոլիայում լայնորեն տարածվեցին իսլամի շիական ուղղության տարբեր հերձվածներ, որի հետևորդները հաճախ բարձրացնում էին ապստամբություններ: Առաջին այդպիսի ապստամբություններից մեկը 1508 թ. Թոքաթի շրջանում բռնկած ապստամբությունն էր ղզլբաշ* Նուր-էդ-դինի (Նուր Ալի-խալիֆա) գլխավորությամբ: Ապստամբները ձգտում էին ազատագրվել օսմանյան սուլթանների լծից և դառնալ իրանական շահերի հպատակներ: Նուր Ալի-խալիֆային նույնիսկ հաջողվեց գրավել Թոքաթ քաղաքը: Ապստամբությունը շարունակվեց մի քանի տարի և ի վերջո ճնշվեց սուլթանական զորքերի կողմից:

1511 թ. Անթալիայի և նրա հարակից շրջաններում բռնկեց էլ ավելի հուժկու մի ապստամբություն, որը դարձյալ գլխավորում էր թյուրքական Թեքքելլյու ցեղից շիա-ղզլբաշ Կարաբիյիք-օղլուն, որն

---

* Այդ ժամանակ «ղզլբաշ», այսինքն՝ «կարմրագլուխ» էին անվանում բոլոր նրանց, ովքեր հետևորդ էին իսլամի շիական ուղղությանը: Ղզլբաշ անվանումը շրջանառության մեջ էր մտել դեռևս Սեֆյան շահ Իսմայիլ I-ի ժամանակներից, երբ նրա զինակիցներն ու հետևորդները իրենց գլուխների փաթթոցի (չալմայի) վրա կարում էին 12 կարմիր երիզներ, որոնք խորհրդանշում էին շիաների կողմից սրբագործված տասներկու իմամներին:

ուներ «Շահ-կուլու»՝ այսինքն՝ «շահի ստրուկ» մականունը (նկատի ունենալով Սեֆյան շահ Իսմայիլ I)։ Թուրքական աղբյուրները նրան անվանում են «Շայթան-կուլու» («սատանայի ստրուկ»)։ Ապստամբները կարողացան իրենց դրոշի տակ հավաքել ավելի քան 20 հազար մարդու և հաղթանակներ տանել մի շարք ազդեցիկ ֆեոդալների նկատմամբ։ Շահ-կուլուային մասնավորապես հաջողվեց ջախջախել Անատոլիայի բեյլերբեյ Կարագյոզ Ահմեդ-փաշայի զորքերին, որը գերվեց ապստամբների կողմից և մահապատժի ենթարկվեց։

Սուլթանը ստիպված էր մեծ վեզիրի գլխավորությամբ մի խոշոր բանակ ուղարկել ապստամբների դեմ, որոնք համառ դիմադրությունից հետո ընկճվեցին։ Մարտի դաշտում զոհվեց նաև ապստամբության ղեկավարը՝ Շահկուլուն։

Ութ տարի անց, 1519 թ. Թուրխալի, Թոքաթի և Ամասիայի շրջաններում ապստամբության դրոշ պարզեց ոմն Չելյալ։ Վերջինս իրեն անվանում էր Շահ-վելի (սուրբ շահ), և նույնիսկ «մահդի» (մեսիա)։ Նրա շուրջը հավաքվեցին տասնյակ հազարավոր դժգոհներ, որոնք կազմեցին մի հսկայական ապստամբական բանակ։ Այս անգամ ևս սուլթանական ուժերի կողմից ապստամբությունը ճնշվեց անօրինակ դաժանությամբ։ Բոլոր նրանք, ովքեր ընկան պատժիչների ձեռքը, անխտիր գլխատվեցին։ Սակայն ապստամբության ղեկավարի՝ Չելյալի անունը դարձավ հասարակ անուն. այդ ժամանակվանից սկսած թուրքական աղբյուրներում բոլոր ժողովրդական ապստամբությունները սկսեցին կոչվել «Չելյալիլիք», այսինքն՝ «Չելյալիների շարժումներ»։

1526 թ. Կիլիկիայում բռնկեց խոշոր ապստամբություն Կալենդեր Չելեբի (Կալենդեր-օղլու) անունով մեկի գլխավորությամբ։ Նա իր առջև նպատակ էր դրել ոչնչացնել օսմանյան դինաստիան և ստեղծել կառավարող նոր հարստություն։ Նա իրեն անվանեց Կալենդեր շահ։ Արագորեն ծավալվելով, շարժումն ընդգրկեց ողջ Կենտրոնական Անատոլիան՝ հասնելով մինչև նրա արևելյան սահմանները։ Կալենդերը, որի դրոշի ներքո հավաքվել էին բազմահազար ուժեր, մի շարք խոշոր պարտություններ հասցրեց սուլթանական զորքերին։ Ապստամբները, օրինակ, գլխովին ջախջախեցին Անատոլիայի բեյլերբեյի զորքերին։ 1527 թ. Ստամբուլը ապստամբների դեմ ուղարկեց խոշոր պատժիչ ուժեր, որոնք շարժումը խեղդեցին արյան մեջ։ Ճակատագրական դեր խաղացին ապստամբությանը հարած ֆեոդալները, որոնց մեծ վեզիրը կաշառեց և շրջեց կառավարության կողմը։

Փոքր Ասիայում ապստամբությունների նոր ալիք սկսվեց XVI դ.

վերջին և XVII դ. սկզբին, որը ծայրից ծայր ցնցեց այդ ընդարձակ երկրամասը: 1595 թ. սկսվեց իր հզորությամբ ու թափով մի աննախընթաց հուժկու շարժում, որը թուրքական աղբյուրներում նույնպես ստացել է «ջելյալիների խռովություններ» անվանումը: Նրանում առավել եռանդուն մասնակցություն ցուցաբերեցին այսպես կոչված լևենդները՝ ապադասակարգայնացված գյուղացիները, որոնք կորցրել էին իրենց հողերը:

Այսպիսով, սուլթան Սուլեյման I Կանունիի կառավարման վերջին շրջանում, ինչպես նաև դրան հաջորդող առաջին տարիների ընթացքում, արդեն բոլոր նշանները կային, որ Օսմանյան կայսրությունը թևակոխում է իր լճացման շրջանը, որին անխուսափելիորեն հետևելու էր աստիճանական վայրէջքը: Օսմանյան տիրապետող շրջանները փորձում էին դրությունից ելք գտնել նաև նոր պատերազմների ու նվաճումների ճանապարհով:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՀԱՆՋԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՕՍՄԱՆՅԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԽՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նախապես սուլթան Սուլեյման I-ը որոշել էր գահը հանձնել իր Մուստաֆա անունով որդուն, որը մարտերում բազմիցս դրսևորել էր խիզախություն և անձնազոհություն: Նա ենիչերիական բանակի սիրելին էր և մեծ հեղինակություն էր վայելում օսմանյան վերնախավի շրջանում: Սակայն Սուլեյմանի սիրեցյալ կինը՝ Ռոքսոլանան, որից ծնվել էին երեք որդիներ՝ Սելիմը, Բայազիդը և Ջհանգիրը, ձգտում էր օսմանյան գահի վրա նստեցնել նրանցից մեկնումեկին, բայց ոչ երբեք Մուստաֆային, որի մայրը՝ Գյուլբահարը Ռոքսոլանայի հարեմական ախոյաններից էր: Այդ խորամանկ ու հմայիչ սլավոն կինը վարպետ սադրանքներով կարողացավ Մուստաֆայի նկատմամբ հրահրել հոր կասկածամտությունը, որի հետևանքով Սուլեյմանի հրամանով նրա համր ծառաները, որոնց պաշտոնի մեջ էր մտնում նաև մարդ սպանելը, հոր ներկայությամբ խեղդամահ արեցին Մուստաֆային:

Ռոքսոլանայի կրտսեր որդին Ջհանգիրը, աչքի չէր ընկնում ոչ առողջ բանականությամբ և ոչ էլ ամուր առողջությամբ (նա բնությունից սապատավոր էր): Շուտով նա հիվանդացավ և հրաժեշտ տվեց կյանքին: Իսկ քանի որ նրա մյուս երկու եղբայրները՝ Սելիմը և Բայազիդը ատելությամբ էին լցված միմյանց նկատմամբ, հայրը որոշեց նրանց բաժանել միմյանցից, կայսրության տարբեր մասերում նրանց նշանակելով որպես զորքերի հրամանատարներ: Սակայն միառժամանակ անց, եղբայրները զենքով դուրս եկան միմյանց դեմ, օգտագործելով իրենց տրամադրության տակ եղած բանակները: Այդ արյունահեղ ընդհարումներից 1559 թ. հաղթող դուրս եկավ Սելիմը, որը Կոնիայի մոտակայքում պարտության մատնեց Բայազիդին: Վերջինս

իր չորս որդիների և իրեն հավատարիմ մնացած զորքերի հետ ապաստան գտավ Սեֆյան շահ Թահմասպի մոտ: Շահամոլ բռնակալը որոշեց իր հյուրին վաճառել Սուլեյմանին: Դեսպանների միջոցով սուլթանի և շահի միջև երկու տարի շարունակ գնում էր գաղտնի սակարկություն Բայազիդի գլխի շուրջը, որի նկատմամբ Ստամբուլում ինչ-ինչ մարդիկ Սուլեյմանին ներշնչել էին, որ նա խռովարար է և ցանկանում է գավթել հոր գահը: Սուլթանը առաջարկում էր կամ Բայազիդին իրեն հանձնել, կամ նրան մահապատժի ենթարկել Իրանում:

Իսկ շահը սկզբում սին հույսեր էր փայփայում, որ իր մոտ գտնվող պատանդին կարող է օգտագործել սուլթանից միջագետքյան հողերը հետ ստանալու համար, ուստի մերժում էր սուլթանի առաջարկները: Բայց համոզվելով, որ դա դատարկ հույս է, որոշեց գեթ բարձրացնել Բայազիդի գլխի գինը, սուլթանին մշտապես պատասխանելով, որ իբր «մահմեդական հյուրընկալության օրենքները» թույլ չեն տալիս, որ ինքը վերադարձնի Բայազիդին կամ սպանի նրան: Սակայն երբ կողմերը պայմանավորվեցին գնի շուրջը, շահը «մահմեդական հյուրընկալությունը» դրեց մի կողմ, քաղաքական վտարանդուն հանձնելով Ստամբուլից սուլթանի կողմից հատուկ ուղարկված դահճին՝ այդ նողկալի ու քստմնելի արարքի և ստորության համար Սուլեյման I-ից ստանալով չորս հարյուր հազար ոսկի: 1561 թ. Բայազիդը հենց Իրանի հողում խեղդամահ արվեց, իսկ նրա զինվորներին շահն ընդգրկեց իր բանակի շարքերը: Խեղդամահ արվեցին նաև նրա չորս որդիները: Նրա հինգերորդ որդուն, որն ընդամենը երեք տարեկան էր, Սուլեյմանի հրամանով նույն ճակատագրին արժանացրին Բուրսայում: Այսպիսով, դեպի սուլթանական գահը ճանապարհ հարթվեց Սելիմի համար, որը գահակալեց Սելիմ II անունով (1566–1574):

Նոր սուլթանը ցածրահասակ ու գեր, կարմիր դեմքով ու պղտոր աչքերով մեկն էր: Նա շատ արագ ստացավ «Սելիմ հարբեցող» մականունը: Ծույլ էր, անբարո, սանձարձակ, ինքն իրենով և իր հաճույքներով տարված մի ոչնչություն: Նա գործնականում չէր օգտվում ոչ իր նախարարների և ոչ էլ հպատակների հարգանքից: Ցանկություն չունենալով անձամբ իր վրա կրել պատերազմների դժվարությունները և հետաքրքրություն չդրսևորելով պետական գործերի նկատմամբ՝ նոր սուլթանը դրանք թողնում էր ուրիշների, գլխավորապես մեծ վեզիրի տնօրինությանը, իսկ ինքը իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում սերալում, իր մերձավոր ընկերների և շողոքորթների շրջանում: Առհասարակ նա վարում էր աննպատակ կյանք՝ դույզն-ինչ չափով չմտահոգվելով կայսրության ներկայի և ապագայի

համար: Հենց սրա օրոք սկսվեց Օսմանյան կայսրության դեռևս դանդաղ, սակայն նկատելի վայրէջքը:

Սելիմ II-ը ամուսնացած էր պետական գործչի անուրանալի բարձր հատկանիշներ ունեցող մեծ վեզիր Սոքոլլու-փաշայի աղջկա հետ: Ինչպես նշվեց, ըստ էության պետության կառավարումն իրագործվում էր հենց այդ մարդու կողմից, որը ծագումով բոսնիացի սլավոն էր: Այսպիսով Սելիմ II-ը, պետության կառավարման բնագավառում ստեղծեց մի նախադեպ, որը կիրառություն գտավ նաև հետագա հարյուրամյակներում. երբ ուժեղ մեծ վեզիրը, հաճախ ծագումով քրիստոնյա, իր արդյունավետ գործունեությամբ հավասարակշռում էր թույլ սուլթանին և մանավանդ ճգնաժամային պահերին պետության ղեկը փաստացի կերպով վերցնում էր իր ձեռքը: Այսպիսով, Սուլեյման I-ի կառավարման շրջանին բնորոշ տեմպը շնորհիվ մեծ վեզիրի համարյա անփոփոխ կերպով պահպանվեց: Սոքոլլուն սուլթան Սուլեյմանի ժամանակ ևս մեծ վեզիր էր և ուներ պետության ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ խնամքով մշակված ծրագրեր: Առհասարակ այդ եռանդուն ու ընդունակ մարդը տարված էր փառասիրական հեռուն գնացող մտքերով: Ուներ ծրագրող ուղեղ: Նրա գլխում առկա էին բազմապիսի մեծ ու փոքր ծրագրեր: Նրա առաջին գործը եղավ Հունգարիայի դեմ Սուլեյմանի սկսած ռազմարշավը իր ավարտին հասցնելը: 1568 թ. Սոքոլլուն Հաբսբուրգների կայսրի հետ կնքեց պատվավոր հաշտություն ութ տարի ժամանակով, որն անփոփոխ էր թողնում տարածքային ստատուս-քվոն: Այնուհետև մեծ վեզիրը որոշեց առաջին անգամ օսմանյան բանակները չարժել նոր ուղղությամբ՝ դեպի Ռուսաստան: Դա մի ժամանակաշրջան էր, երբ միասնական Մոսկովյան պետությունը գնալով հզորանում ու վերելք էր ապրում: Մինչ այդ, XV դարում հանձինս ռուսների, թուրքերն իրենց համար չէին տեսնում ոչ մի սպառնալիք: 1492 թ. սկսած նրանց նույնիսկ թույլատրվում էր ազատ առևտուր անել կայսրության տարածքում: Սակայն երբ 1547 թ. Իվան Ահեղը ստանձնեց Ռուսաստանի գահը, իրադրության մեջ տեղի ունեցավ կտրուկ փոփոխություն: Նոր ցարը ձգտում էր իր պետությունը վերածել կայսրության: Նրա պապը՝ Իվան III-ը, ամուսնացել էր Բյուզանդիայի վերջին կայսր Կոնստանդին Պալեոլոգոսի եղբոր աղջկա հետ, որը նրան առիթ տվեց հայտարարելու իր հավակնությունների մասին Արևելյան Հռոմեական կայսրության նկատմամբ: Այդ հավակնությունների ցայտուն դրսևորում հանդիսացավ այն, որ որպես իր իշխանության խորհրդանիշ Իվան III-ը վերցրեց բյուզանդական երկգլխա-

նի արծիվը: Այսպիսով, XVI դարում Մոսկովյան մեծ իշխանությունը վերածվեց միասնական և ուժեղ պետության:

Ստանձնելով Ռուսական պետության գահը, Իվան Ահեղը նվաճողական քաղաքականություն ծավալեց դեպի հարավ՝ թաթարական խաների տիրույթները: 1556 թ. նա գրավեց Աստրախանը և այն միացրեց իր պետությանը: Այնուհետև արշավանք կազմակերպեց Ազովի ուղղությամբ և դեպի Ղրիմի ափերը: Դրանով նա ուղղակի ոտնձգություն էր անում օսմանյան շահերի գոտու նկատմամբ, մանավանդ որ Ղրիմը հանդիսանում էր սուլթանի վասալ Ղրիմի խանի տիրույթը:

Գիտակցելով ռուսական վտանգի ահագնությունը՝ Սոքոլլուն որոշեց միջամտել իրադարձություններին: Նա մշակել էր գործողությունների մի վիթխարածավալ ծրագիր, որի նպատակն էր դադարեցնել ռուսների ծավալումը դեպի հարավ և միաժամանակ նպաստել թուրքերի առաջխաղացմանը դեպի արևելք: Ըստ այդ ծրագրի՝ Դոնի և Վոլգայի միջև ընկած ամենանեղ հատվածում կառուցվելու էր մի ջրանցք, որը կոչված էր միացնելու երկու ծովերը՝ Սև ծովը, որն արդեն ամբողջապես գտնվում էր օսմանցիների հսկողության տակ և ըստ էության դարձել էր թուրքական ներքին լիճ և Կասպից ծովը: Դա հնարավորություն կտար Կասպից ծովի վրայով, շրջանցիկ ճանապարհով, ներթափանցել Իրան՝ շրջանցելով Ատրպատականի և Թավրիզի վրայով երկար ու դժվարին ցամաքային ճանապարհը դեպի Միջին Արևելք: Դժվար չէ նկատել, որ այդ նախագծով թուրքերը ծրագրել էին նոր, ավելի կարճ ու հարմարավետ ճանապարհ բաց անել իրենց համար դեպի Կովկաս, Իրան ու Կենտրոնական Ասիա: Ավելորդ չէ նշել, նաև, որ այդ ջրանցքի կառուցման գաղափարը ծնվել էր դեռևս տասնութ դար առաջ և նրա հեղինակը Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Սելևկոս Նիկադորն էր: Կասկածից վեր է, որ այդ ծրագիրը Օսմանյան կայսրության համար կարող էր բաց անել տարբնույթ ռազմավարական հեռանկարներ, ինչպես նաև մեծ հնարավորություններ առևտրի բնագավառում: Հիշյալ ծրագրի բաղկացուցիչ մասն էր հանդիսանում նաև ստորին Պովոլժիեի նվաճումը:

1568 թ. Սոքոլլուն Սև ծովով մեծաթիվ զորքեր ուղարկեց օսմանցիների տիրապետության տակ գտնվող Ազով քաղաք-ամրոցը: Միաժամանակ մեծ վեզիրի հուշումով նույն թվականի գարնանը Սելիմ II-ը իր վասալ, Ղրիմի խան Դևլեթ-Գիրեյին ուղարկեց հրաման՝ արշավանք կազմակերպելու դեպի Աստրախան, իր հետ վերցնելով Կաֆայում գտնվող թուրքական զորամասը: Սուլթանի մեկ այլ հրամանով թիանավերով Ազով ուղարկվեց երեք հազար մարդ ջրանցքը փորե-

լու համար: Թուրքական զորքերը և հորատողները Դոն գետով նավերով մեկնեցին Դոն և Վոլգա գետերի միջև գտնվող այն վայրը, որտեղ փորվելու էր ջրանցքը: Միաժամանակ 1569 թ. ողջ ձմռանը և գարնանը իրականացվում էին նախապատրաստական աշխատանքներ արշավանքը սկսելու համար: 1569 թ. հունիսի սկզբին Ազովից ու Կաֆայից մի քանի հազար ենիչերիներ, որոնց ուղեկցում էին նաև ղրիմյան ու նողայական թաթարները, ռազմերթի դուրս եկան դեպի Աստրախան: Դա լինելու էր Օսմանյան կայսրության և ռուսական պետության առաջին ռազմական ընդհարումը:

Թուրքական բանակը Աստրախանին մոտեցավ առանց պաշարողական հրետանու և բավարար քանակով սննդամթերքի ու հանդերձանքի պաշարի, քանի որ նրանց չհաջողվեց դրանք Դոնից տեղափոխել Վոլգա գետը: Մոտենալով Աստրախանին՝ օսմանցիներն անմիջապես սկսեցին գրոհել քաղաք-ամրոցի վրա, սակայն հանդիպելով հուժկու դիմադրության, հենց սկզբից ունեցան մեծ թվով զոհեր: Սեպտեմբերի կեսերին թուրքերը փորձեցին հորատել ամրոցի պարիսպների տակ, դրանք պայթեցնելու նպատակով, սակայն դա նրանց չհաջողվեց ջրի մոտիկության պատճառով:

Շուտով պաշարվածներին օգնության հասավ ռուսական մի ուժեղ ջոկատ իշխան Սերեբրյաննոյի հրամանատարությամբ, որն անմիջապես թիկունքից հարվածեց հակառակորդին: Թուրքերն ունեցան խոշոր կորուստներ:

Մոտենում էր ձմեռամուտը ռուսական ցրտերով հանդերձ, մինչդեռ թուրքական բանակի բարոյական ոգին գնալով անկում էր ապրում: Ենիչերիների շրջանում, որոնք չէին ցանկանում ձմեռել Աստրախանի ամրոցի պատերի տակ, սկսվեցին խլրտումներ, որոնք սպառնում էին վերածվել խռովության: Նման պայմաններում թուրքական զորահրամանատար Ղասըմ-փաշան սեպտեմբերի վերջին ստիպված էր հանել Աստրախանի պաշարումը և զորքերին տալ հետդարձի հրաման դեպի Ղրիմ: Մեկնումից առաջ թուրքերը կրակի ճարակ դարձրին Աստրախանի քաղաքամերձ շրջանները:

Այսպես կոչված «կաբարդինյան ճանապարհով» և Հյուսիսային Կովկասի անջուր տափաստաններով նահանջելու ժամանակ թուրքական բանակը մեծ կորուստներ կրեց ջրի պակասի և սովի պատճառով: Մեկ ամիս անց, հոկտեմբերի վերջին, այդ նոսրացած բանակը մոտեցավ Ազովին, որտեղից նրա մնացորդներին ծովով ուղարկեցին Կաֆա: Սակայն ճանապարհին նրանց սպասում էր նոր փորձություն: Ուժեղ փոթորիկի պատճառով նավերից շատերը խորտակվեցին՝ ի-

րենց հետ ջրասույզ անելով մեծ թվով ենիչերիների: Վերջին հաշվով Ստամբուլ հասան միայն աստրախանյան արշավանքի ընդամենը յոթ հարյուր մասնակիցներ: Ձախողման մատնվեց Սոքոլլու-փաշայի ծրագիրը ոչ միայն Աստրախանն ու Կազանը ռուսներից գրավելու, այլև Դոնից Վոլգա ջրանցք բացելու ուղղությամբ: 1570 և 1571 թթ. թուրքերի հրահրումով Ղրիմի թաթարները ավերիչ հարձակումներ գործեցին ռուսական հողերի վրա: 1571 թ. ամբողջովին այրվեց Մոսկվան: Դրանից հետո Իվան IV ցարը տեղեկացրեց Ղրիմի խանին, որ պատրաստ է նրան զիջելու Աստրախանը, եթե նա համաձայնվի հաշտություն կնքել Ռուսաստանի հետ: Սակայն այդ առաջարկը համարելով ոչ բավարար, Ղրիմի խանը մերժեց այն: 1572 թ. ղրիմյան և նոգայական թաթարները երկրորդ անգամ հարձակվեցին Մոսկվայի վրա, սակայն այս անգամ ոչ միայն հանդիպեցին կազմակերպված դիմադրության, այլև Մոսկվայից 45 վերստ հեռավորության վրա կրեցին ջախջախիչ պարտություն:

Ռազմական գործողությունները դադարելուց հետո Իվան Ահեղը 1569 թ. վերջին Ստամբուլ ուղարկեց իր ներկայացուցիչ Իվան Նովոսելցևին՝ խաղաղության պայմանագիր կնքելու առաջարկով: Կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիր, ըստ որի թուրքերը պահպանում էին իրենց տիրապետությունը Ղրիմի խանության նկատմամբ և հրաժարվում էին Աստրախանի նկատմամբ ունեցած հավակնություններից:

Սոքոլլուի մոտ սևեռուն գաղափար էր նաև Արևելքի հետ առևտրի ընդլայնումը: Ըստ այնմ, նա ծրագրեց իր երկրորդ ծավալուն նախաձեռնությունը՝ Սուեզի պարանոցի երկայնքով ջրանցքի կառուցումը, որը Միջերկրական ծովը կապելու էր Կարմիր ծովի հետ, որտեղից այնուհետև ճանապարհը չարունակվելու էր դեպի Հնդկական օվկիանոս: Սակայն այդ ծրագրի իրագործումը ևս խափանվեց Եմենում բռնկած հուժկու ապստամբության հետևանքով, որը թուրքերի կողմից ճնշվեց մեծ դժվարությամբ:

2. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄՂԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ XVI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVII ԴԱՐՈՒՄ

1570 թ. Սելիմ II-ը կազմակերպեց ծովային արշավանք վենետիկցիներին պատկանող Կիպրոս կղզին նվաճելու համար: Սկսվեց թուրք-վենետիկյան պատերազմ, որի ասպարեզ դարձան վենետիկցիների հսկողության տակ գտնվող Էգեյան և Հոնիական ծովերում

գտնվող կղզիները և Ադրիատիկ ծովի արևելյան ափերի շրջանում Վենետիկի հողերը: Այդ պատերազմում վենետիկցիներին աջակցում էին Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ը և Հռոմի պապը: Վերջինիս նախաձեռնությամբ կազմավորվեց «Սրբազան դաշինք», որի շուրջը համախմբվեցին Վենետիկը, Իսպանիան, Մալթան, Ջենովան, Սավոյան և Իտալիայի մի շարք այլ պետություններ՝ օսմանցիների դեմ խաչակրաց նոր արշավանք սկսելու համար:

1570 թ. թուրքական ցամաքային զորքերը Լալա Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ և ծովային ուժերը Փիալե փաշայի գլխավորությամբ ափ իջան Կիպրոսում: Թուրքերի խոստումներից խաբված զգալի թվով հույներ սկսեցին համագործակցել նրանց հետ: Թուրքական հրամանատարության գլխավոր խնդիրն էր գրավել վենետիկյան երկու ամրոցներ՝ Նիկոզիան և Ֆամագուստան: Վեց շաբաթյա պաշարումից հետո Նիկոզիան հանձնվեց: Քաղաքի կայազորի կենդանի մնացած պաշտպանները թուրքերի կողմից սրի քաշվեցին, իսկ քաղաքը մատնվեց կողոպուտի ու ավերածության, եկեղեցիները վերածվեցին մզկիթների, երկսեռ երիտասարդներին ուղարկեցին որպես ստրուկներ վաճառելու:

Հաջորդ տարի երեքամսյա պաշարումից հետո թուրքերը գրավեցին Ֆամագուստան, որի պաշտպանները թեև կռվում էին մեծ խիզախությամբ, սակայն սննդամթերքի ու վառոդի վերջանալու պատճառով քաղաքը ստիպված էր դադարեցնել իր դիմադրությունը:

Լալա Մուստաֆա փաշան դրժելով իր խոստումը քաղաքի պաշտպանների կյանքի և գույքի ապահովությունը երաշխավորելու վերաբերյալ՝ հրամայեց Ֆամագուստայի կայազորի հրամանատար Մարկոս Անտոնիոս Բրագադինոյին չղթայել, իսկ ապա իր ձեռքով կտրեց նրա քիթն ու աջ ականջը: Այնուհետև նրան առաջարկեցին ընդունել իսլամը. ստանալով մերժում, Բրագադինոյին սկզբում կենդանի մաշկազերծ արեցին, իսկ ապա քառատեցին: Այնուհետև Մուստաֆայի կարգադրությամբ նրա կաշվից սարքեցին խրտվիլակ և ցուցադրեցին ժողովրդին՝ նրան ահաբեկելու համար:

1571 թ. հոկտեմբերի 7-ին Լեպանտո քաղաքի մոտ (Հունաստան) տեղի ունեցավ ծովային ճակատամարտ, որը հանդիսանում էր համաշխարհային պատմության նշանավոր իրադարձություններից մեկը: «Սրբազան դաշինքի» միացյալ նավատորմը, որը բաղկացած էր հիմնականում իսպանական ու վենետիկյան նավերից և որի հրամանատարը Կարլոս V կայսեր որդի Դոն-Ժուան Դոթրիշն էր, մարտի մեջ մտավ թուրքական նավատորմի հետ: Թուրքերի տրամադրու-

թյան տակ կային 230 նավեր, իսկ դաշնակիցների նավատորմը բաղկացած էր 208 նավերից: Դա արյունահեղ ու համառ մի ճակատամարտ էր: Այդ իրադարձության ականատեսներից մեկը գրել է. «Ծովը ճակատամարտի վայրում հանկարծ մարտիկներին թվաց կարմիր մարդկային արյունից»: Այդ ճակատամարտում իր ձախ թևը կորցրեց ապագա իսպանական հանրահռչակ գրող, «Դոն-Քիշոթի» հեղինակ Միգել Սերվանտեսը, որը դաշնակիցների կողմից մարտնչում էր Թուրքերի դեմ:

Ճակատամարտի ընթացքում Թուրքական ռազմական նավատորմը գլխովին ջախջախվեց: Թուրքերը կորցրին երկու հարյուր նավ և տվեցին երեսուն հազար սպանվածներ ու վիրավորներ: Դաշնակիցների կորուստները մեծ չէին՝ ընդամենը տասը խոշոր թիանավեր և յոթ հազար սպանվածներ:

Թուրքերի պարտությունը Եվրոպայի վրա թողեց չչմեցուցիչ ազդեցություն: Քրիստոնեական աշխարհը ցնծության մեջ էր: Իտալիայում և Իսպանիայում մատուցվեցին գոհաբանական աղոթքներ: Այդ հաղթանակի արձագանքները հասան նույնիսկ հեռավոր Անգլիա: Սերվանտեսը իր «Դոն-Քիշոտ»-ում գրում էր, որ Լեպանտոյի ճակատամարտը մնաց հիշողության մեջ «որպես քրիստոնեական աշխարհի համար այն ամենաերջանիկ օրը, երբ բոլոր ազգերը ձերբազատվեցին իրենց այն մոլորությունից, որ Թուրքերը անպարտելի են»:

Իսկապես, օսմանցիները, որոնք Կ. Պոլիսը գրավելու օրվանից Եվրոպան պահում էին վախի գերության մեջ, ջախջախիչ պարտություն էին կրել: Թուրքերի անպարտելիության առասպելի փլուզումը քրիստոնյաներին հնարավորություն տվեց ազատ շունչ քաշել: Այդ ճակատամարտը հսկայական բարոյաքաղաքական նշանակություն ունեցավ եվրոպական պետությունների հետագա պայքարի համար ընդդեմ Թուրքական նվաճողականության: Միաժամանակ Լեպանտոյի ճակատամարտը ողջ Եվրոպային ցույց տվեց, որ Օսմանյան կայսրության հարձակողական հզորությունը սկսում է նվազել:

Մինչդեռ Ստամբուլը սուգի մեջ էր: Սուլթան Սելիմը երեք օր չարունակ աղոթում էր՝ Ալլահին թախանձելով խղճալ իր ժողովրդին: Այնուհետև նա հրամայեց կոտորել իր տիրույթներում գտնվող բոլոր իսպանացիներին ու վենետիկցիներին, որը սակայն ի կատար չածվեց չնորհիվ Մեհմեդ Սոքոլլուի, որը համոզեց իր տիրակալին չդիմել այդպիսի քայլի: Մեծ վեզիրը իր տեսակետն ուներ Լեպանտոյի ադետի վերաբերյալ: Ստամբուլում Վենետիկի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ նա ասել է. «Մեծ տարբերություն կա ձեր և մեր կորուստների միջև: Ձեզնից նվաճելով Կիպրոսը, մենք կտրեցինք

ձեր ձեռքերից մեկը. մեր նավատորմին պարտության մատնելով, դուք ընդամենը սափրեցիք մեր մորուքը. կտրված ձեռքը այլևս չի աճի, բայց սափրված մորուքը կաճի ավելի խիտ, քան առաջ էր»:

Իսկապես, Թուրքերը ամբողջ ձմեռը զբաղված էին նոր նավատորմի կառուցման գործով: Սուլթանը իր անձնական միջոցներից խոշոր գումար դրեց այդ գործի մեջ, միաժամանակ սերալի իր այգու մի մասը տրամադրելով նավաշինարան դարձնելու համար: 1572 թ. գարնանը, Լեպանտոյի ճակատամարտից ընդամենը վեց ամիս անց նոր նավատորմը, որը բաղկացած էր 250 նավերից, արդեն պատրաստ էր: Այդ նավատորմի հայտնվելը ապշեցրեց դաշնակից-քրիստոնյաներին: Միանգամայն ակնհայտ էր, որ օսմանյան պետությունը դեռևս չի կորցրել իր կենսունակությունը և նրա նյութական պայմանները իրենց հավասարը չունեն:

Լեպանտոյից հետո, չնայած եվրոպական տերությունների հայտարարություններին, որ Աստծո օգնությամբ իրենք մինչև վերջ ջախջախելու են ահարկու թշնամուն, դաշնակիցների միջև ծայր առան մանր վեճեր: Շուտով ընդհանուր գործը այն աստիճանի ենթարկվեց իրենց սեփական հակասություններին, որ փաստորեն Լեպանտոյում ձեռք բերված հաղթանակը հավասարեցրեց զերոյի: Ստացվեց այնպես, որ այդ հաղթանակը վճռական դեր չխաղաց «Սրբազան դաշինքի» հետ Օսմանյան կայսրության պատերազմի վրա և Թուրքերն այնուամենայնիվ շահեցին այդ պատերազմը:

Վենետիկում եկան այն համոզման, որ պատերազմը շարունակելու դեպքում իրենք ունենալու են նոր կորուստներ: Բացի այդ, վենետիկյան կառավարության մեջ խաղաղության ուժեղ կուսակցությունը պնդում էր վերականգնել առևտուրը օսմանյան տարածքների հետ:

Ի վերջո, 1573 թ. մարտին Վենետիկի և Օսմանյան կայսրության միջև կնքվեց խաղաղության պայմանագիր, որով Կիպրոսը անցնում էր Թուրքերին և Վենետիկը պարտավորվում էր վճարել խոշոր ռազմատուգանք: Կղզու հողերը դարձան Թուրքական պետության սեփականությունը: Օսմանյան կառավարությունը Կենտրոնական Անատոլիայից մեծ թվով Թուրք վերաբնակիչների տեղափոխեց Կիպրոս:

«Սրբազան լիգայի» հետ պատերազմի ավարտից հետո՝ սուլթան Սելիմ II-ը կրկին ծավալեց ռազմական գործողություններ Թունիսի դեմ, որն առաջին նվաճումից հետո փաստորեն դուրս էր եկել Թուրքերի հսկողությունից: 1574 թ. ամռան սկզբին նա այնտեղ ուղարկեց քառասուն հազարանոց մի բանակ: Դեպի Թունիս ուղղություն վերցրած Թուրքական նավատորմը բաղկացած էր 300 նավերից: Հուլիսի

12-ին համառ մարտերից հետո Թուրքական զորքերը ներխուժեցին Թունիս քաղաքը: Այնուհետև նրանք վերցրին Լա-Գուետտե ամրոցը, որտեղ տեղակայված էր յոթ հազարանոց իսպանական մի զորամաս: Նույն թվականի օգոստոս-սեպտեմբերին ենիչերիներին հաջողվեց գրավել նաև անառիկ համարվող Ալ-Բաստիուն ամրոցը:

Նշված վայրերի համարյա բոլոր պաշտպանները մարտերի ընթացքում սպանվեցին, իսկ գերիներին Թուրքերը անխնա սրի քաշեցին: Ալժիրի և Տրիպոլիի հետ միաժամանակ Թունիսը վերածվեց Թուրքական նահանգի: Քիչ ավելի ուշ՝ 1578 Թ., Թուրքերի ազդեցությունը տարածվեց նաև Մարոկկոյի վրա: Այսպիսով, Աֆրիկայի հյուսիսում իսպանացիները կորցրին իրենց բոլոր տիրույթները: Իսպանական Ֆիլիպ II Թագավորը ստիպված էր 1581 Թ. սուլթանի հետ կնքել զինադադար: Գործնականում իր ավարտին հասավ տևական պայքարը Միջերկրական ծովի արևմտյան մասի բաժանման համար:

Այսպիսով, Միջերկրական ծովի արևելյան ափերից մինչև Մարոկկո ողջ Հյուսիսային Աֆրիկան (Մաղրիբը) անցավ օսմանյան տիրապետության տակ:

Թունիսի նվաճումից հետո Սելիմ II-ը անսպասելիորեն մահացավ: Մահվան օրը նա սարսափելի հարբել էր: Բաղնիսում, երբ օրորվելով հազիվ քայլում էր, սայթաքեց և գլխով դիպչելով մարմարյա հատակին 53 տարեկան հասակում չունչը փչեց: Մեհմեդ Սոքուլլուն ապահովեց նրա որդու՝ Մուրադ III-ի (1574-1595) խաղաղ գահակալությունը: Էյուպում արքայական սուրը իր մեջքին կապելուց և ընդունված ավանդույթի համաձայն ենիչերիներին պարգևներ բաժանելուց հետո նրա առաջին գործը եղավ Սոքոլլուի լիազորությունների սահմանափակումը: Թեև մեծ վեզիրը ևս մի քանի տարի մնաց իր պաշտոնում, սակայն նա այլևս չէր օգտվում այնպիսի լայն իշխանությունից, որ իրեն տրամադրել էին Սուլեյմանը և Սելիմը: Սոքոլլու-փաշայի շուրջը սադրանքների ցանցը գնալով խտանում էր: Նրա ամենաոխերիմ թշնամիներն էին Շեմսի և Լալա Մուստաֆա փաշաները: Նրա դեմ նրբին սադրանքներ էին հյուսում նաև նոր սուլթանի մերձավորներն ու նրա հարեմի կանայք: Այդ բոլորի հետևանքը եղավ այն, որ մի որոշ ժամանակ անց, մեծ վեզիրի պալատի խորհրդակցություններին սրահում Մեհմեդ Սոքոլլու փաշային մոտեցավ դերվիշի հագուստով մեկը, որը մեծ վեզիրից հաճախ ողորմություն էր ստանում, իրեն ձևացնելով որպես խնդրարկու և դաշույնը մխրճեց մեծ վեզիրի սիրտը սպանելով նրան: Մարդասպանը, ինչպես և Սոքոլլուն բոսնիացի էր: Անտանելի կտտանքների ներքո մարդասպանը ոչինչ չխոստովա-

նեց, ուստի դեպքը մեկնաբանվեց որպես մարդասպանի անձնական վիրավորվածության հետևանքով վրիժառության ակտ, թեև դա անշուշտ քաղաքական մոտիվներով սպանություն էր: «Մեհմեդ Սոքոլլույի հետ,- նրա մահվան կապակցությամբ ասել էր Վենետիկի դեսպանը,- գերեզման իջեցրին նաև թուրքական բարոյականությունը»:

Նորաթուխ սուլթանի առաջնահերթ գործերից մեկը եղավ նաև այն, որ նա հրամայեց խեղդամահ անել իր հինգ եղբայրներին: Մուրադ III-ի խառնվածքի ամենաարգահատելի հատկանիշներից էին ագահությունը, մանրախնդրությունը և վավաշոտությունը: Նա մոլագարի աստիճան սիրում էր ոսկի և կանանց: Նրան ամբողջապես կառավարում էին չորս կանայք, որոնց ժամանակակիցները համեմատում էին պետության չորս սյուների հետ: Դրանք էին իր մայրը, Վալիդե սուլթանուհին, որը կառավարում էր հարեմը: Երկրորդը իր քույրն էր, Սոքոլլույի կինը, որի ազդեցությունը սուլթանի վրա թեև չուտով անկում ապրեց: Հաջորդը Սաֆիե անունով ալբանացի գեղեցկուհին էր: Զորրորդը Ջանֆեդա անունով մի կին, որը դարձավ սուլթանի գլխավոր խորհրդատուն:

Մուրադ III-ը վարում էր անբարոյական ու ցոփ կյանք: Նա գիշերները անց էր կացնում միանգամից երկու-երեք սիրուհիների հետ: Նրա այդ սովորույթի հետևանքով աղջիկների գինը Ստամբուլի ստրկավաճառանոցներում կրկնակի բարձրացավ: Նրա այդ մոլագար կնամոլության հետևանքը հանդիսացավ հարյուրից ավել երեխաների լույս աշխարհ գալը:

Իսկ սուլթանի մոլեգին փողասիրությունը նպաստեց արքունիքում և առհասարակ պետության մեջ կոռուպցիայի, կաշառակերության և գանձագողության աննախընթաց վերելքին: Այլևս ոչ մի գործ առանց կաշառքի գլուխ չէր գալիս և ոչ մի պաշտոն անվճար չէր շնորհվում: Ամեն մի անօրինական գործարք ուներ իր նախապես որոշված գինը: Պալատականներից Շեմսի-փաշան ստեղծել էր կոռուպցիոն մի ամբողջ համակարգ, այդ գործի մեջ ներգրավելով նաև անձամբ սուլթանին:

1577 թ. հունվարի 1-ին ավարտելով պատերազմը Հաբսբուրգների հետ և օգտվելով Իրանում ստեղծված խառնակ վիճակից՝ 1578 թ. Մուրադ III-ը խախտեց Իրանի հետ կնքված 1555 թ. Ամասիայի պայմանագիրը և վերսկսեց պատերազմը իր արևելյան ախոյանի դեմ: Այս պատերազմի ժամանակ թուրքերը իրենց առջև դրել էին ավելի ծավալուն ռազմավարական խնդիրներ. գավթել ողջ Անդրկովկասը, դիմագրավելու համար Կովկասյան լեռնաշղթային մերձեցող Մոսկովյան

պետությանը, տիրանալ Վոլգա-Կասպյան առևտրական ճանապարհին, խզել ռուս-իրանական առևտրական կապերը, հսկողություն սահմանել Կասպից ծովի արևմտյան ծովափի նկատմամբ և այլն:

1578 թ. վաղ գարնանը Լալա Մուստաֆա փաշայի 100-հազարանոց բանակը Ղրիմի թաթարների ուղեկցությամբ դուրս եկավ ռազմերթի: 1578 թ. օգոստոսի 10-ին հակառակորդները հանդիպեցին Կարսից հյուսիս-արևելք ընկած Զըլդըր լճի մոտ: Տեղի ունեցած մեծ ու արյունալի ճակատամարտում Սեֆյան շահ Սուլթան Մոհամմադ Խուդաբենդեի (1577-1587) զորքերը, որոնց հրամանատարը Թոխմախ խանն էր, կրեցին ջախջախիչ պարտություն, որը օսմանյան զորքերի առջև բաց արեց ճանապարհը դեպի Անդրկովկաս: Գրավելով Թումեք (Թմուկ) և Ախալքալաք բերդերը, օսմանցիները այնուհետև շարժվեցին դեպի Թիֆլիս և օգոստոսի 24-ին գրավեցին բնակչության կողմից լքված այդ քաղաքը: Թիֆլիսը մատնվեց անխնա կողոպուտի ու անվերածության: Թուրքերը եկեղեցիները վերածեցին մզկիթների: Ողջ Վրաստանը ռազմակալման ենթարկվեց օսմանյան զորքերի կողմից:

Վրաստանից թուրքերը սրընթաց արշավով շարժվեցին դեպի արևելք և գրավելով Շամախին, Շիրվանը և Բաքուն դուրս եկան Կասպից ծովի ափերը: Այնուհետև ուղղություն վերցնելով դեպի հյուսիս՝ սուլթանական բանակը Օզդեմիր Օսման փաշայի հրամանատարությամբ թափանցեց Դաղստան՝ գրավելով Դերբենտը և մի շարք այլ քաղաքներ: Օսմանյան բանակի առջև դրված խնդիրներից մեկը Ատրպատականի գրավումն էր: Ուստի Օսման փաշան իր բանակը շարժեց հարավ և մարտերով սկսեց մոտենալ Ատրպատականի կենտրոն Թավրիզին: Թեև պարսկական զորքերի հրամանատար Համզա միրզան սկզբում մի քանի մանր հաղթանակներ տարավ թուրքերի նկատմամբ, սակայն ի վերջո հարկադրված էր նահանջել: 1585 թ. սեպտեմբերի 21-ին թուրքերը գրավեցին Սեֆյան պետության մայրաքաղաք Թավրիզը՝ սրի քաշելով նրա բնակչությանը և կրակի մատնելով քաղաքի մեծ մասը: 1585-1588 թթ. ընթացքում օսմանցիներին հաջողվեց իրենց հսկողությունը սահմանել ողջ Ատրպատականի նկատմամբ՝ հերթական անգամ ահավոր կողոպուտի ու ավերածության ենթարկելով այդ հարուստ երկրամասը: Թուրք-իրանական այդ պատերազմը տևեց 12 տարի, տարածաշրջանի ժողովուրդներին պատճառելով մահ ու ավեր:

Օգտվելով առիթից՝ արևելքում ուզբեկները գրավեցին Խորասանը, Հերաթն ու Սիսթանը: Ստեղծված պատեհ առիթը ձեռքից բաց չթողեցին նաև հինդուսները՝ գրավելով Ղանդահարը:

Այսպիսով, 1578–1590 թթ. Սեֆյան պետության հետ հաջող պատերազմի հետևանքով օսմանցիներին հաջողվեց կտրել Վոլգա-Կասպյան առևտրական ճանապարհը, որն անմիջականորեն դիպչում էր և՛ Սեֆյանների և՛ Մոսկովյան պետության շահերին: Ուստի այս երկու պետությունները շահագրգռված էին միավորելու իրենց ռազմական ջանքերը ընդհանուր թշնամու դեմ: Ընդհուպ մինչև XVII դարի 30-ական թվականների վերջը հենց սա էր ընկած նրանց դիվանագիտական հարաբերությունների հիմքում:

Շահ Սուլթան Մոհամմադ Խուդաբենդեն եռանդուն փորձեր էր անում նախապատերազմյան ստատուս-քվոյի հիմքի վրա պայմանավորվելու թուրքերի հետ՝ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ: Այդ նպատակով նա 1579–1582 թթ. սուլթան Մուրադ III-ի (1574–1595) մոտ ուղարկեց երեք դեսպանություններ, որոնք բոլորն էլ որևէ արդյունքի չհանգեցրին: Ընդհակառակը, հրաժարվելով հետագա բանակցություններից, թուրքերը միանգամից երկու բանակ շարժեցին Իրանի վրա Սիքալ և Ֆերհադ փաշաների հրամանատարությամբ:

Սեֆյան պետության համար ստեղծված այդ դժվարին օրերին 1579 թ. շահ Խուդաբենդեն Վենետիկ ուղարկեց մի դեսպանություն Հաջի Մոհամմադի գլխավորությամբ, խնդրելով ռազմական օգնություն, մի բան, որ դրանից ութ տարի առաջ շահ Թահմասպ I-ը մերժել էր Վենետիկի սենատին՝ նույնիսկ չընդունելով նրա դեսպաններին:

1586 թ. գարնանը և ամռանը նոր պարտություններ կրելով Օսմանյան կայսրությունից և արևելքում ուզբեկներին զիջելով նոր տարածքներ՝ կիսակույր և անընդունակ շահ Խուդաբենդեն, գիտակցելով, որ Լիվոնյան պատերազմի ավարտից հետո Մոսկովյան պետությունը այլևս չի կարող համակերպվել թուրքերի ներկայության հետ Կասպից ծովի շրջանում, ռազմական դաշինքի խնդրանքով որոշեց դիմել Մոսկվային: 1586 թ. ամռանը նա իր մերձավորներից մեկին՝ Ղադի-բեկին ուղարկեց Ֆյոդոր Իվանովիչ ցարին հանձնելու իր նամակը, որտեղ նա հավաստիացնում էր, որ ինքը անկեղծորեն ցանկանում է Մոսկովյան պետության հետ ունենալ բարեկամական հարաբերություններ: Շահի ներկայացուցիչը նաև բանավոր հանձնարարություն ուներ պարզելու, թե արդյոք ռուսները կարող են ռազմական օգնություն ցուցաբերել Իրանին, կամ համատեղ ռազմական գործողություններ իրականացնել Ատրպատական և Անդրկովկաս ներխուժած օսմանցիների դեմ: Թեև մոսկովյան կառավարությունը չեչտված ուշադրության նշաններ դրսևորեց շահի ներկայացուցչի

նկատմամբ, սակայն գիտակցում էր, որ ռազմական դաշինքը կամ թեկուզ ռազմական համագործակցությունը Սեֆյան պետության հետ կնշանակեր խզում Օսմանյան կայսրության հետ, ինչին Ռուսաստանը պատրաստ չէր, ուստի դիմեց ծամծմված ու անորոշ պատասխանի մարտավարությանը: Այդ բոլորով հանդերձ, Մոսկովյան պետությունը շարունակում էր լուրջ ուշադրություն դարձնել արևելյան գործերի նկատմամբ: Դրա վկայությունն է հանդիսանում այն, որ Մոսկվայում Ղազի-բեկի առաքելության ավարտից անմիջապես հետո 1588 թ. Իրան ուղարկվեց պատասխան դեսպանություն Գ. Բ. Վասիլչիկովի գլխավորությամբ: Բորիս Գոդունովը, որը սկսած 1587 թվականից փաստորեն ինքն էր կառավարում երկիրը, հրահանգավորել էր իր դեսպանին, նախ Սեֆյան պետության հետ հաստատել կայուն և բարիդրացիական հարաբերություններ (այդ թվում նաև առևտրական) և երկրորդ՝ հստակ խոստումներ չտալ, բայց և չմերժել շահական առաջարկը Թուրքիայի դեմ համատեղ պայքար մղելու հարցում: Բանակցությունների այդ ձևաչափը վկայում էր այն մասին, որ Մոսկվայում գիտակցում էին, որ վաղ թե ուշ ռազմական բախումը Օսմանյան կայսրության հետ անխուսափելի է, ուստի չէին ցանկանում կորցնել ապագա դաշնակցին, նրան օգտագործելու պահը վերապահելով իրենց:

Մինչդեռ Սեֆյան պետության վիճակը գնալով դառնում էր ավելի ու ավելի անհուսալի: Երկու ճակատով՝ արևմուտքում օսմանցիների, իսկ արևելքում ուզբեկների դեմ կռվելը այդ պետության համար պարզապես ուժից վեր էր: Արտաքին քաղաքական անհաջողություններին գումարվում էին նաև ներքին անկայունությունը:

Նման պայմաններում ղզլբաշական շամլու և ուսթաջլու ցեղերի ցեղապետերը ապստամբեցին շահի դեմ և 1587 թ. ստիպեցին Մոհամմադ Խուդաբենդեին հրաժարվել գահից հօգուտ իր 16-ամյա որդի Աբբասի, որը գահակալեց շահ Աբբաս I (1587-1629) անունով:

1588 թ. հուլիս-օգոստոսին դեսպանորդի մակարդակով Սեֆյան պետության մայրաքաղաք՝ Ղազվին ժամանեց սուլթանի ներկայացուցիչը, շահ Աբբասին առաջարկելով հաշտություն: Որպես նախապայման թուրքական դեսպանորդը առաջ քաշեց շահի վեցամյա եղբորորդի Հայդար Միրզային սուլթանին պատանդ հանձնելը: Շահն անմիջապես ընդունեց այդ պայմանը, քանի որ միևնույնն է, նա որոշել էր ոչնչանցնել իր այդ ազգականին, նրան համարելով գահի վտանգավոր հավակնորդ:

1589 թ. շահական արքունիքը մի մեծ դեսպանություն ուղարկեց

Ստամբուլ հաշտություն կնքելու համար: Բանակցություններն ավարտվեցին 1590 թ. մարտի 21-ին իրանա-թուրքական խաղաղության պայմանագրի ստորագրմամբ: Դա հաղթանակած թուրքերի կողմից թելադրված ստորացուցիչ ու ծանր պայմանագիր էր Իրանի համար: Վերջինս, Օսմանյան կայսրությանն էր զիջում Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Շիրվանը, ողջ Ատրպատականը Թավրիզ, Մարաղա և Զենջան քաղաքներով հանդերձ (բացի Արդեբիլից և Թալիշից), Իրանական Քրդստանը կամ Արդելանը, Լուրիսթանի մի մասը և Արաբական Իրաքը:

Շահը պարտավորվում էր նաև տարեկան 200 բեռ մետաքս տրամադրել օսմանցիներին որպես ռազմատուգանք, ինչպես նաև չմիջամտել Թուրք-ռուսական հարաբերություններին, որն ըստ էության նշանակում էր թույլ տալ թուրքերին հիմնավորվելու Կասպից ծովի հյուսիս-արևմտյան ափերին: Սուլթան Մուրադ III-ի պահանջով պայմանագրի մեջ մտցվեց նաև Սեֆյանների պետական ու կրոնական հեղինակությունը նվաստացնող կետ այն մասին, որ այսուհետև արքունի աղոթքի ժամանակ («հութբա») Իրանում չիաների կողմից չպետք է նզովքի ենթարկվեն սուննի թուրքերի կողմից պաշտելի առաջին երեք «բարեպաշտ» խալիֆները՝ Աբու Բեքրը, Օմարը և Օսմանը:

Հիշյալ պայմանագիրը ստորագրելու համար շահ Աբբասը դաժանորեն պատժեց Մեհդի դուլի-խանին, նրան դատապարտելով մահվան, թեև այլ սպասելիք չէր կարող ունենալ, որովհետև որպես պարտված կողմ ինքն էր հաղթանակած թշնամուց խնդրել հաշտություն:

1590-ական թվականներին եվրոպական պետություններն ու Ռուսաստանը ակտիվորեն քննարկում էին հակաթուրքական լիգա ստեղծելու հարցը, որի մեջ ենթադրվում էր, որ պետք է մտնեն Ավստրիան, Հռոմի պապը, Վենետիկը, Լեհաստանը և Ռուսաստանը: Ուշագրավ է, որ կայսր Ռուդոլֆ II-ը և Բորիս Գոդունովը հանդես էին գալիս որպես ջատագովներ, որպեսզի Սեֆյան Իրանը ևս ներգրավվի այդ ռազմաքաղաքական դաշինքի մեջ: Ընդ որում, Բորիս Գոդունովը այդ նպատակով Մոսկվայում նույնիսկ կազմակերպեց իրանական դեսպան Հաջի Խոսրովի և ավստրիական դեսպան Նիկոլայ Վարկաչի հանդիպումը: Այդ նույն նպատակով Մոսկվայում որոշվեց Իրան ուղարկել Վ. Տյուֆյակինի և Ս. Եմելյանովի դեսպանությունը, որը Մոսկվայից դուրս եկավ 1597 թ. մայիսին, սակայն այդպես էլ տեղ չհասավ, քանի որ երկու դեսպաններն էլ ճանապարհին վախճանվեցին և ի վիճակի չեղան իրականացնելու իրենց առաքելությունը:

1590 թ. մարտի 21-ի պայմանագիրը ոչ միայն տարածքային

ձեռքբերումներ էր ապահովում Օսմանյան կայսրության համար, այլև տնտեսական ու ռազմավարական բնույթի խոշոր շահեր: Անդրկովկասից և Իրանից դեպի Փոքր Ասիա տանող միջազգային առևտրական քարավանային ճանապարհն ամբողջությամբ անցավ թուրքերի հսկողության տակ: Բացի այդ, թուրքերը Կարսում ստեղծեցին ուժեղ ամրացված հենակետ-ամրոց, որը հետագա դարերի ընթացքում ծառայելու էր որպես պատվար Իրանի դեմ:

Բնականաբար վիթխարի եռանդով ու նախաձեռնությամբ օժտված շահ Աբբաս I-ը չէր կարող համակերպվել այդ բոլորի հետ: Ուստի 1590 թ. Ստամբուլի հաշտության պայմանագրի ընձեռած խաղաղ դադարը նա օգտագործեց երկրի վարչական ապարատը վերակառուցելու, ռազմական բարեփոխում իրականացնելու և դրա շնորհիվ մարտունակ բանակ ստեղծելու, ներքին ապստամբությունները ճնշելու և արևելքից ուզբեկներին վոնդելու համար: 1597-1598 թթ. նա գլխովին ջախջախեց ուզբեկներին և հետ նվաճեց Խորասանը, Հերաթը, Մերվը և Սիսթանը: Դրանով իրանական պետության համար հնարավորություն ապահովվեց հանգիստ նախապատրաստվելու պատերազմի օսմանցիների դեմ, քանի որ երկու ճակատով կռվելու անհրաժեշտությունը այլևս վերացել էր:

Թեև շահ Աբբաս I-ը օսմանցիների նկատմամբ իր հաղթանակի հույսերը առաջին հերթին կապում էր իր ստեղծած նոր բանակի մարտունակության հետ, սակայն դրանով հանդերձ, նախապատրաստվելով մեծ պատերազմի, շահը ծավալել էր բազմաճակատ և խորքային դիվանագիտական գործունեություն, եթե ոչ դաշնակիցներ, ապա գեթ համակիրներ ձեռք բերելու համար:

1595 թ. սուլթան Մուրադ III-ը մահացավ 49 տարեկան հասակում, թագավորելով 20 տարի: Նրա մահը ութ օր գաղտնի պահվեց, մինչև որ գահաժառանգ որդին Մանիսայից հասավ Ստամբուլ և գրավեց հոր գահը: Գահակալությունից հետո Մեհմեդ III-ի (1595-1603) առաջին գործը եղավ համր ծառաներին հրամայել, որ նրանք խեղդամահ անեն իր թվով տասնինը եղբայրներին: Դա օսմանների դինաստիայի պատմության մեջ ամենամեծ եղբայրասպանությունն էր: Այնուհետև նա հարեմի վեց հղի ստրկուհիների, որոնք իր հարճերն էին, հրամայեց կարել կաշվե պարկերի մեջ և նետել Բոսֆոր, որպեսզի նրանք չկարողանան կյանք տալ գահի հավակնորդների: Ավելի ուշ Մեհմեդը հրամայեց սպանել նաև իր հարազատ որդուն՝ Մահմուդին: Վերջինս հորից խնդրել էր վստահել իրեն Անատոլիայում խռովարարների դեմ պայքարող բանակի հրամանատարությունը: Դա չար-

ժել էր հոր կասկածամտությունը, որ իբր որդին ցանկանում է բանակն օգտագործել իր դեմ: Զբավարարվելով որդու սպանությամբ՝ սուլթանը հրամայել էր Մեհմեդի մորը ևս նետել բանտը: Միառժամանակ անց մայրը ևս արժանացավ որդու ճակատագրին:

Մեհմեդ III-ը վերջին գահաժառանգն էր, որը մինչև գահ բարձրանալը եղել էր պետական ծառայության մեջ՝ զբաղեցնելով նահանգապետի պաշտոնը: Ուստի դեռ հոր կենդանության օրոք նա ձեռք էր բերել պետական գործեր վարելու փորձ: Դրանից հետո վախենալով, որ իշխանազունները սուլթանի դեմ կբարձրացնեն կամ կհրահրեն ապստամբություններ, բոլոր իշխանազունները մշտապես պահվում էին սերալում, դրսի աշխարհից կտրված մի չենքի մեջ, որը կոչվում էր «կաֆես» («վանդակ», «բանտ») կամ «չիմչիրլիք»: Ուստի այդ սուլթանները, որպես կանոն, զրկված էին պետություն կառավարելու փորձ ձեռք բերելու հնարավորությունից:

XVII դարի սկզբից փոխվեց նաև գահաժառանգության կարգը: Եթե մինչ այդ գահը անցնում էր հորից որդիներից մեկին, որի հետևանքով գահը ստանձնած սուլթանը որպես կանոն սպանում էր իր եղբայրներին, որպեսզի ազատվի իշխանության նկատմամբ հնարավոր հավակնորդներից, ապա XVII դ. սկզբից սահմանվեց նոր կարգ. գահը սկսեց անցնել դինաստիայի անդամներից տարիքով ավագին: Իսկ գահի մնացած հավանական թեկնածուներին բանտարկում էին վերը հիշատակված «վանդակում»:

Դեռևս հոր՝ Մուրադ III-ի կենդանության օրոք, 1593 թ. Ավստրիայի դեմ սկսվել էր հերթական պատերազմ (1593–1606), որն ընթանում էր Բալկանյան թերակղզու հյուսիսային մասին տիրանալու համար: Այդ պատերազմում Ավստրիան գործում էր Տրանսիլվանիայի, Մոլդավիայի և Վալախիայի հետ դաշինքի մեջ՝ հենվելով նաև Ֆրանսիայի աջակցության վրա: Պատերազմի հենց սկզբում՝ 1593 թ., Բոսնիայում թուրքական զորքը Հասան փաշայի հրամանատարությամբ ամբողջությամբ ոչնչացվեց: Այդ թվականը օսմանյան պատմության մեջ հայտնի է որպես «կազմալուծման կամ պարտության տարի» (Bozgun senesi): Ռևանշ վերցնելու նպատակով 1596 թ. ամռանը անձամբ Մեհմեդ III-ը զորաշարժ կատարեց դեպի Եվրոպա: Այդ արշավանքի կապակցությամբ նա Դամասկոսից հատուկ բերել էր տվել իսլամի հիմնադիր Մուհամմեդ մարգարեի դրոշը, որը փողփողում էր իր զորքերի գլխավերևում:

1596 թ. Հունգարիայում թուրքերը նախ պաշարեցին ու գրավեցին Էգեր քաղաք-ամրոցը, այնուհետև նրանց հաջողվեց ևս մեկ հաղթա-

նակ տանել Տիսե գետի ափերին, Էրլաուի մոտ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մեգե-Քերեսթեչի հարթավայրում: Դա տևական ու արյունահեղ ճակատամարտ էր: Ավստրո-հունգարական զորքերի հուժկու հարվածներից սուլթանի հեծելազորը՝ սիփահիները երերացին ու զանգվածային փախուստի դիմեցին: Ուղտի մեջքին նստած չփոթահար սուլթանը ընդհանուր նահանջի հրաման տվեց: Հետագա անելիքը որոշելու համար նա հապշտապ գումարեց ռազմական խորհրդի նիստ: Նիստի ավարտին, բոլորի համար անսպասելի կերպով, սուլթանը իր ձեռքը վերցրեց մարգարեի դրոշը, հագավ նրա «սրբազան թիկնոցը» և հայտարարեց, որ ինքը մնում է իր զորքերի հետ և բանակը տանելու է դեպի հաղթանակ: Ճակատամարտը բորբոքվեց նոր ուժով: Թուրքական հեծելազորն անցավ գրոհի: Այս անգամ հակառակորդը դիմեց խուճապահար փախուստի, մարտի դաշտում թողնելով 30 հազար սպանվածներ: Թուրքերը տիրացան հարուստ ռազմական ավարի, այդ թվում նաև մի քանի հարյուր թնդանոթների: Այդ հաղթանակի շնորհիվ Օսմանյան կայսրության կազմում չարունակեցին ևս մի քանի դար մնալ Բուլղարիան, Մակեդոնիան, Հունգարիայի մոտ կեսը և Դանուբից հյուսիս գտնվող տարածքները: Տևական պատերազմից հյուծված կողմերը ի վերջո որոշեցին կնքել հաշտություն: 1606 թ. նոյեմբերի 11-ին Հունգարիայի Սիթվատորոգ քաղաքում կնքվեց ավստրո-թուրքական խաղաղության պայմանագիր, որը կողմերից ոչ մեկին չբերեց տարածքային ձեռքբերումներ, սակայն սուլթանը ստիպված էր հրաժարվել Ավստրիայից պահանջվող տարեկան հարկից, փոխարենը սուլթանական գանձարանին միանվագ խոշոր դրամական փոխհատուցում վճարելու պայմանով: Սուլթանը ստիպված էր գնալ նաև մեկ այլ զիջման. այսուհետև նա ավստրիական միապետին ճանաչելու էր որպես կայսր և ոչ թե «Վիեննայի տիրակալ», ինչպես նախկինում: Սիթվատորոգի պայմանագրով Ավստրիան դառնում էր Ֆրանսիայի հետ միաժամանակ Օսմանյան կայսրության բոլոր կաթոլիկադավան քրիստոնյաների հովանավորը: Վերջապես այդ պայմանագրով օսմանցիները հարկադրված էին հրապարակով ճանաչել Հաբսբուրգների դինաստիան և նրա իշխանությունը:

Իր գահակալության վերջին շրջանում սուլթան Մեհմեդ III-ը (1595-1603) իրեն տվել էր հարեմի հաճույքներին, երկրի կառավարման գործը համարյա ամբողջապես հանձնելով իր վենետիկցի մորը: Պատմվում է, որ 1603 թ. հոկտեմբերի վերջին սուլթանը հանդիպում է մի դերվիշի, որը գուշակություն է անում, որ ուղիղ հիսունհինգ օր հետո նրան սպասում է մեծ դժբախտություն: Տանջահար լինելով

նախապաշարված վախով՝ սուլթան Մեհմեդ III-ը մահացավ ուղիղ հիսունհինգ օր հետո, 37 տարեկան հասակում: Նրա տապանաքարի վրա գրեցին. «Ամենազոր Ալլահը ասել է. ամեն ինչ դառնում է փոշի, բացի առողջ դատողությունից»:

Գահ բարձրացավ Մեհմեդ III-ի տասնչորսամյա որդին՝ Ահմեդ I-ը (1603-1617): Վերջինս իր արյունակից Մուստաֆա եղբորը չվերացրեց հավանաբար այն պատճառով, որ նա լուսնոտ էր, իսկ մուսուլմանների մոտ արգելված է ինչպես լուսնոտներին, այնպես էլ խելագարներին սպանելը:

Դեռահաս պատանի սուլթանը իր գահակալության սկզբնական շրջանում դրսևորեց որոշակի քաղաքական կամք և վճռականություն: Երբ նրա մեծ վեզիրը հրաժարվեց շարունակել պատերազմը Ավստրիայի դեմ, պատճառաբանելով, որ դա հնարավոր չէ առանց խոշոր դրամական միջոցների, իսկ սուլթանական գանձարանում այդպիսի միջոցներ չկան, պատանի սուլթանը նրան ուղարկեց մի գրություն, որտեղ ասվում էր. «Եթե ձեր կյանքը արժեք ունի ձեզ համար, անհապաղ մեկնեցեք արշավանքի»:

Պատմվում է նաև, որ երբ սուլթանի գահակալության առաջին օրերին Բ. Դռան պահակազորի կազմում գտնվող ենիչերիներն ու սիփահիները բացահայտ բողոքի ցույց կատարեցին իրենց աշխատավարձի վճարումը ուշացնելու կապակցությամբ և սկսեցին քարեր նետել իրենց հրամանատարների վրա, պատանի Ահմեդ I հայտնվեց նրանց առջև ալ կարմիր զգեստներ հագած, ինչպես դա անում էր խալիֆ Հարուն-ալ Ռաշիդը մահապատիժ իրականացնելու ժամանակ, իր մոտ կանչեց խռովարարների հրամանատարներին և տիրաբար հրամայեց. «ինձ տվեք մեղավորներին»: Մի քանի հոգի տեղնուտեղը մահապատժի ենթարկվեցին: Երբ հրամանատարները հեռացնում էին մահապարտների դիակները, սուլթանը նախազգուշացրեց. «Հաջորդ անգամ, եթե դուք անցնեք հնազանդության սահմանները, ես ձեզ բոլորիդ, առանց տարբերության, մահապատժի կենթարկեմ»:

XVII դ. հենց սկզբում Օսմանյան կայսրության համար անհաջող ավարտ ունեցավ պատերազմն Իրանի հետ (1603-1612 թթ.): Այդ պատերազմին շահ Աբբաս I-ը նախապատրաստվում էր վերին աստիճանի խնամքով և ապշեցուցիչ նպատակասլացությամբ: Նախքան պատերազմ սկսելը հակաօսմանյան դաշինք հարդարելու նպատակով շահը սկսեց փնտրել դաշնակիցներ: Նա դեսպանություններ ուղակեց Ռուսաստան, Գերմանիա, Վենետիկ, Թոսքանա և Հռոմի պապի մոտ՝ նրանց տիրակալներին հորդորելու համար, որ կազմեն միասնական դաշինք օսմանցիների դեմ:

Խորքային նախապատրաստություններից հետո 1603 թ. սեպտեմբերի 14-ին, խախտելով թուրք-իրանական պայմանագիրը, շահ Աբբաս I-ը ռազմական գործողություններ սկսեց օսմանցիների դեմ: Իր նոր մայրաքաղաք Սպահանից զորաշարժ կատարելով դեպի հյուսիս, իր զորքերի գլուխ անցած շահը մուտք գործեց Ատրպատական և սեպտեմբերի 28-ին գրավեց Թավրիզը: Այնուհետև, համարյա առանց լուրջ դիմադրության հանդիպելու, պարսկական զորքերը մեկը մյուսի հետևից գրավեցին օսմանցիների կողմից ռազմակալման ենթարկված մի շարք շրջաններ ու քաղաքներ, այդ թվում նաև Նախիջևանն ու Երևանը: Ընդամենը չորս տարվա ընթացքում (1603-1607) շահին հաջողվեց հետ նվաճել այն բոլոր տարածքները, որոնք թուրքերը գրավել էին 1578-1590 թթ. միջև ընկած շրջանում: Ըստ էության առաջին անգամ ողջ հարյուրամյակի ընթացքում ռազմական նախաձեռնությունն անցել էր Իրանին: Շահը թուրքերից հետ խլեց Ատրպատականը (Թավրիզ քաղաքով հանդերձ), Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Լուրեսթանը, Իրանական Քրդստանի մի մասը, Դաղստանի մեծագույն մասը, Բաղդադը, Մոսուլը և Դիարբեքիրը: Իրանին անցան նաև շիիթական սրբավայրեր Քարբալան և Էն-Նաջաֆը Իրաքում: Պարտություններն այն աստիճանի բարոյալքել էին սուլթանական բանակը, որ հաղվադեպ չէին այն դեպքերը, երբ ամբողջ զորամասեր անցնում էին պարսիկների կողմը:

Պատերազմն ավարտվեց 1612 թ. նոյեմբերի 20-ին Ստամբուլում կնքված իրանա-թուրքական խաղաղության պայմանագրով, ըստ որի Իրանը պահպանում էր պատերազմի ընթացքում ձեռք բերած իր բոլոր նվաճումները: Պայմանագրում անփոփոխ ուժի մեջ էր մնում 1590 թ. Կ. Պոլսի պայմանագրի այն կետը, որով շահը պարտավորվում էր տարեկան 200 խարվար (59 հազար կգ) հում մետաքս ուղարկել սուլթանին, որպես փոխհատուցում այն բանի, որ պատերազմի ընթացքում Հարավային Կովկասում և Հյուսիսային Իրանում թուրքերը կորցրել էին մետաքսաբեր շրջանները:

Կողմերի միջև, սակայն, խաղաղությունը տևեց ընդամենը չորս տարի: Օսմանյան կայսրությունը չէր կարող հաշտվել Անդրկովկասի կորստի, իսկ Իրանը՝ իր համար ստորացուցիչ մետաքսահարկ վճարելու գաղափարի հետ: Սուլթան Ահմեդ I-ը և Բ. Դուռը շուտով փորձեցին ուանչ վերցնել: 1616 թ. գարնանը օսմանյան 100 հազարանոց բանակը Հալեպից Հասանկալա-Սողանլու ճանապարհով շարժվեց դեպի Կարս, որտեղից ուղղություն վերցրեց դեպի Երևան: Սակայն 55 օրյա պաշարումից հետո այդ քաղաքը գրավելու փորձն ավարտվեց

կատարյալ ձախողմամբ: Կրելով ծանր կորուստներ՝ Թուրքական զորքերի հրամանատար Մոհամմադ փաշան առաջարկեց հաշտություն, պայմանով, որ իրեն թույլ տրվի նահանջել Կարս, իսկ այնտեղից էլ էրզրում: Առաջարկն ընդունվեց և Երևանի օսմանյան զորամասը լքեց ամրոցը:

Թուրքական արշավանքին իրանական կողմը այս անգամ պատասխանեց ոչ թե խոշորամասշտաբ ռազմական գործողություններով, այլ «չափար» («ասպատակ») սփռելով Արևմտյան Հայաստանի տարածքում:

1618 թ. գարնանը թուրքերը վերսկսեցին իրենց ռազմական գործողությունները Իրանի դեմ: Ծովակալ Խալիլ-Փաշայի զորամիավորումները խոշոր հարձակում ձեռնարկեցին Ատրպատականի ուղղությամբ: Սակայն Մարանդում հանդիպելով պարսկական գլխավոր ուժերի հետ՝ պարտություն կրեցին և խուճապահար նահանջի դիմեցին: Օսմանցիները կրկին անգամ ստիպված եղան շահ Աբբաս I-ից խնդրել հաշտություն: 1618 թ. սեպտեմբերի 26-ին Սարավում (Ատրպատական) կնքվեց խաղաղության պայմանագիր, որը 1612 թ. Ստամբուլի պայմանագրի պայմանները թողնում էր ուժի մեջ: Թերևս միակ փոփոխությունն այն էր, որ մետաքսահարկի տարեկան վճարումները սուլթանին կրճատվում էին մինչև հարյուր խարվարի (29 հազար կգ):

Սակայն այդ հաշտությունը ևս երկար չտևեց: Այս անգամ վերսկսված պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձավ Միջագետքը: Օգտագործելով Բաղդադի թուրքական կայազորի հրամանատարի դավաճանությունը, շահ Աբբաս I-ը գրավեց այն:

Թուրք-պարսկական այդ պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության ներքին վիճակը վերին աստիճանի ծանր էր: Ողջ Անատոլիայի տարածքում տեղի էին ունենում ջելալիների հուժկու ապստամբական շարժումներ:

Իրանում կրած պարտությունները էլ ավելի էին խորացնում երկրի ներքին ճգնաժամը: Պատանի Սուլթան Ահմեդ I-ը, որն իր գահակալության սկզբում դրսևորել էր քաղաքական կամք և վճռականություն, տարիքն առնելու հետ զուգընթաց դառնում էր հարմարվող, իսկ ամենակարևորը վճռականությունը հաճախ լքում էր նրան: Նա այլևս իր նախաձեռնությամբ համարյա ոչ մի քայլ չէր անում: Իրանի հետ պատերազմում կրած անհաջողությունները, երկրի ներքին խռովահույզ վիճակը կոտրել էին նրան: Սուլթանը կորցրել էր ինքնավստահությունը: Նրա խառնվածքի մեջ գնալով տիրապետող էին դառնում կասկածամտությունը և քմահաճությունը: Նա հաճախ փոխում էր իր մեծ վեզիրներին՝ հնարավորություն չտալով, որ նրանք ժամա-

նակ ունենան ինչ-որ խոշոր գործ ձեռնարկելու: Իսկ ամենակարևորը նա դա անում էր անսալով հարեմի պահանջին: Առհասարակ գնալով մեծանում էր հարեմի կանանց ազդեցությունը սուլթանի վրա: Այդ կանանց կողմից Ահմեդին տրվող հակասական, իսկ ավելի հաճախ պարզունակ ու անհեռատես «խորհուրդները» վերջնականապես խճճում էին սուլթանին, հնարավորություն չտալով, որ նա կայացնի արդյունավետ ու ճիշտ վճիռներ: Բացի այդ, Ահմեդ I-ի օրոք հարեմը ամենուրեք տարածում էր իր կոռումպացնող ազդեցությունը: Առհասարակ համատարած կոռուպցիան և գանձագողությունը խարխլում էր պետության հիմքերը և բարոյալքում կայսրության պետական ծառայությունների ողջ համակարգը:

Սուլթան Ահմեդ I-ի 14 տարի թագավորելուց հետո հրաժեշտ տվեց կյանքին 1617 թ., քսանյոթ տարեկան հասակում: Գահը ժառանգեց նրա խելապակաս ու տկարամիտ եղբայր Մուստաֆա I-ը (1617-1618, 1622-1623), որն ստացավ Մուստաֆա Ապուշ անունը: Թեև ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ փադիշահը խելքից պակաս է, բայց հարեմի կանանց հարկադրանքով Շեյխ-ուլ-իսլամը ֆեթվա տվեց, թե այդ ապուշությունը սրբության նշան է: Ի դեպ, մի շարք աղբյուրների հաղորդման համաձայն, երբ չափահաս դառնալով սուլթան Ահմեդն ունեցավ սեփական զավակներ, ցանկանալով պահպանել ուղղակի գահաժառանգության սկզբունքը, երկու անգամ նա ցանկացել է սպանել իր լուսնոտ եղբորը, սակայն ինչ-ինչ պատճառներով չի դիմել այդ քայլին:

Մուստաֆա I-ը տասնչորս տարի շարունակ «վանդակում» գտնվել էր բանտարկության մեջ: Եվ երբ բանտից նրան ուղղակի տարան սերալ, նա զարմացած ու ապշած էր, դեռևս լավ չհասկանալով, թե ինչ է կատարվում: Արքունիքում շատերը նրան համարում էին սուրբ մարդ, քանի որ նա ընկնավորության պահերին բարբաջում էր զանազան տեսիլքների ու հրեշտակների մասին և նրա անկապ խոսքերը ընկալվում էին իբրև գուշակություններ: Բանտարկության տարիներին Մուստաֆայի բազմաթիվ այլևայլ տարօրինակ զվարճալիքներից մեկն էլ հետևյալն էր. նա ձկներին կերակրելու համար հացի փշուրների փոխարեն Բոսֆորի ջրերն էր նետում ոսկե դրամներ:

Երբ այդ «սուրբ» ապուշ սուլթանը ստանձնեց գահը, բնականաբար միանգամից ակներև դարձավ, որ նա ի վիճակի չէ կառավարելու: Ուստի վարագույրի հետևից կառավարում էր նրա մայրը՝ վալիդե սուլթանուհին: Ի վերջո, երեք ամիս անց սուլթանը գահազուրկ արվեց և հետ ուղարկվեց իր նախկին մեկուսացման վայրը, իսկ սուլ-

թան կարգվեց Ահմեդ I-ի տասնչորսամյա որդին՝ Օսման II-ը (1618-1622), որը հայտնի է նաև «Գենջ Օսման» մականունով: Նա տարված էր զինվորական փառքի երազանքներով և ձգտում էր նմանվել իր նախնուն՝ Սուլեյման Կանունիին: Նետ ու աղեղին և սրին տիրապետելու իր վարպետությունը ցուցադրելու համար, Օսմանը հաճախ կենդանի թիրախ էր դարձնում ռազմագերիներին և պալատի ստորին պաշտոնյաներին: Նա այրվում էր ռազմի դաշտ նետվելու և փառք վաստակելու մարմաջով: Նորաթուխ սուլթանը որպես իր ռազմաչունչ տրամադրությունների օբյեկտ ընտրեց Լեհաստանը, որի հետ հաճախ տեղի էին ունենում սահմանային վեճեր ու բախումներ: Եվ չնայած մեծ վեզիրի ու պալատականների խորհրդի, որ երկրի ներքին վիճակը և ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս սկսելու պատերազմ, մանկահասակ Օսմանը պնդեց իրենը:

1621 թ. իր վրա կապելով սուլթան Սուլեյմանի զենք ու զրահը՝ Օսմանը մեծ զորաշարժ կատարեց դեպի Արևելյան Եվրոպա: Նրա բանակը Սուլեյման Կանունիի ժամանակներից հետո երբևիցէ եղած ամենախոշոր բանակն էր: Նրանում ընդգրկված էին նաև մեծ թվով վարձկաններ, որոնք աչքի չէին ընկնում իրենց կարգապահությամբ և հակված էին անհնազանդության:

Այդ մեծ ու ծանրաշարժ բանակի առաջխաղացումը դժվարանում էր վաղ սկսված ձմռան պատճառով: Առաջին բախումները լեհերի հետ օսմանցիների համար հուսադրող չէին: Հակառակորդի կորովի դիմադրությունը, անձրևներն ու ցուրտը, սննդամթերքի պակասությունը և այլ դժվարություններ բանակում առաջ բերեցին խուճապային տրամադրություններ: Հակառակ իր նախնիների, Օսմանին չհաջողվեց համոզել իր զինվորներին, որ կռվեն: Ստեղծվում էր խիստ վտանգավոր վիճակ: Նման պայմաններում այլևս ոչ մի ելք չէր մնում, բացի լեհերից հաշտություն խնդրելը: 1621 թ. սեպտեմբերին կնքվեց լեհ-թուրքական հաշտություն, որը վերականգնում էր կողմերի միջև գոյություն ունեցող նախկին վիճակը կամ ստատուս-քվոն: Փաստորեն չջախջախված, բայց և հաղթանակ չտարած հսկայական բանակը ստիպված էր դիմել նահանջի: Հետդարձի ճանապարհին ցրտից ու հիվանդություններից նա ունեցավ ծանր կորուստներ: Չնայած այդ բոլորին՝ փառասիրական մոլուցքով տարված սուլթանը հայտարարեց, որ տարել է փառահեղ հաղթանակ:

Այդ անհաջող պատերազմը, որը հնարավորություն չտվեց բանակին ձեռք բերելու հարուստ ավար, ենիչերիներին տրամադրեց սուլթանի դեմ: Վերջինս մեղադրվում էր նաև ծայրահեղ ժլատության

մեջ: Իսկապես, ենիչերիներին վճարվող աշխատավարձը Օսմանը հասցրել էր նվազագույնի, հաճախ ուշացնում էր վճարվող գումարները և այլն: Ենիչերիները նույնիսկ բողոքում էին, որ մարտի դաշտում թշնամու կտրված յուրաքանչյուր գլխի դիմաց այժմ իրենց վճարում են մեկ դուկատից ոչ ավել և տրտնջում էին, որ դրա համար չարժե վտանգի տակ դնել սեփական գլուխը:

Ենիչերիները և առհասարակ մայրաքաղաքի բնակչությունը խիստ դայրացած էր, որ սուլթանը արգելել է ծխախոտի և գինու օգտագործումը: Զգեստափոխված ու ծպտված, հաճախ նաև գիշերները, Օսմանը շրջում էր քաղաքում, մտնում գինետները և հրամայում ձերբակալել ու պատժել իր հրամանը խախտողներին: Նրա հետ շրջող պալատի գլխավոր այգեպանը, անագորույն դաժանության տեր մի մարդ, Բոսֆորի ջրերն էր նետում գինետներում բռնված ենիչերիներին ու սիփահիներին, կամ նրանց ուղարկում գալերներ՝ տաժանակիր աշխատանքի որպես թիապարտ-ստրուկներ:

Ենիչերիների մոտ գնալով կուտակվում էր դյուրավառ նյութը, որը ամեն րոպե կարող էր բռնկվել: Առանց այն էլ նրանք իրենց անդուսպ վարք ու բարքով և սանձարձակ արարքներով լուրջ սպառնալիք էին հանդիսանում մայրաքաղաքի անդորրության համար: Ստամբուլի ենիչերիական «օջախները» վեր էին ածվել խռովարար տրամադրությունների կենտրոնի: Գնալով սրվում էին նրանց հարաբերությունները արքունիքի և անձամբ սուլթանի հետ:

Տասնութամյա Օսմանը մինչև հոգու խորքը վիրավորված ու դայրացած էր, որ «ինքը դարձել է իր սեփական ստրուկների հպատակը»: Երկար մտմտուքներից հետո, գուցե և իր խորհրդատուների հուշումով, նա ծրագրեց իր ինքնիշխանությանը սպառնացող վտանգը չեզոքացնելու մի նուրբ ու ճարտար նախագիծ, որի էությունը հետևյալն էր. Մեքքա ուխտագնացության մեկնելու պատրվակով նա հրամայեց Անատոլիայում իրագործել զորաժողով Դիարբեքիրի վալի Դիլավեր-փաշա «Խիզախի» միջոցով, որը հայտնի էր որպես «մեծ խելքի տեր մարդ», հավաքագրել մոտ քառասուն հազարանոց բանակ, որի կորիզը հանդիսանալու էին քրդերը և այլ ռազմաշունչ ցեղեր, ինչպես նաև Եգիպտոսից ու Սիրիայից բերել իրենց կարգապահությամբ աչքի ընկնող զորամասեր, և այդ ամբողջ ուժն օգտագործել որպես հակակշիռ ենիչերիներին ու սիփահիներին:

Այդ վտանգավոր ձեռնարկն իրականացնելու հաջողության ամենաառաջին պայմանը հանդիսանալու էր նրա խիստ գաղտնիությունը: Սակայն երիտասարդ ու անփորձ սուլթանը չկարողացավ ապա-

հովել այդ պայմանը: Բացի այդ, այդ հավակնոտ ծրագրի վերաբերյալ պալատականների կարծիքները ևս բաժանվեցին: Մեծ մուֆթին, օրինակ, բացահայտ դեմ արտահայտվեց: Իսկ ենիչերներն ու սիփահիները սկսեցին կասկածել, որ իրենց դեմ նյութվում է ինչ որ վատ բան: Պակասում էր մի կայծ վիթխարի հրդեհ բռնկելու համար: Ապստամբելու վճռականությամբ լի ենիչերիները, իրենց սովորության համաձայն, հավաքվեցին ձիարշավարանում և ահավոր գոռում-գոչյուններով սուլթանին պահանջ ուղարկեցին իրենց հանձնել այն պալատականներին, որոնց նկատմամբ իրենք հատուկ ոխ ունեին: Ստանալով մերժում՝ խռովարար զինվորները ներխուժեցին մեծ վեզիրի պալատը և այնտեղ չգտնելով նրան՝ կողոպտեցին այն: Այնուհետև գաղաղած ենիչերիները ներխուժեցին սուլթանական պալատ, վանկարկելով՝ «մենք ցանկանում ենք, որ սուլթան լինի Մուստաֆան»: Խռովարարները վախից դողացող և համարյա անմեղսունակ մարդուն բանտից հանելով տարան իրենց հետ, որպեսզի երկրորդ անգամ նրան հռչակեն սուլթան: Երբ մեծ վեզիրը և սև ներքինիների պետը փորձեցին կարգի հրավիրել ենիչերիներին, վերջիններս նրանց կտոր-կտոր արեցին: Այդ տեսարաններից ահաբեկված որդուն՝ Մուստաֆային, հանգստացնելու համար, նրա մայրը՝ վալիդե սուլթանուհին դիմեց նրան, ասելով. «արի ինձ մոտ, իմ առյուծ»: Այնուհետև առանց որդու կարծիքը հարցնելու, սակայն նրա անունից, սուլթանուհին ձեռնամուխ եղավ նոր կառավարության ձևավորմանը:

Մինչդեռ խռովարարները փնտրում էին Օսմանին, որը թաքնվել էր պալատի իր գաղտնարաններից մեկում: Նրան գտան ներքնաշորերով, խղճալի վիճակում: Այնտեղից դուրս բերելով՝ ենիչերիները ստիպեցին նրան նստել մի քնձռոտ ձի և հայոյանքների ու լուտանքների բղավոցներով տարան իրենց զորանոցները: Ճանապարհին Օսմանը նկատեց խռովարարների կողմից հոշոտված մեծ վեզիրի գլուխը, որը նետված էր ճանապարհի մեջտեղը: Նա դառնությամբ արտաբերեց. «Եթե ես հետևեի նրա խորհրդին, այս դժբախտությունը երբեք տեղի չէր ունենա ինձ հետ»:

Զորանոցներում սուլթանը դիմեց զինվորներին հետևյալ հարցումով. «Ի՞նչ եք որոշել անել ինձ հետ: Դուք, ենիչերիներ, կայսրությունը և ձեր սեփական կյանքը կվերածեք ավերակների»:

Այնուհետև գլխից հանելով չալման, համարյա լացակումած, Օսմանը սկսեց պաղատել, որ ներեն իրեն: Սակայն կռահելով, որ պատրաստվում են քուղի միջոցով խեղդամահ անել իրեն, նա նոր մեծ վեզիրի և վալիդե սուլթանուհու ներկայությամբ թախանձեց, որպեսզի

իրեն հնարավորություն տրվի դիմելու դրսում կանգնած իր «ծառաներին», այսինքն զորքերին: Նրան թույլատրեցին և նա բաց պատուհանից դիմելով ենիչերիներին, մի վերջին անգամ փորձեց փրկել իր կյանքը. «Սիփահիների իմ աղաներ և դուք, տարիքով մեծ ենիչերիներ, որ ձեզ ընդունում եմ հոր պես, պատանեկան անզգուշությամբ ես ունկնդրեցի վատ խորհրդի: Ինչո՞ւ եք դուք նվաստացնում ինձ: Դուք այլևս չե՞ք ուզում ինձ»,- ասաց սուլթանը: Որպես պատասխան թնդաց միահամուռ բացականչությունը. «Մենք չենք ուզում ոչ քեզ, ոչ էլ քո արյունը»: Դրանից հետո կատաղած ենիչերիները խուռներամ ամբոխի միջով սուլթանին տարան Յետտիգուլե (Յոթաչտարանի) ամրոցի սարսափազդու բանտը: Որոշ ժամանակ անց կոպտորեն նրան արթնացրին և չորս հոգով հարձակվեցին նրա վրա: Լինելով երիտասարդ և ուժեղ՝ նա մոլեգնաբար դիմադրում էր: Սակայն դահիճներից մեկը մարտական կացնով հարվածեց նրա գլխին, իսկ մյուսները թափվելով նրա վրա խեղդամահ արեցին: Այնուհետև կտրելով զոհի մի ականջը, այն որպես ապացույց ուղարկեցին մահապատժի թույլտվությունը տված զոհված սուլթանի մորը՝ վալիդե-սուլթանուհուն: Այսպիսով, 1622 թ. մայիսի 20-ին տեղի ունեցավ օսմանյան դինաստիայի պատմության մեջ թագակիր անձի սպանության առաջին դեպքը: Նշելով, որ Օսմանը դա առաջին սուլթանն էր, որի վրա ձեռք բարձրացրին, անգլիացի Թոմաս Ռոյը ասել է. «Կարծում եմ, որ դա օսմանցիների անկման ճակատագրական նախանշանն էր»:

1622 թ. ենիչերիները երկրորդ անգամ գահ բարձրացրին խելակորույս Մուստաֆա I-ը: Երբ նա հասկացավ, թե ինչ է կատարվել, ընկավ խորը տխրության մեջ և հրամայեց, որ Օսմանի սպանության մեղավորները պատժվեն: Այդ հրամանը ճշտիվ կատարվեց: Սակայն իր տկարամտության պատճառով մոռանալով, որ Օսմանը մեռած է, նա կատարյալ անմեղսունակության պահերին շրջում էր սերալում և դռները ծեծելով փնտրում էր Օսմանին, որ նա գա և իրեն ազատի իշխանության բեռից:

Թեև կառավարելու անընդունակ, սակայն այնուամենայնիվ տասնվեց ամիս (1622-1623 թթ.) Մուստաֆան մնաց գահի վրա: Այդ շրջանում նա պարզապես խաղալիք էր դարձել ենիչերիական զորաբանակի ձեռքերում: Պետության մեջ անիշխանությունը հասավ աննախընթաց չափերի: Ենիչերիների սանձարձակ կամայականությունները չափ ու սահման չունեին: Ստամբուլում կողոպուտները, սպանությունները, չենքերի ու խանութների հրկիզումները դարձել էին սովորական երևույթ: Անսանձ տարրերը իրենց տարերքի մեջ էին:

Մայրաքաղաքի հայտնի քաղաքային տականքները վերստին գլուխ էին բարձրացրել: Ենիչերիների ու սիփահիների քմահաճույքով իրար հետևից փոխվում էին մեծ վեզիրներ: Ոչ ոք վստահ չէր, որ վաղը կմնա իր պաշտոնում, կամ կենդանի կմնա: Պետության մեջ ծաղկում էր կոռուպցիան և ծախվածությունը: Ստամբուլը նմանվում էր պաշարումից հետո գրավված քաղաքի: Ամենուրեք տեղի էին ունենում սպանություններ, կողոպուտ, չենքերի հրկիզումներ: Պետության մեջ փաստական իշխանությունը կենտրոնացած էր վալիդե-սուլթանուհու ձեռքերում: Պալատը պառակտվել և բաժանվել էր միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված խմբավորումների: Ոչ մի պաշտոնյա երաշխիք չուներ, որ վաղը չի դառնալու սադրանքի զոհ:

Իշխանությունների ներքին քաղաքական ճգնաժամը էլ ավելի վտանգավոր չափեր ընդունեց, երբ լուրեր հասան մայրաքաղաք, որ երկրի արևելքում պայթել է մի հուժկու ապստամբություն Էրզրումի վալի Աբազա Մեհմետ փաշայի գլխավորությամբ: Վերջինս իր դրոշի տակ հավաքելով 40 հազարանոց ապստամբական մի բանակ, կարողանում է գրավել մի շարք քաղաքներ, այդ թվում նաև Սրվասը (Սեբաստիան):

Աբազա փաշան հայտարարում էր, որ ապստամբության նպատակն է վրեժ լուծել սուլթանի սպանության համար: Մեհմեդ փաշան հայտնի էր որպես ենիչերիների ոխերիմ թշնամի: Նրա հրամանով Էրզրումի ենիչերիական կայազորի զգալի մասը սրի էր քաշվել: Ուստի չի բացառվում, որ նա հանդիսանում էր գործիք մայրաքաղաքի իշխող շրջանների ձեռքում ենիչերիներին ջախջախելու և «կարգի հրավիրելու» գործում: Իր հսկայական ապստամբական բանակի և այլ խռովարար ուժերի օգնությամբ Աբազա Մեհմեդ փաշան կարողացավ իր շարժումը սկսելուց հետո (1621 թ.) կարճ ժամանակ անց իր հսկողությունը սահմանել Կենտրոնական և Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի) մեծ մասի վրա: Նրա կողմից սուլթանական զորքերի հետևողական ոչնչացումը ընդունեց այնպիսի չափեր, որն այլևս անհանդուրժելի էր Ստամբուլի համար: Ի վերջո 1628 թ. ապստամբների դեմ ուղարկվում է մի խոշոր բանակ մեծ վեզիր Խոսրև փաշայի հրամանատարությամբ, որը պաշարման ենթարկելով Էրզրումը ստիպում է փաշային անձնատուր լինել: Ըստ երևույթին՝ ի տրիտուր փաշայի մատուցած ծառայություններին օսմանյան գահին, սուլթան Մուրադ IV-ը ոչ միայն չի պատժում, այլև ներումն է շնորհում խռովարար փաշային:

Սուլթան Մուստաֆայի կառավարման խառնակ շրջանում կայսրության տարբեր մասերում շարունակվում էին խռովությունները:

Այսպես, Բաղդադում Բեքիր անունով ոմն օսմանյան մի պաշտոնյա վոնդելով տեղի կուսակալին, նստել էր նրա տեղը: Իսկ Դիարբեքիրի կուսակալ Հաֆիզ փաշան միանալով քուրդ ցեղապետերի հետ գնաց պաշարեց Բաղդադը: Դամասկոսի վալին ևս իրեն հայտարարեց ինքնիշխան տիրակալ:

Միանգամայն ակնհայտ էր, որ նման պայմաններում պետությունը կարիք ուներ «ուժեղ ձեռքի» ներքին քաղաքական ճգնաժամը հաղթահարելու և երկիրը փլուզումից փրկելու համար: Մայրաքաղաքի զինվորական շրջանները Մուստաֆայից պահանջեցին հրաժարվել գահից, որը նա արեց առանց որևէ դիմադրության: Օսմանի կրտսեր եղբայր՝ տասներեքամյա Մուրադը, որն ընդունելի էր և՛ ենիչերիների և՛ սիփահիների համար, հռչակվեց սուլթան՝ ընդունելով Մուրադ IV (1623–1640) գահակալական անունը: Նկատի ունենալով, որ պետական գանձարանը լրիվ դատարկ էր, զորքը հրաժարվեց իրեն հասանելիք ընծաներից, որը սովորաբար բաժանվում էր նոր սուլթան ընտրվելու կապակցությամբ:

Առհասարակ զորքը մեծ ուրախությամբ ընդունեց Մուրադի գահակալումը, հուսալով, որ այս մանուկ սուլթանին կդարձնեն իրենց կամքի կամակատարը և անպատիժ կչարունակեն իրենց անկարգությունները: Սակայն նման հաշվարկ կատարողները չարաչար սխալվում էին: Թուրք պատմիչ և ճանապարհորդ Էվլիյա Չելեպիի բնորոշմամբ, «Օսմանյան բոլոր սուլթանների մեջ Մուրադը բոլորից արյունարբուն էր»: Նույն պատմիչը տեղեկացնում է, որ երբ Էյուբի մզկիթում տեղի էր ունենալու սուլթանի կողքից սուր կախելու ավանդական արարողությունը, Մուրադը նախ գնաց Սերալ, որտեղ իր աղոթքն անելուց հետո հետևելով ավանդույթին, մտավ պետական գանձնարան, որտեղ տեսնելով, որ այն համարյա դատարկ է, արցունքոտ աչքերով ծնրադրելով աղոթքի համար ասաց. «Ինչ ալլահ («տա Աստված») ես այս գանձնարանը կլցնեմ նրանց հարստությամբ, ովքեր դրանք գողացել են և դրան ավելացրած ևս հիսուն պահոցներ կլցնեմ ոսկով»:

Սակայն պետք է անցնեին տարիներ, մինչև որ Մուրադը դառնար չափահաս և անձամբ իր ձեռքը վերցներ պետության կառավարման ղեկը: Այդ ընթացքում պետությունը կառավարում էր ծագումով հույն իր մայրը՝ վալիդե-սուլթանուհին, որը թեև մեծ եռանդի ու ընդունակությունների տեր կին էր, սակայն ի վիճակի չէր սանձել անսանձ տարրերին, աստիճանավորների շրջանում գեթ ինչ որ չափով սահմանափակել կոռուպցիան և գանձագողությունը և առհասարակ

կարգի հրավիրել ոչ մի իշխանություն և օրենք չճանաչող մարդկանց:

Մինչդեռ թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում ստեղծվել էր խիստ վտանգավոր ու լարված վիճակ: Պետությունը մխրճվել էր քաոսի մեջ, Փոքր Ասիան ծվատվում էր ապստամբությունների ու քաղաքացիական պատերազմի հորձանուտում, Իրանը վերստին դրսևորում էր ագրեսիվ նկրտումներ կայսրության տարածքների նկատմամբ, Լիբանանում ապստամբել էին դրուզները, անհնազանդ տարրերը գլուխ էին բարձրացրել Եգիպտոսում, կայսրության մի շարք նահանգների վալիները ձգտում էին ինքնագլխության, Հյուսիսային Աֆրիկայի բերբերները պայքարում էին անկախության համար, Ղրիմի թաթարները չէին ցանկանում վասալական կախման մեջ լինել սուլթանից և բացահայտ ձևով արտահայտում էին իրենց այդ ձգտումները, Դոնի կազակները հարձակումներ էին գործում թուրքերին պատկանող սևծովյան ափամարգ շրջանների վրա, թափանցելով մինչև Բոսֆոր և անմիջական սպառնալիք ստեղծելով Ստամբուլի շրջակայքի համար: Բուն մայրաքաղաքում ենիչերիները անընդհատ ապստամբում էին և սուլթանին ստիպում մահապատժի ենթարկելու իրենց անհաճո պաշտոնյաներին: Նրանք իրենց հանդգնությունը այն աստիճանի առաջ էին մղել, որ մինչև իսկ 1632 թ. որոշել էին գահընկեց անել սուլթան Մուրադին:

Հասունանալով և ստանձնելով պետության ղեկը՝ Մուրադը միանգամից հայտնվեց բազում մարտահրավերների առջև, որոնք սպառնալիք էին պետության համար: Սակայն եռանդուն խառնվածքով, կամային հատկանիշներով օժտված, դեմքի խիստ ու վայրենաբարո արտահայտությամբ այդ սուլթանը լի էր վճռականությամբ իր իմացած ձևով երկրում հաստատելու կարգ ու կանոն և պետության սահմանները պաշտպանելու թշնամիներից:

1623 թ. պատերազմը Իրանի հետ վերսկսվեց: Պարսկական զորքերը պաշարեցին ու գրավեցին Բաղդադը, հրկիզելով քաղաքը և կողոպտելով ու կոտորելով նրա բնակչությանը: Հաջորդ տարի ողջ Արաբական Իրաքը Մոսուլ, Բասրա քաղաքներով ու չիաների սրբավայր հանդիսացող Էն-Նաջաֆ ու Քարբալա քաղաքներով հանդերձ անցան պարսիկներին: Պատերազմն ավարտվեց Օսմանյան կայսրության համար տարածքային նոր կորուստներով:

1629 թ. շահ Աբբաս «Մեծի» մահը հույս ներշնչեց Մուրադ IV-ին, որ ինքը կկարողանա հետ խլել իր կորցրած հողերը և ուսանչ վերցնել նախորդ պարտության համար: 1630 թ. գարնանը թուրքական մի խոշոր բանակ Խոսրև փաշայի հրամանատարությամբ անցավ Թուրք-ի-

բանական սահմանը և գրավելով Համադանը՝ ավերեց քաղաքը և կոտորեց նրա բնակչությանը: Այդ արշավանքի ժամանակ Խոսրև փաշան բավարարվեց դրանով և այլևս չզարգացրեց իր այդ ոչ մեծ հաջողությունը:

Արևելքում պատերազմ մղելու հետ միաժանակ Մուրադ IV-ը վճռական քայլեր էր կատարում նաև երկրի ներքին վիճակը կայունացնելու ուղղությամբ: 1632 թ. սիփահիները կրկին բարձրացրին խռովություն: Խռովարարները պահանջում էին թվով 17 բարձրաստիճան աստիճանավորների, ներառյալ նաև մեծ վեզիր Հաֆիզ Ահմեդ-փաշայի և մուֆթիի գլուխները: Սուլթանը մերժեց այդ պահանջը, սակայն իր շրջապատի մարդիկ իրեն համոզեցին, որ «ավելի լավ է տալ մեծ վեզիրի գլուխը, քան սուլթանի գլուխը»:

Սուլթանի ներկայությամբ մեծ վեզիրին հասցնում են դաշույնի տասնյոթ հարված և կտրում գլուխը: Այդ տեսարանից ցնցված սուլթանը խիզախորեն դիմելով խռովարարներին ասում է. «Եթե լինի Աստծո կամքը, ձեզ սպասում է ահավոր հատուցումը, ձեզ, ստոր մարդասպաններ, որ չեք վախենում Աստծուց և ամոթի զգացում չունեք մարգարեի հանդեպ»: Այդ խոսքերից զայրացած, խռովարարները սկսեցին քննարկել նաև սուլթանի նկատմամբ իրենց անելիքը, սակայն քանի որ նրանց շարքերը պառակտված էին, այդպես էլ որոշում չկայացվեց:

Թեև Մուրադը ծանր ապրումների մեջ էր իր նվաստացման պատճառով և վառվում էր վրիժառության զգացումով, սակայն աչքի առաջ ունենալով սուլթան Օսմանի ողբերգական ճակատագիրը, որոշեց միառժամանակ խուսափել հախուռն գործողություններից: Միաժամանակ նա համոզվեց, որ իր առջև այլընտրանք չկա, բացի «սպանիր, կամ քեզ կսպանեն» ձևից: Առաջինը սուլթանը հաշվեհարդար տեսավ նոր մեծ վեզիր Ռեջեփ-փաշայի հետ, որը գաղտնի կապերի մեջ էր եղել խռովարարների հետ: Նա հրամայեց սև ներքինիներին գլխատել նրան և դիակը նետել փողոց ի տես խռովարարների: Այդ տեսարանը սարսափ ազդեց խռովարար-զինվորների վրա: Հենց այդ օրվանից Մուրադ IV-ը ձերբազատվեց իր վեզիրներին ունկնդրելուց և խնամակալ մոր հովանավորությունից և սկսեց կառավարել միանձնյա ձևով, առանց որևէ մեկի խորհուրդների: Նրա հաջորդ քայլը եղավ այն, որ նա հրավիրեց Դիվանի նիստ և գահի վրա նստած մեղադրանք ներկայացրեց ենիչերիների և սիփահիների հրամանատարներին և պահանջեց իրեն հանձնել խռովության հրահրողներին: Սուլթանի հրամանը ոչ միայն անմիջապես կատարվեց, այլև հրամանատարները երդվեցին Ղուրանի վրա հավատարիմ լինել վեհապետին:

Դիվանի նիստի ժամանակ դատավորներից մեկը, սուլթանին դուր գալու համար, մերկացրեց իր սուրը և բացականչեց. «Իմ փաղիշահ, այդ խառնակությունների դեմ միակ դարմանը յաթաղանն է»: Այդ կոչը սուլթանի կողմից ընդունվեց որպես գործողության ուղեցույց: Մուրադը երկրում մտցրեց ահաբեկչական կառավարման համակարգ, որի օգնությամբ նա անողոք պայքար սկսեց զինվորականության խռովարարական ձգտումների դեմ: Սուլթանի վստահելի մարդիկ և լավ պատրաստված լրտեսները մայրաքաղաքում ամենուրեք բացահայտում էին «դավաճանների», խռովության ու ապստամբության պարագլուխների և տեղնուտեղը, առանց դատի ու դատաստանի, սրախողող անում կամ նետահարում նրանց և դիակները նետում Բոսֆոր: Հաճախ Մուրադը անձամբ էր հաչվեհարդար տեսնում իր մոտ բերված խռովարարների հետ: Նա ուժեղ թիկնազորի ուղեկցությամբ շրջում էր քաղաքում և խռովարար ենիչերիներին մեկ առ մեկ բռնելով, հրամայում էր նրանց պարկի մեջ մտցնել և նետել ծովը: Նրա «ուժեղ ձեռքը» սարսափի մեջ գցեց անզուսպ տարրերին: Ենիչերիները զարհուրելով հնազանդվեցին սուլթանին և 1633 թ. նրան հավատարմության երդում տվին: Որպեսզի մարդկանց զրկի մի տեղ հավաքվելու, իրար հետ չփվելու, հետևաբար նաև անկարգություններ հրահրելու հնարավորությունից, սուլթանը կայսրության բոլոր քաղաքներում հրամայեց փակել սրճարաններն ու գինետները, արգելեց նարգիլե և ծխախոտ ծխելը: Հրամանը խախտողներին տեղնուտեղը կախաղան էին բարձրացնում կամ սրախողող անում: Ընդ որում, նրանց դիակը պարտադիր կերպով պետք է նետվեր փողոց՝ որպես ահեղ նախազգուշացում բոլոր օրինազանցներին:

Սուլթանը սկսեց հաչվեհարդար տեսնել նաև կաչառակեր դատավորների հետ, որոնց վաճառվածությունը առաջ էր բերում հպատակների դժգոհությունը: «Դուք մեղադրվում եք նրանում, – դատավորներին դիմելով ասաց սուլթանը, – որ ձեր դատական որոշումները փողով վաճառում եք և դրանով իսկ քայքայում պետության հիմքերը և այդ եղանակով ճնշում ժողովրդին»:

Սարսափի մատնված բանակը այլևս լռում էր: Որքան ժամանակը առաջ էր գնում, այնքան, Մուրադը ավելի էր զգում արյան ծարավ: Այլևս նա ցանկություն չուներ խորանալու, թե որքանով է իրական այս կամ այն անցանկալի անձի նկատմամբ ներկայացվող մեղադրանքը: Ընկղմվելով սպանությունների արյունոտ այդ մղձավանջի մեջ՝ սուլթանը կատարելապես կորցրեց հարգանքի զգացումը մարդկային կյանքի նկատմամբ: Երբ նա հայտնվում էր մարդկանց մեջ, անմի-

ջապես իշխում էր քար լռությունը, կարծես թե բոլորը համրանում էին:

Սուլթանի հրեշավոր դաժանությունները դարձան առասպելի նյութ: Պատահմամբ ականատես լինելով ջրի ափին աղմկալից զվարճացող ու պարող մի խումբ կանանց, սուլթանը հրամայեց նրանց բոլորին ջրահեղձ անել: Զայրույթի պահին նա սպանեց իր բժիշկներից մեկին: Սուլթանը սուրհանդակի կուրծքը մխրճեց սուրը միայն նրա համար, որ նա սխալմամբ հայտնել էր իրեն, որ սուլթանուհին ծնել է տղա, մինչդեռ իրականում ծնվածը աղջիկ էր: Նա գլխատեց իր առաջատար երաժշտին միայն այն բանի համար, որ նա կատարեց պարսկական մեղեդի, և դրանով իսկ, ինչպես թվացել էր սուլթանին, փառաբանել էր իր կայսրության թշնամիներին: Մի անգամ մի թափառող դերվիշ, որի նկատմամբ սուլթանը համակրանք էր տածում, համարձակվել էր նրան անվանել «պարոն մսագործ»: Ծիծաղելով Մուրադը պատասխանել է. «Վրիժառությունը երբեք չի ծերանում, թեև նա կարող է ճերմակել»: Ասվում է, որ հինգ տարվա ընթացքում սուլթանի հրամանով սպանվել էր քսանհինգ հազար մարդ, որոնցից չատերը մահն ընդունել էին նրա ձեռքով:

Նման բռնատիրական եղանակներով Մուրադը վերջ տվեց տեղական բռնակալների անսահման ու անսանձ իշխանությանն ու ինքնագլխությանը: Նրա աներևակայելի դաժան կառավարումը վերականգնեց կարգը պետության մեջ: Զորանոցներում հաստատվեց կարգապահություն: Ավելացան պետության եկամուտները:

Երկրում հաստատելով հարաբերական կայունություն, սուլթանը ձեռնամուխ եղավ Անատոլիայում ջելալիների խռովությունների ճնշմանը և անսանձ վարքի տեր այն մարդկանց պատժելուն, որոնք լծակներ ունեին հավաքականությունների նկատմամբ: 1635 թ. ամռանը Մուրադ IV-ը նոր արշավանք կազմակերպեց դեպի արևելք: Նա հրով ու սրով անցավ ողջ Անատոլիայի տարածքով, ճնշեց Աբազայի ապստամբությունը, ստիպելով ինքնագլուխ ու անսանձ իշխանավորներին ի նշան հնազանդության համբուրել իր ձիու սանձերը: Այդ արշավանքի ժամանակ սուլթանը գաղտնի հրաման ուղարկեց Ստամբուլ, որպեսզի մինչև իր վերադարձը խեղդամահ անեն իր երկու եղբայրներին:

Անցնելով օսմանյան պետության սահմանները, թուրքական բանակը ներխուժեց Սեֆյան Իրանի տարածքը և պաշարելով Երևանը, սկսեց ռմբակոծել քաղաքը: Պաշարումը տևեց ընդամենը յոթ օր: Երևանի Ամիրգունա խանը ստիպված էր քաղաքը հանձնել թշնամուն: Այնուհետև օսմանյան զորքերը շարժվեցին դեպի Ատրպատական և ան-

ցնելով Արաքս գետը գրավեցին Նախիջևանը, Մակուն, իսկ 1635 թ. սեպտեմբերին՝ Թավրիզը: Թուրքերը հրկիզեցին այդ քաղաքը և անխնա կողոպտեցին ու կոտորեցին նրա բնակչությանը: Սակայն տեղեկանալով, որ Ստամբուլում բռնկել է խռովություն, օսմանյան զորքերը հապշտապ բռնեցին տունդարձի ճանապարհը: Օգտվելով դրանից՝ շահ Աբբաս I-ի թոռ շահ Սեֆի I-ը 100 հազարանոց բանակի գլուխ անցած դիմեց հակահարձակման և 1635 թ. նոյեմբերին թուրքերից ազատագրեց Թավրիզը, իսկ 1636 թ. ապրիլին նաև Երևանը: Դրանից հետո պատերազմի թատերաբեմը տեղափոխվեց Միջագետք, որտեղ թուրքերն ունեցան չոչափելի հաջողություններ: 1638 թ. նրանք վերստին գրավեցին Բաղդադը, որը վերջնականապես անցավ Օսմանյան կայսրությանը: Սուլթան Մուրադ IV-ը, որն անձամբ գլխավորում էր այդ արշավանքը, հրամայեց զանգվածաբար կոտորել ինչպես Բաղդադը պաշտպանող զորքերին, այնպես էլ նրա բնակչությանը: Հետդարձի ճանապարհին սուլթանը իր հետ տանում էր 22 չղթայակապ պարսիկ զորահրամանատարների:

1639 թ. մայիսի 17-ին Զոհաբում, Քասր-ե Շիրին կոչված վայրում կնքվեց թուրք-իրանական խաղաղության պայմանագիր, որով Արևելյան Հայաստանն ու Ատրպատականը մնացին Իրանի կազմում, իսկ Արաբական Իրաքը, Բաղդադ քաղաքով հանդերձ, անցնում էր Օսմանյան կայսրությանը: Այդ պայմանագրի ստորագրումով թուրք-իրանական հարաբերություններում սկսվեց տևական խաղաղության մի շրջան, որը շարունակվեց ավելի քան 80 տարի: Պայմանագիրը առաջին անգամ գրավոր փաստաթղթով որոշում էր երկու պետությունների մինչ այդ անորոշ փաստական սահմանագիծը Արարատից մինչև Պարսից ծոց:

1639 թ. պայմանագիրը անկասկած Մուրադ IV-ի արտաքին քաղաքականության կարևոր ձեռքբերումն էր:

Արշավանքից վերադառնալուց հետո Մուրադը ձեռնամուխ եղավ Այլբանիայում ծագած խռովության ճնշմանը: Այնուհետև նա հիմնավոր կերպով սկսեց զբաղվել պետության ռազմա-ծովային հզորության վերականգնման հարցերով, ծրագիր ունենալով նոր պատերազմ սկսելու Վենետիկի դեմ: Երկարատև հեռանկարում նա ծրագրում էր իրականացնել հիմնարար ռազմական բարեփոխումներ, ստեղծելու համար փոքրաթիվ, բայց մարտունակ ու լավ վարժված բանակ:

Սակայն սուլթանի առողջությունը գնալով վատանում էր: Նա տառապում էր դողէրոցքից: Հակառակ այն բանի, որ իր հպատակների համար արգելել էր գինու գործածությունը, իր կյանքի մայրամու-

տին սուլթանը տրվել էր հարբեցողության և հաճախ իր մերձավորների հետ կազմակերպում էր գինարբուքներ: Երբ հասկացավ, որ իր վիճակը այլևս անհույս է, նա որոշեց պատմության մեջ մնալ որպես իր դինաստիայի վերջին տիրակալ: Սուլթանը որդիներ չուներ, ուստի հրամայեց սպանել իր կենդանի մնացած միակ եղբորը՝ Իբրահիմին, որը արական գծով օսմանների տան միակ ժառանգորդն էր: Նրա կյանքը փրկվեց չնորհիվ վալիդե-սուլթանուհու միջամտության: Սուլթանին հավաստիացրին, որ նրա հրամանը ի կատար է ածված: Սակայն նա պահանջում էր իրեն ցույց տալ եղբոր դիակը և նույնիսկ դրա համար ցանկանում էր վեր կենալ անկողնուց: Նրա ծառաները սուլթանին կրկին պառկեցրին անկողնու մեջ և շուտով նա մահացավ քսանութ տարեկան հասակում (1640 թ.):

Գահ բարձրացավ Մուրադ IV-ի եղբայրը՝ Իբրահիմ I-ը (1640-1648), որին կնքեցին «դելի» (գիժ, կատաղած) մականունը: Իր ամբողջ կյանքը անց կացրած լինելով սերալի «կաֆեսում» («վանդակ»), փաստորեն բանտարկության մեջ և մշտապես գտնվելով վախի ճիրաններում՝ Իբրահիմը թույլ, անկամ մարդ էր, իր նախնիներից ժառանգելով միայն դաժանությունը: Այդ անպատասխանատու և անսկզբունք մարդուն պետական գործերը քիչ էին հետաքրքրում: Նա սիրում էր զբաղվել միայն հարեմով: Ավելին, նա իր հարեմի ստրուկն էր: Նրա կարգադրությամբ բաղնիքներում փնտրում էին գեղեցկուհիներ սուլթանի սիրային հաճույքներին բավարարություն տալու համար: Նրա սիրուհիներին թույլատրված էր բազարում ձրիաբար վերցնել այն ամենը, ինչ կցանկանային: Իբրահիմի սիրուհիներից մեկը ցանկացել էր սուլթանին տեսնել թանկարժեք քարերով զարդարված մորուքով և նա կատարելով սիրուհու քմահաճույքը՝ հասարակությանը ներկայացավ այդ տեսքով: Դա թուրքերի հավանությանը չարժանացավ և նրանք դա մեկնաբանեցին որպես չարաբաստիկ ավանդույթ, որը փոխառվել է Եգիպտոսի փարավոնների ժամանակներից: Առաջ գնալով հարեմական թելադրանքներից ներշնչված պճնամոլության մեջ՝ սուլթանը մի օր կամեցավ ոտից մինչև գլուխ սամուրենի հագնել, սամույրներով ծածկել իր պալատի բոլոր պատերը, ապա պահանջեց, որ ականակուռ նավակներ չինվեն իր համար, նույնպես և ականակուռ կառքեր իր կանանցից մեկի համար: Մեծ վեզիր Ահմեդը ճշտիվ կատարում էր իր տիրոջ այդ բոլոր քմահաճույքները:

Արքունի նման չոայլ ծախսերի պատճառով տերության գանձարանը արագորեն դատարկվում էր: Զնչին պատճառներով մեծամեծ պաշտոնյաները գլխատվում էին:

Սուլթանի առօրյա զբաղմունքներից մեկը դարձավ հարեմի կանանց հետ սերտ համագործակցությամբ պետական պաշտոնների վաճառքով զբաղվելը: Կանացի սադրանքները, փողի մշտական կարիքը, հեշտամոլությունից առաջացած ուժասպառությունը սուլթան Իբրահիմին դարձրել էին գաղանաբարո մի բռնակալ: Գրգռվելով ամենաչնչին առիթից, նա աջ ու ձախ սպանելու հրամաններ էր տալիս: Այսպես, երբ կաբութան-փաչա Յուսուֆը նվաճեց Կրետե կղզին և հաղթական մտավ Ստամբուլ, սուլթանի հրամանով գլխատվեց, որովհետև պատերազմական ավար քիչ էր բերել: Նա երկու անգամ տրամադրություն էր ցույց տվել հրման արձակելու, որ կոտորեն իր պետության մեջ ապրող բոլոր քրիստոնյաներին:

Ներքինիներն ու գնված հարճերն էին պաշտոններ բաժանողները:

Նույնիսկ մեծ վեզիրները վախենում էին այդ ստվերային կառավարությունից և առատ նվերներ էին տալիս հարեմի կանաց, որ չդառնան նրանց սադրանքների զոհը: Մեծ վեզիրները բոլորովին անզոր էին վալիդե-սուլթանուհու, կըզլար-աղասիի և սուլթանի սիրած հարճերի առջև:

Սուլթանի անզուսպ ու սանձարձակ կամայականությունները, օրինախախտումները և այլն սկսեցին վտանգել պետության հիմքերը: Այլևս համբերության բաժակը լցվեց և արքունիքի վերնախավը, ենիչերիների գլխավորները, ինչպես նաև ազդեցիկ ուլեմները մուֆթիի գլխավորությամբ որոշեցին վերջ տալ այդ բոլորին: Ձերբակալելով սուլթանին՝ նրան ստիպեցին հրաժարվել գահից և ուղարկեցին բանտ: Դեռևս մինչև հրաժարականը, հեղաշրջման կազմակերպիչները 1648 թ. օգոստոսի 8-ին արդեն սուլթան էին հռչակել նրա յոթնամյա որդուն՝ Մեհմեդին:

Իբրահիմի վերջնական ճակատագիրը որոշվեց այն բանից հետո, երբ ի պաշտպանություն նրա սիփահիները բարձրացրին ապստամբություն: Անմիջապես մեծ վեզիրը և հեղաշրջման մյուս կազմակերպիչները մուֆթիից պահանջեցին հրապարակել ֆեթվա, որը թույլատրեր Իբրահիմի մահապատիժը: Մուֆթին բնականաբար տվեց իր համաձայնությունը: Նրա ֆեթվան օրինական էր համարում սուլթանի մահապատիժը, քանի որ ըստ իսլամական օրենքի այն սկզբունքի, որ «եթե կա երկու խալիֆ, սպանիր նրանցից մեկին»: Երբ ֆեթվան հրապարակվելուց հետո մուֆթին և մեծ վեզիրը երկու դահիճների հետ մտան Իբրահիմի բանտասենյակը մահապատիժը ի կատար ածելու համար, գահընկեց արված սուլթանը սկսեց անեծքներ ու լուտանքներ թափել թուրք ժողովրդի հասցեին, նրան մեղադրելով ուխտադրժության ու անհավատարմության մեջ:

Այսպիսով, 1648 թ. օգոստոսի 8-ին Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցավ արքայասպանության երկրորդ դեպքը: Իբրահիմի կառավարման շրջանում սկսվեց Թուրք-վենետիկյան կամ Կրետեի (Կանդիայի) պատերազմը (1645-1669 թթ.), որը մղվում էր Միջերկրական ծովի արևելյան ափերին իշխելու համար: Բանը նրանումն էր, որ XVII դարի կեսերից Թուրքերը կորցրել էին Միջերկրականի այդ մասի նկատմամբ իրենց տիրապետությունը, որն անցել էր վենետիկցիներին: Ստեղծվել էր մի վիճակ, երբ վենետիկցիներից բացի Մալթայի և Թոսքանայի նավերը ևս անարգել լողում էին Միջերկրական ծովում, իսկ Աֆրիկայի բերբերական ափի ծովահենները դուրս էին գալիս Թուրքերի հսկողության տակից: Թուրքերը այլևս ի վիճակի չէին պաշտպանելու իրենց ծովային ճանապարհները և նույնիսկ սեփական ծովային սահմանները:

Կրետե կղզին հանդիսանում էր Հունաստանում Վենետիկի հանրապետության վերջին տիրույթը: Թուրքերի համար Կրետեն ուներ ռազմական կարևոր նշանակություն, քանի որ այն պաշտպանում էր Էգեյան ծովի հարավային մատույցները:

Երբ օսմանցիները զորքեր հանեցին Կրետե այն գրավելու համար, հանդիպեցին կղզու բնակչության հուժկու դիմադրությանը: Պատերազմում, որը տևեց 25 տարուց ավել, Վենետիկին օգնում էին Մալթայի ասպետները, ինչպես նաև պապական Հռոմն ու Ֆրանսիան, որոնք ձգտում էին վարել համաքրիստոնեական պատերազմ՝ դրա մեջ ընդգրկելով Թուրքահպատակ ժողովուրդներին, մասնավորապես հույներին ու հայերին:

Թուրքական զորքերի Կրետե ցամաք հանվելուց հետո վենետիկցիները շրջափակեցին նեղուցները և Էգեյան ծովի ափերն ու Մորեայի նավահանգիստները: 1651 թ. հունիսին հարյուր նավերից բաղկացած Թուրքական նավատորմը ջախջախիչ պարտություն կրեց ընդամենը վաթսուն նավերից կազմված վենետիկյան նավատորմի կողմից: Իսկ 1656 թ. հուլիսին Վենետիկի ծովային ուժերը Թուրքական նավատորմը ջախջախեցին Դարդանելի մուտքի մոտ, որից հետո նրանք շրջափակեցին նեղուցները և գրավեցին սուլթանի իշխանության ներքո գտնվող մի շարք կղզիներ (Տենեդոս, Լեմնոս, Սամոթրակիա): Մոտ ութսուն Թուրքական ռազմանավեր կամ ջրասույզ արվեցին և կամ գրավվեցին վենետիկցիների կողմից: Ծովերի վրա այդ պարտությունը Թուրքերը համեմատում էին Լեպանտոյում իրենց կրած պարտության հետ: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ ուժեղացավ նեղուցների նկատմամբ վենետիկյան հսկողությունը, ինչ-

պես նաև փակվեց մայրաքաղաքը սննդամթերքներով ապահովելու ճանապարհը: Ստամբուլում սննդամթերքների գինը կտրուկ բարձրացավ, որի հետևանքով սկսվեց խուճապ, մանավանդ որ չէր բացառվում թշնամու ներխուժումը քաղաք:

Թեև 1669 թ. թուրքերին այնուամենայնիվ հաջողվեց գրավել Կրետե կղզին և ի վերջո պարտության մատնել Վենետիկի Հանրապետությանը, սակայն նրանք ունեցան հսկայական մարդկային և նյութական կորուստներ: Միայն Կանդիայի ամրոցի պաշարման ժամանակ թուրքերի կորուստները հաշվվում էին մոտ 250 հազար մարդ, իսկ այդ պատերազմի ժամանակ նրանց ընդհանուր կորուստները անցնում էին կես միլիոն մարդուց:

Այդ ձգձգվող պատերազմի շրջանում օսմանյան պետության մեջ գնալով լեռնանում էր դժգոհությունը սուլթանի և նրա իշխանության նկատմամբ:

1648 թ. սուլթան Իբրահիմի սպանությունից հետո գահ բարձրացավ նրա որդի, դեռևս մանուկ Մեհմեդ IV-ը (1648-1687): Նրա կառավարման առաջին ութ տարիներին երկրում խռովահույզ վիճակը դեռ պահպանվում էր: Անսանձ տարրերը կրկին գլուխ էին բարձրացրել: Ասիական գավառների կուսակալները խռովություններ էին բարձրացնում կենտրոնական կառավարության դեմ: Գահավեժ արագությամբ տեղի էր ունենում դրամի արժեզրկում, շրջանառության մեջ էին դրվել կեղծ աքչեներ: Իսկ նոր սուլթանը, թեև իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում թամբի վրա, սակայն ոչ թե ռազմի դաշտերում, այլ որսորդությամբ զբաղվելու ժամանակ: Նա հայտնի էր որպես «հզոր որսորդ»:

Օսմանյան կայսրությանը համակած խորը ճգնաժամի պայմաններում, այնուամենայնիվ, պետության մեջ առկա ներքին ուժերը դրսևորեցին ընդունակություն, այդ ճգնաժամային պահին հանդես գալու հավասարակշռողի դերում և փրկելու ու պահպանելու գոյություն ունեցող համակարգը: Այլ կերպ ասած, կառավարող վերնախավը իր մեջ ուժ գտավ իշխանության ղեկի մոտից հեռացնելու դեգրադացվող սուլթանին և վճռականորեն պաշտպանելու պետության սոցիալական ու քաղաքական շահերը: Կրոնական և աշխարհիկ իշխանությունները ձեռք ձեռքի տված կարողացան ապահովել օսմանյան պետության որոշակի մակարդակի հասնող ներքին կայունությունը:

Ներքին ճգնաժամը հաղթահարելու նպատակով, սուլթանի մայրը՝ Թուրհանը, իր մոտ է կանչում սուլթանի մոտ ծառայության մեջ գտնվող վճռական ու եռանդուն մի մարդու, որն ուներ բարձր հեղինակու-

թյուն և օժտված էր բացառիկ ընդունակություններով վարչա-կառավարչական գործերով զբաղվելու համար: Այդ մարդը ծագումով ալբանացի Մեհմեդ Քյոփրյուլուն էր, համեստ ծագում ունեցող մի անձնավորություն, որի նախնիները բնակություն էին հաստատել Հյուսիսային Անատոլիայի Քյոփրյու քաղաքում: Նա իր կարիերան սկսել էր որպես սուլթանական պալատի խոհարարներից մեկը, այնուհետև սրընթաց կերպով բարձրանալով՝ զբաղեցրել էր մի շարք հանգուցային պաշտոններ, այդ թվում նաև մի շարք նահանգների կուսակալի պաշտոնը:

Թուրհանը Մեհմեդ Քյոփրյուլուին առաջարկեց զբաղեցնել մեծ վեզիրի պաշտոնը: Վերջինս, որ այդ ժամանակ 71-ամյա ծերունի էր, առաջադրեց մի շարք պայմաններ. իր ձեռնարկած միջոցառումները պետք է հաստատվեն առանց քննարկումների, իր ձեռքերը պետք է լրիվ ազատ լինեն ցանկացած պաշտոնի նշանակելու դեպքում. ոչ մի վեզիր, աստիճանավոր կամ սուլթանի շրջապատի մարդկանցից որևէ մեկը չպետք է վիճարկի իր իշխանությունը. արքունիքին ուղղված բոլոր զեկուցագրերն ու տեղեկատվությունները պետք է անցնեն իր ձեռքով. ինքը պետք է օգտվի սուլթանի բացարձակ վստահությունից, որը պետք է մերժի իր նկատմամբ ներկայացվող ցանկացած մեղադրանք:

Մի խոսքով Քյոփրյուլուն պահանջում էր բացարձակ իշխանություն, որը մինչ այդ սուլթանից բացի պետության մեջ ոչ ոք չէր ունեցել: Սուլթանուհին երդվելով Ալլահի անունով, որ այդ բոլոր պայմանները կիրագործվեն, նրան ներկայացրեց սուլթանին, որը հատուկ հրամանագրով Քյոփրյուլուին նշանակեց մեծ վեզիրի պաշտոնում:

Այսպիսով, թեև ոչ բացահայտ ձևով, սակայն փաստորեն պետության կառավարման ղեկը սուլթանը հանձնեց մեծ վեզիրի ձեռքը:

Մեհմեդ Քյոփրյուլուն կառավարեց 1656-1662 թթ.: Այնուհետև նրան փոխարինեց իր որդին՝ Ահմեդը՝ (1662-1667), որը հայտնի է «Ֆազըլ» (առաքինի) պատվանունով: Նրանց ասպարեզ իջնելով, կայսրությունը կառավարելու իրական կենտրոնը այլևս սուլթանի պալատը չէր, այլ մեծ վեզիրի պալատը, որն ավելի շատ հայտնի է Բաբ-ը Ալի (Բարձր Դուռ) անունով: Իզուր չէ, որ XVII դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության պատմությունն երբեմն անվանում են քյոփրյուլուների դարաշրջան:

Զնայած պաշտոնը զբաղեցնելու պահին Մեհմեդ Քյոփրյուլուն առաջացած տարիքի մարդ էր, սակայն հանդիսանում էր մեծ եռանդի տեր և կյանքի մեծ փորձ ունեցող անձնավորություն: Նա նրբին կերպով գիտեր պետական մեքենայի բոլոր ծալքերն ու թերությունները: Մեծ վեզիրը աչքի էր ընկնում նաև աննկուն կամքով և բռնատիրողին

բնորոշ բոլոր հատկանիշներով: Նա իր կառավարումը սկսեց նրանով, որ պաշտոնազուրկ արեց և հեռացրեց բոլոր այն աստիճանավորներին, որոնք հանգուցային պաշտոններ զբաղեցնելով հանդերձ՝ աչքի չէին ընկնում իրենց հատկանիշներով: Նրանց տեղը նա նշանակեց նորերին, որոնց կատարելապես վստահում էր: Մեծ վեզիրը տրամադրված էր վճռականորեն արմատախիլ անելու համար օրինախախտումները, կոռուպցիան, գանձագողությունն ու անձեռնահասությունը: Նա անողորմ դաժանությամբ էր պատժում բոլոր նրանց, ովքեր իր կարծիքով սպառնալիքի տակ էին դնում պետության անվտանգությունը: Մեծ վեզիրի պաշտոնում եղած ժամանակ Մեհմեդ Քյոփրյուլուն մահապատժի ենթարկեց մոտ 35 հազար մարդու, որոնց ինքը համարում էր օրինազանց: Մահապատժի ենթարկվածների գլուխները բերվում էին Ստամբուլ և շարվում պալատի դարպասների առջև: Այդ 35 հազարից մեծ վեզիրը անձամբ խեղդամահ էր արել չորս հազար անվանի մարդկանց:

«Բարբարոսության դեմ նման բարբարոսական մեթոդներով» մեծ վեզիրը ձգտում էր Օսմանյան կայսրությանը վերադարձնել իր ներքին կայունությունը, արտաքին հզորությունը և առհասարակ վերականգնել նրա պետական հեղինակությունը քանի դա դեռ հնարավոր էր: Մեծ վեզիրին հաջողվեց կտրուկ միջոցառումներով լցնել գանձարանը: Մասնավորապես մզկիթապատկան կալվածքներից (վաքֆերից) ստացվող եկամուտների մի մասը, որոնք տնօրինում էին բարձր հոգևորականության ներկայացուցիչները, նա հատկացրեց պետական գանձարանին: Նույնիսկ համարձակություն ունեցավ սուլթանի անձնական գանձարանի եկամուտներն օգտագործել պետության կարիքների համար: Մեծ վեզիրի այդ քաղաքականությունը հնարավորություն տվեց ուժեղացնելու բանակը: Ուժով և խորամանկությամբ Մեհմեդ փաշային հաջողվեց ճնշել Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի ֆեոդալների ապստամբությունները: Նա «կարգի հրավիրեց» թիմարատերերին, որոնք խուսափում էին սուլթանի նկատմամբ իրենց ունեցած պարտավորություններից և պատերազմների ժամանակ իրենց զինված ջոկատներով չէին ներկայանում նրան: Մեծ վեզիրի այդ կտրուկ քայլերի շնորհիվ ֆեոդալական աշխարհազորի թվաքանակը կտրուկ մեծացավ:

Մեհմեդ Քյոփրյուլուն կարողացավ նաև Դարդանելից դուրս մղել վենետիկցիներին և նեղուցի մուտքի մոտ կառուցեց երկու ամրոցներ, որոնք պաշտպանելու էին ռազմավարական այդ կարևոր հանգույցը: Նա հետ վերցրեց նաև Տենեդոս և Լեմնոս կղզիները և որոշ չափով

կարողացավ հաստատել Թուրքերի իշխանությունը Էգեյան ծովի նավահանգիստներում ու կղզիներում: Սև ծովում Քյոփրյուլուն ամրապնդեց կազակների դեմ պաշտպանողական գծերը, Դոնի և Դնեպրի վրա կառուցելով ամրոցներ:

Մեհմեդ Քյոփրյուլուն մահացավ 1661 թ. խորը ծերության հասակում՝ կառավարելով հինգ տարի: Գտնվելով մահվան մահճում՝ նա՝ սուլթան Մեհմեդ IV-ը, որ այդ ժամանակ քսան տարեկան էր, ավանդ թողեց վարքագծի չորս սկզբունքներ. երբեք չհետևել կանանց խորհրդին, երբեք հպատակին թույլ չտալ դառնալու չափից ավելի հարուստ, պետական գանձարանը միշտ լիքը պահել, միշտ գտնվել թամբի վրա՝ բանակը պահելով մշտական շարժման մեջ:

Մեհմեդ Քյոփրյուլուի մահվանից հետո, ինչպես նշվել է, մեծ վեզիրի պաշտոնում նրան փոխարինեց իր քսանվեցամյա որդի Ահմեդը, կառավարելով 15 տարի: Անտարակույս Քյոփրյուլու գերդաստանի մեծ վեզիրներին հաջողվեց մի որոշ ժամանակամիջոցի ընթացքում բարելավել պետության ներքին և միջազգային դրությունը, սակայն երկրում կարգ ու կանոն հաստատելու ֆեոդալական այն ձևերը, որոնք կիրառում էին Քյոփրյուլու մեծ վեզիրները, արդեն ի վիճակի չէին կանխելու Օսմանյան կայսրության հետագա անկումը և նրա հզորության թուլացումը: Բ. Դուռը փորձում էր ստեղծված ծանր վիճակից ելք գտնել Արևելքում ու Եվրոպայում նոր զավթողական քաղաքականության իրագործման միջոցով:

XVII դ. 70-ական թվականներից սուլթանական Թուրքիայի դեմ համաքրիստոնեական պայքարի կազմակերպչի հավակնությամբ հանդես էին գալիս Հաբսբուրգները, որոնք իրենց զինակցության մեջ համախմբեցին Ավստրիային, Լեհաստանին և Վենետիկին: 1664 թ. Սեն-Գոթարդի մոտ Հաբսբուրգները վճռական պարտության մատնեցին Թուրքերին: Այդ ճակատամարտից հետո օսմանցիները համոզվեցին, որ ռազմական գործի մեջ իրենք հետ են մնացել եվրոպական տերություններից:

1666-1672 թթ. Օսմանյան կայսրության և Լեհաստանի միջև ընթանում էր պատերազմ Ուկրաինային տիրելու համար: 1672 թ. Թուրքական բանակը, որին գլխավորում էր անձամբ սուլթանը, ավերածության մատնեց Աջափնյա Ուկրաինան: Դա Օսմանյան պետության բացահայտ ագրեսիա էր Ռուսաստանի դեմ, քանի որ 1654 թ. տեղի էր ունեցել Ուկրաինայի վերամիավորում Ռուսաստանի հետ: Շլյախտայի ներքին երկպառակություններից թուլացած Լեհաստանը ստիպված էր Թուրքերին զիջել Աջափնյա Ուկրաինան և Կամենեց-

Պոդոլսկ ամրոցը: Թուրքական զորքերի և Ղրիմի թաթարների բոլոր փորձերը Ձախափնյա Ուկրաինան ևս գրավելու ուղղությամբ, որն ինչպես նշվեց, այդ ժամանակ մտել էր Ռուսաստանի կազմի մեջ, ավարտվեցին կատարյալ ձախողմամբ: Նման իրադրության պայմաններում 1676 թ. սկսվեց ռուս-թուրքական պատերազմ: Սուլթանի և Ղրիմի խանի 100-հազարանոց բանակը ներխուժեց Ուկրաինայի տարածքը և փորձեց գրավել Կիևը: 1677 թ. օգոստոսին Չիգիրինի մոտ թուրք-թաթարական բանակը ջախջախիչ պարտություն կրեց ռուսական զորքերի կողմից: 1678 թ. թուրքական զորքերը մեծ վեզիրի հրամանատարությամբ կրկին անցան Դնեստրը և գրոհով վերցրին Չիգիրինը: Թեև քաղաքին մոտեցած ռուսական զորամիավորումները կարողացան ստիպել թուրքերին, որպեսզի նրանք հեռանան Չիգիրինից, սակայն այդ ժամանակ Ռուսաստանը ի վիճակի չեղավ օսմանցիներին լրիվ դուրս մղել Աջափնյա Ուկրաինայից: Բաչաչում կնքված համաձայնագրով, Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկին թուրքերին զիջեց ուկրաինական Պոդոլյա նահանգը: Ավելին, նա համաձայնվեց հարկատու լինել թուրքերին: Սակայն հետագայում նա հրաժարվեց այդ պայմանագրից և երեք անգամ փոփոխակի հաջողությամբ հանդես եկավ թուրքերի դեմ: Սակայն այնուհետև նրա համար սկսվեց անհաջողության մի շրջան, իսկ 1676 թ. օսմանցիները վճռական պարտության մատնեցին իրենց այդ անհաչտ թշնամուն: Ժուրավնո կոչված վայրում կնքված նոր հաշտության պայմանագրով Լեհաստանի թագավորը ստիպված էր թուրքերին զիջել ողջ Պոդոլիայի շրջանը ռազմավարական նշանակություն ունեցող Կամենեց-Պոդոլսկ ամրոցով հանդերձ: Դա թուրքերին հնարավորություն էր տալիս իրենց իշխանությունը հաստատել Սև ծովի հյուսիս-արևմտյան մասի վրա և այդ տարածաշրջանում իրագործել կրկնակի «զսպման» քաղաքականություն՝ լեհերի և ռուսների նկատմամբ: Դրանով Ստամբուլը հնարավորություն էր ստանում նաև լուրջ արգելք հարուցել ռուսների նկրտումների առջև ուկրաինական հողերի նկատմամբ:

1681 թ. հունվարին Բախչիսարայում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքվեց պայմանագիր, որով վերջինս ստիպված եղավ ճանաչել Ձախափնյա Ուկրաինայի և Կիևի միացումը Ռուսաստանին: Իսկ Աջափնյա Ուկրաինան մնում էր Օսմանյան կայսրության կազմում: Կողմերը պայմանավորվում էին Բուգ և Դնեստր գետերի միջև ընկած տարածքներում չկառուցել ամրոցներ: Պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև քսան տարի ժամկետով հաստատում էր զինադադար: Այսպիսով, անկման ու վայրէջքի ճանապար-

հով ընթացող Օսմանյան կայսրությունը Բախչիսարայի պայմանագրով մեկ անգամ ևս ընկրկում էր ընդարձակվող ու ծավալվող Ռուսական կայսրության առջև, Արևելյան Եվրոպայում նրան զիջելով մի կարևորագույն ռազմահենակետ:

Մեծ վեզիրի պաշտոնում Ահմեդ Քյոփրյուլուին փոխարինած Կարա Մուստաֆան (Սև Մուստաֆա) փայփայում էր հեռուն գնացող փառասիրական նպատակներ: Կրկնելով Բայազիդ I-ին՝ նա մի անգամ պարծեցել էր, թե ինքը իր ձիերը կապելու է Հռոմի Սբ. Պետրոսի տաճարում և Վիեննան գրավելուց հետո Օսմանյան բանակը շարժելու է Հռենոսի ուղղությամբ: Այսպիսով, Կարա Մուստաֆայի մտասևեռումը Վիեննան էր, մի բան, որ չէր հաջողվել իրականացնել Սուլեյման Հիասքանչին:

Երբ Հունգարիայում բռնկեց ապստամբություն, Մուստաֆան ենթադրեց, որ եկել է իր երազանքը իրականացնելու ժամանակը: Այդ ապստամբությունը հրահրվում էր բողոքականների կողմից, որոնք դժգոհ էին իրենց նկատմամբ Հաբսբուրգ-կաթոլիկների իրականացրած հալածանքներից: Ապստամբների առաջնորդ կոմս Էմմերիխ (Իմրե) Թեքելին դիմեց սուլթանին օգնության խնդրանքով: Վերջինս ոչ միայն խոստացավ դա անել, այլև Թեքելիին ճանաչեց որպես օսմանյան ինքնիշխանության ներքո Արևմտյան Հունգարիայի թագավոր:

Ստամբուլում որոշում կայացվեց պատերազմ սկսել Ավստրայի դեմ: 1682 թ. աշնանը Ստամբուլում Սերալի առջև դրվեցին սուլթանական իշխանության խորհրդանիշները, որոնք ազդարարում էին այն մասին, որ մոտ ժամանակներում սուլթանը մեկնելու է քաղաքից:

1683 թ. վաղ գարնանը օսմանյան բանակը սուլթանի գլխավորությամբ զորաշարժ կատարեց դեպի Կենտրոնական Եվրոպա: Ռազմական գործողությունների իրականացման պատասխանատվությունը սուլթանը դրեց մեծ վեզիր Կարա Մուստաֆա փաշայի վրա, նրան հանձնելով մարգարեի դրոշը: Թուրքական արշավող զորքերին միացան նաև իրենց դաշնակից՝ հունգարական ֆեոդալների զորքերը Իմրե Թեքելիի գլխավորությամբ, ինչպես նաև Ղրիմի խան Սելիմ-Գիրեյի մեծաթիվ հեծելազորը: Պատերազմն ընթանալու էր քրիստոնյաների դեմ իսլամի «սրբազան պատերազմի» նշանաբանի ներքո:

Սուլթանի ավելի քան 170-հազարանոց բանակը ներխուժեց Արևմտյան Հունգարիայի սահմանները՝ ուղղություն վերցնելով դեպի Հաբսբուրգների մայրաքաղաք Վիեննա: 1683 թ. հուլիսի կեսերին թուրքերը պաշարեցին քաղաքը: Վիեննայի բնակչությանը ուղարկվեց ավանդական ուղերձ, որով պահանջվում էր հանձնվել և ընդունել «ճշմա-

րիտ հավատը»՝ իսլամը և կամ հեռանալ քաղաքից: Վերջին դեպքում Թուրքերը խոստանում էին կյանքի անվտանգության երաշխիք: Սակայն Վիեննայից ոչ մի պատասխան չեկավ:

Քաղաքի պարիսպները աչքի չէին ընկնում իրենց ամրությամբ և ի վիճակի չէին դիմանալու երկարատև պաշարման: Լուրջ խնդիրներ կային նաև սննդամթերքի առումով: Իսկ ամենակարևորը մայրաքաղաքը պաշտպանում էին փոքրաթիվ ուժեր՝ ընդամենը 13 հազար զինվորներ և աշխարհազորայիններ: Սակայն պաշարվածները առավելություն ունեին իրենց հրետանու թվով և կրակային հզորությամբ:

Վիեննայի պաշտպանները անօրինակ խիզախությամբ ու անձնազոհությամբ երկու ամիս շարունակ հետ էին մղում Թուրքերի կատաղի գրոհները:

Երբ թվում էր, թե քաղաքի պաշտպանների ուժերը սպառվել են և նրանց վիճակը դարձել է օրհասական, նրանց օգնության հասավ Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկին: Վիեննայի մերձակա բարձրունքներից նայելով Կարա Մուստաֆայի ռազմական ճամբարին՝ Սոբեսկին բացականչել էր. «Այդ մարդը վատ է տեղաբաշխել իր ճամբարը: Նա պատերազմից ոչինչ չի հասկանում, մենք հաստատ կջախջախենք նրան»:

1683 թ. սեպտեմբերի 12-ի գիշերը Յան Սոբեսկին իր 25-հազարանոց բանակով անակնկալ կերպով հայտնվեց Վիեննայի պատերի մոտ և թիկունքից հարվածեց Թուրքերին: Հարվածը այն աստիճանի չչմեցուցիչ էր, որ օսմանյան բանակի շարքերը երերացին և զինվորները դիմեցին խուճապահար փախուստի:

Հաղթանակը կատարյալ էր, իսկ օսմանյան հսկայական բանակի ջախջախումը կատարված փաստ: Թուրքերի կորուստները վիթխարի էին. ավելի քան քսան հազար սպանված և տասնյակ հազարավոր վիրավորներ: Զափազանց մեծ էր նաև ձեռք բերված ռազմական ավարը. օսմանցիները ճակատամարտի դաշտում թողեցին երեք հարյուր թնդանոթ, իրենց մարտական դրոշների մի զգալի մասը, զինվորական վրանները, հանդերձանք, սննդամթերք, հարյուր հազար գլուխ եղջերավոր անասուններ և այլն: Պատերազմի դաշտից մեծ վեզիր Կարա Մուստաֆան ևս դիմեց մաղապուրծ փախուստի, փրկելով լոկ մարգարեի դրոշը: Նրա չքեղ վրանը որպես պատերազմական ավար անցավ լեհական թագավորին: Վերջինս որպես հաղթանակի ավետիս ու խորհրդանիշ թագուհուն ուղարկեց Կարա Մուստաֆայի մարտական ձիու ոսկեզօծ սանձը:

Օսմանյան ջախջախված ու բարոյալքված բանակը անկանոն սկսեց

նահանջել դեպի Բուդա: Կտրելով նահանջի ճանապարհը, Յան Սոբեսկու զորքերը Դանուբի մոտ սուլթանական բանակին պարտադրեցին ևս մեկ ճակատամարտ, որը դարձյալ ունեցավ աղետալի ելք Թուրքերի համար: Ի վերջո բանակը վերածվեց խուճապի մատնված փախչող ամբոխի: Քրիստոնյաների բանակը Յան Սոբեսկու և ավստրիացի Կարլոս Լորրեյնացու հրամանատարությամբ անխնա կոտորում էր փախչող Թուրքերին:

Այսպիսով, ինչպես և 1529 թվականին, Վիեննայի պատերի տակ Թուրքերը կրեցին երկրորդ անհաջողությունը: Իր ամոթալի պարտությունը ինչ-որ ձևով արդարացնելու համար, մեծ վեզիր Կարա Մուստաֆան որպես քավության նոխազ ընտրեց Բուդայի նահանգապետ Իբրահիմ փաշային, նրան, ինչպես նաև մի խումբ բարձրաստիճան սպաների մեղադրելով դավաճանության մեջ: Նրանք բոլորը մեծ վեզիրի հրամանով մահապատժի ենթարկվեցին: Սակայն քիչ ժամանակ անց, սուլթանը Կարա Մուստաֆայի մոտ ուղարկեց իր սենեկապետին, նրան հրամայելով վերադարձի ժամանակ իր հետ բերել նաև մեծ վեզիրի գլուխը: Սենեկապետը ճշտիվ կատարեց միապետի հրամանը:

Վիեննայի մոտ ձեռք բերած փայլուն հաղթանակը և հետագա իրադարձությունները ունեցան պատմական խոշոր նշանակություն: Նախ դրանք գալիս էին ողջ Եվրոպային համոզելու, որ Թուրքերին կարելի է հաղթել: Այնուհետև դադարեց օսմանցիների հետագա առաջխաղացումը դեպի Արևմտյան Եվրոպա, որը փրկվեց Թուրք-օսմանների ներխուժումից: Կարա Մուստաֆայի խայտառակ պարտությունը ողջ Եվրոպայի աչքում խորտակեց օսմանցի Թուրքերի հեղինակությունը որպես նվաճող-ազգի:

Ողջ քրիստոնյա աշխարհը ցնծության մեջ էր: Ամենուրեք եկեղեցիներում հնչում էին հաղթանակն ավետող զանգերի զողանջները և տեղի էին ունենում գոհաբանական աղոթքներ:

Վիեննայի տակ օսմանյան բանակի կրած ջախջախիչ պարտությունից հետո սկիզբ է առնում Թուքիայի պատմության մի նոր էտապ, որը Թուրք պատմաբանների իսկ գնահատմամբ ստացել է «նահանջի շրջան» անվանումը («ռիջաթ դևրի»): Կ. Մարքսի արտահայտությամբ «արագորեն գալիս էր օտտոմանյան հզորության և մեծության դարաշրջանի վերջը»: Այլևս անկումը դառնում էր անշրջելի: Այն անխուսափելիորեն իր հետ բերում էր անկայունություն և օսմանյան բանակների անպարտելիության առասպելի կործանում: Հսկայական կայսրության տարածքում ավելի շեշտակի և ուժգին կերպով են սկսում դրսևորվել կենտրոնախույս ձգտումները և ինքնագլխու-

թյան ձգտող ծայրամասային մեծ ու փոքր իշխողների անջատողական տրամադրությունները: Ենիչերիների մշտական խռովությունները, ժողովրդական հուզումները, համարյա անընդմեջ պատերազմների հետևանքով համատարած քայքայումը, կայսրությանը համակած ֆինանսական և տնտեսական ճգնաժամը, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը, ռազմի դաշտերում կրած պարտությունները և դրանց հետևանքով տարածքների կորուստները և մի շարք այլ կարևոր ու երկրորդական գործոններ ունեցան այն հետևանքը, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նշմարվեցին նոր գծեր: Սուլթանների մշտական ագրեսիվությանը և հարձակողականռևանշիստական ոգուն սկսում է փոխարինելու գալ քաղաքական հարաբերական համբերատարությունը և սպասողական դիրքը: Այդ ժամանակներից սկսած թուրքական արտաքին քաղաքականության մեջ երևան է գալիս ավելի շատ ճկունություն: Ոչ միշտ է, որ կառավարող շրջաններն աշխատում են իրենց առջև դրված խնդիրները լուծել բացառապես ուժի (զենքի) օգնությամբ: Նոր պայմաններում ավելի ու ավելի հաճախակի սկսում են դիմել հարցերի լուծման դիվանագիտական ճանապարհին և, ամենակարևորը, աշխատում են ճարպկորեն խուսանավել եվրոպական պետությունների միջև և խաղալ նրանց հակասությունների վրա: Ոգևորված «անհավատների» դեմ տարած մեծ հաղթանակով, Հռոմի պապը սկսեց Եվրոպայի քրիստոնյա միապետներին համոզել կազմակերպելու ևս մեկ, թվով տասնչորսերորդ խաչակրաց արշավանքը:

Յան Սոբեսկու փայլուն հաղթանակները խթանեցին 1684 թ. գարնանը «Սրբազան լիգայի» ստեղծումը, որի անդամներ դարձան Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը, Հռոմի պապը, Հունգարիան և Մալթան: 1686 թ. այդ դաշինքին միացավ նաև Ռուսաստանը: Դաշնակիցները հույս ունեին, որ լիգային կմիանա նաև Իրանը, սակայն դա տեղի չունեցավ: «Սրբազան լիգան» դա մի ռազմական դաշինք էր Օսմանյան կայսրության դեմ պայքարելու և նրա հզորությունը խորտակելու համար: 1684 թ. դաշինքի անդամներից մեկը՝ Վենետիկի հանրապետությունը՝ պատերազմի նոր ճակատ բաց արեց սուլթանի դեմ: Մալթայի ասպետները և Թոսքանայի դքսությունը անմիջապես հանդես եկան Վենետիկի դաշնակցի դերում: Սկզբում ռազմական գործողությունները ծավալվեցին Այբանիայում, Բոսնիայում և Դալմացիայում, իսկ այնուհետև դրանք տեղափոխվեցին Հունաստան: Դաշնակիցները գրավեցին Մորեան, այնուհետև պաշարումից հետո 1684 թ. սեպտեմբերի 25-ին վերցրին Աթենքը: Վենետիկցիների

կողմից Աթենքի պանթեոնը ռմբակոծելու ժամանակ, որտեղ կենտրոնացել էին թուրքական զորքեր, արկերից մեկը հարվածեց այնտեղ գտնվող վառոդի պահեստին, ավերելով տաճարի նշանակալից մասը:

Պատերազմը օսմանցիների դեմ ծավալվեց, ընդգրկելով նոր դաշնակիցների: Ավստրիան 1684 թ. ռազմակալման ենթարկեց Խորվաթիայի մեծ մասը, այն վերածելով ավստրիական նահանգի: 1686 թ. ավստրիական զորքերը գրավեցին Բուդա քաղաքը, սրի քաշելով նրա թուրքական կայազորին: Այսպիսով մեկ ու կես հարյուրամյակ տևած թուրքական տիրապետությունից հետո Բուդան կրկին անցավ հունգարների ձեռքը: 1687 թ. Մոհաչի մոտ, որտեղ թուրքերը 150 տարի առաջ հաղթանակ էին տարել հունգարական թագավորի զորքերի նկատմամբ, ավստրիացիները գլխովին ջախջախեցին մեծ վեզիր Սուլեյման փաչայի բանակը, որի կորուստները հաշվվում էին մոտ քսան հազար մարդ: Այդ հաղթանակի հետևանքով Հունգարիայի մեծ մասն անցավ Ավստրիայի թագավոր Լեոպոլդին, որն իր ավագ որդի Իոսիֆին կարգեց այդ երկրի թագավոր: Ճիշտ է, դաշնակիցներից Լեհաստանը Կամենեց-Պոդոլսկի մոտ կրեց անհաջողություն, բայց դա չազդեց ռազմական գործողությունների ընդհանուր պատկերի վրա: Հետագա իրադարձությունները զարգացում ապրեցին թուրքերի համար ողբալի ձևով: Համարյա ամբողջ Մորեան գրավվեց վենետիկցիների կողմից:

Պատերազմը խթանեց բալկանյան ժողովուրդների պայքարը թուրքական լուծը թոթափելու համար: Բուլղարիայում սկսվեց հուժկու ապստամբություն: Հակաթուրքական շարժումներ բռնկեցին Վալախիայում: Օգտվելով թուրքերի թիկունքում ծայր առած այդ շարժումներից, Ավստրիան ուժեղացրեց իր ռազմական գործողությունների թափը: 1688 թ. իշխան Լյուդվիգ Բավարացին գրավեց Բելգրադը, ինչպես նաև Դանուբի ավազանում մի շարք հանգուցային ամրոցներ: 1689 թ. ավստրիական զորքերը արդեն գործում էին բուլղարական հողերում: Նրանք գրավեցին Վիդինը:

Օսմանյան կայսրությունը հայտնվել էր օրհասական վիճակում: Պատերազմը դատարկեց օսմանյան գանձարանը: Դրությունից ելք գտնելու նպատակով Բ. Դուռը հրամայում է կայսրության ողջ տարածքում ուժեղացնել իմդադ-ի սեֆերիեի (պատերազմական հարկ) գանձումը: Թուրքերի համար միակ փրկարար օղակը եվրոպական պետությունների միջև եղած հակասություններն էին: Այսպես, վախենալով Ավստրիայի չափից ավելի ուժեղացումից, Հաբսբուրգների ոխերիմ թշնամի Ֆրանսիան Հռենոսի մոտ կազմակերպեց խոշոր ռազմական ցույց, որը ստիպեց Ավստրիային Թուրքերի դեմ ճակա-

տից չտապ իր զորքերի մի մասը նետել Ֆրանսիացիների դեմ: Դա հնարավորություն տվեց սուլթանին կատարել նոր զորահավաք: Թեև հետագայում օսմանցիներին հաջողվեց ավստրիացիներին դուրս մղել Բուլղարիայից, Սերբիայից և Տրանսիլվանիայից, սակայն դա իրենց ընդհանուր վիճակի մեջ արմատական փոփոխություն չմտցրեց: Էականը այն էր, որ երբեմնի «անպարտելի» հորջորջված օսմանյան բանակները սկսել էին կրել ծանր պարտություններ և թե՛ Ստամբուլում ու թե՛ Եվրոպայում հասկանում էին, որ այդ պարտությունները ավելի շուտ օրինաչափություն են, քան պատահականություն: Բոլորի համար միանգամայն ակնհայտ էր դարձել, որ եկել է կայսրության հարձակողական խոյանքի ավարտը:

«Սրբազան լիգայի» դեմ ծանր պատերազմի պայմաններում արևելքում օսմանցիների դեմ բացվեց մի նոր ճակատ: 1896 թ. Ռուսաստանի կայսր Պյոտր I-ը ձեռնամուխ եղավ իր երկրորդ Ազովյան արշավանքին: Երկամյա պաշարումից հետո հուլիսին ռուսները գրավեցին Ազովը: Տագանրոգի մոտ Պյոտրը կառուցեց ուժեղ ռազմածովային հենակետ:

Արևմտյան և արևելյան ճակատներում թուրքական զորքերի ծանր կորուստները և հսկայական տարածքներից զրկվելը կայսրության ներսում առաջ բերեցին մեծ լարվածություն: 1687 թ. թուրքական բանակում սկսվեց խռովություն: Միաժամանակ Ստամբուլում բռնկեց խոշոր ապստամբություն: Դրանց հետևանքը հանդիսացավ բանակի և ժողովրդի աչքում վարկաբեկված սուլթան Մեհմեդ IV-ը գահազրկումը: Դրա նախաձեռնողը մեծ վեզիրն էր, որը դիմեց այդ քայլին համընդհանուր խռովության առաջն առնելու համար: Նա բարձր հոգևորականների՝ ուլեմների միջոցով ծանուցեց Մեհմեդ IV-ին, որը ինքը այլևս դադարել է թագավորելուց: Սուլթանը պատասխանեց. «Թող լինի Ալլահի կամքը» և 1687 թ. նոյեմբերի 8-ին հրաժարվեց գահից: Չորս տարի անց նա մեռավ բնական մահով՝ կայսրությունը կառավարելով 41 տարի:

Գահ բարձրացավ Մեհմեդ IV-ի ավագ եղբայր Սուլեյման II-ը (1687-1691), որը երկար ժամանակ գտնվում էր «վանդակում» բանտարկության մեջ: Նոր սուլթանի գահակալության առաջին տարում բանակը դարձյալ բարձրացրեց խռովություն: Սիփահիները մայրաքաղաքի Սուլթան Ահմեդ հրապարակում, իսկ ենիչերիները էթ Մեյդանում իրենց վրանները խփելով, սկսեցին իրենց քմահաճ կամքով իշխանություն իրականացնել: Խռովարարները երկրի մեծամեծերից շատերին կամ աքսորում էին, կամ կողոպտում նրանց տները, իսկ հաճախ նաև սպանում: Նրանք մինչև անգամ մտան մեծ վեզիրի տու-

նը և նրան ընտանյոք հանդերձ սպանեցին: Պետության համար լուրջ բարդություններ ստեղծվեցին նաև արտաքին քաղաքական կյանքում:

Դրությունը շուտափույթ կերպով շտկելու հույսով սուլթանը մեծ վեզիր նշանակեց հայտնի Քյոփրյուլու դինաստիայից Ֆազըլ Մուստաֆա փաշային: Վերջինս դիվանի նիստում համարձակվեց բարձրաձայնել դառը ճշմարտությունը, հայտարարելով, որ «եթե ամեն ինչ այսպես շարունակվի, շուտով մենք թշնամուն կտեսնենք Ստամբուլի դարպասների մոտ»:

Նորանշանակ մեծ վեզիրը գիտակցում էր, որ ռազմական պարտությունների շարանը դադարեցնելու և օսմանյան պետության խաթարված վարկը փրկելու համար անհրաժեշտ է լցնել դատարկ գանձարանը, կատարել կառավարման համակարգի բարեփոխում, վերականգնել ու ամրապնդել բանակը, ինչպես նաև կազմակերպել հաղթական պատերազմ: 1690 թ. մեծ վեզիրը զորաշարժ կատարեց դեպի Սերբիա: Օսմանյան մեծաթիվ բանակը Ֆազըլ Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ սրընթաց շարժվելով առաջ՝ գրավեց Նիշը և Բելգրադը, այնուհետև Դանուբի հոսանքով ընթանալով դեպի հյուսիս, ձեռք բերեց ևս մի շարք հաջողություններ: Սակայն Թուրքերի հույսերը կայծակնային պատերազմի միջոցով Եվրոպայում իրենց դիրքերը վերականգնելու վերաբերյալ բնավ չարդարացան: Պատերազմը ձգձգվեց և ընդունեց «դիրքային» բնույթ: Ճակատամարտերից մեկի ժամանակ Քյոփրյուլուզադե Ֆազըլ փաշան առանց հաղթանակի բերկրանքը ճաշակելու սպանվեց: Թուրքերը Ավստրայի դեմ պատերազմում կրեցին խոշոր անհաջողություններ: Հունգարական ճակատում ևս օսմանյան զորքերին չհաջողվեց արձանագրել թեկուզ և փոքր հաջողություններ: Իսկ Վենետիկը Միջերկրական ծովում պարտության մատնելով սուլթանական նավատորմին, գրավեց Քիոս կղզին:

Չորս տարի կառավարելուց հետո 1691 թ. սուլթան Սուլեյման II-ը մահացավ:

Գահ բարձրացավ Սուլեյմանի եղբայր Ահմեդ II-ը (1691–1695), որի կառավարման շրջանը ևս տևեց շատ կարճ: Նրա օրոք թերևս միակ արձանագրված հաջողությունը այն էր, որ թուրքական նավատորմին հաջողվեց վենետիկցիներից հետ խլել Քիոս կղզին: Երբ այդ հաջողության լուրը հասավ Ստամբուլ, սուլթանը այլևս կենդանի չէր: Նա, ինչպես և ժամանակին նրա երկու եղբայրները, մահացավ ջրդողությունից:

1695 թ. օսմանյան գահը ժառանգեց Ահմեդ II-ի եղբորորդին՝ Մուստաֆա II-ը (1695–1703): Վերջինս թեև իրեն դրսևորեց որպես

կամային հատկանիշներով օժտված և մեծ եռանդի տեր մարդ, որը տենչում էր իր պետության մեջ վերականգնել իր օսմանցի փառաբանված նախորդների մարտական ավանդույթները, սակայն այնուհանդերձ նրան չհաջողվեց իրադարձությունների մեջ բեկում մտցնել և դադարեցնել պետության չարունակվող անկումը:

Մուստաֆա II-ի գահակալման սկիզբը ևս նշանավորվեց պատերազմի ճակատներում կայսրության կրած խոշոր անհաջողություններով: 1697 թ. տեղի ունեցավ թուրք-ավստրիական պատերազմի վճռական ճակատամարտը: Ավստրիացիները տաղանդավոր զորավար, իշխանազուն Եվգենի Սավոյացու հրամանատարությամբ Տիսա գետի մոտ, Զենտե կոչված վայրում, սուլթանական բանակին, որը գլխավորում էր ինքը՝ սուլթանը, հասցրին կործանիչ հարված: Դա Սավոյացու բնութագրմամբ «սարսափելի արյունոտ մի բաղնիս էր»: Միայն սպանվածներով թուրքերը կորցրին 20 հազար մարդ, ևս 10 հազար զինվոր խեղդվեց գետում: Կայսին հասցեագրված զեկույցում Սավոյացին գրում էր, որ «ջրի մեջ կարելի էր կանգնել մարդկանց դիակների վրա, ինչպես կղզու վրա»: Ճակատամարտում ընկան նաև մեծ վեզիրը, չորս վեզիրներ, մեծ թվով փաշաներ, ենիչերիների երեսուն հրամանատարներ և այլն: Իսկ սուլթան Մուստաֆա II-ը փախուստով փրկեց իր կյանքը: Որպես ռազմական ավար հաղթողների ձեռքն անցան 9 հազար սնդամթերքով ու սպառազինությամբ բեռնավորված սայլեր, 60 հազար ուղտեր, մեծ թվով ձիեր և խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, մեծ գումարներ կազմող դրամ, և նույնիսկ մեծ վեզիրի կնիքը, որը մինչ այդ երբեք չէր ընկել թշնամու ձեռքը: Դառը հուսահատության ու վհատության գիրկն ընկած և պարտությունից նվաստացած սուլթանը այլևս երբեք չհայտնվեց ռազմի դաշտում որպես բանակի հրամանատար: Նրա հավակնոտ փորձերը, դառնալու իր երկրի ու պետության փրկիչ, ավարտվեցին կատարյալ ձախողմամբ:

Ֆրանսիայի Լյուդովիկոս 14-րդ թագավորը Ստամբուլում իր դեսպան Ֆրիոլի միջոցով շատ աշխատեց, որ օսմանցիները դուրս գան ընկճված վիճակից և չարունակեն պատերազմը ավստրիացիների դեմ, բայց իզուր: Ջախջախիչ պարտությունից հետո թուրքերը ստիպված էին խնդրել հաշտություն: Նրանք կարոտ էին խաղաղության նաև այն պատճառով, որ տերության համարյա բոլոր կողմերը՝ Եգիպտոսը, Արաբիան, Ղրիմը, Իրանի սահմանամերձ շրջանները ապստամբության մեջ էին: 1698 թ. Կարլովիցի քաղաքում սկսվեցին հաշտության բանակցություններ սուլթանի և «Սրբազան դաշինքի» մեջ

մտնող պետությունների ներկայացուցիչների միջև, որոնք ավարտվեցին 1699 թ. հունվարի 26-ին խաղաղության պայմանագրի կնքմամբ: Պայմանագրի տակ ստորագրել էին Ավստրիան, Լեհաստանը, Հունգարիան, Վենետիկը և Օսմանյան կայսրությունը: Նրա գործողության ժամկետը 25 տարի էր: Կարլովիցիի պայմանագիրը կառուցված էր uti possidetis սկզբունքի վրա՝ «տիրիր ինչին որ տիրում ես»: Դա նշանակում էր, որ պատերազմող կողմերից յուրաքանչյուրը պետք է իր ձեռքում պահի այն տարածքը, որին տիրում էր տվյալ պահին: Այլ կերպ ասած, պայմանագիրը հաստատագրում էր Թուրքերից խլված բոլոր տարածքների անցումը եվրոպացիներին: Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Օսմանյան կայսրության տարածքի առաջին բաժանում: Այդ պայմանագիրը սկիզբ դրեց Օսմանյան կայսրության բաժանմանը եվրոպական պետությունների միջև:

Իսկապես, Կարլովիցիի պայմանագրով Թուրքերն ունեցան խոշոր տարածքային կորուստներ: Հաբսբուրգներին էր անցնում Սլովենիան, Տրանսիլվանիան, Հունգարիայի մեծ մասը, Տիսսա գետից արևելք ընկած մի շարք տարածքներ, որոնք նախկինում պատկանում էին Օսմանյան կայսրությանը: Այդ ձեռքբերումների շնորհիվ Ավստրիան հաստատվում էր բալկանների դարպասների մոտ: Լեհաստանին էր վերադարձվում Աջափնյա Ուկրաինայի մի մասը և Պոդոլյան ու կամենեցը: Վենետիկը կրկին ձեռք էր բերում Մորեան, Սանտա-Մաուրա կղզին և Էգեյան ծովում մի շարք կղզիներ, ինչպես նաև վեց ամրոցներ Դալմացիայում: Սակայն նրա կողմից նախկինում գրաված Կորինֆյան պարանոցից հյուսիս ընկած տարածքներն անցնում էին Թուրքերին: Օսմանցիները հրաժարվեցին ավստրիացիներին հանձնելու հունգարացի «խռովարար» Թեքելիին: Ավելին, նրան տեղափոխեցին փոքր Ասիա, որպեսզի բացառվի նրա առևանգումը:

Կարլովիցիի պայմանագրով հսկայական տարածքների հետ միաժամանակ Թուրքերը կորցնում էին նաև խոշոր եկամուտներ, որոնք այդ երկրամասերից առատորեն հոսում էին Թուրքական գանձարան: Ոչնչով չէր կարելի հաշվել նաև այն վնասը, որ հասցվել էր օսմանների կայսրության ռազմական վարկին:

Պյոտր I-ը հրաժարվեց ստորագրել Կարլովիցիի պայմանագիրը, քանի որ նրանով Ռուսաստանը միայն իրավունք էր ստանում տիրելու Ազովին և նրա շրջակա տարածքներին, որոնք արդեն գտնվում էին նրա տիրապետության տակ: Այդ ժամանակ Ռուսաստանի կայսրը ծրագրեր էր փայփայում Կերչի նեղուցը ձեռք բերելու ուղղությամբ, որի վրայով Ազովի ծովից ճանապարհ էր բացվում դեպի Սև

ծով: Բացի այդ, Պյոտրը «Սրբազան դաշինքի» անդամներին առաջարկում էր ոչ թե թուրքերի հետ կնքել երկարաժամկետ պայմանագիր, այլ միայն երկամյա զինադադար: Սակայն Կարլովիցիում բանակցող կողմերը Անգլիայի և Հոլանդիայի աջակցությամբ հաջողությամբ կարողացան մեկուսացնել Պյոտրին: Հետագայում նա գանգատվում էր, որ «իրեն ավելի քիչ էին նկատում, քան շանը» և ստիպեցին իրեն «հեռանալու դատարկ գրպաններով»:

Առհասարակ պետք է նշել, որ անդամակցելով «Սրբազան դաշինքին», ռուսական կայսրը հետապնդում էր իր սեփական նպատակները: Նա ձգտում էր ոչ միայն Օսմանյան կայսրության հաշվին ընդարձակել իր տարածքները, այլև ներսից պայթեցնել այդ պետությունը, որպես լծակ օգտագործելով Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների հակասուլթանական պայքարը: Ռուսաստանի կողմից «Արևելքի քրիստոնյաներին հովանավորելու» քաղաքականությունը հենց հետապնդում էր այդ նպատակը: Ի դեպ, այդ ուղղությամբ եռանդուն գործունեություն էր ծավալել նաև ռուսական ուղղափառ եկեղեցին, որը պետական կառույցների հետ ձեռք ձեռքի տված գաղտնապես քրիստոնյաներին հրահրում էր թուրքական պետության դեմ, հորդորելով տապալել «անհավատների» ատելի լուծը: Դա ոչ միայն հեռահար նպատակներ հետապնդող, այլև երկարատև ժամանակների համար ծրագրված քաղաքականություն էր: Ցարը կարողացել էր ռուսական եկեղեցական կազմակերպության և արտակրոնական կառույցների չնորհիվ ստեղծել Օսմանյան կայսրությունում գործող գործակալական բավականին ծավալուն ցանց, որի մեջ հատկապես աչքի ընկնող դերակատարություն ուներ Երուսաղեմում ուղղափառների պատրիարք Դոսիֆեյը:

Արևելյան քրիստոնյաների՝ հույների, սլավոնների, հայերի և այլոց կողմից Ռուսաստանի այդ քաղաքականությունը մեկնաբանվում էր որպես ազատագրական առաքելություն, իսկ ռուսներն ընկալվում էին որպես քրիստոնյա ժողովուրդների ազատարարներ: Կարլովիցիի հաշտության պայմանագիրը իրենով նշանավորում էր Օսմանյան կայսրության պատմության մի ամբողջ դարաշրջանի ավարտը նշանավորող կարևոր իրադարձություն: XVII դարի վերջը դա մի ժամանակաշրջան էր, երբ Օսմանյան կայսրությունը այլևս չէր ընկալվում որպես ագրեսիվ-ռազմաշունչ և ծավալապաշտական հակումներ ունեցող պետություն: Անցած երեք հարյուրամյակների ընթացքում Եվրոպան մշտական սարսափի մեջ պահող այդ պետությունը այլևս անդառնալիորեն կորցրել էր իր հարձակողական թափը և քրիստոնյա

աշխարհը վերջապես հնարավորություն էր ստացել ազատ շունչ քաշելու: Թեև այդ կայսրությունը Ասիայում շարունակում էր մնալ որպես ուժեղ պետություն, սակայն Եվրոպայում արդեն ծայր էին առել նրա տարածքների շարունակական ու մշտական կորուստները, որոնք ընդունել էին անշրջելի բնույթ: Ըստ այնմ, հարաճուն կերպով մեծանում էր Օսմանյան կայսրության կախումը արագ զարգացող եվրոպական պետություններից: Իր ռազմական, տնտեսական ու սոցիալական զարգացման մակարդակով կայսրությունը օրըստօրե հետ էր մնում Արևմուտքի վերելք ապրող ազգային պետություններից: Եվ զարգացման մակարդակների միջև խզումը Եվրոպայի ու Օսմանյան կայսրության միջև գնալով ոչ թե նվազում, այլ էլ ավելի էր մեծանում: Կայսրության ռազմական պարտությունները ուղեկցվում էին նաև դիվանագիտության ճակատում նրա պարտություններով, թեև Թուրքիան դեռևս կարողանում էր վարպետորեն օգտագործել եվրոպական պետությունների միջև առկա հակասությունները և առանձին դեպքերում արձանագրել հաղթանակներ դիվանագիտության բնագավառում:

XVII դարի վերջը Օսմանյան կայսրության համար նշանավորվեց նաև նրանով, որ դարավերջին և XVIII դ. սկզբին նրա դեմ հառնում էր մի նոր հզոր ուժ՝ Ռուսաստանը, որն անդուսպ ձգտում էր դրսևորում ի հաշիվ օսմանյան տիրույթների հագուրդ տալու իր ծավալապաշտական նկրտումներին:

Այսուհետև ռուսական գործոնը դառնում էր մի մղձավանջ օսմանյան պետականության համար:

Տևական բանակցություններից հետո վերջապես 1700 թ. հուլիսին Ստամբուլում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր ռուսների համար խիստ չահեկան պայմաններով: Ռուսաստանին էր անցնում Ազովը: Նա իրավունք էր ստանում Ազովի շուրջը ընդլայնել իր տարածքները, նրան էր անցնում Տագանրոգը, Ղրիմի թաթարները պարտավորվում էին դադարեցնել իրենց ներխուժումները ռուսական տարածքները, Ղրիմի խանը այլևս ռուսներից չէր ստանալու ամենամյա հարկ, Ռուսաստանը իրավունք էր ստանում Բ. Դռան մոտ ունենալու իր դեսպանը, դիվանագիտական ներկայացուցչության համար այն նույն պայմաններով, ինչ մյուս քրիստոնյա պետությունները: Այդ բոլորի դիմաց ռուսները պարտավորվում էին քանդել Դնեպրի վրա իրենց պատկանող չորս ամրոցները և ոչ թե դրանք հանձնել թուրքերին, ինչպես նրանք էին պահանջում:

Հիշյալ պայմանագիրը ստորագրվելուց հետո 1702 թ. Ռուսաստանի առաջին մշտական դեսպան Պ. Ա. Տոլստոյը ժամանեց Թուրքիայի

մայրաքաղաք: Այդ իրադարձությունը կարևորվում էր նաև նրանով, որ մինչև Կարլովիցիի պայմանագրի կնքումը եվրոպական երկրների հետ՝ Թուրք-օսմանների դիվանագիտությունը կրում էր միակողմանի բնույթ: Այսինքն մեծամտորեն իրենց համարելով «միակ ժողովուրդը երկրի երեսին» և արհամարական վերաբերմունք ունենալով քրիստոնյա պետությունների նկատմամբ, Թուրքերը մշտապես ընդունում էին դիվանագիտական առաքելություններ, սակայն փոխադարձության հիմքի վրա Եվրոպա չէին ուղարկում իրենցը: Դարերի ընթացքում այդ պրակտիկան գործում էր: Այժմ իրերի վիճակը փոխվում էր: Աստիճանաբար եվրոպական երկրներում սկսում են հայտնվել նաև Թուրքական դիվանագիտական ներկայացուցչություններ:

Առհասարակ պետք է նշել, որ Կարլովիցիի պայմանագիրը իրենով նշանավորեց Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության պատմության մեջ նոր փուլի սկիզբը: Այդ պայմանագիրը առաջին անգամ հաստատագրեց Արևմուտքի նկատմամբ Օսմանյան կայսրության ստատուսը որպես նահանջող պետության: Հետևաբար դիվանագիտությունը, քան պատերազմը, այսուհետև դառնալու էր այդ պետության հիմնական զենքը Եվրոպայի հետ նրա բազմաբնույթ հարաբերություններում: Հիրավի, այդ ժամանակներից սկսած երբեմնի այդ հզոր ռազմական պետության արտաքին քաղաքականության մեջ ուժի գործոնը իր տեղը զիջում էր ճկուն դիվանագիտությանը, որն առավելապես կառուցված էր եվրոպական տերությունների միջև եղած հակասություններն օգտագործելու մարտավարության վրա:

1702 թ. Թուրքիայում գտնվող ռուսական առաջին մշտական դեսպան Պ. Ա. Տոլստոյը գրում էր, որ Թուրքերը «ճանաչեցին քաղաքականությունն ու սիրեցին այն»: Ըստ այնմ, նոր որդեգրված քաղաքականության բնորոշ հատկանիշը դարձավ Օսմանյան կայսրության «խաղաղասիրական» վարքագիծը: Այդ պետությունն ակնհայտորեն խուսափում էր հարևանների հետ հախուռն ու սանձարձակ ռազմական կոնֆլիկտներից ու առճակատումներից, թեև Կարլովիցիից հետո Եվրոպայում ստեղծված միջազգային իրադրությունը միանգամայն բարենպաստ էր նոր արկածախնդրությունների մեջ մխրճվելու և նվաճողական քաղաքականություն իրագործելու համար: Հիշենք, որ Օսմանյան կայսրության գլխավոր հակառակորդները այդ ժամանակ զբաղված էին համաևրոպական այնպիսի խոշոր պատերազմներով, ինչպիսիք էին իսպանական ժառանգության համար պատերազմը (1701-1714) և Հյուսիսային պատերազմը (1700-1721):

Ժամանակակից Թուրք պատմաբանները XVIII դարի Օսմանյան

կայսրության արտաքին քաղաքականությունը բնութագրում են որպես «չեզոքության» քաղաքականություն (tarafsizlik)։ Անկասկած այդ «չեզոքությունն» ու «խաղաղասիրությունը» կրում էին հարաբերական ու ստիպողական բնույթ, քանի որ այդ պետությունը դեռ վերջնականապես չէր սպառել իր ռազմաշունչ եռանդը և մանավանդ բնավ չէր կորցրել իր «ռազմական օկուպանտի» վաղեմի հակումները։ Այդ առթիվ Դմիտրի Կանտեմիրը, այդ շրջահայաց և ուշիմ մարդը, որ երկար տարիներ ապրել էր սուլթանական պալատում և քաջատեղյակ էր Թուրքիայի արտաքին քաղաքականության նրբություններին, մեծ վեզիր Զորլուլու Ալի փաշայի քաղաքական գիծը բնութագրում էր հետևյալ կերպ. «...Նա երազում էր նվաճումների մասին, սակայն չէր ցանկանում երկիրը ենթարկել վտանգի և շատ բան կորցնել, հույս ունենալով ձեռք բերել միայն նվաղագույնը»։ Այդ նույն միտքը Պյոտր I-ին գրած նամակում ավելի պատկերավոր ձևակերպում է ստանում Երուսաղեմի պատրիարքի կողմից. Թուրքերը,- գրում է նա,- «երբ աղքատ են, պնդում են, որ իրենք խաղաղասեր են»։

Այսպիսով միանգամայն ակնհայտ էր, որ թեև Ասիայում Օսմանյան կայսրությանը դեռևս հաջողվում էր պահպանել իր տարածքային ամբողջականությունը, սակայն XVII դարի վերջերից սկսած սկիզբ էր առել Եվրոպայում նրա տիրույթների կրճատման շրջանը։ Արևմուտքը իր վերելք ապրող ազգային պետություններով անդառնալիորեն գերազանցում էր Օսմանյան պետության ուժին և հզորությանը։ Նրանց միջև առաջացած խզումը այսուհետև ավելի էր խորանալու և աճելու ոչ միայն ռազմական ներուժի, այլև տնտեսական ու սոցիալական զարգացման մակարդակի առումով։ Անկասկած, երբ ավարտին էր մոտենում XVII դարը, այն դարձավ օսմանյան պատմության մի ամբողջ դարաշրջանի վերջը։ Եվրոպայի քրիստոնյա պետությունները, որոնք անցած ավելի քան չորս հարյուրամյակների ընթացքում սարսափի մեջ էին թուրքերի ռազմաշունչ ծավալապաշտության հետևանքով, այժմ արդեն հանգիստ չունչ էին քաշում։ Միաժամանակ Օսմանյան կայսրության աննկատ, սակայն հարաճուն կախվածությունը Եվրոպայից, շատերի համար սկսեց ընկալվել որպես քաղաքական իրողություն։

Եվրոպական ճակատներում կրած պարտությունները անմիջապես իրենց բացասական անդրադարձներն ունեցան Օսմանյան կայսրության ներքին վիճակի վրա։ 1703 թ. հերթական անգամ ենիչերիները և սիփահիները ապստամբեցին։ Նրանք հայտարարեցին, որ հրաժարվում են դեպի Վրաստան կազմակերպվող արշավանքին

մասնակցելուց, մինչև որ իրենց չվճարվի իրենց հասանելիք աշխատավարձը: Ապստամբության համար առիթ էր ծառայել նաև շեյխ-ուլ-իսլամ Ֆեյզուլլահ-էֆենդիի կամայականություններն ու բռնությունները: Վերջինս, օգտվելով սուլթանի վրա ունեցած ազդեցությունից, բոլոր բարձր պաշտոնները հանձնել էր իր հարազատներին ու բարեկամներին: Խռովարարների հսկայական բանակը, որին միացան նաև կրոնական դպրոցների՝ մեդրեսեների աշակերտ-սոֆթերը, մեծ թվով արհեստավորներ, վաճառականներ և այլն, մարգարեի սրբազան դրոշը պարզած, մուֆթիի քաջալերանքով, շարժվեցին դեպի Էդիրնե, որտեղ այդ ժամանակ գտնվում էր սուլթան Մուստաֆա II-ը: Մայրաքաղաքի բարձր աստիճանավորների ու հոգևորականության շրջանում ապստամբների նկատմամբ վերաբերմունքի հարցում առաջացան երկպառակություններ: Նրանց մի մասը հարեց խռովարարներին: Երկիրը հայտնվեց քաղաքացիական պատերազմի սպառնալիքի առջև: Ամբոխը սկսեց հարձակումներ գործել իրենց համար ատելի աստիճանավորների տների վրա: Ապստամբ ենիչերիները սպանեցին իրենց հրամանատար Հաչիմ-զադե Մուրթազա-աղային, որի նկատմամբ վաղուց ոխ էին պահում: Խռովարարների առաջնորդները իրենց քմահաճույքով պաշտոնից հեռացնում էին իրենց համար անցանկալի բարձր աստիճանավորներին և նրանց փոխարեն նշանակում իրենց մարդկանց: Նրանք նույնիսկ Էդիրնե ուղարկեցին մի պատվիրակություն, սուլթանից պահանջելու համար, որ նա իրենց հանձնի մի շարք պալատականների, որոնց իրենք մեղադրում էին պետության հիմքերը քանդելու մեջ:

Սուլթանը փորձեց մարել խռովությունը ապստամբների մի շարք պահանջները անհապաղ բավարարելու ճանապարհով: Նա, օրինակ, Էդիրնեյից խոշոր գումար ուղարկեց ենիչերիների աշխատավարձը վճարելու և նրանց դրամական պարգև բաժանելու համար: Այնուհետև նա պաշտոնազուրկ արեց և աքսորեց շեյխ-ուլ-իսլամ Ֆեյզուլլահ-էֆենդիին:

Միաժամանակ Մուստաֆա II-ը Էդիրնեում կենտրոնացրեց իրեն հավատարիմ զորքեր, որպեսզի ճնշի ապստամբությունը: Տեղեկանալով այդ մասին, 1703 թ. օգոստոսի 10-ին ենիչերիները Ստամբուլից շարժվեցին Էդիրնե: Ճանապարհին նրանք նոր սուլթան հռչակեցին Մուստաֆա II-ի եղբորը՝ Ահմեդին: Գործն ավարտվեց առանց արյունահեղության: Էդիրնեում սուլթանի զորքերի կազմի մեջ եղած ենիչերիներն անցան ապստամբների կողմը և միավորվելով նրանց հետ մահվան սպառնալիքով ստիպեցին Մուստաֆա II-ին հրաժարվել

գահից: Նոր շեյխ-ուլ-իսլամը իր հրապարակած ֆեթվայով օրինականացրեց սուլթանի գահազրկումը:

Այսպիսով, ապստամբների կողմից գահ բարձրացվեց երեսնամյա Ահմեդ III-ը (1703-1730): Նա հրամանագիր արձակեց խռովարարներին ներումն չնորհելու վերաբերյալ: Սակայն միաժամանակ անց, նոր սուլթանը դաժանորեն հաշվեհարդար տեսավ իրեն գահ բարձրացրած ենիչերիների և այլ խռովարարների հետ: Ժամանակակիցների վկայությամբ, մի քանի տարվա ընթացքում սուլթանի հրամանով սպանվեցին ավելի քան 30 հազար մարդ, որոնք մեղադրվում էին սուլթանի ու պետության դեմ ըմբոստանալու մեղադրանքով:

Սուլթան Ահմեդ III-ը թեև կառավարեց քսանյոթ տարի, սակայն ժամանակակիցների բնութագրմամբ, նա պետական գործերի նկատմամբ դրսևորում էր անտարբերություն: Պատահական չէ, որ նրա կառավարման շրջանը նշանավորվեց արտաքին քաղաքական բարդություններով:

Թվում էր, թե 1700 թ. Ռուսաստանի հետ պայմանագիր կնքելուց հետո Օսմանյան կայսրության համար ռուսական ճակատում հաստատվել էր խաղաղ անդորրության մի շրջան: Սակայն իրադարձությունների ընթացքը ցույց տվեց, որ Ստամբուլի այդ հույսերը տեղին չեն: 1700 թ. պայմանագրի ստորագրումից հետո դաշնակցելով Դանիայի և Լեհաստանի հետ՝ Ռուսաստանը Շվեդիայի դեմ սկսեց Հյուսիսային մեծ պատերազմը Բալթիկ ծովի համար: 1709 թ. Պոլտավայի ճակատամարտում ծանր պարտություն կրած Շվեդիայի թագավոր Կարլոս XII-ը սուլթան Ահմեդ III-ին խնդրեց քաղաքական ապաստան: Վերջինս ոչ միայն հյուրընկալ վերաբերմունք ցույաբերեց նրա նկատմամբ, այլև մերժեց ռուսների պահանջը չվեդների թագավորին իրենց հանձնելու վերաբերյալ: Ռուսների վրեժխնդրության ցույցը իրեն երկար սպասեցնել չտվեց: Նրանք զինված ոտնձգություն կատարեցին թուրքական տարածքի նկատմամբ, զորքեր մտցնելով Մոլդավիա: Ստամբուլի վրա ճնշումը սաստկացնելու նպատակով ռուսները Բ. Դոնից սկսեցին պահանջել Կերչը, ինչպես նաև Սև ծովով ազատ նավարկության իրավունք: Սակայն թուրքերը լի էին վճռականությամբ Սև ծովը պահելու որպես իրենց «ներքին լիճ», կամ ինչպես իրենք էին ասում՝ «որպես մաքուր ու անաղարտ կույս»:

Մի խոսքով ռուս-թուրքական պատերազմը գնալով հասունանում էր:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՃԳՆԱԺԱՄԸ: ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ:

Սիթվատորոգի պայմանագիրը առաջին դիվանագիտական փաստաթղթերից մեկն էր, որն իրենով նշանավորում էր Օսմանյան կայսրության հզորության անկման սկիզբը: Արդեն անդառնալիորեն անցել էին այն ժամանակները, երբ օսմանյան բանակները հաղթական երթով գրավում էին երկրներ: Այդ ժամանակաշրջանից սկսած ծայր է առնում նախկինում հզոր թուրքական բանակի պարտությունների շրջանը: Եվրոպայում ենիչերիները և սիփահիները դրսևորեցին իրենց անկարողությունը դիմագրավելու նոր, արդիական ձևով կազմավորված արհեստավարժ բանակներին: Միանգամայն ակներև էր, որ կայսրությունը թևակոխել էր իր վայրէջքի շրջանը: Դրա պատճառները բազմաթիվ էին: Դրանցից կարևորագույններից մեկը ռազմաավատական համակարգի քայքայումն էր: Հենց դա էր այն որոմը, որը ներսից կրծում էր օսմանյան համակարգի հիմքերը: XVI-XVII դարերում ավելի ու ավելի ակնհայտ էին դառնում թիմարային համակարգի քայքայման նշանները, որն իրենից ներկայացնում էր օսմանյան հասարակության սոցիալական կառուցվածքի հիմքը, նրա պետականության անկյունաքարը: Հաղթական պատերազմները նպաստել էին հարստության կուտակմանը ավատատերերի ձեռքերում: Աստիճանաբար ստեղծվում էր խոշոր ավատական-կալվածատիրական տնտեսություն: Ռազմական ավարը ևս հաջող նվաճումների ժամանակ ֆեոդալների եկամուտների մեջ գրավում էր կարևոր դեր: Սակայն երբ կայսրությունը կորցրեց Եվրոպայում տարածքային զավթումներ կատարելու իր ընդունակությունը և ռազմական ավարի աղբյուրը չորացավ, ավատատերերն ու զինվորական խավը կորցրին իրենց հետաքրքրությունը պատերազմների նկատմամբ: Պատերազմը նրանց համար դառնում էր վտանգավոր, միաժամանակ ոչ շահաբեր զբաղմունք: Դարեր շարունակ տևած պատերազմները օս-

մանների մոտ արմատավորել էին նպատակների միասնության զգացողություն: Այդ պատերազմները նրանց բերել էին հարստություն ու բարեկեցիկ կյանք: Նշված երևույթների անխուսափելի հետևանքը դառնում էր այն, որ կամ գնալով նվազում էր սիփահիների թվաքանակը, և կամ նրանք պարզապես հրաժարվում էին ռազմական գործողություններին մասնակցություն բերելուց, քանի որ իրենց կրած զրկանքների և մեռնելու հավանականությունը չէր փոխհատուցվում նյութական ձեռքբերումներով, ինչպես առաջ էր: Նման պայմաններում սիփահիները, իրենց կյանքի նվազագույն վտանգի դեպքում, հաճախ լքում էին պատերազմի դաշտը, ինչպես դա արեցին 1596 թ. Հունգարիայում, Մեզե-Քերեսթեշի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Այդ միջադեպից հետո սուլթանը 30 հազար սիփահիների զրկեց իրենց կալվածքներից: Ռազմական ծառայության դիմաց ավատներ ստացած սիփահիները ոչ միայն խուսափում էին իրենց զինվորական պարտականությունները կատարելուց և դիմում էին դասալքության, այլև դառնում էին հասարակության համար վտանգավոր տարրեր: Օսմանյան կայսրությունում կային տասնյակ հազարավոր «ֆիրարիներ», այսինքն դասալիք փախստականներ: Թեև իշխանությունները նրանց զրկում էին ավատներից և շատերին մահապատժի ենթարկում, սակայն դասալքությունը և ռազմական ծառայությունից խուսափելը որպես բանակի և պետության հիմքերը քայքայող երևույթ, շարունակում էր գոյություն ունենալ: Քայքայված թիմարատերերը սովորաբար համալրում էին արագ աճող ապաղասակարգայնացված տարրերի խավը: Քանի որ այլևս թշնամի չկար, որին կարելի էր կողոպտել, մարդիկ սկսեցին կողոպտել միմյանց: Եվ քանի որ այնքան հողեր չկային, որ բավարարեին բոլորին, նրանք հոծ զանգվածներով լցվում էին քաղաքները, կամ անկարգություններ սերմանում:

Երբ անընդմեջ թուրքական նվաճումների ժամանակները աստիճանաբար հասան իրենց ավարտին և հողերի ձեռքբերումները գործնականում դարձան անհնարին, իշխանությամբ և ուժով օժտված փեոդալները, որոնց մոտ առկա էր նորանոր հողեր ձեռք բերելու անզուսպ ձգտում, սկսեցին զավթել իրենց իսկ գյուղացիներին պատկանող հողակտորները: Այդպիսով ծնունդ էր առնում նոր հողատերերի մի նոր դասակարգ, որը բաղկացած էր սուլթանի մերձավորներից, պալատականներից, պետական աստիճանավորներից, նույնիսկ արքունիքի ծառաներից, իսկ հաճախ նաև կատարելապես հողի հետ առնչություն չունեցող և քաղաքներում ապրող մարդկանցից: Այդ

հողերը, այսպիսով, վեր էին ածվում բաշմաքլրքների կամ արփալրքների, այսինքն դրանց տիրապետումը, որպես կանոն, կապված չէր զինվորական ծառայության հետ և կամ պարզապես դրանք դառնում էին լիակատար սեփականություն: Այդ ճանապարհով զինվորական խավը զրկվում էր իր հողային տիրույթներից, հետևաբար նաև եկամտի աղբյուրից:

Բնական է, որ նման պայմաններում իրենց հողային տիրույթները պահպանելու համար սիփահիները պետք է աշխատեին դրանք դարձնել ժառանգական, որպեսզի իրավունք ունենային այդ հողերը փոխանցելու իրենց ժառանգներին, որոնք ոչ մի առնչություն չունեին զինվորական ծառայության հետ: Նման ճանապարհով, ինչպես նաև գյուղացիության քայքայման ու հողազուրկ դառնալու հաշվին օսմանյան պետության մեջ ծնունդ առավ ժառանգական հողատիրության համակարգը, որի ժամանակ պարտադիր չէր, որ հողատերը մասնակցեր հողի մշակմանը: Հետևաբար պետական-ավատական հողատիրությունը վեր էր ածվում մասնավոր ավատական հողատիրության:

XVII դարի հեղինակ Գյոմուրջինսկին, վկայելով այդ երևույթների մասին, գրում է. «Մինչև հիջրեթի 992 թ. (1584 թ.) գյուղերը և վարելահողերը գտնվում էին սուսերի ասպետների և օջախի զավակների ձեռքում և ուրիշներն ու այլ սրիկաները չունեին դրանք ստանալու հնարավորություն»:

Հողի չահավետության արագ աճին զուգահեռ տեղի էր ունենում ավատական հողաբաժինների կենտրոնացում: Ուղղակի կամ անուղղակի ձևով վաչխառուները, փաշաներն ու բեյերը երբեմն օրենքով, իսկ ավելի հաճախ օրենքի հետ հաշվի չնստելով, ձեռք էին բերում իրավունքներ ռազմական ավատների նկատմամբ: «Սրի մարդկանց» փոխարինելու էր գալիս նոր ձևավորվող ավատական-կալվածատիրական ազնվականությունը, որի համար հողատիրությունը ոչ թե հարստացման օժանդակ աղբյուր էր, այլ հիմնական աղբյուր:

Թիմարային համակարգի քայքայումը հանգեցրեց նրան, որ XVI-XVII դարերում Օսմանյան կայսրության մեջ պայքար բորբոքվեց հողային ֆոնդը վերաբաշխելու համար: Ծնունդ առան չիֆթլիքներ՝ խոշոր կալվածքներ, որոնց տերերը սուլթանի առջև ազատ էին զինվորական պարտականություններից:

Անկասկած իշխանությունները փորձում էին դադարեցնել թիմարային համակարգի քայքայման գործընթացը, սակայն դա արվում էր ծայրահեղ անհետևողականորեն:

Թիմարային համակարգի քայքայման հետևանքով երևան եկած

նոր հարուստներին անվանում էին «այաններ»: Դրանք կարողացել էին իրենց ձեռքերում կենտրոնացնել խոշոր հողային տիրույթներ, իսկ քաղաքներում մեծ թվով անշարժ գույք, զբաղվում էին առևտրով, վաշխառությամբ և այլն: Արդեն XVII դ. վերջին այանների ձեռքերում կենտրոնացված էին այնպիսի հարստություններ, որ նահանգային իշխանությունները ստիպված էին հաշվի նստել նրանց հետ: Իսկ XVIII դարում այանները հայտնվեցին նաև բարձրագույն պաշտոններում նահանգային վարչական ապարատի համակարգում: Երբեմն նրանք օժտված էին լինում ավելի մեծ իշխանությամբ, քան սուլթանական նահանգապետերը:

Այանների տրամադրության տակ կային նաև սեփական զինված ուժեր, որոնց թիվը երբեմն հասնում էր հազարների: 1768–1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ այանները պատերազմին մասնակցելու համար տվեցին մոտ 90 հազար զինվոր:

XVIII դ. վերջին այանները վերահսկում էին Օսմանյան կայսրության նահանգների մեծ մասը, որոնցից շատերը միայն անվանապես էին կախված կենտրոնական կառավարությունից: Ռումելիայի այան Ալի-փաշա Յանինցին, օրինակ, XIX դ. սկզբին դարձել էր Բալկաններում համարյա թե ամենախոշոր հողատերը. նրա տարեկան եկամուտը կազմում էր քսան միլիոն ղուրուշ (18 միլիոն ֆրանկ): Փաստորեն նրա իշխանության տակ էին գտնվում Ալբանիան, Էպիրը և Թեսալիայի մի մասը: Նա ձգտում էր ինքնագլխության և բացահայտ կերպով հանդես էր գալիս սուլթանի դեմ, նույնիսկ հավակնություն ունենալով ձեռք բերելու անկախություն: Սուլթանը ստիպված էր տևական պատերազմներ մղել անհնազանդ այանի դեմ, նրան «կարգի հրավիրելու» համար:

XVIII դ. երկրորդ կեսին Անատոլիայի արևմուտքում տեր ու տնօրինություն էր անում Կարաօսմանլու այանի տոհմը: Նրա ընտանիքի անդամները և ժառանգորդները իրենց ձեռքերում կենտրոնացրել էին հսկայական հարստություններ ու իշխանություն Այդինում, Իզմիրում, Մենեմենում, Իսպարտայում և Արևմտյան Անատոլիայի մի շարք այլ ծովափնյա շրջաններում:

Այանների հարստացումն ու բարձրացումը հանգեցրեց օսմանյան հասարակության կառավարող շրջանների ներսում հակասությունների սրման: XVIII դարում այանները հաջողությամբ դիմագրավում էին մայրաքաղաքային ազնվականությանը իշխանության ու եկամուտների համար պայքարում: Նրանց ազդեցությունը այնքան մեծ էր, իսկ հզորությունը այնքան չոչափելի, որ Բ. Դուռն անում էր հնա-

բավոր ամեն ինչ, որպեսզի գեթ թույլ չտա այանների ներթափանցումը պետական ապարատի մեջ բարձր պաշտոններ զբաղեցնելու համար: Սուլթանը և Բ. Դուռը գիտակցում էին, որ այանները, որոնք դրսևորում էին բացահայտ անջատողական ձգտումներ, իրենցից ներկայացնում են սպառնալիք կայսրության ամբողջականությանը: Սակայն ավելի ու ավելի թուլացող վարչությունը զգում էր այանների կարիքը, քանի որ ինքը արդեն ի վիճակի չէր լուծելու հսկայական պետության տարբեր նահանգներում ծագող տնտեսական խնդիրները և վերահսկելու քաղաքական իրադրությունը:

Բնական է, որ այդ բոլորը երկրի ներքին վիճակը դարձնում էր անկայուն, ուժեղացնում էր կենտրոնախույս միտումները և վերջին հաշվով թուլացնում օսմանյան պետության ռազմական հզորությունը: Թուրքական երբեմնի փառաբանված բանակը կորցնում էր իր մարտական հատկանիշները: Գնալով սուլթանները ավելի մեծ կախման մեջ էին ընկնում ենիչերիներից: Այն ավանդական նվերները, որոնք իրենց գահակալության ժամանակ սուլթանները բաշխում էին ենիչերիներին («ջուլյուս բախշիշի», «գահակալման նվեր»), վերածվեց մի տեսակ պարտադիր հարկի, որի միջոցով սուլթանները ձեռք էին բերում գահը զբաղեցնելու իրավունք: Ենիչերիները վերածվել էին խռովությունների մշտական աղբյուրի: Նրանք կազմակերպում էին պալատական հեղաշրջումներ, պաշտոնազուրկ էին անում իրենց ոչ ձեռնտու սուլթանների ու վեզիրների, դարձել էին ներքին, իսկ երբեմն արտաքին սադրանքների գործիք:

Քանի որ պետական զանձարանի դատարկ լինելու պատճառով այլևս հնարավոր չէր ենիչերիներին կանոնավոր կերպով վճարել աշխատավարձ, սկսեցին ոչնչացնել ենիչերիների փակ կաստայականությունը: Այսինքն՝ նրանց թույլ տրվեց զինվորական ծառայության հետ մեկտեղ՝ իրենց հացը հայթայթել արհեստների միջոցով, առևտրով և այլն: Դևշիրմեի փոխարեն ենիչերիների զորաբանակը սկսեց համալրվել հենց իրենց՝ ենիչերիների զավակներով, զորաբանակների ցուցակներում սկսեցին տեղ գտնել տասնյակ հազարավոր «մեռած հոգիներ», որոնց աշխատավարձը գրպանում էին հրամանատարները: Ենիչերիներին թույլատրվեց նաև ամուսնանալ: Ենիչերիական դիրքը և պաշտոնը ևս դարձավ վաճառքի առարկա: Շատ թեթև գումարներ ստանալով, մահմեդականների որդիներին ևս ընդունում էին ենիչերի: Դա բոլորովին կերպարանափոխեց այդ ռազմական կառույցը: Բացի այն, որ այդ բոլորը անխուսափելիորեն ազդում էր ենիչերիական զորամասերի կարգապահության վրա, գնալով ենիչերիները

դառնում էին անսանձ ու անկառավարելի: Բացի այդ, սկսում էին ենիչերիական գնդերի մեջ մտնել հասարակության տականքները՝ շրջմոլիկներ, ջորեպաններ, ուղտապաններ, խոհարարներ, ավազակներ և ամեն տեսակի ապադասակարգայնացված տարրեր: XVII դարի Թուրք հեղինակ Խոջի-բեկը սուլթան Մուրադ III-ին գրած իր ընդարձակ զեկուցագրում («ռիսալա») պետական գործերի մասին, նշում էր, որ այդ մարդիկ խաղաղ ժամանակներում մայրաքաղաքում կազմում էին սինքլորների մի բազմություն, որն ամեն վայրկյան պատրաստ էր խռովություններ հարուցել, բայց երբ գալիս էր պատերազմի ժամանակը, նրանք ամեն միջոց գործադրում էին՝ արշավանքին չմասնակցելու համար և նույնիսկ փախչում էին պատերազմի դաշտից: Լինում էին դեպքեր, երբ փողով առնում էին միայն ենիչերիների տիտղոսը, որն իրավունք էր տալիս զինված ման գալ փողոցներում, վիրավորել ու անպատվել ում որ ցանկանային, ստանալ «բախշիշ» ամեն մի նոր թագավորող սուլթանից և այլն:

Օսմանյան կայսրության սոցիալական և տնտեսական քայքայման և խորացող ճգնաժամի պատճառներից էր նաև բնակչության արագ աճը: Թուրք պատմաբան ու տնտեսագետ Օ. Բարքանի հաշվումներով, 1520-1680 թվականների ընթացքում Անատոլիայի բնակչությունն աճել էր 55,9 տոկոսով, իսկ Ռումելիայի մի շարք սանջակների բնակիչների թվաքանակը՝ 71 տոկոսով: Հողերը չէին բավականացնում: Զգացվում էր «հողային սով»: Անատոլիան լցվել էր անհող գյուղացիությամբ, որոնք զուրկ էին ապրուստի միջոցներից: Դրա հետևանքով երկրում երևան եկան նշանակալի թվով «չիֆթերոզաններ», այսինքն այնպիսի գյուղացիներ, որոնք ստիպված էին լինում լքել ու հեռանալ իրենց հողից: Քաղաքներում ևս չգտնելով որևէ աշխատանք՝ նրանք համալրում էին օրինազանց, դեպի խռովություններն ու ապստամբությունները հակում ունեցող մարդկանց շարքերը, կամ պարզապես զբաղվում էին ելուզակությամբ ու բանդիտիզմով: Նրանք հաճախ միանում էին պատերազմների նկատմամբ իրենց հետաքրքրությունը կորցրած ավատատերերի ու խոշոր այանների ստեղծած սեփական բանակներին, կամ հենց իրենք էին ստեղծում ավազակախմբեր: Նրանք դուրս էին գալիս կառավարության հնազանդությունից և վերածվում էին անսանձ ու ինքնագլուխ հավաքականությունների:

Ճգնաժամը ծնող պատճառներից էին նաև գների աճը և դրամի արժեզրկումը: Նոր Աշխարհից (Ամերիկայից) իսպանա-ամերիկյան ոսկու հոսքի հետևանքով տեղի էր ունենում գների հարաճուն աճ, որն իր հետ բերեց թուրքական արծաթյա դրամի արժեզրկում և

բարձր մակարդակի սղաճ, որն այդ ժամանակներում սովորական երևույթ էր միջերկրածովյան ավազանի երկրների մեծ մասում: Սղաճի հետևանքները առանձնապես ծանր էին տանում այն մարդիկ, որոնք ապրում էին ֆիքսված եկամուտներով: Ստեղծված պայմանները նման մարդկանց մղում էր կաշառակերության, կոռուպցիայի, անօրինական գործողությունների միջոցով բնակչությունից չորթումներ կատարելու: Ստեղծված պայմաններում օսմանյան կառավարությունը ստիպված էր 1584 թ. դեվալվացնել իր ոսկյա և արծաթյա դրամը: Դրա հետևանքով աղնիվ մետաղների պարունակությունը շրջանառվող դրամի մեջ խիստ պակասեց և ավելացավ պղնձի պարունակությունը: Այդ առթիվ թուրք պատմիչներից մեկը գրել է, որ դրամը դարձավ «այնքան թեթև, որքան նուշի տերևները, և այնքան ոչ մի բան չարժեցող, որքան ցողի կաթիլները»: Իսկ Ստամբուլում իսպանական դեսպանը հաղորդում էր Ֆիլիպ II թագավորին, որ «կայսրությունը այն աստիճանի աղքատ է և այն աստիճանի հյուծված, որ այժմ շրջանառության մեջ գտնվող միակ դրամը ասպերսներն են, որոնք ամբողջապես հատված են երկաթից»:

Գործազրկությունը մարդկանց մղում էր կեղծ դրամ հատելու և դիմելու զանազան ֆինանսական անօրինականությունների: Դրությունից ելք գտնելու համար զանձարանը ստիպված էր անընդհատ ավելացնել հարկերն ու տուրքերը: 1651 թ. Ստամբուլում բռնկեց խոշոր խռովություն, որի պատճառը Բ. Դոան հանձնարարությամբ կատարված դրամի հերթական կեղծումն էր: Արհեստավորների և վաճառականների հազարավոր մարդկանցից բաղկացած ամբոխը դուրս եկավ մայրաքաղաքի փողոցները, պահանջելով փոխել նոր աքչեի հարկադրական կուրսը: Մեծ վեզիրը հրաժարվեց ընդունել խռովարարների պահանջը, որից հետո նրանց չարքերը սկսեցին արագորեն աճել: Շուտով մայրաքաղաքի ավելի քան 50 հազար արհեստավորներ ու վաճառականներ, իրենց հետ հարկադրաբար վերցնելով շեյխուլ-իսլամին, շարժվեցին դեպի մեծ վեզիրի նստավայրը: Երբ իննամյա սուլթան Մեհմեդ IV-ը դուրս եկավ բորբոքված ամբոխի առջև, նրանից պահանջեցին փոխել բնակչության համար անընդունելի աքչեի նոր կուրսը, ինչպես նաև նոր մտցված հարկերը: Տեսնելով, որ իրադրությունը ծայրահեղորեն սրվել է, սուլթանի մերձավորները նրան խորհուրդ տվեցին բավարարել քաղաքային բնակչության պահանջը: Սակայն խռովարարները վերջնականապես հանգստացան միայն այն բանից հետո, երբ Մեհմեդ IV-ը պաշտոնանկ արեց նրանց համար բոլոր անցանկալի աստիճանավորներին և նշանակեց նոր մեծ վեզիր:

Ենիչերիներն ու սիփահիները հրաժարվում էին աշխատավարձ ստանալ արժեքազուրկ դրամով: Այդ պատճառով բանակում հաճախ բռնկում էին հուզումներ: Կենտրոնական իշխանության հարաճուն անկման պայմաններում գնալով մեծանում էր դժգոհությունը: Կենտրոնական կառավարությունը անկարող էր վերահսկել իրադրությունը երկրում, ժամանակին ու արագորեն կանխելու համար խռովություններն ու ապստամբությունները:

Դրամի արժեքազրկման հետևանքով գործազրկության պրոբլեմը էլ ավելի էր բարդանում: Դրա անխուսափելի հետևանքն էր դառնում գների խելագար աճը, կեղծ դրամի հատումը, վաշխառության ծաղկումը և այլն: Ճեղքվածքը լցնելու համար գանձարանը ստիպված էր որոնել եկամուտների նոր աղբյուրներ ի հաշիվ հարկերի բարձրացման: Իսկ հարկային լուծը էլ ավելի էր ծանրանում չարաշահումների ու անօրինական արարքների պատճառով:

XVI դարի երկրորդ կեսի պատմիչ և խոշոր աստիճանավոր Մուստաֆա Սելյանիքին հետևյալ կերպ էր ներկայացնում Օսմանյան կայսրության բնակչության վիճակը. «Պետության նահանգներում արտակարգ հարկերը ժողովրդին հասցրին մի այնպիսի վիճակի, որ նա զզվեց այս աշխարհից և նրանում եղած ամեն ինչից... Երկրի հպատակները կատարելապես քայքայված ու սնանկացած են»:

Որպեսզի փոխվի հանգչող ավատական համակարգը մեկ այլ կառույցով, պետությունը անընդհատ որոնումներ էր կատարում, սակայն ելքը այդպես էլ չէր գտնվում: Ելքերից մեկը շատերը համարում էին հին կարգերի, մասնավորապես Սուլեյման I Կանունիի ժամանակ գործող օրենքների վերականգնումը: Առհասարակ անցյալի նկատմամբ եղած բաղձանքը և սոցիալական հին կարգը պահպանելու փորձերը հետագա երկու դարերի Օսմանյան կայսրության պատմության բնորոշ գիծն էր:

Կայսրության քաղաքական ճգնաժամի գլխավոր պատճառներից մեկն էլ, անկասկած, հանդիսանում էր ճնշված ժողովուրդների պայքարը թուրքական լծից ազատագրվելու համար: Այդ պայքարը առանձնակի թափ առավ XVII դարի վերջին և և XVIII դ. սկզբին:

Այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունը վայրէջք էր ապրում, նրա գլխավոր հակառակորդները գնալով ուժեղանում էին: Թուրքերը դուրս մնացին Եվրոպայի տնտեսական զարգացման հուժկու երթից: Արևմուտքը դարձավ Արևելքից հզոր: Թուրքերը ռազմական գործի բնագավառում անհուսալիորեն հետ մնացին եվրոպական երկրներից: XVIII դարում Թուրքիայում ռազմական գործը գտնվում

էր XVI դարի մակարդակի վրա: Ինչպես Սուլեյման Կանունիի ժամանակներում, թնդանոթները կրակում էին մարմարե գնդերով: Սպառազինության՝ թնդանոթների, հրացանների և այլն արտադրությունը Եվրոպայից հետ էր մնում առնվազն 150 տարով: Բանակի հրամանատարության բոլոր օղակներում իշխում էր գանձագողությունն ու կաշառակերությունը: Սպայական պաշտոնները գնվում էին: Քանի որ ենիչերիների աշխատավարձը վճարվում էր զինվորական գրքույկներ («Էսամե») ներկայացնելիս, ապա այդ գրքույկները դարձել էին առք ու վաճառքի առարկա: Դրանց մեծ մասը ընկնում էր այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք ոչ մի առնչություն չունեին բանակի հետ: Զինվորները Կիսաքաղցած վիճակում էին: Զափազանց մեծ էր մահացությունը բանակում պարբերաբար կրկնվող համաճարակների պատճառով: Բանակում զինվորական խռովություններն ու բունդերը հաճախակի տեղի ունեցող երևույթներ էին: Մեծ չափերի էր հասնում նաև դասալքությունը:

Իր վայրէջքի շրջանում օսմանյան կայսրությունը հաճախ դառնում էր հզոր ապստամբությունների ասպարեզ, որոնք հիմքից ցնցում էին միջնադարյան թուրքական հասարակության հիմքերը և սպառնալից վտանգ ստեղծում սուլթանի իշխանության համար:

1596 թվականից սկսած Անատոլիայում հուժկու թափով ծավալվեցին ջելալիների շարժումները, որոնք թուրքական աղբյուրներում ստացել են «ջելալիների խռովություններ» (Celâli fitreti) անվանումը: Օսմանյան կայսրությունում, որտեղ իսլամի տիրապետող ուղղությունը սուննիզմն էր, հաճախ ապստամբությունների համար որպես գաղափարական դրոշ ծառայում էր իսլամի շիիթական ուղղությունը կամ շիիզմը, որը պարունակում էր մեսիականության գաղափարներ: Շիաները քարոզում էին, որ ավելի քան հազար տարի առաջ անհետացած տասներկուերորդ իմամ Մահդին շուտով հայտնվելու է երկրի վրա, որպեսզի հաստատի արդար կարգեր և մարդկանց ազատի ճնշումից ու հարստահարումից: Ապստամբների շարքերը մշտապես համալրվում էին հողազուրկ և ապրուստի միջոցներից զուրկ գյուղացիներով, հարկային լծի ճնշման հետևանքով իրենց բնակավայրերը լքած ու փախուստի դիմած փախստականներով (ֆիրարի), իրենց կալվածքներից զրկված սիփահիներով, անկանոն զորքերից դասալքության դիմած զինվորներով և այլ տարրերով, որոնք երբեմն համախմբվելով կազմում էին հսկայական բանակներ, ծայրից ծայր ցնցելով Անատոլիան: Հաճախ կառավարության կողմից այդ խռովարարներին ճնշելու նպատակով ուղարկված բանակներն անցնում էին

ապստամբների կողմը, էլ ավելի հուժկու թափ հաղորդելով ջելալիների չարժմանը: 1598 թ. ապստամբներին միացավ նաև մանր ֆեոդալների նշանակալից մասը իրենց զինված ջոկատներով: Դրանցից մեկն էր նաև ոմն Աբդուլխալիմ, որն ավելի հայտնի է Կարա Յազըջի (բառացի՝ «սև գրագիր») անվամբ: Նա այդ անվանումը ստացել էր այն պատճառով, որ ժամանակին եղել էր հրաձիգների (սեկբանների) վաչտերից մեկի գրագիրը: Այդ ֆեոդալների դժգոհության պատճառը այն էր, որ կենտրոնական իշխանությունը հետ էր վերցրել այն ֆեոդալների ավատները, որոնք Ավստրիայի հետ երկարատև պատերազմի ժամանակ խուսափել էին իրենց զինվորական պարտականությունից: Կարա-Յազըջիին միացան բոլոր նրանք, ովքեր տարբեր պատճառներով դժգոհ էին կենտրոնական իշխանությունից: Ապստամբների ճամբարում նույնիսկ հայտնվեցին Ամասիայի նախկին սանջակբեյ Հյուսեին փաշան, Ղրիմի խանի երեք եղբայրները և այլն: Կարա-Յազըջին ստացավ նաև Անատոլիայի մի շարք քրդական և թուրքմենական քոչվոր ցեղերի աջակցությունը, որոնց առաջնորդները դժգոհ էին նրանից, որ Բ. Դուռը ցանկանում էր նրանց նկատմամբ սահմանել խիստ հսկողություն: 1599 թ. Կարա Յազըջին գրավեց Ուրֆան, որտեղ հայտարարեց, որ ինքը երազում տեսել է Մուհամմեդ մարգարեին, որն իրեն ասել է, թե այսուհետև «արդարադատությունը և պետությունը պատկանում են իրեն, Կարա Յազըջիին»:

Կարա Յազըջի օղլու Աբդուլ Հալիմ ջելալիի դրոշի տակ հավաքվեցին Անատոլիայի տասնյակ հազարավոր մարդիկ, որոնք Կենտրոնական Անատոլիայի մի շարք նահանգներում դարձան տիրապետող ուժ: Կարա-Յազըջին Եդեսիայում իրեն հռչակեց Ասիայի թագավոր: Սուլթանական բանակի կողմից խռովարարների դեմ իրագործած մի քանի պատժիչ գործողությունները արդյունք չէին տալիս: Առաջին պարտությունը Կարա Յազըջին կրում է 1600 թ. գարնանը Դիվրիկի մոտակայքում գտնվող «Դժոխքի հովիտ» («Ջհեննեմդերե») կոչված վայրում: Միայն 1601 թ. սուլթանական զորքերին հաջողվում է պարտության մատնել ապստամբներին: Ճակատամարտում վիրավորված Կարա Յազըջին մի փոքրիկ ջոկատի հետ թաքնվեց Թոքաթի և Տրապիզոնի միջև ընկած մի լեռնային շրջանում: Հենց այստեղ էլ նա 1602 թ. ձմռանը մահացավ:

Կարա Յազըջիի մահվանից հետո ապստամբական բանակի գլուխ է կանգնում նրա եղբայր «Դելի Հասանը» («խելագար», «կատաղած Հասանը»): Անատոլիայի ունևոր մարդիկ իրենց գլուխը փրկելու համար խուճապահար փախչում էին Ստամբուլ, Ռումելիա, Ղրիմ և այլ վայրեր:

Դելի Հասանին հաջողվում է Նույնիսկ գրավել և միաժամանակ իր ձեռքում պահել Թոքաթ քաղաքը, որը նա մատնում է անխնա կողոպուտի, իսկ բնաչության մի մասին սրի քաշում:

Ի վերջո կառավարությանը հաջողվում է ներումն չնորհելու խոստմամբ համոզելու Դելի Հասանին, որպեսզի նա զենքը վայր դնի: Որպես փոխհատուցում նա սուլթանից ստացավ Բոսնիայի նահանգապետի (բեյլեր-բեյի) պաշտոնը: Դելի Հասանը իր կողմնակիցներով մեկնում է Բալկաններ: Այս անգամ այդ անսանձ տարրերը սկսում են ավերել ու կողոպտել Ռումելիան, սպանելով, կողոպտելով ու հալածանքների ենթարկելով ինչպես մահմեդականներին, այնպես էլ քրիստոնյաներին: Ի վերջո Դելի Հասանի «անիշխանական ու բարբարոս բանակը» 1603 թ. ոչնչացվեց հունգարների կողմից, Դանուբի ափերին: Դելի Հասանը ավարտեց իր կյանքի ճանապարհը Բելգրադում, որտեղ նա մահապատժի ենթարկվեց: 1603 թ. սկսվում է ջելալիների շարժման երկրորդ, առավել հուժկու շրջանը: Հրապարակ են գալիս ահռելի բանակներ կազմած հրոսակախմբեր: Ընդլայնվում ու ծավալվում է նաև նրանց գործողությունների տարածքը, ըստ էության ընդգրկելով ողջ Փոքր Ասիան:

Ջելալիական շարժման բազմաթիվ ղեկավարներից հատկապես աչքի են ընկնում Ջանփոլադ Ալին, Կալենդար օղլուն, Կարա Սայիդը, Սաչլը Խալիլը, Գանաքիրլի Մեհմեդը, Մյուսևի չավուշը, Թոփալ Օսմանը և ուրիշներ: Կալենդեր օղլուի ապստամբական բանակի թիվը հասել էր 30 հազարի: Նա այդ բանակը շարժեց Բուրսայի վրա և գրավեց այն: Կալենդեր օղլուի տիրապետությունը փաստորեն տարածվում էր Անկարայից մինչև Էգեյան ու Մարմարա ծովերի ափերը: Այդ հրոսակապետը իր առջև խնդիր էր դրել կատարելապես վերացնել օսմանյան դինաստիայի տիրապետությունը Փոքր Ասիայի նկատմամբ:

Ի վերջո 1608 թ. աշնանը մեծ վեզիր, իննսունմյա Մուրադ փաշային (հայտնի է «Գույուճու Մուրադ» փաշա անունով, քանի որ ապստամբների գլուխը կտրելուց հետո դիակի հետ մեկտեղ հրամայում էր հորերը նետել) հաջողվում է Էրզրումի մոտ ջախջախել Կալենդեր օղլուին, որը իր երկու հազար հետևորդներով մազապուրծ փախուստի է դիմում Իրան: Կալենդեր օղլուի բանակի ջախջախումից հետո Մուրադ փաշան ձեռնամուխ եղավ հրով ու սրով սուլթանի իշխանության վերականգնմանը Անատոլիայում: Նրա դաժանությունը սահման չէր ճանաչում: Իր անցած ճանապարհի վրա Գույուճու Մուրադը թողնում էր կտրված գլուխներից բուրգեր: Անատոլիայում իր ներկայության երեք տարիների ընթացքում (1607-1609) այդ արյու-

նախում մարդը կոտորեց 60-ից մինչև 100 հազար մարդ՝ չխնայելով ոչ կանանց, ոչ էլ երեխաներին:

1610 թվականից սկսած ջելալիների շարժումը Փոքր Ասիայում սկսում է աստիճանաբար անկում ապրել և մարել:

Գիտակցելով, որ միայն պատժիչ միջոցներով հնարավոր չէ հանգցնել ապստամբությունների կրակը, կառավարությունը սկսեց հրապարակել հատուկ հրամանագրեր, որոնցում կարգադրվում էր տեղական իշխանություններին միջոցներ ձեռնարկել, որպեսզի գյուղացիները վերադառնան իրենց նախկին բնակավայրերը, պայմաններ ստեղծել հողագործության, արհեստների ու առևտրի զարգացման համար: 1609 թ. սուլթանը հրապարակեց «Արդարության մասին հրամանագիր» («Ադալեթ-նամե»), որում, ի թիվս այն պատճառների, որոնք ծնում էին խռովություններ ու ապստամբություններ, հիշատակվում էր նաև Անատոլիայի բնակչության թշվառ վիճակը: Բ. Դուրը նույնիսկ հրամայեց, որպեսզի այն անձինք, ովքեր գյուղացիներից չնչին գներով գնել էին նրանց հողերը, նույն գնով դրանք վերադարձնեն նախկին տերերին, որոնք ժամանակին իրենց ընտանիքը սովից փրկելու համար ստիպված են եղել ջրի գնով վաճառելու իրենց հողերը:

Ջելալիների ապստամբությունների հետևանքով Անատոլիայի հսկայական երկրամասեր մարդաթափ եղան և վերածվեցին անմշակ ու խոպան անապատների:

* * *

Օսմանյան կայսրությունը դասական կաշառակերության ու կոռուպցիայի երկիր էր: Մայրաքաղաքի բյուրոկրատիայի շրջանում կոռուպցիան ընդունել էր այնպիսի չափեր և դարձել էր այնքան սովորական բան, որ XVIII դարի օսմանյան ֆինանսական գերատեսչությունում կար նաև «կաշառքի հաշվապահություն» անունով հատուկ կառույց: Այդ հիմարկությունում զբաղվում էին կաշառքների հաշվառմամբ: Պետական գանձարանը փաստորեն օրինականացնում էր կաշառքների («բախշիշ») համակարգը, նրա որոշակի բաժինը վերցնելով իրեն: Նման պայմաններում կարելի էր գնել ցանկացած պաշտոն: Օրինակ, Վալախիայի և Մոլդավիայի գոսպոդարյաի պաշտոնը արժեր 5-ից մինչև 6 միլիոն կուրուշ: Առհասարակ, բոլոր տեսակի հարցերը կարելի էր լուծել կամ փողով և կամ դաշույնի օգնությամբ: Պաշտոն ստացողը պարտավոր էր խոշոր կաշառքներ տալ ոչ միայն սուլթանին, այլև զանազան բարեխոսներին: Պաշտոնները վաճառ-

վում էին բացարձակ, հրապարակավ: Ամեն տարի, Բայրամի տոնին, պաշտոն ստացողը պարտավոր էր վերանորոգել կամ վերահաստատել իր իրավունքը և եթե չատ էր սակարգություն անում, նրա պաշտոնն անցնում էր մեկ ուրիշին, որ տալիս էր ավելի մեծ գումար:

Պաշտոն ստացող փաշաները պարտք էին վերցնում վաշխառուներից տարեկան 40–50 տոկոսով: Այսպիսով նրանք գնում էին իրենց պաշտոնը պարտքերի մեջ թաղված: Հասկանալի է, թե ինչպիսի եռանդով նրանք պետք է «ուտեին» իրենց պաշտոնի օբյեկտը, որպեսզի կարողանային փակել պարտքերը և իրենց համար ապահովել հարստություն ու բարեկեցիկ կյանք:

Համընդհանուր տարածում գտած երևույթ էր մահմեդական դատավորների՝ կադիների, պաշտոնների վաճառքը: Կադիի պաշտոնը XVII դ. կեսերին արժեր 3–4 հազար աքչե: Սակայն վճարելով այդ գումարները, կաշառատուն վստահ չէր, որ երկար ժամանակով կարող էր մնալ գնված պաշտոնում: Երբեմն այդ նույն պաշտոնը կարճ ժամանակից հետո վաճառում էին ուրիշին:

Բ. Դռան վեզիրները «փեշքեշներ» էին վերցնում ոչ միայն կենտրոնական ու նահանգային վարչության աստիճանավորներից՝ նրանց պաշտոններում բարձրացնելու համար, այլև օտարերկրյա պետությունների դեսպաններից: Օսմանյան պաշտոնատար անձանց կաշառելու միջոցով հաջողվում էր ձեռք բերել գաղտնի դիվանագիտական փաստաթղթերի պատճեններ:

Սակայն ոչ մեկի ունեցվածքը երաշխավորված չէր: Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան Ռիկոն վկայում է, որ համարյա չկար մի փաշա, որի հարստությունն ամբողջովին կամ մեծ մասամբ մտած չլիներ սուլթանական գանձարանը: Նա պատմում է, թե ինչպես Կահիրեյի փաշան, որ ամենից հարուստն էր համարվում, սպանվեց սուլթանի հրամանով լոկ այն պատճառով, որ նրա հարստությունները հարքունիս գրավվեն: Այդ նույն ձևով սպանում էին նաև հարուստ վաճառականներին, վաշխառուներին և այլն՝ նրանց հարստությանը տիրանալու համար: Հաճախ էր պատահում, որ ինչ-ինչ ճանապարհներով հարստացած մարդը ապրում էր խարխուլ տան մեջ, կամ շրջում էր ցնցոտիներով, որ չկասկածեն և իրենից չխլեն ունեցվածքը: Իզուր չէ, որ արևելյան բռնապետությունների մեջ բարձր պաշտոններ վարող մարդկանց և հարուստների վիճակը նմանեցնում էին մեկ օրվա արևին, որն առավոտյան ծագում էր փայլուն և ճաճանչավոր, իսկ երեկոյան խավարում էր: Երբ սուլթանն սկսում էր կասկածել, որ իր սատրապներից մեկը չափից ավելի հարստացել է, կամ դրա հետ միա-

սին իր մեջ սնուցում է ապստամբական տրամադրություններ, նա այդպիսի կուսակալին ուղարկում էր ընծաներ՝ մի ձի, մի սուր և մի զարդարված զգեստ: Դա մահվան դատավճիռ էր և դահիճն անմիջապես, առանց որևէ բացատրության, պարանի օղակը գցում էր զոհի վիզը և խեղդում նրան:

Սուլթանական պալատը հանդիսանում էր կոռուպցիայի և կաշառակերության ամենախոշոր բույնը: «Սև ներքինիների», սուլթանական պալատի այդ պահապանների միջոցով կարելի էր «սարքել» ցանկացած գործ: Նրանց միջոցով հարճերը ստանում էին խոշոր կաշառքներ այս կամ այն անձին հովանավորելու համար, որպեսզի նրանք ձեռք բերեն բարձր պաշտոններ: Օտարերկրյա դեսպանները ևս նրանց միջոցով լուծում էին իրենց հետաքրքրող հարցեր: Կաշառակերությամբ հատկապես աչքի էին ընկնում դատավորները: Ֆրանսիացի դիվանագետ բարոն դը Թոթթը իր հուշերում գրում էր, որ գյուղերի բնակիչները թաքցնում էին հանցագործությունների փաստը դատավորներից, որոնց ժամանումը իրենց գյուղը ավելի վտանգավոր էր, քան գողերի մուտքը:

Թիմարային համակարգի քայքայումը, պետության ներսում առկա արատներն ու հոռի բարքերը, ահավոր կոռուպցիան ու գանձագողությունը, սրանք բոլորը նշաններ էին, որոնք վկայում էին այն մասին, որ պետական ու սոցիալական մեխանիզմը ծերացել է և համակարգը սպառել է իրեն:

Թուրքական միջնադարյան պատմիչները և եվրոպացի ճանապարհորդները նկարագրելով XVI դարի վերջի և XVII դարի սկզբի Օսմանյան կայսրության վիճակը, միաբերան խոսում են գյուղերից գյուղացիների զանգվածային փախուստի, լքված գյուղերի, զանգվածային սովի և համաճարակների մասին: Ֆրանսիացի լուսավորիչ Վոլնեյը, որը 1785 թ. այցելել էր կայսրության մի շարք արաբական նահանգներ, գրում է. «Ես մտնում էի գյուղերը և ուսումնասիրում հոդագործ մարդկանց վիճակը: Եվ ամենուրեք տեսնում էի կողոպուտ ու ավերում, միայն բռնություն ու աղքատություն... Ամեն օր իմ ճանապարհին հանդիպում էին լքված դաշտեր ու գյուղեր»:

Օսմանյան օրենքներով, փախստականներին փնտրելու և որսալու համար սահմանված էր տաս տարվա ժամկետ, սակայն իրականում այդ կարգը չէր պահպանվում:

Օսմանյան կայսրությունում օրենսդրությունը զարգանում էր երկու ինքնուրույն գծերով: Դրանցից առաջինը կապված էր ընդհանուր մուսուլմանական իրավունքի սկզբունքների հետ և համապատաս-

խանում էր հանիֆյան իրավական դպրոցի՝ («մազհաբի») կայսրությունում պաշտոնապես ընդունված մեկնությանը: Դատավճիռները կայացնում էին կադիները, իսկ առանձին վիճելի հարցերի վերաբերյալ հրատարակվում էին շեյխ-ուլ-իսլամի ֆեթվաներ: Այդ ֆեթվաները դառնում էին իրավական որոշակի հիմքեր հետագա դատավճիռների համար:

Կայսրությունում առկա էր օրենսդրական գործունեության նաև երկրորդ գիծը՝ հրատարակվում էին սուլթանական օրենքներ՝ «Կանուն-նամեներ»: Շարիաթի և կանունների առկայությունը, այսինքն՝ օրենսդրության երկակի համակարգը այն առանձնահատկությունն էր, որը Օսմանյան կայսրությանը տարբերում էր մյուս պետություններից:

XVI դ. վերջից ձևականորեն ընդհատվեց սուլթանների օրենսդրական գործունեությունը: Դադարեցին հրատարակվել Կանուն-նամեները, դրա փոխարեն ավելի լայն տարածում գտան «ադալեթ-նամեները», որոնք չէին մտցնում նոր որոշումներ, այլ ձգտում էին պահպանել հին օրենքները և դրանով իսկ վերականգնել «արդարությունը»: Ամեն կարգի նորամուծությունները սկսեցին ընկալվել որպես «բիդաթ», այսինքն՝ հերետիկոսություն, հանցանք, անօրինականություն: Օսմանյան իշխանությունները փորձում էին կանոնակարգման ենթարկել կյանքի բոլոր կողմերը, նույնիսկ շարիաթի կողմից արգելված վաշխառությունը:

Օսմանյան կայսրությունում կադիների վրա դրված էին բազմապիսի գործառույթներ: Նրանք ոչ միայն լուծում էին քաղաքացիական, քրեական, առևտրական, վարկային վեճերը, այլև հաստատում էին բազմապիսի գործարքներ, հսկողություն իրականացնում հարկերի հավաքման նկատմամբ, վերահսկում էին վաքուֆային հիմնարկներին, սահմանում էին հիմնական սպառողական ապրանքների գները, կազմակերպում հասարակական աշխատանքները, քննության ենթարկում մասնավոր անձանց բողոքները: Ըստ էության կադիները հանդես էին գալիս ոչ միայն որպես դատավորներ ու կրոնական նորմերի մեկնաբանողներ, այլև որպես կենտրոնական իշխանությունների վարչական ներկայացուցիչներ:

Կադիները և նրանց օգնական մուհթեսիբները սահմանում էին գրեթե բոլոր սննդամթերքների և լայն սպառման ապրանքների գները, ընդորում հաշվի էին առնվում տարվա եղանակը, փոխադրական ծախսերը և նույնիսկ առևտրականի հնարավոր շահույթը, որը չպետք է գերազանցեր 10 տոկոսից:

Օսմանյան դատարաններում ամենամեծ չարիքներից մեկը սուտ

վկայությունն էր, թեև դրա համար սահմանված էին պատիժներ: Սուտ վկաների համար փող կորզելու միջոց էր ոչ-մահմեդականների վերաբերյալ վկայություններ տալը, երբ նրանք դատ ունեին մահմեդականների հետ: Նման դեպքում նրանք անպատիժ էին մնում: Օսմանյան դատական համակարգում ցանկացած հանցագործի դրամի միջոցով կարելի էր արդարացնել:

XVII դարում գնալով վատթարանում էր Օսմանյան կայսրության ներքին և արտաքին առևտուրը, ֆինանսները: Եվրոպական տերությունների հետ կայսրության առևտրական հարաբերությունների բնույթի վրա XVI դարից սկսած նշանակալից ազդեցություն էր ունենում Հնդկաստան և Հարավային ու Հարավ-Արևելյան Ասիայի այլ երկրներ տանող ծովային ճանապարհի հայտնագործումը, որը հանգեցրեց միջերկրածովյան առևտրի անկմանը և Օսմանյան կայսրության դերի նվազմանը Արևմուտքի և Արևելքի երկրների միջև տարանցիկ առևտրի մեջ: Այսպիսով, միջազգային ապրանքափոխանակության նշանակալից մասը, որը կատարվում էր Օսմանյան կայսրության տարածքների վրայով, տեղափոխվեցին այլ ճանապարհների վրա: Մյուս կողմից թուրքերը դուրս մնացին Եվրոպայի տնտեսական զարգացման հուժկու երթից: 1648 թ. պետության ծախսերը կազմում էին մոտ 550 միլիոն աքչե, իսկ եկամուտները՝ 360 միլիոն: Հետագա տարիներին բյուջեի ճեղքվածքը չարունակում էր աճել: Միջոցների փնտրտուքներում Բ. Դուռը մշտապես դիմում էր դրամի կեղծմանը:

Այն բազմաթիվ պատերազմները, որ վարում էր Օսմանյան կայսրությունը Արևմուտքում և Արևելքում, պահանջում էին հսկայական միջոցներ: Ուստի կիրառվում էին «արտակարգ հարկեր»՝ ավարիզներ և պետության կողմից գյուղատնտեսական մթերքների հարկադիր գնումներ ցածր գներով: Այս և նմանատիպ բոլոր միջոցառումները կապված էին այն վիթխարի լարվածության հետ, որ պահանջում էին գրեթե անընդմեջ պատերազմները: Ուժից վեր օրինական և «բացառիկ» հարկերն ու տուրքերը քայքայեցին գյուղացիությանը: Հատկապես ծանր էր ոչ մահմեդական գյուղացիության վիճակը: Նրանք ենթարկվում էին կրկնակի շահագործման: Ավատական կեղեքմանը գումարվում էր կրոնական ճնշումը: Ցանկացած փաշա, ենիչերի և այլն կարող էր անպատիժ կերպով բռնություն գործադրել անպաշտպան քրիստոնյա «ռայայի» նկատմամբ: Քրիստոնյաներին չէր թույլատրվում զենք կրել, հագնել նույնպիսի զգեստներ և կոշիկներ, ինչպես մահմեդականները: Նույնիսկ պաշտոնական փաստաթղթերում ոչ մահմեդականների նկատմամբ կիրառվում էին արհամարական ու

հայոյական մականուններ: Մահմեդական դատարանը չէր ընդունում քրիստոնյաների վկայությունները:

Օսմանյան պետության մեջ սուլթանության հենարանը ավատատերերի դասակարգն էր: Երկրի ողջ բնակչությունը բաղկացած էր երկու հիմնական խմբերից: Առաջին խմբի մեջ ընդգրկվածները կոչվում էին ասկերի (զինվորականներ): Այդ խմբի մեջ մտնում էին բոլոր նրանք, ովքեր ներկայացնում էին սուլթանի իշխանությունը: Դրանք էին. զինվորականները, ծառայողական ֆեոդալները, որոնց ձեռքերում էին գտնվում կենտրոնական կառավարման մարմինները, պալատականները, քաղաքացիական պաշտոնեությունը, հոգևորականությունը (ուլամա): Գլխավոր դերը պատկանում էր «սրի մարդկանց», այսինքն զինվորական ավատատերերին:

Երկրորդ խումբ կազմում էին ռայաները: Այս խմբի մեջ էին մտնում սովորական հպատակները, ինչպես մահմեդականներ, այնպես էլ ոչ մահմեդականներ: XVII դարի կեսերից ռայա տերմինը սկսեց օգտագործվել բացառապես ոչ մահմեդականների նկատմամբ:

«Զինվորական» դասակարգը ևս բաժանվում էր բազմաթիվ առանձին խմբերի, որոնք օժտված էին իրենց յուրահատուկ կարգավիճակով: Առավել ընդհանուր ձևով այն բաժանվում էր «սրի մարդկանց» («սեյֆիե») և «գրչի մարդկանց» («կալեմիե»): Առաջինների հիմնական գործառույթը ռազմական ծառայությունն էր, երկրորդներինը՝ ծառայությունը պետական ապարատում: Կայսրության միասնությունը պահպանվում էր գլխավորապես ռազմական ուժի օգնությամբ, ինչպես նաև պետական ապարատի ակտիվ գործունեության շնորհիվ:

Օսմանյան պետությունում տիրապետող դասակարգի կազմում առավել ազդեցիկ խմբերից մեկը հանդիսանում էր բարձրագույն մահմեդական հոգևորականությունը: Բնակչությունը տարբերվում էր միմյանցից ոչ թե ազգային, այլ կրոնական հատկանիշով: Հոգևորականության ձեռքում կրոնական խնդիրներից բացի կենտրոնացված էին վաքուֆային հողերի կառավարումը, դատա-իրավական համակարգը, լուսավորությունը, պետության կառավարման գծով իրավունքների զգալի մասը և այլն: Մահմեդական հոգևորականության գլուխ հանդիսացող շեյխ-ուլ-իսլամը պաշտոնների աստիճանակարգում զբաղեցնում էր մեծ վեզիրին հավասար դիրք: Ղուրանի տեսանկյունից այս կամ այն ակտի օրինականության վերաբերյալ շեյխ-ուլ-իսլամի գրավոր մեկնաբանությունը՝ այսպես կոչված ֆեթվան, հանդիսանում էր բոլորի համար պարտադիր ընդունելի որոշում,

որը քննարկման ենթակա չէր նույնիսկ սուլթանի համար: Վերջինս կարող էր պաշտոնաթող անել շեյխ-ուլ-իսլամին և նրա փոխարեն նշանակել մեկ ուրիշի, սակայն իրավունք չուներ չեղյալ հայտարարելու կամ փոխելու ֆեթվան: Մեծ վեզիրը յուրաքանչյուր տարի ավանդական պաշտոնական այց էր կատարում շեյխ-ուլ-իսլամին, շեշտելով աշխարհիկ իշխանությունների հարգանքը մահմեդական հոգևորականության գլխավորի նկատմամբ: Շեյխ-ուլ-իսլամը գանձարանից ստանում էր հսկայական աշխատավարձ: Վերջին հաշվով պետության մեջ պատերազմի և խաղաղության հարցերը կախված էին բարձրագույն մահմեդական հոգևորականությունից: Վերջինս օգտվում էր բազմաթիվ արտոնություններից ու իրավունքներից: Բարձրագույն հոգևոր դեմքերը (նրանց անվանում էին «ուլամա», բառացի՝ «գիտնականներ») ազատված էին հարկերից և տուրքերից: Արգելված էր նրանց ենթարկել մահապատժի և բռնագրավել նրանց ունեցվածքը: Հոգևորականության ձեռքերում կենտրոնացված էին հսկայական հողային ու դրամական հարստություններ և քաղաքական իշխանություն:

Իսլամը Օսմանյան պետության համար իրենից ներկայացնում էր հոգևոր միասնության կարևոր գործոն: Կարևորագույն քաղաքական հարցեր լուծելիս սուլթանները որպես կանոն դիմում էին իսլամին: Այդ իսկ պատճառով, օսմանյան իշխանությունները մեծ ուշադրություն էին դարձնում մահմեդական կրոնի տարածմանը նորանվաճ եվրոպական տարածքներում՝ ինչպես բնակչության բռնի իսլամականացման միջոցով, այնպես էլ վաքուֆային սեփականության հիմքի վրա բազմաթիվ կրոնա-մշակութային կենտրոնների ստեղծման ճանապարհով: Երկրում տիրապետող էր նախապաշարվածությունն ու մոլեռանդությունը:

Թուրքական բազմաթիվ տարեգրություններում փադիշահը հաճախ անվանվում էր հովիվ, իսկ նրա հպատակները՝ հոտ: Քանի որ աստված վերջիններին վստահել է փադիշահին, նա, ինչպես հովիվ, պետք է հոգ տանի նրանց նկատմամբ և առաջնորդի հավատի ճշմարիտ ուղիով, իսկ հպատակների պարտականությունն է անվերապահորեն ենթարկվել իրենց հովիվին: Հենց դրանով է բացատրվում այն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունում, ինչպես և այլ մահմեդական պետություններում, հպատակները անվանվում էին ռայա, բառացիորեն «անասունների հոտ»:

Թուրքիայի պետական համակարգի մեջ առանձնահատուկ տեղ էին գրավում կրոնական համայնքները: Վարչական առումով ոչ մահ-

մեղականները, ինչպես և մահմեդականները, ենթակա էին թուրքական վարչությանը, միայն այն տարբերությամբ, որ ավելի շատ, քան մահմեդականները, ենթարկվում էին իշխանության մարմինների ճնշումներին:

Չնայած այն հանգամանքին, որ կրոնական համայնքների (միլլեթների) ղեկավարները աշխատում էին իրենց հոտը պահել սուլթանին և թուրքական իշխանություններին հնազանդության վիճակում, սակայն այնուամենայնիվ, միլլեթների այդ համակարգը ճնշված ժողովուրդների համար խաղում էր նաև որոշակի դրական դեր. նրանք արգելակում էին իրենց համայնքների համաձուլումը, նպաստում էին, որ համայնքների բնակչությունը պահպանի ազգային դիմագիծն ու առանձնահատկությունները, լեզուն, մշակույթը և այլն: Անկասկած այդ համակարգը նպաստում էր նրանց համախմբմանը իրենց ազգային գաղափարների շուրջը: Պատահական չէ, որ հետագայում քրիստոնեական եկեղեցիներն ու վանքերը դարձան ազգային անկախության համար պայքարի օջախներ, իսկ հոգևորականների միջավայրից դուրս եկան թուրքական լծից իրենց ժողովուրդների ազատագրման ականավոր մարտիկներ:

Մինչև XV դարի կեսերը Օսմանյան պետության վարչական բաժանումը վերին աստիճանի պարզ ու հասարակ էր. գոյություն ուներ միայն երկու բեյլերբեյություն (Անադոլու և Ռումելի), իսկ կայսրության սահմանակից շրջաններում կային վասալ պետություններ և բեյական անկախ տիրույթներ: Հետագայում ստեղվեցին նոր բեյլերբեյություններ. Ռում բեյլերբեյությունը (կենտրոնները՝ Ամասիա և Սրվաս (Սեբաստիա), Կարաման բեյլերբեյությունը (կենտրոնը՝ Կոնիա), Դիարբեքիրի բեյլերբեյությունը և այլն: 1580 թ. Բոսնիան առանձնացավ Ռում բեյլերբեյությունից և կազմեց առանձին բեյլիք: XVI դարում բեյլերբեյություններ դարձան Կաֆֆան Ղրիմում (1568 թ.) և Զբլդերը Անդրկովկասում (1578 թ.): Որպես հատուկ ռազմական հենակետ մերձսևծովյան շրջանի հյուսիս-արևմուտքում առանձնացավ Օզյու սանջակը: Սուլեյման I Կանունիի կառավարման վերջին շրջանում (1566 թ.) երկրում արդեն կար 16 բեյլերբեյություն: 1590 թվականից դրանք սկսեցին անվանել էյալեթներ:

Նահանգները կառավարվում էին խոշոր ֆեոդալների կողմից: Նրանց էր պատկանում զինվորական ու վարչական իշխանությունը:

Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնում էին նաև քրդական և արաբական ցեղերի իշխանապետություններ, որոնք կոչվում էին հյուքյումեթներ: Դրանց բեյերը լրիվ անկախ էին իրենց տիրույթնե-

ռում, բայց ճանաչում էին օսմանյան գերիշխանությունը: Առկա էին նաև վարչական տեսակետից անկախ Մեքքայի շերիֆների և Ղրիմի խանների տիրույթները:

Բոսնիայում և Անատոլիայում ստեղծվեցին նաև այսպես կոչված յուրթլուքներ և օջաքլըքներ: Դրանք համարվում էին տոհմական սեփականություն և առանց որևէ արգելքի ու սահմանափակման փոխանցվում էին ժառանգաբար: Սուլթանական այս չնորհումները մյուս ամեն տեսակի չնորհումներից ավելի քիչ էին ենթակա պետական վերահսկողության: Այդ տիրույթներում ապրող բնակչությունը գտնվում էր տերերի լիակատար տրամադրության տակ:

XVI–XVII դարերի սահմանագծին Օսմանյան կայսրությունը աշխարհի երեք մայրցամաքներում զբաղեցնում էր հսկայական տարածք: Բնականաբար բազմազգ ու բազմացեղ բնակչություն և տարբեր տնտեսական-կենցաղային ավանդույթներ ունեցող վիթխարի պետության կառավարումը հեշտ գործ չէր: XV դարի կեսերից ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության կործանումը կառավարման բոլոր լծակները գտնվում էին մայրաքաղաք Ստամբուլում: Սուլթանի նստավայրը հանդիսանում էր կայսրության քաղաքական և վարչական կյանքի կենտրոնը: Բոլոր պետական գործերը որոշվում էին Թոփխանե կոչված պալատական համալիրի տարածքում: Այնտեղ էր գտնվում նաև սուլթանական գրասենյակը և պետական գանձարանը, ինչպես նաև սուլթանի հարեմը: XVII դ. կեսերից Թոփխանեի մոտ կառուցված պալատներից մեկը դարձավ մեծ վեզիրի մշտական նստավայրը: Թոփխանեի անմիջական հարևանությամբ գտնվում էին ենիչերիական զորամասերի զորանոցները:

Սուլթանական արքունիքի վրա ծախսվում էին հսկայական գումարներ: Պալատականների թիվը հասնում էր հազարների: Բացի սուլթանական հարեմի կանանցից ու հարճերից, ներքինիներից, ծառաներից, պալատական պահակախմբի անդամներից մեծ թիվ էին կազմում նաև սուլթանին անձամբ սպասարկող բազմաթիվ պաշտոնյաները՝ սենեկապանները, սեղանապետները, բանալեպահները, մառանապետերը, անկողնապետերը, բազեակիրները, ասպանդակապահները, ձիապանները, որսորդապետները և այլն: Դրանց թվում էր նաև պալատական աստղագուշակը, սուլթանի մուշտակի և չալմայի պահապանը, նրա սոխակի և թութակի պահապանները և այլն:

Սուլթանական պալատը բաղկացած էր տղամարդկանց հարկաբաժնից, որտեղ գտնվում էր սուլթանի ննջարանը և բոլոր պաշտոնական չինությունները, և կանանց հարկաբաժնից՝ հարեմից: Պալա-

տի այդ մասը գտնվում էր սև ներքինիների զգոն հսկողության տակ, որոնց գլխավորն ուներ «ղզլար աղասի» («աղջիկների պարոն») կոչումը և պալատական աստիճանակարգի մեջ գրավում էր բարձրագույն տեղերից մեկը: Նա ոչ միայն ամբողջապես հսկում էր հարեմի կյանքը, այլև նրա իրավասության մեջ էր գտնվում սուլթանի անձնական գանձարանի տնօրինումը, ինչպես նաև Մեքքայի և Մեդինայի վաքուֆները: Սև ներքինիների գլխավորը սուլթանի ամենամերձավորագույն մարդկանցից մեկն էր, օգտվում էր նրա վստահությունից և ուներ չափազանց մեծ իշխանություն: Բազմաթիվ մեծ վեզիրներ նրան էին պարտական իրենց նշանակումով: Նրանք կարող էին նաև հեռացվել իրենց պաշտոնից և նույնիսկ մահապատժի ենթարկվել, եթե այդ մասին սև ներքինիների գլխավորը չչնջար սուլթանի ականջին: Սակայն լինում էին դեպքեր, երբ սև ներքինիների գլխավորի վերջը ևս վատ էր լինում:

Հարեմում առաջին դեմքը սուլթանի մայրն էր՝ «վալիդե-սուլթանուհին», որի դերակատարությունը չափազանց մեծ էր նաև քաղաքական գործերում: Ընդհանրապես հարեմը պալատական սադրանքների կենտրոնն էր: Շատ դավադրություններ, որոնք ուղղված էին ոչ միայն բարձրաստիճան պալատականների, այլև հենց սուլթանի դեմ, «եփվում» և ծնունդ էին առնում հենց հարեմի պատերի ներսում:

Գոյություն ուներ սուլթանի անձի անվտանգության ապահովման լավ մշակված համակարգ: Դեռևս Բայազիդ II-ի օրոք կարգ էր սահմանված, որն արգելում էր զինված մարդկանց մոտենալ սուլթանին: Ցանկացած անձ կարող էր մոտենալ սուլթանին միայն երկու պահակազորայինների ուղեկցությամբ, որոնք բռնում էին նրա թևերը: Մշտապես միջոցներ էին ձեռնարկվում բացառելու համար սուլթանի թունավորման հնարավորությունը: Տասնյակ իշխանազուններ սուլթանի կամքով հրաժեշտ էին տալիս կյանքին, ոմանք մանկական հասակում:

Սուլթանի մերձավորագույն ազգականները և հարազատները մեծ ազդեցություն ունեին պետական գործերի վրա: Շատ հաճախ պետական գործերը վճռվում էին վալիդե-սուլթանուհու ննջարանում կամ նրա մերձավորագույն անձանց շրջապատում:

Մեծ վեզիրը ազատ մուտք ուներ սուլթանի մոտ: Նա սուլթանի անունից կառավարում էր պետությունը: Նրա իշխանության խորհրդանիշը իր մոտ պահվող կնիքն էր: Երբ սուլթանը հրամայում էր մեծ վեզիրին կնիքը փոխանցել մեկ այլ աստիճանավորի, դա լավագույն դեպքում նշանակում էր անհապաղ պաշտոնաթողություն: Հաճախ այդ հրամանը նշանակում էր աքսոր, իսկ երբեմն էլ մահվան դա-

տավճիռ: Մեծ վեզիրի գերատեսչությունը ղեկավարում էր պետական բոլոր գործերը, այդ թվում նաև ռազմական գործերը: Նրա ղեկավարին ենթարկվում էին պետական մյուս կառույցների ղեկավարները, ինչպես նաև Անատոլիայի և Ռումելիայի բեյլերբեյները և սանջակբեյները:

Օսմանյան կայսրության մեջ բարձր պաշտոնը նշանակում էր չափազանց մեծ եկամուտներ: Բազմաթիվ բարձր աստիճանավորների ձեռքերում կուտակվում էին հսկայական հարստություններ: Կարևոր պետական գերատեսչություն էր հանդիսանում կադիասկերի վարչությունը: Այն իրականացնում էր արդարադատության և դատական մարմինների ղեկավարությունը: Երկրի ֆինանսները կառավարում էր դեֆթերդարի վարչությունը: Կայսրության արձանագրային վարչությունը, որտեղ ձևակերպվում էին սուլթանների հրամանագրերը, կոչվում էր նիշանջիի գերատեսչություն: Ընդհուպ մինչև XVII դարի կեսերը այդ գերատեսչությունը իրականացնում էր նաև Օսմանյան կայսրության կապերը այլ երկրների հետ:

Մահապատիժները միջնադարյան Ստամբուլում սովորական երևույթ էին: Աստիճանակարգի վերաբերյալ սահմանված կարգը արտացոլվում էր նույնիսկ մահապատժի ենթարկվածների գլուխների նկատմամբ վերաբերմունքի մեջ, որոնք ցուցադրվում էին սուլթանի պալատի պատերի մոտ: Վեզիրի կտրված գլուխը անպայման պետք է դրվեր արծաթե սկուտեղի վրա և ցուցադրվեր պալատի դարպասների մոտ մարմարյա սյուների վրա: Ավելի փոքր աստիճանավորի գլուխը դրվում էր հասարակ փայտե ափսեի մեջ, իսկ սովորական մահկանացուների գլուխը ուղղակի դրվում էր գետին, պալատի պատերի մոտ:

XVI դարի կեսերին ծնունդ առավ և մինչև XVIII դարի վերջը պահպանվեց օտարերկրյա դեսպանություններին՝ նրանց սուլթանի տիրույթներում գտնվելու ողջ ժամանակաշրջանի ընթացքում գանձարանից սննդամթերքներ բաց թողնելու կարգը: Այսպես, 1589 թ. Բ. Դուրը պարսկական դեսպանին հատկացնում էր օրեկան հարյուր ոչխար և հարյուր քաղցր հաց, ինչպես նաև նշանակալից չափով դրամական գումարներ: Մահմեդական պետությունների դեսպանները ավելի մեծ քանակությամբ էին ստանում ապրուստի համար անհրաժեշտ միջոցներ, քան քրիստոնեական պետությունների ներկայացուցիչները:

Կոստանդնուպոլսի անկումից հետո մոտ երկու հարյուր տարվա ընթացքում օտարերկրյա դեսպանությունները տեղավորվում էին Ստամբուլում նրանց համար հատկացված հատուկ շենքում, որը կոչվում էր «էլչի-խան»: XVII դ. կեսերից դեսպաններին տրամադրվում

էին հատուկ նստավայրեր Գալաթայում և Պերայում, իսկ Էլչի-խանում տեղավորում էին սուլթանի վասալ պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներին:

Օտարերկրյա դեսպանների ընդունելությունը կատարվում էր խնամքով մշակված արարողակարգի համաձայն, որը կոչված էր վկայելու Օսմանյան պետության հզորության մասին: Բարձր հյուրերին ձգտում էին զարմացնել ոչ միայն սուլթանական նստավայրի ճոխությամբ ու շքեղությամբ, այլև ենիչերիների ահարկու տեսքով, որոնք նման դեպքերում հազարներով շարվում էին պալատի առջև որպես պատվավոր պահակախումբ: Ընդունելության բարձրակետն էր հանդիսանում դեսպանների և նրանց շքախմբի մուտքի թույլտվությունը գահադահլիճ, որտեղ նրանք կարող էին անձամբ շփվել սուլթանի հետ: Ընդ որում, ընդունված կարգի համաձայն, հյուրերից յուրաքանչյուրին թևերից բռնած վիճակում գահին էին մոտեցնում սուլթանի պահակազորի երկու զինվորներ, որոնք պատասխանատու էին նրա անվտանգության համար: Սուլթանին և մեծ վեզիրին մատուցվող հարուստ նվերները հանդիսանում էին յուրաքանչյուր օտարերկրյա դեսպանության պարտադիր պայման: Այդ ավանդույթի խախտումները հազվագյուտ էին և որպես կանոն շատ թանկ էին նստում մեղավորների համար: Օրինակ, 1585 թ. երբ ավստրիական դեսպանը առանց նվերների ներկայացավ սուլթանին, նրան ուղղակի զնդան նետեցին: Սուլթանին օտարերկրյա դեսպանների կողմից նվերներ մատուցելու սովորույթը պահպանվեց ընդհուպ մինչև XVIII դ. կեսերը:

Պատերազմ հայտարարելու դեպքում թշնամի երկրի դեսպանին ձերբակալում էին և որպես կանոն բանտարկում Եդիկուլե (յոթ աշտարականոց) կոչված ամրոցի բանտում: Սակայն խաղաղ ժամանակ ևս դեսպաններին վիրավորելու և նույնիսկ նրանց նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու դեպքերը, կամ կամայական ձևով բանտ նստեցնելը արտասովոր երևույթներ չէին:

XVI–XVII դարերի Օսմանյան կայսրությունը աչքի էր ընկնում իր պատմամշակութային ավանդույթների և էթնոսի բացառիկ բազմազանությամբ: Դա իսկապես ռասաների, ցեղերի ու ժողովուրդների մի կոնգլոմերատ էր:

Արդեն XVII դարում, երբ Օսմանյան կայսրության վայրէջքի նշաններն ակնառու էին, այդ պետության տիրապետող շրջանների մոտ երբեմն առաջ էր գալիս տագնապի զգացում երկրի ճակատագրի հարցում: Թեև սուլթանները և վեզիրները չէին կարողանում հասկանալ ու ընկալել պետական քայքայման իսկական պատճառները,

սակայն ակնառու կերպով տեսնում էին դրա արտաքին դրսևորումները, հարկային մուտքերի նվազումը, ապստամբությունները, խռովությունները, փաչաների և ծայրամասային ֆեոդալների ինքնագլխությունը, կաշառակերությունը, պետական ապարատի արատները: Եվ քանի որ այդ բոլորը իրենց անմիջական անդրադարձներն էին ունենում պետական և սուլթանական գանձարանի վիճակի վրա, և սպառնալիքի տակ էին դնում իրենց գահի անսասանությունը, ուստի օսմանյան պետական գործիչները ժամանակ առ ժամանակ փորձում էին գտնել երկրի ֆինանսների, ռազմական գործի ու վարչության առողջացման ուղիներ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ: ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ:

Գնալով Ռուսաստանի հետ հարաբերությունները սրվում էին: Սուլթանական արքունիքի ազդեցիկ դեմքերը կարողացան համոզել Ահմեդ III-ին, որ անհրաժեշտ է պատերազմ հայտարարել ռուսներին, այլապես ժամանակը կաչխատի ոչ իրենց օգտին: Ի վերջո տատանումների մեջ գտնվող միապետը կայացրեց որոշում: Նա հրամայեց Ստամբուլում ռուսական դեսպան Պ. Ա. Տոլստոյին բանտարկել Յոթաշտարականոց ամրոցում և կատարել «սեֆերբեյլիք» (զորահավաք): 1710 թ. նոյեմբերի 9-ին Թուրքիան պաշտոնապես պատերազմ հայտարարեց Ռուսաստանին:

Դեկտեմբերի վերջին Ղրիմի խան Դևլեթ-Գիրեի զորքերը ներխուժեցին Ուկրաինա: Իր հերթին Ռուսաստանը ևս 1711 թ. փետրվարի 22-ին պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

Ստամբուլի կողմից այդ պատերազմի կարևորագույն նպատակ հռչակվեց Ազովի և 1700 թ. ռուս-թուրքական պայմանագրով Ռուսաստանին անցած բոլոր տարածքների վերադարձը: Ընդ որում, թուրք զինվորականության հաշվարկը կառուցված էր այն բանի վրա, որ Շվեդիայի հետ հյուծիչ ու երկարատև պատերազմի հետևանքով Ռուսաստանը թուլացել և կանգնել է մի շարք դժվարությունների առջև: Իսկապես, ժամանակը բոլորովին նպաստավոր չէր Պյոտր I-ի համար, առավել ևս, որ Հյուսիսային պատերազմը դեռ չէր հասել իր ավարտին և երկու ճակատով կռվելը լավ հեռանկարներ չէր խոստանում: Ռուսաստանի կայսրը մեծ հույսեր ուներ, որ բալկանների սլավոնական ժողովուրդները ոտքի կկանգնեն և թիկունքից կհարվածեն թուրքերին: Կայսեր հրամանով ֆելդմարշալ Շերեմետևի զորքերը Մերձբալթիկայից տեղափոխվեցին Մոլդավիայի սահմանների մոտ և

մայիսի 30-ին անցան սահմանը: Մոլդավիայի գոսպոդարը անմիջապես անցավ ռուսների կողմը: Շերեմետևի զորքերին հրամայված էր Թուրքերից առաջ հասնել Դանուբի մոտ և գրավել դիրքեր: Սակայն ֆելդմարշալը չկարողացավ կատարել այդ հրամանը: Օգտվելով դրանից՝ Թուրքական զորքերը արագ անցան Դանուբը և գրավեցին հարմար դիրքեր: Դա Պյոտր I-ի առաջին անհաջողությունն էր այդ ռազմական կամպանիայի ժամանակ: Մինչդեռ Թուրքերը ձեռք բերեցին ռազմավարական բնույթի խոշոր առավելություն:

Անձամբ անցնելով իր զորքերի գլուխ՝ ռուսական կայսրը զորաշարժ կատարեց դեպի Պրուտ գետը՝ Թուրքերին ընդառաջ: Ընդ որում, հակառակորդների ուժերը խիստ անհավասար էին: Ռուսներն ունեին 38 հազարանոց հետևակային զորքեր ու հեծելազոր, մինչդեռ սուլթանական բանակի թվաքանակը հասնում էր 100-120 հազար մարդու:

Այդ հսկայական բանակին միացավ նաև Ղրիմի խանի 40-հազարանոց հեծելազորը:

Ռուսները հենց սկզբից բախվեցին բանակի համար սնունդ հայթայթելու մեծ դժվարությունների հետ, քանի որ զորքերն անցնում էին երաշտից տուժած շրջաններով: Բացի այդ, տեսնելով, որ Թուրքական զորքերը մեծ թվական առավելություն ունեն ռուսների նկատմամբ, Մոլդավիայի և Վալախիայի գոսպոդարները հրաժարվեցին ռուսական բանակին սննդամթերքներ մատակարարելուց, որպեսզի չենթարկվեն Թուրքերի վրիժառությանը: Ռուսների համար անհաղթահարելի դժվարություն ստեղծվեց նաև հեծելազորը կերով ապահովելու հարցում: Դրա պատճառը այն էր, որ այդ վայրերում խոտը կամ ոչնչացվում էր մորեխի կողմից և կամ հակառակորդի կողմից կրակի ճարակ դառնում:

Այդ բոլորը ռուսական բանակի համար ստեղծում էր վերին աստիճանի վտանգավոր վիճակ: Կշռադատելով ստեղծված իրավիճակը՝ հուլիսի 8-ին ռուսական բանակի ռազմական խորհուրդը որոշեց Պրուտ գետի հովտով նահանջել: Այդ որոշման պատճառներից մեկն էլ այն էր, որ հայտնի դարձավ, որ օսմանցիների բանակը և Ղրիմի թաթարների հեծելազորը սրընթաց երթով հասել է Պրուտի ափերը և գրավել իշխող բարձրունքները: Սակայն արագ տեղաշարժերով Թուրքերը կտրեցին ռուսների նահանջի ճանապարհը: Հուլիսի 9-ին բորբոքվեց արյունալի ճակատամարտ: Երեկոյան մինչև մութն ընկնելը ռուսական բանակը արդեն կատարելապես շրջապատված էր: Թուրքական հրետանին անընդհատ հարվածում էր ռուսների դիրքերին՝ կենդանի ուժին պատճառելով մեծ կորուստներ: Ստեղծվել էր մի

վիճակ, երբ ռուական բանակին սպասում էր կամ լրիվ ջախջախում և կամ գերի հանձնվելը: Այդ վիճակը Պյոտրի մոտ առաջ բերեց ընկնավորության (էպիլեպսիա) նոպա: Ապրելով հոգեկան ուժգին ցնցում և ընկնելով խորը վհատության մեջ, կատարելապես կորցնելով իր ինքնատիրապետումը, այդ աննկուն և կամային հատկանիշներով օժտված կայսրը մեկուսացավ իր վրանում, սպայական կազմին հայտարարելով, որ կընդունի Թուրքերի առաջադրած ցանկացած պայման, բացի «ստրուկ դառնալուց»:

Այդ օրհասական պահին ցարին օգնության հասավ իր կինը՝ Եկատերինան, որը կարողացավ չփոթահար ու ընկճված ամուսնուն ներշնչել, որ ամեն մի դժվարին վիճակ ունի իր ելքը: Նրա այդ ներշնչանքը ցարին վերադարձրեց սթափ մտածողության ունակությունը: Հուլիսի 10-ին նա օսմանցիների մեծ վեզիր Բալթաջի Մեհմեդ փաշային ուղարկեց զինադադարի առաջարկ: Ռազմական խորհուրդը որոշել էր մերժման դեպքում ամբողջ բանակով հարձակվել թշնամու վրա: Մեծ վեզիրի անձնական շահագրգռվածությունն ապահովելու համար Եկատերինան տվեց իր թանկարժեք անձնական զարդեղենը և ապա սպաների շրջանում կատարելով հանգանակություն, հավաքեց մի քանի հազար ոսկե ռուբլի: Այդ ամբողջը որպես կաշառք ուղարկվեց մեծ վեզիրին: Պատասխանը իրեն երկար սպասեցնել չտվեց: Թուրքական ռազմական ճամբարից չուտով եկավ պատասխան՝ մեծ վեզիրը «հանուն գթասրտության» պատրաստ է հակառակորդի հետ կնքելու զինադադար: Այն ստորագրվեց 1711 թ. հուլիսի 12-ին Պրուտ գետի ափին գտնվող ռազմական ճամբարում: Շվեդիայի թագավոր Կարլոս XII-ը հատուկ եկել էր մեծ վեզիրի ռազմակայանը նրան համոզելու համար, որպեսզի վերջինս խաղաղության բանակցություններ չսկսի ռուսների հետ: Սակայն Բալթաջի Մեհմեդ-փաշան չանսաց նրա խորհուրդներին:

Զինադադարի պայմանագրում տեղ գտած հոդվածները չափազանց ծանր էին ռուսների համար: Պյոտրը պարտավորվում էր սուլթանին վերադարձնել Ազովը և նրա հարակից շրջանները. քանդել Տագանրոգ, Կամենևի Զատոն և Դնեպրի վրա կառուցված ամրոցները, ռուսական զորքերը դուրս բերել Լեհաստանից և այսուհետև ոչ մի պատրվակով չմիջամտել լեհական գործերին, դադարեցնել Դոնի և Զապորոժիեի կազակների նկատմամբ ցուցաբերվող հովանավորությունը, հետ կանչել Ստամբուլում իր դեսպանին և փակել դեսպանությունը: Պյոտրի համար ամենանվաստացուցիչը սակայն այն էր, որ ինքը պետք է թույլ տար, որ իր ոխերիմ թշնամին՝ Կարլոս XII-ը, ռուսա-

կան հողերի վրայով անարգել ու անվտանգ վերադառնար Շվեդիա: Պայմանագիրը պարունակում էր նաև Ռուսաստանի համար չափազանց ծանր մի կետ. նա զրկվում էր սևծովյան առևտրից: Դա նշանակում էր, որ այսուհետև ռուսաստանցի վաճառականները պետք է սահմանափակվեին Օսմանյան կայսրության հետ միայն ցամաքային առևտրով:

Թեև Պյոտրը չկատարեց զինադադարի պայմանագրի կետերից մի քանիսը, օրինակ, նա այդպես էլ Ազովը չհանձնեց Թուրքերին, չհրամայեց քանդել ամրոցներն ու ռազմական հենակետերը և այլն, սակայն դառը իրողությունն այն էր, որ Սև ծովը ամբողջությամբ նվաճելու և հարավում ուժեղ նավատորմ ունենալու Պյոտրի վաղեմի երազանքը ի չիք էր դարձել: Այդ առթիվ նա արտահայտվել էր հետևյալ կերպ. «Տեր Աստված ինձ վոնդեց այդ վայրերից, ինչպես որ Ադամին վոնդեց դրախտից»: Սակայն միաժամանակ կայսրը գիտակցում էր, որ ձեռք էր բերվել ամենակարևորը, ոչնչացումից փրկվել էր իր բանակը: Պատահական չէ, որ ռուսների հետ կնքված զինադադարը սուլթանական պալատում մեկնաբանվեց որպես Թուրքերի կողմից մեծ հաղթանակի առիթը ձեռքից բաց թողնելու անթույլատրելի ու հանցավոր քայլ: Երբ մեծ վեզիրից պահանջվեց բացատրություն տալ իր արարքի մոտիվների մասին, նրա պատասխանները չգոհացրին սուլթանին, որը պատժեց Բալթաջի Մեհմեդ-փաշային՝ նրան պաշտոնանկ անելով և աքսորելով Լեմնոս կղզին:

Նույնիսկ զինադադարի կնքումից հետո ևս ռուս-թուրքական հարաբերությունների լարվածությունը չէր թուլանում: 1712 թ. դեկտեմբերին սուլթանը դարձյալ պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Սակայն այս անգամ գործը չհասավ զինված ընդհարումների: Ռուս-թուրքական հարաբերությունները այդ շրջանում վերջնականապես կարգավորվեցին 1713 թ. հուլիսի 24-ին Ադրիանոպոլսում կնքված պայմանագրով, որի գործողության ժամկետ էր սահմանվում 25 տարի: Այն հիմնականում կրկնում էր Պրուտի զինադադարի դրույթները: Ավելի ուշ Ադրիանոպոլսի խաղաղության պայմանագրի պայմանները աննշան փոփոխություններով վերահաստատվեց 1720 թ. նոյեմբերի 5-ին Ստամբուլում կնքված ռուս-թուրքական նոր պայմանագրով, որը հորջորջվում էր որպես «հավերժական ժամանակների համար» գործող պայմանագիր:

Իր ձեռքերն ազատելով հարավում՝ Ռուսաստանը կրկին իր ջանքերը կենտրոնացրեց իր կարևորագույն մտասևեռումը կյանքի կոչելու՝ այսինքն՝ Բալթիկ ծովի ափերը նվաճելու և դրանք Ռուսաստանին միացնելու խնդրի վրա:

Ռուսական ճակատում ձեռք բերված հաջողությունը թև տվեց թուրքերին, որոնք որոշեցին իրենց ռազմական բախտը փորձել նաև Արևմուտքում: «Խիզախ վեզիր» մականունը կրող մեծ վեզիր Դամադ Ալի փաշան պահը միանգամայն հարմար էր համարում թուլացած և իր ռազմական հզորությունը նշանակալիորեն կորցրած Վենետիկի հանրապետությանը հարվածելու համար: Ստամբուլը իր առջև խնդիր էր դրել հաղթական պատերազմի միջոցով ոչ միայն հետ նվաճել Մորեան ու Էգեյան արշիպելագի կղզիները, այլև վերականգնել օսմանյան բանակի ու պետության վարկը:

1714 թ. թուրքերը սանձազերծեցին մի պատերազմ, որը չարունակվեց չորս տարի՝ մինչև 1718 թ.: Սկզբում հաջողությունը թուրքերի կողմն էր: Պատերազմի հենց սկզբում Վենետիկը կորցրեց և՛ Մորեան և՛ Էգեյան արշիպելագի կղզիները: Սակայն օսմանցիների բախտի անիվը պտտվեց հակառակ ուղղությամբ, երբ Ավստրիայի թագավոր Կարլոս VI Հաբսբուրգը իշխանազուն Եվգենի Սավոյացու համառ պնդումներին անսալով, պաշտպանողական-հարձակողական դաշինք կնքեց Վենետիկի հանրապետության հետ և մտավ պատերազմի մեջ: Հենց այդ պահից սկսած Ստամբուլը հարկադրված էր պատերազմ մղել երկու ճակատով: Օսմանյան հսկայական բանակը ռազմաշունչ տրամադրություններով տարված մեծ վեզիր Դամադ Ալի փաշայի հրամանատարությամբ ռազմերթի դուրս եկավ Բելգրադի ուղղությամբ: 1716 թ. ամռանը Կարլովիցի գյուղի մոտ, որտեղ կնքվել էր համանուն հայտնի պայմանագիրը, Եվգենի Սավոյացին օսմանյան զորքերին հասցրեց առաջին խոշոր պարտությունը: Ճակատամարտում գլխից վիրավորվելով մեծ վեզիրը շունչը փչեց: Ջարգացնելով իր հաջողությունը՝ իշխանազուն Եվգենին գրավեց Թեմեշվար ամրոցը, որը Հունգարիայում եղած թուրքերի վերջին կարևոր հենակետն էր: 1717 թ. ընթացքում ևս Հունգարիայի և Սերբիայի տարածքում Սավոյացին մի քանի փայլուն հաղթանակներ տարավ թուրքերի նկատմամբ: Բելգրադի պարիսպների վրա կրկին ծածանվեց խաչակիր դրոշը: Այդ հանգուցային նշանակություն ունեցող քաղաքի գրավումը ավստրիացիների կողմից գնահատվեց որպես «բոլոր ժամանակների մեծագույն հաղթանակ»: Դա հեռու չէր ճշմարտությունից, որովհետև Սավոյացին կարողացավ փոքրաթիվ ուժերով ոչ միայն ձեռք բերել փառավոր հաղթանակ, այլև կորստյան մատնել թուրքական բանակի մեծ մասը:

Ավստրիայի չափից ավելի ուժեղացման հեռանկարից անհանգստացած Անգլիան և Հոլանդիան հանդես եկան պատերազմը դադարեց-

նելու վերաբերյալ միջնորդական առաքելությամբ: Ինչպես Կարլովիցի պայմանագրի կնքման ժամանակ, այս անգամ ևս նրանք առաջ քաշեցին հարաբերությունների կարգավորման uti possidetis («պահպանում ենք այն, ինչ ունենք») սկզբունքը: Դրանով կարծես թե գործողության մեջ էր մտնում և իր առաջին քայլերն էր կատարում հետագայում լայնորեն կիրառվող «եվրոպական հավասարակշռության» վերաբերյալ տխրահռչակ սկզբունքը:

Անգլո-հոլանդական եռանդուն դիվանագիտական միջնորդության շնորհիվ, 1718 թ. հուլիսի 21-ին Սերբիայի Պոժարևաց քաղաքում մի կողմից Ավստրիայի և Վենետիկի, մյուս կողմից Օսմանյան Թուրքիայի միջև կնքվեց խաղաղության պայմանագիր, որով Ավստրիային էր անցնում այն ամենը, ինչ թուրքերի ձեռքում մնացել էր Հունգարիայում, այսինքն՝ Թեմեշվարը, Արևմտյան Վալախիան և Հյուսիսային Սերբիան: Բացի այդ, Հաբսբուրգների տիրապետության տակ էր անցնում Սերբիայի մի մասը՝ Բելգրադ քաղաքով հանդերձ, Սմեդերովոն, Բանաթը, Հյուսիսային Բոսնիան և Վալախիայի մեծ մասը: Դրանով իսկ Կարլոս VI թագավորը գերակշիռ դիրքեր էր ձեռք բերում Արևելյան Եվրոպայում: Այսուհետև սուլթանի տիրույթներում առևտուր անելիս ավստրիացի վաճառականները ստանում էին մի շարք արտոնություններ և իրավունքներ: Առհասարակ պայմանագիրը Ավստրիային շնորհում էր ազատ առևտրի իրավունք ողջ Օսմանյան կայսրության տարածքում, այդ թվում նաև Դանուբի ավազանում և Սև ծովի նավահանգիստներում: Այդ պայմանագրով ավստրիացիները Օսմանյան կայսրության մեջ ձեռք էին բերում այնպիսի կապիտուլյացիոն իրավունքներ, ինչպիսիք որ մինչև այդ ստացել էին ֆրանսիացիներն ու անգլիացիները:

Ավստրո-թուրքական պայմանագրի հետ միաժամանակ կնքվեց նաև թուրք-վենետիկյան պայմանագիր: Մորեան, Դալմացիայի և Ալբանիայի մի քանի նավահանգիստներ, ինչպես նաև Էգեյան արշիպելագի մի շարք կղզիներ վերադարձվում էին սուլթանին: Վենետիկին էին մնում միայն Կորֆուն և մի քանի նավահանգիստներ Դալմացիայում և Ալբանիայում, ինչպես նաև Հոնիական ծովում մի քանի մանր կղզիներ: Վենետիկը կորցնում էր Մորեան և հարակից մի շարք շրջաններ: Իր հերթին Օսմանյան կայսրությունը ևս Բալկաններում զրկվում էր հսկայական տարածքներից: Ճիշտ է, ճարտար ու ճկուն վենետիկցիներին այնուամենայնիվ հաջողվեց իրենց վաճառականների համար պահպանել հնուց մնացած մի շարք արտոնություններ ու իրավունքներ և ձեռք բերել նորերը, սակայն իրողությունն այն էր, որ պատե-

բազմի ժամանակ իրենց ունեցած նյութական ու մարդկային կորուստները «պատշաճ ձևով» չհատուցվեցին: Առհասարակ պետք է նշել, որ Թուրք-վենետիկյան այդ պայմանագիրը դարձավ Վենետիկի հանրապետության, որպես քաղաքական գործոնի, կործանման նախագուշակ: Պայմանագիրը ցույց տվեց, որ Եվրոպայի առաջատար պետությունները այլևս քիչ են հաշվի նստում երբեմնի հզոր հանրապետության հետ, որն արագորեն գահավիժում էր դեպի իր մայրամուտը:

1714–1718 թթ. պատերազմը մեկ անգամ ևս գալիս էր հաստատելու այն իրողությունը, որ Օսմանյան կայսրության հզորության ժամանակներն անդառնալիորեն անցել են: Եթե Կարլովիցիի պայմանագիրը ցույց տվեց, որ Թուրքերը այլևս չեն կարող Արևմուտքի համար համարվել լուրջ սպառնալիք, ապա Պոժարևացի պայմանագիրը վերջնականապես նրանց դրեց պաշտպանվող կողմի վիճակի մեջ:

Եվրոպայում որոշակիորեն կայունացնելով իր վիճակը՝ Օսմանյան կայսրությունը որոշեց զբաղվել «արևելյան գործերով»: Բ. Դուռը Իրան ուղարկեց մի դեսպանություն Դուբրի-էֆենդիի գլխավորությամբ, պարզելու համար այնտեղ տիրող դրությունը, որը ստեղծվել էր աֆղանական արշավանքի և Սեֆյան պետության փաստացի քայքայման հետևանքով: Օսմանյան կայսրությունը մտադիր էր Իրանի նկատմամբ աֆղանների հաղթանակի դեպքում ստանալ իր բաժինը և «աստվածախնամ պետությանը կցել այն բոլոր հողերը, որոնք մնացել էին անտեր»: Այլ կերպ ասած, Թուրքերը որոշել էին անհապաղ լցնել այն վակուումը, որն առաջացել էր Սեֆյան պետության անկման հետևանքով: Ստամբուլի կարծիքով «անտեր» հողերի թվում կարող էին լինել Վրաստանը, Արևելյան Հայաստանը, Դաղստանը, Շիրվանը և Ատրպատականը, որոնց նկատմամբ իր ախոյանը՝ Ռուսաստանը, վաղուց ի վեր ներկայացնում էր հավակնություններ: Պյոտր I-ի կողմից այսպես կոչված Կասպիական կամ Պարսկական արշավանք կազմակերպելու մտադրությունը լրջորեն անհանգստացրել էր Թուրքերին: Դրան հակակշռելու նպատակով Ստամբուլը նախ կազմակերպեց իրեն դավանակից սուննի-մահմեդական դաղստանցի ֆեոդալների ու լեզգիների ասպատակություններ դեպի Անդրկովկաս: XVIII դ. սկզբներին նրանք մեծ ավերածություններ ու զանգվածային կոտորածներ կազմակերպեցին ողջ Հարավային Կովկասում, ընդ որում, Շամախիում կողոպտեցին ու սպանեցին նաև 300 ռուս վաճառականների:

Որպես պատասխան քայլ՝ 1721 թ. չվեդների դեմ տարած հաղթական պատերազմից հետո, Պյոտր I-ը սկսեց իր «Պարսկական ար-

չավանքը», որը սակայն ընդհատվեց և իր ավարտին չհասավ: Հարավային Կովկասի և Կասպից ծովի ավազանի նկատմամբ Ռուսաստանի անթաքույց ծավալապաշտական նկրտումները կրկին մակերես էին բարձրացնում ռուս-թուրքական հակասությունները, որոնք թվում էր, թե 1720 թ. «հավերժական ժամանակների համար» կնքված պայմանագրի ստորագրումից հետո անցել էին հետին պլան: Ի վերջո թուրքերը որոշեցին Ռուսաստանի այդ ձգտումների նկատմամբ կիրառել կանխարգելիչ քայլեր:

1724 թ. օսմանյան 30 հազարանոց բանակը ներխուժեց Հարավային Կովկաս: Դրանով իսկ սկսվեց հերթական թուրք-իրանական պատերազմը (1724-1736):

Թուրքական զորքերը նախ ավերեցին և ամայացրին Երևանի խանության տարածքը: Երևանում նրանք կազմակերպեցին բնակչության արյունոտ ջարդ: Այնուհետև գրավելով Նախիջևանն ու Գանձակը՝ թուրքերը ներխուժեցին Վրաստան և գրավեցին Թիֆլիսը, որն ավերեցին և կազմակերպեցին բնակչության կոտորած: Ամենուրեք հայերն ու վրացիները զավթիչներին ցույց էին տալիս համառ դիմադրություն: Թուրքական փաշաներից մեկը, որը գերի էր ընկել ինքնապաշտպանական կռիվների դուրս եկած Ղարաբաղի հայերի ձեռքը, հարցաքննության ժամանակ ասել է. «Սուլթանը հրամայել է սրի քաշել այդ երկրների հայերին և կղլբաշներին, քանի որ ռուսական ցարի զորքերը եկել են ծովի այդ կողմը, իսկ մենք պետք է գրոհենք նրանց վրա: Հետևաբար այդ երկրները պետք է ավերվեն, հայերը ոչնչացվեն, որպեսզի մեր ճանապարհը ազատ լինի»: Այնուհետև փաշան ասում է, որ եթե հայերը կանգնած չլինեին թուրքերի ճանապարհի վրա, թուրքական զորքերը ավելի մեծ դյուրությամբ կարող էին շարժվել դեպի Բաքու և Դերբենտ:

Իսկ դեպքերին ժամանակակից ու ականատես պատմիչ Աբրահամ Երևանցին գրում է, որ «Նրա (սուլթանի - Վ. Բ.) արշավանքի ճանապարհին ընկած վայրերն ու գյուղերը լրիվ ավերվեցին և նա գերի վերցրեց երկսեռ բնակչությունից քսան հազար մարդուց ավել»:

Այդ ծանր ու օրհասական պահին հայ և վրացի ժողովուրդները իրենց փրկության հույսերը կապել էին Ռուսաստանի հետ, սակայն Պյոտր I-ը չկատարեց իր տված խոստումը և օգնության ձեռք չմեկնեց նրանց:

1724 թ. հունիսի 12-ին Ստամբուլում ստորագրվեց ռուս-թուրքական պայմանագիր, որով այդ երկու պետությունները միմյանց միջև բաժանում էին Կովկասում Սեֆյան Իրանի նախկին տարածքները: Կասպից ծովի արևմտյան և հարավային ծովափնյա շրջաններն անցնում

էին Ռուսաստանին, իսկ Արևելյան Վրաստանն ու Արևելյան Հայաստանի նշանակալից տարածքներ (Երևանի և Նախիջևանի խանությունները), ինչպես նաև Շիրվանը, Ղարաբաղը, Շամախին, Գյանջան անցնում էին Օսմանյան կայսրությանը:

Ձարգացնելով իր նվաճողական քաղաքականությունը՝ 1724-1725 թթ. ընթացքում թուրքերին հաջողվեց գրավել նաև Թավրիզը, Համադանը, Ղազվինը, Արդեբիլը, Քերմանշահը, այսինքն Իրանական Ատրպատականի և Քրդստանի կարևորագույն կենտրոնները, ինչպես նաև Լուրիսթանը: Այնուհետև թուրքական զորքերը ուղղություն վերցրին դեպի հարավ՝ մայրաքաղաք Սպահանի կողմը: Թեև Իրանի փաստացի տիրակալ ափղան Աշրաֆին հաջողվեց կասեցնել նրանց հետագա առաջխաղացումը, սակայն 1727 թ. հոկտեմբերի 27-ին Համադանում կնքված իրանա-թուրքական պայմանագրով թուրքերն ունենում էին խոշոր տարածքային ձեռքբերումներ: Նրանց էր անցնում Իրանում արդեն գրաված բոլոր տարածքները, սակայն իրենք պարտավորվում էին այլևս զորքերը չչարժել առաջ դեպի հարավ՝ մայրաքաղաքի կողմը: Այսպիսով, թուրքերը ստանում էին Ատրպատականը, Իրանական Քրդստանը, Լուրիսթանը, Խուզիսթանը և Կենտրոնական Իրանի մի մասը: Այլ կերպ ասած, նրանք դառնում էին ողջ Իրանի տարածքի կեսից ավելիի տերը: Պայմանագիրը պարտադրում էր, որ այսուհետև իրանական մզկիթներում ուրբաթօրյա աղոթքի ժամանակ հնչող հութբայում սուլթան Ահմեդ III-ի անունը հիշատակվի Իրանի շահ Աշրաֆի անունից առաջ: Դա նշանակում էր, որ այսուհետև Իրանը պետք է ընդունի իր վասալական կախումը Օսմանյան կայսրությունից: Բացի այդ, Իրանի շահը պետք է սուլթան Ահմեդ III-ին ճանաչի որպես համայն ուղղադավան մահմեդականների (սուննիների) հոգևոր գերագույն առաջնորդ՝ խալիֆ:

Իրանի հետ վերջին երկու հարյուրամյակների ընթացքում տեղի ունեցած պատերազմներում դա օսմանցիների ամենամեծ հաջողությունն էր: «Աշրաֆի հետ կնքված պայմանագիրը,- գրում է ֆրանսիացի Մ. Մինյոն,- ամենափառահեղներից էր, որ երբևիցէ կնքել էին օսմանցիները Պարսկաստանի հետ, քանի որ այդ պայմանագիրը Բարձրագույն Դռանն էր հանձնում այս ընդարձակ թագավորության (Իրանի - Վ. Բ.) զգալի մասը»:

1724 թ. Ստամբուլի ռուս-թուրքական պայմանագիրը լոկ ժամանակավոր համաձայնություն էր: Երկու ախոյանների միջև խորքային հակասությունները դեռ մնում էին ուժի մեջ: XVIII դ. 30-ական թվականներին դրանք կրկին սրվեցին: Դրա գլխավոր պատճառներն էին

Ղրիմի և նոգայական թաթարների ավերիչ հարձակումները հարավ-ռուսական հողերի վրա, Թուրքական իշխանությունների կողմից ռուսական նավերի համար սահմանված արգելքը նավարկելու Սև ծովում և նեղուցներով մտնելու Միջերկրական ծով, Ռուսաստանի աճող ազդեցությունը Բալկանյան թերակղզու և Կովկասի քրիստոնյա բնակչության նկատմամբ և այլն: Ի վերջո Ռուսաստանը ձգտում էր ազատվել Պրուտի պայմանագրի իրեն ոչ ձեռնտու արգելքներից և առհասարակ 1720 և 1724 թթ. կնքված ռուս-թուրքական պայմանագրերի այն դրույթներից, որոնք Պետերբուրգը համարում էր իր համար անցանկալի: Երկու պետությունների միջև բախումը ակտիվորեն հրահրվում էր նաև ֆրանսիական դիվանագիտության կողմից, որը գաղտնապես Ստամբուլում իր դեսպանության և Օսմանյան կայսրության ու Ռուսաստանում գործող իր գործակալության միջոցով աշխատում էր պատերազմ հրահրել երկու ախոյանների միջև: Երբ Պետերբուրգում համոզվեցին, որ իրադարձությունները արագորեն տանում են դեպի պատերազմ, որոշեցին կարգավորել հարաբերություններն Իրանի հետ: Ըստ այնմ, Աննա Իվանովնայի կառավարությունը 1735 թ. Իրանի շահի հետ կնքեց դաշնակցային պայմանագիր, Իրանին վերադարձնելով մերձկասպյան բոլոր հողերը, այդ թվում նաև Դերբենտը և Բաքուն: Ստամբուլում դա գնահատվեց որպես 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի կոպիտ խախտում և Ռուսաստանի կողմից ուխտադրժություն: Սուլթանի պատասխանը իրեն երկար սպասեցնել չտվեց: Նրա հրամանով Ղրիմի խան Դևլեթ-Գիրեյը ռուսական հողերի վրայով ավերիչ արշավանք կազմակերպեց դեպի Հարավային Կովկաս, ճանապարհին անխնա կողոպուտի ու ավերածության մատնելով ռուսական հողերը և հազարավոր մարդկանց քշելով գերության: Ռուսաստանը որոշեց անհապաղ պատասխան հարված հասցնել Ղրիմի խանին: 1735 թ. աշնանը ռուսական 40 հազարանոց բանակը շարժվեց դեպի Ղրիմ: Սակայն սննդամթերքի անբավարար լինելու և ճանապարհազրկության պատճառով այդ արշավանքը հաջողություն չունեցավ: Անչուշտ Պետերբուրգում հասկանում էին, որ Ղրիմի խանի ռազմաշունչ տրամադրությունների բորբոքումը կատարվում է Ստամբուլի կողմից: Ուստի որոշվեց, որ հասել է օսմանցիների հետ զենքի լեզվով խոսելու ժամանակը: 1736 թ. ապրիլին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը: Ռուսական զորքերը ներխուժեցին Ղրիմ և գրավեցին Բախչիսարայը: Թեժ մարտեր ծավալվեցին նաև Թուրքերի դեմ: Ռուսները վերստին գրավեցին Ազովը: 1737 թ. ամռանը, երբ Ռուսաստանի

դաշնակից Ավստրիան ևս մտավ պատերազմի մեջ, Օսմանյան կայսրության վիճակը խիստ բարդացավ: Ավստրիական զորքերը ներխուժեցին Բոսնիա, Սերբիա և Վալախիա: Իսկ ռուսները գրավեցին Սև ծովում Թուրքիայի կարևոր հենակետ Օչակովը, ինչպես նաև Կինբուրնը, միաժամանակ Ղրիմում իրականացնելով մի շարք հաջող ռազմական գործողություններ: Միանգամայն ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունը ի վիճակի չէ երկու ճակատով միաժամանակյա պայքար մղել Եվրոպայի ռազմական առումով հզոր պետությունների հետ: Ստամբուլի առաջարկով սկսվեցին հաշտության բանակցություններ: 1737 թ. ամռանը Ուկրաինայի լեհական մասում գտնվող Նեմիրով փոքրիկ քաղաքում գումարվեց խաղաղության խորհրդաժողով՝ հաշտության պայմանագրի պայմանները քննարկելու համար: Խորհրդաժողովում և՛ Ավստրիան և՛ Ռուսաստանը թուրքերի հետ բանակցում էին սուրը ձեռքերին: Ռուսները պահանջում էին ոչ միայն ազատ նավարկության իրավունք Սև ծովում, այլև իրենց նավերի ազատ անցման իրավունք Բոսֆորի նեղուցով դեպի Միջերկրական ծով: Այնուհետև, նրանք վերջնագրի լեզվով թուրքերի վրա ճնշում էին գործադրում, որ ռուսական սահմանը տարածվի մինչև Դնեստր գետը, Սև ծովից հյուսիս ընկած Կուբանի և թաթարական այլ հողերը միացվեն Ռուսաստանին, Մոլդավիան և Վալախիան ճանաչվեն Ռուսաստանի հովանու ներքո գտնվող անկախ իշխանություններ:

Ավստրիացիները իրենց հերթին պահանջում էին Բոսնիան և Սերբիան ամբողջությամբ վերցրած: Այսպիսով, բանակցությունները որևէ դրական արդյունքի չհանգեցրին: Կողմերի դիրքորոշումները չհաջողվեց համաձայնեցնել:

Թուրքերը այլ ելք չունեին, քան կրկին զենք վերցնել իրենց տարածքները պաշտպանելու համար: Ռազմական գործողությունները նոր թափով շարունակվեցին:

Փարիզում Նեմիրովի խորհրդաժողովում տեղի ունեցած բանակցությունները մեկնաբանվեցին որպես Ռուսաստանի և Ավստրիայի կողմից Օսմանյան կայսրության համատեղ բաժանման փորձ: Կարդինալ Ֆլերնը, որը Վերսալի նկատմամբ ուներ մեծ ազդեցություն, պնդում էր, որ անհրաժեշտ է ինչ գնով էլ որ լինի պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը: Ֆրանսիական կառավարող շրջանները համամիտ էին այդ տեսակետի հետ և գտնում էին, որ հարցը միայն Լևանտում Ֆրանսիայի առևտրական շահերը չեն, այլ այն, որ Օսմանյան կայսրությունը պետք է պահպանվի որպես եվրոպական հավասարակշռության էական բաղկացուցիչ տարր: Ուստի

Վերսալը ոտքի հանեց իր ողջ գործակալական ցանցը դիվանագիտական գրոհի անցնելու համար, որպեսզի նախ ներսից պայթեցնի ավստրո-ռուսական դաշինքը և ապա Թուրքերին համոզի, որ ավելի լավ է կռվել, քան թե ընդունել խաղաղության ամոթալի պայմանները:

Ստանալով ֆրանսիական թագավորի աջակցության խոստումները, Թուրքերը մեծ վեզիրի հրամանատարությամբ զորքերը շարժեցին դեպի արևմուտք՝ դեպի ավստրիական սահմանները: Իրադարձությունների անիվը շրջվեց հօգուտ Թուրքերի: Միանգամայն անսպասելի կերպով ավստրիական զորքերը կրեցին պարտություն և գրավելով Նիշը, Մորավա գետի հովտով Թուրքերը իրենց համար ճանապարհ բաց արեցին դեպի Բելգրադ:

Իրադրությունը միանգամայն հարմար համարելով, Ստամբուլում ֆրանսիական դեսպան մարկիզ դը Վիլնյովը հանդես եկավ միջնորդական առաքելությամբ, որի հետևանքով Սիստովո քաղաքում Վիեննան 1739 թ. սեպտեմբերի 1-ին Թուրքերի հետ կնքեց անջատ հաշտության պայմանագիր, որով Ստամբուլը հետ էր ստանում այն բոլոր տարածքները, որ նա կորցրել էր Սերբիայում, Բոսնիայում ու Վալախիայում ըստ Պոժարևացի պայմանագրի: Դանուբը, Սավան և Թեմեշվարի լեռնային նահանգը կրկին դարձան երկու կայսրությունների միջև սահման: Որպես պատերազմող կողմ մնալով մենակ և պատրաստ չլինելով տևական և հյուծիչ պատերազմի, Ռուսաստանը ևս ստիպված էր սկսել հաշտության բանակցություններ, որոնք ավարտվեցին 1739 թ. սեպտեմբերի 18-ին Բելգրադում ռուս-թուրքական խաղաղության պայմանագրի կնքմամբ: Թուրքերը հրաժարվեցին Ազովից, պայմանով, որ նրա ամրոցը կքանդվի, իսկ շրջակա տարածքը կվերածվի երկու կայսրությունների միջև չեզոք գոտու: Բ. Դուռը իրավունք էր ստանում Ազովից ներքև, Դոնի ստորին հոսանքի մոտ կառուցելու ամրոց, դրանով իսկ արգելափակելով ռուսների մուտքը Ազովի և Սև ծովերը: Ռուսական նավերին, անկախ նրանից, թե դրանք ռազմական են թե առևտրական, արգելվում էր մտնել Սև ծով: Ռուսներին չէր թույլատրվում նաև Սև և Ազովի ծովերի ափերին կառուցել նավաշինարաններ: Ղրիմում, Մոլդավիայում և Բեսարաբիայում Ռուսաստանի գրաված բոլոր տարածքները վերադարձվում էին Ստամբուլին, սակայն դրա փոխարեն Ռուսաստանին էին միացվում ոչ մեծ տարածքներ ուկրաինական հողերից: Պայմանագիրը պարտավորեցնում էր ռուս վաճառականներին իրենց սևծովյան առևտուրն իրականացնելիս օգտվել միայն Թուրքական նավերից: Վերջապես Թուրքերը ձեռք բերեցին ևս մեկ կարևոր զիջում. ռուսները պարտա-

վորվում էին ճանաչել Մեծ և Փոքր Կաբարդայի անկախությունը, որոնք մինչև 1739 թ. պայմանագրի կնքումը գտնվում էին ռուսական կայսերական տան հովանավորության ներքո: Վերջապես Բ. Դուռը իր համաձայնությունն էր տալիս, որ Ռուսաստանը Ստամբուլում ունենա իր մշտական դիվանագիտական ներկայացուցիչը:

1739 թ. Բելգրադի պայմանագիրը անկասկած օսմանյան դիվանագիտության խոշոր հաջողությունն էր: Պայմանագրից ստացվող տպավորությունն այնպիսին էր, որ կարծես թե Ռուսաստանը կրել էր ջախջախիչ պարտություն և հարկադրված էր ստորագրել նման նվաստացուցիչ փաստաթուղթ: Օսմանյան դիվանագիտությունը կարողացել էր կռահել, որ Ռուսաստանի ռազմական ու ֆինանսա-տնտեսական վիճակը նրան հնարավորություն չի տալիս մենակ, առանց դաշնակիցների, շարունակելու պատերազմը: Կասկածից վեր է նաև, որ չնայած այն հանգամանքին, որ Օսմանյան կայսրությունը թևակոխել էր վայրէջքի ու մայրամուտի շրջանը, սակայն նա դեռ շարունակում էր մնալ որպես պատկառելի ռազմական ուժ ունեցող պետություն: Բելգրադի պայմանագիրը հանդիսանում էր դրա համոզիչ վկայությունը:

1740-1741 թթ. Ռուսաստանն ու Օսմանյան կայսրությունը միմյանց հետ փոխանակեցին արտակարգ դեսպանություններ: Ստամբուլում ռուսական դեսպան նշանակվեց գեներալ Ա. Ի. Ռումյանցևը, որի դեսպանությանը սուլթանի կողմից չնորհվեց «եվրոպական մեծ դեսպանության» կարգավիճակ:

Թուրքերի ձեռք բերած հաջողությունների մեջ իր խոշոր լուման ուներ նաև ֆրանսիական դիվանագիտությունը: Շնորհիվ հօգուտ Թուրքերի ֆրանսիայի իրագործած «փայլուն միջնորդական առաքելության», թե՛ Ավստրիայի և թե՛ Ռուսաստանի հետ կնքված պայմանագրերը մեծ առավելություններ պարգևեցին օսմանցիներին: Դրա հետևանքով ֆրանսիայի հեղինակությունն ու հմայքը Ստամբուլի կառավարող շրջաններում աննախընթաց կերպով մեծացավ: Ի նշան երախտագիտության, 1740 թ. սուլթանական կառավարությունը Ֆրանսիայի հետ կնքեց բարեկամության ու առևտրի մասին քսանչորս հոդվածներից բաղկացած պայմանագիր, որը վերականգնում էր կապիտուլյացիաների գործողությունը առավել բարենպաստ ու մշտական պայմանների հիմքի վրա, քան գոյություն ուներ նախկինում: Ինչպես նշվել է վերևում, նախկինում կապիտուլյացիոն պայմանագրերը տրվում էին սուլթանի կողմից որպես չնորհ և ուժի մեջ էին լինում միայն տվյալ սուլթանի կառավարման շրջանում: Եվրոպական դեսպանները

յուրաքանչյուր հաջորդ սուլթանից պետք է նորից համաձայնություն ստանային կապիտուլյացիաները հաստատելու համար: Առևտրական արտոնությունները օտարերկրյա վաճառականներին տրվում էին որպես առանձնաշնորհումներ («իմթիյազաթ») հնազանդ վասալներին:

1740 թ. Ֆրանսիային հատկացված կապիտուլյացիան իր տեսակի մեջ առաջինն էր, որ օսմանյան կառավարության կողմից հատկացվում էր որևէ եվրոպական պետության: Այն մեծապես ամրապնդում էր Ֆրանսիայի դիրքերը Թուրքիայում: Այսուհետև Ֆրանսիան ստանում էր մշտական ու անփոփոխ հիմքի վրա բազմաթիվ արտոնություններ ու իրավունքներ Օսմանյան կայսրությունում, այդ թվում նաև Ֆրանսիայի կողմից կայսրության կաթոլիկ բնակչության հովանավորության իրավունք: Ի վերջո Օսմանյան կայսրության համար Ֆրանսիան դառնում էր մի պետություն, որի կողմը ողջ XVIII դարի ընթացքում Թուրքերն ուղղում էին իրենց հայացքները կայսրության ճգնաժամային պահերին օգնության ակնկալիքով:

Եթե Ավստրայի և Ռուսաստանի դեմ պատերազմներում XVIII դարի 30-ական թվականներին Թուրքերին հաջողվեց ձեռք բերել հաջողություններ, ապա նույնը չի կարելի ասել Իրանի դեմ մղվող պատերազմների վերաբերյալ: Իրանում Թահմազ Ղուլի խանի (հետագայում Նադիր շահ Աֆշար) քաղաքական ասպարեզ իջնելը Թուրք-իրանական հարաբերություններում առաջ բերեց բեկում հօգուտ Իրանի: Դեռևս 1730թ. աֆղաններին Իրանից վտարելուց հետո Նադիրն իր զենքն ուղղեց օսմանյան Թուրքերի դեմ, որոնք, օգտվելով Իրանում ստեղծված խառնակ վիճակից, գրավել էին համարյա ողջ Անդրկովկասը, Դաղստանի և Շիրվանի մի մասը, ինչպես նաև ընդարձակ տարածքներ Հյուսիսային, Արևմտյան և Կենտրոնական Իրանում: 1730 թ. Նադիրին հաջողվեց ջախջախիչ պարտության մատնել Թուրքերին և գրավել Արդեբիլն ու Թավրիզը: Սակայն հակառակ իր բազմիցս նախազգուշացումներին՝ խուսափել երկու ճակատով մարտեր մղելուց, Իրանի շահ Թահմազը պատերազմական գործողություններ սկսեց Թուրքերի դեմ ճիշտ այն պահին, երբ Նադիրը երկրի արևելքում՝ Հերաթում՝ ծանր մարտեր էր մղում ապստամբած աֆղանական արդալի ցեղի դեմ: Հետևանքը եղավ այն, որ Համադանի մոտ՝ Կուրիջանի դաշտում տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում Թուրքական բանակը Հեքիմ զադե Ալի փաշայի հրամանատարությամբ ջախջախեց Թահմազի զորքերին: Ինքը՝ շահը, հազիվ խուսափեց գերի ընկնելուց: Օսմանյան բանակի առջև ճակատը կատարելապես մերկացավ, և սրընթաց չարժվելով առաջ՝ Թուրքերը գրա-

վեցին Համադանը, Քերմանշահն ու Թավրիզը և ներխուժեցին Հարավ՝ Խուզիստան: Անօգնական ու հուսահատ շահ Թահմազը ստիպված էր հաշտություն թախանձել: Նրա և թուրքական սերասկերի միջև 1732 թ. հունվարի 10-ին ստորագրվեց ամոթալի մի փաստաթուղթ հաշտության մասին, որով Թահմազը օսմանցիներին զիջեց Արաքս Գետից հյուսիս ընկած բոլոր տարածքները, և Արաքսը ճանաչվեց որպես երկու երկրների սահման: Բացի այդ, Բաղդադի Ահմադ-փաշան որպես «արփալըք» (կերակրում) ստացավ Քերմանշահի նահանգի ինը գավառներ:

Երբ ստորացուցիչ պայմանագրի ստորագրման լուրը հասավ Նադիրին, նա շահ Թահմազին հռչակեց հայրենիքի թշնամի և գահընկեց արեց նրան: Միաժամանակ Նադիրը մի նամակ գրեց օսմանյան գահը նոր բարձրացած սուլթան Մահմուդ I-ին, որտեղ պահանջում էր հետ վերադարձնել բոլոր գրավյալ տարածքները՝ հակառակ դեպքում սպառնալով պատերազմով:

1732 թ. վերջին Նադիրը մեծ զորաշարժ կատարեց թուրքերի դեմ: Սկսվեց հերթական թուրք-իրանական պատերազմ: Գրավելով Համադանն ու Քերմանշահը՝ իրանական զորքերը շարժվեցին դեպի Բաղդադ և 1733 թ. սկզբին Քիրքուքի մոտ պարտության մատնելով թուրքերին՝ գրավեցին չիաների սրբազան քաղաքներ Քարբալան ու Էն-Նաջաֆը:

Բաղդադի Ահմեդ-փաշան Նադիրի հետ ստորագրեց պայմանագիր ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ: Պայմանագրով նախատեսվում էր, որ Ստամբուլը վերադարձնելու է վերջին տաս տարիների ընթացքում Իրանից գրաված բոլոր տարածքները և վերականգնելու է թուրք-իրանական սահմանը այն տեսքով, ինչպես որոշված էր 1639 թ. Քասրե-Շիրինի պայմանագրով: Սակայն սուլթան Մահմուդ I-ը չճանաչեց Բաղդադի փաշայի ստորագրած պայմանագիրը և սկսեց նախապատրաստվել վճռական գործողությունների: Պատերազմը շարունակվեց: Արագ երթով Նադիրը մեկը մյուսի հետևից հետ վերցրեց Արաքսից հյուսիս ընկած քաղաքներն ու բնակավայրերը:

1735 թ. հուլիսի 8-ին Եղվարդի մոտ տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Չնայած թվական բացարձակ գերակշռությանը՝ թուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին: Ճակատամարտում մեծ վեզիր Դամադ Մուստաֆա փաշան և սերասկեր Քյոփրյուլու զադե Աբդուլլա փաշան սպանվեցին: Նադիրը ասպատակ սփռեց Կարսից մինչև Էրզրում ու Բայազետ՝ կողոպուտի ենթարկելով Արևմտյան Հայաս-

տանի բազմաթիվ բնակավայրեր: Պատերազմական գործողություն-ներն ավարտվեցին 1736 թ. սեպտեմբերի 28-ին Ստամբուլում կնքված թուրք-իրանական խաղաղության պայմանագրով: Սակայն այս պայմանագիրը ևս չհաստատվեց սուլթանի կողմից: Ի վերջո նույն 1736 թ. Էրզրումում կնքվեց հաշտության նոր պայմանագիր, որով Օսմանյան կայսրությունը ստիպված էր Իրանին վերադարձնել նրան պատկանող այն բոլոր տարածքները, որոնք գրավվել էին 1724-1736 թթ. ընթացքում տեղի ունեցած ռազմական ընդհարում-ների ժամանակ: Այլ կերպ ասած, Թահմազ Ղուլի խանը կարողա-ցավ օսմացիներին դուրս քշել ոչ միայն բուն Իրանի տարածքից, այլև Վրաստանից, Արևելյան Հայաստանից և Միջագետքից: Դա նշանակում էր, որ Արևելքում Օսմանյան կայսրության հեղինակու-թյանը հասցվել է ուժգին հարված:

1743-1746 թթ. ընթացքում Օսմանյան կայսրության և Իրանի միջև ընթանում էր նոր պատերազմ: 1743 թ. սեպտեմբերին Նադիր շահը պաշարեց Մոսուլը և կրկին ասպատակ սփռեց Արևմտյան Հա-յաստանում: Սակայն այդ պատերազմը երկու պետությունների սահ-մանների մեջ էական փոփոխություններ չմտցրեց: 1746 թ. սեպտեմ-բերի 4-ին կնքվեց «վերջնական» թուրք-իրանական խաղաղության պայմանագիր, ըստ որի վերականգնվում էին 1639 թ. Քասրե-Շիրինի պայմանագրի դրույթները: Այսինքն՝ Արևմտյան Հայաստանն ու Արևմտյան Վրաստանը անցնում էին Օսմանյան կայսրությանը, իսկ Արևելյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը, ինչպես նաև Շիրվա-նը, մնում էին Իրանի կազմում:

Կասկածից վեր է, որ ողջ XVI-XVIII դարերի ընթացքում Իրանը հանդիսացավ այն ուժը, որը կասեցրեց օսմանյան բանակների առաջ-խաղացումը դեպի Արևելք՝ Կովկաս, Կենտրոնական Ասիա, Աֆղանս-տան և Հնդկաստան, ինչպես նաև դեպի Հարավ՝ Պարսից ծոցի կողմը:

Թուրք-իրանական այդ պատերազմների շրջանում Օսմանյան կայսրության ներքին վիճակը աչքի էր ընկնում մեծ լարվածությամբ: Ֆինանսական դժվարությունների հետևանքով հարկերի ու տուրքե-րի ավելացումը, դրամի արժեզրկումը, սննդամթերքների գների ան-չեղ աճը և այլն մայրաքաղաքի բնակչության մոտ առաջ էին բերել դժգոհություն և տրտունջներ կառավարության նկատմամբ: Ստամ-բուլի բնակչության առանձնակի զայրույթն էր առաջ բերել նրան հայտնի դարձած այն տեղեկությունը, որ մեծ վեզիր Իբրահիմ փաշան և նրա շրջապատի մարդիկ, օգտագործելով իրենց իշխանությունը, Ստամբուլի շրջակայքից և նույնիսկ հեռավոր վայրերից նախապես

գնել էին մեծ քանակությամբ ցորեն, այն պահել ամբարներում, իսկ ապա բարձր գներով վաճառում էին հացթուխներին ու բնակչությանը: Բացի այդ, մայրաքաղաքի բնակչությանը խիստ զայրացնում էր սուլթանական պալատի սանձարձակ չքեղությունը, անմիտ ծախսերը, աներևակայելի ճոխությամբ իրականացվող տոնակատարությունները, ազնվականության ծախսատար զվարճությունները: Սուլթան Ահմեդ III, նրա մեծ վեզիր Իբրահիմ փաշան, բազմաթիվ աստիճանավորներ, հսկայական միջոցներ էին ծախսում պալատների և զբոսայգիների ամբողջ համալիրներ կառուցելու վրա, որոնցում հազվագյուտ բույսերի կողքին կային նաև մարմարյա շատրվաններ ու ջրավազաններ, որոնցում լողում էին չնաշխարհիկ ձկներ ու թռչուններ:

Ստամբուլում լարվածությունը հասել էր այնպիսի աստիճանի, որ չնչին պատրվակից կարող էր հրդեհ բռնկել: Այդպիսի պատրվակ հանդիսացավ Իրանում թուրքական բանակի պարտության և Թավրիզը կորցնելու լուրը, որը 1730 թ. վերջին մայրաքաղաք բերեցին այդ քաղաքում պարտություն կրած կայազորի զինվորները: Հենց նրանք էլ խռովության սերմերը նետեցին պարարտ հողի մեջ:

1730 թ. սեպտեմբերի 28-ի առավոտյան Պատրոնա Խալիլ անունով ալբանական ծագում ունեցող մի ենիչերի, որն իր ապրուստը հոգալու համար ծառայությունից դուրս ազատ ժամանակ զբաղվում էր հին հագուստի վաճառքով, մի խումբ համախոհների հետ բարձրացրեց կանաչ դրոշ, սկսեց այցելել վաճառականների ու արհեստավորների կրպակները, նրանց կոչ անելով փակել դրանք և ապստամբել սուլթանի ու նրա վեզիրների դեմ, որոնք ժողովրդին հասցրել են թշվառության վիճակի: Պատրոնա Խալիլը հայտարարեց, որ երազում տեսել է, որ իր վրա դրված է առաքելություն ոչնչացնելու բռնակալ վեզիրներին և գահընկեց անելու սուլթանին, որն իր վեզիրների հետ ձևացրել է, թե իբր արշավանքի է մեկնում Իրանի դեմ, բայց իրականում իրեն մատնել է պարապության և քայքայել է բանակը:

Մերկացված սրերով ու փողփողացող դրոշներով Պատրոնա Խալիլը և նրան աջակցող ենիչերիները, որոնց միացան նաև Ստամբուլի ցածր խավերը, մեկնեցին ապստամբների ավանդական հավաքատեղին՝ էթ մեյդան (Մսի հրապարակ), ճանապարհին կոչ անելով, որ բոլոր «բարի մահմեդականները» միանան իրենց: Հազարավոր մարդիկ՝ վաճառականներ, արհեստավորներ, Ստամբուլի հայտնի քաղաքային տականքը, աղքատ ու ընչազուրկ մարդիկ և այլն միացան ենիչերիներին: Մոլեգնած ամբոխը ջարդ ու փչուր արեց և ավերեց ատելի աստիճանավորների տները, հարձակվեց զինապահեստների վրա,

բանտերից ազատ արձակեց բանտարկյալներին, ինչպես նաև տաժանակրության դատապարտված հանցագործներին: Խռովարարները հայտարարեցին, որ իրենք զենք են վերցրել, որպեսզի ազատվեն փչացած ու գող կառավարիչներից ու նրանց բռնակալական իշխանությունից: Ապստամբները պահանջեցին իրենց հանձնել մեծ վեզիր Իբրահիմ փաշային և մի քանի բարձրաստիճան մարդկանց, որպեսզի ժողովուրդը դատի նրանց:

Շարժման ղեկավարության մեջ խռովարարների շարքերից ընդգրկվեցին մի շարք վճռական ու համարձակ մարդիկ՝ Քյուչյուկ Մուսլուն, Ալին, Կարա Իբլանը, Ահմեդը, Իսմայիլը և ուրիշներ: Սեպտեմբերի 29-ին ապստամբները գրավեցին Տերսանեն՝ ռազմա-ծովային ուժերի զինանոցը: Այնուհետև գրավելով սննդամթերքների զինվորական պահեստները՝ ենիչերիներն ու ամբոխը պալատը զրկեցին սննդամթերքներ ստանալու հնարավորությունից և նույնիսկ կտրեցին պալատ գնացող խմելու ջուրը: Ապստամբության երկրորդ օրը խռովարարների թիվը հասավ 60 հազար մարդու: Ապստամբներին հաջողվեց իրենց հսկողությունը սահմանել մայրաքաղաքի մեծ մասի վրա:

Սուլթանական կառավարությունը մատնվել էր խուճապի: Սուլթան Ահմեդ III չռայլում էր խոստումներ ժամանակ շահելու համար: Զվստահելով իր զորքին, սուլթանը հրամայեց իր պալատի դարպասների մոտ կախել մարգարեի դրոշը և կոչ անել բոլոր մուսուլմաններին հանդես գալու ապստամբների դեմ, խոստանալով առատ վարձատրություն: Նա նույնիսկ փորձեց դիմել մայրաքաղաքի քրիստոնյա բնակչության օգնությանը: Սակայն ապստամբների ղեկավարները քրիստոնյաներից պահանջեցին դուրս չգալ տներից՝ նրանց խոստանալով կատարյալ անվտանգություն, հակառակ դեպքում սպառնալով, որ նրանք «չեն կարողանա խուսափել մուսուլմանների արդար զայրույթից»:

Ուլեմների և վեզիրների միջև սկսվեցին երկպառակություններ: Շատ ուլեմներ դժգոհ էին մեծ վեզիր Իբրահիմ փաշայից ինչպես Իրանի հետ պատերազմում նրա անհաջողությունների համար, այնպես էլ այն պատճառով, որ նա իր դրածոին ուլեմների վզին էր փաթաթել որպես շեյխ-ուլ-իսլամ: Հենց իր՝ մեծ վեզիրի մերձավոր օգնականների շրջանում ևս ընթանում էր գզվռտոց:

Ապստամբները իրենց ներկայացուցիչներից բաղկացած խմբերին ուղարկեցին Ստամբուլի շրջակայքը, այնտեղ ևս ժողովրդին կառավարության դեմ հանելու համար: Սեպտեմբերի 30-ին ապստամբները ցամաքից ու ծովից շրջափակեցին սուլթանական պալատը: Գնա-

լով նրանք էլ ավելի էին արմատական դարձնում իրենց պահանջները: Ի վերջո նրանք պահանջեցին, որ սուլթանը հրաժարվի գահից հօգուտ իր եղբորորդու՝ Մահմուդի, որն այդ ժամանակ բանտարկության մեջ էր գտնվում պալատի ներքին բանտում՝ «կաֆեսում»:

Կորցնելով ոգու արիությունը՝ իր կաչին փրկելու համար սուլթան Ահմեդ III-ը որոշեց մեծ վեզիր Իբրահիմ փաշային, Կաբութան փաշային (գլխավոր ծովակալ) և մեկ այլ բարձր աստիճանավորի, որոնց նկատմամբ խռովարարները լցված էին առանձնակի կատաղությամբ, հանձնել Պատրոնա Խալիլին: Վերջինիս հրամանով այդ մարդիկ տեղնուտեղը խեղդամահ արվեցին:

Պալատական ավագանին հասկացավ, որ վտանգը սրընթաց մոտենում է իրեն, ուստի կազմակերպեց դավադրություն սուլթանի դեմ: 1730 թ. հոկտեմբերի 2-ի գիշերը նրանք ստիպեցին Ահմեդ III-ին հրաժարվել գահից հօգուտ իր եղբորորդի Մահմուդի: Զունենալով այլ ելք՝ 59-ամյա սուլթանը տվեց իր համաձայնությունը, պայմանով, որ իր և իր երեխաների կյանքի համար տրվեն ապահովության երաշխիքներ: Գահընկեց արված սուլթանին բանտարկեցին տխրահռչակ «վանդակում»՝ այնտեղ իր կյանքի վերջին տարիները մաշելու համար: Այդ նույն «կաֆեսից» հանեցին և գահ բարձրացրին 35 տարեկան Մահմուդ I (1730-1754), որը օսմանյան պատմության մեջ հայտնի է Մահմուդ Զելերի անվամբ:

Նոր սուլթանը ցանկություն հայտնեց տեսնել այն մարդուն, որին պարտական էր գահ բարձրանալու համար: Նրան ներկայացրին Պատրոնա Խալիլին իր հնամաշ չորերով ու բորիկ ոտքերով: Սուլթանը նրան առաջարկեց, թե նա ինչ է ցանկանում, երդվելով, որ նրա ամեն մի ցանկություն ինքը կկատարի: Պատրոնա Խալիլը խնդրեց վերացնել հին հարկերի վրա ավելացված հավելյալ հարկերն ու տուրքերը և առհասարակ նոր մտցված ծանր հարկային բեռը: Հավատարիմ մնալով իր տված խոստմանը, նորաթուխ սուլթանը կատարեց այդ բոլոր պահանջները:

Պալատում Պատրոնա Խալիլը և նրա համախոհները ձեռք բերեցին մեծ ազդեցություն: Պետության բարձրագույն պաշտոնյաների հետ խռովության առաջնորդը խոսում էր չիջնելով ձիու վրայից: Սուլթանի մայրը՝ վալիդե-սուլթանուհին, ստիպված էր Պատրոնա Խալիլին անվանել իր երկրորդ որդին: Միաժամանակ օգտագործելով փորձված եղանակը՝ կաշառքը, սուլթանը կամաց-կամաց խռովության կարևոր դեմքերին հեռացնում էր ասպարեզից: Այդ քաղաքականության շնորհիվ կարճ ժամանակ անց ապստամբների շարքերը

խիստ նոսրացան: Սուլթանը առանց վերապահության միաժամանակ ունկնդրում էր Պատրոնա Խալիլի և նրա մերձավորագույն համախոհների խորհուրդներին այս կամ այն անձին բարձր պաշտոն չնորհելիս: Բնականաբար դա սուլթանի կողմից կատարվում էր դժկամորեն: Որպեսզի ինքը ազատվի Պատրոնա Խալիլի և նրա «յոլդաշ» խռովարարների «հովանավորությունից», Մահմուդ I-ը նրանց բոլորին առաջարկեց բարձր պաշտոններ պետության հեռավոր նահանգներում: Ստանալով մերժում՝ սուլթանը որոշեց դիմել ավելի կտրուկ քայլերի: 1730 թ. նոյեմբերի 26-ին նա Պատրոնա Խալիլին ու նրա գործակիցներին, որոնց հանդգնությունն անցել էր ամեն չափ ու սահման, հրավիրեց պալատ՝ իբր թե Դիվանի նիստի՝ նրանց հետ քննարկելու համար բարձր պետական պաշտոններ զբաղեցնելու համար նրանց առաջադրած թեկնածուների հարցը: Բայց երբ նրանք ամբողջ կազմով ժամանեցին պալատ՝ սուլթանի հրամանով անխտիր սրի քաշվեցին: Նրանց դիակները նետվեցին ծովը՝ ձկներին կեր: Կարծես իրականացավ Պատրոնա Խալիլի կանխագուշակումը իր ապագայի մասին: Սուլթան Մահմուդ I-ի հետ առաջին հանդիպման ժամանակ, երբ սուլթանը հարցրել էր նրան, թե որպես պարգև ինչ է ցանկանում, խռովարարների պարագլուխը պատասխանել էր, որ ինքը արդեն ստացել է այն, ինչ ցանկանում էր՝ Մահմուդին տեսնում է գահի վրա: Ինչ վերաբերում է ապագային, ապա ինքը սուլթանից սպասելու է արագ և ոչ պատվաբեր մահ:

Խռովության ղեկավարների հետ հաշվեհարդարին հետևեց դաժան դատաստանը ապստամբության մասնակիցների հետ: Ողջ մայրաքաղաքով մեկ սկսվեց խռովարարների որսը: Յուրաքանչյուր ապստամբի գլխի համար խոստացվել էր 500 ղուրուշ: Երեք օրվա ընթացքում ձերբակալվեցին և սպանվեցին ապստամբության ավելի քան յոթ հազար մասնակիցներ: Կենդանի մնացածները մի քանի ամիս անց փորձեցին վրեժխնդիր լինել իրենց ընկերների արյան համար: 1731 թ. մարտի 24-ի լույս 25-ին մի քանի հարյուր մարդ մայրաքաղաքում փորձեցին խռովություն բարձրացնել: Նրանց հաջողվեց հաջորդ իսկ օրը իրենց չուրջը հավաքել ավելի քան երեք հազար դժգոհների: Սակայն այս անգամ խռովությունը արագորեն ճնշվեց սուլթանին հավատարիմ զորքերի կողմից: Կրկին սկսվեցին զանգվածային մահապատիժներ: Խռովության մասնակից չատերին սրախողխող արեցին կամ խեղդեցին ծովում:

Այսպիսով, հօդս ցնդեց ապստամբների կողմից փայփայած նոր «արդարադատ» սուլթանի պատրանքը:

Սուլթան Մահմուդ I-ի կառավարման տարիներին Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթներում տիրում էր խաղաղություն: Այդ շրջանում եվրոպական երկրները հիմնականում պատերազմում էին մեկը մյուսի դեմ, սկզբում 1740 թ. Հաբսբուրգների կայսր Կարլոս VI-ը մահվանից հետո ավստրիական ժառանգության համար, իսկ ապա ներքաշվելով այսպես կոչված Յոթնամյա պատերազմի մեջ:

Ֆրանսիան թեև մի քանի անգամ փորձեց Օսմանյան կայսրությանը ներգրավել պատերազմների մեջ, հետապնդելով իր շահերը, սակայն սուլթան Մահմուդ I-ը մնաց անդրդվելի: Ֆրանսիական դիվանագիտությունը Պրուսիայի և գերմանական իշխանների հետ համատեղ փայփայելով որոշակի ծրագրեր Ավստրիայի նկատմամբ, թուրքերի վրա ճնշում էր գործադրում, որ նրանք ներխուժեն Հունգարիա: Սակայն սուլթանը, դրսևորելով քաղաքական կամք, հայտարարեց, որ ինքը եվրոպական գործերում պահպանելու է խստիվ չեզոքություն: Այդ տարիներին թուրքական քաղաքական վերնախավի մի ազդեցիկ մասը իրատեսական գնահատական տալով կայսրության վիճակին, այդ խաղաղ դադարը փորձում էր օգտագործել պետության ներքին գործերը կարգավորելու և բանակի մարտունակությունը բարձրացնելու համար, քաջ գիտակցելով, որ վաղ թե ուշ նոր պատերազմը Ռուսաստանի հետ անխուսափելի է:

Սուլթան Մահմուդ I-ի վախճանվեց 1754 թ.: Նրա ժառանգորդ դարձավ նրա եղբայր Օսման III-ը (1754-1757): Վերջինս նույնպես հանդիսանում էր «վանդակի» հերթական զոհերից մեկը: Այդ վանդակում անշարժությունից նրա մարմինը այն աստիճանի ձևախախտման էր ենթարկվել, որ համարյա դարձել էր սպատավոր: Նոր սուլթանը կառավարեց ընդամենը երեք տարի՝ շարունակելով իր եղբոր «խաղաղասիրական» քաղաքականությունը:

1757 թ. օսմանյան գահի վրա նստեց Մուստաֆա III-ը (1757-1774): Այս նոր սուլթանը իր համար ընտրել էր «ջահանգիր» («աշխարհակալ») բանաստեղծական կեղծանունը և հորինում էր բանաստեղծություններ օսմանյան պետության անցյալ փառքի ու ապագա նվաճումների վերաբերյալ: Սուլթանների այս շառավիղը աչքի չէր ընկնում բնավորության կայունությամբ: Նրա քաղաքական մտածողության մակարդակը ևս խիստ սահմանափակ էր, թեև հավանաբար ինքը ևս երազում էր պետության նորացման ու բարեփոխման մասին: Նրա կյանքի առանձին դրվագներ վկայում են, որ նա, համենայն դեպս, ձգտում էր Օսմանյան կայսրությանը ներարկել նոր ավյուն ու կյանք և հատ-

կապես պետությունը պաշտպանել Ռուսաստանի հարձակումներից:

Մուստաֆա III-ի կառավարման առաջին շրջանում պետության փաստական ղեկը գտնվում էր մեծ վեզիր Ռահիբ փաշայի ձեռքերում: Այս գործիչը, որը բավականաչափ կրթված էր և ծանոթ եվրոպական կրթությանն ու լուսավորությանը, տարված էր իր երկրի արևմտականացման գաղափարներով: Նրա գործունեությունը որպես պետության երկրորդ դեմք իր թափով ու մասշտաբներով համեմատելի էր քյոփրյուլուների նշանավոր ընտանիքի ներկայացուցիչների հետ: Ռահիբ փաշան անհրաժեշտ էր համարում իրականացնել պետությունը նորացնելու և արդիականացնելու ուղղությամբ բարեփոխումներ՝ առանց գոյություն ունեցող ինստիտուտների «ներդաշնակության» նկատմամբ սպառնալիք ստեղծելու:

Արտաքին քաղաքականության բնագավառում նա վարում էր հավասարակշռության գիծ: Որոնելով հակակշիռ Օսմանյան կայսրության ավանդական դարձած թշնամիներ Ավստրիայի և Ռուսաստանի դեմ, մեծ վեզիրը փորձեց ապավինել «երրորդ ուժին»: 1761 թ. նա պայմանագիր կնքեց Պրուսիայի հետ, որը նա հույս ուներ ապագայում վերածելու հարձակողական-պաշտպանողական դաշինքի: Ընդ որում, Ռահիբ փաշան թյուրիմացաբար ենթադրում էր, որ Պրուսիան մի երկիր է, որը Օսմանյան կայսրության նկատմամբ չունի ինչ-ինչ ծրագրեր: Հենց այդ ժամանակներից սկսած ձևավորվեց Օսմանյան կայսրության պրուսամետ (հետագայում գերմանամետ) քաղաքական կողմնորոշումը:

Կատարելապես գիտակցելով իր երկրի համար ռուսական վտանգի ահագնությունը՝ Ռահիբ փաշան ձեռնամուխ եղավ մի շարք նորամուծությունների ու բարեփոխումների իրականացման, որոնք կոչված էին ուժեղացնել պետության պաշտպանունակությունը և կառավարման համակարգի արդյունավետ գործունեությունը:

Մեծ վեզիրը մի շարք բարեփոխումներ իրականացրեց թուրքական բանակում, վերակառուցման ենթարկեց նրա սպառազինության գործը, խոշոր աշխատանքներ տարավ նրա զինանոցը նորագույն զենքերով ապահովելու համար, մասնավորապես ստեղծելով թնդանոթների ձուլման գործարաններ, ձևավորեց բանակի համար այնքան անհրաժեշտ կամրջաշինարարների մի գումարտակ, սկսեց կառուցել նոր ռազմանավեր և այլն: Նա բաց արեց մաթեմատիկական դպրոցներ, ծովագնացության, ինժեներական, հրետանային և այլ ուսումնական հաստատություններ: Վերակառուցեց պետության վարչական համակարգը, փորձում էր ֆինանսների բնագավառում հաստա-

տել կարգ ու կանոն, ջախջախեց բանդիտիզմը Անատոլիայում: Մեծ վեզիրը փորձեց վերակենդանացնել ու կյանքի կոչել Սև և Միջերկրական ծովերի միջև ջրանցք բացելու հին ծրագիրը և այլն: Անկասկած մեծ էր օսմանյան այդ պետական գործչի դերը երկրի վեստերնիզացման ուղղությամբ կատարված քայլերի մեջ:

Սուլթան Մուստաֆա III-ը կատարելապես վստահում էր իր մեծ վեզիրին և հավանություն էր տալիս նրա իրականացրած քաղաքականությանը: Սակայն, երբ 1763 թ. Ռահիբ փաշայի մահվանից հետո սուլթանը ամբողջապես իր ձեռքերում կենտրոնացրեց կառավարման բոլոր լծակները, անմիջապես դրսևորվեցին նաև սուլթանի ագրեսիվ հակումները: Նա բարձրաձայն սկսեց հայտարարել, որ Բ. Դուռը Եվրոպայի նկատմամբ պետք է վարի ռազմաշունչ-ծավալապաշտական քաղաքականություն: Թեև նախկինում ևս սուլթանը ժամանակ առ ժամանակ հանդես էր գալիս նման հայտարարություններով, սակայն մեծ վեզիրը կարողանում էր զսպել նրան և չափավորել նրա վարքագիծը: Օրինակ, գահը ստանձնելու արարողության ժամանակ, երբ ընդունված կարգի համաձայն, մատուցվում էր մի-մի գավաթ շերբեթ, այն ըմպելու ժամանակ դիմելով ենիչերիներին, նորընտիր սուլթանն ասել էր. «Բարեկամներ, ես հույս ունեմ հաջորդ տարի գարնանը ձեզ հետ միասին շերբեթ խմել Բենդերի պատերի տակ»: Սուլթանի այդ ռազմաշունչ հակումների պատճառով նրան տվեցին «ղազի» մականունը:

Մուստաֆա III-ի ռազմաշունչ տրամադրությունների դրսևորումը համընկավ մի ժամանակաշրջանի հետ, երբ Ռուսաստանում գահ բարձրացավ ոչ պակաս մարտականորեն տրամադրված Եկատերինա II կայսրուհին, որը փայփայում էր Օսմանյան կայսրությունը մասնատելու ու բաժանելու նվիրական իդեաներ: Կարծես թե իրադարձությունների զարգացումը արագորեն տանում էր այդ երկու միապետների փայփայած ծրագրերի սանձազերծմանը: Լեհաստանի թագավոր Օգոստոս III-ի մահը կրկին բարձրացրեց Լեհաստանի նոր բաժանման հարցը: Անմիջապես դաշինքի մեջ մտնելով իր նախկին թշնամու՝ Պրուսիայի Ֆրիդրիխ Մեծ թագավորի հետ (1764 թ.), Եկատերինան ոտնձգություն կատարեց Լեհաստանի անկախության դեմ: Ավստրիայի թողտվությամբ ռուսական և պրուսական զորքերը ռազմակալման ենթարկեցին Լեհաստանը և այն բաժանեցին միմյանց միջև: Դա Ստամբուլում առաջ բերեց զայրույթի փոթորիկ, քանի որ այնտեղ Լեհաստանի նոր բաժանումը մեկնաբանվեց որպես Օսմանյան պետության շահերի դեմ անմիջականորեն ուղղված ակտ: Զայրացած Մուստաֆա III-ը հայտարարեց. «Ես միջոցներ կգտնեմ այդ անհավատներին կարգի հրավիրելու համար»:

Նման լարվածության պայմաններում ցանկացած պատրվակ կարող էր հանգեցնել պատերազմի: Այդպիսի պատրվակ հանդիսացավ 1768 թ. ամռանը մի աննշան սահմանային միջադեպ: Ռուսական զինվորական ջոկատներից մեկը հետապնդելով լեհ «կոնֆեդերատներին», այսինքն՝ Լեհաստանի հակառուսական կուսակցության հետևորդներին, խախտեց ռուս-թուրքական սահմանը և ավերածության մատնեց Ղրիմի խանի տիրույթների մեջ մտնող հողերը, որտեղ կոնֆեդերատները փորձում էին գտնել ապաստան: Որպես պատասխան քայլ՝ Բ. Դուռը Ստամբուլում ռուսական ռեզիդենտ Ա. Մ. Օբրեսկովից պահանջեց, որ ռուսական բոլոր զորքերը անհապաղ դուրս հանվեն Լեհաստանից: Օբրեսկովը բնականաբար պատասխանեց, որ ինքը նման որոշումներ կայացնելու լիազորություններ չունի, ուստի պետք է կապվի իր կառավարության հետ: Սակայն Բ. Դուռը ձերբակալեց ռեզիդենտին և ռուսական դեսպանության բոլոր 14 աշխատակիցներին՝ նրանց բանտարկելով Յոթ աշտարականոց ամրոցում:

1768 թ. հոկտեմբերի 4-ին սուլթան Մուստաֆա III-ը պատերազմ հայտարերց Ռուսաստանին, նրան մեղադրելով, որ ոտնձգություններ է կատարում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության նկատմամբ և սուլթանի քրիստոնյա հպատակներին սադրում է իր դեմ ապստամբությունների: Դիվանի այդ որոշմանը դեմ էր միայն մեծ վեզիր Մուհսինզադե-փաշան, որը գտնում էր, որ կայսրության զինված ուժերը պատրաստ չեն պատերազմի և մինչև հաջորդ տարվա գարունը հնարավոր չէ իրականացնել և ոչ մի ռազմական գործողություն: Սուլթանը անմիջապես պաշտոնանկ արեց Մուհսինզադե-փաշային և նրա փոխարեն մեծ վեզիր նշանակեց «պատերազմի կուսակցության» ակտիվ անդամներից Համզա-փաշային:

Ղրիմի խան Քիրիմ-Գիրեյը իր հրոսակային ջոկատներով սկսեց ասպատակ սփռել ռուսական հողերի խորքերում՝ կողոպտելով ու ավերելով հարավ-ռուսական տարածքները և գերության քշելով նրա բնակիչներին:

1769 թ. ապրիլին ռուսական և օսմանյան զորքերի միջև թեժ մարտեր սկսվեցին Դանուբի ճակատում: Սեպտեմբերի վերջին ռուսական զորքերը գրավեցին Խոտինը, իսկ նոյեմբերին Մոլդավիայի մայրաքաղաք Յասսին: Նույն ամսին ռուսներին հաջողվեց գրավել նաև Վալախիայի մայրաքաղաք Բուխարեստը: Այսպիսով ռուսները ռազմակալման ենթարկելով Բեսարաբիան, Մոլդավիան և Վալախիան՝ դուրս եկան Դանուբի ափերը: Ռուսական բանակը հաջողություններ ձեռք բերեց նաև Կովկասյան ճակատում, գրավելով Կաբարդան: 1770 թ. սեպտեմբերին վրացական զորքերի հետ համատեղ ռուսները գրավե-

ցին Իմերեթիայի մի չարք կարևոր ամրոցներ՝ Քութայիսին, Բագդադին և Շորապանին: Վրաց ժողովուրդը հերոսական դիմադրություն էր ցույց տալիս թուրքական զավթիչներին:

Այդ պարտությունները հունից հանել էին Մուստաֆա III-ին, որը ռազմաճակատից հետ կանչեց բանակի գլխավոր հրամանատար, մեծ վեզիր Մեհմեդ Էմինին և հրամայեց նրան մահապատժի ենթարկել:

Միջերկրական ծովում թուրքերի դեմ հաջողությամբ գործում էին ռուսական երեք նավատորմիղներ, որոք այնտեղ էին ուղարկվել Բալթիկ ծովից: 1769 թ. վերջին Եկատերինա կայսրուհին ձեռնամուխ եղավ մի նոր ռազմական ծրագրի իրագործման՝ Հունաստանը «անհավատ թուրքի լծից ազատագրելուն», ենթադրելով, որ իր այդ քայլը կարժանանա ողջ արևմտյան աշխարհի հավանությանը:

1770 թ. գարնանը ծովակալ Գ. Ա. Սպիրիդովը դեսանտ հանեց Հունաստանում (Մորեայում): Ռուսների և հույների միացյալ ուժերը գրավեցին Միսիտրիան և Նավարինյան ամրոցը: Հույները իրենց հարստահարիչների դեմ բարձրացրին հուժկու ապստամբություն: Մորեայի նահանգապետ, նախկին մեծ վեզիր Մուխսինզադե-փաշան ձեռնարկեց վճռական պատասխան քայլեր: Նա իր զորքերի չարքերն ընդգրկելով ռազմաչունչ ալբանացի-առնավուտներին, պարտության մատնեց ոչ միայն հույն ապստամբներին, անխնա ոչնչացնելով նրանց, այլև հարկադրեց ռուսներին վերադառնալու իրենց նավերը: Այդ հաղթանակի համար Մուխսինզադե-փաշան ստացավ «Մորեայի նվաճող» պատվավոր տիտղոսը: Սակայն Միջերկրական ծովում գործող ռուսական նավատորմը ավելի հաջողակ էր, քան ցամաքային զորքերը: 1770 թ. Խիոս կղզու մոտ ռուսները պարտության մատնեցին թուրքական նավատորմը, նրան ստիպելով փրկություն որոնել Փոքր Ասիայի Չեշմե կոչված ծովախորշում: Այստեղ ռուսական նավատորմը հունիսի 26-ին կործանիչ հարված հասցրեց թուրքերին, ոչնչացնելով նրանց համարյա ողջ նավատորմը: Այդ ծովային ճակատամարտը, որը հայտնի է Չեսմենյան անունով, փառքով պսակեց ռուս ծովայիններին: Դա Լեպանտոյից հետո թուրքերի կրած ամենախոշոր պարտությունն էր ծովի վրա, որը հավասարազոր էր աղետի: Այդ հաղթանակի առթիվ Ցարսկոյե Սելոյում Եկատերինա II կայսրուհին հրամայեց կառուցել մի հաղթակամար, միաժամանակ ճակատամարտի բոլոր մասնակիցներին պարգևատրելով հատուկ մեդալով, որի վրա դրոշմված էր «БЫЛ», այսինքն՝ «Եղել է»:

Այդ հաղթանակից հետո ռուսական նավատորմը չրջափակեց Դարդանելը՝ կտրելով հակառակորդի ծովային հաղորդակցությունը:

Մինչև որ ռուսական նավատորմի հրամանատար կոմս Օռլովը տատանվում էր մտնե՞լ Դարդանել և այնտեղից դուրս գալ Մարմարա ծով թե ոչ, Թուրքերը հնարավորություն ստացան ֆրանսիացի ինժեներների օգնությամբ Դարդանելում ստեղծել հզոր պաշտպանողական համակարգ:

Ռուսական նավատորմի անգլիացի ծովակալ Էլֆինստոնը Տենեդոսի շուրջը չեզոքացրեց նեղուցները, իսկ Օռլովը շրջապատեց Լեմնոս կղզու ամրոցը: Վաթսունօրյա շրջապատումից հետո Թուրքական կայազորը գտնվում էր հանձնվելու եզրին, երբ տեղի ունեցավ անսպասելին. սուլթանի ծովակալ Հասան Ալժիրցին Ստամբուլի փողոցներից հավաքելով չորս հազար հոգուց բաղկացած մոլեռանդ ամբոխի և նրանց զինելով ատրճանակներով ու սրերով, նրանց աննկատ կեպով ափ հանեց կղզում՝ գրոհելով ռուսների վրա: Մասամբ կոտորելով նրանց, մասամբ էլ ստիպելով, որ վերադառնան իրենց նավերը, Թուրքերը կարողացան փրկել ռազմավարական առաջնակարգ նշանակություն ունեցող Լեմնոս կղզին: Այդ արարքի համար սուլթանը Հասանին պարգևատրեց, նրան նշանակելով գլխավոր ծովակալի պաշտոնում:

Ռուսները, սակայն, չարունակում էին զարգացնել իրենց հաջողությունները: 1770 թ. Դանուբից հյուսիս ընկած Թուրքական բոլոր ամրոցներն անցան նրանց ձեռքը: 1771 թ. գլխավոր իրադարձությունը ռուսների կողմից Ղրիմի գրավումն էր: Ղրիմի Թուրքական նահանգապետը գերի ընկավ ռուսների ձեռքը, իսկ խանը ամոթալի ձևով փախուստի դիմեց առանց դիմադրության փորձ իսկ կատարելու: Ռուսները խանի որդիներին խոստացան պահպանել թերակղզու անկախությունը՝ Ռուսաստանի հովանու ներքո: Նրանք մեկնեցին Պետերբուրգ, որպեսզի հավատարմության երդում տան կայսրուհի Եկատերինային:

Ղրիմի կորստյան հետևանքով Օսմանյան կայսրությունը կորցրեց Սև ծովի հյուսիսային առափնյա տարածքները, բացառությամբ Օչակովի և Կինբուռնի: Միաժամանակ Կովկասում ռուսները Թուրքերին վռնդեցին Մինգրելիայից:

Ղրիմի կորուստը ուժգին հարված էր Օսմանյան կայսրությանը, որը մինչև այդ Սև ծովը համարում էր իր ներքին լիճը: Այդ նույն ժամանակ ռուսներին հաջողվեց վրացիների հետ համատեղ գրավել Քութայիսին և Մինգելիայից և առհասարակ Վրաստանից դուրս մղել Թուրքերին: Ռուսները հաջողություններ ձեռք բերեցին նաև դանուբյան ճակատում, որտեղ գրավեցին Ժուրժա և Իսաքչի ամրոցները:

Անհանգստանալով, որ Ռուսաստանը կարող է էլ ավելի խոշոր նվաճումներ կատարել, Ավստրիան և Պրուսիան Պետերբուրգին առաջարկեցին իրենց միջնորդական ծառայությունները հաշտության պայմանագիր կնքելու վերաբերյալ: Սակայն Եկատերինան պատասխանեց, որ ինքը բանակցություններ կվարի միայն սուլթանի հետ, առանց երրորդ երկրների միջամտության:

1772 թ. մայիսին թուրքական հրամանատարությունը ստիպված էր խնդրել զինադադար: Ռուսաստանը տվեց իր համաձայնությունը, քանի որ երկրի ներսում սկսվել էր գյուղացիական հուժկու պատերազմ Եմելյան Պուգաչևի գլխավորությամբ: 1772 թ. հուլիսի վերջին Ֆոկշանում սկսվեցին խաղաղության բանակցություններ, որոնք աշնանը շարունակվեցին Բուխարեստում: Սակայն ամիսներ տևած այդ բանակցությունների ընթացքում կողմերը չկարողացան գալ համաձայնության, քանի որ մուֆթին և ողջ մահմեդական ուլաման դեմ էին, որ Ղրիմի խանությունը անցնի քրիստոնյա Ռուսաստանին, համարելով, որ որպես «իսլամական հող» այն պետք է գտնվի օսմանյան սուլթան-խալիֆի գերիշխանության ներքո:

Մտավախություն ունենալով, որ բարձր հոգևորականությունը Ստամբուլում կհրահրի անկարգություններ և նույնիսկ ապստամբություն, սուլթանը մերժեց ռուսների առաջադրած պայմանները:

Համարյա մեկ տարվա ընդմիջումից հետո, 1773 թ. ապրիլին, ռազմական գործողությունները վերսկսվեցին ավելի ուժգին թափով: 1774 թ. գարնանը և ամռանը տեղի ունեցան իրադարձություններ, որոնք կանխորոշեցին պատերազմի ելքը: 1774 թ. մայիսի սկզբին ռուսական զորքերը սկսեցին Դանուբի գետանցը: Մայիսի 2-ին նրանք գրավեցին Պազարջիքը: 1774 թ. հունիսի 9-ին Կոզլուջայի մոտ ռուսական գումարտակը Ա. Վ. Սուվորովի հրամանատարությամբ գլխովին ջախջախեց թուրքական զորքերին, թշնամուն մատնելով խուճապահար փախուստի: Դանուբյան բանակի գլխավոր ուժերը ֆելդմարշալ Պ. Ա. Ռումյանցևի հրամանատարությամբ սկսեցին շարժվել դեպի Շումլա, որտեղ գտնվում էին թուրքական բանակի հիմնական ուժերը մեծ վեզիրի հրամանատարությամբ: Մինչև Շումլային մոտենալը ռուսները ջախջախեցին իրենց ընդառաջ եկած օսմանյան մի խոշոր զորաբանակի ուժերը և կտրեցին թուրքերի ամեն տեսակի հաղորդակցությունը Ստամբուլի հետ: Դա վերջն էր: Հունիսի 20-ին մեծ վեզիրը ռուսների ռազմական ճամբարն ուղարկեց իր ներկայացուցիչ սպային՝ առաջարկելու համար զինադադար:

1774 թ. հուլիսին Ռումյանցևի ռազմակայանում, որը գտնվում էր

Բուլղարիայի Սիլիստրիա քաղաք-ամրոցից ոչ հեռու Քյուչյուկ-կայնարջի գյուղում, սկսվեցին ռուս-թուրքական խաղաղության բանակցություններ: Դանուբյան բանակի հրամանատարը վերջնագրի ձևով թուրքերից պահանջեց, որ հաշտության պայմանագիրը կնքվի հինգ օրվա ընթացքում, հակառակ դեպքում սպառնալով զորքերը շարժել առաջ: Թուրքերը ստիպված էին ընդունել այդ պայմանը: 1774 թ. հուլիսի 10-ին ռուս-թուրքական խաղաղության պայմանագիրը ստորագրվեց: Երկու կողմերն էլ ճանաչում էին Ղրիմի խանի անկախությունն ու ինքնուրույնությունը: Պայմանագիրը գործնականում վերացնում էր Ղրիմի թաթարների կողմից Ռուսաստանի նկատմամբ գոյություն ունեցող սպառնալիքը: Այսուհետև Ղրիմը պետք է կառավարվեր տեղական կառավարչի կողմից, որը ընտրվելու էր առանց ռուսների ու թուրքերի միջամտության: Կրոնական հարցերում Ղրիմի թաթարները նախկինի պես ենթարկվելու էին օսմանյան խալիֆին: Դա փաստորեն նշանակում էր, որ միջազգային առումով առաջին անգամ ճանաչվում էր սուլթանի իրավունքները կայսրությունից դուրս գտնվող մահմեդականների նկատմամբ: Այլ կերպ ասած, Ռուսաստանը սուլթանին ճանաչում էր որպես համայն մահմեդականների հոգևոր առաջնորդ՝ խալիֆ:

Քյուչյուկ-Կայնարջիի պայմանագրով Ռուսաստանին էր անցնում Սևծովյան ափամերձ տարածքների մի մասը Կերչ, Ենիկալե և Կինբուռն ամրոցներով, որոնք ռուսների համար ստեղծում էին ուժեղ հենակետ, հետևաբար նաև Ղրիմը գավթելու հնարավորություն, երբ որ դա ռուսները ցանկանային: Բեսարաբիան, Մոլդավիան և Վալախիան վերադարձվում էին Թուրքիային, սակայն նա պարտավորվում էր վերականգնել սուլթանների կողմից դանուբյան իշխանություններին հատկացված ինքնավար իրավունքները: Ավելին, պայմանագիրը թուրքերին արգելում էր բնակություն հաստատել մոլդովական և վալախական հողերում:

Սակայն ամենակարևորը այն էր, որ ռուսական առևտրական նավերը ստանում էին ազատ նավարկության իրավունք Օսմանյան կայսրության ափերը ողողող բոլոր ծովերում, ինչպես նաև ազատ ելք նեղուցներով դեպի Միջերկրական ծով: Այլ կերպ ասած, Թուրքիան կորցնում էր Սև ծովում և նեղուցներում առևտրական նավարկության մենաշնորհը: Դա այն էր, ինչին Ռուսաստանը ձգտում էր Պյոտր I-ի ժամանակներից սկսած: Այսուհետև երբեք Սև ծովը չէր լինելու «մաքուր և անվերապահ կերպով» թուրքական ներքին լիճ: Սակայն այնուամենայնիվ ռուսական ռազմական նավատորմին ար-

գելվում էր լողալ Սև ծովում և նեղուցներով անցնել Միջերկրական ծով:

Միջերկրական ծովում ռուսական նավատորմը պարտավորվում էր հեռանալ հունական արշիպելագից: Կովկասում Թուրքերին էին վերադարձվում Վրաստանը և Մինգրելիան:

Քյուչյուկ-Կայնարջիի խաղաղության պամանագիրը Ռուսաստանին տրամադրեց այն բոլոր կապիտուլյացիոն իրավունքները, որոնք նախկինում կապիտուլյացիաների շնորհիվ ստացել էին Ֆրանսիան և Անգլիան: Այսուհետև Ռուսաստանը կարող էր իր հյուպատոսներն ունենալ սուլթանի տիրույթների ցանկացած քաղաքում: Ռուսներն իրավունք էին ստանում պաշտպանել սուլթանի ուղղափառ քրիստոնյա հպատակների շահերը և հովանավորել նրանց: Իսկ դա նշանակում էր, որ Ռուսաստանը ստացավ ուղղափառ քրիստոնյաներին հովանավորելու պատրվակի տակ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու լեգալ հնարավորություն: Անկասկած դա դուռ էր բաց անում ապագայում կողմերի միջև սուր վեճերի ու կոնֆլիկտների համար: Ռուսահպատակները դեպի Պաղեստինի սուրբ վայրեր ուխտագնացության ժամանակ ազատվում էին շնչահարկ վճարելու պարտավորությունից և օսմանյան կառավորությունը պարտավորվում էր ուխտավորներին վերցնել թուրքական օրենքների պաշտպանության տակ:

Պայմանագրով ներումն էր շնորհվում բոլոր նրանց, ովքեր պայքարել էին թուրքական լծից ազատագրվելու համար: Քրիստոնյա բնակչությունը ստանում էր նաև ժամերգության ու կրոնական ծիսակատարություններ կատարելու ազատության երաշխիքներ, ինչպես նաև կայսրության սահմաններից դուրս այլ երկրներ տեղափոխվելու իրավունք: Վերջապես պայմանագրով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր Ռուսաստանին վճարել դրամական ռազմատուգանք:

Քյուչյուկ-Կայնարջիի պայմագիրը դեռևս չէր հետապմդում Օսմանյան կայսրությունը բաժանելու և մասնատելու նպատակներ: Սակայն կասկածից վեր է, որ այն դարձավ կայսրությունը տրոհելու ու մասնատելու ուղղությամբ առաջին լուրջ քայլերից մեկը: Հիչյալ պայմանագիրը նաև ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունը խիստ թուլացել է, որ այն տնտեսական և ռազմաքաղաքական առումով անհուսալիորեն հետ է մնացել եվրոպական երկրներից:

Այսպիսով, Սուլթան Մուստաֆա III-ին վիճակված չէր ինչ որ ձևով կանգնեցնել Օսմանյան կայսրության շարունակվող վայրէջքը և նոր շունչ ու ոգի հաղորդել իր պետությանը: Այլևս հիվանդ ու հու-

սահատ, նա 1773 թ. մի վերջին անգամ փորձեց անձամբ իր զորքերին առաջնորդել դեպի Դանուբի ճակատը, սակայն նրա վեզիրներն ու ուլեմները արգելեցին դա անել՝ նկատի ունենալով նրա առողջական ծանր վիճակը: 1774 թ. Թուրքիայի համար չարաբաստիկ տարում, երբ պարտված ու նվաստացած Ստամբուլը կնքեց Քյուչյուկ-Կայնարջիի պայմանագիրը, Մուստաֆա III-ը փչեց իր վերջին շունչը: 50 տարեկան հասակում գահ բարձրացավ նրա եղբայրը՝ սուլթան Աբդուլ Համիդ I-ը (1774-1789), որը մինչև իր գահակալությունը 38 տարի չարունակ անց էր կացրել տխրահռչակ «վանդակում»: Անգլիացի արևելագետ Համմերի բնութագրմամբ, այդ սուլթանը օժտված չէր ոչ ընդունակություններով, ոչ փորձով, իսկ ամենակարևորը աչքի չէր ընկնում կյանքի ու աշխարհի իմացությամբ: Սակայն նրա գոռոզամտությունն ու ինքնագոհությունը սահմաններ չէին ճանաչում: Նա ևս տարված էր հարեմի կյանքով և իր սուլթանության տարիներին լույս աշխարհ բերեց 22 զավակների, որոնց մեծ մասը վաղ մանկության տարիներին մահացավ:

Երբ Համիդ I-ը ստանձնեց գահը, պետական գանձարանը այն աստիճանի դատարկ էր, որ նա չկարողացավ ընդունված կարգի համաձայն, ենիչերիներին բաժանել դրամական պարգևներ:

Քյուչյուկ-Կայնարջիի պայմանագրի ստորագրումից հետո մի քանի տարի անց, Եկատերինա II կայսրուհին, որի մասին Հաբսբուրգների Իոսիֆ կայսրը ասել էր, որ «այդ կինը օժտված է իր սեփական բացառիկ կամքով և նրան ոչ մի բան չի կարող կանգնեցնել» մտահղացել էր մասնատել Օսմանյան կայսրությունը: Երբ 1778 թ. կայսրուհին ունեցավ երկրորդ թոռը, նրան անվանակոչեցին Կոնստանդին, հեռահար նպատակ հետապնդելով ապագայում նրան նստեցնել «բյուզանդական» գահի վրա: Թագուհու այդ ծրագրերը արժանանում էին ֆրանսիական լուսավորիչների և առաջավոր մարդկանց դրվատանքին: Վոլտերը, օրինակ, գտնում էր, որ ռուսական կայսրուհու պատերազմը Մուստաֆա III-ի հետ հանդիսանում էր պատերազմ բանականության ու մոլեռանդության, քաղաքակրթության ու հետամնացության միջև: Իսկ Ստամբուլում ֆրանսիական դեսպան կոմս դե Վոլնեյը գտնում էր, որ Թուրքերը «բոսֆորյան բարբարոսներ են», որ նրանք «անկիթ ու այլասերված մի ազգ են և նրանց նկատմամբ հարձակումը անհրաժեշտ է պաշտպանել»:

Եկատերինա II-ը իր գործակալության միջոցով ողջ Հունաստանով մեկ տանում էր քարոզչություն՝ քրիստոնյա-հույներին համոզելով միանալ իրեն և զինված պայքար ծավալել «անհավատների» դեմ:

Ռուսաստանի կայսրուհին նախ որոշեց վերջնականապես լուծել Ղրիմի հարցը, որը Քյուչյուկ-Կայնարջիի պայմանագրով հռչակվել էր անկախ պետություն: Երբ Ղրիմի թաթարները իրենց համար խան ընտրեցին խանական ընտանիքի ներկայացուցիչ Դևլեթ-Գիրեին, ռուսները նրան համարելով անհնազանդ, «կարգը վերականգնելու» պատրվակի տակ Ղրիմ ուղարկեցին մի բանակ և իշխանազուրկ անելով խանին, նրա փոխարեն դրեցին իրենց դրածոյին: Պետերբուրգի այդ քայլը թեև Ստամբուլում առաջ բերեց զայրույթի փոթորիկ, սակայն պատրաստ չլինելով պատերազմի, թուրքերը 1779 թ. ֆրանսիացիների հուշումով Ռուսաստանի հետ կնքեցին պայմանագիր, որով ճանաչում էին նոր խանի ընտրության օրինականությունը:

Երբ թաթարները բացահայտ կերպով չընդունեցին ռուսների դրածո խանին ու սպառնում էին տապալել նրան, խանը Սանկտ-Պետերբուրգ ուղարկեց իր մարդկանց, կայսրուհուց խնդրելու, որ նա պաշտպանի իրեն «խռովարարներից»: Կայսրուհին կրկին Ղրիմ ուղարկեց մի բանակ, որը անխնա կոտորեց ապստամբած թաթարներին և նրանց քշեց Թերակղզուց: Այնժամ Եկատերինա II-ը և նրա գլխավոր հրամանատար իշխան Պոտյոմկինը որոշեցին, որ այլևս եկել է ժամանակը Ղրիմը «ուղղակի վերցնելու» համար: Սպառնալիքների ու կաշառքի միջոցով նրանք նախ ստիպեցին խանին հրաժարվելու իշխանությունից հօգուտ Եկատերինայի: Այնուհետև 1783 թ. ապրիլի 19-ին կայսրուհին հրապարակեց մանիֆեստ Ղրիմը, Թամանյան թերակղզին և մինչև Կուբան գետն ընկած հողերը ռուսական պետությանը միացնելու մասին: Իր այդ որոշումը ինչ-որ ձևով հիմնավորելու համար, ռուսական կայսրության կառավարությունը հայտարարեց, որ օսմանյան պետությունը բազմիցս խախտել է Քյուչյուկ-Կայնարջիի պայմանագրի դրույթները Ղրիմի ստատուսի վերաբերյալ: Ինչ վերաբերում է քավության նոխազ դարձած Ղրիմի խանին, ապա նրան ռուսները սկզբում բանտարկեցին, իսկ ապա արտաքսեցին Թուրքիա, որտեղ անմիջապես նրան գլխատեցին:

Պետերբուրգն աշխատում էր հավատացնել Արևմուտքին, որ Ռուսաստանը Ղրիմում իրագործել է ազատագրական մեծ առաքելություն, Թերակղզու թաթար բնակչությանը փրկելով տառապանքներից: «Սերը կարգ ու կանոնի և հանգստության նկատմամբ,- հայտարարեց Եկատերինան,- ռուսներին բերեց Ղրիմ»: Երբ ազատատենչ թաթարների մի մասը որոշեց մահվան գնով մինչև վերջ պայքարել ռուսների դեմ, իշխան Պոտյոմկինի ազգական գեներալ Պավել Պոտյոմ-

կինը զանգվածորեն նրանց սրի քաշեց: Տասնյակ հազարավոր թաթարներ լքեցին իրենց բնակավայրերը: Ղրիմը դարձավ ռուսական նահանգ Տավրիա անունով: Այդ երկրամասը նվաճող իշխան Պոտյոմկինին թագուհին չնորհեց «Տավրիկյան» տիտղոսը: Ռուսները Դնեպրի Խերսոնես ամրոցում բարձրացրին հաղթակամար, որի վրա գրված էր «ճանապարհ դեպի Բյուզանդիա»: Ավստրիայի կայսր Իոսիֆը անմիջապես մեկնեց Խերսոնես, ռուսական կայսրուհու հետ քննարկելու համար Օսմանյան կայսրության բաժանմանը առնչվող հարցեր:

Սուլթանը ստիպված էր պաշտոնապես իր համաձայնությունը տալ Ղրիմը և նրա հարակից հողերը Ռուսաստանին անցնելու վերաբերյալ: Սակայն մայրաքաղաքում, ինչպես սուլթանի անմիջական շրջապատում, այնպես էլ կառավարության մեջ, առկա էր հակառուսական տրամադրություններ ունեցող ռազմաշունչ մի խմբավորում, որը բորբոքում էր մահմեդական բնակչության կրոնական ռազմաշունչ մոլեռանդությունը, կոչ անելով «ջիհադ» սկսել «անհավատների» դեմ, որոնք տիրացել են իսլամի հողերին: Կողմերի միջև ռազմական ընդհարման արագացմանը նպաստեց նաև այն, որ Ռուսաստանը 1783 թ. թաթարական Ախթիար գյուղի տեղում արագորեն սկսեց կառուցել Սևաստոպոլ ռազմական նավահանգիստը, որը կոչված էր դառնալու Սև ծովում ռուսական ռազմա-ծովային նավատորմի գլխավոր հենակետը:

1787 թ. օգոստոսի 14-ին Բ. Դուռը վերջնագիր ներկայացրեց Ռուսաստանին, պահանջելով անհապաղ հեռանալ Ղրիմից և Վրաստանց (1783 թ. օգոստոսին Քարթլիի և Կախեթի թագավոր Իրակլի (Հերակլ) II-ի հետ կնքած պայմանագրով Վրաստանն անցնում էր Ռուսաստանի հովանավորության տակ): Զստանալով պատասխան՝ 1787 թ. օգոստոսի 24-ին Բ. Դուռը Ռուսաստանին հայտարարեց պատերազմ: Ռուսական դեսպանը և նրա աշխատակիցները կրկին հայտնվեցին Յոթ աշտարականի ամրոցի բանտում: 1787 թ. սեպտեմբերին թուրքերը գրոհեցին Կինբուռնի վրա, սակայն ջախջախվեցին Ա. Վ. Սուվորովի զորքերի կողմից: 1788 թ. ռուսները Մոլդավիայում, Վալախիայում և Կովկասում ձեռք բերեցին ավելի մեծ հաջողություններ: Նրանց հաջողվեց գրավել Խոտինը և Օչակովը: Այդ նույն թվականին առանձնապես տպավորիչ էր ռուսների տարած հաղթանակը Ռիմնիկ գետի մոտ, ինչպես նաև Սինոպի շրջանում, որտեղ նրանք ջախջախիչ պարտության մատնեցին թուրքական ռազմական նավատորմին: 1789 թ. սեպտեմբերի 22-ին Ռիմնիկի մոտ տեղի ունեցած ճակատամարտում

Սուվորովը ջախջախեց 100 հազարանոց թուրքական բանակը, որի կորուստները հաշվվում էին 20 հազար սպանվածներ և վիրավորներ:

Ռուսների տարած այդ հաղթանակները արագացրին Ավստրիայի մուտքը պատերազմի մեջ: 1788 թ. Իոսիֆ կայսրը խախտելով իր խաղաղության պայմանագիրը թուրքերի հետ, Օսմանյան կայսրությանը հայտարարեց պատերազմ, դրանով իսկ դաշնակցելով Ռուսաստանի կայսրուհու հետ: Այսպիսով թուրքերը հարկադրված էին ծանր պատերազմ մղել միաժանակ երկու ճակատով:

Ճիշտ է, 1788 թ. թուրքերին հաջողվեց պարտության մատնել ավստրիացիներին, սակայն դա չփոխեց պատերազմի ընդհանուր պատկերը: Սուվորովը շարունակում էր իր փառահեղ հաղթանակները: Իսկ 1789 թ. ավստրիական բանակի հրամանատարությունը դրվեց վճռական ու փորձառու մարշալ Լոուդոնի վրա, որն անցել էր Յոթնամյա պատերազմի բովով և օգտվում էր զինվորական մի մարդու հեղինակությունից, որը «կռվում էր ինչպես ջենտլմեն»: Մարշալը կարողացավ ավստրիացիների կրած ծանր պարտությունից հետո բանակին ներշնչել հաղթանակի հասնելու հավատ: Ներխուժելով Բոսնիա և Սերբիա՝ ավստրիական զորքերը գրավեցին այդ երկրների տարածքի մեծ մասը: Ավստրիական մեկ այլ բանակ իշխանազուն Կոբուրսկու գլխավորությամբ, Մոլդավիայում միանալով Պոտյոմկինի ռուսական բանակի հետ, սկսեց ռազմական գործողություններ վարել Դնեպրի և Դանուբի միջև ընկած շրջաններում:

1789 թ. ռուսական զորքերը գրավեցին Ակկերմանը, Օդեսան և Բենդերին: Համարյա միաժամանակ ավստրիացիներին հաջողվեց գրավել Բելգրադը և նրա հարևանությամբ գտնվող Սմեդերեվո ամրոցը: Ստամբուլում սկսվեց խուճապ, որը սպառնում էր վերածվել անկարգությունների: Սուլթանը որոշեց մեծ վեզիր, դանուբյան բանակի հրամանատար Հասանին, որը նախկինում որպես նավատորմի հրամանատար մեծ ծառայություններ էր մատուցել իր երկրին, դարձնել քավության նոխազ: Սուլթանի հրամանով նա մահապատժի ենթարկվեց: Սակայն 1789 թ. ֆրանսիական մեծ հեղափոխության հետ կապված իրադարձությունների պատճառով Ավստրիան այլևս չէր մասնակցում ռազմական գործողություններին: Ռուսաստանը շարունակելու էր պատերազմը մենակ, առանց դաշնակցի:

2. ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՏԱԿԱՆԱՑՈՒՄ

XVIII դ. երկրորդ կեսին ծնունդ է առնում այսպես կոչված «Արևելյան հարցը»: Նրա էությունը կայանում էր նրանում, որ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների վերելք ապրող ազատագրական ձգտումները այդ պետության ռազմական հզորության անկման և Բ. Դռան իշխանության թուլացման պայմաններում դառնում էին միջազգային քաղաքականության օբյեկտ: Այլ կերպ ասած, Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչություն ունեցող շրջանների ճակատագիրը դադարում էր ներքին թուրքական հարց լինելուց և վեր էր ածվում միջազգային քաղաքականության խնդրի: Այդ ժամանակվանից սկսած սրվում էր պայքարը եվրոպական տերությունների միջև Օսմանյան կայսրությունում առաջատար դիրքեր ձեռք բերելու համար: Կայսրության ոչ թուրք հպատակների վիճակը սկսում է պատրվակ դառնալ եվրոպական դիվանագիտության կողմից սուլթանական պետության ներքին գործերին միջամտելու համար:

Երկրի առջև կանգնած ներքին ու արտաքին մարտահրավերները հաղթահարելու համար, XVIII դ. սկզբին Օսմանյան կայսրության կառավարող շրջանները սկսում են ուղիներ որոնել պետության հզորության վերականգնման ու ամրապնդման համար: Ըստ այնմ, նրանց մոտ սկսում է մեծանալ հետաքրքրությունը եվրոպական երկրների նկատմամբ:

Սուլթան Ահմեդ III-ի (1703-1730) կառավարման շրջանը Օսմանյան կայսրության պատմության մեջ հայտնի է «լյալե դևրի» («վարդակակաչների դարաշրջան») անունով: Սուլթանը, օսմանյան ազնվականությունը և նույնիսկ միջին խավերը տարվել էին վարդակակաչների ծաղկանոցներ ստեղծելու մարմաջով: Ստամբուլում աճեցնում էին մի քանի հարյուր տեսակի վարդակակաչներ: Բանաստեղծները ոտանավորներ էին հյուսում նվիրված այդ ծաղկին:

Մեծ քանակությամբ վարդակակաչներ էին ներմուծվում Հոլանդիայից, մասամբ նաև Իրանից: Մեծ Սերալի այգում կազմակերպվում էին վարդակակաչի տոներ, որոնք իրենց նշանակությամբ մթագնում էին նույնիսկ մահմեդականների ավանդական կրոնական տոները: Վարդակակաչը դառնում էր արևմտյան քաղաքակրթության ազդեցության ներքո Թուրքիայում տեղի ունեցող մի տեսակ, «վերածնության» խորհրդանիշ: Այդ շրջանում լուրջ միտում դրսևորվեց դեպի արևմտականացումը (վեստերնիզացումը) և բարեփոխումները: Վարդակակաչը դարձել էր մի յուրահատուկ խորհրդանիշ, որն իրենով նշանավորում էր երկրի թևակոխման սկիզբը համաշխարհային գործընթացի մեջ: Կայսրությունն իր հայացքով սկսում էր շրջվել դեպի Արևմուտք, որը թևակոխել էր գիտական առաջընթացի, տնտեսական ծաղկման և ռազմական հզորության

մի նոր էտապ: Ճիշտ է, թեև թուրքական էլիտայի համեմատաբար փոքր մասն էր գիտակցում Արևմուտքի զարգացած քաղաքակրթությունը սոցիալական և մշակութային բարեփոխումների միջոցով կայսրությունում արմատավորելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, սակայն կարևորն այն էր, որ այդ գաղափարն արդեն հասել էր մարդկանց գիտակցությանը: Երկրում թևածում էին նոր տրամադրություններ ու նոր ոգի: Վարդակակաչների դարաշրջանի ընդհանուր տրամադրվածությունը բանաստեղծ Ահմեդ Նեդիմը (1681-1730) ներկայացնում էր հետևյալ կերպ. «Ծիծաղենք, ուրախանանք, ցանկալին վերցնենք աշխարհից»: Հիրավի, այդ տարիներին կայսրության բարձր ազնվականության կյանքը լի էր բազմապիսի տոնակատարություններով, խրախճանքներով, հրավառություններով և այլն:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ էր, օր Օսմանյան կայսրությունը սկսել էր որոնել լճացումից ու անկումից դուրս գալու և իր հետագա զարգացման ուղին որոնելու ճանապարհներ:

Այդ շրջանում սուլթանական արքունիքը ևս սկսեց նմանվել եվրոպական արքունիքներին: «Դա մի ժամանակաշրջան էր,- գրում է թուրք պատմաբան Ն. Բերկեսը,- երբ ժողովուրդների շրջանում բարոյական սահմանափակումները նշանակալիորեն թուլացել էին: Անցան այն ժամանակները, երբ սուրճ խմելը և սրճարանների գոյությունը արժանանում էին պարսավանքի: Ավելի ու ավելի շատ էին հայտնվում տարբեր զվարճանքների տներ, որոնք գործում էին հակառակ արգելքների»:

Ռուս ռեզիդենտ Վեչնյակովը 1731 թ. Ստամբուլից գրում էր, որ այդ ժամանակ «թուրքերը կորցրին պատերազմելու ցանկությունը, քանի որ ոչ ոք չէր ցանկանում հեռանալ իր տնից ու տեղից և զրկվել տարբեր տեսակի հաճույքներից և ուրախություններից»:

1720 թ. սուլթան Ահմեդ III-ի հրամանով Ֆրանսիա՝ Լյուդովիկոս XV-ի արքունիք ուղարկվեց մի դեսպանություն Չելեբի Մեհմեդ-Էֆենդի Յիրմիսեկիզի գլխավորությամբ, որն իր ժամանակի կրթված մարդկանցից մեկն էր, և ենիչերիական զորամասերում ու պետական ապարատում զբաղեցրել էր բարձր պաշտոններ, զբաղվում էր նաև գրական գործունեությամբ: Դեսպանությանը հանձնարարված էր քայլեր կատարել թուրք-ֆրանսիական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ և ձեռք բերել Ֆրանսիայի համաձայնությունը Ավստրիայի դեմ թուրք-ֆրանսիական դաշինք կնքելու վերաբերյալ: Սակայն օսմանյան դեսպանը ուներ նաև մեկ այլ, ոչ պակաս կարևոր հանձնարարություն. ««երկու աչքով» նայել, թե ինչ է կատարվում Եվրոպայում և ուր են հասել քրիստոնյաները»: Այլ կերպ ասած, նրան հանձնարարված էր խորությամբ ծանոթանալ Ֆրանսիայի տնտեսության, մշակույթի և գիտության հետ:

Հիրավի, թեև Օսմանյան կայսրությունը մշտական չփումների մեջ է

եղել եվրոպական երկրների հետ, սակայն այդ չափումների բնույթը, որպես կանոն, եղել է միայն մեկ ձևով՝ ռազմական առճակատման ձևով, որն արգելակում էր երկու հակադիր աշխարհների միջև մտավոր-ինտելեկտուալ բնույթի բոլոր տեսակի առնչությունները: Բացի այդ, կրոնական, մեծապետական և այլ կարգի նախապաշարմունքները Թուրքերի մոտ ամրապնդում էին եվրոպացիների նյութական ու հոգևոր մշակույթի տարբեր բնագավառների նկատմամբ արհամարանքի ու քամահրանքի ոգին:

Սակայն արդեն XVIII դ. սկզբներից ակնառու կերպով դրսևորվեց եվրոպական առաջավոր փորձին դիմելու և այն ի շահ սեփական պետության օգտագործելու գիտակցությունը:

Զելեբի Մեհմեդը, որին իր առաքելության ժամանակ ուղեկցում էր նաև իր որդի Մեհմեդ Սայիդը, առաջին Թուրքերից մեկն էր, որը սովորեց ֆրանսերեն: Դեսպանությունը Ֆրանսիայում եղավ երկու տարի: Փարիզում նրան ընդունեց Լյուդովիկոս XV-ը: Թուրքական դեսպանը նրան փոխանցեց սուլթան Ահմեդ III-ի ուղերձը: Միաժանակ նա արտաքին գործերի մինիստր՝ կարդինալ Դյուբային հանձնեց օսմանյան մեծ վեզիր Դամադ Իբրահիմ փաշա Նեվշեհիրլիի նամակը: Ֆրանսիական թագավորի պալատում Մեհմեդ էֆենդին հանդես եկավ ճառով, նշելով, որ ինքը եկել է հաստատելու, որ «երկու կայսրությունների միջև գոյություն ունի սերտ և հին բարեկամություն»:

Նա ցանկություն հայտնեց հանդիպումներ ունենալու նաև անվանի ֆրանսիացիների հետ: Նրան հնարավորություն տրվեց, օրինակ, հանդիպելու Սեն-Սիմոնի հետ, որը հավանություն տվեց Թուրքի մտադրությանը Ստամբուլ վերադառնալուց հետո այնտեղ տպարան բաց անելու վերաբերյալ:

Մի խոսքով Զելեբի Մեհմեդը ֆրանսիայի մայրաքաղաքում իր համար բացահայտեց չլացուցիչ մի նոր աշխարհ, որը հիացրեց նրան:

Դրսևորելով մեծ հետաքրքրասիրություն ու եռանդ՝ Թուրքական դեսպանության անդամները ուսումնասիրեցին ֆրանսիական պետական կառուցվածքը և հասարակական-քաղաքական կյանքը, դիտեցին ֆաբրիկաներն ու ռազմական պաշտպանողական ամրությունները, ներկա գտնվեցին զինվորական զորահանդեսներին, այցելեցին թագավորական գիտությունների ակադեմիա, եղան Փարիզի օպերայում և թատրոններում, աստղադիտարանում, բուսաբանական այգում, ծանոթացան ֆրանսիացիների կենցաղի հետ: Օսմանյան դեսպանի վրա առանձնակի տպավորություն էր թողել Վերսալը, նրա պալատների ու զբոսայգիների գեղեցկությունն ու չքեղությունը: Նրան զարմացրել էր ֆրանսիացի կանանց ազատությունը, որոնք «կարող են անկաշկանդ գնալ, ուր որ ցանկանան»: Իր բոլոր տեսածներն ու լսածները Մեհմեդ էֆենդին վարպետ

գրչով և աչխույժ ու կենդանի լեզվով (ի դեպ, նա օժտված էր նաև բանաստեղծական տաղանդով և բանաստեղծություններ էր հորինում «Ֆայդի» կեղծանվամբ) չարադրեց իր «Սեֆարեթնամե»-ն («Գիրք դեսպանության մասին»), որն ըստ էության հանդիսանում էր իր դիվանագիտական առաքելության հաչվետվությունը: Այդ հաչվետվությունը թուրք պատմաբան Էնվեր Զիյա Կարալն անվանել է «դեպի Եվրոպա բացված առաջին պատուհանը»:

Թեև դեսպանության առջև դրված դիվանագիտական խնդիրները իրենց լուծումը չստացան, քանի որ Ֆրանսիան չհամաձայնվեց դաչինքի մեջ մտնել Օսմանյան կայսրության հետ ընդդեմ Ավստրիայի, չցանկանալով խաթարել իր «ամենաքրիստոնյա» պետության վարկը, սակայն ընդհանուր առմամբ դեսպանության գործունեությունը օսմանյան արքունիքում գնահատվեց որպես դարակազմիկ երևույթ: «Սեֆարեթնամե»-ն բարձրաձայն ընթերցվեց սուլթանական պալատում՝ միապետի ներկայությամբ, արժանանալով նրա գնահատանքին:

Անկասկած այդ հետաքրքիր և ուսանելի աչխատությունը մեծապես նպաստել է Օսմանյան կայսրությունում «արևմտականացման» գաղափարի ձևավորմանը և հիմք հանդիսացել հետագայում որոչ վերափոխումների իրականացմանը:

Իր հերթին Զելեբի Մեհմեդի որդին՝ Սայիդը, կազմեց մի հուչագիր և հանձնեց մեծ վեզիր Իբրահիմ փաչային՝ այն սուլթանին ներկայացնելու համար: Հուչագրում նա կատարում էր հետևյալ հարցադրումը. «ինչո՞ւ քրիստոնյա ժողովուրդները, որոնք անցյալում մահմեդականների հետ համեմատած այդքան թույլ էին, ներկայումս գերիչխում են բազմաթիվ երկրներում և նույնիսկ կարողացել են պարտության մատնել օսմանների երբեմնի հաղթական բանակներին»: Հենց ինքն էլ պատասխանելով իր տված հարցին, Սայիդը հորդորում էր, որ մահմեդականները պետք է սթափվեն անտարբերության նիրհից: «Թող նրանք իմանան,- գրում էր նա,- այն պայմանների մասին, որոնցում ապրում են իրենց թչնամիները: Թող նրանք ծանոթանան եվրոպական նոր մեթոդների, կազմակերպության, ռազմավարության, մարտավարության և ռազմական գործի հետ, թող նրանք ընդլայնեն իրենց զինվորական ու քաղաքական հորիզոնները՝ ուսումնասիրելով աչխարհագրություն, ծովային քարտեզներ, յուրացնեն այլևայլ գիտելիքներ, որոնց օգնությամբ եվրոպացիները կարողացան նվաճել քրիստոնյաների հողերը»:

Զելեբի Մեհմեդի և նրա որդու՝ Սայիդի առաջ քաչած գաղափարները համահունչ էին մեծ վեզիր Ահմեդ Դամադ Իբրահիմ փաչա Նևչեհիրլիի (1718-1739) գաղափարական սկզբունքներին և հենց ինքն էլ հանդիսացել էր Զելեբի Մեհմեդի դեսպանությունը Եվրոպա ուղարկելու նա-

խաձեռնողը: Ֆրանսիացի արևելագետ Շ. Շեֆերը նշում է, որ Իբրահիմ փաշայի պապը իսլամն ընդունած հայ էր: Ի դեպ, «Վարդակակաչների դարաշրջանը» անխզելիորեն կապված է այդ մարդու անվան հետ: Ավելի քան 12 տարի, 1718 թվականից մինչև 1730 թ. Իբրահիմ փաշան փաստորեն հանդիսանում էր կայսրության ներքին և արտաքին քաղաքականության ղեկավարը, քանի որ այդ տարիներին, ըստ էության, սուլթան Ահմեդ III քաշվել էր պետական գործերը վարելուց, դա հանձնելով մեծ վեզիրի իրավասությանը: Առհասարակ մեծ վեզիր Իբրահիմ փաշայի անհատականությունը իր խորը դրոշմն է թողել օսմանյան պատմության այդ շրջանի վրա: Մեծ վեզիրի կյանքի ճանապարհի ավարտը, սակայն, ողբերգական էր: 1730 թ. Պատրոնա Խալիլի ապստամբության ժամանակ նա դարձավ սուլթանի քավության նոխազը և մահապատժի ենթարկվեց:

Մեծ վեզիր Իբրահիմ փաշա Նևշեհիրլին եղել է օսմանյան առաջին պետական գործիչներից մեկը, որը գիտակցել է, որ անհրաժեշտ է կոտրել ամեն մի «ֆերենգիի» («եվրոպականի») նկատմամբ նախապաշարմունքների պատնեշը, լրջորեն ծանոթանալ պետական ու ռազմական գործերի կազմակերպման եվրոպական փորձի հետ, յուրացնել գիտության ու տեխնիկայի բնագավառում Արևմուտքում ձեռք բերված նվաճումները: Հենց նրա նախաձեռնությամբ Ստամբուլում բացվեցին մի քանի գրադարաններ, եվրոպացիների և առհասարակ այլ ժողովուրդների գիտատեխնիկական նվաճումների հետ ծանոթանալու և դրանք օգտագործելու նպատակով հիմնվեց այսպես կոչված «թարգմանությունների հանձնաժողովը», որն իրականացնելու էր ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան հեղինակների մի շարք բնագիտական աշխատությունների թարգմանությունները թուրքերեն: Մեծ վեզիրը ամեն կերպ նպաստում էր իր երկրում մաթեմատիկայի, աստղագիտության և այլ բնական գիտությունների զարգացմանը:

Բնավ պատահական չէ, որ հենց այդ ժամանակ հայտնվեցին նաև Օսմանյան կայսրությունում ռազմական բարեփոխումների վերաբերյալ առաջին նախագծերը: Մասնավորապես նման առաջարկներով սուլթանին դիմել էին Շվեդիայի թագավոր Կարլոս XII-ը, հունգարական ազնվական, իշխան Ֆերենց II Ռակոցին և ուրիշներ: 1716 թ. ֆրանսիացի սպա դե Ռոշֆորը Ստամբուլում Բ. Դոանը առաջարկեց օգտագործել օտարերկրյա հրահանգիչներին ու մասնագետներին թուրքական բանակը եվրոպական ձևով վերակազմակերպելու, ինչպես նաև բանակին կից ռազմական ինժեներների գումարտակ ստեղծելու համար: Սակայն դեռևս քաղաքականապես ուժեղ ենիչերիների կորպուսի առկայության և նման բարեփոխումների նկատմամբ ենիչերիների, սիպահիների ինչպես նաև մահմեդական հոգևորականության հակազդեցության պայմաննե-

ում ֆրանսիացու առաջարկը ըստ երևույթին ժամանակավրեպ էր: Ֆրանսիական հրահանգիչների օգնությամբ ռազմական բարեփոխում իրականացնելու այդ վեհերոտ փորձերն ավարտվեցին անարդյունք՝ բախվելով մոլեռանդության ու տգիտության հետ ինպես Թուրք բնակչության վերևներում, այնպես էլ ստորին խավերում: Դե Ռոշֆորի գաղափարները օգտագործվեցին ավելի ուշ, սուլթան Մահմուդ I-ի ժամանակ, երբ թուրքական ծառայության մեջ մտած և խլամն ընդունած ֆրանսիացի կոմս Ալեքսանդր Կլոդ դե Բոնևալը, որն ընդունել էր Ահմեդ Խումբարաջի փաշա անունը, 1734 թ. Ստամբուլում հիմնեց հրետանային դպրոց: Դա առաջին թուրքական աշխարհիկ ուսումնական հաստատությունն էր, որտեղ դասավանդվում էին ճշգրիտ գիտություններ, մասնավորապես մաթեմատիկա և ճարտարագիտություն: Բոնևալի կողմից նաև քայլեր կատարվեցին Օսմանյան կայսրությունում եվրոպական տիպի բանակ ստեղծելու ուղղությամբ, որոնք, սակայն հաջողություն չունեցան: Հետագայում Բոնևալը իր հուշերում գրում էր, որ այդ ժամանակների թուրքական բանակը լավ վարժված զորքերի համար թույլ հակառակորդ էր: Իսկապես, Թուրքիայի բանակն ու նավատորմը արդեն վաղուց չափազանց հետ էին մնացել եվրոպականից: Իր տրամադրության տակ ունենալով հսկայական տարածք և մարդկային խոշոր ռեսուրսներ՝ Թուրքիան դեռևս կարող էր պատերազմի դեպքում հանել բազմամարդ բանակներ: Սակայն բանակի մարտունակությունը անկում էր ապրել: Հրամանատարական կազմի որակով, սպառազինությամբ և մարտավարությամբ այդ բանակը մեկուկես-երկու հարյուրամյակ հետ էր մնացել եվրոպական բանակներից: Թուրքական նավատորմը ևս նշանակալիորեն զիջում էր եվրոպական պետությունների նավատորմիղներին:

Օսմանյան կայսրությունում թուրքերեն լեզվով գրահրատարակության ստեղծմանը խոչընդոտում էր երկրի բնակչության ընդհանուր կուլտուրական հետամնացությունը, նրա մեծ մասի անգրագիտությունը, ինչպես նաև մահմեդական հոգևորականության վճռական դիմադրությունը, որը թշնամաբար էր տրամադրված «անհավատներից» վերցված բոլոր տեսակի նորամուծությունների նկատմամբ: Գրատպության դեմ եռանդուն կերպով հանդես էր գալիս նաև խաթիթաթների՝ գիրք արտագրողների «դասը», որոնց թիվը Օսմանյան կայսրությունում հաշվվում էր 90 հազար մարդուց ավել: Գրատպությունը նրանց կարող էր դարձնել գործազուրկ և զրկել հացից: Իրենց բողոքն արտահայտելու համար նրանք Ստամբուլի փողոցներում կազմակերպեցին քայլարշավ, որի ժամանակ տանում էին մի խոշոր դագաղ, որի մեջ դրված էին իրենց գրելու պարագաները:

Առաջին անգամ 1727 թ. հուլիսի 5-ին հրապարակվեց սուլթան Ահ-

մեղ III-ի և շեյխ-ուլ-իսլամի հատուկ ֆերմանը (հրամանագիրը), որը թույլատրում էր երկրում բաց անել տպարան: Ի դեպ, առաջին հայկական տպարանը Կ. Պոլսում հիմնադրվել է Աբգար Թոխաթեցու (Եվդոկացու) կողմից 1564 թ.: 1677 թ. Ակնեցի Երեմիա Քյոմուրճյանը Ստամբուլում հիմնադրում է երկրորդ հայկական տպարանը: Իսկ 1694 թ. Գրիգոր Մարզվանցին (Մերջանզադե Գրիգոր դպիր Մարզվանցի) և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին հիմնադրում են երրորդ տպարանը:

Տպարան բաց անելու վերաբերյալ 1727 թ. սուլթանական հրամանագրում չեչտվում էր, որ տպարանը իրավունք չունի տպագրելու Ղուրանը, նրա մեկնաբանությունները, մահմեդական իրավունքի վերաբերյալ աշխատություններ և առհասարակ կրոնական բովանդակությամբ գրքեր: Անշուշտ դրանով սուլթանը փորձում էր ինչ-որ չափով գոհացնել մահմեդական հոգևորականությանը, որը կտրուկ կերպով բողոքում էր կրոնական գրքերը «պղծելու» դեմ:

Տպագրական մեքենաները և մյուս սարքավորումները բերվեցին Ֆրանսիայից ու Ավստրիայից, մասամբ նաև Ստամբուլում գործող հայկական տպարաններից, որոնք կուտակել էին գրահրատարակման մեծ փորձ: Թուրքերեն լեզվով տպագրական գործի նախաձեռնողն ու իրականացնողը մահմեդականացած հունգարացի Իբրահիմ Մյութեֆֆերիքն էր, որին XVII դ. վերջին թուրքերը գերի էին վերցրել և Ստամբուլի «եսիր բազարում» վաճառել ստրկության: Նրա կողմից իսլամի ընդունումը իրեն բերել էր ազատություն:

Նորաստեղծ այդ տպարանում առաջին գիրքը լույս տեսավ 1729 թ. հունվարի 31-ին: Դա արաբերեն-թուրքերեն բառարան էր: Այնուհետև սկսեցին լույս տեսնել մահմեդական ու եվրոպական հեղինակների հեղինակած մի շարք գրքեր պատմության այլևայլ հարցերի վերաբերյալ: Այդ նույն տպարանում լույս տեսավ նաև ճիզվիթ հոգևորական Հոլդերմանի «Թուրքերենի քերականությունը»: Տպարանի հունձքը, սակայն, մեծ չէր, ընդամենը 17 գիրք 1729-1742 թթ. ընթացքում:

Կասկածից վեր է, որ գրատպությունը բացառիկ կարևոր իրադարձություն էր Օսմանյան կայսրության կյանքում: Դրա շնորհիվ գիտական գիտելիքների դեմ մահմեդական մոլեռանդների կողմից բարձրացված պատնեշը ճեղքվածք տվեց: Անշուշտ այդ առաջին տպարանը իր որոշակի լուման ունցավ նաև օսմանյան պետության մեջ կրթության, գիտության ու մշակույթի զարգացման գործում:

Իբրահիմ Մյութեֆֆերիքի մահվանից հետո (1745 թ.) տպարանը դադարեց գործել: Թուրքերեն լեզվով գրատպությունը շարունակվեց միայն XVIII դ. վերջին (1783 թ.):

Հարկ է նշել, որ այդ շրջանում բարեփոխումների գաղափարով տար-

ված թուրք գործիչները, համարյա առանց բացառության, գտնում էին, որ իսլամական կրոնը ավելի կատարյալ է, քան քրիստոնեությունը, ուստի նրանք համարում էին, որ իսլամի նորմերն ու ինստիտուտները միանգամայն պիտանի են XVIII դարի պայմաններում առաջադիմությունն ապահովելու համար:

Թեև մեծ վեզիր Իբրահիմ փաշան և հետագայում նրան փոխարինած Թոփալ Օսման փաշան (1731–1732), իսկ այնուհետև Քոջա Մեհմեդ Ռաղիբ փաշան (1756–1763) անդուլ կերպով որոնում էին պետությունը նորոգելու և արդիականացնելու ուղիներ, սակայն նրանց և բարեփոխիչների ծայրահեղ փոքր խմբի ջանքերը չտվեցին չնչափելի արդյունքներ: Նրանց մոտ դեռևս բացակայում էին հստակ ծրագրերն ու նպատակին հասնելու հետևողականությունը: Ժամանակը ակներևորեն դեռ չէր հասունացել պետության մեջ էական փոփոխություններ կատարելու համար: Օսմանյան հասարակությունը իր էությամբ դեռևս մնում էր միջնադարյան: Ընդհուպ մինչև XVIII դարի վերջը այդ հասարակությունը դեռ իր մեջ ուժ չէր գտնում արմատական փոփոխությունների համար:

Այդ թեկուզ և սահմանափակ բարեփոխումները կյանքի կոչելու համար միայն ցանկությունը և ընդդիմադիրների դիմադրության հաղթահարումը բավարար չէր: Անհրաժեշտ էին նաև ազատ դրամական միջոցներ: Մինչդեռ հրապուրվելով եվրոպական շքեղությամբ, թուրքական վերնախավը մրցավազքի մեջ էր մտել պալատներ կառուցելու, զբոսայգիներ ու ծաղկանոցներ ստեղծելու գործում, որոնք վատնում էին հսկայական միջոցներ: Զուրկ լինելով դրամ հայթայթելու այլ հնարավորություն՝ կառավարությունը դիմում էր բազմիցս փորձված միջոցին՝ հարկերի ավելացմանը: Դա երկսայրի սուր էր, քանի որ այդ քաղաքականությունը զանգվածների շրջանում անմիջապես ուժեղացնում էր սուլթանի և Բ. Դռան նկատմամբ դժգոհությունն ու տրտունջները:

Սուլթան Մահմուդ I-ի կառավարման տարիներին ևս գիտակցվում էր բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Առհասարակ, ստեղծվել էր մի օրինաչափություն, որ ամեն անգամ, երբ Օսմանյան կայսրությունը կրում էր հերթական ռազմական անհաջողությունը, կամ ներքին կյանքում բախվում էր ենիչերիական զորքերի խռովահույզ քմահաճույքների հետ, նրա կառավարող շրջաններն անմիջապես սկսում էին ելք որոնել պետության առջև կանգնած տնտեսական ու ռազմական անհաջողությունները հաղթահարելու համար և ըստ այնմ վերարծարծում էին բարեփոխումների և բանակը եվրոպական ձևով կազմակերպելու խնդիրը: Չնայած մոլեռանդ ենիչերիների խափանարար քայլերին՝ XVIII դ. կեսերին կյանքի կոչվեցին մի շարք դրական բնույթի միջոցառումներ, որոնք երկրի ապագայի առումով տվեցին իրական ու

կարևոր արդյունքներ: Օրինակ, հունգարացի վտարանդու զավակ, ֆրանսահպատակ դիվանագետ ու ինժեներ բարոն դը Տոթթը թուրքական կառավարության հրավերով Դարդանելում ձեռնամուխ եղավ պաշտպանողական ամրությունների ստեղծմանը: Նրա ղեկավարությամբ կազմավորվեցին հրետանային ու հրաձգային նոր զորամասեր, բանակում արմատավորվեց սվինի գործածությունը և այլն: Ավելի ուշ, 1771–1773 թթ. ընթացքում այդ նույն դը Տոթթի նախաձեռնությամբ բացվեցին հրետանավորների, ամրություններ կառուցող ճարտարագետների, ծովայինների զինվորական դպրոցներ, Ստամբուլում ստեղծվեց ծովային ինժեներական ուսումնարան և այլն:

Թուրքական կառավարությունը չահագրգռվածություն էր դրսևորում ընդլայնելու ու ծավալելու իր կապերը եվրոպական տերությունների, մասնավորապես Ֆրանսիայի հետ՝ ի չահ բարեփոխումների իրականացման և իր առջև հառնած բազմապիսի տնտեսական ու քաղաքական խնդիրների լուծման: Ինչպես նշվել է վերևում, 1740 թ., օրինակ, կնքվեց 24 կետից բաղկացած բարեկամության ու առևտրի մասին թուրք-ֆրանսիական պայմանագիրը, որը կրում էր կապիտուլյացիոն բնույթ: Այն ֆրանսիական հպատակներին «հավերժական ժամանակների համար» հատկացնում էր միակողմանի լայն իրավունքներ ու արտոնություններ, այդ թվում նաև Միջերկրական ծովի ավազանում: Այսուհետև ֆրանսիական վաճառականների համար սահմանվում էին արտահանման և ներմուծման արտոնյալ մաքսատուրքեր, և նրանք իսպառ ազատվում էին կայսրության տարածքում ներքին մաքսեր վճարելու պարտավորությունից: Պահպանվում էր արտաերկրայնության (էքստերիտորիալության) իրավունքը, որը չափազանց կարևոր գործոն էր ֆրանսիական վաճառականներին տեղական իշխանությունների կամայականություններից պաշտպանելու համար: Այդ նոր արտոնությունները ֆրանսիական վաճառականներին հնարավորություն տվեցին տիրապետող դիրքեր ձեռք բերելու թուրքական շուկայում: Այդ պայմանագրով ֆրանսիական կաթոլիկ միսիոներները ստանում էին Օսմանյան կայսրության տարածքում ազատ տեղաշարժվելու և անարգել կրոնական քարոզչություն ծավալելու իրավունք: Առհասարակ պետք է նշել, որ XVIII դարում հենց Ֆրանսիան հանդիսացավ այն երկիրը, որի նկատմամբ թուրքերն ուղղեցին իրենց հայացքը օգնություն ու աջակցություն ստանալու ակնկալիքով: Ժամանակի ընթացքում Անգլիան և Հոլանդիան ևս իրենց հպատակների համար ձեռք բերեցին նույնպիսի իրավունքներ, ինչպիսիք որ ձեռք էր բերել Ֆրանսիան:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԷՏԱՊՈՒՄ

1. ՍՈՒԼԹԱՆ ՍԵԼԻՄ III-Ի ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ («ՆԻԶԱՄ-Ի ՋԵԴԻԴ») ԵՎ ՆՐԱ ԳԱՀԸՆԿԵՑ ԼԻՆԵԼԸ

Սուլթան Աբդուլ Համիդ I-ին (1774-1789) օսմանյան գահի վրա փոխարինեց նրա 28-ամյա եղբորորդին՝ Սելիմ III-ը (1789-1807), որը մեծ եռանդով օժտված և իր երկիրը դժվարին վիճակից դուրս բերելու նախանձախնդիր մի գործիչ էր: Նա 13 տարեկանից սկսած 15 տարի անընդմեջ մեկուսացված էր «կաֆես»-ում («չիմչիրլիք»-ում): Բանտարկության տարիներին նա մշտապես հետաքրքրվում էր պետության գործերով: Նա նույնիսկ իր հոր բժշկի՝ Լորենցոյի, Ստամբուլում ֆրանսիական դեսպան Շուազել-Գուֆյեի և այլոց միջոցով գրագրության մեջ էր Ֆրանսիայի Լյուդովիկոս XVI արքայի հետ և նրանից խորհուրդներ էր հարցնում իր երկիրը բարեկարգելու և զարգացնելու վերաբերյալ:

Գահ բարձրանալուց անմիջապես հետո Բ. Դոանն ուղղված իր առաջին հաթթում (սեփական ձեռքով գրված ուղերձում) Սելիմ III-ը գրում էր. «Երկիրը կործանվում է, ևս մի քիչ ժամանակ, և այլևս հնարավոր չի լինի այն փրկել... Ես ցանկանում եմ, որ ինձ ասեն ճշմարտությունը, ողջ ճշմարտությունը»: Սուլթանը հատկապես ակներև կերպով տեսնում էր, որ ենիչերիական զորքերի մարտունակությունը խիստ ընկել է: 1792 թ. Դիվանին հասցեագրած նամակում նա գրում էր. «Այժմ մենք ունենք 120 հազար օջախային ռազմիկներ (ենիչերիներ - Վ. Բ.): Սակայն դրանով հանդերձ ութ հազար մոսկովյան զինվորներ անցան Դանուբը և հարձակվեցին մեզ վրա: Մեր բանակը, որը մարզված չէ նոր մեթոդներով պատերազմ մղելու համար, ընդունակ չէ դիմակայելու թշնամու լավ կազմակերպված բանակին»:

Գահակալումից հետո Սելիմ III-ը Իսխաք-բեյին ուղարկեց Փա-

րիզ, նրան հանձնարարելով ծանոթանալ Եվրոպայում գործերի վիճակի հետ, ուսումնասիրել եվրոպական պետությունների միջև եղած հարաբերությունները, ռազմական գործի մեջ նրանց ձեռք բերած հաջողությունները և այլն: Միաժամանակ նա մեծ վեզիր Քոջա Յուսուֆ էֆենդիից, վեզիրներից, բարձրագույն հոգևորական-ուլեմներից և առհասարակ իր շրջապատի գիտակ մարդկանցից պահանջեց գրավոր զեկուցագրեր («լյահհա») ներկայացնել պետության վիճակի և նրա բարելավման վերաբերյալ: Սուլթանին ներկայացվեցին 22 զեկուցագրեր: Լյահհա ներկայացնողների թվում էր նաև հայազգի ականավոր օսմանագետ Մուրաջա (Մուրադյան) դը Օսսոնը:

Առհասարակ XVIII դարը մի ժամանակաշրջան էր, երբ օսմանյան հասարակության տարբեր շրջաններում սկսել էին ծնունդ առնել ծանր ճգնաժամից դուրս գալու ուղիների վերաբերյալ մտորումներ: Երկրում փոփոխությունների կարիքը առանձնակի սրությամբ զգում էր նաև իր հպատակների կողմից «Աշխարհի տիրակալ», «ճանաչափայլ» պատվանուններին արժանացած երիտասարդ սուլթանը, որը օսմանյան պետության պատմության մեջ է մտել որպես սուլթան-բարեփոխիչ: Ճակատագրական զուգադիպությամբ Սելիմ III-ի գահ բարձրացավ ճիշտ այն ժամանակ, երբ Ֆրանսիայում սկսվեց հեղափոխություն: Կասկածից վեր է, որ այդ իրադարձությունը նրա բարեկամական գաղափարներին հաղորդելու էր վճռական մղում:

Սակայն Սելիմ III-ի գահակալության շրջանը դժվարին տարիներ էին կայսրության համար, որը համարյա գտնվում էր կործանման եզրին: Ծայրամասային շրջանների տեղական կառավարիչ-փաշաները ձգտում էին ինքնագլխության, պետական աստիճանավորները մխրճված էին գանձագողության ու կոռուպցիայի մեջ և հարգանք չէին դրսևորում օրենքի նկատմամբ, բազմաթիվ նահանգներ բռնված էին ապստամբության կրակով, Արաբիայի անապատներում դրության տերը վահաբիներն էին, որոնք սպառնում էին հուժկու ապստամբություն բարձրացնել կենտրոնական կառավարության դեմ, Սիրիայում և Պաղեստինում դրուզները անընդհատ բարձրացնում էին խռովություններ, Էպիրում և Հյուսիսային Հունաստանում հույները ժամանակ առ ժամանակ դիմում էին հակաթուրքական զինված պայքարի, Եգիպտոսի մամլյուքյան բեյերը ոչ միայն չէին ենթարկվում Ստամբուլին, այլև արհամարանքով էին վերաբերվում նրա նկատմամբ, ողջ Անատոլիայի տարածքում ինքնագլուխ ձորապետ-դերեբեյները հաստատել էին իրենց իշխանությունը, պետության ֆինանսական վիճակը ողբալի էր:

Ռուսաստանի և Ավստրիայի դեմ պատերազմներում կայսրու-

թյան կրած խոշոր պարտությունները էլ ավելի էին վատթարացնում վիճակը: Թեև գահը ստանձնելուց անմիջապես հետո Սելիմ III-ը անհապաղ հայտարարեց խոշոր զորահավաք, բանակ զորակոչելով 16 տարեկանից մինչև 60 տարեկան բոլոր մահմեդական տղամարդկանց, հույս ունենալով թվական գերակշռությամբ բեկում մտցնել ռազմական գործողությունների մեջ, սակայն չնայած ձեռք բերված մասնակի հաջողություններին, օսմանյան բանակները շարունակում էին կրել պարտություններ:

Ստամբուլի համար որոշ մխիթարություն էր այն, որ 1790 թ. Ավստրիայի կայսր Իոսիֆի մահանալուց հետո գահի վրա նրան փոխարինած եղբայրը՝ Լեոպոլդը՝ որը Օսմանյան կայսրության դեմ պատերազմում Ռուսաստանի հետ դաշնակցելու հակառակորդ էր, որոշեց դադարեցնել Ավստրիայի դաշինքը Ռուսաստանի հետ և դուրս գալ պատերազմից: 1790 թ. օգոստոսի 4-ին Սիստովոյում (Սվիշտով, գտնվում է Բուլղարիայում), նա Թուրքերի հետ կնքեց խաղաղության դաշնագիր, վերադարձնելով պատերազմի ժամանակ նրանցից գրավված տարածքները և ըստ էության վերականգնելով նախապատերազմյան ստատուս-քվոն: Լեոպոլդը գտնում էր, որ Օսմանյան կայսրության մասնատումն ու տրոհումը ոչ մի օգուտ չի կարող բերել իր կայսրությանը: Ավստրիացիների այդ քայլից դառնացած, բայց ոչ վհատված ու ինքնավստահությունը կորցրած ռուսները 1790 թ. շարունակեցին հարձակումը, նորանոր հաղթանակներ տանելով Թուրքերի նկատմամբ:

1790 թ. դեկտեմբերի 22-ին Ա. Վ. Սուվորովի զորքերի կողմից Դանուբի ակունքի մոտ գտնվող Իսմայիլ ամրոցի գրավումը դա վերջի սկիզբն էր: Ռուսները ավերեցին ու անխնա կողոպուտի մատնեցին քաղաքը: Վրիժառության մոլուցքով լցված ռուս զինվորները կոտորեցին թե՛ քաղաքի պաշտպաններին, և թե՛ բնակիչներին: Պատմվում է, որ այդ տեսարանից ցնցված Սուվորովը քաշվում է իր վրանը և դառն արցունքներով լաց լինում:

Միանգամայն ակնհայտ էր, որ այլևս ոչինչ չէր կարող փրկել Օսմանյան կայսրությանը՝ ճաշակելու դաժան պարտության դառնությունը: Իրադարձությունների այդպիսի զարգացումից անհանգստացած Պրուսիան և Անգլիան 1790 թ. միջնորդական առաքելությամբ դիմեցին ռուսական կայսրուհուն, առաջարկելով անհապաղ դադարեցնել պատերազմը և կնքել խաղաղության պայմանագիր և վերադարձնել Թուրքիայից գրավված տարածքները: Եկատերինա II-ը դայրացած պատասխանեց, որ «կայսրուհին պատերազմ է մղում և

խաղաղություն կնքում այն ժամանակ, երբ ինքն է այդ ցանկանում»:

Անգլիացիները գտնում էին, որ Ռուսաստանի ծավալումը Օսմանյան կայսրության հաշվին սպառնալիք է ստեղծում Պրուսիայի և ողջ մնացած Եվրոպայի համար: Ուստի ստանալով Համայնքների պալատի հավանությունը՝ Բրիտանական կառավարությունը որոշեց ուժի միջոցով իրականացնել իր «միջնորդական առաքելությունը»: Լոնդոնը մտադիր էր Բալթիկ ծով ուղարկել երեսուն ռազմանավերից բաղկացած մի նավատորմ և միաժանակ մի ոչ մեծ նավախումբ՝ դեպի Սև ծով: Իր հերթին Պրուսիան պատրաստվում էր մի ամբողջ բանակ ուղարկել Լիվոնիա:

Անգլիայի վարչապետ Պիտտին հաջողվեց անգլիացիների և առհասարակ Եվրոպայի հասարակայնության գիտակցության մեջ արմատավորել այն տեսակետը, որ անհրաժեշտ է Եվրոպայում պահպանել ուժերի հավասարակշռությունը և թույլ չտալ, որ Ռուսաստանը ծավալվի, իսկ Օսմանյան կայսրության տարածքները կրճատվեն:

Նորանոր տարածքների կորուստը կանխելու նպատակով Բ. Դուռը որոշեց ռուսներից խնդրել հաշտություն: Պետերբուրգը անմիջապես տվեց իր համաձայնությունը, քանի որ Եկատերինա II-ը որոշել էր ընդհուպ զբաղվել Լեհաստանի բաժանման և նրա նկատմամբ իր հսկողությունը սահմանելու հարցով:

1791 թ. դեկտեմբերի 29-ին Յասսիում կնքվեց ռուս-թուրքական խաղաղության պայմանագիր: Այն հաստատում էր 1774 թ. Քյուչյուկ-Կայնարջիի պայմանագրի բոլոր դրույթները և 1783 թ. ակտը Ղրիմն ու Կուբանը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ: Բուգ և Դնեստր գետերի միջև ընկած հողերը անցնում էին ռուսական պետությանը՝ ներառյալ նաև Օչակովը: Այսուհետև ռուս-թուրքական սահմանը անցնելու էր Դնեստր գետով: Այդ գետից արևմուտք ընկած բոլոր հողերը, այդ թվում նաև Բեսարաբիան և Մոլդավիան, Ռուսաստանը վերադարձնում էր Թուրքերին: Օչակովը մնալու էր ռուսներին: Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր այսուհետև հավակնություն չներկայացնել Վրաստանի նկատմամբ և նրա հանդեպ չձեռնարկել թշնամական գործողություններ:

Յասսիի պայմանագիրը ոչ միայն ամրապնդեց այն ամենը, ինչ ձեռք էր բերվել Ռուսաստանի կողմից 1676-1774 թթ. պատերազմների ժամանակ, այլև նրան բերեց տարածքային նոր նվաճումներ և դրանց հետ միասին նաև քաղաքական խոշոր առավելություններ: Ամենակարևորը այն էր, որ Ռուսաստանը Սև ծովում ստանում էր տիրապետող դիրքեր: Իր տրամադրության տակ ունենալով մի այնպիսի

նավատորմ, որն իր թվաքանակով և կրակային հզորությամբ մի քանի անգամ գերազանցում էր թուրքական ռազմական նավատորմին, այսուհետև Ռուսաստանը կարող էր վերահսկել դեպի Ստամբուլ տանող ծովային ճանապարհները: Ավելին, այսուհետև ցամաքով Ռուսաստանը կարող էր Թուրքիայի դեմ հանդես գալ Լեհաստանում տեղակայված մեծաթիվ զորքերով:

Թվում էր, թե եկել է պահը կյանքի կոչելու համար ռուսական կայսրուհու «մեծ ծրագիրը» Կոստանդնուպոլիսը, կամ ինչպես ռուսներն էին այն անվանում Ցարգրադը գրավելու համար: Սակայն 1796 թ. Եկատերինա II-ը կնքեց իր մահկանացուն և Օսմանյան կայսրությունը հերթական անգամ ստացավ իր օրհասական վիճակից դուրս գալու հնարավորություն:

Այսպիսով XVIII դարը հանդիսացավ Օսմանյան կայսրության հետագա թուլացման, ռազմական պարտությունների, տնտեսական անկման և կայսրության միջազգային հեղինակության անկման ու վայրէջքի դարաշրջան: Սակայն այդ բոլորով հանդերձ, նա դեռ շարունակում էր իր կազմում պահել նվաճված տարածքների մեծագույն մասը: Առհասարակ, ռազմական առումով այն բավականին ուժեղ պետություն էր և կարողանում էր ոչ միայն պահպանել իր տարածքային ամբողջականությունը, այլև իր լծի տակ պահել բազմաթիվ ժողովուրդների:

Պատերազմի ավարտից հետո Սելիմ III-ը մեծագույն եռանդով ու հետևողականությամբ ձեռնամուխ եղավ բարեփոխումների վերաբերյալ իր գաղափարները կյանքի կոչելու համար:

1791 թ. ամռանը Սելիմ III-ը Վիեննա ուղարկեց արտակարգ մի դեսպանություն: Նրա ղեկավար էբու Բեքիր Ռաթիբ-էֆենդին դիվանագիտական հանձնարարություններից զատ ուներ նաև սուլթանի հատուկ հանձնարարությունը մանրակրկիտ կերպով ծանոթանալու Ավստրիական կայսրության պետական կյանքի բոլոր կողմերի, այդ թվում նաև Ավստրիայում և եվրոպական այլ պետություններում ռազմական գործի դրվածքի հետ: Յոթ ամսից ավել մնալով Վիեննայում և այցելություններ կատարելով նաև այլ երկրներ՝ Ռաթիբ-էֆենդին կազմեց 500 էջից բաղկացած մի մանրամասն զեկուցագիր, որը նա կոչեց «Սեֆարեթնամե» («ուղևորությունների գրառում»): Նրանում թուրք պաշտոնյան մանրամասն տեղեկություններ էր հաղորդում Ավստրիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի ու Պրուսիայի բանակների, Ավստրիական կայսրության պետական կառուցվածքի, հարկային համակարգի, բանկային և լեռնային գործի, այդ երկրի մաք-

սային ծառայության և այլ հարցերի մասին: Ռաթիբ-էֆենդին հանգում էր այն եզրակացության, որ Օսմանյան կայսրության դժբախտությունների պատճառը կայանում է նրանում, որ ռազմական, տնտեսական ու ներքին քաղաքականության բնագավառում եվրոպական պետությունները մեծ առավելություններ ունեն նրա նկատմամբ: Ռաթիբ-էֆենդիից առաջ ոչ մի թուրք այդպիսի ընդգրկուն ձևով չէր լուսաբանել եվրոպական կյանքը և չէր չեչտել Արևմուտքի առավելությունները լճացման մեջ գտնվող թուրքական իրականության համեմատ:

Այդ զեկուցագիրը մեծ ազդեցություն էր թողել սուլթանի վրա: Ըստ էության այն դարձավ Սելիմ III-ի կողմից մտահղացված բարեփոխումների ծրագիր: Նկատի ունենալով, որ իր պետությունը ռազմական տերություն է և նրա ուժն ու հզորությունը առաջին հերթին խարսխված է բանակի վրա, Սելիմ III-ը իր բարենորոգչական գործունեության հիմքում առաջին հերթին դրեց ռազմական ռեֆորմը, թեև նրա ծրագրած բարեփոխումները ներառելու էին նաև տնտեսական ու քաղաքացիական բնագավառները: Ծրագրված բարեփոխումների ամբողջ շարքը ստացավ «Նիզամ-ի ջեդիդ» («նոր կարգ») անվանումը:

Նախ սուլթանը փորձեց ամրապնդել օսմանյան բանակի ավանդական զորատեսակները՝ ավատական հեծյալ աշխարհազորը (սիփահի) և մշտական ենիչերիական հետևակը: 1792 թ. սեպտեմբերին նա հրապարակեց այսպես կոչված «Նոր օրենք թիմարների և զեամեթների մասին», որը պատվիրում էր խստագույնս պահպանել այն պահանջները, որոնք վերաբերում են ռազմական ծառայության դիմաց հողեր ստացած ավատատերերի պարտավորություններին: Նրանում ամենավճռական արտահայտություններով հիշեցվում էր, որ իրենց զինվորական պարտականությունների մեջ թերացած թիմարատերերն ու զայիմները ըստ օրենքի կենթարկվեն պատիժների, ընդհուպ մինչև իրենց ստացած հողերի հետ գրավումը պետության կողմից և նրանց մահապատժի ենթարկելը: Ալայ բեյերը (սիփահի գնդերի հրամանատարները – Վ. Բ.), հաճախ խախտելով ավատների բաշխման կարգը, կաշառքի օգնությամբ հողահատկացումներ էին կատարում այնպիսի անձանց, որոնք դրա իրավունքը չունեին, իսկ ամենակարևորը չէին մասնակցում ռազմարշավներին: Նման օրինախախտ ալայ-բեյերը սուլթանի հրամանագրով համարվում էին դավաճաններ և ենթակա էին մահապատժի, իսկ նրանց ունեցվածքը անցնում էր գանձարանին: Նրանց ժառանգները զրկվում էին իրենց հայրերի ավատները ստանալու իրավունքից: Բոլոր թիմարատերերը,

որոնց 15 տարին լրացել էր, համարվում էին զինապարտ և պարտավոր էին բնակվել իրենց հատկացված ավատներում: Այդ հրամանագիրը անհապաղ մտցվեց գործողության մեջ: Հրամանագիրը թույլատրում էր, որ ռազմական ծառայության դիմաց ստացված ավատները (թիմարներ) վերածել «մալիքյանե» կալվածքի, երբ պետական գանձարանին համապատասխան գումար վճարելուց հետո տվյալ կալվածքը կարող էր դառնալ մասնավոր սեփականության մի տեսակ: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ մեծ թվով թիմարատերեր, փաստորեն դառնալով իրենց հողերի սեփականատերեր, կատարելապես ազատվեցին իրենց զինվորական պարտավորություններից և ամենագլխավորը համալրեցին սոցիալական այն խավի շարքերը, որը շահագրգռված էր թիմարային համակարգի լրիվ վերացման մեջ:

Սուլթանի ու նրա մերձակա շրջապատի համար միանգամայն ակնհայտ էր դարձել, որ ենիչերիների ազատագրը (կորպուս) դարձել է ոչ միայն կայսրության ռազմական թուլության պատճառ, այլև ավատական ու կղերական հետադիմության հենարան, իսկ ամենակարևորը պալատական հեղաշրջումների մշտական կազմակերպիչ: Զելեբի Մուստաֆա-էֆենդի անունով Սելիմ III-ի պալատականներից մեկը սուլթանին ներկայացրած իր լայհայում գրում էր, որ ճակատամարտերի ժամանակ ենիչերիները ոչ այլ ինչ էին, եթե ոչ անկարգապահ մի ամբոխ, ավելին՝ խուճապ տարածողներ, իսկ թալանի ժամանակ «խիզախ զինվորներ»: Կամայականությունը, բռնությունը, կոպտությունը այն աստիճանի բնորոշ էին ենիչերիների համար, որ ժողովրդի շրջանում տարածում գտավ «վարվել յանիչարու պես» (“yeniçerlik etmek”) դարձվածքը:

Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ Սելիմ III-ի նախորդների ձեռնարկած բոլոր փորձերը ենիչերիական զորքերը վերակառուցելու և նրանց երբեմնի մարտունակությունն ու ռազմական հզորությունը ամրապնդելու ուղղությամբ ավարտվել էին կատարյալ ձախողմամբ: Եվ չնայած դրան, սուլթան Սելիմի շրջապատի որոշ մարդիկ նրան խորհուրդ էին տալիս ռազմական բարեփոխում իրականացնել մի այնպիսի ձևով, որ կրկին չեչտը դրվի ենիչերիական զորախմբի կազմակերպչական ամրապնդման և մարտունակության բարձրացման վրա: Սակայն Սելիմ III-ը մերժեց այդ տեսակետը և հավանություն տվեց այն խմբավորման առաջարկին, որն անհրաժեշտ էր համարում ստեղծելու միանգամայն նոր, եվրոպական ձևով կազմակերպված բանակ: Այդ գաղափարի հեղինակները առաջարկում էին սուլթանին գործը գլուխ բերելու համար հրավիրել 50-100

եվրոպական սպաների և մի խումբ երիտասարդ Թուրքերի ուղարկել Եվրոպա ռազմական գործը յուրացնելու և այդ գծով գիտելիքներ, հմտություններ ու փորձ ձեռք բերելու համար:

Իր բարենորոգչական գործունեության ծրագրերը մշակելիս Սելիմ III-ը որոշել էր հենվել Ֆրանսիայի օգնության վրա, մեծ համարում ունենալով այդ երկրի ռազմական ու տնտեսական հնարավորությունների վերաբերյալ: Բ. Դոան խնդրանքով 1792 Թ. հոկտեմբերին Փարիզը Ստամբուլ ուղարկեց մի ճարտարագետի և արհեստավորների մի խմբի: Ավելի ուշ, 1796 Թ. ֆրանսիական դեսպանը իր հետ սուլթանի մայրաքաղաքը բերեց հարյուր հոգուց բաղկացած վարպետ արհեստավորների և թնդանոթաձիգների մի ջոկատի: Նրանք բոլորը կոչված էին նպաստել ռազմական բարեփոխման նախապատրաստմանն ու իրականացմանը: Թեև Սելիմ III-ը Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XVI-ի մահապատժի վերաբերյալ լուրը ընդունել էր սարսափով ու մեծագույն դժկամությամբ, սակայն դա չսասանեց նրա համարումը Ֆրանսիայի նկատմամբ և չխանգարեց, որ նա օգտվի հանրապետական կառավարության աջակցությունից իր ծրագրած ռազմական բարեփոխումը ավարտին հասցնելու համար:

1793 Թ. Սելիմ III-ը հրապարակեց ֆերման (հրամանագիր) ռազմական նոր կազմակերպության՝ եվրոպական ձևով կազմակերպված ու վարժեցված հետևակային մի զորամաս ստեղծելու վերաբերյալ: Հրապարակվեցին նաև հրամանագրեր, որոնք կոչված էին բարեփոխել հրետանավորների և ռմբարկուների (կումբարաջի) ականահատների (լյաղումջի) և զինագործների (ջեբեջի) զորամասերը: Հիմնվեց նաև հատուկ զինվորական դրամարկղ, որի միջոցով պետք է անցնեին նոր ստեղծվող ռազմական կազմակերպության ֆինանսավորման բոլոր միջոցները:

Քանի որ ակնհայտ էր, որ անհնար է միանգամից փոխել ողջ հին ռազմական կազմակերպության կառույցը, ուստի բարենորոգիչները որոշ ուշադրություն նվիրեցին նաև ավանդական ռազմական կազմավորումների վերակառուցմանն ու բարելավմանը: Մասնավորապես հրապարակվեց հրամանագիր ավատական աշխարհազորի շարքերում կարգապահությունը բարձրացնելու անհրաժեշտության մասին: Սակայն դրա իրականացումը այնքան էլ հեշտ գործ չէր, քանի որ հանդիպում էր ուժգին դիմադրության: Այսպես, երբ սուլթանի կողմից լիազորված անձինք փորձեցին ստուգել, թե ենիչերիներից ովքեր են իրոք գտնվում ծառայության մեջ և ոչ թե կեղծ ցուցակներում, նրանց պարզապես սպանում էին կամ թույլ չէին տալիս իրենց պարտականությունը կատարելու:

Ռազմական բարեփոխմամբ նախատեսված նոր զորքերի թվաքանակը լինելու էր 12 հազար մարդ: Ընդ որում ենթադրվում էր նրանցից 1600 զինվորի տեղակայել մայրաքաղաքում, իսկ մնացածին եվրոպական և ասիական Թուրքիայի տարբեր քաղաքներում:

Հաշվի առնելով երկրում ձևավորված ավանդույթը և ամենակարևորը չցանկանալով սրել հարաբերությունները ենիչերիական զորամասերի հետ, բարեփոխիչները որոշեցին արտաքուստ չառանձնացնել նոր ստեղծվող զորքերը առկա զորատեսակներից: Ուստի դրանք պաշտոնապես մտցվեցին «բոստանչի» կոչված կորպուսի կազմի մեջ, որը կատարում էր պալատական պահակազորի դեր: Իրականում այդ նոր զորատեսակները միանգամայն ինքնուրույն ռազմական ստորաբաժանումներ էին և կոչվեցին «Պալատական հրաձիգների կորպուս»: («Բոսթանի թյուֆենքչի օջախը»): Դրանց տեղակայեցին գեղատեսիլ մի վայրում՝ Լևենդ-Չիֆթլիքում, որտեղ նախկինում տեղակայված էին ծովային հետևակայինները՝ լեվենդները, ինչպես նաև Ուսկյուդարում:

Սելիմ III-ի հրամանով նոր զորամասերի համար կառուցվեցին հիանալի զորանոցներ, ուսումնա-մարզական համալիրներ և այլն: Նրանց համար ստեղծվեց հատուկ համազգեստ և տարբերանշաններ: Զինվորները մարզվում էին հենց տեղում՝ Լևենդ-Չիֆթլիքում, իսլամն ընդունած եվրոպացի սպաների և Եվրոպայում զինվորական պատրաստություն ստացած Թուրքերի կողմից: Սելիմ III-ը և նրա վեզիրները հաճախ այցելում էին Լևենդ-Չիֆթլիք, ականատես լինելու զորավարժություններին: Սուլթանը զինվորներին առատորեն բաժանում էր նվերներ: Նշանակալի հաջողություններ ձեռք բերվեցին նաև թուրքական հրետանու մարտունակությունը բարձրացնելու ուղղությամբ: Հրետանային զորամասերն ստացան նոր, ավելի կատարելագործված տիպի թնդանոթներ: Սուլթանին հաջողվեց նաև ստեղծել բավականաչափ ուժեղ նավատորմ, որը համարվում էր Եվրոպայում լավագույններից մեկը:

Սելիմ III-ի հրամանով կանոնավոր զորքեր սկսեցին ստեղծվել նաև Անատոլիայում: Զորքերի այդ նոր տեսակները աչքի էին ընկնում իրենց կարգապահությամբ:

Զնայած բարենորոգիչների գործադրած ջանքերին՝ հնարավորին չափ սեղմ ժամկետներում ավարտելու նոր զորատեսակների ստեղծման գործը, այն ընթանում էր չափազանց դանդաղ: Միայն 1804 թ. նրա թվաքանակը հասավ նախատեսված չափին՝ 12 հազար մարդու: Դժվարությունները բազում էին: Սուլթանն ու նրա մերձավորները ամեն քայլափոխում հանդիպում էին դիմադրության: Հատկապես

չափազանց դժվար էր երկրում դարերի ընթացքում արմատավորված նախատրամադրվածության հաղթահարումը ամեն մի եվրոպականի նկատմամբ: Նույնիսկ եվրոպական սպառազինության ձեռք բերումը զորքերի նոր տեսակը զինելու համար հանդիպում էր դիմադրության: Այդ արգելքը հաղթահարելու համար բարեփոխիչները ստիպված էին վկայակոչել Ղուրանը, որտեղ սուրահներից մեկում ասվում է. «Անհավատների նկատմամբ հաղթանակներ ձեռք բերեք այն նույն զենքով, որի օգնությամբ նրանք հաղթում են մեզ»:

Չնայած բոլոր տեսակի արգելքներին ու դժվարություններին, բարեփոխումների գործը անչեղորեն գնում էր առաջ: Էապես ընդլայնվեց մինչ այդ ստեղծված ռազմաինժեներական դպրոցը («մյուհենդիսխանե»), բացվեցին բանակի ու նավատորմի համար հրետանավորներ, ամրություններ կառուցող մասնագետներ, ծովագնացներ և այլն պատրաստող նոր դպրոցներ: Սուլթան Սելիմը մեծ ուշադրություն էր դարձնում այդ դպրոցներին, անձամբ ստուգում էր սաների գիտելիքները, խրախուսում էր նրանց պարգևներով: Ստեղծվեց եվրոպական լեզուներով գրքերի խոշոր գրադարան: Ֆրանսերեն լեզուն դարձավ բոլոր սովորողների ուսումնասիրության պարտադիր լեզու: Թուրք հասարակության մեջ աշխուժացավ հետաքրքրությունը արևմտյան մշակույթի, գիտության, և առհասարակ արևմտյան քաղաքակրթության նկատմամբ:

Հարկ է նշել, որ կայսրության քրիստոնեական շրջանակները, հատկապես Ստամբուլի հունական ու հայկական վերնախավը, արդեն վաղուց սերտ շփումների մեջ էր Արևմուտքի հետ: Զափազանց մեծ էր նրանց խաղացած դերը Օսմանյան կայսրության տնտեսական կյանքի և հատկապես առևտրի մեջ: Այդ խավը նույնիսկ ազդեցիկ դիրքեր էր գրավում կառավարական շրջանակներում: Սելիմ III-ի կողմից լուսավորական համակարգի բնագավառում իրականացված բարեփոխումը էլ ավելի խթանեց հույների ու հայերի շփումները արևմտյան քաղաքակրթության հետ: Նրանք սկսեցին ուսումնասիրել եվրոպական լեզուներ, զբաղվել արևմտյան գրականության թարգմանություններով, մեծ թվով մարդիկ ծառայության մեջ մտան օսմանյան վարչական մարմիններում որպես թարգմանիչներ, մասնագետներ և այլն:

1793 թ. փոխադարձության հիմքի վրա եվրոպական հինգ առաջատար մայրաքաղաքներում թուրքերը հիմնեցին մշտական դիվանագիտական ներկայացուցչություններ: Թուրքական դեսպանները հրահանգ ստացան համակողմանիորեն ուսումնասիրել այն երկրները, որտեղ իրենք հավատարմագրվել էին: Եվրոպական երկրներում

դեսպանություններ բացելու գործում բարդությունը կայանում էր նրանում, որ դժվար էր գտնել այնպիսի մարդկանց, որոնք ունենային դիվանագետի համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ և համաձայնվեին տևական ժամանակով ապրել և աշխատել Եվրոպայում: Չնայած այն հանգամանքին, որ դիվանագետներին տրամադրվում էին ձեռնտու պայմաններ, նրանցից շատերը չէին կարողանում հաղթահարել իրենց զզվանքը «գյավուրների» նկատմամբ: Ուստի Բ. Դուռը խոստանում էր, որ նրանց առաքելությունը երեք տարուց ավել չի տևի:

Սելիմ III-ի ժամանակ բացված դեսպանությունների գործունեությունը հաջողություն չունեցավ և նրանք շուտով փակվեցին (1821 թ.):

Սուլթան Սելիմի կողմից արմատավորված «Նիզամ-ի ջեդիդը» («Նոր կարգը») ենթադրում էր նաև սոցիալական ու տնտեսական բարեփոխումների համալիր իրականացում: Օրինակ, ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք սահմանափակում էին նահանգային վարչության ներկայացուցիչների իրավունքները: Հստակ սահմանվում էր նահանգների կառավարման և նահանգապետերի նշանակման կարգը, ինչպես նաև խստիվ կանոնակարգվում էին նրանց ծառայողական գործառույթները: Նահանգների վալիները կարող էին իրենց պաշտոնը զբաղեցնել երեք տարի ժամկետով, իսկ կրկնակի նշանակումը կախված էր լինելու այն բանից, թե տվյալ նահանգի բնակչությունը որքանով էր գոհ նրա աշխատանքից: Այդ օրենքը չեչտում էր ողջ նահանգային վարչության հաշվետու լինելը սուլթանին և կենտրոնական իշխանություններին: Ընդունվեցին նաև նահանգներում հարկահանության նոր կանոններ, որոնք կոչված էին հարկահավաքման բնագավառում ինչ-որ չափով մտցնել օրինականություն: Հարկահավաքման կապալային համակարգը (իլթիզամ) վերացվեց: Այսուհետև հարկերը հավաքվելու էին պետական գանձարանի կողմից:

Սուլթանական բարեփոխումները չոչափեցին նաև կառավարման կենտրոնական մարմինների գործունեության բնագավառը: Ըստ այնմ, մեծ վեզիրի իշխանությունը որոշակիորեն սահմանափակվում էր: Այսուհետև նա այլևս իրավասու չէր ընդունելու միանձնյա որոշումներ, այլ պարտավոր էր բոլոր կարևորագույն հարցերի կապակցությամբ խորհրդակցել Դիվանի հետ:

Փորձեր կատարվեցին նաև իրականացնելու հողային բարեփոխումներ, դրամական համակարգի բարեփոխման քայլեր և այլն: Քանի որ սղաճի հետևանքով դրամը նշանակալիորեն արժեքազրկվել էր, լուրջ քայլեր ձեռնարկվեցին փողի ռեալ արժեքը վերականգնելու համար: Ենթադրվում էր հացահատիկի առևտրի նկատմամբ հաստատել

պետական հսկողություն՝ այդ բնագավառում չարաշահումների առաջն առնելու համար:

Որոշվեց ստեղծել առևտրական նավատորմ: Փորձեր էին կատարվում արտաքին առևտուրը խլել քրիստոնյաների (հույների, հայերի և այլն) ձեռքից և այն կենտրոնացնել մահմեդականների ձեռքերում: Ծրագրվում էր արգելք դնել թանկարժեք մետաղների ու քարերի արտահանման վրա և խրախուսել ընդերքի շահագործումը: Նույնիսկ փորձեր կատարվեցին ստեղծելու պետական արդյունաբերական ձեռնարկություններ: Այդ բոլորը միտված էր ստեղծելու ժամանակակից ազգային տնտեսություն:

Սակայն բարեփոխումների իրականացումը պահանջում էր հսկայական ֆինանսական միջոցներ: Թեև լրացուցիչ միջոցներ հայթայթելու համար կառավարությունը նոր հարկեր նշանակեց ալկոհոլի, ծխախոտի, սուրճի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, ինչպես նաև մետաքսի ու բամբակի վրա, սակայն դա հեռու էր հարցին լուծում տալուց: Ընդ որում, հարկերի ծանրությունը մեծանում էր հարկահավաքների անվերջ չարաշահումների պատճառով: Դրությունից ինչ որ չափով ելք գտնելու համար ստեղծվեց այսպես կոչված «նոր եկամուտների գանձարան», որի միջոցներով ֆինանսավորվում էին բոլոր ռազմական բարեփոխումները: Սակայն դա ևս բավարար չէր: Ուստի Սելիմ III-ի կառավարությունը որոշեց դիմել եվրոպական պետություններին փոխառություններ ստանալու համար: Սակայն կառավարող վերնախավի առանձին ներկայացուցիչներ սվիններով դիմավորեցին օտարերկրյա փոխառություններ վերցնելու գաղափարը, գտնելով, որ մահմեդական պետության համար ստորացուցիչ է «անհավատներից» ֆինանսական օգնություն խնդրելը:

Անչուշտ Սելիմ III-ի բարեփոխումների այդ ընդարձակ ծրագրի ոչ բոլոր կետերը դարձան ռեալ իրականություն: Սակայն կասկածից վեր է, որ դրանք միջոցառումներ էին, որոնք կյանք մտնելով կամ անմիջականորեն ազդում էին երկրի զարգացման ընթացքի վրա և կամ հող էին նախապատրաստում դրա համար:

Առանձնակի արդյունավետությամբ աչքի ընկավ ռազմական բարեփոխումը: Սուլթանը, հատկապես ոգեշնչված էր Պյոտր I-ի իրականացրած ռազմական ռեֆորմով, որի հետևանքով ստեղծված նոր, եվրոպական տիպի բանակը ջախջախեց ցարի թշնամիներին ոչ միայն սեփական երկրում, այլև արտասահմանում: Մարգումների եվրոպական մեթոդները, նոր սպառազինությունը և խիստ կարգապահությունը տվեցին իրենց արդյունքները: Արդեն Նապոլեոն Բոնապարտի

եգիպտական արշավանքի ժամանակ Աքքայի ամրոցի պաշտպանության ժամանակ (1799 թ.) օսմանյան նորաստեղծ զինվորական ստորաբաժանումները ցուցադրեցին բավականին բարձր մարտական հատկանիշներ: Նրանք իրենց մարտունակությունը և լավ պատրաստվածությունը դրսևորեցին նաև 1804 թ. Ռումելիայում ընթացող ապստամբական շարժումները ճնշելու պատժիչ գործողությունների ժամանակ:

Սելիմ III-ի բարենորոգումների շարքում ընդգրկված էին նաև թուրքական հրետանային զորամասերի տեխնիկական հագեցվածությունը ուժեղացնելու և նրանց մարտունակությունը բարձրացնելու միջոցառումները: «Թոփխանե» կոչված հրետանային զինանոցում աշխատելու համար հրավիրվեցին եվրոպացի (մեծ մասամբ ֆրանսիացի) ինժեներներ, վարպետներ ու հրահանգիչներ:

Բարենորոգիչ սուլթանին և նրա օգնականներին հաջողվեց չոչափելի հաջողությունների հասնել նաև ռազմածովային նավատորմի վիճակը բարելավելու գործում: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցի ընթացքում ստեղծվեց նշանակալից հզորություն ունեցող նավատորմ: Երկրի քաղաքներում (Ստամբուլում, Գեմլիքում, Սինոպում, Հոռոս և Կիպրոս կղզիներում, Սուխումում և այլ վայրերում) գործող նավաշինարանները աշխատում էին մեծ ծանրաբեռնվածությամբ: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում կառուցվեցին 45 ռազմանավեր: Սուլթանի ռազմածովային ուժերն ունեին հարյուրից ավելի ռազմանավ, այդ թվում քառասունից ավելի գծանավ և ֆրեգատ: Ժամանակակիցների գնահատմամբ, այդ նավատորմը համարվում էր Եվրոպայում լավագույններից մեկը: Նավապետների մեջ կային ոչ քիչ թվով երիտասարդ մարդիկ, որոնք ունեին անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն և կրթական մակարդակ:

Առհասարակ պետք է նշել, որ Սելիմ III-ի ռազմական բարեփոխումները նպաստեցին եվրոպական գիտության ու մշակույթի հետ ավելի լայն շփումների իրականացմանը, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում աշխարհիկ կրթության հետագա զարգացմանը: Նորաստեղծ ուսումնական հաստատություններում եվրոպական չափանիշներով ռազմական ու հանրակրթական պատրաստություն ստացան հարյուրավոր թուրք պատանիներ: Բացվեցին թուրքական մշտական դեսպանություններ՝ 1793 թ. Լոնդոնում, 1794 թ. Վիեննայում, 1795 թ. Բեռլինում և 1796 թ. Փարիզում: 1793 թ. դադարեցվեց թուրքական կառավարության կողմից օտարերկրյա դեսպանների ծախսերը հոգալու պրակտիկան (tayin համակարգը):

Ռազմական և այլ բնագավառների բարեփոխումները աստիճա-

նաբար իրենց ներգործությունն ունեցան նաև երկրի տնտեսության ու մշակույթի ընդհանուր վիճակի վրա: Օրինակ, զարկ ստացավ լեռնահանքային արդյունաբերությունը, հայտնվեցին պղնձի, երկաթի ու քարածուխի հանույթի նոր հանքավայրեր: Վառոդի գործարանների կարիքների համար ավելացվեց բորակի արտադրությունը: Կառուցվեցին նոր զինագործարաններ և զինվորական հանդերձանք արտադրող նոր մանուֆակտուրաներ: 1792 թ. իր գործունեությունը վերսկսեց տասնամյակներ չարունակ անգործության մատնված թուրքական առաջին տպարանը, իսկ 1795 թ. զինվորական ինժենեռական ուսումնարանին կից բացվեց նաև նոր տպարան: Այդ տպարաններում լույս տեսան թուրքերենի թարգմանված եվրոպացի, գլխավորապես ֆրանսիացի մասնագետների մի չարք աշխատություններ ռազմական գործի, մաթեմատիկայի, աշխարհագրության, աստղագիտության և այլ գիտությունների վերաբերյալ: Սուլթանը բացառիկ մեծ կարևորություն էր տալիս ռազմական ուսումնարաններին: Նա հաճախ այցելում էր այդ ուսումնարանները, զրուցում սաների հետ, ստուգում նրանց գիտելիքները, ընդունակ ուսանողներին հատկացնում էր նվերներ:

Այդ ուսումնարանի սաներից ձևավորվում էր թուրքական զինվորական մտավորականությունը, որը հետագայում պետք է խաղար կարևորագույն դեր երկրի քաղաքական կյանքում:

Սելիմ III-ի բարեփոխումներն ընթանում էին ներքին և արտաքին ճակատներում դիմադրության պայմաններում: Նոր հարկերը գյուղացիությանը և քաղաքային զանգվածներին տրամադրեցին բարեփոխումների և նրանց նախաձեռնողների դեմ: Այդ դժգոհությունը երբեմն վեր էր ածվում ապստամբության: Սուլթանը սովորություն ուներ ծպտված շրջել քաղաքում բնակչության դժգոհության պատճառները բացահայտելու համար: Հացի փոքրի մոտ լսելով ամբոխի դժգոհությունը հացի պակասի կամ նրա վատ որակի վերաբերյալ, սուլթանը անձամբ ինքն էր որոշում հացի և այլ սննդամթերքների գները և մեծ վեզիրից պահանջում էր մահապատժի ենթարկել թանկավաճառ խանութպաններին ու վաճառականներին: Կրակի վրա յուղ լցնողների դերում հանդես էին գալիս գլխավորապես մոլեռանդ հոգևորականությունն ու նահանգների անջատողական հակումներ ունեցող ավատատերերը: Վերջիններս հատկապես զայրացած էին, որ բարենորոգիչ սուլթանը ձգտում էր ամրապնդել կենտրոնական իշխանության հեղինակությունը և նրա հսկողությունը նահանգների նկատմամբ վերածել ռեալ գործոնի:

Բարեփոխումների իրականացման շրջանում ինքնագլխության ձգտող անսանձ տարրերը կրկին գլուխ բարձրացրին: Ռումելիան, օրինակ, վերածվեց այսպես կոչված Կրրջալիների ավազակային բանդաների խռովությունների ասպարեզի, որոնք այրում էին բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, կողոպտում ու թալանում էին հազարավոր մարդկանց, նրանցից շատերին սպանում կամ վաճառում գերության: Ամբողջ նահանգներ նրանք ավերում ու ամայացնում էին: Այդ բանդաների սանձարձակ խժդժությունների զոհը ավելի հաճախ լինում էր քրիստոնյա բնակչությունը: Իրենց կյանքը փրկելու համար մեծ թվով բուլղարներ լքում էին իրենց երկիրը և ապաստան որոնում հարևան երկրներում: Այդ անսանձ տարրերին աջակցում էին մի շարք ավատատեր-անջատողականներ, մասնավորապես Վիդինի այան Օսման Փազվանդ-օղլուն: Վերջինս իր տրամադրության տակ եղած ավազակային բանակի օգնությամբ իրեն ենթարկեց ողջ Հյուսիսային Բուլղարիան: Նա նույնիսկ փորձում էր իրականացնել ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Նրա գործելակերպը շատերին բերեց այն համոզման, որ այդ անսանձ ու ինքնագլուխ այանի գործունեության նպատակակետը սուլթանական գահն է:

Թեև սուլթանը մի քանի անգամ այդ վտանգավոր այանի դեմ հանեց պատժիչ զորքեր, սակայն ամեն անգամ դրանք կրում էին պարտություն և դրանով իսկ ստիպում Սելիմ III-ին սրտի կսկիծով հանդուրժել այդ անկառավարելի մարդուն: Սուլթանը ստիպված էր մեծ ջանքեր գործադրել անջատողականներին ճնշելու համար: Սուլթանին մեծ գլխացավանք էին պատճառում նաև անատոլիական այանները, որոնք նույնպես հանդես էին գալիս բարեփոխումների դեմ:

XIX դ. սկզբին Օսմանյան կայսրության բալկանյան նահանգներում՝ Բուլղարիայում, Զեռնոգորիայում և Հունաստանում, ծայր առած ազգային-ազատագրական շարժումները ևս որոշակիորեն դանդաղեցնում էին բարենորոգումների իրականացման ընթացքը: 1804 թ., օրինակ, հակաթուրքական հուժկու ապստամբություն բռնկեց Սերբիայում: Ապստամբության պատճառ էր ծառայել սուլթանական կառավարության կողմից սերբերի ինքնավարական իրավունքների ոտնահարումը, սերբ գյուղացիների ճնշման ուժեղացումը թուրք խոշոր հողատերերի կողմից, թուրքական վարչակազմի ու հատկապես ենիչերիների կամայականություններն ու վայրագությունները: Ապստամբությունն արագ տարածվեց ամբողջ Սերբիայում: Ապստամբներին, որոնց գլխավորում էր հայդուկների նշանավոր պարագլուխ Կարագեորգին, հաջողվեց գրավել մի շարք քաղաքներ, այդ թվում նաև

Բելգրադը: Իսկ 1805-1806 թթ. նրանք կարողացան նույնիսկ սուլթանական զորքերին հասցնել մի շարք խոշոր պարտություններ: 1806-1812 թթ. ընթացող ռուս-թուրքական պատերազմի ժամանակ սերբերը ստանում էին Ռուսաստանի արդյունավետ աջակցությունը իրենց մղած հակաթուրքական պայքարում:

Հակաթուրքական ելույթները չէին սահմանափակվում լոկ կայսրության բալկանյան նահանգներով: Դրանք աստիճանաբար տարածվում էին նաև այլ երկրամասերում: Օրինակ, 1805 թ. օսմանյան փոխարքայի դեմ ապստամբեցին Կահիրեյի բնակիչները, հակաթուրքական զինված շարժումներ էին տեղի ունենում Կենտրոնական Արաբիայի մի շարք շրջաններում և այլուր:

Օսմանյան պետության մեջ բարենորոգիչներին խանգարում էին նաև արտաքին քաղաքական բարդությունները: Մասնավորապես նրանց գործունեությանը նշանակալից չափով խոչնդոտ հանդիսացավ 1798-1802 թթ. ֆրանս-թուրքական պատերազմը:

Ինչպես հայտնի է, Նապոլեոն Բոնապարտը որոշել էր «վերականգնել Ֆրանսիայի տիրապետությունն Արևելքում»: Նա այն կարծիքին էր, որ Օսմանյան կայսրությունն արդեն սպառել է իրեն: Մի առիթով նա Դիրեկտորիային հայտարարել էր, որ «Մեր ժամանակներում մենք կտեսնենք նրա կործանումը»: Նապոլեոնը որոշել էր Եգիպտոսն անջատել Օսմանյան կայսրությունից և այն դարձնել Արևելքի հետ ֆրանսիական առևտրի դարպաս: Իրեն հատուկ խորաթափանցությամբ նա հասկացել էր, որ Եգիպտոսի նվաճումը և դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհների վրա հսկողության սահմանումը մահացու հարված կլինի բրիտանական կայսրության համար: Հենց այդ նպատակով Բոնապարտը ձեռնամուխ եղավ իր հայտնի եգիպտական արշավանքին: 1798 թ. հուլիսին ֆրանսիացիները գրավեցին Ալեքսանդրիան, իսկ ապա նաև Կահիրեն: 1798 թ. հուլիսի 21-ին բուրգերի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նապոլեոնը ջախջախեց մամլյուկյան հեծելազորը և հաջորդ օրը ֆրանսիական զորքերը հաղթական երթով մուտք գործեցին Կահիրե:

Այդ լուրը ցնցեց սուլթանին և նրա պալատականներին, քանի որ Ֆրանսիան հարյուրամյակներ շարունակ համարվել էր Օսմանյան կայսրության բարեկամը: Զայրույթը «ուխտադրուժ» Ֆրանսիայի նկատմամբ այն աստիճանի ուժեղ էր, որ 1798 թ. օգոստոսին Բ. Դուռը հրամայեց ձերբակալել ու բանտերը նետել Օսմանյան կայսրությունում գտնվող բոլոր ֆրանսիացիներին և բռնագրավել նրանց ունեցվածքն ու գույքը:

Անգլիական ծովակալ Նելսոնի կողմից Աբուքիրի մոտ ֆրանսիական նավատորմի ոչնչացումը փաստորեն Թուրքիան փրկեց ծովի կողմից ֆրանսիական ներխուժման վտանգից:

Քանի որ Եգիպտոսը հանդիսանում էր Օսմանյան կայսրության նահանգներից մեկը, փաստորեն Ֆրանսիան պատերազմի մեջ էր մտել նրա հետ: Սակայն Սելիմ III-ը որոշեց պատերազմ հայտարարել Ֆրանսիային միայն այն բանից հետո, երբ նա ստացավ Ռուսաստանի և Անգլիայի աջակցության խոստումը: 1798 թ. սեպտեմբերին ռուսական ռազմական նավատորմի նավերը խարիսխ նետեցին Բոսֆորի ջրերում, Կ. Պոլսի մոտ գտնվող Բյույուկդերե վայրում, որտեղ գտնվում էր ռուսական դեսպանության ամառային ռեզիդենցիան:

Ռուս նավաստիներն արժանացան բարձր զինվորական պատիվների: Սուլթանն անձամբ այցելեց ռուսական ռազմանավերը: Անցնելով Բոսֆորն ու Դարդանելը, ռուսական նավատորմը այնուհետև միացավ Թուրքական ռազմածովային ուժերին, որպեսզի միասին դուրս գան Միջերկրական ծով: Առաջին ու վերջին անգամ ռուսական արծվեկիր դրոշը փողփողում էր Թուրքական կիսալուսնի հետ: Ռուսական նավատորմի ժամանումից հետո 1798 թ. սեպտեմբերի 12-ին Բ. Դուռը հրապարակեց սուլթանական հրամանագիր Ֆրանսիային պատերազմ հայտարարելու մասին:

1798 թ. հոկտեմբեր-նոյեմբերին միացյալ ռուս-թուրք-ավստրիական նավատորմիղների ուժերով ֆրանսիացիներից ազատագրվեցին Հոնիական Կորֆու, Կեֆալոնիա, Սանտա Մաուրա, Իթակա, Զանտե, Ցերիգո, Պակսո կղզիները: 1799 թ. հունվարին դաշնակցային պայմանագրեր կնքվեցին Ստամբուլի, Ռուսաստանի ու Անգլիայի միջև: Պետերբուրգն ու Լոնդոնը Թուրքիային տալիս էին տարածքային ամբողջականության երաշխիքներ: Ի վերջո ստեղծվեց հակաֆրանսիական դաշինք, որին անդամակցում էին Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան, Նեոպոլիտանական թագավորությունը և Թուրքիան:

Մինչդեռ ֆրանսիացիների վիճակը թե՛ Եգիպտոսում, որտեղ նրանք հանդիպեցին բնակչության ուժգին դիմադրությանը, և թե՛ Միջերկրական ծովում լրջորեն վատացավ: Նախ Աբուքիրի մոտ բրիտանական ծովակալ Նելսոնը ջախջախեց ֆրանսիական նավատորմը, Նապոլեոնի բանակը կտրելով Եվրոպայից: Սակայն հենց նույն Աբուքիրի մոտ թուրքական բանակը ևս կրեց ջախջախիչ պարտություն՝ ֆրանսիացիներից: Զդիմանալով ահարկու սվինամարտին՝ փրկության հույսով թուրքերը նետվեցին ծովախորշը, որի ջրերը ծածկվեցին հազարավոր խեղդված թուրքերի չալմաներով: Սակայն

չնայած այդ հաջողությանը, ֆրանսիական բանակի վիճակը Եգիպտոսում դառնում էր օրհասական, մանավանդ որ թուրքական մի մեծ բանակ Սիրիայի վրայով շարժվելով դեպի Եգիպտոս, առանց էական կորուստների հասավ այնտեղ և տեղակայվեց Կահիրեի մերձակայքում:

Միանգամայն ակնհայտ էր, որ Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքը ձախողման է մատնվել: Մի վերջին անգամ փորձելով շտկել դրությունը՝ 1799 թ. Նապոլեոնը ցամաքային ճանապարհով իր բանակը շարժեց դեպի Սիրիա: Գրավելով Գազան և Յաֆֆան, և շարժվելով խաչակիրների հետքերով՝ Բոնապարտի բանակը դուրս եկավ Աքքա ուժեղ ամրոցի մոտ, որտեղ հանդիպեց Սիրիայի օսմանյան տեղապահ Ահմեդ փաշայի (մականվանյալ «Ջազզար» այսինքն «մսագործ» իր դաժան ու արյունախում խառնվածքի պատճառով) ուժգին դիմադրությանը: Ծովի կողմից ամրոցը պաշտպանում էր անգլիական ծովակալ Սիդնեյ Սմիթի նավատորմը: «Այս խղճուկ ամրոցում, ասել է Նապոլեոնը, ամփոփված է ողջ Արևելքի ճակատագիրը»:

Սակայն ֆրանսիացիներին վիճակված չէր գրավելու այդ «խղճուկ ամրոցը» և նրանք ստիպված էին սիրիական անապատով վերադառնալ Եգիպտոս, ճանապարհին ունենալով մեծ կորուստներ ջրի պակասության, հիվանդությունների և բեդվինների հարձակումների հետևանքով:

Այդ ձախորդությունից հետո վերջնականապես համոզվելով, որ մերձավորարևելյան իր ծրագրերը գեթ միառժամանակ իրականանալու ոչ մի շանս չունեն, Բոնապարտը բանակի հրամանատարությունը հանձնեց գեներալ Կլեբերին, իսկ ինքը 1799 թ. օգոստոսի 23-ին գաղտնի նավարկեց դեպի Ֆրանսիա:

Թեև Կլեբերին հաջողվեց նոր ջախջախիչ հարված հասցնել թուրքական զորքերին, սակայն դա իրերի դրության մեջ էական փոփոխություն չմտցրեց, մանավանդ որ Կահիրեում բռնկվեց հակաֆրանսիական ապստամբություն: Թեև տաղանդավոր ֆրանսիական գեներալին հաջողվեց համախմբել իր ուժերը և ճնշել ապստամբությունը, սակայն ֆրանսիացիների վիճակը այլևս դարձել էր անհուսալի: 1801 թ. հունիսին բարոյալքված ու նոսրացած ֆրանսիական զորքերը հանձնվեցին քաղաքը շրջապատած անգլիական ու թուրքական զորամասերին: 1801 թ. սեպտեմբերի կեսերին ֆրանսիական զորքերի մնացուկները վերադարձան հայրենիք: Թուրքերը ֆրանսիացիների վտարումը Եգիպտոսից համարեցին իրենց կողմից ձեռք բերված մեծ հաղթանակ և այդ կապակցությամբ Սելիմ III-ին շնորհվեց «ղազիի»՝

(«անհավատների նկատմամբ հաղթանակ տարած») զորավարի տիտղոս: Նա համարվեց նաև Եգիպտոսի երկրորդ նվաճող (առաջին նվաճողը Սելիմ I-ինն էր – 1517 թ.):

1802 թ. հունիսի 25-ին Ամյենում Օսմանյան կայսրության և Ֆրանսիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Եգիպտոսում վերականգնվեց օսմանյան սուլթանի ինքնիշխանությունը: Օսմանյան կայսրությունը հետ էր ստանում պատերազմի ժամանակ Եգիպտոսում ֆրանսիացիների գրաված բոլոր հողերը: Ֆրանսիան հրաժարվում էր Հոնիական կղզիների նկատմամբ հավակնություններից: Բ. Դուռը ներումն էր շնորհում ֆրանսիական բոլոր գերիներին և ֆրանսիացիներին վերադարձնում էր նրանցից առգրավված սեփականությունը: Ֆրանսիական կապիտուլյացիաները կրկին մտնում էին ուժի մեջ: Ֆրանսիական հպատակներին վերադարձվում էին այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որոնք նրանք սուլթաններից ձեռք էին բերել նախկին ժամանակներում: Բ. Դռան կողմից ֆրանսիացիները ճանաչվում էին որպես առավել բարենպաստ կարգավիճակ ունեցող ազգություն: Սևծովյան ավազանում ֆրանսիացիներին հատկացվում էին լրացուցիչ արտոնություններ ու իրավունքներ:

Դժվար չէ նկատել, որ սուլթանական կառավարությունը Ամյենի պայմանագրով խոշոր զիջումներ էր կատարում Ֆրանսիային: Առհասարակ պետք է նշել, որ ընդամենը երեքամյա ընդմիջումից հետո Ստամբուլում վերստին գերակայեց ֆրանսիական ազդեցությունը, որն անչուշտ պայմանավորված էր Նապոլեոնի տարած չչմեցուցիչ հաղթանակներով:

Թուրք-ֆրանսիական պատերազմի ավարտից հետո, Սելիմ III-ը իր բարեփոխումների ծրագրերն իրագործելիս կրկին հենվում էր Ֆրանսիայի վրա, որի հետ բարեկամական հարաբերությունները կատարելապես վերականգնվել էին, մի բան, որը նորից սկսել էր անհանգստացնել Անգլիային և Ռուսաստանին: 1806-1807 թթ. Ստամբուլում ֆրանսիական դեսպան գեներալ Հորացիոս-Ֆրանսուա Սեբաստիանին ըստ էության հանդիսանում էր բարեփոխումների գծով Սելիմ III-ի գլխավոր խորհրդականը: Նա միաժամանակ անում էր հնարավոր ամեն ինչ, որպեսզի ստիպի Բ. Դռանը Ռուսաստանի դեմ իրագործելու ռազմական ակտ: Իսկ ֆրանսիական սպա Ժյուշերո դե Սեն-Դենին դարձել էր թուրքական բանակում սակրավորների զորամասերի գլխավոր հրահանգիչը: Կառավարական տարբեր գերատեսչություններում աշխատում էին ֆրանսիական ռազմական փորձագետներ, հրահանգիչներ, ինժեներներ, վարպետներ և այլն:

Ավստրիայի նկատմամբ Նապոլեոնի տարած հաղթանակների հետևանքով 1805 թ. կնքվեց ֆրանս-ավստրիական Պրեսբուրգյան հաշտությունը, որով Ֆրանսիային էին անցնում Խորվաթիան և Դալմացիան: Դրա հետևանքով Ֆրանսիայի տիրույթները սահմանակցեցին Օսմանյան կայսրությանը: Տպավորված լինելով Նապոլեոնի այդ հաջողություններով, սուլթան Սելիմ III-ը հրապարակեց հրամանագիր, որով Բոնապարտին ճանաչում էր որպես կայսր, նրան չնորհելով «փադիշահի» տիտղոս: Միաժամանակ սուլթանը Նապոլեոնի մոտ ուղարկեց արտակարգ դեսպան, որպեսզի նրա նկատմամբ արտահայտի իր վստահությունն ու նվիրվածությունը, ինչպես նաև իր հիացումը նրանից: Որպես պատասխան քայլ, Նապոլեոնը Ստամբուլ ուղակեց իր դեսպանին, նրան հանձնարարելով սուլթանին փոխանցել իր հետևյալ խոսքերը. «Այն, ինչ որ տեղի կունենա օսմանցիների հետ, լինի դա երջանիկ կամ դժբախտ դեպք, երջանիկ կամ դժբախտ կլինի նաև Ֆրանսիայի համար»:

Ոգևորված իր հաջողություններով, 1805 թ. սուլթան Սելիմ III-ը նախաձեռնեց բոլորի համար մի անսպասելի քայլ. նա հատուկ հրամանագրով կարգադրեց նոր զինվորական ստորաբաժանումների կամ «Նիզամ-ի ջեդիդ» զորքերի համալրման համար ձեռնամուխ լինել զինվորների հարկադրական հավաքագրման: Դա պայմանավորված էր նրանով, որ թուրքերը ցանկություն չէին դրսևորում մտնելու նոր զորքերի մեջ, որը հավաքագրվում էր բացառապես կամավորական սկզբունքներով: Նրանք սովորել էին մտնել բանակի շարքերը միայն պատերազմ հայտարարելու կապակցությամբ: Բռնի մեթոդներով իրականացվող այդ «զորակոչը» անմիջապես առաջ բերեց բնակչության կտրուկ հակազդեցությունը, որը կարող էր տեղիք տալ ապստամբության: Իսկապես, ծովափնյա Թեքիրդաղ (Ռոդոստո) քաղաքում, երբ կադին ժողովրդի առջև կարդաց սուլթանի հրամանագիրը, նրան, ինչպես նաև նրա օգնականներին ենիչերիներն ու ամբոխը սպանեցին, որին հետևեց ապստամբությունը: Վախեցած Բ. Դուռը ընկրկեց և ստիպված եղավ հրաժարվել իր հախուռն նորամուծությունից:

1806 թ. գարնանից սկսած սուլթանական կառավարությունը սկսեց Ռումելիա տեղափոխել նոր կանոնավոր զորքերի ստորաբաժանումները, որոնց ընդհանուր թիվը կազմում էր մոտ 30 հազար մարդ: Երբ այդ զորքերը Կարամանի վալի Կադի Աբդուրրահման-փաշայի հրամանատարությամբ մոտեցան Էդիրնեյին, տեղական ենիչերիները խռովություն բարձրացրին սուլթանի և Բ. Դռան դեմ, թույլ չտալով, որ «Նիզամ-ի ջեդիդ» զորքերը մուտք գործեն քաղաք, և պահանջե-

լով պաշտոնազուրկ անել բարեփոխումների կողմնակից բոլոր աստիճանավորներին: Խռովարարները նույնիսկ հրետանային մարտկոցներ տեղադրեցին Էդիրնե տանող ճանապարհին: Սուլթանը տեղյակ չէր, որ իր շրջապատի մի շարք բարձրաստիճան անձինք սերտորեն կապված են ոչ միայն բարեփոխումների հակառակորդ Ռումելիայի խոշոր ֆեոդալների հետ, այլև հենց խռովարար ենիչերիների հետ: Դրանցից մեկն էր, օրինակ, մեծ վեզիր Հաֆըզ Իսմայիլ-փաշան:

Ենիչերիական խռովության մասին լուրը Ստամբուլում առաջ բերեց խուճապ, առավել ևս, որ նույնատիպ ապստամբություններ բռնկեցին նաև Ռումելիայի այլ քաղաքներում: Ապստամբած քաղաքների մզկիթներում նույնիսկ հութբայի ժամանակ դադարեցին սուլթան Սելիմ III-ի անունը հիշատակելուց: Աբդուրրահման-փաշայի շատ զինվորներ անցնում էին խռովարարների կողմը: Տարածվեցին տագնապալից լուրեր, որ ապստամբները պատրաստվում են շարժվել Ստամբուլի վրա: Վախեցած սուլթանը ընկրկեց և հրամայեց Ռումելիայից մայրաքաղաք հետ կանչել նոր կանոնավոր զորքերի ստորաբաժանումները: Սելիմ III-ը նաև ստիպված եղավ բարեփոխումների կողմնակից չեյխ-ուլ-իսլամ Ահմեդ Էսսադ-էֆենդիին պաշտոնաթող անել և նրա փոխարեն նշանակել հետադիմական Աթաուլլա-էֆենդիին, որը քիչ ժամանակ անց նրա ճակատագրում խաղալու էր չարաբաստիկ դեր: Սուլթանի և նրա կառավարության անվճռականությունն ու թուլությունը անմիջապես օգտագործվեց բարեփոխումների հակառակորդների կողմից: Բարձրագույն հոգևոր հեղինակությունները և ազդեցիկ ուլեմները սկսեցին բացահայտ կերպով քարոզել, որ սուլթանի ձեռնարկած նորամուծությունները հակասում են Ղուրանի և շարիաթի հիմնադրույթներին և վտանգ են ներկայացնում պետության կայունության ու անվտանգության համար: Ուլեմները պնդում էին, որ 1805 թ. սուլթանը վերանորոգել է Ֆրանսիայի դեմ ուղղված թուրք-ռուսական պաշտպանողական դաշինքը այն նպատակով, որպեսզի «Թուրքիայի և իսլամի հավերժական թշնամի» Ռուսաստանի հետ համատեղ ոչնչացնի հայրենիքի պաշտպան ենիչերիներին: Առհասարակ սուլթանի թշնամիները անում էին ամեն ինչ, որպեսզի զանգվածներին տրամադրեն միապետի դեմ: Օրինակ, 1806 թ. վահաբիների կողմից Մեքքայի և Մեդինայի գրավումը նրանք գնահատեցին որպես սուլթանի «հանցավոր թողտվություն»: Կամ լինելով երկրի վրա մարգարեի տեղակալ՝ Սելիմ III-ը իր վրա վերցրեց Նապոլեոնի ներկայացուցչի դերը և Ստամբուլում Բոնապարտի դեսպան Սեբաստիանիի կրծքին ամրացրեց ֆրանսիական Պատվո լե-

գիոնի չքանչանը: Սուլթանին նույնիսկ մեղադրում էին նրանում, որ նա զավակներ չուներ:

Երկրում մթնոլորտը ավելի էր չիկանում հարկերի հարաճուն աճի, կյանքի թանկացման և անգլիական գաղտնի խարդավանքների ու սադրանքների պատճառով:

1806 թ. աշնանը սկսված ռուս-թուրքական պատերազմը չեչտակիորեն թուլացրեց սուլթանի ու նրա կողմնակիցների դիրքերը: Ռազմական գործողությունները սկսվելուն պես, ընդունված ավանդույթի համաձայն, բանակը գլխավորեց մեծ վեզիր Հիլմի Իբրահիմ փաշան, որը բարեփոխումների համոզված ու ազդեցիկ կողմնակից էր: Նրա մեկնումը ռազմաճակատ ուղղակի սպառնալից վիճակ ստեղծեց սուլթանի համար, մանավանդ որ ժամանակավորապես մեծ վեզիրի պարտականությունները դրվեցին Քյոսե Մուսա փաշայի վրա, որը ոչ միայն բարեփոխումների համոզված հակառակորդ էր, այլև սուլթանի ծպտված թշնամի: Սելիմ III-ի այդ սխալը ճակատագրական եղավ նրա համար: Հենց այդ նույն Քյոսե Մուսա փաշան մի խումբ աստիճանավորների հետ միասին կազմակերպեց դավադրություն: Դավադիրների ղեկավար կազմի մեջ բացի մեծ վեզիրից մտնում էին չեյխ-ուլ-իսլամ Թոփալ Աթաուլլա-էֆենդին և սուլթանի հորեղբորորդի իշխանազուն Մուստաֆան, որը տարված էր գահը զավթելու մարմաջով: Դավադիրները իրենց առջև նպատակ էին դրել գահընկեց անել Սելիմ III-ին, գահ բարձրացնել Մուստաֆային, ոչնչացնել Սելիմի բոլոր կողմնակիցներին և վերացնել բոլոր բարեփոխումները: Հենվելով յամաքների, այսինքն օժանդակ զորքերի զինվորների աջակցության վրա, որոնք մաս էին կազմում ենիչերիական զորամասերին, ուստի և դեմ էին նոր կազմակերպված «Նիզամ-ի ջեդիդ» զորքերին, դավադիրները 1807 թ. մայիսի 25-ին սուլթանի դեմ բարձրացրին ապստամբություն: Մի քանի հարյուր ենիչերիներ, ինչպես նաև հրետանավորներ, նավատորմի զինվորներ և այլն, միացան յամաքներին և ի նշան այն բանի, որ իրենք այլևս չեն ընդունում «սուլթանի հացը», չուռ տվեցին իրենց զինվորական կերակրաամանները: Խռովությունը ակտիվ պաշտպանություն գտավ Դիվանի հետադիմականների և ուլեմների կողմից: Խռովարարները սպանեցին բարեփոխումների բազմաթիվ կողմնակիցների, նիզակների վրա ցցելով նրանց գլուխները:

Դրսևորելով կամքի թուլություն՝ ահաբեկված սուլթանը հապշտապ հրապարակեց հրամանագիր «Նիզամ-ի ջեդիդ» զորքերը ցրելու մասին: Նրա այդ քայլը, որն ամբողջապես ջուրն էր նետում իր տարիների գործը, ի վիճակի չէր փրկելու իր գահը: Սուլթանի այդ ան-

վճռականությունից ոգեշնչված խռովարարները պահանջեցին նաև մահապատժի ենթարկել թվով 11 խոշոր պետական գործիչների, որոնք նույնպես բարեփոխումների ակտիվ կողմնակիցներից էին: Դրանց ցուցակը նախապես կազմվել էր մեծ վեզիր Քյոսե Մուսա-փաշայի և նրա համախոհների կողմից և գաղտնի հանձնվել խռովարար յամաքների հրամանատար Մուստաֆա Գաբակչի-օղլուին: Սելիմը կատարեց ապստամբների այդ պահանջը ևս:

Խռովարարներին հաջողվեց ոտքի հանել ամբոխին, Ստամբուլի ողջ քաղաքային տականքներին, կյանքի պայքարում չարացած հազարավոր մարդկանց: Նրանք ստեղծեցին ինքնակոչ դատարան, դատելու համար սուլթանի այն խորհրդականներին ու վեզիրներին, որոնք աջակցում էին բարեփոխումներին:

Ընդառաջելով ենիչերիական սպաների պատվիրակության պահանջին՝ չեյխ-ուլ-իսլամ Ամթաուլլա-էֆենդին հրապարակեց ֆեթվա, որտեղ ասվում էր, որ սուլթանի կառավարությունը «մահմեդականների չրջանում տարածում էր անհավատների նիստն ու կացը» և մտադրություն ուներ ճնչելու ենիչերիներին, որոնք «օրենքի և մարգարեների ճշմարիտ պաշտպաններն են»: Ֆեթվայում այնուհետև ասվում էր, որ «ի չահ մահմեդականների կրոնի և Օսմանի տան» սուլթանը պետք է գահընկեց լինի: Իրենց հերթին ուլեմները ամբոխին տրամադրելով սուլթանի դեմ, ասում էին, որ նա բավական չէ որ «Նիզամ-ի ջեդիդ» զորքերի գաղափարը վերցրել է «գյավուրներից», այլև ցանկանում է Թուրքիայում արմատավորել քրիստոնեական կարգեր:

1806 թ. մայիսի 29-ին սուլթան Սելիմ III-ը ստիպված էր հրաժարվել գահից: Նրան բանտարկեցին «կաֆես»-ում, որտեղ նա փորձեց թույն ընդունել: Սակայն «վանդակից» նոր դուրս բերված նորանչանակ սուլթան Մուստաֆա IV-ը (1807-1808) նրա ձեռքից խլեց թույնով լի գավաթը, երդվելով, որ կպահպանի նրա կյանքը:

Սելիմի գահընկեց արվելու օրը՝ մայիսի 29-ը, ուրբաթ օր էր: Ուստի նոր սուլթանը սելամլիք (աղոթք) անելու նպատակով մեկնեց Այա-Սոֆիա մզկիթը: Հրետանային կրակոցները ազդարարեցին կայսրության նոր միապետի գահ բարձրանալու մասին: Ենիչերիներն ու յամաքները աղմկալից բացականչություններով ողջունում էին Մուստաֆա IV: Վերջինս հանդիսավոր կերպով ժողովրդին խոստացավ վերացնել «ժողովրդի բողոքի պատճառները»:

Խռովարարների ձեռքին խամաճիկ դարձած նոր սուլթանը անկարող էր կանգնեցնել խռովության ալեկոծվող տարերքը: Դեպքերին

ականատես ստամբուլահայ Արաբյանը հետևյալ կերպ է ներկայացնում մայրաքաղաքում տիրող վիճակը. «Քաղաքը գտնվում էր բիրտ ուժի սարսափի ներքո: Մարդիկ լքելով իրենց տները փախչում էին գյուղերն ու կղզիները: Ոմանք փակվեցին իրենց տներում և փողոց դուրս չէին գալիս... Մարդիկ նախանձում էին մեռածներին»:

Նոր սուլթանի ողջ ջանքերն ուղղված էին նրան, որպեսզի սիրաշահի խռովարարներին: Մինչդեռ մայրաքաղաքում սկսվել էր բարեփոխումների կողմնակիցների որսն ու անխնա մահապատիժները: Ողջ Ստամբուլով մեկ ենիչերիները որսի շների նման փնտրում էին սուլթան Սելիմի ստեղծած ֆինանսական նոր գերատեսչության ղեկավար Հաջի Իբրահիմ էֆենդիի թաքստոցի վայրը: Վերջապես նրան գտնելով՝ մայրաքաղաքի Բայազիդ հրապարակում, ամբոխի խրախճալից ճիչերի ներքո, գլխատեցին, սկզբում կացնահարելով նրա ծայրանդամները: Ձերբակալվեց և տանջալից մահվան ենթարկվեց, նաև գահընկեց արված սուլթանի անձնական քարտուղար Ահմեդ Ֆայիզ էֆենդին: Ենիչերիները իրար հետևից «էթ մեյդան» («Մսի հրապարակ») էին բերում Սելիմ III-ի կողմնակից բարեփոխիչների կտրված գլուխները: Ստամբուլը վեր էր ածվել նաև խաչվածների ու կախաղան բարձրացվածների անտառի:

Մայիսի 29-30-ի այդ դրամատիզմով լի իրադարձություններից հետո յամաքները և ենիչերիները դարձան մայրաքաղաքի դրության տերը: Նրանք վերահսկում էին գահը ստանձնած նոր սուլթանի և Բ. Դռան բոլոր գործողությունները: Երբ առանց հարցը յամաքների և ենիչերիների հետ համաձայնեցնելու Մուստաֆա IV-ը իր սեփական վճռով պաշտոնազուրկ արեց ենիչերիների փաստացի պարագլուխ չեյխ-ուլ-իսլամ Ամաուլլա-էֆենդիին, ենիչերիները բարձրացրին խռովություն և ստիպեցին Մուստաֆա IV-ին նրան վերականգնել իր պաշտոնում: Այդ դեպքից հետո սուլթանի հետ այլևս հաշվի չէին նստում: Խռովարարներների ձեռքին նա պարզապես դարձել էր խաղալիք:

2. ՄՈՒՍՏԱՖԱ ՓԱՇԱ ԲԱՅՐԱՔԹԱՐԸ ԵՎ «ՌՈՒՇՉՈՒԿՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ»

Բարեփոխումների այն կողմնակիցները, որոնց հաջողվել էր յամաքների և ենիչերիների խռովության ժամանակ կենդանի մնալ, հույսները դեռ չէին կորցրել, որ իրենց կհաջողվի գահը վերադարձնել Սելիմ III: Նրանց գլխավորն էր Ռուչչուքի (Ռուսչ) այան Մուստաֆա փաշա Բայրաքթարը: Վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նա նշանակվել էր դանուբյան բանակի սերասկեր (հրա-

մանատար) և իր տրամադրության տակ եղած զորքերով հանդիսանում էր Դանուբի ճակատում ռուսական բանակին հակակշռող գլխավոր ուժը: Հենց այդ ժամանակներից նա ստացել էր «Բայրաքթար» («Դրոշակակիր») մականունը: Դա կամային հատկանիշներով օժտված, միաժամանակ խիզախ և արտասովոր պետական ընդունակությունների տեր մարդ էր: Անցյալում եղել էր ենիչերի և նահանգային կալվածատեր: Սերտ կապերի մեջ էր եղել Ռումելիայում մեծ ազդեցություն ունեցող Ռուչչուկի այան Իսմայիլ Թերսենիգլի օղլուի հետ: Վերջինս իր կառավարման ներքո գտնվող տարածքը դարձրել էր Բ. Դոնից փաստորեն անկախ, թեև սուլթանի նկատմամբ տածում էր հավատարիմ հպատակի հակումներ: Թերսենիգլի օղլուի մահվանից հետո Սելիմ III-ի և Բայրաքթարի միջև, որը դարձել էր Ռուչչուկի այան, հաստատվել էին լավ հարաբերություններ:

Սկզբնական շրջանում Բայրաքթարը բարենորոգումների ակտիվ կողմնակից չէր: Սակայն ավելի ուշ նա անցավ բարենորոգիչների կողմը: Որպես Ռուչչուկի այան՝ նա ուներ չափազանց մեծ ազդեցություն, որն անշուշտ պայմանավորված էր նաև նրանով, որ նա իր տրամադրության տակ ուներ բավականին մեծաթիվ սեփական զորքեր:

Իր բարձրացումով Բայրաքթարը պարտական էր Սելիմ III-ին, ուստի լի էր վճռականությամբ իրագործելու պետական հեղաշրջում, որպեսզի նրան վերադարձնի իշխանության ղեկի մոտ:

Դեռևս դանուբյան բանակի հրամանատար եղած ժամանակ Բայրաքթարը եկել էր այն համոզման, որ ենիչերիական զորամասերը կատարելապես կորցրել են իրենց մարտունակությունը: Հետևաբար պետության անվտանգության համար հրատապ հարց էր դարձել լավ մարզված և կարգապահ բանակ ունենալու խնդիրը: Ուստի Ստամբուլում տեղի ունեցած խռովությունը և հեղաշրջումը նա գնահատեց որպես բանակում և երկրի հասարակական կյանքում բարեփոխումներ իրականացնելու քաղաքականության դեմ ուղղված քայլեր:

Երբ մայիսյան հեղաշրջման լուրը հասավ իրեն, Սիլիստրիայում Բայրաքթարը իր պաշտպանության տակ վերցրեց բարեփոխումների կողմնակիցներին, որոնց հետ ենիչերիները պատրաստվում էին հաշվեհարդար տեսնել: Շուտով Ռուսեում Բայրաքթարի զորակայանը դարձավ Սելիմի բոլոր կենդանի մնացած կողմնակիցների հավաքատեղին: Բայրաքթարի գլխավորությամբ այնտեղ ստեղծվեց մի գաղտնի խմբավորում, որի մասնակիցները մտադիր էին հեղաշրջման միջոցով գահը վերադարձնել Սելիմին: Այդ խմբավորումը հայտնի է «ռուչչուկյան բարեկամների» խմբակ («ռուսչուկ յարանը») անու-

նով: Հիշյալ խմբակի գործուն անդամներից էր նաև Բայրաքթարի մերձավոր խորհրդական և վստահելի անձ՝ Մանուկ Միրզայանցը, կամ ինչպես Թուրքերն էին նրան անվանում՝ Մանուկ բեյը: Բնական է, որ որպես քրիստոնյա, Մանուկ բեյը չէր կարող Թուրքական կառավարական ապարատում հավակնել բարձր պաշտոնների: Սակայն նրա ձեռքերում էին գտնվում Բայրաքթարի բոլոր ֆինանսական ռեսուրսները և նրա առևտրական գործերի բոլոր թելերը: Մանուկից էր կախված չափազանց կարևոր և նույնիսկ վճռորոշ նշանակություն ունեցող հարցը. զորքերին ժամանակին ռոճիկ վճարելը: Ի վերջո, Մանուկ բեյը չափազանց հարուստ մարդ էր, որը նրան քաղաքական շրջաններում ևս ապահովում էր հսկայական իշխանություն:

Մանուկ բեյը Սելիմ III-ի բարեփոխումների համոզված կողմնակից էր: Որպես խելոք և շրջահայաց մարդ, նա քաջ գիտակցում էր, որ բարեփոխումների ձախողումը նշանակում է ենիչերիների հաղթանակ: Այնժամ կյանքը և սեփականությունը կդրվեն սպառնալիքի տակ, ամենուրեք կսկսվի թալան ու կողոպուտ, կիշխի կամայականությունը, բռնությունն ու անիշխանությունը:

«Ռուչչուկյան բարեկամներ» խմբի անդամները գործում էին վերին աստիճանի զգույշ, երկյուղ կրելով, որ եթե սուլթան Մուստաֆա IV-ը, նրա մերձավոր աստիճանավորներն ու ենիչերիները ժամանակից չուտ տեղեկանան իրենց մտադրությունների մասին, ամենից առաջ հաշվեհարդար կտեսնեն հենց Սելիմի հետ:

1808 թ. հուլիսի 14-ի գիշերը, իր 15 հազարանոց բանակի գլուխ անցած Բայրաքթարը Ռուսեից շարժվեց դեպի Ստամբուլ: Արշավանքից մեկ օր առաջ, հուլիսի 13-ի վաղ առավոտյան, նրա զինվորներից 250 հեծյալներ Հաջի Ալի աղայի հրամանատարությամբ գաղտնաբար մոտեցան Ռումելի Ֆանար կոչված բոսֆորյան ամրոցին, որտեղ գտնվում էր յամաքների գլխավոր Կաբակչի օղլու Մուստաֆայի նստավայրը: Հաջի Ալի աղայի զինվորները անակնկալ կերպով ներխուժեցին Կաբակչիի հարեմը և սպանեցին նրան: Նրանք յամաքների ամենազոր առաջնորդի գլուխը ուղարկեցին Բայրաքթարին:

Այդ հարձակումը չչմեցուցիչ տպավորություն գործեց Մուստաֆա IV-ի և նրա վեզիրների վրա, առավել ևս, որ հուլիսի 18-ին Բայրաքթարի բանակը արդեն գտնվում էր Ստամբուլի պատերի մոտ: Հուլիսի 21-ին իր հեծյալ և հետևակ զորքի հետ մայրաքաղաք ժամանեց ինքը՝ Բայրաքթարը: Նա ներկայացավ սուլթան Մուստաֆա IV-ին, ծնկաչոք գլուխ խոնարհեց փադիշահի առջև և համբուրեց նրա ոտքերը: Սուլթանը սիրալիր վերաբերմունք ցուցաբերերց իր հպատակի

նկատմամբ: Իսկ չեյխ-ուլ-իսլամ Աթաուլլա-էֆենդին նույնիսկ այցելություն կատարեց Բայրաքթարի նստավայրը: Նույն օրը Բայրաքթարը այցելեց Բ. Դռան չենքը: Ընդ որում, սովորական ճոխ շքախմբի փոխարեն նրան ուղեկցում էին մինչև ատամները զինված երեք հազար հեծյալներ և նույնքան հետևակայիններ:

Բայրաքթարի հաջորդ գործը եղավ այն, որ նրա պահանջով սուլթանը պաշտոնանկ արեց չեյխ-ուլ-իսլամ Աթաուլլային, միաժամանակ կայսրության հեռավոր անկյուններն աքսորելով նրա համախոհ և Սելիմի ոխերիմ թշնամի մի շարք ուլեմների: Դարձյալ Բայրաքթարի պահանջով սուլթանի անունից մի շարք ակտիվ խոովարարների անունով ուղարկվեց մետաքսյա թել՝ ինքնասպան լինելու համար:

Հուլիսի 28-ին Բայրաքթարի զորքերը իրենց ամբողջ կազմով մտան Ստամբուլ: Նա այլևս կարիք չուներ իրեն ձևացնելու որպես սուլթանի «հավատարիմ հպատակ» և սկսեց գործել բաց ու վճռական ձևով: նույն օրը Բայրաքթարը գրավեց Օսմանյան կայսրության՝ Բ. Դռան (Բաբը Ալի) չենքը և պաշտոնանկ արեց մեծ վեզիր Զելեպի Մուստաֆա փաշային: Այնուհետև նա իր զորամասերի գլուխ անցած շարժվեց դեպի սուլթանի պալատը, գահի վրա Սելիմին վերականգնելու մտադրությամբ: Մինչև նրա պալատ հասնելը, Մուստաֆա IV-ը հրամայեց անհապաղ խեղդամահ անել Սելիմին և իր եղբայր իշխանազուն Մահմուդին, որոնց մահվան դեպքում ինքը կմնար որպես Օսմանի տան վերջին կենդանի ներկայացուցիչ:

Երբ Բայրաքթարը իրեն ուղեկցող զինվորներով ներխուժեց սուլթանական պալատ, Սելիմի դահիճները նրա ոտքերի մոտ նետեցին խեղդամահ արված սուլթանի դիակը «ստացիր այն սուլթանին, որին դու ուզում ես բացականչությամբ»: Դահիճները չկարողացան գտնել Մահմուդին, որը Սելիմի հավատարիմ ծառայի կողմից թաքցված էր բաղնիսի հնոցում:

Ստեղծված իրավիճակում Բայրաքթարին մնում էր միայն մեկ բան՝ գահ բարձրացնել 23-ամյա Մահմուդին, որը օսմանյան դինաստիայի կենդանի մնացած ներկայացուցիչներից միակն էր: 1808 թ. օգոստոսի 2-ին մայրաքաղաքի Էյուբ-սուլթան մզկիթում նրա մեջքին կապվեց սուլթանական սուրը և հրանոթային համազարկերի ներքո Մահմուդը հռչակվեց օսմանյան սուլթան՝ ստանալով Մահմուդ II (1808-1839) գահակալական անունը: Նա օսմանյան պետության պատմության մեջ հայտնի է «ադլի» («արդարադատ») մականունով:

Այսպիսով, «ռուչչուկյան բարեկամների» կողմից տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Բայրաքթարի ձեռքերում կենտրոնացավ պե-

տության ողջ ռազմական ու քաղաքական իշխանությունը: Նա նշանակվեց մեծ վեզիրի և միաժամանակ սերասկերի պաշտոնում: Պետության կառավարման դեկը կենտրոնացնելով իր ձեռքերում՝ Բայրաքթարը բոլոր առանցքային պաշտոններում նշանակեց իր կողմնակիցներին: Այսպիսով, իշխանությունն ամբողջապես անցավ «ռուչչուկյան բարեկամներին»: Մեծ վեզիր նշանակվելուց հետո հենց առաջին մի քանի օրվա ընթացքում Բայրաքթարը մահապատժի ենթարկեց 300 հոգու: Հետագայում Սելիմ III-ի կործանման բոլոր մեղավորներն անխտիր մահապատժի ենթարկվեցին և նրանց կտրված գլուխները ցուցադրվեցին սուլթանական պալատի պատերի մոտ: Յամաքների մայիսյան խռովության հարյուրավոր մասնակիցների նույնպես սպասում էր անողոք դատաստանը:

Տարբեր վայրերում գտնվող «ռուչչուկյան բարեկամները» կանչվեցին մայրաքաղաք և նշանակվեցին բարձր պաշտոնների: Ստամբուլ տեղափոխվեց նաև Մանուկ-բեյը, որին հանձնարարվեց գլխավորել նոր կառավարության ֆինանսների վարչությունը: Այսպիսով, խախտելով իսլամական խոչընդոտները, Բայրաքթարը Մանուկ-բեյին հնարավորություն տվեց զբաղվելու պետական գործերով: Մուստաֆա փաշան նրան չնորհեց նաև Բ. Դռան գլխավոր թարգմանչի պաշտոնը: Դա առաջին դեպքն էր, երբ այդ բարձր պաշտոնը չնորհվում էր ոչ թե ֆանարիոտ-հույնի, այլ հայի: Մանուկ-բեյը այսուհետև պարտադիր կարգով մասնակցում էր մեծ վեզիրի կողմից օտարերկրյա ներկայացուցիչների ընդունելություններին: Նա բնակություն հաստատեց Բոսֆորի ափին, Օրթաքյոյում գտնվող չքեղ վիլլայում:

Մուստաֆա փաշա Բայրաքթարը և նրա համախոհները հետևողականորեն շարունակեցին Սելիմ III-ի ռազմական բարեփոխումները, նպատակ ունենալով ստեղծել մեծաթիվ, եվրոպական ձևով մարզված և կարգապահ կանոնավոր բանակ: Միաժամանակ նրանք մայրաքաղաքում, Էդիրնեում և այլ վայրերում տեղակայված ենիչերիական զորամասերում կատարում էին զտում: Բայրաքթարի կողմից նշանակված ենիչերիական զորքերի նոր հրամանատարը՝ աղան, Էդիրնեյում, որը հանդիսանում էր ենիչերիական կամայականությունների կենտրոնը, ամեն օր մահապատժի էր ենթարկում վերջին խռովություններին մասնակից 50-ից մինչև 100 ենիչերիների:

«Ռուչչուկյան բարեկամները» Անատոլիայի խոշոր ավատական տների հետ կնքեցին «Դաշնակցային համաձայնություն» («Սենեդ-ի իթթիֆաղ»), որտեղ նշվում էր, որ «հարուստների և աղքատների, ազնվազարմ մարդկանց և հասարակ ժողովրդի ունեցվածքը հափշտակվում է ագահ կողոպտիչների կողմից, որոնց անօրինական ա-

բարքները երկրին հասցնում են հսկայական վնաս և ամայացնում են այն»: Փաստաթուղթը ստորագրողները պարտավորվում էին երաշխավորել փաղիշահի անձի ու նրա գահի անձեռնմխելիությունը, պատասխանատվություն էին վերցնում իրենց վրա պաշտպանելու կայսրության տարածքային ամբողջականությունը: «Սենեդ-ի իթթիֆաղում» հատուկ չեշտվում էր, որ աղքատների հարստահարիչները անպայման կպատժվեն: Նշվում էր նաև, որ «ռայաների ու աղքատների» վրա պետք է դրվեն չափավոր հարկեր: «Սենեդ-ի իթթիֆաղի» հիմնական նպատակն էր նահանգային ավատատերերի, սանջակների ու վիլայեթների կառավարիչների, ինչպես նաև ենիչերիական զորամասերի անվերապահ ենթարկումը կենտրոնական իշխանությանը: Ավատատերերը խոստանում էին հանդես գալ սուլթանի ներքին ու արտաքին թշնամիների դեմ: Դրա փոխարեն նրանք երաշխիքներ էին ստանում, որ կառավարությունը չի միջամտի իրենց ներքին գործերին, ի բացառյալ այն դեպքերի, երբ դա պահանջեն պետության շահերը:

Մեկ այլ հրամանագրով արգելվում էր քրիստոնյաներին անվանել «գյավուր» («անհավատ»), քանի որ, ինչպես ասվում էր հրամանագրում, «յուրաքանչյուր քրիստոնյա երկրպագում է այն նույն Բարձրյալին, որին պաշտում են նաև մահմեդականները»: Թեև ձևականորեն այդ հրամանագիրը չէր հակասում Ղուրանի դրույթներին, որն առաջնորդվում էր «ընդհանուր ու միասնական Աստծո սկզբունքով», սակայն անկասկած Օսմանյան կայսրությունում տիրապետող մահմեդական մոլեռանդության պայմաններում նման հրամանագրի հրապարակումը անօրինակ երևույթ էր: Ավելորդ չէ սակայն նշել, որ «գյավուր» բառի օգտագործումը շարունակվեց ևս ավելի քան մեկ հարյուրամյակ, ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության կործանումը:

Ուշագրավ է նշել, որ «ռուչչուկյան բարեկամները» ձգտում էին հենվել հունական ու հայկական քրիստոնյա համայնքների վերնախավի աջակցության վրա: Իրենց հերթին հայերը և հույները, որոնք կողոպտվում ու տառապում էին ենիչերիների ու յամաքների հարուցած անիշխանության ու կամայականությունների հետևանքով, համակրանքով էին լցված Բայրաքթարի նկատմամբ, որը երկաթյա ձեռքով ձեռնամուխ էր եղել կարգ ու կանոնի հաստատմանը և դաժանորեն պատժում էր բոլոր տեսակի անսանձ տարրերին: Նույնիսկ գողությունը պատժվում էր մահապատժի միջոցով: Օտարերկրյա դիտորդները Ստամբուլից հաղորդում էին, որ նոր կառավարությունը ստիպում է բոլորին «հարգել իրեն»: «Այստեղ,- գրում էին նրանք,- գլուխները կտրում են ինչպես դդում»:

Բայրաքթարի հրամանով հայկական և հունական համայնքների շրջանակում «խարաջ» հարկատեսակի գանձման իրավունքը հատկացվեց հայկական և հունական պատրիարքներին:

Հենվելով իրենց ուժի վրա՝ «ռուչչուկյան բարեկամները» ավելի եռանդուն կերպով էին իրականացնում բարեփոխումներ, քան դա տեղի էր ունենում Սելիմ III-ի ժամանակ: Գլխավոր ուշադրությունը դարձվում էր ռազմական բարեփոխման վրա: Մուստաֆա փաշան բացահայտ կերպով հայտարարում էր, որ ինքը լի է վճռականությամբ վերջնականապես վերացնելու ենիչերիական բանակը և ստեղծելու նոր, կարգապահ ու մարտունակ բանակ: Սակայն քանի որ «Նիզամ-ի ջեդիդ» անվանումը սվինների վրա էր ընդունվում ենիչերիների և առհասարակ նոր բանակի ստեղծման բոլոր հակառակորդների կողմից, ուստի որոշվեց նոր կազմակերպվելիք զորքերն անվանել «սեկբան-ի ջեդիդ»: Ընդ որում, որոշվել էր այդ նոր զորատեսակների մեջ ներգրավել նաև քրիստոնյաներին:

Սակայն գնալով խտանում էին նաև բարեփոխումների հակառակորդների շարքերը: Մոլեռանդ հետադիմական ուժերը իրենց պարտությունից հետո բավականին արագ ուշքի եկան և սկսեցին հաշվեհարդար նախապատրաստել «ռուչչուկյան բարեկամների» նկատմամբ: Այդ տարրերի գլուխ էին կանգնած, ինչպես և նախկինում ենիչերիները, որոնք ձեռնամուխ եղան ակտիվ հակակառավարական քարոզչության: Նրանց օգնում էին բազմաթիվ դերվիշներ և առհասարակ զանգվածների հետ լայն կապեր ունեցող մահմեդական հոգևորականներ: Կառավարությունից բոլոր դժգոհների ջրաղացին ջուր էր լցնում այն, որ մայրաքաղաքում սննդամթերքների գները անչեղորեն բարձրանում էին, իսկ որոշ սննդամթերքներ առհասարակ չքացան շուկաներից: Բանակը և ժողովուրդը սկսեցին զգալ հացի մատակարարումների պակաս:

Աստիճանաբար գլուխ բարձրացրին նաև բարձր հոգևորականության ներկայացուցիչները՝ ուլեմները: Բայրաքթարը, ավելի քան Սելիմը, սահմանափակել էր նրանց ազդեցությունը և նույնիսկ ականավոր հեղինակությունների նկատմամբ վերաբերվում էր արհամարհանքով: Ուլեմների շրջանում առանձնակի անհանգստություն առաջ բերեցին լայնորեն տարածված այն լուրերը, որ մեծ վեզիրը պատրաստվում է զինվորական ծառայության մեջ ներգրավել հոգևորականությանը՝ խոջաներին ու սոֆթերին:

Բայրաքթարի և «ռուչչուկյան բարեկամների» դեմ նրբին սադրանքներ էին հյուսում նաև արքունիքի բարձրաստիճան այրերը, ինչ-

պես նաև հարեմի կանայք: Նրանց գործածած ամենահատու զենքը այն էր, որ միաբերան ներշնչում էին սուլթան Մահմուդ II-ին, որ «ռուչչուկյան բարեկամների» և սուլթանի միջև կնքված այսպես կոչված «դաշնակցային պակտը» ոչ այլ ինչ է, եթե ոտնձգություն վեհապետի սուվերեն իրավունքների նկատմամբ: Աստիճանաբար բարդություններ ստեղծվեցին նաև Բայրաքթարի և Անատոլիայի դերեբեյ-ձորապետների և մասամբ նաև Ռումելիայի այանների միջև:

Ինչ վերաբերում է խավար ու մութ, նախապաշարված ժողովրդական զանգվածներին, ապա վերջինս բարեփոխումներից իր համար ոչ մի օգուտ չէր տեսնում և առհասարակ դրանք համարում էր անօգտակար ու անիմաստ մի բան: Հոգևորականները նրանց ներշնչել էին, որ «Ռումելիայի ավազակի»՝ Բայրաքթարի իրագործած նորամուծությունները վերցված են գյավուրներից և եթե դրանք չլինեին, մուսուլմանները կապրեին հանգիստ ու անհոգ կյաքով:

Բայրաքթարի անձնական վարքագիծը ևս արագորեն խտացնում էր նրա թշնամիների շարքերը: Նա քամահրանքով էր վերաբերվում պալատականների, այանների, դերեբեյների, ուլեմների և այլոց նկատմամբ, հասարակ բնակչության նկատմամբ թույլ էր տալիս դաժանություններ: Մահապատիժը նրա համար ավելի հաճախակի օգտագործվող պատժի ձև էր: Բայրաքթարը իր համար ստեղծեց չափից ավելի մեծ հարեմ, հաճախ կազմակերպում էր շռնդալից խնջույքներ, որտեղ գինին հոսում էր գետի նման, իրեն շրջապատել էր պերճանքով ու շքեղությամբ: Նրա չափից ավելի ինքնավստահությունը թույլ չէր տալիս գիտակցելու, թե ինչ վտանգներ են սպասում իրեն: Մեծ քաղաքի գայթակղությունները այդ գավառացի մարդուն ընդգրկեցին իրենց շրջապտույտի մեջ: Մուստաֆա փաշան բավականաչափ հարուստ էր, որպեսզի կարիք ունենար կաշառք վերցնելու: Բացի այդ, նա խառնվածքով ազնիվ էր: Սակայն այնպիսի նվերներից, ինչպես օրինակ գեղեցիկ վրացուհի և չերքեզուհի ստրուկներից նա չէր հրաժարվում: Դրանցից մեկին, որին անվանում էին «լուսնային ճաճանչ», նրա նախկին տերը, որը Բայրաքթարի կողմից աքսորված մի ուլեմ էր, այդ գեղեցկուհուն մեծ վեզիրի մոտ ուղարկելուց առաջ նրան հրահանգել էր. «ամենից շատ աչխատիր, որպեսզի փաշան իր վրայից հանի զենքերը»: Գեղեցկուհին ճշտիվ կատարել էր այդ հրահանգը և Բայրաքթարը, որը նախկինում նույնիսկ սուլթանի ներկայությամբ չէր բաժանվում իր զենքերից, այժմ շրջում էր անզեն, զգեստավորված մետաքսյա և քաշմիրյան թանկարժեք զգեստներով: Հետևելով իրենց առաջնորդին, Բայրաքթարի զինակիցները նույնպես

սկսեցին կրել թանկարժեք մորթիներով և ոսկյա զարդերով զգեստներ, շրջում էին հեծած զտարյուն նժույգներ, որոնց սանձերը ընդելուզված էին ոսկով և թանկարժեք քարերով: Նրանցից յուրաքանչյուրին ուղեկցում էին 50-60 թիկնապահներ, որոնք նույնպես հագնված էին թանկարժեք զգեստներ և կրում էին թանկարժեք զենքեր:

Մի խոսքով կրակե օղակը աննկատ, սակայն քայլ առ քայլ սեղմվում էր Մուստաֆա փաշա Բայրաքթարի շուրջը: Նրա թշնամիները սուտ լուրեր տարածեցին, թե իբր ռամազանի տոներից հետո «ռուչչուկյան բարեկամները» (թշնամիները արհամարանքով նրանց անվանում էին «յարան-մարան» (բառացի «ընկեր-տղերք») մտադիր են ոչնչացնել ենիչերիների զորամասը, ինչպես նաև «կրոնի և պետության» հիմք հանդիսացող բոլոր ուլեմներին: Այդ լուրերից բորբոքված ենիչերիների հրամանատարները խորհրդակցելով միմյանց հետ, որոշեցին ոչնչացնել Բայրաքթարին և նրա կողմնակիցներին:

1808 թ. նոյեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը մայրաքաղաքում բռնկեց ենիչերիների խռովություն: Այդ օրը կրոնական տոն էր՝ «նախասահմանության գիշեր» («կադիր գեջջեսի») անվամբ, երբ, ըստ ավանդության, Ալլահի կողմից Մուհամմեդ մարգարեին էր ուղարկվել իսլամի սուրբ գիրքը՝ Ղուրանը:

Բայրաքթարի համար այդ խռովությունը կատարյալ անակնկալ էր և նա բացարձակապես նախապատրաստված չէր այն հետ մղելու համար: Խռովարարների առաջին իսկ կրակոցներից հետո նրա թիկնազորի զինվորները փախուստի դիմեցին: Չհասցնելով հավաքել իր մարդկանց և կազմակերպել դիմադրություն՝ Բայրաքթարը բարիկադավորվեց այսպես կոչված «քարե աշտարակում» և 12 ժամից ավելի հերոսաբար պաշտպանվում էր, հույս ունենալով, որ իր կողմնակիցները կհասնեն օգնության: Երբ դիմադրությունը այլևս դարձավ անիմաստ, նա որոշեց թանկ գնով ծախել իր կյանքը. կրակեց վառոդով լի տակառի վրա: Հզոր պայթյունի հետևանքով աշտարակը օդ բարձրացավ, Բայրաքթարի հետ միասին վերջ տալով նաև 300 ենիչերիների կյանքին:

Այժմ հերթը զոհված մեծ վեզիրի համախոհների հետ հաշվեհարդար տեսնելն էր: Ենիչերիների արյունախում հորդաներն ու գազազած ամբոխը սկսեց «ռուչչուկյան բարեկամների» որսը: Նոյեմբերի 16-ի առավոտյան սանձից արձակված խռովարարները շարժվեցին դեպի սուլթանական պալատը, որպեսզի կրկին գահի վրա բազմեցնեն Մուստաֆա IV-ին: Երբ խռովարարները մոտեցան պալատին և ցանկություն հայտնեցին բանակցել սուլթանի հետ, վերջինս չցանա-

կացավ խոսել նրանց հետ: Սուլթանի հրամանով նոր կազմակերպված զորքերը ռազմական գործողություններ սկսեցին խռովարարների դեմ: Նրանց հետ միասին կռվում էին նաև «ռուչչուկյան բարեկամների» խմբի կենդանի մնացած անդամներ կաբութան-փաչա Ռեմիզը և Աբդուռահման փաչան իրենց մարդկանցով: Ընթանում էր բացահայտ պատերազմ պալատի և ենիչերիների միջև: Դա միանգամայն նոր երևույթ էր ենիչերիական խռովությունների պատմության մեջ, քանի որ սովորաբար բավական էր որ բռնկեր ենիչերիական խռովություն, սուլթանը անմիջապես ընդունում էր խռովարարների առաջադրած պահանջները: Սակայն այս անգամ սուլթանը որոշեց զինված պայքարի միջոցով պաշտպանել իր վեհապետական իրավունքները:

Այդ զինված ընդհարումների ընթացքում Մահմուդ II-ը հրամայեց անհապաղ մահապատժի ենթարկել իր եղբորը՝ Մուստաֆա IV-ին: Այսպիսով, Մահմուդը մնաց որպես օսմանյան դինաստիայի միակ ներկայացուցիչ: Դա կարող էր նրա համար պահպանել գահը նաև ենիչերիների հաղթանակի դեպքում:

Խռովարարների դեմ կռվող սուլթան Սելիմի ստեղծած նոր զորքերի զորամասերը, չնայած իրենց փոքրաթվությանը, չնորհիվ լավ կազմակերպվածության, կարգապահության ու արհեստավարժության, կարողացան չոչափելի հարվածներ հասնել հակառակորդին, բայց վերջնականապես նրանց ընկճել չկարողացան: Ընդամենը մեկ օրից հետո խռովությունը բռնկեց նոր ուժով: Ենիչերիներին միացան նաև տարբեր համքարությունների անդամներ, հատկապես մսագործները: Ողջ Ստամբուլով մեկ ենիչերիները, դերվիշներն ու սոֆթեները հորդորում էին մարդկանց միանալ խռովարարներին: Նրանք վազում էին փողոցներով և գոռում. «ովքեր մեզ հետ չեն, նրանց կինը փողոցային մարմնավաճառ է, իսկ ինքը՝ գյավուր»: Շուտով խռովարարների թիվը հասավ 50 հազար մարդու: Նրանք Լեվենդ-չիֆթլիքում և Ուսկյուդարում հրդեհեցին «սեքբան-ի ջեդիդ» զորքերի զորանոցները, այնուհետև սարսափելի հարայ-հրոցով կրկին շարժվեցին դեպի սուլթանական պալատ, այս անգամ Մահմուդ II-ից պահանջելով մահապատժի ենթարկել այն բոլոր անձանց, որոնց համարում էին իրենց թշնամիները: Սուլթանի կողմնակիցների ու խռովարարների միջև կրկին բորբոքվեց իսկական ճակատամարտ: Թվով չորս հազարանոց նոր զորատեսակների՝ սեքբանների գլուխ անցած, Ռամիզ փաչան հրետանային փոթորկալից կրակ սկսեց տեղալ խռովարարների վրա: Միաժամանակ նրա հրամանով Ստամբուլի խռովարար թաղամասերի վրա հրետակոծություն սկսվեց ծովի կող-

մից: Խռովարարները ընկրկեցին և որոշեցին կրկին սուլթանի մոտ ուղարկել պատվիրակություն: Այս անգամ սուլթան Մահմուդը համաձայնվեց ընդունել խռովարարների պատվիրակներին և նույնիսկ բարյացակամ վերաբերմունք դրսևորեց նրանց նկատմամբ: Խռովարարները խնդրեցին «խղճալ կանանց և երեխաներին և դադարեցնել հրետանային կրակը»: Սուլթանը պատասխանեց, որ ինքը պատրաստ է ներել ենիչերիներին, եթե նրանք հայտնեն իրենց հնազանդությունը: Սակայն հաջորդ օրը խռովությունը շարունակվեց նոր թափով: Պալատը չորս կողմից շրջապատվեց խռովարարների կողմից: Սկսեց զգացվել սննդամթերքների ու ջրի պակաս: Ուժի ճնշման ներքո սուլթանը ստիպված եղավ գնալ զիջումների: Նա հրապարակեց հրամանագիր նոր կազմակերպված զորքերը ցրելու և խռովարարներին ներումն շնորհելու վերաբերյալ: Սակայն դրանից հետո ևս, դեռևս իրենց կատաղությունից չհանգստացած ենիչերիները կրակի էին մատնում իրենց թշնամիների տները, սեքբանների զորանոցները և սրի քաշում շատերին:

Մահմուդ II-ը հարկադրված էր մոլագար ամբոխին հանձնել մի խումբ աստիճանավորների, որոնք հայտնի էին բարեփոխումների շարժմանը իրենց գործուն մասնակցությամբ: Սակայն միաժամանակ սուլթանն օգնեց փախուստի դիմելու մեծ թվով գործիչների, որոնց ենիչերիները պահանջում էին մահապատժի ենթարկել:

Այսպիսով, «ռուչչուկյան բարեկամների» պայքարը հանուն Օսմանյան կայսրության վերածննդի, ունեցավ տխուր վախճան: Դրա հետևանքները կայսրության համար չափազանց ծանր էին: Երկար տարիներ սուլթան Մահմուդ II-ը դարձավ ենիչերիների և ուլեմների պատանդը: Նա ենթակա էր ենիչերիների քմահաճ կամքին և ստիպված էր նրանց առաջին իսկ պահանջով պատժել կամ պաշտոնաթող անել իրեն հավատարիմ մարդկանց:

Սակայն միևնույն ժամանակ թեև Սելիմ III-ը և «ռուչչուկյան բարեկամները» պարտություն կրեցին, բայց նրանց կողմից սկսած շարժումը անհետևանք չմնաց: Այն բարենպաստ հող նախապատրաստեց հետագա բարենորոգչական շարժման համար:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒԴ II-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1808-1839 ԹԹ.)

1. 1806-1812 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Օսմանյան կայսրության ներքին քաղաքական զարգացումների վրա չոչափելի ազդեցություն ունեցավ 1806-1812 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմը: Այդ պատերազմի սկզբնական փուլում ռազմական գործողությունները կողմերից և ոչ մեկին հաջողություններ չբերեցին: Սակայն այդ ծանր ու մեծ զոհեր խլած թուրք-ռուսական ռազմական դիմակայության նժարը աստիճանաբար թեքվում էր դեպի Ռուսաստանի կողմը: Բուխարեստի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերին հասցնելով ծանր պարտություն, ռուսները գրավեցին Մոլդավիան և Վալախիան: 1807 թ. օգոստոսին կողմերի միջև կնքվեց զինադադար: 1809 թ. մարտին Յասսիում սկսվեցին ռուս-թուրքական հաշտության բանակցություններ, որոնք սակայն չհանգեցրին խաղաղության պայմանագրի կնքման, քանի որ կողմերի տեսակետները հաշտության պայմանների վերաբերյալ շատ հեռու էին միմյանցից: Ռազմական գործողությունները սկսվեցին ավելի մեծ թափով: 1811 թ. ամռանը և աշնանը ռուսական զորքերը ֆելդմարշալ Մ. Ի. Կուտուզովի հրամանատարությամբ Դանուբյան ռազմաճակատում թուրքերին հասցրին մի շարք խոշոր պարտություններ: Ռուսները ակնառու հաջողություններ ձեռք բերեցին նաև Սլոբաձեի և Ռուչչուկի շրջաններում, որտեղ մեծ վեզիր Ահմեդ-փաշայի զորքերն ընկան շրջապատման մեջ և ստիպված էին հանձնվել:

Ռուսական զորքերի հետ համատեղ թուրքերին հարվածներ էին հասցնում նաև օսմանյան լծի դեմ ըմբոստացած սլավոնական ժողովուրդները: Այսպես, սերբ ապստամբները, որոնք կապված էին ռու-

սական զորքերի հրամանատարության հետ և նրանից մշտապես ստանում էին օգնություն, Թուրքերի դեմ իրենց մղած վրիժառության պատերազմում ձեռք բերեցին խոշոր հաջողություններ: Հատկապես 1811 թ. հոկտեմբերին Նիշի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նրանց ձեռք բերած մեծ հաղթանակը Թուրքերին դրեց բացառիկ դժվարին վիճակի առջև:

Պատերազմի պայմաններում Թիկունքի կայունությունն ամրապնդելու նպատակով սուլթան Մահմուդ II-ը որոշեց ճնշել անհնազանդ ու անջատողական հակումներ ունեցող ֆեոդալներին: Նրա այդ քաղաքականության առաջին զոհը դարձավ Խուդավենդիգյար սանջակի Բիլեջիք քաղաքի այան Կայլոնջու Ալի-աղան, որին 1810 թ. սուլթանը հայտարարեց ֆերմանլի՝ (օրենքից դուրս), դատապարտելով մահապատժի: Նրան գլխատեցին, կտրված գլուխն ուղարկեցին սուլթանին, իսկ նրա զորքերին պատժիչները անողոք կերպով ընկճեցին: 1811 թ. սկզբներին մահացավ Անատոլիայի հզորագույն ավատական տներից մեկի ավագ ներկայացուցիչ Կարաօսման-օղլու Օմեր-աղան, որի մահը հեշտացրեց Անատոլիայի անջատողական տարրերի դեմ պայքարը:

Ռազմաճակատներում կրած պարտությունները, Թուրքական բանակի բարոյալքումը և զանգվածային դասալքությունը, Բուլղարիայում հակաթուրքական ապստամբության սպառնալիքը և այլ գործոններ ստիպեցին Բ. Դռանը հաշտության բանակցություններ սկսել Ռուսաստանի հետ: Վերջինս նույնպես կարիք ուներ խաղաղության, քանի որ սպասվում էր, որ Նապոլեոն Բոնապարտը ձեռնամուխ է լինելու արշավանքի դեպի ռուսական հողերը:

1812 թ. մայիսի 16-ին յոթ ամիս տևած ռուս-թուրքական բանակցություններից հետո Բուխարեստում կնքվեց հաշտության պայմանագիր: Բեսարաբիան անցնում էր Ռուսաստանին: Այսուհետև ռուս-թուրքական սահմանը անցնելու էր Պրուտ գետով՝ մինչև նրա միացման վայրը Դանուբի հետ: Մոլդավիան և Վալախիան վերադարձվում էին Թուրքիային, սակայն այդ իշխանությունները ձեռք էին բերում մի շարք արտոնություններ ու իրավունքներ, որոնք սահմանված էին 1791 թ. Յասսիի պայմանագրով:

Բուխարեստի պայմանագրից ամենաշատը տուժեցին սերբերը, թեև ռուսները հովանավորում էին նրանց: Չնայած այն հանգամանքին, որ պայմանագրով ներքին կառավարման հարցերում Սերբիան ստանում էր որոշ ինքնավարություն և Ռուսաստանին իրավունք էր վերապահվում վերահսկելու Սերբիային վերաբերող պայմանագրի

դրույթները, սակայն այդ բոլորը ի չիք էին դառնում ու չեզոքացվում նրանով, որ Բելգրադը և մյուս ամրությունները վերադարձվում էին սուլթանին և պետք է քանդվեին ու ոչնչացվեին այն բոլոր ամրությունները, որոնք սերբերը հասցրել էին կառուցել պատերազմին նախորդող տարիներին: Միանգամայն պարզ էր, որ Բելգրադում և Թուրքերին անցած սերբական մյուս ամրոցներում օսմանյան զորքերի առկայությունը Սերբիայի ինքնավարությունը դարձնում էին ֆիկցիա: Այդ նույն կերպ անիրական էր դառնում նաև պայմանագրով նախատեսված սերբերի համաներումը իրենց ապստամբությունների համար, որովհետև Թուրքերը հաշվի չէին նստելու այդ դրույթի հետ:

Իսկապես, Բուխարեստի պայմանագրի կնքումից հետո Թուրքերը Սերբիան վերածեցին իրենց վասալական պետության:

Բուխարեստի պայմանագրով Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև ասիական սահմանը վերականգնվում էր այն տեսքով, ինչպիսին որ այն կար մինչև պատերազմը: Ռուսաստանը պարտավորվում էր Թուրքիային վերադարձնել այն հողերի մեծ մասը, որ նա գենքով նվաճել էր պատերազմի ժամանակ: Նրա ձեռքում մնացին միայն Անդրկովկասի բոլոր տարածքները մինչև Արփաչայ (Ախուրյան) գետը, Աջարական լեռները և Սև ծովը, բացառությամբ Անապայի, որը կրկին անցավ Օսմանյան կայսրությանը:

Բուխարեստի պայմանագիրը պարունակում էր նաև զուտ քաղաքական նշանակություն ունեցող մի հոդված, որը Ռուսաստանի համար ապահովում էր Օսմանյան կայսրության չեզոքությունը նապոլեոնյան Ֆրանսիայի հետ հասունացող պատերազմում: Բուխարեստի պայմանագիրը չվերացրեց թշնամական հարաբերությունները Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև: Հետևաբար Բ. Դոան կողմից այդ պայմանագիրը հարգելու հարցը անմիջականորեն կապված էր այն բանի հետ, թե ինչ ընթացք կունենար Ռուսաստանի պատերազմը Նապոլեոն Բոնապարտի Ֆրանսիայի դեմ:

Բուխարեստի պայմանագրի թանաքը դեռ չէր չորացել, երբ սերբ բնակչության մոտ կուտակված ատելությունը Թուրք հարստահարիչների նկատմամբ ունեցավ իր հետագա պոռթկումը: Երբ լուրեր հասան Ստամբուլ, որ սերբերը կրկին ապստամբել են և գրավել մի շարք ամրոցներ, մայրաքաղաքում սկսվեցին հակասերբական ելույթներ: Սակայն պաշտոնական շրջանները, այդ թվում նաև սուլթանական պալատը և Բ. Դուռը, այդ լուրն ընդունեցին որոշակի գոհունակությամբ: Բանը նրանումն էր, որ ռուս-թուրքական պատերազմում կրած պարտությունը և տարածքների կորուստը կայսրու-

թյունում առաջ էր բերել ներքին քաղաքական լարվածություն: Անհրաժեշտ էր մի նոր հաղթական պատերազմի կամ ծայրահեղ դեպքում հաջող արշավանքի միջոցով հաղթահարել օսմանյան հասարակությանը համակած վհատությունը: Այդ օրերին սուլթանական պալատում սկսեց թևածել ռևանշի ոգին: Սուլթան Մահմուդ II-ին և Բ. Դոանը մեծապես անհանգստացնում էր այն, որ ըմբոստ սերբերի նոր ապստամբությունը կարող է վարակիչ օրինակ հանդիսանալ բալկանյան մյուս ժողովուրդների համար ևս և նրանց ոգեշնչել զինված պայքարի հանուն իրենց ազգային ազատագրության:

Օգտվելով նրանից, որ Ռուսաստանը զբաղված էր նապոլեոնյան Ֆրանսիայի հետ ծանր պատերազմով, 1813 թ. հուլիսի սկզբին սուլթան Մահմուդ II-ը հրամայեց իր բանակին ներխուժել Սերբիա և անողոք դաժանությամբ դատաստան տեսնել ապստամբների հետ: Այդ կապակցությամբ հրապարակված սուլթանական ֆերմանում ասվում էր. «Հրամայում եմ, որ դուք բոլոր ուժերն ու ջանքերը գործադրեք և Աստծո օգնությամբ ոչնչացնեք սերբ անհավատներին, որպեսզի նրանց կանանց և երեխաներին, ինչպես որ պահանջվում է սրբազան ֆեթվաների կողմից, վերածեք ստրուկների: Զավթեցեք նրանց ունեցվածքը, վերցրեք Բելգրադը և մյուս ամրոցները, որոնք անցել են նրանց ձեռքը»: Սուլթանը պահանջում էր սերբերի նկատմամբ գործել այդ կերպ մինչև այն ժամանակ, մինչև որ նրանք կդադարեցնեն ապստամբությունները և կդառնան օսմանցիների ռայան: Դա նշանակում էր, որ սուլթանը մտադիր էր սերբերին վերադարձնել այն վիճակին, որում նրանք գտնվում էին մինչև 1804 թ.: Իսկ դա Բուխարեստի պայմանագրի կոպիտ խախտում էր:

Ի պատասխան իրենց նկատմամբ իրագործվող կործանիչ պատերազմի, 1814 թ. նոյեմբերին Կենտրոնական Սերբիայի մի շարք շրջանների բնակչությունը բարձրացրեց հուժկու ապստամբություն: Թուրքերն այն ճնշեցին անագորույն դաժանությամբ: Ընդվզման մասնակիցներից շատերը գլխատվեցին կամ ցից բարձրացվեցին: Սակայն թուրքերին այնուամենայնիվ չհաջողվեց մարել «սերբական կրակը»: 1815 թ. ապրիլին ապստամբությունը բռնկեց նոր, էլ ավելի հուժկու թափով: Նրա մասնակիցների թիվը հասել էր 40 հազարի և ավելի մարդու: Թեև Բ. Դուոը ապստամբների դեմ ուղարկեց մի խոշոր բանակ մեծ վեզիրի հրամանատարության ներքո, սակայն սերբ հայրենասերները համառորեն շարունակում էին պայքարը, հակառակորդին հասցնելով չոչափելի հարվածներ:

Նման իրադրության պայմաններում Պետերբուրգում հասկացան,

որ եթե Ռուսաստանը իր ձայնը չբարձրացնի հօգուտ սերբերի, Բալկաններում ինքը կկորցնի սլավոնական ժողովուրդների պաշտպանի իր անունը և հմայքը: Ուստի ռուսական կառավարությունը վճռական տոնով Ստամբուլից պահանջեց չափավորել իր ոտնձգությունները Սերբիայի նկատմամբ և ճշտիվ կատարել Բուխարեստի հաշտության պայմանագրի Սերբիային վերաբերող կետերը: Զցանկանալով սրել առանց այն էլ լարված հարաբերությունները Ռուսաստանի հետ, Ստամբուլը ստիպված էր դադարեցնել կործանիչ պատերազմը Սերբիայի դեմ և բանակցությունների մեջ մտնել ապստամբների ղեկավարների հետ: Կողմերի միջև 1816 թ. կնքվեց համաձայնագիր, որով սերբերը ստանում էին իրենց ներքին գործերում մասնակի ինքնավարություն: Թուրքական զինվորական կայազորները չարունակելու էին մնալ սերբական ամրոցներում:

Համաձայնագիրը չարժանացավ սուլթանի հավանությանը և նա չհաստատեց այն: Համաձայնագրի ստորագրումից հետո ևս թուրքական իշխանությունները հաճախ հաշվի չէին նստում նրա հետ և ամեն քայլափոխում խախտում էին այն:

1815–1818 թթ. սուլթանական բանակը պատժիչ գործողություններ էր իրականացնում նաև Անատոլիայի ինքնագլխության ձգտող ձորապետ-դերեբեյների դեմ: Մասնավորապես խոշոր մասշտաբի ռազմական գործողություններ ծավալվեցին Տրապիզոնի, Զըլդըրի (Գյուրջիսթանի վիլայեթ) էյալեթների, Աջարիայի և Ախլցխայի սանջակների դերեբեյների, Կարահիսարի, Դիարբեքիրի, Ադանայի փաշալիքի և այլ վայրերի դերեբեյների դեմ:

2. ՀՈՒՅՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ: ՄԱՀՄՈՒԴ II-Ի ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՆԻՉԵՐԻԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Բալկանները չարունակում էին փոթորկել: 1821 թ. հակաթուրքական հուժկու ապստամբություն բռնկեց Մոլդավիայում և Վալախիայում: Ապստամբության պատճառները սոցիալական էին (հարկային լծի ուժեղացումը), ինչպես նաև ազգային-քաղաքական: Թուրքերի կողմից իրականացվող ազգային ճնշումներն ու հալածանքները լցրել էին համբերության բաժակը: Գյուղացիական այդ ապստամբության ղեկավարության գործը իր ձեռքը վերցրեց Թուդոր Վլադիմիրեսկու անունով վալախ գյուղացիական ընտանիքից սերած մեկը: Ապստամբները սկսեցին բռնագրավել կալվածատիրական հողերը և հրաժարվում էին ճանաչել թուրքական իշխանություններին:

Ստամբուլի համար դա հիանալի պատրվակ էր իր «երկաթե ձեռ-

քը» ցուցադրելու համար իրենց այդ տիրույթների մշտապես անհնազանդ ռայաներին: Սուլթանը «խռովարարների» դեմ ուղարկեց մի խոշոր պատժիչ բանակ, որը 1821 թ. կեսերին մուտք գործեց Վալախիայի և Մոլդավիայի տարածքները: Ենիչերիներին հրամայված էր ոչ ոքի չխնայել: Բուխարեստում նրանք սրի քաշեցին հազարավոր մարդկանց: Արյունոտ հաշվեհարդարը տարածվեց Դանուբի իշխանությունների ողջ տարածքի վրա: Պատժիչները սպանում էին, կախում, ցից բարձրացնում մարդկանց առանց հաշվի առնելու նրանց սեռը, տարիքը և լոյալությունը: Խախտելով 1812 թ. Բուխարեստի պայմանագրի սկզբունքները՝ թուրքերը սկսեցին պաշտոնազուրկ անել սուլթանին անհաճո գոսպոդարյաներին, ռազմակալման ենթարկեցին Մոլդավիայի և Վալախիայի տարածքները և այնտեղ տեղակայեցին իրենց զորքերին:

1821 թ. ապրիլին թուրքական տիրապետության դեմ ապստամբության դրոշ պարզեցին նաև հույները: Իր թափով և ունեցած միջազգային արձագանքով այն ամենահզորն էր XIX դարի առաջին քառորդի նմանատիպ շարժումներից: Հույների ելույթը մի քանի տարի շարունակ որոշիչ դեր խաղաց օսմանյան պետության ներքաղաքական կյանքում և միջազգային դրության մեջ: Ապստամբությունը նախապատրաստված էր հայրենասիրական-ազգայնական «Ֆիլիկի հեթերա» («Բարեկամների միություն») կոչված գաղտնի հեղափոխական կազմակերպության կողմից, որը հույն հայրենասերների կողմից ստեղծվել էր Օդեսայում 1814 թ.: 1820 թ. այդ կազմակերպության ղեկավար դարձավ ռուսական ծառայության գեներալ-մայոր, Ալեքսանդր I կայսեր համհարզ իշխան Ալեքսանդր Իպսիլանտին:

Սկզբում ապստամբության կրակը բռնկեց Մորեայում (Պելլոպոնեսում), սակայն կարճ ժամանակամիջոցի ընթացքում այն տարածվեց ողջ ցամաքային Հունաստանում և Էգեյան ու Ադրիատիկ ծովերի կղզիներում: Պահը չափազանց բարենպաստ էր ապստամբների համար, քանի որ այդ ժամանակ Բ. Դուռը իսկական պատերազմ էր մղում ինքնագլխության ձգտող Յանինի անհնազանդ ավատատեր Ալի փաշայի դեմ, որին հաջողվել էր Հարավային Ալբանիայի, ցամաքային Հունաստանի մի մասի և Մակեդոնիայի իր հսկողության տակ անցած տարածքներում ստեղծել ըստ էության ինքնուրույն ավատական իշխանություն: Փաստորեն Յանինի փաշայությունը իրենից ներկայացնում էր ալբանական ավատական իշխանապետություն, որտեղ հաստատվել էր Ալի-փաշայի անձնական բռնակալական իշխանությունը:

Հույն ապստամբներին հաջողվել էր գրավել Պատրուն (Պատ-

բաս), Կորինֆոսը, Արգոսը և մի չարք այլ քաղաքներ: Ստամբուլի համար վտանգն ահագնանում էր նաև այն պատճառով, որ ապստամբներին էր միանում մի չարք խոշոր կղզիների հույն բնակչությունը: Առհասարակ թե՛ ցամաքային և թե՛ կղզիաբնակ հույները լի էին վճռականությամբ դարերի ընթացքում թուրք-օսմանցիների կողմից իրենց արժանապատվությանն ու հպարտությանը հասցված վիրավորանքները և նվաստացուցիչ լուծը թոթափելու համար: Շարժման կարգախոսն էր «մահ թուրքերին»:

1821 թ. ապրիլին հրապարակվեց սուլթանական հրամանագիր ապստամբների դեմ ջիհադ (սրբազան պատերազմ) սկսելու մասին: Կայսրության բոլոր ծայրերն ուղարկվեցին սուրհանդակներ, որոնք պետք է տեղեկացներին մուսուլմաններին, որ գահը վտանգի մեջ է և հորդորեին, որ ով ընդունակ է զենք վերցնելու, անհապաղ մեկնի Ստամբուլ:

Շտապ կարգով գումարված Դիվանի նիստում մեծ վեզիրը հարցրեց. ինչպիսի՞ պատժի են արժանի ստրուկները, որոնք ապստամբել են մահմեդականների առաջնորդի, երկու ծովերի ու երկու մայրցամաքների տիրակալ սուլթան Մահմուդ II-ի դեմ: Դիվանի անդամները երեք անգամ բացականչեցին՝ մահվան: Վրիժառությամբ լցված սուլթանը և Բ. Դուռը քավության նոխազ դարձրին Օսմանյան կայսրության հույն բնակչությանը, անկախ նրանից, թե առհասարակ նրանք որևէ առնչություն ունեին ապստամբների հետ թե ոչ: Ամենուրեք սկսվեցին հույների նկատմամբ արյունոտ հաշվեհարդարներ: Միայն մայրաքաղաքում և Զմյուռնիայում կազմակերպված հույն բնակչության ջարդի զոհերի թիվը կազմում էր 10 հազար մարդ: Խիոս կղզու ավելի քան 100 հազար հույների մասամբ կոտորեցին, վաճառեցին ստրկության, մասամբ էլ վռնդեցին կղզուց, այն ենթարկելով սոսկալի կողոպուտի ու ավերածության:

Հույն բնակչության արյունոտ կոտորածներ կազմակերպվեցին նաև Անատոլիայում, Էգեյան ու Հոնիական ծովերի կղզիներում՝ Թեսալիայում, Մակեդոնիայում և այլուր: Սուլթան Մահմուդի հրամանով մահապատժի ենթարկվեցին նույնիսկ բազմաթիվ հույն ֆանարիոթներ, որոնք թուրքերի մոտ գտնվում էին պետական ծառայության մեջ: Ստամբուլում իր սեփական պալատի դարպասից կախաղան բարձրացվեց նաև հույների պատրիարքը: Հրամայված էր երեք օր մարմինը թողնել կախված վիճակում՝ ի տես ամբոխի, որից հետո նրա դիակը նետեցին ծովը: Թուրքերը մահապատժի ենթարկեցին նաև Ադրիանոպոլսի, Սալոնիկի և Տիրնովոյի հույն եպիսկոպոսներին, որոնք 1821 թ. ապրիլի 22-ին Զատկի օրը լուսադեմին կախաղան բարձրացվեցին:

Հույները այդ բոլորին պատասխանում էին իսկական վրիժառության պատերազմով:

Այդ օրերին հալածանքների, բռնության ու սպանությունների ենթարկվեցին նաև կայսրության այլ քրիստոնյա ժողովուրդները: Ջարդերի ալիքը եվրոպական Թուրքիայից տարածվեց նաև Անատոլիայի բազմաթիվ քաղաքներում: Թուրքական մոլեռանդ ամբոխը, ապադասակարգայնացված տարրերը, խուժանը և քաղաքային տականքները իրենց տարերքի մեջ էին: Ստացվում էր այնպիսի տպավորություն, որ խաչի և մահիկի միջև սկսվել էր ահեղ գոտեմարտ:

Ապստամբության հենց սկզբից հույները մեծ հույսեր էին կապում Արևմուտքի ռազմական օգնության հետ: Սակայն չուտով նրանք ապրելու էին դառն հիասթափություն: Մեծ տերություններից ոչ մեկը՝ ո՛չ Մեծ Բրիտանիան, ո՛չ Ավստրիան և ո՛չ էլ Ռուսաստանը, չնայած իրենց տված բազում խոստումներին, չէին պատրաստվում կռվել հանուն հույն ժողովրդի անկախության: Ավելին, կապված լինելով Սրբազան դաշինքի կաշկանդիչ կապերով և առաջնորդվելով կայսերապաշտության ու լեգիտիմիզմի («օրինականության») իրենց որդեգրած սկզբունքներով, այդ պետությունները ապստամբության հենց սկզբից միահամուռ դատապարտեցին այն, իսկ 1822 թ. Վերոնայի վեհաժողովում հրաժարվեցին հույն ապստամբներին ճանաչել որպես հեղափոխականներ: Նրանք ապստամբներին համարում էին «խռովարարներ», «ավազակներ» և այլն: Արդարև, իրավացի է այն տեսակետը, որ «հույն ժողովուրդը, բացի Թուրքերից, ուներ նաև մեկ այլ վտանգավոր թշնամի՝ եվրոպական դիվանագիտությունը»:

Սակայն անկախ մեծ պետությունների որդեգրած այդ քաղաքական կուրսից, նրանց հպատակ ժողովուրդների մոտ հախուռն թափով վերելք էր ապրում ֆիլելլինիզմի ռոմանտիկ ոգին: Եվրոպայում սկսվեց հզոր պրոհելլենական շարժում, որի կարգախոսն էր «բարբարոսների սպառնալիքներից փրկենք հունական փիլիսոփայությունը, մշակույթն ու գրականությունը»: Հերոսական էլլադային պաշտպանելու կոչերով հանդես էին գալիս Եվրոպայի լավագույն մարդիկ՝ գիտնականներ, գրողներ, բանաստեղծներ և այլն: Եվրոպայից բազմաթիվ երիտասարդ մտավորականներ, հակառակ իրենց կառավարությունների որդեգրած դիրքորոշմանը, մեկնում էին Հունաստան հանուն հույների գործի մարտնչելու նպատակով: Դրանցից մեկն էր նաև անգլիացի մեծ բանաստեղծ լորդ Բայրոնը, որը կամովին միացավ հույն հեղափոխականներին և նրանց շարքերում մաքառելով Թուրքերի դեմ՝ 1824 թ. ապրիլի 19-ին Միսոլոնգիի մոտ տեղի ունե-

ցած ճակատամարտում զոհվեց հանուն հելլենների գործի որպես ազատության մարտիկ:

1821 թ. հոկտեմբերին հնգամսյա պաշարումից հետո ապստամբները գրավեցին Մորեայի թուրքական վարչական կենտրոն Տրիպոլիս քաղաքը: 1822 թ. սկզբին համարյա ողջ Մորեան, Կենտրոնական Հունաստանի տարածքի նշանակալից մասը և հունական մի շարք կղզիներ արդեն գտնվում էին ապստամբների հսկողության ներքո:

1822 թ. հունվարին Էպիտավրոս քաղաքում գումարվեց Հունաստանի Ազգային ժողով, որն ընդունեց սահմանադրություն: Այն հռչակում էր Հունաստանի անկախությունը: Ձևավորվեց նաև անկախ Հունաստանի կառավարություն հայտնի լուսավորիչ Ալեքսանդր Մավրոկորդատոյի գլխավորությամբ: Այդ իրադարձությունները խանդավառության նոր լիցք հաղորդեցին հունական ազատագրական շարժմանը: Ապստամբության կրակը տարածվեց նաև Թեսալիայի և Մակեդոնիայի մի շարք շրջաններում:

Սուլթանի և նրա կառավարության կողմից կիրառվող դաժանությունները էլ ավելի էին բորբոքում հույներին, առաջ բերելով նրանց կատաղի դիմադրությունը: 1822 թ. հուլիսին Մահմուդ II-ը խոշոր զորամիավորումներ նետեց ապստամբության գլխավոր օջախը՝ Մորեան ճզմելու համար: Սակայն այստեղ բորբոքված կատաղի մարտերն ավարտվեցին թուրքերի պարտությամբ: Բ. Դռան համար պայքարն ապստամբների դեմ մեծապես դժվարանում էր երկրի Արևելքում Իրանի հետ սկսված պատերազմի (1821-1823 թթ.) հետևանքով, քանի որ կառավարությունը ստիպված էր խոշոր զորամիավորումներ հանել հունական ճակատից և դրանք ուղարկել Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզայի նորաստեղծ և լավ մարզված զորքերի դեմ: Իրանական բանակը ներխուժեց Օսմանյան կայսրության տարածքը, գրավեց Բայազետը (Դողուբայազիտ) և խորացավ Արևմտյան Հայաստանի տարածքում՝ միաժամանակ գրավելով Միջագետքի նշանակալից մասը Քիրքուք, Մոսուլ և այլ քաղաքներով հանդերձ: Սակայն 1823 թ. հուլիսի 29-ին Էրզրումում կնքված պայմանագրով կողմերը պահպանեցին նախապատերազմյան սահմանները:

Հունական ապստամբությունը ոչ միայն խիստ սրեց Օսմանյան կայսրության ներքաղաքական դրությունը, այլև Արևելյան հարցը նորից մտցրեց եվրոպական քաղաքականության օրակարգի մեջ: Հունական ապստամբության նկատմամբ վերաբերմունքի հարցում մեծ պետությունների հարաբերություններում աստիճանաբար դրսևորվեցին տարաձայնություններ, որոնք փաստորեն հանգեցրին Սրբազան

դաշինքի փլուզմանը: Ռուսական հասարակայնության ճնշման տակ այդ դաշինքի սկզբունքներն առաջինը խախտեց Ռուսաստանը: Պետերբուրգում համոզվել էին, որ Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների դաժան հալածանքների նկատմամբ լուռ դիտորդի իրենց որդեգրած վարքագիծը Ռուսաստանի համար կարող է ունենալ ծանր քաղաքական հետևանքներ, նրան զրկելով «Արևելքի քրիստոնյաների հովանավորի» իրենց «պատմական առաքելությունից» և դրանով իսկ հարվածի տակ դնելով Ռուսաստանի ազդեցության հարցը ողջ Բալկանյան թերակղզում: 1823 թ. գարնանը անգլիական կառավարությունը ևս նահանջեց «օրինական (լեգիտիմ) միապետների» իրավունքների անխախտության վերաբերյալ Սրբազան դաշինքի հիմնական սկզբունքներից: Անգլիան հայտարարեց, որ հույներին ճանաչում է որպես պատերազմող կողմ:

Հունաստանում չհասնելով հաջողության, Մահմուդ II-ը որոշեց դիմել իր վասալ, Եգիպտոսի կառավարիչ Մուհամմեդ Ալիի ռազմական օգնությանը, որն արդեն մեկ անգամ իր ծառայությունն էր մատուցել սուլթանին, արաբական թերակղզում ճնշելով վահաբիների հակաօսմանյան ապստամբական շարժումը: Եգիպտոսի փաշան տվեց իր համաձայնությունը, փոխարենը պահանջելով Մորեան և Սիրիան փոխանցել իր որդի Իբրահիմ փաշայի կառավարմանը:

Եգիպտական զորքերի ժամանումը Հունաստան կտրուկ փոխեց իրադրությունը: 1824 թ. նոյեմբերին Իբրահիմ փաշայի ստվարաթիվ ու մարտունակ բանակը Կրետեյում ջախջախեց հույն ապստամբներին, իսկ 1825 թ. փետրվարին գրավեց Նավարինը: Արդեն 1825 թ. ամռանը Իբրահիմի զորքերը Մորեայի մեծ մասում ճնշեցին ապստամբների հերոսական դիմադրությունը: Եգիպտական և թուրքական դաշնակցային զորքերը Հունաստանում մղում էին կործանիչ պատերազմ, իրենց չորս բոլորը տարածելով մահ ու ավեր: Իբրահիմ փաշան ձեռք էր բերել «անհավատների ոչնչացնող» անունը: Թուրք-եգիպտական զորքերը կատարում էին իսկական էթնիկական զտում, անխնա սրի քաշելով հույն բնակչությանը: Հունաստանը հայտնվել էր ոչնչացման եզրին: Հունական քաղաքներում և գյուղերում նրանց գործած վայրագությունները սարսափի ճիչ առաջ բերեցին ողջ քաղաքակիրթ աշխարհում:

Հունաստանում ռազմական գործողությունները պարզորոշ կերպով ցուցադրեցին թուրքական զորքերի, մասնավորապես ենիչերիների ծայրահեղ ցածր մարտական հատկանիշները: Սուլթան Մահմուդ II-ի արդեն վաղուց ի վեր հասկացել էր, որ ռազմական բարե-

փոխման իրականացումը պետության համար կյանքի ու մահու խնդիր է: Հունաստանում մղվող պատերազմը նրան բերել էր այն համոզման, որ ոչ մի բարեփոխում չի կարող արդյունավետ լինել, քանի դեռ ենիչերիական զորամիավորումները մեկ անգամ ընդմիշտ վերացված չեն: Վախենալով, որ ինքը կբաժանի Սելիմ III-ի ճակատագիրը, սուլթան Մահմուդ II-ը 18 տարի շարունակ ստիպված էր թաքցնել իր հղացած ծրագիրը: Այժմ կարծես թե երկրում ստեղծված քաղաքական իրադրությունը նպաստավոր էր իր մտահղացումը կյանքի կոչելու համար:

1826 թ. գարնանը սուլթանը և Բ. Դուրը հաստատեցին «էշքինջի» կոչված նոր հետևակային զորաբանակի ստեղծման նախագիծը, որն իրենից ներկայացնելու էր եվրոպական ձևով կազմավորված ու մարզված մի բանակ: Ծրագրված էր, որ սկզբնական շրջանում նրա թվաքանակը պետք է կազմված լինի 8 հազար զինվորներից ու սպաներից: Այդ նոր զորաբանակի ստեղծման նախագիծը արժանացավ նաև շեյխ-ուլ-իսլամի հավանությանը, որն այդ առթիվ հրապարակեց հատուկ ֆեթվա: Նրանում ասվում էր, որ ռազմական գործի ուսումնասիրումը հանդիսանում է մահմեդականի կրոնական պարտականությունը: Այդ առթիվ վկայակոչվում էր նաև Ղուրանը, որի սուրահներից մեկում ասվում է. «Հաղթանակի համար օգտագործեցեք այն բոլոր միջոցները, որոնք կան ձեր տրամադրության տակ»:

Մահմուդ II-ի կողմից հրապարակվեց հրամանագիր նաև այն մասին, որ ենիչերիական կորպուսը չարունակելու է իր գոյությունը. սակայն յուրաքանչյուր զորամաս պարտավոր է նոր կազմավորվող էշքինջի զորաբանակի համար իր շարքերից տրամադրել 150-ական ենիչերի-զինվոր:

Արդեն 1826 թ. ամռանը էշքինջիների ցուցակում գրանցված էին 5 հազար նորակոչիկներ, որոնք Ստամբուլում սկսեցին իրենց զինվորական մարզումները:

Սուլթանը նաև ձեռնամուխ եղավ հրետանավորների զորաբանակի թվաքանակը մեծացնելու գործին: Սուլթանի ամենահուսալի այդ զորաբանակը դառնալու էր ենիչերիներին ամենաուժեղ ու վստահելի հակակշռող ուժը: Նոր զորքերի սպայական կազմը սուլթանն ընտրում էր անձնական նվիրվածության սկզբունքի հիման վրա: Նա նոր զորքերի հրամանատար նշանակեց իրեն անվերապահորեն նվիրված, անողոք դաժանության տեր մի զինվորականի, Կարա Ջեհեննեմ Մուստաֆա փաշային, որին կնքել էին «Սև սատանա» մականունը: Ուշագրավ է նշել, որ նոր տիպի զորքերի կազմավորման վերաբերյալ

սուլթանական հրամանագրում հատուկ չեշտվում էր, որ դրանք պետք է մարզվեն և զինվորական պատրաստություն անցնեն ոչ թե օտարերկրացիների, առավել ևս քրիստոնյա հրահանգիչների, այլ լավ պատրաստություն ունեցող և ժամանակակից ռազմական արվեստին տիրապետող մահմեդական սպաների կողմից: Դրանով սուլթանն ապահովում էր նոր զորքերի ստեղծման գաղափարի պաշտպանությունը գլխավոր մուֆթիի և ուլեմների կողմից, միաժամանակ աշխատելով իր ուղղադավան հպատակների աչքում հենց սկզբից չվարկաբեկել ռազմական բարեփոխման գաղափարը:

Ենիչերիները անմիջապես կռահեցին, որ այդ բոլորն ուղղված է իրենց շահերի դեմ: Նրանք սուլթանի քաղաքականությունը գնահատեցին որպես ոտնձգություն իրենց դարավոր ավանդական արտոնությունների և իրավունքների դեմ:

Էշքինջի զորաբանակի ձևավորման մասին սուլթանական հրամանագրի հրապարակումից ընդամենը երկու շաբաթ անց, 1826 թ. հունիսի 15-ին, Ստամբուլում սկսվեց ենիչերիների խռովություն: Խռովարարների թիվը հասնում էր 10-ից մինչև 20 հազար մարդու: Նրանք կրկին չուռ տվեցին իրենց զինվորական կերակրամանները, դրանով ցուցադրելով իրենց անհնազանդությունը: Ինչպես 1807 թ. խռովության ժամանակ, ենիչերիները խոշոր խմբերով հավաքվեցին Էթ-Մեյդան հրապարակում, իսկ ապա շարժվեցին դեպի սուլթանական պալատը, ահավոր աղմուկ-աղաղակով պահանջելով սուլթանական աստիճանավորների մի քանիսի գլուխը: Ճանապարհին նրանք սկսեցին հարձակումներ գործել այն բարձր աստիճանավորների տների վրա, որոնց համարում էին ռազմական նորամուծությունների իրականացման նախաձեռնողներ: Առհասարակ իրենց ավերիչ երթի ժամանակ նրանք անխնա թալանի էին մատնում ու հրկիզում իրենց համար ատելի անձանց տներն ու պալատները:

Ենիչերիների կողմից առանձնացված հատուկ մունետիկները ողջ մայրաքաղաքով մեկ բնակչությանը կոչ էին անում միանալ իրենց: Սակայն դա ոչ միայն տեղի չունեցավ, այլև բնակչության կողմից նրանք ոչ մի աջակցություն չգտան: Ընդհակառակը, մարդիկ ենիչերիների արարքը գնահատեցին որպես հերթական խռովություն: Պարզվեց, որ առհասարակ բնակչության շրջանում արմատավորվել է այն տեսակետը, որ ենիչերիները հանդիսանում են մշտական անկարգությունների ու խռովությունների հրահրիչներ և որ Հունաստանում ռազմական խայտառակ պարտությունների միակ պատճառը հենց իրենք են:

Մահմուդ II-ը, մեծ վեզիր Մեհմեդ Սելիմ փաշան և այլն դրսևորե-

ցին մեծ վճռականություն ու կազմակերպվածություն խռովարարներին հակահարված տալու գործում:

Զորային նոր կազմավորումներից և սուլթանին հավատարիմ հրետանային զորամասերից մոտ 14 հազար զինվորներ արագորեն հավաքվեցին խռովությունը ճնշելու համար: Քաղաքացիներից մեծ թվով մարդիկ զենք ստացան և հանդես եկան Մահմուդ II-ի հավատարիմ զորքերի կողմից: Մինչդեռ ենիչերիները, որոնք վստահ էին, որ իրենց պահանջները սովորականի պես կբավարարվեն, հայտարարեցին, որ պահանջում են անհապաղ ցրել «էշքինջի» զորաբանակը և իրենց դատաստանին հանձնել այն անձանց, որոնց իրենք համարում են բարեփոխումների նախաձեռնողներ: Ենիչերիների վերջնագիրը կտրուկ ձևով մերժվեց մեծ վեզիր Սելիմ փաշայի կողմից: Սուլթանի և Բ. Դոան մունետիկները սկսեցին բնակչությանը կոչ անել ոտքի կանգնելու ենիչերիների դեմ: Շեյխ-ուլ-իսլամն իր հերթին ֆեթվա հրապարակեց, որով ենիչերիները հռչակվում էին «ֆիրմանլի», այսինքն մահվան արժանի դավաճաններ: Սուլթանը բարձրացրեց մարգարեի «սրբազան դրոշը» և բոլոր հավատացյալներին կոչ արեց համախմբվել այդ դրոշի շուրջը: Շուտով Ստամբուլի էթ-մեյդան հրապարակը, որտեղ հավաքվել էին խռովարարները, շրջապատվեց սուլթանին հավատարիմ զորքերի կողմից: Ենիչերիները հրաժարվեցին զենքը ցած դնել ու հնազանդվել: Որպես պատասխան որոտացին թնդանոթները: Դիմահար կրակով հրապարակում զոհվեցին հազարավոր ենիչերիներ: Նրանց մի մասին հաջողվեց լցվել դեպի Սերալ (սուլթանական պալատ) տանող նեղ փողոցները, սակայն այստեղ ևս թնդանոթները կրակ բաց արին պալատի կողմից, ուղղակի հնձելով խռովարարներին: Այնուհետև ենիչերիներին սկսեցին կոտորել զորանոցներում, ուր նրանք փորձում էին թաքնվել: Սուլթանի հրամանով զորանոցները կրակի մատնվեցին: Ամբողջ մայրաքաղաքով մեկ սկսվեց կենդանի մնացած խռովարարների որսը: Խռովությունը ճնշվեց մի քանի ժամվա ընթացքում: Խռովության ընթացքում սպանվեցին կամ հատուկ դատարանների որոշումով մահապատժի ենթարկվեցին ոչ պակաս քան 7 հազար ենիչերիներ, իսկ մոտ 15-20 հազար խռովարարներ արտաքսվեցին մայրաքաղաքից: Ենիչերիների զորաբանակի խորհրդանշանները հրապարակավ պղծվեցին, նրանց դրոշները պատառոտվեցին և ցեխը նետվեցին:

1826 թ. հունիսի 17-ին բարձրագույն աստիճանավորների ժողովն ընդունեց որոշում ենիչերիական զորաբանակը վերացնելու մասին: Հրապարակվեց նաև սուլթանի հատուկ հրամանագիրը ենիչերիական

օջախը բանադրանքի ենթարկելու մասին: Ենիչերի անվանումը հայտարարվեց օրենքից դուրս: Կայսրության նահանգներում ևս իշխանությունները ոչնչացրին տասնյակ հազարավոր ենիչերիների: Ենիչերիների վերջին հանգրվան դարձավ Ալժիրը, որի դեյերը (կառավարիչները) հրաժարվեցին իրագործել ռազմական բարեփոխումներ: 1830թ. երբ ֆրանսիացիները նվաճեցին Ալժիրը՝ նրանց դեմ կռվում էին ենիչերիների վերջին մնացուկները:

Սակայն զանգվածային այդ հետապնդումները չվերացրին ենիչերիական դժգոհության բոլոր օջախները: 1826 թ. հոկտեմբերին մայրաքաղաքում բռնկեց սուլթանական հրամանագրով Էչքինջի զորաբանակի մեջ մտցված ենիչերիների խռովությունը: Խռովարարները Մահմուդ II-ին հռչակեցին «գյավուր-փադիշահ»: Այս անգամ ևս խռովարարների հետ հաշվեհարդարը տեղի ունեցավ արագ ու վճռականորեն: 800 մարդու մահապատժի ենթարկեցին, իսկ ավելի քան 2 հազար հոգու աքսորեցին Անատոլիայի խորն ընկած շրջանները:

Այսպիսով ոչնչացվեց այն ահավոր ռազմական ուժը, որը հինգ դարերի ընթացքում ահաբեկում ու տեռորի էր ենթարկում Եվրոպան, ապա սեփական սուլթաններին: Սուլթան Մահմուդն ազատվեց կայսրության ներսում զինված ընդդիմությունից: Ենիչերիական զորաբանակի վերացման պատմական նշանակությունը կայանում էր նրանում, որ այսուհետև երկրի ոչ միայն ռազմավարչական, այլև հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում ստեղծվում էին ավելի բարենպաստ պայմաններ բարեփոխումներ իրականացնելու համար:

Ենիչերիական զորաբանակի վերացումից հետո հերթը հասավ նաև օսմանյան ավանդական մյուս զինվորական կազմակերպություններին: Սուլթանը վերացրեց յամաքների ստորաբաժանումները, ինչպես նաև սիփահիական հեծելազորը, կամ ինչպես այն հաճախ անվանում էին «սուվարի օջախը»: Նրան փոխարինելու էր ֆրանսիական ձևով կազմավորված ու մարզված կանոնավոր հեծելազորը: Այդ երկու զինվորական կազմավորումները ենիչերիների զորաբանակի նման, հանդիսանում էին խռովությունների մշտական աղբյուր և ցանկացած ռազմավարչական բարեփոխման կամ պարզապես նորամուծության դեմ հակազդող ուժ:

Սուլթանը համարձակվեց նաև ձեռք բարձրացնել մուսուլմանական հզոր դերվիշական «Բեքթաշի» միաբանության նկատմամբ, որի հետ ենիչերիների զորաբանակը կապված էր դարավոր կապերով, սկսած XIV դարի 60-ական թվականներից: Հաճախ հենց այդ մա-

բանությունն էր ենիչերիներին մղում խռովությունների: 1826 թ. հուլիս-օգոստոս ամիսներին միաբանության ղեկավարները հրապարակորեն մահապատժի ենթարկվեցին, դերվիշների կացարանները և աղոթատեղիները («թեքքե») ավերվեցին, միաբանության գույքն ու ունեցվածքը բռնագրավվեց հօգուտ գանձարանի: Դերվիշների մեծ մասը աքսորվեց Անատոլիայի ներքին շրջանները: Բեքթաշի միաբանությունը մեղադրվեց անաստվածության մեջ, իսկ նրա անդամները հայտարարվեցին հարբեցողներ, անբարոյական վարքի տեր և այլն: Վերացնելով Բեքթաշի միաբանությունը, Մահմուդ II-ը ոչնչացրեց այդ ռազմաչունչ կրոնական կազմակերպությունը, որը մշտապես արգելքներ ու դժվարություններ էր հարուցում սուլթանի բարենորոգչական նախանշումների ճանապարհին: Այնուհետև սուլթանի հրամանով մայրաքաղաքից արտաքսվեցին ամեն տեսակի «անհանգիստ մարդիկ»՝ առանց վերադարձի իրավունքի: Սուլթանը հրամայեց հայոց պատրիարքին գավառներից մայրաքաղաք տեղափոխել 10 հազար հայերի, վտարվածների տեղը զբաղեցնելու համար: Սուլթան Մահմուդ II-ը վերականգնեց ավտոկրատիան, որը գոյություն ուներ առաջին սերունդների օսմանյան սուլթանների ժամանակ: Նա բռնատիրական միջոցներն օգտագործեց հանուն մի նպատակի իրագործման, այսինքն բարեփոխումների իրականացման, որն իր էությամբ առաջադիմական էր: Ի վերջո նրա նպատակն էր կայսրությանը հաղորդել նոր մղում և կանգնեցնել անկումը: Միանգամայն ակնհայտ է նաև, որ Մահմուդ II-ի ժամանակ օսմանյան բանակը հանդես եկավ ճգնաժամային իրադրությունը կարգավորողի դերում:

Ոչնչացնելով ռազմական ու սոցիալ-կրոնական հիմնական հաստատությունները, որոնք խոչընդոտ էին ռազմական բարեփոխում իրականացնելու ճանապարհին, Մահմուդ II-ը մեծագույն եռանդով ու հետևողականությամբ շարունակեց Սելիմ III-ի անավարտ մնացած գործը: Նրա գործունեության հիմնական նպատակը դարձավ ռազմական բարեփոխումը իր ավարտին հասցնելը: Հրապարակվեցին հրամանագրեր սիփահիների զորամասերը վերացնելու վերաբերյալ: Կայսրությունում գոյություն ունեցող մնացած զորատեսակները՝ «ջեբեջ-ի», «բոստանչի», «թոփչու», «գումբարաջի», «լաղըմջի» և այլն վերակազմակերպվեցին եվրոպական տիպի զորամասերի: 1826 թ. հունիսի 17-ին սուլթանը հրապարակեց հրամանագիր նոր հետևակային (ռեդիֆային) կանոնավոր զորամասեր ստեղծելու վերաբերյալ, որը կոչվելու էր «հաղթական մահմեդական բանակ»: Հրամանագրում շեշտվում էր, որ այդ բանակը պետք է լինի կարգա-

պահ, մարտունակ և չարժուն: Նախատեսված էր ձևավորել այդ նոր զորքերի ութ գնդեր 12 հազար մարդ թվաքանակով: Նրա ուսուցման ու մարզումների համար օգտագործվելու էին օտարերկրյա հրահանգիչներ, առաջին հերթին ֆրանսիացի սպաներ: Գիտակցելով զինվորական մասնագետների սեփական կադրեր ունենալու կարևորությունը, Մահմուդ II-ը Թուրք երիտասարդների մի մեծ խումբ ուղարկեց Ֆրանսիա՝ զինվորական ինժեներական ու բժշկական ուսումնական հաստատություններում ուսանելու համար: Միաժամանակ Թուրքական բանակում ծառայելու համար հրավիրվում էին օտարերկրացի՝ ավստրացի, ֆրանսիացի, պրուսացի և այլ երկրներից սպաներ: Թուրք սպաների պատրաստման համար որոշվեց հիմնել բարձրագույն զինվորական դպրոց՝ մեքթեբ-ի հարբիե, որի բացումը տեղի ունեցավ 1835 թ.:

Սուլթանը երիտասարդ պրուսացի սպա Հելմութ ֆոն Մոլթկեին նշանակեց կայսրության պաշտպանության հարցերի գծով խորհրդական, ինչպես նաև զորքերի կազմակերպման ու նրանց մարտական պատրաստության հրահանգիչ: Դրանով սկզբնավորվում էր գերմանական ավանդույթների արմատավորումը Թուրքական բանակում: Սուլթանը ձեռնամուխ եղավ ստեղծելու նաև նոր ռազմական նավատորմ, սակայն այդ բնագավառում նրան չհաջողվեց ձեռք բերել ակնառու հաջողություններ:

Բանակի ղեկավարման գործը կատարելագործելու նպատակով Մահմուդ II-ը սահմանեց սերասկերի պաշտոնը, որը մեկ անձի մեջ միավորում էր գլխավոր հրամանատարի և ռազմական նախարարի պաշտոնները, հատուկ պատասխանատվություն կրելով նաև նոր զինված ուժերի համար: Սերասկերի ինստիտուտը իրականացնում էր կենտրոնացված հսկողություն Օսմանյան կայսրության ողջ զինված ուժերի նկատմամբ: Սերասկերի վրա ընկած էր նաև պատասխանատվություն հասարակական անվտանգության համար, ներառյալ նաև Ստամբուլում ոստիկանական ֆունկցիաների իրագործումը:

Սուլթանի հրամանով բոլոր բանակ զորակոչվածները պետք է ծառայեին 12 տարի: 1831 թ. անց կացվեց բնակչության մարդահամար, որի նպատակն էր պարզել զորակոչային տարիքի երիտասարդության, ինչպես նաև հարկատուների ստույգ թվաքանակը: Մարդահամարի նպատակն էր նաև հարկահանության գործի կարգավորումը:

Գնալով սուլթանը ընդլայնում էր իր բարեփոխումների շրջանակը: Դեռևս 1821 թ. նրա հրամանով ռեյիս-ուլ քյութթաբի գրասենյակին կից ստեղծվեց Թարգմանիչների բյուրո (Թերջյուման օդասը), ո-

րի խնդիրն էր մահմեդական թարգմանիչների պատրաստումը, քանի որ մինչ այդ օտարերկրյա պետությունների հետ շփումները և ողջ գրագրությունը իրականացվում էր սուլթանի հպատակ քրիստոնյաների, մասնավորապես հույների և հայերի կողմից: Թարգմանիչների բյուրոյի խնդիրն էր նաև եվրոպական (գլխավորապես ֆրանսիական) լավագույն ձեռնարկների թարգմանությունը ռազմական գործի վերաբերյալ: Բյուրոյի գործունեությունը նպաստեց օտար լեզուներին տիրապետող ազգային կադրերի պատրաստմանը:

Մահմուդ II-ը իրականացրած կարևորագույն բարեփոխումներից մեկն էր նաև թիմարային համակարգի վերացումը, որը XIX դ. սկզբին գտնվում էր կատարյալ անկման վիճակում, վերածվելով երկրի զարգացման ճանապարհին լուրջ արգելքի: 1831 թ. սուլթանի հրապարակած հրամանագրով ավատատեր ֆեոդալները զրկվում էին իրենց ավատներից՝ թիմարներից և զեամեթներից: Թիմարային կալվածքները վերադարձվում էին պետական հողային ֆոնդ և վարձակալության սկզբունքով հանձնվում էին գյուղացիներին: Այսպիսով, մեկ անգամ ընդմիշտ թիմարային համակարգը վերացվեց, թեև դրանից հետո ևս Անատոլիայի և Ռումելիայի առանձին վայրերում այդ հին համակարգը դեռ շարունակում էր գոյություն ունենալ:

1834-1839 թթ. բարեփոխիչ-սուլթանը քայլեր ձեռնարկեց, որոնք ուղղված էին կենտրոնական իշխանության նոր ճկուն մարմիններ ստեղծելուն: Կյանքի կոչվեցին ներքին և արտաքին գործերի և ֆինանսների նախարարությունները: 1837 թ. ստեղծվեց մինիստրների խորհուրդ:

Դասեր քաղելով պատմությունից, Մահմուդ II-ը որոշեց սահմանափակել բարձր հոգևորականության՝ ուլեմների իշխանությունը: Սուլթանը չէր մոռացել, որ Սելիմ III-ին կործանեցին հենց ուլեմները, ոչնչացնելով ու գերեզման ուղարկելով նաև նրա բարեփոխումների ծրագրերը, որոնք ուղղակիորեն չոչափում էին ուլեմների շահերը: Սուլթանի հրամանով մեծ մուֆթին կամ շեյխ-ուլ-իսլամը, որը նախկինում ինքնավար ու լայն իրավունքների տեր էր և ինչպես ինքը, այնպես էլ նրա մոտ ծառայողները կատարելապես անկախ էին արքունիքից, դառնում էր սովորական պետական աստիճանավոր և աշխատավարձ էր ստանալու պետական գանձարանից: Այսուհետև շեյխ-ուլ-իսլամը զրկվում էր պետության աշխարհիկ գործերին մասնակցություն բերելու իրավունքից և պարտավորվում էր զբաղվել միայն կրոնական հարցերով: Նրա նոր կարգավիճակը սահմանափակում էր այն ինքնավարությունը, որի համաձայն իր և իր ենթականե-

րի եկամուտները, ինչպես նաև նրա ենթակայության տակ գտնվող հիմնարկությունները նախկինում կատարելապես անկախ էին և կախում չունեին արքունիքից: Ուլեմներին զրկելով ինչպես ֆինանսական, այնպես էլ վարչական ինքնուրույնությունից, միապետը ոչ միայն կրճատում ու նվազեցնում էր նրանց ստատուսը և պատասխանատվության ոլորտը, այլև նրանց զրկում բարեփոխումներին ակտիվորեն դիմադրելու հնարավորությունից: Դրանով իսկ չեյխ-ուլ-իսլամի ինստիտուտը դառնում էր սուլթանին հլու հնազանդ մի կառույց: Դա նաև նշանակում էր, որ կրոնական իշխանությունը անջատվում է քաղաքացիականից:

Մահմուդ II-ը ձեռնամուխ եղավ նաև կրթական համակարգի բարեփոխմանը: Կրոնական դպրոցներում՝ մեդրեսեներում տրվող կրթությունը սահմանափակվում էր լոկ «իսլամի սրբազան օրենքների» ուսումնասիրությամբ: Ընդ որում, այդ գիտելիքները ուսուցանվում էին բանավոր ձևով, որի անխուսափելի հետևանքն էր հանդիսանում համատարած անգրագիտությունը: 1824 թ. սուլթանը տարրական կրթությունը դարձրեց պարտադիր: Սակայն այն նախկինի պես շարունակում էր մնալ կրոնական շրջանակներում: 1838 թ. սուլթանի և նրա համախոհների նախաձեռնությամբ կազմվեց հատուկ զեկուցագիր, որտեղ խոսվում էր տարրական կրթության բարեփոխման հույժ անհրաժեշտության մասին:

Մահմեդական հոգևորականության դիրքերը նշանակալիորեն թուլացան այն պատճառով, որ դպրոցները հանվեցին նրանց իրավասության շրջանակներից և դրվեցին նոր ձևավորված կրթության նախարարության իրավասության տակ: 1840 թ. Օսմանյան կայսրությունում բացվեց առաջին աշխարհիկ դպրոցը՝ ոյուշթիեն: Աշխարհիկ դպրոցները առավելապես կոչված էին պատրաստելու ապագա զինվորական կադրեր:

1827 թ. բացվեց տեխնիկական կադրեր պատրաստելու դպրոց՝ որը կոչվեց «Մյուհենդիսխանե»: Դասավանդումը իրագործվում էր ֆրանսիական դասագրքերով և թուրքերեն լեզվով: Դպրոցի շրջանավարտները ստանում էին «մանսուր-ե մյուհենդիսլերի» (զինվորական ճարտարագետների) որակավորում: Նույն 1827 թ. հիմնադրվեց ռազմա-բժշկական առաջին ուսումնարանը:

Դատա-իրավական գործը հանձնվեց նորաստեղծ արդարադատության նախարարությանը, հոգևորականությանը զրկելով ոչ միայն ուժի և իշխանության հսկայական լծակներից, այլև ֆինանսական վիթխարի աղբյուրներից: Դա դեռ բոլորը չէր: Մահմուդը պե-

տության հսկողության տակ դրեց նաև հին իսլամական վաքֆերի՝ այսինքն՝ մզկիթներին և հոգևորականությանը պատկանող հողերի ու կալվածքների ինստիտուտը, որը հնուց անտի օգտվում էր հարկային իմունիտետից և առհասարակ արտոնյալ մի կառույց էր: Վաքֆերը հանդիսանում էին կրոնական ինստիտուտների տնտեսական հզորության աղբյուրներ:

Սուլթան Մահմուդ II-ը սկսեց զբաղվել նաև քաղաքացիական վարչության և պետական հիմնարկությունների վերակառուցման գործով: Նա, օրինակ, ձեռնամուխ եղավ կենտրոնական իշխանության նոր մարմինների կազմակերպմանը, որոնք համահունչ էին եվրոպական համակարգին: 1838 թ. սկսած մեծ վեզիրին կամ ինչպես այլ կերպ նրան անվանում էին՝ սադրազամին, սկսեցին կոչել «բաչ վեքիլ», որը համազոր էր վարչապետի պաշտոնին (հետագայում մեծ վեզիրի նախկին անվանումը տիտղոսի հետ միաժամանակ վերականգնվեց): 1834 թ. ստեղծվեցին նահանգային նոր վարչական միավորներ, կարգավորվեցին կենտրոնական ու նահանգային իշխանությունների հարաբերությունները: Նահանգներում բարեփոխման ենթարկված կառավարման մարմինները կատարյալ կախվածության մեջ դրվեցին կենտրոնական կառավարությունից: 1827 թ. Մեքքա և Մեդինա սրբազան քաղաքների պահապան (հարեմեյն մուքադասի նազիրի) Քեչեչիզադե Իզզեթ մոլլան կազմեց և սուլթանին ներկայացրեց լյահիա (զեկուցագիր) պետական ապարատի բարեփոխումների վերաբերյալ: Նրանում խոսվում էր պետության մեջ կաշառակերությունը վերացնելու մասին, առաջարկվում էր լուրջ ուշադրություն դարձնել հանքերը շահագործելու, առևտուրը խրախուսելու, մահմեդականներին ստիպելու, որ զբաղվեն առևտրով և այլն: Լյահիան առաջարկում էր պայքար ծավալել այնպիսի սոցիալական աղետների դեմ, ինչպիսիք էին աղքատությունը և թափառաշրջիկությունը: Մահմուդ II-ի կենդանության օրոք բացվեց քաղաքացիական աստիճանավորների պատրաստման դպրոց, որոնցում հիմնարար ձևով դասավանդվում էին օտար լեզուներ և որոշ ճշգրիտ գիտություններ:

Մահմուդ II-ը հիմնարար նորույթներ մտցրեց նաև օրենսդրության բնագավառում, թեև նրա պետության օրենքները նախկինի պես խարսխված էին մուսուլմանական իրավունքի՝ շարիաթի սկզբունքների վրա: Այլ կերպ ասած, մարդկանց մասնավոր կյանքում իսլամի «սրբազան օրենքը»՝ շարիաթը և նրա հետ կապված ավանդույթները (հադիսները) նախկինի պես շարունակում էին մնալ որպես անվիճելի իրողություններ: Սուլթանն արմատավորեց օրենքնե-

րի մի նոր ժողովածու, որը կոչվեց «Ադելեթ» (արդարադատություն): Հենց այդ պատճառով սուլթանը ստացավ Ադլի «արդարադատ» տիտղոսը: Օրենքների այդ ժողովածուում որոշվում էին նաև դատավորների պատասխանատվության չափանիշները: Նրանցում նախատեսվում էին խիստ պատիժներ ու տուգանքներ կաշառակերության և կոռուպցիայի այլ ձևերի համար: Հստակ տարանջատում էր մտցվում քրեական ու քաղաքացիական, աշխարհիկ և կրոնական, մասնավոր ու հանրային իրավունքների միջև: Ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ ամուսնությանն ու ամուսնալուծությանը, սեփականության ու ժառանգական իրավունքին, կանանց ու ստրուկների կարգավիճակին վերաբերող օրենքներում: Այդ հարցերում կրոնը և նրա սկզբունքները շարունակում էին մնալ որպես օրենքի հիմք, որը սուլթանը անկարող էր փոփոխության ենթարկել: Ընտանեկան շրջապատում մարդիկ նախկինի պես շարունակում էին ապրել միջնադարում: Սակայն օսմանների պետության մեջ կյանքի ավելի լայն առումով միջնադարյան ավանդույթները սկսել էին քայքայվել: Մահմուդ II-ը վերացրեց «մյուսադերե» կոչված համակարգը, երբ պետության նկատմամբ մեղք գործած, անհնազանդություն դրսևորած կամ ապստամբած աստիճանավորների շարժական և անշարժ ունեցվածքը բռնագրավվում էր հարքունիս՝ ենիչերիական զորքերի ծախսերը հոգալու համար: Հայտարարվեց, որ այսուհետև «մյուսադերեն» չի կիրառվելու ինչպես մուսուլմանների, այնպես էլ ռայաների նկատմամբ: Որ մահացածների ունեցվածքը այսուհետև բաժանվելու է նրանց ժառանգորդների միջև: Ըստ այնմ, 1826 թ. հունիսի 30-ին հրապարակված հրամանագրով վերացվեց նաև գույքի բռնագրավումների գծով զբաղվող հատուկ դրասենյակը: Պետք է նշել նաև, որ մյուսադերե համակարգը շարունակում էր գործել նրա ձևական վերացումից հետո ևս: Օրինակ, 1828 թ. կեղծ մեղադրանքով մայրաքաղաքից Անատոլիայի ներքին շրջաններն արտաքսվեցին մոտ հազար ունևոր հայեր, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվեց հօգուտ գանձարանի:

Մահմուդ II-ի կառավարման տարիներին սկսեցին հրատարակվել նաև առաջին թուրքական կառավարական թերթերը, սկզբում ֆրանսերեն լեզվով, իսկ ապա նաև թուրքերեն: Մի շարք խոշոր քաղաքներում հայտնվեցին եվրոպական տիպի հիվանդանոցներ, ստեղծվեց փոստային ծառայություն (1834 թ.) և այլն:

XIX դ. 30-ական թվականներին Թուրքիայում բարձրագույն կրթությունը ըստ էության սահմանափակվում էր զինվորական կրթության շրջանակներում: Բանակը կարիք ուներ կրթված ու գիտակ

սպայական կազմի: Ծովային և բանակային ճարտարագետների երկու դպրոցները, որոնք բացվել էին XVIII դ. վերջին, նորացվեցին ու դրվեցին ժամանակակից հիմքերի վրա: 1827 թ. հակառակ լուրջ առարկությունների, սուլթանը Փարիզ ուղարկեց մի խումբ ուսանողների: Մահմուդը հիմնեց ռազմական գիտությունների մի դպրոց, որի համար օրինակ ծառայեց Նապոլեոնի կողմից Փարիզում հիմնադրած Սեն-Սիր ռազմական ակադեմիան: Այդ դպրոցը խոշոր ներդրում ունեցավ թուրքերի ապագա սերունդների դաստիարակման գործում: Այդ նույն ժամանակ ռազմական նվագախմբերի համար երաժիշտներ պատրաստելու նպատակով սուլթանը հիմնադրեց թագավորական երաժշտական դպրոց, որտեղ աշխատում էր Դոնիցետտի փաչան, իտալացի մեծ երգահանի եղբայրը:

Բացվեց նաև բանակի համար բժիշկներ պատրաստող հատուկ դպրոց: Եվրոպական լեզուներից, հատկապես ֆրանսերենից, սկսեցին թուրքերեն թարգմանել բժշկության վերաբերյալ մասնագիտական գրականություն: Եվրոպական երկրների պատմության, գրականության, մշակույթի և գանազան գիտությունների ուսումնասիրման համար սկսեցին սովորել ֆրանսերեն: Թուրք երիտասարդությունը դեռևս ոչ վարժ, սակայն սկսեց խոսել այդ լեզվով: Ֆրանսիական գրականությունը գալիս էր փոխարինելու կայսրությունում ավանդաբար լայն տարածում գտած պարսկական գրականությանը: Սուլթանը անձամբ լուծեց գոյություն ունեցող լեզվական անջրպետը, արտաքին գործերի մինիստրությունում հիմնադրելով «թարգմանիչների բաժիններ», որոնք հետագայում վերածվեցին օտար լեզուների դպրոցի:

1834 թ. սկսած վերածնելով Սելիմ III-ի անավարտ մնացած ծրագրերը՝ Մահմուդը սկսեց Թուրքիայի դեսպանություններ բաց անել եվրոպական գլխավոր մայրաքաղաքներում: Առհասարակ պետք է նշել, որ Մահմուդ II-ի կողմից իրականացվող բարեփոխումները վերաբերում էին նաև դիվանագիտությանը: Եվրոպայում դեսպանությունների հիմնումը նշանակում էր, որ սուլթանական կառավարությունը ցանկություն ունի եվրոպական պետությունների հետ ունենալ մշտական դիվանագիտական հարաբերություններ: Մինչ այդ, Բ. Դռան արտաքին քաղաքական հարաբերությունները օտարերկրյա պետությունների հետ սահմանափակվում էր կարճաժամկետ թուրքական դեսպանություններով, որոնք եվրոպական միապետներին տեղեկացնում էին կարևորագույն իրադարձությունների մասին:

Օտար լեզուների չիմացությունը, սուլթանի ներկայացուցիչների

մոտ եվրոպական կրթության բացակայությունը և այլ գործոններ ունենում էին այն հետևանքը, որ դեսպանների հաշվետվությունները վերին աստիճանի մակերեսային էին ու պարզունակ, ուստի և մեծ արժեք չէին ներկայացնում: Դիվանագիտական շփումների այդ ձևի հետևանքով, թուրքական կառավարությունը բավարար չափով պատկերացում չուներ եվրոպական պետությունների կյանքի ու քաղաքականության վերաբերյալ: Ֆ. Էնգելսը նշում էր, որ մինչև 1821 թ. հունական ապստամբությունը Թուրքիան ընդհանրապես եվրոպացիների համար հանդիսանում էր «անհայտ երկիր», որի վերաբերյալ պատկերացումները խարսխված էին «Հազար ու մի գիշերների» հեքիաթների վրա: Դա անշուշտ նշանակում էր, որ Օսմանյան կայսրությունում ևս եվրոպական պետությունների մասին օբյեկտիվ պատկերացում գոյություն չուներ:

1836 թ. ստեղծվեց արտաքին գործերի նախարարություն: Դիվանագիտական ծառայության մեջ ընդգրկված անձինք հատուկ պատրաստություն էին անցնում «Թարգմանիչների դրասենյակում» (Tercüme odasi), որտեղ ուսումնասիրում էին ֆրանսերեն լեզու, պատմություն և այլ առարկաներ: Անգլիացի հայտնի արևելագետ Ռեդհաուզը մի որոշ ժամանակ ղեկավարում էր Թարգմանիչների դրասենյակը, դավանափոխ ավստրիացի Էմին Էֆենդին դասավանդում էր օտար լեզուներ և այլն: Դրասենյակի աշխատակիցների մեջ մեծ թիվ էին կազմում հույները, հայերը և հրեաները:

Դեսպանությունների հիմնադրումից հետո, օսմանյան դիվանագիտության գործողությունները սկսեցին խարսխվել նոր, ավելի ճկուն մեթոդների վրա:

Մահմուդ II-ի մտահղացմամբ, նոր թուրքական պետությունը պետք է իր մեջ զուգակցեր արևմտյան և արևելյան քաղաքակրթության տարրերը: Կյանքի արտաքին սոցիալական դրսևորումներում ևս պետք է տեղի ունենային էական տեղաշարժեր, մասնավորապես թուրքական ապրելաձևը պետք է ենթարկվեր արևմտականացման: Այդ ուղղությամբ ինքը՝ սուլթանն անձամբ աշխատում էր օրինակ հանդիսանալ: Օրինակ, նա ավելի շատ հետևում էր ոչ թե օսմանյան, այլ եվրոպական արարողակարգին: Կազմակերպում էր ընդունելություններ, որոնց ընթացքում զրույցի էր բռնվում հյուրերի հետ, իր հարգանքը մատուցելով նաև նրանց կանանց: Սուլթանը հաճախ հայտնվում էր իր ժողովրդի առջև, մասնակցում հասարակական զանազան արարողությունների: Այսուհետև միապետի ներկայությամբ նախարարները կարող էին նստել և ոչ թե կանգնած մնալ, ինչպես

նախկին ժամանակներում: Նրանց աշխատասենյակներում արդեն դրված էր եվրոպական կահույք, իսկ հաճախ ոտնահարելով իսլամի արգելքները, նրանց աշխատասենյակների պատերից կախվում էր սուլթանի մեծադիր նկարները:

Բարեփոխումներ իրականացվեցին նաև մշակույթի ու կենցաղի բնագավառում և նույնիսկ օսմանյան հպատակների արտաքին տեսքը փոխելու ուղղությամբ: Սուլթանը չէր խրախուսում երկար բեղ ու մորուք պահելը: Սահմանվեցին որոշակի չափանիշներ դրանց չափսերի վերաբերյալ, որոնց հետևանքով մարդկանց բեղերն ու մորուքները կրճատվեցին: Զգեստների հարցում ևս սուլթանն աշխատում էր արմատավորել նորը, եվրոպականը: Իր նոր բանակի զինվորների համար նա մտցրեց եվրոպական համազգեստ, մի բան, որ 20 տարի առաջ, Սելիմ III-ի ժամանակ, մերժվել էր ենիչերիների կողմից: Այսուհետև զինվորները իրենց գլխին կրելու էին ոչ թե չալմա, այլ կարմիր գույնի ֆես: 1829 թ. հրապարակված հրամանագրով քաղաքացիական անձինք ևս պարտավոր էին հրաժարվել չալմայից և կրել ֆես: Տղամարդիկ սկսեցին հագնվել եվրոպական տիպի զգեստներ: Կանանց արևելյան գույնզգույն զգեստներին փոխարինելու եկան եվրոպական շրջազգեստները: Անչուշտ Մահմուդ II-ի այդ բարեփոխումները հեշտ ու հանգիստ կյանքի չէին կոչվում: Պետության պահպանողական տարրերը, որոնց գլխավորում էր սերասկեր Խյուսրև-փաշան, գտնում էին, որ բարեփոխումները բացառապես պետք է իրականացվեն զինված ուժերի բնագավառում: Ուստի երբ փոփոխությունները ընդգրկեցին պետական ու վարչական կառուցվածքի շատ կողմեր, պահպանողականները սկսեցին բացահայտ կերպով հանդես գալ նորամուծությունների ու բարեփոխումների դեմ:

Մահմուդ II-ի նախանշած բարեփոխումներից շատերը գործնական կենսագործում չստացան և մնացին թղթի վրա: Նույնիսկ բարեփոխումներից շատերը, որոնք կյանք մտան, կրում էին ծայրահեղ սահմանափակ բնույթ, չչոչափելով կայսրության բնակչության հիմնական զանգվածների կյանքի պայմանները և արմատական փոփոխության չենթարկելով գոյություն ունեցող պետական-քաղաքական համակարգը: Բայց այդ բոլորով հանդերձ, դրանք մի երկրի պայմաններում, որն ապրում էր միջնադարյան կյանքով ու օրենքներով, հանդիսանում էին ապագա առավել խորը տեղաշարժերի կարևոր նախանշաններ: Այդ բարեփոխումները կարևոր էտապ հանդիսացան Օսմանյան կայսրության եվրոպականացման (վեստերնիզացման), նրա տնտեսական ու մշակութային առաջընթացի համար: Ըստ էու-

թյան դրանք դարձան նոր դարաշրջանի բարենորոգչական շարժման մեկնակետը:

Մահմուդ II-ը փորձում էր իր բարենորոգիչ-սուլթանի վարկը օգտագործել նաև պետության արտաքին քաղաքական բարդ խնդիրներին լուծում տալու համար: Այսպես, 1829 թ. նա հրապարակեց հրամանագիր, որում դիմելով Մորեայի հույներին, խոստանում էր, որ «այսուհետև ոչ մի տարբերություն չի դրվելու մահմեդականների ու ռայայի միջև, և բոլորի ունեցվածքը, կյանքը և պատիվը ապահովված կլինեն սուրբ օրենքով (շարիաթով) և իր բարձր հովանավորությամբ»:

Ավելի ուշ, 1837 թ. գարնանը բուլղարների ապստամբությունը արյան մեջ խեղդելուց հետո, սուլթանը այց կատարեց Բուլղարիա, որտեղ ճառեր էր արտասանում այսուհետև քրիստոնյաների անվտանգության ապահովման և այն մասին, որ պետության բոլոր հպատակները, անկախ իրենց ազգությունից ու դավանանքից, իր հարազատ զավակներն են:

Սակայն իրականությունը միանգամայն այլ էր: Սուլթանի բարեփոխումները ուղեկցվում էին Հունաստանում ապստամբների դեմ շարունակվող պատժիչ գործողությունների պայմաններում: Եգիպտացի Իբրահիմ փաշայի զորքերը շարունակում էին վայրագություններ անել հունական քաղաքներում ու գյուղերում: Նրանք կրակի էին մատնում մարդկանց տները, այրում ու ոչնչացնում ցանքսերը, այգիները, գյուղացիներին քշում Եգիպտոս՝ ստրկական աշխատանք կատարելու: Անհավասար պայքարում հույն ժողովուրդը արյունաքամ էր լինում: 1826 թ. հունիսին դավաճիչները տիրեցին Աթենքին, որը ապստամբների հենարանն էր և համայն հույն ժողովրդի ազատության խորհրդանիշը:

Վեց տարի տևած արյունահեղությունից հետո վերջապես եվրոպական տերությունները որոշեցին միջամտել Հունաստանում ծավալվող իրադարձություններին և հույների փրկության գործը վերցնել իրենց ձեռքը: 1826 թ. ապրիլի 4-ին Սանկտ-Պետերբուրգում Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվեց արձանագրություն հունական հարցի վերաբերյալ: Բրիտանական կողմից փաստաթուղթը ստորագրեց Վատերլոոյի ճակատամարտում Նապոլեոնի նկատմամբ հաղթանակ տարած Արթուր Վելլինգտոնը: Արձանագրությունը պարունակում էր հստակ ձևակերպված կետեր Հունաստանում արյունահեղությանը վերջ տալու վերաբերյալ: Եգիպտացիների կողմից Աթենքը գրավելուց մեկ ամիս անց, 1827 թ. հուլիսի 6-ին Լոնդոնում կնքվեց մի նոր միջազգային պայմանագիր, որը կոչվում էր

«Պայմանագիր Հունաստանը խաղաղեցնելու վերաբերյալ»: Նշված պայմանագրով Եվրոպայի առաջատար երեք պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը որոշեցին միջամտել հունական իրադարձություններին: Նրանք վերջնագրի ձևով սուլթանից պահանջեցին Հունաստանին տրամադրել ինքնավարություն: Բ. Դուռը մերժեց այդ պահանջը, ենթադրելով, որ հունական հարցում մեծ տերությունների միջև եղած տարաձայնություններն ու հակասությունները կօգնեն իրեն դիմագրավելու նրանց ճնշմանը: Սակայն այդ հաշվարկը սխալ դուրս եկավ: Ռուսական, անգլիական և ֆրանսիական ռազմական նավատորմիղներն ուղարկվեցին Մորեայի ափերը: Ռազմական ընդհարումը այլևս դարձավ անխուսափելի: Թուրքական զինվորականությունը կռահում էր, որ հակառակորդը առաջին հարվածը հասցնելու է ծովի վրա: Ուստի 1827 թ. սեպտեմբերի սկզբին Իբրահիմ փաշան իր ռազմանավերը տեղափոխեց Նավարինի ծովախորշը, որտեղ արդեն գտնվում էր թուրքական նավատորմը: Որպես պատասխան քայլ, անգլիական ծովակալ Էդվարդ Կոդրինգտոնը բրիտանական ռազմանավերով շրջափակեց ծովախորշի ելքը, որպեսզի կանխվի թուրք-եգիպտական նավատորմի հարձակումը հույների վրա: Շուտով ծովախորշին մոտեցավ նաև ֆրանսիական նավատորմը, իսկ ապա նաև ռուսականը: 1827 թ. հոկտեմբերի 20-ին այդ միացյալ նավատորմը մուտք գործեց Նավարինի ջրերը: Դաշնակիցներն ունեին 28 ռազմանավ, իսկ թուրք-եգիպտական նավերի թիվը 65-ից ավել էր: Նույն օրը, հոկտեմբերի 20-ին, բորբոքվեց համառ ու անզիջում ծովային ճակատամարտ: Թուրքական ու եգիպտական նավախումբը գլխովին ջախջախվեց անգլո-ֆրանս-ռուսական նավատորմիղի կողմից: Թուրք-եգիպտական նավատորմի 55 նավեր ջրասույզ արվեցին, մինչդեռ դաշնակիցները չկորցրին և ոչ մի նավ: Զափազանց մեծ էին նաև թուրքերի և եգիպտացիների մարդկային կորուստները:

Թուրքերի պարտությունը այն աստիճանի չչմեցուցիչ էր, որ նրա մասին լուրը Ստամբուլի սուլթանական պալատում առաջ բերեց խորը վհատություն ու հուսալքություն:

Այդ ջախջախիչ պարտությունից հետո թուրքական զորքերի ներկայությունը Հունաստանում դառնում էր կատարելապես անիմաստ: Իբրահիմ փաշան առանց սուլթանի թույլտվության չտապեց անմիջապես էվակուացնել իր զորքերը, քանի որ նրանց համար ևս ստեղծվել էր սպառնալից վիճակ: Մորեայի ափերին հայտնվեցին ֆրանսիական զորքերը:

Այդ իրադարձությունների ընթացքում ռուս-թուրքական հարաբերությունները հասել էին ծայրահեղ չիկացման: Հարցը միայն այն չէր, որ սուլթանն ու Բարձրագույն դուռը Ռուսաստանին համարում էին օսմանյան պետության դեմ եվրոպական պետությունների ռազմական դիմակայության հիմնական հրահրիչ, Նավարինում իրենց նավատորմի կործանման գլխավոր մեղավոր և Հունաստանում կրած անհաջողությունների հիմնական պատճառ: Հարցը կայանում էր նաև նրանում, որ Նավարինի աղետից հետո, երբ թուրքերը կորցրին իրենց ողջ նավատորմը, Սև ծովում գերակշռությունը ամբողջապես անցավ Ռուսաստանին: Օգտվելով դրանից՝ Նիկոլայ I-ը, որը Օսմանյան կայսրությունն անվանում էր «հիվանդ մարդ» և ծրագրեր էր մշակում նրա անդամահատման ու մասնատման ուղղությամբ, անմիջապես ուժեղացրեց ճնշումը Ստամբուլի նկատմամբ: Պետերբուրգում նույնիսկ գտնում էին, որ պատերազմը Թուրքիայի դեմ այլևս անխուսափելի է: Ուստի ռուսական կառավարությունը չտապում էր ժամ առաջ ավարտել պատերազմն Իրանի հետ: 1828 թ. փետրվարի 22-ին կնքվեց ռուս-պարսկական Թուրքմենչայի պայմանագիրը, որով Ռուսաստանը խուսափեց երկու ճակատով պատերազմ մղելու վտանգից:

Բ. Դոան մոտ ևս տիրապետում էր այն մտայնությունը, որ ռուսների ներխուժումը Օսմանյան կայսրության տարածքը օրերի խնդիր է: 1828 թ. ապրիլի 26-ին ռուսական կառավարությունը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Իր հերթին Բ. Դուռը ևս 1828 թ. մայիսի 28-ից իրեն հայտարարեց պատերազմական վիճակում Ռուսաստանի դեմ: Այդ պատերազմում Ռուսաստանն իր առջև խնդիր էր դրել ձեռք բերել սևծովյան նեղուցներից իր առևտրական նավերի ազատ անցման իրավունք, ինչպես նաև Բալկաններում և Հարավային Կովկասում իր դիրքերի ամրապնդում:

1828 թ. հոկտեմբերին ռուսական նավատորմը շրջափակեց Բոսֆորն ու Դարդանելը: Իսկ 1829 թ. ապրիլի վերջին 150 հազարանոց ռուսական բանակը անցում կատարեց Պրուտ գետի վրայով և գրավեց դանուբյան իշխանությունների տարածքը: 1829 թ. օգոստոսի 20-ին ռուսական բանակը գեներալ-ֆելդմարշալ Ի. Ի. Դիբիչի հրամանատարությամբ գրավեց Էդիրնեն, իր համար ճանապարհ բաց անելով դեպի Ստամբուլ: Օսմանյան մայրաքաղաքը մատնվել էր խուճապի: Կովկասյան ճակատում ևս ռուսական զորքերը տարան խոշոր հաղթանակներ: 1828 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ախալցխայի մոտ ռուսները ջախջախիչ հարված հասցրին Քյոսե Մեհմեդ-փաշային: Դրան հետևեց Արդահանի, Կարսի, Բայազեդի, ինչպես նաև

Փոթիի և Բաթումի գրավումը: 1829 թ. սեպտեմբերին ռուսական զորքերը գրավեցին Էրզրումը, Բայբուրդը և Մուշը: Սակայն այնուամենայնիվ նրանք չչարժվեցին դեպի Ստամբուլ, քանի որ այդ քայլը հղի էր Ռուսաստանի համար վտանգավոր բախման հնարավորությամբ եվրոպական տերությունների կոալիցիայի հետ: Տեղեկություն չունենալով ռուսների մտադրությունների մասին՝ մայրաքաղաքը սարսափի մեջ էր, ամեն բոպե սպասելով ռուսական զորքերի ներխուժմանը:

Ստանալով սուլթանի համաձայնությունը՝ Բ. Դուռը պատվիրակություն ուղարկեց ռուսական ռազմական ճամբարը՝ հաշտության առաջարկով: Վարկած կա այն մասին, որ թուրքերը զոհ գնացին ռուսների բլեֆին, որովհետև Դիբիչի նոսրացած բանակը Ստամբուլ չարժվելու դեպքում անխուսափելիորեն պարտություն էր կրելու, մանավանդ որ նա զրկված էր օժանդակ ուժերով համալրվելու ամեն մի հնարավորությունից:

1829 թ. սեպտեմբերի 14-ին Ադրիանոպոլսում (Էդիրնե) Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքվեց խաղաղության պայմանագիր: Դրա հետևանքով Եվրոպական Թուրքիայում ռազմական գործողությունները անմիջապես դադարեցվեցին: Իսկ Արևելյան Անատոլիայում դրանք շարունակվեցին ընդհուպ մինչև 1829 թ. հոկտեմբերի 14-ը:

Ադրիանոպոլսի պայմանագրով Ռուսաստանին էին անցնում հայկական և վրացական մի շարք հողեր, որոնք պատերազմի ժամանակ ռազմակալման էին ենթարկվել ռուսական զորքերի կողմից (Փոթի, Ախալքալաք, Ախալցխա ամրոցները, Իմերեթիան, Մինգրելիան, Գուրիան), ինչպես նաև Թուրքիան ճանաչում էր Երևանի և Նախիջևանի խանությունների միացումը ռուսական պետությանը: Օսմանյան կայսրությունը կորցնում էր նաև սևծովյան ափերը Կուբան գետի ակունքներից մինչև Սուրբ Նիկոլայի նավահանգիստը: Թեև պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանի նշանակալից մասը գրավված էր ռուսական զորքերի կողմից, կամ գտնվում էր նրանց հսկողության ներքո, սակայն նրա կարգավիճակի վրա Ադրիանոպոլսի պայմանագիրը դույզն ինչ չափով իսկ չազդեց և այն չարունակեց մնալ թուրքական տիրապետության ներքո:

Թուրքիան պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել Դանուբյան իշխանապետություններից: Ընդ որում, էականորեն ընդլայնվում էին Մոլդավիայի և Վալախիայի ինքնավար իրավունքները, թուրքերին արգելվում էր բնակվել այնտեղ և ունենալ անշարժ գույք, իշխանապետությունների տարածքում թուրքերը զրկվում էին իրենց

բոլոր ամրոցներից: Մոլդավիան և Վալախիան իրավունք էին ստանում պահելու սեփական բանակ և նշանակելու ցմահ գոսպոդարյաներ՝ առանց Բ. Դռան համաձայնության: Վերջինս զրկվում էր նրանց ներքին գործերին միջամտելու իր նախկին իրավունքից: Մահմեդական բնակչության մեծ մասը ենթակա էր Մոլդավիայից ու Վալախիայից արտաքսման:

Պայմանագիրը Օսմանյան կայսրությանը պարտավորեցնում էր ինքնավարություն տրամադրել Հունաստանին ու Սերբիային: Ռուսաստանի հպատակները իրավունք էին ստանում ազատ առևտուր անել Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Ընդ որում, նրանք ձեռք էին բերում արտաերկրայնության իրավունք, այսինքն թուրքական իշխանությունները իրավունք չունեին նրանց դատելու:

Ադրիանոպոլսի պայմանագրով անցումը Բոսֆոր և Դարդանել նեղուցներով հայտարարվում էր ազատ այն բոլոր երկրների առևտրական նավերի համար, որոնք Օսմանյան կայսրության հետ գտնվում էին խաղաղության մեջ: Բ. Դուռը պարտավորվում էր նվազագույն իսկ արգելք չհարուցել ռուսական սևծովյան առևտրին: Ստամբուլում ռուսական առևտրական ներկայացուցիչներին իրավունք էր վերապահվում հետևել թուրքական իշխանությունների գործողություններին Սև ծովում առևտրական նավագնացության ազատությունը պահպանելու հարցում: Պայմանագրի 13-րդ հոդվածով երկու երկրների հպատակներին իրավունք էր տրվում պայմանագրի հաստատումից հետո 18 ամիսների ընթացքում տեղափոխվել պայմանավորվող կողմերից մեկնումեկի տարածքը՝ ըստ սեփական հայեցողության: Այն անձանց նկատմամբ, որոնք մասնակցություն էին բերել ռազմական գործողություններին այն երկրի դեմ, որի հպատակը որ հանդիսանում էին, չնորհվում էր ներումն:

Պայմանագրով երկու պետությունների միջև սահմանը չարունակելու էր անցնել Պրուտ գետով: Դանուբի գետաբերանը կղզիների հետ միասին անցնում էին Ռուսաստանին, իսկ Դանուբի աջ ափը մնում էր թուրքական տիրապետության տակ: Վերջապես Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր Ռուսաստանին վճարել խոշոր ռազմատուգանք:

Երբ սուլթան Մահմուդ II-ը ծանոթացավ Ադրիանոպոլսի պայմանագրի հետ, ընկավ խորը վհատության գիրկը: Իսկ այն հաստատելիս նա ուղղակի լաց եղավ և փակվելով իր պալատում մի քանի շաբաթ ոչ ոքի չէր ընդունում:

3. ԹՈՒՐՔ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՒՆԿՅԱՐ-ԻՍՔԵԼԵՍԻԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻԸ

Օսմանյան կայսրության անհաջողությունների չարանը Ադրիանոպոլսի պայմանագրով իր ավարտին չհասավ: 1830 թ. փետրվարին ստորագրվեց անգլո-ռուս-ֆրանսիական համաձայնագիր Հունաստանի լրիվ անկախության մասին: Սուլթանը փորձեց չճանաչել այն: Սակայն տերությունների ուժգին ճնշման ներքո ի վերջո Մահմուդ II-ը և Բ. Դուռը ճանաչեցին համաձայնագիրը: Ապրիլի 24-ին սուլթանը հրապարակեց հրամանագիր Հունաստանի անկախության մասին: Հույն ժողովուրդը ազատագրվում էր օսմանյան անագորույն լծից:

Այդ նույն 1830 թ. սուլթանը կորցրեց նաև Ալժիրը, որը հանդիսանում էր Օսմանյան կայսրության էյալեթ և կառավարվում էր թուրքական սուլթանի գերիշխանությունը ճանաչող տեղական ենիչերիական պետի՝ դեյի կողմից: Ալժիրը վերածվեց ֆրանսիական գաղութի: Նույն 1830 թ. Բաղդադի կառավարիչ Դաուդ-փաշան բացահայտ կերպով ապստամբեց սուլթանի դեմ, խզեց իր հարաբերությունները Ստամբուլից և Իրաքը հայտարարեց «երջանիկ բաբելոնական թագավորություն»: Օսմանյան կառավարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց մարել ապստամբության այդ օջախը, ընկճել Դաուդ-փաշային և Իրաքը վերստին վերադարձնել իրեն: Այդ իրադարձություններից, հատկապես ռուս-թուրքական պատերազմից հետո, ներքին քաղաքական ճգնաժամի վիճակում գտնվող կայսրության համար ստեղծվում էր խիստ վտանգավոր դրություն: Տնտեսական դժվարությունները զուգորդվում էին հակակառավարական ապստամբությունների հետ: Նույնիսկ լուրեր տարածվեցին, որ մայրաքաղաքում պատրաստվում է դավադրություն սուլթանի դեմ, նրան գահընկեց անելու համար:

Օսմանյան կայսրությունը նոր էր դուրս եկել արտաքին-քաղաքական այդ բարդ իրավիճակից, երբ ստիպված էր մտնել մի նոր պատերազմի մեջ, այս անգամ իր ձևական վասալ, Եգիպտոսի կուսակալ Մուհամմեդ Ալիի հետ, որը դեռ վերջերս էր սուլթանին ու նրա կառավարությանը փրկում Հունաստանում անխուսափելի պարտությունից:

Հակասությունները Մուհամմեդ Ալիի և սուլթանի միջև կուտակվում էին աստճանաբար: Նախ, միացյալ եվրոպական նավատորմի կողմից եգիպտական ռազմական նավատորմի ոչնչացումից հետո, Մուհամմեդ Ալիի հրամանով եգիպտական բանակը հեռացավ Հունաստանից՝ առանց սուլթանի համաձայնության ու թույլտվության:

Դա Ստամբուլում գնահատվեց որպես դավաճանություն: Այնուհետև, 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ դժվարին վիճակում գտնվող Բ. Դուռը դիմել էր Մուհամմեդ Ալիին, խնդրելով նրա օգնությունը, Եգիպտոսի փաշան դրել էր հետևյալ պայմանը. իրեն նշանակել անատոլիական բանակի սերասկեր (գլխավոր հրամանատար), իսկ իր որդի Իբրահիմին՝ Ռումելիայի սերասկեր: Դա կնշանակեր, որ հայր ու որդի կդառնային օսմանյան բանակի գլխավոր հրամանատարները, որը կարող էր ունենալ անկանխատեսելի հետևանքներ: Ուստի միանգամայն բնական է, որ սուլթանը մերժելու էր այդ պահանջը: Դա դեռ բոլորը չէր: 1829 թ. Ադրիանոպոլի պայմանագրի կնքումից հետո, երբ դեռ Բ. Դուռը դուրս չէր եկել իր կրած չոկից, Մուհամմեդ Ալին դիմեց սուլթանին, որ նա իրեն տրամադրի նախկինում խոստացված Կրետե կղզին և Սիրիան: Մահմուդ II այդ պահանջը կատարեց մասամբ, փաշային «չնորհելով» միայն Կրետե կղզին, իսկ Սիրիան կտրականապես հրաժարվեց տրամադրել նրան: Այդ միջադեպը ևս գալիս էր սրելու թուրք-եգիպտական հարաբերությունները:

Մի որոշ ժամանակ անց, պահը միանգամայն պատեհ համարելով, սուլթանը որոշեց պատժել «անհնազանդություն դրսևորած» և «չափն անց կացրած» իր վասալին: Այդ մասին Մուհամմեդ Ալին տեղեկացավ սուլթանական պալատում իր ունեցած լրտեսներից: Որպես պատասխան քայլ, 1831 թ. դեկտեմբերին Մուհամմեդ Ալին 24 հազարանոց մի բանակ շարժեց դեպի Սիրիա՝ այդ երկիրը ռազմակալման ենթարկելու նպատակով: Եգիպտական այդ օկուպացիոն բանակի հրամանատարը Մուհամմեդ Ալիի որդի Իբրահիմ փաշան էր, որը ձեռք էր բերել ընդունակ ու հաջողակ զորահրամանատարի համբավ:

Եգիպտոսի փաշայի այդ քայլը Ստամբուլում գնահատվեց որպես բացահայտ անհնազանդություն օսմանյան միապետի նկատմամբ, ավելին, որպես ապստամբություն գերագույն սյուզերենի դեմ: Ուստի Մահմուդ II-ի պահանջով 1832 թ. ապրիլի 23-ին շեյխ-ուլ-իսլամը հրապարակեց ֆեթվա, որում նա Մուհամմեդ Ալիին հռչակում էր «ֆիրմանլը», այսինքն՝ խռովարար, որը հայտարարվում է օրենքից դուրս:

Ինչպես և սպասելի էր, թուրք-եգիպտական այդ կոնֆլիկտը դուրս եկավ Օսմանյան կայսրության ներքին խնդիր լինելու շրջանակներից ու դարձավ միջազգային սուր հարց:

Սուլթանի և Եգիպտոսի փաշայի միջև բացահայտ ընդհարման համար առիթ ծառայեց Մահմուդ II-ի պահանջը եգիպտական տուրքի հաշվին փող մուծելու օսմանյան գանձարան և առհասարակ նախորդ տարիներին ընդհատված և չմուծված վճարումները կատարե-

լու մասին: Հզոր վասալը ոչ միայն մերժեց այդ պահանջը, այլև կրկին դրեց Սիրիան իր կառավարման տակ դնելու պահանջը: Սուլթանը կրկին մերժեց, պատճառաբանելով, որ Ռուսաստանի հետ պատերազմի ժամանակ Մուհամմեդ Ալին հրաժարվել է Բ. Դռանը ցուցաբերել օգնություն: Համոզվելով, որ փաշայի նկատմամբ սովորական ճնշումները անօգուտ են, Մահմուդ II-ը ծրագրել էր հաշվեհարդար տեսնել իր այդ վտանգավոր հակառակորդի հետ: Այդ հարցում սուլթանի կրքերը պարբերաբար բորբոքում էր մեծ վեզիր Խուսրև-փաշան, որն իր հերթին հին հաշիվներ ուներ Եգիպտոսի ամենազոր փաշայի հետ:

Թուրք-եգիպտական հարաբերությունների ճգնաժամը ի վերջո վերածվեց զինված դիմակայության: Նախահարձակը Եգիպտոսի փաշան էր: 1831 թ. աշնանը եգիպտական բանակը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ ռազմական գործողություններ սկսեց օսմանյան պետության դեմ: Տանելով մի շարք փայլուն հաղթանակներ, եգիպտացիները գրավեցին Սիրիան և Կիլիկիան (Կենտրոնական Տավրոսից արևելք ընկած լայնածավալ տարածքները՝ ներառյալ նաև Ուրֆայի, Մարաշի, Ադանայի շրջանները): Այնուհետև Կիլիկիայի «դարպասներով» եգիպտական բանակը ներխուժեց Անատոլիա: Թեև թվաքանակով թուրքական բանակը կրկնակի գերազանցում էր Իբրահիմ փաշայի զորքերին, սակայն կարգապահությամբ, բանակի կենտրոնացվածությամբ ու մարտունակությամբ այն զգալիորեն զիջում էր եգիպտական բանակին: Առավել ևս, որ վերջինս Արաբական թերակղզում վահաբիների շարժման դեմ կռիվներում և Հունաստանում վարած ռազմական գործողությունների ժամանակ ձեռք էր բերել մարտական մեծ փորձ:

1832 թ. դեկտեմբերի 21-ին Կոնիայի մոտ ձյունապատ մի հարթավայրում թուրքերի ու եգիպտացիների միջև տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ: Սուլթանական բանակը գլխովին ջախջախվեց: Նրա հրամանատար, մեծ վեզիր Ռեշիդ Մեհմեդ փաշան եգիպտացիների կողմից գերի վերցվեց: Այդ ճակատամարտում սուլթանը կորցրեց համարյա իր ողջ բանակը: Եգիպտական զորքերի առջև այլևս բաց էր ճանապարհը դեպի Ստամբուլ և օսմանյան դինաստիայի վրա կախվել էր կործանման սպառնալիքը: Սուլթան Մահմուդ II-ը և օսմանյան կառավարող վերնախավը ընկել էին խորը հուսահատության գիրկը, քանի որ գոյություն չուներ ոչ դրամ և ոչ էլ ժամանակ նոր զորքեր հավաքելու համար: Սուլթանի դրությունը նաև բարդանում էր նրանով, որ կայսրության բնակչության լայն զանգվածների համակրանքը Իբրահիմ փաշայի կողմն էր: Վերջինիս գործակալները

Կենտրոնական Անատոլիայի բնակչության շրջանում մղում էին ե-ռանդուն քարոզչություն, Մահմուդ երկրորդին հռչակելով խալամից հեռացած «գյավուր սուլթան»: Այդ քարոզչության ազդեցության ներքո մի շարք վայրերում բռնկեցին հակասուլթանական ապստամ-բություններ, կազմակերպվում էին հարձակումներ սուլթանական զորքերի վրա և այլն: Իբրահիմ փաշայի գործակալները նույնիսկ հա-սել էին մինչև Կարս և Բաթում:

Կոնիայի մոտ թուրքական բանակի ջախջախումից հետո Մուհամ-մեդ Ալին այլևս չէր թաքցնում սուլթանի դեմ իր ելույթի գլխավոր դրդապատճառը. տապալել սուլթան Մահմուդ II-ին և այս կամ այն քողի տակ իր իշխանությունը հաստատել Օսմանյան կայսրության նկատմամբ: Մուհամմեդ Ալին ենթադրում էր, որ այդ ծրագրի իրա-կանացման լավագույն տարբերակներից մեկը այն էր, որ տապալե-լով Մահմուդ II-ին, կարելի էր գահ բարձրացնել նրա որդուն՝ թագա-ժառանգ Աբդուլ Մեջիդին (որն այդ ժամանակ ընդամենը 10 տարե-կան էր) և պատանի սուլթանի անունից կառավարել Օսմանյան կայս-րությունը:

Դժվար չէ նկատել, որ սուլթան Մահմուդ II-ի և ողջ Օսմանյան կայսրության վրա կախված էր ահեղ սպառնալիք: Դրությունից ելք գտնելու նպատակով սուլթանը դիմեց եվրոպական մեծ պետություն-ներին: Մասնավորապես 1832 թ. վերջին Մահմուդ II-ը իր դեսպան Նամըք-փաշային ուղարկեց եվրոպական մայրաքաղաքներ՝ Վիեննա, Փարիզ, Բեռլին և Պետերբուրգ օգնություն խնդրելու առաքելու-թյամբ: Սակայն Ֆրանսիան, որը Եգիպտոսն ու Սիրիան համարում էր իր ապագա ազդեցության գոտիները, հրաժարվեց սուլթանին օգնու-թյուն ցուցաբերելուց: Անգլիան ևս երկդիմի պատասխանով մերժեց Մահմուդ II-ին՝ միաժամանակ նրան խորհուրդ տալով դիմել Ավստ-րիային, որը թուրք-եգիպտական կոնֆլիկտի հարցում առաջնորդ-վում էր սրբազան դաշինքի սկզբունքներով և դատապարտում էր Մուհամմեդ Ալիին որպես խռովարար, որը համարձակություն է ու-նեցել հանդես գալու իր օրինական միապետի դեմ: Բրիտանական վարչապետ Պալմերստոնը հույս ուներ, որ Անգլիայի քաղաքական շահերի համար պիտանի այդ գործը ինքը կկարողանա գլուխ բերել Ավստրիայի միջոցով: Սակայն պարզվեց, որ վերջինս բնավ մտադրու-թյուն չունի հեռավոր Փոքր Ասիայի անապատներում գոտեմարտի մեջ մտնել հաղթական եգիպտական բանակի հետ:

Օգնությունն եկավ ամենաանսպասելի տեղից՝ Ռուսաստանից: Նիկոլայ I ցարը եգիպտացիների չոնդալից հաղթանակների մեջ տես-

նում էր մեծ սպառնալիք Մերձավոր Արևելքում Ռուսաստանի շահերի համար: Նրա կարծիքով Օսմանյան կայսրությունում հեղաշրջում իրականանալու դեպքում կարող էր առաջ գալ համաևրոպական քաղաքական ճգնաժամ՝ իր անկանխատեսելի հետևանքներով: Ցարը նաև վախենում էր, որ Օսմանյան կայսրությունում իշխանությունը վերցնելով իր ձեռքը, Մուհամմեդ Ալին այդ կայսրությունը կվերածի ուժեղ պետության: Նա նույնիսկ մտավախության ուներ, որ Մուհամմեդ Ալին հեղափոխականացնող ազդեցություն կարող է ունենալ Ռուսաստանում ցարի մահմեդական հպատակների նկատմամբ:

Պետերբուրգը պաշտոնապես սուլթանին առաջարկեց ռազմական օգնություն ընդդեմ եգիպտացիների: Մահմուդ II-ը անմիջապես ընդունեց այդ փրկարար առաջարկը: Հետագայում Ստամբուլում անգլիական դեսպանի այն հարցին, թե ինչպես կարող էր սուլթանը ընդունել Օսմանյան կայսրության ոխերիմ թշնամու՝ Նիկոլայ I-ի «օգնությունը», սուլթանը պատասխանել էր, որ «երբ մարդը խեղդվում է և իր առջև տեսնում է օձ, իր փրկության համար նույնիսկ կփաթաթվի նրա վզից»:

1833 թ. փետրվարին ռուսական ռազմական նավատորմը մուտք գործեց Բոսֆոր և խարիսխ նետեց Ստամբուլի մոտ Բոյուքդերե կոչված վայրում, ռուսական դեսպանության ամառային նստավայրի ուղիղ դիմացը: Ծովային հետևակի վեց հազար հոգուց բաղկացած մի ջոկատ դուրս եկավ ցամաք՝ թուրքական մայրաքաղաքը պաշտպանելու համար: Իսկ նույն թվականի մարտ-ապրիլ ամիսներին Օդեսայից ժամանեցին ռուսական դեսանտային զորամասերի մոտ 10 հազար զինվորներ, որոնք բանակ դրեցին Բոսֆորի ասիական ափին, Հունքյար-Իսքելեսի կոչված գեղատեսիլ հովտում: Այդ օրերին շատերի համար տարօրինակ և օտարոտի էր այն, որ ռուս զինվորներն ու նավաստիները ազատ շրջում էին Ստամբուլի փողոցներում: Ռուսական զորքերը բառացիորեն փակեցին դեպի Ստամբուլ տանող ճանապարհները, դրանով իսկ կանխելով եգիպտական բանակի հնարավոր հարձակումը մայրաքաղաքի վրա:

Ֆրանսիական և բրիտանական դիվանագիտությունը խուճապի մեջ էր: Նա կամ պետք է վճռական քայլերով նախաձեռնությունը վերցներ իր ձեռքը և սուլթան Մահմուդին փրկեր Եգիպտոսի փաշայի սպառնալիքից, և կամ Ստամբուլը հանձներ ռուսներին, այն էլ հենց իր՝ սուլթանի համաձայնությամբ: Անգլիացի և ֆրանսիացի դիվանագետները ոչ առանց հիմքի ահաբեկում էին սուլթանին, որ Ռուսաստանը այլևս կարող է դուրս չգալ Բոսֆորի ափերից: Ի վերջո ֆրանսիական և բրիտանական կառավարությունները իրենց ռազմական

նավատորմիղներն ուղարկեցին Եգիպտոսի ափերը և հարկադրեցին Մուհամմեդ Ալիին հաշտություն կնքել սուլթանի հետ: Միաժամանակ Փարիզը և Լոնդոնը Մահմուդ II-ի նկատմամբ սկսեցին գործադրել ուժեղ դիվանագիտական ճնշում, պահանջելով ռուսական զորքերը դուրս հանել Բոսֆորի շրջակայքից: Փոխարենը նրանք երաշխիքներ էին տալիս, որ այլևս Եգիպտոսի փաշայի կողմից տեղի չի ունենա ներխուժում Օսմանյան պետության տարածքը:

Ստամբուլի և Կահիրեի միջև սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին 1833 թ. մայիսի 5-ին Քյութահիա քաղաքում Թուրք-եգիպտական համաձայնագրի ստորագրմամբ: Հաշտությունը վերին աստիճանի ձեռնտու էր Եգիպտոսի փաշայի համար, քանի որ մեծապես ընդլայնվում էին նրա տիրույթների սահմանները: Սուլթան Մահմուդ II-ը ճանաչում էր Մուհամմեդ Ալիի իշխանությունը Եգիպտոսի, Սիրիայի, Պաղեստինի ու Կիլիկիայի, ինչպես նաև Կրետե կղզու նկատմամբ: Այնպիսի կարևոր առևտրա-տնտեսական ու ռազմավարական նշանակություն ունեցող հանգուցային քաղաքներ, ինչպիսիք էին Դամասկոսը, Տրիպոլին, Հալեպը և Ադանան, դուրս էին գալիս սուլթանի իրավասության տակից և անցնում էին իր նախկին վասալին: Եգիպտոսի փաշան այդ տարածքները ստանում էր ցմահ տիրապետության պայմաններով, սակայն առանց երաշխիքի, որ իր մահվանից հետո դրանք կանցնեն Իբրահիմին կամ իր մյուս ժառանգորդներին: Ուստի Քյութահիայի պայմանագիրը ինչ որ տեղ չէր բավարարում Մուհամմեդ Ալիին, որը ձգտում էր ձեռք բերել մի այնպիսի կարգավիճակ, որ նախ սուլթանը չկարողանար նրան պաշտոնանկ անել Եգիպտոսի փաշայի պաշտոնից և ապա այդ պաշտոնը դառնար ժառանգական իր ընտանիքի համար:

Սակայն բոլոր դեպքերում Քյութահիայի պայմանագիրը նշանավորում էր Մուհամմեդ Ալիի խոշոր հաղթանակը: Միջերկրական ծովի արևելյան մասում, Օսմանյան կայսրության կենսական կենտրոնների մոտ, նա տիրանում էր հսկայական տարածքների, ներառյալ նաև Իսքենդերուն նավահանգստին: Այդ տարածքներն ունեին տնտեսական, քաղաքական և ռազմավարական բացառիկ կարևոր նշանակություն: Իսկ ամենակարևորը այն էր, որ Մուհամմեդ Ալիի տրամադրության տակ կար մեծաթիվ ու հզոր բանակ և ռազմածովային նավատորմ, որի մասին սուլթանը կարող էր միայն երազել: Հետևաբար Թուրք-եգիպտական հաշտությունը վերին աստիճանի փխրուն էր և անկայուն: Ցանկացած պահի նրանց միջև խաղաղությունը կարող էր խաթարվել:

Քյութահիայի պայմանագրի կնքումից հետո թվում էր, թե Ռուսաստանն ավարտել է իր առաքելությունը և կարող է իր զորքերը դուրս բերել Օսմանյան կայսրության տարածքից: Սակայն պարզվեց, որ ռուսական օգնությունն ունի իր գինը: Իրենց քաղաքական դիրքերն այդ երկրում ամրապնդելու նպատակով, ռուսները սուլթանին առաջարկեցին կնքել դաշնակցային պայմանագիր: 1833 թ. հուլիսի 8-ին Ստամբուլում ստորագրվեց այդպիսի պայմանագիր, որը հայտնի է Հունքյար-Իսքելեսիի պայմանագիր անունով (դա այն տեղանքն էր, որտեղ տեղակայված էին ռուսական զորքերը): Պայմանագիրը կնքվել էր ութ տարի ժամկետով: Այն բաղկացած էր ներածական մասից, վեց հոդվածներից և լրացուցիչ գաղտնի հոդվածից: Ներածական մասում ասվում էր, որ երկու երկրների միջև հաստատվում է հավերժական խաղաղություն, բարեկամություն ու դաշինք: Այդ դաշինքի նպատակն էր հռչակվում Թուրքիայի և Ռուսաստանի համատեղ պաշտպանությունը ցանկացած ոտնձգությունների դեմ: Ընդ որում, այդ դաշինքը կրում էր հարձակողական-պաշտպանողական բնույթ: Ռուսաստանը և Թուրքիան պարտավորվում էին միմյանց հետ խորհրդակցել բոլոր այն հարցերի շուրջը, որոնք վերաբերում էին նրանց «հանգստությանն ու անվտանգությանը» և երրորդ երկրի հարձակման դեպքում փոխադարձաբար օգնություն ցուցաբերել մեկը մյուսին: Մասնավորապես ռուսական կայսրը պարտավորվում էր սուլթանի խնդրանքի դեպքում ցամաքային ու ռազմա-ծովային ուժերի միջոցով օգնել նրան ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիների դեմ: Ըստ պայմանագրի գաղտնի հոդվածի, Թուրքիան ազատվում էր Ռուսաստանին ռազմական ու նյութական օգնություն ցուցաբերելու պարտավորությունից, դրա փոխարեն նա պարտավորվում էր Ռուսաստանի առաջին իսկ պահանջի դեպքում Դարդանելը փակել օտարերկրյա ռազմանավերի առջև: Այդ նույն գաղտնի հոդվածում Ռուսաստանին իրավունք էր տրամադրվում, որ նրա ռազմանավերը ցանկացած ժամանակ ազատ ու անարգել անցնեն նեղուցներով: Դա մի արտոնության էր, որը մերժվում էր օտարերկրյա պետություններին՝ առանց Ռուսաստանի համաձայնության: Վերջապես ռուսները իրավունք էին ձեռք բերում անհրաժեշտության դեպքում իրենց զորքերը ափ հանել և տեղակայել Բոսֆորի ափերին:

Հունքյար-Իսքելեսիի պայմանագիրը իրենով նշանավորում էր Ռուսաստանի խոշոր դիվանագիտական հաղթանակը, ընդ որում, ավելի կարևորը, քան Ադրիանոպոլսի պայմանագիրը, առավել ևս, որ

այդ կարևոր հաղթանակը ձեռք էր բերվել առանց պատերազմի: Այդ պայմանագիրը աննախընթաց կերպով նպաստեց Կոստանդնուպոլսում ռուսական ազդեցության մեծացմանը: Ռուսաստանը դառնում էր Թուրքիայի և նրանում թագավորող օսմանյան դինաստիայի ամբողջականության ու անվտանգության միանձնյա երաշխավորը: Պատահական չէ, որ Անգլիան և Ֆրանսիան Հունքյար-Իսքելեսիի պայմանագիրը դիտում էին որպես Մերձավոր Արևելքում իրենց շահերին մեծ սպառնալիք ներկայացնող դիվանագիտական փաստաթուղթ: Արևմտյան տերությունները մտավախություն ունեին, որ Թուրք-եգիպտական նոր պատերազմի դեպքում, օգտվելով Հունքյար-Իսքելեսիի պայմանագրից, Ռուսաստանը վերստին իր զորքերը կմտցնի Թուրքիա, իսկ ապա, հնարավոր է, որ նա այլևս չի հեռանա ոչ Ստամբուլից և ոչ էլ նեղուցներից: Հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում գտնում էին, որ այդ պայմանագրով Ռուսաստանը Օսմանյան կայսրության նկատմամբ հաստատեց իր հովանավորությունը: Առանձնակի դժգոհություն ու տագնապ առաջ բերեց ռազմանավերի առջև Դարդանելը փակելու վերաբերյալ գաղտնի հոդվածը, երբ այն ինչ-ինչ ճանապարհներով գաղտնազերծվեց և հայտնի դարձավ մեծ պետությունների մայրաքաղաքներում:

Այդ բոլորը նկատի ունենալով, պայմանագրի կնքման օրվանից հետո երկար տարիների ընթացքում արևմտյան տերությունները հետևողական ջանքեր էին գործադրում, որ Հունքյար-Իսքելեսիի պայմանագիրը դարձնեն ոչ գործուն, կամ, ծայրահեղ դեպքում, ստանան Բ. Դոան համաձայնությունը, որ Թուրքիան նմանատիպ պայմանագիր կնքի նաև բոլոր մեծ տերությունների հետ:

Հունքյար-Իսքելեսիի պայմանագիրը, սակայն, Ռուսաստանի համար իր բոլոր առավելություններով հանդերձ, պարունակում էր նաև բացասական կողմեր: Այն Պետերբուրգին դնում էր անհարմար վիճակի մեջ այն առումով, որ այսուհետև նա միաժամանակ հանդես էր գալու և՛ Օսմանյան կայսրության ճնշվածների՝ այսինքն քրիստոնյաների, և՛ ճնշողների հովանավորի դերում:

Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությանը, ապա անկասկած Հունքյար-Իսքելեսիի պայմանագիրը ծանր միջազգային-քաղաքական ակտ էր նրա համար: Սակայն իրողությունը նաև այն էր, որ ցարական Ռուսաստանը Օսմանյան կայսրությանը փրկել էր կործանման վտանգից և հուսալի երաշխիքներ էր տրամադրում, որ Եգիպտոսի նոր հարձակման դեպքում ինքը կապահովի նրա անվտանգու-

թյունը և տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը: Հենց դրանով է պայմանավորված այն, որ սուլթան Մահմուդ II-ը գոհ էր այդ պայմանագրից, որը նա դիտում էր որպես մի գործոն, որը կարող էր նպաստել Եգիպտոսի փաչայի զսպմանը և ի վերջո նրա կատարյալ պարտությանը: Սուլթանի գոհունակությունն ու ուրախությունը էլ ավելի մեծացավ, երբ ռուսական կառավարությունը գեներալ-թիկնապահ կոմս Օլովի միջոցով Բ. Դոանը ներկայացրեց գրավոր հայտարարություն, որ թուրքական կայսրության փրկիչները հուլիսի 11-ին, այսինքն Հունքյար-Իսքելեսիի պայմանագրի ստորագրումից հետո երեք օր անց, մտադիր են քաշել նավերի խարիսխները և բարեկամական թուրքական ափերից վերադառնալ իրենց կայանատեղին՝ Սևաստոպոլ:

Անկասկած Հունքյար-Իսքելեսիի պայմանագիրը հետագայում դարձավ անգլո-ռուսական հակասությունների սրման պատճառներից մեկը:

Մահմուդ II-ը չէր կարող ներել իր անհնազանդ վասալի կամայական գործողությունները և ցանկանում էր իր կառավարման տակ վերադարձնել Մուհամմեդ Ալիին անցած հողերը: Առավել ևս, որ Եգիպտոսի փաչան մտադիր էր այդ տիրույթները վերածել Օսմանյան կայսրությունից փաստացի կերպով անկախ ժառանգական փաչայության: Պատահական չէ, որ Հունքյար-Իսքելեսիի պայմանագրի կնքումից հետո սուլթանը սկսեց ռևանշ վերցնելու նախապատրաստական քայլեր ձեռնարկել: Նա, օրինակ, շարունակեց հետևակային բանակի՝ այսպես կոչված «Մուհամմեդի հաղթական զորքերի» («Asakir-i mansure-i muhammediye»), ինչպես նաև «Պահեստային հաղթական մահմեդական զորքերի» («Redif-i asakir-i mansure-i muhammediye») վերակազմակերպման ու եվրոպական ռազմական հրահանգիչների միջոցով մարզման գործը: Զինվորական դպրոցներում ավելացվեցին այն սպաների թիվը, որոնք ռազմական կրթություն էին ստացել Եվրոպայում: 30-ական թվականների կեսերին աստիճանաբար սկսեցին ձևավորվել նաև կանոնավոր հեծելազորային զորամասերը: Թուրք-եգիպտական կոնֆլիկտից հետո, երբ կայսրությունը գործնականում զրկվել էր իր բանակից, արդեն 1836 թ. թուրքական կանոնավոր բանակի թվաքանակը հասավ 70 հազար մարդու:

Երկրի ռազմա-ծովային հզորությունը վերականգնելու նպատակով նավաշինարաններում տենդագին կերպով կառուցվում էին նոր ռազմանավեր, որպեսզի համալրվեն նավարինյան ճակատամարտում ունեցած կորուստները: Թեև պետք է նշել, որ այնուամենայնիվ Մահ-

մուդ II-ին չհաջողվեց ռազմա-ծովային հզորությունը վերականգնելու բնագավառում ձեռք բերել նշանակալից արդյունքներ:

Ռազմական բնագավառի բարեփոխումներից բացի իրականացվում էին նաև այլ կարգի ռեֆորմներ, որոնք կոչված էին ամրապնդել պետության ներքին վիճակը և նոր պատերազմի դեպքում ապահովել հուսալի ու կայուն թիկունք: Այսպես, օրինակ, կառավարությունը չարունակեց պետության առջև իրենց զինվորական պարտականություններից խուսափող ավատատերերից նրանց ավատների գրավման քաղաքականությունը, նախկին ավատների կառավարման և այդ տիրույթներից կապալային համակարգով հարկերի հավաքման իրավունքը պետությունը վերցրեց իր ձեռքը: Սուլթանը փորձում էր նաև վերացնել չարաշահումները հարկեր ու տուրքեր գանձելու ժամանակ: 1834 թ. հրապարակվեց հրամանագիր, որը հարկահաններից ու հարկային աստիճանավորներից պահանջում էր վերջ տալ հարկատու բնակչության կեղեքումներին: Պետք է, սակայն, նշել, որ Մահմուդ II-ին այդպես էլ չհաջողվեց վերացնել նահանգային իշխանությունների կամայականությունները, վաղուց ի վեր արմատացած ու ավանդույթ դարձած պետական պաշտոնների առք ու վաճառքի պրակտիկան և այլն:

Վախենալով կայսրության քրիստոնյա բնակչության ապստամբությունների բռնկման վտանգից, Մահմուդ II-ը այցելություններ կատարեց կայսրության քրիստոնյա բնակչություն ունեցող շրջանները: 1837 թ. ապրիլին Բուլղարիա կատարած այցի ընթացքում Շումենի քրիստոնյա համայնքի հետ հանդիպումներից մեկի ժամանակ նա հայտարարեց. «Մեր ցանկությունն է աստվածախնամ ու մեծ պետության մեջ ապրող բոլոր բնակիչների, ինչպես մահմեդականների, այնպես էլ ռայաների հանգստության ու անվտանգության պաշտպանությունը: Չնայած բոլոր դժվարություններին՝ մենք լի ենք վճռականությամբ ապահովելու պետության և մեր կողմից հովանավորվող բնակչության ու ռայաների ծաղկումն ու բարգավաճումը: Իսկ դուք (խոսքը վերաբերում է ռայա-քրիստոնյաներին – Վ. Բ.), նկատի ունենալով մեր այդ ցանկությունը, պետք է հավատարիմ լինեք մեզ»:

Այդ նույն 1837 թ. Մահմուդ II-ը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ բոլոր հպատակները՝ իր հարազատ զավակներն են և ինքը նրանց նկատմամբ վերաբերվում է միատեսակ ու հավասար, նրանց մեջ տեսնելով միայն զուտ կրոնական տարբերություն: Ի հաստատումն իր այդ հավաստիացումների՝ վերացվեցին դարերի ընթացքում գոյություն ունեցած հագուստի տարբերություն-

ները մահմեդականների, քրիստոնյաների և հրեաների միջև, որի խախտման դեպքում ոչ մահմեդականները խստորեն պատժվում էին:

Այլադավաններին թույլատրվեց զգեստներ կրել ճիշտ այն կտորից, որից կարված էր մահմեդականների հագուստները:

Անշուշտ այդ բոլորը չէր նշանակում, որ սուլթան Մահմուդ II լի էր վճռականությամբ կայսրության մեջ վերացնելու ոչ մահմեդականների համար սահմանված արգելքներն ու սահմանափակումները և իրական հավասարություն ստեղծել մահմեդականների ու ոչ մահմեդականների միջև: «Դուք հույներ, հայեր և հրեաներ,- ասել է Մահմուդ II-ը,- ճիշտ և ճիշտ Աստծո այնպիսի ծառաներն եք և իմ հպատակները, ինչպես և մուսուլմանները. ձեր հավատը տարբեր է, սակայն ձեզ բոլորիդ միանման ձևով պաշտպանում է օրենքը և իմ կայսերական կամքը: Անտրտունջ վճարեցեք այն հարկերը, որոնք ես դնում եմ ձեզ վրա. այդ փողերը օգտագործվում են հենց ձեր օգտին և ձեր հանգստության համար»:

Այսպիսով, սուլթանը հավասարության պայման էր դնում հարկերի կանոնավոր, անտրտունջ վճարումը: Սակայն նույնիսկ այդ հարկերը մահմեդականների ու ոչ մահմեդականների համար տարբեր էին: Սուլթանը ոչինչ չէր ասում խարաջի, ջիզիեյի (գլխահարկ) և այլ հարկերի մասին, որոնք գանձվում էին միայն ոչ մահմեդականներից:

Պրուսացի սպա Հելմութ ֆոն Մոլթկեն հաղորդում է, որ երբ Մահմուդ II-ը ուղևորության էր մեկնել Ռումելիա և ճառեր էր արտասանում իր հպատակների հավասարության մասին, անհավասարությունը մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև ցայտուն կերպով դրսևորվեց նաև հետևյալ դիպվածի ժամանակ. երբ սուլթանը մտնում էր Շումեն քաղաքը, ճանապարհի երկու կողմերում չարված էին քաղաքի անվանի մարդիկ՝ աջից մահմեդականները, ձախից՝ ռայաները: «Մուսուլմանները կանգնած էին ուղիղ, ձեռքերը իրենց փորին դրած. իսկ ռայաները, նույնիսկ բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսները և այլն, ծնկաչոք վիճակում էին այնքան ժամանակ, մինչև որ սուլթանը չանցավ. նրանք իրավունք չունեին գլուխը բարձրացնել ու նայել փադիշահի ճաճանչափայլ դեմքին»:

Մահմուդ II-ը արյան մեջ խեղդում էր սերբերի, հույների, մոլդավացիների, վալախների, ալբանացիների, արաբների և կայսրության մյուս ժողովուրդների ապստամբությունները: 1828 թ. ձմեռվա սառնամանիքին նա մոտ 12 հազար հայ-կաթոլիկների Ստամբուլից արտաքսեց Անկարայի շրջանը:

Մահմուդ II-ը չոնդալից հայտարարությունները մահմեդականների և ոչ մահմեդականների հավասարության վերաբերյալ անշուշտ նպատակ ունեին թուլացնել ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, խուսափել Ռուսաստանի միջամտությունից և ձեռք բերել եվրոպական երկրների հասարակական կարծիքը:

1835 թ. սուլթան Մահմուդ II-ի հրամանով նախկին սադրազամ Մեհմեդ Ռեշիդ-փաշան, որը նշանակվել էր Սրվասի (Սեբաստիա) նահանգապետ, ձեռնամուխ եղավ Անատոլիայի և Արևմտյան Հայաստանի տարածքներում գործող քրդական ձորապետ-դերեբեյների հնազանդեցմանը: Նրա խնդիրն էր նաև քրդական ավազակախմբերից մաքրել Սև ծովից Իրան գնացող Տրապիզոն-Թավրիզ առևտրական ճանապարհը: Հազարավոր քրդերի ոչնչացնելուց հետո, Ռեշիդ փաշան աշիրեթային քրդերի զգալի զանգվածների ստիպեց նստակյաց կյանք վարել և հարկ վճարել պետությանը: Արդեն 1839 թ. քրդական դերեբեյների հնազանդեցման գործը հասնում էր իր ավարտին: Դերեբեյական իշխանությանը փոխարինելու էր գալիս թուրքական վարչությունը:

Մինչդեռ թուրք-եգիպտական հարաբերությունները գնալով ավելի ու ավելի էին սրվում: 1838 թ. Մուհամմեդ Ալին կատարեց մի քայլ, որը հավասարազոր էր անկախության հռչակմանը. նա հրաժարվեց այսուհետև հարկեր մուծել Բ. Դռանը: Միաժամանակ նա կտրուկ մերժեց ընդունել սուլթանական կառավարության առաջարկը ցորենի ու բրդի գնումների պետական մենաշնորհը վերացնելու վերաբերյալ: Կարծես թե դա քիչ էր սուլթանի զայրույթը առաջ բերելու համար, նա մեկ անգամ ևս կտրականապես պահանջեց իր կառավարման տակ գտնվող բոլոր տարածքների նկատմամբ իր ունեցած իշխանությանը տալ ժառանգական բնույթ:

Կողմերի միջև հարաբերությունները գնալով չիկանում էին: Սիրիայում, Պաղեստինում և Լիբանանում Մուհամմեդ Ալիի որդու՝ Իբրահիմ փաշայի դեմ բռնկած ապստամբությունները սուլթանի համար բարենպաստ պայմաններ էին ստեղծում Եգիպտոսի տիրակալի դեմ պատերազմ սկսելու համար:

1839 թ. գարնանը թուրքական զորքերը սկսեցին անմիջականորեն նախապատրաստվել պատերազմի: Եփրատի շրջանում Մահմուդը հավաքեց մի խոշոր բանակ Սիրիա ներխուժելու համար, որի բնակչության մեծագույն մասը դժգոհ էր Իբրահիմ փաշայի սահմանած վարչակարգից, որն ավելի էր բռնատիրական ու անտանելի, քան

սուլթանական վարչակարգը: Պատերազմի էր նախապատրաստվում նաև Մուհամմեդ Ալին, շարունակելով կտրուկ ավելացնել իր կանոնավոր բանակի ուժերը: Նա կարողացավ իր զինված ուժերի թվաքանակը հասցնել 150 հազար մարդու:

1839 թ. մայիսի վերջին սուլթանը պատերազմ հայտարարեց Մուհամմեդ Ալիին: Այսպիսով սկսվեց թուրք-եգիպտական երկրորդ պատերազմը: Թուրքական բանակը դեռ պատրաստ չէր պատերազմի: Սակայն սերասկեր (գլխավոր հրամանատար) Զերքեզ Հաֆըզ Մեհմեդ փաշան հավաստիացնում էր սուլթանին, որ ինքը ի վիճակի է հաղթելու եգիպտացիներին և մեկ անգամ ընդմիշտ լուծելու թուրք-եգիպտական կնճիռը: Իսկ թուրքական նավատորմի հրամանատար (կաբութան-փաշա) Ֆեզի Ահմեդ փաշան պարծենկոտ տոնով հայտարարում էր, որ ինքը «գերի կվերցնի ողջ եգիպտական նավատորմը»:

Պետք է նշել, սակայն, որ թուրքական բանակի մարտունակությանը և առհասարակ երկրի վիճակին քաջ ծանոթ մի շարք բարձր աստիճանավորներ դեմ էին Մուհամմեդ Ալիի դեմ նոր պատերազմին: Դրանց թվում էր նաև արքունիքում խիստ ազդեցիկ Խուսրև փաշան, թեև նրա ու Եգիպտոսի փաշայի միջև գոյություն ուներ անձնական բնույթի թշնամություն: Նա գտնում էր, որ Թուրքիան դեռևս պատրաստ չէ եգիպտական բանակի հետ չափվելու, ուստի համոզում էր սուլթանին հետաձգել պատերազմը և երկրի ներսում շարունակել քաղաքական ու ռազմական բարեփոխումները: Իսկապես, Խուսրև փաշան միանգամայն իրավացի էր: Հակառակորդն ուներ մեծաթիվ, լավ զինված, երկաթյա կարգապահություն ունեցող և մարտական մեծ փորձով օժտված բանակ, որի հրամանատարական կազմը ևս աչքի էր ընկնում իր արհեստավարժությամբ: Մասնավորապես եգիպտական բանակի հրամանատար Իբրահիմ փաշան և նրա սպայակույտի պետ, իսլամն ընդունած ֆրանսիացի սպա Սեը (Սուլեյման փաշա) տաղանդավոր զորավարներ էին:

1839 թ. մայիսի 22-ին անցնելով Եփրատը, Հաֆըզ փաշայի զորքերը գրավեցին նրա աջ ափին գտնվող Նիզիբ գյուղը (պատմական Մաբին քաղաքի տեղում): Արագորեն այդ նույն վայրում կենտրոնացան նաև Իբրահիմ փաշայի զորքերը: Թուրքական բանակի գլխավոր հրամանատարը իր մոտ եղած աստղագուշակներին հրամայել էր գուշակել հաղթական ճակատամարտի օրը: Ըստ երևույթին հենց նրանց խորհրդով առաջինը ակտիվ գործողությունների դիմեց Հաֆըզ փաշան: 1839 թ. հուլիսի 1-ին թուրքական զորքերի մի ջոկատ

գրավեց Այնթափ փոքրիկ քաղաքը (ներկայումս Գազիանթեպ)։ Իբրահիմ փաշան դա ընդունեց որպես պատերազմի ոչ պաշտոնական հայտարարում։ Հուլիսի 7-ին հրապարակվեց սուլթան Մահմուդ II-ի հրամանագիրը Մուհամմեդ Ալիին և Իբրահիմ փաշային պաշտոնանկ անելու մասին։ Այդ հրամանագրով նրանք հայտարարվում էին «ֆիրմանը», այսինքն օրենքից դուրս գտնվող դավաճաններ ու խռովարարներ, որոնք ենթակա են մահապատժի։ Գերագույն հոգևոր առաջնորդը՝ շեյխ-ուլ-իսլամը, հատուկ ֆեթվայով հոգևոր առումով օրինականացրեց վեհապետի պատերազմ հայտարարելու վճիռը։ Իսկ բանակում գտնվող հոգևոր ղեմքերը՝ ուլեմները, հայտարարեցին, որ «Փադիշահի գործը արդար է և Ալլահը կլինի նրան օգնական»։ Իրենց հերթին աստղագուշակները վստահեցրին սերասկերին, որ Նիզիբի մոտ նա կտանի փայլուն հաղթանակ։

Իբրահիմ փաշան իր զինվորներին բաժանեց իր տրամադրության տակ եղած վերջին հացը, հայտարարելով, որ Թուրքերի ճամբարում կա մեծ քանակությամբ հաց և մի քանի ժամից հետո իրենք կստանան այն։

1839 թ. հունիսի 24-ին Իբրահիմ փաշայի զորքերը արագ երթով անցան թուրքական բանակի թիկունքը և ընտրելով հարմար դիրքեր՝ տվեցին ճակատամարտ։ Հուժկու գրոհի հետևանքով թուրքական առաջապահ զորքերը խուճապի մատնվեցին և դիմեցին փախուստի։ Եվ թեև Հաֆըզ-փաշան խիզախորեն իրեն նետեց ճակատամարտի ամենաթեժ կետը, փորձելով կանգնեցնել դասալիքներին և բեկում մտցնել ճակատամարտի մեջ, սակայն դա նրան չհաջողվեց։ Միայն սուլթանական թիկնազորն էր համառ դիմադրություն ցույց տալիս թշնամուն։ Մնացած զորքը այլևս չլսելով հրամանատարների հորդորներին, խուճապահար փախչում էր։ Սուլթանական բանակը վերածվեց անկառավարելի ամբոխի։ Բանակի քուրդ զինվորները սկսեցին կրակել իրենց իսկ հրամանատարների ու թուրքերի վրա, և կողոպտել զինվորական գույքը։ Մեծ թվով զինվորներ նետեցին իրենց զենքը և լքելով ճակատը՝ ցրվեցին իրենց գյուղերը։

Նիզիբի ճակատամարտում թուրքական բանակը գլխովին ջախջախվեց։ Բանակի մնացուկները Այնթապի լեռներում ոչնչացվեցին բեդվինների, քրդերի և թուրքմենների կողմից։ Իր փայլուն հաղթանակից հետո Իբրահիմ փաշան մտադիր էր Մալաթիայի և Կոնիայի վրայով ներխուժել Անատոլիայի խորքերը։ Սակայն նրան կանգնեցրեց հոր՝ Մուհամմեդ Ալիի հրամանը։ Վերջինս հրամայեց չանցնել

Տավրոսը, մտավախություն ունենալով, որ Հունքյար-Իսքելեսիի պայմանագրի համաձայն Ռուսաստանը հանդես կգա Թուրքիայի կողմից: Ենթարկվելով հոր հրամանին՝ փաշան սրտի կսկիծով դադարեցրեց իր սրընթաց երթը, բավարարվելով նրանով, որ մի չարք հանգուցային նշանակություն ունեցող քաղաքներ՝ Դիարբեքիրը, Ուրֆան, Խարբերդը, Մալաթիան և Մարաշը գտնվում են իր հսկողության տակ:

Թուրքիայի կառավարական շրջաններում Նիզիբի մոտ տեղի ունեցած աղետի ողջ մեղքը բարդեցին Հաֆըզ-փաշայի վրա, նրան մեղադրելով, որ նախ հարձակումն սկսել է առանց սուլթանի հրամանի և ապա ապաշնորհհության պատճառով տանուլ է տվել ճակատամարտը: Այդ մեղադրանքների համար ռազմական դատարանը նրան կարող էր դատապարտել գլխատման: Թերևս նրան փրկեց այն, որ նա ներկայացրեց սուլթան Մահմուդ II-ի անձնական նամակը, որը պարունակում էր Իբրահիմ-փաշայի դեմ ռազմական գործողություններ սկսելու հրաման: 1839 թ. հուլիսի 28-ի սուլթանական ֆերմանով Հաֆըզ-փաշան հանվում էր սերասկերի պաշտոնից և աքսորվում Սրվաս:

Նիզիբի մոտ թուրքական բանակի ջախջախման լուրը Բ. Դոանը հասավ 10 օրից հետո, հուլիսի 4-ին: Մինչդեռ 1839 թ. հուլիսի 1-ին Մահմուդ II-ը մահացել էր (54 տարեկան հասակում, ծանր ու երկարատև հիվանդությունից հետո)՝ այդպես էլ չիմանալով այդ դաժան պարտության մասին:

Շուտով անսպասելի կերպով թուրքիան կրեց ևս մեկ ծանր հարված. Մահմուդ II-ի սիրեցյալ կաբութան փաշա ֆեզի Ահմեդ փաշան դավաճանելով իր երկրին ու սուլթանին, ողջ թուրքական ռազմական նավատորմը տարավ Ալեքսանդրիա և այն հանձնեց Մուհամմեդ Ալիին:

1839 թ. հուլիսին մեծ տերությունները որոշեցին միջամտել թուրք-եգիպտական կոնֆլիկտին, որի հետևանքով այդ վեճը թևակոխեց նոր փուլ: Թուրքիայի վրա պայթած ռազմական աղետը տագնապի էր մատնել Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրայի ու Պրուսիայի կառավարություններին: Ոչ ոք չէր ենթադրում, որ թուրքական բանակը կարող էր կրել այդպիսի խոշոր պարտություն, այն էլ մի քանի ժամվա ընթացքում:

Տերությունները մտավախություն ունեին, որ բանակից ու նավատորմից զրկված Բ. Դուռը կընդունի Մուհամմեդ Ալիի բոլոր պահանջները, այդ թվում նաև տարածքներ զիջելու վերաբերյալ: Մինչդեռ Ֆրանսիայից բացի ոչ մի պետություն հակված չէր աջակցելու Եգիպտոսի փաշայի տարածքային պահանջներին:

Տերությունները վախենում էին նաև իրադարձություններին Ռուսաստանի նոր միջամտության հավանականության առթիվ:

Այսպիսով, Թուրքիայի պարտությունը Նիզիբի մոտ հանգեցրեց մերձավորարևելյան ճգնաժամի խորացմանը: Եվրոպական տերությունների միջև հակասությունները այն աստիճանի սրվեցին, որ ստեղծվեց համաեվրոպական խոշոր պատերազմի սպառնալիք: Մինչդեռ տարբեր պատճառներով պետություններից ոչ մեկը չէր տենչում պատերազմի: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բոլոր մեծ պետությունները միմյանց հետ կապված էին Օսմանյան կայսրության անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև թագավորող օսմանյան դինաստիան որպես միակ օրինական իշխանություն ճանաչելու համաձայնագրերով: Այդ բոլորը նկատի ունենալով, արևմտյան տերությունների ներկայացուցիչները ունենում էին գաղտնի հանդիպումներ, որպեսզի մշակեն թուրք-եգիպտական կնճռի կարգավորման պլան: Սակայն գործը դժվարանում էր նրանով, որ Ֆրանսիան հրաժարվում էր համագործակցությունից, պաշտպանելով սուլթանի նկատմամբ Մուհամմեդ Ալիի հավակնությունները, քանի որ դրանց մի մասը համապատասխանում էր Փարիզի սեփական շահերին:

Ստամբուլում անչուշտ գիտակցում էին, որ թուրք-եգիպտական վեճի միջազգայնացումը կարող է անցանկալի հետևանքներ ունենալ օսմանյան պետության համար: Ուստի որոշվեց հարցի կարգավորումը իրականացնել առանց կողմնակի միջամտության, սեփական ուժերով: Այդ նպատակով 1839 թ. հուլիսի 10-ին որպես հատուկ հանձնարարություններ դեսպան Կահիրե ուղարկվեց Բ. Դոան քարտուղարներից մեկը՝ Աքրոֆ էֆենդին: Նա իր հետ Մուհամմեդ Ալիին հանձնելու համար բերել էր նոր սուլթան Աբդուլ Մեջիդի հաթթը հումայունը (բարձրագույն հրամանը), մեծ վեզիր Խուսրև փաշայի նամակը և «նիշան-ի իֆթիխար» փառքի չքանշանը: Հրամանագրում ասվում էր, որ ցանկանալով երկրի ու բնակչության համար ապահովել հանգստություն և կարգ ու կանոն և կանխել զուր տեղը մահմեդականների արյունը հեղելուց, սուլթանը մոռացության է մատնում մինչև այժմ տեղի ունեցած իրադարձությունները, ներում է Մուհամմեդ Ալիին և նրան չնորհում Եգիպտոսին տիրելու ժառանգական իրավունք:

Սակայն պատանի սուլթան Աբդուլ Մեջիդի այդ «չնորհը» մերժվեց Եգիպտոսի փաշայի կողմից, որը դարձյալ պնդեց, որ Ստամբուլի կողմից իրեն պետք է տրամադրվի ժառանգական իրավունք տիրա-

պետելու Եգիպտոսին և «մնացած բոլոր հողերին», որոնք գտնվում են իր հսկողության տակ: Խոսքը վերաբերում էր Սիրիային, Կիլիկիային, Հարավ-Արևելյան Անատոլիային, Կրետե կղզուն և Արաբիային: Ավելի առաջ գնալով նա պահանջեց մեծ վեզիրի պաշտոնից հեռացնել Խուսրև փաշային: Մուհամեդ Ալին խոստացավ վերադարձնել նավատորմը, սակայն այն բանից հետո, երբ Բ. Դուռը կկատարի իր «խնդրանքները»:

Պարզ է, որ այդ պայմանները չէին կարող ընդունվել Ստամբուլի կողմից: Հետևաբար Աքրֆ փաշայի առաքելությունն ավարտվեց ձախողմամբ և նա դատարկաձեռն վերադարձավ մայրաքաղաք:

Եվրոպական պետությունները այդ իրադարձությունից հետո եկան այն համոզման, որ այլևս անթույլատրելի է իրենց կողմից հարցի լուծման ձգձգումը: Որոշվեց պատժամիջոցներ կիրառել Մուհամմեդ Ալիի նկատմամբ: 1840 թ. հուլիսի 15-ին առանց Ֆրանսիայի մասնակցության, եվրոպական չորս առաջատար պետությունները՝ Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան Լոնդոնում ստորագրեցին կոնվենցիա, ըստ որի իրենց վրա պարտավորություն էին վերցնում գործել համատեղ՝ Մուհամմեդ Ալիին ստիպելու համար, որպեսզի նա ընդունի կոնֆլիկտը վերացնելու վերաբերյալ իրեն ներկայացված պահանջները: Այդ պահանջները չարադրված էին առանձին փաստաթղթում: Այնտեղ ասվում էր, որ սուլթանը Մուհամմեդ Ալիին և ուղիղ գծով արական սեռի նրա ժառանգորդներին, որպես ժառանգական տիրույթ տրամադրում է Եգիպտոսի փաշայությունը և որպես նրան անձամբ հատկացվող ցմահ տիրույթ Ակկայի փաշալիքը: Դրա դիմաց Մուհամմեդ Ալին պարտավորվում է սուլթանին վերադարձնել Արաբիան իր սրբազան քաղաքներ Մեքքայով ու Մեդինայով, Ադանայի շրջանը, Սիրիան, Կրետե կղզին, Թուրքական նավատորմը. վճարել տարեկան տուրք մի այնպիսի գումարով, որը կորոշվի համաձայն փաշայի ստացած եկամուտների չափից. իր կողմից կառավարվող տարածքներում կատարել օսմանյան կայսրության բոլոր օրենքները և օտարերկրյա պետությունների հետ նրա կնքած պայմանագրերը:

Կոնվենցիայի երրորդ կետում ասվում էր, որ եթե Մուհամմեդ Ալիի ցամաքային և ծովային ուժերը փորձեն գրավել Կ. Պոլիսը, սուլթանի խնդրանքով չորս պետությունները իրենց վրա կվերցնեն Բոսֆոր և Դարդանել նեղուցների և Կ. Պոլսի պաշտպանությունը, ինչպես նաև օսմանյան դինաստիայի պահպանման հոգը: 1840 թ. Լոն-

դոնի կոնվենցիայի ստորագրումը առանց Ֆրանսիայի մասնակցության Փարիզի կողմից ընկալվեց որպես «դիվանագիտական Վաթերլոո»: Ֆրանսիական թերթերը Անգլիային սպառնում էին պատերազմով:

Կոնվեցիայի ստորագրման օրը չորս պետությունների և Թուրքիայի լիազորված անձինք հատուկ արձանագրությամբ որոշեցին, որ գործերի վիճակը Սիրիայում պահանջում է անհապաղ սկսել ռազմական գործողություններ, չսպասելով Կահիրեի պատասխանին: 1840 թ. օգոստոսի 5-ին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Մուստաֆա Ռեշիդ փաշան հայտարարեց, որ Բ. Դուռը կատարելապես համաձայն է Լոնդոնի կոնվենցիայի որոշումների հետ:

Բ. Դուռը Ալեքսանդրիա ուղարկեց իր հատուկ ներկայացուցիչ, արտաքին գործերի նախարարության խորհրդական Սաղրդ Ռիֆաթ բեյին, Լոնդոնում ընդունված որոշումները Եգիպտոսի փաշային հայտնելու և նրան հանձնելու վերջնագրի ձևով շարադրված սուլթանի առաջադրած պայմանները: 1840 թ. օգոստոսի 19-ին Ալեքսանդրիայում Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի գլխավոր հյուպատոսները իրենց կառավարությունների հանձնարարությամբ Մուհամմեդ Ալիին հանձնեցին մի նոտա, որը վերջնագրի տոնով Եգիպտոսի փաշայից պահանջում էր տալ իր համաձայնությունը սուլթանի կողմից առաջադրած պայմաններին: Այդ նոտան ծայրից ծայր պարունակում էր սպառնալիքներ: Սակայն Մուհամմեդ Ալին կտրականապես մերժեց սուլթանի պահանջները: Նա Ռիֆաթ բեյին հայտարարեց. «Երդվում եմ Ալլահով, որ ես չեմ զիջի մի թիզ անգամ այն հողերից, որոնց տիրապետում եմ: Եթե ինձ պատերազմ հայտարարեն, ես գլխիվայր չուռ կտամ փաղիշահի տիրույթները և կայսրությունը կթաղեմ փլատակների տակ»: Միաժամանակ նա չորս պետությունների հյուպատոսների և Ռիֆաթ բեյի ներկայությամբ հայտարարեց. «Տիրույթները տալիս է Տերը և ինքն էլ հետ է վերցնում: Ես ինձ հանձնում եմ Աստծո կամքին»: Դրան նա ավելացրեց, որ եթե իր հակառակորդները իր նկատմամբ թույլ տան նվազագույն իսկ թշնամական գործողություններ, ապա ինքը կչարժվի Ստամբուլի վրա:

Ստանալով Մուհամմեդ Ալիի այդ պատասխանը՝ 1840 թ. սեպտեմբերի 14-ին Աբդուլ Մեջիդը հրապարակեց սուլթանական ֆերման, որով Մուհամմեդ Ալին հայտարավում էր խռովարար, զրկվում էր իր բոլոր տիտղոսներից և հեռացվում էր Եգիպտոսի կուսակալի պաշտոնից:

1840 թ. հուլիսին բրիտանական կառավարությունը հրամայել էր Միջերկրական ծովում անգլիական ռազմա-ծովային ուժերի հրամա-

նատար ծովակալ Ստոպֆորդին շրջափակել սիրիական և եգիպտական ծովափը: Այդ գործողությանը մասնակցում էին նաև ավստրիական և թուրքական ռազմածովային ուժերը: Ֆրանսիան, որը չցանկացավ պատերազմի մեջ մտնել Եգիպտոսի փաշայի դեմ, իր նավատորմը հետ կանչեց Միջերկրական ծովից: Սեպտեմբերին դաշնակիցների նավերը ուժգին ռմբակոծության ենթարկեցին Բեյրութը և զորքեր հանեցին այնտեղ: Այնուհետև դաշնակիցները գրավեցին Թիրը, Տրիպոլին, Սայդան, Հայֆան, Երուսաղեմը և ուժեղ քաղաք-ամրոց Ակկան: Ռազմական այդ ընդհարումների ժամանակ Իբրահիմ փաշան կորցրեց մոտ 68 հազար զինվորներ: Նրա վիճակը ծանր էր նաև այն պատճառով, որ ողջ Սիրիան և Լիբանանը բռնված էր հակաեգիպտական ապստամբության կրակով: Անգլիացիներն ու ավստրիացիները ապստամբներին տրամադրում էին զենք, զինամթերք ու դրամ: Միանգամայն ակնհայտ էր, որ Իբրահիմ փաշան կրել է պարտություն: Այդ ժամանակ Մետերնիխը հանդես եկավ Եգիպտոսը կառավարելու հարցում Մուհամմեդ Ալիի իրավունքները վերականգնելու առաջարկով: Այն անմիջապես աջակցություն գտավ Ռուսաստանի կողմից, որը մտահոգված էր Մերձավոր Արևելքում Անգլիայի չափից ավելի ուժեղանալու խնդրով: Անգլիան դժկամությամբ, սակայն այնուամենայնիվ ստիպված էր տալ իր համաձայնությունը:

1841 թ. դեկտեմբերի 6-ին ծովակալ Ստոպֆորդը դաշնակից պետությունների կառավարությունների հանձնարարությամբ տեղեկացրեց Մուհամմեդ Ալիին, որ Եգիպտոսի փաշայությունը նրան կտրվի որպես ժառանգական տիրույթ միայն այն դեպքում, երբ իր՝ Ստոպֆորդի նամակը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում նա կվերադարձնի թուրքական նավատորմը և լրիվ կհեռանա Սիրիայից:

Անելանելի վիճակի մեջ հայտնված Մուհամմեդ Ալին դեկտեմբերի 11-ին միաժամանակ հայտնեց Ստոպֆորդին և Բ. Դոանը, որ ընդունում է ծովակալի ներկայացրած պայմանները, իր հնազանդությունն է հայտնում սուլթանին, իրեն ճանաչելով որպես նրա վասալ, Իբրահիմ փաշան հեռանում է Սիրիայից, ինքը Եգիպտական իշխանություններին հետ կկանչի Հեջազից, Մեքքայից, Մեդինայից և Կրետե կղզուց: Իր պատասխանում Եգիպտոսի փաշան խնդրում էր նաև ներումն:

Դեկտեմբերի 13-ին ստանալով փաշայի նամակը՝ ծովակալ Ստոպֆորդը դաշնակցային ցամաքային և ծովային ուժերին հրաման տվեց դադարեցնել ռազմական գործողությունները:

1841 թ. մարտի 5-ին Լոնդոնում Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի,

Պրուսիայի, Ռուսաստանի և Թուրքիայի ներկայացուցիչները ստորագրեցին արձանագրություն այն մասին, որ Մուհամմեդ Ալին կատարել է իրեն ներկայացված պահանջները, իսկ սուլթանն ընդունել է նրա հնազանդությունը և նրան վերականգնել է Եգիպտոսի փաշայի պաշտոնում, այդ երկրի նկատմամբ տրամադրելով ժառանգական իշխանության իրավունք:

1841 թ. մայիսի 23-ին Բ. Դուռը Մուհամմեդ Ալիին հղեց մի ֆերման, որը նախապես արժանացել էր Կ. Պոլսում չորս պետությունների դեսպանների հավանությանը: Նրա հիմնական դրույթներն էին. Բ. Դռան բոլոր որոշումներն ու հրահանգները, օտարերկրյա պետությունների հետ Օսմանյան կառավարության կնքած կամ կնքվելիք բոլոր պայմանագրերը պետք է պարտադիր կարգով գործադրվեն Եգիպտոսի փաշայությունում: Նշվում էր, որ առանձին ֆերմանով կորոշվի տարեկան տուրքի չափը: Խաղաղ ժամանակ եգիպտական բանակի թվաքանակը պետք է լինի 18 հազար մարդ և այն օգտագործվելու է ներքին կարիքների համար: Եգիպտոսի բանակը և ռազմածովային նավատորմը դիտվում են որպես Բ. Դռան ռազմական ուժերի մի մասը: Եգիպտոսի փաշային արգելվում է կառուցել ռազմանավեր առանց սուլթանի թույլտվության:

Մուհամմեդ Ալին հարկադրված էր ընդունել բոլոր այդ պայմանները, ըստ էության ենթարկվելով կապիտուլյացիայի: Դրանով ավարտվեց 10 տարի տևած թուրք-եգիպտական կոնֆլիկտը, որն առաջ էր բերել խոշոր միջազգային բարդություններ:

Այսպիսով, չնորհիվ եվրոպական տերությունների միջամտության, թուրք-եգիպտական կոնֆլիկտն ավարտվեց սուլթանի հաղթանակով: Ռազմաճակատներում հաղթանակած Եգիպտոսը դիվանագիտական ասպարեզում կրեց ծանր պարտություն: Այդ երկիրը չարունակեց մնալ Օսմանյան կայսրության կազմում:

Քանի որ կոնֆլիկտի չրջանում Ռուսաստանը Հունքյար-Իսքելեսիի պայմանագրի դրույթների համաձայն գործուն աջակցություն չցուցաբերեց Օսմանյան կայսրությանը, կոնֆլիկտին հաջորդող ժամանակաշրջանում Ստամբուլում ուժեղացավ անգլիական քաղաքական կողմնորոշումը, որի ջատագովն ու ոգեշնչողը Մուստաֆա Ռեշիդ փաշան էր:

Պետք է նշել նաև, որ կոնֆլիկտի չրջանում թուրքական դիվանագիտությանը հաջողվեց ճկուն քայլերով չեզոքացնել Մուհամմեդ Ալիին աջակցող Ֆրանսիային՝ վարպետորեն օգտագործելով ֆրանս-ռուսական և ֆրանս-անգլիական հակասությունները:

Լոնդոնի 1841 թ. կոնվեցիան, որը ձևականորեն վերաբերում էր գլխավորապես թուրք-եգիպտական կոնֆլիկտին, ըստ էության դարձավ կոնվենցիա Սևծովյան նեղուցների կարգավիճակի մասին:

1841 թ. հուլիսի 13-ին Ավստրիայի, Անգլիայի Պրուսիայի և Ռուսաստանի կառավարությունները ստորագրեցին հատուկ կոնվենցիա նեղուցների վերաբերյալ: Այսուհետև Դարդանելի և Բոսֆորի Նեղուցները խաղաղ ժամանակ մշտապես փակ էին լինելու օտարերկրյա ռազմանավերի համար: Կոնվենցիան անժամկետ էր: Ռուսաստանի նավատորմը Սև ծովում դրվում էր փականքի տակ, իսկ Թուրքիայի նկատմամբ հաստատվում էր Եվրոպական հինգ պետությունների հավաքական հովանավորություն կամ խնամակալություն: Օսմանյան կառավարությունը չէր կարող բանակցություններ վարել առանձին տերությունների հետ կոնվենցիայի հարցերի վերաբերյալ, քանի որ պարտավոր էր պահպանել հավաքական կերպով ձեռք բերած համաձայնությունները: Այդ բոլորով հանդերձ՝ կոնվենցիան ձեռնտու էր Թուրքիային, քանի որ նա ձեռք էր բերում գլխավորը՝ արգելքը նեղուցներից օտարերկրյա ռազմանավերի անցման վերաբերյալ:

Այսպիսով, XIX դ. 30-ական թվականների վերջին ավարտվում էր սուլթան Մահմուդ II-ի դարաշրջանը: Դա Օսմանյան կայսրության պատմության ամենահետաքրքիր և ուշագրավ շրջաններից էր: Լինելով բարեփոխիչ՝ սուլթանը նաև կարողացել էր իրեն շրջապատել այնպիսի մարդկանցով, որոնք հասկանում էին բարեփոխումներ իրականացնելու կարևորությունը և օգնում էին նրան դրանք իրականացնելու գործում: Դրանցից մեկը սուլթանի փեսա, նավատորմի հրամանատար (կապուդան-ը դերյա) Խալիլ փաշան 1830 թ. վերադառնալով Ռուսաստանից, սուլթանին ասել էր. «Եթե մենք չգնանք Եվրոպայի ճանապարհով, մեզ ոչինչ չի մնա, եթե ոչ վերադառնալ Ասիա»:

Ժամանակակիցների վկայությամբ սուլթան Մահմուդ II-ը հանդիսանում էր մեծ խելքի, կայուն խառնվածքի տեր ու վճռական անձնավորություն: Նա համառ ու հետևողական էր իր առջև դրված խնդիրները լուծելիս: Միաժամանակ նա դաժան ու անողոք էր իր ամեն կարգի թշնամիների նկատմամբ: Մարդկային կյանքը նրա համար արժեք չի ունեցել: Հաճախ նա մահապատժի էր ենթարկում իր ճանապարհին կանգնած մարդկանց, չատ չխորանալով, թե նրանք անմեղ են թե մեղավոր: Նման մեթոդներով նա ընկճում ու հնազանդեցնում էր պետության ներսում գոյություն ունեցող բոլոր այն տարրերին, ո-

րոնք արգելակում էին իր նախորդի և իր ձեռնարկած բարեփոխումների իրականացմանը: Մի բան, սակայն, անվիճելի է, որ Սելիմ III-ի բարենորոգչական գործունեության ձախողումից հետո Մահմուդ II-ը նոր չունչ հաղորդեց Օսմանյան կայսրության արդիականացման շարժմանը, որը տրամաբանական հիմք հանդիսացավ Թանզիմաթյան շրջանի ավելի ծավալուն բարենորոգչական շարժման համար:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԹԱՆԶԻՄԱԹԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

1. ԳՅՈՒԼՀԱՆԵԻ ՀԱԹԹԸ-Ը ՇԵՐԻՖԸ ԵՎ 1840-1841 ԹԹ. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Մահմուդ II-ի մահվանից հետո օսմանյան գահը ժառանգեց նրա 16-ամյա որդին՝ Աբդուլ Մեջիդ I-ը (1839-1861): Ժամանակակիցները նրան բնութագրում են որպես ֆիզիկապես տկար, վերին աստիճանի զգայուն, կասկածամիտ, սակայն միևնույն ժամնակ զգաստ դատողությունների տեր, իր պարտքի գիտակցությամբ հստակորեն օժտված մի անձնավորություն: Ինչպես և իր նախորդները, նա բացարձակ, ոչնչով չսահմանափակվող իշխանության կողմնակից էր: Այդ իշխանությունը նա համարում էր Ալլահից չնորհված: Միաժամանակ Աբդուլ Մեջիդը հասկանում էր, որ անհրաժեշտ է ժամանակի պահանջներին համապատասխան իրականացնել բարեփոխումներ, որպեսզի իր երկիրը դուրս բերվի հետամնացությունից, բարելավվի նրա տնտեսական ու ներքին քաղաքական իրավիճակը, բարձրացվի նրա կշիռը միջազգային գործերում:

Աբդուլ Մեջիդը հանդիսացել է օսմանյան պետության եվրոպականացման ջատագով: Նա նույնիսկ կողմնակից է եղել կենցաղում եվրոպական նորմերի, մշակույթի, արվեստի տարածմանն ու արմատավորմանը: Ժամանակակիցները նրա մասին ասում էին, որ «դա մի փաղիչահ է, որ ապրում է եվրոպական ձևով»: Նա սիրում էր եվրոպական երաժշտությունը, խոսում էր ֆրանսերեն, Եվրոպայից հրավիրում էր ճարտարապետներ և այլն: Պատանի սուլթանը անկեղծորեն ձգտում էր հետևել իր հոր օրինակին և բարեփոխումների հարցը հասցնել մինչև վերջ: Սակայն չունենալով հոր վճռականությունն ու քաղաքական կամքը՝ գործը առաջ տանելու սեփական նախաձեռնությամբ, առանց կողմնակի անձանց խորհուրդների, պատանի սուլթանը կարիք ուներ գիտակ ու չրջահայաց խորհրդականների: Այդ-

պիսին հանդիսացավ ականավոր պետական գործիչ, դիվանագետ Մուստաֆա Ռեշիդ Փաշան (1800–1858)։ Նա իր դիվանագիտական գործունեությունը սկսել էր 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին, որպես թուրքական պատվիրակության քարտուղար մասնակցելով 1829 թ. Ադրիանոպոլսի խաղաղության բանակցություններին։ 1832 թ. ստացել էր «ամեղի» կոչված պաշտոնը, այսինքն մեծ վեզիրի գրասենյակի այն բաժնի չինովնիկի պաշտոնը, որը զբաղվում էր օտարերկրյա գործերով։

Դեռևս Մահմուդ II-ի օրոք, 1834 թ. Ռեշիդ-բեյին ուղարկել էին Փարիզ որպես դեսպանորդ (orta elçi)։ Այնտեղ նա շփումների մեջ էր մտել եվրոպական դիվանագետների և պետական գործիչների հետ, ուսումնասիրում էր Ֆրանսիայի մայրաքաղաքի կյանքը, ֆրանսիական պետական համակարգը, սովորում էր ֆրանսերեն։ 1836 թ. աշնանը նա նշանակվել էր Օսմանյան կայսրության դեսպան Լոնդոնում։

Փարիզում և Լոնդոնում գտնվելու ժամանակ նա ակնառու կերպով տեսել էր, թե ինչպիսի խորը անդունդ է առաջացել Թուրքիայի և արևմուտքի երկրների միջև և որքան է իր երկիրը հետ մնացել Եվրոպայի զարգացած պետություններից։ Նա եկել էր այն համոզման, որ միայն բարեփոխումների ճանապարհով օսմանյան պետությունը կարող է հաղթահարել իր տևական քաղաքական ու տնտեսական ճգնաժամը, մերձենալ արևմտաեվրոպական կյանքի չափանիշներին և բարձրացնել իր միջազգային հեղինակությունը։ Ռեշիդ բեյի վրա հատկապես ուժգին տպավորություն էր գործել Ֆրանսիայում և Անգլիայում գոյություն ունեցող քաղաքական վարչակարգը՝ ի դեմս սահմանադրական միապետության։ Ռեշիդ-բեյը եկել էր այն համոզման, որ կառավարման այդ ձևը ընդօրինակելի է Թուրքիայի համար։ Դժվար չէ նկատել, որ նրա անհատականության ու հայացքների ձևավորման գործում առանձնահատուկ դեր է խաղացել այն հանգամանքը, որ իրերի բերումով դարձել էր դիվանագետ։

1837 թ. հունիսին Մուստաֆա Ռեշիդ-բեյը նշանակվեց արտաքին գործերի նախարարի պաշտոնում՝ միաժամանակ ստանալով փաշայի տիտղոս։ Եվրոպայից վերադառնալով Ստամբուլ, Ռեշիդ փաշան սուլթան Մահմուդ II-ը ներկայացրեց մի զեկուցագիր (լյահա), որտեղ թվարկվում էին մի շարք միջոցառումների մասին, որոնք նրա կարծիքով հույժ անհրաժեշտ էին երկրի տնտեսական վիճակը, հարկային համակարգը, կառավարման մարմինների գործունեությունը և այլն բարելավելու համար։ Ծանոթանալով այդ զեկուցագրին՝ սուլթանը իր համաձայնությունը տվեց պատրաստելու մի փաստաթուղթ, որը

պետք է դառնար բարեփոխումների ծրագիր: 1838 թ. ստեղծվեց «Հանրօգուտ աշխատանքների խորհուրդ» («Meclis-i umur-i nafia») անունով մի կառույց, որը զբաղվելու էր բարեփոխումների ընդարձակ նախագծի մշակման աշխատանքներով: Սուլթանի հրամանով գլխավորելով այդ կառույցը, Ռեշիդ փաշան իր օգնականների հետ միասին մշակեց այդ ծրագիրը:

Սակայն հենց սկզբից բարեփոխումների նախագիծը հանդիպեց ուժգին դիմադրության: Հակառակորդների թվում էին այնպիսի ազդեցիկ դեմքեր, ինչպիսիք էին մեծ վեզիր Խուսրև փաշան, ներքին գործերի մինիստր Աքրֆ փաշան և ուրիշներ: Օգտվելով այն հանգամանքից, որ սուլթան Մահմուդ II-ը ծանր հիվանդ էր, բարեփոխումների հակառակորդներին հաջողվեց կասեցնել սուլթանական հրամանագրի հրապարակումը երկրում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ: Իսկ իրեն՝ Ռեշիդ փաշային մայրաքաղաքից հեռացնելու նպատակով հատուկ հանձնարարությամբ՝ որպես արտաքին գործոց նախարար, ուղարկեցին Անգլիա:

Ստանալով սուլթան Մահմուդ II-ի մահվան լուրը՝ Ռեշիդ փաշան անմիջապես վերադարձավ Ստամբուլ բարեփոխումների ծրագիրը կյանքի կոչելու համար: Նա արժանացավ նոր սուլթան Աբդուլ Մեջիդի սիրալիր վերաբերմունքին, որը փաշային վերահաստատեց արտաքին գործերի նախարարի պաշտոնում և հանձնարարեց շուտափույթ կերպով իր ավարտին հասցնել բարեփոխումների մշակման գործը: Հարկ է նշել, որ բարեփոխումների նախագիծը մշակելիս Ռեշիդ-փաշայի օգնականները հիմնականում հույներն էին և հայերը, այսինքն այն ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք ամենաշահագրգռվածն էին բարեփոխումների իրականացման հարցում:

Բարեփոխումների նախագիծը սուլթանի կողմից հաստատվելուց հետո օրակարգում դրված էր այն պաշտոնապես հրապարակելու հարցը: Այսպես կոչված «Թանզիմաթական» (թուրքերեն «Թանզիմաթ» բառացիորեն նշանակում է բարեփոխում, ռեֆորմ) բարեփոխումների մեկնարկը հանդիսացավ հաթթ-ը շերիֆը (սրբազան հրամանագիր), որը սուլթան Աբդուլ Մեջիդի, օտարերկրյա դիվանագետների, թուրք պաշտոնական անձանց, հույն, հայ և հրեական միլլեթների ներկայացուցիչների ներկայությամբ, հանդիսավոր կերպով հրապարակվեց 1839 թ. նոյեմբերի 3-ին, սուլթանական Գյուլհանե («Վարդերի տուն») կոչված պալատում: Գյուլհանեի հաթթ-ը շերիֆը սկիզբ դրեց մի ամբողջ շարք բարեփոխումների, որոնք իրականացվեցին XIX դարի 40-50-ական թվականներին և որոնք պատմու-

թյան մեջ մտան Թանզիմաթի բարեփոխումներ կամ «բարերար ռեֆորմներ» (tanzimat-i hayriye) ընդհանուր անվան տակ:

Սուլթանը, ուլեմները և աշխարհիկ պաշտոնեությունը երդում տվեցին, որ ճշտիվ կկատարեն հրամանագրում նշված բոլոր դրույթները: Հաթթ-ը չերիֆի ընդունումը նշանավորվեց գառան զոհաբերությամբ և հրետանային 101 համազարկերով: Ընդունվեց որոշում ամեն տարի նշելու Գյուլհանեի հաթթ-ը չերիֆի ընդունման տարեդարձը և ի նշանավորումն այդ իրադարձության կանգնեցնել հուշարձան:

Ինչի՞ մասին էր խոսվում հաթթ-ը չերիֆում: Ներածության մեջ ասվում էր, որ նախկին ժամանակներում, երբ Օսմանյան կայսրության մեջ պահպանվում էին Ղուրանի կանոններն ու օրենքները, պետությունը օժտված էր ուժով ու վեհությամբ և նրա բոլոր հպատակները, առանց բացառության, ապրում էին վերին աստիճանի բարեկեցիկ կյանքով: Սակայն վերջին հարյուր հիսուն տարիների ընթացքում օրենքներն ու կարգը չէին պահպանվում և դրա հետևանքով պետությունը թուլացավ ու կորցրեց իր նախկին ուժն ու վեհությունը: Այնուհետև հույս էր հայտնվում, որ Թուրքիայի աշխարհագրական դիրքը, նրա բերքատու հողը, «բնակիչների ընդունակությունները ու առողջ դատողությունը» հնարավորություն կտան, որ գործնական միջոցառումներ ձեռնարկելու դեպքում մի քանի տարվա մեջ հնարավոր լինի «աստծո օգնությամբ» ձեռք բերել այն, ինչին որ «մենք ձգտում ենք»:

Մանրամասնորեն չարադրվում էր, թե ինչ միջոցառումներ են ձեռնարկվելու երկրի ու պետության առջև դրված նպատակներն իրագործելու համար: Հաթթ-ը չերիֆը խոստանում էր երաշխավորել Օսմանյան կայսրության բոլոր հպատակների կյանքի, պատվի և գույքի անվտանգություն, հարկերի ու տուրքերի գանձման արդարացի եղանակի ապահովում, մասնավորապես հարկահավաքման կապալային համակարգի («իլթիզամ») վերացում, բանակի համար զինվորների հավաքագրման պատշաճ կարգի հաստատում և զինվորական ծառայության ժամկետի կրճատում (վերացվում էր ցմահ ծառայության կարգը և սահմանվում էր 4 կամ 5 տարվա ծառայության ժամկետ), նշվում էր, որ այսուհետև ոչ մահմեդականները ևս իրավունք են ստանում ծառայելու օսմանյան պետության զինված ուժերում: Փաստաթղթում ընդգրկված էին նաև դրույթներ, որոնք վերաբերում էին դատավարությանը, դատական գործընթացների հրապարակայնությանը, դատապարտվածների գույքի բռնագրավման պրակտիկայի դադարեցմանը: Մտցվում էր անմեղության կանխավարկածի

սկզբունքը, այսինքն՝ ամեն մի հանցանք պետք է հետաքննվի, ապացուցվի և այնուհետև հրապարակայնորեն դատապարտվի շարիաթական օրենքի հիման վրա: Առանց դատավճռի ոչ ոքի չի թույլատրվելու բացահայտ կամ գաղտնի պատժելու մեկ ուրիշի: Ոչ ոքի չի թույլատրվելու նաև վիրավորանք հասցնելու որևէ մեկին, կամ բռնագրավելու մեկ ուրիշի հողը:

Հրամանագիրը հայտարարում էր կայսրության բոլոր հպատակների իրավունքների ու պարտականությունների հավասարության մասին՝ առանց դավանանքի խտրության: Հաթթ-ը չերիֆը նաև երաշխավորում էր բոլորի ազատությունն ու անկախությունը օրենքի սահմաններում:

Այդ փաստաթուղթը ըստ էության հանդիսանում էր կայսրության հպատակների իրավական, սոցիալական և քաղաքական իրավունքների մի խարտիա: Սուլթանը դրանց կատարումը երաշխավորում էր երդմամբ: Հաթթ-ը չերիֆը դեռևս օրենսդրական ակտ չէր, այլ լոկ հռչակագիր, որը նախանշում էր որոշակի սկզբունքներ օրենքներ կազմելու համար: Ընդ որում, ինչպես նշում է Թուրք պատմաբան Թարըք Թունայան, հռչակելով անձի իրավունքների երաշխավորվածության սկզբունքը, հրամանագիրը այն դիտարկում էր ոչ թե որպես մարդու բնական իրավունք, այլ լոկ որպես միապետի կողմից հատկացված բարձրագույն շնորհ: Իր հրամանագիրը հրապարակելիս, սուլթանը պարտավորվում էր հետևել հաթթ-ը չերիֆի ոգուն ու տառին: Ըստ էության դա ինչ որ տեղ նշանակում էր, որ միապետի բացարձակ իշխանությունը ինչ-որ չափով սահմանափակվում էր, քանի որ նա պարտավորվում էր ենթարկվել ուրիշ մարդկանց կողմից պատրաստված օրենքներին: Անշուշտ դա բնավ չէր նշանակում, որ կյանք էր մտնում սահմանադրական մի բարեփոխում, որը կոչված էր կառավարողի և կառավարվողների հարաբերությունների միջև ստեղծել սկզբունքորեն նոր համակարգ: Միանգամայն պարզ է, որ պետության մեջ օրինաստեղծ գործունեությունը վերջին հաշվով կախված էր սուլթանի կամքից, որի հետևանքով նրա բացարձակ իշխանությունը գործնականում մնում էր անփոփոխ:

Ընդհանուր առմամբ Գյուլհանեի ակտը իրենից ներկայացնում էր «իսլամական ակտ», քանի որ նախ Օսմանյան կայսրության պետական կարգի հիմքում ընկած էր իսլամիզմի գաղափարախոսությունը և ապա այդ փաստաթուղթը, չնայած «իրավահավասարության» վերաբերյալ հայտարարություններին, ամրագրում էր մահմեդականների գերիշխող դրությունը:

Թուրքական իրականության մեջ Գյուլհանեի հռչակագիրը մեկնաբանվում էր այն իմաստով, որ մահմեդական միապետը լայնորեն բաց է անում պետական հիմնարկությունների դռները իր հպատակ քրիստոնյաների համար: Սակայն դա այդպես չէր: Կայսրության ոչ մահմեդական ժողովուրդները հաթթ-ը չերիֆի նկատմամբ վերաբերվեցին կասկածամտորեն, կամ լավագույն դեպքում շատ զգուշորեն ու ձեռնպահ ձևով: Նրանք չէին հավատում, որ այդ պետության մեջ ոչ մահմեդականները կարող են դիտվել որպես լիարժեք քաղաքացիներ: Հանրահայտ իրողություն է, որ իսլամը հանդես էր գալիս որպես իր հետևորդների տիրապետությունն ապահովող դենք, որը Կարլ Մարքսի արտահայտությամբ, «անհավատներին հայտարարում է օրենքից դուրս և ստեղծում է մահմեդականների ու անհավատների միջև անընդհատ թշնամության վիճակ»: Անդրադառնալով այդ նույն հարցին՝ ֆրանսիացի արևելագետ Պոլ Ժանտիզոնը նշում է, որ մահմեդական իրավունքին բնորոշ է մի խոշոր թերություն և դա այն է, որ «բոլոր սոցիալական խավերին պետության մեջ միավորելու փոխարեն, անց է կացնում սահմանափակումներ՝ հավատացյալների ու անհավատների միջև»: Ժանտիզոնի կարծիքով հենց այստեղից էլ բխում է այն իրողությունը, որ այլադավան «անհավատները» «երբեք չեն կարող դառնալ քաղաքացիներ, բառիս բուն իմաստով, նրանք կմնան ստրուկներ (ilotes)»:

Այն, որ այլադավանները այժմ դառնում էին զինապարտներ և իրավունք էին ստանում մահմեդականների հետ համահավասար ծառայել բանակում, թվում էր թե պետք է գոհացներ նրանց որպես իրենց քաղաքացիական իրավունքի ճանաչում պետության կողմից, սակայն իրականում նրանց բոլորովին չէր ոգևորում այսուհետև այլ քրիստոնյաների դեմ կռվելու տհաճ հեռանկարը, մինչդեռ նախկինում նրանք կարող էին ազատվել զինվորական ծառայությունից, վճարելով չնչահարկ:

Մահմեդականների համար ևս հաճելի չէր, որ իրենք քրիստոնյաների հետ կողք-կողքի, գուցե և քրիստոնյա սպայի հրամանատարությամբ, պետք է մարտնչեին թշնամու դեմ:

Զբաժանելով օսմանյան հայրենասիրության ընդհանուր զգացումները՝ քրիստոնյաները վախենում էին կորցնել իրենց հատուկ արտոնությունները, որոնց շնորհիվ նրանք կարողանում էին հաջողություններ ձեռք բերել հատկապես առևտրի և տնտեսական գործունեության բնագավառում: Նրանք չէին հավատում թուրքական կառավարության մտադրությունների անկեղծությանը: Քրիստոնյաները

դեռևս գերադասում էին փնտրել օտարերկրյա պետությունների օգնությունը ինքնավարություն և վերջին հաշվով անկախություն ձեռք բերելու համար: Քրիստոնյաներից շատ-շատերն էին այն տեսակետին, որ Ռեշիդ փաշայի նպատակն էր ոչ մահմեդականներին աննչան զիջումներ կատարելու ճանապարհով նրանց ամուր կապել Օսմանյան կայսրության հետ և դրանով իսկ բթացնել արտաքին ազդեցությունների նկատմամբ նրանց ընկալողականությունը: Բացի այդ, քրիստոնյաներին մտածելու տեղիք էր տալիս նաև Թուրքական իրականության մեջ առաջին անգամ Ռեշիդ-փաշայի կողմից գործածության մեջ մտցված «վաթան» («հայրենիք») բառը, որի տակ հասկացվում էր Օսմանյան կայսրությունը: Ռեշիդ փաշան առաջ քաշեց նաև սուլթանի բոլոր հպատակների միասնության գաղափարը անկախ ազգությունից ու դավանանքից, բոլորին անվանելով «Բարձր պետության հպատակներ»: Դա նշանակում էր, որ ազգային անկախության համար ցանկացած պայքար իշխանությունների կողմից կարող էր գնահատվել որպես հակապետական խռովություն: «Մուսուլմանների և քրիստոնյաների միասնության» կարգախոսը կոչված էր նաև համախմբել կայսրության բնակչությանը ընդդեմ արտաքին թշնամիների:

Մահմեդական բնակչության մեծամասնությունը սվինների վրա ընդունեց Գյուլհանեի հաթթ-ը շերիֆը, որը նրանց կարծիքով իրավունքներ էր շնորհում «անհավատներին», որը հարվածում էր իրենց ավանդական պատկերացումների հիմքին առ այն, որ իսլամը բացարձակ առավելություն ունի մնացած բոլոր կրոնների նկատմամբ: Նրանք դարերի ընթացքում ներշնչված էին, որ ոչ մահմեդական ռայան ցածր կարգի էակ է և բարոյական կամ սոցիալական առումով նա երբեք չի կարող հավասարվել մահմեդականին: Որ մահմեդականը և քրիստոնյան անհամատեղելի են ինչպես յուղն ու ջուրը: Այդ առթիվ լորդ Պալմերստոնը ասել էր. «Դա ավելի շատ նման է նրան, որ եթե կատվին ու շանը փակես մեկ արկղի մեջ»: Նույնիսկ երկրի ղեկավարները այն կարծիքին էին, որ ոչ մի բարեփոխում չպետք է թուլացնի Օսմանյան կայսրության հիմքը հանդիսացող թուրքերի տիրապետող դերը և իսլամի ու շարիաթի գերակայությունը: Եվ «բարեփոխիչ» հորջորջված սուլթան Աբդուլ Մեջիդը հատուկ ֆերմանով շտապում էր հանգստացնել թուրքերին, գրելով. «Մենք լսեցինք, որ մարդիկ, որոնք չեն հասկացել մեր ցանկությունների իմաստը, ենթադրում են, որ մեր պետության ներքին կարգը և քաղաքական վիճակը պետք է փոխվեն: Նման սխալ ենթադրությունները նպաստում են հասարակական կարծիքի աղճատմանը»:

Սուլթանի այդ տեսակետը բաժանում էին օսմանյան պետության բոլոր մեծ ու փոքր կառավարիչները, կայսերական բոլոր պաշտոնյաները և հատկապես իսլամ հոգևորականությունը: Ստամբուլի ռուսական դեսպանատան աշխատակից Ա. Մորդտմանը վկայում է, որ իմամները, մոլլաները, մյութեվելլիները, հոջաները, դերվիշները, մեդրեսեների ուսանող-սոֆթաները բացարձակ կերպով դեմ էին դուրս գալիս Թանզիմաթին, և նրանց համար հատկապես անհամատեղելի էր մահմեդականների և «գյավուրների» իրավահավասարության դրույթը:

Թանզիմաթի բարեփոխումների շրջանում երկրի կառավարման մեջ կարևոր դիրքեր ունեցող Մուստաֆա Ռեշիդ-փաշան, Ալի և Ֆուադ փաշաները և ուրիշներ այն հաստատ համոզմանն էին, որ ոչ մի բարեփոխություն չպետք է թուլացնի Օսմանյան կայսրության հիմքը հանդիսացող թուրքերի դեկավար դերը և իսլամի ու շարիաթի ազդեցությունը: Նույնիսկ ընդդիմադիր տարրերը չէին կարողանում ձերբազատվել պետության մեջ դարերով արմատավորված ու կարծրացած այդ տեսակետից:

Եվրոպական երկրներում Գյուլհանեի ակտը արժանացավ տարբեր գնահատականների: Բ. Դռան մոտ ռուսական ներկայացուցը այն անվանեց «թատերականացված ներկայացում»: Լորդ Պալմերստոնի համար դա «կարևորագույն քաղաքական քայլ էր»: Սակայն այն գործիչները, ովքեր հիանալի տեղյակ էին օսմանյան իրականության մռայլ կողմերին, միանգամայն այլ կարծիքի էին: Օրինակ, Մետերնիխը թերահավատորեն էր տրամադրված թուրքական բարեփոխումների գործնական հեռանկարների նկատմամբ և գտնում էր, որ դա ցուցանակի ձևավորման մի պարզ օրինակ է:

Հաթթ-ը չերիֆի հռչակումից հետո Մուստաֆա Ռեշիդ փաշան ու նրա համախոհները քայլեր կատարեցին հռչակված բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Անշուշտ նրանք հասկանում էին, որ այդ ակտում պարունակվող օրենքները նշանակալից չափով հակասում էին երկրի ավանդույթներին ու շարիաթի նորմերին: Որ Գյուլհանեի ակտը իրականում իրենից ներկայացնում է «իսլամական ակտ», որը չի էլ փորձում թաքցնել այն իրողությունը, որ աստվածապետական օսմանյան պետության պետական կառուցվածքի հիմքում ընկած է իսլամիզմի գաղափարախոսությունը: Նրանց համար միանգամայն պարզ էր նաև, որ հաթթում պարունակվող ոչ մահմեդականներին վերաբերող հոդվածները կոչված են ոչ թե հավասարեցնել նրանց իրավունքները մահմեդականների իրավունքների հետ, այլ պարզապես մեղմել նրանց միջև եղած անհավասարությունը:

Սակայն այդ բոլորով հանդերձ, Ռեշիդ փաշան և նրա կողմնակիցները հավատում էին, որ իսլամի ուսմունքը ընդունակ է արևմուտքի բուրժուական գաղափարները հարմարեցնել օսմանյան իրականությանը: Կյանքը ցույց տվեց, որ բարեփոխիչները թերագնահատում էին օսմանյան հասարակության տարբեր խավերի դիմադրության ուժը: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ բարեփոխումների նախաձեռնողները ցանկանում էին Օսմանյան կայսրությունում իրականացնել բուրժուական բնույթի ռեֆորմներ, միաժամանակ անհրաժեշտ համարելով պահպանել ավանդական մահմեդական հասարակության հիմնական ինստիտուտները: Գյուլհանեի հաթթ-ը չերիֆը լոկ հրապարակում էր պետության մտադրությունը բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ: Դրանք գործնականում իրականցնելու համար անհրաժեշտ էր ընդունել համապատասխան օրենքներ: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց օրենսդրական ակտերի ընդունման վրա, որոնք համաձայն հաթթ-ը չերիֆի, կոչված էին ամրապնդել անձի իրավունքների երաշխիքները, ապահովել օրինականությունը և վերացնել վարչական ու դատական կամայականությունները: Ըստ այնմ, 1840 թ. մայիսի 3-ին ընդունվեց նոր քրեական օրենսգիրք: Նրանում ասվում էր, որ ոչ ոք իրավունք չունի ո՛չ բացահայտ և ո՛չ էլ գաղտնի ձևով, ո՛չ թույնի և ո՛չ էլ որևէ այլ միջոցով մահապատժի ենթարկել հանցագործին, մինչև նրա հանցանքի ապացուցումը, որից հետո նա կարող է դատապատվել ըստ օրենքի: Պետական ծառայողներից ոչ ոք և առհասարակ ոչ մի մարդ իրավունք չունի սպանել որևէ մեկին: Ով կխախտի այդ օրենքը, թեկուզ նա լինի մեծ վեզիրը, ինքը կդատապարտվի մահվան: Դատարանի որոշումները ներկայացվում են սուլթանին, որն արձակում է վերջնական դատավճիռ:

Օրենսգրքում այնուհետև մեկ առ մեկ թվարկվում էին հանցագործությունների տեսակները և պատժաչափեր սահմանելու վերաբերյալ հոդվածները: Հատուկ շեշտվում էր, որ ապստամբության կոչերը պատժվում են մահով կամ ցմահ աքսորով: Պետական հանցագործություններ էին հռչակվում դավաճանությունը, դիմադրությունը իշխանություններին, հարկերի մուծումից հրաժարվելը և այլն: Օրենսգրքի հոդվածներից մեկում ասվում էր, որ ոչ ոք իրավունք չունի յուրացնելու ուրիշի ունեցվածքը: Խիստ պատիժներ էին նախատեսվում զինված թալանի և կողոպուտի համար: Ասվում էր, որ ոչ ոք, լինեն նրանք ուլեմներ, վեզիրներ, բանակի սպաներ թե պետական ծառայողներ, իրավունք չունեն զբաղվելու կաշառակերությամբ, որը պատժվում է օրենքի ողջ խստությամբ:

1840 թ. օրենսգիրքը հեռու էր կատարյալ լինելուց: Նրանում նախ բացակայում էր սիստեմավորված չարաղրանքը: Շատ հանցագործություններ ու նրանց համար սահմանվող պատիժներ նախատեսված չէին նրանում, ուստի և այն ստեղծում էր կամայականությունների լայն դաշտ: Վերջապես ամբողջ խնդիրը նաև կայանում էր նրանում, թե ում կողմից և ինչպես պետք է այդ օրենքը կենսագործվեր կյանքում:

Հարկ է նշել նաև, որ չարիաթի օրենքները չարունակելու էին գոյակցել նոր քրեական օրենսգրքի հետ: Նահանգական իշխանությունների կամայականությունները սահմանափակելու նպատակով վիլայեթների ու սանջակների կենտրոններում ստեղծվեցին խորհրդակցական մարմիններ ոչ մուսուլմանների մասնակցությամբ: Վալիների իրավասությունից դուրս բերվեցին զինվորական գործերը, հարկահավաքման գործը հանձնվեց կենտրոնից ուղարկվող հատուկ աստիճանավորներին: Վալիների և նրանց ենթակաների հիմնական խնդիրը դարձավ կարգ ու կանոնի ապահովումը: Այսուհետև վալիները, սանջակների և քաղաքների կառավարիչները պետք է ստանային ֆիքսված աշխատավարձ: Արգելվում էր պաշտոնների վաճառքը:

Մեծ նշանակություն էր տրվում նաև հարկահավաքման գործի բարեփոխմանը:

Հիմնական հարկի՝ աշարի, ինչպես նաև մյուս հարկատեսակների գանձման չափերը դարձվեց միատեսակ, վերացվեցին արտակարգ հարկերը, կարգավորվեց ոչ մահմեդականներից գանձվող գլխահարկը՝ ջիզիեն: Այսուհետև՝ 1840 թ. սկսած արգելվում էր հարկերի հավաքման գործը այս կամ այն անձին կապալով հանձնելը (այդ համակարգը կոչվում էր «իլթիզամ», իսկ կապալը ստացած անձը՝ «մուլթազիմ»): Բոլոր կապալային պայմանագրերը չեղյալ հայտարարվեցին: Հարկերի հավաքման գործը հանձնվում էր պետական աստիճանավորներին՝ էմիններին: Ոչ մի փոփոխություն չմտցվեց դատարանների և դատավարության համակարգի մեջ: Մահմեդականների և ոչ մահմեդականների միջև բոլոր քաղաքացիական վեճերը, և նույնիսկ մահմեդականների միջև քրեական բնույթի կոնֆլիկտները նախկինի պես պետք է քննության ենթարկվեին շարիաթական դատարանների կողմից:

Ինչպես և գյուլհանեի հաթթ-ը շերիֆում, նոր ընդունված օրենսդրական ակտերում մշտապես չեշտվում էր, որ օրենքը նույնն է լինելու մահմեդականի և ոչ մահմեդականի համար: Այդ բանը հատկապես եվրոպական երկրներին ցուցադրելու համար 1840 թ. նոյեմբերի 6-ին հրապարակվեց սուլթանական ֆերման, որը դատապար-

տում էր այն ստահոդ նախապաշարմունքը, որ իբր զատկի օրերին հրեաները «մացային» (հրեական հացի մի տեսակ) խառնում են մարդկային արյուն և այդ պատճառով անմեղ հրեաները ենթարկվում են հալածանքների:

Գյուլհանեի հաթթ-ը չերիֆի ոգով որոշ օրենսդրական ակտեր ընդունվեցին նաև կրթության բնագավառի վերաբերյալ: Սակայն աշխարհիկ կրթության արմատավորման հետ զուգահեռ շարունակում էր գործել կրոնական դպրոցներում՝ մեդրեսեներում տարվող ուսուցումը, որի սաները դաստիարակվում էին ավանդապաշտ գաղափարներով: Նման երկվությունը, անշուշտ, խանգարում էր բուրժուական ինստիտուտների կայացմանը:

Այս բոլոր նորամուծությունները առաջ բերեցին հետադիմական ուժերի և առաջին հերթին հոգևորականության կատաղի դիմադրությունը: Ծայր առան մահմեդական մոլեռանդության պարբերական բռնկումներ, որոնք որպես կանոն ուղեկցվում էին քրիստոնյա բնակչության ջարդերով ու հալածանքներով: Այդ տրամադրությունները իրենց գագաթնակետին հասան 1841 թ., երբ նպատակ ունենալով զարգացնել արտաքին առևտուրը, Ռեշիդ փաշան հեղինակեց մի օրենք և այն ներկայացրեց սուլթանական Բարձրագույն խորհրդի հաստատմանը: Մահմեդական իրավագետները այդ օրենքը գնահատեցին որպես քամահրանք շարիաթի նկատմամբ: Բարձրագույն խորհրդի նիստում Ռեշիդ փաշային հարց տրվեց, թե իր ներկայացրած օրենքը արդյոք համապատասխանո՞ւմ է սրբազան օրենքին (շարիաթին)՝ թե ոչ: «Սրբազան օրենքը ոչ մի առնչություն չունի այդ հարցերի հետ»,– հետևեց պատասխանը: Խայտառակություն, բացականչում են ուլեմները և պահանջում Ռեշիդ փաշայի հրաժարականը: Բարենորոգումների գլխավոր ջատագովի դեմ հանդես եկավ նաև Բ. Դուռը, որի համար փաշան ավելորդ, նույնիսկ վտանգավոր մարդ էր: Արքունիքի և հարեմի բոլոր փորձառու սադրիչները ճակատ կազմեցին Ռեշիդ փաշայի դեմ և կարողացան համոզել սուլթանին, որ անհրաժեշտ է պաշտոնազուրկ անել նրան և հեռացնել արտաքին գործերի մինիստրի պաշտոնից: Սուլթանը հարկադրված է լինում ենթարկվել այդ հուժկու ճնշմանը և պաշտոնաթող անելով նրան, հեռացնում է մայրաքաղաքից և ուղարկում Փարիզ որպես դեսպան:

Ռեշիդ փաշայի պաշտոնաթող լինելուց հետո լրիվ չորս տարի ապարդյուն կորավ բարենորոգիչների ու նրանց գաղափարախոսների համար: Այդ չորս տարիների ընթացքում իշխանության ղեկի մոտ էին գտնվում թունդ հետադիմական ու պահպանողական այնպիսի գոր-

ծիչներ, ինչպիսիք էին սերասկեր Ռիզա-փաշան և մեծ վեզիր Իզզեթ Մեհմեդը, որոնք հայտնի էին իրենց ատելությամբ օտարերկրացիների և առհասարակ արևմտյան գաղափարների նկատմամբ: Նրանց իրականացրած քաղաքականության նպատակն էր մոռացության մատնել Գյուլհանեի հաթթ-ը շերիֆը:

Իշխանության լծակների մոտից Ռեշիդ փաշայի և նրա կողմնակիցների հեռացվելուց հետո սկսվեց ճակատային գրոհ բարեփոխումների դեմ: Մեկը մյուսի հետևից ընդունված ակտերը չեղյալ հայտարարվեցին: Օրինակ, վերանայվեց ոչ մահմեդականներին զինվորական ծառայության մեջ ընդգրկելու օրենքը: Ինչպես և նախկինում, նրանց արգելվեց ծառայել բանակում: Ընդունված նոր օրենքով, ոչ մահմեդականները կարող էին մուծել հատուկ հարկատեսակ (որը փոխարինելու էր նախկին չնչահարկին) և ազատվել զինվորական ծառայությունից: Այնուհետև, չնայած հաթթ-ը շերիֆի հրապարակած դավանանքի ազատության վերաբերյալ սկզբունքին, երբ հայտնի դարձավ, որ մի հայ և մի հույն երիտասարդներ, որոնք նախկինում ընդունել էին իսլամը, սակայն հետագայում զղջալով վերստին վերադարձել էին իրենց քրիստոնեական կրոնին, համաձայն հավատուրացության վերաբերյալ շարիաթական սկզբունքի, նրանք դատապարտվեցին մահվան: Հարցաքննությունների ժամանակ կրկին սկսեցին կիրառել կտտանքներ: Օտար լեզուների տիրապետող համարյա բոլոր թուրքերը հեռացվեցին իրենց պաշտոններից: 1842 թ. չեղյալ հայտարարվեց հարկերի գանձման նոր կարգը և իլթիզամը վերականգնվեց: Նահանգներում հարկահավաքման գործը հանձնվեց զինվորական հրամանատարներին, որոնք գործում էին կապալառուների միջոցով:

Վերացվեց նաև ոչ մահմեդականներից գանձվող ջիզիե գլխահարկի նոր, թեթևացած կարգը: Ռեշիդ փաշայի ընդունած օրենքով ջիզիեն գանձվում էր տեղական ոչ մահմեդական համայնքից, իսկ այժմ այն պետք է գանձվեր անհատապես ամեն մի ոչ մահմեդականից: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ այդ հարկատեսակի հավաքման ժամանակ կամայականությունները չափից ավելի ուժեղացան:

Այսպիսով, հաթթ-ը շերիֆի հրապարակած դրույթների և խոստացած երաշխիքների մեծագույն մասը մնաց թղթի վրա: Այդ բանը խոստովանել է հենց ինքը՝ սուլթան Աբդուլ Մեջիդը: 1845 թ. փետրվարին նա Բ. Դոան հասցեով գրած իր ուղերձում նշում էր. «Չի կարելի ժխտել, որ չնայած ամբողջ հոգատարությանը, որն ուղղված էր իմ մտադրությունների իրականացմանը, իմ նախագծերից և ոչ մեկը, ի բացառյալ ռազմական ռեֆորմի, չտվեցին ցանկալի արդյունքներ»:

2. 1845–1854 ԹԹ. ԲԱՐԵՓԵԽՈՒՄՆԵՐԸ

Օսմանյան կայսրության ներքին կյանքում առաջ եկած դժվարությունները և արտաքին-քաղաքական գործոնները ստիպեցին սուլթանին ու նրա շրջապատին նորից հենվելու Ռեշիդ փաշայի ու նրա զինակիցների վրա և վերադառնալու բարեփոխումների նախկին քաղաքական կուրսին, առավել ևս, որ Անգլիան և Ֆրանսիան սուլթանին ցուցադրեցին իրենց ցանկությունը՝ չարունակված տեսնելու Գյուլհանեի հաթթ-ը չերիֆի քաղաքականությունը: 1845 թ. հոկտեմբերին Ռեշիդ փաշան հետ կանչվեց Փարիզից և կրկին նշանակվեց արտաքին գործերի մինիստրի պաշտոնում: Այդ մասին Բ. Դուորը չտապեց տեղեկացնել Ֆրանսիայի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրներ Գիզոյին և Էբերդինին: Իսկ մեկ տարի չանցած, 1846 թ. սեպտեմբերին առաջին անգամ Ռեշիդ փաշան զբաղեցրեց մեծ վեզիրի պաշտոնը:

Բարենորոգումների քաղաքականության թափանիվը նոր թափով սկսեց պտտվել: 1846 թ. սուլթան Աբդուլ Մեջիդը Ռեշիդ փաշայի ուղեկցությամբ ցուցադրական այց կատարեց Ռումելիա, որտեղ ճառեր էր արտասանում մահմեդականների և քրիստոնյաների հավասարության մասին, մշտապես շեշտելով, որ անկախ իրենց դավանանքից, իրենք հայրենակիցներ են, նույն հողի ու ջրի զավակներ, ուստի չպետք է թշնամական աչքով նայեն միմյանց: Սուլթանի այդ ճառերից զգացվում էր, որ թուրքական կառավարող շրջաններում լրջորեն մտահոգված էին Բալկանների քրիստոնյա բնակչության ազգային զգացումների վերելքից:

Մուստաֆա Ռեշիդ փաշան համարյա անընդմեջ իշխանության ղեկի մոտ մնաց 1845-ից մինչև 1852 թթ. Այդ ընթացքում նա հասցրեց իրականացնել մի շարք նոր բարեփոխումներ: 1845 թ. Բ. Դուորը կարգադրեց ձեռնամուխ լինել ստեղծելու էյալեթական մեջլիսներ, որի անդամներ էին լինելու ինչպես մահմեդականներ, այնպես էլ ոչ մուսուլմաններ: Այդ մեջլիսները կոչված էին սահմանափակել նահանգային վարչությունների կամայականությունները: Սակայն կարճ ժամանակ անց պարզվեց, որ նահանգային այդ ներկայացուցչական ժողովները ի վիճակի չեն իրականացնելու իրենց վրա դրված խնդիրները, որովհետև նահանգապետերը հաշվի չէին նստում նրանց հետ:

1846 թ. հրապարակվեց օրենք պետական պաշտոնյաների պարտականությունների և իրավունքների մասին, որը, նրա հեղինակների

մտահղացմամբ, պետք է բյուրոկրատական միջավայրում ապահովեր պայքարը կաշառակերության դեմ: Սակայն պարզվեց, որ այդ օրենքը անզոր է վերացնելու կաշառակերությունը, գանձագողությունը, պաշտոնական դիրքի չարաշահումները: Կոռուպցիան պետության մեջ հասել էր այնպիսի չափերի, որ 1850 թ. մեծ վեզիրը, շեյխ-ուլ-իսլամը, մինիստրները, պաշտոնյաները, իրենց պաշտոնը ստանձնելիս՝ Ղուրանի վրա երդվում էին, որ որևէ ձևով կաշառք չեն վերցնելու (այդ թվում նաև «փիշքեշների»՝ նվերի ձևով), չեն յուրացնի պետական միջոցները և այլն: Սակայն ամեն քայլափոխում այդ պաշտոնյաները դառնում էին երդմնազանցներ՝ իրենց ձեռքից բաց չթողնելով կաշառք վերցնելու ամեն մի հնարավորություն:

1846 թ. հրապարակվեց օրենք աշխարհիկ դպրոցներ ստեղծելու մասին: Նախատեսվում էր ստեղծել տարրական ու միջնակարգ դպրոցների ծավալուն ցանց: Հայտնվեցին առաջին աստիճանի մի քանի տասնյակ միջնակարգ դպրոցներ՝ ռյուշթիեներ, որոնք մեծ դեր խաղացին նորովի կրթված մարդկանց երևան գալու գործում: Աստիճանաբար փոխվեց նաև մեքթեբների՝ տարրական դպրոցների դեմքը, որոնք դուրս բերվեցին հոգևորականության տնօրինությունից: Ընդլայնվեցին մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ մասնավորապես ռազմա-ինժեներական և ռազմա-բժշկական ուսումնարանները: 1850 թ. բացվեց հատուկ ուսումնարան՝ քաղաքացիական պաշտոնյաներ պատրաստելու համար: Բարեփոխումներ իրականացնող հանձնաժողովը նույնիսկ առաջարկեց բաց անել Օսմանյան պետական համալսարան: Այդ հավակնոտ ծրագրի իրականացումը, սակայն, կապված էր մեծ ծախսերի հետ: Եվ թեև համալսարանի շենքի հիմքը դրվեց, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով շինարարությունը դադարեցվեց:

Ռեշիդ փաշան չհամարձակվեց կրկին վերացնել իլթիզամի համակարգը: 1847 թ. ընդունվեց որոշում կապալային համակարգը ևս հինգ տարով երկարաձգելու մասին: 1850 թ. հունիսին հրապարակվեց հրամանագիր այն մասին, որ այսուհետև ոչ մահմեդականներից գանձվող ջիզիե գլխահարկը պետք է հավաքեն ոչ թե պետական հարկահանները, այլ տեղական ոչ մահմեդական համայնքների ղեկավարները՝ կոջաբաշիները: Նրանց կողմից հավաքված գումարները ենթակա էին պետական գանձարան հանձնման ոչ մահմեդական կրոնական համայնքների գլխավորների միջոցով: Այդ պահից սկսած թուրքական կառավարությունը աշխատում էր գործը ներկայացնել այնպես, որ ջիզիեն փոխել է իր բնույթը, այսինքն՝ այն այլևս պարտ-

վածների կողմից հաղթողներին վճարվող գլխահարկ չէ, այլ ոչ մահմեդականների զինվորական ծառայությունից ազատվելու դիմաց որոշակի փոխհատուցում:

Կարևոր քայլեր ձեռնարկվեցին նաև արդարադատության ոլորտում: 1847 թ. ստեղծվեց քրեական դատարան, որը գործում էր նոր քրեական օրենսդրության հիման վրա: 1848 թ. բարենորոգիչները ստեղծեցին առևտրական դատարանների ցանց, իսկ 1850 թ. ընդունվեց առևտրական օրենսգիրք, որը պատրաստվել էր ֆրանսիական համանման օրենսգրքի հիման վրա: Այն կոչված էր կանոնակարգել առևտրական վեճերը թուրքերի և եվրոպացիների միջև:

Այդ օրենսգիրքը ավելի լայնորեն էր թուրքական տնտեսության դռները բաց անում Արևմուտքի առջև, նպաստելով նրանց միջև սերտ առևտրական կապերի զարգացմանը: Օսմանյան կայսրությունում իրար հետևից ստեղծվում էին առևտրական ընկերություններ, բանկեր, ապահովագրական ընկերություններ և ժամանակակից տնտեսության այլ ինստիտուտներ:

1840 թ. սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակեց հրամանագիր Օսմանյան բանկի հիմնադրման վերաբերյալ: Դրան հետևեց շրջանառության մեջ թղթադրամի արմատավորումը: Հին մետաղադրամները հանվեցին շրջանառությունից և նրանց փոխարեն հատվեցին եվրոպական տիպի ոսկեդրամներ, որոնք սուլթանի անունով կոչվեցին «Մեջիդիե»: Եվրոպական տերությունների տնտեսական ներթափանցումը Օսմանյան կայսրություն և հատկապես վերջինիս կողմից օտարերկրյա փոխառությունների ձեռք բերումը ունեցավ այն հետևանքը, որ եվրոպական տերությունների դեսպանները հնարավորություն ստացան լրջորեն ազդելու Օսմանյան կայսրության քաղաքական եղանակի վրա:

1851 թ. ընդունվեց նորացված քրեական օրենսգիրք: 1854 թ. կառավարությունը ստեղծեց խառը դատարաններ մահմեդականների ու ոչ մահմեդականների միջև ծագող քրեական գործերը քննելու համար: Իրականացվեցին մի շարք միջոցառումներ երկրի տնտեսական վիճակը բարելավելու, տեղական արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացումը խրախուսելու ուղղությամբ: Անգլիացիների ճնշման ներքո սուլթանը հրապարակեց հրամանագիր, որով արգելվում էր թուրքական նավերով ստրուկներ տեղափոխելը: 1845–1849 թթ. ընդունվեցին մի շարք օրենքներ ագրարային հարաբերությունների վերաբերյալ: Այսպես, 1845 թ. հունիսի 16-ին հրապարակված սուլթանական իրադեի (հրամանագրի) համաձայն, եթե պետությա-

նը պատկանող հողը (միրի) երեք տարի անընդմեջ մնար անմշակ, այն կարող էր հանձնվել այլ անձի այսպես կոչված թափուի իրավունքով: Նշված օրենքը նպաստեց այն բանին, որ հողը աղքատ և քայքայված գյուղացիներից անցնի խոշոր հողատերերին և ունևոր գյուղացիներին: 1846 թ. առաջին անգամ Թուրքիայում Ստամբուլի մերձակայքում, բացվեց գյուղատնտեսական դպրոց:

Վերոհիշյալ բարեփոխումները իրենց որոշակի ազդեցությունն ունեցան Օսմանյան կայսրության ներքին կյանքի վրա: Ստամբուլում բրիտանական դեսպան Ստրետֆորդ-Կաննինգը Անգլիայի արտաքին գործերի մինիստր Էբերդինին հասցեագրած զեկուցագրում գրում էր, որ Մահմուդ II-ի կառավարման շրջանի հետ համեմատած Թուրքիան անվիճելիորեն առաջընթաց է ապրել, կյանքն ու սեփականությունը դարձել են ավելի ապահովված: Օսմանյան կայսրության ներքին և արտաքին առևտուրը սկսեց վերելք ապրել: Թուրքիան թևակոխեց առևտրական ու ապահովագրական ընկերությունների, բանկերի և ժամանակակից տնտեսության այլ նմանատիպ ինստիտուտների ստեղծման շրջանը: Խոշոր աճ էր արձանագրում նաև քաղաքային բնակչությունը: Ընդամենը մեկ սերնդի կյանքի ընթացքում երկրի գլխավոր քաղաքները մեծացան երեք-չորս անգամ, իրենց կազմի մեջ ընդգրկելով նաև եվրոպական ու լևանտյան բնակչության նշանակալից խավեր:

Թուրք-մահմեդականները ավելի շուտ գերադասում էին դառնալ կառավարիչներ, զինվորներ, հողագործներ, բայց ոչ առևտրականներ, բիզնեսմեններ ու ֆինանսիստներ: Թուրքական բուրժուազիայի ձևավորումից դեռ շատ առաջ կազմակերպչորեն ձևավորվեց այլազգի՝ հունական, հայկական, հրեական և սլավոնական ժողովուրդների բուրժուազիան, որը թեև երկրի տնտեսության մեջ ձեռք բերեց առաջատար դիրքեր, սակայն քաղաքական առումով շարունակում էր մնալ որպես ճնշված ու իրավազուրկ մի դաս:

Թուրքիայի հարաբերական եվրոպականացումը ամեն քայլափոխի սկսել էր զգացնել տալ իրեն: Այսպես, մայրաքաղաքում թուրքերը, որոնք ընդամենը քսան տարի առաջ անտարբերությամբ էին նայում սուլթանական պալատի առջև շարված մարդկանց կտրված գլուխներին, այժմ այդ մասին վերհիշում էին սարսափի զգացումով:

Այդ բոլորն անչուշտ չէր նշանակում, որ Օսմանյան կայսրությունում իսպառ վերացել էին անօրինականությունները, կամայականությունները, իշխանության չարաշահումները և այլն: Նրանք ոչ միայն շարունակում էին գոյություն ունենալ, այլև դրսևորում էին կենսու-

նակության նշաններ: Երբ խոսք է գնում Օսմանյան կայսրության եվրոպականացման վերաբերյալ, պետք է առավելապես նկատի ունենալ նրա թուրք բնակչությանը, քանի որ քրիստոնյա բնակչության շրջանում այդ գործընթացը սկսվել էր շատ ավելի վաղուց: Կարևոր է նշել, որ թուրքերի նկատմամբ Արևմուտքի ազդեցության տարածման ճանապարհին հզոր պատնեշ էր հանդիսանում իսլամը:

Կասկածից վեր է, որ Թուրքիայի եվրոպականացման գործընթացը ընթանում էր դանդաղ ու տանջալից ձևով և կրում էր մակերեսային բնույթ: Այն համարյա թե իր շրջապտույտի մեջ չէր ընդգրկում լայն զանգվածներին, ավելին, նույնիսկ համարյա թե չէր հասնում նրանց գիտակցությանը: Դա հետևանք էր երկրի հետամնացության, մահմեդականների կարծրացած միջնադարյան նախապաշարմունքների, հոգևորականության ակտիվ դիմադրության, որը կտրականապես դեմ էր ամեն մի արևմտյան նորամուծության: Ինչպես նախկինում, թուրքերն իրենց ձեռքերում պահպանեցին բոլոր քաղաքացիական ու զինվորական պաշտոնների մենաշնորհը: Այդ առումով թանզիմաթը ոչինչ չփոխեց: Քրիստոնյա բնակչությունը չուներ մահմեդականների հետ հավասար իրավունքներ հողեր ձեռք բերելու գործում: Ռուս արևելագետ-ճանապարհորդ Պ. Ա. Զիխաչևը 1858 թ. գրում էր, որ Գյուլհանեի հաթթ-ը չերիֆի խոստումները քրիստոնյաների վերաբերյալ, կյանքում չիրագործվեցին: Ավելին, հենց ինքը՝ թանզիմաթյան բարեփոխումների «հայր» հորջորջված Ռեշիդ փաշան, գտնվելով իշխանության ղեկի մոտ, դաժանորեն և անողոք կերպով ճնշում էր կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների հակապետական ընդվզումները:

XIX դ. կեսերին Օսմանյան կայսրությունն իրենից ներկայացնում էր ավելի քան 60 ժողովուրդների ու ցեղերի մի խառնուրդ, որոնք գտնվում էին սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման տարբեր մակարդակների վրա, պատկանում էին տարբեր տիպի մշակութային ու կրոնական ընդհանրությունների: Թուրքերին այդպես էլ չէր հաջողվել համաձուլել իրենց կողմից հնազանդեցված ժողովուրդներին, որոնցից շատերը իրենց զարգացման մակարդակով գերազանցում էին նրանց: Ամենուրեք թուրքերը հանդես էին գալիս որպես նվաճողներ (ռազմական օկուպանտներ), որոնք ուժի օգնությամբ, երկաթյա ձեռքով իրենց ենթակայության տակ էին պահում տեղական բնակչությանը: Միանգամայն բնական է, որ նման խայտաբղետ բնակչություն ունեցող պետության մեջ սուր կերպով դրված էր լինելու նրա պետական ամբողջականությունը պահպանելու

խնդիրը: Իզուր չէ, որ թուրքական պետական գործիչների հանգերգը դարերի ընթացքում եղել է հետևյալը. «պետությունը ձեռք է բերվել սրով և միայն սրով այն կարող է պահպանվել»: Օսմանյան պետական դեմքերի մեծ մասը այն հաստատ համոզմանն էր, որ կայսրության փրկությունը մահմեդական ու քրիստոնյա ժողովուրդների միաձուլման մեջ է, այլ ոչ թե նրանց զուգահեռ գոյության:

XIX դ. կեսերից Թանզիմաթյան բարեփոխումները սկսեցին կորցնել իրենց նախկին թափը: Կյանքը համոզիչ փաստերով ցույց տվեց, որ այն ինչ գրված է թղթերի վրա, շատ դժվարությամբ է իր համար ճանապարհ հարթում իրական կյանքում: Այն մեջլիսները, որոնք ստեղծվել էին նահանգների տեղական կառավարիչներին կից նրանց կամայականությունները սահմանափակելու նպատակով, չկարողացան դառնալ ներգործուն ու արդյունավետ մարմին, որովհետև դա ձեռնտու չէր գոյություն ունեցող համակարգին: Զինովնիկական ապարատի կաշառակերության դեմ ուղղված միջոցառումները ևս սպասված արդյունքները չտվեցին: Ինչպես որ Օսմանյան կայսրությունը եղել էր դասական կաշառակերության երկիր, այնպես էլ մնաց: Այդպես էլ չլուծվեցին նաև բարենորոգիչների կողմից առաջարկված այնպիսի օրախնդիր հարցեր, ինչպիսիք էին, օրինակ,հաղորդակցության ճանապարհների բարելավումը, կալանավայրերի բարեփոխումը, կայսրության ֆինանսական վիճակի բարելավումը: Դույզն ինչ չափով փոփոխություն տեղի չունեցավ նաև մահմեդականների ու քրիստոնյաների միջև հավասարություն ստեղծելու հարցում: Ոչինչ չարվեց Օսմանյան կայսրության ճակատագրի համար վճռորոշ նշանակություն ունեցող ազգային հարցում: Իշխանությունները մատը մատին չխփեցին ոչ թուրք բնակչություն ունեցող մարզերում ազգային ու սոցիալական ճնշումը թեթևացնելու խնդրում: Նահանգային վարչական ապարատը և թուրք կալվածատեր-ավատատերերը իրենց կամայականություններով առաջվա պես ոչ թուրք բնակչությանը հասցնում էին մինչև ապստամբական բռնկումները: Թանզիմաթյան բարեփոխումների տարիներին հակաթուրքական խոշոր ապստամբություններ տեղի ունեցան Բուլղարիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում և Ալբանիայում: Բարենորոգչական կառավարությունները դաժանորեն ճնշում էին այդ ապստամբությունները: Դրա անխուսափելի հետևանքը լինում էր այն, որ բարենորոգիչներն իրենք իրենց զրկում էին կայսրության ոչ թուրք ժողովուրդների բազմամիլիոնանոց զանգվածի աջակցությունից: Միանգամայն ակներև էր, որ հոչակելով Օսմանյան կայսրության բոլոր հպատակների

իրավունքների հավասարություն, հենց իրենք՝ բարենորոգիչները, ձգտում էին ինչ գնով էլ լինի պահպանել կայսրությունը և Թուրքերի տիրապետությունը ճնշված ժողովուրդների նկատմամբ:

Հանդիպելով ուժգին դիմադրության և համարյա անհաղթահարելի դժվարությունների՝ Ռեշիդ փաշան աստիճանաբար կորցնում էր իր գործի նկատմամբ վստահությունն ու հավատը, ոգու արիությունը և դժվարությունները հաղթահարելու կամքն ու վճռականությունը: Նա խճճվել էր պարտքերի մեջ և ի վերջո չկարողացավ տուրք չտալ կաշառակերությանն ու կոռուպցիային: Իսկ 1852 Թ. բարենորոգիչների ու պահպանողականների միջև ծայր առած պայքարի հերթական բռնկումից հետո նա ստիպված եղավ Թողնել իր պաշտոնը:

Հենց ինքը՝ սուլթան Աբդուլ Մեջիդը, ևս՝ հոգնելով և՛ բարեփոխումներից և՛ դրանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունից, ավելի ու ավելի անտարբեր էր դառնում ոչ միայն իր իսկ հռչակած Գյուլհանեի հաթթ-ը չերիֆի դրույթների, այլև առհասարակ պետական գործերի նկատմամբ: Ընկղմվելով հարեմային կյանքի ճահիճը՝ Աբդուլ Մեջիդը սկսեց կյանքի իմաստը փնտրել մարմնական հաճույքների մեջ: Անգլիացի ճանապարհորդ և հետազոտող Ջարլզ Մակֆերլեյնը զարմացել էր սուլթանի ընդունակության վրա սերունդ արտադրելու հարցում: «Նա դեռ քսան տարեկան չկար, երբ այդ նվաղուն պատանին արդեն ութ երեխաների հայր էր, որոնց նրա համար ծնել էին կայսերական հարեմի տարբեր կանայք ընդամենը երեք տարվա ընթացքում»,- գրում էր անգլիացին: Հետագայում Մակֆերլեյնը իր օրագրում կատարում էր հետևյալ գրառումը. «Վաղ առավոտյան մենք արթնացանք հսկայական հրավառության աղմուկից. լույս աշխարհ էր եկել սուլթանի ևս մեկ զավակ: Միայն անցյալ շաբաթվա ընթացքում ծնվել էր ևս մեկ աղջիկ»:

Ուշադրություն չդարձնելով գանձարանի կիսադատարկ լինելու և վերահաս ֆինանսական ճգնաժամի վրա, սուլթանը, որը ձանձրացել էր իր հին Սերալից (սուլթանական պալատ), հրամայեց Բոսֆորի եվրոպական ափին, Ոսկեղջյուրից հյուսիս, կառուցել մի հսկայական ու չքեղ մարմարյա պալատ, որը կոչվեց Դոլմաբախչե: (Նրա ճարտարապետը Փարիզում ուսած Նիկողոս Պայյանն էր): Այդ պալատի սուլթանական ննջարանի մահճակալը պատրաստված էր մաքուր արծաթից և իրենից ներկայացնում էր արվեստի բացառիկ արժեք: Պալատի դահլիճները չողչողում էին ոսկյա, հախճապակյա ու ճենապակյա զանազան իրերով: Պալատի առաստաղներին ու պատերին կային ֆրանսիացի ու իտալացի հայտնի նկարիչների կողմից նկարված որմ-

նանկարներ: Սուլթանական ընդունելությունների դահլիճը ամբողջապես հայելապատ էր աշխարհի ամենախոշոր հայելիներով: Այդ ժամանակվանից սկսած Դոլմաբախչեն դարձավ բոլոր հետագա սուլթանների նստավայրը: Աբդուլ Մեջիդը այնտեղ կազմակերպում էր եվրոպական տիպի ընդունելություններ, որոնք աչքի էին ընկնում ցուցադրական շքեղությամբ: Պալատում գործում էր թուրքական նվագախումբ, որի երաժիշտները սովորել էին գերմանացի ու իտալացի հայտնի անունների մոտ: Սուլթանը հրավիրում էր նաև եվրոպական դերասանների, բալետի պարողների: Պալատին կից գործում էր թատրոն, որտեղ նրանք կազմակերպում էին իրենց ներկայացումները:

XIX դ. 40-50-ական թվականների բարփոխումները ընդունված է անվանել Թանզիմաթի առաջին փուլը: Անկասկած այդ շրջանի բարեփոխումները իրենց որոշակի հետքը թողեցին Օսմանյան կայսրության ներքին կյանքի և արտաքին հարաբերությունների վրա: Այդ շրջանը կարևոր փուլ հանդիսացավ երկրի արդիականացման ու «վեստերնիզացման» («եվրոպականացման») ճանապարհին: Դրանց ամբողջությունը կարևոր, սկզբունքորեն նոր երևույթ էր օսմանյան պետության սոցիալ-քաղաքական և հասարակական կյանքում: Այդ բոլորով հանդերձ, ամբողջությամբ վերցրած, Թանզիմաթի բարեփոխումները ի վիճակի չեղան Օսմանյան կայսրության մեջ իրականացնել համակարգային բնույթի էական փոփոխություններ: Այդ առթիվ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը նշել են, որ «խղճուկ կերպով խորտակվեցին թուրքական կառավարության բոլոր փորձերը՝ կանգնելու քաղաքակրթության ուղու վրա»:

Թուրք պատմաբան Ահմեդ Ջևդեթը նշում է, որ «կայսրության արդիականացման փորձերը չպսակվեցին հաջողությամբ այն պատճառով, որ պետական գործիչների մեծամասնությունը անբարոյական, տգետ մարդիկ էին»: Մեկ այլ թուրք պատմաբան, Զ. Փոլարը իր «Օսմանյան կայսրության կործանման պատճառները» գրքում գրում է, որ «ժողովուրդը տգետ էր և գտնվում էր հոգևորականության ազդեցության տակ, որը բարեփոխումների մեջ տեսնում էր ուղղակի սպառնալիք իր արտոնություններին: Կրոնական գործիչները ժողովրդին ներշնչում էին, որ տիրող կարգերի փոփոխությունն անհամատեղելի է շարիաթի ոգու հետ»:

3. ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ 1853–1856 ԹԹ. ՂՐԻՄԻ (ԱՐԵՎԵԼՅԱՆ) ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԹԱՆԶԻՄԱԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

XIX դ. կեսերին այսպես կոչված «Արևելյան հարցը» կրկին սրվեց: Հասունացող կոնֆլիկտի հիմքում ընկած էր մեծ պետությունների պայքարը Մերձավոր Արևելքում իրենց տիրապետությունը հաստատելու համար: Այդ պայքարի յուրաքանչյուր մասնակից մտավախություն ուներ, որ հակառակորդն իրեն կկանխի և ձեռք կբերի առավելագույն օգուտներ: 50-ական թվականների սկզբին, աշխատելով ժամանակը բաց չթողնել իրենց ձեռքերից, մրցակիցները ձգտում էին արագացնել հանգուցալուծումը:

Ախոյան-հակառակորդները փոխադարձաբար երկնչում էին մեկը մյուսից: Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանները վախենում էին, որ Ռուսաստանը կտիրանա Կոստանդնուպոլսին: Իսկ ցարը մտավախություն ուներ, որ Օսմանյան կայսրությունը ահա-ահա կփլուզվի ու կքայքայվի և Անգլիան կարող է դառնալ ողջ Մերձավոր Արևելքում դրության տերը: Թուրքիայի թուլության յուրաքանչյուր նոր դրսևորում ուժեղացնում էր մի կողմից Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի, մյուս կողմից Ռուսաստանի տագնապները:

Այդ շրջանում ցարը՝ Նիկոլայ I-ը, տարված էր Օսմանյան կայսրությունը բաժանելու ու մասնատելու սևեռուն գաղափարով: Նա այդ պետությունն անվանում էր «Հիվանդ մարդ»: Նրա կարծիքով այդ գաղափարն իրագործելու հարցում կարևոր էր առաջին հերթին պայմանավորվել Անգլիայի հետ: Նման փորձ նա արել էր դեռևս 1844 թ. Լոնդոն կատարած իր այցի ժամանակ, երբ Վիկտորիա թագուհուն մանրամասն ներկայացրեց իր մտածումները «Թուրքիայի ապագա ճակատագրի» վերաբերյալ:

Սակայն թագուհին մեծ զգուշությամբ ու տակտով հասկացրեց ցարին, որ ինքը չի ցանկանում քննարկել նման թեմա:

1853 թ. հունվարի 9-ին Սանկտ-Պետերբուրգում Նիկոլայ I-ը մի պատմական զրույց ունեցավ անգլիական դեսպան Համիլթոն Սեյմուրի հետ: Շոշափելով Օսմանյան կայսրության կազմալուծման ու քայքայման և նրա հնարավոր անկման խնդիրները, Ռուսաստանի միապետը նշեց, որ ինքը չափազանց կարևոր է համարում, որ Անգլիան և Ռուսաստանը Թուրքիայի վերաբերյալ գան փոխհամաձայնության և որպեսզի կողմերից և ոչ մեկը առանց մյուսի հետ համաձայնեցվածության չձեռնարկի վճռական քայլեր: Զրույցի վերջում Նիկոլայ I ա-

սել էր. «Մեր ձեռքերում պառկած է մի հիվանդ մարդ, ընդ որում լուրջ հիվանդ»: Սեյմուրը դրան պատասխանել է, որ այդ դեպքում հիվանդին անհրաժեշտ է բժիշկ և ոչ թե վիրաբույժ, որ հիվանդի հետ պետք է վարվել խնամքով, «որպեսզի օգնենք նրան առողջանալու»: Նույն թեմայով Ռուսաստանի միապետը ևս մի քանի զրույցներ ունեցավ բրիտանական դեսպանի հետ, որոնց ընդհանուր բովանդակությունը հանգում էր հետևյալին. ցարն առաջարկում էր Անգլիային երկուսով միմյանց միջև բաժանել Օսմանյան կայսրությունը: Ընդ որում, խոսելով Կոստանդնուպոլսի ապագայի մասին՝ Նիկոլայ I-ը հստակորեն հասկացնում է Սեյմուրին, որ ինքը այդ քաղաքը չի զիջելու Անգլիային:

1853 թ. փետրվարի 9-ին Լոնդոնից եկավ պատասխան, որը կտրուկ բացասական էր: Բրիտանական կառավարությունը վճռականորեն մերժում էր Նիկոլայ I-ի պլանը: Բրիտանական քաղաքականության հիմքում ընկած էր այն սկզբունքը, որ մեկ պետություն, տվյալ դեպքում Ռուսաստանը, չի կարող միանձնյա ձևով վերահսկել Մերձավոր Արևելքի հարցերը և մասնավորապես տնօրինել Օսմանյան կայսրության ճակատագիրը: Լոնդոնը ձգտում էր իր այդ դիրքորոշումը դարձնել անկյունաքար Թուրքիայի նկատմամբ «եվրոպական կոնցերտի» քաղաքականությունը ձևավորելիս: Պետերբուրգին ուղղված անգլիական պատասխանի հեղինակ, արտաքին գործերի պետական քարտուղար Ջոն Ռասսելը գրում էր, որ ինքը բնավ այն կարծիքին չէ, որ իբր Թուրքիան մոտ է անկման: Նրա կարծիքով այն կարող է դեռ 20, 50 և կամ 100 տարի ապրել: Որ նույնիսկ Կ. Պոլսի ժամանակավոր անցումը ցարի ձեռքը ինքը համարում է անթույլատրելի: Վերջապես Ռասսելը չեշտում էր, որ Ֆրանսիան ու Ավստրիան ևս Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլո-ռուսական համաձայնագրի նկատմամբ կվերաբերվեն կասկածամտորեն:

Անգլիայի բացասական պատասխանից հետո Նիկոլայ I-ի առջև բացվում էին երկու ճանապարհ. կամ ուղղակի հետաձգել իր մոտ հասունացած մտահղացման իրականացումը և կամ անցնել ճակատային գրոհի: Ցարն ընտրեց երկրորդ տարբերակը: Ընդ որում, Նիկոլայը իր հաշիվներից դուրս էր նետում Ավստրիային ու Ֆրանսիային, որը նրա մեծագույն սխալներից մեկն էր: Շուտով Լուի-Նապոլեոնի և Նիկոլայի միջև բորբոքվեց սուր պայքար Երուսաղեմի այսպես կոչված «սրբազան վայրերի» հարցի շուրջը: «Սրբազան վայրեր» էին համարվում Երուսաղեմում գտնվող «տիրոջ գերեզմանը», Բեթղեհեմի տաճարը և այլ քրիստոնեական կրոնական հուշարձաններ: Միջնադարից սկսած «սրբազան վայրերը» գտնվում էին քրիստոնեական վեց դավանու-

թյունների՝ հունական-ուղղափառ, հռոմեական-կաթոլիկ, հայ առաքելական, ասորական, դպտիական և եթովպական եկեղեցիների ընդհանուր տնօրինության ներքո:

1561 թ. Սելիմ I-ի կողմից Պաղեստինի նվաճումից հետո «սրբազան վայրերը» անցան օսմանյան տիրապետության տակ: Վերջինս դրանց հետ ժառանգություն ստացավ նաև գլխավոր քրիստոնեական եկեղեցիների միջև մղվող պայքարը այդ վայրերի նկատմամբ տնօրինության իրավունքի շուրջը: Դեռևս 1740 թ. Թուրքիայի հետ կնքված կապիտուլյացիոն պայմանագրով, Ֆրանսիան Պաղեստինում կաթոլիկ եկեղեցու համար ստանում էր մի շարք արտոնություններ ու իրավունքներ: 1853 թ. Լուի-Նապոլեոնը հայտարարեց Թուրքական կառավարությանը, որ Փարիզը ցանկանում է պահպանել ու վերականգնել այն բոլոր արտոնությունները, որոնք սուլթանի կողմից ժամանակին շնորհվել են կաթոլիկ եկեղեցուն «սրբազան վայրերի», այսինքն՝ Երուսաղեմի ու Բեթղեհեմի նկատմամբ: Ի լրումն դրա, Ստամբուլում իր դեսպան Մ. դե Լավալեթի միջոցով Նապոլեոնը կարողացավ համոզել սուլթան Աբդուլ Մեջիդին, որ կապիտուլյացիոն համակարգի համաձայն, Երուսաղեմում ուխտագնացության վայրերի կառավարման, ինչպես նաև Բեթղեհեմում Ծննդյան եկեղեցու նկատմամբ իրավասությունը պետք է պատկանի կաթոլիկ եկեղեցուն: Սուլթանը տվել էր իր համաձայնությունը: Սակայն ռուսական դիվանագիտությունը հանդես եկավ կտրուկ բողոքով, Թուրքական կառավարությանը հիշեցնելով, որ Քյուչուկ-Կայնարջիի խաղաղության պայմանագրի համաձայն, ռուսական ուղղափառ եկեղեցին առավելություններ էր ստանում կաթոլիկ եկեղեցու նկատմամբ: Ըստ էության կրոնական հարցերի շուրջը այդ փոխադարձ վեճը չէր հետաքրքրում ոչ Լուի-Նապոլեոնին և ոչ էլ Նիկոլային: Այդ երկուսի համար էլ խոսքը գնում էր ավելի լուրջ հարցերի մասին: Նրանց միջև տեղի ունեցող վեճի հետևում առկա էին քաղաքական մոտիվներ: Նապոլեոն III-ի համար Արևելքում իրադրության բարդացումը անհրաժեշտ էր Անգլիային և Ավստրիային Ռուսաստանից պոկելու և դրանով իսկ այսպես կոչված ցամաքային դաշինքը քայքայելու համար, որը համարյա կես դար անդամալուծում էր Ֆրանսիային: Վերջինս «սուրբ վայրերի» վերաբերյալ հարցը երկու ձեռքերով բռնեց այդ կնճիռը լուծելու համար: Իսկ Նիկոլայի համար ևս «սրբազան վայրերի» վերաբերյալ հարցը հարմար պատրվակ էր Օսմանյան կայսրությունում իր ազդեցությունն ամրապնդելու ու ընդլայնելու համար: Մասնավորապես Ռուսաստանը ցանկանում էր դառնալ

սուլթանի բոլոր ուղղափառ հպատակների պաշտպանն ու հովանավորը, այսինքն ցանկանում էր ձեռք բերել թուրքական ներքին գործերին մշտապես միջամտելու իրավունք: Բեթղեհեմի և Երուսաղեմի սրբազան վայրերի վեճը չիկանալով, ի վերջո վերածվեց պայթյունավտանգ առճակատման: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետևորդ եվրոպական պետությունները՝ Ավստրիան, Իսպանիան, Սարդինիան, Պորտուգալիան, Բելգիան և Նեապոլը այդ վեճում պաշտպանեցին Ֆրանսիային և համախմբվեցին նրա շուրջը: Հայտնվելով երկու կրակի արանքում և փորձելով ելք գտնել Օսմանյան կայսրության համար ստեղծված բարդ ու վտանգավոր դրությունից՝ Բ. Դուռը առաջարկեց կաթոլիկներին և ուղղափառներին հատկացնել «սրբազան վայրերը» տնօրինելու համատեղ իրավունք: Բայց Բարձրագույն դռան առաջարկությունը մերժեց ինչպես Ֆրանսիան, այնպես էլ Ռուսաստանը: Ցարական կառավարությանը հաջողվեց հասնել այն բանին, որ սուլթանը 1852 թ. հունվարի 30-ին հրապարակեց ֆերման, որը ճանաչում էր ուղղափառ եկեղեցու նախապատվության իրավունքը «սրբազան վայրերի» հարցում: Ֆրանսիան իր հերթին չուտով ձեռք բերեց «սրբազան վայրերի» վերաբերյալ կաթոլիկ եկեղեցու իրավունքների ճանաչում ի վնաս ուղղափառ եկեղեցու: Այդ միջադեպը ծայրահեղորեն սրեց ֆրանս-ռուսական հարաբերությունները, վերածվելով դիվանագիտական սուր վեճի:

Ինչ վերաբերում է Անգլիային, ապա նա վարում էր Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու կամ ստատուս-քվոյի քաղաքականություն: Իսկ դա նշանակում էր, որ Լոնդոնը չէր բաժանում Նիկոլայ I-ի տեսակետը Օսմանյան կայսրությունը մասնատելու ու բաժանելու վերաբերյալ: Արևմտյան տերությունները պաշտպանում էին անգլիական այդ տեսակետը:

Երբ Նիկոլայ I համար պարզ դարձավ, որ չի կարող ստանալ Անգլիայի աջակցությունը, որոշեց ուժգին դիվանագիտական ճնշում գործադրել սուլթանի ու նրա կառավարության վրա, նրանցից իր համար ցանկալի զիջումներ կորզելու համար: 1853 թ. հունվարին նա Ստամբուլ ուղարկեց ծովային մինիստր, իշխան Ա. Ս. Մենշիկովին՝ նրան ուղեկցող բազմամարդ շքախմբի հետ, որի մեջ էր նաև սևծովյան նավատորմի հրամանատարը: Դիվանագիտական այդ առաքելության կարևորագույն խնդիրն էր ստիպել Բ. Դռանը, որպեսզի վերջինս ճանաչի «սրբազան վայրերում» ուղղափառ եկեղեցու անվերապահ նախապատվության իրավունքը, ինչպես նաև սուլթանի բոլոր ուղղափառ հպատակների նկատմամբ հովանավորություն ցուցաբերելու

ցարական կառավարության իրավունքը: Վերջին պահանջի ընդունումը գործնականում կնշանակեր Ռուսաստանի հովանավորության (պրոտեկտորատի) հաստատում սուլթանի ուղղափառ հպատակների բազմամիլիոնանոց զանգվածի նկատմամբ: Ընդ որում, Մենշիկովին հանձնարարված էր ստիպել սուլթանին, որպեսզի նա Քյուչուկ-Կայնարջիի պայմանագրի ոգով հրապարակի մի նոր ֆերման, որը երաշխավորեր Ռուսաստանի հովանավորության իրավունքը Օսմանյան կայսրության բոլոր ուղղափառ հպատակների նկատմամբ: Այդ պահանջը պետք է ձևակերպվեր պայմանագրի ուժ ունեցող կոնվենցիայի ձևով, որը կարող էր հավասարազոր լինել գաղտնի պաշտպանողական դաշինքի Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև:

Ցարական կառավարության պահանջների ոչ լրիվ բավարարման դեպքում Մենշիկովին թույլատրվում էր Բ. Դոանը ներկայացնել վերջնագիր: Ավելին, նրան հասկացրել էին, որ Ձմեռային պալատում չեն զայրանա, եթե նույնիսկ նրա դիվանագիտական առաքելության հետևանքը հանդիսանա Ռուսաստանի պատերազմը Թուրքիայի հետ: Մենշիկովին հանձնարարված էր խորհրդաժողովների համար երեք օր ժամանակ տալ Թուրքերին և բացասական պատասխանի դեպքում դեսպանության ողջ անձնակազմով հեռանալ Կ. Պոլսից:

Մենշիկովի միսիայի կարևորությունը չեչտելու համար ցարը նրան չնորհեց արտակարգ և լիազոր դեսպանի կոչում:

1853 թ. փետրվարի 28-ին «Գրոմոնոսեց» ռազմանավով ժամանելով Ստամբուլ, այնտեղ ռուսական պատվիրակությունը գտավ փառահեղ ընդունելություն: Թուրքական ոստիկանությունը նույնիսկ չհամարձակվեց ցրել հույների ամբոխը, որոնք եկել էին իրենց ցնծությունը ցուցադրելու ուղղափառ պետության դեսպանի նկատմամբ:

Բ. Դոան հետ բանակցությունները Մենշիկովը վարում էր սանձարձակ կոպտությամբ ու ամբարտավանությամբ, հարցադրումները կատարելով վերջնագրի ձևով և պատասխանի համար տրամադրելով խիստ սեղմ ժամկետներ: Նա անընդհատ սպառնում էր, որ իր պայմանները չընդունելու դեպքում Ռուսաստանը կխզի իր հարաբերությունները Թուրքիայի հետ: Բանակցությունների հենց սկզբում նա հայտարարեց, որ չի ցանկանում գործ ունենալ արտաքին գործերի մինիստր Ֆուադ էֆենդիի հետ, որը «սրբազան վայրերի» հարցում պաշտպանում էր ֆրանսիական տեսակետը: Տեղեկացված լինելով, որ ռուսները սկսել են զորքեր կենտրոնացնել Բեսարաբիայում, վախեցած սուլթանը պաշտոնանկ արեց Ֆուադին և նրա փոխարեն

նշանակեց Մենշիկովին հաճո Ռիֆաաթ փաշային: Սակայն վերջինս, ծանոթանալով ռուսական լիազոր դեսպանի պահանջների հետ, բացականչել էր, որ սուլթանին ոչինչ չի մնում, բացի գահից հրաժարվելուց:

Մենշիկովը Թուրքական կառավարությանը ներկայացրեց ռուս-թուրքական կոնվենցիայի մի նախագիծ, որը օտարերկրյա դիվանագետների գնահատմամբ, անմիջապես Նիկոլային կդարձներ «երկրորդ Թուրքական սուլթան»: Այդ նախագծում Նիկոլայ I-ը իր նախկին պահանջներին ավելացրել էր նաև Բալկանյան թերակղզու քրիստոնյաների նկատմամբ հովանավորության իրավունքը:

Այդ օրերին (1853 թ. ապրիլի 5-ին) որպես բրիտանական դեսպան Ստամբուլ ժամանեց 67-ամյա փորձառու դիվանագետ Ստրետֆորդ-Կաննինգը, որը նախկինում դեսպանական մի ժամկետ ծառայել էր Ստամբուլում և այժմ Լոնդոնը նրան կրկին ուղարկում էր Թուքիայի մայրաքաղաքը, նախապես նրան շնորհելով լորդի տիտղոս (լորդ Ստրետֆորդ - Ռեդկլիֆ):

«Մեծ Էլչին» երկրորդ անգամ մտնելով Ստամբուլում բրիտանական դեսպանության շենքը՝ անմիջապես ձեռնամուխ եղավ դիվանագիտական մի վարպետ խաղի, որի նպատակն էր ձախողել Մենշիկովի առաքելությունը և առհասարակ ի չիք դարձնել ռուսական սպառնալիքները Օսմանյան կայսրության նկատմամբ: Նրա, ինչպես նաև ֆրանսիական նորանշանակ դեսպան Դելակուրի ներկայությունը Ստամբուլում սուլթանին հաղորդեց ինքնավստահություն: Աբդուլ Մեջիդի հետ հանդիպման ժամանակ բրիտանական դեսպանը գաղտնագերծեց այն դիրեկտիվները, որ ինքը տվել էր Միջերկրական ծովում անգլիական ռազմածովային նավատորմի հրամանատարին, այն է, նավատորմը պահել մարտական պատրաստության վիճակում և այն օգտագործել միայն այն դեպքում, եթե Կ. Պոլսի համար ստեղծվի ուղղակի սպառնալիք:

«Մեծ Էլչին» գործում էր վերին աստիճանի խելացի ու նրբին ձևով: Անփույթ, ամբարտավան, գոռոզ ու ինքնահավան ռուս բարինը, Մենշիկովը, որը դիվանագիտության մեջ խղճուկ դիլետանտ էր, չէր կարող չափվել զգույշ, շրջահայաց ու փորձառու անգլիական այդ դիվանագետի հետ:

Դատելով Մենշիկովի վարքագծից՝ Ստրետֆորդը անմիջապես կռահեց, թե ինչպիսի հրահանգներ են տրված նրան և որոնք են ցարի իսկական նպատակները: Նա խորհուրդ տվեց սուլթանին ու նրա մինիստրներին մինչև վերջին հնարավորություն զիջումների գնալ «սրբազան վայրերի» հարցում: Ստրետֆորդի համար միանգամայն

պարզ էր, որ Մենշիկովը դրանով չի բավարարվելու, քանի որ նա Ստամբուլ է ժամանել ոչ դրա համար: Միաժամանակ նա գումարեց եվրոպական մեծ պետությունների՝ Ավստրիայի, Ֆրանսիայի ու Պրուսիայի դեսպանների մասնակցությամբ խորհրդակցություն, դրանով իսկ «արևելյան հարցը» դնելով համատեղ եվրոպական լուծման հիմքի վրա: Այդ խորհրդակցությունում կայացվեց միահամուռ համաձայնություն համատեղ ուժերով հակադարձել Ռուսաստանի չափն անցկացնող պահանջներին:

Իրադարձությունները զարգանում էին ճիշտ այնպես, ինչպես նախատեսել ու ծրագրել էր Ստրետֆորդը: Մայիսի 5-ին Բ. Դուռը գիջման գնաց այն բոլոր հարցերում, որոնք վերաբերում էին «սրբազան վայրերին»: Անմիջապես դրանից հետո տեսնելով, որ իր հիմնական նպատակի իրագործումը ձախողվում է, Մենշիկովը պնդեց ռուսական կայսրի հետ սուլթանի կողմից պայմանագիր կնքելու իր նախկին պահանջի վրա: Ստրետֆորդի հետ խորհրդակցելուց հետո սուլթանը և Բ. Դուռը հենց նույն օրը մերժեցին Մենշիկովի պահանջը: Վերջինս հայտարարեց, որ խզում է հարաբերությունները Բ. Դռան հետ: 1853 թ. մայիսի 21-ին Մենշիկովի միսիան, իսկ նրա հետ միասին նաև ռուսական դեսպանության ամբողջ կազմը, թողեցին Թուրքիայի մայրաքաղաքը: Ցարական զինանշանը՝ երկգլխանի արծիվը, հանվեց ռուսական դեսպանության շենքի վրայից: Դա նշանակում էր, որ դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև խզվում են: Ստեղծվեց ռազմական ընդհարման սպառնալիք: Ժամանելով Օդեսա՝ իշխանը անմիջապես հեռագրեց իր «օգոստափառ միապետին», որ իր դիվանագիտական առաքելությունը ձախողվել է: Իրեն արդարացնելու նպատակով նա ողջ մեղքը բարդեց Ստրետֆորդ-Ռեդկլիֆի վրա, ասելով, որ այդ «Նեռի սատանայական արվեստը» ի չիք դարձրեց ողջ գործը:

Ստրետֆորդի խորհրդով հունիսի 4-ին սուլթանը հրապարակեց ֆերման, որտեղ հանդիսավոր կերպով երաշխավորվում էին քրիստոնեական եկեղեցիների, և հատկապես ուղղափառ եկեղեցու իրավունքներն ու արտոնությունները: Ի պատասխան դրա, Նիկոլայ I-ը հրապարակեց մանիֆեստ, որտեղ ասվում էր, որ ինքը, իր նախորդների նման, պարտավոր է պաշտպանել ուղղափառ եկեղեցու շահերը Թուրքիայում: Եվ քանի որ սուլթանը խախտում է Ռուսաստանի հետ կնքված բոլոր նախորդ պայմանագրերը այդ հարցի վերաբերյալ, ցարը ստիպված է գրավել դանուբյան իշխանությունները (Մոլդավիան և Վալախիան): 1853 թ. հուլիսի 2-ին ռուսական զորքերը անցան

Պրուտ գետը և մուտք գործեցին Մոլդավիա: Այնուհետև չհանդիպելով դիմադրության, ռազմակալման ենթարկեցին Դանուբյան իշխանությունների ողջ տարածքը: Սակայն Թուրքիային պատերազմ դեռ չէր հայտարարված: Պատերազմ չէր հայտարարել նաև Թուրքիան:

Մեծ Բրիտանիայի ռազմանավերը, որոնց միացավ նաև ֆրանսիական ռազմական նավատորմիղը, չարժվեցին դեպի Դարդանելի մուտքը, սակայն չմտան նեղուցները, որոնք 1841 թ. պայմանագրով փակ էին այլ երկրների ռազմանավերի համար: Իրադրությունը գնալով չիկանում էր: Նիկոլայ I մոլորության մեջ էր, կարծելով, թե Անգլիան և Ֆրանսիան չեն միջամտելու իրադարձություններին: Մինչդեռ նրանք սկսեցին մկանների ցուցադրումը:

1853 թ. աշնանը ողջ եվրոպական դիվանագիտությունը գտնվում էր մեծագույն տագնապի մեջ: 1853 թ. սեպտեմբերին Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի և Պրուսիայի մասնակցությամբ Վիեննայում հավաքված խորհրդաժողովը մշակեց, այսպես կոչված «Համաձայնության նոտան»՝ որը պարունակում էր առաջարկություններ ռուս-թուրքական կոնֆլիկտի խաղաղ կարգավորման վերաբերյալ: Քանի որ այդ փաստաթղթում վկայակոչվել էին Քյուչուկ-Կայնարջիի և Ադրիանոպոլսի պայմանագրերով սուլթանի ստանձնած պարտավորությունները քրիստոնեական դավանության հովանավորության մասին, Ռուսաստանը համաձայնվեց ընդունել «Համաձայնության նոտայի» նախագիծը քննարկման դնելու համար, սակայն սուլթանը և Բարձրագույն դուռը հրաժարվեցին, գտնելով, որ Վիեննայի նոտայի դրույթները տանում են դեպի Օսմանյան կայսրության ինքնիշխանության խախտում:

Հենվելով Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի և Պրուսիայի բացահայտ աջակցության վրա, Թուրքական կառավարությունը սկսեց գործել ավելի եռանդուն կերպով, պահանջ ներկայացնելով Դանուբյան իշխանություններից ռուսական զորքերը դուրս բերելու մասին: Սակայն ցարական կառավարությունը կտրականապես մերժեց այդ պահանջը:

1853 թ. սեպտեմբերին Ստամբուլում սկսվեցին հակառուսական ցույցեր ու հանրահավաքներ: Մայրաքաղաքում թևածում էր պատերազմական մթնոլորտը: Մի քանի ուլեմներ, որոնց միացան նաև աստվածաբանություն ուսումնասիրող կրոնական դպրոցների ուսանողների մի մեծ խումբ, կազմեցին մի մանիֆեստ, որը սուլթանին կոչ էր անում Ռուսաստանի դեմ հայտարարել ջիհադ (սրբազան պատերազմ): Մայրաքաղաքում պատերազմի կուսակցությունը վերելքի

մեջ էր: Այլևս դժվար էր գնալ հոսանքին հակառակ: Դատելով ժամանակակիցների հաղորդած տեղեկություններից՝ թեև սուլթան Աբդուլ Մեջիդը գիտակցում էր, թե ինչ է սպասում իր պետությանը անհաջողության դեպքում, սակայն իր մեջ չգտավ այնքան ուժ և վճռականություն, որ կանխի իրադարձությունների նման զարգացումը: Հանդիսավոր պայմաններում նա իր մինիստրներին դիմեց ռազմաշունչ ճառով, իր մեջքին կապեց մարգարեի սուրը և սեպտեմբերի 26-ին գումարեց Բարձրագույն խորհրդի ընդլայնված նիստ, որը միաձայն որոշում ընդունեց այն մասին, որ պատերազմի հայտարարումը անխուսափելի է: Որոշումը հաստատվեց սուլթանի կողմից, որին հետևեց չեյխ-ուլ-իսլամի հատուկ ֆեթվան, որում այդ բարձրագույն հոգևոր հեղինակությունը իր համաձայնությունն էր տալիս Ռուսաստանի դեմ պատերազմ հայտարարելու մասին: Հոկտեմբերի 1-ին պաշտոնապես տեղի ունեցավ պատերազմի հայտարարումը: Ռումելիայում թուրքական զորքերի հրամանատար, գեներալ Օմեր փաշան Դանուբյան ճակատի ռուսական զորքերի հրամանատար, գեներալ Մ. Դ. Գորչակովին հանձնեց վերջնագրային պահանջ՝ 15 օրվա ընթացքում իր զորքերը դուրս բերելու Մոլդավիայի և Վալախիայի իշխանապետությունների տարածքից: Ռուսական հրամանատարությունը մերժեց այդ պահանջը: Այնժամ ռազմական գործողությունները ամբողջ թափով ծավալվեցին: Թուրքական զորքերը Ռուսաստանի դեմ ռազմական գործողություններ սկսեցին միաժամանակ Դանուբյան և Կովկասյան ճակատներում: Հոկտեմբերի 20-ին անգլո-ֆրանսիական նավատորմը ծածանվող դրոշներով մուտք գործեց Դարդանել և շարժվեց վերև Ոսկեղջույրի կողմը՝ խարիսխ նետելով Մարմարա ծովում: Դա ռազմական ցույց էր հօգուտ թուրքերի: Ցարը հրամայեց Սևաստոպոլում տեղակայված ռուսական նավատորմին գալ մարտական պատրաստության վիճակի և պատրաստ լինել ռազմական գործողությունների համար:

Սկզբնական շրջանում ռուսական ու թուրքական բանակների միջև մարտերը ծավալվեցին Դանուբի վրա և Կովկասյան ճակատում: Դանուբյան իշխանություններում մինչև ձմեռ թուրքերն իրար հետևից տարան չորս հաղթանակ: Ամենաարյունահեղ ճակատամարտը տեղի ունեցավ Դանուբի ձախ ափին, Զետատե գյուղի մոտի 1854 թ. հունվարի 6-ին: Երկու կողմերն էլ դրսևորեցին անօրինակ համառություն և խիզախություն: Դանուբի ճակատում մղվող մարտերի հետ միաժամանակ՝ սկսեց գործել նաև ռուսական Սևծովյան ռազմական նավատորմը:

Սինոպի ծովախորշում տեղակայված թուրքական նավատորմի հրամանատար Օսման-փաշան Ստամբուլ ուղարկեց հաղորդագրություն այն մասին, որ նավահանգստի մոտակայքում երթևեկեում են վեց ռուսական ռազմանավեր և պահանջեց օգնական ուժեր: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի դիվանագիտական ու ռազմածովային մարմինները նպատակահարմար չհամարեցին տվյալ պահին Սև ծովում ծավալելու ռազմական գործողություններ, ուստի Բ. Դոանը թույլ չտվեցին, որ Սինոպ ուղարկվեն օգնական ուժեր: Թեև թուրքերը իրենց տրամադրության տակ չունեին և ոչ մի գծանավ, որի հետևանքով անընդունակ էին հաջող դիմադրության համար, ոչ միայն հրաժարվեցին հանձնվել, այլև առաջինը կրակ բաց արին: 1853 թ. նոյեմբերի 18-ին (30-ին) Սինոպի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ ռուսական և թուրքական նավատորմիղների միջև: Ռուսական նավատորմը փոխ-ծովակալ Պ. Ս. Նախիմովի հրամանատարությամբ համարյա ամբողջապես ոչնչացրեց թուրքական ռազմանավերի խմբավորումը: Թուրքական բոլոր նավերը ջրասույց արվեցին, բացի մեկից, որի հրամանատարը փոխ-ծովակալ Մուչավեր-փաշան էր, (դավանափոխ եղած անգլիական ծովային սպա Ադոլֆ Սլեյդը): Օսմանյան ռազմական նավատորմը այդ ճակատամարտում կորցրեց իր ընդհանուր կազմի մեկ հինգերորդ մասը: Թուրքերը կորցրին նաև մոտ երեք հազար նավաստիներ: Երբ Սինոպի մոտ թուրքական նավատորմի ջախջախման լուրը հասավ Կ. Պոլիս, բրիտանական դեսպան լորդ Ստրեթֆորդ Կաննինգը բացականչեց. «Փառք աստծո, պատերազմը սկսվում է»:

Սինոպի այդ «սպանդանոցը» Դանուբի մոտ թուրքական հարձակողական գործողությունների պատասխան քայլն էր: Այդ հաղթանակը փառահեղ կերպով, թատերականացված ներկայացման ձևով և հրավառության ուղեկցությամբ նշվեց Սանկտ-Պետերբուրգում: Մինչդեռ Լոնդոնում այն գնահատվեց որպես «ուխտադրուժ գազանություն»: Սինոպի միջադեպը Լոնդոնում առաջ բերեց պատերազմական տրամադրությունների պայթյուն Ռուսաստանի դեմ: Դեկտեմբերի կեսերին Նապոլեոն III-ը հայտարարեց Փարիզում ֆրանսիական դեսպան լորդ Կաուլիին, որ մտադիր է նավատորմին հրամայել մտնելու Սև ծով: Նա պնդում էր, որ միացյալ անգլո-ֆրանսիական նավատորմը պետք է Սև ծովը ամբողջապես մաքրի ռուսական ռազմանավերից և կատարելապես տիրապետող դիրքեր ձեռք բերի նրա ջրերում: Սինոպից հետո ռուսական բանակը խոշոր հաջողություն ձեռք բերեց կովկասյան ճակատում: Բաչկաղբքլարի (Բաչգեղիքլը)

մոտ 1853 թ. դեկտեմբերի 1-ին սերասկեր Ահմեդ-փաշայի 36-հազարանոց բանակը ջախջախիչ պարտություն կրեց: Այն տեղի ունեցավ Ախալցխայի մոտ Անատոլիական գումարտակի պարտությունից անմիջապես հետ, որի հետևանքով Կովկասյան ճակատում թուրքական զորքերի վիճակը ծայր աստիճանի բարդացավ:

Երբ ստեղծվեց Օսմանյան կայսրության ջախջաքման սպառնալիք, Անգլիան և Ֆրանսիան վախենալով Ռուսաստանի հզորացման հեռանկարից, ինչպես նաև մտավախություն ունենալով, որ կկորցնեն իրենց դիրքերը Մերձավոր Արևելքում, որոշեցին բացահայտ կերպով միջամտել կոնֆլիկտին:

1854 թ. հունվարի 2-ին միացյալ անգլո-ֆրանսիական նավատորմը մուտք գործեց Սև ծով: Նրանց հրամանատար երկու ծովակալները տեղեկացրին ռուսական իշխանություններին, որ իրենք հանձնարարություն ունեն թուրքական նավերն ու նավահանգիստները պաշտպանել ռուսներից: Այսպիսով, թեև Անգլիան և Ֆրանսիան դեռևս պաշտոնապես պատերազմ չէին հայտարարել Ռուսաստանին, սակայն փաստորեն գտնվում էին պատերազմական վիճակի մեջ: Անգլիական մամուլը գրում էր, որ անհրաժեշտ է պայքարել Թուրքիայի անկախության համար: 1854 թ. հունվարի 29-ին ֆրանսիական կառավարության «Մոնիթեր» պաշտոնաթերթում տպագրվեց ֆրանսիական կայսր Նապոլեոն III-ի նամակը՝ ուղղված համառուսաստանյան կայսր Նիկոլայ Պավլովիչին: Նապոլեոնը գրում էր, որ սինոպյան թնդանոթների որոտը վիրավորել է Ֆրանսիայի և Անգլիայի ազգային պատիվը: Ինքը ցարին առաջարկում է վերջին ելքը. զորքերը դուրս բերել Մոլդավիայից և Վալախիայից. այնժամ Փարիզը և Լոնդոնը կհրամայեն իրենց նավատորմիղներին հեռանալու Սև ծովից: Իսկ այնուհետև թող Ռուսաստանը և Թուրքիան նշանակեն իրենց ներկայացուցիչներին հաշտության բանակցություններ վարելու համար: Փետրվարի 9-ին ցարը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության «Ժուռնալ դե Սեն-Պետերսբուրգ» պաշտոնաթերթում հանդես եկավ պատասխանով, որ իրեն ռուսական պատիվը նույնքան թանկ է, որքան Նապոլեոն III-ի համար ֆրանսիական պատիվը: Որ Սինոպի ճակատամարտը միանգամայն օրինական գործողություն էր, որ չի կարելի դանուբյան իշխանությունների գրավումը հավասարեցնել Սև ծովի փաստացի գրավման հետ, որն իրականացվել է ֆրանսիական և անգլիական նավատորմիղների կողմից և այլն:

Ցարի կարգադրությամբ Սանկտ-Պետերբուրգում ֆրանսիական և անգլիական դեսպաններին հանձնվեցին իրենց անձնագրերը, իսկ

Փարիզում ռուսական դեսպան Կիսելյովը հայտարարեց Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման մասին:

1854 թ. փետրվարի 27-ին Ֆրանսիան հայտարարեց Ռուսաստանի հետ իր պատերազմական վիճակի մեջ գտնվելու մասին: Նույնը արեց նաև Անգլիան: Երկու չաբաթ հետո պատերազմ հայտարարեց նաև ցարը, կոչ անելով «սրբազան առաքելությամբ» մարտնչել հանուն ուղղափառ դավանանքի, որի դեմ Անգլիան և Ֆրանսիան միավորվել են քրիստոնյաների թշնամիների հետ:

Սինոպի մոտ կրած ջախջախիչ պարտության լուրը խուճապի էր մատնել սուլթան Աբդուլ Մեջիդին և Բ. Դռանը: Նրանք թախանձագին կերպով խնդրում էին Արևմտյան տերություններին միջամտել իրադարձությունների ընթացքին:

Անցնելով ներքին Դանուբը, ռուսական զորքերը խոշոր մասշտաբի ռազմական գործողություններ սկսեցին Թուրքական բանակի դեմ: Անմիջապես Անգլիան և Ֆրանսիան ստորագրեցին մի նոր պայմանագիր Օսմանյան կայսրությունը պաշտպանելու վերաբերյալ: Այդ պայմանագիրը, Փարիզի և Լոնդոնի մտահղացմամբ, պետք է ծառայեր որպես Ղրիմի պատերազմի «հզոր շարժիչ»:

Այսպիսով Նիկոլայ I-ի չափից ավելի մեծ պատվախնդրության ու գոռոզամտության և ցարական դիվանագիտության ապաշնորհհության ու գործելու կոպիտ եղանակների պատճառով Ռուսաստանը հայտնվեց պատերազմական վիճակում, առանց դաշնակիցների, ընդդեմ Եվրոպայի միացյալ պետությունների և Օսմանյան կայսրության:

Կովկասյան ռազմաճակատը չափազանց կարևոր նշանակություն ուներ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ռուսաստանի համար: Այդ ճակատում տեղի ունեցան խոշորամասշտաբ և կատաղի ճակատամարտեր: Կովկասյան ճակատամատում առաջինը ռազմական գործողություններ սկսեցին Թուրքերը: Սակայն նրանք Ախալցխայի մոտ՝ Ազխորում 1853 թ. նոյեմբերի 18-ին կրեցին առաջին անհաջողությունը: Այնուհետև գեներալ-մայոր Բեհբութովը (Բեհբության) նրանց պարտության մատնեց Բայանդուր գյուղի մոտ, որի հետևանքով թուրքական զորքերը ստիպված էին նահանջել ու ամրանալ Արփա-չայ (Ախուրյան) սահմանային գետի թուրքական ափին: Այդ պարտություններից հետո ևս թուրքական հրամանատարությունը չհրաժարվեց իր մտադրությունից Ախալցխայի ճանապարհով ներխուժելու Թիֆլիս: Ուստի Ախալցխան գրավելու համար թուրքերը կենտրոնացրին խոշոր ուժեր: 1853 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ համառ և արյու-

նահեղ ճակատամարտ: Զրիմանալով ռուսական զորքերի անկասելի գրոհին՝ Ալի-փաշայի Թուրքական բանակը սկսեց նահանջել, իսկ ապա դիմեց անկանոն փախուստի ընդհուպ մինչև Արդահան քաղաքը: Ախալցխայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից վեց օր անց Թուրքերը կրեցին ևս մեկ, էլ ավելի խոշոր պարտություն:

1853 թ. դեկտեմբերի 1-ին, Կարսի և Ալեքսանդրապոլի միջև Բաշկաղրքլար գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանյան զորքերը կրեցին ջախջախիչ պարտության: Այդ ճակատամարտում գեներալ Բեհբութովը հաղթեց հակառակորդին, ունենալով երեք անգամ քիչ զորքեր, քան հակառակորդը: Ահմեդ-փաշայի 36-հազարանոց բանակից Կարս հասավ մոտ կեսը: Ընդ որում, կենդանի մնացած զինվորները այլևս ռազմիկներ չէին, այլ բարոյալքված ամբոխ: Կարսի Թուրքական գումարտակի ջախջախումը, որը հանդիսանում էր անատոլիական բանակի գլխավոր զորամասը, ռազմական խոշոր կորուստ էր Օսմանյան կայսրության համար: Այդ պարտություններից հետո Թուրքական հրամանատարությունը ստիպված էր հրաժարվել Երևանի վրա արդեն նախապատրաստված արշավանքից: Իսկ ամենակարևորը Ախալցխայի և Բաշքադրքլարի մոտ կրած պարտությունները կատարելապես ձախողեցին Թուրքերի ծրագրերը խորքով ներխուժելու Անդրկովկաս, գրավելու Թիֆլիսը և Կովկասի լեռնականներին ոտքի հանելու Ռուսաստանի դեմ:

1854 թ. գարնանը ռուսական մի խոշոր բանակ անցնելով Դանուբ գետը և մտնելով Թուրքական տարածք՝ պաշարեց ռազմավարական խոշոր նշանակություն ունեցող Սիլիստրիա ամրոցը, որի զորամասը ցույց էր տալիս կատաղի դիմադրություն: Ամրոցի պաշտպանությանը մասնակցում էին նաև բրիտանական սպաները: Ռուսների բոլոր փորձերը գրավելու Սիլիստրիան ապարդյուն անցան: Դանուբի ափերին ծավալվեցին կատաղի մարտեր: Ի վերջո ռուսական զորքերը հարկադրված էին դուրս գալ Մոլդավիայից ու Վալախիայից, որոնք ռազմակալման ենթարկվեցին ավստրիական զորքերի կողմից, փակելով ռուսների ներխուժման ճանապարհը դեպի Եվրոպա:

Արևմուտքի երկրներում Ռուսաստանի և Թուրքիայի միջև ծավալվող ռազմական գործողությունների ընդհանուր պատկերի վերլուծությունը բերել էր այն համոզման, որ իրադարձությունները զարգանում են ռուսների օգտին: Իսկ դա նշանակում էր, որ Օսմանյան կայսրության գոյության հարցը դրված էր ահեղ սպառնալիքի տակ: Կասկածից վեր է, որ այդ իրավիճակը կարող էր վտանգել Անգլիայի և Ֆրանսիայի կենսական շահերը ողջ Մերձավոր Արևելքում: Այդ

ծանր խոհերը դրդում էին վերոհիշյալ պետությունների կառավարող շրջաններին հանդես գալ Ռուսաստանի դեմ: Հենց այդ պատճառով ի վերջո ռուս-թուրքական պատերազմը վերածվեց եվրոպական պատերազմի: 1854 թ. փետրվարի սկզբին Ռուսաստանի՝ մի կողմից և Անգլիայի ու Ֆրանսիայի միջև մյուս կողմից հարաբերությունները խզվեցին: Սակայն դա դեռ պատերազմ չէր: 1854 թ. մարտի 12-ին Բ. Դուռը Անգլիայի ու Ֆրանսիայի հետ կնքեց դաշնակցային պայմանագիր: Մի քանի օր անց, մարտի 27-ից, Անգլիան և Ֆրանսիան իրենց հայտարարեցին պատերազմական վիճակում Ռուսաստանի դեմ: Ապրիլի 23-ին Նիկոլայ I-ը հրապարակեց մանիֆեստ, որով Ռուսաստանը պատերազմի մեջ էր մտնում Անգլիայի և Ֆրանսիայի հետ:

Շուտով ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմ դարձան Ղրիմը և Անդրկովկասը: 120 հազարանոց անգլո-ֆրանս-թուրքական բանակը ցամաքից և ծովից պաշարեց Սևաստոպոլը: Մեկ տարի շարունակ քաղաքի պաշտպանները և ամբողջ բնակչությունը անձնվիրաբար կռվում էին հակառակորդի դեմ: Դաշնակիցներին հաջողվեց գրավել Սևաստոպոլը միայն 1855 թ. սեպտեմբերի 9-ին, վճարելով թանկ գին. նրանք կորցրին ավելի քան 70 հազար զինվոր ու սպա: Ի դեպ, Ղրիմի ռազմական գործողություններին թուրքական զորքերի մասնակցությունը աննշան էր:

Ռուսական բանակի համար նշանակալիորեն ավելի մեծ հաջողությամբ իրադարձությունները զարգանում էին Կովկասյան ռազմաճակատում, որտեղ 1855 թ. ամռանը նրան հաջողվեց գրավել Բայազեդը, հետ մղել թուրքերի դեսանտային գործողությունը Սուխումի մոտ, իսկ նույն թվականի նոյեմբերին գրավել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Կարս ամրոցը: Թուրքերի համար կատարյալ անհաջողությամբ ավարտվեց նաև Մինգրելիա ներխուժելու փորձը, որի վերջնական նպատակն էր Թիֆլիսի գրավումը:

1855 թ. փետրվարին Նիկոլայ I-ի անսպասելի մահը առաջ բերեց խաղաղություն հաստատելու հույս, մանավանդ որ նոր ցարը՝ Ալեքսանդր II-ը հակված էր չուտափույթ կերպով կնքելու հաշտություն, քանի որ պատերազմի ընթացքում Ռուսաստանը ուժասպառ էր եղել: Նրա ռազմական ու նյութական ռեսուրսները հիմնավորապես հյուծվել էին: Սևաստոպոլի անկումից հետո միանգամայն ակնհայտ էր դարձել, որ չնայած Կովկասյան ճակատում ձեռք բերված հաջողությունների, պատերազմի շարունակումը Ռուսաստանի համար կարող է ունենալ ավելի ծանր հետևանքներ:

Հաշտություն կնքելու միջնորդությամբ հանդես եկավ Ավստրիան:

Վերջինս 1855 թ. վերջին ռուսական կառավարությանը ներկայացրեց հաշտության պայմանագրի մի նախագիծ, որը նախապես համաձայնեցված էր Լոնդոնի և Փարիզի հետ: Ռուսաստանը տվեց իր համաձայնությունը: 1856 թ. փետրվարի 13-ին կնքվեց զինադադար: Մինչև հաշտության պայմանագրի կնքումը, քանի որ ֆրանսիական և անգլիական դիվանագիտության համար ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրության ուղղափառ քրիստոնյա բնակչության դրության հարցը Ռուսաստանն անպայման կներկայացնի ապագա հաշտության վեհաժողովի մասնակիցների քննարկմանը, Փարիզը և Լոնդոնը տեղեկացրին Թուրքական կառավարությանը, որ խաղաղություն հաստատելու նախնական պայմաններից մեկը այն է, որ նա իր սեփական ցանկությամբ (proprio motu) պետք է շարունակի Գյուլհանեի ակտը և հրապարակի հրամանագիր Օսմանյան կայսրության մուսուլման և ոչ մուսուլման հպատակների իրավահավասարության մասին: Այդ ծրագրի վրա, որն անգլիացիներն անվանեցին Օսմանյան կայսրության համար «բարեփոխումների խարտիա», մեծագույն եռանդով աշխատել էր Ստամբուլում բրիտանական դեսպան լորդ Ստրետֆորդ Կաննինգը: Անգլիացիները գտնում էին, որ դա լինելու էր «Օսմանյան կայսրության վերածնության» մի ծավալուն ծրագիր: 1856 թ. փետրվարի 18-ին, հաշտության վեհաժողովի աշխատանքները սկսվելուց մեկ շաբաթ առաջ, հրապարակվեց սուլթանի հաթթ-ը հումայունը (բարձրագույն հրամանագիրը): Պատմական գրականության մեջ այն հաճախ անվանում են նաև Թանզիմաթի երկրորդ էտապ: Այն Թուրքիայի պատմության մեջ մտել է որպես Թանզիմաթի բարեփոխումների պատմության նոր փուլ բացած կարևոր փաստաթուղթ: Հաթթ-ը հումայունը հաստատում էր 1839 թ. Գյուլխանեի հաթթ-ը չերիֆի բոլոր դրույթները: Սուլթանի հրամանագիրը պարունակում էր ոչ մուսուլմանական համայնքների բոլոր արտոնություններն ու առանձնաշնորհումները պահպանելու խոստում, հռչակում էր կայսրության բոլոր հպատակների (առանց դավանության խտրության) իրավունքը՝ պաշտոններ զբաղեցնելու պետական ծառայության մեջ, ինչպես նաև քաղաքացիական ու զինվորական դպրոցներ ընդունվելու իրավունքը, երաշխավորում էր հպատակների իրավահավասարությունը դատարաններում գործերը քննարկվելիս և խոստանում էր բոլոր հարկատուների իրավունքների հավասարություն, սահմանում էր, որ ոչ մահմեդականներին նույնպես թույլ է տրվելու կատարել զինվորական ծառայություն, խոստանում էր իրականացնել մի շարք տնտեսական բարեփոխումներ, մասնավորապես, ոչնչացնել չարա-

չահումները հարկերի հավաքման ժամանակ և այլն: Նշվում էր, որ այսուհետև ամեն մի հանցանք պետք է հետաքննվի, ապացուցվի և այնուհետև հանցանք գործած անձը հրապարակորեն դատապարտվի չարիաթական օրենքի հիման վրա: Առանց դատավճռի ոչ ոքի չի թույլատրվելու բացահայտ կամ գաղտնի սպանությամբ պատժելու մեկ ուրիշին: Յուրաքանչյուրի իրավունքն է կատարյալ ազատ և անկաշկանդ տիրելու իր ունեցվածքին ու սեփականությանը: Որևէ հանցագործի ժառանգությունը չպետք է բռնագրավվի. նրա անմեղ ժառանգները օգտվելու են իրենց օրինավոր ժառանգության իրավունքից: Տերության բոլոր հպատակները, անկախ իրենց դավանանքից, հավասարապես օգտվելու են կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովման սկզբունքից: Բոլոր հպատակները, առանց խոչնդոտի ու բռնադատման, հետևելու են իրենց դավանած կրոնին: Ոչ ոք հարկադրական կերպով կրոնափոխության չի ենթարկվելու: Դատարաններում վկայությունները ընդունվելու են առանց դավանանքի խտրության: Հարկահավաքման գործում կապալային համակարգի փոխարեն գործադրվելու է ուղղակի հարկահավաքման համակարգը: Օրենքները պետք է հրապարակվեն կայսրությունում օգտագործվող բոլոր լեզուներով: Հաթթ-ը վստահեցնում էր, որ պետք է ընդունվեն օրենքներ, որոնք ուղղված են կաշառակերության, կոռուպցիայի և վաչխառության դեմ: Խոստանում էր հարկերի հավաքման ժամանակ արմատախիլ անել բոլոր չարաշահումները, օտարերկրացիներին տրամադրել անշարժ գույք ունենալու իրավունք, պայմանով, որ նրանք ենթարկվեն թուրքական օրենքներին: Խոստացվում էր ոչ մահմեդական համայնքներին տրամադրել տարբեր արտոնություններ, խստիվ արգելել պաշտոնների վաճառքը:

Նշվում էր, որ կայսրության բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները, ուլեմները և այլ անձինք, որոնք կխախտեն Հաթթ-ը հումայունի դրույթները, պատժի կենթարկվեն իրենց գործած հանցանքի համեմատ, անկախ նրանց ունեցած աստիճանից, կոչումից ու արժանիքներից: Շարիաթի օրենքներով խստորեն պատժի է ենթարկվելու կաշառակերությունը, որը կայսրության անկման գլխավոր պատճառներից է:

Ըստ Հաթթ-ը հումայունի դրույթների, կայսրության բոլոր բնակիչները, անկախ նրանց ազգային կամ կրոնական պատկանելության, հռչակվում էին «բարձր պետության հպատակներ» կամ «սուլթանի հպատակներ»: Այդ հրամանագրի տեքստում առաջին անգամ օգտագործվում էր «վաթանդաշլըք» տերմինը, որը հանդիսանում էր հայրենասիրություն բառի համարժեքը:

Թուրքական կառավարող շրջանների կողմից Հաթթ-ը Հումայունը ներկայացվում էր որպես իրավական պետության ստեղծման փորձ: Սակայն իրականում դրա նպատակը այդ պետության հիմնարար սկզբունքների անխաթար պահպանումն էր: Հաթթ-ը Հումայունի հրապարակումը Ռուսաստանի հակառակորդներին հնարավարություն տվեց Օսմանյան կայսրության քրիստոնյաների վիճակի վերաբերյալ հարցը քննարկելիս խուսափել խաղաղության պայմանագրի մեջ հատուկ հոդված մտցնելուց, որը ձեռնտու էր լինելու Ռուսաստանին: Ավելին, Հաթթ-ը Հումայունի շնորհիվ Օսմանյան կայսրությունը ճանաչվում էր որպես մի պետություն, որը թևակոխել է եվրոպականացման ուղին և արժանի է ընդունվելու եվրոպական պետությունների ընտանիքի մեջ:

Եթե Հաթթ-ը Հումայունի քաղաքական արժեքը Օսմանյան կառավարության համար չափազանց կարևոր էր, ապա այդ նույն պետության բնակչության համար այն առանձնապես մեծ արժեք չէր ներկայացնում: Թուրք պատմաբան Ջելալ Նուրին գրում է, որ Հաթթ-ը Հումայունը մեծ հանդիսավորությամբ ընթերցվելու ժամանակ, ոչ միայն հասարակությունը, այլև երկրի ավագանին անգամ նրանից բան չէր հասկանում: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ ամբողջ Հաթթ-ը Հումայունը զերոյի էր հավասարեցվում այն պարզ պատճառով, որ նրա իրագործումը թողնվում էր սուլթանի ու նրա կառավարության բարեհաճությանը: Այլ կերպ ասած, բացակայում էր արևմտյան տերությունների կողմից այդ բարեփոխումների իրականացմանը վերաբերող արդյունավետ մեխանիզմի գոյությունը: Կասկածից վեր է նաև, որ 1856 թ. Հաթթ-ը Հումայունի հրապարակման նպատակներից մեկը ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների «մարումն» էր նոր, ոչ բռնի միջոցներով: Հաթթ-ը Հումայունը սվինների վրա ընդունեցին ինչպես թուրք կրոնական արմատականները, այնպես էլ աշխարհիկ ազգայնականները: Նրանք մերժեցին ոչ մահմեդականների հավասարությունը մուսուլմանների հետ, ինչպես նաև եվրոպական պետությունների միջամտությունը հօգուտ քրիստոնյա ազգերի պաշտպանության: Թուրք ամբոխը բողոքում էր, որ «Մենք այսօր կորցրել ենք մեր սրբազան ազգային իրավունքը, որը մեր նախնիները ձեռք են բերել իրենց արյան գնով: Իսլամական ազգը, որը ղեկավարող, իշխող և հրամայող էր (milleti hâkime), զրկված է այդ իրավունքից: Այդ օրը (Հաթթ-ը Հումայունի հրապարակման օրը – Վ. Բ.) ողբի և սգի օր է իսլամական ժողովրդի համար»:

Իսկ Ռեշիդ փաշան կասկած էր հայտնում, թե կարող է արդյոք վեցհարյուրամյա կայսրությունը փոխի իր էությունը մի այնպիսի ձևով, որ որդեգրի իր բնույթին կատարելապես հակասող սկզբունքներ: Նա հավաստիացնում էր սուլթանին, որ չնայած հրապարակված մտադրություններին, հաթթ-ը հումայունի տեքստը հիմնված է «բառերի խճողամտության» վրա, որպեսզի մանվածապատ դարձվածքներով խաբեն բոլոր նրանց, ովքեր պնդում էին նրա հրապարակման վրա:

Հավաստելով այն իրողությունը, որ սուլթանական հրամանագրերով հնարավոր չէ փոխել Օսմանյան կայսրությունում դարերի ընթացքում կարծրացած իրողությունները, մեծ վեզիր Ալի-փաշան ասել է. «Այդ որ երկրում է գործնականում հնարավոր եղել օրենքի պարզ փոփոխությամբ կամ կառավարության կարգադրությամբ մեկ օրվա ընթացքում ջնջել այն սովորույթների ու ավանդույթների ազդեցությունը, որոնք արմատավորվել են դարերի ընթացքում»:

Այսպիսով, թեև եվրոպական տերությունների միջամտության շնորհիվ հաջողվեց հարկադրել Օսմանյան կառավարությանը ընդունել օրենքներ կայսրության մեջ իրականացվելիք բարեփոխումների վերաբերյալ, սակայն դրանք եղան վերին աստիճանի անարդյունավետ՝ գործնականում կյանքի կոչվելու առումով:

1856 թ. փետրվարի 25-ին Փարիզում իր աշխատանքը սկսեց մեծ տերությունների խաղաղության վեհաժողովը, որին մասնակցում էին Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, Պրուսիան, ինչպես նաև Թուրքիան և Սարդինիան: Մարտի 30-ին ստորագրվեց Փարիզի խաղաղության պայմանագիրը: Ռուսաստանը, ըստ այդ պայմանագրի, կորցնում էր Հարավային Բեսարաբիան և դրա հետ միասին վերահսկողությունը Դանուբի գետաբերանի նկատմամբ: Ուժգին կերպով կրճատվում էր ռուսական ռազմա-ծովային նավատորմը Սև ծովում, որը հավասարազոր էր նրան, որ ընդհանրապես Ռուսաստանը այդ ջրային ավազանում զրկվում էր նավատորմ ունենալու հնարավորությունից: Այլ կերպ ասած, ռուսական սևծովյան ռազմական նավատորմը դրվում էր փականքի տակ: Ավելին, նեղուցների վերաբերյալ կնքված հատուկ կոնվեցիան Ռուսաստանին զրկում էր երկրի պաշտպանության նպատակով Սև ծովում օգտագործել Բալթիական ռազմական նավատորմը: Ռուսաստանին արգելվում էր նաև Սև ծովի ափերին ունենալու ռազմա-ծովային զինանոցներ ու նավաշինարաններ: Ձևականորեն այդ սահմանափակումը վերաբերում էր նաև Օսմանյան կայսրությանը, բայց իրականում դա քիչ էր չոչափում նրա շահերը, քանի որ թուրքական ռազմա-ծովային նավատորմի հենա-

կետերը գտնվում էին սևծովյան ջրերից դուրս, գլխավորապես Մարմարա և Էգեյան ծովերում:

Պայմանագիրը սահմանում էր Դանուբի վրա ազատ նավարկության իրավունք: Սև ծովի ջրերն ու նավահանգիստները բաց էին հայտարարվում բոլոր երկրների առևտրական նավերի համար, սակայն նրանք փակվում էին ռազմական նավերի առջև: 1856 թ. ապրիլի 15-ին Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան ստորագրեցին մի համաձայնագիր, ըստ որի նշված տերությունները պարտավորվում էին հարգել ու ապահովել Օսմանյան կայսրության անկախությունն ու տարածքային ամբողջականությունը և նրա ցանկացած խախտում դիտել որպես «կազուս բելլի» («պատերազմի պատճառ»):

Պայմանագիրը սահմանում էր, որ տերությունները իրավունք չունեն միջամտելու սուլթանի և նրա հպատակների փոխհարաբերություններին: Այդ կետը ևս ուղղված էր Ռուսաստանի դեմ, որը հաճախ հանդես էր գալիս սուլթանի ուղղափառ հպատակների շահերի պաշտպանությամբ: Բնականաբար այսուհետև ռուսները զրկվում էին Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ հովանավորություն սահմանելու իրենց պահանջից, որն ուժեղ կովան էր Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականության մեջ: Պայմանագրով այսուհետև Թուրքիայի քրիստոնյա հպատակների հովանավորության հարցը հանձնվում էր բոլոր եվրոպական պետություններին: Եվրոպական հինգ տերությունները պարտավորվում էին իրենց հավաքական հովանավորության տակ վերցնել Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդներին, Ռուսաստանին զրկելով այդ մենաշնորհից: Տերությունները իրենց վրա պարտավորություն էին վերցնում պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը: Դա նշանակում էր, որ տերությունները քրիստոնյաների պաշտպանության պատրվակի տակ հնարավորություն էին ստանում ցանկացած պահի միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Փարիզի պայմանագիրը պահպանում էր սուլթանի գերիշխանությունը Սերբիայի, Մոլդավիայի և Վալախիայի նկատմամբ: Թուրքիան Սևաստոպոլի փոխանակման դիմաց ստանում էր Կարսը:

Ուշագրավ է նշել, որ 1856 թ. Հաթթ-ը հումայունը ֆիքսված էր Փարիզի խաղաղության պայմանագրի 9-րդ կետում և դրանով իսկ այն ձեռք էր բերում Թուրքիայի միջազգային պարտավորության բնույթ: Վերջապես Փարիզի պայմանագրով Թուրքիան ընդգրկվում էր «եվրոպական կոնցերտի» մեջ:

1853–1856 թթ. Ղրիմի կամ Արևելյան պատերազմի ընդհանուր արդյունքները չափազանց ծանր էին թե՛ Ռուսաստանի և թե՛ Օսմանյան կայսրության համար: Ռուսաստանը պարտություն կրեց այդ պատերազմում: Նիկոլայ I-ը չկարողացավ հաշվարկ կատարել, որ արևմտյան տերությունները Ռուսաստանի համեմատ այդ պատերազմում ավելի ուժեղ են լինելու: Նա չէր գիտակցում, թե որքան է տեխնիկա-տնտեսական տեսակետից իր երկիրը հետ մնացել Արևմտյան Եվրոպայի պետություններից:

Պատերազմի ընդհանուր արդյունքները չափազանց անմխիթարական էին նաև Օսմանյան կայսրության համար, թեև նա հանդես էր գալիս որպես հաղթանակած պետություն: Նույնիսկ սուլթան Աբդուլ Մեջիդին չնորհվեց «ղազիի» («անհավատներին հաղթողի») պատվավոր տիտղոս: Այդ պատերազմում գործնականորեն Օսմանյան կայսրությունը կորցրեց իր ամբողջ բանակը, նավատորմի զգալի մասը, երկրին հասցվեց տնտեսական վիթխարի վնաս՝ ընկավ գյուղատնտեսական արտադրությունը, կրճատվեց հարկերի մուտքը պետական գանձարան, խիստ կազմալուծվեցին երկրի ֆինանսները: Պատերազմից հետո կայսրության բնակչության կենսամակարդակը շարունակում էր հարաճուն կերպով անկում ապրել: Կառավարությունն անընդունակ էր զարգացնելու պետության ներքին արտադրողական ռեսուրսները: Աղքատացող բնակչությունը ավելի ու ավելի թշնամանքով էր տրամադրվում ինչպես բարեփոխիչների, այնպես էլ օտարերկրացիների նկատմամբ: Թուրքիան դանդաղ, սակայն հաստատուն կերպով հայտնվեց անվճարունակության վիճակում: 1854 թ. Բ. Դուռը առաջին փոխառությունը ստացավ Անգլիայից ու Ֆրանսիայից: Մշտապես պահպանվում էր առևտրական հաշվեկշռի խզումը՝ ներմուծումը գերազանցում էր արտահանմանը: Կայսերական գանձարանը գործնականում դատարկ էր, պետությունը ի վիճակի չէր ժամանակին զինծառայողներին վճարել աշխատավարձ: Թուրքական կառավարող շրջանների կողմից բորբոքվող մուսուլմանական մոլեռանդության բռնկումներն անգամ չէին կարող լրջորեն թուլացնել ու խեղդել բնակչության թուրքական մասի դժգոհությունը: Ինչ վերաբերում է կայսրության ոչ թուրք բնակչությանը, ապա Ղրիմի պատերազմից հետո էլ ավելի ուժեղացան նրա հակապետական, ազգային-ազատագրական ոգորումները: Դրան երկրի հետադիմական շրջանները պատասխանում էին հակաքրիստոնեական քարոզչության ուժեղացմամբ: Այդ առումով խիստ բնորոշ է հետևյալ դեպքը: 1859 թ. Ստամբուլում բացահայտվեց մի դավադրություն, որը հայտնի է

«Քուլելիի միջադեպ» անունով (Քուլելին այն զորանոցներն էին, որտեղ պահվեցին ու հարցաքննվեցին դավադիրները)։ Դավադրության մասնակիցների թվում էին մուսուլմանական հոգևորականության ներկայացուցիչներ, մեդրեսեների սովորող-սոֆթաներ, մանր պաշտոնյաներ, զինվորներ ու սպաներ։ Դավադիրները մզկիթներում բնակչությանը գրգռում էին թանզիմաթի բարեփոխումների դեմ, կոչ էին անում չընդունել ու չենթարկվել թանզիմաթի հաթթերը։ Դավադրության ղեկավար շեյխ Ահմեդը գտնում էր, որ 1839 և 1856 թթ. թանզիմաթյան հաթթերով նախատեսված քրիստոնյաների ու մահմեդականների իրավահավասարության սկզբունքը հակասում է շարիաթական օրենքներին։ Ուստի հորդորում էր իր ունկնդիրներին՝ հետևել Մուհամմեդ մարգարեի պատվիրաններին և չարունակել իշխել քրիստոնյաների վրա, չճանաչել ռայաների իրավահավասարությունը ««ուղղադավան» մահմեդականների հետ»։

Գնալով չարժումն ընդունում էր նաև հակապետական բնույթ։ Դավադիրները իրենց առջև նպատակ դրեցին տապալել սուլթան Աբդուլ Մեջիդին։ 1859 թ. սեպտեմբերին ոստիկանությունը Ստամբուլում բացահայտեց սուլթանի դեմ ուղղված դավադրությունը։ Այն միաժամանակ ուներ հակաքրիստոնեական և հակաարևմտյան ուղղվածություն։

Քանի որ դավադրությունը լուրջ հենարան չուներ զանգվածների շրջանում, այն հաջողվեց արագ ճնշել։ Դավադիրներին դատելու նպատակով ստեղծվեց հատուկ դատական ատյան, որի անդամները վայելում էին սուլթանի անվերապահ վստահությունը։ Դավադրության չորս մասնակիցներ դատապարտվեցին մահվան, իսկ մնացածներին ենթարկեցին տարբեր ժամկետների ազատազրկման կամ աքսորավայրում տաժանակիր աշխատանքների։ Սուլթան Աբդուլ Մեջիդի հրամանով մահապատիժները փոխարինվեցին աքսորով։

Քուլելիի այդ միջադեպը ակներևորեն վկայում էր երկրի ներքին իրադրության ծայրահեղ լարվածության մասին։

1861 թ. 38 տարեկան հասակում սուլթան Աբդուլ Մեջիդը մահացավ։ Նա, ինչպես և իր հայրը, տառապում էր թոքախտով, որը և նրանց երկուսին էլ տարավ գերեզման։ Նրա կյանքի ճանապարհի վերջում սուլթանի իրականացրած քաղաքականությունից դժգոհ էին թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյա հպատակները։

Գահ բարձրացավ Աբդուլ Մեջիդի 31-ամյա եղբայր Աբդուլ Ազիզը (1861–1876)։ Նրա մանկությունը անցել էր պալատի ապականված մթնոլորտում, մոլլաների, հոջաների, ներքինիների և հարեմական

կանանց ազդեցության տակ: Ստացել էր ավելի շատ «արևելյան դաստիարակություն», որը, սակայն, ոչ արաբական էր և ոչ էլ պարսկական, այլ մոտ էր հին Թուրք-թաթարական դաստիարակության: Սիրում էր մասնակցել ըմբիշների խաղերին, սիրահար էր աքլորների, հնդկահավերի և սագերի կռվախաղերի: Նոր սուլթանը պատրաստված չէր դառնալու վիթխարի պետության սուլթան-խալիֆ: Թուրք պատմաբան Կոջաթյուրքը տալիս է Աբդուլ Ազիզի հետևյալ բնութագիրը. «Նրա մտավոր մակարդակը բարձր չէր, կուլտուրան՝ վերին աստիճանի ցածր, խելքը՝ սահմանափակ: Նրա մոտ քիչ էր հակումը դեպի արվեստը, գիտությունները և առհասարակ դեպի մտավոր գործունեությունը: Ընդհակառակը, շատ մեծ տեղ էին զբաղեցնում հաճույքները և անառակությունը արքունիքի կանանց հետ»: Ժամանակակիցների կողմից Աբդուլ Ազիզը բնութագրվում է նաև հետևյալ կերպ. քաղաքական սաղրանքների մեծ հակում ունեցող, գոռոզ, կամակոր, կասկածամիտ, ցածր կրթական մակարդակի և անկայուն ու բռնկվող խառնվածքի տեր: Սակայն միաժամանակ բնությունը նրան օժտել էր առողջությամբ ու ֆիզիկական ուժով: Նա հիանալի հրաձիգ էր, վարժ հեծյալ, որսորդ, ըմբիշ և իր ժամանակի մեծ մասը նվիրում էր նաև այդ տեսակ զբաղմունքներին:

Նոր սուլթանը իր կառավարումը սկսեց հախուռն գործողություններով: Ցրելով իր հանգուցյալ եղբոր անթիվ հարճերին, նա ստեղծեց իր սեփական հարեմը, որտեղ կանանց թիվը այն աստիճանի շատ էր, որ պահանջվեցին երեք հազար ներքինիներ: Իր կառավարման սկզբում նորաթուխ սուլթանը հայտարարեց իր բարենորոգչական մտադրությունների մասին, փորձեց հսկողություն սահմանել արքունիքի ծախսերի նկատմամբ և կարգավորել պետության ռեսուրսների բանական օգտագործման մակարդակը: Սակայն այդ բոլորը տևեց շատ կարճ: Շուտով նա դադարեցրեց իր այդ կարգի նախաձեռնությունները: Ավելին, նրա կատարած չոայլ ծախսերը ուղղակի դատարկեցին գանձարանը: Իր աղջիկներից մեկի ամուսնությունը գանձարանի վրա նստեց 40 միլիոն ֆրանկ: Իր օրոք պալատը օրական մորթում էր 500 ոչխար: Սուլթանը կատարեց մեծածախս շինություններ, մասնավորապես կառուցելով Զըրաղանի և Բեյլերբեի հիասքանչ պալատները: Նրա վարած ցոփ կյանքի, հարեմում կազմակերպված բագոսատոների վերաբերյալ լուրերը դուրս էին եկել երկրի սահմաններից: Եվրոպական բանկերից նրա վերցրած փոխառությունները հաջորդում էին մեկը մյուսին: Այդ փոխառություններին հաջորդում էին հարկերի և տուրքերի ավելացումը, որը բնակչության վիճակը

դարձնում էր աղետալի: Պետությունը հասել էր սնանկության եզրին:

Իր հայացքներով լինելով հետադիմական՝ զուրկ ազատական սկզբունքներից, Աբդուլ Ազիզը սկսեց կառավարել որպես բացարձակ բռնապետ: Նրա անսահմանափակ ավտոկրատիայի իշխանությունը ոչ մի օրենքով սահմանափակված չէր: Բնականաբար կայսրության ճնշված ժողովուրդների մոտ դա առաջ էր բերելու ադեկվատ ռեակցիա, որոնք ուժեղացրին իրենց ազատագրական պայքարը: 1861 թ. ապստամբություն բռնկեց Բոսնիայում և Հերցեգովինայում: 1866-1869 թթ. տեղի ունեցավ Կրետե կղզու հույների ապստամբությունը: Թուրքական տիրապետության դեմ մի քանի անգամ պայքարի ելավ Բուլղարիայի ժողովուրդը: Այդ տարիներին ուժեղացավ հայ ժողովրդի ազատագրական պայքարը. 1862 թ. ապստամբության դրոշը պարզեց ազատատենչ Զեյթունը: Արևմտահայության շրջանում նկատելի էր ազգային զգացումների վերելք: Ազատ ապրելու, իր սեփական ճակատագիրը տնօրինելու զգացումը աստիճանաբար համակում էր հայությանը: 1863 թ., երբ Ստամբուլում հայերը դրոշակներով զարդարված 20 շոգենավերով և նվագակցությամբ շնորհակալություն էին հայտնում եպարքոս Ալի փաշային իր Բեբեքի պալատի առաջ՝ հայոց ազգային սահմանադրության հաստատության համար, եպարքոսը իր մի բարեկամին դառնալով ասում է. «Ես պոռոտախոս հույներից չեմ վախենում, այլ հայերից, որոնք լռիկ-մնջիկ գործում են և Թուրք ժողովրդի հետ սերտ շփման մեջ են, վախենում եմ, որ սրանք մի օր տաճկաց միանալով հեղափոխություն անեն երկրի մեջ»: Հայտնի է, որ ճիշտ նույն կերպ էր մտածում նաև եպարքոս Ֆուադ փաշան: Բոլոր ապստամբությունները Բարձրագույն դուռը ճնշում էր մեծ դժվարությամբ, ցուցաբերելով ծայրահեղ դաժանություն: Ոչ Թուրք ժողովուրդների պայքարը իրենց ազատագրության համար լրջորեն խարխլում էր Օսմանյան կայսրության առանց այդ էլ թույլ պետական շենքը:

Մեծ պետությունները օգտագործում էին կայսրության քրիստոնյա ժողովուրդների ելույթները որպես լծակ սուլթանի նկատմամբ ճնշում գործադրելու համար, ձգտելով նրանից կորզել քաղաքական զիջումներ: Թուրքական կառավարող վերնախավում գտնվող շատ գործիչներ հստակորեն գիտակցում էին, թե ինչպիսի հետևանքներ կարող են ունենալ քրիստոնյա ժողովուրդների զինված ելույթները: Նրանք եկել էին այն համոզման, որ իրենց տիրապետությունը պահպանելու համար անհրաժեշտ է գնալ որոշ զիջումների: Նրանք կարևորագույն զիջում էին համարում մահմեդականների ու քրիստոնյաների իրավունքների հավասարության գեթ ձևական ընդունումը:

Թանզիմաթի բարեփոխումների իրականացման գործընթացը գործնականորեն ընդհատվել էր Ղրիմի պատերազմի տարիներին: Այն նոր զարկ էր ստացել սուլթանական հրամանագրի՝ 1856 թ. հաթթը հումայունի հռչակման շնորհիվ:

Այդ ժամանակաշրջանի բարեփոխումներն իրականացվում էին գլխավորապես նոր բյուրոկրատիայի երկու ականավոր ներկայացուցիչների՝ Մեհմեդ Էմին Ալիփաշայի և Մեհմեդ Ֆուադ փաշայի ղեկավարությամբ: Նրանք ժամանակին եղել էին Ռեշիդ փաշայի գործակիցները, իսկ նրա մահվանից հետո քանիցս զբաղեցրել էին մեծ վեզիրի ու արտաքին գործերի մինիստրի պաշտոնները: Ալի փաշան և Ֆուադ փաշան վարչակազմի, արդարադատության և լուսավորության չափավոր բարեփոխումների կողմնակիցներ էին: Բարենորոգումները նրանք դիտում էին որպես Օսմանյան կայսրությունը և այդ պետության մեջ թուրքերի տիրապետող դիրքերը պահպանելու և ամրապնդելու, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժումները թուլացնելու և երկրի ներքին գործերին օտարերկրյա միջամտությանը վերջ դնելու միջոց:

Ալի և Ֆուադ փաշաները գտնում էին, որ կայսրության փրկության միակ ճանապարհը դա մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների միաձուլումն է, այլ ոչ թե նրանց զուգահեռ գոյակցությունը: Ֆուադ փաշան նախազգուշացնում էր սուլթանին. «Առանց միաձուլման իրականացման Օսմանյան պետության բուն գոյությունը ինձ թվում է անհնարին»:

Թեև այդ պետական գործիչները հստակ պատկերացում չունեին ապագա ինտեգրացված օսմանյան հասարակության վերաբերյալ, սակայն նրանք գիտակցում էին դրա կենսական անհրաժեշտությունը: Այսպես, օրինակ, Ֆուադը գրում էր, որ «այդ վիթխարի կայսրությունը չի կարող պատկանել, ոչ հույներին, ոչ սլավոններին կամ ոչ մեկ այլ կրոնի կամ ազգության: Արևելյան կայսրությունը կարող է գոյություն ունենալ միայն Արևելքի բոլոր մարդկանց միասնության դեպքում»:

Այդ ենթադրյալ և նոր ստեղծվելիք ինտեգրված հասարակության մեջ Ալի և Ֆուադ փաշաները առանձնահատուկ տեղ էին հատկացնում թուրք ժողովրդին, գտնելով, որ միայն նա կարող է հանդիսանալ «կապող օղակ» և նա է ի վիճակի կառավարելու մյուս ժողովուրդներին և այդ հասարակության մեջ խաղալու տիրապետող դեր: Նրանց կարծիքով միայն այդ ճանապարհով կարելի էր կայսրությունը փրկել հավերժական քաոսից ու քաղաքացիական պատերազմի վտանգից: Այդ տեսակետի հեռահար նպատակը, անշուշտ, Օսմանյան

կայսրության մեջ Թուրքերի տիրապետող դիրքերի ամրապնդումն էր և կայսրության Թուրքականացումը:

Ալին և Ֆուադը անվիճելի էին համարում նաև խալամի՝ որպես կայսրության տիրապետող կրոնի սկզբունքը: Խոսելով մահմեդականների ու քրիստոնյաների օրենքի առջև հավասարության մասին՝ նրանք միաժամանակ այն տեսակետին էին, որ չի կարելի քրիստոնյաներին Թույլատրել զբաղեցնելու բարձր պետական պաշտոններ: Այդ գաղափարի հիմնավորման համար Ֆուադ փաշան բերում էր հետևյալ փաստարկը. «Մենք չենք կարող Թույլ տալ, որ Բ. Դռան մեջ քրիստոնյաները լայն մասշտաբներով զբաղեցնեն բարձր ծառայողական պաշտոններ, քանի որ այդ դեպքում քրիստոնյա տարրը չի հապաղի ներծծել ու կլանել Թուրքական տարրին, որն իր Թվաքանակով նշանակալիորեն գիջում է նրան»:

Միանգամայն ակնհայտ է, որ նման հարցադրումներով առաջնորդվելու դեպքում մահմեդականների և քրիստոնյաների «հավասարության» վերաբերյալ խոսակցությունները դառնում էին պատրանք: Ալի և Ֆուադ փաշաների վերոհիշյալ սկզբունքները կյանքի կոչելու նպատակով 1869 Թ. ընդունվեց օսմանյան հպատակության մասին օրենքը, որտեղ ասվում էր, որ կայսրության բոլոր բնակիչները, անկախ իրենց ազգային պատկանելությունից ու դավանանքից, հանդիսանում են օսմանյան պետության հպատակներ:

Բոլոր դեպքերում նշված ժամանակաշրջանում իրականացված Թանզիմաթական բարեփոխումները ունեցան որոշ դրական նշանակություն: 1858 Թ. ընդունված «Հողի մասին օրենքը» օրինակ, նպաստեց հողատիրության նախկինում վերացված Թիմարային համակարգի վերջնական ոչնչացմանը:

1867 Թ. օտարահապատակներին իրավունք վերապահվեց Օսմանյան կայսրության տարածքում ունենալու անշարժ գույք: Այդ որոշումը էականորեն ընդլայնում էր օտարերկրյա կապիտալի հնարավորությունները երկրի տնտեսության մեջ:

50-ական Թվականների կեսերին - 70-ական Թվականների սկզբին իրականացվեցին բարեփոխումներ հարկահանության կարգավորման բնագավառում. 1858 Թ. օգոստոսի 3-ին գործողության մեջ մտավ նոր քրեական օրենսգիրքը, որի հիմքում ընկած էին ֆրանսիական քրեական իրավունքի սկզբունքները: Եվ Թեպետ նոր օրենսգիրքը պահպանում էր մուսուլմանական իրավունքի՝ շարիաթի, մի շարք դրույթները, օրենսդրական ակտերի այդ հավաքածուն օբյեկտիվորեն ավելի բարենպաստ պայմաններ էր ապահովում կայսրության

հպատակների անձի ու գույքի անվտանգությունն ապահովելու համար:

1861 թ. օգոստոսի 3-ին սկսեց գործել Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին առևտրական դատավարական օրենսգիրքը: Շարունակում էր գործել ու լրացվել 1850 թ. առևտրական օրենսգիրքը, որը դարձյալ ստեղծվել էր ֆրանսիական օրենսդրության հիմքի վրա: 1860 թ. Ստամբուլում և նահանգական մի քանի կենտրոններում հայտարարվեց հատուկ դատարաններ ստեղծելու մասին, որոնք գործելու էին մուսուլմանական հոգևորականության իրավասությունից դուրս: Միաժամանակ դատական ֆունկցիաներից զրկվեցին համքարությունները՝ էսնաֆները:

Անչուշտ պայքարը բարեփոխումների կողմնակիցների ու պահպանողականների միջև դրսևորվում էր բոլոր բնագավառներում, սակայն առանձնակի համառությամբ հետադիմությունը պաշտպանում էր իր դիրքերը քաղաքացիական իրավունքի բնագավառում: Պահպանողականներին հաջողվեց թելադրել իրենց պայմանները և նոր քաղաքացիական օրենսգիրքը, որը մաս առ մաս սկսեց հրատարակվել 1869 թվականից սկսած, ամբողջովին հիմնված էր մահմեդական իրավունքի նորմերի վրա և համարյա զերծ էր արևմտյան քաղաքացիական իրավունքի ազդեցության հետքերից:

Բ. Դուռը մի շարք բարեփոխումներ իրականացրեց նաև դատավարության և դատարանների կազմակերպման ոլորտում: 1864 թ. նոյեմբերին ընդունված «Վիլայեթների մասին օրենքով» դատական իշխանությունն անջատվեց վարչական իշխանությունից, նաև նախատեսվում էր ավելացնել աշխարհիկ դատարանների թիվը:

60-ական թվականներին իրականացվեցին մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին հիմնականում իշխանության կենտրոնացմանը: 1864 թ. ընդունված «Վիլայեթների մասին օրենքը» ուղղված էր իշխանության կենտրոնացման սկզբունքի խիստ ապահովման, վիլայեթային իշխանությունների գործունեության նկատմամբ Բ. Դռան լրիվ վերահսկողության ապահովման նպատակին: Նահանգների նահանգապետերին կից ստեղծվեցին խորհրդակցական մարմիններ՝ մեջլիսներ, որոնց կազմի մեջ մտան ոչ միայն պաշտոնատար անձինք, այլև մահմեդական և ոչ մահմեդական բնակչության ընտրովի ներկայացուցիչներ: 60-70-ական թվականներին խոշոր քաղաքներում հայտնվեցին քաղաքապետարաններ:

Սուլթանի հրամանագրով կառավարությունը գործողության մեջ դրեց հատուկ կանոնակարգեր, որոնք որոշում էին ոչ մուսուլմանական կրոնական համայնքների՝ ուղղափառ հույների, հայ լուսավոր-

չականների (հայ Առաքելական եկեղեցու հետևորդների) և հուդայականների ստատուսը: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ հաթթ-ը հումայունը միլլեթների հոգևոր առաջնորդներին զրկում էր քաղաքացիական գործերով զբաղվելու իրավունքից: Այդ իրավունքը տրամադրվում էր հատուկ խորհուրդների (մեջլիսների) տնօրինությանը, որոնք բաղկացած էին հոգևոր ու աշխարհիկ անձանցից: Այսպիսով, հայ և հույն պատրիարքները զրկվում էին Բ. Դռան առջև իրենց համայնքի շահերը ամբողջ ծավալով ներկայացնելու իրավունքից: Այսուհետև նշված համայնքների աշխարհիկ գործերով պետք է զբաղվեին համայնքների ղեկավարներին կից գործող քաղաքացիական խորհուրդները: Սակայն այդ խորհուրդները գործնականում գտնվում էին սուլթանական վարչակազմի վերահսկողության ներքո, որը ձգտում էր այդ մարմինները վերածել գործիքի ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի բոլոր միտումները ճնշելու համար: Ոչ մուսուլմանական կրոնական համայնքների վերաբերյալ նոր կանոնակարգը ուժգին հարված էր հասցնում դարերի ընթացքում գոյություն ունեցած միլլեթների համակարգին, որն ապահովում էր ոչ մահմեդական ժողովուրդների որոշակի ինքնավարություն համայնքի ներքին կյանքում, և այդ համակարգը փոխարինվում էր զուտ կրոնական կազմակերպությունների մի համակարգով, որը զուրկ էր քաղաքացիական ոլորտում որևէ արտոնություններից: Ի դեպ, հաթթը հումայունը նախատեսել էր միլլեթների հոգևոր ղեկավարներին այսուհետև վճարել պետական աշխատավարձ, որի հետևանքով նրանք ըստ էության վեր էին ածվել պետական պաշտոնյաների:

Նշված ժամանակաշրջանի թանզիմաթի բարեփոխումները չոչափեցին նաև իշխանության կենտրոնական մարմինների կառուցվածքի հարցերը: 1868 թ. մայիսին ստեղծվեց Պետական խորհուրդ, որի վրա դրված էր պետական օրենքների ու կառավարական կարևորագույն որոշումների պատրաստումը: Խորհրդի կազմի մեջ ընդգրկվեցին նաև ոչ մահմեդական բնակչության ներկայացուցիչները: 60-ական թվականներին ծնունդ առան մի շարք մինիստրություններ՝ արդարադատության, լուսավորության, հասարակական աշխատանքների, վաքուֆների գծով և այլն:

Ղրիմի պատերազմից հետո սկսվեցին նաև բարեփոխումներ բանակում: Դրանք ավարտվեցին 1869 թ. ընդունված օրենքով բանակը ֆրանսիական ձևով վերակազմակերպելու վերաբերյալ: Աշխատանքներ կատարվեցին նաև նավատորմը վերակառուցելու ուղղությամբ:

Բարեփոխումները չոչափեցին նաև լուսավորության ու մշակույ-

թի ոլորտը: 1860 թ. հրապարակվեց հրամանագիր, որը թույլ էր տալիս քրիստոնյաներին հաճախելու մահմեդական դպրոցներ: Սակայն չհաջողվեց այդ օրենքը ամբողջությամբ կենսագործել կյանքում: Նրա դեմ դուրս եկան ինչպես մահմեդականները, որոնք երեխաների խառը ուսուցումը դիտում էին որպես իսլամի ոգուն հակասող, այնպես էլ քրիստոնյաները, որոնք կասկածանքով էին վերաբերվում կառավարության իրական նպատակների նկատմամբ:

1869 թ. սեպտեմբերին ընդունված «Ընդհանուր կրթության մասին օրգանական օրենքով» բարեփոխման էին ենթարկվում աշխարհիկ դպրոցի բոլոր աստիճանները: Այդ օրենքի հրապարակումից հետո ավելացավ միջնակարգ աշխարհիկ դպրոցների՝ ռյուշթիեների թիվը, բացվեցին մի շարք քաղաքացիական միջնակարգ ուսումնական հաստատություններ, այդ թվում նաև երկրում առաջին լիցեյը, որը սկսեց գործել 1868 թ. աշնանից:

Աշխարհիկ կրթությունը, սակայն, զարգանում էր շատ դադաղ: Հակառակ դրան, այն ոչ մահմեդական համայնքներում (հույների, հայերի, բուլղարացիների, հրեաների և այլն) նշանակալի զարգացում ապրեց: Այդ խզումը չափազանց անհանգստացնում էր թուրքական տիրապետող շրջաններին: Սուլթան Աբդուլ Ազիզին ուղղված իր 1867 թ. նոյեմբերի 30-ի զեկուցագրում, մեծ վեզիր Ալի փաշան նշում էր, որ թուրքերը չեն ձգտում ձեռք բերելու գիտելիքներ, որը նրանց այդ առումով հավասարեցներ ոչ մահմեդական ժողովուրդներին: Ուստի նա համառորեն պնդում էր, որ այդ գործի համար չպետք է խնայել ոչ ջանքեր և ոչ էլ միջոցներ: Եթե դա չարվի, նախազգուշացնում էր մեծ վեզիրը, ապա «լուսավորյալ մարդիկ մեկ է մեզ կհաղթեն, եթե նույնիսկ մեզ նրանցից պատնեշենք չինական պարսպով, և մեզանից կխլեն այն ամենը, ինչ մենք ունենք»:

Հակառակ նման նախազգուշացումների, կրթության համար առանձնացվող պետական միջոցները չնչին էին: Լուսավորության բնագավառի բարեփոխումները գլխավորապես նպատակաղրված էին ոչ թուրք ժողովուրդների նպատակասլաց դաստիարակությանը «օսմանյան հայրենիքին» հավատարմության ու նվիրվածության ոգով:

Որոշակի քայլեր կատարվեցին նաև գիտության զարգացման բնագավառում: Այսպես, 1861 թ. Մյունիֆ էֆենդիի նախաձեռնությամբ ֆրանսիական գիտությունների ակադեմիայի օրինակով ստեղծվեց «Էնջյումեն-ի դանիշ» («Գիտական միություն») անունով օսմանյան գիտական ընկերությունը, որը սկսեց հրատարակել նաև գիտական ամսագիր: Ակադեմիայի կազմում ընդգրկվեցին նաև մի

չարք հայազգի և հույն գիտնականներ: 60-ական թթ. ստեղծվեց նաև «Օսմանյան գիտական ընկերությունը»: Ծնունդ առան գիտական այլ ընկերություններ, այդ թվում նաև «Գեղեցիկ գրականության սիրողների ընկերությունը» (1861), «Բժշկական ընկերությունը» (1865) և այլն, որոնք նույնպես ունեին իրենց հանդեսները:

60-70-ական թվականներին բուռն թափով սկսեց զարգանալ նաև գրատպությունը: Հայտնվեցին թուրքական մասնավոր մամուլի առաջին օրգանները՝ 1860թվականից սկսեց լույս տեսնել «Թերջյուման-ի ահվալ» («Դեպքերի թարգման»), 1862 թվականից «Թասվիր-ի էֆքյար» («Գաղափարների պատկեր»), 1867 թվականից՝ «Մուհբիր» («Թղթակից») թերթերը:

Գեղարվեստական գրականության մեջ հայտնվեցին նոր ժանրեր՝ վեպեր, պատմվածքներ, դրամաներ: 60-70-ական թվականներին սկզբնավորվեց Թուրքական պրոֆեսիոնալ թատրոնը: 1868 թ. Ստամբուլում առաջին պրոֆեսիոնալ թատերական խումբը ստեղծել է Հակոբ Վարդովյանը: Այն իր ներկայացումները կազմակերպում էր Գեղիկփաչա թաղամասում, ուստի թատրոնը ևս կոչվեց այդ անվամբ:

Թանզիմաթի երկրորդ շրջանի բարեփոխումների մեջ կարևոր տեղ էր գրավում սուլթանի կողմից հրապարակված «իրադեն», որը զինվորական ծառայության պարտականությունը տարածում էր կայսրության ողջ բնակչության վրա: Նրանում ասվում էր, որ «մինչև այժմ միայն մահմեդական հպատակներն էին կատարում այդ պարտականությունը, մինչդեռ հայրենիքի պաշտպանությունը բոլորի պարտականությունն է»: Իրադեում միաժամանակ վերապահում էր արվում, որ մահմեդականների տիրապետող դիրքը այդ «խառը» բանակում պետք է պահպանվի: Դա հիմնավորվում էր նրանով, որ իբր նրանք «վարժվել են» զենք կրելու, ինչպես նաև նրանով, որ իբր նրանք կազմում են կայսրության բնակչության մեծամասնությունը: Այս օրենքը հավասարապես հանդիպեց թե՛ մահմեդականների, և թե՛ քրիստոնյաների դիմադրությանը: Մահմեդականների մեծ մասը չէր կարող համակերպվել այն մտքի հետ, որ «անհավատ-գյավուրները» կարող են զենք կրել: Իսկ քրիստոնյա բնակչությունը հնարավոր չէր համարում արյուն թափել մի պետության համար, որի նկատմամբ ինքը լցված էր ատելությամբ: Սակայն այդ օրենքը մնաց թղթի վրա և խառը զինվորական ստորաբաժանումներ այդպես էլ չստեղծվեցին: Թանզիմաթի շրջանում օրենսդրորեն թույլատրվեց քրիստոնյաների ծառայությունը ժանդարմական զորամասերում:

Ընդհանուր առմամբ 50-ական թվականների վերջի և 70-ական թվականների սկզբի թանզիմաթական բարեփոխումները որոշ դրական տեղաշարժեր մտցրին երկրի քաղաքական-վարչական, տնտեսական ու մշակութային կյանքում: Բայց այնուամենայնիվ ձեռք բերված արդյունքները ոչ մի կերպ չէին համապատասխանում XIX դարի կեսերի պայմաններում վիթխարի ու բազմազգ պետության զարգացման պահանջմունքներին: Այդ անհամապատասխանությունը հասցրեց այն բանին, որ աստիճանաբար սկսեց աճել դժգոհությունը սոցիալական տարբեր խավերում: Այդ դժգոհության արտահայտիչը հանդիսացավ երիտասարդ թուրք մտավորականությունը: Հենց այդ միջավայրում էր, որ առաջին անգամ երևան եկան ու ձևակերպվեցին Օսմանյան կայսրությունը սահմանադրական միապետության վերափոխելու գաղափարները՝ երկրի սոցիալ-քաղաքական և մշակութային առաջընթացը ապահովելու նպատակով:

Չի կարելի համաձայնվել թուրքական պատմագրության կողմից լայնորեն առաջ քաշվող այն տեսակետի հետ, որ թանզիմաթի շրջանում թուրքական իշխանությունները իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդների նկատմամբ վարում էին «ազատականացման» քաղաքականություն: Ընդհակառակը, գնալով ուժեղանում էին հետադիմական միտումները: Նորագույն ուսումնասիրությունները (Վ. Դադրյան, Ռ. Սաֆրաստյան և այլն) համոզիչ փաստերով հաստատում են այն իրողությունը, որ թանզիմաթը հող նախապատրաստեց Օսմանյան կայսրությունում նախացեղասպանական իրադրության առաջացման համար, որի զոհը դարձավ հայ ժողովրդի արևմտյան հատվածը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

«ՆՈՐ ՕՍՄԱՆՆԵՐԸ» ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾՆՈՒՆԴԸ։ 1876 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ։

Սահմանադրական շարժումը Օսմանյան կայսրությունում սկիզբ է առել XIX դարի 60-ական թվականների կեսերին։ Այդ շարժման մեկնակետը դարձավ 1865 թ. հունիսը, երբ Ստամբուլում ստեղծվեց մի գաղտնի ընկերություն, որը Թուրքիայի պատմության մեջ հայտնի է որպես «Նոր օսմանների ընկերություն» (Genc Osmanlilar Cemiyet)։ Հունիսի 6-ի երեկոյան խոշոր պաշտոնյա Սաղրը Ահմեդ բեյի Ենիքյոյում (Ստամբուլի թաղամաս) գտնվող ամառանոցում նրա որդի Մեհմեդ-բեյը հանդիպեց իր գաղափարակից ընկերների հետ։ Թվով հինգ երիտասարդներ քննարկեցին այն անձանց ցուցակը, որոնց մտադիր էին ընդգրկել իրենց կողմից մտահղացած գաղտնի ընկերության մեջ։ Հաջորդ օրը, հունիսի 7-ին, խնջույքի անվան տակ Ստամբուլից հյուսիս, Բոսֆորի ափին գտնվող «Բելգրադյան անտառում» տեղի ունեցավ գաղտնի ժողով, որտեղ որոշում կայացվեց ստեղծելու մի ընկերություն կամ կազմակերպություն, որը կոչվելու էր «Հայրենասիրական միություն»։ Ըստ էության այն դարձավ Թուրքիայի պատմության մեջ առաջին քաղաքական կուսակցությունը։ Որոշ ժամանակ անց կազմակերպությունը վերանվանվեց և կոչվեց «Նոր օսմանների ընկերություն»։ Նախապես այդ գաղտնի կազմակերպությունն իր շարքերում ուներ ընդամենը 245 անդամ։ Այն ստեղծված էր իտալական կարբոնարիաների և լեհական կոնֆեդերատների օրինակով, որի անդամները գործում էին իրար հետ չկապված ընդհատակյա խմբերով։ Գաղտնապահության նպատակով նրանք բաժանված էին ութական հոգուց բաղկացած խմբերի։ Որպես իրենց նշանաբան և պայքարի վերջնական նպատակ ընտրել էին «Ազատությունը» («Հյուրրիեթ»), մինչդեռ թանզիմաթի նշանաբանը «Արդարությունն» էր («Ադալեթ»)։

1865 թ. «Նոր օսմանները» «մահմեդական հայրենասերներ» ստորագրությամբ դիմում հղեցին եվրոպական բոլոր երկրների կառավարություններին: Այդ դիմումը «Մահմեդական երիտասարդներ» կազմակերպության գործունեության քաղաքական ծրագիրն էր, որի մշակմանը մասնակցել էր նաև Թուրքիայի հասարակական չինարարությունների նախարար Գրիգոր Օտյանը: Դիմումում առաջ էր քաշվում սահմանադրություն ընդունելու պահանջը: Նաև պահանջվում էր սահմանափակել սուլթանի իրավունքները խորհրդակցական ձայնի իրավունքով օժտված Ազգային ժողովով, որի անդամները պետք է լինեին «երկրի բոլոր կրոնների ու ցեղերի ներկայացուցիչները»:

Այս նոր բարեփոխիչները իրենց քարոզչությունը ծավալելու համար չափազանց կարևոր նշանակություն էին տալիս մամուլին, որը Ղրիմի պատերազմից հետո երկրում գտել էր լայն տարածում: Կազմակերպության ղեկավարներն ու գաղափարախոսները երիտասարդ Թուրք մտավորականության ներկայացուցիչներն էին: Դրանց թվում էին ականավոր գրող ու հրապարակախոս Մեհմեդ Նամըք Քեմալը, հայտնի գրականագետներ ու հրապարակախոսներ Աբդուլ Համիդ Զիյա բեյը և Ալի Սուավին, որոնք գտնվում էին իր մահկանացուն կնքած Ռեշիդ փաշայի գաղափարական ազդեցության ներքո:

Զիյա բեյը ծառայել էր սուլթանի անձնական ապարատում, իսկ ապա 1867 թ. դիմել էր կամավոր աքսորի, ապրելով Փարիզում, Լոնդոնում ու Ժնևում, որտեղ դարձել էր կառավարման սահմանադրական ձևի համոզված կողմնակից: Նամըք Քեմալը ավելի երիտասարդ էր և ավելի կայուն իր ազատական հայացքների մեջ: Ծագումով սերել էր թուրքական բարձր պաշտոնեության միջավայրից: Եղել էր քաղաքական լրագրող և էսսեիստ, հանդես գալով երկու հարազատ գաղափարների՝ ազատության ու հայրենիքի առաքյալի դերում: Լինելով «ճշմարիտ ու համոզված» մուսուլման՝ Նամըք Քեմալն աշխատում էր իր դավանած քաղաքական սկզբունքները հարմարեցնել իսլամի դրույթների հետ, այդ կրոնի մեջ փնտրելով ինչ-ինչ գաղափարներ ազատական կառավարման սկզբունքի վերաբերյալ: Նամըք Քեմալն էր առաջին թուրքը, որը թուրքական ազգայնականություն (նացիոնալիզմ) քարոզեց գեղարվեստական երկերի միջոցով: Նա առաջիններից մեկն էր, որ օգտագործեց վաթան (հայրենիք), հյուրրիեթ (ազատություն), մեշրութիեթ (սահմանադրություն) տերմինները:

«Նոր օսմանների» ընկերության ակտիվ անդամների թվում կային նաև ոչ քիչ թվով ֆեոդալական բյուրոկրատիայի հարուստ ընտանիքներից սերած մարդիկ, որոնք ստացել էին աշխարհիկ կրթու-

թյուն, իսկ նրանցից ոմանք՝ կրթություն էին ստացել Եվրոպայում: Ընկերության հետ կապված էին բազմաթիվ խոշոր աստիճանավորներ ու գինվորականներ, այդ թվում նաև կարկառուն պետական գործիչներից մեկը՝ Ահմեդ Միդհատ-փաշան: Սահմանադրական շարժման գաղափարական նախադրյալների ձևավորման գործում կարևոր դեր են խաղացել թուրքական առաջին թերթերից մեկը՝ «Թասվիր-ի էֆքյարը» («Գաղափարների արտահայտիչ») և նրա հիմնադիր Իբրահիմ Շինասին: 1848 թ. ֆրանսիական հեղափոխության ժամանակ որպես ուսանող նա գտնվել էր Փարիզում, միաժամանակ հանդես գալով որպես բանաստեղծ ու դրամատուրգ: Այդ գործիչը իր խոշոր ավանդն է ներդրել թուրքական գրականության, հրապարակախոսության և հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում: Իր թերթի էջերում նա գրում էր, որ ժողովուրդը իրավասու է երկրի կյանքին վերաբերող հարցերի վերաբերյալ ունենալու իր կարծիքը և արտահայտելու այն, չեչտում էր պետական գործերում հասարակական կարծիքի կարևորության մասին, նշում էր Եվրոպայի ձեռքբերումների ներդրման կարևորությունը Օսմանյան կայսրության կյանքի բոլոր բնագավառներում: Շինասին գրում էր նաև աշխարհիկ օրենսդրության կարևորության և միապետի պատասխանատվության մասին իր կատարած գործերի համար:

«Նոր օսմանները» աշխատում էին կողմնակիցներ հավաքագրել բանակի ու նավատորմի սպաների կրթված մասի, աշխարհիկ նոր դպրոցի ուսուցիչների, պաշտոնյաների, գրողների, նկարիչների ու լրագրողների շրջանից:

Սկզբնական շրջանում «Նոր օսմանների ընկերությունը» որոշակի քաղաքական ծրագիր չուներ և նրա անդամներին միավորում էր երկրի արդիականացման ու տնտեսական առաջընթացն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ գտնելու ձգտումը: Նրանք առաջ քաշեցին դրույթ այն մասին, որ իբր Թանզիմաթի բարեփոխումների հետևանքով մահմեդականների իրավունքները տուժել են, իսկ քրիստոնյաները ստացել են չափից ավելի շատ առավելություններ: 1856 թ. հաթթը հումայունը նոր օսմաններն անվանում էին «Ֆերման քրիստոնյաների առավելությունների վերաբերյալ»: Նրանք համոզմունք էին հայտնում, որ Թանզիմաթի շրջանում Բ. Դռան քաղաքականությունն ուղղված էր «քրիստոնյաների պահանջները բավարարելուն», որի հետևանքով մահմեդականները իբր հայտնվել են «հարստահարված համայնքի» վիճակում: Ուստի «Նոր օսմանները» իրենց հայտարարեցին մուսուլմանների «ոտնահարված իրավունքների» պաշտ-

պաններ: Նրանք սուր դժգոհություն էին արտահայտում մեծ վեզիր Ալի փաշայի ղեկավարած Բ. Դռան քաղաքականությունից: Նրանց աչքերում Ալի փաշան և Ֆուադ փաշան «իսլամի դավաճաններ» էին, քանի որ 1856 թ. նրանց կողմից հրապարակված հաթթը հումայունը մեծ իրավունքներ էր պարգևում քրիստոնյաներին՝ մահմեդական բնակչության հաշվին:

Առհասարակ պետք է նշել, որ այդ տարիներին «Նոր օսմանների» վերաբերմունքը կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ աչքի էր ընկնում ծայրահեղ անհանդուրժողականությամբ: Նրանք, օրինակ, վնասակար նորամուծություն էին համարում հայառաքելական և հույն-ուղղափառ միլլեթների համար ընդունված սահմանադրությունները: «Նոր օսմանները» թշնամաբար էին տրամադրված նաև Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նկատմամբ:

Օրինակ, Նամըք Քեմալը և Իբրահիմ Շինասին ամեն կերպ փառաբանում էին «իսկական ու ճշմարիտ օսմանցիների» ռազմաշունչ ոգին և նրանց տարած «փառահեղ հաղթանակները» «գյավուրների» նկատմամբ: Դրսևորելով իր վերաբերմունքը կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, Ալի Սուավին գրում էր. «Մեր նախնիները արյուն թափելով, թիզ առ թիզ նվաճել են այս հողերը, իսկ մենք, իրենց անարժան սերունդները, քայլ առ քայլ ամբողջը վերադարձնում ենք հետ»:

Կարծես ձայնակցելով Ալի Սուավիին՝ Նամըք Քեմալը գրում էր. «Մեր մարգարեն ծառայում էր աշխարհին իր դաշույնով: Մենք նույնպես պետք է գնանք այդ ճանապարհով... Կաշխատենք ապացուցել, որ մենք պատկանում ենք օսմանյան ժողովրդին, որն ամբողջ աշխարհին ստիպում է դողալ իր առջև... Ցույց տանք գյավուրներին մեր ուժը, պատճառենք այդ հաճույքը մարգարեին»:

«Նոր օսմանները» այն համոզմանն էին, որ Թանզիմաթյան բարեփոխումների հետևանքով մահմեդականների իրավունքները սահմանափակվել էին, մինչդեռ քրիստոնյաները ստացել էին չափից ավելի մեծ առավելություններ: Նրանք մահմեդականների համար ստեղծված վիճակը գնահատում էին որպես «հալածված համայնքի» վիճակ:

1867 թ. «Նոր օսմանները» տպագրեցին և Ստամբուլում տարածեցին Ֆրանսիայում վտարանդության մեջ գտնվող եգիպտական իշխանազուն (Եգիպտոսի խեդիվ Իսմայիլ փաշայի եղբայր) Մուստաֆա Ֆազըլ-փաշայի բաց նամակը ուղղված սուլթան Աբդուլ Ազիզին: Այդ

նամակը առաջին անգամ հրապարակվել էր 1867 թ. սկզբին, Փարիզում, ֆրանսերեն լեզվով, որը թուրքերենի էր թարգմանվել Նամըք Քեմալի կողմից: Նամակը գրված էր սուլթանին հավատարիմ հպատակության ոգով: Հեղինակը սուլթանին դիմում էր «իմ տիրակալ» արտահայտությամբ: Նամակում, սակայն, իշխանազունը սուր քննադատության էր ենթարկում կայսրությունում տիրող վիճակը և եզրափակում էր նրանով, որ փրկության ճանապարհը սահմանադրության ընդունումն է: Մուստաֆա Ֆազըլը կոչ էր անում վճռականորեն պայքարել սուլթանական աստիճանավորների բռնությունների ու կամայականությունների դեմ, պայմաններ ստեղծել արհեստների, առևտրի և գյուղատնտեսության զարգացման համար, առողջացնել ֆինանսները, դադարեցնել օտարերկրյա միջամտությունը երկրի ներքին գործերին: Նամակում ասվում էր, որ սուլթանի քրիստոնյա հպատակների ապստամբությունները հրահրվում են պետության արտաքին թշնամիների կողմից: Դրան նշանակալից չափով առնչություն ունի նաև ներկա վարչակազմը: Որ կառավարության ոչ արդյունավետ կառավարման հետևանքով կայսրության բոլոր հպատակները, առանց բացառության, ենթարկվում են ճնշման ու հալածանքների: Եվրոպան կարծում է, որ ճնշվում ու հալածվում են լոկ քրիստոնյաները: Մինչդեռ մահմեդականները, որոնք երբեք չեն փնտրում օտարերկրյա տերությունների հովանավորությունը, ավելի մեծ չափով են ենթարկվում ճնշումների, քան ոչ մահմեդականները:

Ֆազըլ փաշայի նամակը դարձավ «Նոր օսմանների» համար մի յուրահատուկ ծրագրային փաստաթուղթ: Նրանում բոլոր հույսերը կապվում էին երևակայական ազատական միապետի հետ, որը չրջապատված է պետության չահերին նվիրված ազնիվ, անչահախնդիր ու նվիրյալ պաշտոնյաներով: Ֆազըլ փաշայի նամակում մանվածապատ ակնարկներ էին պարունակվում նաև սահմանադրական կառավարման վերաբերյալ: Մասնավորապես նա սուլթանի ուշադրությունը հրավիրում էր եվրոպական տերությունների կյանքի «ազատ կարգերի» վրա: Նամակում մեծ տեղ էր հատկացվում նաև մահմեդական պետության հետ քրիստոնյա հպատակների փոխհարաբերությունների խնդրին: Մասնավորապես հեղինակը զարգացնում էր հետևյալ տեսակետը: Այն «փառավոր ժամանակները», երբ «կայսրություն ստեղծողները», այսինքն՝ թուրքերի նախնիները, և նրանց ենթակա ժողովուրդները ապրում էին միմյանց հետ համերաշխության ու ներդաշնակության պայմաններում, անդառնալիորեն մնացել են հետևում: Ներկայումս քրիստոնյա ժողովուրդները դրսևորում են անհնազան-

դություն և ապստամբում են սուլթանի դեմ: Դրա պատճառը նախ եվրոպական պետությունների կողմից հրահրվող սադրանքներն են, սակայն չափազանց կարևոր է նաև այն, որ ներկա կառավարությունը վատ է կառավարում իր հպատակներին: Ե՛վ մահմեդականները և՛ քրիստոնյաները ենթարկվում են ճնշումների: Սակայն Ֆազըլ փաշայի կարծիքով մահմեդականների վիճակը առավել ծանր է, քանի որ նրանք չունեն այնպիսի արտոնություններ ու հովանավորներ, ինչպես քրիստոնյաները:

Մուսուլմանների և քրիստոնյաների միջև կորսված ներդաշնակությունը վերականգնելու և միաժամանակ պետության վերահաս կործանումը կանխելու համար Ֆազըլ փաշան առաջարկում էր «ազատ և արդար կառավարման» համակարգի արմատավորում, որը պետք է ուներ ներկայացուցչական բնույթ: Նրա կարծիքով, միայն այդ ճանապարհով կարելի էր վերջ տալ անլուր հարստահարությանը և բավարարություն տալ բոլոր հպատակների ձգտումներին, անկախ նրանց կրոնական պատկանելությունից: Ֆազըլ փաշան չեչտում էր, որ ոչ թե կրոնն է կարգավորում ժողովուրդների իրավունքները, այլ արդարությունը, որը բոլորի համար մեկն է:

Մուստաֆա Ֆազըլ փաշան ըստ էության առաջարկում էր ոչնչացնել այն բոլոր արտոնությունները, որոնք մահմեդականների համեմատ իբր ունեին քրիստոնյաները:

Սուլթանական կառավարության ռեակցիան Ֆազըլ փաշայի նամակի և նրա հետ առնչություն ունեցող մարդկանց նկատմամբ վերին աստիճանի սուր էր: 1867 թ. գարնանը «Նոր օսմանների» ընկերության մի խումբ անդամներ, այդ թվում նրա առավել նշանավոր գաղափարախոսները, վտարանդվեցին Եվրոպա: Վտարանդության վերաբերյալ որոշումն ընդունվեց այն բանից հետո, երբ մի չարք թերթերի նկատմամբ, որոնց հետ «Նոր օսմանները» կապված էին սերտ կապերով, սկսվեցին հետապնդումներ ու հալածանքներ: 1867 թ. մարտին Բ. Դուռը փակեց «Թասֆիր-ի էֆքյար» թերթը: Նույնպիսի ճակատագրի արժանացավ նաև «Մուխբիր» («Թղթակից») թերթը, որը 1867 թ. հունվարից հրատարակում էր հրապարակախոս Ալի Սուավին: Կառավարությունը սկսեց լրջորեն զբաղվել ազատական լրագրողների հարցերով: Որոշվեց որպես պետական ծառայողների Նամըք Քեմալին ուղարկել Էրզրում նահանգապետի օգնականի պաշտոնով, իսկ Զիյա բեյին պաշտոն տալ Կիպրոսում: Միանգամայն ակնհայտ է, որ կառավարությունը որոշել էր ազատական քարոզիչներից մաքրել մայրաքաղաքը: Սակայն փոխանակ մեկնելու իրենց պաշտոնատե-

դին, նախապես ստանալով իշխանազուն Ֆազըլ փաշայի հրավերը, նրանք Ստամբուլից ֆրանսիական «Բոսֆոր» շոգենավով փախուստի դիմեցին Փարիզ: Փախուստը կազմակերպվել էր «Նոր օսմաններին» մոտ կանգնած Ստամբուլում ֆրանսիական թերթի հրատարակիչ Ժան Պյետրիի կողմից, որը գործում էր Մուստաֆա Ֆազըլ փաշայի հետ սերտ համագործակցությամբ: Համարյա այդ նույն ժամանակ, Ֆազըլ փաշայի մարդկանց օգնությամբ Կաստամոնուից, որտեղ գտնվում էր աքսորականի վիճակում, Եվրոպա փախուստի դիմեց Ալի Սուավին:

Ֆազըլ փաշան վտարանդի գործիչներին Փարիզում տրամադրեց իր շքեղ առանձնատունը որպես «նոր օսմանների» կենտրոնատեղի: Նա վտարանդի հեղափոխականներին ծանոթացրեց ֆրանսիական քաղաքական ու պաշտոնական շրջանների հետ:

Ընկերության անդամների մեկ այլ խումբ 1867 թ. Ստամբուլում կազմակերպեց դավադրություն մեծ վեզիր Ալի-փաշայի կառավարության դեմ: Նախատեսված էր խռովություն բարձրացնել Աբդուլ Ազիզի կողմից կառավարության նստավայրը կատարվող ավանդական այցելության ժամանակ, վճռական գործողություններով ստիպել սուլթանին պաշտոնազուրկ անել Ալի-փաշային և նշանակել նոր մեծ վեզիրի: Սուլթանի մերժման դեպքում դավադիրները չէին բացառում նրան գահընկեց անելը: Նրանք կապեր հաստատեցին ազատականի վարկ վայելող իշխանազուն Մուրադի հետ, որը համարվում էր գահաժառանգ: Այդ դժվարին գործի իրականացումը իր վրա էր վերցրել Նամըք Քեմալը, որը ժամանակին եղել էր Մուրադի որդու դաստիարակը: Դավադրությունը, սակայն, բացահայտվեց նրա մասնակիցներից մեկի դավաճանության շնորհիվ: Սկսվեցին ձերբակալություններ: Ձերբակալվածների թվում էին նաև բարձրաստիճան և կարևոր պետական պաշտոններ զբաղեցնող անձինք, օրինակ, Ստամբուլի զորամասի հրամանատար Օմեր Նայիլի-փաշան (ծագումով հունգարացի, 1848 թ. հունգարական հեղափոխության մասնակից, որն ընդունել էր իսլամը և աչքի ընկել թուրքական զինվորական ծառայության մեջ) և ոստիկանության նախարարի օգնական Մուստաֆա Ասըմ փաշան: Դրանով «նոր օսմանների» ընկերության գործունեությունը մայրաքաղաքում գործնականում դադարեց և այսուհետև գործունեության կենտրոններ դարձան Լոնդոնը և Փարիզը, ուր փախան և վտարանդու կարգավիճակով հաստատվեցին կազմակերպության ղեկավարներից և շարքային անդամներից շատերը: Այսպիսով, ստեղծվեց արտասահմանյան վտարանդիական քաղաքական կենտրոն:

Եվրոպա վտարանդված «նոր օսմանները» Մուստաֆա Ֆազըլ փաշայի նյութական աջակցությամբ սկսեցին թուրքերեն լեզվով հրատարակել իրենց թերթերը: Արտասահմանում «Նոր օսմանների ընկերության» քարոզչական գործունեության մեջ մեծ դեր խաղացին «Մուհբիր» թերթը, որը Ալի Սուավին հրատարակում էր Լոնդոնում 1867–1868 թթ., և «Հյուրրիեթ» («Ազատություն») թերթը, որը Նամըք Քեմալը և Զիյա բեյը հրատարակում էին 1869–1870 թթ. Լոնդոնում, իսկ ապա՝ Զիյա բեյը՝ Ժնևում: «Հյուրրիեթի» էջերում շարադրվում էին «Նոր օսմանների» քաղաքական պահանջները և նրանց հետապնդած նպատակները: Թերթը գրում էր, որ Օսմանյան կայսրության փրկությունը ունի միայն մեկ ճանապարհ՝ կայսրության վերածումը սահմանադրական միապետության և պատգամավորների պալատի գումարումը: Թերթը քննադատում էր կառավարությանը թանզիմաթական բարեփոխումները ձախողելու համար, հանդես էր գալիս սուլթանի իրավունքները սահմանափակելու և օրենքի առջև Բարձրագույն Դռան պատասխանատվության օգտին, ձևակերպում էր օրենսդիր և գործադիր իշխանություններն անջատելու անհրաժեշտության գաղափարը, առաջ էր քաշում պատգամավորների պալատի նման իշխանության բարձրագույն մարմինների ընտրովիության սկզբունքը, ձգտում էր տեսականորեն հիմնավորել Ղուրանի և շարիաթի նորմերի հետ սահմանադրականության գաղափարների համատեղելիության սկզբունքը:

Միաժամանակ «նոր օսմանների» մամուլում և քաղաքական հրապարակախոսության մեջ հստակորեն զարգացվում էր այն միտքը, որ կայսրությունը պետք է պահպանվի, ինչպես և պետք է պահպանվի սուլթանի իշխանությունը, նվաճված ժողովուրդների նկամամբ:

«Նոր օսմանների» գաղափարախոսները ձևակերպեցին այսպես կոչված օսմանիզմի դոկտրինը, համաձայն որի սուլթանի բոլոր հպատակները, անկախ իրենց ազգային ու կրոնական պատկանելությունից «օսմանցիներ» են, «միևնույն ընտանիքի զավակները»: Նրանք պնդում էին, որ սահմանադրական կառավարումը կբերի արդարություն ու հավասարություն սուլթանի բոլոր հպատակներին, կտրուկ կերպով հանդես էին գալիս ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ու ազգային իդեաների դեմ: «Նոր օսմանցիների» առաջնորդները ձևակերպեցին «օսմանյան ազգի» հայեցակարգը, ըստ որի կայսրության բոլոր ժողովուրդները, անկախ իրենց ծագումից, ազգությունից ու դավանանքից օսմանյան պետության հպատակներ են, այսինքն «օսմանյան ազգ»: Սակայն այդ «օսմա-

նյան ազգի» մեջ միայն Թուրքերն են «առաջին կարգի օսմանցիներ»: Սա ոչ Թուրք ժողովուրդներին համաձուլելու և Թուրքականացնելու ծրագիր էր:

«Նոր օսմանների» Թերթերը, նրանց հրապարակախոսական գրվածքները Եվրոպայից գաղտնի ճանապարհով Թափանցում էին Օսմանյան կայսրություն և լայն արձագանք գտնում հատկապես օսմանյան հասարակության կրթված մասի մոտ: Վտարանդության մեջ գտնվելը կարևոր դեր խաղաց «նոր օսմանների» գաղափարական ու քաղաքական հայացքների ձևավորման գործում: Այդ ընթացքում նրանք ծանոթացան եվրոպական լուսավորիչների, գրողների, հրապարակախոսների աշխատությունների հետ, ուսումնասիրեցին իրավունքը, եվրոպական երկրների պետական կառուցվածքը և այլն: Նամըք Քեմալը և Զիյա բեյը Ֆրանսիայի մի շարք ականավոր մտածողների ու գրողների ստեղծագործություններ Թարգմանեցին Թուրքերեն:

1867 Թ. ամռանը սուլթան Աբդուլ-Ազիզը պետական այց կատարեց սկզբում Փարիզ, իսկ ապա՝ Լոնդոն: Նա օսմանցիների առաջին միապետն էր, որը դուրս էր գալիս իր կայսրության սահմաններից, չհաչված այն դեպքերը, երբ սուլթանը իր բանակի գլուխ անցած մեկնում էր արշավանքների: Լոնդոնում Կրիստալ-Պալասում պաշտոնական ընդունելության ժամանակ, ներկաների մեջ սուլթանը նկատում է կարմիր ֆեսավոր մարդկանց, որը գրավում է նրա ուշադրությունը: Նրա այն հարցին, Թե ովքեր են նրանք, իր արտաքին գործերի մինիստրը պատասխանում է. «Դրանք, Ձերդ գերազանցության դեմ ընդդիմադիրներ են»:

Անչուշտ արտասահմանում ընդդիմության ձևավորման հարցը չէր կարող չանհանգստացնել սուլթանական արքունիքին: Վերջինս 70-ական Թվականների սկզբին որոշում է վերջ դնել «նոր օսմանների» գործունեությանը, նրանց պարագլուխներին հնարավորություն տալով վերադառնալ հայրենիք, նրանց առաջարկելով պաշտոններ և այլն: 1870-1872 ԹԹ. վտարանդիության մեջ եղած մի քանի գործիչներ վերադարձան Ստամբուլ: Դրանց Թվում էր նաև Ֆազըլ փաշան, որը զբաղեցնելով արդարադատության նախարարի պաշտոնը, այլևս չէր խոսում սահմանադրության մասին: Աստիճանաբար նա խզեց նաև իր կապերը «նոր օսմանների» հետ: Վտարանդիությունից վերադարձավ նաև Նամըք Քեմալը, որը գրեց «Վաթան» («Հայրենիք») անունով հայրենասիրական դրաման: Նրանում զարգացվում էր «ազգի» ու «հայրենիքի» գաղափարը: 1872 Թ. հունիսին Նամըք Քեմալը Ստամբուլում սկսեց հրատարակել «Իբրեթ» («Խրատ»)

թերթը, որը չուտով դարձավ «նոր օսմանների» խոսափողը և սահմանադրության գաղափարների տարածողը: Թերթում հրատարակված հոդվածներում կառավարությունը ենթարկվում էր սուր քննադատության: Դրա հետևանքը եղավ այն, որ 1873 թ. մարտին կառավարությունն արգելեց «Իբրեթի» հրատարակությունը, իսկ թերթի խմբագիրը՝ Նամըք Քեմալը, աքսորվեց Կիպրոս, որտեղ նա ստիպված էր 3 տարի անցկացնել իր աքսորը՝ ոստիկանության ուժեղ հսկողության ներքո: Մայրաքաղաքից արտաքսվեցին նաև «նոր օսմանների» կողմնակից մի շարք լրագրողներ և հրապարակախոսներ:

Սակայն, չնայած այդ հալածանքներին և կառավարության կողմից ձեռնարկվող կանխարգելիչ քայլերին՝ արդեն անհնար էր կասեցնել «նոր օսմանների» գաղափարների տարածումը Թուրք մտավորականության շրջանում: Դա հող նախապատրաստեց քաղաքական պայքարի համար հանուն սահմանադրական բարեփոխման: «Նոր օսմանները» արդեն հասցրել էին իրենց գաղափարների սերմերը նետել պարարտ հողի մեջ: Նրանց կողմից մշակվել և գաղափարաքաղաքական եզրի տեսք էին ստացել «օսմանյան ազգի» (“millet-i osmani”) և «օսմանյան հայրենասիրության» գաղափարները:

Սահմանադրական շարժումը ծնունդ առավ մի այնպիսի պայմաններում, երբ Օսմանյան կայսրությունում Ներքին քաղաքական առավել կարևոր գործընթացներից մեկը դարձավ բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը: Բալկաններում քրիստոնյա ժողովուրդների հակաթուրքական պայքարը 50-ական թվականների վերջերից սկսեց վերածվել կայսրության կազմից անջատվելու և դուրս գալու, իրենց ազգային պետությունները վերածնելու պայքարի: 1861 թ. Դանուբյան իշխանությունների տարածքում հայտարարվեց միասնական Ռումինական պետության ստեղծման մասին: 1860-1862 թթ. Բոսնիայում և Հերցեգովինայում տեղի էր ունենում գյուղացիության հակաթուրքական ու հակաֆեոդալական ապստամբություն: Բոսնիայում բորբոքվեց քաղաքացիական պատերազմ մահմեդականների ու քրիստոնյաների միջև: 1862 թ. թուրքական զորքերը դուրս եկան Սերբիայից: 1868-1869 թթ. օսմանյան իշխանությունների դեմ ծանր ու արյունահեղ մարտեր էր մղում Կրետեի բնակչությունը, որը ձգտում էր այդ կղզին միացնել Հունաստանին: Բ. Դուրը դաժանորեն հաշվեհարդար տեսավ ապստամբների հետ: 60-70-ական թթ. ուժեղացավ նաև բուլղարական ժողովրդի հակաթուրքական պայքարը: Թուրքերը դրան ևս պատասխանեցին արյունոտ հաշվեհարդարով:

Բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումները համընկան Օսմանյան կայսրության ներսում տնտեսական և քաղաքական ճգնաժամի կտրուկ սրման հետ: Ֆինանսական ճգնաժամը պետության մեջ հարաճուն կերպով խորանում էր: Պետությունը շարունակում էր արևմտյան դրամատերերից փոխառություններ վերցնել: Եվրոպական ներդրողներին գայթակղեցնում էին Թուրքիայի վիթխարի հանքային հանածոների վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունները: Պետության արտաքին պարտքը գնալով ձնագնդի պես մեծանում էր: Տնտեսական աղետը սպառնում էր ընդունել վիթխարի չափեր: Տնտեսական դրության չեչտակի վատթարացման դրսևորումներից մեկը եղավ 1875 թ. աշնանը Բարձրագույն դռան արած պաշտոնական հայտարարությունը իր մասնակի ֆինանսական սնանկության մասին:

1873 թ. ամռանից մինչև 1875 թ. գարունը Փոքր Ասիայում ուժգին երաշտի պատճառով սկսվեց ահավոր սով: Մի շարք գյուղերում բնակչությունը ամբողջապես մահացավ: Շատ գյուղերում ոչնչացավ մինչև բնակչության 70-80 տոկոսը: Կերի բացակայության պատճառով սկսվեց նաև անասունների զանգվածային անկում: Անատոլիայի հարավ-արևելքում, Սիրիայում և Լիբանանում բռնկվեց խոլերայի համաճարակ: Սովը և հիվանդությունը տարան մի քանի հարյուր հազար մարդկային կյանք: Երկրի ամբողջ նահանգներ մարդաթափ եղան: 1874-1875 թթ. սով սկսվեց նաև Եվրոպական Թուրքիայի մի շարք նահանգներում: Այդ բոլորի բարձրակետը հանդիսացան ձմեռային խստաշունչ սառնամանիքները: ժամանակակիցների վկայությամբ, Ստամբուլի թաղամասերում հայտնվել էին գայլեր, որոնք հոշոտում էին պատահական անցորդներին: Գյուղատնտեսական մթերքների անբավարարությունը հասել էր այնպիսի չափերի, որ բացառում էր հարկերի հավաքման հնարավորությունը: Պետության բյուջեի մեջ գոյացել էր հսկայական ճեղքվածք: Մի պահ նույնիսկ կայսերական գանձարանը դարձել էր այն աստիճանի դատարկ, որ անհրաժեշտ դրամ չկար կառավարության գործունեությունը իրականացնելու համար: Ֆինանսական փակուղուց ելք գտնելու նպատակով Բ. Դուռը անընդհատ բարձրացնում էր հարկերը: Իսկ դա կայսրության տարբեր նահանգներում առաջ էր բերում դժգոհություն, ապստամբություններ ու խռովություններ: Օսմանյան կայսրության արտաքին քաղաքական հորիզոնը ևս պայծառ չէր: Բալկաններում հուժկու վերելք էին ապրում հակաթուրքական ազգային-ազատագրական շարժումները: 1875 թ. հակաթուրքական գյուղացիական ապս-

տամբությունների ալիքը կրկին ընդգրկեց Բոսնիան և Հերցեգովինան: 1875 թ. հերթական անգամ պայքարի դուրս եկավ բուլղարական ժողովուրդը, հզոր ապստամբություն բռնկեց Հին Զագորում: 1876 թ. գարնանը հակաթուրքական ապստամբության ալիքը արդեն համակել էր ողջ Բուլղարիան: Թուրքերի կողմից այն ճնշվեց անողորմ դաժանությամբ: Իրենց արյունոտ նախճիրը կազմակերպելիս թուրքերը տարբերություն չէին դնում մարդկանց ոչ տարիքի և ոչ էլ սեռի մեջ: Բազմաթիվ գյուղեր նրանք հրո ճարակ դարձրին: Թուրքական ասկյարները գործում էին միջնադարյան «սրբազան պատերազմի» ավանդույթներով: Բուլղարական սարսափները ցնցեցին ողջ Եվրոպան: Թուրքական գաղանությունները գնահատվեցին որպես «դարի ամենանողկալի հանցագործությունը»:

Թուրք բաշիբոզուքների այդ արյունոտ խրախճանքը սարսափի ճիչ առաջ բերեց ողջ քրիստոնյա աշխարհում, ուժեղացնելով թուրքոֆոբիական տրամադրությունները:

Այդ իրադարձությունների ընթացքում արտասահմանում թուրքական կառավարության հեղինակությունն ու վստահության վարկը խիստ սասանվել էր: Սուլթանի և նրա կառավարության նկատմամբ մեծանում էր նաև հայ դրամատեր չելեբիների և հույն մեծահարուստ վաճառականների ու դրամատերերի դժգոհությունը, որոնք հսկայական գումարներ էին ներդրել պետական արժեթղթերի մեջ և հայտնվել էին սնանկացման շեմին: Զայրույթի տեղիք էր տալիս նաև սուլթան Աբդուլ Ազիզի վարքագիծը: 1871 թ. մեծ վեզիր Ալի-փաշայի մահվանից հետո նա իր գործողություններում դարձել էր սանձարձակ: Նրա վեզիրների մեջ միակ մարդը, որն ի վիճակի էր որոշ զսպիչ ազդեցություն ունենալ սուլթանի վրա, դա մեծ վեզիրն էր: Ալի-փաշայի մահվանից հետո Աբդուլ-Ազիզը թեթևության չունչ քաշելով խոստովանել էր, որ «վերջապես ինքը դարձել է ազատ մարդ»: Նա անմիջապես իր իշխանությունը դարձրեց անսահմանափակ, յուրացնելով Բ. Դռան իրավասությունները, ավելի ճիշտ հաշվի չնստելով նրա հետ: Սուլթանը հայտարարել էր, որ ինքը մտադիր է այսուհետև երկիրը կառավարել ռուսական ցարի ձևով, երբ իր մինիստրներից յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ թե մեծ վեզիրի, այլ միայն սուլթանի առջև: Սկզբում նա մեծ վեզիրի պաշտոնում նշանակեց փառասեր ու անսկզբունք Մահմուդ Նեդիմին, նրա մասին արտահայտվելով հետևյալ կերպ. նա վեզիրների մեջ առաջինն է, որ անում է հենց այն, ինչ պահանջում է սուլթանը: Սակայն վերջինս իր քաղաքականությամբ ուժեղացրեց վարչական քաոսը, պետական պաշտո-

նյաներից չատերին աքսորելով հեռավոր վայրերը, զանգվածորեն պաշտոնանկ անելով իր համար անցանկալի անձանց կամ նրանց մի տեղից տեղափոխելով մեկ այլ տեղ: Մեծ վեզիրը Ստամբուլում Ռուսաստանի դեսպան Իգնատևի մարդն էր, հենց այդ պատճառով թուրքերը նրան անվանեցին «Նեղիմով»: Սոֆթերը նույնիկ ամբաստանեցին սուլթան Ազիզի մոտ, որ «Նեղիմովը» երկիրը ծախում է ռուսներին:

Միաժամանակ սուլթանի քմահաճությունները դարձան այն աստիճանի արտառոց, որ նրա շրջապատի մարդիկ սկսեցին ենթադրել, որ նա տառապում է մեծագարությամբ և ունի մտավոր զարգացման խնդիրներ: Գնալով նրա մոտ բռնապետական հատկանիշները վերածվում էին մոլուցքի. նա, օրինակ, պահանջում էր, որ իր վեզիրները իր ոտներն ընկնեն ու համբուրեն իր որդու ոտքերը, ստիպում էր, որ ցանկացած աստիճանավոր, որը կրում էր Ազիզ անունը, ինչպես և ինքը, պաշտոնական փաստաթղթերի տակ ստորագրելիս չգրեր այդ անունը, այլ որևէ այլ անուն: Նա կենդանի մարդկանց միջոցով խաղում էր «զինվորիկ» խաղը. ուտում էր մեծ քանակությամբ ձու. այնքան էր տարված իր մարտական աքլորներով, որ աքլորակռիվների ժամանակ հաղթանակ տարած աքլորներին պարգևատրում էր չքանչաններով կամ զարդերով, իսկ պարտվածներին ուղարկում աքսոր:

Եվրոպայի մայրաքաղաքներում շրջագայություն կատարելուց հետո վերադառնալով Ստամբուլ, սուլթանը որոշել էր գերազանցել այնտեղ տեսած պերճանքին ու չքեղությանը: Նա Դոլմաբախչե պալատում կազմակերպում էր ծախսատար չքեղ ներկայացումներ: Հսկայական միջոցներ էր ծախսում իր պալատի վրա: Աշխատելով հետ չմնալ եվրոպացիներից, Աբդուլ-Ազիզը հրամայեց կառուցել զրահապատ ռազմանավեր:

Նման պայմաններում իրենց գործունեությունը ակտիվացրին սահմանադրական բարեփոխումների կողմնակիցները, որոնց գլուխ կանգնեց պետական-քաղաքական խոշոր գործիչ Ահմեդ Միդհատ-փաշան:

Համոզվելով, որ սուլթան Աբդուլ Ազիզի կառավարման շրջանում հնարավոր չէ որևէ բան փոխել պետության վիճակի մեջ, Միդհատ փաշան անցավ ընդդիմադիր գործունեության, այսուհետև պայքար մղելով հանուն սահմանդրական կարգերի հաստատման: Ժամանակակիցներից մեկը նրա մասին ասել էր, որ «այդ մարդը հանձինս սահմանադրության, տեսնում էր մի համադարման Օսմանյան կայսրության առջև հառնած բոլոր դժվարություններն ու մարտահրավերները հաղթահարելու համար»:

Միդհատ փաշան կողմնորոշվում էր դեպի Անգլիան և այն տեսակետին էր, որ այդ պետության քաղաքական կառուցվածքը կարող է

Թուրքիայի համար ընդօրինակելու օրինակ հանդիսանալ: Նա սերտ կապերի մեջ էր գտնվում Ստամբուլում անգլիական դեսպան Հենրի Էլլիոթի հետ և նրանից ստանում էր «խորհուրդներ»:

Սահմանադրության կողմնակիցները կառավարության դեմ պայքարն սկսեցին ավատական-կղերական շրջանների մի մասի հետ բլոկ կազմած: Սոֆթերը, այսինքն աստվածաբանություն ուսումնասիրող ուսանողները և աշակերտները դժգոհ էին սուլթանի ու մեծ վեզիր Նեդիմի վարած քաղաքականությունից: Միդհատ փաշան և նրա կողմնակիցները ձգտում էին այդ դժգոհությունն ուղղել հանուն սահմանադրության համար պայքարի հունով, թեև սահմանադրականների ու սոֆթերի կողմից հետապնդվող նպատակները տարբեր էին: Սոֆթերը բավականաչափ լավ կազմակերպված մուսուլմանական մոլեռանդներ էին, որոնք պահանջում էին խստիվ պահպանել շարիաթի օրենքները և հրաժարվել եվրոպական նորամուծություններից: Սոֆթերը ևս հանդես էին գալիս սուլթանին կից խորհրդակցական մարմին («չուրայ-ի ումմեթ») ստեղծելու օգտին, սակայն միայն մահմեդականների ներկայացուցիչներից:

Եվրոպական պետությունների միջամտության սպառնալիքի մասին լուրերն ու չչուկները էլ ավելի էին թեժացնում սոֆթերի միջավայրում հակակառավարական տրամադրությունները: Մայրաքաղաքում լուրեր էին պտտվում, որ սուլթան Աբդուլ Ազիզը վախենալով իր ժողովրդից, խնդրել է ռուսական ցարին 30 հազարանոց մի բանակ ուղարկել Ստամբուլ նրա անձը և գահը պաշտպանելու համար: Սոֆթերը ամեն օր մզկիթների բակերում կազմակերպում էին աղմկալից հանրահավաքներ: Նրանց ղեկավարները մշտական կապերի մեջ էին Միդհատ-փաշայի հետ և նրանից ստանում էին հրահանգներ: Միդհատի կարգադրությամբ գահաժառանգ Մուրադի գանձապետ հույն Քրիստաքին սոֆթերին տրամադրում էր դրամ: Սոֆթերը սկսեցին զինվել: Մի քանի օրվա ընթացքում մայրաքաղաքի զենքի խանութներում նրանց կողմից գնվեց մոտ 15 հազար հրացան ու ատրճանակ: Անգլիական դեսպանատունը ևս, որը չահագրգռված էր սոֆթերի շրջանում հակառուսական տրամադրությունների վերելքով, հիմնավորապես ֆինանսական օգնություն էր ցույց տալիս սոֆթերին զենք ձեռք բերելու համար:

Մթնոլորտը գնալով չիկանում էր: Մայրաքաղաքում սկսեցին տարածվել թռուցիկներ, որոնցում կոչ էր արվում գահընկեց անել սուլթանին, ինչպես նաև ձերբակալել ու մահապատժի ենթարկել նրա մինիստրներին որպես «Ալլահի ու հայրենիքի նկատմամբ դավա-

ճանների»: Ստամբուլի բնակչության շրջանում տարածվեց մի փաստաթուղթ, որը կրում էր «Մահմեդական հայրենասերների մանիֆեստ» անվանումը: Նրա հեղինակներն էին Միդհատ-փաշան, Խալիլ Շերիֆ-փաշան և Օտյան էֆենդին (Գրիգոր Օտյանը - Վ. Բ.): Մանիֆեստում ասվում էր, որ Օսմանյան կայսրությունում հավասարապես հալածվում են և՛ մահմեդականները և՛ քրիստոնյաները: Այդ հալածանքները կարելի է վերացնել միայն պատգամավորների պալատի ստեղծման միջոցով, որի կազմում ընդգրկված լինեն բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները, անկախ նրանց ազգությունից ու կրոնական պատկանելությունից:

1876 թ. մայիսի 9-ին Բայազիդիե հրապարակում հավաքվեցին մոտ վեց հազար սոֆթեր և նրանց ուսուցիչ խոջաներ Ստամբուլի տարբեր մզկիթներից, որպեսզի զանգվածային հանրահավաք կազմակերպեն Բարձր դռան շենքի առջև: Նրանք ռազմական նախարարի միջոցով սուլթանին պահանջ ներկայացրին պաշտոնաթող անել մեծ վեզիր Մահմուդ Նեդիմ փաշային և գլխավոր մուֆթի Հասան Ֆեհմի էֆենդիին: Ցուցադրական ձևով հանրահավաքի մասնակիցները չափում էին Բ. Դռան առջև եղած պարսպի բարձրությունը, որոշելու համար, թե այն արդյոք բավարար չափով բարձր է, որ նրանից հնարավոր լինի կախել մեծ վեզիրին:

Թեև Օսմանյան կայսրության հասարակական և քաղաքական պատմության մեջ XVI դարից սկսած ուսանող-աստվածաբանների հուզումները սովորական երևույթ էին, սակայն այս անգամ դրանք աչքի էին ընկնում հիանալի կազմակերպվածությամբ և նպատակների հստակությամբ: Ենթադրվում էր, որ այդ շարժումը կազմակերպված էր ու ֆինանսավորվում էր Միդհատ-փաշայի կողմից, որն այդ ժամանակ արդեն գլխավորում էր «նոր օսմանների» սահմանադրական շարժումը:

Մինչև որ արքունիքում վերլուծում էին ստեղծված իրադրությունը, մայիսի 10-ին սոֆթերի հուզումները վերսկսվեցին նոր թափով: Հանրահավաքների ժամանակ հռետորները կոչ էին անում զենքի դիմել: Ցուցարարների թիվը արագորեն աճում էր, նրանց միացավ մայրաքաղաքի մահմեդական բնակչության նշանակալից մասը: Կառավարությունը այն աստիճանի ահաբեկված էր շարժման թափով, որ չհամարձակվեց զորքեր նետել ամբոխի դեմ: Ցուցարարների բազմահազար շարասյունները սարսափելի աղմուկ-աղաղակով շարժվեցին դեպի Բ. Դռան շենքը: Լսվում էին սպառնալիքներ մեծ վեզիրի ու շեյխ-ուլ-իսլամի հասցեին: Ահաբեկված մեծ վեզիրը թաքնվեց իրա-

նական դեսպանատան շենքում, իսկ շեյխ-ուլ-իսլամը ստիպված էր ապաստան որոնել իր ազգականների մոտ: Ցուցարարների հետ բանակցություններ վարելու համար սուլթանն ուղարկեց իր գլխավոր համհարզին և առաջին քարտուղարին, նրանց հրավիրելով պալատ հանգիստ պայմաններում ցուցարարների պահանջները քննարկելու համար: Սակայն վերջիններս հրաժարվեցին այդ հրավերից, պնդելով իրենց պահանջների վրա:

Մայիսի 10-ի երեկոն և 11-ի գիշերը անցան հետագա իրադարձությունների տագնապալից սպասումների մեջ: Մայիսի 11-ի առավոտյան սոֆթերը դարձյալ սկսեցին հանրահավաքներն ու քայլարշավները: Դրանց մասնակիցների թիվը գնալով շարունակում էր աճել: Ամենուրեք լսվում էին պահանջներ Միդհատ-փաշային մեծ վեզիր նշանակելու մասին:

Սուլթանը ստիպված էր տեղի տալ: Նա պաշտոնանկ արեց գլխավոր մուֆթիին (շեյխ-ուլ-իսլամին) և մեծ վեզիր Մահմուդ Նեդիմին, որի փոխարեն նշանակվեց պահպանողական հայացքների տեր Ռյուշթու-փաշան: Շեյխ-ուլ իսլամի պաշտոնը զբաղեցրեց Խայրուլլահ-էֆենդին: Միդհատ-փաշան նոր կառավարության մեջ մտավ որպես անպորտֆել մինիստր: Դա դեռ միայն սկիզբն էր: Հենց այդ պահից սկսած Միդհատ-փաշան սկսեց բացահայտ կերպով հանդես գալ որպես սահմանադրական շարժման առաջնորդ: Ստամբուլից բրիտանական դեսպանը զեկուցում էր Լոնդոն իր վերադասին, որ մայրաքաղաքում «սահմանադրություն բառը բոլորի շրթների վրա էր»: Ուշագրավ է նշել, որ ձգտելով ազդել մահմեդականների գիտակցության վրա իր համար ցանկալի ուղղությամբ, Միդհատ-փաշան հաճախ հայտարարում էր, որ երազում տեսել է Մուհամմեդ մարգարեին, որն իրենից խնդրել է հոգ տանել երկրի փրկության մասին:

Միդհատ-փաշան սահմանադրություն բառի տակ հասկանում էր համաժողովրդական խորհրդակցական մի ասամբլեա, որի մեջ պետք է ներկայացված լինեին կայսրության մեջ առկա բոլոր խավերը, բոլոր ազգությունները և բոլոր դավանանքների հետևորդները: Այսուհետև սուլթանը և նրա մինիստրները պետք է պատասխանատվություն կրեին խորհրդակցական ասամբլեայի առջև: Դրանով իսկ սուլթանի բացարձակ իշխանությունը սահմանափակվելու էր և ենթարկվելու էր խորհրդի և ազգի կամքին:

Որպեսզի արդարացվի կառավարման նման ինստիտուտի գոյությունը, սահմանադրության կողմնակիցները վկայակոչում էին Ղուրանը: Նրանք իսլամի սուրբ գիրքը մեկնաբանում էին այն իմաստով,

որ սուլթանի բացարձակ իշխանությունը նրա ներկա ձևով հափշտակել ու բռնատիրել է ժողովրդի իրավունքները և դրանով խակ խախտել է սրբազան օրենքը:

Միդհատ-փաշան քայլ առ քայլ նախապատրաստում էր պետական հեղաշրջում:

1876 թ. մայիսի 29-ի լույս 30-ի գիշերը զինվորական ու քաղաքացիական բարձր աստիճանավորների մի խումբ, որի մեջ մտնում էին մեծ վեզիր Մեհմեդ Ռյուշթու-փաշան, ռազմական մինիստր Հյուսեին Ավնի փաշան, Ստամբուլի կայազորի պետ Ռեդիֆ-փաշան, օգտվելով նոր մեծ մուֆթի Հասան Խայրուլլա-էֆենդիի աջակցությունից, որոշեցին գահընկեց անել սուլթան Աբդուլ Ազիզին: Քանի որ հեղաշրջումն իրականացնելու համար անհրաժեշտ էր շեյխ-ուլ-իսլամի համապատասխան որոշումը՝ ֆեթվան, ուստի դավադիրները գրավոր հարցում արեցին նրան հետևյալ բովանդակությամբ. «Եթե հավատացյալների առաջնորդը ունենա խոլ ու սանձարձակ վարք ու բարք, եթե կառավարելու համար չունենա պահանջված խելամտությունը, եթե նրա անձնական ծախսերը վնաս են բերում պետական գանձարանին և այս բոլորով հանդերձ նա մնա գահի վրա, դա վտանգավոր չէ՞ ժողովրդի համար, և արդյոք չպե՞տք է նրան գահընկեց անել»: Շեյխ-ուլ-իսլամը այդ հարցմանը պատասխանում է. «Շարիաթի օրենսգիրքը այո է ասում» և ստորագրում է ֆեթվան: Մայիսի 30-ի վաղ առավոտյան Ստամբուլի ռազմական ուսումնարանի աշակերտները «նոր օսմանների» ակտիվ կողմնակից Սուլեյման-փաշայի հրամանատարությամբ, ինչպես նաև մայրաքաղաքի կայազորի երկու գումարտակ ցամաքից շրջապատեցին սուլթանական Դոլմաբախչե պալատը: Ծովի կողմից սուլթանի նստավայրը շրջափակեց «Մասուդիե» զրահանավը: Եվս մեկ ռազմանավ դիրքեր գրավեց ռուսական դեսպանության ամառային նստավայրի դիմաց, կանխելու համար դեսպան Իգնատևի որևէ միջամտություն: Խռովարարները հեշտությամբ զինաթափ արեցին պալատական պահակախումբը: Քնից արթնացնելով սուլթանին, խռովարարները ընթերցում են շեյխ-ուլ-իսլամի ֆեթվան: Տեսնելով, որ որևէ դիմադրություն անօգուտ է, սուլթանն ասում է. «Թող ամենակալի կամքը կատարյալ լինի»:

Աբդուլ Ազիզը իր ընտանիքի հետ, զինված մարդկանց ուժեղ հսկողությամբ ուղարկվեց սուլթանական Թոփկափը հին պալատը: Այնուհետև Միդհատը և նրա համախոհ գործընկերներ-մինիստրները հավաքվեցին սերասկերաթի՝ ռազմական նախարարության շենքում, որտեղ հրապարակվեց շեյխ-ուլ-իսլամի ֆեթվան սուլթանին գահընկեց-

կեց անելու մասին: Ֆեթվայում բերվում էին սուլթանին գահից զրկելու հետևյալ հիմքերը. «մտավոր տկարություն ու խանգարում, քաղաքական հարցերի լուծումից խուսափում, պետության եկամուտների օգտագործում անձնական նպատակների համար և մի վարքագիծ, որն ընդհանուր առմամբ վտանգավոր է պետության ու հասարակության համար»: Հենց տեղում մինիստրները հավատարմության երդում տվեցին հավաքին ներկա գտնված գահաժառանգ Մուրադին, որը գահակալեց Մուրադ V անունով (1876):

Աբդուլ Ազիզը ոչ մի դիմադրություն ցույց չտվեց և խոնարհաբար գրեց իր հրաժարականի վերաբերյալ հայտարարություն: Լուսաբացին ռազմանավերից կատարված հրետանային 101 համազարկերը ավետում էին սուլթանի փոփոխության մասին: Ստամբուլի բնակչությունը մեծ ոգևորությամբ ողջունեց այդ անարյուն պետական հեղաշրջումը, իսկ մինիստրներից մեկը տեղի ունեցածը գնահատեց որպես «բարեպատեհ իրադարձություն», որն իր նշանակությամբ հավասար էր ենիչերիների ոչնչացմանը:

Որոշ ժամանակ անց Թոփկափը պալատում տնային բանտարկության մեջ գտնվող նախկին սուլթան Աբդուլ Ազիզը ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին: Նա իր մորից խնդրել էր մկրատ իբր թե իր մորուքը հարդարելու համար և այդ մկրատով կտրել էր իր երկու ձեռքերի երակները: Մեկ այլ վարկածի համաձայն, որն ավելի հավանական է, հունիսի 4-ին հեղաշրջում իրականացնողները սպանել են Աբդուլ Ազիզին:

Մուրադն ունեցել է ազատամիտ հայացքներ և բարենորոգումներ իրականացնելու խոշոր ծրագրեր: Նա իր գահակալությունը սկսեց բուլղարացի և այլ հեղափոխականներին ընդհանուր ներում չնորհելով:

Մուրադի գահ բարձրանալուց հետո ազատական հայացքների տեր և սահմանադրության կողմնակից բազմաթիվ անձինք վերադարձան վտարանդությունից ու աքսորից: Նրանց մեծ մասին նոր իշխանությունները չնորհեցին պաշտոններ: Անմիջապես Կիպրոսից վերադարձավ նաև Նամըք Քեմալը, որը ստանձնեց սուլթանի անձնական քարտուղարի պաշտոնը:

Բնականաբար, Մուրադ V-ի իրագործած ազատական ընույթի քայլերը առաջ էին բերելու որոշակի շրջանակների դիմադրությունը և խոչընդոտող քայլերը: Շուտով պարզվեց նաև, որ նոր սուլթանը բնավ չի ցանկանում խաղալիք դառնալ իրեն գահ բարձրացրած մարդկանց ձեռքերում: Սակայն Մուրադին գահ բարձրացողներն ունեին այլ հաշիվներ: Միդհատ փաշան որոշել էր չուտափույթ կերպով հռչակել սահմանադրություն:

Սահմանադրության հռչակման համար ծավալված պայքարը բավականին կատաղի բնույթ ստացավ 1876 թվականի ամռանը և աշնանը: Հունիսի 6-ին նորից զբաղեցնելով Պետական խորհրդի նախագահի պաշտոնը, Միդհատ փաշան անմիջապես մշակեց սահմանադրության նախագիծ: Այն քննարկվում էր բարդ քաղաքական իրադրության պայմաններում, որն ավելի էր խորանում այն պատճառով, որ հունիսի 30-ին Սերբիան և հուլիսի 1-ին Չեռնոգորիան ի պաշտպանություն բոսնիական և հերցոգովինյան ապստամբների պատերազմ էին հայտարարել Թուրքիային: 1876 թ. հուլիսին Ստամբուլի բնակչության շրջանում տարածվեց հակասահմանադրական տրամադրություններ ունեցող բարձրաստիճան հոգևորականների՝ ուլեմների կոչը, որում թեև հավանություն էր տրվում Աբդուլ Ազիզի գահընկեց լինելուն, որը նրանց կարծիքով խախտել էր շարիաթի դրույթները, սակայն առաջարկվում էր ոչնչացնել կայսրության բոլոր քրիստոնյաներին: Նկատի ունենալով, որ սահմանադրության հակառակորդների կողմից առաջ էր քաշվում տեսակետ այն մասին, որ կառավարման սահմանադրական եղանակը անհամատեղելի է շարիաթի սրբազան դրույթներին, հուլիսի 15-ին տեղի ունեցած մինիստրների ու բարձր աստիճանավորների նիստում, որը նվիրված էր սահմանադրության վերաբերյալ հարցի քննարկմանը, ելույթ ունեցավ Ռումելիայի նահանգի գլխավոր դատավոր (կադիասկեր) Սեֆեդդին-էֆենդին, որը բազմաթիվ վկայակոչումներ արեց Ղուրանից և հադիսներից, ձգտելով ներկաներին ապացուցել, որ իսլամը չի հակասում կառավարման սահմանադրական եղանակին:

Իր հերթին ցանկանալով գործնականում ապացուցել, որ հնարավոր է միավորել երկրի տարբեր ժողովուրդների շահերը հանուն «ընդհանուր հայրենիքի»՝ Օսմանյան կայսրության, Միդհատ փաշան կազմակերպում էր մահմեդականներից ու քրիստոնյաներից (հիմնականում հույներից) բաղկացած խառը կամավորական ջոկատներ, նրանց Սերբիա և Չեռնոգորիա ուղարկելու համար: Այդ ջոկատներից մեկի դրոշի վրա Միդհատ փաշան խաչը, աստղը և մահիկը միացրեց իրար խորհրդանշելու համար մահմեդականների ու քրիստոնյաների միասնությունը, որոնք ոտքի են կանգնել «ընդհանուր հայրենիքի» պաշտպանության համար:

Սակայն սոֆթերը և մուսուլմանական հոգևորականները վճռականորեն բողոքում էին ոչ մահմեդականներին մուսուլմաններին համահավասար իրավունքներ տրամադրելու դեմ, որը նրանց կարծիքով հակասում էր «սրբազան օրենքի»՝ շարիաթի սկզբունքներին: Իրենց

այդ հայացքները նրանք արտահայտեցին Միդհատ փաշային ներկայացված մի գրության մեջ, որտեղ ասվում էր. «Մենք ոչ մի հիմք չենք տեսնում այն բանի համար, որպեսզի ունենանք սահմանադրություն կամ ազգային խորհրդարան: Մենք քրիստոնյաներին ընկճել ենք և մեր հողը նվաճել ենք սրով, և չենք ցանկանում նրանց հետ կիսել երկրի նկատմամբ իշխանությունը, կամ թույլ տալ նրանց մեզ հետ համահավասար մասնակցելու երկրի կառավարման գործին»:

Իրենց այդ հայտարարությամբ սոֆթերն, անկասկած արտահայտում էին Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող ռեալ իրավիճակը: Կ. Մարքսը գրում էր, որ «Թուրքական պետությունը, ինչպես բոլոր արևելյան պետությունները, իր հիմքում ունի պետության ու եկեղեցու, քաղաքականության ու կրոնի չափազանց սերտ միահյուսում, համարյա թե նույնացում: Թուրքական կայսրության և նրա կառավարողների համար Ղուրանը միաժամանակ հանդիսանում է և՛ հավատի և թե՛ օրենքի աղբյուր»: Օրենքի առջև բոլոր ժողովուրդների հավասարության պահանջն «անպայման կնշանակեր իրականության մեջ Ղուրանը փոխարինել նոր քաղաքացիական օրենսգրքով, այլ խոսքով կնշանակեր՝ քանդել թուրք հասարակության կառուցվածքը և նրա փլատակների վրա ստեղծել նոր իրավիճակ»:

Հիրավի, նույնիսկ թուրք սահմանադրականները ընկալում էին ազգային հարցը որպես զուտ կրոնական հարց:

Գահակալությունից 15 օր հետո Մուրադ V-ի մոտ հայտնաբերում են ջղային հիվանդության կամ խելագարության ախտանիշներ: Վարկած կա այն մասին, որ դա պարզապես նյարդային տագնապ էր, սակայն մութ ուժերը տակից գործում էին և շահագրգիռ մարդիկ 1876 թ. օգոստոսի վերջին նրան հռչակեցին խելագար և անբուժելի հիվանդ: Մուրադ V-ը, չնայած իր երիտասարդ տարիքին, աչքի էր ընկնում արտասովոր մտավոր ընդունակություններով: Նա ստացել էր հիանալի կրթություն, հավասար կերպով ընկալում էր ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան մշակույթը: Սնվել էր ֆրանսիական գրականությամբ ու արվեստով, վայելում էր հաջող դաշնակահարի համբավ, հեղինակ էր մի շարք երաժշտական ստեղծագործությունների, որոնք արժանացել էին ճանաչված երաժիշտների գնահատանքին: Աբդուլ Ազիզի Եվրոպա կատարած ճանապարհորդության ժամանակ նա ուղեկցում էր սուլթանին և չփումների ժամանակ բարենպաստ տպավորություն էր թողել եվրոպացիների վրա: Սակայն վերադարձից հետո նա գաղտնի կապեր էր հաստատել բուն երկրում և արտասահմանում գտնվող ազատական գործիչների հետ: Նա անդա-

մակցում էր նաև ֆրանսիական մասոնական օթյակներից մեկի հետ: Տեղեկանալով այդ մասին, Աբդուլ Ազիզը սկսել էր կասկածանքով վերաբերվել նրա նկատմամբ, փաստորեն պահելով խիստ մեկուսացման մեջ: Դա չափազանց ծանր անդրադարձ էր ունեցել Մուրադի առանց այն էլ գրգռուն խառնվածքի վրա և նա իրեն տվել էր խմիչքի: Նրա նյարդային համակարգը նոր ցնցման ենթարկվեց իր հորեղբայր Աբդուլ Ազիզի սպանության պատճառով: Դրան ավելացավ նաև այն, որ կառավարության նիստի ժամանակ, ազգությամբ չերքեզ մի բանակային սպա, որը ենթադրում էր, որ սուլթանը ոչ թե ինքնասպանություն է գործել, այլ սպանել են նրան, վրեժ լուծելու նպատակով Մուրադի աչքի առջև ատրճանակի կրակոցներով սպանեց ռազմական ու արտաքին գործերի մինիստրներին:

Այդ ցնցումներից հետո Մուրադը խուսափում էր երևալ հասարակության աչքին և ըստ էության ի վիճակի չէր զբաղվելու պետական գործերով: Նա ենթարկվեց Թուրք և օտարերկրյա բժիշկների քննությանը, որոնց կողմից տրված ախտորոշումը հետևյալն էր. սուլթանը տարել է նյարդային ցնցում, որը բուժելու համար պահանջվում է որոշակի ժամանակ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինչպես բուն երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս առկա էր քաղաքական ճգնաժամ, կառավարության անդամների մի մասը անհրաժեշտ համարեց դնել իշխանափոխության հարց՝ Մուրադին փոխարինելու համար մեկ այլ, առավել ակտիվ և գործունյա սուլթանով: Ընտրությունը կանգ առավ Մուրադի կրտսեր եղբոր՝ իշխանազուն Աբդուլ Համիդի վրա, մի մարդու, որի արժանիքներն ու ընդունակությունները անհայտ էին օսմանյան քաղաքական շրջանակների համար, քանի որ վերջինս իր շատ նախորդների նման պահվում էր մեկուսացման վիճակում:

Իր եղբորը՝ Մուրադին, խելագար հռչակելու գործում Աբդուլ Համիդը ունեցել է մեծ դերակատարություն: Նա միջոցների մեջ խտրություն չդնելով կատարում էր խլուրդի աշխատանք: Արագորեն միանալով Մուրադի հակառակորդների խմբին, Համիդը գաղտնի տեսակցություն է ունենում մեծ հեղինակություն վայելող Նամըք Մեհմեդ փաշայի հետ, որպեսզի վերջինս իր ազդեցությունն օգտագործի թագը իրեն հատկացնելու գործի մեջ: Այդ տեսակցության ժամանակ իրեն ընկերացած Իսքենդեր փաշային իր գահ բարձրանալուց հետո Աբդուլ Համիդը հրամայում է որպես ավելորդ վկա խեղդամահ անել: Համիդը սկսում է հաճախակի հանդիպումներ ունենալ նաև մեծ վեզիր Միդհատ փաշայի հետ՝ իր իսկ տան մեջ:

Մուրադի ֆրանսամետ քաղաքական հայացքները ևս այդ կարճ

ժամանակամիջոցի ընթացքում առաջ էին բերել մյուս մեծ տերությունների դժգոհությունը: Ուստի նրանք ևս գաղտնապես Մուրադի դեմ տանում էին աշխատանքներ: Ստամբուլում բրիտանական դեսպան Էլիոթը, թեև նախապես Մուրադի կողմնակիցն էր, սակայն հետագայում փոխում է իր դիրքորոշումը և իր համակրանքը ամփոփում Համիդի վրա:

Իրենց հերթին Մուրադի դեմ գործում էին նաև ռուսները: Նրանք համարում էին, որ Մուրադի ազատական քաղաքականությունը կարող էր արգելք հանդիսանալ Իգնատևի դիվանագիտական հաշվարկներին: Հատկանշական է, որ Մուրադի գահակալության հռչակման օրը, Ստամբուլում ռուսական դեսպանատունը լուսավորված չէր: Իսկ ռուսական դեսպանը մի քանի օր հետո սպառնացել էր հեռանալ մայրաքաղաքից: «Ես կրկին կվերադառնամ իմ պաշտոնին, երբ գահի վրա խելագար թագադրյալի փոխարեն բազմի մի առողջ սուլթան»,- հայտարարել էր նա:

Ի վերջո բրիտանական դեսպան Էլիոթը խորհուրդ է տալիս անգլիամետ հայացքներ ունեցող Միդհատ փաշային աջակցել Համիդի գահ բարձրանալուն: Դեսպանի կարծիքով Համիդը և մեծ վեզիրը կարող էին իրար ամբողջացնել, վարելով բրիտանամետ քաղաքականություն: Իր հերթին Համիդը սկսում է կաչվից դուրս գալ իրեն որպես անգլիասեր ցուցադրելու համար, ընդ որում, նա իր այդ դիմակը պահեց մինչև իր կյանքի վերջը:

Հետևելով բրիտանական դեսպանի տված խորհուրդներին՝ Միդհատ փաշան լծվում է եռանդուն գործունեության: Սկզբում Միդհատը և նրա կողմնակիցները որոշում են Մուրադի հիվանդության շրջանում գահաժառանգ Աբդուլ Համիդին կարգել իբր խնամակալ, մինչև սուլթանի առողջանալը: Սա մի իրադրություն էր, որ օսմանների պատմության մեջ նախադեպ չուներ: Երբ նման առաջարկով Միդհատը դիմում է Աբդուլ Համիդին, վերջինս կտրականապես մերժում է այդ առաջարկը, հայտարարելով, որ «Օսմանյան դինաստիայի պատմության մեջ նման սովորություն գոյություն չունի և բացի այդ, դա հակառակ է շարիաթի օրենքներին»: Մի պահ մտածելուց հետո Միդհատ փաշան հարցնում է Աբդուլ Համիդին, թե արդյոք նա համաձայն է Մուրադի կենդանության ժամանակ հռչակվել սուլթան և մահմեդականների խալիֆ: Դրան հետևում է Համիդի պատասխանը՝ ինչո՞ւ չէ, պայմանով, որ իրեն ներկայացվի բժիշկների կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ այն մասին, որ Մուրադը անբուժելի հիվանդ է և ի վիճակի չէ կառավարելու: Անմիջապես Մուրադին բուժող

ավստրիացի բժիշկը հեռացվում է պաշտոնից և նրա փոխարեն նշանակվում է իտալացի մի բժիշկ, որը առանց վարանելու Մուրադի հիվանդությունը հայտարարում է անբուժելի:

Հաջորդ հանդիպման ժամանակ Միդհատ փաշան Աբդուլ Համիդին է ներկայացնում բժշկական փաստաթուղթը և պայման դնում, որ եթե իշխանության գլուխ գալուց հետո Աբդուլ Համիդը անմիջապես կհռչակի հրամանագիր սահմանադրության ընդունման մասին, կստանա գահը: Թեև Աբդուլ Համիդը համակրանք չուներ սահմանադրության նկատմամբ, սակայն հանուն իշխանության ընդունեց իրեն առաջարկված գործաքը: Նա երդվեց, որ ինքը հավատարիմ կմնա իրեն ներկայացված երեք պայմաններին, այն է. կհռչակի սահմանադրություն, կկառավարի միայն պատասխանատու խորհրդականների միջոցով, այդ պաշտոններում կրկին կնշանակի իր եղբոր՝ Մուրադի պալատական քարտուղարներին:

Նամըք Քեմալը, որը զբաղեցնում էր հենց Մուրադի պալատական քարտուղարի պաշտոնը, արցունքոտ աչքերով խնդրում էր Միդհատ-փաշային և նրա համախոհներին հետաձգել սուլթանի գահընկեց լինելը: Սակայն նրան ոչ ոք չլսեց:

Այսպիսով, ընդամենը երեքամսյա կառավարումից հետո, խելագար հռչակված սուլթան Մուրադ V-ի փոխարեն 1876 թ. օգոստոսի 31-ին օսմանյան գահը գրավեց իշխանազուն Աբդուլ Համիդը՝ սուլթան Աբդուլ Համիդ II (1876-1909) գահակալական անվամբ: Հրետանային 101 համազարկերով ավետվում էր Մուրադի գահընկեցության և Համիդի գահակալության լուրը: Իսկ գահընկեց արված Մուրադը բանտարկության ենթարկվեց սկզբում Թոփկափը, իսկ ապա Զրաղանի պալատում:

Իր թագավորության սկզբնական շրջանում Աբդուլ Համիդը ստիպված էր զիջումների գնալ թուրք սահմանադրականներին, որոնց պարտական էր իր գահով:

Նոր սուլթանը հրամանագիր արձակեց սահմանադրության նախագիծը քննարկման դնելու վերաբերյալ: Հոկտեմբերի 2-ին Բարձրագույն դուռը գումարեց արտակարգ խորհուրդ, որին մասնակցում էին պետության բարձրագույն աստիճանավորները և բոլոր կրոնական համայնքների ներկայացուցիչները: Այդ խորհրդում սահմանադրության նախագիծը քննարկվելուց հետո այն հանձնվեց սուլթանին: Նույն ամսին սուլթանի հրամանով ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով Միդհատ փաշայի գլխավորությամբ: Նրա կազմի մեջ մտան նաև «նոր օսմանների» գաղափարախոսներ Նամըք Քեմալը և Զիյա բեյը:

Շուտով, սակայն, սահմանադրական հանձնաժողովի և կառավարության միջև բորբոքվեց սուր պայքար սուլթանի իրավունքների մասին հարցի շուրջը, որոնք ավատական-կրոնական շրջանները ձգտում էին պահպանել կատարյալ ամբողջությամբ: Նոյեմբերին հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքները և նախագիծը հանձնեց սուլթանին: Ի դեպ, Թուրքական առաջին սահմանադրության մշակմանը իր գործուն մասնակցությունն էր բերել հայ հասարակական գործիչ, իրավագետ Գրիգոր Օտյանը: Սահմանադրությունը նախատեսում էր երկպալատ խորհրդարանի (սենատ և ներկայացուցիչների պալատ) ստեղծում, վերացվում էր մեծ վեզիրների ինստիտուտը, որի փոխարեն մտցվում էր վարչապետի պաշտոնը: Վարչապետը իրավունք էր ստանում ինքնուրույն կազմելու կառավարություն: Նա պետք է պատասխանատվություն կրեր ինչպես սուլթանի, այնպես էլ պատգամավորների պալատի առջև: Վերջնական փաստաթուղթը ամբողջությամբ վերցրած այն չէր, ինչին ձգտում էր Միդհատ փաշան: Սուլթանը համակողմանի կերպով ուսումնասիրեց իրեն ներկայացված տարբերակը և գտավ, որ սահմանադրության այդ նախագիծը բավարար չափով չի ապահովում միապետի իրավունքները: Նրա պահանջով վերացվեց կայսրության տարբեր ժողովուրդների իրավունքների վերաբերյալ հոդվածը, այդ ժողովուրդների կողմից իրենց մայրենի լեզվից ազատ ու անկաշկանդ օգտվելու իրավունքը և այլն: Սուլթանը չեչտեց նաև, որ սահմանադրության մեջ պետք է խստիվ պահպանվեն սրբազան օրենքի՝ շարիաթի սկզբունքները և այլն: Ուղղումներ մտցնելու պատրվակի տակ նա պնդեց նախագծի վերանայման վրա: Կրկնակի քննարկումից հետո ևս Աբդուլ Համիդը աշխատում էր ձգձգել սահմանադրության հաստատումը և չէր շտապում հաստատել նաև սահմանադրական կառավարության կազմը:

Հարցը իր լուծումը ստացավ արտաքին քաղաքական հանգամանքների բերումով: 1876 թ. հունիսի վերջին և հուլիսի սկզբին Սերբիան և Չեռնոգորիան պատերազմ հայտարարեցին Օսմանյան կայսրությանը, իրենց զորակցությունը հայտնելով Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբներին: Թեև 1876 թ. հունիսին սկսված այդ պատերազմում Թուրքերը տարան հաղթանակ, սակայն դրանով հանդերձ իրադրությունը Բ. Դռան համար չափազանց բարդացել էր: Ռուսաստանի առաջարկությամբ պետությունները որոշեցին Ստամբուլում գումարել իրենց լիազոր ներկայացուցիչների խորհրդաժողով, պատերազմող կողմերի միջև հաշտության պայմանների մասին հարցի քննարկման նպատակով: Երեք ամսվա ընթացքում ջախջախելով

սերբերին՝ Թուրքական զորքերը պատրաստվում էին հաղթական երթով չարժվել Բելգրադի վրա: Սերբիան հայտնվել էր կորստյան մատնվելու վտանգի տակ: Նրան կրկին օգնության հասավ Ռուսաստանը: Հոկտեմբերին ցարական կառավարությունը վերջնագրի ձևով Բ. Դոնից պահանջեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները Սերբիայի դեմ, հակառակ դեպքում սպառնալով պատերազմով: Թեև Բ. Դուռը համաձայնվեց պահպանել երկամյա զինադադար, սակայն Թուրքական մայրաքաղաքում սկսեցին նախապատրաստվել Ռուսաստանի հետ հավանական զինված բախման համար: Դեկտեմբերի 11-ին Ստամբուլում սկսվեցին տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների նախնական խորհրդակցություններ Բոսնիայի, Հերցեգովինայի և Բուլղարիայի համար ինքնավարության նախագծի մշակման նպատակով, որը ենթադրվում էր իրականացնել մոտ ապագայում գումարվելիք Կ. Պոլսի խորհրդաժողովի մասնակից պետությունների հսկողության ներքո:

Այդ ընթացքում տեղի ունեցավ նաև հետևյալ իրադարձությունը: Ռուսական և ավստրիական կայսրերը, որոնց աջակցում էր Գերմանիան, պատրաստեցին Բեռլինի հուշագիրը, որը կոչված էր Բ. Դռանը պարտադրել իրականացնելու բարեփոխումներ: Այդ հուշագիրը բրիտանական վարչապետ Դիզրայելին գնահատեց որպես «Թուրքերի կոկորդին դրված դանակ»: Միանգամայն ակնհայտ էր, որ հուշագրի նպատակը վերջին հաշվով հանգում էր նրան, որ տերությունները համատեղ ռազմակալման ենթարկեն օսմանների տարածքները: Եվ քանի որ Մեծ Բրիտանիան հանդես էր գալիս Օսմանյան կայսրության ստատուս-քվոյի օգտին, Լոնդոնը հրաժարվեց միանալ վերոհիշյալ հուշագրին: Որպեսզի մեկ անգամ ևս հավաստիացվի, որ Մեծ Բրիտանիան նախանձախնդիր է Օսմանյան կայսրության պաշտպանության հարցում, հրաման իջեցվեց բրիտանական միջերկրածովյան ռազմական նավատորմը չարժել դեպի Դարդանելի նեղուցի մուտքը: Գիտակցելով, որ Ռուսաստանը բացահայտ կերպով պատրաստվում է պատերազմի, Անգլիան եռանդուն քայլեր ձեռնարկեց այն կանխելու համար, որոնցից մեկն էլ հենց մեծ տերությունների Կ. Պոլսի խորհրդաժողովի չուտափույթ գումարումն էր:

Երբ պարզ դարձավ, որ խորհրդաժողովում Թուրքիայի լիազորները գործ են ունենալու Բոսնիայի, Հերցեգովինայի և Բուլղարիայի ինքնավարության՝ տերությունների կողմից համաձայնեցված նախագծի հետ, Աբդուլ Համիդ II-ը, այդ ճարպիկ ու խորամանկ քաղա-

քաղետը, համաձայնություն տվեց սահմանադրության հռչակմանը: Սուլթանը 1876 թ. դեկտեմբերի 19-ին Միդհատ փաշային նշանակեց մեծ վեզիր և օգտվելով պահի ծայրահեղ լարվածությունից և այն բանից, որ Միդհատ փաշան ձգտում էր ամեն գնով ապահովել սահմանադրության հռչակումը, սուլթանը կարողացավ պնդել, որ սահմանադրության տեքստի մեջ մտցվի 113-րդ հոդվածի տխրահռչակ լրացումը, որը սուլթանին անսահմանափակ իրավունք էր տալիս անձնական որոշմամբ կայսրության սահմաններից արտաքսելու իր համար անցանկալի ամեն մի անձի:

1876 թ. դեկտեմբերի 23-ին Ստամբուլում եղանակը անձրևային ու թխպոտ էր: Չնայած հորդառատ անձևին՝ Բ. Դոան չենքի մոտ հավաքվել էր մեծ բազմություն, որոնք եկել էին ականատեսը լինելու Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին սահմանադրության հրապարակման պաշտոնական արարողությանը: Ցերեկվա մոտ ժամը մեկին հավաքվածների առջև հայտնվեց սուլթանի քարտուղարը, որը Միդհատին հանձնեց միապետի հրամանագիրը սահմանադրություն հռչակելու մասին: Հուզմունքից դողդոջուն ձայնով Միդհատ փաշան հայտարարեց երկրում «կայուն ծաղման նոր դարաշրջան սկսվելու մասին»: Սուլթանի հրամանագիրը ընթերցեց Բ. Դոան գլխավոր քարտուղար Մահմուդ Ջելալէդդինը: Արարողության ժամանակ Աբդուլ Համիդը չկար: Սուլթանական հրամանագրում նշվում էր, որ սահմանադրությունը համապատասխանում է շարիաթի օրենքներին, հանդիսանում է սուլթան Աբդուլ Մեջիդի սկսած բարեփոխումների շարունակությունն ու կապահովի կայսրության բոլոր հպատակների հավասարությունն ու ազատությունը: Հրամանագրի ընթերցումից հետո կատարվեց սուլթանին առողջություն բարեմաղթող աղոթք:

Կոստանդնուպոլսի դեսպանաժողովի ներկայացուցիչները պատրաստել էին կայսրությունում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ մի որոշում, որի տեքստը պետք է հրապարակեին 1876 թ. դեկտեմբերի 23-ի եզրափակիչ նիստում: Երբ Ֆրանսիայի ներկայացուցիչ դե Շոթորդին թուրքական ներկայացուցիչներ Սաֆֆեթ-փաշային և Էդհեմ-փաշային էր ներկայացնում խորհրդաժողովի որոշման տեքստը այն քննարկելու համար, որոտաց հրետանային 101 համազարկ: Թուրքական պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի մինիստր Սաֆֆեթ-փաշան վեր կացավ իր նստած տեղից և հանդիսավոր կերպով հայտարարեց. «Պարոնայք, այդ համազարկերը ազդարարում են սահմանադրության ընդունման մասին, որը Նորին

գերազանցություն սուլթանը պարգևում է իր հպատակներին: Այդ իրադարձությունը փոխում է վեց հարյուր տարի գոյություն ունեցած կառավարման ձևը և բաց է անում նոր դարաշրջան Օսմանյան կայսրության ժողովուրդների բարօրության համար: Քանի որ տեղի ունեցավ այդ չափազանց կարևոր հեղափոխությունը, իմ պատվիրակությունը գտնում է, որ այլևս անհրաժեշտություն չկա քննարկման ենթարկելու բարեփոխումների վերաբերյալ այդ տեքստը»:

Ձգտելով ցույց տալ, որ սահմանադրությամբ հռչակված «ազատությունն ու հավասարությունը» դատարկ հնչյուն չեն, հաջորդ օրը Միդհատ փաշան այցելեց հույն և հայ պատրիարքներին, թեև ըստ կարգի նրանք պետք է գային մեծ վեզիրի ոտքը, այդ «բարեպատեհ առիթով» նրան չնորհավորելու համար: Այցի ընթացքում զույգ պատրիարքները իրենց գոհունակությունը հայտնեցին, որ այսուհետև, սահմանադրական վարչակարգի պայմաններում, բոլոր դավանանքներին պատկանող սուլթանի հպատակները դիտվելու են որպես հավասար իրավունքների տեր: Իսկ հույն պատրիարքը, դիմելով մեծ վեզիրին, նույնիսկ ոգևորությամբ հայտարարեց. «Մենք գտնում ենք, որ Դուք հարություն տվեցիք Օսմանյան կայսրությանը»:

Վերջապես կոահելով Թուրքական խորամանկության իմաստը, Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի ներկայացուցիչները պնդեցին, որ բոլոր դեպքերում խորհրդաժողովը տեղի է ունենալու: Այնժամ Թուրքական պատվիրակությունը լքեց դահլիճը: Դրանից հետո խորհրդաժողովը, առանց Թուրք ներկայացուցիչների մասնակցության, ևս մեկ ամիս, մինչև 1877 թ. հունվարի 20-ը, շարունակեց իր՝ թեև անօգուտ աշխատանքը:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում Թուրքական առաջին սահմանադրությունը: Այն առաջին հերթին ազդարարում էր Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անբաժանելիությունը: Սահմանադրությունը հանդիսավոր կերպով հրապարակում էր առանց դավանանքի խտրության կայսրության բոլոր հպատակների անձնական ազատության և հավասարության, սեփականության անվտանգության և բնակարանի անձեռնմխելիության, հարկերի համամասնական գանձման, կոռի, բռնագրավման և տուգանքների արգելման սկզբունքը: Սահմանադրության 17-րդ հոդվածը ազդարարում էր, որ օսմանյան բոլոր հպատակները, անկախ իրենց դավանանքից, հավասար են օրենքի առջև: Սակայն միաժամանակ դարձյալ այն ընդունում էր իսլամի առաջնայնությունը: 4-րդ հոդվածը սուլթանին հռչակում էր իսլամի պաշտպան: Սահմանադրությունը հռչակեց մամուլի ազա-

տություն և պարտադիր տարրական կրթություն: Սահմանվել էր, որ երկրում գործելու է երկպալատ խորհրդարան՝ սենատ, որի անդամները ցմահ նշանակվում են սուլթանի կողմից, և պատգամավորների պալատ, որն ընտրվում է կայսրության արական սեռի բնակչության կողմից, 40 հազար բնակչին մեկ պատգամավոր հաշվով: Պատգամավոր կարող էին ընտրվել այն հպատակները, որոնք տիրապետում էին թուրքերեն լեզվին և հասել էին 30-ամյա տարիքի: Սահմանադրության համաձայն, պալատի իրավասությունների մեջ էր մտնում պետական բյուջեի քննարկումն ու հաստատումը: Սահմանադրության մեջ, վերջապես, սահմանված էին Օսմանյան կայսրության մինիստրների ու պաշտոնյաների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև դատարանների հրապարակայնության ու անկախության սկզբունքը: Առաջին թուրքական սահմանադրությունը կայսրության բոլոր հպատակներին, անկախ նրանց դավանանքից ու ազգային պատկանելությունից հռչակում էր «օսմանցիներ», իսկ Օսմանյան կայսրությունը հռչակում էր միասնական ամբողջություն, որը երբեք և ոչ մի պատրվակով անդամահատման ենթակա չէ: Ակնհայտ է, որ այս կետն ուղղակի ուղղված էր ոչ թուրք ժողովուրդների ազատագրական պայքարի դեմ, կամ հավերժացնում էր թուրքերի տիրապետությունը կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Դժվար չէ նկատել, որ այդ սահմանադրությունը տուրք էր տալիս տխրահռչակ «օսմանյան ազգի» տեսությանը: Հետագայում «օսմանիզմը» վերածվեց գաղափարական քաղաքական մի շարժման, որի նպատակն էր Օսմանյան կայսրությունում լուծում տալ ազգային հարցին՝ տիրապետող շրջանների համար ձեռնտու եղանակով: Օսմանիզմի գաղափարախոսությունը կայսրության բոլոր ժողովուրդներին, անկախ նրանց ազգությունից ու կրոնական պատկանելությունից, դիտում էր որպես մի միասնական ամբողջություն, միասնական ազգ: Դա նշանակում էր, որ Թուրքիայում գոյություն ունի միայն մեկ ազգ՝ օսմանցիները, իսկ այդ ազգին համախմբող և ուղղություն տվող ուժը դա սուլթանական իշխանությունն է, տիրապետող տարրը՝ թուրքերը, պետության միասնական լեզուն թուրքերենն է, իսկ օրենսդրությունը՝ շարիաթը: Խորհրդարանի երկու պալատներում էլ թուրքերենը հռչակվում էր միակ աշխատանքային լեզու, որի չիմացությունը իրավունք չէր տալիս դառնալու խորհրդարանի անդամ: Այսպիսով, ժխտվում ու մերժվում էր ոչ թուրք ժողովուրդների ինքնիշխան (սուվերեն) գոյության իրավունքը: Այլ կերպ ասած, սահմանադրությունը հավերժացնում էր թուրքերի տիրապետությունը

հպատակ ժողովուրդների վրա: Առաջ էր քաշվում նաև այն մտացածին ու կեղծ տեսակետը, որ կայսրության մեջ ոչ մահմեդականների շահերը համընկնում են մուսուլմանների շահերի հետ: «Օսմանիզմը» նպատակ ուներ «թուրքականացնել Օսմանյան կայսրությունը» և «խաղաղ» միջոցներով հարված հասցնել կայսրության ճնշված, հատկապես քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին: Բնավ պատահական չէ, որ սահմանադրության 16-րդ հոդվածով կայսրության բոլոր դպրոցները, այդ թվում նաև քրիստոնյա ժողովուրդների դպրոցներն ու ուսումնարանները դրվում էին պետության ուղղակի հսկողության տակ:

Սահմանադրությունը շատ փոքր չափով էր սահմանափակում սուլթանի իշխանությունը: Ավելի ճիշտ, նրան հատկացվում էին լայն իրավունքներ: Միապետի անձը հայտարարվում էր «սրբազան և անձեռնմխելի»: Սուլթանն անվանվում էր «ալեմ փենահ» («աշխարհի հանգրվան»), «զիլ-լիլլահ» («Ալլահի ստվեր»): Նա ճանաչվում էր որպես «բոլոր մահմեդականների խալիֆ», իսկ իսլամը հռչակվում էր որպես պետության պաշտոնական կրոն:

Հատկանշական է, որ վիլայեթների ինչպես թուրք, այնպես էլ ոչ թուրք բնակչությունը, 1876 թ. սահմանադրությունն ընդունեց առանց որևէ խանդավառության, լավ իրազեկ չլինելով, թե ինչ բան է այն և պարզ պատկերացում չունենալով երկրի ապագայի համար նրա ունենալիք դերի մասին: Թուրք պատմաբան Ջելալ Նուրին գրում էր, որ սահմանադրությունը հրապարակելու ժամանակ, օսմանցիները այդ օրենքը ուրիշ օրենքներից, օրինակ, որսորդության ու ձկնորսության վերաբերյալ, շատ չեն տարբերել: Մուսուլմանական բնակչությունը, հատկապես ասիական նահանգներում, բացահայտ կերպով դրսևորում էր իր դժգոհությունը այն բանից, որ ոչ մահմեդականներին տրվում են մուսուլմաններին հավասար իրավունքներ: Իսկ ոչ մահմեդականները, հատկապես քրիստոնյաները, հիանալի գիտեին թուրքական կառավարության կողմից «ազատության ու հավասարության» վերաբերյալ տված խոստումների արժեքը: Նրանք հիանալի հասկանում էին, որ այդ բոլոր իրավունքներն ու արտոնությունները իրենց տրվում են միայն թղթի վրա:

Ուլեմներն իրենց հերթին բողոքում էին, որ սահմանադրության շատ հոդվածներ հակառակ են շարիաթի դրույթներին: Այդ առթիվ նրանք վկայակոչում էին Ղուրանը, որի հինգերորդ սուրահի 51-րդ պատվիրանը հավատացյալ մահմեդականներին կոչ է անում. «Հուդայականներին և քրիստոնյաներին միք վերցնի որպես բարեկամ-

ներ... Եվ եթե ձեղանից որևէ մեկը նրանց վերցնի որպես բարեկամ, հենց ինքն էլ նրանցից է»: Դարեր շարունակ օսմանցիների համար քրիստոնյան իրավազուրկ ռայա էր, ստորադաս էակ, զուրկ բազմաթիվ իրավունքներից: Ուստի կրոնամոլ մոլլաների և ուլեմների համար անընդունելի էր, որ «գյավուրները» մահմեդականներին հավասար իրավունքներ վայելեին, ստրուկը դառնար հպատակ:

Աբդուլ Համիդի արդարադատության մինիստր Ջևդեթ-փաշայի և Դամադ Մահմուդ փաշայի պահանջով, սահմանադրության մեջ մտցվեց հատուկ հոդված (հոդված 113), համաձայն որի սուլթանը օժտվում էր արտակարգ լիազորություններով «պետության անվտանգությանը սպառնացող իրադրության ժամանակ»: Այլ կերպ ասած, նա «օրինական» հիմքեր էր ձեռք բերում հաշվեհարդար տեսնելու համար իր համար բոլոր անցանկալի անձանց հետ: Փաղիշահը պահպանում էր գահաժառանգման իրավունքը, սակայն ոչ թե հորից որդուն սկզբունքով, ինչպես եղել էր կայսրության ստեղծման ժամանակաշրջանից սկսած մի քանի հարյուր տարիների ընթացքում, այլ այսուհետև ցեղի ավագին անցնելու սկզբունքով:

Ըստ սահմանադրության, սուլթանը իր աշխարհիկ իշխանությունը իրականացնելու էր մեծ վեզիրի միջոցով, իսկ հոգևորը՝ շեյխ-ուլ-իսլամի: Կասկածից վեր է, որ 1876 թ. սահմանադրությունը Թուրքիայի կառավարող շրջանների կողմից ընդունվել էր Օսմանյան կայսրությունը վերահաս կործանումից փրկելու նպատակով:

Ըստ գաղափարի, սահմանադրության համաձայն սուլթանը պետք է իշխեր, սակայն չպիտի կառավարեր: Մինչդեռ սահմանադրությունը Աբդուլ Համիդի ձեռքերում դառնում էր հլու հնազանդ մի գործիք: Պատահական չէ, որ ժամանակակիցները այն անվանեցին «էվեթ, էֆենդիմ» («Այո, պարոն»):

Բոլոր դեպքերում սահմանադրության ընդունումով Օսմանյան կայսրությունը հռչակվում էր սահմանադրական միապետություն: Ոմանք դա գնահատել են որպես մի տեսակ խզում Օսմանյան կայսրության անցյալի հետ:

Սահմանադրության հռչակումից հետո Կոստանդնուպոլսի մեծ պետությունների խորհրդաժողովը, ինչպես որ խոստացել էին նրա եվրոպացի ներկայացուցիչները, շարունակեց իր աշխատանքները: Խորհրդաժողովում Թուրքական ներկայացուցիչները որդեգրել էին ագրեսիվ և անհաշտ դիրք: Նրանք կտրականապես մերժեցին Բալկաններում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ տերությունների բոլոր առաջարկները: Ի վերջո Թուրք պատվիրակներին

հաջողվեց ձախողել տերությունների խորհրդաժողովը այն պնդումների օգնությամբ, որ բարեփոխումների բոլոր խնդիրները լուծում է սահմանադրությունը: Նրանք համառորեն պնդում էին, որ ունենալով իր սեփական սահմանադրությունը, Թուրքիան բարեփոխումներ իրականացնելու հարցում այլևս չի զգում եվրոպական պետությունների օգնության կարիքը:

1877 թ. հունվարին Կ. Պոլսի խորհրդաժողովը փակվեց: Որոշ ժամանակ անց Բ. Դուռը և Սերբիան գոյություն ունեցող ստատուս-քվոյի հիմքի վրա ստորագրեցին անջատ պայմանագիր: Խորհրդաժողովի բրիտանական պատգամավոր լորդ Սոլսբերին Ստամբուլից մեկնեց Լոնդոն այն հաստատ համոզմամբ, որ պատերազմը Թուրքիայի և Ռուսաստանի միջև այլևս անխուսափելի է:

Երբ տերությունների Կ. Պոլսի խորհրդաժողովն ավարտվեց ձախողմամբ, Ռուսաստանը փորձեց ուրիշ միջոցներով ապահովել Օսմանյան կայսրության բալկանյան ժողովուրդների պրոբլեմների լուծումը: Նրա նախաձեռնությամբ 1877 թ. մարտին Լոնդոնում հրավիրվեց վեց մեծ տերությունների խորհրդաժողով, որտեղ ստորագրվեց մի արձանագրություն, որը Բարձրագույն դռնից պահանջում էր վճռականորեն բարելավել սուլթանի քրիստոնյա հպատակների դրությունը: Հակառակ դեպքում տերությունները հայտարարում էին, որ իրենք մտադիր են անմիջականորեն զբաղվել այդ սուր խնդրի լուծմամբ: Բայց սուլթանական կառավարությունը մերժեց տերությունների առաջարկությունը, հերթական անգամ հույսը դնելով նրանց հակասությունների վրա: Բ. Դուռը հայտարարեց, որ Լոնդոնի արձանագրությունը «նվաստացնում է և սահմանափակում սուլթանի անկախությունը», որ Օսմանյան կայսրությունը գերադասում է պատերազմի երկընտրանքը, եթե նույնիսկ պարտություն կրի այդ պատերազմում:

1877 թ. ապրիլի 24-ին, ուղիղ երկու չաբաթ անց այն բանից հետո, երբ Թուրքիան պաշտոնապես մերժեց Լոնդոնի արձանագրությունը, ցարը իր զորքերին հրամայեց անցնել սահմանը: Ռուսաստանը հայտարարեց, որ այդ պատերազմում իր հետապնդած գլխավոր նպատակը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ճնշված ժողովուրդների ազատագրումն է:

Պատերազմից խուսափելու խնդիրը էլ ավելի բարդացավ Թուրքերի կողմից Բուլղարիայում իրականացրած զանգվածային գազանություններից հետո: 1876 թ. մայիսին Բուլղարիայում ապստամբությունը ճնշելու ժամանակ Թուրքական զորքերը սրի քաշեցին 15-ից

20 հազար բուլղարացի կանանց ու երեխաների: Այդ գազանությունները, որոնք հայտնի են «բուլղարական սարսափներ» անունով, Մեծ Բրիտանիայի վարչապետ Գլադստոնին մղեցին գրելու մի պամֆլետ, որտեղ պահանջվում էր Թուրքերին քշել Եվրոպայից: Ֆրանսիացի գրող Մորուան հետևյալ կերպ էր մեկնաբանում այդ պամֆլետի իմաստը. «... Թուրքերը մարդկության հակահումանիստական մի տեսակն են... Եվրոպական բանտերում չի գտնվի ոչ մի հանցագործ և նույնիսկ մարդակեր... որը լսելով տեղի ունեցածի մասին զայրույթով չլցվեր»:

Գլադստոնը, հակառակ բրիտանական մինիստրների որդեգրած դիրքորոշման, ծավալեց հուժկու շարժում Թուրքական կառավարության դեմ: Երկրի տարբեր վայրերում տեղի ունեցող հանրահավաքների ժամանակ նա հանդես էր գալիս տպավորիչ ու բոցաշունչ ճառերով: Նա Թուրքերին մեղադրում էր նրանում, որ վատ են կառավարում պետությունը և անլուր դաժանություններ են գործադրում իրենց հպատակ քրիստոնյաների նկատմամբ: Պահանջում էր «գարշելի ու նողկալի Թուրքերին» զրկել Բուլղարիան կառավարելու իրավունքից: Իր կատարյալ համերաշխությունն ու համաձայնությունը հայտնելով Գլադստոնի տեսակետներին, լորդ Ստրեդֆորդ Ռեդկլիֆը ևս արտահայտվում էր այն բանի օգտին, որ Անգլիան չսահմանափակվի լոկ իր հովանավորությունը Բուլղարիայի վրա տարածելով, այլ իր պաշտպանության տակ վերցնի օսմանների կողմից հարստահարվող ողջ Բալկանյան թերակղզու ժողովուրդներին:

Թեև արտաքին գործերի մինիստր լորդ Դերբին վճռականորեն հանդես էր գալիս Գլադստոնի տեսակետի դեմ՝ կազմակերպելու խաչակրաց արշավանք Թուրքերին Եվրոպայից դուրս շպրտելու համար, սակայն նա հարկ համարեց կառավարության անունից տեղեկացնել սուլթանին, որ Թուրքերի հանցագործությունները առաջ են բերել անգլիական ժողովրդի արդար զայրույթը: Նա պահանջում էր պատժել մեղավորներին և օգնություն ցուցաբերել տուժածներին:

Մեծ Բրիտանիայի նման դիրքորոշումը մեծապես ձեռնտու էր Ռուսաստանին, որը շահագրգռված էր, որ պատերազմի ընթացքում Անգլիան պահպանի չեզոքություն: Գիտակցելով այդ իրողությունը, լորդ Դերբին հայտնեց ռուսական կառավարությանը, որ պատերազմի դեպքում Բրիտանիան չի հանդուրժի որևէ սպառնալիք Ստամբուլի ու Բոսֆորի նեղուցի կամ Եգիպտոսի ու Սուեզի ջրանցքի նկատմամբ: Ռուսական կառավարության համար դա ազդանշան էր, որ Մեծ Բրիտանիան չի միջամտի Բ. Դոան դեմ ռուսների գործողություններին:

Լոնդոնի նման վարքագիծը միաժամանակ վկայում էր այն մասին, որ բրիտանական կառավարության մեջ ձևավորվել էր մի մեծամասնություն, որը դեմ էր հանուն Թուրքերի շահերի պատերազմի մեջ մտնելու Ռուսաստանի դեմ:

Այդ տեսակետը, սակայն, բաժանում էին ոչ բոլոր անգլիական պետական գործիչները: Դրանցից մեկն էր վարչապետ Դիզրայելին (լորդ Բիքոնսֆիլդ), որը Ռուսաստանի նկատմամբ ուներ ռազմաշունչ հայացքներ: Նա բացարձակապես չէր վստահում ռուսներին: Լորդը կայուն համոզմունք ուներ այն մասին, որ անհրաժեշտ է պահպանել Օսմանյան կայսրության միասնությունն ու անկախությունը այն տեսքով, որը երաշխավորված է 1856 թ. Փարիզի պայմանագրով: «Արևելյան հարցի» նկատմամբ այդ ավանդական մոտեցումը Բրիտանական կայսրության համար դարձել էր կենսականորեն կարևոր խնդիր սկսած այն պահից, երբ բացվեց Սուեզի ջրանցքը: Դրանից հետո ընկած շրջանում կայսերական հաղորդակցության ճանապարհների պաշտպանությունը ցանկացած հարձակման դեմ և առհասարակ ռուսական նվաճողականությանը դիմակայելը դարձել էր բրիտանական դիվանագիտության գերակա ուղղություններից մեկը:

Սկզբնական շրջանում Բուլղարիայում Թուրքերի կատարած գազանությունների նկատմամբ վարչապետ Դիզրայելին վերաբերվեց որոշ թերահավատությամբ, դրանք համարելով չափազանցություն կամ «սրճարանային բամբասանք»: Սակայն հյուպատոսական մակարդակով կատարված ստուգումները ցույց տվեցին, որ ամեն ինչ այնպես է, ինչպես ներկայացնում է անաչառ մամուլը: Սակայն ճշմարտության այդ բացահայտումը չփոխեց լորդի տեսակետը հարցի էության վերաբերյալ: Նա իր ընդդիմախոսներին ներկայացնում էր հետևյալ հարցադրումը. «դա արդյոք բավարա՞ր պատճառ է այն բանի համար, որ Բրիտանական կայսրությունը չեղյալ հայտարարի իր բոլոր պայմանագրերը Օսմանյան կայսրության հետ և փոխի նրա նկատմամբ իր ավանդական քաղաքականությունը»: Նա հայտնում էր այն հաստատ համոզմունքը, որ բոլոր դեպքերում Թուրքիայի պաշտպանությունը բրիտանական շահերի օգտին է, ինչը մեկ անգամ ևս ապացուցվեց Ղրիմի պատերազմի ժամանակ:

Դիզրայելին քննադատում էր Գլադստոնի հակաթուրքական քարոզչությունը որպես «ոչ հայրենասիրական»: Նրա կարծիքով դա մեծագույն վնաս էր հասցնում Անգլիայի երկարատև շահերին, ինչպես նաև ճակատագրական դեր կարող էր խաղալ Եվրոպայում համընդհանուր խաղաղության համար: Լեդի Բրեդֆորդին գրած նամակում

Դիզրայելին նշում էր, որ Գլադստոնը «Բուլղարիայում կատարված գազանությունների համար վրեժ է լուծում սարքելով համաշխարհային մսաղաց»: Նա հաստատ համոզմունք էր հայտնում, որ բոլոր դեպքերում Մեծ Բրիտանիան պետք է հանդես գա Թուրքիայի անկախության օգտին և դիմագրավի այն սադրանքներին, որոնք հրահրվում են Ռուսաստանի կողմից:

Նրա այդ ոգով ելույթները սուլթան Աբդուլ Համիդի կողմից մեկնաբանվեցին որպես Մեծ Բրիտանիայի պաշտոնական տեսակետ, չնայած նրան, որ լորդ Դերբին և լորդ Սոլսբերին ունեին միանգամայն այլ տեսակետ: Սուլթանը ենթադրեց, որ անգլիացիները իրեն աջակցություն կցուցաբերեն Ռուսաստանի դեմ ցանկացած պատերազմի ժամանակ: Հենց դա էլ նրան վստահություն ներշնչեց, որպեսզի մերժի Կ. Պոլսի խորհրդաժողովի կողմից եղած առաջարկները հարցի կարգավորման վերաբերյալ:

Մի խոսքով, իրադարձությունները գլխապտույտ արագությամբ գործը տանում էին դեպի պատերազմ: Ի վերջո 1877 թ. ապրիլի 4-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց հետո քիչ անց, սուլթան Աբդուլ Համիդը համոզվեց, որ ինքը մոլորության մեջ էր բրիտանական աջակցության վերաբերյալ հարցում: Անգլիայի կառավարությունն ընտրեց այսպես կոչված «զգոն չեզոքության» քաղաքականությունը: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ սուլթանը ստիպված էր Ռուսաստանի հետ կռվել մեն-մենակ, առանց դաշնակիցների:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարության արտաքին քաղաքականության բարդությունները ուղեկցվում էին ներքին քաղաքականության բնագավառում իրար հետևից ծնունդ առնող դժվարությունների հետ: Միդհատ փաշայի մեծ վեզիր նշանակվելուց հետո անմիջապես նրա և սուլթանի միջև սկսվեցին տարակարծություններ, որոնք հաճախ վեր էին ածվում սուր վեճի: Միդհատ փաշան սուլթանից պահանջում էր պաշտոնանկ անել ֆինանսների նախարար Ղալիբ փաշային, ներքին գործերի նախարար Սավֆեթ փաշային, ինչպես նաև ռազմական մինիստրին ու ոստիկանության պետին: Ղալիբ փաշային Միդհատը մեղադրում էր նրանում, որ առանց մինիստրների կաբինետի հետ համաձայնեցնելու, նա պետական գանձարանից սուլթանին հատկացրել էր մի քանի հազար լիրա: Մեծ վեզիրը նաև կտրուկ իր անհամաձայնությունն էր հայտնել մայրաքաղաքային մի շարք թերթերի նկատմամբ հալածանքներ կազմակերպելու հարցում: Սուլ-

թանի և Միդհատի միջև սուր վեճի պատճառ դարձավ նաև այն, որ սահմանադրության համապատասխան դրույթի համաձայն, ոչ մահմեդականները իրավունք էին ստանում սովորելու ռազմական ուսումնարաններում, մի բան, որը կտրուկ առարկության էր հանդիպում սուլթանի կողմից:

Հարկ է նշել, որ սահմանադրության հռչակումից հետո «նոր օսմանների» գործունեությունը, որի պարագլուխն էր համարվում Միդհատ փաշան, սուլթանին թվում էր վտանգավոր իր իշխանության համար: Ուստի նա մեծագույն վախով հետևում էր Միդհատ փաշայի առնչություններին «նոր օսմանների» հետ: Սուլթանին անհանգստացնում էր նաև պետական գործերում Միդհատի չափից ավելի մեծ ինքնուրույնությունը: Օրինակ, առանց սուլթանի իմացության, նա հրամայել էր ստեղծել քրիստոնյա կամավորներից ու մահմեդականներից բաղկացած հատուկ զինված ջոկատներ: Դա Աբդուլ Համիդի կողմից մեկնաբանվեց այն իմաստով, որ թուրքական «սահմանադրության հայրը» ձգտում է կյանքի կոչել սահմանադրությանը հավատարիմ ուժեր, որոնց վրա անհրաժեշտության դեպքում կարելի էր հենվել: Առհասարակ Աբդուլ Համիդը կտրականապես դեմ է եղել Միդհատ փաշայի այն ծրագրին, որ ոչ մահմեդականները, մասնավորապես հայերը, ընդգրկվեն բանակի շարքերը կամ ընդունվեն զինվորական դպրոցները ուսանելու համար: Սուլթանը իր հուշագրություններում գրում է. «Ոչ մահմեդականների զինվորական ծառայությունը բանդագուշանք է: Այն ինքնասպանությանը հավասար մի բան է, եթե մենք իբրև «տիրող տարր» մեր բանակում հավասարություն հաստատենք օտար հավատացյալների հետ... Անմիտ բան է քրիստոնյա բանակ ստեղծելու պահանջը: Այն պարունակում է քաղաքական մեծ վտանգ, ըստ էության դա նշանակում է «բանակի մեջ ստեղծել բանակ»: Մենք իրավունք ունենք դժգոհ լինելու, որովհետև մեր երկրի քրիստոնյաները փոխանակ մահմեդական դառնալու և կամ երկրից հեռանալու, եվրոպական տերությունների հետ միախորհուրդ մեր դեմ հյուսում են դավեր... Խաչակրությունը կիսալուսնի դեմ դեռ չի դադարել»: Սուլթանը կասկածում էր նաև, որ Միդհատը ցանկանում է ամենուրեք «խցկել» իր դրածոներին: Աբդուլ Համիդը իր մեծ վեզիրին կասկածում էր նույնիսկ հանրապետական հակումներ ունենալու մեջ, որ նա իբր մտադիր է տապալել օսմանների դինաստիան և գլխավորել ստեղծվելիք հանրապետությունը: Դա անհիմն մեղադրանք էր, որովհետև Միդհատ փաշան, ինչպես և բոլոր «նոր օսմանները», սահմանադրական միապետության կողմնակից-

ներ էին: Առհասարակ, թեև Միդհատը հանդես էր գալիս երկիրը արդիականացնելու դիրքերից, սակայն նա սերտորեն կապված էր Օսմանյան կայսրության հետադիմական կիսաավատական կառավարող վերնախավի հետ:

Ի դեպ, ազատական ուղղության հետևորդ մի շարք հայ նշանավոր գործիչներ՝ Գրիգոր Օտյանը, դոկտոր Սերվիչենը, Գ. Սամամջյանը և ուրիշներ սերտորեն համագործակցում էին Միդհատ փաշայի հետ: Վերջինս, օրինակ, որպես իր ներկայացուցիչ Եվրոպա ուղարկեց Գրիգոր Օտյանին, որի հետ նա համագործակցում էր դեռևս Դանուբի վիլայեթի նահանգապետ եղած ժամանակներից: Գ. Օտյանի խնդիրն էր ձեռք բերել Անգլիայի և Ֆրանսիայի աջակցությունը, մասնավորապես նա առաքելություն ուներ Փարիզում և Լոնդոնում բանակցություններ վարել նոր փոխառություններ ստանալու համար:

Սուլթանի և մեծ վեզիրի միջև հարաբերությունների լարվածությունը հասել էր այնպիսի աստիճանի, որ հաճախ Աբդուլ Համիդը հաշվի չէր նստում նրա խորհուրդների ու պահանջների հետ: 1877 թ. հունվարի 30-ին Միդհատը սուլթանին հղեց մի համարձակ նամակ, նրան հիշեցնելով ինչպես մինիստրների, այնպես էլ սուլթանի հասարակ հպատակների սահմանադրական իրավունքների մասին: Նա սուլթանին նույնիսկ հանդիմանում էր նրանում, որ աջակցություն ցույց չի տալիս կառավարության նախաձեռնություններին և իր այդ գործելաոճով խանգարում է պետության ամրապնդմանը:

Ի վերջո սուլթանը սկսեց հաշվեհարդար նախապատրաստել այն մարդու նկատմամբ, որն իրեն բերել էր սուլթանական գահի վրա, իսկ այժմ նրան համարում էր իր ամենավտանգավոր քաղաքական հակառակորդը: Դրա համար նա օգտվեց սահմանադրության տխրահռչակ 113 հոդվածի հավելումից, որի ընդունումը ժամանակին հանդիպել էր «նոր օսմանների» համառ դիմադրությանը: Նրանում ասվում էր, որ «սուլթանը իրավունք ունի կայսրության տարածքից վտարել այն բոլոր անձանց, ովքեր ոստիկանության մարմինների հավաքած հավաստի տեղեկատվության համաձայն ճանաչվում են որպես պետության անվտանգության համար վտանգավոր անձինք»: Այսպիսով մեծ վեզիր Միդհատ փաշայի նկատմամբ հաշվեհարդարը նախապատրաստվում էր հենց նույն սահմանադրության շրջանակներում, նրա դրույթներին համապատասխան: Ի վերջո, սուլթանը շնորհազրկեց մեծ վեզիրին:

1877 թ. փետրվարի 5-ին Միդհատ փաշային ձերբակալեցին և որպես տերության համար «վտանգավոր խոովարար» նստեցնելով սուլթանի

«Իզզեդդին» զբոսանավը արտաքսեցին կայսրության սահմաններից դուրս: Նավապետին հրամայված էր իր ընտրությամբ մեծ վեզիրին տանել որևէ օտարերկրյա նավահանգիստ և այնտեղ իջեցնել ցամաք: Միդհատին պաշտոնապես ներկայացված մեղադրանքն ուներ հետևյալ ձևակերպումը. «Երկրում նրա կողմից մի այնպիսի իրադրության ստեղծում, որը մեծ վտանգ է ներկայացնում պետության համար»:

Երբ Միդհատ-փաշայի ձերբակալության և արտաքսման լուրը տարածվեց մայրաքաղաքում, 1877 թ. փետրվարի 8-ին «նոր օսմանները» Ստամբուլում կազմակերպեցին մեծ հանրահավաք, որտեղ հնչեցին սուլթանի դեմ ուղղված մեղադրանքներ: Կառավարությունը դրան պատասխանեց սահմանադրական շարժման մի շարք այլ կարկառուն գործիչների նկատմամբ հալածանքներով ու ձերբակալություններով: Երկրից արտաքսվեցին Զիյա բեյը, Նամըք Քեմալը, Ալի Սուավի-բեյը և ուրիշներ:

Չնայած այդ բոլորին, այնուհանդերձ, սահմանադրությունը ձևականորեն դեռ շարունակում էր գործել: Աբդուլ Համիդին դեռևս պետք էր օգտագործել սահմանադրության դեկորացիան: Նա կարգադրեց իրականացնել խորհրդարանի ընտրություններ: Օսմանյան պետության պատմության մեջ առաջին խորհրդարանը իր աշխատանքները սկսեց 1877 թ. մարտի 19-ին: Այն բացվեց Բեշիքթաշ պալատում: Խորհրդարանը բաղկացած էր սենատից (որի բոլոր 25 անդամները նշանակվում էին սուլթանի կողմից) և 119 հոգուց բաղկացած պատգամավորների պալատից, որոնք ընտրովի էին: Խորհրդարանի պատգամավորների (մահմեդականներ 71 մարդ, ոչ մահմեդականներ 48) ազգային կազմը բազմազան էր՝ թուրքեր, արաբներ, հույներ, հայեր, հրեաներ և այլն: Ինքը՝ Աբդուլ Համիդը, ի դեմս խորհրդարանի, տեսնում էր խամաճիկների մի ժողով: Խորհրդարանում պատգամավորների ելույթները ոչ մի դեպքում հասցեագրված չէին սուլթանին: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի պայմաններում կայացավ առաջին թուրքական խորհրդարանի երկու նստաշրջան:

Չնայած նրան, որ պատգամավորների պալատը ընդհանուր առմամբ հնազանդ էր սուլթանին և Բ. Դռանը, սակայն մի շարք օրինագծերի քննարկման ժամանակ շատ պատգամավորներ իրենց թույլ տվեցին խիստ քննադատելու վարչակազմի և դատա-իրավական համակարգի մեջ տիրող կարգերը, կենտրոնական վիլայեթային գերատեսչությունների պաշտոնյաների չարաշահումները և այլն: Հնչում էին նաև պահանջներ, որ որոշ մինիստրներ և պաշտոնատար այլ անձինք անձամբ ներկայանան պալատ և պատասխանեն կոնկրետ մեղադ-

բանքների։ 1877 թ. մայիսին պատգամավորների պալատը նույնիսկ համարձակվեց Բ. Դոնից բացատրություններ պահանջել ռուս-թուրքական պատերազմի ռազմաճակատներում թուրքական բանակի կրած ծանր պարտությունների կապակցությամբ։ Ընդդիմադիր տրամադրություններ ունեցող պատգամավորների ելույթների տոնը էլ ավելի սրվեց երկրորդ գումարման պալատի նստաշրջանի աշխատանքի ժամանակ։ Բանն այնտեղ հասավ, որ պատգամավորները դրեցին մեծ վեզիրին և մի շարք մինիստրներին անվստահություն հայտնելու հարցը։ Վերջապես պալատը կարողացավ հասնել այն բանին, որ սուլթանը փոխի մինիստրների կաբինետի կազմը և մեծ վեզիրի պաշտոնը փոխարինի վարչապետի պաշտոնով, որը ի տարբերություն մեծ վեզիրի, անմիջականորեն հաշվետու էր լինելու ոչ թե սուլթանին, այլ պատգամավորների պալատին։

Բնականաբար այդ բոլորը դուր չէր գալիս սուլթան Աբդուլ Համիդ II-ին։ Ավելին, խորհրդարանը օրեցօր նրա համար դառնում էր ուղղակի մղձավանջ։ Սահմանադրությունը կաչկանդում էր սուլթանի գործողությունների ազատությունը։ Աբդուլ Համիդի մտայնության համաձայն ժողովուրդն էր պատասխանատու սուլթանի առջև և ոչ թե սուլթանը ժողովրդի։

Նրա կարծիքով միայն ինքն էր իրավասու ղեկավարելու պետական մեքենան և միայն իրեն էր վերապահված իր հպատակներին սահմանադրություն չնորհելու իրավունքը։

Երեքամսյա աշխատանքից հետո սուլթանը ցրեց խորհրդարանը։ Միայն վեց ամիս անց, 1877 թ. դեկտեմբերի 13-ին, այն վերստին գումարվեց։ 1878 թ. հունվարին Ռուսաստանի հետ զինադադար կնքվելուց հետո պատգամավորները դարձյալ սկսեցին հանդես գալ սուր քննադատությամբ պետության հոռի կողմերի և պետական աստիճանավորների կաշառակերության և այլ օրախնդիր հարցերի վերաբերյալ։ Իր հերթին սուլթանը հակադարձում էր պատգամավորների այդ ելույթներին նշելով, որ թուրքական զորքերի աղետալի պարտությունը Ռուսաստանի դեմ մղված պատերազմում, երբ ռուսական բանակի առջև գործնականում բացվել էր դեպի Ստամբուլ տանող ճանապարհը, հետևանք է երկրում «միասնական կամքի բացակայության»։

Ի վերջո սուլթան Աբդուլ Համիդ II-ը անորոշ ժամկետով արձակեց պատգամավորների պալատը։ 1878 թ. փետրվարի 2-ին մեծ վեզիր Ահմեդ Վեֆիկ փաշան օսմանյան խորհրդարանի նիստում ընթերցեց սուլթանի ֆերմանը՝ խորհրդարանը արձակելու մասին,

կապված, իբր երկրում տիրող քաղաքական բարդ իրավիճակի հետ: Այդ ընդմիջումը տևեց ուղիղ երեսուն տարի:

Խորհրդարանի փակումը սուլթանը հիմնավորում էր նաև նրանով, որ «իր ժողովուրդը դեռ հասունացած չէ սահմանադրություն ունենալու համար», երբ դա տեղի ունենա, ինքը իրաղեով կվերահաստատի սահմանադրությունը: Սուլթանը գայրույթի պահին պոռթկում է, հայտարարելով, որ ինքը սխալվել է և պետք է քայլի իր նախնիների ճանապարհով: «Ես այժմ հասկանում եմ,- ասել էր Աբդուլ Համիդը,- որ միայն ուժը կարող չարժման մեջ դնել ժողովրդին, որին պաշտպանելը Աստված վստահել է ինձ»: Ավելի ուշ, եվրոպացի լրագրողի հետ զրույցի ժամանակ սուլթանը նկատել է, որ ինքը բարեփոխումների թշնամի չէ, «սակայն ազատության ավելցուկը, որը մարդ արարածի համար անսովոր մի բան է, նույնքան վտանգավոր է, որքան և նրա բացակայությունը»:

Նորածին սահմանադրությունը իր խանձարուրի մեջ խեղդելուց հետո Աբդուլ Համիդը դարձավ միահեծան տիրակալ: Նա պետության ղեկը ամբողջապես վերցրեց իր ձեռքը: Նոր դրությամբ Բարձրագույն Դուռը ինքն էր, ինչպես ժամանակին Լյուդովիկոս XIV էր ասել. «Պետությունը այդ ես եմ»: Օսմանյան կայսրությունում իշխանությունը ամբողջապես կենտրոնացավ սուլթանական Ելդրզ պալատում:

Միդհատ փաշան աքսորականի վիճակում գտնվեց ավելի քան մեկ ու կես տարի: 1878 թ. աշնանը նրան առաջարկվեց վերադառնալ Ստամբուլ: Հավանաբար դա կապված էր այն բանի հետ, որ 1878 թ. ամռանը մայրաքաղաքում տեղի էին ունեցել պալատական հեղաշրջման երկու փորձեր, որոնց կազմակերպման մեջ սուլթանը կասկածում էր Միդհատ փաշային: Ուստի նա որոշել էր նրան վերադարձնել կայսրության սահմանները, որպեսզի հնարավորություն ունենա վերահսկելու նրա գործողությունները: Սուլթանի կողմից Միդհատ փաշան նշանակվեց Սիրիայի նահանգապետ, այնուհետև 1880 թ. Այդինի վիլայեթի վալի:

Ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց հետո ռազմական գործողությունները միաժամանակ ծավալվեցին Բալկաններում և Կովկասյան ճակատում: Ընդ որում, կենտրոնական իրադարձությունները տեղի էին ունենում ռազմական գործողությունների բալկանյան թատերաբեմում: Քանի որ թուրքերը դեռևս տիրապետող էին Սև ծովում, որտեղ գործում էին նաև սուլթան Աբդուլ Ազիզի ժամանակներում պատրաստված զրահանավերը, Եվրոպա ներխուժելու համար ռուսները պետք է ընտրեին ցամաքային ճանապարհը: Դա կարելի էր

իրականցնել Մոլդավիայի և Վալախիայի վրայով: Երբ ռուսական զորքերն անցան Պրուտ գետը և մուտք գործեցին Ռումինիայի տարածքը, վերջինս Թուրքիային հայտարարեց պատերազմ և իրեն հռչակեց որպես անկախ պետություն: Նրա տարածքը և զինված ուժերը դարձան ռուսներին աջակցություն ցուցաբերելու արդյունավետ գործոն: Այնուհետև մարտերով անցնելով Դանուբ գետը, ռուսները ռազմական գործողություններ սկսեցին Բուլղարիայի տարածքում:

Երբ ռուսական բանակը Ալեքսանդր II ցարի գլխավորությամբ մուտք գործեց Բուլղարիա, այնտեղ նրան դիմավորեցին մեծագույն ցնծությամբ, որպես ազատարարի: Տիրնովոյից ռուսական մի ոչ մեծ զորամիավորում գեներալ Դիբիչի հրամանատարությամբ անցնելով Բալկանյան լեռնաշղթան, դուրս եկավ Թրակիայի դաշտավայրը: Այնուհետև 1877 թ. հունիսին այդ զորամիավորումը գրավեց Շիպկան՝ Ստարա-Պլանինա լեռնազանգվածի այդ կարևորագույն լեռնանցքը: Այստեղ ռուսական զորքերին միացան բուլղարները, որոնք այնուհետև ռուսների հետ միասին ռազմարշավներ էին կազմակերպում Մարիցա գետի հովտում տեղակայված թուրքական զորքերի վրա, սպառնալիք ստեղծելով Ադրիանոպոլսի համար և խուճապ առաջ բերելով հենց Ստամբուլում:

Սակայն ռազմական գործողությունների պատկերը փոխվեց, երբ թուրքերը Եվրոպայում գործող իրենց զորքերի գլխավոր հրամանատար նշանակեցին դավանափոխ պրուսացի զինվորական Մեհմեդ Ալիին, որը մինչ այդ հանդիսանում էր Կրետեի նահանգապետը: Վերջինս պարտության մատնեց ռուսական զորքերին և նրանց բուլղարական դաշնակիցներին, ծանր կորուստներով նրանց ստիպելով նահանջել դեպի Բալկանյան լեռնաշղթան: Միաժամանակ թուրքերը դանուբյան ռազմաճակատ նետեցին խոշոր ուժեր Ղրիմի պատերազմի վետերան Օսման փաշայի հրամանատարությամբ: Վերջինս Պլևնայի մոտ կազմակերպեց ուժեղ պաշտպանական դիրքեր, որի հետևանքով թուրքական բանակը տիրապետող դիրքեր ձեռք բերեց Բուլղարիայի հենց կենտրոնում գտնվող գլխավոր ռազմավարական ճանապարհների նկատմամբ: 1877 թ. ամռանը Պլևնայի մոտ ծավալվեցին համառ մարտեր: Հուլիսին թուրքերի նկատմամբ հսկայական թվական գերակշռություն ունեցող ռուսական զորքերը, որոնք հենց այդ պատճառով թերագնահատում էին հակառակորդի հնարավորությունները, հանդիպեցին թուրքերի լավ կազմակերպված պաշտպանությանը: Նրանց զարմացրել էր թուրքական բանակի ապշեցուցիչ տոկունությունը և հատկապես նրանց ժամանակակից հրացանները, ո-

րոնք սուլթան Աբդուլ Ազիզը ձեռք էր բերել Ամերիկայում: Բոլոր չափանիշներով այդ հրացանները գերազանցում էին ռուսների ունեցածին:

Առաջին անհաջողությունից վեց շաբաթ անց ռուսական և ռումինական զորքերը համատեղ ուժերով գրոհեցին Պլևնայի վրա, սակայն դարձյալ նրանց չհաջողվեց այն գրավել: Ռուսական հրամանատարությունը եկավ այն համոզման, որ գրոհով հնարավոր չէ գրավել այդ ամրացված քաղաք-ամրոցը, ուստի որոշեց ռումինացիների հետ համատեղ շրջապատել այն, որպեսզի թուրքական կայազորը մատնվի սովի: Աբդուլ Համիդը հրամայեց Օսման փաշային ցանկացած գնով մնալ Պլևնայում, նրան խոստանալով որպես օգնություն ուղարկել հսկայական մի բանակ: Երբ սուլթանի կողմից խոստացված այդ բանակը հայտնվեց Պլևնայի մատույցներում, պարզվեց, որ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ սովորական ամբոխ, որը շուտով ռուսների կողմից փախուստի մատնվեց:

Առջևում բալկանյան խստաշունչ ձմեռն էր իր առատ ձյունով: Դրսից օգնության հույս այլևս չկար, իսկ ռազմամթերքն ու սննդամթերքը արագ պակասում էր: Թուրք զինվորները ստիպված էին որսալ կատուներ, շներ ու մկներ, մինչդեռ ռուս սպաները ուտում էին խավիար: Օսման փաշան հասկացավ, որ իր միակ հաջողության հավանականությունը ամրոցի կայազորի հիմնական ուժերով ռուսական պաշտպանությունը ճեղքելն է: Դեկտեմբերի սկզբին, գիշերով, թուրքերը անաղմուկ դուրս եկան ամրոցից, շարժվեցին դեպի արևմուտք, կամուրջներ կառուցելով Վիդ գետի վրա կատարեցին անցում և կազմելով մարտական շարքեր գրոհեցին զարմացած ռուսների վրա: Հաղթահարելով մի քանի խրամատներ, թուրքերը հեղեղի նման նետվեցին ռուսական գլխավոր ուժերի վրա: Սկսվեց ահեղ սվինամարտ: Օսման փաշան վիրավորվեց ոտքից: Թուրքական զորքերի մեջ տարածված լուրը, որ իբր նա մահացել է, առաջ բերեց խուճապ: Շարքերը սասանվեցին և սկսվեց փախուստը: 1877 թ. դեկտեմբերի սկզբին Պլևնայի թուրքական կայազորն անձնատուր եղավ: Ալեքսանդր II ցարը իր բանակի գլուխ անցած մտավ քաղաք և Օսման փաշան ստորագրեց քաղաքի հանձնման վերաբերյալ պայմանագիրը: Պլևնայի վրա փողփողաց ռուսական դրոշը: Ռուսները Օսման փաշայի նկատմամբ վերաբերվեցին գթասրտորեն: Սակայն նրա զորքերը ձների մեջ ոչնչացան: Կենդանի մնացած թուրք ասկյարները ոչնչացվեցին բուլղար հայդուկների կողմից:

Ռուսական զորքերի այդ հաղթանակը մեծ նշանակություն ունեցավ՝ ազդելով Բալկաններում ռազմական գործողությունների ողջ

ընթացքի վրա: Թուրքերի վիճակը դարձավ օրհասական: Սերբիան պատերազմ հայտարարեց Նիշը գրավելու համար: Զեռնոգորցիները տարածքներ գրավեցին Հերցեգովինայում: Սլավոնական բանակները Բալկանների բոլոր մասերում ձեռք էին բերում հաղթանակներ: Հույները սպառնում էին պատերազմով և աջակցություն էին ցույց տալիս կայսրության հույներով բնակեցված շրջանների ապստամբական շարժումներին, ներառյալ նաև Կրետե կղզում:

Ռուսական զորքերը խոշոր հաջողություններ ձեռք բերեցին նաև կովկասյան ռազմաճակատում: 1877 թ. մայիսին նրանք գրավեցին Արդահանը, օգոստոսին մտան Սուխում, իսկ 1877 թ. նոյեմբերին գիշերային գրոհից հետո վերցրին Կարսը:

Շարունակելով ռազմական գործողությունները Բալկաններում՝ ռուսական զորքերը, բուլղարների ու սերբերի աջակցությամբ, 1878 թ. հունվարին գրավեցին Սոֆիան: Շուտով ողջ Բուլղարիայի տարածքը ազատագրվեց Թուրք կեղեքիչներից: Ռուսները հարձակում սկսեցին դեպի Ադրիանոպոլիս (Էդիրնե) և 1878 թ. հունվարի 20-ին տիրեցին այն, դրանով իրենց առջև բաց անելով ճանապարհ դեպի Ստամբուլ: Թուրքական մայրաքաղաքը մատնվեց խուճապի: Թուրքերը աղերսում էին մեծ պետություններին՝ միջամտել իրադարձություններին: Սակայն ապարդյուն: Ճիշտ է, Թուրքիայում ծավալվող իրադարձությունները լրջորեն մտահոգել էին անգլիացիներին, սակայն նախկինի պես բրիտանական կառավարությունը բաժանված էր «խաղաղության» կուսակցության և «պատերազմի» կուսակցության: Լորդ Բիքոնսֆիլդը լի էր վճռականությամբ ցանկացած գնով կանխել Ստամբուլի ռուսական ռազմակալումը: Արևմուտքից Թուրքական մայրաքաղաք էին լցվել հարյուր հազարավոր փախստականներ: Նրանցից հինգ հազար մարդ կուտակվել էին Այա Սոֆիա մզկիթի մոտ: Հազարավոր ցրտահարված և սովից մեռնող տղամարդիկ, կանայք ու երեխաներ ձյունների միջով հորդում էին դեպի մայրաքաղաք, փրկություն որոնելով առաջացող ռուսական բանակից: Սոֆթերը (ուսանողաստվածաբանները) սկսեցին հրահրել անկարգություններ: Անհանգստացած սուլթան Աբդուլ Համիդը բրիտանական դեսպանից խնդրեց քաղաքական ապաստան, եթե դրա անհրաժեշտությունը զգացվի: Աբդուլ Համիդը անձամբ հեռագրով դիմեց Անգլիայի Վիկտորիա թագուհուն, խնդրելով նրա միջնորդությունը զինադադար կնքելու հարցում: Նրա այդ դիմումը հանձնվեց ռուսական ցարին, որը սակայն ոչինչ չպատասխանեց, իր հերթին սուլթանի դիմումը ուղարկելով իր դաշտային հրամանատարներին:

Ռուսական գործող բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայը հրաժարվեց զինադադարի առաջարկը քննարկել առանց Թուրքերի կողմից մի քանի նախապայմանների ընդունման: Նա չարունակում էր բանակը չարժել դեպի Մարմարա ծովի ափին գտնվող Սան-Ստեֆանո գյուղը, որը Ստամբուլի քաղաքային պատերից գտնվում էր ընդամենը տասը մղոն հեռավորության վրա:

Այդ ընթացքում լորդ Բիքոնսֆիլդին հաջողվեց հաղթահարել բրիտանական կառավարության ընդդիմադիր մինիստրների դիմադրությունը և հրամայեց, որ բրիտանական նավատորմի հինգ ռազմանավեր մուտք գործեն Մարմարա ծով և բրիտանական հպատակների պաշտպանության պատրվակի տակ խարիսխ նետեն այնտեղ: Սակայն չնայած դրան, մեծ իշխան Նիկոլայը չարունակում էր իր առաջխաղացումը դեպի մայրաքաղաք: Լոնդոնի ֆոնդային բորսայում սկսվեց խուճապ: Բիքոնսֆիլդը պահանջեց խորհրդարանի համաձայնությունը կառավարությանը տրամադրելու վեց միլիոն ֆունտ ստերլինգ Մեծ Բրիտանիայի զինված ուժերը մարտական պատրաստության վիճակի բերելու համար: Միաժամանակ նա հրամայեց անհրաժեշտության դեպքում պատրաստ լինել անգլիական զորքերը Գալիպոլիում դեսանտ հանելու համար: Լոնդոնում հասարակական կարծիքը մշակվում էր Ղրիմի պատերազմի ժամանակների ոգով: Անգլիացիները անսքող կերպով հասկացնում էին ցարին, որ Ստամբուլը գրավելու դեպքում ինքը գործ կունենա բրիտանական ողջ հզորության հետ: Այդ սպառնալիքներն ազդեցին Սանկտ-Պետերբուրգի վրա և ցարը հրամայեց ձեռնպահ մնալ Թուրքական մայրաքաղաք մտնելուց: Միաժամանակ նա հեռագրով հաղորդեց սուլթանին, որ ինքը մտադրություն չունի անպայման գրավելու մայրաքաղաքը:

Այսպիսով, այս անգամ ևս ռուսներին վիճակված չէր իրականացնելու իրենց դարավոր երազանքը՝ գրավելու Ցարգրադը և Բոսֆորն ու Դարդանելը: Հերթական անգամ ռուսական երկգլխանի արծիվը ընկրկում էր բրիտանական առյուծի առջև: Վախենալով համաեվրոպական պատերազմի սպառնալիքից՝ ռուսական զորքերը Սան-Ստեֆանո (Եշիլքյոյ) վայրի գրավումից հետո այլևս առաջ չչարժեցին դեպի մայրաքաղաք: Սուլթանը ստիպված էր զինադադարի վերաբերյալ բանակցություններ սկսել ռուսական բանակի հրամանատարության հետ: Ռուս-Թուրքական պայմանագիրը ռազմական գործողությունները դադարեցնելու և զինադադար հաստատելու վերաբերյալ ստորագրվեց 1878 թ. հունվարի 31-ին Ադրիանոպոլսում: Իսկ 1878 թ. մարտի 3-ին Սան-Ստեֆանո ծովափնյա ավանի այն ամառանոցում,

որը պատկանում էր հայ մեծահարուստ Առաքել բեյ Դաղյանին՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց հաշտության պրելիմինար (նախնական) պայմանագիր, որով 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հասավ իր ավարտին: Ռուսական կողմից պայմանագիրը ստորագրեցին Կ. Պոլսում ռուսական դեսպան կոմս Իգնատիևը և ռուս զինվանագետ Նելիդովը, իսկ թուրքական կողմից մեծ վեզիր Սավֆեթ փաշան և արտաքին գործերի մինիստր Սաադուլլահ բեյը: Պայմանագիրը բաղկացած էր 29 հոդվածներից, որոնց մեծ մասը վերաբերում էր բալկանյան խնդիրներին:

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ստորագրելիս ռուսները պլանավորել էին Օսմանյան կայսրության եվրոպական մասի փաստացի մասնատում: Այդ պլանը նախատեսում էր բալկանյան երկու խոշոր սլավոնական պետությունների ստեղծում, որոնցից յուրաքանչյուրը պետք է լիներ կատարելապես անկախ: Դրանցից մեկը Զեռնոգորիան էր, որի տարածքը նախատեսված էր երեք անգամ մեծացնել իր հարևանների հաշվին: Մյուսը Սերբիան էր, որը նույնպես պետք է ընդարձակվեր և ստանար նոր սահմաններ: Այսպիսով, Սերբիան, Զեռնոգորիան և Ռումինիան ստանում էին կատարյալ անկախություն: Ի դեպ, թեև Ռումինիան ձեռք էր բերել բաղձալի անկախությունը, սակայն լինելով լատինական երկիր, այնուամենայնիվ չարժանացավ Ռուսաստանի հատուկ բարյացակամ վերաբերմունքին: Ավելին, թեև նա պատերազմի ժամանակ մեծապես աջակցել էր Ռուսաստանին, սակայն չնայած դրան, Հարավային Բեսարաբիան, որը ռումինացիները կորցրել էին 1856 թ. Փարիզի պայմանագրով, ռուսները չզիջեցին նրանց:

Բ. Դուռը պարտավորվում էր ինքնավարություն տալ Բոսնիային և Հերցեգովինային և այնտեղ անց կացնել մի շարք բարեփոխումներ: Այդ երկրամասերը պետք է օժտված լինեին կառավարման ինքնավար մարմիններով:

Պայմանագրի գլխավոր օգուտները բաժին հասան սլավոնական Բուլղարիային: Թեև այն հայտարարվում էր ինքնավար իշխանապետություն, սակայն նրա տարածքը այն աստիճանի ծավալվում ու ընդարձակվում էր, որ փաստորեն վերածնվում էր միջնադարյան բուլղարական թագավորությունը: Ըստ էության ռուսները ստեղծում էին «Մեծ Բուլղարիա»: Այդ պետությունը պետք է ծավալվեր Դանուբից հարավ՝ Սև ծովից մինչև Էգեյան ծով, հասնելով համարյա մինչև Ալբանիա: Այդ հսկայական տարածքի բոլոր նավահանգիստները վերահսկվելու էին բուլղարական այդ պետության կողմից:

Այսպիսով, թեև անվանական կերպով բուլղարական այդ իշխա-

նապետությունը գտնվելու էր սուլթանի ինքնիշխանության ներքո, սակայն այն կառավարելու էր Ռուսաստանի կողմից ընտրված իշխանը: Իսկ ամենակարևորը, վերջինս ունենալու էր ռուսիֆիկացված վարչություն: Ըստ էության Բուլղարիան դառնում էր ռուսական անկլավ Բալկանների կենտրոնում և հիանալի ցատկահենարան ցանկացած պահի Ստամբուլի վրա գրոհելու համար:

Ըստ Սան-Ստեֆանոյի պայմանագրի, Կրետե կղզում, Էպիրոսում և Թեսալիայում Թուրքիան պարտավորվում էր մտցնել հատուկ կարգավիճակ: Այնուհետև, Բ. Դուռը ներում էր պարգևում այն բոլոր օսմանահպատակներին, որոնք պատերազմի ժամանակ հանդես էին եկել Թուրքերի դեմ: Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին վճարել ռազմատուգանք: Ընդ որում, նկատի առնելով Օսմանյան կայսրության ֆինանսական դժվարությունները, Ստամբուլը համաձայնվում էր, որ ռազմատուգանքի գումարների մեծ մասի վճարումը փոխարինվի Ռուսաստանին հատկացվող տարածքային զիջումներով: Ըստ այնմ, Բալկաններում և Թուրքիայի արևելքում Ստամբուլը Ռուսաստանին էր զիջում մի շարք տարածքներ, այդ թվում նաև Արդահանը, Բայազեդը, Բաթումը և Կարսը:

Պայմանագրում չոչափվում էր նաև նեղուցների հարցը: Բոսֆորը և Դարդանելը բաց էին լինելու ռուսական նավահանգիստներից եկող և գնացող չեզոք երկրների նավերի համար:

Պայմանագրում նշվում էր, որ ռուսական զորքերի դուրս բերումը Ասիական Թուրքիայից կկատարվի վեց ամսվա ընթացքում: Ընդ որում, մինչև ռուսական բոլոր զորքերի վերջնական դուրս բերումը, այդ ամբողջ ժամանակամիջոցում Ասիական Թուրքիայի գրավված տարածքների կառավարման մեջ Բ. Դուռը չպետք է ունենար որևէ մասնակցություն:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը նվիրված էր Հայկական հարցին: Այնտեղ ասվում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձրագույն դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:

16-րդ հոդվածը էականորեն տարբերվում էր Եվրոպական Թուրքիայի երկրամասերին վերաբերող ձևակերպումներից: Այստեղ բառ անգամ չկար ոչ միայն ինքնավարության, այլև կոնկրետ անելիքների մասին:

Ըստ էության ռուսների համար 16-րդ հոդվածը մի կովան էր, որպեսզի ռուսական բանակը չհեռանա գրավված հայկական տարածքներից: Սակայն Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ստորագրած Իգնատևը փորձում էր համոզել հայերին, որ 16-րդ հոդվածով լիակատար բավարարություն է տրված հայ ժողովրդին: Նրա ասելով, այդ հոդվածը Եվրոպային ցույց կտա, որ Ռուսաստանը մտահոգ է ոչ թե բացառապես սլավոնների վիճակով, այլ առաջնորդվելով մարդասիրությամբ, նպատակ ունի ապահովել Օսմանյան կայսրության բովանդակ քրիստոնյա բնակչության բարեկեցությունը: Այնուհետև Իգնատևը նշում էր, որ հայերի համար չափազանց նշանակալի էր, որ Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում, առաջին անգամ, հայերի մասին հիշատակվեց միջազգային պայմանագրի մեջ, իսկ Բ. Դուռը հրապարակավ ճանաչեց հայ ազգի գոյությունը Ասիական Թուրքիայում: Իրականում 16-րդ հոդվածը Ռուսաստանին պետք էր նաև որպես պատրվակ, որպեսզի հետագայում նա կարողանա ցանկացած ժամանակ միջամտել Թուրքիայի ներքին գործերին:

Ռուսաստանի բոլոր ռազմական ու դիվանագիտական հաջողությունները հանդիպեցին եվրոպական տերությունների դիմադրությանը, որոնք վախենում էին Բալկաններում և Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումից: Այդ տեսակետից առանձնապես ակտիվ էին Անգլիան և Ավստրո-Հունգարիան: Լոնդոնում և Վիեննայում գտնում էին, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը կոպիտ կերպով խախտում է Բալկաններում գոյություն ունեցող ազգային ու կրոնական սկզբունքները և ոտնահարում այդ երկրամասում բնակվող ոչ սլավոնական ժողովուրդների ազգային շահերը: Լորդ Բիքոնսֆիլդը գտնում էր, որ թուրքական սուլթանը այսուհետև կառավարելու է մի պետություն, որը գտնվում է Ռուսաստանի բացարձակ ենթակայության տակ: Առհասարակ նա հենց սկզբից պնդում էր, որ Ռուսաստանը պետք է Եվրոպայի դատին ներկայացնի Թուրքիայի հետ կնքվող ցանկացած պայմանագրի պայմանները: Եվրոպական պետությունները վերահսկում էին 1856 և 1871 թվականների պայմանագրերը, որոնք չէին կարող վերափոխման ենթարկվել առանց իրենց համաձայնության:

Այսպիսով, եվրոպական պետությունները պահանջում էին թուր-

քական հարցը քննարկման ենթարկել համաեվրոպական վեհաժողովում, պատճառաբանելով, որ այն չոչափում է համաեվրոպական շահեր և բացի այդ, հակասում է մինչ այդ ստորագրված միջազգային պայմանագրերին: 16-րդ հոդվածի վերաբերյալ բրիտանական դիրքորոշումը հետևյալն էր. այդ հոդվածում նախատեսված բարեփոխումները պետք է երաշխավորվեն ոչ թե միայն Ռուսաստանի կողմից, այլ մի պարտավորությամբ, որ ստանձնելու են բոլոր մեծ տերությունները: Ռուսաստանը սկզբունքորեն համաձայն էր այն տեսակետի հետ, որ Թուրքիային վերաբերող հարցը քննարկման ենթարկվի եվրոպական համաժողովում, սակայն այն վերապահությամբ, որ ինքն է որոշելու, թե պայմանագրի որ հոդվածներն են դառնալու քննարկման առարկա: Մինչդեռ բրիտանական կառավարությունը կտրականապես հայտարարում էր, որ պետք է քննարկման ենթարկվի ողջ պայմանագիրը: Երբ Ռուսաստանը հրաժարվեց դրանից, լորդ Բիքոնսֆիլդը ցուցադրաբար հրաման տվեց անգլո-հնդկական զորքերին Սուեզի ջրանցքով մեկնելու Մալթա և այնտեղ սպասելու հետագա հրամանների: Դա պատերազմի սպառնալիք էր:

Ուժի ցուցադրման հետ միաժամանակ բրիտանական կառավարությունը հայտարարեց, որ ինքը «պատրաստ է օգտագործել իր ողջ ազդեցությունը, որպեսզի թույլ չտա սլավոնական պետության կողմից ցանկացած հունական բնակչության կլանումը»: Արդարություն հայցելու խնդրանքով Վիկտորիա թագուհուն դիմեցին Բալկանների մահմեդականները: Ալբանացիները ստեղծեցին «մինչև վերջ դիմադրելու» մի լիգա, իրենց հողերը ցանկացած ոտնձգությունից պաշտպանելու համար: Նման մթնոլորտի առկայության պայմաններում ռուսական ցարը փոխեց իր որոշումը: Ռուսաստանը համաձայնվեց Բեռլինում անցկացնել միջազգային վեհաժողով՝ Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի հետ կապված հարցերի քննարկման համար:

Շուտով Լոնդոնում Ռուսաստանի և Անգլիայի միջև սկսվեցին գաղտնի բանակցություններ, որոնց հետևանքով 1878 թ. մայիսի 18-ին (30-ին) Լոնդոնում ռուսական դեսպան Շուվալովի և Անգլիայի արտգործմինիստր Սոլսբերիի միջև ստորագրվեց գաղտնի համաձայնագիր Սան-Ստեֆանոյի պայմանագրում փոփոխություններ մտցնելու մասին: Այդ համաձայնագրի հիմնական կետերը վերաբերում էին Եվրոպական Թուրքիայի խնդիրներին և առաջին հերթին Բալկաններին:

Ինչ վերաբերում է Հայկական հարցին և առհասարակ Արևմտյան Հայաստանի խնդիրներին, ապա դրանք արծարծվեցին մասնավորապես համաձայնագրի 7-րդ հոդվածում, որտեղ ասվում էր, որ Սան-Ս-

տեփանոյի նախնական պայմանագրի մեջ Հայաստանի վերաբերյալ պարունակվող խոստումները պետք է տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից:

Գաղտնի համաձայնագրում Շուվալովը փոփոխության ենթարկեց նաև «Մեծ Բրիտանիայի» վերաբերյալ նախնական պլանները:

Համաձայնագրի 10-րդ կետում նշվում էր. քանի որ Ալաշկերտի հովիտը և Բայազեդ քաղաքը հանդիսանում են դեպի Պարսկաստան տանող տրանզիտային մեծ ճանապարհ և Թուրքերի աչքում ունեն հսկայական նշանակություն, ռուսական կայսրը համաձայն է նշված հովիտը և քաղաքը վերադարձնել Թուրքերին:

«Ռուսաստանի սահմանների ընդլայնման հետևանքով կարող է ծագել Ասիայում Թուրքական բնակչության անդորրությանն սպառնացող լուրջ վտանգ»,- նշվում էր համաձայնագրի հոդվածներից մեկում: Լոնդոնի կարծիքով Օսմանյան կայսրությանը այդ վտանգից պաշտպանելու պարտականությունը հատկապես ընկնում է Անգլիայի վրա, քանի որ նա առաքելություն ունի Եվրոպան հետագա պատերազմների աղետներից փրկելու գործում: Լոնդոնը Ռուսաստանից պահանջում էր նաև հավաստիացումներ տալ այն մասին, որ ապագայում Ռուսաստանի սահմանը չի ընդլայնվի Ասիական Թուրքիայի, այսինքն Արևմտյան Հայաստանի ուղղությամբ:

Լոնդոնը համաձայնագրի եզրափակիչ մասում նախազգուշացնում էր, որ իր առաջարկությունները չընդունելու և ընթացք չտալու դեպքում Անգլիան առաջիկայում գումարվելիք վեհաժողովում կարող է բարդություններ հարուցել Ռուսաստանի առջև:

Միանգամայն ակնհայտ է, որ անգլո-ռուսական այդ գաղտնի համաձայնագրի առկայության պայմաններում առաջիկա Բեռլինի վեհաժողովը միայն ձևակերպելու էր այդ համաձայնագրի արդյունքները:

Ի լրացումն Շուվալով-Սոլսբերի համաձայնագրի, բրիտանական դիվանագիտությունը լծվեց եռանդուն գործունեության Թուրքիայի հետ ևս պայմանագիր կնքելու ուղղությամբ: 1878 թ. հունիսի 4-ին վարչապետ լորդ Բիքոնսֆիլդը Ստամբուլում անգլիական դեսպան Հենրի Լայարդի միջոցով մի վերջնագիր ներկայացրեց սուլթան Աբդուլ Համիդին, որ եթե նա 48 ժամվա ընթացքում չհամաձայնվի Անգլիայի հետ կնքել պաշտպանողական դաշինք, ապա Թուրքիան կզրկվի Անգլիայի բարեկամությունից, որի անխուսափելի հետևանքը կդառնա ռուսների կողմից Կ. Պոլսի գրավումը և Օսմանյան կայսրության մասնատումն ու բաժանումը: Անգլիացիները նաև սքողված ձևով հասկացնում էին սուլթանին, որ մերժման դեպքում չի բացառվում բրիտանական նավատորմի

կողմից Կիպրոս կղզու գրավումը: Դաշինքը կնքվելու դեպքում Անգլիան իր վրա պարտավորություն էր վերցնում ռազմական ուժով թույլ չտալ, որ Ռուսաստանը Ասիական Թուրքիայում գրավի որևէ տարածք:

Երբ Աբդուլ Համիդը կարդաց անգլիական վերջնագիրը, նրա հանդուգն տոնը հունից հանեց սուլթանին: Նա կատաղությունից եղունգներն էր կրծոտում: Սակայն սառը վերլուծությունից հետո ընկրկեց:

1878 թ. հունիսի 4-ին Կ. Պոլսում ստորագրվեց «Պաշտպանողական դաշինք Անգլիայի և Թուրքիայի միջև»: Այն գաղտնի փաստաթուղթ էր: Պայմանագիրը բաղկացած էր ընդամենը երկու հոդվածներից: Առաջին հոդվածում ասվում էր. «Եթե Ռուսաստանը իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև երբևիցե փորձ անի տիրելու Ասիայում սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ սուլթանին՝ զենքի ուժով այդ երկրամասերը պաշտպանելու համար: Որպես փոխհատուցում, սուլթանը խոստանում է Անգլիային մտցնել անհրաժեշտ բարենորոգումներ, որոնք հետո պիտի մանրամասնաբար որոշվեն երկու պետությունների միջև և որոնք նպատակ ունեն Բ. Դռան քրիստոնյա և այլ հպատակների բարվոք կառավարումը և պաշտպանությունը խնդրի առարկա եղած երկրներում և որպեսզի Անգլիան իր պարտականությունը կատարելու համար հարկավոր եղած միջոցներն ապահովի սուլթանը հավանություն է տալիս նույնպես, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից»:

Այսպիսով, առանց որևէ կրակոցի Անգլիան ձեռք էր բերում Կիպրոսը: Այնուհետև նա իրավունք էր ստանում միջամտելու Օսմանյան կայսրության ասիական տիրույթների գործերին: Իսկ ամենակարևորը կրկնակի զսպման մեխանիզմ էր ստեղծում իր մրցակից ու ախոյան Ռուսաստանի դեմ: Արևմուտքում բրիտանական դիվանագիտության այդ մեծ հաջողությունը գնահատվեց որպես «բոլոր ժամանակների գլուխգործոց», իսկ լորդ Բիքոնսֆիլդին դասեցին «պատմության առասպելների չարքը»: Այսպիսով հեռահար ու ճկուն դիվանագիտական քայլերով Անգլիան նախապատրաստեց իր ապագա հաղթանակը Բեռլինի վեհաժողովում:

Բեռլինի վեհաժողովը բացվեց 1878 թ. հունիսի 1-ին: Նրա աշխատանքներին մասնակցում էին Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և Օսմանյան կայսրության պատվիրակությունները: 1815 թ. Վիեննայի կոնգրեսից ի

վեր Եվրոպան այդպիսի ներկայացուցչական և կարևոր դիվանագիտական ֆորում չէր տեսել: Վեհաժողովում նախագահում էր Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը: Որպես վեհաժողովի աշխատանքների եզրափակիչ փաստաթուղթ 1878 թ. հուլիսի 1-ին, ընդունվեց 64 հոդվածից բաղկացած «Բեռլինի պայմանագիրը» («տրակտատը»): Այն Սան-Ստեֆանոյի պայմանագրի համեմատ անբարենպաստ էր Ռուսաստանի համար: Բեռլինի տրակտատը հաստատեց Ռումինիայի, Սերբիայի և Ջեռնոգորիայի անկախությունը: Վերջինիս տարածքը, սակայն, Սան-Ստեֆանոյի պայմանագրի համեմատ զգալիորեն կրճատվեց: Ավստրո-Հունգարիան իրավունք ստացավ ռազմակալման ենթարկելու Բոսնիան և Հերցեգովինան: Ռուսները ստիպված էին հրաժարվել «Մեծ Բուլղարիա» ստեղծելու պլանից: Բուլղարիան մասնատվեց երկու մասի. Հյուսիսային Բուլղարիան ճանաչվեց որպես ինքնավարություն՝ սուլթանի ինքնիշխանության ներքո: Երկիրը կառավարող իշխանի ընտրությունը պետք է հաստատվեր ոչ միայն Ռուսաստանի կողմից (ինչպես նախատեսված էր Սան-Ստեֆանոյի պայմանագրով), այլ նաև Բ. Դռան կողմից՝ վեհաժողովի մասնակից պետությունների պարտադիր համաձայնությամբ: Իսկ Հարավային Բուլղարիան, որը ստացավ Արևելյան Ռումելիա անունը, վերստին դրվեց սուլթանի իշխանության տակ, պայմանով, որ կառավարվի քրիստոնյաներից ընտրված գեներալ նահանգապետի կողմից: Այդպիսով, վերացվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի կարևորագույն ձեռքբերումը և խիստ թուլացավ Ռուսաստանի ազդեցությունը Բալկաններում: Հանրագումարի բերելով այդ բոլորը, Բիսմարկը արձանագրեց. «Եվրոպայում դարձյալ կա Թուրքիա»:

Բեռլինում անգլիացիների միջնորդությամբ Հունաստանի սահմանները որոշ չափով ընդարձակվեցին: Սակայն Կրետե կղզին, որը հույները ցանկանում էին միացնել իրենց պետությանը, մնաց Թուրքիայի իշխանության ներքո: Կառավարման ոչ մի նոր համակարգ չնախատեսվեց Եվրոպայում Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող այնպիսի երկրամասերի նկատմամբ, ինչպիսիք էին Մակեդոնիան, Թրակիան, Ալբանիան և Էպիրոսի մեծ մասը:

Ռուսաստանի ասիական ձեռքբերումներից նրան մնացին Բաթումը, Արդահանը և Կարսը: Հայկական հարցի վերաբերյալ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով, որտեղ ասվում էր. «Բարձրագույն դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավում-

ներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բ. Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»: Սակայն այդ հոդվածը, եթե նույնիսկ այն կյանքի կոչվեր օսմանյան կառավարության կողմից, ի վիճակի չէր արևմտահայության համար ստեղծել անվտանգության երաշխիքներ: Այդ առթիվ Գերմանիայի կայզեր Վիլհելմ II-ը դիպուկ կերպով նշել է. «Բեռլինի կոնգրեսը բացարձակապես չի առաջարկում քրիստոնյաների պաշտպանության որևէ մեխանիզմ և արգելք չի հանդիսանում այն բանի համար, որ Թուրքերը չարունակեն կտրել նրանց գլուխները»:

Ընդհանուր առմամբ Բեռլինի վեհաժողովը հանդիսացավ Ռուսաստանի հակառակորդների հաղթանակը: Իր դիրքերն առանձնապես ամրապնդեց Անգլիան, որը, զավթելով Կիպրոսը, իր վերահսկողության տակ դրեց սուլթանի ասիական միջերկրածովյան տիրույթները:

Կասկածից վեր է, որ Բեռլինի պայմանագիրը օգնեց խուսափել համաեվրոպական մեծ պատերազմից՝ դիվանագիտության օգնությամբ: Այդ պայմանագիրը միաժամանակ զորեղ պատնեշ էր ստեղծում բալկաններում ռուսական իմպերիալիզմի քաղաքական հավակնությունների առջև: Պայմանագրի շնորհիվ վերջին պահին Օսմանյան կայսրության եվրոպական մասը փրկվում էր անխուսափելի կորստից:

Բեռլինի վեհաժողովից հետո բալկաններում սկսեց վերելք ապրել բալկանյան ժողովուրդների ազգայնականությունը: Հենց դա նկատի ունենալով լորդ Բիքոնսֆիլդը մարգարեանում էր, թե նոր Բուլղարիան ավելի չուտ կդառնա Թուրքիայի պատվարը ընդդեմ Ռուսաստանի, քան Ռուսաստանինը ընդդեմ Թուրքիայի: Այդ առթիվ իր հերթին Բիսմարկն արել է հետևյալ ուշագրավ դիտումը. «Այդ բոլոր ժողովուրդները ուրախությամբ ընդունեցին Ռուսաստանի օգնությունը Թուրքերից ազատագրվելու գործում, բայց հենց որ նրանք ձեռք բերեցին այդ բաղձալի ազատությունը, այլևս ցանկություն չդրսևորեցին ցարին ընդունելու որպես սուլթանի ժառանգորդ»:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական հետադիմությունը սուլթան Աբդուլ Համիդ II-ի գլխավորությամբ ամեն ինչ արեցին ազատական սահմանադրական շարժման վերացման համար: 1881 թ. մայիսին սուլթանի հրամանով Միդհատ փաշան կրկին ձերբակալվեց: Նրան ներկայացվեց չինծու մեղադրանք սուլթան Աբդուլ Ազիզի սպանության կազմակերպման մեջ: Նրան մեղադրեցին նաև օսմանյան պետության դեմ քայքայիչ գոր-

ծունեություն ծավալելու և իշխանությունը հափշտակելու ձգտման մեջ: Միդհատ փաշային սկսեցին կտտանքների ենթարկել և դատապարտեցին մահվան: Սակայն այդ վճիռը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ Արաբական թերակղզու Թաիֆի ամրոցում: 1881 թ. հուլիսին նրան ուղարկեցին իր բանտարկության վայրը: 1884 թ. մայիսի 7-ին սուլթան Աբդուլ Համիդի հրամանով բանտում, գիշերով, Միդհատ փաշան խեղդամահ արվեց:

Թուրքիայում սահմանադրական շարժման առաջնորդներից մեկի հետ ֆիզիկական հաշվեհարդարը հանդիսանում էր լոկ երկրում սկսվող բռնապետական վարչակարգի՝ «զուլյումի» շրջանի դրվագներից մեկը: Դա նաև օսմանյան ֆեոդալական բացարձակապետության մեջ սկիզբ առնող հոգևարքի դրսևորումներից մեկն էր, մի պետության, որը փորձում էր լրտեսության, մատնության և մահապատիժների միջոցով խեղդել երկրում ցանկացած ազատ միտք և ընդդիմության ցանկացած ծիլ: Հիրավի, օսմանյան լայնածավալ կայսրության ժողովուրդների համար սկսվում էին մռայլ ժամանակներ: «Նոր օսմանները», որոնք փորձում էին կայսրությանը նոր շունչ հաղորդելու միջոցով ինչ-որ չափով կասեցնել նրա աստիճանական անկումը, սուլթանի բացարձակ բռնատիրական իշխանության պայմաններում դադարեցին գոյություն ունենալուց, ցրիվ գալով հալածանքների ու հետապնդումների հետևանքով:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ ԲՌՆԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը (1876-1909) պատմության մեջ է մտել «արյունարբու», «կարմիր սուլթան» մակդիրներով, իսկ նրա կառավարման շրջանը հենց թուրք պատմաբանների կողմից բնորոշվել է որպես «զուլումի» (թուրքերեն՝ zulüm - բռնապետություն, բռնակալություն, արհավիրք) դարաշրջան: Նա եղել է օսմանյան դինաստիայի ամենադաժան ու անմարդկային սուլթաններից մեկը: Նրա օրոք է սկիզբ առել հայ ժողովրդի արյունոտ գողգոթան: Սուլթան Աբդուլ Համիդը առաջինն էր, որը ձեռնամուխ եղավ Հայկական հարցի «լուծմանը» հայ ժողովրդին զանգվածորեն բնաջնջելու ճանապարհով:

Յոթ տարեկան հասակում նա կորցրել էր իր սիրեցյալ մորը, որը խորը ցնցում էր պատճառել նրան՝ անջնջելի հետք թողնելով նրա ողջ հետագա կյանքի վրա: Նրա մասին ասում էին, որ «նա երբեք ոչ ոքի չէր սիրել»:

Դեռ մանկության տարիներից Աբդուլ Համիդը եղել է ինքնամփոփ, լռակյաց, եսասեր, նենգ, խուսափել է տարեկիցների հասարակությունից, ապրել իր ներքին աշխարհով, միշտ քաշված ինքն իր մեջ: Նա խուսափել է իր քույր-եղբայրների ընկերակցությունից, չի մասնակցել նրանց խաղերին, մնալով մենակյաց ու սակավախոս: Իր մարդատյաց բնավորության պատճառով նույնիսկ իր հարազատները անտարբեր էին իր հանդեպ: Նույնիսկ իր հարազատ հայրը՝ սուլթան Աբդուլ Մեջիդը արհամարհանք է ունեցել նրա նկատմամբ: Պատմվում է, որ Աբդուլ Համիդի ծննդյան կապակցությամբ հայրը կանխագուշակել է, որ «եթե մի օր այդ լակոտը գահ բարձրանա, կայսրության համար կդառնա մեծ պատուհաս»: Ապագա սուլթանը ոչ ոքի չէր սիրում և ոչ ոքից սիրված չէր: Նա օժտված էր բնածին չարությամբ ու վրեժխնդրության հակումներով: Նրա նկարագրի գլխավոր գծերն էին նաև չահամոլությունը, ագահությունը, ծայրահեղ կասկածամտությունը և խորամանկությունը: Նա չահել էր «ձեռքի

տակից գործող» վատ արարածի համբավ: Վարպետ էր ճիվաղային հնարքներ սարքելու և լրտեսելու: Այս մոլությունները ավելի կատարելագործված ձևով նա գործի է դրել իր գահակալության ամբողջ շրջանում:

Հունգարացի արևելագետ Ա. Վամբերին, որը սերտ անձնական շփումներ է ունեցել Աբդուլ Համիդ II-ի հետ, գրում էր, որ իր կյանքում երբեք չի հանդիպել հակասական բնավորության տեր մեկ այլ մարդու, ինչպես Աբդուլ Համիդն էր: «Նրա անձի մեջ,- ասում է Ա. Վամբերին,- միահյուսվում էին առաքինության ու դավաճանության, բանականության ու ոչնչության, վախկոտության ու համարձակության, մոլեռանդության ու խորամանկության գծերը: Սակայն վերջին հաշվով նրա մեջ միշտ գերակայում էին բացասական գծերը»:

Աբդուլ Համիդ II-ին բնորոշ է եղել նաև փարիսեցիությունը: Լինելով անհավատ՝ նա արտաքուստ կանոնավոր կերպով կատարում էր Ղուրանի բոլոր պատվիրանները: Իր նպատակին հասնելու համար նա ոչնչի առջև կանգ չէր առնում: Միակ բանը, որի նկատմամբ նա հարգանքով էր վերաբերում դա ուժն էր:

Գահը ստանձնելուց անմիջապես հետո Աբդուլ Համիդը հրաժարվեց իր հոր կառուցած Դոլմաբախչե շքեղ պալատից, գերադասելով ապրել Բոսֆորի ափերին կառուցված Յելդըզ (բառացի՝ աստղային) կոչված պալատում, որը նա փաստորեն վեր էր ածել ամրոցի: Սովորաբար սուլթանի թուրք կենսագիրները դա բացատրում են սուլթանի «բնատուր համեստությամբ»: Սակայն իրականում դրա պատճառը այն էր, որ նա իրեն ավելի ապահով էր զգում Յելդըզի բարձր պարիսպների հետևում: Աբդուլ Համիդին մշտապես հետապնդել է վախի, իռացիոնալ վախի զգացումը: Թուրք պատմաբան Զիյա Շաքիրը իր՝ «Սուլթան Համիդ» գրքում բերում է հետևյալ բնորոշ փաստը. Համիդը վախենում էր նույնիսկ իր պալատի մեծ պարտեզի բազմապիսի ու անուշահամ պտուղները վայելել՝ կասկածելով, որ դրանք թունավորված կլինեն: Մի անգամ էլ Փարիզից իրեն հավատարիմ Թուրհան բեյն ուղարկում է երեք արկղ միրգ (խնձոր, տանձ ու դեղձ), բայց սուլթանը չի համարձակվում ուտել և, կանչելով իր բժիշկ Իբրահիմ փաշային, ասում է. «Սրանք Եվրոպայից են ինձ ուղարկել, բայց ես եվրոպական պտուղները բոլորովին չեմ սիրում»: Այնուհետև նա հարցնում է բժշկին, թե կարո՞ղ է արդյոք, որ մրգերը թունավորված լինեն: Սուլթանը արկղները տալիս է փաշային ասելով, որ դրանք նվիրում եմ քեզ, ուզում ես դեն նետիր, ուզում ես կեր, բայց եթե որևէ բան պատահի, ես պատասխանատու չեմ: Երբ սուլթանը տեղեկանում է, որ բժիշկը արկղները տուն է տարել և պտուղները վայելել

իր ողջ ընտանիքով, դառնորեն բացականչել է. «ինչ բախտավոր մարդիկ եք, որ առանց մտահոգվելու ամեն ինչ ուտում ու խմում եք և լայնորեն օգտվում կյանքի բարիքներից»:

Աբդուլ Համիդը մշտապես կրում էր լիցքավորված ատրճանակ և նույնիսկ մի անգամ զբոսանքի ժամանակ թփուտների մեջ տեսնելով մեկին՝ կարծել է, թե ահաբեկիչ է և կրակելով սպանել է նրան: Սակայն պարզվել է, որ այդ թշվառը եղել է իր այգեպանը: Սուլթանի հագուստները բազմաթիվ գրպաններ ունեին, որոնց մեջ կրում էր տարբեր զենքեր: Սուլթանը չէր սիրում մութը, որից վախենում էր: Գիշերները իր պալատի բոլոր սենյակները մնում էին լուսավորված: Պալատի բոլոր կողմերում դրված էին լուսարձակներ: Նա ապրում էր տևական սարսափի զգացում:

Սուլթանական գահը ստանձնելուց հետո Աբդուլ Համիդի առաջին նյարդային ցնցումը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ «Նոր օսմանների» առաջնորդ Ալի Սուավին գաղտնի վերադառնալով աքսորից՝ Ստամբուլում կազմակերպեց դավադրություն, որի նպատակն էր գահընկեց անել նորանշանակ սուլթանին և նրա փոխարեն բանտարկությունից ազատելով կրկին գահ բարձրացնել նրա եղբորը՝ Մուրադ V-ին: 1878 թ. մայիսի 20-ին զինված կողմնակիցների մի խոշոր ջոկատով Ալի Սուավին ներխուժում է Բոսֆորի ափին գտնվող Զերաղան պալատը, որտեղ պահվում էր Մուրադը և նրա մոր հետ միասին սկսում է խնդրել նրան, մեջքին կապել սուրը և հետևել իրեն: Սակայն սարսափահար նախկին գահակալը հրաժարվում է առաջարկից և որպեսզի իրեն բռնությամբ չտանեն, վազում է դեպի հարեմի շենքը: Այդ փոքր դադարը բավական էր, որ հայտնվեր սուլթանական պալատի պահակախումբը: Նրա հրամանատար Եղի-սեկիզ Հասան փաշան մի հարվածով Ալի Սուավիին տապալում է գետին և մահակի հարվածով սպանում նրան: Այնուհետև սկսվում է դատաստանը խռովության մյուս մասնակիցների հետ. աչքի ընկնող դեմքերին սպանում են, իսկ մնացածներին ռազմա-դաշտային դատարանը դատապարտում է տաժանակիր աշխատանքների կամ աքսորի: Խռովության ձախողումից հետո Մուրադին տեղափոխում են Յելտրզի պալատի տխրահռչակ «Մալթա» բանտանման բաժանմունքը ոստիկանության աչալուրջ հսկողության ներքո իր բանտարկության օրերը անց կացնելու համար: Այդ շինությունը Մուրադի համար բանտ ծառայեց մինչև իր կյանքի վերջին օրը:

Մուրադի կենդանի մնալը՝ նույնիսկ իբր խելագար՝ եղել է սուլթան Աբդուլ Համիդի ամենամեծ մղձավանջներից մեկը: Նա մտադ-

րություն է ունեցել նրան վերացնել «օրինական ճանապարհով», շեյխ-ու-իսլամի ֆեթվայով: Քանի որ վերջինս իր մարդն էր, կազմում է ֆեթվա, որտեղ ասվում էր. «երկու սուլթան չեն կարող գոյություն ունենալ, քանի որ շարիաթը չի ընդունում նման բան, ուստի նրանցից մեկը պետք է սպանվի»: Սակայն այդ ոճիրը գլուխ չի գալիս այն պատճառով, որ երկու բարձրաստիճան անձինք հրաժարվում են ի-րենց ստորագրությունը դնել ֆեթվայի տակ:

Համիդը նույնիսկ ուլեմաների ժողովում ամբաստանում է Մուրադին, որ նա իբր գաղտնի շփումներ է ունեցել Ստամբուլում ռուսական դեսպան Իգնատևի հետ, դավաճանելով հայրենիքին և պահանջում է իրականացնել հետաքննություն և կախաղանի պատիժ: Սակայն ու-լեմաների ժողովը որոշում է, որ այդ ամբաստանությունը փաստերով չի ապացուցվում: Այդ հարցում երկու ուլեմներ՝ Նուրի էֆենդին և Սահիբ էֆենդին դրսևորում են խիզախ վարքագիծ:

Վարկած կա այն մասին, որ իր մտահղացած ոճիրը իրագործելուց Աբդուլ Համիդին հետ է պահում իր սնոտիապաշտ լինելը. աստղա-գուշակները նրան զգուշացրել էին, որ եթե նման արարք գործի՝ «իր օրերը հաշվված են»:

Սակայն մինչև իր եղբոր մահը, Աբդուլ Համիդը գիշեր-ցերեկ որո-ճում էր, թե ինչպես կարելի է ոչնչացնել նրան: Նա չի խորշում նաև դիմելու սուլթանին ոչ վայել հետևյալ արգահատելի քայլին. պահան-ջում է կազմել մի հանձնաժողով՝ քննելու համար Մուրադի թագավո-րության կարճատև շրջանի պետական հաշիվները: Միաժամանակ նա իր դրածոներից մեկին հանձնարարում է հրատարակել մի գրքույկ և սուտ փաստերով ամբաստանել, որ Մուրադը գողացել է ազգային միջոցները, գնել է մեծարժեք զարդեղեն: Այդ ամբաստանության շնորհիվ կառավարությունը բռնագրավում է Մուրադի անձնական կալվածքները և ընտանեկան զարդեղենը:

Աբդուլ Համիդը մինչև սուլթան հռչակվելը Միդհատ փաշային տվել էր մի պարտավորագիր, որով հանձն էր առնում իր եղբոր ա-պաքինման դեպքում գահը հանձնել նրան: Բնականաբար, նա ցան-կանալու էր, որ այդ վտանգավոր փաստաթուղթը ոչնչացվի: Ուստի իր մարդկանց հրամայում է հրդեհել Միդհատ փաշայի ապարանքը, կարծելով, թե այդ փաստաթուղթը գտնվում է այնտեղ: Մինչդեռ Միդհատ փաշան այն պահում էր Լոնդոնում մի ապահով տեղ:

Ալի Սուավիի կողմից պետական հեղաշրջման անհաջող փորձը, ո-րը արքունիքի պնակալեզների կողմից սուլթանին ներկայացվեց որ-պես լայնամասշտաբ դավադրություն, այն աստիճանի ցնցող ազդե-

ցություն էր ունեցել Աբդուլ Համիդի վրա, որ երբ բրիտանական դեսպան Հենրի Լայարդը խնդրեց սուլթանի հետ հանդիպում, վերջինս վախից ընկավ համարյա անմեղսունակ վիճակի մեջ, ենթադրելով, որ բրիտանական ռազմանավով իրեն տանելու են բաց ծով և այնտեղ վերջ տան իր կյանքին, որպեսզի Մուրադը կրկին գահ բարձրանա: Իր հուշերում անգլիական դեսպանը գրում է, որ երբ ինքը մտավ պալատ սուլթանի հետ հանդիպելու, նրան տեսավ հսկայական դահլիճի անկյունում, սարսարփով լի հայացքով, շրջապատված զինված թիկնապահներով: Մուրադին գահ բարձրացնելու համար եղավ ևս մեկ փորձ 1876 թ. հուլիսի 8-ին, այս անգամ «Ազատ որմնադիրներ» մասոնական օթյակներից մեկի գլխավոր Քլեանթի Սքալիերիի կողմից, սակայն այդ փորձը ևս ավարտվեց ձախողմամբ:

Հենց այդ ժամանակվանից սկսած կասկածամտությունն ու վախը ընդմիշտ ուղեկցեցին սուլթանին: Նա Յելտըզի իր պալատը վերածեց ամրոցի: Նրա ալբանական թիկնազորի թիվը հասցվեց մի քանի հազար մարդու: Պարիսպների վրա ստեղծվեցին դիտակետեր, որտեղ տեղադրվեցին ուժեղ հեռադիտակներ, որպեսզի հսկողության տակ վերցվի Բոսֆորի ու Ոսկեղջյուրի ողջ հարակից տարածքը: Սուլթանը բացառիկ դեպքերում էր համարձակվում դուրս գալ Յելտըզի պատերից: Որպեսզի աղոթքի համար կարիք չունենա մեկնելու քաղաք, նա հրամայեց պալատի դարպասների մոտ կառուցել մզկիթ, որտեղ ուրբաթ օրերին աղոթում էր:

Ալի Սուավիի խռովությունը պատրվակ դարձավ սուլթանի համար ուժեղացնելու պայքարը իր ներքին թշնամիների՝ «նոր օսմանների» և սուլթանական գահի բոլոր հնարավոր հավակնորդների դեմ: Աբդուլ Համիդ II-ի դուստր Այիշա Օսմանօղլուն իր հուշագրություններում նշում է, որ «Ալի Սուավիի ապստամբությունից սուլթանը քաղեց կարևոր դասեր իր հետագա գործունեության համար»:

Գունատ, լռակյաց ու մելամաղձոտ, չարագույժ ու ծակող հայացքով այդ բռնակալը կասկածում էր անխտիր բոլորին, ով շրջապատում էր իրեն: Ում հետ որ չփվում էր, բոլորից սպասում էր ինչ որ վտանգ: Նա բնածին անվստահությամբ էր լցված բոլոր մարդկանց նկատմամբ:

Աբդուլ Համիդի նախկին քարտուղար Մուստաֆա Նեդիմը, որին հետագայում սուլթանը դատապարտեց երկարատև աքսորի, տվել է օսմանցիների միապետի հետևյալ բնութագիրը. «Սուլթան Համիդը կարճահասակ, նիհարակազմ, հաստ ձայնով, նապաստակի պես երկչոտ է», «սադայելական խելքով», բայց և «տգետ էր, կասկածոտ վե-

ին աստիճանի», պահում է «հազարավոր լրտեսներ, չատակեր էր և կատարելապես չէր կշտանար, շատ հարուստ էր, կը ստանար ամսական հիսուն հազար ոսկի, անձնական գանձուն կապած էր Թուրքիոմոտ մեկ չորրորդը, այսուհանդերձ կաշառք ալ կառներ: Իգամոլ էր, անհաշիվ էր թիվը մասնավոր հարճերուն»: Այնուհետև խոսելով սուլթանի ու նրա շրջապատի մարդկանց «աղեխարշ ոճիրների» մասին հայերի ու մյուս ժողովուրդների նկատմամբ, Մուստաֆա Նեղիմը ասում է. «Եթե գրի առնենք իմ տեսածներս և իմացած բոլոր դեպքերս, քանի մը հազար էջանոց գիրք մը մեջտեղ կուգար: Աստծո անեծքը թող վրան ըլլայ անզգամներուն»:

Աբդուլ Համիդը թուրքական բռնակալության ծնունդ էր և ինքն էլ «զուլումի» մարմնացում: Բռնատիրական վարչակարգի ոգին դա լրտեսությունն էր: Համարվում էր, որ նա, ով չի զբաղվում լրտեսությամբ, չի կարող հայրենասեր համարվել: Սուլթանը իրեն շրջապատել էր լրտեսների, գործակալ-սադրիչների, գաղտնի ոստիկանության ու իրազեկիչների հսկա բանակով, որոնք ամեն օր նրան հաղորդում էին բազմապիսի տեղեկություններ: Միայն սուլթանական պալատում Աբդուլ Համիդը պահում էր երեք հազար լրտես: Ամբողջ երկրով մեկ ցրված լրտեսների թիվը անցնում էր 43 հազարից: Գերմանացի լրագրող Բ. Շտերնը գրում էր. «Այդ մարդկանց պարտականությունն է հսկել մինիստրների, զինվորականների, շեյխերի, սոֆթաների, մասնավոր անձանց ու օտարազգիների վրա, մեքենայություններ հնարել, մեկը մյուսի դեմ գինել...»: Միդհատ փաշան ասել է, որ Աբդուլ Համիդի ժամանակաշրջանի Թուրքիան «դա առավելապես լրտեսների երկիր էր»: Լրտեսությամբ էին զբաղվում և՛ պալատի իշխանազունները և՛ բազարի համբալները: Վտանգավորը այն էր, որ մատնիչին պատասխանատվության չէին ենթարկում, եթե նրա մատնությունը («ջուռնալ») չէր հաստատվում կամ պարզապես հնարովի մի բան էր: Այդպիսի կեղծ մատնությունների պատճառով հազարավոր մարդիկ փտում էին բանտերում և մեռնում աքսորավայրերում: Ուստի փոխադարձ անվստահությունը հասել էր ահավոր չափերի:

Բացի հաստիքային լրտեսներից, ողջ կայսրությունով մեկ գոյություն ուներ կամավոր լրտեսների մի ամբողջ բանակ: Այդպիսով լրտեսությունը և մատնությունները («ջուռնալջիլիք») վեր էին ածվել յուրահատուկ տեսակի պետական ծառայության, որն ապահովում էր «փայլուն» ծառայողական առաջընթաց, բայց և որը հասարակության բոլոր խավերին վարակում էր անբուժելի, սարսափելի խոցով, ապականելով ազնվության, բարոյականության, օրինականության

ու արդարության վերաբերյալ ամեն մի հասկացողություն: Լինում էին դեպքեր, երբ եղբայրը մատնում էր եղբորը և դրա համար ստանում պատկառելի գումար: Ծառան մատնում էր տիրոջը, որդին հորը, տերը ծախում էր իր ծառաներին, իսկ հայրը՝ որդիներին: Սուլթանը լրտեսների գործունեությունը հսկում էր անձամբ: Լրտեսների վրա լրտեսներ էին նշանակվում: Լրտեսների ցանցը սարդոստայնի նման իր մեջ էր առել ամբողջ կայսրությունը: Եթե Թուրքիայում կար մի պաշտոն, որի համար պետությունը վճարում էր կանոնավոր ու ժամանակին, դա լրտեսությունն էր: Լրտեսի աշխատանքը թեև ծանր չէր, բայց ստորացուցիչ էր, այդ պատճառով էլ այն գնահատվում էր բավականին բարձր:

Անգլիացի է. Նայտը բերում է մի Թուրքի հետ ունեցած հետևյալ զրույցը. Աբդուլ Համիդի ժամանակ «Թուրքիայում թողնվել էր լոկ մեկ իդեալ, միայն մեկ ելք մարդկային ձգտումների համար. հարստության կուտակումը և նրա օգտագործումը կոպիտ զգայական հաճույքների համար: Սակայն այդ հարստությունը ձեռք բերելու համար պետք է քեզ հայտարարես պալատի լրտես և քո նվիրվածության ապացույցներ տալու համար պետք է հրաժարվես հորից, մորից, եղբայրներից, բարեկամներից, համոզմունքներից, խղճից, հայրենասիրական զգացումներից և մարդասիրությունից»:

«Օրենքի պահապան» հորջորջված ոստիկանները հենց իրենք էին օրենքի ամենամեծ խախտողները: Քանի որ նրանք կանոնավոր կերպով ոռճիկ չէին ստանում, իրենց կյանքի պայմաններն ապահովում էին ստորության ճանապարհով: Որպես կանոն, նրանք կապված էին գողերի, ավազակների և տարբեր տիպի հանցագործների հետ, որոնց օգնելու համար բաժին էին ստանում:

Բանը հասել էր նրան, որ սկսել էին խոսել, որ Ստամբուլի բնակչության կեսը զբաղված է նրանով, որ լրտեսում է մյուս կեսին: Ոչ ոք ապահովված չէր լրտեսներից ու մատնիչներից: Տոտալ ձևով հետևում էին բոլորին: Պարբերաբար կասկածի տակ էին ընկնում անգամ մեծ վեզիրը, շեյխ-ուլ-իսլամը, մինիստրները: Կասկածի տակ ընկածներին միշտ չէ, որ հաջողվում էր արդարանալ: Աբդուլ Համիդի հիվանդագին կասկածամտությունն անվստահության ու թշնամության մթնոլորտ էր ստեղծում անգամ պալատականների և սուլթանի ամենամերձավոր մարդկանց շրջանում:

Թուրք գրող Հալիթ Զիյա Ուշաքլըգիլը (1866-1915) տալիս է արյունոտ սուլթանի դարաշրջանի հետևյալ բնութագիրը. «Երկիրը՝ սկսած նահանգներից մինչև գավառները, ուտում էին որդերը ներսից և դրսից:

Երկրի ամբողջ հարստությունը կառավարությունն ուղարկում էր արքունիքի անկուշտ երախը: Դավաճաններից հավաքագրում էին ծառաներ, գողերից՝ մինիստրներ, անպիտաններին ու սրիկաներին չնորհում էին բարձր աստիճաններ, չքանչաններ կպցնում համազգեստներին այն մարդկանց, որոնք ոչինչ չունեին բացի կեղտից... Եվ այդ բոլոր աստիճանների, չքանչանների, եկամուտների հետևում գտնվում էր տանջահար, ճնշված ժողովուրդը»: Մեկ այլ առիթով նա գրում էր. «Ստամբուլի մութ փողոցները քարացել էին վախից: Լրտեսներ, լրտեսներ... Բոլորը վախենում էին մեկը մյուսից. մայրերը որդիներից, ամուսինները՝ իրենց կանանցից: Գաղտնի ոստիկանության ղեկավարներից չատերին արդեն գիտեին և նրանց միայն ստվերի հայտնվելու դեպքում բոլորի գլուխները սուզվում էին ուսերի մեջ և բոլորը աշխատում էին ինչ-որ տեղ թաքնվել»:

Աբդուլ Համիդը բոլոր պետական գործերը պահում էր իր հիվանդագին հսկողության տակ: Նա անխոնջ կերպով աշխատում էր առավոտից մինչև ուշ երեկո: Նա ինքն էր վարում իր ողջ գրագրությունը: Ամեն մի հարց նրան հետաքրքրում էր թեկուզ աննշան մանրամասներով: Նա անձամբ վերահսկում էր նույնիսկ առևտրական հաշվետվությունները: Անձամբ ընդունում էր բոլոր նրանց, ում հետ պահպանում էր գործարար հարաբերություններ: Սուլթանը միատեսակ անվստահությամբ էր վերաբերվում բոլոր օտարերկրյա պետություններին և նրանց քաղաքականության նկատմամբ: Սակայն նրանց հետ հարաբերություններում աշխատում էր խուսափել բարդություններից: Բոլոր հարցերում, դրանք լինեին մեծ թե փոքր, նա աշխատում էր պնդել իրենը, համարելով, որ ժամանակից շուտ զիջման գնալը կարող է «բացել օտարերկրյա պետությունների ախորժակը», որոնք անմիջապես կպահանջեին նոր զիջումներ: Ուստի սուլթանը զիջման էր գնում ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Նա ձգձգումների և թուրքական «յավաշ-յավաշ» ավանդական քաղաքականության իրականացման մեծ վարպետ էր: Դիվանագիտական բանակցությունների ժամանակ դրսևորում էր բացառիկ ճկունություն: Նա կարողանում էր քննարկվող հարցը տանել այնպիսի ուղղությամբ, որն իրեն ձեռնտու էր: Օժտված լինելով բնատուր խորաթափանցությամբ և դիվանագիտական ընդունակություններով՝ նա կարողանում էր իր օգտին շրջել ցանկացած բարենպաստ պահ:

Աբդուլ Համիդի մոտ ամեն ինչ հաշվարկված էր: Պատմվում է, որ նա ջուր էր խմում միայն մեկ աղբյուրից, որը ըստ գուշակի հայտարարության, գերծ էր խոլերայի կամ ժանտախտի վարակի վտանգից:

Զվստահելով իր մինիստրներից ու աստիճանավորներից ոչ մեկին և նրանց բոլորին համարելով կեղծավորներ, երեսպաշտներ, հացկատակներ ու մակաբույծներ՝ Աբդուլ Համիդը նրանց բոլորին լարում էր իրար դեմ և դրանից քաղում օգուտներ: Ողջ իշխանությունը կենտրոնացնելով իր ձեռքերում, նա իր հրամաններն ու կարգադրություններն անում էր անձամբ և ուղղակի կերպով, իր անձնական քարտուղարների միջոցով: Այդ հրամաններն ու դիրեկտիվները հաճախ հակասում էին մեծ վեզիրին տրված ցուցումներին, որի հետևանքով վերջինիս ավանդական ստատուսը նվազում էր, քանի որ նա այլևս չէր գտնվում կապող օղակի դերում սուլթանի ու նախարարների միջև, ինչպես նախկինում էր:

Աբդուլ Համիդը, առավել քան իր նախորդ սուլթաններից որևէ մեկը, կառավարում էր տիպիկ ավտոկրատիայի մեթոդներով, իսկ իր պետությունը կատարելապես ոստիկանական պետություն էր: Լինելով բացարձակ բռնակալ, սուլթանը, սակայն հավատում էր, որ ինքը կառավարում է Աստվածային իրավունքի հիմքի վրա: Նա ատում էր ազատական կառավարման ցանկացած ձև: Նրա կարծիքով արևմուտքի երկրների կառավարողները հենց այդ ազատական մեթոդների պատճառով փաստորեն թույլ էին տալիս, որ սեփական հպատակները կառավարեն իրենց: Աբդուլ Համիդի կարծիքով միայն իր իրավունքն է տնօրինելու և կառավարելու պետական մեքենան:

Թուրք պատմաբան Օսման Նուրին (1875–1909) իր «Աբդուլ Համիդ Երկրորդը և նրա իշխանության շրջանը» եռահատոր աշխատության մեջ անդրադառնալով այդ միապետի տիրապետությանը և նրա կառավարման ոճին գրում է. «Օսմանյան պետության երեսուներեք տարվա քաղաքական դեպքերի մասին մեզ մոտ ոչ մի պաշտոնական թուղթ չի հրատարակվել, ամենակարևոր դեպքերը մշտապես գաղտնի են պահվել օսմանյան ժողովրդից: Ոչ մեկին չեն ներկայացվել պատերազմի նման օրինական միջոցառումների մութ ծալքերը, պատերազմներ, որոնց մի քանի անգամ ստիպված է եղել դիմելու մեր պետությունը: Բռնապետության ամենամեծ հենարանը, գործունեության ամենազորեղ միջոցը եղել է տգիտությունը: Մտքերի լուսավորումը, երկրի անցյալն ուսումնասիրող և նրա ապագան գուշակելու համար ուղեցույց հանդիսացող երկերի ոչ թե հրատարակումը, այլ անգամ ընթերցումը համարվում էր ոճիր»: Այնուհետև նա շարունակում է. «Ազգը հյուծվում էր անիրավությունների, անարդարության, զուլումի և բռնակալության տակ: Բոլոր պետական հիմնարկությունները գործում էին գողության, բռնության ու դաժանության սկզբունք-

ներով: Բանակի ոգին հանդիսացող սպաների շրջանում կարգապահության նշույլ անգամ չէր մնացել: Թե՛ զինվորականության շրջանում և թե՛ այլուր իրավունքը և արդարությունը առանց կաշառքի կամ մեկի բարձր հովանավորության չէր կարող գոյություն ունենալ»:

«Զուլումի» դարաշրջանում կտրուկ կրճատվեց նաև թերթերի ու ամսագրերի թիվը:

Օսմանյան կայսրությունում հրատարկվող թերթերին կարգադրված էր գրել միայն «փադիշահի աշխարհարժեք առողջության մասին», չտպագրել ոչ մի տարակարծիք հոդված, արգելված էր բնակչության բողոքների հրատարակումը, կուսակալների կամ առհասարակ բարձրաստիճան անձանց վարկաբեկումը, թեկուզ եթե նրանք մեղադրվեին գողության, կաշառակերության, սպանությունների և այլ հանցանքների մեջ, չէր թույլատրվում տպագրել օտար վեհապետների դեմ մահափորձեր կատարելու ու խռովությունների մասին լուրերը, արգելված էր գործածել մի շարք բառեր, որոնք մարդկանց մոտ կարող էին առաջ բերել համապատասխան ռեակցիա (օրինակ՝ «հեղափոխություն», «ազատություն», «հավասարություն», «անիշխանություն», «բռնություն», «իրավունք», «արդարություն», «սահմանադրություն», «բռնակալություն» և այլն):

Նույնիսկ այնպիսի բառեր, ինչպես, օրինակ, «գարուն», «վերածնունդ» և այլն գրաքննիչներին թվում էին խռովիչ ու վտանգավոր, քանի որ, նրանց կարծիքով, կարող էին ընթերցողի մոտ առաջ բերել դավադիր ու կասկածելի մտքեր: Իզուր չէ, որ օտարերկրյա դիտորդներից մեկը Աբդուլ Համիդ II-ի ժամանակ եղած թուրքական մամուլն անվանել է «ամորձատված մամուլ»:

«Գրաքննությունը,- գրում է թուրք հեղինակ Ջեմալ Նուրին,- խիստ և գերակայ կը սպաններ մամուլը: Մամուլի մեջ ուրիշ բան չէր կարդացվեր, բայց եթե սելամլիքի արարողությունը, պաշտոնատվությունները, աստիճանի բարձրացումները, պատվանշանի բաշխումները, ժամանումները և մեկնումները, մահերը, չոգենավերու ժամանակացույցները և ծանուցումները»:

Տգետ ու ռեժիմի կամակատար գրաքննիչների կամայականությունները տարածվեցին նաև եվրոպական գրականության ստեղծագործությունների վրա: Արգելվեցին եվրոպական դասականների՝ Ժան-Ժակ Ռուսսոյի, Վոլտերի, Շիլլերի, Շեքսպիրի, Ռասինի, Կոռնելի, Հյուգոյի, Զոլայի, Տոլստոյի, Բայրոնի և այլոց երկերը, առաջավոր մտածողների ու գրողների ստեղծագործությունները և այլն: Այդպիսի հազարավոր գրքեր 1902 թ. հրապարակայնորեն այրվեցին Ստամբուլի Ջեմբերլիք թաղի բաղնիսի վառարաններում:

Սուլթանական վարչակարգը ամբողջովին ներծծված էր կոռուպցիայով, գանձագողությամբ ու կաշառակերությամբ: «Բախշիշ» տալը և առնելը դա կենցաղի սովորական նորմ էր: Սուլթան Աբդուլ Համիդի, որպես մարդու և պետական գործչի բարոյականության ցայտուն դրսևորում կարող է հանդիսանալ նրա դատողության հետևյալ կերպը. «Ես գիտեմ, որ ինձ շրջապատող մարդիկ գողում են... Բայց ես գերադասում եմ իշխանության գլխին թողնել այդ հին գողողներին. չէ որ նրանք արդեն հարուստ են, իրենց համար կուտակել են կարողություն և եթե դեռ շարունակում են գողել, ապա ինձ հայտնի չափերով, փոքր կաշառքի նրանք արդեն չեն գնա: Նոր մարդիկ կլինեն քաղցած, չբավարարված ախորժակով և, իհարկե, կգողեն ավելի, մինչև որ կշտանան: Ուստի, հների փոփոխությունը միայն կվատացնի դրությունը և ինձ համար շահավետ չի լինի, քանի որ հներին ես իմ ձեռքում եմ պահում նրանով, որ նրանց անցյալը ինձ հայտնի է և հարկ եղած դեպքում նրանք շատ բան կկորցնեն: Նրանք ակամայից նվիրված են ինձ, մինչդեռ ես չեմ կարող հավատալ նոր մարդկանց նվիրվածությունը, եթե նրանք կորցնելու բան չունեն»:

Սահմանադրության կողմնակիցների ջախջախումից հետո Օսմանյան կայսրությունում կրկին անբաժան կերպով սկսեցին տիրապետել միջնադարյան կարգերը: Սուլթանի հպատակների կյանքի և ունեցվածքի երաշխիքների մասին այլևս ավելորդ էր խոսել: Առօրյա կյանքի նորմեր էին դարձել պաշտոնյաների ոչնչով չսահմանափակված կամայականությունները, ամբողջ բյուրոկրատական ապարատի սարսափելի կաշառակերությունը: Արքունիքի եկամուտների խոշոր աղբյուր էր հանդիսանում պաշտոնների վաճառքը: Հետապնդման մոլագարությամբ տառապող սուլթանն ու նրա շրջապատը, որ կազմում էին մուսուլմանական հոգևորականության ամենահետադիմական ներկայացուցիչները, ինչպես նաև մի շարք արաբ, քուրդ և չերքեզ փեռղալներ, իրենց ձեռքում էին պահում պետության կառավարման բոլոր թելերը: Բարձրագույն դուռը խաղալիք էր դարձել մոայլ համբավ ձեռք բերած սուլթանական Յըլդըզ պալատի ձեռքին: Այդ պալատում գործում էր հատուկ բյուրո, որը վերահսկում էր ռազմական, արտաքին գործերի, տնտեսության, ֆինանսների, կրթության և այլ գերատեսչությունների գործունեությունը: Պալատում էր որոշվում կայսրության բոլոր բարձր աստիճանավորների ճակատագիրը, սուլթանի և նրա մերձավորների կողմից նվազագույն դժգոհության դեպքում նրանք կարող էին զրկվել ոչ միայն իրենց պաշտոնից, այլև կյանքից:

Սարսափելի չարիք էին դարձել քաղաքական անբարեհուսության համար կասկածի տակ առնված մարդկանց հախուռն ձերբակալություններն ու աքսորները: Երկրի կենտրոնացված կառավարման բոլոր լծակները իր ձեռքերում պահելու համար սուլթան Աբդուլ Համիդին մեծ ծառայություններ էին մատուցում հեռագրական գծերը: Առաջին անգամ դրանք Օսմանյան կայսրությունում արմատավորվեցին Ղրիմի պատերազմի ժամանակ՝ դաշնակիցների կողմից: Այնուհետև ձեռք բերելով հեռագրական կոնցեսիաներ, ֆրանսիացիները ողջ երկրի տարածքով մեկ անց կացրին քսան հազար մղոն երկարությամբ հեռագրական գծեր, որոնք մայրաքաղաքը կապեցին նահանգային կենտրոնների հետ, դրանով իսկ Աբդուլ Համիդին հնարավորություն տալով անմիջականորեն վերահսկել ողջ չինովնիկական բյուրոկրատիայի գործունեությունը, մի հանգամանք, որը չէր կարող անել իրեն նախորդած և ոչ մի սուլթան:

Հեռագրական գծերը մեծ ծառայություն էին մատուցում այն բանի համար, որ կամայականության մթնոլորտը արագորեն տարածվի նահանգների կյանքի վրա: Նահանգային ապարատի բարձր աստիճանավորները փոխվում էին նույնքան հաճախ, որքան և մայրաքաղաքային գերատեսչությունների պաշտոնյաները: Զափազանց ցածր էր պաշտոնեության կուլտուրական մակարդակը: Հատկանշական է, որ 1898 թվականին այն մինիստրների թվում, որոնք գլխավորում էին Բարձրագույն դռան հիմնական գերատեսչությունները, չկար բարձրագույն կրթություն ունեցող և ոչ մի մարդ: Կարելի է պատկերացնել, թե այդ տեսակետից ինչ էր իրենից ներկայացնում նահանգային պաշտոնեությունը: Ավելին, «զուլումի» տարիներին պաշտոնյայի կրթվածությունը կարող էր դառնալ միայն քաղաքական անբարեհուսության նշան:

Աբդուլ Համիդ II-ի վարչակարգը լրջորեն արգելակեց Թանզիմաթի տարիներին սկսված լուսավորության զարգացման գործընթացը: Ճիշտ է, սուլթանը գիտակցում էր, որ կայսրությունը զգում է որոշակի մակարդակ ունեցող չինովնիկների սուր պակաս: Դրանք անհրաժեշտ էին նրան՝ փոխարինելու համար վարչական ապարատի այն կադրային աշխատողներին, որոնք սուլթանի կամքով գտնվում էին աքսորականի վիճակում, կամ որոնց ծառայությունը տարբեր պատճառներով ցանկալի չէր սուլթանի ու կառավարության համար: Այդ մասնագետները կոչված էին սպասարկելու Համիդյան վարչակարգի հսկայական բյուրոկրատական մեքենան:

Աբդուլ Համիդին անհրաժեշտ էր ավելացնել այն աստիճանավոր-

ների թիվը, որոնք անվերապահորեն նվիրված էին իրեն և որոնց վրա կարելի էր հենվել ներքին տնտեսական ու քաղաքական խնդիրներ լուծելու համար: Այդ նպատակով սուլթանը վերակառուցեց Քաղաքացիական չինովնիկների դպրոցը (մեքթեբ-ի մյուլքիե), որը հիմնադրվել էր դեռևս 1859 թ. նահանգային վարչության կադրեր պատրաստելու համար: Նրանում սովորողների թիվն ավելացվեց տասներկու անգամ: Այդ նույն ձևով ընդարձակվեց «Հարբիե» ռազմական քոլեջը, որը պատրաստելու էր ռազմա-ծովային և ցամաքային զորքերի սպաներ, ինժեներներ, զինվորական բժիշկներ և այլն: Բացվեցին նաև արհեստագործական ուսումնարաններ, ինչպես նաև հատուկ դպրոցներ չինարար-ինժեներներ, ուսուցիչներ, ոստիկաններ և մաքսային աշխատողներ պատրաստելու համար: 1900 թ. Աբդուլ Համիդի գահակալության քսանհինգամյակի կապակցությամբ Ստամբուլում բացվեց նաև համալսարան: Ընդարձակվեց և թուրքականացման ենթարկվեց Գալաթասարայում գործող ֆրանս-թուրքական ուսումնարանը, որը անվանափոխվեց և կոչվեց «Կայսերական օսմանյան լիցեյ»: Այն դարձավ թուրքական տիրապետող դասակարգի էլիտար ընտանիքների զավակներին միջնակարգ կրթություն տալու լավագույն ուսումնական հաստատությունը, որտեղ դասավանդում էին ժամանակի աչքի ընկնող թուրք գիտնականները, գրականագետները և այլն:

Սակայն սուլթանը անչուշտ հասկանում էր, որ այդ կրթօջախներից կարող էին դուրս գալ ոչ միայն ռեժիմի նվիրյալներ, այլև ընդդիմադիրներ: Ուստի նա բոլոր ուսումնական հաստատությունները դրեց գրաքննության խստագույն վերահսկողության տակ և նույնիսկ անձամբ միջամտում էր դպրոցական գերատեսչության գործերին: Բացի այդ, թուրքական աշխարհիկ դպրոցում կտրուկ աճեց կրոնական ազդեցությունը: Կառավարական տեսուչները հսկում էին ոչ միայն աստվածաբանության, գրականության ու պատմության առարկաների գծով դասախոսությունները, այլև տեխնիկական ֆակուլտետներում հատուկ դասընթացները: Նույնիսկ համալսարանում պատմության գծով դասախոսությունները սահմանափակվում էին իսլամի պատմության և Օսմանի դինաստիայի համառոտ չարադրանքով: Առանձնակի խստությամբ սուլթանը և նրա գրաքննիչները վերահսկում էին ռազմական ուսումնարանները, որը Աբդուլ Համիդը համարում էր ազատականության բներ: Ազատամտության ամեն մի դրսևորում, «միտք արթնացնող» բոլոր առարկաներն անմիջապես հանվում էին ծրագրերից:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման շրջանում էլ ավելի ուժեղացավ Օսմանյան կայսրության ֆինանսական կախումը եվրոպական առաջատար պետություններից: XIX դ. 60-ական թվականներից սկսած Թուրքիայում իրար հետևից բացվում էին օտարերկրյա բանկեր: Դրանցից խոշորագույններն էին Օտտոմանյան բանկը (Օսմանլը բանկասը)՝ 1863 թ., Օտտոմանյան վարկատու բանկը (Օսմանլը ումումի կրեդիտ բանկասը)՝ 1868 թ., Օսմանյան կայսրության լիգան (Իսթանբուլ օսմանլը իմպերաթորլուղու սոյեթե բանկասը)՝ 1864, Սալոնիկի բանկը (Սելյանիկ բանկասը)՝ 1888 թ., Ավստրո-Օտտոմանյան բանկը (Օսմանլը-Ավուստուրյա բանկասը)՝ 1871 թ. և այլն:

1878 թ. Բեռլինի վեհաժողովում չահագրգիռ երկրները առաջին անգամ բախվեցին Թուրքերի կողմից իրենց պարտքերը մարելու վերաբերյալ ստանձնած պարտավորությունները չկատարելու պրոբլեմի հետ: Վեհաժողովի պաշտոնական արձանագրության մեջ նրանք նախատեսեցին Ստամբուլում հիմնադրելու միջազգային ֆինանսական մի հանձնաժողով, որը պետք է զբաղվեր թուրքական պարտքերի վճարման համար ուղիներ որոնելով: Դա անշուշտ նվաստացուցիչ էր օսմանյան պետության վարկի համար, քանի որ բաց էր անում երկրի ներսում օսմանների ինքնիշխան իրավունքների սահմանափակման նվաստացուցիչ հեռանկար: Աբդուլ Համիդը դա ընդունել էր որպես թուրքի ազգային հպարտությանը հասցված ծանր հարված: Սակայն ի վերջո նա հարկադրված էր հաշտվել այդ ծանր ու տխուր իրողության հետ, որովհետև իր պետության ծախսերը մշտապես ավելանում էին, բայց գանձարանը ինչպես միշտ դատարկ էր:

1881 թ. դեկտեմբերի 20-ին հրապարակվեց սուլթանի հրամանագիրը (այսպես կոչված «մուհարրեմյան դեկրետը»), որը հայտարարեց «Օտտոմանյան հանրային պարտքի վարչության» ստեղծման մասին: Այդ դեկրետի համաձայն, Թուրքիայի արտաքին պարտքը կազմում էր 2.5 միլիարդ ֆրանկ:

Թուրք և օտարերկրյա ներկայացուցիչներից բաղկացած վարչության ղեկավար կազմը կոչված էր երաշխավորել Թուրքիայի պետական պարտքի սպասարկման շարունակումը: Սուլթանի կողմից հրամանագիրը կազմված էր այն հաշվով, որ Թուրքիայի նկատմամբ վերականգնվի Եվրոպայի վստահությունը, սակայն միաժամանակ չտուժի իր պետության վարկն ու ինքնիշխան իրավունքները: Արևելյան այդ ճկունությունը բնավ չէր նշանակում, որ թե՛ Եվրոպայում և թե՛ կայսրության ներսում մարդիկ չեն հասկանում, որ երբեմնի հզոր ու ահեղ Օսմանյան կայսրությունը դարձել է սնանկ պետություն,

դրկվել է իր սեփական ֆինանսները կառավարելու հնարավորությունից և վեր ածվել օտարերկրյա կապիտալի կիսագաղութի:

«Օտտոմանյան հանրային պարտքի վարչությունը» իրավունք էր ստացել սեփական ապարատի օգնությամբ Օսմանյան կայսրության զանազան շրջաններում հավաքելու մի շարք պետական հարկեր ու մաքսատուրքեր՝ օտարերկրյա վարկատուների պարտքերի վճարումը ապահովելու նպատակով: 1882 թ. վարչության տրամադրության տակ դրվեցին ծխախոտի ու աղի մենաշնորհներից ստացվող եկամուտները, դրոշմատուրքը և սպիրտի տուրքը, մի շարք խոշոր քաղաքներում ու նահանգներում տասանորդական պարտքը հավաքելու իրավունքը: Հետագայում վարչության իրավասության տակ անցած կայսրության պետական եկամուտների ցուցակը շարունակում էր արագ աճել: «Օտտոմանյան հանրային պարտքի վարչությունը» դարձավ երկրի տնտեսության ու ֆինանսների նկատմամբ օտարերկրյա վերահսկողության հաստատման հզոր գործիք:

Այդ կազմակերպության վարչական խորհուրդը բաղկացած էր Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի, Օտտոմանյան բանկի և Բարձրագույն դռան տեղական վարկատուների ներկայացուցիչներից: Նրա ապարատը արագ աճում էր, 1890 թ. գերազանցելով չորս և կես հազար մարդը, իսկ 1908 թ. մինչև տասը հազար ծառայողների:

Ստամբուլում ռուսական դեսպան Նելիդովը 1890 թ. գրում էր, որ «Օտտոմանյան հանրային պարտքի վարչության» խորհուրդը տիրապետում էր այնպիսի ուժի, որն ըստ էության հանդիսանում էր ազդու քաղաքական գործոն:

Օսմանյան կայսրության պարտքի կարգավորումը փաստորեն նշանակում էր, որ այսուհետև երկրի տնտեսական զարգացումը պետք է ֆինանսավորվի հիմնականում եվրոպական ներդրողների կողմից Հանրային պարտքի վարչության միջոցով:

Այդ կառույցի գործունեությունը զգալիորեն նպաստեց թուրքական տնտեսության զարգացմանը: Հատկապես ակնառու ձեռքբերումներ արձանագրվեցին զբաղվածության և սպասարկումների բնագավառում: Օտարերկրյա կոնցեսիոներները սկսեցին ներդրումներ կատարել գյուղատնտեսության և բնական հարստությունների շահագործման բնագավառում: Աչխուժացավ մետաքսի արտադրությունը Բուրսայում: Ֆրանսիական կապիտալը սկսեց շահագործել Սև ծովի ափերին գտնվող Զոնգուլդաղի քարածխահանքերը: Ծխախոտի արտադրությունը դարձավ ֆրանս-ավստրիական ընկերության մե-

նաչնորհը՝ աշխատանքով ապահովելով բազմահազար մահմեդական ու քրիստոնյա աշխատավորների: Սակայն Հանրային պարտքի վարչությունը առավել հուժկու թափով զարկ տվեց երկաթուղաշինությանը: Երկաթուղագծերի կառուցումը, որը սկիզբ էր առել դեռևս սուլթան Աբդուլ-Ազիզի ժամանակներում, այժմ ստացավ լայն թափ ու ծավալ: Աբդուլ Համիդի կառավարման շրջանում կայսրության գլխավոր քաղաքները մեկը մյուսի հետևից իրար հետ կապվում էին երկաթուղագծերով: Իր հերթին երկաթուղաշինությունը խթանում էր առևտրի, արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացմանը: 1888 թ. Թուրքիան առաջին անգամ երկաթուղագծով կապվեց Արևմտյան Եվրոպայի հետ (շահագործման հանձնվեց Ստամբուլ-Վիեննա երկաթուղին):

Սուլթան Աբդուլ Համիդի համար Արևելքի և Արևմուտքի միջև խոչընդոտների հաղթահարման բնագավառում այդ ճեղքումը բնավ ցանկալի չէր: Բռնակալը վախենում էր, որ Եվրոպայից կայսրություն կթափանցեն ազատական ու հեղափոխական գաղափարներ և կխաթարվի իր ընդարձակ պետության, թերևս նաև իր սեփական անդորրը:

Թեև Աբդուլ Համիդը ևս իր նախորդների նման շարունակում էր օտարերկրյա բանկերից ստանալ փոխառություններ, սակայն նա աստիճանաբար դիմաշրջվում էր արևմտյան տերություններից, որոնք իրեն մեն-մենակ էին թողել Ռուսաստանի հետ վերջին պատերազմի ժամանակ: Սուլթանը հատկապես տրամադրված էր Անգլիայի դեմ, որը նրա կարծիքով պատերազմի ժամանակ դավաճանել էր իրեն, հրաժարվելով ցուցաբերել օգնություն, որի հետևանքը եղավ այն, որ Թուրքիան հայտնվեց սնանկացած պետության վիճակում: Բրիտանական հյուպատոսները եռանդուն կերպով միջամտում էին օսմանյան կայսրության ներքին գործերին, պահանջելով նահանգներում իրագործել սուլթանի համար անցանկալի բարենորոգումներ: Սուլթանը առանձնակի ատելությամբ էր լցված վարչապետ Գլադստոնի նկատմամբ, որը 1880 թ. վերստին վերադարձել էր իշխանության գլուխ: Ընդ որում, նրանց ատելությունն ու միմյանց նկատմամբ հակակրանքը փոխադարձ էր:

Երես թեքելով Լոնդոնից, Փարիզից ու Վիեննայից, որոնք հանդիսանում էին Թուրքիայի ավանդական դաշնակիցները, Աբդուլ Համիդը սկսեց մերձեցման քայլեր կատարել իր ավանդական թշնամու՝ Ռուսաստանի և հատկապես Գերմանիայի հետ, որի ռազմա-տնտեսական ու քաղաքական հզորությունը օրըստօրե վերելք էր ապրում: Գերմանիայի ազդեցության մեծացումը Թուրքիայում էլ ավելի չոչա-

փելի դարձավ, երբ չուտով մի խումբ գերմանացի սպաներ ժամանեցին Ստամբուլ Թուրքական բանակը մարզելու և նրա մարտունակությունը բարձրացնելու համար:

Բեռլինի վեհաժողովում ընդունված պայմանագրի պայմանները կատարելու հարցում ևս Աբդուլ Համիդը որդեգրեց ձգձգումների ու թուրքական ավանդական քաշքշուկի քաղաքականությունը: Նա ամեն կերպ աշխատում էր տապալել և արգելքներ հարուցել հունական, հայկական և բուլղարական հարցերի առջև, որոնց վերաբերյալ Բեռլինում ընդունվել էին համապատասխան որոշումներ:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման շրջանը նշանավորվեց նաև նրանով, որ կայսրությունը սկսեց տարածքներ կորցնել: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Թուրքիան թե՛ իր ասիական և թե՛ եվրոպական մասերում ունեցավ տարածքային խոշոր կորուստներ: Փաստորեն Բուլղարիան արդեն կորսված էր: Այնտեղ ստեղծվել էր ազգային կառավարություն: Այսպիսով, Արևելյան Ռումելիան, որը Թուրքերի նախնիների համար ծառայել էր որպես Եվրոպայում հետագա նվաճումների համար հենակետ՝ կայսրության սահմանները Եվրոպայում տարածելու համար, այլևս դուրս էր եկել օսմանյան կառավարության հսկողությունից: Թուրքերը խոշոր տարածքային կորուստներ էին ունենում նաև աֆրիկյան մայրցամաքում: 1882 թ. նրանք կորցրին Եգիպտոսը՝ «սուլթանի թագի ամենապայծառ ու ջինջ քարը», որն անցավ անգլիական հովանավորության տակ: Դրան հետևեց Թունիսի կորուստը, որը յուրացրին ֆրանսիացիները: Տարածքային կորուստները Եվրոպայում և Աֆրիկայում շարունակվում էին: Աբդուլ Համիդը եկել էր այն համոզման, որ իր կայսրությունը Արևմուտքում այլևս դատապարտված է և որ նրա վերջնական կորուստը ժամանակի խնդիր է: Նրա կարծիքով կայսրությունը բուն Փոքր Ասիայից դուրս ապագա չունի: Ուստի նա վճռականորեն իր հայացքն ուղղում էր դեպի Արևելք, դեպի Անատոլիա, որտեղ Թուրք և իսլամական զանգվածը գերակշռում էր քրիստոնյաների համեմատ: Ասիան հանդիսանում էր ոչ միայն իր ազգի և դինաստիայի օրրանը, այլև իր դավանած կրոնի: Ուստի նա ծրագրում էր Եվրոպայից վերադառնալ հետ, դեպի անատոլիական «վաթան» («հայրենիք»), որտեղից Թուրքերը չարժվել էին դեպի քրիստոնեական Եվրոպա:

Աբդուլ Համիդը եռանդուն կերպով երկիրը նախապատրաստում էր այդ դերին: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ Արևելյան Անատոլիան՝ Արևմտյան Հայաստանը, որտեղ հայ բնակչությունը կազմում էր մեծամասնություն և փայփայում էր անկա-

խության ձգտումներ, սուլթանը համարում էր իր հիշյալ ծրագրերի իրականացման լուրջ արգելք: Նա հասկանում էր, որ քաղաքական զարթոնքի ուղին բռնած այդ ժողովրդի համար այլևս անհանդուրժելի էր իր սեփական հայրենիքում ապրել որպես իրավազուրկ կրոնական փոքրամասնություն: Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի միջազգայնացումը էլ ավելի էր բարդացնում սուլթանի մտահղացած ծրագրերի իրագործումը: Բացի այդ, վեհաժողովում ընդունված որոշումը հայկական նահանգներում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ ուղղակի հակասում էին Աբդուլ Համիդի քաղաքական մտահղացումներին, ուստի նա որդեգրեց այդ բարեփոխումները ձախողելու քաղաքականություն: Ի վերջո, Աբդուլ Համիդի մոտ հասունացավ Հայկական հարցը հայերին ոչնչացնելու ճանապարհով լուծելու դիվական գաղափարը, որը նա չհապաղեց գործնական իրականացման հողի վրա դնելու համար:

Երկրի արևմտականացման քաղաքականությունը, որին տուրք էին տալիս նախկին որոշ սուլթաններ, Աբդուլ Համիդի կարծիքով այլևս չէր արդարացնում իրեն: Նա գտնում էր, որ դրա այլընտրանքը իսլամիզմի քաղաքականությունն է: Իսլամը և համիսլամականությունը (պանիսլամիզմ), ահա այն միջոցը, որը սուլթանի կարծիքով ի վիճակի էր միասնական գաղափարի շուրջ համախմբելու ոչ միայն իր մահմեդական հպատակներին, այլև համայն աշխարհի մուսուլմաններին: Մահմեդականների ապագան, գտնում էր Աբդուլ Համիդը, կախված է նրանից, թե նրանք արդյոք կհամախմբվեն աշխարհի ամենահզոր իսլամական պետության՝ Օսմանյան կայսրության և նրա սուլթան-խալիֆի մականի ներքո:

Այսպիսով, «զուլումի» դարաշրջանի պաշտոնական գաղափարախոսություն դարձավ պանիսլամիզմը՝ նրա ամենահետադիմական մեկնաբանությամբ: Սուլթանի էմիսարները քարոզչություն էին մղում, պնդելով, թե իսլամի գլխին կախված է «գյավուրների» մերկացված սուրը:

XIX դարի 90-ական թվականներին թուրքական պանիսլամիստները աշխատում էին պանիսլամիզմի գաղափարախոսության հիմնադիր Ջեմալ-էդ-դին Ալ-Աֆղանիի ուսմունքը մահմեդական ժողովուրդների միասնության վերաբերյալ ծառայեցնել իրենց մեծապետական, զավթողական նպատակներին: Նրանք եռանդուն աշխատանք էին ծավալել օսմանյան սուլթանի իշխանության ներքո համայն աշխարհի մահմեդականներին միավորելու ուղղությամբ: Այլ կերպ ասած, թուրք պանիսլամիստները ձգտում էին Թուրքիայի գե-

րիչխանությունը հաստատել ողջ իսլամական աշխարհի նկատմամբ: Նրանց մտայնության համաձայն, Արևմուտքի դեմ ընդհանուր մուսուլմանական ճակատի կենտրոնում ևս պետք է գտնվեր Օսմանյան կայսրությունը: Այդ տեսակետից խալիֆի տիտղոսը Աբդուլ Համիդի ծրագրերում հանդիսանում էր կարևոր լծակ: Սուլթանը սիրում էր կրկնել. «Ես նախ և առաջ հանդիսանում եմ բոլոր մահմեդականների խալիֆը, միայն դրանից հետո օսմանների փադիշահը»:

Իր պետական-պաշտոնական քաղաքականության մեջ, վարչական ու դատական համակարգում սուլթանը սկսեց բացահայտ կերպով վարել մահմեդականների առավելության քաղաքականություն քրիստոնյաների նկատմամբ: Այդ ծրագիրը պարտադրում էր Աբդուլ Համիդին հովանավորության քաղաքականություն վարել կայսրության կազմում բնակվող ոչ թուրք մահմեդական բնակչության՝ արաբների, քրդերի, ալբանացիների, չերքեզների և այլն նկատմամբ: Եվրոպայի նախկին «հիվանդ մարդը» վերադառնալով իր ասիական սահմանները՝ այժմ ձգտում էր դառնալ «Ասիայի ուժեղ մարդը»: Իր հպատակների աչքում Աբդուլ Համիդը վերականգնեց ուժեղ, ավանդական իսլամական վարչակարգը, որ զերծ էր օտարերկրյա միջամտությունից ու ազդեցությունից:

Մահմեդական բնակչությանը ներշնչվում էր, որ իսլամական մշակույթը իր հարստությամբ ու բազմազանությամբ գերազանցում է արևմտյան մշակութային արժեքներին:

Նոր ժամանակներում Օսմանյան կայսրությունը մշտապես հանդիսանում էր ոչ թուրք ժողովուրդների պայքարի ասպարեզ՝ հանուն իրենց ազատագրման անագորույն օսմանյան լծից: Աբդուլ Համիդը և նրա շրջապատը յուրովի էին լուծել բազմազգ երկրի պրոբլեմները: Նրանք երկիրը դարձրել էին բանտ բոլոր ժողովուրդների համար, իրենց տիրապետությունը ապահովելով կրոնական և ազգային թշնամանք բորբոքելու օգնությամբ: Ագլիացի Է. Ֆ. Նայտը, որը հիանալի ուսումնասիրել էր Աբդուլ Համիդի կառավարման շրջանում կայսրության քաղաքական կյանքի նրբերանգները, գրում էր. «Նա (սուլթանը – Վ. Բ.) գիտակցաբար թուլացնում էր Օտտոմանյան կայսրությունը, նրանում սերմանելով երկպառակություններ և բարոյալքելով իր հպատակներին, որպեսզի պետության մեջ չկարողանա հայտնվել ոչ մի տարր, մարդկանց ոչ մի խումբ, բավարար չափով ուժեղ, իրեն գահընկեց անելու համար: Նա թշնամանք էր սերմանում քրիստոնեական տարբեր ուղղությունների միջև և բորբոքում էր մահմեդական մոլեռանդությունը...: Իսկ երբ սուլթանի հպատակները ճնշումներին

պատասխանում էին խոովություններով, նա դրանք հանգցնում էր սարսափելի զանգվածային սպանություններով»: Առհասարակ Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությունը ուղղված էր կայսրության քրիստոնյա տարրի կրճատմանը, իսկ բարենպաստ պայմանների դեպքում խսպառ ոչնչացմանը»:

Տարբեր ժողովուրդների միջև բախումներ հրահրելու համար սուլթանը միջոցների մեջ խտրություն չէր դնում: Նա օգտագործում էր հատուկ ծառայությունների, ժանդարմերիայի, ոստիկանության, բանակի հսկայական ներուժը:

Ինչպես նշվեց, Աբդուլ Համիդի մտայնության համաձայն, այսուհետև Օսմանյան կայսրության ծանրության կենտրոնը պետք է դառնար Անատոլիան: Իր հուշերում սուլթանը բազմիցս նշել է, որ թուրքերի համար Անատոլիան կարող է հանդիսանալ վերջին ապաստանը: «Ես չեմ զղջում, որ մեր ուժերը ծծող Բալկանյան երկրները մենք կորցրեցինք: Որքան արագորեն դեպի ետ կենտրոնանանք, այնքան ավելի չուտ կկարողանանք հաղթահարել մեր թուլությունն ու «հիվանդությունը»»,- գրել է Աբդուլ Համիդը: Սակայն ամբողջ խնդիրը նրանումն է, որ Արևելյան Անատոլիայում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տարածքում, բուռն ազգային զարթոնք էր ապրում հայ ժողովուրդը, որին հատուկ էր վառ կերպով արտահայտված ազգային ինքնագիտակցությունը, ազատության ձգտումը և ազգային հպարտության զգացումը: Հենց այդ պատճառով սուլթան Աբդուլ Համիդը հայերին և Հայկական հարցը համարում էր լուրջ խոչընդոտ իր քաղաքական ծրագրերի իրականացման ճանապարհին: Հունգարացի արևելագետ Արմինուս Վամբերին, վկայակոչելով իր հանդիպումը Աբդուլ Համիդի հետ, որի ժամանակ խոսակցություն է եղել նաև հայերի մասին, գրում է, որ սուլթանը ասել է հետևյալը. «Նրանք (հայերը - Վ. Բ.) կարող են գլուխս անջատել վզիցս, բայց երբեք Հայաստանը՝ իմ կայսրությունից... Ի՞նչ է հայկական հարցը, մի հարվածը բավական է ամբողջ շարժումը ճնշելու համար»: Իր քարտուղարի միջոցով սուլթանը Կ. Պոլսի հայոց պատրիարք Աշըգյանին փոխանցել է. «Ինձի համար անկարելի է հայերի երազած ինքնօրինությունը տալ. և նզովք կդնիմ ինձի հաջորդելիք սուլթաններու վրայ, այդպիսի բան մը չտալ հայոց և ուխտ կը դնիմ անոնց վրայ, որ մինչև աշխարհիս երեսին բովանդակ իսլամութեան ջնջումը՝ պատերազմին հայոց անկախութեան դեմ»: Դա հստակ ձևակերպված քաղաքական ծրագիր էր, որն ընկած էր սուլթանական կառավարության պետական քաղաքականության հիմքում:

Բեռլինի վեհաժողովը դաս էր հանդիսացել սուլթանի համար: Նա եկել էր այն համոզման, որ միջազգային այդ վեհաժողովի կողմից ընդունված որոշումները, մասնավորապես հայերին ու Հայկական հարցին նվիրված Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը և Հայկական հարցի միջազգայնացումը էլ ավելի մեծ խթան էին հաղորդելու հայության ազգային զգացումների վերելքին: Դրա մեջ նա տեսնում էր մեծ վտանգ, քանի որ վաղ թե ուշ հայ ժողովուրդը կարող էր թոթափել անագորույն օսմանյան լուծը: Ուստի սուլթանը որդեգրել էր հայկական շրջաններում բարեփոխումներ իրականացնելու ձախողման քաղաքականություն:

Սուլթանը նաև հիանալի հասկանում էր, որ թեև մեծ պետությունները ժամանակ առ ժամանակ բարձրացնում են Հայկական հարցը, սակայն նրանց միջև առկա խորը հակասությունները թույլ չեն տալիս սուլթանից վճռականորեն պահանջել նրա լուծումը: Բայց նա որոշակի երաշխիք չուներ, որ չի կարող ստեղծվել այնպիսի մի պահ, որ նրանց շահերը համընկնեին Հայկական հարցի լուծման գործում: Առհասարակ սուլթան Աբդուլ Համիդը գտնում էր, որ խաչակրությունը Թուրքիայի դեմ երբեք չի դադարել, այն XX դարում ևս թաքնված շարունակվում է:

Հենց դա էր պատճառը, որ հայերը և Հայկական հարցը հունից հանում էին Աբդուլ Համիդին, հաճախ նրա մոտ առաջ բերելով կատաղության նոպաներ: Ամեն անգամ, երբ որևէ օտարերկրյա պետության ներկայացուցչի ճնշման ներքո Թուրքական կառավարությունը հարկադրված էր լինում պաշտոնազուրկ անել այս կամ այն պաշտոնատար անձին հայերի նկատմամբ վատ վերաբերմունք ունենալու մեղադրանքով, սուլթանը անպայման այդ նույն անձին նշանակում էր ավելի բարձր ու ավելի եկամտաբեր պաշտոնի:

Տևական ժամանակ արևմտահայությունը փորձում էր հասնել բարենորոգումների իրականացմանը ոչ բռնի մեթոդներով, Թուրքերին պարզորոշ կերպով հասկացնելով, որ իրենք չեն ձգտում քաղաքական անկախության կամ ինքնավարության, այլ իրենց պահանջը անձի և նրա ունեցվածքի անվտանգությունն ու անձեռնմխելիությունն է: Սակայն նույնպիսի հետևողականությամբ սուլթանի ու նրա կառավարության կողմից այդ պահանջը մերժվում էր այն պատճառաբանությամբ, որ հայերն ասիական Թուրքիայի ոչ մի վայրում ազգաբնակչության մեծամասնություն չեն կազմում, հետևաբար նրանց համար առանձին բարենորոգումներ իրականացնելը միանգամայն անիմաստ է:

1880 թ. ամռանը եվրոպական վեց պետությունների կողմից Բ.

Դռանը հանձնվեց հավաքական մի հուշագիր, որտեղ պահանջվում էր անհապաղ կենսագործել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և Արևմտյան Հայաստանում իրագործել խոստացված բարենորոգումները:

Սակայն այդ հուշագիրը, ինչպես նաև հայկական բարենորոգումներին եվրոպական միջամտությունը անարդյունք անցավ: Ավելին, դրա հետևանքները ուղղակի ողբերգական եղան հայ ժողովրդի համար, որովհետև այսուհետև հայերի բնաջնջումը, նրանց ունեզրկումը, հայրենիքից բռնի վտարումը դարձավ թուրքական քաղաքականության անկյունաքարը:

Անցնելով տառապանքների երկար ճանապարհ՝ արևմտահայությունը ի վերջո հասկացավ, որ եկել է քաղաքական պայքարի ժամանակը: 1881 թ. Էրզրումում կազմակերպվեց «Պաշտպան հայրենյաց» գաղտնի ընկերությունը, որն իր առջև խնդիր էր դրել պայքարել թուրք հարստահարիչների, ինչպես նաև քրդական բեկերի ու չերքեզ ֆեոդալների բռնությունների դեմ՝ օգտագործելով պայքարի հայդուկային-հեղափոխական եղանակները: Կազմակերպության կարգախոսը դարձավ «մահ կամ ազատություն»: Այդ ժամանակ արդեն չատերին էր համակում այն համոզմունքը, որ անպատիժ բռնությունների և սանձարձակ անիշխանության դեմ բողոքն անզոր է, պետք է դիմել զենքի:

Սուլթանական կառավարությունը ենթադրում էր, թե ըմբոստության այդ ոգին հրահրվում ու գալիս է դրսից, հատկապես Ռուսաստանից՝ կովկասահայության միջոցով: Մինչդեռ արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը հուսահատության մի ճիչ էր, այն միանգամայն ինքնաբուխ էր և դրսից ներմուծված գաղափարների արդյունք չէր: «Հայ բնակչության ծանր վիճակը,- գրում էր թուրքական իրականությանը քաջածանոթ ռուս զինվորական Ռ. Ի. Տերմենը,- մշտական ճնշումը, որի տակ նա գտնվում է, իրավազրկությունը, հայերի նկատմամբ թուրքական կառավարության գործադրած անարդարությունները հայկական հասարակությանը նախապատրաստեցին հեղափոխական գաղափարների ընկալմանը: Ամենուրեք ձևավորվում էին դժգոհ տարրեր, որոնց շրջանում արտասահմանից եկած հեղափոխականները գտնում էին կենդանի արձագանք»:

Ապացուցված իրողություն է, որ Արևմտյան Հայաստանում հայ ազգային-ազատագրական շարժումները առաջ եկան ոչ թե ազգային կուսակցությունների հրապարակ գալու հետևանքով, ինչպես պնդում են պատմության թուրք կեղծարարները, այլ ընդհակառակը, այդ կուսակցությունները կազմվեցին հիշյալ շարժումների հետևանքով:

Արևմտահայության ազատագրական ոգորումները սրատելու և ոչնչացնելու նպատակով սուլթան Աբդուլ Համիդը 1891 թ. կազմակերպեց քրդական հեծելազորային անկանոն զորամասեր, որոնք սուլթանի անունով կոչվեցին «Համիդիե» գնդեր»: Այդ գնդերի կազմակերպման գաղափարի իրագործումը հեշտանում էր նրանով, որ քրդական ավատական վերնախավը և քուրդ զանգվածների զգալի մասը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ընկալում էր որպես իր շահերի դեմ ուղղված չարժում: Քրդերի այս տրամադրությունները արհեստականորեն ու մշտապես հրահրվում էին սուլթանական կառավարության կողմից:

Ժամանակի օտարազգի բազմաթիվ պետական-քաղաքական և հասարակական գործիչներ նշել են, որ համիդիե գնդերի կազմակերպման հիմնական նպատակն էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումների ջախջախումը, արևմտահայությանը ունեզրկելը, նրան հուսահատության եզրին հասցնելը և իր դարավոր բնօրրանից դուրս մղելը: Հարկ է նշել, որ ռազմական տեսակետից կազմակերպելով քրդերին, սուլթանը միաժամանակ արգելում էր հայ ազգաբնակչությանը զենք կրել: Դա պետության կողմից բացարձակ թշնամություն էր հայ տարրի դեմ:

Համիդիե ռազմական կազմակերպության ստեղծումից հետո ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում այն սկսեց կատարել ռազմաոստիկանական ֆունկցիա: Հայ բնակչության նկատմամբ բռնությունները, կողոպուտն ու թալանը ընդունեցին աներևակայելի մեծ թափ ու ծավալ: Արևմտյան Հայաստանում համիդիե գնդերը սփռում էին ահ ու սարսափ, բացահայտ կերպով հասկացնելով, որ «վերևից» իրենք հանձնարարություն ունեն ընկճելու հայերին և որ իրենց երաշխավորել են իրավական պաշտպանություն քրիստոնյա բնակչության նկատմամբ գործադրվող ցանկացած արարքների համար:

Ստամբուլը իր տեղական իշխանությունների միջոցով Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը զանազան սադրանքների կամ աներևակայելի ճնշումների միջոցով հրահրում էր բացահայտ ելույթների, որպեսզի այնուհետև նրանց մեղադրելով հեղափոխականության մեջ, զանգվածորեն հալածանքների ենթարկի նրանց: Հայ բնակչության օրինական ինքնապաշտպանության ցանկացած փորձ թուրքական իշխանությունները դիտում էին որպես հանցանք և ձեռնարկում անլուր հալածանքներ:

1894 թ. առաջին հարվածն ուղղվեց ազատատենչ Սասունի դեմ,

որը դիտվում էր որպես կայսրության համար քաղաքական վտանգի միջնաբերդ:

Սասունում կազմակերպված սարսափելի կոտորածից հետո հայ բնակչության կոտորածներ սկսվեցին ամբողջ երկրում: 1894–1896 թվականներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայերի զանգվածային ջարդերի ժամանակ, թուրքական յաթաղանին զոհ գնացին ավելի քան 300 հազար հայեր: Արևմտյան Հայաստանի հարյուրավոր քաղաքներ ու գյուղեր ավերվեցին սուլթանական զորքերի ու համիդիե անկանոն հեծելազորի կողմից:

Թուրքական իշխանությունները հայերի նկատմամբ վերաբերվում էին ոչ թե որպես պետության քաղաքացիներ, այլ որպես օտարերկրյա թշնամու, որին կարելի է անպատիժ ոչնչացնել: Սուլթանը հակահայկական խժդժություններին քաղաքական ուղղվածությունից բացի հաղորդում էր նաև կրոնական երանգ, մահմեդական բնակչությանը ներշնչելով, որ հայերը ձգտում են բարձրացնել համընդհանուր ապստամբություն, նպատակ ունենալով մահացու հարված հասցնել իսլամին: Սուլթան-խալիֆը պարտավորեցնում էր իր մահմեդական հոտին պաշտպանել իրենց «սրբազան կրոնը» «անհավատ խռովարարների» ոտնձգություններից:

Սուլթանը պատվիրում էր իր հպատակներին հետևել «սրբազան օրենքի»՝ շարիաթի պատվիրանին, համաձայն որի հավատացյալների կողմից խռովարարների գույքի յուրացումը չի հանդիսանում կողոպուտ, դրանով իսկ խրախուսելով մահմեդականներին հարստանալու հարևան քրիստոնյաների հաշվին, իսկ դիմադրության դեպքում թույլատրելով սպանել նրանց: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ ինչպես պատկերավոր գրում էր եվրոպացի դիվանագետներից մեկը, սկսվեց «գայլերի ավելի ու ավելի մեծացող ոհմակների հարձակումներ ոչխարների վրա»:

Աբդուլ Համիդը այն աստիճանի աղճատեց մահմեդական սկզբունքները, որ հայերին ստիպում էր զենքի սպառնալիքի ներքո ընտրություն կատարել մահվան և իսլամն ընդունելու մեջ, մի պրակտիկա, որից նախկինում անգլիացիների ճնշման ներքո հրաժարվել էր սուլթան Աբդուլ Մեջիդը:

Աբդուլ Համիդի քաղաքականության վերջնական նպատակն էր բոլոր միջոցներով կայսրության մեջ կրճատել հայ բնակչության թիվը ապագայում նրանց լրիվ ոչնչացման, ունեզրկման և հողերի՝ հօգուտ թուրք-մահմեդականների բռնագրավման հեռանկարով:

Հայ ժողովրդի նկատմամբ այդ արյունոտ նախճիրները տեղի էին

ունենում մեծ պետությունների աչքի առջև: «Ազգային շահերի» և «պետական նպատակահարմարության» արևմտյան սկզբունքները թույլ չէին տալիս աշխարհի հզորներին բռնելու սուլթանի արյունոտ ձեռքը: Ավելին, Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը չնականորեն պատրաստակամություն էր հայտնել համագործել անգլիացիների հետ ցանկացած հարցի շուրջ, բացի սուլթանի վրա հայկական բարենորոգումների իրականացման հարցում ճնշում գործադրելուց:

Հակառակ եվրոպական պետությունների կրավորական դիրքորոշման՝ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործվող ջարդերի քաղաքականության նկատմամբ եվրոպական հասարակական կարծիքը վճռականորեն իր ձայնը բարձրացրեց հօգուտ խաչված ժողովրդի՝ պահանջելով պատժել արյունոտ հաշվեհարդարի բոլոր մեղավորներին, իսկ գլխավոր հանցագործին՝ սուլթանին, դահընկեց անել: Գլադստոնը, որն արդեն ութսունվեց տարեկան էր, Լիվերպուլ քաղաքում հանդես եկավ իր վերջին կրակոտ ճառով ընդդեմ «անկանխատեսելի Թուրքի»: Նա հայտարարեց, որ սուլթանի կայսրությունը արժանի է նրան, որ «ջնջվի աշխարհի քարտեզի վրայից»՝ որպես «քաղաքակրթության նչավակ» և «մարդկության անեծք»: Նա անարգանքի սյունին գամեց սուլթանին, նրան անվանելով «Աբդուլ Մեծ Մարդասպան»: Գլադստոնը պահանջում էր իր կառավարությունից զորքեր մտցնել օսմանյան կայսրության տարածքը և վերջ տալ անմեղ մարդկանց կոտորածներին:

Ֆրանսիայի լավագույն մարդիկ ևս իրենց ձայնը բարձրացրին հօգուտ հայության՝ Աբդուլ Համիդին անվանելով «Արյունոտ սուլթան»:

Եվրոպական մի շարք երկրներում սկզբնական շրջանում սկսեցին ձայներ հնչել այն մասին, որ անհրաժեշտ է Թուրքիայի նկատմամբ ուժ կիրառել: Սակայն աստիճանաբար այդ ձայները մարեցին և պարզվեց, որ ոչ մի պետություն պատրաստ չէ հանուն հայերի դիմել նման քայլի:

Եվրոպական պետությունների շրջանում սուլթանի համար մնում էր մեկ կայուն դաշնակից, դա Գերմանիան էր: XIX դ. վերջերից սկսած Օսմանյան կայսրությունում կտրուկ կերպով մեծացավ իմպերիալիստական նոր գիշատչի՝ Գերմանիայի ռազմական, քաղաքական և տնտեսական ազդեցությունը: Մարշալ ֆոն դեր Հոլցը գերմանական սպաների մի խոշոր խմբի հետ մարզում էր թուրքական բանակը, նպատակ ունենալով բարձրացնել նրա մարտունակությունը և արդիականացնել այն Գերմանիայում արտադրված նոր ժամանակակից զենքե-

րով ու ռազմական հանդերձանքով հագեցնելով թուրքական զինված ուժերը: Կայզեր Վիլհելմ II-ը, որը 1888 թ. ժառանգել էր կայսերական գահը, Օսմանյան կայսրության նկատմամբ փայփայում էր ծավալուն ու հեռահար ծրագրեր: Նրա մտայնությամբ Ասիական Թուրքիան պետք է դառնար գերմանական ազդեցության գլխավոր գոտին ոչ միայն ռազմավարական, այլև տնտեսական, առևտրական ու տեխնիկական բնագավառներում: Շուտով պաշտոնաթող անելով կանցլեր Բիսմարկին, որը գտնում էր, որ եվրոպական սահմաններից դուրս չպետք է իրականացնել պանգերմանական ծավալապաշտական քայլեր, կայզեր Վիլհելմը գործողության մեջ մտցրեց «Դրանգ նախ Օստեն» («Շարժում դեպի Արևելք») հավակնոտ ծրագիրը: Դեպի Արևելք ծավալվելու գերմանական այդ լայնահուն ծրագրի իրականացման գործիք էր հանդիսանալու Բաղդադի երկաթուղու նախագիծը, որը կոչված էր Բեռլինը կապել Պարսից ծոցի հետ:

Գերմանական այդ ծրագրերը ամբողջությամբ վերցրած համապատասխանում էին սուլթան Աբդուլ Համիդի և Բ. Դռան շահերին, որոնք իրենց արտաքին քաղաքական գործերում սկսեցին կողմնորոշվել դեպի իր հզորության գագաթնակետը մագլցող Գերմանիան:

Գահ բարձրանալուց հետո ընդամենը մեկ տարի անց, կայզեր Վիլհելմ II-ը պաշտոնական այց կատարեց Ստամբուլ: Սուլթան Աբդուլ Համիդը նրան և կայսրուհուն ընդունեց «կայսերական հյուրասիրությամբ»: Այդ փառահեղ ընդունելությունը իր չքեղությամբ ու պերճանքով զարմացրել էր նույնիսկ իր կյանքում շատ բան տեսած գերմանացի կայսրին: Յելտըզի պալատում կազմակերպված արտակարգ ճոխ պետական բանկետի ժամանակ, եվրոպական ուտեստեղենը մատուցվում էր Փարիզում ոսկուց պատրաստված սկուտեղների վրա, որոնք զարդարված էին թանկարժեք քարերով: Երբ սուլթանը գերմանական կայսրուհուն մատուցեց պալատի այգու ծաղիկներից կազմված մի ծաղկեփունջ, վերջինս ծաղիկների թերթիկների մեջ նկատեց մի խոշոր, թանկարժեք ադամանդ:

Իր այցի ընթացքում կայզերը այցելեց նաև Օսմանյան կայսրության տարբեր վայրեր: Զգեստավորված քրիստոնյա-ուխտագնացի և խաչակիր-ասպետի զգեստներով, կայզերը մեկնեց Երուսաղեմ, որի մատույցներում փոշիների մեջ ծնկաչոք աղոթքից հետո, բաց արեց նախապես կառուցված լյութերանական մի եկեղեցի: Այնուհետև նա փոխելով իր զգեստները՝ մեկնեց Դամասկոս, որտեղ գլխին չալմա

դրած գլուխը խոնարհեց Սալահեդդինի դամբարանի առջև՝ հայտարարելով, որ աշխարհի երեք հարյուր միլիոն մահմեդականները կարող են վստահ լինել, որ գերմանական կայզերը իրենց բարեկամն է և նրանք հավիտյանս հավիտենից վայելելու են գերմանացիների կայսեր բարձր հովանավորությունը:

Գերմանիայի թուրքասիրական այդ քաղաքականության անխուսափելի հետևանքը հանդիսացավ այն, որ Բեռլինը հրաժարվեց իր ձայնը բարձրացնել հօգուտ թուրքական յաթաղանի զոհ դարձած հայերի: Այդ նույն նկատառումներով նա կտրականապես հրաժարվեց որևէ աջակցություն ցուցաբերել իր անկախության համար պայքարող Կրետեին, իսկ ապա նաև Մակեդոնիային:

XIX դ. 80-ական թվականներից սկսած արևմտյան պետությունների միջև թեժ պայքար ծավալվեց Օսմանյան կայսրությունում իրենց դիրքերն ամրապնդելու և ներթափանցման խաղաղ միջոցներով այդ վիթխարածավալ պետության տարածքներում՝ տնտեսական առավելություններ ձեռք բերելու ուղղությամբ: Պետությունների միջև հատկապես ուժգին պայքար էր ծավալվել երկաթուղային շինարարության վերաբերյալ կոնցեսիաներ ձեռք բերելու բնագավառում: 1878 և 1888 թվականներին անգլիացիներին հաջողվեց Աբդուլ Համիդ II-ից կոնցեսիա ձեռք բերել Իզմիրի շրջանում երկաթգծի կառուցման վերաբերյալ: Իրենց հերթին ֆրանսիացիներն ու ավստրիացիները ևս Օսմանյան կայսրությունում ձեռնամուխ եղան երկաթուղագծերի կառուցման խոշոր ծրագրերի իրականացման:

1888 թ. հոկտեմբերի 4-ին գերմանական «Դոյչե բանկը» սուլթանից ստացավ Բեռլին-Ստամբուլ-Բաղդադ երկաթուղագծի կառուցման կոնցեսիա: Գերմանացիների մտահղացմամբ այդ վիթխարի երկաթգիծը, որը հայտնի է «Բաղդադի երկաթուղի» անունով, պետք է իրենց հնարավորություն տար ելք ապահովելու դեպի Պարսից ծոց: Դա իր հերթին կարող էր մեծ հնարավորություններ բաց անել Գերմանիայի առջև դեպի Հնդկաստան սողոսկելու համար: Դժվար չէ նկատել, որ ռազմավարական առումով Բաղդադի երկաթուղին գլխավորապես ուղղված էր բրիտանական գաղութային կայսրության դեմ: Այն կոչված էր դառնալու մերկացված սուր, որը Մերձավոր ու Միջին Արևելքում, ինչպես նաև Հարավ-Արևելյան Ասիայում, մշտապես պետք է կախված մնար բրիտանական հզորության գլխին:

Կասկածից վեր է, որ արևմտյան տերությունների հուժկու տնտեսական ներթափանցումը Օսմանյան կայսրություն ունենալու էր լուրջ քաղաքական հետևանքներ՝ նոր մարտահրավերների առջև կանգնեցնելով առանց այն էլ ներքին և արտաքին բարդ խնդիրներ ունեցող այդ պետությանը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

1908 Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ: ԻԹԹԻՀԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՋԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Թվում էր, թե «զուլումի» դարաշրջանի տեռորի ու հետապնդումների հետևանքով Օսմանյան կայսրությունում ընդդիմադիր տրամադրությունները կատարելապես ընկճված են: Սակայն դա այդպես չէր: Թուրքական տարատոհմիկ մտավորականության, բանակի ու նավատորմի կրթված սպայության, զինվորական և քաղաքացիական մասնագիտական դպրոցների սովորողների շրջանում հասունանում էին քաղաքական ազատության գաղափարները:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի դեմ պայքար սկսելու առաջին կազմակերպված փորձը վերաբերում է 1889 թվականին, երբ Ստամբուլի ռազմա-բժշկական ուսումնարանի չորս սովորողներ (ծագումով ալբանացի Իբրահիմ Թեմոն իր երեք դասընկերների՝ Իսհակ Սյուքութիի, Աբդուլլա Ջեվդեթի և Մեհմեդ Ռեշիդի հետ) ստեղծեցին մի գաղտնի ընդդիմադիր խումբ, որի նպատակն էր բռնակալական վարչակարգի ոչնչացումը: Խումբը կառուցված էր իտալական կարբոնարների կազմակերպության գործունեության սկզբունքով: Իբրահիմ Թեմոն Իտալիայում ուսումնասիրել էր նաև գաղտնի գործունեության ֆրանկոմասոնական եղանակները և ամենայն հավանականությամբ անդամագրվել էր մասոնական օթյակներից մեկին:

Ռազմա-բժշկական ուսումնարանի փոքրիկ գաղտնի խումբը ստվարանալով, հասավ քսան-քսանհինգ մարդու: Խմբի ղեկավարները սկսեցին կապեր հաստատել Ստամբուլի այլ ուսումնական հաստատությունների, մասնավորապես, քաղաքացիական, ռազմական, ռազմածովային, բժշկական և այլ ուսումնարանների աշակերտների հետ, որոնցում ստեղծվեցին նորաստեղծ կազմակերպության բջիջներ: Խումբը կապեր հաստատեց նաև Փարիզում գործող թուրք քաղաքական

վտարանդիների հետ, որոնք ստիպված էին լքել հայրենիքը Աբդուլ Համիդի կողմից օսմանյան խորհրդարանը ցրելուց հետո: Քաղաքական վտարանդիների անդամներից մեկը, որը նախկինում եղել էր օսմանյան խորհրդարանի անդամ, սկսեց հրատարակել «Երիտասարդ Թուրքիա» անունով մի ամսագիր, միաժամանակ գաղտնի շարժման մասնակիցներին անվանելով «երիտասարդ թուրքեր»: Այսպիսով, սկսեց կազմավորվել երիտթուրքերի ընդդիմադիր գործունեության արտասահմանյան առաջին կենտրոնը, որը գլխավորեց հետագայում երիտթուրքական շարժման աչքի ընկնող պարագլուխներից ու գաղափարախոսներից մեկը՝ Ահմեդ Ռիզա բեյը, որը խոշոր կալվածատիրոջ որդի էր, ստացել էր եվրոպական կրթություն, իսկ մինչև վտարանդության մեկնելը հանդիսացել էր Բուրսայում կրթական համակարգի վերակառուցման ծրագրի ղեկավարը: 1889 թ. Ռիզա բեյը տարագրվել էր Ֆրանսիա: Փարիզում նա մյուս վտարանդիների հետ սկսել էր հրատարակել «Մեշվերեթ» («Քննարկում») թերթը, որը օտարերկրյա փոստային ծառայությունների միջոցով, գաղտնի ուղարկվում էր Օսմանյան կայսրություն: Որպես թերթի բնաբան էր ընտրված «Կարգ ու կանոն և առաջադիմություն» բառերը, որոնց հետագայում ավելացվեց նաև «Միասնություն» բառը:

Միաժամանակ Փարիզից Ռիզա բեյը զեկուցագրեր ու նամակներ էր հղում սուլթանին, որոնցում կոչ էր անում վերականգնել սահմանադրական կառավարման ձևը: Աստիճանաբար Ահմեդ Ռիզա բեյի շուրջը կազմվեց համախոհների մի ոչ մեծ խումբ, որի անդամների մեծ մասը լքել էր Թուրքիան ի նշան բողոքի՝ Աբդուլ Համիդի «զուլումի» վարչակարգի դեմ:

Շուտով ծնունդ առան նաև ուրիշ գաղտնի խմբակներ, որոնք բաղկացած էին հիմնականում սպաներից, պետական պաշտոնեությունից, առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներից և մտավորականներից:

1892 թվականին սուլթանական կառավարությանը հայտնի դարձավ երիտթուրքական գաղտնի կազմակերպության գոյության մասին: Կազմակերպության մի շարք անդամներ ձերբակալվեցին: Սուլթան Աբդուլ Համիդը երիտթուրքերի մասին, երբ նրանք դեռ նոր էին սկսել իրենց գործունեությունը, արտահայտվել է հետևյալ կերպ. «Առաջադիմություն և լույս տարածելու կեղտոտ խոսքերով... նրանք ցանկանում են պետության փորձառու մարդկանց տապալել՝ գրավելու համար նրանց աթոռները: Դրանք խղճալի կեղծավորներ են, որոնք կորցրել են կրոնը և հայրենիքը»:

Մի քանի ամիս ձերբակալված երիտթուրքերին բանտարկության

մեջ պահելուց հետո, սուլթանը նրանց բոլորին ներումն շնորհեց: Աբդուլ Համիդը ակնհայտորեն գերադասեց հալածանքներով չչիկացնել մթնոլորտը զինվորական ուսումնարաններում: Ձերբակալվածներին ազատ արձակելուց հետո նույնիսկ նրանց իրավունք տրվեց շարունակելու իրենց ուսումը:

Մինչդեռ ռազմա-բժշկական ուսումնարանի սաների կողմից կազմակերպված ընկերության գործունեությունը գնալով ընդլայնվում էր: Նրա անդամները նույնիսկ սկսեցին իրենց գաղափարների քարոզչություն մղել հոգևոր դպրոցների սովորողների՝ սոֆթերի շրջանում:

1894 թ. առանձին-առանձին գործող բոլոր գաղտնի խմբերը միավորվեցին մեկ միասնական «Միասնություն և առաջադիմություն օսմանյան ընկերություն» («Օսմանլը Իթթիհադ վե Թերաքքը Ջեմիեթի») անունը կրող կազմակերպության մեջ, որոնց անդամներին սկսեցին կոչել «իթթիհադականներ» կամ «երիտթուրքեր»: Հիշյալ կազմակերպությունը տպագրեց և Ստամբուլում տարածեց իր առաջին թռուցիկը, որում պարունակվում էր Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համատեղ պայքարի կոչ՝ ընդդեմ բռնատիրական վարչակարգի: Կոչում մասնավորապես ասվում էր. «Հեղեղի նման թափվենք Բ. Դռան, շեյխ-ուլ-իսլամի և Յըլդզի պալատի վրա, որոնք հանդիսանում են ճնշման, բռնատիրության և վատ կառավարման կենտրոններ, ոչնչացնենք այդ հիմնարկությունների բռնակալներին, ձեռք տանք մեկս մյուսին, հավաքվենք միասին, բազմապատկենք մեր ուժերը: Ապացուցենք քաղաքակիրթ աշխարհին, որ մենք ևս բոցավառված ենք սիրով դեպի ազատությունը և արժանի ենք նրան»: Կառավարությունը թռուցիկի հետ առնչություն ունեցող բազմաթիվ մարդկանց ձերբակալեց և աքսորեց կայսրության ծայրամասային շրջաններ: Ձերբակալությունից խուսափելու համար 1894-1895 թթ. մայրաքաղաքի ուսումնական հաստատությունների երիտթուրքական բջիջների շատ անդամներ լքեցին երկիրը: Նրանց մեծագույն մասը բնակություն հաստատեց Փարիզում, որտեղ Ահմեդ Ռիզա բեյի «Մեչվերեթ» թերթի խմբագրությունը դարձել էր բոլոր թուրք քաղաքական վտարանդիների համար ձգողության կենտրոն:

Երիտթուրքերը ձգտում էին տապալել արդուլհամիդյան բացարձակապետությունը, վերականգնել 1876 թ. սահմանադրությունը, ձեռք բերել քաղաքական ու տնտեսական անկախություն եվրոպական պետություններից, երկրում ապահովել թուրքական ազգային բուրժուազիայի ղեկավար դերը:

1894 թ. Ստամբուլում տեղի ունեցավ մի իրադարձություն, որը

ցնցեց ամբողջ մայրաքաղաքը: Ցանկանալով համաշխարհային հասարակական կարծիքը բևեռել Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի վրա և բողոքելով Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական ջարդերի դեմ՝ մի խումբ զինված հայ հեղափոխականներ կատարեցին ակցիա՝ գրավելով Օտտոմանյան բանկի շենքը:

Այդ իրադարձությունը ծայրահեղորեն չիկացրեց մթնոլորտը մայրաքաղաքում, որի հետևանքը հանդիսացավ հայկական ջարդերի նոր ալիքը: Երիտթուրքական կազմակերպության անդամները՝ Իբրահիմ Թեմոն, Իսհակ Սյուքութին և Դոբրուջալի Իսմայիլ Իբրահիմ էֆենդին արձագանքեցին այդ իրադարձությանը և հրատարակեցին ու տարածեցին հայերի հասցեին սադրիչ մի թռուցիկ, որտեղ ասվում էր. «Մահմեդականներ և մեր սիրեցյալ հայրենակից-թուրքեր: Հայերը այն աստիճանի համարձակություն են ձեռք բերել, որ զինված հարձակում են գործում մեր պետության բարձրագույն մարմինը հանդիսացող և բոլոր օտարերկրացիների հարգանքը վայելող Բարձրագույն Դռան վրա: Նրանք ցնցում են մեր մայրաքաղաքը: Մեր հայրենակից հայերի այդ հանդուգն գործողությունները մեզ դառնություն են պատճառում: Սակայն այդ ցավ ու ափսոսանք առաջ բերող իրադարձությունները ծնունդ են առնում և հետևանք են ճնշման, բռնակալության և վատ կառավարման: Մենք՝ թուրքերս, բոլոր օսմանցիների նման, պահանջում ենք ազատագրում այդ բռնատիրական վարչակարգից, պահանջում ենք բարեփոխումներ: Մեր ընկերությունը գործում է հենց այդ նպատակով»:

Ձնայած կառավարության կողմից իրականացվող հետապնդումներին, երիտթուրքերի Ստամբուլի կազմակերպությունը չդադարեցրեց իր գործունեությունը: Ստեղծվեց նույնիսկ կազմակերպության առաջին կենտրոնական կոմիտեն՝ աչքի ընկնող պաշտոնյա Հաջի Ահմեդ էֆենդիի նախագահությամբ: Գաղտնի կազմակերպությունն այդ ժամանակ արդեն ուներ նաև իր կանոնադրությունը, որտեղ ասվում էր, որ «Միասնություն և առաջադիմություն» ընկերության նպատակն է՝ երկրում ապահովել «արդարություն, հավասարություն, ազատություն և առաջադիմություն»: Կանոնադրության երրորդ հոդվածը որպես կազմակերպության կարևորագույն խնդիր առաջադրում էր պայքարը սահմանադրական վարչակարգի վերականգնման համար:

Երիտթուրքական շարժման գործիչներն այդ ժամանակ գլխավոր ուշադրությունը դարձնում էին մամուլի միջոցով հակակառավարական քարոզչության կազմակերպմանը: Թերթերի հրատարակման

հետ միասին երիտթուրքական կազմակերպությունների քարոզչական գործունեության մեջ հսկայական դեր էր խաղում գրքույկների, թռուցիկների և պամֆլետների լույս ընծայումը, որոնք գաղտնի տարածվում էին Օսմանյան կայսրության մեջ:

Երիտթուրքական քարոզչության թիրախ էին հանդիսանում նաև սուլթան Աբդուլ Համիդ II-ը և նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը: «Արթնացման հույսը» պամֆլետում, օրինակ, ասվում էր, որ «մարդկության պատմությունը չգիտի ավելի ապերախտ, ժլատ ու անարգ միապետի», ինչպիսին Աբդուլ Համիդն է: Ժնևում հրատարակված մեկ այլ պամֆլետում սուլթանը տիտղոսաթերթի վրա պատկերված էր ատրճանակը ձեռքին զառամյալ ծերունու տեսքով, որը ճանապարհին իր հետևից թողնում է արյան հետքեր: Սուլթանին անվանում էին «խելագուրկ», «սատանայի աչակերտ», «նզովից արմատ», «դժոխքի ծնունդ», «օձ», «կարիճ» և այլն: Պամֆլետներից մեկի հեղինակը դիմելով Աբդուլ Համիդին, դայրույթով բացականչում էր. «Ի՞նչ իրավունքով ես դու իշխում մեզ վրա, խմում մեր ջուրը, ուտում մեր հացը և չամաչելով քեզ անվանում ես մեր տերը»:

Գնալով ընդլայնվում էր վտարանդության մեջ հրատարակվող երիտթուրքական թերթերի թիվը: Դրանցից ամենաաչքի ընկնողներն էին փարիզյան «Մեչվերեթ»-ը (լույս էր տեսնում նաև ֆրանսերեն լեզվով), «Միղան»-ը («Կչեռք», Կահիրե», 1896-1897), «Օսմանլը»-ն (հրատարակվում էր Ժնևում, Լոնդոնում, Կահիրեում 1897-1904 թթ.), «Շուրայի ումմեթ»-ը («Համայնքի խորհուրդ»՝ Փարիզ, Կահիրե, 1902-1908) և այլն: Զափազանց մեծ է եղել նշված թերթերի դերը մտքեր պատրաստելու գործում:

Փարիզում վտարանդության մեջ գտնվող ընդդիմադիր խմբերը և նրանց մամուլի օրգանները իրենց գործունեության վայր ընտրեցին նաև Կահիրեն, Ժնևը, Լոնդոնը, Բուխարեստը և այլ քաղաքներ: Սալոնիկում գործող «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի անդամները, որոնք օգտվում էին մասոնների, հրեաների և դոյմեների (մահմեդականություն ընդունած հրեաների) գաղտնի աջակցությունից, իրենց գործողություններում ավելի վճռական էին, քան Փարիզում գործող կազմակերպության անդամները:

Աստիճանաբար, ինչպես և սպասելի էր, վտարանդության մեջ գործող երիտթուրքական առանձին կազմակերպությունների միջև սկսեցին ծագել գաղափարական և անձնական բնույթի տարաձայնություններ և վեճեր, որոնք պառակտում էին նրանց չարքերը: Բոլոր երիտթուրքերին միավորում էր Աբդուլ Համիդ II-ի բռնատիրու-

թյանը վերջ դնելու ընդհանուր ձգտումը միայն: Ահմեդ Ռիզայի և երիտթուրքերի մյուս պարագլուխ Մուրադի (ծագումով դաղստանցի, հայտնի է Միզանջի Մուրադ-բեյ անունով, քանի որ հրատարակում էր «Միզան» թերթը) տարաձայնությունները նրանց պառակտեցին երկու ճամբարների: Իր հերթին յուրաքանչյուր ճամբարի ներսում առկա էին ոչ քիչ թվով խմբեր, որոնց մասնակիցներն ունեին տարբեր դիրքորոշումներ:

Ահմեդ Ռիզա-բեյի խումբը դատապարտում էր Աբդուլ Համիդի կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը: 1897 թ. «Մեչվերեթ» թերթում հրապարակված հայտարարությամբ այդ խմբի կողմնակիցները պահանջում էին գահընկեց անել Աբդուլ Համիդին, գահ բարձրացնել նրա որդուն և կազմել հանձնաժողով երկրում բարեփոխումներ իրականացնելու համար:

Երիտթուրքերի մյուս թևը, այսինքն Մուրադ-բեյի կողմնակիցները, ընդհակառակը, խուսափում էին սուլթանին քննադատության թիրախ դարձնելուց: Նրանք նույնիսկ արդարացնում էին սուլթանական իշխանությունների արյունալի գործողությունները հայերի և Կրետեի ապստամբած հույների նկատմամբ: Մուրադը գտնում էր, որ կայսրության ոչ թուրք ժողովուրդները հիմքեր չունեն պայքարելու համար օսմանյան սուլթանի տիրապետությունից իրենց ազատագրման համար: Մուրադը կտրուկ կերպով ժխտում ու մերժում էր նաև ոչ թուրք ժողովուրդների իրավունքը կայսրությունից անջատվելու ուղղությամբ: Խոսելով հայկական ազատագրական շարժման մասին, նա գրում էր, որ հայերին սուլթանական գերիշխանությունից ազատագրելու ձգտումը հանդիսանում է հայկական հեղափոխական կոմիտեների «սևեռուն գաղափարը», որը նրանց տանում է դեպի «հանցավոր վճիռներ» կայացնելու և «մահմեդականների հպարտությունը վիրավորելու» վտանգավոր ճանապարհը: Մուրադ-բեյի խումբը կոմպրոմիս էր որոնում սուլթանի հետ, սահմանափակվելով չափավոր բարեփոխումներ իրականացնելու պահանջով:

Գոյություն ուներ նաև երիտթուրքերի երրորդ թևը՝ թուրք «ազատականները», կամ ինչպես իրենք էին իրենց անվանում «Ապակենտրոնացման և մասնավոր նախաձեռնության» («Թեշեբբյուսյու չախսի վե ադեմի մերքեզիեթ») կողմնակիցները՝ իշխան Սաբահեդդինի գլխավորությամբ, որոնք գտնվում էին եվրոպական սոցիալիստների ուժեղ ազդեցության ներքո: Սրանք պահանջում էին կայսրության տարբեր ժողովուրդներին տրամադրել լայն ինքնավարություն և կայսրությունը կառուցել ապակենտրոնացման հիմքի վրա:

Այդ խումբը, ի տարբերություն Ահմեդ Ռիզա բեյի խմբավորման, դեմ չէր նաև եվրոպական տերությունների հետ լայն համագործակցության: Սաբահեդդինի կարծիքով, Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդները (թուրքերը, արաբները, հայերը, քրդերը, ալբանացիները, մակեդոնացիները, հրեաները և այլն) պետք է համատեղ կերպով պայքար մղեն ոչ միայն Աբդուլ Համիդի բռնակալական վարչակարգի, այլև կենտրոնացված պետության դեմ:

Սուլթանը հիանալի տեղեկացված էր, որ քաղաքական վտարանդիների շրջանում միասնություն գոյություն չունի: Իր դիվանագետների ու լրտեսների միջոցով նա ուշի-ուշիով հետևում էր նրանց գործունեությանը և վարպետորեն օգտագործում նրանց հակասություններն ու երկպառակությունները: Եվրոպայի և Ասիայի տարբեր երկրներից, որտեղ գործում էին երիտթուրքերը, սուլթանը իր գործակալներից ստանում էր հազարավոր «ջուրնալներ» (գործակալական զեկույցներ): 1897 թ., օրինակ, իր գլխավոր գործակալ մարշալ Ահմեդ Ջելալեդդին փաշայի միջոցով հաջողվեց համոզել Մուրադ-բեյին և մի շարք այլ վտարանդիների հրաժարվելու քաղաքական պայքարից և վերադառնալու հայրենիք: Այդ մարդկանցից մի քանիսը նույնիսկ ստացան դիվանագիտական պաշտոններ:

1896 թ. ամռանը երիտթուրքերի Ստամբուլի խումբը փորձ արեց պետական հեղաշրջման միջոցով գահընկեց անելու սուլթանին: Խումբը նախապես ստացել էր Ստամբուլի առաջին բանակային դիվիզիայի հրամանատար Ֆյազիմ-փաշայի հեղաշրջմանը մասնակցության խոստումը: Սակայն դավադրությունը ձախողվեց նրա մասնակիցներից մեկի դավաճանության պատճառով, որը նախապես իշխանություններին տեղեկացրել էր նախապատրաստվող հեղաշրջման մասին: Դավադիրներն անմիջապես ձերբակալվեցին ու աքսորվեցին, սակայն նրանցից մի մասին հաջողվեց խուսափել ձերբակալությունից և փախչել Փարիզ:

1897 թ. ամռանը սուլթանը ևս մի ուժեղ հարված հասցրեց երիտթուրքերի շարժմանը: Ձերբակալվեցին Ստամբուլի մի շարք ուսումնական հաստատությունների երիտթուրքական կազմակերպության անդամները: Զինվորական դատարանը մոտ 80 մարդու դատապարտեց աքսորի, որոնք իրենց պատիժը անց էին կացնելու Հյուսիսային Աֆրիկայում, Տրիպոլիի անջուր ու կիզիչ անապատներում:

Ջնայած կրած լուրջ կորուստներին՝ շարժումը ոչ միայն շարունակվում էր, այլև կազմակերպչորեն ամրապնդվում: Նրա շարքերն էին անդամագրվում նորանոր մարդիկ: Փարիզի, Ժնևի, Կահիրեի և Լոնդոնի ե-

ռիտթուրքական արտասահմանյան կենտրոնները համալրվեցին Ռումինիայում, Բուլղարիայում և Ալբանիայում բացված նոր կենտրոններով:

Վտարանդության մեջ գտնվող երիտթուրքական տարբեր խմբերի ու խմբակների գործունեությունը միավորելու առաջին փորձը կատարեց երիտթուրքերի Կահիրեի խումբը 1899 թվականին: Վերջինս առաջարկեց հրավիրել երիտթուրքական կազմակերպությունների կոնգրես: Սակայն զանազան խնդիրների պատճառով գործը գլուխ չեկավ: Չնայած դրան, միավորման գաղափարը գնալով ձեռք էր բերում ավելի ու ավելի շատ կողմնակիցներ: Օրինակ, 1900 թ. օգոստոսին, երիտթուրքական շարժման մասնակիցներից մեկը՝ Ալի Ֆահրին, Ժնևում հրատարակեց մի գրքույկ, որտեղ զարգացնում էր այն միտքը, որ երկիրը գտնվում է աղետալի վիճակում, հետևաբար չուտափույթ կերպով կոնգրեսի գումարումը հույժ անհրաժեշտություն է: Գրքույկում ասվում էր, որ անհրաժեշտ է միավորել կայսրության բոլոր ժողովուրդների ջանքերը բռնակալության դեմ արդյունավետ պայքար մղելու համար: Ալի Ֆահրին հորդորում էր միավորումն իրականացնել առանց կրոնների ու ազգությունների միջև տարբերություն դնելու: Նա կոչ էր անում հայ, մակեդոնական, ալբանական հեղափոխական խմբակներին ու կոմիտեներին հրաժարվել իրենց նեղ ազգային իրավունքներն ու շահերը ապահովելու ուղղությամբ մղվող պայքարից և միավորվել երիտթուրքերի հետ հանուն ընդհանուր պայքարի Աբդուլ Համիդի և նրա վարչակարգի դեմ: Ալի Ֆահրին այնուհետև նշում էր. որպեսզի չկրկնվեն հայկական ջարդերի հետ կապված իրադարձությունները, որոնց մասին չի կարելի հիշել առանց «սարսափի ու խորը ափսոսանքի զգացման», անհրաժեշտ է, որ «մեր հայրենակից հայերը իրենց պայքարում ընթանան երիտթուրքերի կողքին»: «Մեզ անհրաժեշտ է գալ համաձայնության,- գրում էր Ալի Ֆահրին,- որպեսզի գերեզմանենք այդ անիծյալ կառավարությունը, որը թաթախված է ժողովրդի արյունով և ձեռք բերենք բոլոր քաղաքացիների համար ազատություն և հավասարություն»:

Սակայն կայսրության ոչ թուրք ժողովուրդների մասին Ալի Ֆահրիի կողմից գրված «անուշ» արտահայտությունների կողքին, այնուամենայնիվ նրա գրքույկի մեջ կարմիր թելի պես անցնում էր երիտթուրքական քարոզչությանը և գործելակերպին բնորոշ միտումը՝ ժխտելու կայսրության ոչ թուրք ժողովուրդների մաքառումների ոչ միայն իմաստը, այլև նրանց իրավունքը հանուն իրենց անկախության համար մղվող պայքարի:

Կոնգրեսի գումարումը հասունացավ այն բանից հետո, երբ Աբ-

դուլ Համիդի դեմ պայքարին իր երկու որդիների հետ հարեց կայսրության խոշորագույն պաշտոնյաներից մեկը՝ սուլթանի փեսա (ամուսնացած էր Աբդուլ Համիդի քրոջ հետ) Դամադ Մահմուդ փաշան, որը 1876 թ. սահմանադրության վերականգնման համոզված կողմնակից էր: Երբ նրա բազմաթիվ փորձերը համոզելու սուլթանին, որ վերականգնի սահմանադրությունը՝ ավարտվեցին անհաջողությամբ, նա որոշեց արտագաղթել երկրից: Նրա որդիներից մեկը՝ իշխանազուն Մեհմեդ Սաբահեդդինը, շուտով դարձավ թուրքական վտարանդության հեղինակավոր առաջնորդներից մեկը: Հենց նա էլ մեծապես նպաստեց երիտթուրքական առաջին կոնգրեսի գումարմանը: Ովքեր միջոցների կարիք ունեին մեկնելու համար Փարիզ, կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար, իշխանը առատաձեռնորեն օգնում էր նրանց:

Երիտթուրքերի առաջին կոնգրեսը տեղի ունեցավ Փարիզում՝ 1902 թ. փետրվարի 4-9-ը: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էր 60-70 մարդ (այլ տվյալներով՝ 47): Երիտթուրքական կազմակերպություններից բացի, կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին նաև հայկական, հունական, արաբական, ալբանական քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պատգամավորների թվում կային նաև չերքեզներ, քրդեր, հրեաներ: Կոնգրեսի նախագահ ընտրվեց Սաբահեդդինը, իսկ փոխնախագահներ՝ հույն Մուսիրիս Գիդիսը և հայ Սիսլիյանը:

Օրակարգի մեջ ընդգրկված հարցերից քննարկումների կենտրոնում էին երկու կարևորագույն հարցեր՝ արդյոք բանակը պե՞տք է դարձնել չարժման մասնակից և Թուրքիայում սահմանադրական բարեփոխումներն ապահովելու համար արդյոք օտարերկրյա պետությունները պե՞տք է ունենան մասնակցություն, թե ոչ: Ի դեպ, այդ երկրորդ հարցը կոնգրեսի քննարկմանը ներկայացրին հայ պատգամավորները:

Հիշյալ հարցերի քննարկման ընթացքում երևան եկան երկու հակընդդեմ տեսակետներ: Ահմեդ Ռիզան և նրա կողմնակիցները հանդես եկան ցանկացած օտարերկրյա միջամտության դեմ: Այս խումբը նաև գտնում էր, որ չպետք է սահմանափակվել զուտ քարոզչական գործունեությամբ և սուլթան Աբդուլ Համիդի բռնատիրական վարչակարգը տապալելու համար անհրաժեշտ է ուժ գործադրել, այսինքն օգտագործել բանակը: Այդ խումբը իրեն հայտարարեց ազգային իրավահավասարության կողմնակից, սակայն դեմ էր ազգային փոքրամասնություններին լայն ինքնավարություն տրամադրելուն: Այդ

հարցի կապակցությամբ Ահմեդ Ռիզա-բեյի կողմնակիցները հայտարարեցին, որ ազգային փոքրամասնություններին լայն իրավունքներ տրամադրելը հավասարազոր է կայսրության մասնատմանը առանձին կտորների:

Պատգամավորների մյուս խումբը, որը գլխավորում էր Մեհմեդ Սաբահեդդինը, փորձում էր ապացուցել Օսմանյան կայսրությունում բարեփոխումների գործին տերությունների օգնության կարևորությունը: Սաբահեդդինի դիրքորոշումը պաշտպանեցին ինչպես ոչ թուրք պատգամավորները, այնպես էլ մի շարք թուրք պատգամավորներ, որոնք չէին հավատում, որ երիտթուրքերը ընդունակ կլինեն ինքնուրույն, առանց եվրոպական պետությունների օգնության, ապահովելու հաջող պայքարը սահմանադրության վերականգնման համար: Ձայների մեծամասնությամբ ընդունված բանաձևի մեջ արտացոլվեցին գլխավորապես Սաբահեդդինի ու նրա համախոհների հայացքները, որոնք նպատակահարմար ու հնարավոր էին համարում նաև զգալիորեն ապակենտրոնացնել վարչական կառավարումը և լայն լիազորություններ տալ տեղական իշխանություններին: Մինչդեռ Ահմեդ Ռիզայի խումբը կողմնակից էր սահմանադրական միապետության պայմաններում իշխանության խստիվ կենտրոնացումը:

1902 թ. երիտթուրքական կոնգրեսին մասնակցում էին հայկական ազգային կուսակցություններից Հայ Յեղափոխական Դաշնակցությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, Հնչակյան կուսակցությունը, ինչպես նաև մի շարք անկուսակցական գործիչներ (Մինաս Ջերազը, Բասմաջյանը և այլն):

Կոնգրեսում Հայկական հարցի շուրջը հայերի և երիտթուրքերի միջև համաձայնություն տեղի չունեցավ, քանի որ իթթիհադականները չէին ուզում ճանաչել հայկական առանձին դատի գոյությունը: Բոլոր հայ պատգամավորները հայտարարում էին, որ իրենք ևս կողմնակից են Թուրքիայի ամբողջականության գաղափարին, ինչպես նաև ջերմորեն համակրում են նրա ընդհանուր բարենորոգման իրականացմանն ու միդհատյան սահմանադրության արմատավորմանը, նույնիսկ խոստանում էին համագործակցել երիտթուրքերի հետ համիդյան ռեժիմը փոխելու նպատակով ձեռնարկվող բոլոր գործողություններին, բայց և ավելացնում էին, որ իրենք նաև ցանկանում են, որ անմիջականորեն կենսագործվեն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և մեծ տերությունների կողմից ընդունված 1895 թ. մայիսի 11-ի հիշատակագրի որոշումները հայկական բարեփոխումների վերաբերյալ: «Ահմեդ Ռիզայի կուսակցությունը,- գրում է դաշնակցական

գործիչ Միքայել Վարանդյանը,- կատաղաբար ըմբոստացավ հայկական ուրույն դատին և Եվրոպայի ամեն մի գործոն միջամտության դեմ Թուրքիո ներքին գործերում: Հայ պատգամավորները ստիպվեցան հեռանալ համաժողովեն»: Այնուհետև նա շարունակում է. «Անոնց (երիտթուրքերի - Վ. Բ.) գլխավոր մտահոգությունն էր լուծել հայկական դատը «ընդհանուր համաօսմանյան բարենորոգումներու մեջ»: Աբդուլ Համիդն ալ արդեն այդպես կառաջադրեր ամեն անգամ, երբ արտաքին ճնշումներեն նեղված, կուզեր կերպով մը ձգձգել բուն հայկական ռեֆորմները»:

Այսպիսով, երիտթուրքերի առաջին կոնգրեսը չկարողացավ ապահովել միասնությունը շարժման մեջ: Կոնգրեսի աշխատանքների ավարտից հետո Ահմեդ Ռիզայի խումբը կազմակերպորեն ձևավորվեց որպես «Առաջադիմության և միասնության ընկերություն»: Իսկ Սաբահեդդինն ու նրա կողմնակիցները անջատվելով «Իթթիհադ վե թերաքքիից» («Միասնություն և առաջադիմություն») ստեղծեցին «Անձնական նախաձեռնության ու ապակենտրոնացման ընկերությունը», որն իր կարևորագույն խնդիրն էր համարում նոր պետության ստեղծումը, որը պետք է «հիմնված լիներ լայն համադաշնության» վրա:

Այդ երկու կազմակերպությունները գործում էին ինքնուրույն կերպով, առանց մեկը մյուսի հետ կապեր ունենալու, ունեին իրենց քաղաքական ծրագրերը և սեփական մամուլի օրգանները: «Առաջադիմություն և միասնություն ընկերությունը» հրատարակում էր «Մեչվերեթ» և «Շուրա-ի ումմեթ» թերթերը: Այդ կազմակերպությունը իր ծրագիրը ձևակերպում էր հետևյալ կերպ. Օսմանյան կայսրության անկախության և ամբողջականության պահպանում, օսմանյան դինաստիայի պահպանում, 1876 թ. սահմանադրության վերականգնում, կայսրության բոլոր հպատակների միասնություն, պայքար Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների մոտ հայրենասիրական զգացումների արմատավորման համար:

Իսկ Սաբահեդդինը և նրա կողմնակիցները ըստ էության առաջարկում էին կայսրությունը կառուցել նրա մեջ մտնող առանձին երկրների ու ժողովուրդների համադաշնության հիմքի վրա, այլ կերպ ասած, ապակենտրոնացնել Օսմանյան կայսրությունը:

«Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերությունը» իր կենտրոնատեղի ընտրեց Փարիզը և աստիճանաբար իր բաժանմունքները ստեղծեց ինչպես բուն Օսմանյան կայսրության տարածքում (գաղտնի կոմիտեներ Իզմիրում, Էրզրումում, Տրապիզոնում

և Դամասկոսում), այնպես էլ նրա սահմաններից դուրս (Կահիրեում):

Փարիզի կոնգրեսում Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության և Իշխան Սաբահեդդինի «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» միջև հաստատվեցին սերտ կապեր, որը պայմանավորված էր նրանց գաղափարական մոտիկությամբ: Առհասարակ, կոնգրեսում հայկական պատվիրակությունը որդեգրել էր հետևյալ դիրքորոշումը և այդ առթիվ հանդես եկավ հայտարարությամբ, որ աջակցելով Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող վարչակարգի դեմ պայքարին և պատրաստ լինելով այդ բնագավառում համագործակցության համար, իրենք չարունակելու են սեփական գործողությունները, նպատակ ունենալով ապահովել կայսրության հայ բնակչություն ունեցող վիլայեթներում միջազգային համաձայնագրերով նախատեսված բարեփոխումների անհապաղ իրագործումը: Կոնգրեսի հայկական ֆրակցիան պահանջում էր նաև հայ բնակչություն ունեցող շրջաններում ստեղծել տեղական վարչություն:

Իշխան Սաբահեդդինը և նրա խմբի ամենաակտիվ անդամներից մեկը՝ Իսմայիլ Քեմալը, ձեռնարկեցին պետական հեղաշրջման փորձ: Ստանալով Տրիպոլիում տեղակայված թուրքական զորամասի հրամանատար մարշալ Ռեջեփ-փաշայի աջակցության խոստումը, հեղաշրջումը պլանավորողները մտադիր էին զորախաղերի պատրվակի տակ Դարդանելի վրայով մի քանի մարտունակ գումարտակներ նետել Ստամբուլ, շրջափակել սուլթանական պալատն ու Բ. Դռան շենքը և միանալով մայրաքաղաքում հեղաշրջման կողմնակիցների հետ՝ ստիպել սուլթանին հայտարարելու 1876 թ. սահմանադրության վերականգնման մասին: Սակայն դավադրությունը ձախողվեց:

Ֆեոդալական-կղերական ռեակցիայի սանձարձակության պայմաններում երիտթուրքական շարժմանը հարեցին նաև սուլթանից դժգոհ ֆեոդալական բյուրոկրատիայի նշանակալի թվով ներկայացուցիչներ: Դրա հետևանքով երիտթուրքական կազմակերպությունների սոցիալական կազմը վերին աստիճանի խայտաբղետ ու տարասեռ էր: Այդ հանգամանքը կանխորոշեց մշտական գաղափարական տարաձայնությունները շարժման մեջ:

Քննարկվող ժամանակաշրջանում երիտթուրքական շարժումն աչքի էր ընկնում կազմակերպական ծայրահեղ թուլությամբ և մեկուսացվածությամբ, որը եղած գաղափարական տարաձայնությունների պատճառով չկարողացավ հաղթահարել նաև երիտթուրքական կազմակերպությունների առաջին կոնգրեսը: 1902 թ. փարիզյան

խորհրդաժողովից հետո իթթիհադականների քաղաքական ակտիվությունը նկատելիորեն ընկավ: Սակայն շարժումը չարունակվում էր:

1906 թ. երկրի ներսում սկսվեց երիտթուրքերի ակտիվ գործունեության նոր շրջան: Դա կապված էր ամենից առաջ այն բանի հետ, որ 1906 թ. Սալոնիկում կազմակերպվել էր նոր գաղտնի կազմակերպություն՝ «Ազատության օսմանյան ընկերությունը», որի նպատակն էր պայքարել բռնակալական ռեժիմի և օտարերկրյա միջամտության դեմ: Իր կազմակերպումից չատ չանցած, ընկերությունն սկսեց կողմնակիցներ հավաքագրել, հատուկ ուշադրություն դարձնելով բանակում տարվող աշխատանքին: 1906 թ. վերջին Դամասկոսում կազմվեց երիտթուրքական շարժման մի բջիջ ևս:

Մայրաքաղաքում ևս, հատկապես Ստամբուլի սովորող երիտասարդության շրջանում, գնալով աճում էին գոյություն ունեցող իշխանության տապալման տրամադրությունները: Այդ տրամադրությունները համակել էին նույնիսկ Գալաթասարայի կայսերական լիցեյի ուսանողությանը: Այդ հաստատությունում սովորող կառավարող վերնախավի զավակները, որոնց սովորեցրել էին, որ հանդիսավոր արարողությունների ժամանակ պետք է գոչել «Կեցցե փադիշահը», 1906 թ. նման մի տոնախմբության ժամանակ միանգամայն անսպասելիորեն գոչեցին «Կորչի փադիշահը»: Արմատական տրամադրությունները ավելի ցայտուն ձևով էին դրսևորվում նահանգների սովորող երիտասարդության շրջանում:

Սուլթանի համար միանգամայն անսպասելի էր, որ խռովարարական տրամադրությունները տեղ են գտել նույնիսկ թուրքական բանակի էլիտայի՝ զինվորական ստորաբաժանումների սպայության շրջանում, որը հանդիսանում էր իր իշխանության հենարանը: Համեմատաբար բարձր մտավոր ներուժը և արթնացող քաղաքական գիտակցությունը նրանց վեր էր ածում ցանկացած հեղափոխական շարժման առաջապահ ջոկատի: Սպաների դժգոհությունը ուժգնանում էր նաև իրենց աշխատավարձերի վճարման ձգձգումների, զենքի ու մարտական տեխնիկայի պակասի պատճառով:

1906–1907 թթ. Թուրքական բանակում ու նավատորմում տեղի ունեցան զինվորների ու նավաստիների բացահայտ ելույթներ: Նշանակալից հակակառավարական ելույթների ասպարեզ դարձավ նաև Անատոլիան: «1907 թ. Թուրք սովալլուկ ժողովուրդն էր,– գրում է Միքայել Վարանդյանը,– որ չդիմանալով տուրքերու բեռին և ապրուստի հարաճուն սղության, խլրտաց ու ցույցեր սարքեց իշխանություններու դեմ Էրզրում, Վան, Բիթլիս, Տիգրանակերտ և այլուր:

Էրզրումի մեջ Թուրք ամբոխը անարգեց, ծեծեց, պահ մը նույնիսկ բանտարկեց ատելի կուսակալը: Կառավարությունը կպատասխաներ խմբական աքսորներով, որոնք ավելի ևս կբորբոքեին հրդեհը: Տիգրանակերտում Թուրք ու Հայ ժողովուրդները կը սարքեին նույն ցույցերը Թև Թևի»:

Թեև 1907 Թ. վերջին կառավարությանը հաջողվեց բանակի օգնությամբ ճնշել հակակառավարական ելույթները Արևելյան Անատոլիայի, մասնավորապես Արևմտյան Հայաստանի քաղաքներում, սակայն այնտեղ տեղի ունեցող իրադարձությունները ակնառու կերպով հաստատում էին, որ երկրում անկասելի ձևով հասունանում է հեղափոխական իրավիճակ: Դա հանգեցրեց երիտԹուրքական կազմակերպությունների գործունեության ակտիվացմանը ինչպես Օսմանյան կայսրության սահմաններից դուրս, այնպես էլ երկրի ներսում: «Միասնություն և առաջադիմություն» կազմակերպությունը ընդարձակ նամակագրություն էր վարում Թուրքիայում եղած իր համախոհների հետ, նրանց կոչ անելով կազմակերպության նոր բջիջներ ստեղծել երկրի ներսում: Իր գործունեությունն ակտիվացրեց նաև «Անձնական նախաձեռնության ու ապակենտրոնացման ընկերությունը», որն իր անդամներին ուղարկեց Անատոլիա՝ կուսակցության բաժանմունքներ ստեղծելու համար: Նկատելի էր նաև երիտԹուրքական կազմակերպությունների մերձեցումը հեղափոխական այն կուսակցությունների ու խմբավորումների հետ, որոնք պաշտպանում էին Օսմանյան կայսրության ոչ Թուրք ժողովուրդների շահերը: Հատկապես լայն ծավալ ընդունեցին շփումները հայ քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև մակեդոնական ազատագրական շարժման հետ:

1907 Թ. գարնանը Վիեննայում տեղի ունեցած Հ. Յ. Դաշնակության չորրորդ ընդհանուր ժողովը ընդունել էր հետևյալ որոշումը, «Խորին ուրախությամբ դիտելով Թուրք ժողովրդի մեջ ծայր առած հակակառավարական դժգոհության երևույթները, նպաստավոր վայրկյանը հասած կը նկատե համերաշխության գաղափարի իրականացումը գործնական հողի վրա դնելու, ինչ որ դժբախտաբար ցարդ չէր հաջողած Դաշնակցության, հակառակ տարիներե ի վեր ձեռք առած միջոցներուն... Ձգտիլ Թուրքիո այլ ազգություններու հեղափոխական կուսակցություններու և տարրերու մեջ համերաշխություն առաջ բերել և կազմել հեղափոխական դաշնակցություն մը, ֆեդերատիվ սկզբունքի վրա հիմնված քաղաքական ծրագրով, որ ապահովե բոլոր ազգություններու իրավունքը: Այս գաղափարի իրա-

կանացման համար՝ առաջին պատեհությամբ իսկ հրավիրել համաժողով մը վերոհիշյալ տարրերու մասնակցությամբ։

Միևնույն ատեն, Թուրքերու մեջ տարածված անհիմն թյուրիմացություններուն վերջ տալու համար, ժողովը պարտք կհամարի հայտարարել, որ Դաշնակցությունը Թուրքիո մեջ ունեցած չէ և չունի անջատական և ոչ մեկ ձգտում, այլ իր նպատական է եղած ազգերու կատարյալ հավասարություն և՝ տեղական լայն ինքնավարության սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայեթներուն մեջ վարչական ինքնավարության հաստատումը, ինչ որ չի հակասեր մյուս ազգերու իրավունքին»։

Այսպիսով, դաշնակցությունը հանդես էր բերում նոր կոնգրես հրավիրելու նախաձեռնություն՝ բռնակալական վարչակարգի դեմ պայքարող բոլոր քաղաքական կուսակցությունների ու խմբերի համատեղ գործողությունների հարցը քննարկելու համար։

Օսմանյան կայսրության ընդդիմադիր կազմակերպությունների «ընդհանուր կոնգրեսը» բացվեց Փարիզում 1907 թ. դեկտեմբերի 27-ին և իր աշխատանքները չարունակեց մինչև դեկտեմբերի 29-ը։ Կազմակերպչական կոմիտեն հրավերներ էր ուղարկել բոլոր ընդդիմադիր կազմակերպություններին, սակայն կոնգրեսի աշխատանքներին մասնակցեցին միայն «Միասնություն և առաջադիմություն կոմիտեն», Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, «Ապակենտրոնացման և մասնավոր նախաձեռնության լիգան», արաբական «Հայֆեթ» կազմակերպությունը, ազգային առանձին խմբեր (հրեական, ալբանական) և այլն։ Ընդհանուր առմամբ մասնակցում էին 17 թուրք, 5 հայ և մեկ-երկու այլ ազգությունների ներկայացուցիչներ։ Հայերից 4-ը դաշնակցականներ էին, իսկ մեկը «Արմենիա» թերթի խմբագրության ներկայացուցիչն էր։

Կոնգրեսի նախագահության կազմում ընդգրկված էին «Իթթիհադ վե թերրաքքը»-ի փարիզյան կոմիտեի նախագահ Ահմեդ Ռիզաբեյը, «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման լիգայի» ղեկավար իշխան Սաբահեդդինը և Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ Խաչատուր Մալումյանը (Ակնունի)։ Հենց այս երեքն էլ ընտրվեցին նախագահներ՝ նիստերի հետագա ղեկավարման համար։

Կոնգրեսն ընթացավ սուր բանավեճերի պայմաններում։ Ավարտելով իր աշխատանքները, 1907 թ. դեկտեմբերի 29-ին Կոնգրեսն ընդունեց «Հռչակագիր», որում չարադրված էր սուլթանական վարչակարգի դեմ հանդես եկող բոլոր կուսակցությունների ու խմբավո-

ռումների համատեղ գործողությունների ծրագիրը: Այն իր մեջ ներառում էր հետևյալ կետերը. Գահընկեց անել սուլթան Աբդուլ Համիդին: Դա հիմնավորվում էր նրանով, որ իր 30 տարվա կառավարման ընթացքում սուլթանը հալածում ու հետապնդում է և քրիստոնյաներին և մահմեդականներին, գրգռում է ժողովուրդներին իրար դեմ, կաշկանդում է նրանց առաջընթացը, ստրկացնում մամուլը, չի մտահոգվում արտադրողական ուժերի զարգացմամբ, դատապարտում է զանգվածներին աղքատության ու խեղճության, ֆիզիկական բնաջնջման: Նրա ավերիչ կառավարման հետևանքով բնակչությունը, հատկապես քրիստոնյաները, արտագաղթում են, ուժեղանում է եվրոպական տերությունների միջամտությունը Օսմանյան կայսրության ներքին գործերին, կայսրությունից անջատվում են տարածքներ: Եթե սուլթանի վարչակարգը չարունակի հարատևել, կանջատվեն նաև Մակեդոնիան, Արաբիան, Այլբանիան, Հայաստանը: «Այսօր ամեն ոք, որ ընդունակ է մտածելու, պարզ կը հասկնա, թե թյուրք կառավարության մեջ անմիջական փոփոխություն մը միայն կրնա արգելել կայսրության վերջնական մեծ աղետը և քայքայումը, պետք է ուրեմն անհապաղ և բոլոր հնարավոր միջոցներով տապալել ռեժիմ մը, որ այսքան աղետներու պատճառ եղավ»:

Այնուհետև «Հոչակագրում» որպես ծրագրային դրույթներ առաջարկվում էին հետևյալ կետերը. 1. արմատապես փոխել Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող կարգերը: 2. Հաստատել ներկայացուցչական վարչակարգ և բաց անել խորհրդարան: 3. Զինված դիմադրություն ցուցաբերել իշխանություններին և նրանց ձեռնարկած քայլերին: 4. Հայտարարել տնտեսական ու քաղաքական գործադուլներ: 5. Հրաժարվել կառավարությանը հարկեր և տուրքեր վճարելուց: 6. Բանակում մղել հակահամիդյան քարոզչություն, կոչ անելով զինվորներին դուրս չգալ բնակչության ու հեղափոխականների դեմ: 7. Բարձրացնել համընդհանուր ապստամբություն: 8. Ստեղծել մնայուն գաղտնի խառն կոմիտե Թուրքիայում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներից: 9. Ուժգին զարկ տալ հակակառավարական և հեղափոխական քարոզչությանը, հրատարակելով գրքույկներ թուրքերեն, հայերեն, հունարեն, բուլղարերեն, ալբաներեն, արաբերեն և քրդերեն լեզուներով:

Բավական ընդարձակ փաստաթղթի՝ «Հոչակագրի» կեսը նվիրելով Աբդուլ Համիդ II-ի ցասկոտ խարազանմանը՝ նրա հեղինակները չրջանցում էին Օսմանյան կայսրության ապագա պետական կառուցվածքի վերաբերյալ հարցը: Նրանք սահմանափակվում էին մի-

այն սահմանադրությունը վերականգնելու և խորհրդարան հրավիրելու մասին խոսքերով: Փաստաթղթում բացակայում էր նաև երկրի սոցիալական ու քաղաքական կյանքի վերլուծությունը:

«Հռչակագրի» տակ ստորագրել էին «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն, «Հայ Յեղափոխական Դաշնակցությունը», «Անձնական նախաձեռնության ու ապակենտրոնացման լիգան», «Եգիպտոսի հրեական կոմիտեն», «Իլաֆեթ» թերթի խմբագրությունը, «Արմենիա» թերթի խմբագրությունը, «Ռազմիկ» լրագրի խմբագրությունը, «Հայրենիք» թերթի խմբագրությունը և «Օսմանյան համաձայնության կոմիտեն» (Եգիպտոս):

Կոնգրեսի ավարտից հետո նրա որոշումներին միացան նաև մի շարք կազմակերպություններ, որոնք իրենց մասնակցությունը չէին բերել կոնգրեսի աշխատանքներին: Այդ կազմակերպություններից հիշատակության արժանի են «Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը», «Թուրք լիբերալների ընկերությունը», «Օսմանյան հեղափոխականների ֆեդերացիան» և այլն:

1907 թ. փարիզյան կոնգրեսում ապագա պետական ու քաղաքական կարգի սկզբունքային հարցերի վերաբերյալ եղած տարաձայնությունները չվերացվեցին, այլ ժամանակավորապես հանվեցին քննարկումից: Երիտթուրքերի և ճնշված ժողովուրդների ընդդիմադիր կազմակերպությունների միջև ձեռք էր բերվել լոկ ժամանակավոր համաձայնություն, որը հետապնդում էր իշխանությունը սուլթանից խլելու նպատակ: Կոնգրեսում ընդունված հանրագումարային փաստաթղթի մյուս առանձնահատկությունն այն էր, որ բռնատիրական-միահեծան վարչակարգի արատները հանգեցվել էին իշխող միապետի «անձնական թերություններին»:

Կասկածից վեր է, որ Փարիզի այդ կոնգրեսը բավականին մեծ դեր խաղաց բռնակալական վարչակարգի դեմ դիմադրության քաղաքական ուժերի համախմբման գործում: Կոնգրեսից հետո երիտթուրքերի կազմակերպություններն առանձնահատուկ ակտիվությամբ սկսեցին գործել երկրի ներսում: Նրանք ավելի եռանդուն կերպով լծվեցին քարոզչության հատկապես բանակում:

Միաժամանակ հարկ է նշել, որ կոնգրեսի ժամանակ երիտթուրքերը հասկացրին դաշնակցության ներկայացուցիչներին, որ նրանց երազանքները Փոքր Ասիայում ինքնուրույն հայկական պետության ստեղծման վերաբերյալ անիրականանալի են: Նրանք փորձում էին համոզել հայերին, որ սահմանադրության վերականգնման դեպքում կայսրության հայ բնակչությունը «այլ ժողովուրդների հետ համա-

հավասար կստանա ինքնակառավարման իրավունք, հետևաբար նաև լիակատար իրավունք կունենա օրինական ճանապարհով պաշտպանելու իր շահերը»: Առհասարակ երիտթուրքերը հայկական, մակեդոնական, ալբանական և այլ հեղափոխական խմբերին ու կոմիտեներին կոչ էին անում չպայքարել սեփական ազգային իրավունքների ու շահերի ապահովման համար, այլ համախմբվել երիտթուրքերի շուրջը՝ սուլթան Աբդուլ Համիդի և նրա վարչակարգի դեմ ընդհանուր պայքարը հաջողությամբ իր վախճանին հասցնելու համար:

Եվրոպայի առաջավոր մարդիկ ողջունեցին երիտթուրքերի երկրորդ կոնգրեսում ընդունված որոշումները: Օրինակ, Ֆրանսիս դը Պրեսանսեն «Պրո Արմենիա» թերթին ուղղված իր նամակում գրում էր. «Ներկայիս, երբ բարոյական այնքան սնանկություններու դեմ ունեցած ատելությունը ինձ չի տրամադրեր լավատեսության, կը սպասեմ, վստահությունով, Աբդուլ Համիդի դեմ ողջ Արևելքի այս զորաշարժի արդյունքին, առանց խտրության ցեղերու և կրոններու»: Իսկ Պիեռ Քիյառը «Դրօշակ»-ին ուղղված իր շնորհավորական գրությունը ավարտում էր հետևյալ կերպ. «... Հայ հեղափոխականներն էին, որ իրենց հերոսական կռիվներով սորվեցուցին փրկության միակ ուղին, ուր այժմ ամենքն ալ վճռականորեն առաջ կը խաղան: Հարգանք հեղափոխականներուն, որոնք այդ գերագույն կռվի մեջ իրենց հետ ունին Եվրոպայի և ողջ աշխարհի իրենց բարեկամներուն ջերմեռանդ ու ակընդետ համերաշխությունը»:

2. 1908 Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ: ԻԹԹԻՀԱԴԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԻ ՄՈՏ

Օսմանյան կայսրության ներքին շարժումներին շուտով միացավ նաև արտաքին մի զորավոր ազդակ, որն արագացրեց իրադարձությունների ընթացքը: 1908 Թ. առաջին կեսին Մակեդոնիան դարձել էր Օսմանյան կայսրության մի այնպիսի շրջան, որտեղ ամբողջ այդ պետությանը հատուկ սոցիալական և ազգային հակասությունները դրսևորվում էին առանձնակի սրությամբ և ուժով: Մակեդոնիան փոթորկում էր հակաթուրքական ապստամբությունների հորձանուտում:

1908 Թ. սկզբին սուլթանական կառավարությունը Ավստրո-Հունգարիային տրամադրեց ավստրիական սահմանից Նովո-Բազար սանջակի վրայով մինչև Սալոնիկ երկաթուղագիծ կառուցելու կոնցեսիա: Այդ նախագծի իրականացումը կհանգեցներ ոչ միայն Եոյակ դաշինքի երկրների ռազմավարական, քաղաքական և տնտեսական

ազդեցության մեծացմանը Բալկաններում, այլև Մակեդոնիայի «գերմանիզացմանը»: Բոլոր դեպքերում հորիզոնի վրա նշմարվում էր Մակեդոնիայի անջատման և Թուրքիայի նոր անդամահատման հեռանկարը:

1908 թ. հենց սկզբին Մակեդոնիայում տեղակայված թուրքական երրորդ բանակային կորպուսի զինվորականների շրջանում սկսվեցին հուզումներ: Միանգամայն ակնհայտ էր, որ Մակեդոնիայում հասունանում էին լուրջ իրադարձություններ: 1908 թ. մայիսի վերջին երիտթուրքերը մեծ տերությունների հյուպատոսներին ուղարկեցին մի հուշագիր, որը պարունակում էր բողոք Մակդեոնիայի ներքին գործերին օտարերկրյա միջամտության դեմ: Հուշագրում ասվում էր, որ իրենք թույլ չեն տա, որ Մակեդոնիան դառնա օտարերկրյա պետության ավարը:

1908 թ. հունիսի 9-10-ին Ռևելում տեղի ունեցավ Նիկոլայ II ցարի հանդիպումը անգլիական Էդվարդ VII թագավորի հետ, որի ընթացքում բանակցությունների հիմնական թեման Մակեդոնիայի ճակատագրի հարցն էր: Հանդիպման ընթացքում ձեռք բերվեց համաձայնություն Մակեդոնիա 10-12 հազարանոց բանակ մտցնելու վերաբերյալ՝ այդ երկրամասում «կարգ ու կանոնը» պահպանելու համար: Ստեղծվել էր ոչ միայն մակեդոնական իրադարձություններին օտարերկրյա միջամտության ռեալ սպառնալիք, այլև Մակեդոնիայի անջատման վտանգ Օսմանյան կայսրության կազմից: Որպես դրա պատասխան, Էդիրնեում, Կրջալիում, Մոնաստիրում, Ուսկյուդարում և մի շարք այլ վայրերում տեղի ունեցան զինվորական հակակառավարական խռովություններ, որոնք հրահրված էին երիթուրքերի կողմից: Վերջիններս իրենց գործունեությունը ակտիվացրին Սալոնիկի իրենց կենտրոնում, որտեղից սկսեցին եռանդուն կերպով ազդել մակեդոնական իրադարձությունների վրա: Ի դեպ, Մակեդոնիայում տեղակայված բանակային զորամասերի սպայական կազմի մեծամասնությունը կամ երիտթուրքական կազմակերպության անդամներ էին, կամ ակտիվ համակիրներ: Իշխանությունների հետապնդումները խռովարարների նկատմամբ չէին տալիս ցանկալի արդյունքներ: Զորամասերում հուզումները շարունակվում էին:

Նման իրադրության պայմաններում երիտթուրքերը որոշեցին ելույթ ունենալ: 1908 թ. հուլիսի սկզբին Մակեդոնիայում բռնկեց զինված ապստամբություն, որը գլխավորեցին երիտթուրք սպաները: Առաջինը ապստամբության դրոշը պարզեց Մակեդոնիայի Ռեսնա քաղաքի զորամասը, նրա սպաներից մեկի՝ Ահմեդ Նիյազի բեյի գլխավորությամբ, որին անմիջապես աջակցություն ցույց տվեց երիտթուր-

քերի Մոնաստիրի կենտրոնը: Ապստամբությանը մասնակից էր նաև մայոր Էնվեր բեյը (հետագայում Էնվեր փաշա):

Հուլիսի 3-ին Նիյազի բեյի 200 հոգուց բաղկացած ջոկատը բարձրացավ սարերը: Շուտով նրան միացան նաև այլ զորամասերից զինված ջոկատներ և չեթայական խմբեր: Ապստամբների կենտրոնատեղի դարձավ Օխրիդը: Նիյազի բեյը ծնունդով այդ վայրերից էր և շրջակա գյուղերում ուներ մեծ թվով ընկերներ ու բարեկամներ: Նա նամակ ուղարկեց սուլթանի քարտուղարին, պահանջելով դադարեցնել հետապնդումները, վերականգնել սահմանադրությունը և վերսկսել խորհրդարանի գործունեությունը: Սուլթանը փորձեց ապստամբների դեմ ուղարկել իրեն հավատարիմ զորքերին, սակայն պարզվեց, որ դա անիմաստ է, քանի որ այդ զորքերը գտնվում են երիտթուրքերի քարոզչության ազդեցության ներքո: Ապստամբների դեմ ուղարկված պատժիչ զորքերի հրամանատար Շեմսի փաշան երիտթուրքերի Մոնաստիրի կոմիտեի դատավճռով գնդակահարվեց իր իսկ զորամասի սպաներից մեկի կողմից: Բազմաթիվ կառավարական և զինվորական պաշտոնատարներ ապստամբների կողմից տեռորի ենթարկվեցին:

Հետագա իրադարձությունների վրա ազդող էական գործոններից մեկը հանդիսացավ այն, որ երիտթուրքական սպաներին ու զինվորներին միացավ Մակեդոնիայի ոչ թուրք բնակչությունը: Մակեդոնական «Լևիցայի» ղեկավարները բավական ակտիվորեն պաշտպանեցին ապստամբած երիտթուրքերին: Երիտթուրքական կոմիտեները նույնպիսի աջակցություն ստացան նաև ալբանական ազգային կազմակերպությունների կողմից:

Սուլթանի ու կառավարության բոլոր փորձերը ոչնչացնելու ապստամբության օջախները՝ ավարտվեցին անհաջողությամբ: Բանակային զորամասերը սկսեցին մեկը մյուսի հետևից բացահայտորեն միանալ ապստամբներին: Այլևս հավատ չընծայելով կայսրության եվրոպական մասում տեղակայված զորքերի նկատմամբ, սուլթանը որոշեց Մակեդոնիայում ապստամբությունը ճնշելու նպատակով զորքեր ուղարկել Անատոլիայից: Երբ Անատոլիայից 48 գումարտակներ նետեցին Մակեդոնիա, հույս ունենալով, որ այդ զորքերը զերծ են երիտթուրքերի քարոզչության ազդեցությունից, սուլթանին սպասում էր դառը հիասթափություն: Անատոլիայից Սալոնիկ տեղափոխված մեկ այլ խմբավորում, որը բաղկացած էր 27 գումարտակներից, միահամուռ կերպով հրաժարվեց հանդես գալ ապստամբների դեմ: Պարզվեց, որ երիտթուրքական ագիտատորները այդ զինվորների հետ ևս տարել են լուրջ քարոզչական աշխատանք:

Մինչդեռ ապստամբությունը օրեցօր ընդլայնվում ու ծավալվում էր: Հուլիսի կեսերին ապստամբներին միացան մոտ 30 հազար զինված ալբանացիներ, որոնց նկատմամբ սուլթանը փայփայում էր մեծ հույսեր, ենթադրելով, որ նրանք կդառնան իր դաշնակիցները: Սալոնիկում, որտեղ գործում էին երիտթուրքերի կողմն անցած զորամասերը էնվեր բեյի հրամանատարությամբ, սուլթանական իշխանությունների գործունեությունը գործնականում անդամալուծվեց: Նման պայմաններում սուլթանը սկսեց խուսանավել: Հուլիսի 16-ին հայտարարվեց Մակեդոնիայում ձերբակալված երիտթուրք սպաների նեռումն չնորհելու մասին: Շտապ կարգով նաև դրամ ուղարկվեց տեղական զորամասերին աշխատավարձ վճարելու համար: Սակայն չնայած այդ բոլորին, սուլթանին ու նրա կառավարությանը չհաջողվեց իրադարձությունների մեջ բեկում մտցնել:

1908 թ. հուլիսի 22-ին Նիյազի-բեյի երկու հազարանոց ջոկատը գրավեց Մոնաստիրը: Հաջորդ օրը ապստամբների ջոկատները և նրանց միացած զորային ստորաբաժանումները սկսեցին իրենց ձեռքը վերցնել իշխանությունը Մակեդոնիայի վարչական կենտրոններում՝ Սալոնիկում, Ուսկյուբում և մյուս խոշոր քաղաքներում: Ամենուրեք հանրահավաքներում պահանջում էին անհապաղ վերականգնել 1876 թ. սահմանադրությունը: Երիտթուրքերի Մոնաստիրի կոմիտեն հեռագիր ուղարկեց սուլթանին, պահանջելով հրապարակել հրամանագիր սահմանադրությունը վերականգնելու և պատգամավորների պալատ գումարելու մասին, սպառնալով, որ հրաժարվելու դեպքում իրենք գահընկեց կանեն նրան և Ստամբուլ կուղարկեն զորքեր: Զսպասելով սուլթանի պատասխանին՝ Մակեդոնիայի շատ քաղաքներում իշխանությունը գրաված երիտթուրքական կոմիտեները սկսեցին հռչակել սահմանադրության վերականգնումը:

Հետևելով մահմեդականների ավանդական սովորույթին՝ Աբդուլ Համիդը դիմեց շեյխ-ուլ-իսլամի դատարանին՝ պահանջելով որոշում կայացնել, թե արդյոք արդարացի և օրինական է իսլամ զինվորների պատերազմը փաղիշահի իշխանության դեմ: Մեծ մուֆթին (շեյխ-ուլ-իսլամը) կայացրեց որոշում, որ զորքերի պահանջը երկրում փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ չի հակասում սրբազան օրենքի դրույթներին: Այդ որոշումից հետո 1908 թ. հուլիսի 23-ի երեկոյան Աբդուլ Համիդը գումարեց մինիստրների խորհրդի նիստ, որն ընդունեց հետևյալ որոշումը. նկատի ունենալով այն հանգամանքը, որ ապստամբների պահանջները չկատարելու դեպքում երկրում կարող է բռնկել ավերիչ քաղաքացիական պատերազմ, կառավարու-

թյունը գտնում է, որ անհրաժեշտ է ընդունել սուլթանին ներկայացված պահանջները: Անմիջապես Աբդուլ Համիդի անունից հեռագիր ուղարկվեց Մակեդոնիա, որտեղ նշվում էր, որ սահմանադրությունը կրկին մտնում է ուժի մեջ և որ սուլթանը երդվել է Ղուրանի վրա նրան հավատարիմ լինելու վերաբերյալ: Հուլիսի 24-ին հրապարակվեց սուլթանական իրադեն (հրամանագիրը) 1876 թ. սահմանադրության գործողությունը վերականգնելու և առաջիկայում պատգամավորների պալատը հրավիրելու մասին: Մի քանի օր անց, 1908 թ. հուլիսի 28-ին, շեյխ-ուլ-իսլամ Ջեմալէդդին էֆենդին պաշտոնապես տեղեկացրեց «Իթթիհադ վե Թերաքքը» կոմիտեին, ինչպես նաև կայսրության բնակչությանը, որ Աբդուլ Համիդը հավատարմության երդում է տվել սահմանադրությանը: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ նույն օրը, հուլիսի 28-ին, դիմելով Յելդըզ-քյոշք սուլթանական պալատի առջև հավաքված խուռներամ ամբոխին, սուլթան Աբդուլ Համիդ II-ը հուզումնալից ու դողդոջուն ձայնով հայտարարեց. «Զավակներս, ես միշտ եղել եմ սահմանադրական: Այն բանում, որ սահմանադրությունն ուշացավ, մեղավոր են ինձ շրջապատող վատ խորհրդականները: Ղուրանի վրա երդվում եմ սրով պաշտպանել սահմանադրությունը»:

Այսպիսով, ճարպիկ քայլով սուլթան Աբդուլ Համիդը պահպանեց իր գահը: Դա հնարավոր եղավ նաև այն պատճառով, որ երիտթուրքերը կողմնակից էին, որ «Օսմանի ազնիվ տոհմը» մնար սուլթանի ու խալիֆայության գահի վրա: Երիտթուրքական հրատարակություններից մեկում գրվեց, որ իթթիհադն իրեն չի կարող իշխանության գլուխ պատկերացնել առանց թագավորող դինաստիայի: Անարյուն հեղաշրջումն ավարտվեց իթթիհադականների հաղթանակով:

Երիտթուրքական հեղաշրջումը նախ և առաջ տերությունների միջամտությունը Օսմանյան կայսրության ներքին գործերին կանխելու, կայսրության ամբողջականությունն արտաքին ոտնձգություններից զերծ պահելու նպատակ էր հետապնդում: Անկասկած երիտթուրքերի նպատակներից մեկն էր նաև Թուրքիայի արդիականացումը: Սալոնիկում երեք օր անընդմեջ տեղի էին ունենում հանրահավաքներ ու քայլարշավներ: Քաղաքի կենտրոնական հրապարկում, որն այդ օրերին կոչեցին Ազատության հրապարակ, հնչում էին բոցաշունչ ճառեր: Սալոնիկ ժամանեցին բուլղարական, հունական ու սերբական չեթեներ (պարտիզանական ջոկատներ – Վ. Բ.): Ի պաշտպանություն սահմանադրության, հսկայական հանրահավաքներ էին տեղի ունենում նաև Ստամբուլում և կայսրության այլ խոշոր քաղաք-

ներում, որոնց ընթացքում տեղի էին ունենում զանազան ազգությունների ու դավանանքների ներկայացուցիչների եղբայրացման ցույցեր: Բանտերի դռները բացվեցին և հազարավոր հայ, թուրք և այլ ժողովուրդների քաղաքական բանտարկյալներ դուրս եկան իրենց գնդաններից:

«Բերկրանքով ողջունեցինք Օսմանյան սահմանադրությունը, ոչ մի անջատական ձգտում, ոչ մի խոսք այլևս եվրոպական միջամտության, 61-րդ հոդվածի մասին, դադրեցուցինք «Պրո Արմենիան» ու եվրոպական պրոպագանդը, լծվելով մեր իսլամ դրացիներու հետ՝ ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրության առաջադիմության և բարօրության»,- այսպես է բնութագրում Միքայել Վարանդյանը դաշնակցության որդեգրած դիրքորոշումը երիտթուրքական հեղաշրջման նկատմամբ:

Մակեդոնիայում էնվեր բեյը հրապարակեց մի հռչակագիր, որտեղ ասվում էր. «Այսուհետև մենք բոլորս եղբայրներ ենք: Այլևս չկան բուլղարներ, հույներ, ռումինացիներ, հրեաներ, մահմեդականներ, միևնույն կապույտ երկնքի տակ մենք բոլորս հավասար ենք, մենք ծնվում ենք օսմանցի լինելու համար»: Քաղաքներից մեկում հեղափոխական սպաները բանտ նետեցին մի թուրքի, որը վիրավորել էր մի քրիստոնյայի: Հայերը և թուրքերը համատեղ իրենց հարգանքի տուրքն էին մատուցում սուլթանական կամայականության դեմ մղված պայքարում ընկած զոհերի հիշատակին: Մահմեդական և հայ ամբոխի առջև մոլլաներն ու քրիստոնյա հոգևորականները գրկախառնվում էին: Մակեդոնական «Լեվիցայի» ղեկավար Յանե Սանդանսկին այդ օրերին հրապարակեց մի հայտարարություն, որում ողջունում էր երկար սպասված «ազատության չողը» և բոլոր հայրենակիցներին՝ քրիստոնյա թե մահմեդական, կոչ էր անում համատեղ պայքարի դուրս գալ հանուն ազատության: Ամենուրեք տեղի ունեցող հսկայական ու խելահեղ ցույցերի ու հանրահավաքների ժամանակ հնչում էին կարգախոսներ. «Կեցցե ազատությունը, կեցցե ժողովուրդը, կեցցե բանակը, կեցցե սահմանադրությունը, կորչեն լրտեսները» և այլն: Թերթերը տպագրում էին հաղթական երգեր: Ցուցարարները՝ մահմեդականներ, քրիստոնյաներ և հուդայականներ, ձեռքերը երկինք պարզելով աղոթում էին, որ Աստված պահպանի սահմանադրությունը: Սակայն այդ նույն մարդիկ քաջառողջություն էին մաղթում նաև սուլթանին: Խորամանկ ու ճարպիկ Աբդուլ Համիդը ամեն ինչ անում էր, որպեսզի սեփական ժողովրդի աչքում երևա որպես մեծահոգի սահմանադրական միապետ, որը օսմանցիներին

չնորհել է ազատություն: Նա փողոցներում կանգնած ամբոխի ողջույնի բացականչությունների տակ մեկնեց Այա Սոֆիա մզկիթը ուրբաթօրյա աղոթքի համար, մի սրբավայր, որտեղ քառորդ դարից ավել ոտք չէր դրել:

Իրականում այդ բոլորը ֆարս էր: Այդ առթիվ անգլիացի Ժ. Մարիոթը գրում էր. «Երիտթուրքական հեղաշրջումը վերջին փորձ էր կայսրության մահմեդական փոքրամասնության տիրապետող դիրքերը պահպանելու, ճնշված ժողովուրդների անկախության ձգտումները ճզմելու, նրանց դիմադրության շարժումը ջախջախելու և եվրոպական միջամտության սպառնալիքը վերացնելու ուղղությամբ: Սահմանադրության վերականգնումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ խորամանկ մի միջոց, որն օգտագործվեց արտասահմանում ազատական զգացումները քնեցնելու համար և միևնույն ժամանակ այն հնարավորություն էր տալիս չեղյալ հայտարարելու երկրի ներսում քրիստոնյա ժողովուրդների պատմական իրավունքները»:

Հայերը, ինչպես և կայսրության այլ ոչ թուրք ժողովուրդները, որոնք մեծ դեր էին խաղացել սուլթանական բռնատիրությունը տապալելու գործում, չուտով սկսեցին հասկանալ, որ երիտթուրքերի խոստումները ազգային հավասարության վերաբերյալ իրականության հետ ոչ մի կապ չունեն: Որ երիտթուրքերի նպատակը ոչ թե ազգային հարցի լուծումն է, այլ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումը:

Հեղաշրջումից հետո երիտթուրքերը ոչ միայն ցանկություն չդրսևորեցին կազմելու սեփական կառավարություն և երկրի կառավարման ղեկը վերցնելու իրենց ձեռքը, այլև չցանկացան մտնել Սայիդ-փաշայի կառավարության կազմի մեջ: Մեկնաբանելով «Իթթիհադ վե թերաքքը»-ի մարտավարությունը, Նազըմ-բեյը հայտարարեց, որ երիտթուրքական կոմիտեի հիմնադիրները հանուն ազատության և առաջադիմության, չեն ձգտելու ձեռք բերել պաշտոններ և պատգամավորների կոչումներ: Նրա ասելով՝ «երիտթուրքերը չեն ցանկանում նաև փող», որ նրանք «չեն ցանկանում կառավարել, այլ ցանկանում են լոկ մշտարթուն ձևով հսկել»:

Միանգամայն ակնհայտ է, որ իթթիհադականները ձգտում էին մնալով ստվերի տակ, օգտվել իշխանությունից: Այլ կերպ ասած, նրանք ցանկանում էին կառավարել երկիրը, չկրելով ոչ մի պատասխանատվություն: Կար նաև հարցի մյուս կողմը: Նրանք երկրի քաղաքացիական բնակչության շրջանում ունեին աննչան թվով կողմնակիցներ, ուստի բավարարվելու էին նրանով, որ լոկ սահմանափա-

կեն բռնակալ սուլթանի լիազորությունները: Այդ օրերին երիտթուրքական կոմիտեն միայն պնդում էր, որ դեկավար պաշտոններից հեռացվեն հին վարչակարգի առավել վարկաբեկված ներկայացուցիչները:

«Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը իր առջև չէր դնում նաև Աբդուլ Համիդի բռնատիրական միապետության ոչնչացումը: Նա հեղափոխության հենց սկզբից սուլթան-խալիֆի անձը հայտարարեց ամեն տեսակի պատասխանատվությունից վեր: Երիտթուրքական սահմանադրությունը սուլթանի իրավասությանն էր թողնում մեծ վեզիրի, շեյխ-ուլ-իսլամի նշանակման, երեսփոխանների պալատի ցրման և այլ իրավունքներ: Սուլթանն անվանապես մնում էր զինված ուժերի հրամանատարի պաշտոնում: Նա կարող էր պատերազմ հայտարարել և խաղաղություն կնքել:

Երիտթուրքական քարոզչությունը պնդում էր, որ երկրի բոլոր դժբախտությունների պատճառը ոչ թե սուլթանն է, այլ պալատականներն ու բարձր աստիճանավորները, որոնք թաքնված են նրա անվան ներքո: Որ իբր իրենք, երիտթուրքերը, սուլթանին հանել են մոլորությունից և նա դառնագին կերպով ցավում է այն վնասների համար, որ իրեն հասցրել են իր խորհրդականները:

Իթթիհադականների այդ դիրքորոշումը համահունչ էր սուլթանի որդեգրած քաղաքականությանը, որը սահմանադրությունը հռչակվելուց հետո իր առաջին սելյամլիքի ժամանակ հայտարարեց. «Ես սիրում եմ իմ ժողովրդին, սակայն դավաճանները մինչ օրս ինձ խաբում էին: Այժմվանից ժողովուրդը ապրելու է ինձ հետ, իսկ ես նրա հետ: Ես վստահ եմ նրա հավատարմության վրա»:

Սակայն երիտթուրքերի և սուլթանի համախոհությունը անկեղծ չէր: Իթթիհադականները հեռահար նպատակներ էին հետապնդում սուլթան Աբդուլ Համիդին գահի վրա թողնելով: Ահմեդ Ռիզան, որը խորհրդարանը վերստին բացվելուց հետո նշանակվել էր ցկյանս նախագահ, խոստովանել է. «Համիդը իմ ձեռքերում պետք է դառնա հլու գործիք. մենք մեր ուզածի պես նրան կարող ենք օգտագործել, մշտապես պահելով գահընկեցության սպառնալիքի տակ»:

«Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի և սուլթանի միջև առաջին լուրջ բախումը տեղի ունեցավ հեղաշրջումից ընդամենը մեկ շաբաթ անց: Օգոստոսի 1-ին սուլթանը հրապարակեց հրամանագիր, որում բացատրվում էին այն պատճառները, որոնց հետևանքով 1878 թ. կասեցվել էր սահմանադրությունը: Այնուհետև հրամանագրում թվարկվում էին 1876 թ. սահմանադրության հիմնական դրույթները, որոնց ինքնակամ կերպով սուլթանը ավելացրել էր ևս

մեկը, այն որ միապետը իրավունք ունի նշանակելու ոչ միայն մեծ վեզիրին և շեյխ-ուլ-իսլամին, այլև ռազմական ու ռազմա-ծովային մինիստրներին: Դա երիտթուրքերի կողմից ընկալվեց որպես փորձ կայսրության ողջ զինված ուժերի նկատմամբ հսկողություն սահմանելու համար և գնահատվեց որպես հակասահմանադրական քայլ: Օգոստոսի 3-ին Սալոնիկից մայրաքաղաք ժամանեց «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի հատուկ պատվիրակությունը, որը չորսժամյա զրույց ունեցավ մեծ վեզիր Սայիդ փաշայի հետ: Զրույցի ընթացքում պատվիրակությունը պահանջեց վերացնել սուլթանի հրամանագրի 1876 թ. սահմանադրությունը խախտող կետերը, ամբողջապես նորացնել մինիստրների կաբինետը և դատի տալ նախկին վարչակարգի մի շարք մինիստրների ու աստիճանավորների: Պատվիրակությունն այցելեց նաև սուլթանին, պնդելով, որ կազմվի նոր կառավարություն առաջացած տարիք ունեցող, բայց և փորձված քաղաքական գործիչ Քյամիլ փաշայի գլխավորությամբ: Սուլթանը տվեց իր համաձայնությունը և Քյամիլ փաշան, որը հայտնի էր իր անգլիամետ կողմնորոշմամբ, նշանակվեց մեծ վեզիրի պաշտոնում: Աբդուլ Համիդը ստիպված էր նաև հրաժարվել ռազմական ու ռազմա-ծովային նախարարներ նշանակելու իր իրավունքից:

Այդ նոր կառավարությունը ամբողջապես գտնվում էր երիտթուրքական կոմիտեի հսկողության ներքո: Դասեր քաղելով այդ վերջին իրադարձություններից, երիտթուրքերը որոշեցին սուլթանին հասկացնել, որ իրենք չեն մնալու պասիվ դիտորդի դերում և տիրապետում են որոշակի ռեսուրսների իրենց շահերը պաշտպանելու համար: Նախ երիտթուրքերի ճնշման ներքո կառավարությունը կտրուկ կրճատեց սուլթանական պալատի ծախսերը, ինչպես նաև էապես կրճատեց պալատականների թիվը: Սուլթանի 300 համհարզներից իրենց պաշտոնում թողեցին ընդամենը 30-ին, իսկ 800 խոհարարներից՝ 750-ին:

Քայլեր կատարվեցին նաև «զուլումի» վարչակարգի որոշ արատներ վերացնելու ուղղությամբ: Օրինակ, երիտթուրքերը կարողացան ստիպել կառավարությանը հրապարակելու հրամանագրեր սուլթանական գաղտնի ոստիկանության վերացման, հեղափոխական շարժման մասնակիցներին ներումն շնորհելու մասին և այլն: Ցրվեց նաև բազմահազար մարդկանց արյունով իրեն արատավորած մատնիչների 30 հազարանոց բանակը: Աչքի ընկնող շատ բարձր պաշտոնյաներ ազատվեցին իրենց պաշտոններից ու ձերբակալվեցին: Իրենց մութ անցյալով հայտնի մի շարք բարձր աստիճանավորներ ամբոխի կող-

մից ենթարկվեցին Լինչի դատաստանին: Թվում էր, թե պաշտոնագուրկ պալատականները, գանձագողերը, գողության և չարաշահումների մեջ մեղադրվող նահանգապետերը և այլն պետք է կանգնեին դատարանի առջև՝ իրենց արարքների համար պատասխան տալու համար: Սակայն երիտթուրքերը նրանց առաջարկեցին իթթիհադի գանձարանը մուծել որոշակի գումար իրենց հանցավոր արարքների համար պատասխանատվությունից ազատվելու նպատակով: Հանցագործների ու գանձագողերի հետ նման գործարքի ճանապարհով կոմիտեն աշխատում էր ֆինանսապես գոհացնել իր կողմնակիցներին և միաժամանակ որոշ չափով լցնել պետական գանձարանը:

Իրենց շարքերի կազմակերպչական ամրապնդման նպատակով 1908 թ. հոկտեմբերի 5-ից մինչև 25-ը երիտթուրքերը գումարեցին «Միասնություն և առաջադիմություն» միության կոնգրես, որը որոշում ընդունեց այսուհետև միությունը վերածել նույնանուն կուսակցության: Կենտրոնական կոմիտեի (մերքեզ-ի ումումի) անդամները (չնայած կոնգրեսի լեգալ բնույթին նրանց անունները գաղտնի էին պահվում) հիմնականում հանդիսանում էին երիտթուրքերի սալոնիկյան կոմիտեի ներկայացուցիչներ: Դրանք էին՝ Հյուսեին Կազրին, Էնվեր-բեյը, Միդհատ Շյուքրի խայրին, Թալաաթ բեյը, Ահմեդ Ռիզա-բեյը, Հաբիբ-բեյը և Իբրահիմ Հաֆիզ Իփեքլին: Կոնգրեսն ընդունեց կուսակցության ծրագիր: Նրա հիմնական կետերն էին. սուլթանի իրավունքների սահմանափակում և խորհրդարանի լիազորությունների ընդլայնում, մինիստրների պատասխանատվություն խորհրդարանի առջև, պատգամավորների կողմից օրինագծեր մտցնելու իրավունք, ընտրական տարիքային ցենզի նվազեցում մինչև 21 տարեկանը, սահմանադրության 113 հոդվածի հավելվածի վերացում, ըստ որի սուլթանին իրավունք էր վերապահվում աքսորելու իր համար անցանկալի անձանց: Կառավարությունը պետք է պատասխանատվություն կրեր խորհրդարանի և ոչ թե սուլթանի առջև, ինչպես նախատեսված էր 1876 թ. սահմանադրությամբ: «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության ծրագիրը հրապարակում էր խոսքի, մամուլի և ժողովների ազատության մասին: Ազգային հարցի նկատմամբ ծրագիրն որդեգրում էր օսմանիզմի դոկտրինը:

Շարունակելով երկրի կյանքի բոլոր կողմերի վրա իրենց ազդեցության ամրապնդման գիծը, երիտթուրքերը մայրաքաղաքում և կայսրության շատ քաղաքներում ստեղծեցին իրենց կուսակցության մասնաճյուղեր, որոնց ցանցը արագորեն աճում էր: Հասարակական կարծիքը իրենց ենթարկելու նպատակով իթթիհադականներն արագ

կարգավորեցին նաև իրենց տպագիր օրգանների հրատարակությունը:

Միաժամանակ աննկատ ու անաղմուկ կերպով հեղափոխական կարգախոսներին փոխարինելու էին գալիս «կարգ ու կանոնը պահպանելու» կոչեր: Երբ Անատոլիայի մի շարք շրջանների գյուղացիները, որոնք սահմանադրության վերականգնումը ընկալել էին որպես տեղական պաշտոնեության կամայականություններից և ուժից վեր հարկերից ազատվելու միջոց և հրաժարվել էին հարկեր մուծելուց, երիտթուրքերի տեղական կոմիտեները նրանց դեմ նետեցին ժանդարմական զորամասեր: Երբ Ուսկյուբում գյուղացիների չորս հազարանոց ամբոխը Ալբանիայի համար պահանջեց ինքնավարություն, իթթիհադականները իրենց ոչ վաղուցվա դաշնակիցներին սպառնացին հրետանային կրակով: Զորքերի օգնությամբ երիտթուրքերը ցրեցին նաև Ստամբուլի բեռնակիրների, Իզմիթի և Էսկիշեհիրի երկաթուղայինների, Իզմիրի նավահանգստային բանվորների գործադուլները:

1908 թ. հոկտեմբերին տեղի ունեցան արտաքին-քաղաքական իրադարձություններ, որոնք բարդացրին երիտթուրքերի վիճակը: Ավստրո-Հունգարիան բռնազավթեց Բոսնիան և Հերցեգովինան: Դրանից անմիջապես հետո Բուլղարիան հայտարարեց իր կատարյալ անկախության մասին, իշխանազուն Ֆերդինանդին հռչակելով «բուլղարացիների ցար»: Կրետեն հայտարարեց իր որոշման մասին միավորվելու Հունաստանի հետ: Այդ իրադարձությունների հետևանքով երիտթուրքերի օսմանիզմի դոկտրինը, որը ենթադրում էր բազմազգ պետության մեջ բոլոր ժողովուրդների միավորումը՝ անկախ ազգային ու կրոնական պատկանելությունից, ճեղքվածք տվեց: Բուլղարացիներն ու հույները գործնականում ապացուցեցին, որ կայսրության ճնշված ժողովուրդները մերժում և չեն ընդունում իրենց «օսմանցի» լինելու հանգամանքը:

Բոսնիայի և Հերցեգովինայի աննեքսիան դա ուժգին հարված էր իթթիհադի հեղինակությանը: Ուստի երիտթուրքերի ղեկավարները հանդես եկան Ավստրո-Հունգարիայի ագրեսիայի դեմ, կազմակերպեցին ավստրիական ապրանքների բոյկոտ և Եվրոպական Թուրքիայում տեղակայված զորքերին սկսեցին նախապատրաստել հնարավոր պատերազմի համար: Կայսրության քաղաքներում երիտթուրքերը կազմակերպում էին աղմկալից հանրահավաքներ ընդդեմ Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Կրետեի: Իթթիհադական մամուլը մեղադրում էր այդ երկրներին պատերազմ սանձազերծելու մտադրության մեջ, որպեսզի երկրում առաջ բերեն անկայունություն և հակասահմանադրական շարժում:

Օգտվելով ստեղծված բարենպաստ իրադրությունից՝ երիտթուրքերի հակառակորդները, մոբիլիզացնելով իրենց ուժերը, անցան գրոհի: Մասնավորապես «Մահմեդականների միասնության կենտրոն» կազմակերպությունը վճռականորեն պահանջում էր, որ երկիրը կառավարվի «սրբազան օրենքի»՝ շարիաթի և իսլամի սկզբունքների հիման վրա: 1908 թ. հոկտեմբերի 7-ին բազմահազարանոց ամբոխը մոլլաների գլխավորությամբ շարժվեց դեպի սուլթանի պալատը, պահանջելով վերացնել սահմանադրությունը և «վերականգնել շարիաթը»: Մոլլաները բացահայտ պայքար սկսեցին շարիաթական օրենքը պաշտպանելու միտումով՝ ընդդեմ Սելանիկի երիտթուրք հրեաների և մասոնական օթյակների անդամների: Զորանոցներում և մզկիթներում խոշոր գումարներ էին բաժանվում երիտթուրքերից բոլոր դժգոհներին: Սոֆթաների և մոլլաների կողմից գրգռվող ամբոխի մեջ մեծ թիվ էին կազմում ավարի տիրանալու տենչով տարված բաշիբուզուկները:

Շահարկման էին ենթարկվում նաև կայսրության արտաքին-քաղաքական բարդությունները: Երիտթուրքերի վարչությանն էր վերագրվում կայսրության տարածքների կորուստները: «Երկիրը գյավուրներին են ծախում»,- լսվում էր ամեն կողմից:

Հոկտեմբերի վերջին երիտթուրքերին սպասում էր ևս մի բարդություն. մայրաքաղաքի գվարդիական գնդի զինվորները հրաժարվեցին մեկնել Հեջազ և բարձրացրին խռովություն: Միայն երիտթուրքերին հավատարիմ ռազմանավերի հրետանային փողերի սպառնալիքի ներքո այդ զորամասը դուրս բերվեց Ստամբուլից:

Մայրաքաղաքում տիրող նման լարված իրադրության պայմաններում տեղի ունեցան պատգամավորների պալատի ընտրություններ: Այդ ընտրություններում իթթիհադականները գործնականում հանդիսանում էին միակ կազմակերպված քաղաքական ուժը: Դրա հետևանքով 230 պատգամավորական տեղերից նրանք ստացան 150-ը: Հայերը ստացան պատգամավորական 12 տեղեր: Երիտթուրքերի ընդդիմադիր քաղաքական ուժը՝ «Ահրար» («Լիբերալներ») կուսակցությունը, որը ստեղծվել էր իշխան Սաբահեդդինի կողմնակիցների կողմից՝ 1908 թ. կեսերին, կազմակերպչորեն ու քաղաքականապես դեռ չէր ամրապնդվել, ուստի և չէր կարող դառնալ «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության լուրջ մրցակից:

Նորաբաց պատգամավորական պալատի նախագահ ընտրվեց 20-ամյա տարագրությունից վերադարձած Ահմեդ Ռիզա-բեյը: Պալատի նիստերը սկսվեցին 1908 թ. նոյեմբերի 15-ին:

Խորհրդարանը բացվելու կապակցությամբ իր արտասանած ճառում սուլթան Աբդուլ Համիդ II-ը նշեց, որ ինքը ընդհատել էր խորհրդարանի աշխատանքը, քանի որ իրեն համոզել էին, որ իր ժողովուրդը դեռ չի հասունացել սահմանադրական կառավարման համար: Այժմ, երբ առկա է համընդհանուր ցանկություն վերականգնելու կառավարման սահմանադրական եղանակը, ինքը առանց երկմտանքի ու տատանումների վերականգնեց սահմանադրության գործողությունը, ընդ որում, ի հեճուկս այն մարդկանց, ովքեր այդ հարցի վերաբերյալ ունեն հակառակ կարծիք: Այնուհետև սուլթանը հանդիսավոր կերպով վստահեցրեց պատգամավորներին, որ ինքը «լի է վճռականությամբ կառավարելու սահմանադրության համապատասխան»: Վերջում սուլթանը խորհրդարանի բոլոր պատգամավորներին հրավիրեց իր Յըլդըզ-քյոշկ պալատը՝ մասնակցելու չքեղ բանկետին: Պալատում Աբդուլ Համիդը ի նշան «ջերմ համերաշխության» Ահմեդ Ռիզայի հետ ջուր ըմպեց իր սեփական, այսպես կոչված «սրբազան աղբյուրից»:

Մինչդեռ սուլթանը և նրա շրջապատը չէին կորցրել ուևանչ վերցնելու հույսը և սպասում էին իրենց ժամին: Բանակում ունեցած դիրքերը նրանք դեռ լրիվ չէին կորցրել: 20-հազարանոց գվարդիական հետևակային դիվիզիան, որը փաստորեն հանդիսանում էր Աբդուլ Համիդի անձնական թիկնազորը, ի տարբերություն բանակային մյուս միավորումների՝ նույնիսկ հավատարմության երդում չէր տվել սահմանադրությանը: Այդ դիվիզիայի զորամասերը տեղակայված էին սուլթանի պալատում և նրա շրջակայքում: Նրանք կարող էին ծառայել իթթիհադականների դեմ որպես հարվածող ուժ, եթե ստեղծվեր դրա անհրաժեշտությունը: Աբդուլ Համիդը աշխատում էր իր շուրջը համախմբել բոլոր նրանց, ովքեր այս կամ այն պատճառով չէին ընդունում իթթիհադականներին: Այդ առումով սուլթանը հատկապես մեծ հույսեր էր կապում սևհարյուրակային «Մահմեդականների միասնության ընկերություն» կուսակցության հետ, որի գլուխ էր կանգնած ոմն Դերվիշ Վեհդեթի էֆենդի: Նշված կուսակցության օրգան «Վոլքան» թերթը ուղղաղավան մահմեդականներին կոչ էր անում համախմբվել սուլթան-խալիֆի շուրջը և վերականգնել շարիաթը:

Հակաիթթիհադական ուժերը ակնառու կերպով տեսնում էին, որ երիտթուրքերը զգալիորեն կորցրել են հուլիսյան ապստամբության օրերին ձեռք բերած իրենց ժողովրդականությունը: Բացի այդ, երկրի ոչ թուրք ժողովուրդները խորը հիասթափություն էին ապրում իթթիհադականների նկատմամբ, համոզվելով, որ բոլոր ազգային պրոբ-

լեմները նրանք մտադիր են լուծել միայն տխրահռչակ օսմանիզմի մեծապետական դոկտրինի հիման վրա: Երիտթուրքերից հիասթափված էր նաև թուրք և առհասարակ մահմեդական ու ոչ մահմեդական գյուղացիությունը, որը համոզվել էր, որ նոր իշխանությունները բնավ մտադիր չեն թեթևացնելու իրենց հարկային լուծը: Դա հատկապես ցցուն կերպով դրսևորվեց այն բանից հետո, երբ ներքին գործերի մինիստրը հեռագրեր ուղարկեց բոլոր վիլայեթները, որոնցում կարգադրում էր տեղական իշխանություններին «արդարադատության ձեռքը հանձնել» բոլոր նրանց, ովքեր հրաժարվում են կամ խուսափում հարկեր մուծելուց:

Նշված հանգամանքները պարարտ հող էին ստեղծում երիտթուրքերի հակառակորդների համար ելույթ ունենալու իթթիհադի դեմ: Հարկավոր էր միայն մի առիթ նման ելույթի համար և այդ առիթը գտնվեց: Ստամբուլում մամուլի մասին նոր օրենքի դեմ կազմակերպված բողոքի հանրահավաքում, սպայի համազգեստ հագած մի անհայտ անձնավորություն ատրճանակի կրակոցով սպանեց լրագրող Հասան Ֆեհմի բեյին, որը «Ահրար» կուսակցության օրգան «Սերբեստ» «Ազատություն» թերթի խմբագիրն էր: Մարդասպանը թաքնվեց ու մնաց անհայտ: Մինչդեռ մայրաքաղաքում լուրեր տարածվեցին, որ լրագրողին սպանել են իթթիհադականների ցուցումով: Դա հասարակայնության լայն շրջաններում առաջ բերեց հակաերիտթուրքական տրամադրությունների կտրուկ աճ:

Ապրիլի 10-ին տեղի ունեցած Ֆեհմի բեյի հուղարկավորությունը մայրաքաղաքում վերածվեց երիտթուրքերի դեմ հարյուր հազարանոց բողոքի ցույցի: Հռետորները Ֆեհմի բեյին ներկայացնում էին որպես «իթթիհադականների կամայականության անմեղ զոհ»: Կրքերը ծայր աստիճանի չիկացել էին: 1909 թ. ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը Ստամբուլի կայազորի զինվորները «Ահրար» կուսակցության անդամ, կրտսեր սպա Համդի Յաշարի գլխավորությամբ բարձրացրին խռովություն: Խռովարարները վաղ առավոտյան հավաքվեցին Այա Սոֆյա մզկիթի առջև և այնտեղից շարժվեցին դեպի պատգամավորների պալատի շենքը: Ապրիլի 13-ի առավոտյան խռովարար զինվորների հինգ հազարանոց ամբոխը խորհրդարանի մոտ կազմակերպեց հանրահավաք, պահանջելով անշեղորեն պահպանել շարիաթը, պաշտոնաթող անել մեծ վեզիրին ու ռազմական նախարարին, երկրից վռնդել պատգամավորների պալատի նախագահ Ահմեդ Ռիզային և մի շարք այլ ականավոր երիտթուրքերի, բանակից հեռացնել «մեքթեբլի» սպաներին, այսինքն հատուկ զինվորական դպրոցներ ավար-

տածներին (որոնք սովորաբար հանդիսանում էին երիտթուրքերի կողմնակիցներ), ծառայության վերցնել «ալայլի» սպաներին (այսինքն նրանց, ովքեր սպայական աստիճան էին ստացել երկարատև ծառայության չնորհիվ, առանց զինվորական ուսումնարաններում կրթություն ստանալու): Խռովարարների մեջ անմիջապես հայտնվեցին ուլեմներ, սոֆթեր, իսլամի կանաչ դրոշներով, ինչպես նաև երիտթուրքերի կողմից բանակից վտարված սպաներ: Նրանց միացան նաև Ստամբուլի լյումպեն-պրոլետար տարրերը, քաղաքային ամբոխը և այլն: Շուտով խռովարարների թիվը հասավ 30 հազարի: Նրանք գոչում էին «Կորչի սահմանադրությունը», «Կորչի կոմիտեն»: Խռովարարները պահանջում էին, որ սուլթանը ցրի խորհրդարանը, փոխի կառավարությունը, վերականգնի «սրբազան օրենքի»՝ չարիաթի գործողությունը, երկրի քաղաքական կյանքին մասնակցելուց զրկի մի չարք աչքի ընկնող երիտթուրքական գործիչների:

Փողոցներում սկսվեց փոխհրաձգություն այն զորամասերի հետ, որոնք հավատարիմ էին մնացել իթթիհադականներին: Միաժամանակ ծայր առավ հաչվեհարդար երիտթուրքերի կողմնակից սպաների ու երիտթուրքական ղեկավարների հետ: Նրանց մի մասը հասցրեց փախչել Սալոնիկ: Իսկ մի չարք կարկառուն գործիչների հաջողվեց թաքնվել մայրաքաղաքում: Թալաաթը, օրինակ, ապաստան գտավ դաչնակցական Խաչատուր Մալումյանի (Ակնունի) տանը, Խալիլ բեյը՝ Գրիգոր Զոհրապի տանը: Ամբոխը քար ու քանդ արեց երիտթուրքական պաշտոնաթերթ «Թանին» թերթի և «Շուրայ-ը ումմեթ» լրագրի խմբագրատները:

Շուտով խռովարարների կողմն անցան Ստամբուլի կայազորի համարյա բոլոր հետևակային ու հեծելազորային ստորաբաժանումները: Խռովարարներին աջակցեցին նաև նավաստիները: Այդ զինված զանգվածը ջախջախեց «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության Ստամբուլի կենտրոնը: Գրավվեցին նաև բոլոր կառավարական չենքերը, ինչպես նաև խորհրդարանի չենքը, որի նախագահ Ահմեդ Ռիզա բեյը փրկվեց փախուստի միջոցով: Ջավիդ-բեյը և Հյուսեին Ջահիդ-բեյը թաքնվեցին ռուսական դեսպանատանը, իսկ ապա ռուսական նավով փախան Օդեսա: Մայրաքաղաքի և կայսրության քաղաքների միջև հեռագրական կապը խզվեց:

Սուլթանը առանց որևէ առարկության ընդառաջում էր խռովարարների բոլոր պահանջներին: Նա խռովության բոլոր մասնակիցներին պարգևեց ներում: Նշանակվեց նոր մեծ վեզիր: Մինիստրների նոր կաբինետը գրեթե ամբողջովին կազմվեց Աբդուլ Համիդին լրիվ հնա-

զանդ քաղաքական գործիչներից: Խռովությունը սուլթանին վերադարձրեց նրա երբեմնի անսահմանափակ իշխանությունը:

Հաղթանակ տանելով, խռովարարները երկու օր շարունակ մայրաքաղաքում զբաղվում էին կողոպուտով:

Իրենց «հին բույնի»՝ Սալոնիկի հենակետում երիտթուրքերի պարագլուխներն անմիջապես սկսեցին պատրաստել պատասխան հարված: Ատելությունը սուլթան Աբդուլ Համիդի վարչակարգի նկատմամբ այն աստիճանի մեծ էր, որ չնայած երիտթուրքերից իրենց հիասթափությանը, ալբանական և մակեդոնական հեղափոխական խմբերը, մասնավորապես մակեդոնական ազդեցիկ «Լեվիցան» Յանե Սանդանսկու գլխավորությամբ, կրկին աջակցեցին իթթիհադականներին: 1909 թ. ապրիլի 19-ին Սալոնիկում տեղի ունեցավ զանգվածային հանրահավաք, որի մասնակիցները հայտարարեցին, որ չեն ճանաչում նոր կառավարությանը և պատրաստ են կամավորներ ուղարկել սահմանադրությունը պաշտպանելու համար:

Երիտթուրքերին հավատարիմ մնացած Սալոնիկի և Ադրիանոպոլսի բանակային կորպուսներից կազմվեց «գործողության բանակ»՝ գեներալ Մահմուդ Շևքեթ փաշայի գլխավորությամբ: Նրան միացան նաև ալբանացիներից ու մակեդոնացիներից բաղկացած կամավորական ջոկատներ, որի հետևանքով «Գործողության բանակի» թվաքանակը հասավ 100 հազարի: Նրա հրամանատարական կազմի մեջ էին նաև Նիյազի և Էնվեր բեյերը, իսկ գլխավոր շտաբի պետն էր երիտասարդ սպա Մուստաֆա Քեմալ-բեյը (հետագայում Թուրքիայի հանրապետության պրեզիդենտ Քեմալ Աթաթյուրքը):

«Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն արագ կապեր հաստատեց Ռումելիայի և Անատոլիայի իր վիլայեթական կազմակերպությունների հետ, նրանցից ստանալով աջակցության խոստումներ:

1909 թ. ապրիլի 16-ին «Գործողության բանակը» սկսեց շարժվել դեպի Ստամբուլ: Որոշված էր մայրաքաղաքի վրա գրոհելուց առաջ բանակի ստորաբաժանումները կենտրոնացնել Ստամբուլից 30 կմ հեռավորության վրա գտնվող Զաթալջի կոչված բնակավայրում: Բանակի արշավանքի նպատակ հայտարարվեց սահմանադրության վերականգնումը:

Գիտակցելով երիտթուրքերի ձեռնարկած միջոցառումների վտանգավորությունը, Աբդուլ Համիդը փորձեց նրանց հետ մտնել բանակցությունների մեջ, ապրիլի 13-ի իրադարձությունները համարելով «թյուրիմացություն»: Սակայն իթթիհադականները որդեգրել

էին անդիջում դիրքորոշում: Ապրիլի 22-ին երիտթուրքերի կողմն անցավ նաև ռազմական նավատորմը, որի նավերը չրջափակեցին Ստամբուլը ծովի կողմից:

Մի խումբ պալատական մեծամեծեր սուլթանի ոտքը ընկնելով՝ հորդորում էին նրան, որ դիմադրի: Իզզեթ-փաչան դիմելով նրան ասում է. «Քո պապից (խոսքը սուլթան Մահմուդ II մասին է - Վ. Բ.) օրինակ վերցրու և անցիր բանակի գլուխը: Մահմուդ II ինչպես որ ենիչերիներին ջարդեց, դու էլ կարող ես հաղթել իթթիհադականներին»: Սակայն սուլթանը դեռ հույս ուներ, որ այս անգամ էլ կարող է մոլորեցնել երիտթուրքերին, նրանց համոզելով, որ ինքը կատարելապես անտեղյակ է եղել, որ եփվում է դավադրություն սահմանադրական վարչակարգի դեմ: Հետագայում սուլթանը զղջացել է իրեն տված խորհուրդը անտեսելու համար, ստեպ կրկնելով «նալլեթ օլսուն» («անիծյալ լինի»):

Երբ Շևքեթ փաչայի զորքերը սկսեցին չրջապատել մայրաքաղաքը, խորհրդարանի զույգ պալատների պատգամավորները ժամանեցին Եշիլքյոյ (Սան-Ստեֆանո), որտեղ ապրիլի 22-ին գումարվեց ազգային ժողով: Ժողովը հավանություն տվեց Մահմուդ Շևքեթ փաչայի նչանակմանը որպես «Գործողության բանակի» գլխավոր հրամանատար, դրանով իսկ օրենքի ուժ տալով նրա արձակած հրամաններին: Հավանության արժանացավ նաև գեներալի դիմումը ուղղված երկրի բնակչությանը և Ստամբուլի մեջ գտնվող զորքերին: Ստանալով պատգամավորների պալատի աջակցությունը, Մահմուդ Շևքեթ փաչան արագացրեց իրադարձությունների ընթացքը:

Ապրիլի 23-ին «Գործողության բանակը» չորս առանձին խմբավորումներով սկսեց հարձակումը մայրաքաղաքի վրա: Ապրիլի 24-ին, առավոտյան ժամը 3-ին, սկսվեց գլխավոր ճակատամարտը, որը տևեց մի քանի ժամ: Իթթիհադականների հակառակորդները կռվում էին դատապարտվածի կատաղությամբ: Սակայն ուժերը անհավասար էին և ապրիլի 25-ին «Գործողության բանակը» մտավ Ստամբուլ: Հաջորդ օրը, ապրիլի 26-ին, մայրաքաղաքը լրիվ անցավ այդ բանակի վերահսկողության տակ: Գրավվեց նաև սուլթանական Յելդրզ պալատը:

Իրենց հակառակորդների հետ երիտթուրքերի դատաստանը չափազանց դաժան ու արյունոտ էր: Ստամբուլում ռազմական դրություն մտցնելուց հետո սկսեցին գործել Մահմուդ Շևքեթ փաչայի կազմած ռազմա-դաչտային դատարանները, որոնց վճիռներով քաղաքի հրապարակներում կախաղան բարձրացվեցին կամ գնդակա-

հարվեցին մեծ թվով մարդիկ: Մոտ 10 հազար մարդ արտաքսվեց Ստամբուլից:

Ապրիլի 27-ին գումարվեց պատգամավորների պալատի և սենատի համատեղ դռնփակ նիստ՝ սուլթանի ճակատագրի վերաբերյալ վճիռ կայացնելու համար: Այդ օրերին Աբդուլ Համիդը փորձում էր համոզել իթթիհադականներին, որ ինքը ոչ մի առնչություն չի ունեցել «խռովարարների» հետ: Սակայն այլևս ոչ ոք չէր կասկածում, որ նա ոչ միայն ունեցել է անմիջական առնչություն, այլև մեծ գումարներ է ծախսել իթթիհադականների դեմ խռովություն կազմակերպելու համար և որ սուլթանը ուղղակի մասնակից է եղել այդ իրադարձություններին:

Խստիվ հետևելով շարիաթի օրենքներին, խորհրդարանը հարցում կատարեց շեյխ-ուլ-իսլամին առ այն, թե ինչպես վարվել ուղղադավանների առաջնորդի հետ, «որը գործում էր Ղուրանի և սրբազան օրենքի սկզբունքների խախտմամբ, որն օգտագործում էր հասարակության փողերը իր շահամոլական նպատակների համար, ով սպանում, բանտերն էր նետում և կտտանքների ենթարկում իր հպատակներին, ով երդվել էր, սակայն երդմնազանց էր եղել, ով սերմանում է անհամաձայնություն, դրանով իսկ խաթարելով քաղաքացիական խաղաղությունը և տեղիք տալով արյունահեղությունների»: Այդ մեղադրանքներից հետո, հարցում էր կատարվում շեյխ-ուլ-իսլամին, թե արդյոք թույլատրելի՞ է սուլթանի գահընկեցությունը: Մեծ մուֆթին այդ բոլոր հարցադրումներին առանձին-առանձին տվեց «այո» պատասխանը: «Երկրագնդի վրա Աստծո չուքը» համարվող սուլթան-խալիֆի գահընկեցության վճիռը Աբդուլ Համիդին հաղորդելու նպատակով կազմվում է չորս անձից բաղկացած մի պատվիրակություն, որի անդամներից և ոչ մեկը թուրք չէր: Այդ պատվիրակության մաս էին կազմում հայազգի ծերակուտական Արամ Երամյանը, խորհրդարանի Սալոնիկից պատգամավոր, հրեա փաստաբան Գարասուն, նախկին ծովային նախարար, ազգությամբ լազ Արիֆ Հիքմեթը և ալբանացի երեսփոխան Էսադ Թոփփանը: Այն, որ հիշյալ պատվիրակության մեջ չկար և ոչ մի թուրք, թուրք պատմաբանները համարում են Օսմանյան կայսրության պատմության մեջ անջնջելի արատ:

Խորհրդարանի որոշմամբ սուլթանը պետք է ներկայանար երեսփոխաններին, անձամբ լսելու իր դատավճիռը և ասելու իր ասելիքը: Խորհրդարանի պատգամավորների առջև հայտնվեց սուլթան Աբդուլ Համիդը իր 12-ամյա որդու ձեռքը բռնած: Խորհրդարանի նախագահը կարդաց պատգամավորների որոշումը և շեյխ-ուլ-իսլամի ֆեթ-

վան նրան օրինական ձևով գահընկեց անելու, խալիֆի կոչումից զրկելու և նրա եղբորը՝ Ռեշադին՝ սուլթան հռչակելու մասին: Աբդուլ Համիդը առանց ինքնատիրապետումը կորցնելու ասում է. «Դա ճակատագիր է»: Այնուհետև նա հարցնում է, թե իր կյանքը պահպանվելու է թե ոչ: Պատգամավորները պատասխանում են, որ դա որոշելու է խորհրդարանը:

Գահ բարձրացվեց Աբդուլ Համիդի կրտսեր եղբայր Մեհմեդ V Ռեշադը (1909–1918), որն իր կյանքի 30 տարիներն անց էր կացրել հարեմում:

Խորհրդարանը որոշեց Աբդուլ Համիդի կյանքը պահպանել, առաջնորդվելով որոշակի քաղաքական հաշվարկներով: Իթթիհադի ղեկավարների կարծիքով սուլթանի բռնի մահվան դեպքում կայսրության որոշ մասերում կարող էին տեղի ունենալ հուզումներ, որոնց դեմ պայքարը իրենցից կպահանջեր մեծ կորուստներ: Գահընկեց արված սուլթանը ուշ գիշերով, իր հարեմի մի մասի հետ, ուժեղացված պահակախմբի ուղեկցությամբ, ուղարկվեց Սալոնիկ: Այսպիսով, երիտթուրքերը չթույլատրեցին, որ Համիդը ենթարկվի դատական պատասխանատվության և պատասխան տա իր գործած հանցագործությունների համար: Հարյուր հազարավոր անմեղ զոհերի կանչը մնաց անլսելի: Օսմանների դինաստիայի այդ բռնապետը դարձավ հայ ժողովրդի դահիճը, սկիզբ դնելով արևմտահայության զանգվածային ջարդերին, որոնք չարունակվեցին իթթիհադականների կողմից՝ վերածվելով ցեղասպանության:

Աբդուլ Համիդին բացարձակապես չէր հետաքրքրում նաև իր մահմեդական հպատակների ստորին խավերի ճակատագիրը: Նա թուրքերի հիմնական զանգվածին պահում էր տգիտության, խավարի, աղքատության ու հետամնացության վիճակում: «Կարմիր սուլթանը» մշտապես մնաց կույր ու խուլ իր ժողովրդի իրական կարիքների նկատմամբ:

Աբդուլ Համիդին տապալելուց հետո երիտթուրքերը ամբողջապես իրենց ձեռքը վերցրին երկրի կառավարման ղեկը: Նրանց կառավարման հիմնական սկզբունքը բռնակալությունն ու ահաբեկչությունն էր: Այնուամենայնիվ նրանք որոշեցին պահպանել միապետությունը և երկրում սահմանեցին մի վարչակարգ, որը համարյա ոչնչով չէր տարբերվում աբդուլհամիդյան արյունոտ վարչակարգից: Առաջինը դա իր վրա զգաց հայ ժողովուրդը: Մինչ Ստամբուլը կատարում էր ազատության խրախճանքներ, 1909 թ. ապրիլին Ադանայում և Կիլիկիայի այլ շրջաններում իթթիհադականները կազմակերպեցին

հայերի զարհուրելի կոտորածներ, որոնց զոհ գնացին 30 հազար խաղաղ բնակիչներ: Կիլիկիան վերածվեց մոխրակույտի ու սպանդանոցի:

Ադանայի դեպքերի ականատեսներից մեկը՝ Հելեն Գիբոնսը գրում էր, որ հայերին անողոքաբար կոտորում ու գնդակահարում էին փողոցներում, կենդանի այրում այն տներում, որտեղ նրանք պատսպարվում էին: Չէին խնայում ո՛չ ծերերին, ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաներին: Այդ ջարդն ավելի սարսափելի էր, քան Աբդուլ Համիդի ժամանակներում,- եզրակացնում է հեղինակը: Ջարդի օրերին, Ադանայից ոչ հեռու գտնվող Մերսին նավահանգստային քաղաքի ջրերում կանգնած էին յոթ պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Գերմանիայի և Ամերիկայի Միացյալ նահանգների ռազմանավերը: Սակայն նրանցից ոչ մեկին հրաման չտրվեց միջամտելու Ադանայում ընթացող արյունոտ ջարդերին:

Իթթիհադը իր անմիջական մասնակցությունն էր բերել հայ բնակչության այդ կոտորածը կազմակերպելու գործին: Դրա վկայություններից մեկն էլ այն էր, որ իթթիհադականներից կազմված կառավարությունը չնական անտարբերություն էր դրսևորում Ադանայի սպանդի նկատմամբ: Ավելին, իշխանությունները լուրեր էին տարածում ժողովրդի շրջանում, որ Ադանայում հայերն են եղել նախահարձակ և մեղավորը հայ հեղափոխականներն են:

Երիտթուրքական կուսակցության անդամ Հ. Պապիկյանը, որը քննիչ հանձնաժողովի կազմում մասնակցել էր Կիլիկիայում կազմակերպված այդ ջարդի քննությանը, իր պատրաստած տեղեկագրում դատապարտում էր իր պատկանած կուսակցությանը գրելով. «Ստիպված եմ ամենաբուռն ցավով նշել, թե՝ Իթթիհադ վե Թերաքքը կուսակցության անդամները՝ Ադանայի վայրագ ողբերգության կազմակերպման և գործադրության մասնակցած են»: Իր այդ տեղեկագրի համար Հ. Պապիկյանը վճարեց իր կյանքով:

Իթթիհադականները փորձում էին Կիլիկիայի ջարդի պատասխանատվությունը բարդել Աբդուլ Համիդի վրա:

Կիլիկիայի ջարդի օրերին հայկական շրջանակներում մտավախություն կար, որ ջարդերի ալիքը կարող է անցնել Արևմտյան Հայաստան: Վերստին իշխանության լծակները վերցնելով իր ձեռքը, իթթիհադը հաստատեց կուսակցական դիկտատուրա: Աբդուլհամիդյան «զուլումի» արյունոտ վարչակարգը փոխարինվեց «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության էլ ավելի արյունոտ բռնատիրությամբ, որն այս անգամ ուղղված էր ոչ միայն քրիստոնյաների, այլև ոչ թուրք մահմեդականների՝ արաբների, ալբանացիների և մյուս

ժողովուրդների դեմ: Օսմանյան կայսրության երկու հիմնական սկզբունքներին՝ բռնատիրությանն ու իսլամիզմին, երիտթուրքերը ավելացրին նաև երրորդը՝ թուրքական նացիոնալիզմը: Երիտթուրքերը թունդ ազգայնականներ էին, այլամերժ, և չէին ընդունում կայսրության մյուս ժողովուրդների ձգտումների օրինականությունը: Նրանք հայերին բարենորոգումներ չնորհելը համարում էին կայսրության ամբողջականության խախտում: Իթթիհադականների մտահոգության գլխավոր առարկան Օսմանյան կայսրությունը փրկելն ու պետության ամբողջականության պահպանումն էր, ինչպես նաև եվրոպական ճնշմանը դիմագրավելը:

«Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն ձեռնամուխ եղավ մի շարք միջոցառումների իրականացման, որոնց նպատակն էր ոչ միայն իր իշխանության ամրապնդումը, այլև սուլթանի դիրքերի թուլացումը: Երիտթուրքերը նախ հօգուտ պետության բռնագրավեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ի անձնական ունեցվածքը, իսկ նրա Յելդրզ պալատը վերածեցին թանգարանի: Այնուհետև, 1909 թ. ամռանը պատգամավորների պալատի միջոցով 1876 թ. սահմանադրության մեջ մտցրին մի շարք փոփոխություններ: Այսուհետև սուլթանը զրկվում էր մինիստրներ նշանակելու և ազատելու, խորհրդարանը գումարելու և ցրելու, երկրից անցանկալի մարդկանց արտաքսելու իրավունքից: Խորհրդարանը նաև օրենք ընդունեց մամուլի մասին, որը գործնականում ողջ մամուլը դնում էր կառավարության հսկողության տակ: Իսկ ասոցիացիաների վերաբերյալ օրենքով հասարակական-քաղաքական կազմակերպությունները հայտնվում էին ոստիկանության զգոն հսկողության ներքո: Բնականաբար այդ բոլոր օրենքները կոչված էին սահմանափակելու Օսմանյան կայսրության բնակչության քաղաքական իրավունքները:

Իրենց դիրքերը կայունացնելու և ամրապնդելու նպատակով, երիտթուրքերը ձեռնամուխ եղան նաև պետության ուժային կառույցների՝ բանակի, ոստիկանության և ժանդարմերիայի վերակառուցմանը: Թուրքական բանակում նրանք արմատավորեցին գերմանական ռազմական համակարգը: Ռազմական բարեփոխումն իրականացվեց գերմանական գեներալ ֆոն դեր Հոլցի հանձնարարականներով: Միաժամանակ սկսվեց նաև թուրքական բանակի մատակարարումները գերմանական զենքերով: Բանակը, ոստիկանությունը և ժանդարմերիան դարձան երիտթուրքական դիկտատուրայի հենարանը: Ընդունվեց օրենք ոչ մահմեդականներին բանակ զորակոչելու վերաբերյալ: Բանակում գտում իրականացնելու նպատակով երիտթուրքերը կազ-

մակերպեցին ռազմա-դաշտային դատարաններ, որոնք իրենց հակառակորդներին դատապարտում էին կամ գնդակահարության և կամ աքսորի կայսրության հեռավոր վայրերը:

Գեներալ Մահմուդ Շևքեթ փաշան կառավարում էր երկիրը ինչպես դիկտատոր: Ողջ զինված ուժերը գտնվում էին նրա հսկողության տակ: Որպես սահմանադրական միապետ՝ սուլթանը շարունակում էր թագավորել, սակայն նա այլևս չէր կառավարում: Կառավարությունն այսուհետև պատասխանատու էր խորհրդարանի առջև, որն իրավասու էր կաբինետի գործունեության հետ համաձայն չլինելու դեպքում պարտադրել նրան տալու հրաժարական:

Երիտթուրքական այսպես կոչված «հեղափոխության» թվացյալ «գարունը» կայսրության ոչ թուրք ժողովուրդներին բերեց օսմանյան կայսրության ամենասուր հարցը՝ ազգային հարցը լուծելու որոշ հույսեր: Սակայն ազգային հարցում ևս երիտթուրքական կառավարությունը սկսեց ընթանալ Աբդուլ Համիդի չովինիստական քաղաքականության տրորված ճանապարհով: Իրենց գործունեությունը սկսելով կայսրության բոլոր ժողովուրդների «միասնության» և «եղբայրության» կոչերով, իթթիհադականները շուտով գլորվեցին ազգային-ազատագրական շարժումները դաժանորեն ճնշելու դիրքերը: Նրանք ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները համարում էին օտարերկրյա պետությունների դիվանագիտական բանսարկությունների արգասիք և թուրքերի արժանապատվության համար վիրավորական էին համարում օտարերկրյա միջամտությունը «օսմանյան հայրենիքի ներքին գործերին»: Երիտթուրքերը զինվորական ստորաբաժանումներից ստեղծեցին «հետապնդման գումարտակներ» իբր թե զինված բանդաները զինաթափելու ու ոչնչացնելու համար, բայց իրականում ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճզմելու համար:

Իթթիհադը ամբողջապես որդեգրեց ազգայնամոլության հավատամքը և ձգտում էր ձուլել կայսրության բոլոր ժողովուրդներին օսմանցիության մեջ: Այսինքն, նա պնդում էր, թե իբր երկրում, բացի օսմանյան ազգից, ուրիշ ազգություններ չկան: «Այստեղ չկա հայ, հույն, բուլղար, ալբանացի, արաբ, բոլորն էլ օսմանցի են» քանիցս նման հայտարարությամբ հանդես էր գալիս խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզան: Եվ թեև խորհրդարանի ոչ թուրք երեսփոխանները և իթթիհադի նկատմամբ ընդդիմադիր դիրքորոշում ունեցող թուրքերը փորձում էին համոզել, որ միությունը տարբեր ժողովուրդների այլազանության մեջ է և թե օսմանյան պետությունը կարող է

իրոք առաջադիմել ու բարգավաճել միայն այն պարագայում, երբ նրա այլացեղ հատվածները վայելեն որոշ չափով ինքնավարություն, այդ պնդումները մնում էին ձայն բարբառո անապատի: Միություն ասելով իթթիհադը հասկանում էր պարզապես ոչ թուրք ժողովուրդների ձուլում թուրքական զանգվածի մեջ: Հենց այդ նպատակով նա կերտեց բացարձակ կենտրոնացման մի համակարգ՝ թուրք տարրի գերակայությամբ: Երիտթուրքերը հայրենիքի դավաճան հռչակեցին բոլոր նրանց, լինեին նրանք քրիստոնյա թե իսլամ, որոնք կողմնակից էին ապակենտրոն սիստեմի և ազգերի իրավահավասարության:

Օսմանիզմը (օսմանականությունը) կոչված էր զինաթափ անել իրենց ազգային անկախության համար պայքար մղող ժողովուրդներին: Ստամբուլում բրիտանական դեսպան Լոուդերը գրում էր իր արտաքին գործերի մինիստր Էդուարդ Գրեյին, որ «օսման» անվան տակ իթթիհադականները հասկանում էին «թուրք»: Եվ իթթիհադականների ներկա «օսմանականացման քաղաքականությունը նշանակում էր ոչ թուրք տարրերին ծեծել թուրքական հավանգի մեջ»: Գործնական հողի վրա նշանակում էր նաև թուրքերեն լեզվի պարտադրանք արաբներին, ալբանացիներին, քրդերին և այլ ոչ թուրք մահմեդականներին:

Ակադեմիկոս Ե. Վ. Տարլեն նշում է, որ երբ երիտթուրքերի պարագլուխներից մեկը՝ Էնվեր փաշան, հեղափոխությունից հետո բացականչում էր, որ այսուհետև բուլղարացի «չկա», հույն «չկա», մակեդոնացի «չկա», արաբ «չկա» և որ բոլորը «հավասար» են և բոլորը «օսմանցիներ են», ապա նա... հենց այդպես էլ հասկանում էր գործը. կամ Թուրքիայում բնակվող բոլոր այդ ցեղերը թուրքեր կդառնան և այդպիսով բոլորը «հավասար» կլինեն, կամ նրանք «չկան», այսինքն՝ մենք նրանց սրի կքաշենք, և այդ պատճառով նրանք «չեն լինի»:

Իրենց հակաթուրքական ազգային-ազատագրական շարժումներով Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդները գործնականում ապացուցեցին, որ իրենք չեն ընդունում ոչ մի օսմանիզմ և շարունակելու են պայքարը հանուն իրենց ազգային իրավունքների:

Իթթիհադականները ևս, հավատարիմ մնալով օսմանյան հասարակության հիմնարար սկզբունքին, ոչ մահմեդականներին համարում էին «հանդուրժվող անհավատներ»: Գալով իշխանության գլուխ, նրանք նախորդ իշխանությունից որդեգրեցին տիրապետող ազգի (milleti hâkime) սկզբունքը: Կայսրության բոլոր հպատակներին խոստանալով ազատություն, արդարություն և հավասարություն,

նրանք այնուամենայնիվ պահպանեցին մահմեդականների առավելության կամ տիրապետող ազգի սկզբունքը: Իթթիհադի կիսապաշտոնական «Թանին» թերթում նրա խմբագիր Հուսեին Ջահիդը առաջնորդող հոդվածում անթաքույց ձևով գրեց, որ «անկախ Թուրքիայում ազգային կոնֆլիկտների ելքից, թուրք ազգը կա և կմնա որպես տիրապետող ազգ»: Այդ գաղափարը ավելի համապարփակ ձևով ձևակերպել է պանթյուրքիզմի գաղափարախոս Զիյա Գյոքալփը ասելով. «Իսլամը տալիս է տիրապետության համար մանդատ»:

Թեև իթթիհադականները որպես կանոն հանդիսանում էին աննաստված աթեիստներ, սակայն նրանք իսլամիզմն ընդգրկեցին որպես իրենց գաղափարախոսության պաշտոնական ու պարտադիր տարր: Ստամբուլում ամերիկյան դեսպան Մորգենթաուն վկայում է, որ Թալաաթը խորապես անտարբեր էր մահմեդականության նկատմամբ և իր կուսակցության ղեկավարների մեծ մասի նման՝ նա քամահրանքով էր վերաբերվում բոլոր կրոնների նկատմամբ: «Նա մի առիթով ինձ ասաց հետևյալը,– գրում է Մորգենթաուն,– «Ես ատում եմ բոլոր հոգևորականներին, ռաբբիներին ու հոջաներին»: Երիտթուրքերը ոչ միայն տուրք էին տալիս իսլամին, այլև իսլամության վերածննդի համոզված կողմնակիցներ էին: Թեև նրանք հայտարարում էին, որ իրենք մտադիր են Թուրքիան մահմեդական աստվածապետությունից վերածել իրավական պետության, սակայն գործնականում իրենք երկիրը տարան շարիաթի և կրոնական սկզբունքների ուղիով: Նրանք իրենց իշխանության ամրապնդման համար դաշինքի մեջ մտան նաև հոգևորականության հետ:

Երիտթուրքերը որդեգրեցին պանիսլամիզմի ուսմունքը, որը հանդիսանում էր սուլթան Աբդուլ Համիդ II-ի պաշտոնական գաղափարախոսությունը: Դա իշխանության կենտրոնացման մի ձգտում էր կրոնի միջոցով, քանի որ արաբների, քրդերի, ալբանացիների և այլ ոչ թուրք մահմեդականների հետ իրենց հարաբերությունները կարգավորելու ճանապարհին ազգային սկզբունքն անուժ էր:

Պանիսլամիզմի գաղափարախոսությունը ըստ էության սքողում էր «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության ձգտումը իսլամ դավանող բոլոր ժողովուրդների նկատմամբ Թուրքիայի տիրապետությունը հաստատելու վերաբերյալ: Երիտթուրքերի տիրապետության շրջանում պանիսլամիզմի աչքի ընկնող գաղափարախոսներից մեկը՝ Զելալ Նուրին իր «Իսլամի միասնությունը» գրքում գրում էր, որ իրեն հետաքրքրում է պանիսլամիզմի ոչ թե կրոնական, այլ քաղաքական կողմը: Որ իսլամ դավանող ժողովուրդները կազմում են

միասնական մի ազգ և նրանց թիվը հաշվվում է մոտ 300 միլիոն մարդ:

1911 թ. հոկտեմբերին գումարված իթթիհադի համագումարում ընդունված որոշման մեջ հստակորեն նշվեց, որ կայսրության բնույթը պետք է լինի մահմեդական: Այդ սկզբունքին երիտթուրքերը հավատարիմ մնացին մինչև վերջ:

1910 թ. Սալոնիկում տեղի ունեցած իթթիհադականների ամենամյա համագումարում, որն ընթանում էր գաղտնի քննարկումների պայմաններում, օրակարգի հարց էր բռնի ճանապարհով հոմոգենիզացման ենթարկել Թուրքիան կամ «բոլոր թուրքահպատակներին ենթարկել կատարյալ օսմանիզացման»:

1910 թ. օգոստոսին, իթթիհադականների համագումարին նախորդած չրջանում, Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքերի ղեկավար կազմի ժողովում Թալաաթ փաչան հայտարարել է. «Դուք գիտեք, որ համաձայն սահմանադրության, մահմեդականների և գյավուրների միջև սահմանվել է հավասարություն, սակայն դուք բոլորդ հիանալի հասկանում և զգում եք, որ դա անիրականանալի գաղափար է: Շարիաթը, մեր անցյալի ողջ պատմությունը և հարյուր հազարավոր մահմեդականների զգացումները և նույնիսկ հենց իրենց՝ գյավուրների զգացումները հանդիսանում են անանցանելի արգելք իրական հավասարություն ստեղծելու ճանապարհին: Ուստի հավասարության մասին հարցը չի կարող դրվել, քանի դեռ մեզ չի հաջողվել իրականացնել կայսրության օսմանականացման խնդիրը»:

Առաջնորդվելով «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսով, երիտթուրքերը հանդես էին գալիս կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների անկախության ձգտումների կատաղի հակառակորդի դերում: Նրանք մնում էին կաչկանդված այն նախապաշարմունքի մեջ, որ ստեղծվել էր նրանց նախահայրերի նեղմտությունից: Այսինքն՝ հավատում էին, թե Թուրքիայի դժբախտությունը նրա մեջ ապրող տարբեր ազգություններն են, ոչ միայն այլակրոն, ոչ մահմեդական, այլև կրոնակից, բայց այլացեղ: Այդ պատճառով «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը որոշել էր ամեն ջանք գործադրել պետությունը միատարր թուրքական դարձնելու համար:

Իթթիհադը առանձնակի թշնամությամբ էր լցված դեպի հայ ազգային-ազատագրական չարժումը, այն համարելով կայսրության համար առավել վտանգավոր: Երիտթուրքերը եկել էին այն համոզման, որ հայերին հնարավոր չէ համաձուլել ու թրքացնել, որովհետև նրանք ունեին լեզվի, կրոնի և մշակույթի դարավոր ավանդույթներ,

որոշակի ազգային ինքնատիպություն և զարգացած ազգային գիտակցություն: Ուստի Հայկական հարցի լուծման միակ ձևը նրանք համարում էին հայերի տոտալ ոչնչացումը: Առաջնորդվելով այդ գիտակցությամբ, նրանք ամեն կերպ կասեցնում ու թույլ չէին տալիս միջազգային պայմանագրերով նախատեսված բարեփոխումների իրականացումը Արևմտյան Հայաստանում, շարունակելով Աբդուլ Համիդի քաղաքականությունը, սրում էին ազգամիջյան հարաբերությունները, հատկապես ատելություն ու թշնամանք բորբոքելով հայերի ու քրդերի միջև:

Մշակելով այսպես կոչված «ազգային վերածնության ծրագիր»՝ երիտթուրքերը ի վերջո որոշեցին հրաժարվել օսմանիզմի գաղափարախոսությունից, այն համարելով անօգուտ օսմանյան պետության համար: Ժամանակին որդեգրելով օսմանիզմի կոնցեպցիան, երիտթուրքերը ենթադրում էին, որ կայսրության բազմաէթնիկ կառուցվածքում թուրքերն ունենալու են տիրապետող դիրքեր և որ մյուս էթնիկական միավորները ժամանակի ընթացքում կինտեգրացվեն օսմանյան համակարգի մեջ և ի վերջո ամբողջապես կենթարկվեն համաձուլման: Սակայն կյանքը ցույց տվեց, որ դա անիրական և անիրագործելի գաղափար է, որովհետև հնարավոր չէ օսմանյան պետության մեջ տարբեր ազգերի ներդաշնակ գոյակցությունը: Ուստի իթթիհադը որոշեց օսմանիզմը փոխարինել ազգայնականությամբ, որի հիմքում ընկած էր լինելու «արյան կանչի» գաղափարը: Երիտթուրքական գաղափարախոսները սկսեցին մշակել մի ծրագիր, որի էությունը համարվում էր այսպես կոչված «երրորդ քաղաքական համակարգի» ստեղծումը: Դրա տակ հասկացվում էր թուրքիզմի, պանթյուրքիզմի կամ պանթուրանիզմի գաղափարի իրագործումը: Այդ գաղափարախոսության միջոցով ենթադրվում էր թուրքականացման ենթարկել ողջ օսմանյան հասարակությունը, ինչպես նաև միավորել թյուրքալեզու բոլոր ժողովուրդներին «թյուրքական մեծ պետության» շուրջը՝ Թուրքիայի գլխավորությամբ:

Իր հայտնի «Թյուրքիզմի հիմունքները» գրքում պանթյուրքիզմի գաղափարախոսության հիմնադիր Զիյա Գյոք-Ալփը նախանշում է իր նպատակին (իդեալին) հասնելու երեք աստիճաններ. 1. Թուրանիզմը հենց բուն Թուրքիայում, այսինքն բոլոր ոչ թուրքերի համաձուլում. եթե դա չհաջողվի, բոլոր ոչ թուրք տարրերի վտարում երկրից, թուրքերեն լեզվի մաքրում արաբական խառնուրդներից, թուրքական ազգային մշակույթի ստեղծում: 2. Օղուզականություն, այսինքն այն երկրների միավորում, որոնք բնակեցված են Օղուզի ժառանգորդնե-

րով: 3. Մնացած բոլոր թյուրքալեզու ժողովուրդների համադաշնության ստեղծում: Պանթյուրքիստները կազմեցին «մինիմում» և «մաքսիմում» ծրագրեր: Մինիմում ծրագրով նախատեսվում էր «Փոքր կամ նոր Թուրանի» կազմավորում, որի սահմանները տարածվելու էին Բայկալ լճից մինչև Ստամբուլ և Մոնղոլիայից մինչև Կազան: Մաքսիմում ծրագիրը նախատեսում էր «Մեծ Թուրանի» ստեղծում, որը զբաղեցնելու էր ճապոնական ջրերից մինչև Սկանդինավյան լեռները և Սառուցյալ օվկիանոսից մինչև Տիբեթի սարահարթը ընդգրկող վիթխարի տարածքը: «Մեծ Թուրանի» ստեղծումը պետք է իրականություն դառնար աննախադեպ մեծ պատերազմների ու արյունալի արշավանքների՝ այլ կերպ ասած «հրի ու սրի միջոցով»:

Ինչպես օսմանիզմի, այնպես էլ թուրանիզմի ու պանթյուրքիզմի իմաստը հանգում էր նրան, որ ուղիներ գտնվեն պետության նախկին հզորությունը վերականգնելու համար: 1911 թ. սկսած պանթյուրքիզմը դարձավ երիտթուրքերի պաշտոնական գաղափարախոսությունը և մտցվեց գործողության մեջ: Այսպիսով, պանիսլամիզմի հետ միաժամանակ պանթյուրքիզմի ռազմաշունչ-ծավալապաշտական գաղափարախոսությունը դառնում էր իթթիհադականների քաղաքական ծրագրերի իրագործման գործիք:

1911 թ. երիտթուրքական վարչակարգը մխրճվեց արտաքին-քաղաքական լուրջ ճգնաժամի մեջ: Իտալիան անթաքույց ձգտում էր դրսևորում Օսմանյան կայսրությունից խլելու նրա աֆրիկյան վերջին տիրույթները՝ Տրիպոլիտանիան և Կիրենաիկան: 1911 թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց իտալա-թուրքական պատերազմ: Քանի որ Եգիպտոսը անգլիացիների բերանով հայտարարեց իր չեզոքության մասին, ուստի նա թույլ չտվեց, որ թուրքական զորքերը ցամաքով անցնեն Տրիպոլի: Ընդամենը յոթ հազարանոց տեղական թուրքական զորամասը ստիպված էր կռվել նորագույն զենքերով հիանալի զինված իտալական 56-հազարանոց բանակի դեմ: Իսկ Միջերկրական ծովում տիրապետում էր իտալական նավատորմը: Իտալացիները ռազմական ավիացիայի պատմության մեջ առաջին անգամ այդ պատերազմում օգտագործեցին ինքնաթիռներ: Սանուսիների արաբական միաբանությունը իտալացիներին հայտարարեց ջիհադ՝ սրբազան պատերազմ: Արաբ և բերբեր բնակչությունը թուրքերի հետ միասին կատաղի դիմադրություն էր ցույց տալիս իտալացիներին: Թշնամու դեմ զինված պայքարը կազմակերպելու և ղեկավարելու նպատակով Հյուսիսային Աֆրիկա գործուղվեցին «Միասնություն և առաջադի-

մություն» կուսակցական ականավոր գործիչ Էնվեր-բեյը, ինչպես նաև Մուստաֆա Քեմալը: Նրանք իրենց առաքելությունը համարում էին «բարոյական պարտք մահմեդական աշխարհի առջև»:

Եվրոպական տերությունները լուռ դիտում էին «աֆրիկյան սպանդը»: Նրանց միակ մտահոգությունը ռազմական գործողությունների տեղայնացումն էր Հյուսիսային Աֆրիկայի շրջանակներում: Զգտելով ստիպել հակառակորդին, որ նա կնքի խաղաղություն, Իտալիան ռմբակոծման ենթարկեց Օսմանյան կայսրության նավահանգիստները՝ Բեյրութը և Իզմիրը: Իտալական զորքերը նաև ռազմակալման ենթարկեցին Դոդեկանեզյան կղզիները և ռմբակոծեցին Դարդանելի շրջանում թուրքական ամրությունները:

Պատերազմում թուրքերի կրած ջախջախիչ պարտությունները Ստամբուլում առաջ բերեցին կառավարական ճգնաժամ: 1911 թ. նոյեմբերին ստեղծված «Ազատություն և համաձայնություն» («Հյուրրիեթ վե իթթիֆաք») կուսակցությունը բուռն քարոզչություն էր ծավալել իթթիհադականների դեմ: Ազատականների այդ նոր կուսակցության շարքերում կային նաև ոչ մահմեդականներ, այդ թվում նաև հայեր: Նրանց բոլորին միավորում էր մեկ ընդհանուր նպատակ՝ իթթիհադականների վարչակարգի տապալումը: Ակտիվ ընդդիմությունը ներկայացված էր նաև «Փրկարար սպաներ» (Halâskar) խմբով, որը սերտ կապերի մեջ էր «Ազատություն և համաձայնություն» կուսակցության հետ: «Փրկարար սպաների» նպատակը ևս նույնն էր. ոչնչացնել իթթիհադականների իշխանությունը և ընտրությունների միջոցով ձևավորել «լեգիտիմ կառավարություն»: Ընդդիմադիր կուսակցությունների թվում էր նաև «Ահրար»-ը: Այդ միացյալ ուժերին հաջողվեց 1912 թ. հուլիսին պետական հեղաշրջման միջոցով տապալել երիտթուրքերին:

Իթթիհադական կառավարությունը Մահմուդ Շևքեթ փաշայի գլխավորությամբ հրաժարական տվեց: Ձևավորվեց նոր կառավարություն Ղազի Մուխթար փաշայի գլխավորությամբ, որի կազմի մեջ մտան տարբեր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Սակայն բոլոր հանգուցային պաշտոնները գտնվում էին «Ազատություն և համաձայնություն» կուսակցության ձեռքերում: Վերջինս ազգային փոքրամասնություններին խոստանում էր կենսագործել կայսրության ազգային մարզերի ինքնավարության սկզբունքը՝ պահպանելով երկրի քաղաքական ամբողջականությունը:

1912 թ. օգոստոսին իթթիֆաքականներին հաջողվեց ցրել նաև խորհրդարանը, որտեղ մեծամասնությունը պատկանում էր իթթիհադականներին:

Այսպիսով, երիտթուրքերը կրեցին պարտություն և ստիպված էին հեռանալ իշխանության ղեկի մոտից: 1912 թ. օգոստոսին նրանք Ստամբուլում գումարեցին կուսակցության հերթական համագումար, իրենց հետագա անելիքները որոշելու համար, որից հետո նրանց Կենտրոնական կոմիտեն կրկին տեղափոխվեց «հին բույնը»՝ Սալոնիկ:

Մինչդեռ իտալա-թուրքական պատերազմը շարունակվում էր և թուրքերը կրում էին պարտություն պարտության հետևից: 1912 թ. հոկտեմբերի 18-ին Լոզանի մոտ գտնվող Ուշի կոչված վայրում կնքվեց թուրք-իտալական հաշտության պայմանագիր: Թուրքիայի կողմից պայմանագիրը ստորագրեց իթթիլյաֆիստական կառավարության արտաքին գործերի մինիստր Գաբրիել Նորատունկյանը: Տրիպոլիտանիան և Կիրենաիկան անցնում էին Իտալիային (այդ երկրամասը դարձավ իտալական գաղութ «Լիբիա» անվան տակ): Իտալիային անցան նաև Դոդեկանեզյան կղզիները՝ որպես «ժամանակավոր տիրույթ»:

Որքան էլ որ Աֆրիկայում թուրքական վերջին տիրույթների՝ Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի կորուստը դառն ու ցավագին էր թուրքերի համար, նրանք այն համարում էին իրենց ազգային ինքնասիրությանը և ոչ թե կենսական շահերին հասցված հարված: Տրիպոլիտանական կամ իտալա-թուրքական պատերազմից հետո թուրքական քաղաքական շրջանները բացահայտ կերպով հայտարարում էին, որ Թուրքիայի ապագան Փոքր Ասիայում է: Որ Արևմուտքում կրած պարտությունների դիմաց նոր ձեռքբերումներ ու փոխհատուցում պետք է որոնել Արևելքում, Արարատի և Պարսկաստանի կողմերում: «Այնժամ,- ենթադրում էին նրանք,- Ստամբուլը ընդմիշտ կմնա մեր ձեռքերում, իսկ մեր տիրույթները ինքնստինքյան կընդարձակվեն դեպի Արևելքի կողմը»: Դժվար չէ նկատել, որ այդ մտայնության կողմնակիցները երազում էին կյանքի կոչել պանթյուրքիզմի գաղափարախոսությունը:

Իտալա-թուրքական հաշտության պայմանագրի կնքման օրը, հոկտեմբերի 18-ին սկսվեց մի նոր պատերազմ, այս անգամ Բալկաններում: Այդ պատերազմը նախապատրաստվում էր տարիների ընթացքում: XX դարի սկզբից ազգայնականությունը Բալկաններում հուժկու վերելք էր ապրում: Հասունանում էր օսմանյան անտանելի լծի դեմ բալկանյան ժողովուրդների համատեղ զինված պայքար մղելու գաղափարը, որը աջակցություն էր գտնում Ռուսաստանի կողմից: Հենց վերջինիս հուշումով 1912 թ. կնքվեց սերբ-բուլղարական դաշինք, որը պարունակում էր գաղտնի կետ Թուրքիայի դեմ համատեղ գործողությունների վերաբերյալ՝ եթե թուրքերի կողմից ջարդեր

կազմակերպելու դեպքում առաջնար պատերազմի սպառնալիք: Շուտով կնքվեց նաև հույն-բուլղարական դաշինք, որը լրացվեց ռազմական կոնվենցիայով: Այդ դաշինքին միացավ նաև Չեռնոգորիան: Այսպիսով, ձևավորվեց Բալկանյան պետությունների ռազմական դաշինքը: Դա ըստ էության պաշտպանողական դաշինք էր, սակայն միաժամանակ մի կառույց, որը անհրաժեշտության դեպքում կարող էր ապահովել հարձակումը Թշնամու վրա, որը դարերի ընթացքում ճնշում ու կեղեքում էր Բալկանյան ժողովուրդներին:

Բալկանյան պետությունների դաշինքի նկատմամբ Թուրքական ռեակցիան վայրկյանական էր: Որպես վրիժառության ակտ՝ Թուրքերը Բուլղարիայում և Մակեդոնիայում կազմակերպեցին մասնակի ջարդեր: Ստամբուլում սկսվեցին զանգվածային հուժկու ցույցեր, որոնք ուղեկցվում էին բալկանյան դաշնակիցների հասցեին ռազմաշունչ հայտարարություններով: Ցուցարարները վիրավորական արտահայտություններ թույլ տալով իրենց նախկին ռայա հպատակների հասցեին բացականչում էին. «Մենք ցանկանում ենք պատերազմ, պատերազմ, պատերազմ», «Շարժվենք դեպի Սոֆիա», «Կործանենք Հունաստանը», «Բալկանյան շները ոտնատակ են տալիս խալամը» և այլն: Նմանատիպ ցույցեր ու հանրահավաքներ տեղի էին ունենում նաև Սոֆիայում, Բելգրադում և Աթենքում, որտեղ նույնպես հնչում էին ռազմաշունչ կոչեր:

Ձևակերպելով բալկանյան ժողովուրդների ընդհանուր տրամադրությունը՝ Բուլղարիայի վարչապետ Ի. Ե. Գեչովը գրում էր. «Դա մի պատերազմ է, որի ընթացքում հույները, բուլղարները, սերբերը, ալբանացիները, կաթոլիկները և ուղղափառ չեռնոգորցիները ուս-ուսի տված պետք է մարտնչեն: Եվ այդ բոլորը պանսլավոնական քարոզչության արդյունք չէ: Դա խաչակրաց արշավանք է անտանելի Թուրքական բռնատիրության դեմ, որը չահագործում և կեղեքում է Բալկանյան թերակղզու քրիստոնյաներին»:

Պատերազմի պատճառ դարձավ Թուրքական կառավարության հրաժարումը Մակեդոնիային և Թրակիային անկախություն չնորհելու վերաբերյալ: Այդ օրերին իթթիհադի կիսապաշտոնական «Թանին» թերթը գրեց. «Ո՞վ կարող է երաշխավորել, որ 23-րդ հոդվածին (խոսքը 1878 թ. բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածի մասին է Մակեդոնիայի վերաբերյալ – Վ. Բ.) որը նրանք փորձում են վերակենդանացնել, չի հետևի 61-ը» (Բեռլինի դաշնագրի հոդվածը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու մասին – Վ. Բ.):

Հոկտեմբերի 18-ին Ստամբուլում տեղի ունեցան խոշոր փոփո-

խություններ: Մինիստրների կաբինետը հրաժարական տվեց: Նոր կառավարությունը գլխավորեց Ֆյամիլ-փաշան: Օգտվելով պատերազմական իրադրությունից, իթթիլյաֆականները սկսեցին հալածանքների ենթարկել իրենց քաղաքական հակառակորդներին: Նրանք ձերբակալեցին բազմաթիվ իթթիհադական գործիչների:

Միաժամանակ Բ. Դուռը դիմեց մեծ պետություններին՝ բալկանյան դաշնակիցների դեմ պատերազմում հայցելով նրանց աջակցությունը: Օգնության խնդրանքով Ֆյամիլ-փաշան դիմեց նաև Անգլիային, սակայն վերջինս պատասխանեց, որ ստեղծված իրադրության պայմաններում գերադասում է պահպանել չեզոքություն: Բ. Դուռը աջակցություն չստացավ նաև Բեռլինի կողմից, թեև վերջինս Թուրքերին առատորեն մատակարարում էր նորագույն զենքեր: Կայզերը խոստացավ միայն օգնել հաշտության պայմանագիր կնքելու Օսմանյան կայսրության համար պատվավոր պայմաններով, այն էլ միայն այն դեպքում, եթե Թուրքերին հաջողվի տանել գեթ մի խոշոր հաղթանակ: Մինչդեռ պատերազմի ճակատներում իրար հետևից Թուրքերը կրում էին խոշոր պարտություններ:

Առաջին բալկանյան պատերազմը ըստ էության բլիցկրիգ էր: Բալկանյան դաշնակիցները պատերազմի դաշտերում ձեռք բերեցին փայլուն հաղթանակներ: Երբեմնի ահեղ օսմանյան բանակը նախկին ռայաներից կրում էր ամոթալի ու նվաստացուցիչ պարտություններ: Հաղթական բուլղարական բանակը սրընթաց մոտենալով Օսմանյան կայսրության հին մայրաքաղաքին՝ Էդիրնեին (Ադրիանոպոլիս) գրավեց այն և սկսեց շարժվել Ստամբուլի ուղղությամբ: Թուրքերին հաջողվեց բուլղարացիներին կանգնեցնել միայն Ստամբուլի մատույցներում՝ Չաթալջիի մոտ: Նույնպիսի փառավոր հաղթանակներ տարավ 150 հազարանոց սերբական բանակը: Սերբերը ավելի քան 500 տարի սպասում էին այդ պահին, որպեսզի վրեժ լուծեն Թուրքերից 1389 թ. Կոսովոյի դաշտում պարտություն կրելու դիմաց: Գրավելով Դուրացցոն՝ սերբերը դուրս եկան Ադրիատիկ ծով: Հույները ևս դրսևորելով անօրինակ խիզախություն, մի շարք ջախջախիչ պարտությունների մատնեցին Թուրքերին և գրավեցին Սալոնիկը: Համարյա 500 տարվա Թուրքական տիրապետությունից հետո հունական սպիտակ-կապույտ դրոշը կրկին ծածանվեց Սալոնիկի վրա, իսկ Թուրքական աստղն ու մահիկը ընդմիշտ չքացան:

Ռազմաճակատային գծերից բզկտված ու նոսրացած Թուրքական բանակի զորամասերը և հարյուր հազարավոր մահմեդական գաղթականներ (մուհաջիրներ) բռնել էին նահանջի ճանապարհը դեպի

Ստամբուլ: Իսկ մայրաքաղաքը գտնվում էր չփոթահար վիճակում: Քաղաքի բնակչությունը մատնվել էր խուճապի: Մի խոսքով պատերազմը Օսմանյան կայսրության համար ունեցավ աղետալի վախճան:

1912 թ. նոյեմբերի 3-ին Բ. Դուռը խնդրեց տերություններին միջնորդել հաշտության պայմանագիր կնքելու համար: Դեկտեմբերի սկզբին կնքվեց զինադադար: Սկսվեցին բանակցություններ, որոնք ընթանում էին Թուրքերի համար ծանր պայմաններում: Բանակցությունների ընթացքում լուրջ հակասություններ դրսևորվեցին մեծ պետությունների միջև: Ռուսաստանը պահանջում էր, որ բալկանյան դաշնակիցների կողմից գրավված տարածքները պատերազմի իրավունքով անցնեն իրենց: Մեծ Բրիտանիան ևս այդ նույն տեսակետին էր: Սակայն դրան վճռականորեն առարկեցին Կենտրոնական պետությունները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան: Դրությունը այն աստիճանի չիկացած էր, որ շատերը չէին բացառում համաեվրոպական պատերազմի բռնկումը: Ռուսաստանը և Ավստրիան հայտարարեցին մասնակի մոբիլիզացիա: Ռուսաստանը իր զորքերը կենտրոնացրեց կովկասյան սահմանների մոտ: Գերմանիան անմիջապես բավականին կոպիտ ձևով հասկացրեց ռուսներին, որ Թուրքիայի վրա հարձակումը կարող է պատերազմ առաջ բերել ողջ Եվրոպայի տարածքում:

Բալկանյան կնճիռը լուծելու նպատակով Լոնդոնում գումարվեց միջազգային խորհրդաժողով: Այստեղ ևս Անտանտի տերությունները Թուրքերից պահանջում էին զիջումների գնալ, մասնավորապես Ալբանիային տրամադրել ինքնավարություն և վերացնել Թուրքական տիրապետությունը Էգեյան ծովի կղզիներում: Սակայն այդ առաջարկները մերժվեցին Թուրքական պատվիրակության կողմից: Վերջապես 1913 թ. հունվարի 1-ին Բ. Դուռը ներկայացրեց խաղաղության պայմանագրի կնքման իր առաջարկները, որոնցում կտրականապես մերժվում էր Էդիրնեն զիջելու պահանջը:

Ի վերջո, Քյամիլ-փաշայի կառավարությունը, տերությունների ճնշման ներքո, 1913 թ. հունվարի 22-ին Էդիրնեն հանձնեց Բուլղարիային: Դա մայրաքաղաքում ու նահանգներում առաջ բերեց բուռն բողոքներ:

Բոլոր դեպքերում առաջին բալկանյան պատերազմը հասավ իր ավարտին: Պատերազմում կրած ջախջախիչ պարտությունը ցնցել էր Թուրքերին: Այդ պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունը կորցրեց իր եվրոպական տարածքների 85 տոկոսը:

Կառավարության դեմ հասարակական կարծիքի դժգոհությունից անմիջապես որոշեց օգտվել «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցությունը՝ նոր պետական հեղաշրջում իրականացնելու համար: 1913 թ.

հունվարի 23-ին մոտ 200 իթթիհադական սպաներ Հյուսիսային Աֆրիկայից վերադարձած Էնվեր-բեյի և Թալաաթ-բեյի գլխավորությամբ ներխուժեցին Բ. Դռան չենքը, որտեղ այդ պահին ոսկեզօծ դահլիճում տեղի էր ունենում կառավարության նիստ: Սպաները ատրճանակի կրակոցով սպանեցին ռազմական մինիստր Նազըմ-փաշային, որին համարում էին Թուրքիայի պարտության գլխավոր մեղավորներից մեկը, ինչպես նաև նրա համհարզներին, ձերբակալեցին մեծ վեզիրին, շեյխ-ուլ-իսլամին, ներքին գործերի և ֆինանսների մինիստրներին: Ատրճանակի փողերի սպառնալիքի տակ հենց տեղում նրանք ստիպեցին մեծ վեզիր Քյամիլ փաշային ստորագրել հրաժարականի տեքստի տակ: Խռովարարները ստացան սուլթանի համաձայնությունը մեծ վեզիրի պաշտոնում վերականգնելու գեներալ Մահմուդ Շևքեթ փաշային: Ստեղծվեց նոր կառավարություն, որն ամբողջապես բաղկացած էր երիտթուրքական կուսակցության անդամներից:

Վերստին վերադառնալով իշխանության ղեկի մոտ՝ իթթիհադը բալկաններում վերսկսեց ռազմական գործողությունները՝ փորձելով դրանց մեջ բեկում առաջ բերել: Որպես դրա պատասխան՝ բալկանյան երկրները չեղյալ հայտարարեցին զինադադարի վերաբերյալ համաձայնագիրը և պատերազմը բորբոքվեց նոր թափով: Տևական ու համառ դիմադրությունից հետո, վերջիվերջո սերբական և բուլղարական զորքերի համատեղ գրոհի հետևանքով Ադրիանոպոլիսը ընկավ: Այդ ընթացքում հույները գրավեցին Յանինան, իսկ քիչ ավելի ուշ չեռնոգորցիների ձեռքն անցավ Սկուդարին: Այլ կերպ ասած, երիտթուրքերին չհաջողվեց պատերազմի անիվը թեքել իրենց կողմը: Լոնդոնում կրկին գումարվեց մեծ պետությունների խորհրդաժողով խաղաղության պայմանները մշակելու համար: Թուրքական պատվիրակությունը թախանձում էր անգլիացիներին «փրկել Թուրքիան»: Սակայն Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Էդուարդ Գրեյը թուրքական պատվիրակության գիտակցությանը հասցրեց դաժան փաստը. «եթե երիտթուրքերը չկարողացան պահպանել Թուրքիան Եվրոպայում, ոչ մի այլ երկիր բավարար մոտիվներ չունի, որպեսզի այն պահպանվի Թուրքերի համար»: 1913 թ. մայիսի 30-ին ստորագրվեց Լոնդոնի խաղաղության պայմանագիրը, ըստ որի Օսմանյան կայսրության համարյա բոլոր եվրոպական տարածքներն անցնում էին հաղթանակած պետություններին: Ալբանիան դեռևս 1912 թ. նոյեմբերի 28-ին իրեն հայտարարել էր անկախ պետություն, սակայն նրա սահմանների և ներքին կառուցվածքի հարցը պետք է ո-

րոչեին մեծ պետությունները: Էգեյան ծովի թուրքական կղզիների հարցը որոշվեց փոխանցել մեծ տերությունների տնօրինությանը:

Թվում էր, թե եվրոպական ազգայնականության միացյալ ուժերը ոչնչացրին Թուրքիային որպես եվրոպական տերության: Սակայն չուտով բալկանյան դաշնակիցների միջև բորբոքվեց սուր պայքար Օսմանյան կայսրության տարածքները բաժանելու հարցում: Առավել ագրեսիվ պահվածք էր որդեգրել Բուլղարիան, որը տարածքային հավակնություններ էր ներկայացնում իր նախկին դաշնակիցների նկատմամբ: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ սերբերն ու հույները միավորվեցին ընդդեմ Բուլղարիայի: 1913 թ. հունիսի 30-ին,առանց պատերազմ հայտարարելու, Բուլղարիան միաժամանակ ռազմական գործողություններ սկսեց հույների ու սերբերի դեմ: Այդպիսով, սկսվեց երկրորդ բալկանյան պատերազմը, որը տևեց ընդամենը մեկ ամիս, մինչև հուլիսի 29-ը: Այդ պատերազմը բնութագրվել է որպես «պատմության արձանագրած ամենակարճ ու ամենաարյունահեղ պատերազմը»: Պատերազմն ուղեկցվում էր խաղաղ բնակչության զանգվածային կոտորածներով և բնակավայրերի հրկիզմամբ: Հիրավի, այդ պատերազմն ընթանում էր «այրված հողի» սկզբունքով: Ռազմական կոնֆլիկտի մեջ ընդգրկվեց նաև Ռումինիան, որը Բուլղարիայի դեմ ուղարկեց մի ուժեղ բանակ: Ռումինական զորքերը գրավեցին Սիլիստրիա ամրոցը և արևմտյան ուղղությամբ շարժվեցին դեպի Սոֆիայի կողմը: Արևմուտքից բուլղարական սահմանն անցան սերբերը, սպառնալով Դանուբի վրա գտնվող Վիդին քաղաքին:

Այդ իրադարձությունները Թուրքերին տվեցին իրենց չանսը: Երիտթուրքերի բանակը Էնվեր-բեյի հրամանատարությամբ անցնելով Զաթալջիի պաշտպանողական գծերը՝ կազմակերպեց հարձակում, որպեսզի վերադարձնի Ադրիանոպոլիսը և կրկին Թուրքերի տիրապետությունը հաստատի Արևելյան Թրակիայում:

Հաղթական թշնամիներով շրջապատված Բուլղարիան Ռուսաստանի միջնորդությամբ ստիպված էր խնդրել հաշտություն: Բուխարեստի հաշտության պայմանագրով իր հակառակորդներից յուրաքանչյուրին Բուլղարիան հարկադրված եղավ զիջել իր տարածքների մի մասը: Նախորդ պատերազմում իր ձեռքբերումներից Բուլղարիային հաջողվեց պահպանել միայն Ստրումա գետի հովիտը և Թրակիայի ծովափի մի հատված: Սերբիան Բուլղարիայի հաշվին ստացավ Մակեդոնիայի նշանակալից մասը, Հունաստանը՝ Մակեդոնիայի մեծ մասը ծովափնյա մի այնպիսի գծով, որն իր մեջ ներառնում էր Արևմտյան Թրակիայում Կավալա նավահանգիստը: Ռումինիային բաժին

հասավ Դոբրուջան՝ իր ռազմավարական կարևոր սահմանով Դանուբի ու Սև ծովի միջև: Առանձին պայմանագրով, Թուրքիան իրեն վերադարձրեց Ադրիանոպոլիսը (Էդիրնե) և Արևելյան Թրակիայի մի մասը, որն իր մեջ ներառնում էր Դիմոթիկան և հետևաբար կտրում էր դեպի Սոֆիա տանող երկաթուղին: Հաշված օրերի ընթացքում Բուլղարիան գործնականում կորցրեց իր տիրապետող դիրքերը Բալկաններում, որը նա ձեռք էր բերել չնորհիվ 1878 թ. Բեռլինի պայմանագրի:

Ինչպես հայտնի է, Բալկանյան պատերազմների ժամանակ Ռուսաստանի նախաձեռնությամբ Հայկական հարցը կրկին բարձրացավ մակերես: Դա մեծագույն անհանգստություն պատճառեց երիտթուրքական կառավարությանը, մանավանդ որ այդ հարցը մեջտեղ էր հանվել և եռանդուն աջակցություն էր գտնում Թուրքիայի դարավոր թշնամու՝ Ռուսաստանի կողմից:

Այն հանգամանքը, որ Բալկանյան պատերազմի ժամանակ, երբ սպառնալիքի տակ էր դրված Օսմանյան կայսրության բուն իսկ գոյությունը, այդ ճգնաժամային պահին կրկին բարձրացվել էր հայկական բարենորոգումների վերաբերյալ հարցը, ուղղակի կատաղության նոպա էր առաջ բերել երիտթուրքական շրջանակներում: Իթթիհադական մամուլը գրում էր, որ արդեն օրինաչափություն է դարձել այն, որ հենց օսմանյան հայրենիքը հայտնվում է վտանգի մեջ, հայերը և նրանց հովանավորները անմիջապես դանակ են դնում թուրքական պետության կոկորդին: Այդ բոլորը հող նախապատրաստեց այն բանի համար, որ թուրքերը Հայկական հարցը համարեն Արևելյան հարցի ամենավտանգավոր տարատեսակը և միջոցներ մտմտան նրանից սպասվող վտանգը չեզոքացնելու համար:

Երիտթուրքերը ակնառու կերպով տեսնում էին, որ կայսրության բազմաթիվ ժողովուրդներ՝ ալբանացիները, հույները, սերբերը, չեռնոգորցիները, ռումինացիները և այլն արդեն թոթափել են օսմանյան լուծը և միայն հայերն ու արաբներն են դեռ տանում այդ անտանելի բեռը: Բալկանյան պատերազմները համոզեցին երիտթուրքերին, թե կայսրության համար ինչպիսի վտանգ են ներկայացնում ճնշված ժողովուրդները: Նրանց համար այդ պատերազմից քաղած առաջին դասը այն էր, որ հայկական բարեփոխումների հարցը, որը վեր էր ածվել միջազգային քննարկումների խնդրի, կարող է որոշակի պայմաններում դառնալ բալկանյան աղետի շարունակությունը, այս անգամ արդեն Թուրքիայի արևելքում: Ընդ որում, իթթիհադի մտայնության համաձայն, այդ աղետը կայսրության համար կարող էր լինել ավելի վտանգավոր ու ավելի կործանարար, քան բալկանյանը: Իթ-

Թիհադականները նաև աչքի առաջ ունեին այն իրողությունը, որ բալկաններում ևս ազատության և անկախության պայքարի ճանապարհը սկսվում էր բարեփոխումների իրականացման պահանջից: Հետևաբար Իթթիհադի քաղաք երկրորդ դասը այն էր, որ ոչ մի ժողովրդի չպետք է պարգևել բարեփոխումներ, որովհետև դա անխուսափելիորեն Թուրքիայի համար ունենալու է կործանարար հետևանքներ:

Երիտթուրքերի աչքին հայկական բարենորոգումները ուրիշ բան չէին, եթե ոչ «ռուսական իմպերիալիզմի պատրաստած մեկ նոր հարվածը բալկանյանից հետո»: Հետևաբար հայկական բարենորոգումների հարցը նույնացվում էր կայսրության համար Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի) կորստի հետ և այդ պատճառով Իթթիհադն անում էր ամեն ինչ դրանք ձախողելու համար: 1913 թ. հոկտեմբերի 16-ին Ստամբուլում ռուսական դեսպան Գիրսը հաղորդում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին, որ «Երիտասարդ Թուրքերն աշխատում են թաղել հայկական հարցը, այն համարելով Թուրքիայի ներկա դրության համար ամենավտանգավոր հարցերից մեկը»:

Բալկանյան պատերազմից հետո ավելի քան երբևէ, Թուրքիան վճռականորեն իր հայացքը Արևմուտքից դարձնում էր դեպի Արևելք: Ամենուրեք տիրող մտայնություն էր դարձել «Անատոլիան վտանգի մեջ է» կարգախոսը:: Իթթիհադի ականավոր գաղափարախոսներից մեկը՝ Աբդուլլա Ջևդեթը այդ առիթով գրում էր. «Մի խաբվեք, մեր մտահոգությունը եվրոպական Թուրքիայի նկատմամբ չի նշանակում, որ մենք չպետք է անհանգստանանք Անատոլիայի համար: Անատոլիան՝ դա մեր կյանքի յուրաքանչյուր մասնիկի աղբյուրն է: Դա մեր սիրտն է, գլուխը և այն օդը, որ մենք շնչում ենք»: Կասկածից վեր է, որ դա նաև քողարկված նախազգուշացում էր այն մասին, որ պետք է զգուշանալ Հայկական հարցից:

Ջնայած նրան, որ իթթիհադականները հետևողականորեն պայքարում էին ընդդիմության դեմ, սակայն այն չարունակում էր գոյություն ունենալ, իսկ երբեմն նույնիսկ դիմում էր կտրուկ քայլերի: Այսպես, 1913 թ. հունիսի 11-ին, երբ մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշան ավտոմոբիլով մեկնում էր կառավարության իր նստավայրը, իթթիլյաֆականների կողմնակիցներից մեկը ատրճանակի կրակոցներով սպանեց նրան: Դա վրիժառության ակտ էր 1913 թ. հունվարին տեղի ունեցած հեղաշրջման ժամանակ ռազմական մինիստր Նազըմ փաշային սպանելու դիմաց: Որպես պատասխան, երիտթուրքերը արյունոտ տեռոր սկսեցին իրենց բոլոր հակառակորդների և առաջին հերթին իթթիլյաֆականների նկատմամբ:Մահմուդ Շևքեթ փաշայի

սպանության մեջ անմիջականորեն մեղադրվող 12 հոգու երիտթուրքերը կախաղան բարձրացրին: Ձերբակալվեցին և աքսորվեցին «Ազատություն և համաձայնություն» կուսակցության մեծ թվով անդամներ: Միաժամանակ նրանք բոլոր քաղաքական կուսակցություններին հայտարարեցին օրենքից դուրս: Ընդդիմադիր կուսակցությունների ու խմբավորումների առավել ակտիվ մոտ 300 ընդդիմադիր գործիչների բանտարկեցին Սինոպի ամրոցում: Իշխան Սաբահեդդինը իր կյանքը փրկեց փախուստի միջոցով, զգեստավորվելով մահմեդական կնոջ շորերով: Այդ պահից սկսած մինչև առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունը «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը մնաց երկրի միակ լեգալ քաղաքական ուժը: Այլ կերպ ասած, երիտթուրքերը կառավարում էին երկիրը առանց ընդդիմություն ունենալու: Նրանց ձեռքերում կենտրոնացած էր կայսրության ողջ գերագույն իշխանությունը: Այդ իշխանությունը նույնքան բացարձակ ու անվերահսկելի էր, որքան սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ:

1913 թ. վերջից Օսմանյան կայսրությունում հաստատվեց երիտթուրքական եռիշխանապետության (տրիումվիրատի) դիկտատուրա: Նա էր վճռում օսմանյան պետության ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հիմնական հարցերը: Կառավարման սանձերը գտնվում էին «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության երեք առավել արմատական գործիչների՝ Էնվերի, Թալաաթի և Ջեմալի ձեռքերում: Երիտթուրքերի ճնշման ներքո ռազմական մինիստր, մարշալ Ահմեդ Իզզեթ փաշան ստիպված էր հրաժարական տալ: Այդ կարևոր պաշտոնում նշանակվեց Էնվերը: Հատկանշական է, որ այդ մասին սուլթան Մեհմեդ V-ը տեղեկացավ առավոտյան թերթերից, մինչդեռ նրա իրավասության մեջ էր մտնում բարձրագույն պետական պաշտոնյաների նշանակումը և նրանց ազատումը պաշտոնից: Սուլթանը պարզապես ապշած էր: «Դա հնարավոր չէ, չէ՞ որ նա դեռ շատ երիտասարդ է»,- բացականչել էր նա: Էնվեր փաշան զբաղեցրեց նաև բանակի գլխավոր շտաբի պետի պաշտոնը, դրանով իսկ ամբողջապես իր ձեռքերում կենտրոնացնելով ռազմական իշխանությունը: Նրա ազդեցությունը պալատում ու կառավարության մեջ սրընթաց կերպով աճում էր: Քիչ ավելի ուշ նա ստացավ բրիգադային գեներալի աստիճան և փաշայի տիտղոս: 1914 թ. ամուսնանալով սուլթանի եղբոր՝ իշխանազուն Սուլեյման էֆենդիի աղջկա՝ Նաջիե Սուլթանի հետ, դրանով իսկ Էնվեր փաշան ստացավ «դամադ» կոչումը, որը կրում էին սուլթանի փեսաները: Փաստորեն տրիումվիրա-

տի կազմում Էնվերը դարձավ առաջին դեմքը: Դեռևս ոչ շատ առաջ նրա նշանակմամբ զարմացած սուլթան Մեհմեդ V-ը սկսել էր ամեն օր հետաքրքրվել Էնվերի առողջությամբ, երբ նա հիվանդացել էր: Էնվեր-փաշան սկսեց բոլոր հանգուցային պաշտոններում նշանակել իր մարդկանց, գլխավորապես բանակի սպայական կազմից: Նրա քմահաճ կամքով 1914 թ. հունվարին մոտ 300 փորձառու գեներալներ ու բարձրագույն սպաներ հեռացվեցին բանակից, իսկ նրանց տեղը զբաղեցրին Էնվերի դրածո երիտասարդ սպաները: Ռազմական դատարանը անընդհատ զբաղված էր քաղաքական գործերով, ըստ որում հաճախ կայացվում էին մահվան դատավճիռներ: Իր ծայրահեղ փառասիրությամբ և սադրիչ խառնվածքով աչքի ընկնող Էնվերին կնքեցին «Փոքրիկ Նապոլեոն» մականունը: Արտաքին քաղաքականության բնագավառում Էնվերը անվերապահորեն կողմնորոշվում էր դեպի Գերմանիան, մեծ համարում ունենալով գերմանական բանակի ու ռազմական կառույցների նկատմամբ:

Եռիշխանապետության անդամ Թալաաթ փաշան բացի «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի նախագահի պաշտոնից զբաղեցնում էր նաև ներքին գործերի մինիստրի պաշտոնը: Երիտթուրքական եռիշխանապետության երրորդ անդամ Ջեմալ փաշան հանդիսանում էր Ստամբուլի ոստիկանության պետը, իսկ 1914 թվականից սկսած զբաղեցնում էր ծովային մինիստրի պաշտոնը:

Այսպիսով, պետության բոլոր ուժային կառույցները գտնվում էին եռիշխանապետության անդամների ձեռքերում:

Մեծ վեզիրի պաշտոնը զբաղեցնում էր Սայիդ Հալիմը, որը սերել էր եգիպտական խեդիվների դինաստիայից: Նա փոխարինել էր ահաբեկչության զոհ դարձած Մահմուդ Շևքեթ փաշային: Սայիդ Հալիմի մասին ասում էին, որ նա ամբողջապես գտնվում է եռիշխանապետության «բռի մեջ»: Իթթիհադականները շեյխ-ուլ-իսլամի կարևոր պաշտոնում ընտրեցին Մուստաֆա Խեյրի-բեյին, որը թե՛ համոզմունքներով և թե՛ իր գործունեության ոճով իթթիհադական էր: Եռիշխանապետությունից դուրս երիտթուրքական ամենաազդեցիկ գործիչներից մեկը ֆինանսների մինիստր, ճարպիկ, խելոք և խորամանկ դոյնմե, այսինքն ծագումով հրեա, սակայն իսլամացած Ջավիդն էր:

Այսպիսով, իթթիհադական եռիշխանապետությանը հաջողվել էր ստեղծել համախոհների մի կուռ թիմ, որը կարող էր առանց որևէ դժվարության ընդունել իթթիհադական վերնախավի համար ձեռնտու ցանկացած որոշում:

Ինչ վերաբերում է սուլթանին և նրա ընտանիքին, ապա նրանք հեռացված էին քաղաքականության մեջ որևէ մասնակցություն ունենալուց: Ընդ որում, իթթիհադը զգոն հսկողության տակ էր պահում սուլթանի ընտանիքի անդամներին, նույնիսկ սահմանափակելով նրանց տեղաշարժը: Սուլթանի շրջապատի մեջ ներդրված էին երիտթուրքերի մարդկանցից շատերը, որոնց շնորհիվ Իթթիհադը լրիվ տեղյակ էր պալատում տեղի ունեցող անցուդարձին:

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող շրջանում երիտթուրքական պարագլուխները գիտակցում էին, որ անհրաժեշտ է դաշինքի մեջ գտնվել որևէ մեծ պետության հետ: Այդ նպատակով 1914 թ. մայիսին Թալաաթ փաշան մեկնեց Պետերբուրգ, որպեսզի պաշտոնապես առաջարկի թուրք-ռուսական դաշինք: Իսկ հունիսին Ջեմալ փաշան այց կատարեց Փարիզ, որտեղ առաջարկեց դաշինք Թուրքիայի և Եռյակ համաձայնության (Անտանտի) միջև: Սակայն երկու մայրաքաղաքներում էլ առաջարկը մերժվեց այն համարելով ոչ անկեղծ, քանի որ արդեն 1913 թ. դեկտեմբերից Թուրքիայում գործում էր գերմանական ռազմական միսիան գեներալ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Անկախ դրանից, Անատանտի պետությունները ակներև կերպով տեսնում էին, որ թուրք-գերմանական համագործակցությունը այլևս դարձել է անշրջելի:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Դեռևս 1914 թ. հուլիսին, երբ ծագեց Սարաևոյի միջադեպը (որն առաջ եկավ Սարաևոյում ավստրիական գահաժառանգ էրցհերցոգ Ֆրանց Ֆերդինանդի սպանության հետևանքով) Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշան դիմեց գերմանական կայզեր Վիլհելմ II-ին թուրք-գերմանական դաշինք կնքելու առաջարկով: Երիտթուրքական ղեկավարները ենթադրում էին, որ եռյակ դաշինքը ռազմական առումով մեծապես գերազանցում է Անտանտի պետություններին, ուստի կանխավ ձգտում էին ապահովել Թուրքիայի մասնակցությունը հասունացող համաշխարհային պատերազմին՝ Կենտրոնական Եվրոպայի պետությունների կազմում: Երիտթուրքական պարագլուխները հուլիսի 20-ին նեղ շրջանով գումարեցին խորհրդակցություն, որին մասնակցում էին մեծ վեզիր Սայիդ Հալիմ-փաշան, ներքին գործերի մինիստր Թալաաթը և ռազմական մինիստր Էնվեր փաշան: Որոշում ընդունվեց ամեն կերպ աշխատել մտնել եռյակ դաշինքի մեջ: Նույն օրը, գիշերով, Էնվերն ու Թալաաթը այցելեցին Ստամբուլում գերմանական դեսպան Վանգենհայմին, նրան հայտնելով, որ Թուրքիան ցանկություն ունի միանալ Կենտրոնական Եվրոպայի պետությունների խմբավորմանը:

Դա մի շրջան էր, երբ պատերազմի նախապատրաստվող բոլոր պետություններն աշխատում էին ձեռք բերել հնարավորին չափ շատ դաշնակիցներ: Ուստի պատահական չէ, որ երիտթուրքերի առաջարկին Բեռլինը անմիջապես տվեց դրական պատասխան:

Հուլիսի 28-ի գիշերը, մեծ վեզիր Սայիդ Հալիմ-փաշան գերմանական դեսպանատանը հանդիպում ունեցավ Վանգենհայմի հետ և նրան փոխանցեց կառավարության դիմումը Գերմանիային՝ Ռուսաստանի դեմ պաշտպանողական-հարձակողական դաշինք կնքելու պաշտոնական առաջարկով: Նրանում համաձայնություն էր հայտն-

վում պատերազմի ժամանակ գերմանական ռազմական միսիային ենթարկել Թուրքական բանակի մեկ քառորդը:

Այդ օրերին իրադարձությունները ծավալվեցին թավազոր արագությամբ: Հուլիսի 28-ին Գերմանիայի դաշնակից Ավստրո-Հունգարիան հարձակվեց Սերբիայի վրա: Օգոստոսի 1-ին գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային: Օգոստոսի 4-ին Մեծ Բրիտանիան իրեն հայտարարեց պատերազմական վիճակում Գերմանիայի հետ: Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը:

1914 թ. օգոստոսի 2-ին խիստ գաղտնի իրադրության պայմաններում Ստամբուլում կնքվեց Թուրք-գերմանական դաշնակցային պայմանագիր: Թուրքական կողմից այն ստորագրեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ-փաշան, գերմանական կողմից՝ դեսպան Վանգենհայմը: Պայմանագրի ստորագրման ժամանակ ներկա էին Էնվերը և Թալիաթը: Կողմերը պայմանավորվում էին, որ պայմանագիրը կմնա գաղտնի և այն կարող է հրապարակվել պայմանավորվող երկու կողմերի միջև համաձայնությունից հետո միայն:

Դաշնակցային այդ պայմանագրով Թուրքիան իր վրա պարտավորություն էր վերցնում անհապաղ պատերազմի մեջ մտնել Կենտրոնական տերությունների կողմում: Օգոստոսի 3-ին գերմանա-թուրքական դաշինքին միացավ նաև Ավստրո-Հունգարիան:

Նույն օրը՝ օգոստոսի 2-ին, Թուրքիան հայտարարեց պատերազմում իր «խստիվ չեզոքության» մասին: Սակայն դա լոկ ծխածածկույտ էր Անտանտի պետություններին ապակողմնորոշելու համար: «... Մենք մեզ չեզոք հայտարարեցինք միայն ժամանակ շահելու համար. մենք սպասում էինք այն պահին, երբ մեր զորահավաքը կավարտվի և մենք կկարողանանք մասնակցություն ունենալ պատերազմին»,- խոստովանել է Ջեմալ փաշան:

Օգոստոսի 3-ին Բ. Դուռը հրապարակեց զորահավաքի (սեֆերբեյլիք) վերաբերյալ հրամանագիր: Երեք օրվա ընթացքում 20-ից մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր էին ներկայանալ զորահավաքային կենտրոններ: Սկզբնապես բանակ զորակոչվեց 900 հազար զինվոր, որի թիվը աստիճանաբար հասավ մեկ և կես միլիոնի[*]:*

---

[*] *Աշխարհամարտի չորս տարիների ընթացքում Թուրքիան մոբիլիզացրել էր 4 միլիոն մարդ, որից 1,5 միլիոնը անմիջականորեն գտնվում էր պատերազմի ճակատներում: Դա Թուրքիայի պատմության մեջ ամենամեծ բանակն էր: Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելու պահին 1,8 միլիոն քառակուսի կիլոմետր կազմող Օսմանյան կայսրության տարածքում բնակվում էր 21 միլիոն մարդ, որից 8 միլիոնը Փոքր Ասիայի տարածքում, այդ թվում 2 միլիոն մարդ նրա եվրոպական մասում:*

Գերմանիայի հետ դաշնակցային պայմանագիր կնքելու վերաբերյալ Ռուսաստանի կասկածները ցրելու և Թուրքիայի մտադրությունների մասին ռուսներին ապակողմնորոշելու նպատակով օգոստոսի 5-ին և 9-ին Էնվեր փաշան հանդիպում ունեցավ Ստամբուլում ռուսական ռազմական գործակալ Մ. Ն. Լեոնտևի հետ: Հանդիպման ժամանակ նա հավաստիացնում էր, որ Թուրքիան Ռուսաստանի հանդեպ ոչ մի հարձակողական մտադրություն չունի և պատրաստ է իր զորքերը հեռացնել ռուսական սահմանից: Որ Թուրքական բանակի զորահավաքը ուղղված չէ Ռուսաստանի դեմ: Որ Թուրքիան կապված չէ Եռյակ դաշինքի և մասնավորապես Գերմանիայի հետ: Էնվերի լկտիությունը հասնում է այն աստիճանի, որ նա առաջարկում է Ռուսաստանին Օսմանյան կայսրության հետ ռազմական դաշինք կնքել և ընթացիկ պատերազմում ռազմական աջակցություն ցույց տալ Ռուսաստանին, նրա տրամադրության տակ դնելով 150-200 հազար թուրք զինվորներ: «Դա Ռուսաստանի գործն է, թե նա ուր կուղարկի այդ բանակը»,- հայտարարում է Էնվերը:

Ռուսներին կատարելապես մոլորության մեջ գցելու նպատակով, Մեծ վեզիր Սայիդ Հալիմ-փաշան ևս հանդիպում է ունենում Ստամբուլում ռուսական դեսպան Գիրսի հետ և հայտնում, որ ինքը ևս Ռուսաստանի հետ դաշինք կնքելու կողմնակից է, ուստի և պաշտպանում է Լեոնտևի հետ զրույցի ժամանակ ռազմական մինիստրի առաջ քաշած պայմանները:

Թեև ցարական կառավարությունը չէր հավատում թուրքերի այդ հայտարարություններին, այնուամենայնիվ նա հրահանգեց Գիրսին, ձգձգել բանակցությունները թուրքերի հետ՝ մինչև որ վերջնականապես պարզ կդառնա Բուլղարիայի դիրքը պատերազմող կողմերի նկատմամբ: Հրահանգում ասվում էր, որ Թուրքիայի միջամտությունը պատերազմին Գերմանիայի դաշնակցի դերում անչուշտ վտանգավոր է Ռուսաստանի համար: «Այդ վտանգն արտասովոր չափեր կընդունի, եթե Թուրքիան հանդես գա Բուլղարիայի և տակավին իրենց դիրքորոշումը չորոշած բալկանյան պետությունների հետ մեկտեղ»: Այդ բոլորը նկատի ունենալով, ռուսական դիվանագիտությունը իր հերթին մանևրում էր, նախ աշխատելով Էնվերի հետ տարվող բանակցություններն օգտագործել Թուրքիայի իրական չեզոքությանը հասնելու համար և ապա ձգտելով ինչ-որ ձևով Թուրքիային հետ պահել Ռուսաստանի դեմ հանդես գալուց:

Բնականաբար այդ շրջանի ռուս-թուրքական բանակցությունները պատերազմի օրակարգից չէր հանում ոչ իթթիհադականների

զավթողական, պանթյուրքիստական ծրագրերը Ռուսաստանի նկատմամբ և ո՛չ էլ վերջինիս հավակնությունները Կոստանդնուպոլսի, նեղուցների և Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Բնականաբար Անգլիան և Ֆրանսիան ևս չէին կարող անտարբեր վերաբերմունք ունենալ պատերազմում Թուրքիայի մասնակցության հարցին և դա ոչ միայն ռազմա-ստրատեգիական նկատառումներով, այլև այն պարզ պատճառով, որ նրանք Օսմանյան կայսրության տնտեսության մեջ և ֆինանսներում ունեին խոշոր ներդրումներ, ազդեցության լծակներ և չէին ցանկանում զրկվել դրանցից: Ուստի օգոստոսի երկրորդ կեսին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Գրեյը հրահանգում էր Ստամբուլում բրիտանական դեսպան Մալլեթին, որ նա հանդիպում ունենա երիտթուրքական ղեկավարության հետ և նրանց գիտակցությանը հասցնի հետևյալը. Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան պատրաստ են Թուրքիայի չեզոքության դիմաց երաշխավորել նրա տարածքի լրիվ անվտանգությունն ու ապահովությունը: Բայց եթե Թուրքիան դաշինք կնքի Գերմանիայի հետ և պատերազմում Գերմանիան անհաջողություններ կրի, որոնք «ներկայումս ավելի հավանական են թվում քան երկու շաբաթ առաջ, հետևանքները Թուրքիայի համար անսահման վատ կլինեն»:

Լոնդոնը և Փարիզը կատարելապես անզիջում էին նաև Թուրքիայի պահանջի նկատմամբ իր չեզոքության դիմաց բալկանյան տարածքների հաշվին գոհացում տալու Ստամբուլին: Նրանց կարծիքով, նման կարգի «տարածքային առուծախը» կարող էր հանգեցնել նրան, որ բալկանյան երկրները դժգոհությամբ լցվեին Անտանտի գծով դաշնակիցների նկատմամբ և սկսեին որոնել ավելի «հուսալի դաշնակիցներ»: Այդ առումով ավելի կտրուկ դիրքորոշում էր որդեգրել Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեն, որը Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկու հետ զրույցի ժամանակ հայտարարեց, որ ինքը չի կարծում, որ բանակցությունները Թուրքիայի հետ կարող են որևէ բանի հանգեցնել, ուստի և «նպատակահարմար է գտնում առանց ժամանակ կորցնելու ապահովել բալկանյան բլոկի վերականգնումը՝ ուղղելով նրան Թուրքիայի դեմ»:

Անշուշտ Բեռլինում ուշի-ուշով հետևում էին Անտանտի պետությունների հետ երիտթուրքական պարագլուխների բանակցություններին: Թեև արդեն ստորագրված գերմանա-թուրքական դաշինքը հաստատուն երաշխիքներ էր տալիս գերմանացիներին, որ Թուրքիան «չի պոկվի» իրենց ձեռքերից, բայց և մտահոգություն կար, որ «լավ վարձատրության» դեպքում դա այնուամենայնիվ կարող էր

տեղի ունենալ: Որպեսզի արագացվի Թուրքիայի մուտքը պատերազմի մեջ, Բեռլինը դիմեց հետևյալ քայլին: 1914 թ. օգոստոսի 6-ին անակնկալելի անցնելով բրիտանական միջերկրածովյան ռազմական նավատորմի աչքի առջևից, գերմանական երկու նորագույն հզոր հածանավեր՝ «Գյոբենը» և «Բրեսլաուն» հայտնվեցին Դարդանելի մուտքի մոտ, թուրքական իշխանություններից թույլտվություն խնդրելով մուտք գործելու նեղուցը: Էնվեր փաշան ոչ միայն տվեց այդ թույլտվությունը, այլև հրամայեց, որ եթե բրիտանական ռազմանավերը փորձեն հետապնդել գերմանական նավերին և մտնեն Դարդանել, նրանց վրա բացվի փոթորկուն հրետանային կրակ:

Անկասկած գերմանական ռազմանավերի մուտքը Դարդանել հանդիսանում էր Թուրքիայի հայտարարած չեզոքության խախտում: Ուստի Անտանտի երկրների դեսպանները բողոք ներկայացրին Բ. Դռանը, վկայակոչելով միջազգային իրավունքի այն դրույթը, որ պատերազմող տերության ռազմանավերն իրավունք չունեն չեզոք երկրի նավահանգստում մնալու ավելի քան 24 ժամ: Որպես դրա պատասխան, ռազմանավերի Դարդանել մտնելու հաջորդ օրը, օգոստոսի 11-ին, թուրքական կառավարությունը հայտարարեց, որ հածանավերը իբր «գնվել են» Թուրքիայի կողմից: Դեսպանների «բերանը փակելու» համար նույնիսկ նշվեց, որ նավերը գնվել են 80 միլիոն գերմանական մարկ գումարով: Դրան ավելացվեց նաև, որ կառավարությունը մտադիր է նավերի անձնակազմը փոխարինել թուրքականով: Ծովային մինիստր Ջեմալ փաշան մամուլի միջոցով հանդես եկավ հայտարարությամբ, որ այդ հածանավերը կդրաղեցնեն Թուրքիայի համար Անգլիայում կառուցված «Սուլթան դաղի Օսման» և «Ռեշադիե» ռազմանավերի տեղը, որոնք, խախտելով միջազգային իրավունքի նորմերը, անգլիացիները «գողացել են» և հրաժարվում են հանձնել պատվիրատուին:

Օգոստոսի 15-ին «Գյոբենի» և «Բրեսլաուի» վրա բարձրացվեցին թուրքական դրոշակներ: Հածանավերը վերանվանվեցին՝ «Գյոբենը»՝ «Յավուզ Սուլթան Սելիմ», «Բրեսլաուն»՝ «Միդիլլի»: Գերմանական ողջ անձնակազմը՝ թուրքական համազգեստ հագավ և մնաց նավերի վրա: Գերմանացի նավաստիներն ու սպաները գլխներին ֆես դրեցին:

Գերմանացի ծովակալ Սուչոնը նշանակվեց թուրքական նավատորմի հրամանատար: Դրան հետևեց անգլիացի ծովակալ Լիմպուսի գլխավորած բրիտանական ծովային միսիայի սպաների հեռացումը թուրքական ռազմանավերից: Անգլիական կառավարությունը ստիպ-

ված էր այդ միսիան հետ կանչել Ստամբուլից: Թուրքիայի ռազմա-ծովային ուժերն ամբողջությամբ անցան գերմանական հրամանա-տարության ձեռքը:

Անտանտի տերությունների դեսպանները բողոքեցին «Գյոբենի» և «Բրեսլաուի» կեղծ գնման գործարքի դեմ, պահանջելով զինաթափ անել այդ ռազմանավերը, իսկ անձնակազմին հեռացնել երկրից: Սա-կայն Բ. Դուռը այդ բողոքը անտեսեց և թողեց առանց հետևանքների:

Այդ օրերին արդեն ողջ թուրքական մամուլը այլևս չէր թաքցնում իր համակրանքը Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի նկատմամբ: Մայրաքաղաքում կազմակերպվում էին աղմկոտ հանրահավաքներ, որտեղ իշխանությունների պատվերով կատարվում էր Գերմանիայի գովքը: Ստամբուլի մզկիթներում տեղի էին ունենում գոհաբանական աղոթքներ, որպեսզի ալլահը հաղթանակ պարգևի գերմանո-ավստ-րիական զինված ուժերին:

Թեև Գերմանիան չտապեցնում էր Թուրքիային մտնել պատերազ-մի մեջ՝ մատնանշելով դաշնակցային համաձայնագիրը, սակայն Բ. Դուռը մինչև այդ վճռական քայլին դիմելը ցանկանում էր պարզել հարևան բալկանյան պետությունների դիրքորոշումը պատերազմող կողմերի նկատմամբ: Թուրքերին հատկապես անհրաժեշտ էր ապա-հովել Բուլղարիայի մասնակցությունը պատերազմին: Թուրքական դիվանագիտությունը լծվել էր եռանդուն գործունեության Բուլղարի-ային և Ռումինիային կենտրոնական տերությունների կողմը ներքա-շելու համար: Ստամբուլի կողմից նույնիսկ փորձեր արվեցին Հունաս-տանին ևս ներգրավելու՝ Անտանտի դեմ ուղղված չորս երկրներից բալկանյան լիգա ստեղծելու համար:

Այդ օրերին թուրքական դիվանագիտությունը տանում էր բարդ և բազմապլանային խաղ:

Մառնայի վրա սեպտեմբերին գերմանական զորքերի կրած պար-տությունից, ինչպես նաև Գալիցիայում այդ նույն ժամանակ ռուսա-կան բանակի ձեռք բերած հաջողությունից հետո, Գերմանիան սկսեց ուժգին կերպով Ստամբուլից պահանջել, որ Թուրքիան անհապաղ հանդես գա Կովկասում, Սև ծովում և Սուեզի ջրանցքի շրջանում: Վանգենհայմին, Լիման ֆոն Սանդերսին և ծովակալ Սուշոնին Բեռլի-նի կողմից հանձնարարված էր ուժեղ ճնշում գործադրել երիտթուր-քական կառավարության վրա:

Այդ օրերին Գերմանիայից մեծ խմբերով գերմանական սպաներ ու զինվորներ էին ժամանում Թուրքիա: Միաժամանակ Բեռլինը ու-ղարկում էր զենքով, զինամթերքով ու հանդերձանքով բեռնված մեծ

թվով վագոններ: Գերմանացի մասնագետների ղեկավարությամբ թուրքերը լծվել էին եռանդուն գործունեության նեղուցները ամրացնելու ուղղությամբ:

Սեպտեմբերի 27-ին թուրքական կառավարությունը փակեց նեղուցները: Էնվեր փաշան հրամայեց ականապատել Բոսֆորը և Դարդանելը: Ականները ջրարկվեցին և ականափակոցներ դրվեցին, փարոսների լուսարձակները հանգցրին և նշաններով նավերին հասկացրին, որ անցում չկա: Դրանով Թուրքիան կատարեց ևս մեկ քայլ դեպի պատերազմը:

Նեղուցների փակումը առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ: Առանց այն էլ նեղուցներում գերմանական ռազմանավերի հայտնվելը փոխել էր Սև ծովում ուժերի հարաբերակցությունը հօգուտ թուրքական նավատորմի: Իսկ նեղուցների փակումը հնարավորություն չէր տալիս ռուսական սևծովյան նավատորմին ակտիվորեն գործել Գերմանիայի դեմ: Բացի այդ, այսուհետև Ռուսաստանը զրկվում էր հարավից իր դաշնակիցների կողմից սպառազինություն ստանալու հնարավորությունից: Ըստ էության հարավային ուղղությամբ Ռուսաստանը մեկուսացման էր ենթարկվում արտաքին աշխարհից և ամենակարևորը կտրվում էր իր դաշնակիցներից:

Քանի դեռ Օսմանյան կայսրության մասնակցության հարցը պատերազմին մնում էր բաց, օգտվելով ստեղծված հարմար իրադրությունից, երիտթուրքական կառավարությունը որոշեց չեղյալ հայտարարել եվրոպական պետությունների հետ սուլթանների կնքած կապիտուլյացիոն պայմանագրերը և վերացնել կապիտուլյացիոն ռեժիմը: Այդ առթիվ սուլթան Ռեշադ V-ը 1914 թ. սեպտեմբերի 8-ին հրապարակեց սուլթանական իրադե (հրամանագիր), որը շրջաբերական նամակի ձևով հայտնվեց բոլոր պետություններին: Իրադեում նշվում էր, որ չեղյալ են հայտարարվում բոլոր պետությունների հետ Օսմանյան կայսրության կնքած կապիտուլյացիաները և վերացվում են այդ կապիտուլյացիաներից բխող բոլոր արտոնությունները: Ըստ այնմ, վերացման ենթակա էին բոլոր տեսակի դատական, հարկային, վարչական և այլ կարգի այն արտոնությունները, որոնք օտարերկրացիների կողմից ձեռք էին բերվել չնորհիվ կապիտուլյացիաների:

Սակայն կապիտուլյացիաների վերացման ակտը կարող էր ձեռք բերել օրինական ուժ միայն այն դեպքում, երբ տերությունները տային իրենց համաձայնությունը: Ոչ Անտանտի պետությունները և ոչ էլ գերմանիան ու Ավստրո-Հունգարիան իրենց համաձայնությունը չտվեցին: Ավելին, նրանք բողոք ներկայացրին թուրքական կառավարությանը, որը սակայն, մնաց անպատասխան:

Այնուամենայնիվ կապիտուլյացիաների վերացման ակտը արժանացավ Թուրք ժողովրդի գոհունակությանը, քանի որ այն ընկալվեց որպես ազգային ինքնիշխանության վերականգնման խորհրդանիշ:

1914 թ. հոկտեմբերի 10-ին Ստամբուլի գերմանական դեսպանությունում տեղի ունեցավ գաղտնի խորհրդակցություն՝ Վանգենհայմի միջև մի կողմից, և Էնվերի, Թալաաթի ու Ջեմալի միջև՝ մյուս կողմից: Արդյունքում կնքվեց համաձայնագիր, որով Թուրքիան պարտավորվում էր հանդես գալ Գերմանիայից 100 միլիոն մարկ գումարի չափով դրամական օգնություն ստանալուց անմիջապես հետո:

Հաջորդ օրը տեղի ունեցավ մինիստրների խորհրդի նեղ կազմով նիստ, որտեղ բոլոր ներկա գտնվողները, բացի ֆինանսների մինիստր Ջավիդ-բեյից, պնդում էին, որ Թուրքիան պետք է անհապաղ մտնի պատերազմի մեջ: Այդ բանը առանձնակի համառությամբ պնդում էր ռազմական մինիստր Էնվեր փաշան: «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության նշանավոր գործիչներից մեկը՝ Մկանզադե Ռիֆաթը, հիշյալ նիստում Էնվերի ունեցած ելույթի մասին իր հուշերում գրում է, որ նա պնդում էր, որ Թուրքիայի ազգային շահը պահանջում է անհապաղ հանդես գալ Գերմանիայի կողմից: Որպես դրա հիմնավորում Էնվերը բերում էր հետևյալ փաստարկները. Անգլիայի և նրա դաշնակիցների կողմից հանդես գալու հնարավորություն չկա, քանի որ այդ դաշինքին է հարել Թուրքիայի դարավոր թշնամին՝ Ռուսաստանը, որին դաշնակիցները խոստացել են Ստամբուլը: Թուրքիան չի կարող պահպանել չեզոքություն, քանի որ նրա տնտեսական ու ֆինանսական վիճակը չափազանց վատ է, «երևակայությունից դուրս վատ», գանձարանը դատարկ է, իսկ զինանոցներում բալկանյան պատերազմից հետո զինամթերք չի մնացել: Սև ծովի կողմից ռուսական նավատորմի հարձակման կարելիություն չկա, քանի որ այնտեղ գործում են գերմանական երկու ռազմանավերը, իսկ Միջերկրական ծովի կողմից սպասվող վտանգը Գերմանիան խոստանում է չեզոքացնել, եվրոպական ճակատում ծանր մարտեր մղող Ռուսաստանը ի վիճակի չէ մեծ ուժերով Կովկասից հարձակվելու Թուրքիայի վրա, ուստի ստիպված է որդեգրել պաշտպանողական դիրք, վերջապես գերմանական բանակը «դա մի պողպատյա ամրոց է» և իր ուժերով գերազանցում է Անտանտի բանակներին: Այնուհետև Էնվերը նշում է, որ Թուրքիային անհրաժեշտ է մասնակցել պատերազմին Գերմանիայի կողմում, քանի որ «Գերմանիան համաձայն է, որպեսզի մենք գրավենք Եգիպտոսը, Կովկասը և նույնիսկ Պարսկաստանը... Այսպիսով, կասկած չկա, որ մենք կկարողանանաք ճանա-

պարհ բացել դեպի Թուրան և իրականացնել Թուրքերի միավորումը»:

Անչուշտ Թուրքիայում կային մարդիկ, որոնք խորհուրդ էին տալիս երիտթուրքական վերնախավին խուսափել պատերազմի մեջ մտնելուց: Դրանցից մեկն էր նաև ապագա Թուրքական հանրապետության պրեզիդենտ Մուստաֆա Քեմալը (Քեմալ Աթաթյուրք), որը դեռևս 1914 թ. հուլիսի կեսերին խորհուրդ էր տալիս Էնվերին ձեռնպահ մնալ պատերազմին մասնակցելու մտքից: Նա գտնում էր, որ ոչ վաղուց տեղի ունեցած բալկանյան պատերազմներում կրած կործանարար պարտություններից հետո՝ Թուրքիան ավելի շատ կարիք ուներ խաղաղության, որի ընթացքում հնարավոր կլիներ վերականգնել ու մեծացնել ռազմական հզորությունը, պահպանել հավասարակշռությունը Անտանտի երկրների ու կենտրոնական Եվրոպայի պետությունների հետ: Նախքան այն, որ Թուրքիան կընդունի ինչ-որ վճիռ, անհրաժեշտ է հետևել իրադարձություններին: Մուստաֆա Քեմալը վճռականորեն առարկում էր Գերմանիայի հետ որևէ դաշինք կնքելու գաղափարին, դա հիմնավորելով նրանով, որ եթե Գերմանիան հաղթող դուրս գա պատերազմից, նա Թուրքիան կվերածի իր արբանյակի: Իսկ եթե տանուլ տա պատերազմը, իսկ ինքը վստահ է, որ նա տանուլ է տալու, Թուրքիան կկորցնի ամեն ինչ:

Նման տեսակետները բաժանում էին նաև իթթիհադական մի շարք այլ գործիչներ: Օրինակ, ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը այն կարծիքին էր, որ «եթե նույնիսկ մենք հաղթենք, մենք կհայտնվենք ավերակների վրա»: Իսկ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան գտնում էր, որ Թուրքիայի թշնամիները «հսկաներ» են: Նա մտահոգություն էր հայտնում, որ Բալկանյան պատերազմի ժամանակ Թուրքիան կորցրեց Մակեդոնիան, իսկ այս անգամ կարող է կորցնել նաև արաբական աշխարհը:

Հարկ է նշել, որ արդեն այդ օրերին Թուրքական գլխավոր շտաբը Էնվեր փաշայի գլխավորությամբ մշակել էր ռազմական գործողությունների մանրամասն պլան, որի էությունը հետևյալն էր. Թուրքիան պետք է վարի հարձակողական պատերազմ և չփման մեջ մտնելով Ասիայի և Աֆրիկայի մահմեդական բնակչության հետ, Թուրքական բանակը այդ բնակչության հետ սերտ համագործակցությամբ պետք է ոչնչացնի Անտանտի տերությունների տիրապետությունը Աֆրիկայի և Ասիայի երկրների նկատմամբ՝ և նրանցից ստեղծի «Մեծ Թուրքիա»՝ մի նոր համաշխարհային պետություն, որի սահմանները տարածվելու են Ջիբլարթարի նեղուցից Աֆրիկայի և Ասիայի վրայով մինչև Չինաստան:

Թուրքական բանակի գործողությունների պլանը նախատեսում

էր երկու հիմնական օպերատիվ ուղղություններ. եգիպտական և կովկասյան: Եգիպտական ուղղությունը նախատեսում էր Սուեզի ջրանցքի և Եգիպտոսի գրավումից հետո նվաճել ողջ Հյուսիսային Աֆրիկան (արաբներով բնակեցված Մաղրիբի երկրները) իսկ Կովկասյան ուղղության նպատակն էր նվաճել Կովկասը, Պովոլժիեն, Կենտրոնական Ասիան, Իրանը Աֆղանստանը և Հյուսիսային Հնդկաստանը:

Նախատեսված էր, որ թուրքական բանակի գործողությունները պետք է աջակցություն գտնեին Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների կողմից, որոնք պանիսլամիստական և պանթյուրքիստական կարգախոսների ներքո պետք է թշնամու թիկունքում կազմակերպեին ապստամբություններ, հուզումներ, ահաբեկչական և դիվերսիոն ակտեր և այլ կարգի քայքայիչ աշխատանք:

Թեև Էնվերի այդ պլանը իր ողջ էությամբ անիրագործելի ու արկածախնդրական էր, սակայն գերմանացիները հավանություն տվեցին նրան, որովհետև այն ի վիճակի էր խոշոր ռուսական ուժերի շեղել այլ ճակատներից և գամել Կովկասին, իսկ Մեծ Բրիտանիային ստիպել նշանակալից թվով զորքեր պահել Սուեզի ջրանցքի գոտում, որը հանդիսանում էր Բրիտանական կայսրության կոմունիկացիաների ամենազգայուն և խոցելի տեղը:

1914 թ. հոկտեմբերի 24-ին Ահմեդ Ջեմալ փաշայի և Թալաաթ բեյի հետ հանդիպումից հետո, Էնվեր փաշան փակ ծրարով Սուչոնին հանձնեց հոկտեմբերի 22-ի թվակիր հրաման, որտեղ նշվում էր. «Թուրքական նավատորմի խնդիրն է գերիշխող դիրք գրավել Սև ծովում: Գտե՛ք ռուսական նավատորմը և հարձակվեք նրա վրա՝ առանց պատերազմ հայտարարելու, ուր էլ որ նրան հայտնաբերեք»: Հաջորդ օրը փոխ-ծովակալ Սուչոնը Ահմեդ Ջեմալ փաշայից ստացավ թուրքական զորահրամանատարներին հասցեագրված գաղտնի հրամաններ, որոնցում նրանց հրամայվում էր ենթարկվել Սուչոնի կարգադրություններին, քանի որ նա գործում է բարձրագույնի (սուլթանի Վ. Բ.) հրամանագրով:

Հոկտեմբերի 26-ին երիտթուրքական կառավարությունը Գերմանիայից ստացավ վարկի մի մասը՝ 5 միլիոն լիրա ոսկով: Հաջորդ օրը, 1914 թ. հոկտեմբերի 27-ին «Գյոբենը» և «Բրեսլաուն» Բոսֆորից դուրս եկան Սև ծով և հարձակվելով ռուսական նավերի վրա, խորտակեցին նրանցից մի քանիսը, չչափելի վնաս հասցնելով ռուսական սևծովյան ռազմական նավատորմին: Դրանից հետո հոկտեմբերի 29-ի գիշերը թուրքական երկու ականակիրներ ներխուժեցին Օդեսայի նավահանգիստը և խորտակեցին ռուսական մի նավ: Մեկ օր անց,

հոկտեմբերի 30-ին, «Գյոբեն»-ը ռմբակոծեց Սևաստոպոլը, իսկ «Բրեսլաուն» և «Համիդիե» թուրքական հածանավը հրետանային կրակով հրետակոծեցին Թեոդոսիան և Նովոռոսիյսկը, ականներ նետեցին Կերչի նեղուցը և խորտակեցին մի քանի ռուսական առևտրական նավեր:

Գերմանա-թուրքական նավատորմի հարձակումը Ռուսաստանի սևծովյան նավատորմի և նավահանգիստների վրա նշանակում էր, որ Թուրքիան մտնում է պատերազմի մեջ՝ գերմանա-ավստրիական խմբավորման կողմում: Հոկտեմբերի 29-ին Ռուսաստանը խզեց իր դիվանագիտական հարաբերությունները Թուրքիայի հետ և ռուսական կովկասյան բանակի զորամասերը հրաման ստացան անցնել սահմանը և գրոհել թուրքական զորքերի վրա: Իսկ 1914 թ. նոյեմբերի 2-ին հրապարակվեց Նիկոլայ II-ի մանիֆեստը թուրքիային պատերազմ հայտարարելու մասին:

1914 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիան իրեն հայտարարեց պատերազմական վիճակում Անտանտի պետությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեմ:

Նույն օրը, նոյեմբերի 11-ին, Ստամբուլի Սուլթան Մեհմեդ Ֆաթիհ մզկիթում շեյխ-ուլ իսլամ Խայրի-էֆենդին ընթերցեց հինգ ֆեթվա Անտանտի պետությունների դեմ ջիհադ՝ «սրբազան պատերազմ» հայտարարելու մասին: «Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան,- ասվում էր այդ ֆեթվաներից մեկում,- ամեն տեսակի ջանք են գործադրում, որպեսզի հանգցնեն իսլամի բարձր լույսը: Ուստի Անտանտի երկրների տարածքում ապրող բոլոր մահմեդականները պետք է հանդես գան իրենց կառավարությունների դեմ»: Միաժամանակ այդ ֆեթվաներում ասվում էր, որ պետք է «անհավատ» համարել միայն Անտանտի պետություններին, իսկ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան հանդիսանում են իսլամի պաշտպաններ: Ֆեթվաները ուղղված էին աշխարհի բոլոր սուննի-մուսուլմաններին: Շիաների համար, որոնց վրա չէր տարածվում սուլթան-խալիֆի կրոնական հեղինակությունը, 1914 թ. նոյեմբերի 13-ին հրապարակվեցին Քերբելայի, Նաջաֆի, Սամարրայի և Ալքազիմիյեի բարձրագույն շիա կրոնական հեղինակությունների՝ մոջթեհիդների ֆեթվաները, որոնցում կոչ էր արվում շիա-մուսուլմաններին «սրբազան պատերազմի» դուրս գալ «անհավատների» դեմ:

Ի լրացումն շեյխ-ուլ-իսլամի ջիհադի վերաբերյալ ֆեթվայի, Ստամբուլում կազմվել էր նաև «Սրբազան պատերազմը պարտադիր է» վերնագրով մի կոչ, որտեղ ասվում էր, որ մահմեդականները պետք է անհապաղ սրբազան պատերազմի դուրս գան «անհավատ-

ների» դեմ «քրիստոնեական լծից» մուսուլմանական տիրապետությունները, այդ թվում Կովկասը, ազատագրելու համար: «Յուրաքանչյուր մահմեդական,- ասվում էր կոչում,- ներկայումս իրեն պետք է ռազմիկ համարի»:

Կոչում այնուհետև ասվում էր, որ անհրաժեշտ է «ստոր անհավատների» լծից ազատագրել Հնդկաստանը, Եգիպտոսը, Սուդանը, Ճավան, Ալժիրը, Մարոկկոն, Թունիսը, Մեծ Սիբիրը, Թուրքեստանը, Խիվան, Բուխարան, Կովկասը, Ղրիմը, Կազանը, Աստրախանը և այլն:

Կոչն ավարտվում էր Ղուրանի սուրահներից բերված մի քաղվածքով, որտեղ ասվում էր. «Սպանեք նրանց, ովքեր միասնական Աստծո հետ մեկտեղ հանդուրժում են ուրիշ աստվածների գոյությունը, սպանեք ամենուրեք, որտեղ նրանց կգտնեք, բռնեք դրանց, կանգնեցրեք, դարանակալեք նրանց բոլոր ճանապարհների վրա»:

Հարկ է, սակայն, նշել, որ հակառակ իթթիհադականների ջանքերի, սրբազան պատերազմի կոչերը չհուզեցին մահմեդական աշխարհը: Տարբեր երկրներում այդ կոչին արձագանքեցին միայն ոչ մեծ թվով մահմեդական մոլեռանդներ: Ավելին, արաբները և հնդիկ մահմեդականները կռվի դուրս եկան թուրքերի դեմ: Երիտթուրքական կուսակցության աչքի ընկնող գործիչ Մեվլան-զադե Ռիֆաթը խոստովանում է, որ հայտարարված սրբազան պատերազմը ազդեցություն չունեցավ ոչ միայն աշխարհի մահմեդական ժողովուրդների վրա, այլև բուն Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության վրա:

Շուտով Թուրքիային պատերազմ հայտարարեցին նաև Անգլիան՝ նոյեմբերի 18-ին և Ֆրանսիան՝ նոյեմբերի 19-ին:

Մտնելով պատերազմի մեջ, երիտթուրքական կառավարությունը այլևս կարիք չուներ թաքցնելու իր իսկական նպատակները: 1914 թ. նոյեմբերի 12-ին «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարությունը իր տեղական կազմակերպություններին ուղղեց մի շրջաբերական նամակ, որտեղ անսքող ձևով խոսվում էր պատերազմի պանթյուրքիստական և պանիսլամիստական նպատակների մասին: Նրանում մասնավորապես ասվում էր. «Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով: Մեր ազգի իդեալը... առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան թշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետևանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմում կունենան և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղավորումները»:

Թուրքիայի համար ռազմական գործողությունների կարևորագույն թատերաբեմը կովկասյան ճակատն էր: Դեռևս մինչև պատե-

բազմի մեջ մտնելը, 1914 թ. գարնանը և ամռանը երիտթուրքերը սկսել էին զորքեր կենտրոնացնել Ռուսաստանի և Իրանի սահմանների մոտ: Կովկասյան ճակատում առաջին մարտերը սկսվեցին 1914 թ. նոյեմբերի 10-ին: Ղեկավարվելով Էնվեր փաշայի պլանով, թուրքական զորքերն անցան հարձակման և խոշոր ուժերով ներխուժեցին Բաթումի մարզը: Աջարիայի մահմեդականացած վրացիների վրա թուրքական հրամանատարությունը բացառիկ մեծ ուշադրություն էր դարձնում: Թուրքերը աջարացիներին զենք էին բաժանում և փորձում էին նրանց հրահրել զինված ելույթների ռուսների դեմ: Հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ ռուսական զորքերը ստիպված էին նահանջել և թուրքերը նոյեմբերի սկզբին գրավեցին Արդվինն ու Արդանուչը: Ռուսական զորքերը նահանջեցին դեպի Բաթումից ոչ հեռու Աջարիս-ծղալի գետը: Սակայն շուտով ռուսները հակահարված հասցրեցին թուրքերին և օսմանների հարձակումը Բաթումի ուղղությամբ կանգնեցվեց: Թուրքական և ռուսական զորքերի միջև մարտերը ծավալվեցին սահմանի ողջ երկայնքով՝ Սև ծովից մինչև Պարսից ծոց: Կովկասյան ճակատում գործում էր երրորդ թուրքական բանակը, որի կազմում կար 150 հազար զինվոր: Սկզբում այդ բանակի հրամանատարը Հասան Իզզեթ փաշան էր, սակայն նոյեմբերի վերջին գալով ռազմաճակատ, Էնվեր փաշան անձամբ գլխավորեց երրորդ բանակը: Բանակի շտաբի պետ նշանակվեց Լիման ֆոն Սանդերսի ռազմական միսիայի անդամ՝ գեներալ-լեյտենանտ Բրոնսարտ ֆոն Շելենդորֆը, իսկ օպերատիվ մասի պետ՝ նույն միսիայի անդամ մայոր Ֆելդմանը:

Թուրքական գլխավոր հրամանատարության պլանով, երրորդ բանակի առջև խնդիր էր դրված հնարավորին չափ արագ ջախջախել ռուսական զորքերին և գրավել Կովկասը: Դրանից հետո Էնվեր փաշան ծրագրել էր շարժվել դեպի մերձկասպյան շրջանը, Պովոլժիե և Կենտրոնական Ասիա, Ռուսաստանի մահմեդական բնակչությանը զինված պայքարի հանել ռուսների դեմ և նրանց օգնությամբ հաղթական երթով շարժվել դեպի Աֆղանստան ու Հնդկաստան:

Կովկասյան ճակատում պատերազմի առաջին էտապում տեղի ունեցան չորս խոշոր ռազմական գործողություններ, որոնցից առաջինը Սարիղամիշի ճակատամարտն էր: Սարիղամիշի օպերացիային մասնակցող թուրքական բանակը հաշվվում էր 90 հազար մարդ, մինչդեռ ռուսական կովկասյան բանակի ուժերը 84 հազարից չէին գերազանցում: Հարձակման նախօրյակին Էնվերը շրջագայում էր ճակատում՝ ճգնելով ոգեշնչել իր զինվորներին: «Զինվորներ,- գրում էր Էնվերը նրանց ուղղված դի-

մումի մեջ,- ես ձեզ բոլորին այցելեցի: Տեսա, որ դուք ոտաբոբիկ եք, իսկ ձեր ուսերին չինելներ չկան: Սակայն մեր դիմաց կանգնած թշնամին վախենում է մեզնից: Շուտով դուք կսկսեք հարձակվել, կմտնեք Կովկաս: Այնտեղ դուք կգտնեք ամեն տեսակի մթերքներ և հարստություն: Մահմեդական ողջ աշխարհը հույսով է նայում ձեր վերջին ճիգերին»:

1914 թ. դեկտեմբերի 19-ին թուրքական զորքերը սկսեցին հարձակումը: Նրանց առջև խնդիր էր դրված Սարիղամիշը գրավելուց հետո շարժվել դեպի Կարս, գրավել այդ քաղաք-ամրոցը, այնուհետև Ալեքսանդրոպոլը (ներկայումս Գյումրի), Բաթումը և շրջապատել ու ոչնչացնել Կովկասյան ճակատի ռուսական զորքերին: Սարիղամիշի գործողությունը անձամբ ղեկավարում էր Էնվեր փաշան: Դաժան ձմռան պայմաններում երկու կողմերն էլ կռվում էին բացառիկ համառությամբ: Սկզբնական շրջանում ծանր մարտերով ռուսական բանակը նահանջում էր: Դեկտեմբերի 23-ին թուրքական զորքերը մտան Օլթի: Դեկտեմբերի 25-ին Էնվերը հրաման տվեց հարձակվել Սարիղամիշի վրա և գրավել այն: Դեկտեմբերի 26-ի երեկոյան սկսվեց Սարիղամիշի ճակատամարտը: Դա արյունահեղ ճակատամարտ էր: Սարսափելի սառնամանիքի պայմաններում զորքերն առաջ էին շարժվում լեռնային կածաններով՝ մինչև ծնկները թաղված ձյան մեջ: Թուրքական բանակի հրամանատարությունը «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության անդամներից ու կողմնակիցներից կազմակերպեց չեթայական-պարտիզանական ջոկատներ, որոնք ուղարկվեցին ռուսական բանակի թիկունքը՝ կապի գծերը փչացնելու, Կարս-Սարիղամիշ երկաթուղագիծը շարքից հանելու, ահաբեկչական ակտեր կազմակերպելու և մահմեդական ազգաբնակչությանը ռուսների դեմ ապստամբության հանելու համար: Մի քանի օր տևած համառ մարտերից հետո նախաձեռնությունն անցավ ռուսների ձեռքը, որոնք դիմեցին ուժեղ հակահարձակման: Սարիղամիշում թուրքերը կրեցին ջախջախիչ պարտություն: Թուրքական ռազմական պատմության մեջ այն մտավ «Սարիղամիշի աղետ» անունով: Թուրքական երրորդ բանակը կորցրեց 78 հազար մարդ, որոնց մի զգալի մասը ոչնչացավ 36 աստիճանի հասնող դաժան սառնամանիքի պատճառով: Ռուսները այդ գործողության ժամանակ կորցրին 20 հազար զինվոր և 6 հազարից ավելի ցրտահարված:

Պարտությունը մեծապես ազդեց թուրքական բանակի բարոյական ոգու վրա: Սկսվեց զանգվածային դասալքություն: Մեծ թվով զինվորներ, այլևս անկարող լինելով դիմանալ կտրող ցրտին ու զրկանքներին, լքում էին ռազմաճակատը և փախուստի դիմում: Դասալիքների թիվը օրեցոր ավելանում էր: Բանակում տարածում գտավ

նաև հրամանատարներին չենթարկվելու երևույթը: Թուրքական զինվորներից շատերը գիշերելով բաց դաշտում ցրտահար եղան: Մեծ թվով զինվորներ իրենց կյանքը փրկելու համար գերի էին հանձնվում ռուսներին: Նահանջի առաջն առնելու համար, հրամանատարները կարգադրում էին կրակել զինվորների վրա:

Համոզվելով, որ Սարիղամիշի ճակատամարտը տանուլ է տրված, էնվերը 3-րդ բզկտված բանակի մնացորդները (մոտ 13 հազար մարդ) հանձնեց գնդապետ Հաֆըզ Հաքքը բեյին, և հազիվ խուսափելով գերի ընկնելուց, գաղտագողի լքեց պարտություն կրած զորքերին, նրանց թողնելով բախտի քմահաճույքին: Աշխատելով փրկվել ռուսների հետապնդումներից, թուրքերը ցրիվ եկան լեռներում ու կիրճերում: Մտավախություն ունենալով, որ Սարիղամիշի աղետը կարող է քայքայիչ ազդեցություն ունենալ տարբեր ճակատներում կռվող թուրքական զորքերի բարոյա-հոգեբանական վիճակի վրա, Ստամբուլը խստորեն արգելեց մամուլին գրել այդ աղետի մասին:

1915 թ. սկզբին ռուսական կովկասյան բանակը առաջ էր շարժվում դեպի Արևմտյան Հայաստանի խորքը:

Վերականգնելով երրորդ բանակի մարտունակությունը, թուրքական հրամանատարությունը ձեռնամուխ եղավ երկրորդ խոշոր՝ Ալաշկերտի գործողությանը, որի նպատակն էր Ալաշկերտի հովտով ներխուժել Երևան և Թիֆլիս: Սակայն թուրքերին չհաջողվեց իրականացնել այդ պլանը ևս:

Զարգացնելով իրենց հարձակումը Վանի ուղղությամբ՝ 1915 թ. մայիսի 19-ին ռուսական զորքերը գրավեցին Վանը: Այստեղ 1915 թ. ապրիլից սկսվել էր Վանի հայերի ինքնապաշտպանությունը: Սակայն օգոստոսի 15-ին ռուսները թողեցին Վանը, և հեռացան Դիադինի ու Բայազետի (Դողուբայազետ) ուղղությամբ: Վանի հայ բնակչությունը մեն-մենակ մնալով թշնամու դեմ, մատնվեց աղետի:

Թևավորվելով նրանով, որ Բուլղարիան կենտրոնական պետությունների կողմից մտավ պատերազմի մեջ և Դարդանելում անգլո-ֆրանսիական զորքերը մատնվել էին անհաջողության, Թուրքիան ծրագրեց նոր հարձակողական գործողություններ: Այն կանխելու նպատակով 1916 թ. հունվարին ռուսներն անցան հակահարձակման, ձեռնամուխ լինելով Էրզրումի գործողության իրականացմանը: Ռուսական զորքերը Էրզրումի (Կարինի) վրա հարձակվում էին երեք կողմից՝ հյուսիսից, արևելքից ու հարավից: Թեև Էրզրումում կենտրոնացած էին 100 հազար թուրքեր, սակայն զինամթերքի ու պարենի բացակայության պատճառով նրանք չկարողացան քաղաքը պահել

իրենց ձեռքերում: 1916 թ. փետրվարի 16-ին ռուսական զորքերը գրավեցին Հայկական բարձրավանդակի միջնաբերդը, ռազմավարական կարևոր հանգույց Էրզրում քաղաք-ամրոցը: Սարիղամիշից հետո Կովկասյան ճակատում դա ռուսական բանակի երկրորդ խոշոր հաղթանակն էր: Թուրքական երրորդ բանակը կրկին ջախջախվեց, կորցնելով իր անձնակազմի 66 տոկոսը: Էրզրումի գրավումից հետո ռուսական բանակի առջև այլևս բաց էր ճանապարհը դեպի Տրապիզոն, Էրզինջան և Սրվաս, ինչպես նաև դեպի Մոսուլ և Բաղդադ: Ռուսական բանակի գլխավոր շտաբի բնութագրմամբ «Էրզրումի բերդը միակ կետն է ասիական Թուրքիայում, որը միաժամանակ պաշտպանում է և՛ Անատոլիան, և՛ Սիրիան, և կարգավորում ստրատեգիական շարժումը դեպի Միջագետք: Ընդհուպ մինչև Բոսֆորը այդպիսի մի ուրիշ կետ այլևս գոյություն չունի»:

Էրզրումի գրավումը ռուսական զորքերի կողմից ըստ էության նշանակում էր, որ Թուրքիան կորցնում է Արևմտյան Հայաստանը: Գիտակցելով այդ իրողությունը, թուրքական հրամանատարությունը Գալիպոլիի թերակղզում անգլիացիների անհաջողության հետևանքով ազատված զորքերը, ինչպես նաև Թրակիայում և նեղուցների գոտում տեղաբաշխված ստորաբաժանումները շտապ կարգով նետեց կովկասյան ճակատ: 1916 թ. փետրվար-հունիս ամիսների ընթացքում նշված ճակատում կենտրոնացվեց մոտ 250 հազար մարդ և մեծ քանակությամբ թնդանոթներ, սպառազինություն ու մարտական տեխնիկա:

Մարտերում թուլացած ռուսական բանակը չկարողացավ իրականացնել թուրքական զորքերի հետապնդման լայն գործողություններ: Թեև 1916 թ. աշնանը նրան հաջողվեց գրավել Բիթլիսի շրջանը և առաջ շարժվելով Ուրմիա լճի ուղղությամբ դուրս գալ դեպի պարսկական սահմանը:

1916 թ. ռազմական գործողությունների ընթացքում թուրքական զորքերը ստիպված էին ռուսներին զիջել նաև Տրապիզոնը, Բայբուրդը և Էրզինջանը:

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջումից հետո ռուսական կովկասյան բանակը քայքայվեց: Տասնյակ հազարավոր զինվորներ լքելով ճակատը հեռանում էին Ռուսաստան:

Պատերազմի տարիներին, օգտվելով ռազմական իրադրությունից, իթթիհադականները ձեռնարկեցին հայկական հարցի «լուծմանը»՝ հայերի տոտալ ոչնչացման ճանապարհով: Արևմտահայությանը ցեղասպանության ենթարկելու ծրագիրը, որը երիտթուրքերի կողմից մշակվել էր դեռևս բալկանյան պատերազմների ժամանակ, գործողության մեջ մտավ Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու ա-

ռաջին իսկ օրերից: Այն իր կուլմինացիային հասավ 1915-1916 թվականներին և շարունակվեց ընդհուպ մինչև կայսրության կործանումը:

1914 թ. փետրվարին երիտթուրքերի օրգան «Իկդամ» թերթը տպագրեց մի հոդված, որտեղ առաջարկվում էր Արևելյան Անատոլիայից (իմա՝ Արևմտյան Հայաստանից- Վ. Բ.) բոլոր հայերին աքսորել Միջագետքի կիզիչ անապատները, իսկ նրանց տեղը մահմեդականներ բերել: Երիտթուրքական պարագլուխների մտայնությամբ՝ Հայաստանը սեպի պես խրված էր Օսմանյան կայսրության և «թուրքական աշխարհի»՝ Թուրանի միջև և խանգարում էր թուրքական միության, այսինքն պանթյուրքիզմի գաղափարի իրագործմանը: Այդ միտքը անսքող կերպով ձևակերպել է երիտթուրքական ռազմական գործիչներից մեկը, երրորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան: 1918 թ. մայիսին, դիմելով Բաթումի կոնֆերանսի հայ պատվիրակներին, նա ասում է. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը մղում է Թուրքիային արևմուտքից դեպի արևելք: Մենք հեռացանք բալկաններից... բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք: Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը, մեր լեզուն: Դա տարերային հակում է: Մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Թուրքեստանում ու Ադրբեջանում: Մենք պետք է ճանապարհ հարթենք դեպի մեր եղբայրները, և դուք, հայերդ, մի կանգնեք մեր ճանապարհին»:

Արևմտահայության ցեղասպանության միջոցով երիտթուրքերը ձգտում էին լուծել նաև իրենց համար մեկ այլ կարևոր հարց, ռուսների և առհասարակ Անտանտի պետությունների միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին՝ օգտագործելով Հայկական հարցը:

Հունաստանի պատերազմի մեջ մտնելուց հետո Թուրքական իշխանությունները «դեպորտացման» անվան տակ սկսեցին երկրից արտաքսել նաև Սև և Մարմարա ծովերի ափերին, ինչպես նաև նեղուցների գոտում ապրող հույն բնակչությանը: 600 հազար հույներ փախուստի դիմեցին Թուրքիայի տարածքից:

1917 թ. գարնանը և աշնանը ռուս-թուրքական ճակատի ամբողջ երկայնքով, Սև ծովից մինչև Վանա լիճը կողմերի միջև տեղի էին ունենում լոկ ոչ մեծ ընդհարումներ, որոնք էական փոփոխություն չէին մտցնում ճակատի գծի մեջ, որը նախկինի պես անցնում էր Արևմտյան Հայաստանի խորքերից, ռուսական սահմանից մոտ 250 կմ հեռավորության վրա:

Ռուսական և թուրքական զորքերի միջև թեժ մարտեր էին տեղի ունենում նաև Իրանական Ադրբեջանում (Ատրպատականում), որտեղից թուրքական զորքերը մտադիր էին ներխուժել Կովկաս և Բաքվի նավթաբեր շրջանը, ինչպես նաև դեպի Թեհրան:

1915 թ. գարնանը Թուրքիան և Գերմանիան որոշեցին խոշոր մասշտաբի ռազմական գործողություններ իրագործել Իրանական ուղղությամբ: Թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ Իրանական իշխանությունները, որոնց մոտ առկա էին չեչտված հակառուսական և հակաանգլիական տրամադրություններ, ինչպես նաև Իրանական Քրդստանի քուրդ բնակչությունը և Ատրպատականի ազերի-թուրքերը աջակցություն ցույց կտան թուրքական զորքերին և ոտքի կկանգնեն ռուսների դեմ:

1915 թ. հունիսին Խանեկինի կողմից թուրքական զորքերը Հյուսեին Ռաուֆ-բեյի հրամանատարությամբ ներխուժեցին Իրանի տարածքը: Միաժամանակ Ատրպատական ուղարկվեց ռազմական մի արշավախումբ Էմեր Նաջի բեյի և ֆոն Շեյբներ Ռիխթերի հրամանատարությամբ: Թուրքերին հաջողվեց գրավել Ուրմիան և Թավրիզը: Նրանց մուտքն Ատրպատական ուղեկցվում էր տեղական քրիստոնյա բնակչության՝ հայերի և ասորիների կոտորածներով ու կողոպուտով: Ոչ միայն Իրանի հյուսիսային շրջանները, այլև համարյա ողջ հարավը, բացառությամբ Պարսից ծոցի առափնյա շրջանի, փաստորեն գտնվում էր թուրքական զավթիչների և գերմանական գործակալների գերիշխանության ներքո:

Թուրքերը փորձում էին Թեհրանում կազմակերպել հեղաշրջում և ստիպել շահական կառավարությանը մտնելու պատերազմի մեջ: Թուրքերի և գերմանացիների վտանգավոր գործողությունները սպառնում էին տարածվել ողջ Միջին Արևելքի վրա: Այդ վտանգը կանխելու նպատակով ռուսները հյուսիսից, իսկ անգլիացիները հարավից սկսեցին Իրանի տարածքը մաքրել թուրքական զորքերից ու գերմանամետ ուժերից: 1915 թ. հոկտեմբերին ռուսական զորքերը գեներալ Բարաթովի հրամանատարությամբ հետ մղելով թուրքերին, գրավեցին Համադանը, Քերմանշահը, Քաշանը, Ղումը և հետապնդելով թշնամուն՝ մոտեցան Սպահանին: Իսկ 1916 թ. մարտին Պարսից ծոցի Բենդեր-Աբբաս նավահանգստում անգլիացիները զորքեր հանեցին գեներալ Պերսի Սայքսի հրամանատարությամբ, որի խնդիրն էր Իրանի հարավային շրջաններում ոչնչացնել թուրք-գերմանական օջախները: Այդ նպատակով անգլիացիներն օգտագործեցին նաև տեղական բնակչությունից իրենց կազմակերպած այսպես կոչված «Հարավ-պարսկական հրաձիգների կորպուսը»:

1917 թ. սկզբին Իրանի տարածքի զգալի մասը ռազմակալման էր ենթարկված Անտանտի զորքերի կողմից. երկրի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասում տիրապետում էին ռուսները, հարավ-արևե-

լյան և հարավային մասում անգլիացիները, իսկ երկրի արևմտյան մասը գտնվում էր թուրքական զորքերի հսկողության տակ: Ռուսներն ու անգլիացիները ողջ Իրանի տարածքով մեկ՝ հյուսիսից հարավ՝ ստեղծեցին կենդանի ուժից ստեղծված արգելիչ գոտի, հնարավորություն չտալով թուրքերին, որպեսզի նրանք ներթափանցեն Իրանի արևելյան շրջանները:

Հետագայում, երբ անգլիացիները Միջագետքում թուրքերի դեմ անցան հակահարձակման, թուրքական հրամանատարությունը ստիպված եղավ կատարելապես հրաժարվել Իրանում իր վարած գործողություններից և զորքերը դուրս բերել Իրանի տարածքից:

Ռազմական գործողություններ վարելով Կովկասում և Իրանում, Թուրքիան միաժամանակ ստիպված էր հետ մղել անգլիական զորքերի ճնշումը Միջագետքյան ճակատում: Անգլիացիները դեռևս 1914 թ. նոյեմբերին դեսանտ հանեցին Շաթթ-էլ-Արաբ գետի գոտում: Նոյեմբերի 22-ին չհանդիպելով լուրջ դիմադրության, նրանք գրավեցին ռազմավարական առումով կարևորագույն նշանակություն ունեցող Բասրա նավահանգիստը, որը հետագայում դարձավ Միջագետքում անգլիական զորքերի գլխավոր հենակետը: Անգլիացիները չտապում էին գրավել Միջագետքը, քանի որ այն ուներ առաջնակարգ ռազմավարական նշանակություն: Միջագետքը գտնվում է Հնդկաստան, Իրան, Մերձկասպյան շրջան, Կովկաս, Հայկական բարձրավանդակ, Փոքր Ասիա և Սիրիա տանող ճանապարհների խաչմերուկում: Առավել ևս, որ Միջագետքը հարուստ է նավթով, որի կարիքը մեծապես զգում էր Մերձավոր Արևելքում գործող անգլիական բանակը:

Բասրան գրավելուց հետո բրիտանական զորքերը սկսեցին շարժվել հյուսիս-արևմտյան ուղղությամբ և 1914 թ. դեկտեմբերի 9-ին գրավեցին էլ-Քուրնան: Սակայն թուրքական զորքերի «Իրաք» խմբավորումը Սուլեյման Ասկերի-բեյի հրամանատարությամբ՝ թևային գրոհ կազմակերպեց անգլիացիների դեմ և կանգնեցրեց նրանց հետագա առաջխաղացումը: Թուրքական զորքերին և նրանց հետ գործող բախտիարական ու արաբական ցեղերի անկանոն ջոկատներին հաջողվեց 1915 թ. մարտի 3-ին գրավել Ահվազը, իսկ ապա նաև Մոհամմերան (ներկայումս Խորրեմշահր), որի հետևանքով փակվեց անգլիացիների մուտքը դեպի Կարուն գետը, որի միջոցով կարելի էր թափանցել մինչև Իրանի կենտրոնական շրջանները: Անգլիական զորքերին հաջողվեց էլ-Քուրնայի մոտ ապրիլի 14-ին թուրքերին հասցնել լուրջ պարտություն, որից հետո «Իրաք» խմբավորման հրամանատար Սուլեյման Ասկերի-բեյը ինքնասպանությամբ վերջ

տվեց իր կյանքին: Նրա փոխարեն նշանակվեց գնդապետ Նուրեդ-դին-բեյը: Վերջինիս, սակայն, չհաջողվեց կանգնեցնել անգլիացիների հարձակումը: Շարժվելով Բաղդադի ուղղությամբ, 1915 թ. հունիսի 3-ին Ամարայի մոտ անգլիացիները թուրքերին հասցրին խոշոր պարտություն: Իսկ այնուհետև Քութ էլ-Ամարայի մոտ ևս մեկ անգամ պարտության մատնելով թուրքական զորքերին, 1915 թ. սեպտեմբերի 28-ին անգլիացիներին հաջողվեց գրավել Քութ էլ-Ամարա քաղաքը:

Քանի որ Միջագետքյան ճակատում անգլիական ուժերը մեծ չէին, թուրքական զորքերի «Իրաք» խմբավորմանը հաջողվեց 1915 թ. դեկտեմբերի 7-ին Քութ էլ-Ամարայի մոտ ամբողջովին շրջապատել գեներալ Թաունսհենդի զորքերին: Անգլիացիների բոլոր փորձերը ճեղքել շրջապատումը և դուրս գալ օղակումից, ավարտվեցին անհաջողությամբ: 147-օրյա շրջապատումից հետո, երբ զինամթերքի ու սննդամթերքի բոլոր պաշարները սպառվեցին, 1916 թ. ապրիլի 29-ին անգլիական զորամասը հանձնվեց թուրքերին: Անգլիացիների կորուստները հաշվվում էին երկու հազար սպանված և 8 հազար վիրավոր: Թուրքական զորքերը գերի վերցրին 13 հազար զինվորների, այդ թվում նաև գեներալ Թաունսհենդին:

Քութ էլ-Ամարայի մոտ անգլիական զորքերի պարտությունը ողջ Մերձավոր Արևելքում ունցավ մեծ արձագանք, չոչափելի վնաս հասցնելով անգլիացիների հեղինակությանը:

1917 թ. հունվարից Միջագետքյան ճակատում կենտրոնացնելով խոշոր ուժեր՝ 160 հազարանոց բանակ, անգլիացիներն անցան հակահարձակման Խալիլ-փաշայի հրամանատարությամբ գործող թուրքական միջագետքյան վեցերորդ բանակի դեմ: 1917 թ. փետրվարի 25-ին անգլիացիներին հաջողվեց կրկին գրավել Քութ էլ-Ամարան իսկ 1917 թ. մարտի 10-ի լույս 11-ի գիշերը նրանք մտան Բաղդադ: Դա Ստամբուլում առաջ բերեց խուճապ և հուսահատություն: 1917 թ. մարտի 31-ին գումարվեց մեջլիսի՝ ներկայացուցիչների պալատի հատուկ փակ նիստ, որին մասնակցում էին Էնվեր փաշան, Թալաաթ փաշան, բոլոր մինիստրները, ինչպես նաև Լիման ֆոն Սանդերսը: Նիստում արձանագրվեց, որ «Բաղդադի աղետը ծանր ազդեցություն կգործի բոլոր մահմեդականների վրա»: Այնուհետև շարժվելով դեպի հյուսիս, անգլիական զորքերը 1917 թ. մարտի 15-ին, Բաղդադից մոտ 50 կմ հեռավորության վրա, հասան Տիգրիս գետի ափերին: Ապրիլի 23-ին անգլիացիները գրավեցին նաև Սամարրան, որից հետո գարնան և ամռան ամիսներին թուրքական զորքերին հասցրին մի շարք նոր պարտություններ:

Միջագետքում անգլիական զորքերի հետագա առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով Էնվեր փաշայի հրամանով կազմավորվեց զորքերի մի ուժեղ խմբավորում, որը ստացավ «Յիլդիրիմ» («Կայծակ») պայմանական անունը: Նրա գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ ֆոն Ֆալկենգայնը, որը ստացավ Թուրքական ծառայության մարշալի կոչում: «Յիլդիրիմ» խմբավորման մեջ մտցվեցին նաև գերմանական ստորաբաժանումներ, այդ թվում նաև ավիացիոն զորամասեր:

Յիլդիրիմի գլխավոր խնդիրն էր Բաղդադը հետ վերցնել հակառակորդից: Իրենց հերթին Միջագետքում կենտրոնացնելով մեծաթիվ ուժեր, այդ թվում նաև ավիացիա և տանկեր, անգլիացիները ձեռնամուխ եղան հուժկու հարձակման, 1917 թ. սեպտեմբերի 29-ին նրանք գրավեցին Ռամադին, իսկ նոյեմբերի 6-ին Թիքրիթը, դրանով իսկ մոտենալով նավթով հարուստ Մոսուլի վիլայեթի սահմաններին և պատրաստվելով գրոհով վերցնել այդ նահանգը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունը ստիպված էր ռազմական գործողություններ մղել մի քանի ճակատներով: Թուրքական և անգլիական զորքերի միջև թեժ մարտեր էին տեղի ունենում նաև Սուեզի ջրանցքի գոտում (Սիրիա-Պաղեստինյան ուղղություն), որտեղ Թուրքական բանակը գլխավորում էր երիտթուրքական տրիումվիրատի ներկայացուցիչներից մեկը՝ Ահմեդ Ջեմալ փաշան:

Թուրքական գլխավոր հրամանատարությունը Կովկասյան ճակատի հետ մեկտեղ չափազանց կարևոր նշանակություն էր տալիս Սիրիա-Պաղեստինյան ուղղության ռազմական գործողություններին, որտեղ կարևորագույն խնդիրը Սուեզի ջրանցքի գրավումն էր: Ջրանցքը Թուրքական հսկողության տակ անցնելու դեպքում կկզվեր անգլիացիների կապը Հնդկաստանի, Պարսից ծոցի և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների հետ: Բացի այդ, աննախընթաց կերպով կուժեղանար Թուրքիայի ազդեցությունը Եգիպտոսում, Մաղրիբի երկրներում և ըստ երիտթուրքական պարագլուխների հաշվարկների, կարող էր ապահովել արաբների մուտքը «սրբազան պատերազմի» մեջ՝ ընդդեմ Անտանտի պետությունների:

1914 թ. նոյեմբերի 18-ին Ջեմալ փաշան նշանակվեց Թուրքական չորրորդ բանակի հրամանատար, որն այսուհետև կոչվելու էր «Եգիպտոսի ազատագրման բանակ»: Նա այդ պաշտոնը ստացավ, պահպանելով նաև ծովային մինիստրի իր պորտֆելը: Ջեմալ փաշայի տրամադրության տակ դրվեցին մի խումբ գերմանացի սպաներ,

մասնավորապես գնդապետ Ֆոն Կրեսս Ֆոն Կրեսսենշտեյնը, որը 1915–1917 թթ. չափազանց կարևոր դեր խաղաց Թուրքական զորքերի ռազմական գործողություններում Սուեզի ջրանցքի շրջանում և Սիրիա–Պաղեստինյան ճակատում:

Սինայի անջուր անապատով 13-օրյա դժվարին անցումից հետո 1915 թ. հունվարի 27-ին Թուրքական չորրորդ բանակը դուրս եկավ ջրանցքի շրջանում: Այդ բանակը զուրկ էր բավարար ուժեր ու միջոցներ ունենալուց իր առջև դրված դժվարին խնդիրն իրագործելու համար: Ջրանցքը պաշտպանում էր լավ զինված 35-հազարանոց անգլիական բանակը, իսկ ծովի կողմից այն պաշտպանվում էր անգլո-ֆրանսիական միջերկրածովյան ռազմական նավատորմի կողմից: Մինչդեռ Թուրքական չորրորդ բանակը բաղկացած էր ընդամենը 20 հազար զինվորներից: Թուրքերի առաջին գրոհը ջրանցքի վրա հանդիպեց անգլիացիների ուժգին դիմադրությանը: Տալով երեք հազար զոհեր, Ջեմալ փաշան փետրվարի 3-ին հրամայեց նահանջել վերախմբավորելու համար իր ուժերը և օգնական զորքեր ստանալու համար: Ողջ 1915 թ. ընթացքում իրենց ձեռքում պահելով Սինայի թերակղզին, Թուրքերը առանձին դաղարներով ռազմական գործողություններ էին մղում ջրանցքի գոտում: 1916 թ. սկզբին անգլիացիները իրենց զորքերի թիվը Եգիպտոսում հասցրեցին 250 հազար մարդու: Դրանով հանդերձ, 1916 թ. օգոստոսին Թուրքական զորքերը կատարեցին ևս մեկ փորձ ջրանցքի գոտին ներխուժելու համար:

Սակայն թվաքանակով Թուրքերին եռակի անգամ գերազանցող անգլիական զորքերը Պորտ-Սուեզից հարավ-արևելքում գտնվող Ռամանի կոչված վայրում ուժգին հարված հասցրեցին հակառակորդին և Թուրքական բանակը մոտ 80 կմ չպրտեցին հետ: Շարունակելով հարձակումը, 1916 թ. դեկտեմբերի 21-ին անգլիական զորքերը գրավեցին Էլ-Արիշը, որից հետո Թուրքերը ստիպված էին ողջ Սինայի թերակղզին զիջել անգլիացիներին:

Այսպիսով, Թուրքերի ձեռնարկած ռազմական գործողությունները Սուեզի ջրանցքը գրավելու ուղղությամբ ավարտվեցին կատարյալ անհաջողությամբ: 1917 թ. նոյեմբերի 6-ին անգլիական գեներալ Էդմունդ Ալլենբիի զորքերը գրավեցին Գազան, որը հանդիսանում էր Հյուսիսային Պաղեստինի բանալին: Անգլիական զորքերի կողմից հարավպաղեստիյան պլացդարմի գրավումը նշանակում էր, որ Սուեզի ճակատում ռազմական գործողությունների Թուրքական պլանը կատարյալ ձախողման է մատնվել:

Անգլիական զորքերը Թուրքերին հարվածներ էին հասցնում նաև

Արաբական թերակղզում՝ Ասիրում, Եմենում, Հիջազում, Նեջում և Ջեբել-Շամմարում:

Ռազմաճակատներում թուրքական զորքերի կրած անհաջողությունները ուղեկցվում էին երկրի ներքին վիճակի լարվածության մեծացմամբ: Նահանգներում, հատկապես Անատոլիայում և արաբական վիլայեթներում, բնակչության վիճակը դառնում էր ուղղակի անտանելի: Պատերազմի տարիներին հացի գները բարձրացան 37 անգամ, սուրճինը՝ 70, բրնձինը՝ 30, մակարոնինը՝ 32, կարտոֆիլինը՝ 27 անգամ: Ընդհանրապես 1917 թ. 1914 թ. համեմատությամբ ապրուստը թանկացել էր նվազագույնը 20 անգամ:

Բնակչությանը առավել մեծ նյութական վնաս էր պատճառում քարշող անասունների բռնագրավումները, որոնք իրականացվում էին ռազմական նախարարության հրամանով: 1915 թ. Ահմեդ Ջեմալ փաշայի հրամանով Սիրիայի և Պաղեստինի ուղտերի ողջ գլխաքանակը բռնագրավվեց: Գյուղացիական ընտանիքների վիճակը, որոնք զրկված էին աշխատավոր ուժից և քարշող անասուններից, ուղղակի օրհասական էր:

Պատերազմական ժամանակի հատուկ օրենքով՝ բնակչությունը պարտավոր էր, որպես կանոն ցածր գներով, իշխանություններին հանձնել սննդամթերքների ավելցուկը: Այդ «գնումները» փաստորեն վեր էին ածվում բռնագրավումների: 1917 թ. Էնվեր-փաշայի հրամանով կայսրության ողջ տարածքում անց կացվեց սննդամթերքների «հաշվառման» կամպանիա, որն ուղեկցվում էր հախուռն և անվերահսկելի բռնագրավումներով:

Սահմանվեց հացը բաշխելու քարտային սիստեմ: Ութ հոգիանոց ընտանիքը ստանում էր ընդամենը մեկ կիլոգրամ հաց: Սննդամթերքների հետ միաժամանակ բռնագրավվում էր նաև վառելիքը: Դրա հետևանքով անտառներին հասցվեցին մեծ վնաս, քանի որ Թուրքիայում չոգեքարշների մեծ մասը աշխատում էին փայտի վառելիքով: Արաբական երկրներում բանակի ու տրանսպորտի կարիքների համար կատարվում էին մրգատու ծառերի ծառահատումներ: 1918 թ. սկզբին Սիրիայում վառելիք ապահովելու նպատակով հատվեցին ձիթապտղի ծառերի 60 տոկոսը:

Ամենուրեք քաղաքներում և գյուղերում մոլեգնում էին համաճարակները: Քաղաքները անկում էին ապրում: Հազարավոր ու տասնյակ հազարավոր մարդիկ զոհ էին դառնում քաղցին ու հիվանդություններին: Պատերազմի վերջին երկու տարիներին երկրի տնտեսական վիճակը էլ ավելի էր վատթարացել: Սովի էր մատնված ոչ միայն քաղաքացիական բնակչությունը, այլև բանակը:

Կասկածից վեր է, որ Օսմանյան կայսրության բնակչության ճնշող մեծամասնության աղքատացումը, տնտեսական ավերը, երկրի մարդկային ռեսուրսների ծայրահեղ հյուծումը արագացրին Թուրքիայի ռազմական պարտությունը և մոտեցրին նրա կործանման ու աղետի ժամը:

Դեռևս 1914 թ. նոյեմբերին, երբ Թուրքիան նոր էր մտել պատերազմի մեջ, Անգլիայի ծովային մինիստր Ուինստոն Չերչիլը Մեծ Բրիտանիայի բարձրագույն ռազմական խորհրդում առաջարկեց կազմակերպել խոշորամասշտաբ ծովային գործողություն Դարդանելի նեղուցի շրջանում: Այդ պլանի հեղինակների կարծիքով, անգլիական կամ անգլո-ֆրանսիական նավատորմի հայտնվելը Դարդանելի առջև կշեղեր Թուրքական հրամանատարության ուշադրությունը Սուեզի ջրանցքից և պատճառ կհանդիսանար Ստամբուլում պետական հեղաշրջման իրականացման համար, որի հետևանքով կստեղծվեր նոր կառավարություն, որը կկտրեր իր կապերը կենտրոնական պետություններից և դուրս կգար պատերազմից: Դրանով իսկ Սև ծովի վրայով կապ կհաստատվեր Ռուսաստանի հետ, Բուլղարիան կանցներ Անտանտի կողմը, Սերբիան և Չեռնոգորիան կփրկվեին, Ավստրո-Հունգարիան արագորեն կջախջախվեր և պատերազմը կավարտվեր մեկ-երկու տարի շուտ:

Սակայն Մեծ Բրիտանիայի բարձրագույն ռազմական խորհուրդը այն ժամանակ այդ պլանը կյանքի կոչելու կոնկրետ քայլեր չձեռնարկեց, թեև այն միշտ մնում էր օրակարգում: 1915 թ. փետրվարի 25-ին անգլո-ֆրանսիական դաշնակիցները ծովի կողմից հրետակոծեցին Դարդանելի մուտքը, նպատակ ունենալով ներխուժել նեղուց: Սակայն այդ փորձը հաջողությամբ չպսակվեց: Միանգամայն ակներև դարձավ, որ միայն նավատորմի ուժերով հնարավոր չէ ներխուժել այդ նեղուցը, այլ անհրաժեշտ է գործողության մեջ մտցնել նաև ցամաքային բանակ:

1915 թ. ապրիլի 13-ին անգլո-ֆրանսիական հրամանատարությունը Դարդանելի գոտում ցամաք հանեց 100-հազարանոց դեսանտ:

Շուտով Անտանտի զորքերի թիվը այնտեղ հասցվեց 570 հազար մարդու: Թուրքական գլխավոր հրամանատարությունը, սակայն, խուճապի չմատնվեց, որովհետև ռազմական գործողությունների սկսվելուց դեռ շատ առաջ, Թուրքիայում գերմանական ռազմական միսիան իր գործակալությունից հավաստի տեղեկություններ էր ստացել դաշնակիցների պլանների մասին: Ըստ այնմ, Դարդանելի ամրությունները նախապես ուժեղացվել էին, մասնավորապես դրվել էին ծանր թնդանոթներ, կենտրոնացվել էին մեծ թվով զորքեր, Դարդանելը

պաշտպանելու համար ստեղծվել էր հինգերորդ բանակը՝ Լիման ֆոն Սանդերսի հրամանատարությամբ: Արդեն 1915 թ. ապրիլի վերջին կողմերի միջև սկսվեցին թեժ մարտեր, որոնք վերածվեցին «արյունոտ բաղնիսի»:

Ցամաքային զորքերի հետ միաժամանակ Դարդանելի օպերացիային մասնակցում էին նաև նշանակալից չափերի հասնող անգլո-ֆրանսիական ծովային ուժեր: 1915 թ. ապրիլի վերջից մինչև հունիս բրիտանական սուզանավերը մշտապես թափանցում էին Դարդանելի նեղուցը և Մարմարա ծով, որտեղ խորտակում էին թուրքական ռազմանավերն ու առևտրական նավերը, պայթեցնում էին զինվորական պահեստները, ոչնչացնում էին երկաթուղային գծերը և այլն: Իրենց հերթին հակառակորդի նկատմամբ ակտիվ գործողություններ էին ծավալել նաև գերմանական սուզանավերը: Մասնավորապես նրանց հաջողվեց խորտակել անգլիական «Թրայոմֆ» և «Մաջեստիկ» հզոր ռազմանավերը:

1915 թ. սեպտեմբերին Մարմարա ծովում հայտնվեցին 13 գերմանական սուզանավեր, որոնք սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին խորտակեցին դաշնակիցների զենքով ու սպառազինությամբ բեռնված 23 նավեր: Գերմանական սուզանավերը թույլ չէին տալիս, որ անգլո-ֆրանսիական զորքերը ստանան զենք, ռազմամթերք, հանդերձանք ու սննդամթերք, որի հետևանքով նրանց համար ստեղծվեց խիստ ծանր վիճակ:

Դաշնակիցների համար իրավիճակը նեղուցներում գնալով վատանում էր: Հենց այդ ժամանակ, 1915 թ. հոկտեմբերին, գերմանացիները Եվրոպայում անցել էին խոշոր հարձակման: Դա ստիպեց անգլիացիներին ու ֆրանսիացիներին իրենց զորքերը դուրս բերել նեղուցների գոտուց և հեռացնել ռազմական գործողությունների թատերաբեմից: Դաշնակիցների զորքերի դուրս բերումը սկսվեց 1915 թ. դեկտեմբերի 18-20-ին և ավարտվեց 1916 թ. հունվարի 1-ի գիշերը: Դուրս բերված զորքերի նշանակալից մասը տեղափոխվեց Եգիպտոս, մի մասը՝ Սալոնիկ, մի մասն էլ Արևմտյան ճակատ:

Գալիպոլիի գործողության ժամանակ երկու կողմերից մասնակցում էին մոտ 800 հազար զինվորներ ու սպաներ: Ի դեպ, այդ օպերացիային որպես 16-րդ կորպուսի հրամանատար մասնակցում էր նաև այն ժամանակ դեռևս գնդապետ Մուստաֆա Քեմալը: Անգլիացիների կորուստները հաշվվում էին ավելի քան 211 հազար մարդ, ֆրանսիացիները՝ 60 հազար: Թուրքերը կորցրին 250 հազար զինվորներ ու սպաներ:

Այսպիսով, Գալիպոլիի (Դարդանելի) օպերացիայի ժամանակ դաշնակիցները կրեցին պարտություն, իսկ Թուրքիան տարավ հաղթանակ: Սակայն այդ գործողությունը պատերազմի հետագա ընթացքի վրա ազդեցություն չունեցավ:

Արդեն 1916 թ. կեսերին թուրքական զինված ուժերը կորցրել էին մոտ 500 հազար մարդ (սպանված, վիրավոր և դասալիք): Գործնականում անհնար էր համալրել այդ թիվը, քանի որ ռեզերվների ամենամյա լրացուցիչ զինակոչը կազմում էր առավելագույնը 90 հազար մարդ:

1915 թ. վերջին բանակի թվաքանակը ավելացնելու նպատակով, պատրվակ բռնելով, որ Թուրքիան վարում է «սրբազան պատերազմ» ի շահ համայն աշխարհի մահմեդականների, թուրքերը սկսեցին զինվորական ծառայության վերցնել նաև այլ երկրների մարդկանց. մաղրիբցիների, եգիպտացիների, ալբանացիների, բոսնիացիների, պարսիկների, ռումինացիների և այլն, որոնք Օսմանյան կայսրության քաղաքացիներ չէին: Այդ բոլորի հետևանքով 1916 թ. աշնանը Թուրքիայի զինված ուժերի թիվը կազմում էր 3 միլիոն մարդ: Սակայն միաժամանակ դասալքությունը թուրքական բանակում հասնում էր աներևակայելի չափերի: Ռազմաճակատ մեկնող զորամասերը ճանապարհներին կորցնում էին իրենց անձնակազմի մոտ 40 տոկոսը: Բանակում լայն տարածում էին գտել մարմնախեղումներն ու ինքնասպանությունները: Դասալիքները հաճախ բարձրանում էին լեռները և զբաղվում ղաչաղությամբ, իսկ երբեմն էլ կազմում էին մեծաթիվ ավազակախմբեր և զբաղվում կողոպուտով ու թալանով: Թուրքական իշխանությունները դասալքության դեմ պայքարում էին անողոք դաժանությամբ: Լինում էին դեպքեր, երբ դասալիքների մի խմբի կախում էին ի տես մյուսների: Երբ տեղական բնակչությունը հրաժարվում էր բանակի համար զինվորներ տրամադրել, պատժիչ ջոկատները կրակի ճարակ էին դարձնում նրանց գյուղերն ու բնակավայրերը:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում, որի հետևանքով ցարիզմը տապալվեց, երիտթուրքական ղեկավարության կողմից մեկնաբանվեց որպես Թուրքիայի համար բարենպաստ իրադարձություն: Ստամբուլում ենթադրում էին, որ հեղափոխությունից հետո Ռուսաստանի ռազմական ուժերի թուլացումը Թուրքիային հնարավորություն կտա Ռուսաստանի հաշվին Արևելքում ձեռք բերել «հարուստ ավար»: Իթթիհադի պարագլուխները նաև ենթադրում էին, որ հեղափոխության հետևանքով Պետերբուրգում իշխանության գլուխ եկած նոր կառավարությունը կհայտարարի պատերազմից Ռուսաստանի դուրս գալու մասին, որը աննախընթաց

կերպով կթեթևացնի Թուրքիայի վիճակը: Սակայն այդ սպասելիքները ի դերև ելան, երբ Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը հայտարարեց, որ ինքը «չարունակելու է պատերազմը մինչև նրա հաղթական ավարտը»:

Ռուսաստանում 1917 թ. տեղի ունեցած հոկտեմբերյան հեղաշրջումից հետո կովկասյան ռազմաճակատը ըստ էության թուրքական բանակի համար վերացավ, քանի որ տասնյակ հազարավոր ռուս զինվորներ լքեցին իրենց դիրքերը և հեռացան Ռուսաստան: Միայն 1917 թ. դեկտեմբերին այդ ռազմաճակատը լքելով հեռացան 40 հազար ռուս զինվորներ:

Իթթիհադականների համար ստեղծվեց բացառիկ բարենպաստ իրավիճակ իրենց փայփայած վաղեմի զավթողական-պանթյուրքիստական ծրագրերը կյանքի կոչելու համար: 1917 թ. դեկտեմբերին Էրզինջանում (Երզնկա) կնքվեց ռուս-թուրքական զինադադար: Այդ զինադադարի համաձայն, ռազմական գործողությունները դադարեցվում էին կովկասյան ռազմաճակատի բոլոր հատվածներում, ստեղծվում էր սահմանազատման գիծ, որն անցնում էր կովկասյան բանակի առաջավոր գծի ու թուրքական զորքերի միջև: Այդ սահմանազատման գիծն օրինական էր համարվում մինչև վերջնական հաշտություն կնքելը:

Էրզինջանի զինադադարի համաձայն, Արևմտյան Հայաստանը չարունակելու էր մնալ կովկասյան բանակի կողմից օկուպացված գոտում: Զինադադարի ստորագրումից անմիջապես հետո, 1918 թ. փետրվարին, երիտթուրքական կառավարությունը ծրագրեց նոր արկածախնդրություն, հույս ունենալով զավթել Անդրկովկասը: Դասալքության դիմած ռուսական զորքերի բացակայության պայմաններում՝ Անդրկովկասի պաշտպանության հոգսը ընկած էր նոր ձևավորված հայկական և վրացական ազգային զորամասերի վրա: Հայկական ազգային կորպուսը պետք է պահեր մի ընդարձակ ճակատ՝ պարսկական սահմանից մինչև Բայբուրդ, ներառյալ նաև Էրզրումը և Կարսը: Բայբուրդից մինչև Սև ծովի ափերը ձգվում էր վրացական ազգային զորամասերի պաշտպանության գիծը: Ողջ Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարն էր ցարական ծառայության նախկին գեներալ-լեյտենանտ Ն. Զ. Օդիշելիձեն: Գերմանացի գեներալ Լյուդենդորֆը հետագայում նշում էր, որ «Ռուսական բանակի հեռանալուց հետո 1918 թ. սկզբին միայն հայերն էին կռվում Թուրքիայի դեմ և նրանք ութ ամիս ուշացրին Բաքվի գրավումը»:

Փաստորեն քայքայված ռուսական Կովկասյան ճակատի դեմ կանգ-

նած էր Թուրքական «Կովկաս» զորքերի խմբավորումը Ահմեդ Իզզեթ փաշայի հրամանատարությամբ: Նրա կազմի մեջ մտնում էին Երրորդ և Երկրորդ բանակները: Երրորդ բանակի հրամանատարն էր Մեհմեդ Վեհիբ փաշան, իսկ Երկրորդ բանակը գտնվում էր Մուստաֆա Քեմալ փաշայի հրամանատարության ներքո: 1917 թ. դեկտեմբերին «Կովկաս» բանակային խմբավորումը կազմացրվեց և Ահմեդ Իզզեթ փաշան հետ կանչվեց գլխավոր հրամանատարի պաշտոնից: Դրանից հետո Երրորդ բանակի հրամանատար գեներալ Մեհմեդ Վեհիբ-փաշային ենթարկվեց նաև Երկրորդ բանակը:

Թուրքական գլխավոր հրամանատարության մշակած պլանի համաձայն, դեպի Անդրկովկաս արշավանքի հիմնական օպերատիվ ուղղությունները պետք է լինեին Էրզրում-Ալեքսանդրոպոլ (գլխավոր ուղղությունը) և Տրապիզոն-Բաթում ուղղությունները: Էրզրում-Ալեքսանդրոպոլ ուղղությամբ Թուրքերը ռազմական գործողություններ սկսեցին 1918 թ. փետրվարի 9-10-ին: Սակայն դրանք դեռևս Թուրք-քրդական անկանոն զորքերի կողմից իրականացվող ռազմական գործողություններ էին: Երկու օր անց, 1918 թ. փետրվարի 12-ին, Կովկասյան բանակի Թուրքական զորքերի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան հրամայեց Երրորդ բանակի զորքերին անցնել Էրզինջանի զինադադարի սահմանազատման գիծը և «հայ ազգայնական զորամասերի» կողմից մահմեդական բնակչության նկատմամբ բռնություններ գործադրելու պատրվակի տակ սկսել ռազմական գործողություններ: Մեհմեդ Վեհիբ փաշան չտապեց հեռագրել կովկասյան բանակի հրամանատար Օդիշելիձեին. «Հայկական բռնությունները» Թուրքական զորքերին ստիպեցին անցնել սահմանազատման գիծը՝ տեղի օսմանյան մահմեդականներին փրկելու ու պաշտպանելու, կարգ ու կանոնն ու հանգստությունը վերականգնելու նպատակով: Բարեկամաբար ու սրտագին կերպով վստահեցնում եմ Ձեզ, որ Էրզինջանի ժամանակավոր պայմանագիրը պահպանում է իր ուժը, բացի սահմանազատման գծերի վերաբերյալ պարագրաֆից, որը ռուսական զորքերի հեռանալուց հետո ինքնին կորցնում է իր նշանակությունը: Այդ օպերացիան կատարվում է միայն անհրաժեշտությունից և մարդասիրության ու քաղաքակրթության պարտքի զգացումից ելնելով»:

Թուրքական հարձակման կոնկրետ նպատակների մասին Էնվեր փաշան բացահայտ կերպով հայտարարեց պատգամավորների պալատի 1918 թ. փետրվարի 12-ի նիստում: Նրա ասելով հարձակման նպատակն էր արագ գրավել Բաթումը և Բաքուն և այնտեղից կապեր հաստատել Թուրքեստանի հետ:

Անդրկովկասում 1918 թ. թուրքական արշավանքի մասնակիցներից մեկը՝ գնդապետ Բերքուքը, նշում է, որ այդ արշավանքի նպատակն էր գրավել ողջ Կովկասը, Իրանը և Միջին Ասիան: Նա գրում է. «Համաշխարհային պատերազմի ժամանակ մենք լայնածավալ ու արժեքավոր տարածքներ կորցրեցինք: Ինչպես այդ կորուստների, այնպես էլ հոգնածության ու անտարբերության հետևանքով բոլորին համակել էր անհոգությունն ու հուսահատությունը: Նման դրությունն այն աստիճան վտանգավոր ու աղետալի էր, որ դա կարող էր հանգեցնել մեր ուժերի կատարյալ քայքայմանն ու կործանմանը: Կովկասյան արշավանքը մասնակիորեն թեթևացնում էր այդ իրավիճակը: Բանակը նորից ոգևորություն ապրեց: Բոլորի մոտ երևացին իրենց ազգային իդեալներն իրականացնելու հույսեր»:

1918 թ. մարտի 3-ին կնքվեց Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագիրը մի կողմից Գերմանիայի ու նրա դաշնակիցների (այդ թվում նաև Թուրքիայի), իսկ մյուս կողմից բոլշևիկյան Ռուսաստանի միջև: Թվում էր, թե դրանից հետո Թուրքիան կդադարեցնի Անդրկովկասի նկատմամբ իր ռազմական գործողությունները: Բայց դա տեղի չունեցավ: Թուրքական զորքերը շարունակում էին հարձակումը: 1918 թ. ապրիլի 8-ին նրանք անցան ռուս-թուրքական 1914 թ. սահմանը: Կարսի ուղղությամբ շարժվելով առաջ՝ 1918 թ. ապրիլի 5-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը, իսկ ապրիլի 7-ին՝ Արդահանը: Առանց դիմադրության հանդիպելու գրավելով Բաթումը՝ այնուհետև թուրքական զորքերը ներխուժեցին Ախալցխայի գավառը, որտեղ գրավեցին Ախալցխան, Աբասթումանը և Ազղորը: Սակայն 1918 թ. ապրիլի 14-ին Զոլակ գետի մոտ նրանց առաջխաղացումը կանգնեցվեց տեղական հայ-վրացական ինքնապաշտպանության ուժերի կողմից: Տալով մոտ 1500 սպանվածներ՝ թուրքական զորքերը պարտություն կրեցին:

Թուրքերը շարունակում էին իրենց հարձակումը Կարս-Ալեքսանդրոպոլ ուղղությամբ: 1918 թ. ապրիլի 25-ին ընկավ Կարսը:

Օսմանցիները ռազմակալման ենթարկեցին նաև Երևանի նահանգի մեջ մտնող Իգդիրի գավառը:

Թուրքական արշավանքը ուղեկցվում էր տեղական բնակչության, գլխավորապես հայերի, ինչպես նաև ռուսների, հույների, եզիդիների և առհասարակ ոչ մահմեդական բնակչության զանգվածային սպանություններով, կողոպուտներով ու հալածանքներով:

1918 թ. մայիսի 8-ին թուրքական առաջին բանակային կորպուսի հրամանատար գեներալ Քյազիմ Կարաբեքիր փաշան հրաման ստա-

ցավ գրավել Ալեքսանդրոպոլը և առաջ չարժվել Ալեքսանդրոպոլ-Ջուլֆա երկաթուղագծի ուղղությամբ: Մայիսի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրոպոլը: Միանգամայն ակնհայտ էր, որ երիտթուրքերը մտադիր էին ռազմակալման ենթարկել ոչ միայն Արևելյան Հայաստանը, այլև ողջ Հարավային Կովկասը: «Սահմանների ուղղման» պատրվակի տակ թուրքերը մտադիր էին Օսմանյան կայսրությանը անհապաղ միացնել Նախիջևանի գավառը՝ ներառյալ Օրդուբադը, Շարուր-Դարալագյազ գավառի կեսը, Սուրմալուի ամբողջ գավառը, Էջմիածնի գավառը, Երևանի գավառի կեսը, Ալեքսանդրոպոլի գավառի մեծ մասը՝ Ալեքսանդրոպոլ քաղաքով և Ախալքալաքի ողջ նահանգը:

1918 թ. մայիսին տեղի ունեցած Սարդարաբադի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը ունեցան բացառիկ կարևոր նշանակություն Արևելյան Հայաստանի հետագա ճակատագրի համար:

Արևելյան Հայաստանում թուրքական զորքերի գործողությունները սերտորեն կապված էին Իրանական Ադրբեջանում (Ատրպատականում) իրականացվող ռազմական գործողությունների հետ, քանի որ թուրքական գլխավոր հրամանատարության պլաններով Հայաստանի հետ միաժամանակ այն պետք է հանդիսանար հենակետ Բաքվի վրա արշավելու համար:

1918 թ. փետրվարի կեսերին թուրքական զորքերը հրաման էին ստացել գրավել Կասպից ծովի առափնյա Գիլյան նահանգը Էնզելի նավահանգստով հանդերձ և այնտեղից հարձակվել Բաքվի վրա: Ի կատարումն այդ հրամանի՝ 1918 թ. մարտին, օգտվելով նրանից, որ ռուսական զորքերը հեռացել էին Իրանի տարածքից, թուրքերն անցան իրանական սահմանը և Մակվի շրջանում գրավեցին մի շարք վայրեր: Չնայած այն բանին, որ 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 7-րդ կետով Խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան պարտավորվում էին իրենց զորքերը դուրս բերել Իրանի տարածքից, սակայն անտեսելով և հաշվի չնստելով այդ պայմանագրի հետ, թուրքական զորքերը շարունակեցին իրենց առաջխաղացումը Ատրպատականում:

Միակ ուժը, որը դիմադրություն էր ցույց տալիս թուրք զավթիչներին, հայերից և ասորիներից կազմված պարտիզանական ջոկատներն էին, որոնք գործում էին Ուրմիա լճի, Խոյի, Սալմաստի և այլ շրջաններում:

Թուրքերը հատկապես ուժգին դիմադրության հանդիպեցին Դիլ-

մանի մոտ, որտեղ Անդրանիկի փոքրաթիվ ջոկատը տեղի հայ գյուղացիների հետ մի որոշ ժամանակ կանգնեցրեց թուրքական զորքերի առաջխաղացումը և նույնիսկ պարտության մատնեց նրանց:

Իր զորքերի ռազմական գործողությունները պատերազմում չեզոքություն հայտարարած Իրանի տարածքում ինչ-որ ձևով արդարացնելու համար, երիտթուրքական կառավարությունը հայտարարում էր, որ իր նպատակն է «պատժել» հայ և ասորի չեթեներին (պարտիզաններին) և երկրամասը «մաքրել» նրանցից: Էնվեր փաշան գերմանացիների մոտ, որոնք նույնպես հավակնություններ ունեին Բաքվի նկատմամբ, Ատրպատականում թուրքական զորքերի ինտերվենցիան «հիմնավորում» էր նրանով, որ «Թուրքիան այլևս չի կարող հանդուրժել և մնալ անտարբեր, երբ Անդրկովկասում տեղի են ունենում հայկական գազանություններ մահմեդականների նկատմամբ»: Վրիժառությամբ լցված թուրքական զորքերը Ատրպատականում կազմակերպում էին հայերի և ասորիների արյունոտ կոտորածներ, կողոպտում ու կրակի էին մատնում նրանց գյուղերը:

Մարտերով շարժվելով առաջ՝ 1918 թ. հունիսի 14-ին թուրքական զորքերը գրավեցին Թավրիզը, որտեղ տեղավորվեց IV բանակային կորպուսի շտաբը, որի հրամանատարն էր Այի Իհսան-փաշան: Թավրիզի գրավման լուրը ցնծությամբ ընդունվեց Ստամբուլում: «Թերջյուման-ի հաղիղաթ» թերթում պանթյուրքիստ Մեհմեդ Ֆուադ Քյոփրյուլուզադեն գրեց, որ ոչ հեռավոր ապագայում Թավրիզը կարող է դառնալ խոշոր թյուրքական կուլտուրական կենտրոն և դրանով իսկ կապող օղակ Թուրքիայի և Իրանի միջև: Թուրքական մամուլը անսքող կերպով գրում էր, որ «Թրքության կենտրոններից մեկի»՝ Իրանական Ադրբեջանի գրավումը ճանապարհ է բացում դեպի Իրանի կենտրոնական շրջանները և դեպի Աֆղանստան ու Հնդկաստան:

Թուրքական գլխավոր հրամանատարությունը Բաքուն գրավելու գործողության ղեկավարությունը դրել էր գեներալ Նուրի փաշայի վրա: Զորքերը պետք է Ալեքսանդրոպոլ-Կազախ-Աղստաֆա ուղղությամբ շարժվեին դեպի Ելիզավետպոլ (ներկայումս Գյանջա), այնտեղ պետք է միանային մուսավաթական ջոկատների հետ և ձևավորվելով որպես առանձին Կովկասյան մուսուլմանական բանակ, այնտեղից շարժվեին Բաքվի վրա: Միաժամանակ աջ թևից, Ջուլֆայի ու Թավրիզի կողմից Կովկասյան մուսուլմանական բանակին պետք է աջակցություն ցույց տային թուրքական առաջին բանակային կորպուսի զորքերը: Համարելով, որ առկա ուժերը բավարար չեն Բաքուն գրավելու համար, Էնվեր փաշայի հրամանով ստեղծվեց այսպես կոչ-

ված «Արևելք» զորքերի խմբավորում (Շարք օրդուլար գրուպու):

Բաքվի պաշտպանների ուժերը հակառակորդի ուժերի հետ համեմատած խիստ անհավասար էին: Բաքվի կոմունան, որը գլխավորում էր Ստեփան Շահումյանը, իր տրամադրության տակ չուներ ոչ միայն անհրաժեշտ քանակությամբ զորքեր, այլև զենք ու զինամթերք: Բաքվի պաշտպանների մեջ առավել էական ուժ էին ներկայացնում հայկական ազգային ջոկատները: Բաքվի սովետական զորքերի գլխավոր հրամանատար էր հանդիսանում կոմունայի ռազմա-ծովային գործերի կոմիսար Գ. Ղորղանովը, Կարմիր Բանակի առաջին Կովկասյան կորպուսի հրամատարն էր Ս. Կազարովը, իսկ կորպուսի շտաբի պետ՝ գնդապետ Զ. Ավետիսովը:

Ծավալվեցին թեժ մարտեր, որոնց ընթացքում թուրք-մուսավաթական զորքերը ոչ միայն ի վիճակի չեղան առաջ ընթանալու, այլև ունեցան խոշոր կորուստներ: Սովետական զորքերը գրավեցին Լենքորանը, Շամախու, Ղուբայի և Սալյանի գավառները: 1918 թ. հունիսի վերջին էնվեր փաշան «Արևելք» զորքերի խմբավորման գլխավոր հրամանատար գեներալ Մեհմեդ Վեհիբ-փաշայի փոխարեն նշանակեց իր հորեղբորը՝ գեներալ-լեյտենանտ Խալիլ-փաշային, որը մինչև այդ հանդիսանում էր Միջագետքյան ճակատում գործող Վեցերորդ բանակի հրամանատարը: Խալիլ-փաշայի տրամադրության տակ դրեցին նաև թուրքական ծառայության մեջ գտնվող մի քանի փորձված գերմանացի սպաներ: Որպես «Արևելք» զորքերի խմբավորման շտաբի պետ՝ Խալիլ-փաշայի մոտ գործուղվեց նաև գերմանական մայոր (թուրքական ծառայության փոխգնդապետ) Է. Փարաքենը, որը մինչ այդ եղել էր Վեցերորդ բանակի շտաբի պետը: 1918 թ. հուլիսի կեսերին Խալիլ-փաշան Փարաքենի հետ միասին Ստամբուլից մեկնեցին Ալեքսանդրոպոլ, որտեղ ընդունելով «Արևելք» բանակային խմբավորման հրամանատարությունը՝ Խալիլ-փաշան տեղակայեց իր շտաբը:

Բաքվի դեմ ռազմական գործողությունների հետ միաժամանակ 1918 թ. հունիսին թուրքական գլխավոր հրամանատարությունը պատրաստություններ էր տեսնում դեսանտ հանելու ափխազական ծովափում՝ Սուխումի մոտ: Թուրքական պաշտոնական շրջանները և երիտթուրքական մամուլը այդ օպերացիան արդարացնում էին Ափխազիայի բնակչության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ «բոլշևիկյան դաժանություններից»:

Դեսանտային օպերացիայի իրականացումը դրվեց Երրորդ բանակի հրամանատար Էսադ-փաշայի վրա: Օպերացիայի մասնակիցների մեջ մեծ թիվ էին կազմելու այսպես կոչված մուհաջիր-ասկեր-

ները, այսինքն՝ այն աբխազները, որոնք ժամանակին տեղափոխվել էին Թուրքիա, կամ նրանց ժառանգորդները: Նրանցից կազմված անկանոն ջոկատների հրամանատար նշանակվեց Թուրքական բանակի գնդապետի աստիճան ունեցող Ջեմալ-բեյ Մարշանիան:

1918 թ. հունիսի 27-ին Թուրքական անկանոն ջոկատները առագաստանավերով մոտեցան ափխազական ծովափին և դեսանտ հանեցին: Նրանց հանձնարարված էր շարժվել դեպի Սուխում: Սակայն ճանապարհին Թուրքական դեսանտը հանդիպեց գեներալ Մազնիևի հիանալի զինված ու հանդերձավորված զորքերի հետ և կրեց ջախջախիչ պարտություն: 1918 թ. օգոստոսի կեսերին վրացական մենշևիկների զորքերը փոխգնդապետ Տուխարելիի և գեներալ Մազնիևի հրամանատարությամբ կատարելապես ջախջախեցին ու ցրեցին Թուրքական դեսանտային ուժերի մնացուկներին: Այդպիսով, երիտթուրքերի կողմից Ափխազիայի գրավման ձեռնարկը ավարտվեց կատարյալ ձախողմամբ:

Մինչդեռ 1918 թ. հունիսի վերջերին շարունակվում էին մարտերը Բաքվին տիրանալու համար: Գնալով Թուրքական զորքերը ավելացնում էին իրենց ճնշումը: Իսկ Բաքվի պաշտպանների դրությունը օրեցոր վատանում էր: Քաղաքում սննդամթերքն ու ջուրը չէր բավարարում, լայն տարածում գտան վարակիչ հիվանդությունները: Բաքվի վրա կախված սպառնալիքը գնալով մեծանում էր: Քաղաքի պաշտպանները թշնամու դեմ կռվում էին անօրինակ խիզախությամբ: Հայկական կամավորական ազգային զորամասերը, որոնցից մեկի հրամանատարն էր Համազասպը, ցուցադրում էին հերոսության ու անվեհերության բացառիկ օրինակներ:

Ձգտելով քայքայել ու ցրել Բաքվի կոմունայի զինված ուժերի կազմի մեջ մտնող հայկական զորամասերը և դրանով իսկ ապահովել Բաքվի գրավումը, վկայակոչելով Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև 1918 թ. հունիսի 4-ին կնքված «Հաշտության և բարեկամության մասին» Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածը՝ Թուրքական կառավարությունը պահանջեց, որ ճշտիվ կատարվի պայմանագրի այդ կետը, որը նախատեսում էր հետևյալը. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագրի ստորագրումից հետո Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը, ինչպես և ապահովել, որ այդ էվակուացումը առիթ չտա որևէ ընդհարման»:

Սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը և

խորհրդարանը պատասխանեցին երիտթուրքական կառավարությանը և Կովկասում գործող թուրքական զորքերի հրամանատարությանը, որ Բաքվում գործող հայկական ստորաբաժանումները անվերահսկելի են Հայաստանի Հանրապետության կառավարության համար, քանի որ նրանք մաս են կազմում Բաքվի խորհրդային իշխանության՝ Կոմունայի զինված ուժերին:

Բաքվի չուրջը օղակը գնալով սեղմվում էր: Թուրքական գլխավոր հրամանատարությունը անընդհատ զորքերի համալրումներ էր ուղարկում գործող բանակին: Մինչդեռ Մոսկվայի կողմից Բաքվի կոմունային ցուցաբերված աջակցությունը բավարար չափերի չէր հասնում, հետևաբար և արդյունավետ չէր:

1918 թ. օգոստոսի սկզբին թուրքական հրամանատարությունը զորքեր ուղարկեց Ղարաբաղ, որտեղ տեղի էին ունենում հայ-ադրբեջանական ընդհարումներ: Թուրքական կանոնավոր զորքերի կողմից Ղարաբաղի «խաղաղեցումը» ուղեկցվում էր հայ բնակչության զարհուրելի կոտորածներով: Բազմաթիվ հայկական գյուղեր ու բնակավայրեր կրակի մատնվեցին և ոչնչացվեցին: Թուրքական պատժիչ ջոկատները էթնիկական զտման էին ենթարկում Ղարաբաղի բնակչությանը, աշխատելով երկրամասը «սրբել-մաքրել» հայ բնակչությունից:

1918 թ. հուլիսի 31-ին, Բաքվի սովետի նիստում, Ժողովրդական կոմիսարների խորհուրդը վայր դրեց իր լիազորությունները: Դա նշանակում էր Բաքվի խորհրդային իշխանության անկումը:

1918 թ. օգոստոսի 10-ին բոլշևիկների Բաքվի կազմակերպության անլեգալ կոնֆերանսում որոշում ընդունվեց այն մասին, որ բոլշևիկյան կուսակցությունը գնում է ընդհատակ, իսկ սովետական զինված ուժերը էվակուացվում են Աստրախան: Դրանից հետո օգոստոսի 13-ին լույս 14-ին Բաքվի կոմունայի անդամները և պատասխանատու աշխատողները, ինչպես նաև կոմունայի զորքերը, երբ 17 չոգենավերով ուղղություն էին վերցրել դեպի Աստրախան, Բաքվում կոմունային փոխարինած նոր իշխանությունը՝ այսպես կոչված «Յենտրոկասպիի դիկտատուրայի» կառավարությունը կալանքի ենթարկեց նավերը, կոմունայի անդամներին ձերբակալեց և զինաթափ արեց նրա զինվորներին: Այդ կառավարությունը անմիջապես Բաքու հրավիրեց անգլիացիներին:

Դրանից հետո թուրքերի դեմ Բաքվի ռազմաճակատում մնացին միայն հայկական զորամասերը: Նրանք թշնամու դեմ մարտնչեցին մինչև վերջ՝ մինչև 1918 թ. սեպտեմբերի 15-ը, երբ թուքական զորքերի կողմից Բաքուն գրավվեց:

Թուրքական հետախուզական տվյալների համաձայն՝ Բաքուն պաշտպանող հայկական զորամասերի թվաքանակը կազմում էր 18 հազար մարդ: Բաքվի պաշտպանությանը մասնակցում էր նաև բրիտանական գեներալ Դենստերվիլի փոքրաքանակ՝ ընդամենը 1200 զինվորներից բաղկացած ջոկատը և ցարական գեներալ Լ. Բիչերախովի 1500-ոց զորամասը:

Սեպտեմբերի 12-ին Խալիլ-փաշան հրաման տվեց գրավելու Բաքուն: Դեռևս մինչև քաղաքի վրա գրոհի սկսվելը, անգլիացիներն ու Ցենտրոկասպիի կառավարությունը սեպտեմբերի 14-ի երեկոյան հապշտապ նավերով հեռացան Բաքվից. անգլիացիները Էնզելի (Իրան), իսկ Ցենտրոկասպիի անդամները դեպի Պետրովսկ նավահանգստի կողմը:

Թուրքական գրոհը սկսվեց 1918 թ. սեպտեմբերի 14-ին, լույս 15-ին: Մի քանի ժամից հետո Խալիլ-փաշայի շտաբը ներկայացավ Բաքվի բնակչության պատվիրակությունը Խ. Մ. Եվանգուլովի* գլխավորությամբ, որը հաղորդեց քաղաքի հանձնման մասին: Սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը մուսավաթական հրոսակախմբերի հետ մեկտեղ ներխուժեցին Բաքու: Քաղաքի հայկական թաղամասերում սկսվեց անասելի խուճապ: Թուրքական զորքերը և նրանց հետ գործող մուսավաթական բանդաները, ինչպես նաև քաղաքային մուսուլմանական խաժամուժը երեք օր շարունակ կազմակերպեցին հայ բնակչության արյունոտ ջարդեր, որին զոհ գնացին 30-35 հազար խաղաղ բնակիչներ: Փողոցները լցված էին հոշոտված դիակներով: Հայերի տներն ու ունեցվածքը ենթարկվեց ահավոր կողոպուտի:

Բաքվի գրավումից հետո թուրքական զորքերը Ադրբեջանի մուսավաթական զորամասերի հետ համատեղ ձեռնամուխ եղան Լեռնային Ղարաբաղի ռազմակալմանը: 1918 թ. սեպտեմբերի 25-ին նրանց կողմից գրավվեց Շուշին: Կրկին ծայր առան հայ բնակչության կոտորածներ ու կողոպուտ:

Ջեմիլ Ջավիդ-բեյի թուրքական զորամասերի կազմից մի գումարտակ փորձեց արևելյան կողմից շարժվել դեպի Զանգեզուր, սակայն ջախջախվեց զորավար Անդրանիկ Օզանյանի կողմից: Այնուամենայնիվ թուրք-մուսավաթական ուժերին չհաջողվեց իրենց հսկողությունը սահմանել ողջ Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա՝ շնորհիվ այն բանի, որ Ղարաբաղի հայությունը կորովի դիմադրություն ցույց տվեց զավթիչներին:

---

* Հետագայում Խ. Մ. Եվանգուլովը (Եվանգուլյան) ծառայում էր Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում:

Թուրքերի նվաճողական քաղաքականության հաջորդ թիրախը լինելու էր Հյուսիսային Կովկասը: Դեռևս 1918 թ. ամռանը Էնվեր փաշան խոսում էր այն մասին, որ ինքը ցանկանում է Կովկասում ստեղծել «մուսուլմանական ուժեղ բլոկ», որը պատնեշ հանդիսանար Թուրքիայի համար «սարսափելի թշնամու», այսինքն Ռուսաստանի դեմ: Այդ նույն տեսակետին էին նաև երիտթուրքական մյուս պարագլուխները՝ Թալաաթը և Ջեմալը:

1918 թ. մայիսից մինչև հոկտեմբեր երիտթուրքերը փորձում էին Հյուսիսային Կովկասը նվաճել քողարկված ինտերվենցիայի և քայքայիչ գործողությունների միջոցով, այն հաշվով, որ խորհրդային Ռուսաստանին պարտադրեն ճանաչելու Հյուսիսային Կովկասի անկախությունը:

Քանի որ այդ պլանը հաջողությամբ չպսակվեց, Բաքվի գրավումից հետո թուրքական հրամանատարությունը որոշեց կանոնավոր զորքերի միջոցով նվաճել ողջ Հյուսիսային Կովկասը և առաջին հերթին նրա արևելյան մասը՝ Դաղստանը: Թուրքական զորքերի հրամանատարության առջև Էնվեր փաշայի կողմից խնդիր դրվեց՝ թափանցել Հյուսիսային Կովկաս և այնտեղ գործելով թուրքական գործակալության հետ սերտ համագործակցությամբ, ձևավորել զինվորական ստորաբաժանումներ, որոնք թուրքական կանոնավոր բանակի համար ծառայելու էին որպես օժանդակ ուժեր:

1918 թ. սեպտեմբերի 20-ին Նուրի փաշան հրամայեց Ադրբեջանից բանակը շարժել դեպի Հյուսիսային Կովկաս: Նույն թվականի հոկտեմբերին 15-րդ հետևակային դիվիզիայի զորամասերը գեներալ Յուսուֆ Իզզեթ-փաշայի հրամանատարությամբ ներխուժեցին Դաղստանի տարածքը: Հոկտեմբերի 6-ին թուրքական զորքերը գրավեցին Դերբենտը: Հոկտեմբերի 23-ին նրանք հայտնվեցին Թեմիրխանշուրայում (ներկայումս Բույնակսկ): Նոյեմբերի 8-ին թուրքերը գրավեցին Պետրովսկ նավահանգիստը:

Սակայն այդ օրերին թուրքական միլիտարիզմն արդեն գտնվում էր հոգեվարքի մեջ: Միջագետքյան և Սիրիա-Պաղեստինյան ճակատներում օսմանյան զորքերը կրում էին խոշոր պարտություններ: Նեղուցների գոտու և Ստամբուլի համար ստեղծվել էր ահարկու սպառնալիք, քանի որ անգլո-ֆրանսիական դաշնակիցները մշակել էին Բալկանյան թերակղզու կողմից ներխուժելու պլան: Արդեն 1918 թ. հոկտեմբերի 2-ին թուրքական գլխավոր հրամանատարությունը սկսեց զորքերը հանել Անդրկովկասից և կենտրոնացնել մայրաքաղաքը պաշտպանող Չաթալջիի պաշտպանական գծի երկայնքով:

1918 թ. հոկտեմբերի 5-ին Թալաաթ փաշայի կառավարությունը որոշեց թուրքական բոլոր զորքերը դուրս բերել Կովկասից: «Արևելք» բանակային խմբավորման հրամանատար Խալիլ-փաշան նույն օրը հայտնեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որ ինքը արդեն հրաման է տվել թուրքական զորքերը դուրս բերել Լոռիի շրջանից (Բորչալուի գավառ) և Ղարաքիլիսայից: Հոկտեմբերի 12-ին սկսվեց զորքերի ընդհանուր դուրս բերումը Վրաստանից:

1918 թ. հոկտեմբերի 13-ին Թալաաթ փաշայի կառավարության անկումից հետո ստեղծվեց նոր կառավարություն մարշալ Ահմեդ Իզզեթ-փաշայի գլխավորությամբ, որը հոկտեմբերի 24-ին հրամայեց զորքերը դուրս բերել Կովկասի տարածքից՝ մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված գիծը: Հոկտեմբերի 22-ին Քյազիմ Կարաբեքիր փաշան հրաման էր ստացել թուրքական զորքերը Իրանական Ադրբեջանից դուրս բերելու վերաբերյալ:

Այսպիսով, երիտթուրքերի կովկասյան արկածախնդրությունը ավարտվեց կատարյալ ձախողմամբ:

Դեռևս 1918 թ. հունվարի 21-ին Անտանտի Բարձրագույն ռազմական խորհուրդը որոշում էր ընդունել Ֆրանսիայում, Իտալիայում և Բալկաններում մղել միայն պաշտպանողական մարտեր և «վճռական հարձակում գործել Թուրքիայի վրա՝ թուրքական բանակի ոչնչացման և թուրքերի դիմադրությունը խորտակելու համար»: Ողջ 1918 թ. առաջին կեսին Գերմանիային պահելով մշտական լարվածության վիճակում, Անգլիան և Ֆրանսիան միաժամանակ սկսեցին բոլոր ճակատներում՝ Միջագետքյան, Սիրիա-Պաղեստինյան և վերջապես Բալկաններում ուժեղացնել ճնշումը Թուրքիայի նկատմամբ: 1918 թ. հոկտեմբերի կեսերին ունենալով կատարյալ առավելություն, անգլիական զորքերը հարձակման անցան Մոսուլի ուղղությամբ: Հարձակումից հետո մեկ շաբաթ անց նրանք թուրքական Վեցերորդ բանակին մատնեցին ջախջախիչ պարտության և դուրս եկան Մոսուլի վիլայեթի սահմանների մոտ: Թուրքական Վեցերորդ բանակը դադարեց գոյություն ունենալուց:

Անգլիացիները թուրքերին 1918 թ. սեպտեմբերին ջախջախիչ պարտությունների սկսեցին մատնել նաև Սիրիա-Պաղեստինյան ճակատում: Այդ ժամանակ անգլիական զորքերը հաշվվում էին մոտ 100 հազար, որոնց դեմ նշված ճակատում գործում էր 30 հազար զինվորներից ու սպաներից բաղկացած թուրքական բանակը: Ընդ որում, այդ բանակի թվաքանակը մշտապես նվազում էր հակառակորդի հետ մարտերի, ինչպես նաև հիվանդությունների պատճառով, որը

հետևանք էր զինվորների սիստեմատիկ թերսնման: 1918 թ. ամռանը թուրքական զինվորներին հնձում էր նաև մալարիան ու դիզենտերիան: Թուրքական բանակի երեք քառորդը զուրկ էր սպիտակեղենից, զինվորների մեծ մասը ոտաբոբիկ էր: Կիզիչ շոգի պայմաններում թուրք զինվորները հագնվում էին մահուդե համազգեստ: Ուստի նրանք զբաղվում էին դիակապտությամբ. մեռած անգլիական զինվորների վրայից հանում էին նրանց սպիտակեղենը և համազգեստը: Թուրքական բանակը անգլիական զորքերին մեծապես զիջում էր նաև իր տեխնիկական հագեցվածությամբ և սպառազինությամբ:

1918 թ. սեպտեմբերի 19-ին, առավոտյան ժամը 4-ին, գեներալ Ալլենբիի անգլիական զորքերը անցան հարձակման, նույն օրը ճեղքեցին թուրքական ճակատը Հորդանան գետի և Միջերկրական ծովի միջև ընկած հատվածում: Մինչև սեպտեմբերի 25-ը անգլիական զորքերը ջախջախեցին ու ցրիվ տվեցին թուրքական Յոթերորդ և Ութերորդ բանակները: Թուրքերին ուժգին հարվածներ էին հասցնում նաև ապստամբած արաբները: Սեպտեմբերի 30-ին վերջնականապես ջախջախվեց նաև թուրքական Չորրորդ բանակը: 1918 թ. հոկտեմբերի 1-ին անգլիական զորքերը գրավեցին Դամասկոսը, հոկտեմբերի 6-ին՝ Բեյրութը, հոկտեմբերի 26-ին Հալեպը: Յիլդիրիմ բանակային խմբավորումը ամբողջապես ոչնչացվեց: Անգլիացիները գերի վերցրին 75 հազար թուրքական զինվորների ու սպաների:

Այսպիսով, 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Միջագետքյան և Սիրիա-Պաղեստինյան ճակատներում անգլիացիների իրականացրած ռազմական գործողությունների հետևանքով թուրքական բանակը կրեց խոշոր պարտություններ: Դաշնակիցների զորքերը գրավեցին Միջագետքի մեծ մասը, ողջ Պաղեստինը և համարյա ամբողջ Սիրիան:

Էգեյան և Միջերկրական ծովերում անբաժան կերպով տիրապետում էր անգլո-ֆրանսիական նավատորմը, որը շրջափակել էր Դարդանելի մուտքը և Էգեյան ու Միջերկրական ծովերի առափնյա շրջանները: Երբ 1918 թ. հունվարի 20-ին «Գյոբենը» և «Բրեսլաուն», ինչպես նաև թուրքական ռազմական նավատորմի մի քանի նավեր փորձեցին Դարդանելից դուրս գալ Էգեյան ծով, նրանց մեծ մասը ոչնչացվեց, «Գյոբենը» մի քանի անգամ վնասվեց ականների պայթյունից, իսկ «Բրեսլաուն» կործանվեց:

Օդում ունենալով կատարյալ գերակշռություն, անգլիացիները սկսեցին պարբերաբար ռմբակոծել Ստամբուլը՝ առաջ բերելով մեծ խուճապ:

1918 թ. սեպտեմբերի 29-ին Բուլղարիան Սալոնիկում Անտանտի

պետությունների հետ համաձայնագիր կնքեց՝ ընդունելով պատերազմում իր պարտությունը: Դրանից հետո Թուրքիան զրկվեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ կապեր ունենալու, հետևաբար նրանցից օգնություն ստանալու հնարավորությունից: Երիտթուրքական կառավարությունը հայտնվել էր անելանելի վիճակում: 1918 թ. հոկտեմբերի 7-ին իթթիհատի ղեկավարությունը անվստահության քվե տվեց կառավարությանը, որից հետո հոկտեմբերի 9-ին Թալաաթ փաշան հրաժարական տվեց մեծ վեզիրի պաշտոնից: 1918 թ. հոկտեմբերի 14-ին մեծ վեզիր նշանակվեց Ահմեդ Իզզեթ փաշան, որն անմիջապես ձևավորեց նոր կառավարարություն: Նա հայտարարեց որ «պատերազմը Անգլիայի դեմ հանցագործություն էր»:

Նոր կառավարության ձևավորման օրերին, 1918 թ. հոկտեմբերի 14-ից 19-ը, տեղի ունեցավ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության համագումարը, որը նրա պատմության մեջ վերջինն էր: Համագումարում Մեհմեդ Թալաաթ փաշան ստիպված էր հայտարարելու, որ «Մեր քաղաքականությունը պարտություն կրեց: Դրա հետևանքով հնարավոր չէ, որ մենք որևէ ձևով պահպանենք իշխանությունը»: Այսպիսով, «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը ինքնալիկվիդացվեց՝ դադարեցնելով իր քաղաքական գոյությունը: Նրա ղեկավարներ Էնվերը, Թալաաթը, Ջեմալը, Բեհաեդդին Շաքիրը և մյուսները չուտով փախան արտասահման: (Թալաաթը և Բեհաեդդին Շաքիրը հետագայում սպանվեցին հայ վրիժառուների կողմից Բեռլինում 1921 թ., Ջեմալը Թիֆլիսում՝ 1922 թ., իսկ Էնվերը՝ 1922 թ. Բուխարայում, որտեղ նա պայքարում էր խորհրդային իշխանության դեմ):

Նոր կառավարությունը դիմեց դաշնակիցներին, խնդրելով կնքել զինադադար: Անգլիան, որպես թուրքական գործերում առավել շահագրգռված պետություն, բոլոր դաշնակիցների անունից իր վրա վերցրեց զինադադարի կնքման գործը և 1918 թ. հոկտեմբերի 27-ին պաշտոնապես մտավ բանակցությունների մեջ: Դրանք ընթանում էին անգլիացիների կողմից գրավված Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում խարիսխ նետած անգլիական ռազմանավի վրա: Բանակցություններում թուրքական պատվիրակությունը գլխավորում էր ծովային մինիստր Հյուսեին Ռաուֆ-բեյը: Պատվիրակության կազմի մեջ մտնում էին նաև արտաքին գործերի մինիստրի տեղակալ Ռեշադ Հիքմեթ-բեյը և գլխավոր շտաբի փոխգնդապետ Սաադուլլա-բեյը: Դաշնակիցներին ներկայացնում էր անգլիական փոխծովակալ Սոմերսեթ Քալթորփը, որն այդ ժամանակ զբաղեցնում էր բրիտանական Միջերկրածովյան նավատորմի գլխավոր հրամանա-

տարի պաշտոնը, իսկ հետագայում նշանակվեց Ստամբուլում բրիտանական գլխավոր կոմիսար:

Քալթորփի կողմից Թուրքական պատվիրակությանը ներկայացված զինադադարի պայմանները ծանր էին: Երբ այդ պայմանների մասին տեղեկացրին սուլթան Մեհմեդ VI Վահիդեդդինին, վերջինս ասաց. «պետք է ընդունենք, որքան էլ որ դրանք ծանր լինեն»:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի նավահանգստում անգլիական «Ագամեմնոն» հածանավի վրա ստորագրվեց զինադադար, որը պատմության մեջ է մտել Մուդրոսի զինադադար անունով: Դա նշանակում էր Թուրքիայի լրիվ կապիտուլյացիան Անտանտի դաշնակիցների առջև:

Ըստ Մուդրոսի զինադադարի՝ Թուրքիան պետք է բաց աներ Սև ծովյան նավահանգիստները և թույլ տար, որ դաշնակիցների զինված ուժերը գրավեն նեղուցների մոտ կառուցված ամրությունները, ինչպես նաև թույլատրեր, որ դաշնակիցների նավատորմը մտներ Սև ծով (հոդ. 1): Միաժամանակ նա դաշնակիցների տրամադրության տակ պետք է դներ իր բոլոր նավահանգիստներն ու խարսխակայանները՝ արգելելով, որ դրանցից օգտվեն Քառյակ դաշինքի պետությունները: Ծովերի վրա իր ունեցած ականների և այլ արգելապատնեշների մասին Թուրքիան պետք է դաշնակիցներին տրամադրեր լրիվ տեղեկատվություն և դաշնակիցների պահանջի դեպքում պետք է նրանց ամեն տեսակի աջակցություն ցույց տար դրանք ոչնչացնելու համար: Թուրքիան պետք է իր դաշնակիցներին հանձներ իր ողջ ռազմա-ծովային նավատորմը (հոդ. 6): Նա պարտավորվում էր նաև դաշնակիցներին հանձնել ռազմա-ծովային զինանոցները (հոդ. 9): Թուրքիայի կապի միջոցները (հոդ. 12), վառելիքային (հոդ. 14) և սննդամթերքների (հոդ. 21) բոլոր ռեսուրսները դրվում էին դաշնակիցների հսկողության տակ: Թուրքիայի ռազմագերիները մնում էին դաշնակիցների տրամադրության տակ (հոդ. 22) այն դեպքում, երբ Անտանտի երկրների ռազմագերիները առանց որևէ պայմանի պետք է հանձնվեին դաշնակիցներին (հոդ. 4):

Թուրքիան պետք է խզեր իր բոլոր կապերը Քառյակ դաշինքի երկրների հետ (հոդ. 23), բայց նրան թույլատրվում էր առանց որևէ արգելքի թույլ տալ, որ իր տարածքից դուրս բերվեն Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի զինված ուժերը: Ինչ վերաբերում է Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հպատակ քաղաքացիական անձանց, ապա Թուրքիան պարտավորվում էր մեկամսյա ժամկետում նրանց բոլորին արտաքսել իր տարածքից (հոդ. 19):

Օսմանյան կայսրությունը պետք է անհապաղ զորացրեր իր ցա-

մաքային բանակները, մշտական զինվորական ծառայության մեջ թողնելով միայն այն ստորաբաժանումները, որոնք անհրաժեշտ էին իր սահմանները պաշտպանելու, ներքին կարգ ու կանոնը պահպանելու համար: Մշտական ռազմական ծառայության մեջ գտնվող ստորաբաժանումների չափը պետք է հետագայում որոշվեր դաշնակիցների կողմից Թուրքական կառավարության հետ կնքված համաձայնագրով (հոդ. 5):

Թուրքիան պետք է առանց հետաձգելու իր բոլոր զորքերը դուրս բերեր հյուսիս-արևմտյան Իրանից, ինչպես նաև դաշնակիցների կողմից սահմանված ժամկետներում էվակուացներ իր զորքերը Անդրկովկասից (հոդ. 11), ուր մուտք էին գործել դաշնակիցների զորքերը: Հիջազում, Ասիրում, Եմենում, Սիրիայում ու Միջագետքում տեղակայված Թուրքական զորամասերը պետք է հանձնվեին դաշնակիցներին: Կիլիկիայից նույնպես Թուրքիան պետք է դուրս բերեր իր զորքերը, ի բացառյալ այն ստորաբաժանումների, որոնք անհրաժեշտ էին ներքին կարգը պահպանելու համար (հոդ. 16):

Թուրքիան պետք է դաշնակիցներին հանձներ սպառազինության, զինամթերքի, զինվորական հանդերձանքի բոլոր պաշարները (հոդ. 20), ընդ որում, հատուկ չեշտվում էր, որ արգելվում է զինվորական գույքի որևէ ձևով ոչնչացումը (հոդ. 18): Դաշնակիցներին իրավունք էր տրվում գրավել Թուրքիայի ցանկացած ռազմավարական կետ այն դեպքում, երբ «ստեղծվեր այնպիսի վիճակ, որը սպառնալիք հանդիսանար դաշնակիցների անվտանգության համար»: Անտանտի պետություններին իրավունք էր տրամադրվում նաև իրենց հսկողությունը սահմանել Թուրքիայի ողջ երկաթուղային ցանցի նկատմամբ, ներառյալ նաև Թուրքական զորքերի կողմից Անդրկովկասում ռազմակալման ենթարկված մասերի երկաթուղային գծերը: Հատուկ նշվում էր, որ դաշնակիցներին իրավունք է տրվում ռազմակալման ենթարկելու Բաթումը և Բաքուն, որոնք այն ժամանակ դեռ գտնվում էին Թուրքական գրավման վիճակում (հոդ. 15), ինչպես նաև իրականացնելու Տավրոսի լեռնաշղթայով անցնող թունելների պաշտպանության գործը (հոդ. 10): Վերջապես դաշնակիցներին իրավունք էր տրվում հայկական վեց վիլայեթներում գրավել ցանկացած տարածք, եթե այնտեղ ծագեն անկարգություններ (հոդ. 24):

Թեև Մուդրոսի զինադադարի պայմանները, ինչպես նշվեց վերևում, չափազանց ծանր էին Օսմանյան կայսրության համար, սակայն այնուամենայնիվ այդ պայմանագիրը հնարավորություն էր տալիս Թուրքիային ոչ միայն անխաթար կերպով պահպանելու իր պետական գոյությունը, այլև նույնիսկ շարունակելու դիմադրությու-

նը դաշնակիցների նկատմամբ: Բավական է ասել, որ Մուդրոսի զինադադարը չէր նախատեսում Թուրքիայի ողջ տարածքի ռազմակալում դաշնակիցների կողմից: Այնուհետև Թուրքիայից անջատվում էին լոկ նրա արաբական տիրույթները և Կիլիկիան, որոնք 1916 թ. դաշնակիցների միջև կնքված Սայքս-Պիկոյի գաղտնի պայմանագրով պետք է անցնեին նրանց տիրապետության տակ: Իսկ բուն Փոքր Ասիայի բաժանման ու մասնատման մասին խոսք անգամ չկար: Այն մնում էր թուրքական ինքնիշխանության ներքո, ընդ որում, դաշնակիցները իրավունք չունեին միջամտելու Թուրքիայի ռազմակալման չենթարկված մասերի քաղաքացիական վարչության գործերին: Ավելին, այնպիսի կարևոր շրջաններ, ինչպիսիք էին սևծովյան նեղուցների գոտին և հենց ինքը՝ մայրաքաղաքը, մնում էին թուրքական վարչության հսկողության տակ:

Վերջապես, թուրքական կառավարությանը իրավունք էր տրվում ինչ-որ չափով պահպանելու իր ցամաքային զինված ուժերը, որոնց մեծ մասը փաստորեն զինաթափման ենթակա չէր:

Մուդրոսի զինադադարը, որին անհամբեր սպասում էր ողջ հայությունը, շրջանցում ու լռության էր մատնում Հայկական հարցը: Դաշնակիցները, որոնք մինչ այդ տևական ժամանակամիջոցի ընթացքում թուրքական կառավարության առջև անընդհատ բարձրացնում էին Արևմտյան Հայաստանի հայ բնակչության համար բարենորոգումներ իրականացնելու հարցը, Մուդրոսի պայմանագրում ոչ մի բավարար նախազգուշական միջոցներ ձեռք չէին առնում հայերի անվտանգությունն ապահովելու համար: Ուրիշ ճակատներում ջախջախված ու պարտված Թուրքիան մնում էր հայկական վեց վիլայեթների փաստական տերը: Տեղի չունեցավ Արևմտյան Հայաստանի հողերի ազատագրում: Զինադադարը չհանգեցրեց Արևմտյան Հայաստանում թուրքական զորքերի իրական զինաթափմանը և թուրքերը հնարավորություն ստացան վերազինվելու և ի վերջո հենց հայկական նահանգներում սկսեց զարգանալ թուրք ազգայնականների՝ քեմալականների շարժումը:

Մուդրոսի զինադադարը կնքվելու հաջորդ օրը՝ 1918 թ. հոկտեմբերի 31-ին, կեսօրին, Թուրքիայում բոլոր ռազմաճակատներում ռազմական գործողությունները դադարեցվեցին: Օսմանյան կայսրությունը աշխարհամարտում կրեց պարտություն:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

745 թ. – Թյուրքական խաքանության (խաղանաթի) կործանումը:

X դարում օղուզա-թուրքմենական քընըք ցեղից Սելջուկի բարձրացումը, որը հանդիսացել է Սելջուկյան դինաստիայի (1038–1194) հիմնադիրը:

1017 թ. – օղուզների զանգվածային գաղթեր դեպի Իրան:

1038–1063 թթ. – Սելջուկյան առաջին սուլթան Թողրուլ Բեկի կառավարման շրջանը:

1063–1072 թթ. – Սելջուկյան սուլթան Ալփ Արսլանի կառավարման տարիները:

1068–1071 թթ.– Բյուզանդիայի կայսր Ռոմանոս IV Դիոգենեսի կառավարման շրջանը:

1071 թ. օգոստոսի 19-ին – Մանազկերտի ճակատամարտը:

1073 թ. – Սելջուկյան սուլթան Սուլեյման իբն Քութալմըշի (Ղութալմըշ) կողմից Փոքր Ասիայի նվաճմանը ձեռնամուխ լինելը:

1074 թ. – Հռոմի Գրիգորիոս VII պապի կոչը քրիստոնյա աշխարհին դեպի Արևելք խաչակրաց արշավանք կազմակերպելու մասին:

1077 թ. – Ռումի (Իկոնիայի) սուլթանության ծնունդը:

1072–1092 թթ. – Սելջուկյան սուլթան Մելիք շահ I-ի կառավարումը:

1081–1118 թթ. – Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս I Կոմնենոսի կառավարման շրջանը:

1085 թ. – Ռումի սելջուկյան պետության կողմից Իզմիրի (Զմյուռնիայի) գրավումը:

XI դ. 60–70-ական թվականներին Փոքր Ասիայում թյուրքական ցեղերի մի քանի պետական կազմավորումների (Դանիշմենդների կամ Դանեշմանդյանների, Արթուկիների և այլն) ստեղծումը:

1088 թ. – Դորոստոլի մոտ պեչենեգների տարած հաղթանակը Բյուզանդիայի նկատմամբ:

1184 թ. – Դանեշմանդյանների պետությունը դադարում է գոյություն ունենալուց:

1090–1094 թթ. – բյուզանդական Ալեքսիոս I Կոմնենոս կայսեր դի-

մումները Հռոմի Ուրբանոս II պապին օգնության աղերսով ընդդեմ սելջուկների:

1096–1099 թթ. – Առաջին խաչակրաց արշավանքը:

1097 թ. – Խաչակիրների կողմից Ռումի սելջուկյան պետությանը ջախջախիչ պարտության մատնելը և նրանց Նիկեա (Իզնիք) մայրաքաղաքի գրավումը:

1116 թ. – Սելջուկյանների կողմից իրենց մայրաքաղաքը Նիկեայից Անատոլիայի Կոնիա կամ Իկոնիա քաղաքը տեղափոխելը, որից հետո այդ պետությունը սկսեց անվանվել Կոնիայի կամ Իկոնիայի սուլթանություն, որը հաճախ նախկինի պես անվանվում էր նաև Ռումի սուլթանություն:

XIII դ. 20–30-ական թվականներին Իկոնիայի սուլթանությունը հասնում է իր հզորության գագաթնակետին:

1219–1236 թթ. – Իկոնիայի սուլթան Ալա-էդ-դին Քեյ-Քուբաթ I կառավարման շրջանը:

1176 թ. սեպտեմբեր – Միրիոկեֆալոնի մոտ սելջուկների կողմից բյուզանդացիների նկատմամբ տարած հաղթանակը:

1204 թ. – Չորրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը և այն կողոպուտի ու ավերածության մատնելը:

1222 թ. – Սելջուկների կողմից դեպի Ղրիմ կազմակերպած արշավանքը և Սուդդեյի (Սուդակ) հունական գաղութի գրավումը:

1237–1245 թթ. – Սելջուկյան սուլթան Ղիյասեդդին Քեյխոսրև II-ի կառավարման շրջանը:

1239 թ. – Իկոնիայի սուլթանությունում Բաբա Իսհաքի ապստամբությունը:

1155–1227 թթ. – Չինգիզ խանի կառավարման տարիները:

1243 թ. գարնանը – Քյոսե դաղի ճակատամարտը: Մոնղոլների կողմից Իկոնիայի սուլթանության զորքերի գլխովին ջախջախումը:

1307 թ. – Իկոնիայի (Կոնիայի) կամ Ռումի սելջուկյան սուլթանության կործանումը:

XIII դ. վերջին Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում օսմանյան բեյության (բեյլիքի) առաջացումը:

1281 թ. – Օսմանյան բեյ Էրթողրուլի մահվան թվականը:

1258 թ. – Օսմանի ծննդյան տարեթիվը: Սրա անունով դինաստիան անվանակոչվել է Օսմանյան:

1291 թ. – Օսմանի կողմից Մելանգիյա (Գարաջահիսար) քաղաքի գրավումը բյուզանդացիներից և այն իր նստավայրի վերածումը:

1299 թ. – Օսմանյան բեյության դուրս գալը սելջուկյան սուլթանի գերիշխանությունից և Օսմանի կողմից սուլթան և փադիշահ տիտղոս-

ների ընդունումը: Ենիշեհիր քաղաքի հռչակումը որպես օսմանցիների աթոռանիստ: 1299 թ. ընդունված է համարել անկախ օսմանյան պետության գոյության սկիզբ:

***1302** թ. – Բաֆեոնի (Թուրքերեն՝ Կոյունհիսար) ճակատամարտում Բրուսայի բյուզանդական տեղապահի զորքերի ջախջախումը Օսմանի կողմից:*

***1305** թ. – Լևկեի մոտ ճակատամարտում բյուզանդացիների տարած հաղթանակը Օսմանի նկատմամբ:*

***1326** թ. – Օսմանի մահվան թվականը:*

***1324–1360** թթ. – Օրխանի բեյության տարիները:*

***1326** թ. – Օրխանի կողմից Բուրսայի (Բրուսա) գրավումը և այն օսմանցիների մայրաքաղաք հռչակումը:*

***1327** թ. – Օրխանի կողմից առաջին օսմանյան արծաթե դրամի՝ աքչեի հատումը:*

***1337** թ. – Օրխանի կողմից Նիկոմեդիա (Իզմիր) քաղաքի գրավումը:*

***1338** թ. – Օրխանի Օսմանյան զորքերի կրած պարտությունը բյուզանդացիներից Կոստանդնուպոլսի մոտ:*

***1345–1348** թթ. – Օրխանի որդի Սուլեյմանի կողմից խոշորամասշտաբ ռազմական գործողությունների վարումը Գալլիպոլի (Գելիբոլու) թերակղզում և Թրակիայում:*

***1352** թ. – Թուրքերի կողմից Գալլիպոլի թերակղզում ցիմպե ամրոցի գրավումը:*

***1347–1349** թթ. – Օսմանցիների կողմից Գերմիյանի և Զանդարլըի թյուրքական էմիրությունների նվաճումը:*

***1352** թ. – Թուրք-օսմանների կողմից սկսվում է Բալկանյան թերակղզու նվաճման գործը:*

***1354** թ. – Օրխանին հաջողվում է մոնղոլներից խլել Անկարան:*

***1329** թ. – Օրխանի կողմից յայա կոչվող հետևակային կանոնավոր զորամասերի ստեղծումը:*

***1360** թ. – Օրխանի հավանական մահվան թվականը:*

***1360–1389** թթ. – Օսմանյան սուլթան Մուրադ I «Հուդավենդիգյարի» գահակալության շրջանը:*

***1362** թ. – Օսմանցիների կողմից բուլղարական Ֆիլիպոպոլ (Պլովդիվ) քաղաքի գրավումը:*

***1365** թ. – Օսմանցիների կողմից Ադրիանոպոլիսը (Էդիրնե) իրենց մայրաքաղաք հռչակելը:*

***1371** թ. – Բուլղարական թագավոր Շիշմանի կողմից թուրքերի դեմ ռազմական գործողությունների ծավալումը:*

***1373** թ. – Մուրադ I որդի գահաժառանգ Սավջիի խռովությունը Թրակիայում՝ սուլթանական գահին տիրանալու նպատակով:*

XIV դ. 70-80-ական թվականներին թուրքական զորքերը Բալկաններում ավարտել էին բյուզադական բոլոր տիրույթների գրավումը:

***1389** թ. հունիսի 15-ին տեղի ունեցած Կոսովոյի ճակատամարտում օսմանցիները ջախջախիչ պարտության մատնեցին սերբերին:*

***1389-1402** թթ. - Սուլթան Բայազիդ I «Իլդիրիմի» գահակալության տարիները:*

***1389-1390** թթ. - Սուլթան Բայազիդ I-ի կողմից Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի Այդին, Սարուխան, Գերմիյան, Մենթեշե և Համիդ բեյությունների նվաճումը: Դրանով իսկ առաջին անգամ օսմանցիները դուրս էին գալիս Միջերկրական ծովի ափերը:*

***1392** թ. - Կարաման բեյլիքի ռազմակալումը օսմանցիների կողմից:*

***1395** թ. - Բուլղարական Վիդին վերջին չնվաճված քաղաքի գրավումը Բայազիդ I-ի կողմից:*

***1394** թ. - Օսմանյան զորքերի ներխուժումը Հունաստան:*

***1396** թ. սեպտեմբերի 25-ին Բուլղարական Նիկոպոլ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանցիների կողմից եվրոպական խաչակիր-ասպետներին ջախջախիչ պարտության մատնելը:*

***1400** թ. - Բայազիդ I-ի կողմից Կոստանդնուպոլսի պաշարումը: Քաղաքի գրավման փորձի ձախողումը:*

***1386** թ. Լենկ Թեմուրի (1336-1405) կողմից անատոլիական բեյերի միացյալ զորքերի ջախջախումը Երզնկայի (Էրզինջան) մոտ և Էրզրումի գրավումը (1387 թ.):*

***1402** թ. հուլիսի 25-ին Անգորայի (Անկարա) մոտ տեղի ունեցած ճակատամարտում Լենկ Թեմուրի կողմից օսմանյան բանակի ջախջախումը և Բայազիդ I-ի գերեվարումը:*

***1413-1421** թթ. - սուլթան Մեհմեդ I Չելեբիի գահակալության շրջանը:*

***1421-1444 և 1446-1451** թթ. - սուլթան Մուրադ II-ի գահակալության տարիները:*

***1422** թ. - սուլթան Մուրադ II-ի կողմից Կոստանդնուպոլսի պաշարումը: Քաղաքի գրավման հերթական փորձի ձախողումը:*

***1424** թ. - Բյուզանդական կայսրը իրեն ճանաչում է որպես օսմանյան սուլթանի հարկատու:*

***1439** թ. - Ֆլորենտինյան ունիայի կնքումը հունական (ուղղափառ) և լատինական (կաթոլիկ) եկեղեցիների միավորման մասին:*

***1444** թ. նոյեմբերի 10-ին - Վառնայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանցիները պարտության են մատնում Տրանսիլվանիայի վոյեվոդ Յանոշ Հունյադիի զորքերին: Վառնայի աղետը մեծ արձագանք է գտնում Եվրոպայում:*

***1448** թ. հոկտեմբերի 17-19-ին - Կոսովոյի ճակատամարտում օս-*

մանյան զորքերի խոշոր հաղթանակը հունգարացիների նկատմամբ:

1444–1446, 1451–1481 *թթ. սուլթան Մեհմեդ II «Ֆաթիհի» կառավարման շրջանը:*

1453 *թ. մայիսի 29-ին – Թուրքերի կողմից Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսի գրավումը:*

1467 *թ. – Օսմանցիների կողմից Տրապիզոնի կայսրության գրավումը:*

1475 *թ. – Թուրքերի կողմից Ղրիմի նվաճումը:*

1461 *թ. – սուլթան Մեհմեդ II-ի հրամանագրով Կ. Պոլսում XIV դարից գոյություն ունեցող Հայոց հոգևոր առաջնորդության վերածումը Հայոց պատրիարքության: Հովակիմ եպիսկոպոսը Հայոց առաջին պատրիարք:*

1441 *թ. – Հայոց կաթողիկոսության վերստին տեղափոխումը Սսից Էջմիածին:*

1456 *թ. հուլիսի 27-ին Բելգրադի մոտ հունգարացի Յանոշ Հունյադիի ժողովրդական աշխարհազորի կողմից թուրքերին հասցված ծանր պարտությունը:*

1458 *թ. սուլթան Մեհմեդ II-ի կողմից Մորեայի նվաճմանը ձեռնամուխ լինելը:*

1476 *թ. Վալախիայի վերածումը թուրքական նահանգի:*

1478–1479 *թթ. – թուրքերի կողմից Ալբանիայի ընկճումը և նրա տարածքի մեծ մասի վրա օսմանյան տիրապետության հաստատումը:*

1463–1479 *թթ. – թուրք-վենետիկյան պատերազմը:*

1477 *թ. – թուրքական հեծելազորի ասպատակությունը Ապենինյան թերակղզում:*

1479 *թ. հունվարի 29-ին – Ստամբուլում թուրք-վենետիկյան խաղաղության պայմանագրի կնքումը:*

1483 *թ. – Հերցեգովինայի վերածումը Օսմանյան կայսրության տիրույթի:*

1453–1478 *թթ. – Աղ-Ղոյունլու պետության սուլթան Ուզուն-Հասանի կառավարման շրջանը:*

1469 *թ. – Ուզուն-Հասանի կողմից հայազգի վաճառական խոջա Միրաքի ուղարկումը Վենետիկ և Հռոմ որպես դեսպան:*

1473 *թ. օգոստոսի 11-ին Դերջանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանցիների կողմից Աղ-Ղոյունլու Ուզուն-Հասանի զորքերի ջախջախումը և Աղ-Ղոյունլու պետության տիրույթների կցումը օսմանյան պետությանը:*

1480 *թ. – թուրքերի կողմից իտալական Օտրանտո քաղաքի պաշարումը:*

1481–1512 *թթ. – Սուլթան Բայազիդ II-ի գահակալության տարիները:*

1497 թ. – Մոսկովյան պետության դեսպանության ժամանումը Ստամբուլ Միխայիլ Պլեշչևի գլխավորությամբ:

1512–1520 թթ. – սուլթան Սելիմ I Յավուզի գահակալության տարիները:

1514 թ. օգոստոսի 23-ին տեղի ունեցավ Զալդրանի ճակատամարտը, որի ընթացքում օսմանյան զորքերը Սեֆյան Իրանի շահ Իսմայիլ I-ի բանակին մատնեցին ջախջախիչ պարտության:

1514 թ. – Թուրքերի կողմից Սեֆյան Իրանի մայրաքաղաք Թավրիզի գրավումը:

1516 թ. օգոստոսի 24-ին – Մարջ-Դաբիքի ճակատամարտը օսմանյան բանակի և մամլյուքյան զորքերի միջև:

1516 թ. – Սելիմ I-ի կողմից Սիրիայի, Պաղեստինի և Հեջազի նվաճումը:

1516 թ. դեկտեմբերի 25-ին – Բեյսանի (Պաղեստին) ճակատամարտում Թուրքերի տարած նոր հաղթանակը մամլյուքների նկատմամբ:

1517 թ. – Սուլթան Սելիմ I Յավուզի կողմից Եգիպտոսի նվաճումը:

1516 թ. – Ալժիրի անցումը օսմանյան տիրապետության տակ:

1520–1566 թթ. – Սուլթան Սուլեյման I «Ղանունիի» գահակալության տարիները:

1521 թ. – Բելգրադի գրավումը Թուրքերի կողմից:

1522 թ. – Օսմանցիների կողմից Հռոդոս կղզու գրավումը:

1525 թ. գարնանը – ենիչերիների ապստամբությունը Ստամբուլում:

1526 թ. օգոստոսի 29-ին – Մոհաչ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտը և հունգարական բանակի ոչնչացումը Թուրքերի կողմից:

1529 թ. – օսմանյան զորքերի կողմից Վիեննան գրավելու անհաջող փորձը:

XVI դ. 30-ական թվականներին օսմանցիների կողմից Մոլդավիայի և Բեսարաբիայի նվաճումը:

1536 թ. – Թուրք-ֆրանսիական պաշտպանողական-հարձակողական դաշինքի կնքումը:

1533–1535 թթ. – Սուլթան Սուլեյման I-ի առաջին արշավանքը դեպի Իրան:

1547 թ. – Էդիրնեում (Ադրիանոպոլիս) կնքված Թուրք-ավստրիական պայմանագիրը և Հունգարիայի բաժանումը Օսմանյան կայսրության և Հաբսբուրգների պետության միջև:

1548 թ. – Սուլթան Սուլեյման I-ի կազմակերպած երկրորդ արշավանքի սկիզբը Սեֆյան Իրանի դեմ:

1555 թ. մայիսի 29-ի Ամասիայում կնքված Թուրք-իրանական հաշտության պայմանագիրը, որն իր ավարտին հասցրեց Թուրք-իրանական պատերազմների առաջին էտապը:

1546 թ. – Եմենի նվաճումը օսմանցիների կողմից:

1554 թ. – Մասկաթի մոտ պորտուգալացիների կողմից թուրքական նավատորմի ջախջախումը:

1540–1557 թթ. – թուրքերի կողմից ռազմական գործողությունների իրականացումը Եթովպիան (Հաբեշստանը) և Նուբիան նվաճելու նպատակով և դրանց ձախողումը:

1543 թ. – թուրքերի կողմից Նեապոլի և Սիցիլիայի ափերին ասպատակ սփռելը:

1555 թ. – թուրքական զորքերի ներխուժումը Սուդան և նրա նվաճումը:

1551 թ. – Տրիպոլիտանիայի նվաճումը թուրքերի կողմից: Թուրքական տիրապետության վերականգնումը Թունիսում:

1566–1574 թթ. – սուլթան Սելիմ II-ի գահակալության շրջանը:

1568–1569 թթ. – թուրքերի փորձերը Աստրախանը ռուսներից խլելու ուղղությամբ և դրանց ձախողումը:

1570–1571 թթ. – թուրքերի հրահրումով Ղրիմի թաթարների հարձակումները ռուսական հողերի վրա: Մոսկվան կրակի մատնելը:

1570 թ. – օսմանցիների կողմից ռազմական գործողությունների ծավալումը Կիպրոս կղզին գրավելու ուղղությամբ:

1571 թ. հոկտեմբերի 7-ին – Լեպանտոյի ծովային ճակատամարտը, որի հետևանքով «Սրբազան դաշինքի» միացյալ նավատորմը գլխովին ջախջախեց թուրքերին:

1573 թ. մարտին կնքված թուրք-վենետիկյան խաղաղության պայմանագրով Կիպրոս կղզին անցնում էր թուրքերին:

1574–1595 թթ. – սուլթան Մուրադ III-ի գահակալման շրջանը:

1578 թ. – խախտելով Իրանի հետ կնքված 1555 թ. Ամասիայի պայմանագիրը Օսմանյան կայսրությունը Սեֆյան Իրանի դեմ սանձազերծեց նոր պատերազմ:

1590 թ. մարտի 21-ին իրանա-թուրքական խաղաղության պայմանագրի ստորագրումը:

1595–1603 թթ. – Սուլթան Մեհմեդ III-ի գահակալության տարիները:

1593–1606 թթ. – Ավստրո-թուրքական պատերազմը Բալկանյան թերակղզու հյուսիսային մասին տիրանալու համար:

1606 թ. նոյեմբերի 11-ին Սիթվատորոգի ավստրո-թուրքական խաղաղության պայմանագրի կնքումը:

1603–1617 թթ. – Սուլթան Ահմեդ I-ի գահակալության շրջանը:

1603–1612 թթ. – հերթական թուրք-իրանական պատերազմը:

1612 թ. նոյեմբերի 20-ին Ստամբուլի թուրք-իրանական խաղաղության պայմանագրի ստորագրումը:

1618 թ. սեպտեմբերի 26-ի թուրք-իրանական Սարավի խաղաղության պայմանագրի կնքումը:

1617-1618, 1622-1623 թթ. - Սուլթան Մուստաֆա I-ի գահակալության տարիները:

1618-1622 թթ. - Սուլթան Օսման II-ի կառավարման շրջանը:

1621 թ. - Աբազա փաշայի ապաստամբության սկիզբը Անատոլիայում:

1623-1640 թթ. - Սուլթան Մուրադ IV-ի կառավարումը:

1630 թ. գարնանը թուրք-իրանական նոր ռազմական դիմակայության ծավալումը:

1635 թ. - թուրքական բանակի կողմից Երևանի գրավումը:

1638 թ. - թուրքերի կողմից Բաղդադի գրավումը, որը վերջնականապես անցավ Օսմանյան կայսրությանը:

1639 թ. մայիսի 17-ին Զոհաբում, Քասր-և Շիրին կոչված վայրում թուրք-իրանական խաղաղության պայմանագրի կնքումը:

1640-1648 թթ. - Սուլթան Իբրահիմ I-ի գահակալության տարիները:

1645-1669 թթ. - թուրք-վենետիկյան կամ Կրետեի (Կանդիայի) պատերազմը:

1669 թ. թուրքերի կողմից Կրետե կղզու նվաճումը:

1648-1687 թթ. - Սուլթան Մեհմեդ IV-ի գահակալության տարիները:

1666-1672 թթ. պատերազմը Թուրքիայի և Լեհաստանի միջև Ուկրաինային տիրելու համար:

1676 թ. սկսվեց ռուս-թուրքական պատերազմ: 1677 թ. օգոստոսին Չիգիրինի մոտ թուրք-թաթարական բանակի ջախջախիչ պարտությունը ռուսական զորքերի կողմից:

1676 թ. - Ժուրավնոյի պայմանագրով Լեհաստանը թուրքերին զիջեց Պոդոլիայի շրջանը՝ Կամենեց-Պոդոլսկ ամրոցով հանդերձ:

1681 թ. հունվարին կնքվեց Բախչիսարայի ռուս-թուրքական պայմանագիրը, որով թուրքերը ճանաչում էին Ձախափնյա Ուկրաինայի և Կիևի անցումը Ռուսաստանին:

1683 թ. թուրքական զորքերի պարտությունը Վիեննայի մոտ: Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու փայլուն հաղթանակը:

1684 թ. գարնանը «Սրբազան լիգայի» ստեղծումը, որին 1686 թ. միացավ նաև Ռուսաստանը:

1684 թ. թուրք-վենետիկյան հերթական պատերազմի բռնկումը:

1687 թ. Մոհաչի մոտ ավստրիացիների կողմից թուրքական բանակի ջախջախումը:

1687-1691 թթ. - Սուլթան Սուլեյման II-ի գահակալության շրջանը:

1691-1695 թթ. - Սուլթան Ահմեդ II -ի կառավարման տարիները:

1695–1703 թթ. – Սուլթան Մուստաֆա II-ի գահակալության տարիները:

1697 թ. Տիսա գետի մոտ, Զենտե կոչված վայրում թուրք-ավստրիական պատերազմի վճռական ճակատամարտը, որի ժամանակ իշխանազուն Եվգենի Սավոյացին թուրքերին հասցրեց կործանիչ հարված:

1699 թ. հունվարի 29-ին Կարլովիցիի հաշտության պայմանագրի կնքումը «Սրբազան դաշինքի» և Օսմանյան կայսրության միջև:

1700 թ. հուլիսին Ստամբուլում ռուս-թուրքական պայմանագրի կնքումը, որով Ռուսաստանին էր անցնում Ազովը:

1702 թ. Ռուսաստանի առաջին մշտական դեսպան Պ. Ա. Տոլստոյի ժամանումը Ստամբուլ:

1703–1730 թթ. – Սուլթան Ահմեդ III-ի գահակալության շրջանը:

XVI դ. վերջից Օսմանյան կայսրությունում հուժկու թափով ծավալվեցին ապստամբություններ, որոնք հայտնի են ջելալիների շարժումներ անունով:

1710 թ. սկսվեց ռուս-թուրքական նոր պատերազմ:

1713 թ. հուլիսի 24-ին կնքված Ադրիանապոլսի պայմանագրով ռուս-թուրքական ռազմական դիմակայությունը առժամանակ դադարում էր:

1714–1718 թթ. թուրք-վենետիկյան պատերազմը և 1718 թ. հուլիսի 21-ի Պոժարևացի խաղաղության պայմանագրի կնքումը:

1724–1736 թթ. – թուրք-իրանական պատերազմը:

1724 թ. հունիսի 12-ի Ստամբուլի ռուս-թուրքական պայմանագիրը:

1739 թ. սեպտեմբերի 1-ի Սիստովոյի ավստրո-թուրքական հաշտության պայմանագիրը:

1739 թ. սեպտեմբերի 18-ի Բելգրադի ռուս-թուրքական խաղաղության պայմանագիրը:

1740 թ. Օսմանյան կայսրության կողմից Ֆրանսիային հատկացված կապիտուլյացիան:

1730 թ. Նադիրի կողմից թուրքերին հասցված ջախջախիչ պարտությունը:

1735 թ. հուլիսի 8-ին Եղվարդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքական զորքերի ջախջախումը իրանական բանակի հրամանատար Նադիրի (Թահմազ Ղուլի խանի) կողմից:

1736 թ. սեպտեմբերի 28-ին Ստամբուլում թուրք-իրանական խաղաղության պայմանագրի կնքումը:

1736 թ. – Էրզրումի թուրք-իրանական հաշտության պայմանագիրը:

1743–1746 թթ. թուրք-իրանական պատերազմը:

1730 թ. Պատրոնա Խալիլի ապստամբությունը Ստամբուլում:

1730–1754 թթ. – Սուլթան Մահմուդ I-ի գահակալության տարիները:

1754–1757 թթ. – Սուլթան Օսման III-ի կառավարման շրջանը:

1757–1774 թթ. – Սուլթան Մուստաֆա III-ի գահակալության տարիները:

1768 թ. – ռուս-թուրքական նոր պատերազմի սկսվելը: Ռուսաստանի հաղթանակը և 1774 թ. հուլիսի 10-ի Քյուչուկ-Կայնարջիի խաղաղության պայմանագրի կնքումը:

1774–1789 թթ. – Սուլթան Աբդուլ Համիդ I-ի կառավարման շրջանը:

1783 թ. ապրիլի 19-ին Եկատերինա II կայսրուհու հրապարակած մանիֆեստը Ղրիմը, Թամանյան թերակղզին և մինչև Կուբան գետն ընկած հողերը ռուսական պետությանը միացնելու մասին:

1787 թ. օգոստոսի 24-ին ռուս-թուրքական նոր պատերազմի սկսվելը:

XVIII դ. երկրորդ կեսին «Արևելյան հարցի» ծնունդը:

1720 թ. Զելեբի Մեհմեդ-էֆենդի Յիրմիսեկիզի դեսպանությունը Ֆրանսիա:

1727 թ. հուլիսի 5-ի սուլթան Ահմեդ III-ի հրամանագիրը Թուրքիայում տպարան բաց անելու թույլտվության մասին:

1789–1807 թթ. – Սուլթան Սելիմ III-ի գահակալության տարիները:

1791 թ. դեկտեմբերի 29-ին Յասսիում ռուս-թուրքական խաղաղության պայմանագրի կնքումը:

1793 թ. – Սուլթան Սելիմ III-ը հրապարակում է հրամանագիր ռազմական նոր կազմակերպության և զորքերի նոր տեսակ ստեղծելու վերաբերյալ: Նրա կողմից արմատավորված «Նիզամ-ի ջեդիդը» ենթադրում էր նաև սոցիալական ու տնտեսական բարեփոխումների համալիր իրականացում:

1798 թ. սեպտեմբերի 12-ին սուլթանական հրամանագրի հրապարակումը Ֆրանսիային պատերազմ հայտարարելու մասին:

1799 թ. հունվարին դաշնակցային հակաֆրանսիական պայմանագրի կնքումը Թուրքիայի, Ռուսաստանի և Անգլիայի միջև:

1799 թ. Նապոլեոն Բոնապարտի կողմից Սիրիայի Ակկա ամրոցը գրավելու փորձը և նրա ձախողումը:

1802 թ. հունիսի 25-ին Ամյենում Օսմանյան կայսրության և Ֆրանսիայի միջև հաշտության պայմանագրի կնքումը:

1806 թ. սկսվում է հերթական ռուս-թուրքական պատերազմը, որը շարունակվում է մինչև 1812 թվականը:

1807 թ. մայիսի 25-ին սուլթան Սելիմ III-ի դեմ սկսվում է ենիչերիական զորամասերի ապստամբություն:

1808 թ. հուլիսին Մուստաֆա փաշա Բայրաքթարի զորքերի մուտքը Ստամբուլ և «Ռուչչուկյան բարեկամների» կողմից պետական հեղաշրջման իրականացումը:

1808–1839 թթ. – Սուլթան Մահմուդ II-ի գահակալության տարիները:

1812 թ. մայիսի 16-ին Բուխարեստի ռուս-թուրքական խաղաղության պայմանագրի կնքումը:

1813 թ. հուլիսին օսմանյան բանակի ներխուժումը Սերբիա:

1815–1818 թթ. – Սուլթանական բանակի պատժիչ գործողությունները Անատոլիայի ինքնագլխության ձգտող ձորապետ-դերեբեյների դեմ:

1821 թ. – Հակաթուրքական ապստամբության բռնկումը Հունաստանում, Մոլդավիայում և Վալախիայում:

1821–1823 թթ. – Թուրք-իրանական պատերազմը:

1823 թ. հուլիսի 29-ին Էրզրումի թուրք-իրանական խաղաղության պայմանագրի կնքումը:

1826 թ. հունիսի 17-ին ընդունվեց որոշում ենիչերիական զորաբանակը վերացնելու մասին:

1826 թ. Ստամբուլում սկսվեց ենիչերիական զորաբանակի խռովություն:

1827 թ. հոկտեմբերի 20-ին Նավարինի ծովային ճակատամարտը:

1828 թ. ապրիլին սկսվում է ռուս-թուրքական նոր պատերազմ:

1829 թ. սեպտեմբերի 14-ին Ադրիանապոլսի ռուս-թուրքական խաղաղության պայմանագրի կնքումը:

1830 թ. փետրվարին անգլո-ռուս-ֆրանսիական համաձայնագրի կնքումը Հունաստանի անկախության մասին:

1831–1833 թթ. թուրք-եգիպտական առաջին պատերազմը:

1833 թ. մայիսի 5-ի Քյութահիայի թուրք-եգիպտական պայմանագրի ստորագրումը:

1833 թ. հուլիսի 8-ի Հունքյար-Իսքելեսիի պայմանագրի կնքումը:

1835 թ. Անատոլիայի և Արևմտյան Հայաստանի քրդական ձորապետ-դերեբեյների նկատմամբ պատժիչ գործողությունների իրականացումը:

1839 թ. մայիսին սկսվում է թուրք-եգիպտական երկրորդ պատերազմը:

1841 թ. հուլիսի 13-ին միջազգային կոնվենցիայի ստորագրումը սևծովյան նեղուցների վերաբերյալ:

1839–1861 թթ. – Սուլթան Աբդուլ Մեջիդ I-ի գահակալության տարիները:

1839 թ. նոյեմբերի 3-ին Գյուլհանեի հաթթ-ը չերիֆի հրապարակումը:

1853–1856 թթ. Ղրիմի (Արևելյան) պատերազմը:

1853 թ. նոյեմբերի 18-ին Սինոպի ծովային ճակատամարտը:

1853 թ. դեկտեմբերի 1-ին Բաչկադըքլարի ճակատամարտում թուրքական զորքերի կրած պարտությունը:

1856 թ. փետրվարի 18-ին հաթթ-ը հումայունի հրապարակումը:

1856 թ. ապրիլի 15-ին Փարիզում կնքված միջազգային պայմանագիրը Ղրիմի պատերազմը ավարտելու վերաբերյալ:

1859 թ. սեպտեմբերին Ստամբուլում սուլթանի դեմ ուղղված դավադրության բացահայտումը, որը հայտնի է «Քուլելիի միջադեպ» անունով:

1861–1876 թթ. – Սուլթան Աբդուլ Ազիզի գահակալության տարիները:

1862 թ. Զեյթունի ապստամբությունը:

1866–1869 թթ. – Կրետե կղզու հույների ապստամբությունը:

1865 թ. – «Նոր օսմանների ընկերության» ստեղծումը:

1876 թ. հակաթուրքական ապստամբությունը Բուլղարիայում:

1876 թ. սուլթան Մուրադ V-ի գահակալումը:

1876–1909 թթ. – Սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալության տարիները:

1876 թ. – Օսմանյան սահմանադրության ընդունումը:

1877–1878 թթ. – ռուս-թուրքական պատերազմը:

1877 թ. մարտի 19-ին օսմանյան առաջին խորհրդարանի բացումը:

1878 թ. փետրվարի 2-ին հրապարակվեց սուլթանի ֆիրմանը խորհրդարանն արձակելու մասին: Այդ ընդմիջումը տևեց ուղիղ երեսուն տարի:

1878 թ. հունվարի 31-ին Ադրիանապոլսի ռուս-թուրքական զինադադարի կնքումը:

1878 թ. մարտի 3-ին Սան-Ստեֆանոյի ռուս-թուրքական խաղաղության պայմանագրի կնքումը:

1878 թ. հունիսի 4-ին Ստամբուլում ստորագրվեց «Պաշտպանողական դաշինք» Անգլիայի և Թուրքիայի միջև:

1878 թ. հունիսի 1-ին Բեռլինի կոնգրեսի բացումը:

1878 թ. հուլիսի 1-ին Բեռլինի պայմանագրի (տրակտատի) ընդունումը:

1881 թ. դեկտեմբերի 20-ին սուլթանի «մուհարրեմյան դեկրետի» հրապարակումը «Օտտոմանյան հանրային պարտքի վարչության» ստեղծման մասին:

1889 թ. Ստամբուլի ռազմա-բժշկական ուսումնարանի սովորողների կողմից գաղտնի ընդդիմադիր խմբի ստեղծումը, որով սկիզբ է դրվում երիտթուրքական շարժմանը:

1890-ական թվականներին սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից արևմտահայության զանգվածային ջարդերի իրականացումը:

1902 թ. փետրվարի 4-ից 9-ը Փարիզում երիտթուրքերի առաջին կոնգրեսի գումարումը:

1907 թ. դեկտեմբերի 27-ից 29-ը Փարիզում գումարվեց Օսմանյան կայսրության ընդդիմադիր կազմակերպությունների «ընդհանուր կոնգրեսը»:

1908 թ. հուլիսին տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջման հետևանքով իթթիհադը հայտնվեց իշխանության դեկի մոտ:

1909 թ. ապրիլյան խռովությունը Ստամբուլում, որի հետևանքով իթթիհադականները ժամանակավորապես զրկվեցին իշխանությունից:

1909 թ. ապրիլին սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահընկեց լինելը:

1909-1918 թթ. - Սուլթան Մեհմեդ V Ռեշադի գահակալության տարիները:

1909 թ. ապրիլին Ադանայում և Կիլիկիայի այլ շրջաններում հայության ջարդը:

1910 թ. Սալոնիկում գումարված իթթիհադականների համագումարը:

1911 թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց իտալա-թուրքական պատերազմ:

1912 թ. հուլիսին պետական հեղաշրջման հետևանքով երիտթուրքական կառավարության տապալումը:

1912-1913 թթ. տեղի ունեցան բալկանյան առաջին և երկրորդ պատերազմները:

1913 թ. հունվարի 20-ին իրագործած պետական հեղաշրջման հետևանքով իթթիհադականները վերստին վերադարձան իշխանության գլուխ:

1914 թ. օգոստոսի 2-ին Ստամբուլում թուրք-գերմանական դաշնակցային պայմանագրի կնքումը:

1914 թ. օգոստոսի 2-ին Թուրքիան հայտարարեց պատերազմում իր չեզոքության մասին:

1914 թ. օգոստոսի 6-ին գերմանական «Գյոբեն» և «Բրեսլաու» ռազմանավերի մուտքը Դարդանելի նեղուցը:

1914 թ. հոկտեմբերին թուրքական և գերմանական ռազմանավերի հարձակումը Ռուսաստանի սևծովյան նավատորմի վրա և 1914 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիայի հայտարարությունը Անտանտի պետությունների դեմ իր պատերազմական վիճակի մեջ գտնվելու մասին:

1914 թ. դեկտեմբերին ռուսական և թուրքական զորքերի միջև տեղի ունեցավ Սարիղամիշի ճակատամարտը:

1915 թ. գարնանը անգլիական և ֆրանսիական զորքերի կողմից կազմակերպված Դարդանելի օպերացիան:

1915 թ. արևմտահայերի ցեղասպանությունը:

1917 թ. մարտին անգլիական զորքերի կողմից Բաղդադի գրավումը:

1917 թ. դեկտեմբերին Էրզինջանում (Երզնկա) կնքվեց ռուս-թուրքական զինադադար:

1918 թ. երիտթուրքական կառավարության նոր արկածախնդրությունը Անդրկովկասը գավթելու ուղղությամբ:

1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագրի կնքումը:

1918 թ. մայիսի 15-ին թուրքական զորքերի կողմից Ալեքսանդրոպոլի գրավումը:

1918 թ. մայիսին Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը:

1918 թ. հունիսի 14-ին թուրքական զորքերի կողմից Թավրիզի գրավումը:

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումը և Բաքվի հայ բնակչության արյունոտ ջարդը:

1918 թ. հոկտեմբերին թուրքական զորքերի ներխուժումը Դաղստան:

1918 թ. հոկտեմբերի 13-ին Թալաաթ փաշայի կառավարության անկումը և Ահմեդ Իզզեթ-փաշայի կառավարության ձևավորումը:

1918 թ. սեպտեմբերի 29-ին Բուլղարիան դուրս եկավ պատերազմից, ընդունելով իր պարտությունը:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի կնքումը և Թուրքիայի կապիտուլյացիան Անտանտի դաշնակիցների առջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամ Երևանցի**, Պատմություն պատերազմացն, 1721-1736, Երևան, 1938:

2. **Աբրահամ Կրետացի**, Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870:

3. **Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հ. Ա, 1964, հ. Բ, 1967:

4. Աբրահամու Անկիւրացւոյ ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ: (Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին), Երևան, 1957:

5. **Աղոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Երևան, 1972:

6. Ազատարար չարժուն բանակին հաղթական մուտքն ի Կ. Պոլիս, Պրակ առաջին, Կ. Պոլիս, 1909:

7. **Ազարիա Սասնեցի**, Ողբ ի վերայ հարուածոց արևելեան գաւառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց ճելալեանց, «Հանդես ամսօրյա», 1936:

8. **Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901:

9. **Ալպոյաճեան Ա.**, Կեսարիոյ պատմութիւն, հ. Ա, Գահիրե, 1937:

10. **Ալպոյաճեան Ա.**, Պատմական Հայաստանի սահմանները, մասն Բ, Գահիրե, 1950:

11. **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականութեան, մասն Ա-Գ, Կահիրե, 1941, 1955, 1961:

12. **Աճառյան Հ.**, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999:

13. **Այվազովսկի Գ. Վ.**, Պատմություն օսմանյան պետության, հ. Ա, Բ, Վենետիկ, 1841:

14. **Անասյան Հ.**, XVIII դարի ազատագրական չարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

15. **Անասյան Հ.**, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957:

16. **Աչճեան Մ.**, Պատմութիւն Օսմանեան պետութեան, Կ. Պոլիս, մասն Ա, 1889, մասն Բ, 1890:

17. **Առաքել Բաղիշեցի**, Ողբ մայրաքաղաքին Ստամպօլու, Առաքել Բաղիշեցի, քննական բնագիր, Երևան, 1971:

18. **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:

19. **Ատոմ**, Օսմանյան կայսրության անկման պատմությունը: Երիտասարդ Թուրքերու վերանորոգվող դպրոցը, Կ. Պոլիս, 1913:

20. **Արզումանյան Մ. Վ.**, Դարավոր զոյամարտ, Երևան, 1989:

21. **Արիստակես Լաստիվերտցի**, Պատմութիւն, Երևան, 1971:

22. **Բայբուրդյան Վ.**, Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Երևան, 1974:

23. **Բայբուրդյան Վ.**, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում (XIX դարում և XX դարի սկզբին), Երևան, 1989:

24. **Բայբուրդյան Վ.**, Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008:

25. **Բուռնազյան Ս.**, Հայաստանը և սելջուկները XI-XII դդ., Երևան, 1980:

26. **Գանգրունի Հրանտ**, Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ (1830-1910), Պեյրութ, 1973:

27. **Գելցեր**, Համառոտութիւն Բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901:

28. **Եազըճեան Գուրգեն**, Ապտիւլ Համիտ Բ. կարմիր սուլթանը. յարակցաբար օսմանեան պատմութիւն և հաստատութիւններ, Պեյրութ, 1980:

29. **Երեմիա Չելեպի**, Ստամպոլայ պատմութիւն, հ. 1, Վիեննա, 1913, հ. 2, Վիեննա, 1932, հ. 3, Վիեննա, 1939:

30. **Զավեն Տ.**, Թուրք սահմանադրությունը և երիտասարդ Թուրք կուսակցությունը, Թիֆլիս, 1908:

31. **Զարևանդ**, Ինչ կծրագրեն Թուրքերը՝ միացյալ անկախ Թուրանիա, Բոստոն, 1926:

32. **Զուլալյան Մ. Կ.**, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Երևան, 1980:

33. **Զուլալյան Մ. Կ.**, Ջալալիների չարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:

34. **Թովմա Մեծոփեցի**, Յիշատակարան, Թիֆլիս, 1892:

35. **Թովմա Մեծոփեցի**, Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860:

36. Թուրքական աղբյուրներ: **Էվլիյա Չելեբի**: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ **Ա. Խ. Սաֆրաստյանի**, Երևան, 1967:

37. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց **Ա. Խ. Սաֆրաստյան**, հ. Ա, Երևան, 1961, հ. Բ, Երևան, 1964, հատ. Գ, Երևան, 1967, հ. Դ, Երևան, 1972:

38. **Ինճիկյան Հ. Գ.**, Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, 1984:

39. **Ինճիճյան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատ. Ա, Վենետիկ, 1806:

40. **Լեո**, Անցյալից, Թիֆլիս, 1925:

41. **Լեո**, Թուրքահայ յեղափոխութեան դաղափարաբանությունը, հատ. Ա, Փարիզ, 1934, հատ. Բ, 1935:

42. **Լեո**, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, Երևան, հ. 1, 1966, հ. 2, 1967, հ. 3, 1969, հ. 4, 1984:

43. **Խաժակ Գ.**, Հարկերը Տաճկաստանում, ուսումնասիրության մի փորձ, Բաքու, 1903:

44. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, Երևան, 1961:

45. **Կիրակոսյան Գ.**, Հայաստանը Լենկթեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Երևան, 1997:

46. **Կիրակոսյան Ջ. Ս.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:

47. **Կիրակոսյան Ջ. Ս.**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 1, Երևան, 1982, գիրք 2, Երևան 1983:

48. **Համբարյան Ա. Ա.**, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979:

49. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, ժողովածու, պրոֆ. **Ջ. Ս. Կիրակոսյանի** խմբագրությամբ և առաջաբանով, Երևան, 1972:

50. **Հասրաթյան Մ. Ա.**, **Օրեշկովա Ս. Ֆ.**, **Պետրոսյան Յու. Ա.**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986:

51. **Հեթում պատմիչ**, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842:

52. **Հովհաննիսյան Ն.**, Արաբական երկրների պատմություն, հ. II, Երևան, 2004:

53. **Մաղաքիա աբեղա** (Գրիգոր Ակներցի), Պատմութիւն վասն ազգին նետողաց: ՍՊԲ, 1870:

54. **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, հատ. Ա, Բ, Գ, Ս. Էջմիածին, 2001:

55. **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Երևան, 1973:

56. **Մկան Զատե Բիֆաթ**, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990:

57. **Նաջարյան Հ.**, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում և XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961:

58. **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան կայսրությունում որպես աշխատուժի վերակազմակերպման միջոց: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XXIV, Երևան, 2005:

59. **Չամչեանց Մ.**, Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1984:

60. **Սապահգուլյան Ս.**, Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1900։

61. **Սասունի Կ.**, Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրութ, 1966։

62. **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Բոստոն, 1927։

63. **Սարգսյան Ե. Ղ.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964։

64. **Սարուխան**, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Ա. հատ., Թիֆլիս, 1912։

65. **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Երևան, 2009։

66. **Սիրունի Ց. Ճ.**, Պոլիս և իր դերը, հ. 1, Պեյրութ, 1965։

67. **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.)։, Երևան, 2002։

68. **Փափազյան Ա.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (XV-XIX դարեր), Երևան, 1999։

69. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում 16-17 դդ., Կանոնանամներ։ Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Ա. Սաֆրաստյանի** և **Մ. Զուլալյանի**, Երևան, 1964։

70. **Аверьянов П. И.**, Этнографический и военно-политическ*ий обзор аз*иатских владений Оттоманской империи, СПб, 1912.

71. **Аветян А. С.**, Германский империализм на Ближнем Востоке, М., 1966.

72. **Агаджанов С. Г.**, Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIII вв., Ашхабад, 1969.

73. Аграрный строй Османской империи XV-XVII вв. Документы и материалы, М., 1963.

74. **Алиев Г. З.**, Турция в период правления младотурок (1908-1918), М., 1972.

75. **Арсланиан Дикран**, Система сельского хозяйства в Оттоманской империи, Ленингр., 1932.

76. **Арш Г. В.**, Албания и Эпир в конце XVIII-начале XIX в. (западно-балканские пашалыки Османской империи), М., 1963.

77. **Атрпет**, Младотурецкое движение и возникновение конституции Оттоманской империи, - "Русская мысль", кн. VIII, 1908.

78. **Базили К. М.**, Сирия и Палестина под турецким правительством в историческом и политическом отношениях, М., 1962.

79. **Базили К.**, Босфор и новые очерки Константинополя, ч. I-II, СПб, 1836.

80. **Базили К.**, Очерки Константинополя, ч. I-II, СПб, 1835.

81. **Бакрадзе Дм**., Исторический очерк турецкой системы землевладения, Тифлис, 1889.

82. **Баранов Е**., Война с Турцией и армяне, М., 1915.

83. **Бартольд В. В**., Турция, ислам и христианство. - Сочинения, т. 4, М., 1966.

84. **Бартольд В. В.**, Халиф и султан, - Сочинения, т. 6, М., 1968.

85. **Беляев Н. И**., Русско-турецкая война 1877-1878 гг., М., 1956.

86. **Богданович М. Н**., Походы Румянцева, Потемкина и Суворова в Тур-цию, СПб, 1852.

87. **Боджолян М. Т**., Реформы 20-30-х годов XIX века в Османской империи, Ер., 1984.

88. **Бондаревский Г. Л.**, Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток, Таш., 1955.

89. **Ваакн Н. Дадрян**. История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ер., 2007.

90. **Виноградов В. Н**., Великобритания и Балканы: от Венского конгресса до к рымской войны, М., 1985.

91. **Витол А. В**., Османская империя. Начало XVIII в., М., 1987.

92. Восточный вопрос во внешней политике России (конец XVIII- начало XX в.), М., 1978.

93. **Вронченко М. П**., Обозрение Малой Азии, ч. 1-2, СПб, 1839-1840.

94. **Габидуллин Х. З.**, Младотурецкая революция, М., 1936.

95. **Гарбузова В. С**., Сказание о Мелике Данышменде. Историко-филологическое исследование, М., 1959.

96. **Гасанова Э. Ю**., Идеология буржуазного национализма в Турции в период младотурок (1908-1914), Баку, 1966.

97. Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна, Ер., 1982.

98. **Георгиев В. А**., Внешняя политика России на Ближнем Востоке в конце 30-х - начале 40-х годов XIX в., М., 1975.

99. **Гирс А. А.**, Австро-Венгрия, Балканы и Турция. Задачи войны и мира, Пг., 1917.

100. **Гирс А. А.**, Россия и Ближний Восток, СПб, 1908.

101. **Глинка С**., Картина историческая и политическая Порты Оттоманской от начала существования поколения турецкого до взятия Константинополя и падения греческой державы, М., 1830.

102. **Голобродько**, Турция, М., 1912.

103. **Гордлевский В. А**., А был ли турецкий султан халифом. - Избранные сочинения, т. 1, М., 1960.

104. **Гордлевский В. А**., Внутреннее состояние Турции во второй половине XVI в. - Избранные сочинения, т. 3, М., 1962.

105. **Гордлевский В. А.**, Государство сельджукидов Малой Азии. Избранные сочинения, т. 1, М., 1960.

106. **Гордлевский В. А.**, Силуэты Турции. Избранные сочинения, т. III, М., 1962.

107. **Горяинов С.**, Босфор и Дарданеллы, СПб, 1907.

108. **Гумилев Л. Н.**, Древние тюрки, М., 1967.

109. **Гурко- Кряжин В. А.**, История революции в Турции, М., 1923.

110. **Гусейнов Р. А.**, Земли уджей. - Формы феодальной земляной собственности и владения на Ближнем и Среднем Востоке, М., 1979.

111. **Дадиан Мкртич-бей**, Армяне Оттоманской империи. Перевод с франц., Тифлис, 1878.

112. Два года в Константинополе и Морее (1825-1826), или исторические очерки Махмуда, янычар, новых войск, Ибрагима паши, Селимана-бея и проч., Соч. К. Д. Пер. с франц., СПб, 1828.

113. **Дебидур А.**, Дипломатическая история Европы от Венского до берлинского конгресса (1814-1878), т. 1-2, пер. с франц., М., 1947.

114. **Джемаль-паша**. Записки, 1913-1919. Тифлис, 1923.

115. **Диллон Э.**, Положение дел в Турецкой Армении. - Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896.

116. **Добров Л.**, Южное славянство, Турция и соперничество европейских держав, СПб, 1879.

117. **Достян И. С.**, Борьба сербского народа против турецкого ига (XV - начало XIX в.), М. 1958.

118. **Достян И. С.**, Россия и Балканский вопрос, М., 1972.

119. **Дранов Б. А.**, Черноморские проливы, М., 1948.

120. **Дружинина Е. И.**, Кючюк-Кайнарджийский мир 1774 г. (Его подготовка и заключение), М., 1955.

121. **Дука**, Плач о падении Константинополя. Памятники Византийской литературы IX-XIVвеков, М., 1969.

122. **Дулина Н. А.**, Османская империя в международных отношениях (30-40-е годы XIX в.), М., 1980.

123. **Дулина Н. А.**, Танзимат и Мустафа Рашид-паша. М., 1984.

124. **Еремеев Д. Е.**, Мейер М. С., История Турции в середине века и новое время, М., 1992.

125. **Еремеев Д. Е.**, На стыке Азии и Европы (очерки о Турции и турках), М., 1980.

126. **Еремеев Д. Е.**, Страна за Черным морем, М., 1968.

127. **Еремеев Д. Е.**, Турция. - Национальные процессы в странах Ближнего и Среднего Востока, М., 1970.

128. **Еремеев Д. Е.**, Этногенез турок (происхождение и основные этапы этнической истории), М., 1971.

129. **Желтяков А. Д.**, Петросян Ю. А., История просвещения в Турции (конец XVIII - начало XX в.), М., 1965.

130. **Желтяков А. Д.**, Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908), М., 1972.

131. **Жигарев С.**, Русская политика в Восточном вопросе (ее история в XVI-XIX вв., Критическая оценка и будущие задачи), историко-юридические очерки, М., 1916.

132. **Жуков К . А.**, Эгейские эмираты в XIV-XV вв., М., 1988.

133. Записки янычара, написанные Константином Михайловичем из Островицы, М., 1978.

134. **Ибрагимов Г. И.**, Крестьянские восстания в Турции в XV-XVI вв. - Византийский временник. VII, М., 1953.

135. **Иванов Н. А.**, Османское завоевание арабских стран(1516-1574), М., 1984.

136. **Инджикян О. Г.**, Буржуазия Османской империи, Ер., 1977.

137. История Византии, т. 1-3, М., 1967.

138. История стран Азии и Африки в новое время, М., 1971.

139. История стран зарубежной Азии в средние века, М., 1970.

140. **Истягин Л. Г.**, Стратегия и тактика германского империализма на Среднем Востоке в конце XIX- начале XX вв., М., 1967.

141. **Кайзер Ж.**, Европа и новая Турция, М., 1925.

142. Капитуляции или трактаты между Оттоманской Портой и французским двором, возобновленные и умноженные в 1740 году, СПб, 1780.

143. **Капчев Г. И.**, Турецкое наследство и мировая война, Стокгольм, 1917.

144. **Карнаухов М.**, Кавказ, Турция и Персия. Военно-статистический очерк, Тифлис, 1908.

145. **Кепрюлю М. Ф.**, Происхождение Османской империи, М., 1939.

146. **Кечеджи-Шаповалов М. В.**, Экономическая Турция, Пг., 1915.

147. **Кишмишев С. О.**, Война в Турецкой Армении 1877-1878 гг., СПб, 1884.

148. Книга законов султана Селима I, М., 1969.

149. **Коймен О.**, Империализм свободной торговли. Оттоманская империя, М., 1970.

150. **Колюбакин Б.**, На малоазиатском театре всемирной войны 1914-1916 гг., ПГ., 1917.

151. Константинополь и турки, ч. I-II, СПб, 1841.

152. **Корсун Н.**, Кавказский театр военных действий и сопредельные с ним области Турции и Персии, М., 1925.

153. **Крымский А.**, История Турции и ее литературы, т. 1, от возникновения до начала расцвета, М., 1916; т. II, от расцвета до начала упадка, М., 1910.

154. **Лазарев М. С.**, Крушение турецкого господства на Арабском Востоке, М., 1960.

155. **Лорд Кинросс**, Расцвет и упадок Османской империи, М., 1998.

156. **Лудшувейт Е.**, Турция в годы первой мировой войны 1914-1918 гг., М., 1966.

157. **Луцкий В. Б.**, Новая история арабских стран, М., 1965.

158. **Макколь М.**, Султан и державы, СПб, 1897.

159. **Мандельштам А. Н.**, Младотурецкая держава. Историко-политический очерк, М., 1915.

160. **Марков Т. Е.**, Кочевники Азии: структура хозяйства и общественной организации, М., 1976.

161. [**Мартенс Ф.**] Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами. Составил Ф. Мартенс, СПб, 1878-1909.

162. **Марсильи**, Военное состояние Османской империи с ее приращением и упадком, ч. 1-2, СПб, 1737.

163. **Марунов Ю.**, Пантюркизм и панисламизм младотурок (1908-1918), "Краткие сообщения Института народов Азии", XIV, М., 1964.

164. Материалы по истории наших сношений с Турцией, СПб, 1906.

165. Мебде-и канун-е йеничери оджагы тарихи. (История происхождения законов янычарского корпуса). Избрание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели И. Е. Петросян, М., 1987.

166. **Медведев И. П.**, К вопросу о принципах византийской дипломатии накануне падения империи. "Византийский временник", 33, М., 1972.

167. **Мейер М. С.**, Восстание городских низов Стамбула в 1730 г. - "Народы Азии и Африки", 1963, No 4.

168. **Мейер М. С.**, Османская империя в XVIII веке. Черты структурного кризиса, М., 1991.

169. **Миллер А. Ф.**, Краткая история Турции, М., 1948.

170. **Миллер А. Ф.**, Мустафа-паша Байрактар. Оттоманская империя в начале XIX в., М.-Л., 1947.

171. **Миллер А. Ф.**, Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983.

172 **Михнева Р.**, Россия и Османская империя в международных отношениях в середине XVIII в., 1985.

173. **Муравьев Н. Н.**, Русские на Босфоре в 1833 г., М., 1869.

174. **Найт Э. Ф.**, Революционный переворот в Турции, СПб, 1914.

175. Народы Турции. Двадцать лет пребывания среди болгар, греков, турок. Пер. с англ., т. I-II, СПб, 1879.

176. Новая история стран зарубежной Азии и Африки, Л., 1971.

177. **Новичев А. Д.**, История Турции, т. I-IV Л., 1963-1978.

178. **Новичев А. Д.**, Краткая история, М., 1965.

179. **Новичев А. Д.**, Очерки экономики Турции до мировой войны, М., 1937.

180. **Новичев А. Д.**, Турецкие кочевники XV-XVIII вв., М., 1960.

181. **Новичев А. Д.**, Экономика Турции в период первой мировой войны, М., 1935.

182. **Орешкова С. Ф.**, Русско-турецкие отношения в начале XVIII в., М., 1981.

183. Османская империя в первой четверти XVII века. Сборник документов и материалов, М., 1984.

184. Османская империя и страны Центральной, Восточной и Юго-Восточной Европы в XV-XVI вв. Главные тенденции политических взаимоотношений, М., 1984.

185. Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. Сборник статей, М., 1986.

186. Османская империя: государственная власть и социально-политическая структура, Отв. ред. С. Орешкова, М., 1990.

187. **Петров А.**, Вторая турецкая война в царствование Екатерины II. 1787-1791, СПб, 1880.

188. **Петросян И. Е.**, Петросян Ю. А., Османская империя. Реформы и реформаторы, М., 1993.

189. **Петросян Ю. А.**, "Новые османы" и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958.

190. **Петросян Ю. А.**, Древний город на Босфоре, Исторические очерки, М., 1986.

191. **Петросян Ю. А.**, Зейтунское восстание 1862 г. в свете внутренней политики правящих кругов Османской империи в период танзиматских реформ. - "Историко-филологический журнал", Ер., 1985, No 3.

192. **Петросян Ю. А.**, Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX в.), М., 1971.

193. **Петросян Ю. А.**, Османская империя, Могущество и гибель. Исторические очерки. М., 1990.

194. **Петросян Ю. А.**, Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII-начало XX в.), М., 1985.

195. **Пиотровский С.**, Свет и тени Турции. Пер. с польского, М., 1981.

196. **Познаньска К.**, Старая и новая Турция. Пер. с польского, М., 1974.

197. **Рансимен С.**, Падение Константинополя в 1453 г., М., 1983.

198. **Рафиков А. Х.**, Очерки истории книгопечатания в Турции, Л., 1973.

199. [**Рикот**], Монархия турецкая, описанная через Рикота, бывшего английского секретаря при Оттоманской Порте, СПб, 1741.

200. **Розен Д. Г.**, История Турции от победы реформ в 1826 г. до Парижского трактата в 1856 г. Пер. с немецкого, СПб, 1872.

201. **Ролен-Жекмен М. Г**., Армения, армяне и трактаты, М., 1897.

202. Русский посол в Стамбуле П. А. Толстой и его описание Османской империи начала XVIII в., М., 1985.

203. **Сафрастян Р. А.**, Доктрина османизма в политической жизни Османской империи, Ер., 1985.

204. **Силин А. С**, Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне первой мировой войны (1908-1914), М., 1976.

205. **Силин А. С**., Экспансия Германии на Ближнем Востоке в конце XIX века, М., 1971.

206. **Смилянская И. М**., Социально-экономическая структура стран Ближнего Востока на рубеже нового времени, М., 1979.

207. **Смирнов В. Д**., Крымское ханство под верховенством Оттоманской Порты до начала XVIII в., СПб, 1887.

208. **Смирнов В. Д**., Кучибей Гёмурджинский и другие османские писатели XVII века о причинах упадка Турции, СПб, 1873.

209. **Смирнов Н. А**., Историческое значение русской "Повести" Нестора Искандера о взятии турками Константинополя в 1453 г. - "Византийский временник", VII, М., 1953.

210. **Смирнов Н. А**., Россия и Турция в XVI-XVII вв., т. I-II, М., 1946.

211. **Стамбулов В**., Намык Кемаль, М., 1935.

212. Сто лет освобождения балканских народов от османского ига, М., 1979 .

213. **Сырку А**., Описание Турецкой империи, составленное русским, бывшим в плену у турок во второй половине XVII в., СПб, 1890.

214. **Тарле Е. В**., Крымская война, М.-Л., 1950.

215. **Тарле Е. В**., Чесменский бой, М.-Л., 1945.

216. **Тарле Е. В**., Экспедиция русского флота в Архипелаг в 1769-1794 гг., М.-Л., 1945.

217. Татаро-монголы в Азии и Европе, М., 1970.

218. **Тверитинова А. С**., Аграрный строй Османской империи XV-XVII вв., Документы и материалы, М., 1963.

219. **Тверитинова А. С**., Младотурки и пантюркизм. "Краткие сообщения института востоковедения", XXII, М., 1956.

220. **Твертинова А. С**., Восстание Кара Языджи-Дели Хасана в Турции, М.-Л., 1946.

221. **Теплов В. А**., Смутное время и дворцовый переворот в Константинополе, СПб, 1897.

222. **Теплов В**., Представители европейских держав в прежнем Константинополе, СПб, 1890.

223. **Теплов В**., Русские представители в Царьграде (1496-1891), СПб, 1891.

224. **Тодорова М. Н**., Англия, Россия и Танзимат (Вторая четверть XIX в.). Перев с болг., М., 1983.

225. **Томилов П. А.**, Отчет о поездке по Азиатской Турции в 1904, СПб, 1907.

226. Турция накануне и после Полтавской битвы (глазами австрийского дипломата), М., 1977.

227. **Тыркова Ариадна**, Старая Турция и младотурки, Петроград, 1916.

228. **Убичини А., де Куртейль П.**, Современное состояние Оттоманской империи. Пер. с франц., СПб, 1877.

229. Убичини, Изображение современного состояния Турции в географическом, статистическом отношениях, СПб, 1854.

230. **Фадеев А. В.**, Россия и восточный кризис 20-х годов, XIX в., М., 1958.

231. **Фадеева (Петросян) И. Е.**, Мидхат-паша. Жизнь и деятельность, М., 1977.

232. **Фадеева И. Л.**, Османская империя и англо-турецкие отношения в середине XIX в. М., 1982.

233. **Фадеева И. Л.**, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-панисламизм), М., 1985.

234. **Хаджетелаше М. Б.**, Убийца на троне, Пг., 1919.

235. **Чемерзин А.**, Турция, ее могущество и распадение, т. 1, СПб, 1879.

236. **Чихачев П. А.**, Великие державы и Восточный вопрос, М., 1970.

237. **Чихачев П. А.**, Письма о Турции, М., 1960.

238. **Шабанов Ф. Ш.**, Государственный строй и правовая система Турции в период танзимата, Баку, 1967.

239. **Шеремет В. И.**, Османская империя и западная Европа (вторая треть XIX в.), М., 1986.

240. **Шеремет В. И.**, Турция и Адрианапольский мир 1829 г., М., 1975.

241. **Шпилькова В. И.**, Младотурецкая революция 1908-1909 гг., М., 1977.

242. **Эвлия Челеби**, Книга путешествия (Извлечения из сочинения турецкого путешественника XVII в.). Вып. 3, Пер. с турецкого, М., 1983.

243. **Эссад Дж.**, Константинополь, М., 1919.

244. **Яхимович З. П.**, Итало-турецкая война 1911-1912 гг., М.,

245. 1967. **Abou-el-Haj**. **Rifaat Ali**, Formation of the Modern State: the Ottoman Empire: Sixteenth to Eighteenth Centuries, New York, 1991.

246. **Ahmad**, **Feroz**, The Young Turks: the Committee of Union and Progress in Turkish Politics, 1908-1914, Oxford, 1969.]

247. **Alderson Anthony D.**, The Structure of the Ottoman Dynasty, Oxford, 1956.

248. **Allen W. E. D. and Muratoff Paul**. Caucasian Battlefield. A History of the Wars on the Turco-Caucasian Border 1828-1921. Cambridge, 1953.

249. **Allen W. E. D.**, Problems of Turkish Power in the Sixteenth Century, London, 1963.

250. An Economic and Social History of the Ottoman Empire, 1300-1914. Ed. by H. Inalcik, D. Quataert, Cambridge, 1994.

251. **Anderson M. S**., The Eastern Question, 1774-1923: a Study in International Relations, New-York and London, 1966.

252. **Atil Esin**, The Age of Suleyman the Magnificent, New York, 1987.

253. **Babinger F**., Mehmed the Conqueror, Princeton, NJ, 1978.

254. **Bailey Fr. Ed**., British Policy and the Turkish Reform Movement. A Study in Anglo-Turkish Relation 1826-1853. Cambridge, 1942.

255. **Baker I**., Die Türken in Europa, Stuttgart, 1878.

256. **Basmadjian**, Le mouvement revolutionnaire en Asie Mineure. "Revue du monde musulman", Paris, 1908, no. 4.

257. **Berard V**., La mort de Stambul, Paris, 1913.

258. **Berkes N**., The Development of Secularism in Turkey, Montreal, 1964.

259. **Berton J. M**., Les Turcs dans la balance politique de l'Europe au dix-neuvième siècle, Paris, 1822.

260. **Blaisdell D. C**., European Financial Control in the Ottoman Empire, New York, 1929.

261. British documents on Ottoman Armenians, vol. I (1856-1880), Ankara, 1982.

262. **Cahen Cl**., Pre-Ottoman Turkey, London, N. Y., 1968.

263. **Cantemir D**., The History of the crowt and decay of the Ottoman Empire, Bucharest, 1973.

264. Christians and Jews in the Ottoman Empire. The Functioning of a Plural Society. vol. 1-2, N.Y., 1982.

265. **Cooke M. A**., and Parry V. J., eds., A History of the Ottoman Empire to 1730, Cambridge, 1976.

266. **Cooke M**., Population Pressure in Rural Anatolia, 1450-1600, London, 1972.

267. **Creasy**, **Edward S**., History of the Ottoman Turks, Beirut, 1963.

268. **Cuinet V**., La Turquie d'Asie, t. I-IV, Paris, 1891-1895.

269. **Davison R. H**., Reform in the Ottoman Empire, 1856-1876, Princeton, 1963.

270. **Davison R. H**., The Advent of the Principle of Representation in the Government of the Ottoman Empire, - Beginnings of Modernization in the Middle East, Chicago and London, 1968.

271. **Davison R. H**., Turkey. Prentice-Hall, 1968.

272. **Davison Roderic H**., Essays in Ottoman and Turkish History, 1774-1923: the Impact of the West, Austin, Tex., and London, 1991.

273. **Devereux Robert**, The First Ottoman Constitutional Period: a Study of the Midhat Constitution and Parliament, Baltimore, 1963.

274. **D'Ohson M**., Tablleau gènéral de l'Empire Ottoman, 1787-1820.

275. Economie et sociétés dans l'Empire Ottoman (fin du XVIIIe-début du XXe siècle), Paris, 1983.

276. **Eliot**, Sir Charles, Turkey in Europe, London, 1965.

277. **Eliot Charles** (Odysseus), Turkey in Europe, London, 1900.
278. **Emin**, **Ahmad**, Turkey in the World War, Oxford, 1930.
279. **Endres F. C**., **Major**. Der Weltkrieg der Türkei, Berlin, 1921.
280. **Engelhardt Ed**., La Turquie et le Tanzimat, Paris, 1882.
281. **Esat Uras**, The Armenians in History and the Armenian Question, London, 1988.
282. **Faroqhi S**., Kultur und Alltag im Osmanischen Reich, Munich, 1995.
283. **Feros Ahmad**, The young Turks. The committee of Union and Progress in Turkish politics, 1908-1914, Oxford, 1919.
284. **Fesch P**., Constantinople aux derniers jours d'Abdul-Hamid, Paris, 1907.
285. **Fisher S. N**., The Foreign relations of Turkey 1481-1512, Urbana, 1948.
286. **Findley C. V**., Bureaucratic Reform in the Ottoman Empire. The Sublime Porte 1789-1922, Princeton, NJ, 1980.
287. **Ganem Halil**, Les sultans ottomans, 2 vols., Paris, 1901-1902.
288. **Gaulis Georges**, La Ruine d'un empire: Abdul Hamid, ses amis et ses peuples, Paris, 1913.
289. **Gibbon Edward**, The Decline and Fall of the Roman Empire, London, 6 vols., 1910.
290. **Gibbons H. A**., The Foundation of the Ottoman Empire, London, 1968.
291. **Göcek Fatma Müge**, East Encounters West: France and the Ottoman Empire in the Eighteenth Century, New York and Oxford, 1987.
292. **Gollner Carl**, Turcica: Die Europäischen Turkendrucke des XVI Jahrhunders, Bucharest and Baden-Baden, 2 vols., 1968.
293. **Hammer J**., Geschichte des Osmanischen Reiches, Bd., 1-10, Pest, 1827-1833.
294. **Harris David**, Britain and the Bulgarian Horrors of 1876, Chicago, 1939.
295. **Hasluck F. W**., Christianity and Islam under the Sultans, 2. vols., Oxford, 1929.
296. **Heidborn A**., Les finances Ottomanes, Vienne-Leipzig, 1912.
297. **Heper Metin**, The State Tradition in Turkey, London, 1985.
298. **Hess Andrew**, The Battle of Lepando and its place in Mediterranean history Past and Present 57, November 1972, 53-73.
299. **Heyd Uriel**, The Ottoman Ulema and Westerisation in the time of Selim III and Mahmud II, Scripta Hierosolymitana IX (1961), 63-96.
300. Histoire de l'Empire Ottoman. Sous la direction R. Mantran, Paris, 1989.
301. **Huart U**., Midhat Pacha. - "Revue du monde Musulman", t. 8, No 798, 1909.
302. **Imber C**., The Ottoman Empire, 1300-1481, Istanbul, 1990.
303. **Inalcik H**., The Ottoman Decline and its Effects upon the Reaya. - Aspects of the Balkans, Continuity and Change, Paris, 1972.
304. **Inalcik H.**, The Ottoman Empire: The classical Age 1300-1600, London-N.Y., 1973.
305. **Itzkovitzs Norman**, Ottoman Empire and Islamic Tradition, Chicago, 1980.
306. **Jaber K. S**., The Millet System in the Nineteenth Century Ottoman Empire. - "The Muslim World", t. 57, No 3, 1967.

307. **Jacob M. Landau**, Pan-Turkism: from Irredentism to Cooperation, Indiana University Press, Bloomington and Indianapolis, 1995.

308. **Jäschke Gotthard**, Der Turanismus der jungtürken. Zur osmanischen Außenpolitik im Weltkriege, Leipzig, 1941, "Die Welt des Islams", Berlin, 1941, Bd. 23.

309. **Jorga N**., Geschichte des Osmanischen Reiches. Bd. I-V, Gotha, 1908-1913.

310. **Jouquiere V**., Histoire de l'Empire Ottoman, vol. 1-2, Paris, 1914.

311. **Kafadar C.**, Between Two World: The Construction of the Ottoman State, London, 1995.

312. **Karpat Kemal H**. (ed.), The Ottoman State and its Place in World History, Leiden, 1974.

313. **Kedourie Elie**, England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire 1914-1921. London, 1956.

314. **Kent Marian ed**., The Great Powers and the End of the Ottoman Empire, London, 1984.

315. **Koprulu M. F**., Les origines de l'Empire Ottoman, Paris, 1935.

316. **Kreutal Richard E**., Kara Mustafa vor Wien: Das Turkische Tagebüch der Belägerung Wiens 1683, Verfasst von Zeremonienmeister des Hoben Pforte, Graz, 1960.

317. **Krikorian Mesrob K**., Armenians in the Service of the Ottoman Empire, 1860-1908, London and Boston, Mass., 1977.

318. **Kritovoulos Michael**, History of Mehmed the Conqueror, Princeton, NJ, 1954.

319. **Kunt Metin**, Ethnic regional solidarity in the Seventeenth century Ottoman establishment, International Journal of Middle East Studies, 5, 1974, 233-239.

320. **Kunt M. J**., The Sultan's Servants. The Transformation of the Ottoman Provincial Government, 1550-1650,N. Y., 1983.

321. **Kuran A. B**., Inkilap tarihimiz ve jön türkler, Istanbul, 1945.

322. **Kushner D**., The Rise of Turkish Nationalism 1876-1908, London, 1977.

323. **Lamartine A**., Histoire de la Turquie, vol. 1-8, Paris, 1854-1855.

324. **Landau Jacob M**., Pan-Turkism in Turkey, London, 1981.

325. **Larcher M**., La querre turque dans la guerre mondiale, Paris, 1926.

326. **Lewis B**., The Emergence of Modern Turkey. London-New York-Toronto, 1965.

327. **Lewis Bernard**, Istanbul and the Civilization of the Ottoman Empire, Norman, Okla., 1963.

328. **Lewis B**., The Middle East and the West, London, 1963.

329. **Lewis R**., Everyday Life in Ottoman Turkey. London and New-York, 1971.

330. **Lindner R. P**., Nomads and Ottomans in Medieval Anatolia, Blaminston, 1983.

331. **Lybyer**, **Albert Howe**, The Government of the Ottoman Empire in the Time of Suleiman the Magnificent, Cambridge, 1913.

332. **Mandelstam A**., La sort de l'Empire Ottoman, Lausanne-Paris, 1917.

333. **Mantran Robert**, ed., Histoire de l'empire ottoman, Paris, 1989.

334. **Mantran R**., La vie quotidienne à Contsantinople au temps du Soliman le Magnifique et de ses successeurs (XVI et XVII siécles), Paris, 1967.

335. **Mardin S**., The Genesis of Young Ottoman Tought, Princeton, 1962.

336. **Marx Robert F**., The Battle of Lepando, 1571, Cleveland and New York, 1966.

337. **Matuz J**., Das Osmanische Reich: Grundlinien Seiner Geschichte, Darmstadt, 1985.

338. **Midhat-pacha**, La Turquie, son passé, son avenir, Paris, 1878.

339. **Miller W**., The Ottoman Empire and its Successors, 1801-1927, London, 1966.

340. **Millingern F**., La Turquie sous le regne d'Abdul-Aziz (1862-1867), Paris, 1869

341. **Mordtmann M**., Die Belagerung und Eroberung Constantinoples durch die Türken im Jahre 1453, Stuttgart, 1858.

342. **Mühlmann C**., Deutschland und die Türkey, 1913-1914, Berlin, 1929.

343. **Mühlmann Carl**, Das Deutsch-türkische Waffebündnis im Weltkriege, Leipzig, 1940.

344. **Noradounghian G**., Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman, t. 2, 1789-1856, Paris, 1900.

345. **Nuri Osman**, Abdulhamid sani ve devri saltanati, Istanbul, 1911.

346. **Ohsson I. M. D**., Tableau général de l'empire ottoman, Paris, 7 vols., 1788-1824.

347. **Oskaya I. J**., Le peuple arménien et les tentatives de réduire peuple turk, Stambul, 1971.

348. **Owen Roger**, The Middle East in the World Economy, 1800-1914, London and New York, 1981.

349. **Palmer Alan**, The Banner of Battle: the Story of the Crimean War, London, 1987.

350. **Palmer Alan**, The Decline and Fall of the Ottoman Empire, London, 1992.

351. **Pamuk S**., The Ottoman Empire and Europian Capitalism, 1820-1913. Trade, Investment and Production, Cambridge, 1987.

352. **Pears**, sir Edwin, Life of Abdul Hamid, New York, 1973.

353. **Pepp R**., The Mufti of Istanbul. A Study in the Development of the Ottoman Learned Hierarchy, London, 1986.

354. **Petrosyan Yu.**, The Struggle for Reforms in the Ottman Empire (Motive Forces and Ideology), M., 1986.

355. **Pierce L. P**., The Imperial Harem. Women and Sovereignty in the Ottoman Empire, N. Y., 1993.

356. **Pitcher D. E**., An Historical Geography of the Ottoman Empire, Leiden, 1972.

357. **Ramsaur E. E**., The Young Turks. Prelude of the Revolution of 1908, Princeton, 1957.

358. **Reed H. A**., The Destruction of the Janissaries by Mahmud II, Princeton, NJ, 1951.

359. **Resim A**., Resimli ve haritali Osmanli tarihi, c. 4, Istanbul, 1910.

360. **Rizas G**., Abdul Hamid. Sa vie politique et intime. 33 ans de tyrannie, Constantinople, 1909.

361. **Rogers J. M**., and Ward R. M., Suleyman the Magnificent, London, 1988.

362. **Rolland Ch**., La Turquie contemporaine, Paris, 1854.

363. **Roux J. P**., Histoire des Turcs: deux mille ans du Pacifique à la Mediteranée, Paris, 1985.

364. **Runciman S**., The Fall of Constantinople, 1453, Cambridge, 1965.

365. **Salahi R. S**., The Ottoman Armenians. London, 1987.

366. **Sarkisian A. O**., History of the Armenian Question to 1885, Urbana, 1938.

367. **Sax C**., Geschichte des Machtverfallens der Türkei bis Ende XIX Jahrhunderts, Wien, 1908.

368. **Schlumberger G**., La siège, la pris et la sac deConstantinople par les turks en 1453, Paris, 1914.

369. **Schweizer G**., Die Yanitscharen. Geheime Mact des Türkenreichs, Salzbrug, 1984.

370. **Setton Kenneth M**., Venice, Austria and the Turk in the Seventeenth Century, Philadelphia, 1991.

371. **Shaw St**., Between Old and New. The Ottman Empire under Sultan Selim III (1789-1807), Massachusettes, 1971.

372. **Shaw St**., History of the Ottman Empire and Modern Turkey, vol. 1-2, Cambridge-London- New York-Melbourne, 1976-1977.

373. **Siruni H. Dj**., Bairaktar Mustafa Pacha et Manauk Bey Prince of Moldavie. - "Balkania", Bucarest, 1943, t. 6.

374. Stambul und das moderne Türkentum, von einem Osmanen, Bd. I-II, Leipzig, 1877-1878.

375. Structure sociale et development culturel des villes Sud-Est europeennes et adriatiques aus XVII-XVIII siècles, Bucharest, 1975.

376. **Sugar P**., Southeastern Europe under Ottoman Rule, 1354-1804, Seatle, London, 1977.

377. **Sumner B. H**., Peter the Great and the Ottomans, Oxford, 1949.

378. **Tekin Alp**, Türkismus und Pantürkismus, Weimar, 1915.

379. The Ottoman State and its Place in World History, Leiden, 1974.

380. The Turco-Armenian Question. The Turkish Point of View, Constantinople, 1919.

381. **Toledano Ehud**, The Ottoman Slave Trade and its Suppression, 1840-1890, Princeton, NJ, 1982.

382. **Toynbe Arnold J**., and Kirkwood Kenneth P., Turkey, London, 1926.

383. **Trumpener U**., Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, New Jersey, 1968.

384. **Ubicini M. A**., La Turquie actuelle, Paris, 1855.

385. **Ubicini M. A**., Lettres sur la Turquie, Paris, 1953.

386. **Uras Esat**, The Armenians in History and the Armenian Question, Istanbul, 1988.

387. **Vaughan Dorothy**, Europe and the Turk: a Pattern of Alliances, 1350-1700, Liverpool, 1954.

388. **Vucinich Wayne S**., The Ottoman Empire, its Recor Legacy, Huntington, NY, 1979.
389. **Werner E**., **Markov W**., Geschichte der Türken, Berlin, 1978.
390. **Witteck P**., The Rise of the Ottoman Empire, London, 1938.
391. **Wheatcroft Andrew**, The Ottomans, London, 1993.
392. **Zinkeisen I**., Geshichte des Osmanischen Reiche in Europa. Bd. I-VII, Hamburg, 1859-1863.
393. **Zurcher E**., Turkey. A Modern History, London, New York, 1993.
394. **Akadağ M**., Celâli isyanlari (1550-1603), Ankara, 1963.
395. **Aktepe M**., 1720-1724 Osmanli Iran münasebetleri, Istanbul, 1970.
396. **Aktepe M**., Patrona isyâni (1730), Istanbul, 1958.
397. **Avcioğlu D**., Türkiyenin düzeni. Kitap 1-2, Istanbul, 1978.
398. **Baykal B. S**., Midhat Paşa Siyasi ve idari Şahsyeti, Ankara, 1964.
399. **Bayur Y. H**., Türk inkilâbi tarihi, cilt I, kisim 1, Ankara, 1963.
400. **Danişmend I. M**., Izahli osmanli tarihi kronolojist. Cilt 1-4, Istanbul, 1947-1955.
401. **Defterdar Sari**, Mehmet Paşa. Devlet adamlarina öğütler derleyen ve çeviren H. R. Ugural, Ankara, 1969.
402. **Eren A. C**., Selim III-un biografyasi, Istanbul, 1964.
403. **Gökalp Ziya**, Türkçulüğün esaslari, Ankara, 1961.
404. **Gövsa A**., Türk meşhurlari ansiklopedisi, Istanbul, 1946.
405. **Halaçoglu Y**., Osmanlilarda Devlet Teşkilâti va Sosyal Yapi, Ankara, 1996.
406. Icinci Abdulhamidin hatira defteri, Istanbul. 1960.
407. **Inal M. K**., Osmanli devrinde son sadrazamlar. Cilt II-III. Istanbul, 1941-1942.
408. **Inalcik H**., Bursa. XV asir sanayine ticaret tarihine dair vesikalar. - Belleten. Cilt XXIV, sayi 93, Ankara, 1960.
409. **Inalcik H**., Sened-i ittifak ve Gülhane hatt-i hümayunu. - Belleten, Cilt XXVI-II, sayi 113, Ankara, 1964.
410. **Karal E. Z**., Osmanli tarihi. Cilt V-VIII, Ankara, 1956-1962.
411. **Kaynar R**., Mustafa Reşit Paşa ve Tanzimat. Ankara, 1954.
412. **Kazal E. Z**., Selim III-un hatti humayunlari. Nizam-i cedid. 1780-1807. Ankara, 1946.
413. **Kongar E**., Imparatorluktan günümüze Türkiyenin toplumsal yapisi, Istanbul, 1976.
414. **Kuran A. B**., Inkilap tarihimiz ve ittihad ve Terakki, Istanbul, 1948.
415. **Kuran A. B**., Inkilap tarihimiz ve Jön türkler, Istanbul, 1945.
416. **Kutay M. C**., Namik Kemal devrinin Insanlari ve olaylari arasinda, Istanbul, 1956, cilt 2.
417. **Mardin S**., Jön türklerin siyasi fikirleri, 1895-1908, Ankara, 1964.
418. **Ortayli I**., Osmanli Imparatorlugun En Uzun Yüzyili, Istanbul, 1983.
419. **Öztuna Y**., Bir darbenin anatomisi, Istanbul, 1984.
420. **Pakalim M. Z**., Osmanli tarih deyimleri ve terimleri sözlügü, Cilt I-III, Istanbul, 1946-1955.

421. **Ramsaur E. E**., Jön türkler ve 1908 ihtilâli, Istanbul, 1972.
422. **Şapolyo E. B**., Mustafa Reşit Paşa ve Tanzimat devri tarihi, Istanbul, 1945.
423. **Sevim A**., Yücel Y., Türkiye tarihi. Cilt 1-4, Ankara, 1990-1992.
424. **Tahsim Paşa**, Abdul Hamid ve yildiz hatiralari, Istanbul, 1931.
425. **Talât Paşanin Hatiralari**, Istanbul, 1946.
426. **Tökin F. H**., Türk tarihinde siyasi partiler ve siyasi düşüncenin geli'mesi, 1839-1965, Istanbul, 1965.
427. **Tunaya T. Z**., Türkiyede siyasi partiler, Istanbul, 1952.
428. **Tunaya T. Z**., Türkiyenin siyasi hayatinda batililaşma hareketleri, Istanbul, 1960.
429. **Unat F. R**., Osmanli sefirleri ve seferetnâmeleri, Ankara, 1968.
430. **Uzunçarşili I. H**., Anadolu beylikleri ve Akkoyunlu, Karakoyunlu devirleri, Ankara, 1969.
431. **Uzunçarşili I. H**., Midhat Paşa ve Yildiz mahkemesi, Ankara, 1967.
432. **Uzunçarşili I. H**., Mustafa Bayraktar. Ankara, 1943.
433. **Uzunçarşili I. H**., Osmanli devlet teşkilâtinda kapikulu ocaklari. Cilt 1-2, Ankara, 1943-1944.
434. **Uzunçarşili I. H**., Osmanli Devletinin Saray Teşkilâti. Ankara, 1984.
435. **Uzunçarşili I. H**., Osmanli tarihi. Cilt I-IV, Ankara, 1947-1959.
436. **Yazman M. O**., Türkiye tarihi. Selçuklular devri, Istanbul, 1977.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՑԵՂԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ: ՌՈՒՄԻ (ԻԿՈՆԻԱՅԻ) ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Թյուրքական ցեղերի գաղթարշավը դեպի Փոքր Ասիա 7
2. Ռումի (Իկոնիայի) սելջուկյան սուլթանության կազմավորումը և նրա քաղաքական գոյությունը 20
3. Մոնղոլների ներխուժումը Փոքր Ասիա և Իկոնիայի սուլթանության նվաճումը: Մոնղոլների տիրապետությունը Փոքր Ասիայում 34

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐՔ-ՕՍՄԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. Թուրքերը կայսրության ստեղծման ճանապարհին 39
2. Օսմանցիների նվաճողական քաղաքանության վերելքը XIV դարի երկրորդ կեսին 65
3. Լենկ Թեմուրի արշավանքը Փոքր Ասիա և նրա կողմից օսմանցիներին հասցված կործանիչ հարվածը 97
4. Օսմանյան պետությանը համակած ներքին քաղաքական ճգնաժամը Լենկ Թեմուրի արշավանքից հետո և նրա հաղթահարումը 103

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ XV ԴԱՐՈՒՄ ԵՎ XVI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. Օսմանյան պետության կայունացումը Մուրադ II-ի կառավարման շրջանում 109
2. Մեհմեդ II «Ֆաթիհը» և Թուրք-օսմանցիների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը 118

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ: ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԵԼՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Մեհմեդ II նվաճողական քաղաքականությունը Եվրոպայում և Ասիայում 155
2. Օսմանյան կայսրության պետական կարգը, վարչա-քաղաքական կառուցվածքը և սոցիալական հարաբերությունները Մեհմեդ II-ի կառավարման շրջանում 176
3. Օսմանյան կայսրության ներքին և արտաքին դրությունը Բայազիդ II (1481-1512) կառավարման տարիներին 187
4. Սուլթան Սելիմ I Յավուզը (1512-1520) և նրա կողմից արաբական երկրների նվաճումը: Պատերազմներն Իրանի դեմ 192

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ՎԵՐԵԼՔԻ ՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Սուլթան Սուլեյման I «Կանունիի» գահակալումը և նրա նվաճողական քաղաքականությունը Եվրոպայում ու Միջերկրական ծովի ավազանում 205
2. Սուլթան Սուլեյման I արևելյան քաղաքականությունը, պատերազմներն Իրանի դեմ, Պարսից ծոցում և Հյուսիսային Աֆրիկայում 222
3. Սուլթան Սուլեյման Կանունիի կառավարման շրջանի ընդհանուր բնութագիրը 234

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՀԱՆՋԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Օսմանցիների առաջին ռազմական բախումը ռուսական պետության հետ 247
2. Օսմանյան կայսրության մղած պատերազմները Արևմուտքում և Արևելքում XVI դարի երկրորդ կեսին և XVII դարում 252

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՃԳՆԱԺԱՄԸ: ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 303

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ:
1. Օսմանյան կայսրության ռազմա-քաղաքական դրությունը XVIII դարում: Պատերազմներն Արևելքում և Արևմուտքում 327
2. Ճանապարհ դեպի արևմտականացում 360

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԷՏԱՊՈՒՄ
1. Սուլթան Սելիմ III-ի բարեփոխումները («Նիզամ-ի ջեդիդ») եվ նրա գահընկեց լինելը 369
2. Մուստաֆա փաչա Բայրաքթարը եվ «Ռուչչուկյան բարեկամները» 392

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒԴ II ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1808-1839 ԹԹ.)
1. 1806-1812 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմը եվ Բուխարեստի հաշտության պայմանագիրը 403
2. Հույն ժողովրդի ազատագրական պայքարը: Մահմուդ II-ի բարեփոխումները և ենիչերիական կորպուսի վերացումը 407
3. Թուրք-եգիպտական առաջին եվ երկրորդ կոնֆլիկտները և մեծ տերությունները: Ռուս-թուրքական Ունկյար-Իսքելեսիի պայմանագիրը 431

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԹԱՆԶԻՄԱԹԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ
1. Գյուլհանեի Հաթթ-ը Շերիֆը եվ 1840-1841 ԹԹ. բարեփոխումները..... 453
2. 1845-1854 ԹԹ. բարեփոխումները 465
3. Թուրքիան և 1853-1856 ԹԹ. Ղրիմի (Արևելյան) պատերազմը: Թանզիմաթի երկրորդ փուլը 473

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

«ՆՈՐ ՕՍՄԱՆՆԵՐԸ» ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾՆՈՒՆԴԸ: 1876 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ 503

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ ԲՌՆԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՐԳԸ 555

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

1908 Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ: ԻԹԹԻՀԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
1. Երիտթուրքական շարժման ձևավորումը 583
2. 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը:
Իթթիհադը իշխանության ղեկի մոտ 600

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ 639

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 681

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 695

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Սարգսյանի, Կ. Չալաբյանի
Տեխ. խմբագիր՝ Վ. Բդոյան
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 28.09.2023:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 45.5 + 12 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023
publishing.ysu.am